



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՀՐԱՆԴ ԳԱՆԳՐՈՒՆԻ

Հ Ա Յ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ
Դ Է Մ

(1890 - 1910)



Պ Է Յ Ր Ո Ւ Թ
1973

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1878ի Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի հորհրդածո-
ղովները՝ իրենց 16րդ ապա 61րդ յօդուածներով Հայկա-
կան Հարցը դարձուցին Միջազգային խնդիր: Հայը նախ
խանդավառուեցաւ, ապա յուսախար եղաւ վեց Մեծ պե-
տութիւններուն ընթացքէն, ուզեց սեփական ուժերով հե-
տապնդել իր ապրելու իրաւունքը:

Արմենական, Հնչակեան, Դաշնակցական կուսակ-
ցութիւնները իրենց ազատագրական պայքարով տուին
արեան տուրքը՝ մեր ժողովուրդի իրաւունքներուն նուաճ-
ման նամբուն վրայ,

Ինքնապաշտպանութեան կռիւները, ցոյցերը, բողոք-
ները միջոցառումներ էին մեր կեանքի եւ ինչքի անապա-
հովութեան վերջ տալու սահմանուած: Ընդվզումի գլխա-
ւոր ուժը հայ գիւղացիութիւնն էր Օսմանեան Բռնատի-
րութեան դէմ: Անոր միացաւ հայ աշխատաւորը, մտաւո-
րականը եւ մասամբ գաւառի ունեւոր խաւը:

Հայը ստիպուած էր գէնքով պաշտպանել իր ար-
դար իրաւունքները, զինք բնաջնջել փորձող թշնամիին
վայրագ ծրագիրները չէզոքացնել կարենալու համար:

Հայը չկրցաւ թուրք, ֆիւրտ, ասորի, արաբ ժողո-
վուրդներուն հետ միասնական մակատ կազմել՝ տապալե-
լու համար Օսմ. Բռնակալները, ատոր մէջ ինքը չէ՛ յան-
ցաւորը, այլ՝ ազատագրական հարցին մէջ յատկապէս
ֆիւրտ պէկերու մասնաւոր հաշիւները, թուրք գիւղա-
ցիութեան կրօնական ու ազգայնական ոգին եւ Միջազգա-
յին շուկայի տիրող Մեծերու խարդախ դիւանագիտու-
թիւնը:

Հայ յեղափոխութիւնը իր կարելին փորձեց, արեւմտեան տուրք տալու մէջ չթերացաւ, ունեցաւ իր նահանջի շրջանը Համիտի տապալումէն ետք. հո՛ն է իր թերացումը հանդէպ մեր Դատին: Հայ Յեղափոխութիւնը 1907-1914 երկփեղկուած ֆալեց եւ իթթիհատի իրաւ մտադրութիւնները ունակ շուտ, ուրիշներ՝ շատ ուշ հասկցան:

1890-1910 երկարող ժամանակաշրջանը այժմէական է՝ խանդավառութեամբ, յուսախաբութեամբ, սին յոյսերով, խոստումներու առատութեամբ, կեղծիքով ու նեղութեամբ, գինովութեամբ եւ կարճատեսութեամբ յատկապէս մեր ֆաղափական մտքին համար, գոր փորձած ենք *իրապաշտօրէն* ներկայացնել 250է աւելի ազգայնական անձամբ պրպտելի ետք:

Գիրքը առատ վկայութիւններով կը հաստատէ՝ թէ Օսմանեան Բռնատիրութեան դէմ հայ ժողովուրդի գաւակներուն մղած պայքարը անհրաժեշտ եւ տեղին էր, զայն ֆննդատողները անկեղծ չեն: Իսկ միւս կողմէ իթթիհատը Համիտի ջարդարար գործին շարունակողն էր: Անոր հանդէպ հայ կուսակցութեանց 1902ի Ա. Համագումարի ցոյց տուած վերապահութիւնը պէտք է շարունակուէր 1907ին եւս, իսկ Ատանայի 1909ի 30 հազար հայոց կոտորածը՝ *պէտք է մղէր Հայ քաղաքական հոսանքները անխտիր՝ դիրքորոշուելու եւ յրջօրէն ինքնապաշտպանութեան դիմելու*: Ատով գուցէ նուազ կորուստով դուրս գայինք 1914-1918ի պատերազմի արհաւիրքներէն...

Հեղինակը շատ ընդարձակ չափի վրայ ներկայացուցած է իթթիհատը 1896-1911ի շրջանին, տուած է անոր գաղափարական դիրքորոշումները, անոր հետապնդած «Մեծն Թուրքիոյ» ծրագիրը՝ հայ, թուրք, արաբ եւ օտար ազգիւրներու վկայութիւններով, շատ քիչ անգամ մեկնաբանելով, որպէսզի ընթերցողը անձամբ եզրակացութիւն հանէ այդ շրջանի արիւնոտ մեր պատմութենէն: Նոր սերունդը՝ բարի բայց միամիտ ֆաղափական հայ գործիչներուն օրինակը աչքի առաջ ունենալով՝ պէտք է հաշիւ պահանջէ եւ իր նոր գամբան *իրապաշտօրէն գծէ՝ վերջ տալով մահացնող ցնորքներուն*:

Մ Ո Ւ Տ Ք

1920էն ետք, դժբախտաբար Հայ ազատագրական պայքարը մեկնարանողներուն մէջ գտնուեցան գրողներ, որոնք չքաշուեցան եղեռնի պատասխանատուները Հայ յեղափոխական շարժումներու մէջ որոնել, նիւթեր Հայթայթել թուրք պատմաբաններուն, անուղղակի իրաւունք տալ այդ ջարդի հեղինակներուն, առանց անդրադառնալու թէ այդ ձեւով դաւաճանական ընթացքի մէջ կը գտնուին իրենք՝ Հայ ժողովուրդին իրաւունքներուն նկատմամբ:

Պիտի խօսինք յատկապէս Հայ ազատագրական պայքարը անտեսողներու, սխալ մեկնարանողներու, Հայ յեղափոխութիւնը յանցաւոր նկատողներու, անոր արժէքը փոքրացնողներու, զայն ամէն զնով դատապարտողներու մասին:

Ազատագրական պայքարը անհրաժեշտ միջոցառում մըն էր, կեանքի եւ ինչքի անապահովութեան մէջ տուայտող մեր ժողովուրդին համար: Եւրոպայի վլխաւոր ուժը Հայ գիւղացիութիւնն էր, մանր պուրժուազին, մտաւորականութիւնը եւ մասամբ դաւաճաններու առեւտրական խաւը: Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող Հայ, թուրք, քիւրտ, արաբ, եղիտի, յոյն եւ պուլկար, ալպան եւ ուրմանացի ժողովուրդներուն վերապահուած Սեւ օրերու մասին ամբողջ միջազգային պատմութիւնը համաձայն ըլլալուն, շատ պիտի չծանրանանք այդ մասին:

Հարցը հետեւեալն է .—

Հայերը կրնայի՞ն չդժգոհիլ եւ սպասել աւելի լայն օրերուն, գէնքի ուժով մարդկային իրենց տարրական իրաւունքները ձեռք ձգել կարեւարու համար:

Մենք կ'ըսենք. — Ո՛չ, քանի որ «Կարմիր սուլթանը» կ'աշխատէր Հայկական Ս նահանգներէն ներս մեզ փոքրամասնութեան մէջ ձգել: Համիտիէի դունդերուն սիստեմաթիկ կերպով հայահոծ գիւղերէն ներս կատարած արշաւներուն իբր հետեւանք, վաշխառուներուն քմայքին անձնատուր Հայ գիւղացին՝ տասանորդի, զլխահարկի, հողի, անասունի եւ այլ տուրքեր չէր կրնար վճարել: Արդիւնք՝ խուժում դէպի Պուլիս կամ Իզմիր՝ հողը գրաւի դնելէ կամ չնչին գումարով ծախելէ ետք: Աւելին, 80-ական թուականներէն սկսեալ Սուլթան Համիտը կը քաջալերէր այն հայերը՝ որոնք կ'ուզէին մեկնիլ Թուրքիայէն: Ամերիկահայ դաղութի պատմութիւնը այդ շրջանին կը սկսի:

Քիւրտ եւ հայ փոխյարաբերութիւնները սկսան վատթարանալ, որովհետեւ Սուլթանը ուզեց եղբայր այդ ազգերուն բաժանման սիրոյն՝ քիւրտերուն ինքնավարութիւն խոստանալ եւ քրքրել հայերուն դէմ:

Արեւելեան նահանգներուն մէջ, թուրքերէն աւելի քիւրտերն էին մեծամասնութիւնը: Այսօր ալ՝ Տիգրանակերտ, Պարբերդ, Վան, Պիթլիս, Տրապիզոն, աւելի շատ քրտական բնակչութիւն ունին քան՝ թրքական:

Քիւրտ շէյխերը շնորհապաշտեցին հայ յեղափոխութեան գործիչներուն գործակցութեան առաջադրանքին: Շատ քիչեր այն ատեն կը թափանցէին Սուլթան Համիտի հայ ջարդելու հրահանգին ետին «հերքը քիւրտերուն ալ պիտի գայ օր մը» մտքին: Շատ քիչեր ընդառաջեցին միասնական ճակատով Օսմանեան Բռնատիրութեան դէմ մղուելիք պայքարի անհրաժեշտութեան: Յետոյ 1930-ական թուականներուն, երբ հայ չեր մնացած Արեւելեան նահանգներէն ներս, Քեմալականները հաշիւ տեսան Տէրսիմի ապստամբ քիւրտերուն հետ:

Հայերը բոլոր դարերուն ալ՝ ստրկացուած կը մնային տիրապետող Օսմանցիներու լուծին տակ: Կը հանդուրժէին, որովհետեւ անբանացած հօտի մը կերպարանքը ունէին դժբախտարար: Անկաւելի էր գանոնք ոտքի հանել նախորդ ազգային պատմութեան շրջաններուն պէս, որովհետեւ ստրկացած մարդու հոգեբանութիւնը կը տիրէր հայ գիւղերէն ներս:

Հայ եկեղեցականը հազիւ փսփսուքով կրնար անցեալի մեր հերոսական էջերը պարզել, տարապայման աշխատանքներու մէջ կքած հայ գիւղացիին: Հայ քաղաքական մտքի առաջնորդներուն համար գերագոյն յաղթանակն էր 1861ին կազմուած, սակայն 1863ին միայն գործադրութեան դրուած Ազգային Սահմանադրութիւնը, որ Պոլիսը եւ գաւառները Պատրիարքարանն ու դպրոցներու մատակարարումը կ'առնէր ամիրաներու պատահական եւ քմահաճ կարգադրութիւններու իրաւասութենէն եւ կը տրամադրէր էսնաֆ ու վաճառական նորակազմ դասակարգին տնօրինութեան:

1860-1885 թուականներուն միայն, հնարաւորութիւն տրուեցաւ հայ ժողովուրդի քաղաքներու մէջ ապրող սերունդին, հայութեան անցեալի հպարտութիւնը կազմող դէպքերուն եւ դէմքերուն, մշակոյթին ու հոգեկան նուաճումներուն հետ մտերմանալ:

Եթէ 1878ի Սան-Սթեֆանոն եւ Պերլինը՝ մեզի խոստացած էին 16րդ, ապա 61րդ յօդուածներով բարեկարգութեանց հարցին լուծումը, ապա այդ թիւերը առիթը տուին՝ խորհրդածելու, մտածելու եւ գործելու ազգին իրաւունքներուն համար:

Ու հիմա կրկին հարցումը — Կրնայի՞նք չդժգոհիլ, իսկ դժգոհելու պատճառներ ունեցող ժողովուրդ մը կրնա՞ր անտարբեր մնալ:

Այստեղ կը ծագի ուրիշ հարց մը. — Թուրքերը կորսնցնելէ ետք Պալքաններէն ներս իրենց ստրկացուցած հողամասերը, կրնայի՞ն հանդուրժել, որ Վեց Նահանգներուն մէջ հայերը մեծամասնութիւն կազմած դրութեամբ դոյատեւէին: Հայերը եթէ ոչխարամիտ, հլու կեցալուր մնային, կարելի՞ էր սպասել, որ անոնք չջարդուէին եւ փոքրամասնութիւն դառնալու վտանգէն հեռու մնային, Սուլթանի կամ Իթթիհատի օրով:

Բայց չէ՞ որ իսլամ քիւրտերը այդ ճամբուն կը հետեւէին եւ Քեմալի պէս «ղեմուկրատ» դուրսնեն անգամ վճռական պահուն գարկին անոնց. մինչ այսօր, քիւրտ ժողովուրդին արդիւուած է որպէս քիւրտ հրապարակ դալ: Չէ՞ որ կը տեղափոխեն զանոնք շրջաններէն ներս, եւ կը պարտադրեն, որ ինքզինքնին կոչեն տաղ քիւրքի...:

Իսկ պատմութեան թատերաբեմին վրայ ե՞րբ տեսնուած է, որ մեզի նման ամբողջովին ստրկութեան, չարչարանքի եւ բռնի ճուղման ենթակայ ժողովուրդ մը լուռ հանդիսատես մնայ եւ չընդվզի: Մեր պատմութիւնը 3000 տարիներու ընթացքին բռնաւորներու դէմ ազատագրական պայքար մը չէ՞ եղած արդեօք: Եւ ե՞րբ նրկատի առած ենք Դարեհ Վշտասպեաններու պարսիկ ուժերը, Հոսովմի, Յազկերտներու, Կիւ Մանուէլներու, Տուրքիլ-Ալթաւալաններու, Թիմուրներու, Ագ-Գոյունլուններու, Գոնիայի Սուլթաններուն, Պաշակիրներուն կամ Բիւզանդիոնի մեզմէ աւելի զօրաւոր ըլլալուն հանգամանքը... Մեր պատմութիւնը կտակած չէ՞ մեզի անկախութեան, ազատութեան դաղափարը:

Մեր ազատագրական պայքարի պայմանները փոխուած են անշուշտ:

Ժամանակի ընթացքին գայն վարող ուժերը եղած են հայ թագաւորներ, իշխաններ, գիւղացիներ, եկեղեցականներ, աշխատաւորներ եւ մտաւորականներ, առանց հաշուելու, թէ որքան զոհ կու տան, առանց հաշուելու, թէ թշնամին 5-6 անգամ աւելի զօրք ու զէնք ունի իրենցմէ: Ահա թէ ինչո՞ւ ազատագրական պայքարը 1890-1910 երկարաձգուող ժամանակաշրջանին անհրաժեշտ եւ անխուսափելի էր:

Մենք սոյն գրքով պիտի ծանօթանանք 1890-1910 շրջանին Սուլթանական բռնութեան եւ Իթթիհատի շրջանի հայ յեղափոխութեան թուրքիոյ նոր կացութեան հանդէպ դիրքորոշումներուն, թուրք պատմաբաններուն Իթթիհատի մասին վկայութիւններուն եւ մասամբ ցարիզի շրջանի կացութեան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ
ԵՒ 6 ՄԵԾԵՐՈՒ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
1890-ԱՎԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Օսմանեան Բոնատիրութենէն ազատագրուած Պալքանեան ժողովուրդները շատ մօտ չէին զգար ինքզինքնին Ռուսիոյ: Անոնք կը խորհէին Գերմանիոյ ապաւինիլ, իրենց «մնայուն հողային պահանջները» իրագործելու համար: Ռուսական Լորանովեան քաղաքականութիւնը 1890ին արդէն կը դրսեւորուէր ի նպաստ Թուրքիոյ: Անոնք չէին ուզեր բարեկարգութենէ ետք անկախ Հայաստան մը Արեւելքի մէջ:

Անգլիան, ընդհակառակը, կը հաստատէր, թէ ազատագրուած Պալքանեան երկիրները, այնքան ալ Ռուսիոյ չէին կապուեր եւ անոր «գործիք» չէին դառնար, կ'աշխատէին ամէն գնով իրենց գերիշխանութիւնը պահել: Անգլիա մտահոգ ըլլալով հանդերձ Հընդկաստանի ճամբուն ապահովութեամբ, հասաւ այն եզրակացութեան, թէ Թուրքիոյ օժանդակութեամբ պատնէջ մը դնելու ճիշդ անիմաստ էր՝ Թուրքիոյ քայքայման ընթացքը նկատի առնելով: Օսմանեան վերանորոգուած կայսրութիւն մը կրնար Անգլիոյ օգտակար հանդիսանալ Հընդկաստանի ճամբու ապահովութեան. ատկէ՛ Անգլիոյ ճնշումը Թուրքիոյ վրայ, մղելու համար զինք, որ պետական ապարատը մաքրագործէ, վերջ տալով բռնութիւններուն եւ անկարգութիւններուն, որոնք Օսմանեան երկրէն ներս կը տիրէին:

Անգլիա համոզուեցաւ Պոլսոյ Թուրք պետական շրջանակին եւ կառավարիչներուն անկարողութեանց եւ ոչ բարեացակամ ընթացքին բարեկարգութիւններու նկատմամբ եւ հաստատեց, որ Օսմանեան կայսրութիւնը վերջնականապէս դատապարտուած է քայքայման: Անգլիա միւս կողմէ հաստատեց, թէ Պալքանեան ազատագրուած երկիրները աւելի արագ զարգանալու ատակ են, ուստի այդ երկիրներուն զօրացման ի նպաստ դիրքորոշուելը կարեւոր նկատեց, եւ նոյնիսկ Մերձաւոր Արեւելքի մէջ ազգային պետութիւններու (արաբ, հայ, քիւրտ) մէջտեղ դալը արգելք մը չնկատեց՝ «Հընդկաստանի ճամբուն» ապահովութեան:

Անդլիոյ այս քաղաքականութիւնը կը բացատրէր ղիւանագէտ Լոյս Պրայս, երբ կը գրէր. «Հարցը որ կը դրուի ներկայիս կեանքի մէջ Օսմանեան Կայսրութիւնը ամէն գնով պահելը չէ, այլ փաստել, թէ ի՞նչ կարելի է (ներարկել) եւ բախումներուն առաջքը առնել՝ որ կրնայ յառաջանալ իր անկումով», (Տես՝ Լորտ Պրայս «Անդրկովկաս եւ Արարատ», Լոնտոն, 1877, էջ 418, (Անդլ.)):

Անդլիացի ուրիշ պատմաբան մը՝ Թէյլըր «Եւրոպական պետութիւնները եւ Մերձ. Արեւելք» իր գրքին մէջ կը շեշտէ, թէ երբ Անդլիա Կիպրոս տեղաւորուեցաւ (1878) եւ մանաւանդ Եգիպտոս (1882), Թուրքիոյ արժէքը Հնդկաստանի ճամբան պաշտպանելու համար պահպանեցաւ Անդլիոյ համար եւ որ այլեւս քիչ պէտք ունէր՝ Թուրքիոյ ի նպաստ Անգլիոյ դիրքորոշման:

Նոյնիսկ այն շրջանին, երբ Անդլիա այնքան ուժգին կը պաշտպանէր Թուրքիան, այս վերջինը Անդլիոյ համար «անհրաժեշտ չարիք» մըն էր: Լոյս Սալզպրին սնդիկական փոխուած այդ քաղաքականութեան ներկայացուցիչն էր 1876-78 շրջանին եւ կը հակադրուէր Տ'իզրաէլիի:

1880ին Ազատականներու թեկնածուն Կլատթոն՝ Տ'իզրաէլիի կարծիքը դիրքորոշումներուն դէմ պայքար մղեց: Իշխանութիւնը ձեռք առին Ազատականները. ծանր պարտութիւն կրեցին Տ'իզրաէլիի կողմնակիցները: Թուրքիան ամէն գնով պաշտպանելու կողմնակից հասանքը պարտուած էր այս ընտրութեամբ:

1882ին որոշ «պաղուծիւն» մը ստեղծուեցաւ Թուրքիոյ եւ Անդլիոյ միջեւ, երբ Անդլիա Եգիպտոսը դրակեց:

Թուրքիոյ հարցին մէջ գլխաւոր կշռող պետութիւնները Ռուսիան եւ Անգլիան էին: Ֆրանսա տեւական ընդհանուր իր շահերով կլանուած էր Մերձ. Արեւելքի մէջ: Աւստրո-Հունգարիան իր հպատակ ազդութիւններու քաղաքական դարձումներն իբր հետեւանք տրկարացած էր, Սալոնիկը գրաւելու իր հեռանկարը չափաւորուած՝ Օսմանեան Կայսրութեան ամբողջութիւնը պահպանելը նուազագոյն շարիք կը նկատէր:

Ինչ կը վերաբերի Գերմանիոյ, ապա ան մինչեւ 1890 թուականը քիչ չափով կը հետաքրքրուէր Մերձ. Արեւելքի քաղաքականութեամբ: Սակայն 1890էն ետք, Գերմանիան տակաւ փոխարինելով Անգլիոյ դերը՝ Թուրքիոյ թիւ մէկ պաշտպանը պիտի հանդիսանար եւ քաղաքական ու տնտեսական մարզի մէջ նոր թափանցումներ պիտի կատարէր Օսմանեան Կայսրութեան մէջ:

Անդլիա տակաւ իր հիւպատոսներու թիւը պիտի աւելցնէր Թուրքիոյ մէջ, 8 նոր հիւպատոսարաններ պիտի նշանակէր զանազան նահանգներու մէջ զինուորական կցորդներով, որոնք ենթակայ էին էրզրումի հիւպատոս Թրոթթըրի եւ Մաժոր Չարլս Վիլսոնի՝ որ Սերաստիոյ ընդհանուր հիւպատոսն էր:

Միւս կողմէ, «Պոլսոյ Բրիտանական դեսպանին հրահանգուեցաւ կապ հաստատել Սուլթան Համիտ Բ.ի հետ, ոնչել անոր վրայ Թուրքիոյ իսկ շահերէն թելադրուած՝ բարեկարգութիւնները գործադրելու համար Պերլինի Յերթ յօդուածին համաձայն Հայկական Նահանգներէն ներս», կը գրէ Ճ. Սեսիլ իր «Լորտ Սալզպրիի կեանքը» հատորին մէջ: Նոյն վկայութիւնը կու տան «Համիտի կեանքը» հատորին հեղինակ Ս. Լ. Բիրս, եւ «Կապոյտ Գիրքը», 1878, թիւ 51ի մէջ:

Լորտ Սալզպրին ներկայացուց բարեկարգութեանց ծրագիր մը՝ որ կը վերաբերէր ոստիկանական կազմակերպութեան, ինչպէս նաեւ տուրքերու եւ Հայկական Նահանգներէն ներս դատարաններու բարեկարգութեանց հարցին եւ որ կը նախատեսէր Եւրոպական հրահանգութիւն՝ զանոնք գործադրութեան գնելու համար:

Անգլիան անպիճելի կերպով Ռուսիան Պերլինի Դաշնագրով (1878) հեռացնելէ ետք դրակեալ հողերէն, աշխատեցաւ, ճիշդ թափեց «բարեկարգութեան համար» հայոց վիճակը Թուրքիոյ մէջ:

Լորտ Սալզպրին բարեկարգութեանց կողմնակից եղած էր, պարզապէս Ռուսերուն միջամտելու հնարաւորութիւնը բեկանելու համար Հայաստանէն ներս: Ան նոյնիսկ վեց միլիոն սթերլին խոստացած էր Թուրքիոյ՝ որպէս օժանդակութիւն՝ Բարեկարգութեան ծրագրին իրականացման պարագային:

Հայ Ժողովուրդի վատ դրութեան մասին զաղափար կազմելու համար Հր. Պաստրմաճեան կը նշէ որպէս աղբիւր՝ «Կապոյտ Գիրք»ը Անգլիոյ (1887), թիւ 53, կըն՝ էջ 20, Էստիկ Պրայս՝ էջ 22, Ա. Սարգիսեան՝ էջ 92 եւ 98-102, Թոզըրի՝ եւ Ա. Պարֆլէյի գիրքերը:

Հիւպատոսական տեղեկագիրները ո՛չ մէկ կասկած կը ձգէին հայերուն դէմ կիրարկուող բռնութեանց մասին:

Տ'իզրաէլիի ապաւինած՝ Սուլթան Համիտը խուլ կը ձեւանար, Սալզպրիի բարեկարգութեանց պահանջներուն:

1839ին Սուլթան Մեճիտ «Թանգիմաթ»ով «Հաւասարութիւն օրէնքի առջեւ» յայտարարեց, խոստանալով «Հաւատակներուն ապահովութիւն՝ առանց ցեղի եւ կրօնի տարբերութեան»: Այսէր Վանտալ «Հայերը եւ Թուրքիոյ Բարեկարգութիւնները» գրքին մէջ (1903ին ժընեւ տպուած), կը գրէ, թէ «Սկզբունքներ յայտնուեցան... ոչ մէկ փոփոխութիւն տեղի ունեցաւ... Ժողովուրդներու նախատագիրը եւ պայմանները ասելի վատացան...»:

Խրիմի պատերազմէն ետք՝ 1856ի Հաթթը Հիւմայունը՝ Ֆրանսայի եւ Անգլիոյ կողմէ թելադրուած եւ Սուլթանին կողմէ վաւերացուած որպէս Նոր Բարեկարգութեան օրէնք՝ որով հաւասարութիւն, կրօնական ապաստութիւն, պաշտօն կը խոստացուէր Օսմ. բոլոր հպատակներուն, դարձեալ հնարաւոր չեղաւ գործադրել...:

1875ին Սուլթան Ապտիւլ Ազիզ կը խոստանար կրկին բարեկարգութիւն... «Յետ այսու ամբողջ կայսրութեան մէջ ժամտարմաները պիտի հաւաքագրուին պարկեշտ մարդոցմէ»:

(Տես՝ «Հիսթորիա տը լ'Արմենի», 1964, Բ. տպագրութիւն, Բարիզ, Հր. Պատրմասեան, էջ 298-299):

Պալատական երկիրներու ազատագրական պայքարները մեր նիւթէն դուրս կը մնան, նոյնպէս պիտի չծանրանանք Հայկական Հարցի սկզբնաւորութիւնը հանդիսացող 1877-78ի ռուս-թրքական պատերազմին եւ ո՛չ ալ Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի խորհրդածոյնի մէջ մտցուած 16րդ եւ 61րդ յօդուածներուն շուրջ: Այս մասին կարելի է կարգալ որեւէ պատմութեան գիրքի մէջ:

Միայն փրոֆ. Հ. Պատրմասեան կը պարզէ, որ Սուլթան Համիդը ինք համաձայն էր Խրիմեանի Պերլին ուղեւորուող պատուիրակութեան, «այն յոյսով որ ռուսերը կարելի պիտի ըլլար գրաւուած 6 Հայկական նահանգներէն հեռացնել, բարեկարգութեան շարքը գործածելով հայոց հաշտոյն»: (Տես գիրքը, էջ 320):

1877-1914ի շրջանին 100 հազար քիւրտեր տեղաւորուեցան վերոյիշեալ վեց նահանգներուն մէջ: Անպիտոյ էրզրումի հիւպատոսը Թէյլըր կը նշէր, թէ այդ շրջաններուն գրեթէ բոլոր քիւրտերը Տիգրանակերտի շրջանէն բերուած եւ տեղաւորուած էին: (Լինչ 2, էջ 421): Ասոնց տեղաւորման գլխաւոր անպատահութիւնն այն էր, որ ըլլալով անասնաբոյծներ, մեծ չափով կարճեցուցին արտերը մշակելու հնարաւորութիւնը եւ բերքի նուազում յառաջ բերին:

Թրքասէր Վ. Պրունզն անգամ կ'ընդունի, որ Սուլթանը կը ձգտէր հայոց ինքնավարութիւն չտալ, պատրուակելով՝ որ քրիստոնէաները փոքրամասնութիւն են: Սուլթանը քաջայերեց մահմետականները՝ քրիստոնէաները չարչարել, գաղթի մղելու համար: (Վ. Պրունզ «Մայ Տիարիբա», Լոնտոն, 1921, էջ 190, Հ. Պատրմասեան, էջ 335): Նոյն կարծիքը կը յայտնէ Անգլիացի պատմաբան Պրոքթըն եւ կ'աւելցնէ, թէ քիւրտերու մակարդակը որքան ալ ետ մնացած էր, սակայն կրնային հայերը չէզոքացնելու յատկացուիլ Համիտի գունդերուն միջոցաւ:

Համիտի քրտական զօրքերու հայոց հասցուցած սոսկալի վնասներուն մասին Հ. Պատրմասեան կը բերէ հետեւեալ հեղինակութիւններու վկայութիւնները: («Կապոյտ Գիրք», 1892, Թիւ 1, Բոյ Ռոհրպախ, Լինչ (1901), Վ. Բամսէյ (1897), Գոնթանսըն, Կ. Թուման (1897), Է. Պուրժուա (1926):

Որքան ատեն որ Հայոց Հարցը սեղանի վրայ դրուած չէր, Թուրքերը անոնց թիւր չէին նուազեցնել: 1867ին Սալահատին Պէյը «Թուրքիա եւ Միջագոյսի ճուղահանդէս»ը Փարիզ տպուած գրքին մէջ կը նշէ, թէ Օսմանեան Կայսրութեան մէջ տպուող հայոց թիւը՝ 2,400,000 է:

Մինչդեռ 1880ին Վարչապետ Ապեալին Փաշան 6 նահանգներուն մէջ 3,620,000 իսլամ (Թուրք, Քիւրտ, Արաբ) եւ 727,000 Հայ գտնուելուն վրայ կը պնդէր:

Մեծ պետութիւնները «չկլլեցին» անշուշտ ասիկա եւ նոյնիսկ 7 Սեպտ. 1880ին Ներքեցին իրենց տուած նոթայով:

«Ապտիւլ Համիտի Կեանքը», (1917) գրքին մէջ անգլիացի հեղինակ՝ Սըր Էտլին Փիլսոն կ'ըսէ, թէ Հայկական վեց նահանգներուն մէջ (Վան, Պիթլիս, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Կարին) 2,600,000 բնակչութիւն կար, որմէ՝ 1,200,000ը Հայեր էին:

20է աւելի օտար հեղինակներէ Հր. Պատրմասեան վկայութիւններ կը բերէ հաստատելու համար թրքական բռնութիւնը՝ ինչքի, հողի, նոյնպէս կողոպուտի, ջարդի, բռնաբարոյմի եւ այլ խժոժութիւններու մասին՝ որոնք կը գործադրուէին Թուրքերու կողմէ: (Տես՝ Հր. Պ. «Հայաստանի Պատմութիւն», 1964, Բ. տպագրութիւն, Փարիզ, էջ 338-339):

Զինուած քիւրտ, թիւրք, չերքէզ բնակչութեան գէմ՝ հայերուն արգելուած էր գէնք կրել. օրէնքով արգիլուած էր քրիստոնէաներուն պիտուել:

1878-1894 տասնեակ հազարաւոր հայեր չլիմանալով Թրքական բնակալ ուժերին՝ հեռացան իրենց երկրէն, հաստատուելու համար Կովկաս կամ Ամերիկա:

1894-97ին Մայիսեան ջարդերէն ետք, 100 հազար հայեր Անգլի-Կովկաս ապաստանեցան:

Վիլհելմ Կայսեր 1889 եւ 1898 թուականներուն Օսմանեան Թուրքիա կատարած այցելութիւնները «Դեպի Արեւելք» (Drang Nach Osten) տիրահոյսի քաղաքականութեան բացայայտ գրեւորումն էին: Մահմետական ժողովուրդները սիրաշահելու նպատակով, Գերմանիոյ Կայսրը Դամասկոսի մէջ Սուլթան Սալահատինի դամբարանին առջեւ բարձրագոյն յայտարարեց.

«Թող Սուլթանը եւ երեք հարիւր միլիոն Մահմետականները, որոնք ի դէմս Սուլթանի (Համիտ) կը յարգեն իրենց հալիֆան, համագումար ըլլան, որ գերման կայսրը ամենուրեք ու ամէն ժամանակ կը դառնայ անոնց բարեկամը»:

Այդ ժամանակ այ գերման կայսրապաշտները յառաջ քաշեցին Պերլին-Պաղատա երկաթուղային ճամբու շինարարութեան ծրագիրը, նպատակ ունենալով այդ միջոցով տարածել իրենց ազդեցութիւնը ամբողջ Մերձ. Արեւելքի մէջ, ինչպէս նաեւ գուրս գալ գկպի Հրնդ-կական Ուկրանոս:

Ա. Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, Գերմանիան արդէն շօշափելի գիրքեր սուէր Թուրքիոյ տնտեսութեան, պետական շրջանակին եւ բանակին մէջ: Հոն կը գործէին 60 գերմանական Դրա-

մատան Գրասենեակներ («Տէօջ Պանք», «Տէօջ Օրիան Պանք», «Տէօջ Բալեսթրինա Պանք» եւ ուրիշներ): Գերման Ընկերութիւններուն կը պատկանէին Ատանայի եւ Էրէկլիի ածուիի հանքերը, Ատանայի դաշտավայրի ոտողիչ սիւտեմը եւ շարք մը ուրիշ մեծ ու փոքր արդիւնարեւական ձեռնարկութիւններ: Անոնք ստացան Օսմ. Կայսրութեան հողամասին վրայ գիւղատնտեսական գաղութներ կազմելու իրաւունք: Այդպիսի գաղութներ հիմնուեցան թիւով 5 հատ Պաղեստինի մէջ, որոնք ունէին 624 գերմանացի վերարձակիչներ:

Պոլսոյ մէջ գերմաներէն թերթ լոյս կը տեսնէր եւ Գերմանիոյ ազդեցութիւնն ուժեղ էր յատկապէս թրքական բանակի վրայ: Իթթիհատի հրաւերով բանակի վերապիման համար Թուրքիա ժամանեց Զօր. Ֆոն Տէր Գուլցի գլխաւորութեամբ գինուորական պատուիրակութիւն, իսկ յետոյ Զօր. Լիման Ֆոն Սանտերսի մեսիան՝ որ փաստօրէն իր ձեռքը առաւ Օսմ. ուժերուն հրամանատարութիւնը:

Լենինը 1917ին կը գրէր, թէ «Գերմանիան այս րոպէիս Թուրքիան վերածած է իր թէ՛ Ֆրանսական, թէ՛ ռազմական սարուկին»:
(Տես՝ «Արեւմտա-Գերմանական Մոնոպոլիստների Ներխուժումը Թուրքիա», Ռ. Պ. Կոնտակչեան, 1963, Երեւան, էջ 5-8):

Ֆրանսացի տկաղեմիկոս Կապրիէլ Մոնոէի, պատմարան էտուալ Տարիի «Արեւելեան Խնդիրը եւ Հայկական Հարցը իր Ծագումէն Մինչեւ Մեր Օրերը», 1913ին (Պոլիս, թարգմ.) գրքին յառաջաբանին մէջ կը գրէր 1898ին.—

«... Դժբախտարար Ռուսիա եւ Ֆրանսա թոյլ տուին որ հայերը կոտորուին՝ վանդի Ռուսիա կ'ուզէր ցոյց տալ հայերուն, թէ աւելի աղէկ է ոռւսերէն հալածանքներէ քան թէ թուրքերէն ջարդուիլ: Վանդի Լիթ Ռուսիա կրնայ համաձայնիլ Աւստրիոյ չեա Պալքանեան քաղաքականութեան մը մեծ գիծերուն հաշտոյն, չի կրնար համաձայնիլ Ֆրանսայի չեա՝ բացի այն պայմանով, որ «Սթաթուրու» պահուի որքան Եւրոպական Թուրքիոյ՝ նոյնքան Ասիական Թուրքիոյ մէջ:

«... Ինչ ալ ըլլայ մեր անմիջական շահերուն Եսակիան տեսակէտովը, «Սթաթուրու» պահպանման այս քաղաքականութիւնը հաւանօրէն մեզի համար նուազ վնասակար քաղաքականութիւնն է, միակը որ յանկարծ Եւրոպական պատերազմի մը ծագման վտանգը չունի, որուն ծաւալումը, տեւողութիւնն ու ելքը մարդ չի կրնար գիտնալ:

«Պրն. Հանոտոյի քաղաքականութեան կարգախօսը, ամբողջութիւնը Օսմ. Կայսրութեան, ընդունած այնքան հարուածներէն ետքը, որքան ալ վարկարեկէ եղած ըլլայ, խոհեմութեան եւ ազգային շահու կողմէ նկատի կ'առնուէր»: (Տես՝ Նախարան ԺԱ.):

Լսենք էտուալ Տարիի կարծիքը Համիտի մասին.—

«Վանդի Համիտ իր անձին դէմ սարքուած ոտքի մը անդադրում եւ անբուժելի վախին մէջ ապրեցաւ: Իր շուրջը կ'ըզար Երիտ. Թուրքերուն ստեղծութիւնը: Կը վախնար որ, որովհետեւ մերթ սեղի կուտար Եւրոպայի խորհուրդներուն, հին Թուրքերուն վրէժխնդրութեան առարկայ կ'ըլլայ: Ետտ քիչ անգամ մզկիթ կ'երթար, Պայրամի տանին առիթով, ըստ սովորութեան համբուրելու Մարգարէի վե-

րարկուն, իր քովը կը նստեցնէր էն պատիկ որդին, դիմացն ալ Հապի Օսման Փաշան, Բէլփաշի հերոսը, կը հաշտէր որ մէկուն անմեղութիւնը, միտին ժողովրդակա-նութիւնը նուիրական պաշտպանութիւնը պիտի ըլլային իրեն: Երբեք Քէօզլի իր պալատին մէջ Քիւրտերէ եւ Ալպանացիներէ բաղկացած բնտիր պահակապետն իր կը շրջապատուէր, զոր պատուած էր Համիտի անունով:

«Ետտ լաւ շրջապատուելով հանդերձ սուղ վճարուած մարդերէ, նորէն կը վախնար, չէր համարձակէր Երկու գիշեր իրարու վրայ նոյն սենեակին մէջ պառկել: Իր կեանքը մահուան յաւերժական արհաւիրք մըն էր եւ այդ սարսափը գինքը կը յանձնէր վայրկեանին սիրականներուն կամքին, իրեն կը թելադրէր ամենէն անապոյտն բռնութիւնները անոնց դէմ՝ որոնցմէ կը կասկածէր կամ որոնցմէ կասկածիլ կուտային իրեն: (էջ 384-385):

«Մոլեռանց Տէրվիշ Ապուլ Հուտան իր խորհրդատուն էր: Լիպիոյ Սընուսը-ներուն հետ մտերիմ էր, անոնց ներկայացուցիչներուն հետ միասնարար կը յուզէին համիլիամուքեան երազը:

«1883ին Գերման գորավարներ կանչած էր իր ծառայութեան մէջ, որոնք կասարեւադրեցին Օսմանցի գինուորներուն սպառապիտումն ու մարզումը: Հանրային Եկամուտին ի վնաս դիզեց զանձ, շինութիւնները կըճատեց, սուրբերը աւելցուց, նոր տասանորդներ հաստատեց՝ դատապարտելով Կայսրութեան բնակչութիւնը՝ թշուառութեան եւ անօթութեան: Երբեմն վախճանը հրաման կը ստանային պալատէն՝ նորանոր տարբեր ժողովուրդներու ժողովուրդէն, որ օրինակայն տարբերը արդէն վճարած էր, այսու հանդերձ դարձեալ վճարելու էր. Լիթ չուզէին կամ չկարենային, Համիտիչները կ'անցնէին, կը կոտորէին եւ կը թալլէին: (Տես՝ նոյն, էջ 386-7):

«... Բ. Դուռը Եւրոպական Քննիչ Յանձնախումբի դէմ, 1894 Նոյ. 20ին ինք Յանձնախումբը մը կազմեց եւ զայն անուանեց «Հայ աւազակներուն կողմէ գործուած եղեռնական արարքները քննելու համար Մարմին»: (էջ 398):

«... Եւրոպացիները յաջողեցան սակայն հաստատել թէ ջարդերը (Սասուն) կատարուած էին կանոնաւոր բանակին գործերուն կողմէ, իրենց պետերուն հրամանովը, եւ թէ պալատին ուղղակի գործակալները պատասխանատու հեղինակներն էին: Սուլթանին քաղաքականութիւնը կը սկսէր երեւան զալ:

1895ի Մայիս 11ի Եւրոպական Բարեկարգութեանց Ծրագրին Սուլթանը հակադրեց Յունիս 3ի ուրիշ ծրագիր...:

Ֆրանսայի դեսպան Բոլ Կամպոն գրեց, թէ անիկա ոչ իսկ վիճարանութեան հիմ մը կը ներկայացնէր: Այդ Ծրագիրը ամբողջովին կը մերժէր Դեսպաններուն ծրագիրը, պատրուակելով թէ Եւրոպական ամէն հակադիր պիտի վնասէր Ն. Կ. Վեհափառութեան:

Հոկտ. 20ին Սուլթանը Իրատէով մը ընդունեց Մայիսեան Ծրագիրը:

«... Ի՞նչպէս Եւրոպա կրցաւ թողուլ, որ այսօրինակ ոտքի մը (300 հազար հայոց ջարդը 1895-96ին) գործուի, որուն նման պատմութիւնը չ'արձանագրեր միջին դարէն ի վեր: Ապագայ մարդկութեան զարմանքներէն մէկը պիտի ըլլայ ասիկա: (էջ 405):

«Անդրիոյ ներկայացուցած քաղաքականութեան դէմ (բարեկարգութիւնները գործադրելու ի նպաստ), Ֆրանսական կառավարութիւնը հանեց «Օսմ. Կայսր. Ամբողջական Բաղաճակնութիւնը» եւ յաջողեցաւ 1896ի Ռուսիոյ կայսեր Փարիզ այցելելէն ետք, հաստատել զայն իրրեւ կական կէտերէն մին Եւրոպական արդի իրաւաբանութեան». (էջ 406-7, յիշուած աշխատութիւն: Թրգմ. Երուսեան):

432

Վամպերի իր «Յուշ» հատորին մէջ կը խօսի Համիտի հետ ունեցած իր մէկ տեսակցութեան մասին: «Կը վստահեցնեմ ձեզ, կ'ըսէ Համիտ «քէ հայերուն խելքը շուտով գլուխին պիտի բերեմ: Իրենց գլխուն հարուած մը տալով մոռցնել պիտի տամ յեղափոխութեան գաղափարը: ... Գրեթէ հարկադրուած եմ այդ արմատական միջոցները ձեռք առնել ի ներկայութեան այն անդուլ հալածանքին եւ թշնամութեանը՝ զոր ֆրիստոնեայ աշխարհը ցոյց կուտայ: Ռումանիան եւ Յունաստանը առնելով Եւրոպա Թուրքիոյ ոտքերը կտրեց: Պուլկարիոյ, Սերպիոյ եւ Եգիպտոսի կորուստով՝ անոր ձեռքերը կտրեցին, եւ հիմա այս Հայկական յուզումով կ'ուզեն մեր ամենէն կենսական մասերը, մեր ազիւնները խել մեզմէ: Այս պիտի ըլլար ամբողջական կործանումը, եւ մենք բոլոր մեր գորութեամբը դէմ պիտի դնենք ատոր»:

(Տես՝ «Հայկական ձգնաժամ եւ վերածնութիւն», Մ. Սմբատ Գարբիէլեան, Պոսթոն, 1905, էջ 64):

Հայկական իրականութեան մէջ վերանորոգումի ջանքերը անպակաս եղած են պատմութեան ընթացքին: Հին միջոցները, սակայն, այլեւս իբր դարձան չեն կրնար ծառայել մեր նոր վերջերուն, բայց որքան ատեն ժողովուրդի մը հոգին չէ թունաւորուած վհատութեան ախտէն, որչափ ատեն հարստահարուած ազգերու մէջ հաւատքի, կամքերու եւ ուժերու ամբողջական միութիւն մը գոյութիւն ունի, տակաւին բան մը չէ կորսուած: Կասթօն Տը Մոնիքօ 1898ին հրատարակած իր «Արեւելեան Խնդիրը» գրքին մէջ կը գրէր. «Երբ հարստահարուած եւ սեղմորէն միացած ազգ մը ազատութիւն կ'ուզէ, չկայ արգելիք մը, զոր չկարենայ տապալել, եւ եթէ ազատագրումը այսօր չէ յառաջացած Օսմ. պետութեան ֆրիստոնեայ գաւառներուն մէջ, հաւանաբար պետութիւններուն վրայ կ'իյնայ անոր մեղադրանքը»: (էջ 15):

Իսկ Կիւսթաւ Լը Պօն գրեց 1916ին. «Ինչ որ ալ ըլլան իմացականութեան, նիւթական վիճակներու եւ բարոյականութեան յառաջդիմութիւնները ժողովուրդի մը, որ կարելիութիւն պիտի չունենայ ինքզինքը պաշտպանելու, եւ ապահովելու ձեռք բերուած արդիւնքները, ամէն աշխատութիւն ընդունայն պիտի ըլլայ, եւ այս ժողովուրդը ուրիշ բանի պիտի չծառայէ, եթէ ոչ ազգ մը ըլլալ ուրիշին մշակութեան դաշտին մէջ»: (Տես՝ «Դիտումներ Եւ Դատումներ» Մուշեղ Սերոբեան, 1932, Պէյրութ, էջ 178):

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՆԻԷՊ

«Անգլիացիներուն համար Հնդկաստանի ճամբան ազատ պահելը հիմնական հարց մըն էր: Ատոր համար կ'ուզէին ամբողջականութիւնը պահել Օսմանեան Կայսրութեան, քանի որ տկարացած էր ան ժԹ. դարուն: Նեղուցները, Ալեքսանդրիթի Ծոցը եւ Պարսից Ծոցը ամէն գնով պէտք էր հեռու պահել շայկական Բարձրականդակ իջնել փորձող ուսերէն: (Պքսթըն, «Թրապիս էնտ Բոլիթիքս Ին Արմինիա», Լոնտոն, 1914, էջ 146): ԺԹ. դարուն Անգլիա այս մտահոգութեամբ շարժեցաւ, մինչդեռ նոյն Անգլիան ժԹ. դարուն Լեհաստանի, Իտալիոյ եւ Հարաւ. Ամերիկայի մէջ ազատագրական պայքարներու էր կողմնակից ըլլալը կը յայտնաբերէր»: (Նոյն):

Փրիւպարն եւ Պքսթըն՝ իրենց Նեղուցներուն նուիրուած 1917ին լոյս տեսած գրքին մէջ կը յայտնեն, որ Անգլիոյ համար Նեղուցներուն Ռուսիոյ ձեռքը չիյնալը հիմնական մտահոգութիւն մըն էր: Եթէ Ռուսերը Նեղուցներուն տիրէին, անոնք պիտի կրնային Պալքաններու, Փոքր Ասիոյ եւ Արեւելեան Միջերկրականի մէջ մեծ դեր խաղալ:

Ասկէ դատ Անգլիական դիւանագիտութիւնը համոզուած էր, որ Նեղուցները Թուրքիոյ ձեռքին մէջ մնալով, միշտ ալ ոչ-ուսա պետութեան մը նաւատորմի Սեւ Ծով մտնելով Ռուսիան հարուածելու առիթը կրնար տալ (Ուքրանիա, Կովկաս): Իսկ եթէ Ռուսիա Նեղուցներու տիրէր, այդ պարագային կրնար զօրացնել պաշտպանութիւնը եւ դիմադրել յարձակումի մը դէմ:

Ռուսական այս մտահոգութիւնը՝ Նեղուցներուն տիրելու, միշտ ալ Անգլիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ վեթոյին հանդիպեցաւ: Ռուսիան միշտ ալ հաշուեց, որ Անգլիան Թուրքիոյ «հրաւերով» իրեն դէմ կրնար դիրք բռնել... Ֆրանսան՝ որ ժԼ. դարուն Թուրքիոյ պաշտպանն էր, ժԹ. դարուն որոշ չափով փոխած էր իր քաղաքականութիւնը: Ան Յունաստանի ազատագրական պայքարին պաշտպան կեցաւ եւ Եգիպտոսի Մուհամմէտ Ալիին թիկունք հանդիսացաւ, անոր Փոքր Ասիա յառաջխաղացքի ընթացքին:

Թէեւ Նաբոլէոն Գ. (1854-6) Խրիմի պատերազմին Անգլիոյ հետ Ռուսիոյ դէմ կուռեցաւ, բայց 1860ի ջարդերէն ետք, Լիբանանի ներքին ապահովութիւնը կորզեց Թուրքերէն...:

Յունաստան 1828-29ին անկախ դարձաւ՝ Ռուսերուն Թուրքիոյ յաղթելուն իբր հետեւանք:

Մենք չենք ծանրանար տուրքերու դրութեան, դատարանի, տարրական իրաւունքներու անտեսման, արհամարհանքին, տնտեսական կեղեքումներու մասին: Տարրական պաշտպանութենէ զուրկ էր ոչ-Թուրքը Օսմանեան Կայսրութեան մէջ: ԺԼ. դարուն Կայսրութիւնը հասած էր հոն, որ շրջաններուն մէջ պաշտօնավարող փաշաները իրենց ուզած եղանակով կը կառավարէին երկիրը, առանց մտահոգուելու Կեդր. կառավարութեան միջամտելու իրաւունքէն:

Գերման պատմաբան Ռանքէի խօսքով՝ Թուրքիոյ ցնցումը հա-

կազմակերպություն ստեղծեց և զորացուց ճնշումով ժողովուրդներու մասանկախութեան դադարեցը: Բախումներ՝ բռնաբերելն նոր սճով ծրնունդ պիտի առնէին և ծնունդ առին զործնականապէս:

Անգլիան լաւ հասկնալով Օսմանեան Կայսրութեան մէջ սպրոյ ժողովուրդներուն արդար զփոշոթեանց վերջ տալու առաւելութիւնը ի նպաստ Թուրքիոյ, բազմիցս փորձեց բարեկարգութիւններու անհրաժեշտութիւնը շեշտել Սուլթաններուն մօտ:

Սուլթան Մահմուտ Բ. Ենիշէրիները չկողբացնելէ ետք, ձեռնարկեց որոշ չափով բարեկարգութեանց և նոյնիսկ փորձեց Եւրոպական մեթոտով բանակ մէջտեղ բերել:

Հիւնքար-Իսթիքի (1833) դաշնագրով՝ Ռուսերը Մուհամմէտ Ալին չկողբացնելու խոստումով զորատր ազդեցութիւն ձեռք կը ձգէին Թուրքիոյ մէջ: Անգլիա յաջողեցաւ չկողբացնել այդ դաշնագիրը, նոյնպէս Ֆրանսական ազդեցութիւնը կը չէզոքացուէր Եղիպտոսէն՝ Անգլիոյ կողմէ:

Խրիմի պատերազմէն ետք (1856) Անգլիա և Գրանսա կը յուսային, որ որոշ բարեկարգութիւններ կը մտցունէին Թուրքիոյ պետական կեանքէն ներս: Մեծ պետութիւններու հակասութիւններն են որ «Հիւանդ մարդը» (Թուրքիա) ողջ կը պահէր և առաջը կ'առնուէր նոր բաժանումներուն:

Լորս Պրայս կը գրէ. —

«Փոխադարձ նախնաճը Մեծ Պետութիւններուն՝ արդէք հանդիսացաւ, բնական ուժերու խղիւճ՝ որով քանդուեցան վատ կառավարութիւնները, այլ առիթներով: Դժուար եղաւ այդ բաժանումը Թուրքիոյ, որովհետեւ ո՛չ մէկ Մեծ Պետութիւն միւսին կը վստահէր նեղուցներուն իրաւասութիւնը»:

Թուրքերը չկրցան քայլ պահել ԺԲ. և ԺԳ. դարերուն քաղաքակրթական մակարդակին հետ, ուղեցին արդէք հանդիսանալ յառաջդիմող միւս ժողովուրդներուն՝ որոնք իրենցմէ աւելի յատուկ էին մշակոյթով:

1880ին Կլատոթոն վարչապետ դարձաւ: Ան ամէն առթիւ քրինադատած էր Համիտեան ուժիմը: Ան Պոլսոյ նոր գեսպան նշանակեց Կոչընը և իր Ա. Գ. Նախարար Կրանվիլի հետ աշխատեցաւ զործադրել տալ Սուլթանին Պերլինի ժողովին մէջ խոստացած Բարեկարգութիւնները: Ինչ կը վերաբերի Մոնթենեկրոյի և Յունաստանի սահմաններու հարցին, Կլատոթոն իր խիզախ կեցուածքով կրցաւ Թուրքիոյ պարտադրել, որ յարպէ դաշնադիրները կամ ենթարկուի 6 Մեծերու որոշումներուն:

Պոլսոյ Անգլիոյ գեսպանը՝ Կոչըն շարունակեց բարեկարգութիւններ մտցնելու առաջարկով իր շփումները Սուլթան Համիտին հետ: («Կապոյտ Գիրք», 1880, թիւ 4, 7 և 10):

1880ի Յունիս 11ին, 6 Պետութիւններու Պոլսոյ գեսպանները այդ ուղղութեամբ նօթ գրկեցին Սուլթանին: Այդ նօթին մէջ հայկական 6 նահանգներուն ցաւալի վիճակը պարզելէ ետք կը գրէին. «Թէ 6 Մեծերը չէին կրնար այսպիսի կացութեան մը հանդուրժել,

երբ Բ. Գուար իր դժգոհութիւնը կը յայտնէ այդ դիմումին»: 11 Սեպտ. 1880ին 6 Մեծերը կը պահանջէին ամբողջութեամբ և անմիջապէս զործադրութիւնը Պերլինի դաշնագրին: («Կապոյտ Գիրք», 1881, թիւ 6, լման պատճէնը, նաեւ 2. Պատրմամեանի Պատմ. գրքին մէջ, էջ 122-139):

Սուլթանի շկամութիւնը աչքի առաջ ունենալով, Անգլիոյ Ա. Գ. Նախարար Կրանվիլ՝ Փարիզի, Պերլինի, Վիեննայի, Սէն Բեթերպուրի և Հոտովի Անգլիոյ գեսպաններուն հրահանգ գրկեց հաւաքական ճնշում բանեցնելու համար տուեալ երկիրներու Ա. Գ. Նախարարներուն հետ համախորհուրդ՝ Սուլթանին վրայ: Այս քայլը Պիզմարը թշնամութեամբ դիտեց: (Տես՝ Կոչ, Պրոթին, Ա. Սարգիսեան, Լիալ հեղինակներուն գիրքերը: Մէջբերումը՝ 2. Պատրմամեանի «Հայաստանի Պատմութիւն» հատորէն):

Ռուսիա կրտսրական գիրք բռնեց: Քիչ ետք Անգլիա ևս երկրորդական հարց նկատեց Հայկական Նահանգներէն ներս կատարուելիք բարեկարգութեամբ շատ մօտէն զբաղուիլ: (Ար Ռելիքըմ Ռամսէյ և Պլոյլիէ):

Կարելի է անվարան պնդել, թէ 1883ին ետք Հայկական 6 նահանգներէն ներս բարեկարգութիւն մտցնելու ճիշդ Մեծ Պետութիւններու կողմէ լքուեցաւ:

Անգլիա իր Վանի և Տիգրանակերտի դինուորական կցորդները ևս կը կանչէր: Այս կցորդներուն ներկայութիւնը Հայաստանէն ներս, նպաստեց Անգլիոյ կողմէ «Կապոյտ Գիրքերու» հրատարակման, ինչ որ միջնադարին հանրային կարծիքի լուսարանման նպաստեց որոշ չափով:

1883ին եթէ զործնական միջոցառումներու շղթային Մեծ Պետութիւնները, սակայն իրողութիւն է որ Հայկական Հարցը ծանօթացուեցաւ Եւրոպայի:

«Թուրքիոյ քաղաքականութիւնը կը ձգտէր իր կայսրութեան մէջ բնակող բրիտանացիները չեզոքացնելու, բնաջնջելու» կը գրէ Մանտլէշթայմ:

Անգլիացի պատմաբան Վանտերի՝ 1904ին կը վկայէ՝

«Թուրք գեկավարները հայոց մէջ կը տեսնէին կայսրութեան ամբողջականութեան պահպանման դժմ վտանգ մը: Հայաստանը իրենց կը թուէր երկրորդ Պուլկարի մը՝ զոր պէտք էր ժամանակին ոչնչացնել»:

Արդէն Նահանգները այնպիսի նոր բաժանումներու ենթարկած էին, որ հայերը ո՛չ մէկուսն մէջ չկարենային մեծամասնութիւն կազմել: Բայց Վանի նահանգին մէջ մօտ 50 հազար քր. տարածութեան վրայ հայերը մեծամասնութիւն կը կազմէին: (Բոյ Բորպախ, էջ 232):

Թուրքիան քաջալերեց Տաւրոսի հարաւը զանուոյ քրտները՝ որպէսզի Մուշի, Վանի և Էրզրումի կողմերը հաստատուին, հայոց պատկանող հողերուն վրայ, ուրկէ հայերը շատ անգամ բռնի հեռացուեցան:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Թուրքերը մինչեւ այսօր կը փորձեն դատապարտել հայերը, միշտ պնդելով, որ Հայկական ջարդերուն պատասխանատուն ո՛չ թէ Սուլթան Համիտն ու Երիտասարդ Թուրքերն են, այլ հայերը՝ որոնք ըմբոստացան, վրէժ-խրնդութեան դիմեցին եւ հաւատարիմ չգտնուեցան Օսմանեան հայրենիքի պաշտպանութեան հարցին մէջ, ատոր համար ալ ջարդուեցան:

Մենք կը ցաւինք սակայն այն հայ պատմաբաններուն՝ որոնք գիտնալով հանդերձ անցեալի քաղաքական անտանելի պայմանները Արեւմտահայաստանի մեր ժողովուրդին Օսմ. Բռնատիրութեան ներքեւ, գիտնալով հանդերձ թէ չնչելու հնարաւորութիւնն անգամ շատ կը տեսնէին թուրքերը հայ գիւղացիին, անոնք փոխանակ խոնարհելու իրենց արեան գնով այս ժողովուրդին ազատութիւնն ու անկախութիւնը կերտելու ձգտող անմահ յեղափոխականներու յիշատակին՝ կ'աշխատին դատապարտել գոհը՝ եւ արդարացնել բռնակալները՝ շատ անգամ — ո՛վ հեզնութիւն — փաստեր հայթայթելով թրքական «ինքնարդարացման» թեգերուն...:

Եւ որպէսզի Օսմ. Բռնատիրութեան իրաւ կերպարանքը, իրաւ ձգտումները եւ իրաւ ռերագործ ընթացքը կարենանք փաստել, ստիպուեցանք բազմաթիւ հայ թէ օտար ազգիւրներ անձամբ աչքէ անցնել եւ վկայակոչել՝ յաճախ առանց մեկնաբանութեան՝ խնդումի առաջքը առնելու մտահոգութեամբ:

1870ական թուականներէն սկսեալ հայ քաղաքական մտքի առաջնորդները, մտահոգ մեր ժողովուրդի սոցեալ տնտեսական ոչ-տանելի պայմաններով, կոչ կ'ուղղէին ազգի սեփական ճակատագրին Տէր ԿԱՆԳՆԻԼ եւ ո՛չ թէ քծնել, ԿՌՈՒԻԼ՝ ԵՒ Ո՛Չ Թէ ՍՏՐԿԱՆԱԼ:

Լսենք զանոնք.—

«Յուսալ որ օտար ազգ մը Յիսուսի ըրած հրաշքը պիտի գործէ... ցնորք է, — կը գրէ Մ. Մամուրեանը: — Սպասել, որ արտաքին փրկիչներ գան եւ հայ ժողովրդեան սեւ պատմքը քակեն՝ յիմարութիւն է: Հէք եւ ստրուկ ժողովրդեան մ'առաջին եւ միակ ազատարարը ինքն է, իր աշխատութիւնն է, իր ներքին ուժն է, իր լոյսն, միութիւնն ու հաստատ կամքն է»:

(«Արեւելեան Մամուր», 1876, Յունուար, էջ 5):

Ժողովուրդին դե՛րը... «Ժողովուրդը ըսածը այն գետերուն կը նմանի, որոնց ջրերն մերթ կը բարձրանան եւ հանգարտ երես մը կ'առնուն, մերթ աներեւոյթ կը լինին եւ գետնավար անձաներէ անտես անցնելով՝ յանկարծ կը պայթին, հեղեղատի պէս լեռներէն կը գահավիժին որտեղուցստ եւ քար ու ժայռ քաւալգոր կը բերեն»:

Անդրադառնալով այս մասին, Փրոֆ. Վ. Պարսամեան կ'աւելցնէ.—

«Գիտակցելով ժողովուրդի ուժն ու կարողութիւնը, Մամուրեանը միաժամանակ խիստ դատապարտում էր նրա անտարբերութիւնն ու կրաւորականութիւնը, բռնակալների լծի տակ լուռ ու մունջ մնալը:

«Միրապո՛՛ Տրանսայի առաջին յեղափոխութեան առաջին գործօն հեղինակն եւ բռնակալութեան անհաշտ ու ճարտասան թշնամին, — կը գրէ Մ. Մամուրեան — կը գրէ թէ՛ «Գերութեան շղթաները լգող եւ պաշտող ժողովուրդն աւելի կ'ատէ քան զանոնք որոնք բռնաւորներն: Այս արհամարհական վիճակն, որ մարդկային ազգի պատմութեան խորունկ գիտակցութեան մէջ կ'ենթադրէ, շատ ժողովրդաց քաղաքական կենաց դատակնիքն է եւ մասնաւորապէս հայոց»:

(Մ. Մամուրեան «Հայկական Նամականի», էջ 129):

Հայրենի բանաստեղծներ Վ. Ալազան եւ Վ. Նորենց կը գրեն.—

«ԺՔ. դարի վերջին Օսմանեան կայսրութիւնից արդէն կտրուած էին նրա տիրապետած մի շարք երկրամասերը: Թուրքիան ամբողջովին ենթարկուած էր եւրոպական կապիտալի Ֆինանսական վերահսկողութեանը (Օթոմանեան Պանք, Էմիսիոն իրաւունքի կեդրոնացումն այդ պանքի ձեռքին, «Օթոմանեան Պարտքի Խորհուրդ», Եւայն): Եւրոպական դրամազուտը օգտուելով Սուլթանի կաքիթիւլախոն արտօնութիւններից իր ձեռքն էր վերցրել երկրի ժողովրդական տնտեսութեան կարելուր ճիւղերի մենաշնորհը (ծխախոտի արդիւնաբերութիւն, երկաթուղի, Եւայն), շուկայում տիրապետում էր ներմուծուած էթանազին ապրանքը, որն արդեւէ էր հանդիսանում ազգային արդիւնաբերութեան զարգացմանը եւ միաժամանակ քայքայում էր մանր արտադրողներին ու արհեստաւորներին: Նահապետական աղքատ եւ յետամնաց գիւղի վրայ ծանրացել էին բազմապիսի հարկերը, Սուլթանական պաշտօնեաների անսահման քմահաճոյքը եւ առասպելական չափերի հասած կաշառակերութիւնը, պէկերի ու աղաների սամձարձակ շահատակութիւնները:

«Տնտեսական այս կացութեան հետ երկրի վրայ սուստնում էր արիւնոտ Սուլթանի դիւային կամքը: Միթէտեան ողորմելի Սահմանադրութիւնը կորել էր անհետ եւ դարձել «Երիտասարդ Թուրքերի» համար (որոնք յետագայում իրենց արիւնոտ արարքներով դերազանցեցին Սուլթանին): «Կապոյտ Թռչուն» — Բռնաբարւում էր մարդկային տարրական իրաւունքը: Հասարակական մտքի եւ կուլտուրայի վրայ իջել էր բռնակալի քմահաճոյքի պողպատէ կափարիչը:

«Կուլտուրայի եւ գրականութեան զարգացման օսնձը գտնուում էր Սուլթանական վայրագ եւ խելագար գրաքննութեան ձեռքին, որի դաժանութիւնն ու կասկածամտութիւնը առասպելական չափերի էր հասել:

«1903 թուին պարբերական մամուլին բարձրագույն հրաման է տրուած: 1) Գերագանցապէս տեղեկութիւններ հազարի վեհափառ Սուլթանի բանկազին անողութեան մասին: 2) Չտպագրել երգիծական տողեր առանց Լուսաւորութեան նախարարի նախնական համաձայնութեան: 3) Խուսափել թերթներն ու յօդուածները «շարունակելի» բողոքուց, որպէսզի ընթերցողների մէջ հետաքրքրութիւն չգարձի: 4) Լրագրական սիւնակներում խուսափել ազատ տեղերից եւ կայսման կէտերից, որոնք կարող են վրդովել մտքի անդորրութիւնը»: 5) Եթէ նոյնիսկ կան կէտերից, որոնք կարող են վրդովել մտքի անդորրութիւնը»: 5) Եթէ նոյնիսկ կան կէտերից, որոնք կարող են վրդովել մտքի անդորրութիւնը»: 5) Եթէ նոյնիսկ կան կէտերից, որոնք կարող են վրդովել մտքի անդորրութիւնը»:

«Միսաք Մեծարեան», 1956, Երևան (էջ 4-5):

Իսկ զբազանազէտ Գառնիկ Ստեփանեան կը խորհրդածէ.—

«Մեր թուարկած Հայ զբողները (Պոլսոյ իրապաշտ սերունդը) աւելի մեծ հիմք ունէին զգուշանալու: Նրանք գտնուած էին զաղտնի ոտտիկանութեան խիստ հակողութեան տակ: Դրանից ընդամէնը մի բանի ամիս առաջ տեղի էր ունեցել ծանրակշիւ դէպքեր: Հնչակեանները 1890 (Յուլիս 15) կատարել էին Գում-Գափուր յայտնի ցոյցը, որին յաջորդել էին զանդուածային ձերբակալութիւնները: Լրտեսական ցանցը անցել էր տեղորոտ աշխատանքի, հաղարատը անմեղ մարդիկ ելլալով Պալատը ուղարկուած լրտեսազրեբուծ մատնացոյց էին արուել որպէս հակակառավարական տրամադրութիւններ ունեցող անձնաւորութիւններ: Յատուկ հակողութեան տակ էին 76 բանտարկեալներ — մեծ մասամբ մտաւորականներ — որոնց մէջ էին Հայ զբազան նոր շարժման ղեկավար Ա. Արփիարեան եւ ուրիշներ: Սրանց մեծ մասին Յունուարին (1891) ազատել էին իւրայատուկ ձիակատարութեամբ»:

«... Պատրիարքի հրամանով բանտարկեալներուն կը հրամայուի «Հրաժարիմք ի Սատանայէ» ազօրքը կրկնել Ոստիկանութեան նախարար նազըմ Պէյի ներկայութեան եւ պարտադրուած է պոռայ «կեցցէ վեհափառ Սուլթանը»:

«Համիտի պահանջով Ա. Արփիարեանին կը պարտադրուի «Արեւիկ» թերթին մէջ մեղադրութիւն գրել եւ «հայ ժողովուրդի ամենամեծ բարեկամը Սուլթանն է» յայտարարել: (Տես՝ «Ուրուագիծ Արեւմտահայ թատրոնի Պատմութեան», հատոր Բ., 1969, Երևան, էջ 338-39):

Զ. Գրիգորեան կը գրէ.—

«... Թրքական կառավարութիւնը եւ Երիտ. Թուրքիոյ ատանաբարտական վոհմակը ոչ միայն մանրամասնութեամբ մշակեցին Հայերի զանդուածային շարժերի ու բռնադատութիւնի ոճրապարտ ծրագրերը, այլեւ կարճ ժամանակում դժգոհու ու վայրագ ձեւերով ու մեթոտներով իրազորեցին այն: (Տես՝ «Հայ եւ Ռուս ժողովուրդների Բարեկամութիւնը», 1967, Երևան, էջ 49):

Իսկ Լենին կ'ըսէ.—

«Ոչ ոք մեղաւոր չէ, որ ինքն ստրուկ է ծնուել, բայց գայլոյթի, արհամարհանքի ու զգուշանքի է արժանի այն ստրուկը, որը ոչ միայն փախչում է ազատութեան ձգտումներից, այլ եւ արդարացեալում եւ գումագարդում է իր ստրկութիւնը»: (Տես՝ «Լենին», Երկեր, հատոր 21, էջ 120):

Պատասխանելով Լէոյի՝ Ռ. Փ. Յովհաննիսեան կը զրէ.—

«Հայ ազատագրական շարժումների գնահատման հարցում իր վերջին խօսքը խիստ արտաոց է աւարտում բազմակատակ պատմարան Լէօն: «Շփոթուած սուսական յեղափոխութիւնների եւ ազգային կեանքում կատարուած բոլոր ու անօրե-

նութիւնների իրադարձութիւնների շարունակ թափեց, Հայ ժողովուրդի մի. դարի 60-70-ական թուականների զարթօնը նա բնութագրում է որպէս ամենամեծ յաջողութիւն, որն սկիզբ առնելով Չէյթունի լեռներից, ինքնապայանութեան միջոց Արեւմտահայ ժողովուրդին: (Լէօ, «Թրք. Յեղ. Գաղափարարանութիւնը», Փարիզ, 1934, Ա. հատոր) եւ այդ ամէնը նա համարում է զբոսի, յատկապէս սուսական նորոգիչական հովիտով Արեւմտահայութեան օրօրելի ցանկացող Արեւելահայ մասնորականութեան սխալանքի հետեանք, որպէս առաջնակի պատմութեան գաղտնաւոր յանձնելով Մ. Նալբանդեանի պայծառ յիշատակը: (Լէօ, նոյն, էջ 21-24): Ապա իրաւացիորէն շնորհակալելով Եւրոպայի հետ յոյսեր կապելու սին երազանքը, ինչ անել հարցին, սակայն, որպէս պատասխան Լէօն մատնացոյց էր անում Բ. Դրան դիմելու անհրաժեշտութիւնը, զարմանալիօրէն չնկատելով այդ Դրանը դիպուած լեռնակուտակ ու անպատասխան թագրիքները, (Խնդրագրերը):

«Լէօն միայնակ չէր: Համարեայ միտածանակ նման կարծիք յայտնեց Արտ. Կարինեանը, գտնելով, որ Արեւմտահայ ժողովուրդը, մինչև «զբոս» այն էլ Գաղափարութեան կողմից, բորբոքած յուզումներին, ինքը, զբողները առաջ, ազգային յեղափոխական շարժում չի ստեղծել: Ապա փորձելով պաշտպանել եղծուած այն տեսակէտը, թէ Արեւմտահայ զիւղացիներ անլի բարեւ վիճակում էր սպրում էան Արեւելահայը («Նորք», Երևան 1926, էջ 155), եւ ըմբոստանալու մէջ մի պատճառ չունէր ու չըմբոստանալու, տրամարանորէն յանդում է, Թուրքիայում իրերի գոյութիւն ունեցող վիճակի պահպանման ծայրայեղ յետադիմական կարծիքին, որը չըջանաւորութեան մէջ էին զբոսի Մկրտիչ Պէյ Տատեանի տիպի Հայ պաշտպանականները, Թուրքիան համարելով հայերի երկրորդ հայրենիք»:

«... Առաւել սխալ ու արգահատելի է Երբեմնի տրուած այն յերիքանքը, ինչ 70-90-ական թուականների Հայ Ազատագրական Շարժման գաղափարախօսներն ու զործիչները թուրքական կառավարութեան կողմէ խոշոր գումարներով կաշառուած գործակալներ էին, եւ իր բ. Դուրը նրանց միջոցով յուզումներ էր կազմակերպում, որպէսզի այն առիթ դարձնի հայերի գանգուածային օտարեր կազմակերպելու համար»: (Մակտա Նիւմէն «Արմէնի», Մ. Փէթեհպուրկ, 1899, էջ 268):

(Տես՝ «Արեւմտահայ Ազգ. Ազատագրական Շարժումները եւ կարիքի «Պաշտպան Հայրենեաց» կազմակերպութիւնը», Երևան, 1965, էջ 14-15):

Դարձեալ նոյն պատմարանը իր զրբին էջ 19)ին մէջ կը զրէ.—

«Հայ ազատագրական շարժումը Թրքական Բռնապետութեան դէմ բարձրանում էր, առաջին հերթին, որպէս պատասխան այն սոստանակ կեղեման ու անար խոշտանգումների, որոնց դարերէ ի վեր ենթարկուում էր արեւմտահայ մտղովուրդը՝ թրքական իշխանութիւնների եւ քրտական փէոտակների կողմից»:

Պոլսոյ պահպանողական նկատուած Մ. Արք. Օրմանեան կը զրէ.—

«Այդ զաղտնի նպատակը «Թուրքիա ըսուած երկիրը ամբողջապէս բրբացնելն է» ... որպէսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիր մը ու աչքութիւն մը դառնայ...»:

(Տես՝ «Էսն եւ Խոսք», 1929, Երուսաղէմ, էջ 476):

Այլ տեղ մը կը կարդանք.—

«Իշխանութիւնները եւ անոնց ներկայացուցիչները բացարձակ կերպով կը յայտարարէին, որ իրենք սրտանց կ'ուրբախանան, երբ Հայերը կը մեկնին «Օսմանեան երկրէն»»: (Տես՝ «Ներքին Հայրիկ», Ժողովածու, էջ 115-6):

Պատմաբան Ռ. Յովհաննիսեան կը վկայէ .—

«ԺԹ. դարու 80ական թուականներուն հայ պաշտօնեաները ամենուր եւ արդէն մասսայաբար կը փոխարինէին մահմետական քուրքերը»:

«Ռուսկի Կուրիէր» թերթի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէր որ «Բ. Դուռը կը հետեւէ այժմ իր բոլոր հպատակներէն անոնց ամէն արտօնութիւնները խլելու քաղաքականութեան, որն անոնք կը վայելէին Պոլսոյ առումի ժամանակէն»:

(Ռ. Յովհաննիսեանը գիրքը, էջ 39-40):

Բանասէր Արշակ Ալպոյաճեան կը վկայէ .—

«Այն քաղաքներուն մէջ, ուր մահմետականներն (թուրքեր) առաւել մոլեռանդ էին, հայերու բնակարանները փողոցի վրայ բացուող պատուհաններ անգամ չունէին»: (Տես՝ «Պատմութիւն Մալաթիոյ Հայոց», էջ 1097):

Հնչակեան գործիչ Յրթ. Ճանկիւլեան իր գրքին մէջ կը գրէ .—

«Տարոնի պատուհաս Մուսա Պէյը... գինք մեղադրող մշեցիներուն անարգել կը սպառնար, թէ չուտով Մուշ կը վերադառնայ եւ որպէս այդ բողոքի պատասխան՝ Հայուքեան մնայն իսկ պիտի չքաղու այնտեղ»:

(Տես՝ «Յիշատակներ Հայկական ձգձագումէն», Կ. Պոլիս, 1913, էջ 170):

Ա. Արփիարեան կ'ըսէ .—

«Ազգ մը, նախ իր ճակատադրին վրայ անպարտելի հաւատք պէտք է ունենայ, որ ապրի»: (Տես՝ «Նար Կեանք», 1900, էջ 151):

Հայ գիւղացիին մասին էլիգէ Ռէկլու կը վկայէ .—

«Ամբողջ գիւղեր, կը գրէր ճամբորդ մը, բնակուած են միայն կանանցով, որոնց այրերն ու եղբայրները պանդխտութեան մէջ են, իսկ իրենք մնացեր են ընտանիքի տուն ու տեղին հսկելու»: (Տես՝ «Լագիստան, Հայաստան եւ Քիւրտիստան», էջ 29):

Ս. Համիտի հրահանգը .—

«Նզովք կը դնեմ ինծի յաջողելիք Սուլթաններուն վրայ ... եւ ուխտ կը դնեմ անոնց վրայ, որ մինչեւ աշխարհիս երեսնէն բովանդակ իսլամութեան ջնջումը պատերազմին հայոց անկախութեան դէմ»:

(Տես՝ «Մեր Պայտարը Հայ Ազատագրութեան Ուղիով», Մուշեղ Սերոբեան, Գահիրէ, 1948, էջ 187):

(Ծ. — Այս մասին Սուլթանի փարտուգարը Աշգեան Պատրիարքին կ'իմացնէ, ան ալ 1889ին Դեկտ. 24ի նամակով կը տեղեկացնէ Մալար Կաթողիկոսին):

Հայրենի պատմաբան Փրոֆ. Արտ. Պողոսեան կը վկայէ .—

«Թրքական Բոնակալութեան կողմից կիրարկող ճնշումն ու հալածանքները Արեւմտեան Հայաստանում անցեալ դարի երկրորդ կէսերին ընդհանրապէս, իսկ վերջին քառորդում մասնաւորապէս, ընդունել էին աւելի մասսայական ու դատան բնոյթ»:

«Սուլթանական կառավարութիւնն աշխատում էր ոչնչացնել Արեւմտահայերին կամ բռնի կերպով ցրուել նրանց կայսրութեան հողամասով մէկ: Նա միտաժամանակ արհեստականօրէն սքուծ էր մի կողմից հայերի, իսկ միւս կողմից՝ զրտերի»:

ու այլ ժողովրդների յարաբերութիւնները, ուժեղացնում հալածանքները հայ մասուլի եւ առ հասարակ նրա կուլտուրայի դէմ: Աւելին, յատուկ ծրագիր էր մշակուել հայկական ջարդեր կազմակերպելու համար»:

(Տես՝ «Սոցիալ Տնտեսական Յարաբերութիւնները Կարսի Մարզում», Երեւան, 1961, էջ 182):

Ազատագրական մեր պայքարները հեզնողներուն մասին Շ. Ռ. Յարութիւնեան կը գրէ .—

«Պատմագրութեանը մեծ վնաս էր տալիս սովիւմիւրը: Շատ հետազոտութիւններ, զրկուած լինելով զործօն բնոյթից, սահմանափակուած էին միայն անցեալում ձեւակերպուած յայտնի դրոյթների ցուցադրմամբ կամ այդ դրոյթները հաստատող օրինակների ու փաստերի շարադրմամբ»:

«Գրեթէ մոռացութեան էին տրուած պատմագրութեան հարցերը: Յաճախ էր պատահում, երբ որոշ հեղինակներ հանդէս գալով նիւհիլիստական դիրքերից, ժըլտում էին սուեալ հարցերի կապակցութեամբ իրենցից առաջ կատարուած աշխատանքը»:

«... Վնասակար դեր խաղաց ժողովրդի անարգ թնամի Պերիայի 1935 թուի հրատարակուած «Անդրկովկասի Բոլշեւիկեան կազմակերպութիւնների Պատմութեան Հարցի Ծուրջ»ը արատաւոր գրքոյկի հրատարակ գալը: Նրա մէջ կեղծուած ու ծուռ հայելու մէջ էին ցոյց տրուած պատմական շատ իրադարձութիւններ, իսկ պատմաբաններ հմարաւորութիւն չունէին իրենց իմբնորոյն խօսքի անիլ»:

«... Նիւհիլիստական վերաբերմունք դրսևորուեց մեր անուանի այնպիսի հայազէտների նկատմամբ, ինչպիսիք են՝ Հ. Աճառեան, Յ. Մանանդեան, Մ. Արեղեան, Ա. Տէրտէրեան, Ա. Գալանթար, Գ. Ղափանցեան եւ ուրիշներ, պիտակաւորուելով որպէս պուրժուական նացիոնալիստներ, կուլակային իտէլոյներ, եւայլն»:

«Անհիմն կերպով դաշնակցական-պուրժուական պատմագրութեան ներկայացուցիչներ համարուեցին Թ. Աւդալբէկեանը, Լէօն, Հ. Զօրեանը, որոնք իրր թէ «բացայայտօրէն քարոզել են Փաշիստական-Դաշնակցական, ոսոսայական տեսութիւն»: Հակա-յեղափոխական համարուեցին նաեւ Աղ. Ոսնջեանը եւ Աշ. Յովհաննիսեանը, որոնք իրր թէ «Հայ ժողովրդի պատմութիւնը դիտել ու լուսարանել են Դաշնակցական, Սպեցիֆիկեան, Տրոցկիստական ակնոցներով, դործ են դրել ամէն ջանք ու ճիւղ ապացուցանելու Դաշնակցականների անկախ Հայաստանի նուաճման քաղաքականութեան տեսութիւնը»: Առաջ քաշուեց այնպիսի սխալ, նիւհիլիստական դրոյթ, թէ իրր, «Պալասանեանից մինչեւ Հ. Զօրեանը լոյս տեսած բոլոր աշխատութիւններում կեղծուել են պատմական արժէքաւոր վկայութիւնները»: Բազմա-վաստակ գիտնական Եր. Շահազիզը որակուեց որպէս շովինիստ, նացիոնալիստ, նացիոնալիստական Ֆալսիֆիքադոր, ոչակցիոն-կղերական հայեացքների տէր, շովինիստական-ցեղապաշտ հայեացքների կոնդոր-պանտիստ (մաքսանենք), եւայլն: Դժբախտաբար նման բնոյթ յողուածները քիչ չեն եղել»:

«... 1952ին նիւհիլիստական դիրքերից գնահատուեցին ԺԹ. դարու վերջի եւ Ի. դարու ազգային ազատագրական շարժումները եւ պուրժուա-նացիոնալիստական հոսանքներն ու կուսակցութիւնները Հայաստանի մէջ»:

Ծ. Հ. Գ. — Անհրաժեշտ չենք գտնել մեկնաբանելու վկայութիւնները: Բոլոր ընդգծումները մերն են:

«... Խ. Միտիթևան կոմիտսի Ի. Համադումարը վճռականապես դատապարտեց Մարգարիտ-Լենինիզմի ոգիին խորթ անհատի պաշտամունքը, բացայայտեց վերջինիս հողի վրայ թոյլ տրուած լուրջ սխալներն ու խեղաթիւրումները: Համադումարից յետոյ ամբողջ երկրում լայն պայքար ծաւալուեց անհատի պաշտամունքի եւ նրա վնասակար հետեւումները դէմ: Սով. հասարակական Գիտ. զարգացման հիգիւստիկ հանդիսացան, Ի. Համադումարի որոշումներն եւ արմատական բեկում մտցրին պատմագրութեան յետագայ զարգացման մէջ:»:

(Տես՝ «Պատմագիտութեան Զարգացումը Ս. Հայաստանում», 1967, Երևան, էջ 20-23):

Նայն դիրքէն՝ Լէոյի մասին լսենք.—

«... Լէոյի անհարկի մեղադրանքը հասնում է իր գազաթնակէտին, երբ նա Մ. Նալբանդեանին համարելով Թրքահայ Յեղափոխութեան գազափարախօսներէց մէկը, եհնց այդ գազափարախօսութիւնն էլ համարում է մէկ միլիոն հայերի բնագնդան պատճառ:»:

«... Լէոյի անհարկի մեղադրանքը հասնում է իր գազաթնակէտին, երբ ազատագրական պայքարը միշտ էլ յառաջդիմական բնոյթ է ունեցել, ուրիշ բան է, որ այն շարժանուն է Արեւմտակրոնական տէրութիւնների եւ ուսական ցարկովի կողմից: Հարկաւոր է դատապարտել ո՛չ թէ հայերի ազգային շարժումները, այլ այն քաղաքականութիւնը, որ մղում էր պարծուական պետութիւնների կողմից այդ շարժումներն իրենց սեփական օգտին ծառայեցնելու համար, ինչպէս եւ այն սխալ ուղին, որով աշխատում էին իրականացնել հայերի ազատագրումը հայ պարթուայ նացիոնալիստական պարտիաները(?)»: (ճոյն գիրքը, էջ 301):

Հայոց մեծ լեղուարանը կը վկայէ.—

«Այցելութեան միջոցին մի օր, Յուլիս ամսի 15ին էր (1890) հայրս զաղտնի խօսեց ինձ հետ եւ հարցրեց, թէ «վարը ի՞նչ է կղեր, հայերը եւ տաճիկները կուտեն են»: Դա հայոց առաջին յեղափոխական ցոյցն էր, որ տեղի ունեցաւ վանքի Յարութիւն ձիւնակիւնի ղեկավարութեամբ, մեր պատրիարքարանում: Հայերի եւ տաճիկների կողմից կային 8 մեռեալ եւ 32 վիրուոր: Ճիհանկիւններն ձերբակալուել էին եւ բերել էին բանտ: Համառոտակի պատմեցի ղէպը հօրս (որ բանտարկուած էր — Հ. Գ.), որ իր կողմից աւելացրեց, թէ «ձիհանկիւններն հոս է, ով ինչ որ կը հարցնէ իրեն, մէկ պատասխան ունի, ոչինչ եւ միշտ հայերէն. ուրիշ մէկ խօսք չ'ուզեր կոր ըսել»:

(Տես՝ «Կեանքիս Յուշերից», Հրաչեայ Աճառեան, 1967, Երևան, էջ 88):

Հնչակեան Մինաս Բերբերեանին զրած նամակին մէջ հայրենասէր բանաստեղծ Ալ. Մատուրեան կը գրէ.—

«Ո՞րն է այս րոպէիս հայի ամենամեծ վէրքը, որից զիշեր-ցերեկ արին է թափուում... Ի հարկէ հայոց խնդիրը, Սասունի սովը, կոտորածը, հազարաւոր հայ մարտիրոսները, որոնք ընկնում են ազգի ազատագրութեան համար, ընկնում են բռնութեան դէմ անգուպ, կատաղի կռիւ մղելուց յետոյ...»:

(Տես՝ «Գրական ժառանգութիւն», 1961, Երևան, էջ 41):

Նազարէկի եւ Հնչակեան օրկաններու մասին. Ս. Շահումեան.—
«Մեծարգոյ Վլատիմիր Իլիչ (Լենին)

«Ուղարկում եմ Ձեզ նազարէկի նոր օրկանի մասին մի փոքրիկ յօդուած...»:

«... Շահումեանը ողջունում է «Ապագայ» Հնչակեանների նոր օրկանը: Դա «բանուորական շարժման մի նոր յաղթանակն ու նուաճումն է կովկասում» ասում է նա, յաջողութիւն ենք ցանկանում երան՝ նշում խնդիրների ամենաարագ իրագործման մէջ»:

(Տես՝ «Վերելու», 1905, թիւ 8):

«... «Վերածնունդը» (Հնչ. օրկան Ռուսոյ — Հ. Գ.) գաղափարը սնցած աշնան, նպատակ ունենալով այն դարձնել իսկական Ս. Գ. օրկան: ... Այժմ թերթը խմբագրում է նազարէկը, ընկերների հետ միասին»:

«... Վերելու»ի մէջ սխալմամբ Դրօշակեան եւ Հնչակեան չիտրուած է: Շահումեան կը գրէ Լենինին, թէ Գոնկըլի մէջ Հնչակեան չկար, իսկ «Եթէ ԴրՄԱՔ Լինին էլ, ԱՊԱ ԱՆԿԱՍԿԱՆ, Ո՞՞ Թէ ԴԻՕՇԱԿԱԿԱՆՆԵՐԻ, ԱՅԼ ՄԵՁ ՀԵՏ ԿԸ ՔՈՒԼԵԱԿԵՆ...»:

«... Երևանի Ս. Գ. կազմակերպութիւնը, մատաղ, անփորձ ու ինտելիգենտական մի կազմակերպութիւն էր (Հնչակեան ծաղում ունեցող մի քանի մատուրականներ 1905 թուականի աշնանը եւ ձմեռնը ղեկավար դեր էին կատարում կազմակերպութեան մէջ):»:

(Տես՝ «Ստեփան Դաւիթեան», Խիկար Բարսեղեան, Երևան, էջ 173):

Բանաստեղծ Ս. Տարսնցին կը գրէ.—

«Դանիէլ Վարուժանը... երբում է հայկական կատարածները («Ձորը», «Կիրիկեան Մոխրներուն») եւ ցոյց է տալիս արեւնոտ իրականութիւնից դուրս գալու ելքը՝ ժողովրդական պայքար ընդդէմ սուլթանական բռնակալութեան: ... Առաջին բանի վրայ է դնում պատմական այն հերոսներին, որոնք անմնուրաց պայքարել են ժողովրդի ազատագրութեան համար: Նա ժողովրդին վրիժառութեան է կոչում: Վրէժ — անա բռնակալների միակ հատուցումը»:

(Տես՝ «Գանիէլ Վարուժան», 1955, Երևան, էջ 5):

Գրականապէս եղիչէ Պետրոսեան կը գրէ.—

«Այս կոշտարային վիճակն առաւել սրութեամբ արտայայտուեց 1908 թ. զաղաքական իշխանութիւնը նուաճած «Երեսասարդ Թուրքերի» արեւալի տիրապետութեան օրօք: 1909 թ. Առանայի կոտորածն ապացուցեց, որ ազգային հարցում, մասնաորոպէս ղէպի հայերն ունեցած վերաբերմունքում, պարթուական ծայրայեղ ազգայնական այս պարտիան զերազանցեց Ապտիւլ Համիդին»:

(Տես՝ «Ռուբէն Սեւակ», 1955, Երևան, էջ 5):

Փրոֆ. Հայկազ Պօղոսեան կը գրէ.—

«1890ական թուականներին ազգային-ազատագրական շարժման կայծակը պայթեց Սասունի զմբուխտեայ լեաներում, եւ 1894 թուականին սկսուեց Սասունի լեանականների հերոսական ապստամբութիւնը»:

Դարձեալ նայն պատմարանը.—

«... Իսկ Ձէյթունցիների հերոսական սխալործութիւնները երկար ժամանակ որպէս մի ջահ լուսաւորել են մեր ազատաստենչ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զօրաբանն ու փորձութիւններով լի ձանադարձը: Ձէյթունցիները թրքական հարստահարողների դէմ մղուով ազատագրական պայքարի տարկերութեան մէջ անմոռանալի կէտր են թողել»:

(Տես՝ «Զէյթունի Պատմութիւնը», Երևան, 1969):

Ծ.— Բոլոր ընդգծումները մերն են.— Հ. Գ.:

Ակաղ . Վերջինը Համբարձումեան կը վկայէ .—

«Քրքական ցեղասպանութեան հարցում հայերին մեղադրելը որքան միամտութիւն, նՈՐՆՔԱՆ, ՄԵՆՄԱԳՈՐՆ ՆԱԽԱՏԻՆՔ է Ո՛Ձ ՄԻԱՅՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԵՆԱՐ-ՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅ ՁՈՂԵՐԻ, ԱՅԼԵՒ ԲՈՂՈՐ ԴԱՐԵՐԻ ՁՈՂՈՒԱԾՆԵՐԻ ՍՈՒՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ :

«Քրքական աղիտալի տիրապետութիւնն իր հաստատման առաջին իսկ օրէց դատն ճշման եւ կեղեքման արեւնոտ ոչժիմ էր հաստատել Արեւմտեան Հայաստանում, որի հետեւամբով էլ ծնունց հայ ազգային-ազատագրական շարժումը»:

Ան կը շարունակէ .—

«Առաջին տեղերում ինքնապաշտպանութեան կոտորածները յաջող արդիւնքները (Վան, Մուսա Լեռ) ցոյց տուցին, որ եթէ դիմադրութիւնը ունենար անլի լաւ կազմակերպուած բնոյր, այդ կազմակերպումը ընդգրկէր ամբողջ Արեւմտեան Հայաստանը, եթէ դիմադրութիւնը լինէր լաւ մախապատրաստուած, լինէր անհրաժեշտ չափով զէմք, ապա այն կարող էր պսակուել շատ անլի մեծ արդիւնքներով»:

«Սցեռնի 50 Ամեակին Առքի», 1965, «Պատմ. Բանասիրական հանդէս»:

Ստեփան Ոսկան կը վկայէ .—

«Աղբրմէի հայեր, շաքաւեհու բերան ինկեր էք եւ ձեր հայրենակիցք Այվազներու ինկաման շնորհներու ետեւէ են տակաւին: Վառօղի ամամ պէտք է, ինկաման կը պատրաստեն: Վա՛յ Հայկին թողները, վա՛յ»:

(Տես՝ «Արեւմուտք», 1859, թիւ 7, էջ 25):

Յարութիւն Սվաճեան կը թելադրէ .—

«Դարս ազգաց վերակենդանացման դարն է, այս դարուն, այս տարիներուս մէջ, ինքզինք չհոգացող ազգը կ'երթայ ի կորուստ անդառնալի եւ ի կործանումն անկանդնելի... միանանք ազգայնութեան փառաւոր դրօշի տակը եւ ի մի սիրտ եւ մի հոգի հոգեալ ամբասնէք, ստուարացնէք, Ազգին արմատները, անանկ որ ո՛չ հիւսիսի ցրտաշունչն ու թուփախիլ հովերը կարող ըլլան դանի երկիր կործանել, անոր ճիւղերը եւ տերեւները եւ պտուղները ցամաքեցնելու, ցրուելու, ոտից կոխան ընելու եւ ո՛չ հասարակածի վրայի կիզիչ արեւը կարող ըլլայ դանի չորացնելով փոշի դարձնելու եւ զեփիւռներու անգամ խաղալիք ընելու»:

(Տես՝ «Մեզու», 1860, թիւ 102, էջ 139):

Փրոֆ. Կնեսազ Քարամեան կը վկայէ .—

«Ամբողջ Քրքական տիրապետութեան ընթացքում, ինչպէս նախորդ տիրապետողների ժամանակ, ապրեց ու աճեց Հայ Ազատագրական եւ Ազգային-Ազատագրական շարժումը՝ յարափոփոխ բախտով ու ծաւալով, նուազելով անտեսանելի լինելու աստիճան, բռնկուելով ամբողջ Հայաստանով մէկ: Հակառակ դաժան ճրնչումներին, ջարդերին, քաղաքական ու անտեսական կապանքներին, բռնազաղթերին, բռնի կրօնափոխութիւններին, մանկահաւաքներին եւայլն, թուրք-պարսկական ճնշող լծի տակ ապրող հայ ժողովուրդը ամուր կառչած մնաց ազատագրուելու իր հաստատ կամփին, ապրելու եւ ստեղծագործելու իր իրաւունքին: Այդ իսկ պատճառով նա իր հոգու բոլոր թելերով կապուած մնաց իր մայր հողին, լեզուին եւ բարբերին: Ընդ է, նա շատ յաճախ դիմեց եւ պանդխտութեան, խօսեց օտար լեզուներով, բայց միշտ էլ դա նկատեց առժամեայ մի միջոցառում, հոգեպէս ազգայնացրեց այն:

«... Չնայած Սուլթանիզմի կիրառած ձուլողական եւ ջարդարարական քաղաքականութեան, հայ ժողովուրդը միշտ հաւատարիմ մնաց ինքն իրեն, պահպանեց Հայաստանի հայեցի դրոշմը, նոր մղում տուեց հայկական մշակոյթին, զարգացրեց ոչ միայն ազգային միասնութեան գաղափարը, այլ եւ երկրային ամբողջութեամբ միտքը ու բոլոր միջոցներով ձգտեց այն դուրս բերել թուրք բռնակալութեան քունտ մթնոլորտից:

«Ինչո՞վ են տարբերուած պարսկա-հիւզանդական, Մոնկոլ-թաթարական, Շահ Արասի աւերածութիւններն ու ջարդերը Սուլթանիզմի, Երիտ. Թուրքերի, Քեմալականների ցեղասպանութիւնից: Նրանով, որ մինչ առաջինները նպատակադրուել էին ժամանակաւոր կողոպուտ՝ աշխարհակալութեամբ, վերջինը ձգտում էր հայութեան իսպառ ոչնչացման գնով տիրանալու նաեւ նրա երկրին»:

(Տես՝ «Հայ Ժողովուրդի Ազգ. Պայքարի Օրինակալու թեան Հարցի Ծարքը», 1969, Երեւան):

Փրոֆ. Վ. Պարսամեան կը գրէ Սուլթանի քաղաքականութեան մասին .—

«Օսմանեան Կայսրութեան մէջ մոլեգնող Համիտեան րէակցիան չափազանց ծանր ու անտանելի դրուժին ստեղծել էր երկրի բոլոր ժողովրդների, յատկապէս հայերի համար: Սուլթան Համիտը ձգտում էր հայերին կոտորելով լուծել Հայկական Հարցը. նա ո՛չ մի միջոցի առաջ կանգ չէր առնում իր դիւային ծրագիրը իրագործելու ճանապարհին:

«Ստեղծուած ծանր դրութիւնից դուրս գալու համար հայերը հերոսական ջանքեր էին գործադրում, ինքնապաշտպանութեան կոտորածի մղում, ազատագրական նոր ուղիներ որոնում»:

(Տես՝ «Հայ Ժողովրդի Պատմութիւն», Երեւան, 1967, հատոր Գ., էջ 424):

«Երիտ. Թուրքերի իշխանութիւնը չլուծեց ժողովրդին յուզող սոցիալական եւ ո՛չ մի հարց: Հակառակ Սահմանադրութեան հուշակած սկզբունքներին, Արեւմտահայերը ձեռք չբերեցին կեանքի, գոյքի եւ պատուի ապահովութիւն: Նրանք, ինչպէս Համիտեան ոչժիմի ժամանակ, ենթարկուած էին դաժան ճնշման ու հալածանքի, Թուրք պաշտօնեաների ու քուրտ պէկերի կամայականութիւններին:

«Արեւմտահայ գիւղացիները, անցեալի պէս, տառապում էին ֆէոտալական ճնշման, ուղղակի եւ անուղղակի հարկերի բեռան տակ: Գիւղացիներից մասսայաբար խլում էին նրանց հողերը, Արեւմտեան Հայաստանը բնակեցնում Պալքաններէից գաղթած ՄՈՒՀԱՃԻՐՆԵՐՈՎ, հայերին հարկադրում էին թողնել ու հեռանալ իրենց հայրենի հողերից:

«Երիտ. Թուրքերը մոլի նացիոնալիստական, Բանթուրքիստական քաղաքականութիւն էին վարում ազգային հարցում: Նրանք երազում էին նուաճել Պոսֆորից մինչեւ Ալթայ մահմետական բնակչութիւն ունեցող բոլոր երկրները, Մեծ Կայսրութիւն ստեղծել, ձուլել եւ ոչնչացնել իրենց ճանապարհին ընկած քրիստոնէայ ժողովուրդներին:

«Երիտ. Թուրքերի քաղաքականութիւնը հայերի նկատմամբ շատ անլի յետադիմական, բիրտ ու դաժան եղաւ, քան Սուլթան Համիտի ժամանակ: Նրանք ամբարտաւան ձեւով յայտարարում էին, թէ «Թուրքիոյ մէջ մէկ ազգ կայ՝ Օսմանցի ազգը» եւ չէին ճանաչում հայերի, յոյների, արաբների, քրտերի ու միւս ժողովրդների ազգային իրաւունքները: Նրանք քարոզում էին թուրք ցեղի եւ թրքական լեզուի «Բացառիկութեան» ցեղապաշտ գաղափարը եւ ուրիշ ո՛չ մի ազգ, ոչ մի լեզու չէին ճանդուրժում Թուրքիոյ մէջ»:

(Տես՝ «Հայ Ժողովրդի Պատմութիւն», Գ. հատոր, Երեւան, 1967:

Փրոֆ. Կնեայ Թառոյեանի վկայութիւնը.—

«ԺԹ դարի վերջին քառորդում Թուրքիան շարունակում էր մնալ Արեւելեան տիպի ֆէոտալական բռնապետական երկիր՝ յետամնաց տնտեսութեամբ, պետական և հասարակական յետամնաց կարգերով ու կուլտուրայով: Թրքական Սուլթանութեան ծանր լծի տակ հեծող բազմաթիւ ազգեր ու ժողովուրդներ, այդ թւում նաև Թուրք աշխատաւորութիւնը, դարձել էին պետութեան, երկրի շահագործող դասակարգերի հարստահարումների, կեղեքումների ու բռնութիւնների օպիկտ: Այդ ճնշումն ու կողոպուտը առանձնապէս դժման ձևեր էին ընդունել Արեւմտեան Հայաստանում:

«... Սուլթանական կառավարութեան յետագայ ամբողջ քաղաքականութիւնը գնում էր այն ուղղութեամբ, որ տնտեսական, քաղաքական և ազգային դժման ճնշման միջոցով նախ կրճատի հայերի քիւր, ապա ֆիզիքական քնազնջման միջոցով Հայկական վիլայէթներն ամբողջովին մաքրի Հայերից: Այդ քաղաքականութեան հետևանքով Արեւմտեան Հայաստանում գնալով հայերի թիւը անընդհատ նուազում էր: Արեւմտեան Հայաստանի աշխատաւորութիւնը դժման շահագործման ու կեղեքման էր ենթարկւում Սուլթանական կառավարութեան, բուրժուազիայի և քրիստոնէական պաշտօնեաների, հարկահանների, վաշխատուների, ինչպէս նաև հոգեւոր հաստատութիւնների կողմից:

«... Սուլթանական բռնակալութեան դէմ ուղղուած 1894 թուականի Սասնեցիների ելույթը ինքնապաշտպանական բնոյթի ժողովրդական ապստամբութիւն էր, որը հետեւեալ էր այն դժոխային պայմաններին, որոնցում ապրում էին Սասունի հայ գիւղացիները: Այդ ապստամբութեան եւ ընդհանրապէս Սասունի շարժումների մէջ Հնչակեան գործիչների մասնակցութիւնը անհերքելի է: Նրանք գործում մասնակցութիւն են ունեցել դրանցում եւ գոհեր սուել: Հնչակեաններից Մ. Տամատեանը, Հ. Պոյանեանը (Մուրատ) Ա. Ղազարեանը եւ ուրիշներ ձգտում էին համագրային բնոյթ տալ ներքինից ծաւալուող Սասունի շարժումներին, համախորհել հայերի ու ժողովրդի ընդդէմ քուրք ու բուրժուազիայի կեղեքիչներին»:

«Ժողովրդական Շարժումները Սասունում», 1966, Երեւան:

Սասնոյ Հերոս մարտնչողներու սխար.—

«Օր մը չէ օր մը պիտի մեռնինք, ստիկա լայարձակ ճշմարտութիւն է, հետեւաբար թող այսօր ըլլայ մեր մահուան օրը: Մենք Հայաստանի ապստամբութեան արշալոյսը դառնանք: Մենք մեռնինք քաջարար, զէք ապագայ սերունդը թող ազատ ապրի...»:

«Երլորդէ Սասուն» Սմբատ Բիւրատ

Հայ ազատագրական պայքարի ի նպաստ այլ վկայութիւններ.—

«Գում Գափուի ցոյցը հայկական արդարուն էր, որ իր վրայ հրաւիրեց էր անտարբեր Եւրոպայի և Մեծ Տէրութեանց ուշադրութիւնը: Օտար մամուլը զնահատեց զայն, իբրև առաջին հայ յեղափոխական զիտակցական ու նախադրուած բայլ, և իբրև հայկական ձգտումներու գործնական արտայայտութիւնը: Անկախ մեծագոյն փրփականտան էր ի նպաստ Հայկական Յեղափոխութեան, որ կուզար սարսափեցնել խոստումնադրութ կառավարութիւնը և հասկցնել թէ յեղափոխութեան հարցը անշէջ է այլեւս»:

«Հայապատում», Գաղիկ Օդանեան, 1912, Մարզոտան:

Հայրենի Օրէնսդէտ Ա. Եսայեան կը վկայէ.—

«Այլ կերպ ասած՝ դարերի ընթացքում չկարողանալով Հայաստանը մարտել հայերով, Թուրքիան որոշեց Հայաստանը իւրացնել առանց հայերի:

«Այսպիսով Երիւ. Թուրքիայի կառավարութեան նախադրած ցեղասպանութեան քաղաքականութիւնը իր սուր ծայրով ուղղուած էր ժողովուրդների անկապտելի իրաւունքի՝ ինքնորոշման իրաւունքի դէմ, ինքնազոյութեան դէմ:

«Հայերի նկատմամբ ցեղասպանութիւնը Թուրքիայում իրականացուած էր պետական քաղաքականութեան մակարդակով, պետականօրէն «օրինականացուած» ձևով»:

«Հայկական Հարցը եւ Միջագային Դիւանագիտութիւնը», 1965, Երեւան, էջ 35:

Գրականագէտ Հր. Թամրազեան կը վկայէ.—

«Պատմութիւնից յայտնի է, որ մի շարք մարդիկ չափազանց սխալ և միակողմանի գնահատական են տուել հայկական ազատագրական այն ռզորումներին, որոնք ուղղուած էին քրքական ֆէոտալիզմի եւ նոր բարձրացող արիւնարբու պուրժուազիայի դէմ: Նրանց վերլուծութիւնները յաճախ հասել են արտասոց եզրայանդման: Նրանք յառաջդիմական են համարել հայ էֆէնտիներին, վերնախաւի ստրկահանութիւնը Սուլթան Համիտի, Երիտասարդ Թուրքիայի նկատմամբ: Պահպանողականների (Թուրքոֆիլ կամ հեռանկատ) հոսանքը յետոյ չէր ժողովրդական լայն մասսաների վրայ»: Այլ կերպ ասանքին ամիրանների Թուրքոֆիլ քաղաքականութիւնը չէր կարող երբեք դառնալ ուժեղ և իշխող հոսանք, եթէ միայն նա չհամապատասխանէր ժողովրդական լայն տարրերի շահերին ու ձգտումներին: Ինչ վերաբերում է «հակաթուրք» բանակին, միանգամայն ապացուցուած կարելի է համարել այն, որ այդ բանակի սոցիալական յենարանը եղել է Պոլսահայ և զաղութահայ պուրժուազիան»:

Արտ. Կարինեանի «Հին Թուրքիան եւ Թուրքահայերը», («Նորք», գիրք 11, 1929, էջ 167-174):

Հ. Թամրազեան կը ջախջախէ այդ թեզը գրելով.—

«... Մտածողը (Ա. Կ.) մինչև անգամ գտնում է, որ «Թրքահայերը ընդհանրապէս աւելի լաւ էին ու արտօնեալ, քան Թուրքերը»: Ստացուած է, որ հայերն իրենք են մեղաւոր իրենց հայրենիքի կործանման համար, իրենք են իրենց ոչնչացրել, իսկ անմեղ, ներողամիտ Թուրքերը ստիպուած են եղել նրանց ոչնչացնել... Հարկ չկայ թերևս այսօր վիճի մէջ մտնել նմանօրինակ հայեացքների հեղինակների հետ, որոնք կտակարանի հէքիաթով են կարծես ցանկանում ապացուցանել 19րդ դարի վերջի և 20րդ դարի քաղաքական անցքերը: Հայերը ապրում էին դրախտում, բայց գերուելով սատանայական մտքերով, ճաշակեցին կենաց ծառի պտուղները, ճանաչեցին իրենց իրենց, զգացին իրենց մերկութեան ամօթը և զրկուեցին աստուածային շնորհից՝ դրախտից, հետևաբար դրախտից դուրս պէտք է զրտնեն և տառապեն»:

«Հազարաւոր փաստեր և, առհասարակ, պատմութեան և քաղաքականութեան տրամաբանութիւնը ցոյց են տալիս, որ հայերի շարքը վաղուց պատրաստուած մի երեւոյթ էր, որին զգալի չափով նպաստում էր հայ էֆէնտիներին ստրկահանութիւնը: Չափազանց ուշագրաւ է եւ այն, թէ ի՞նչ նակատագիր ունեցաւ այդ «իմաստուն» վերնախաւը: Ճիշդ է նա յաճախ ստորաբարձրէն սողում էր Թուրքիայի եւ Ռուսաստանի առաջ, բայց թիշդ է եւ այն, որ բարբարոսները իրի մատնեցին ամենից առաջ հէնց այդ վերնախաւը՝ հարստութիւնը կողոպտելու եւ քաղաքներու համար»:

(Տես՝ «Սիամանթօ», Երեւան, 1964, էջ 56-59):

Հ. Թամրազեան կը շեշտէ .—

«... Հայ գրականագէտը (Ակադ. Արտաշէս Կարինեանը) եւ մտածողը, գար- մանալի մեզմ է խօսում քրքակամ փետտալիզմի եւ արիւնարբու պորժուազիայի մասին, այն Թուրքիայի, որի մասին դեռ Մարքսը գրում էր, թէ այդ բարբարոս երկրի կուլտուրական տարբերը այլազգիներ են, հայերը, յոյները, հրեաները, որ այդ երկիրը իր ազտեղութեամբ ժողովրդների բամտ է»:

Եւ դեռ՝

«Ցաւօք, մեր պատմագրութեան մէջ ոմանք, ԿՈՐՑՆԵԼՈՎ ՌԻՂՃՆ ՈՒ ԲԱՆԱ- ԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻՉՄԻ ԴԷՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԼՈՁՈՒՆԳՈՎ, ԿԱ- ՄԱՅ ԹԷ ԱԿԱՄԱՅ ԱՐԴԱՐԱՑՐԵԼ ԵՆ ԲԱՆԹՈՒՐՔԻՉՄԻ ԱՐԻՒՆՈՏ ՔԱՂԱՔԱ- ԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՄԵՂՄԱՑՆՈՂ ԿԱՄ ՕՐԵԿՏԻԻ ՀԻՄՔԵՐ ՈՐՈՆԵԼՈՎ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵՆԿՈՒՅՆ ՅԱՆՑԱՆՔԻ՝ ԱԶԳՈՒԹԵԱՆ ԲՆԱՋՆՁՄԱՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՐ- ԲԵՄՆ ԷԼ ԱՅՍ ԿԱՄ ԱՆՆ ԿԵՐՊ ԿՐԿՆԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՄՏՔԵՐԸ»:

«Միամանքօ», Երեւան, 1964, էջ 232):

Պատմարան Փրօֆ. Հայկազ Ղազարեան կը գրէ .—

«1880ական թուականների սկզբին Թուրքիայի նկատմամբ արդէն ընդդիմա- դիր տրամադրութեամբ համակուած դաւառահայ պուրժուազիայի հասունացման պայմաններում արիւնկզակ Սուլթան Համիտը արմատապէս փոխում է իր քաղա- քականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ, ոչնչացնում «Թանգիմաթն» ու օրէնսդրա- կան միւս բոլոր ակտերը, համաձուլման, ունեզրկելու քաղաքականութիւնից, անցնում «ռուսասէր կեանքներին» ոչնչացման, երկիրը հայազրկելու ճնոր ար- շակին»: Աւարտում է Թուրքիայի, առաւել եւս Արեւմտահայութեան զարգացման երկրորդ շրջանը, ծայր են առնում Հայկական կոտորածները, որոնք 1890ականների գերեզման տարան 300 հազար հայերի:

«Համիտին յաջորդող Երիտ. Թուրքերը գերազանցեցին արիւնարբու նախոր- դին, մեծ նախճիր գործելով ոչնչացրին 1,5 միլիոն հայերի, լուեցրին Արեւմտահայ երգն ու երաժշտութիւնը, թատրոնն ու գրականութիւնը, հայազրկեցին Արեւմտեան Հայաստանը»:

«Արեւմտահայերի Սոց. Տնտեսական Փաղափական Կացութիւ- նը», 1800-1870 թ.թ., Երեւան, 1967, էջ 633-4):

Սոյն գրքի յառաջարանին մէջ Ակադ. Աշ. Յովհաննիսեան կ'ը- սէ .—

«... Բնութագրում են ակրարային (հողային) յարաբերութիւնները Արեւ- մրտեան Հայաստանում, բացայայտում են Օսմանեան պետութեան, Թուրք ու քիւրտ վերնախաւերի վարած սոցիալական ու ազգային ըրտ քաղաքականութիւնը, յատուկ ուշադրութիւն է դարձնում քաղաքային կեանքի հետազոտման...:

«... Անդրադառնում է նաեւ Սուլթանական բռնապետութեան դէմ ոտքի ելած Արեւմտահայերի ազգային ազատագրական շարժումների, «Ազգային Սահմանադ- րութեան» եւ հասարակական քաղաքական հոսանքների պատմութեանը»:

«Այնպս չէ, որ մինչեւ 1930ական թուականների կէսերը Արեւմտահայերի պատմութեան ուսումնասիրութիւնը թողնուած էր երեսն ի վայր իրավիճակում:

«... 1950ականների եւ 1960ականների առաջին կէսը Արեւմտահայ հատուա- ծի, սովետական պատմագրութեան հետազոտման, աննախընթաց վերելքի տարի- ներն էին: Վերականգնելով կուս. քաղաքականութեան Լենինեան նորմերը, լայն հնարաւորութիւններ ընձեռնուեց հասարակական գիտութիւնների զարգացմանը, տա- րիներ առաջ գրուած գործերի լոյս աշխարհ գալուն»:

Լէոյի «Թրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը» գրքի մասին Փրօֆ. Հայկ Ղազարեան կը գրէ .—

«... Պոկրովսկու դպրոցի կնքադրոշմը ակնյայտ է (Լէոյի) գործերի վրայ, որոնց պատճառով էլ հակասութիւններով լի են Լէոյի աշխատութիւնները, յաճախ սխալ ու միակողմանի են հեղինակի գնահատականները՝ հայ ազատագրական շար- ժումների, հասարակական-քաղաքական գործիչների ու մտաւորականների վերա- բերեալ:

«Արժուեհական Լիպերալիզմը ժամանակին կուրացրեց Լէոյին եւ թոյլ չտուեց ճիշդ գնահատել առաջաւոր դիրքերում գտնուող Արեւմտահայ դեմոկրատ Ստ. Ոսկանեանի աշխարհայեացքը: Լէոն լիպերալ պիտակ տուեց Ստ. Ոսկանեա- նին... մոռացաւ նրա նախա-նալպանտեանական, 1850ականների դեմոկրատական գործունէութիւնը, չտեսաւ երկուսի զաղափարական առնչութիւնները... Աւելի վատթար վիճակում ներկայացուեց մեծ դեմոկրատ Նալպանտեանի զաղափարա- մերձ, Արեւմտահայ հասարակական-քաղաքական կեանքում խոր ակօս զծող Մ. Մա- մուրեանի ժառանգութիւնը, իսկ նրա աշխարհայեացքը գնահատուեց իբրեւ լիպե- րալ տատանումներ ունեցող պահպանողականի»:

(«Մուրե», 1901):

«Արեւմտահայ գիւղացիութիւնը ՃՈՐՏ որակեց, մերժեց ազատ գիւղացիու- թեան գոյութեան փաստը Թուրքիայում: Նա չտեսաւ որ 1840-70ական թուական- ներին, ա'յսինքն՝ «Թանգիմաթ»ի կիրարութեան շրջանում, Թուրքիայում իրաւա- կանօրէն ձեւակերպուած հայ ճորտեր չկային, իսկ փաստապէս ճորտացուածներն էլ կազմում էին գիւղացիութեան շնչին տոկոսը: Գիւղացիութեան հիմնական գան- դուածը հողատէր, թէ հողազուրկ, յամենայն դէպս ազատ գիւղացիներ էին»:

Հ. Ղազարեան կը գրէ .—

«Գաղութահայ օճախներում ծուարած, Թուրք-բերոպական առեւտուրը կա- մրընող գումարադրական պուրժուայից զատ, պատմարանը (Լէօ) չկարողացաւ նըշ- մարել դաւառահայ ազգային պուրժուազիայի բարձրացումը, ազատագրական շար- ժումների ղեկավար դառնալը, ուստի եւ իր որոնումների մէջ հայկական շարժում- ները որակեց իբրեւ «ռուսահայ ինտելիգենցիայի (մտաւորականութեան) գործը: ՆԱ ՓԱՍՏՕՐԷՆ ԱՆՏԵՍԵՑ ՀԱՅ ԱԶԱՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԻ ԻՆՔՆԱՖՈՒԹ ԲՆՈՅԹԸ, ԴՐԱՆՑ ԴԻՏԵՑ ԻՐԻՆԻ ԴՐՍԻՑ «Ներմուծուած» ԵՐԵՒՈՅԹՆԵՐ: Հասկա- նալի է, որ հեռու մնալով մարքսիստական զաղափարախօսութիւնից, բեղմնաւոր պատմարանը պիտի խարխափէր հակասութիւնների բաւիզում, կատարէր սխալներ եւ անուղակիօրէն յետագայ ուսումնասիրողներին հարկադրէր գրազուելու իր սխալների շտկումով»: (էջ 23-24):

Ակադ. Արտ. Կարինեանի սխալ թեզի մասին .—

«Բնասասէր-պատմարանի կարծիքով Արեւմտահայ գիւղացիութիւնը Թուրքիա- յում աւելի բարեւ վիճակում էր ապրում, քան Ռուսաստանում: Նա մոռանում էր, որ Թուրքիայում այլահաւատի համար հարստութիւնը չէր կարելորը, այլ այդ հարստութեան ապահովութիւնը, մի հանգամանք, որն իսպառ բացակայում էր: Արդէն մերժուել է հեղինակի այն թեզը, թէ Արեւմտեան Հայաստանի հայ գիւղա- ցիներն աւելի լաւ են ապրել, քան քրտերը, Թուրքերը, ասորիները»:

(Տես՝ «Արեւմտահայերի Սոց. Տնտեսական եւ Փաղգ. Կացու- րիւնը 1800-1870 թթ.», Հայկ Ղազարեան, Երեւան, էջ 25):

«Սկզբնական շրջանում, մասնաւորապէս քսանական թուականներին ու երկուսական թուականների սկզբներին՝ կոսմոպոլիտներ, երբեմն էլ կեղծ ինթելեկտուալ-նալիզմը սնում էին ազգային նիւթիւղմի վնասակար «թէորիան»՝ արձամարձանք տաճելով սեփական ժողովրդի ազգային անդրերի, նրա կուլտուրայի, լեզուի ու պատմական անցեալի նկատմամբ: Այդ մասին է վկայում, օրինակ ազգային պատմական քեմատիկայի գրեթէ իսպառ բացակայութիւնը մեր գրողների սկզբի շրջանի ստեղծագործական ցոլացումներում: Այդ մասին է վկայում նաև ազգային պատմական անցեալի նկատմամբ, ոչնչատես հայկացի տարածումը նախորդ շրջանի (մասնաւորապէս 20-30ական թթ.) մեր գրականութեան մէջ. ըստ այդ «հայկացի», մեր ամբողջ բազմադարեան անցեալում ո՛չ մի լուսաւոր գիծ ու էջ չտեսնելը, ամբողջ պատմական անցեալի նշանակութեան համատարած բացասումը:

«Բայց շուտով յաղթահարուեց այդ կործանարար «բեռիան» իր բոլոր արտայայտութիւններով»:

(Տես՝ «Սոցիալ վերածննդի Հայ Գրականութեան Պատմութիւնից», Ասատուր Ասատուրեան, Երևան, 1959, էջ 260-61):

Վկայութիւններ սոցիալիզմի մասին.—

«Նա՛ որ մարդ է, անդամ է մի ժողովուրդի եւ գաւակ մի հայրենիքի»:

Ա. Նազարբէկ

«Բայց իմ ցանկութիւնս էր տեսնել իմ ընկերները պրոլետարիատի կացութեամբ հետաքրքրուող, տիրող անհասարկութիւնները վերցնելու համար պայքարող սոցիալիստ փիլիսոփաներ»:

Գեղամ Վանիկեան

«Ո՛չ, կապիտալիզմը յաւիտենական չէ՛, եւ նրա մահը քաղաքակրթութեան մահը չէ՛, այլ հէնց այդ քաղաքակրթութեան շարունակական աճումն է, որ պատճառում է մահ կապիտալիզմին»:

Ա. Նազարբէկ

«Օրէնք, բարոյականութիւն, ազգ ու կրօնք, այս բոլորը որպէս պատրուակ կը գործածուին կապիտալիստին կողմէ, ըլլայ այդ պատերազմի ժամանակ եւ կամ խաղաղութեան օրերուն, որովհետեւ անոնց ետին թաղնուած կայ կապիտալ կեդրոնացումներու ձգտումը, այսինքն կապիտալիստ դասակարգին շահն ու արժէքը»:

(«Սոցիալիզմի Պատմութիւնը», 1931, Նիւ Եորք, էջ 84):

Վարդան Տրդատ

Այլ վկայութիւններ՝

(Պատմաբանը) եթէ Արեւմտեան Հայաստանի լեռները գնացած լինէր, ուր իր արեւնակից եղբայրները տանջուած էին թուրք Սուլթանի անարգ լծի տակ, նշանաւոր հայդուկ կը դառնար, որի կողով գէնք կը վերցնէին հաղար-հաղար մարդիկ:

«... 1895-96թ թուականների ջարդերը Սասունում նրա հոգին լցրին ամենատեսլութեամբ բոլորի ու ամենքի դէմ: Արեւելքն ու Արեւմուտքը նոյնացան նրա աչքերում, մէկն՝ իր միջնադարեան դաժանութեամբ, միւսն՝ իր անտարբերութեամբ, որ ոճրագործութեան հասարակ լինելը»:

(«Սպիտակ Գիրքը», 1965, Երևան)

Հրաչեայ Քոչար

Անգլիոյ Դեասպան Սըր Հ. Լայարտ կը գրէ.—

Անգլիոյ Ա. Գ. Նախարար Լորտ Կրանվիլի 27/4/80ին.—

«... Սուլթան Համիտ ու՛չիմ վեհապետ մըն է, դժբախտարար դահ բարձրանալէ առաջ եւ յետոյ տեղի ունեցած դէպքերը — հօրեղբոր դահնկեցութիւնը ու ինքնասպանութիւնը, ինչպէս նաև դահնկեցութիւնը Մուրատ Էղբօրը, իր զլխաւոր նախարարներուն սպաննութիւնը, պատերազմին աղէտները, թշնամիին մայրաքաղաք ներկայութիւնը եւայլն — ազգած են ջիղերուն եւ նկարագրին վրայ եւ ուղեղային խանդարում պատճառած են, ինչ որ ժառանգական է իր բնատնիքին մէջ: Կը տառապէ հալածախտէ, վախկոտ է: Մոլեռանդ Օսման Փաշա, Փլենայի հերոսը, մեծ ազդեցութիւն ունի Սուլթանին մտքին վրայ, հակառակ է երոպական նորութեանց եւ հակաակորդ եւրոպացիներու: Շէյխեր պարտա հրաւիրած է: ... Այս մոլեռանդներուն կը վերադարձի Սուլթանին վերապահութիւնը բարեկրօնականներու հանդէպ...»:

(«Հայկական Հայրը Արեւելեան Հարցի Մէջ», Խորէն Գարիկեան, (1860-1880), Պէյրութ, 1962, էջ 356-57):

«Ի միջի այլոց, 90ական թուականներին Բաքուի հայ բանուորները մեծ մասամբ տարուած էին հնչակեանութեամբ»:

(Տես՝ «Ղազարոս Աղաթանը ժամանակակիցների Յուշերում», Սարգիս Խանոյեան, 1967, Երևան, էջ 286-87):

«Այդ ժամանակ (90ական թուականներ) Հնչակեան կուսակցութեան մէջ էին մեր գրականութեան երկու ակնաւոր ներկայացուցիչները՝ Ղազարոս Աղաթան եւ Շիրվանզատէն: Ժամանակակիցները հաւաստում են, որ թումանեանը Հնչակեան կուս. է յարել Աղաթանի ազդեցութեամբ»:

(Տես՝ «Յովհաննէս Թումանեան», Փրոֆ. Արամ Ինճիկեան, Երևան, 1969, էջ 369):

«Ինչպէս վկայում է Սարգիս Խանոյեանը, այդ կուս.ը (Հնչակեան) 90ական թուականների սկիզբներին զգալի ազդեցութիւն ունէր մտաւորականութեան եւ նոյնիսկ բանուորութեան որոշ շրջաններում»:

(Նոյն գիրքը)

«Պարոնեանը ոչնչացնող քննադատութեան է ենթարկել նաև Սուլթանական կառավարութեան ներքին ու արտաքին քաղաքականութիւնը: Նա մերկացրել է այն մարդկանց, յատկապէս պահպանողական խաւերի ներկայացուցիչ գործիչներին, որոնք պաշտպանում էին թրքական կառավարութեանը, գտնելով, որ հայ ժողովուրդը պէտք է հլու հնազանդ լինի Սուլթանական կարգերին եւ նրանից սպասի տնտեսական ու քաղաքական որոշ արտօնութիւններ, այլ խօսքով՝ կողմ էին հայ ժողովրդի ստրկական վիճակի պահպանմանը թուրքիայում:

«Պարոնեանի գրական-հրատարակախօսական քսանամեայ գործունէութիւնը մի պայքար է ընդդէմ Սուլթանական Բռնապետութեան, պայքար, որի ընթացքում յաճախ է կառավարութիւնը խափանել, փակել նրա թերթերը, բայց միշտ երդիծարանը գտել է պայքարի որեւէ ձև ու շարունակել իր մերկայացումները, գրել է համարձակ, կրքոտ ու սկզբունքային գիրքերից:

«1876 Սահմանադրութիւնը... պարունակում էր յօդուածներ ազատութեան, կեանքի ու ինչքի անձեռնմխելիութեան ու այլ իրաւունքների մասին, որոնցից եւ ոչ մէկը չէր կենսագործւում»:

(Տես՝ «Հայ Գրականութիւն», Մկրտիչ Մկրեան, 1961, Երևան, էջ 288-289):

«Ազգային-ազատագրական պայքարի գաղափարները լայն տարածում էին գտել ժամանակի ուսանողութեան եւ աշակերտութեան մէջ. տեղի էին ունենում աշակերտական եւ ուսանողական զաղտնի ժողովներ, հաւաքոյթներ, հիմնադրուում էին յեղափոխական կազմակերպութիւններ»:

Փրոֆ. Ա. Ինճիկեան

Ս. Սապահ-Գիւլեանի նամակէն.—

«Ես մինչեւ վերջ հաւատարիմ կը մնամ իմ ընդգրկած դրօշիս, ո՛ւր, եւ ի՛նչ տեղ էլ որ լինեմ, իմ սիրելի գաղափարներս պաշտպանը կը մնամ»:

«... Ես մոռացայ ինձ, մոռացայ կինս ու զաւակներս՝ հասարակական գործի համար...»:

(Տես՝ «Կենսագրութիւն Ս. Սապահ Գիւլեան»ի, Բերուզ Սապահ Գիւլեան, 1936, Ունիոն Սիթի, էջ 90):

«... Հնչակեան Կուս. ծնունդն ու շարժումները անհատական նախաձեռնութեան, օտար ազդեցութիւններու, ցուցմունքի եւ մատնանշումի արդիւնք չեն, այլ անոնք հայ ժողովրդի ապրած դժոխային պայմաններու դարաւոր ճնշումներու բնական ծնունդն են, իբր հաւաքական արտայայտութիւն»:

(Տես՝ «Հնչակեան Մատեան», Միհրան Սէֆէրեան, 1952, Պէյրուէ) :

«Այստեղից միանգամայն պարզ է, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը՝ ուղղուած Սուլթանական, Ֆէոտալական Թուրքերի դէմ, մինչ մոնոպոլիստական կապիտալիզմի շրջանում ոչ միայն ազատագրական էր, այլեւ պոռժուա-դեմոկրատական իր դասակարգային էութեամբ, եւ, առ հասարակ, պատմական այն պայմաններում չէր կարող լինել իսկական ազգային-ազատագրական շարժում՝ առանց դեմոկրատականի: Հետեւաբար, այդ շարժումները չէին կարող հայ ժողովրդին կարել «...ցարիզմի եւ սուլթանիզմի դէմ պայքարող միւս ժողովրդների գեմուկարտական, ապա բանուարական ընդհանուր շարժումից...», ինչպէս կարծել են Բախմազ, ընդհակառակն, այդ շարժումները հանդիսանում էին միւս ժողովրդների ազգային-ազատագրական եւ ընդհանուր գեմուկարտական շարժումների մի օղակը: Գեղար. Եւրոպայում պորժուա-դեմոկրատական ազգային շարժումների շրջանը, ինչպէս նշում է Լենինը, վերջանում է 1871 թուականին: Պալքանեան երկրներում նրանք սեւում են մինչեւ 1914 թ. եւ աւելին, իսկ Մերձ. եւ հեռուար Արեւելում, Աֆրիկայում եւ այլ գաղութային ու կիսագաղութային երկրներում, պորժուա-գեմուկարտական եւ ազգային-ազատագրական շարժումները մինչեւ այսօր էլ շարունակուում են»:

«70-80ական թուականների Հայկական Եւրոպայում ռեալիզմը (յետադրական) համարող տեսակէտից հետեւում է, որ նշուած ժամանակաշրջանում կարիք էլ չկար հայ ժողովրդի ազատագրմանը Թուրքիայի դէմ, քանի որ բաւական էր ցարիզմի կործանումը եւ յեղափոխութեան յաղթանակը Ռուսաստանում պատրաստի ազատութիւն կը պարզելէր ճնշուած փոքր ազգերին, որոնք մինչ այդ պէտք է տատանէր սեղանի վրայ: Անկասկած, այդպիսի տեսակէտ ունեցողները աչքաթող են անում, որ Ռուսաստանում սոցիալական յեղափոխութիւնը չէր կարող ծագել եւ յաղթել, եթէ մտ իրեն չմիացներ գեմուկարտական ազգային ազատագրական շարժումները»:

(Տես՝ «Գիտական Աշխարհայեացիի Ուղիներով», Փրոֆ. Ա. Կարապետեան, 1969, Երեւան, էջ 442):

«... Յանուն ինքնորոշման ճնշուած ազգերի մղած պայքարը, որ հէնց ազգային-ազատագրական շարժում է, ո՛չ թէ թուլացնում է պորժուարիտի էնթեր-նացիոնալ (միջազգային) միասնութիւնը, ինչպէս կարծում էր Ռուզա Լուքսեմպուրը»:

կը, այլ ընդհակառակը՝ ուժեղացնում էր այն, քանի որ ազգային-ազատագրական շարժումները, ինչպէս դեմոկրատական, այնպէս էլ պորժուարական յեղափոխութեան ռեզերվներն (պահեստի ուժն) են»:

«Միայն պորժուարիտի դասակարգային պայքարի մակարդակի բարձրացումը չի կարող պորժուարիտին յաջողութեան հասցնել, եթէ նրան չեն միանում ազգային ազատագրական շարժումները»:

(Նոյն, էջ 443):

«Հէնց այդ ոգով էլ Լենինը քննադատում էր Ռուզա Լուքսեմպուրիին, որը կըրկներով Հէնրիխ Կուսովին եւ Պրուդոնին, ջանում էր ապացուցել, որ իբր ազգերի ինքնորոշումը, որը ընդհանուր է ընդհանուր միջնեւ պետական անջատում, հակառակում է բանուար դասակարգի շահերին, քանի որ խախտում է բանուար դասակարգի ինքնորոշումը միասնակամութիւնը եւ բախման մէջ է մտնում յեղ. ընդհանուր պայքարի հետ»:

«... 70-80ական թթ. հայ ժողովրդի ազատագրական շարժման «յետադրականութիւնը» բացատրած են նրանով, որ իբր թէ այդ շարժման նպատակն է եղել Սուլթանի փոխարինել ցարով: Ընդդէմ է արդեօք այդ տեսակէտը: Կարծում ենք, որ ճիշդ չէ: ... Տոկմատիկ մօտեցում է: Ապա Ա. Կարապետեան կ'ըսէ, թէ Ռուսաստանը ժողովրդներու թէւ բանտ էր ... սակայն այդ բաւարար բացատրութիւն չէ: Ի՞նչ բան է մեկնելով Արեւմտահայերը կը դնէին Թուրքիային անջատման հարցը»:

«70-80ական թուականների ժամանակաշրջանում Տաճկահայերը կանգնած էին ֆիզիկական ոչնչացման առաջ: Էլ չենք խօսում դեմոկրատիայի, կուլտուրայի, լեզուի ոչնչացման մասին: Ի՞նչ են կարծում, եթէ Արեւմտահայ ժողովուրդն իր ֆիզիկական գոյութիւնը պահպանելու համար գերադասում է իր բախտը կապել Ռուս ժողովրդի հետ, նայած այդ ժողովրդի գլխին կանգնած է ցարը, մի՞թէ դա յետադիմութիւն է: Հայ ժողովուրդը իր այդ շարժումների ժամանակաշրջանում դնում է ոչ թէ ցարիզմին, այլ Ռուսաստանին միանալու պահանջը»:

(Նոյն, էջ 444):

«... Այս ամենից պարզ երեւում է, որ Մարքսն ու Էնկէլսը ո՛չ միայն դէմ չեն եղել Թուրքական Բանաստեղծութեան դէմ Պալքանեան ժողովրդների եւ հայերի ազատագրական շարժմանը, այլ ընդհակառակն, կոչ են արել վերջ տալ Թրքական պէկերի եւ փաշաների ամէն տեսակ յառաջդիմութիւնը կաշկանդող տիրապետութեանը: Մարքսն ու Էնկէլսը միաժամանակ պահանջել են, որ Թուրքիայում իշխանութեան գլուխ կանգնեն յառաջադէմ ժողովուրդները»: (էջ 433):



Օսմանեան երկրէն ներս բանթուրքիզմի ծրագրերը եթէ կը ձգտէր Թուրանիայի իրականացման, ապա այդ ծրագրին գործադրութեան ճամբուն վրայ գտնուող հայն, ուսն ու վրացին արգելք էին: Այդ արգելքի վերացումով Թուրք-Ատրպէյճան-Պրիւրզիստան-Թուրքիստան-Տաճիկիստան, պիտի կարենային հզոր ցեղային միութիւն կազմել ըստ 1910-1911ի Սելանիկի Իթթիհատի որոշումներուն:

Այս ծրագրին դէմ դիրքորոշուողները թշնամի էին Թուրքին:

Այսօր ալ Թուրքերը կը վարկաւորեն «Պատմութեան ընկերութիւն»ներու միջոցաւ առանձին արեւմտեան պատմաբանները, գրել կուտան, թէ Արեւմտեան Հայաստան ղոյութիւն չէ ունեցած եւ թէ

դոյութիւն ունի միայն Արեւելեան Անատոլուն: Ու դեռ Պրնուա Մէ-
չէնի նման Փրանսացի պատմաբաններ իրենց «Մուսքաֆա Քեմալ»
հատորին մէջ չեն քաշուիր յայտնելու, թէ թուրքերը եկուոր չեն, թէ
անոնք Ծ հազար տարիէ զոյութիւն ունին Փոքր Ասիոյ մէջ, թէ Մու-
մերներու ժառանգորդներն են, թէ անոնց դանկերու ձեւը կը համա-
պատասխանէ ներկայ թուրք տիպարին դանկին հետ...: Անդրադառ-
նալով հայկական վանքերու, արուեստի կոթողներու մնացորդացին,
անոնք քիչ մը աւելի տրամաբանական մեկնարանութիւն կը կատարեն,
ըսելով թէ Արեւելեան Անատոլուի մէջ հայ ծաղումով կարգ մը թա-
ղաւորներ ապրած են... իսկ ինչ կը վերաբերի հայ թաղաւորներ՝
Տիգրան Մեծի, Արտաշէս Ա.ի, եւայլն, ապա անոնք կը նկատուին
Պահլաւունի, այսինքն պարսիկ, այսինքն ո՛չ հայ: Գրիգոր Լուսաւո-
րիչն ալ սրպէս պահլաւ, հայ չըլլալուն (հետեւաբար Պահլաւներուն
աւելի թուրք ցեղին մօտ ըլլալուն), հայերուն քրիստոնեայ դարձն ալ
կը նկատուի... ոչ-հայերու դործ:

Ահա թէ ինչո՞ւ, թէ եւ մերթ զմերթ լոյս կը տեսնեն հերքելու
համար պատմութեան նենդափոխ տարրերու բարբանջանքները, թէ եւ
առանձին մենագրութիւններ լոյս կը տեսնեն ընդհանրապէս հայերէն,
քիչ անգամ ուսերէն կամ Փրանսերէն եւ անգլերէն, սակայն այդ
զծով դեռ կատարելիք հսկայ աշխատանքներ կան հայ պատմաբանին
համար:

**

90ական թուականներու մեր պատմութեան ազատագրական
շարժումները խորքին մէջ ոչ մէկ նուաճողական ձգտում կրնային
ունենալ: Փաստօրէն՝ հայ Յեղափոխութիւնը, դանակը ճիւղին իջեցնել
փորձող Սուլթան Համիտի բազուկը վանելու փորձ կատարած է: Այդ
չըջանին մենք ստրկացուած ժողովուրդի մը ազգային եւ ընկերային
անարդարութեան մը զս՛ գառնալուն դիտակցութիւնը կ'ուզէինք ար-
թընցնել: Ատիկա անհրաժեշտ էր մեր իսկ իրաւունքներուն տիրաց-
ման անկիւնէն դիտած հարցը, եւ երկրորդ, սահմանափակ ըլլալով
մեր հնարաւորութիւնը, պարտաւոր էինք նկատի ունենալ Յ Մեծ պե-
տութիւններուն միջամտելու հնարաւորութիւնը, դիտնալով հոնդերձ,
որ անոնք աւելի շատ տարուած էին իրենց տնտեսական շահերէն,
բայց եւ զիտէինք, որ անոնց հակասութիւններէն օգտուելը կենսա-
կան նշանակութիւն կրնար ունենալ մեր պայքարի յաջողութեան հա-
մար: Հայ Յեղափոխութիւնը, հայ մասսայի կազմակերպման վրայ
աւելի շատ յենած էր, լայց մասսան կազմակերպելը՝ տարիներու եր-
կար պայքարի բովէն անցնելէ ետք հնարաւոր պիտի դառնար:

Հայ Յեղափոխութիւնը հետեւաբար, իր ուժերուն գիտակցու-
թիւնը ունէր: Այդ ուժերուն մղելիք պայքարներուն մէջ խոշոր դեր
վիճակուած էր հայ գիւղացիութեան, որուն օժանդակելու պիտի գար

հայ աշխատաւորը քաղաքներու եւ բարձրացող մտաւորականութիւնն
ու որոշ չափով միջին դասակարգը:

Հայ ազատագրական պայքարի գնահատման հարցի շուրջ ժա-
մանակի ընթացքին մեկնարանութիւններ չեն պակաս: Դժբախտա-
բար քաղաքական եւ կուսակցական նեղմիտ հաշիւներ, սխալ մեկնա-
բանութիւններով ուղած են նսեմացնել այն սրբազան կոիւր, զոր
մղած է Հայ Յեղափոխութիւնը 90-ական թուականներէն առաջ եւ
յետոյ: Հայ Յեղափոխական կազմակերպութիւններու թիւը 70-80ա-
կան թուականներուն 10ի կը հասնի: Անոնք եթէ անմիջական Մեծ
Շարժումներու ծնունդ տուած չեն, բայց իրենց դոնուած միջավայ-
րերուն մէջ՝ էրզրում, Վան, Մոսկուա, Թիֆլիս, Ալեքսանդրաբոլ,
գիտցած են պատնէշի վրայ մնալ եւ լուսաբանել եւ հնարաւոր սահ-
մաններուն մէջ առաջնորդել հայ երիտասարդութիւնը:

Հայկական ջարդերու պատճառներուն մէջ չանտեսել օտար մեծ
պետութիւններու տխուր դերը, չանտեսել Պալքաններէն դուրս նեւ-
ուած Օսմանեան կառավարութեան «հայերը բնաջնջելով» մեծամաս-
նութիւն կազմելու ծրագիրը, Սուլթանին արեան մէջ խեղդելու քա-
ղաքականութիւնը Հայկական Յ նահանգները: Չանտեսել քիւրտ եւ
թուրք գիւղացիութեան կրօնամոլ ողիին արդիւնք հայ ազատագրա-
կան պայքարի հերոսներուն հետ միասնական ճակատ չկազմելու յա-
մառութիւնը, չանտեսել Համիտի քիւրտներուն ինքնավարութիւն խոս-
տանալու եւ հայոց հողերը «հալալ» ընելու ձգտումը: Որպէսզի ճիշդ
դատենք, պէտք է վերագրել Հայ Յեղափոխութեան ջարդերու պա-
տասխանատուութիւնը, չմեղադրել որ ան լեզու չկրցաւ դտնել թուրք
եւ քիւրտ գիւղացիներուն հետ, չկրցաւ սպասել լաւ օրերուն...
չկրցաւ սպասել որ 1917ի Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը յաղթա-
նակէր եւ օչնութեան հասնէր իրեն:

Տարբեր բան է յեղափոխական շարժումներուն ընթացքին տեղի
ունեցած թերիները մատնանչել, տարբեր բան է մեր ժողովուրդի
գլխուն եկած թրքական հարուածներու հեղինակները արդարացնել,
գոհը զարդարարի կերպարաւորով ներկայացնելով:

Համաձայն ենք, որ 90ական թուականներու մեր ազատագրա-
կան պայքարները տուեալ փառաքան պայմաններու մէջ չեն ու-
սումնասիրուած անհրաժեշտ չափով: Վերջին 15 ամեակին է, որ հայ-
րենի պատմաբաններ սկսան հետազօտել այդ չըջանը: Հայ պահպա-
նողական թեւը, որ միշտ ալ դէմ է եղած շարժումին եւ ամենէն քիչ
արեան տուրքն է վճարած, միշտ աշխատեցաւ 50 տարի անընդհատ
անտեսել, քննադատել հայ ազատագրական շարժումը եւ դատապար-
տել անոր առաջնորդները:

Բայց լաւ է որ ուրիշներու վկայութիւնները լսենք խորանալէ
առաջ նիւթին մէջ:

«Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին Ֆրանսայի կապիտալ ներդրումները Թուրքիոյ մէջ կը կազմէին 2 միլիառ 240 միլիոն ֆրանք, Գերմանիայինը՝ 1 միլիառ 280 միլիոն ֆրանք, Անգլիայինը՝ 750 միլիոն ֆրանք:

«Թրքական տուեալներով՝ Ֆրանսական կապիտալի բաժինը Օսմանեան կայսրութեան մէջ կը կազմէր 59 տոկոս, Գերմանականը՝ 22 տոկոս, Անգլիականը՝ 6 տոկոս:

«Փաստօրէն ողջ Օսմանեան կայսրութիւնը բաժնուած էր կայսերապաշտական պետութիւններու ազդեցութեան ոլորտներէ»:

Ապա խօսելով ոչ-Թուրքերու դրուութեան մասին, հայրենի պատմաբան Եր. Սարգիսեան կը գրէ.—

«Թրքական բիրտ լծի տակ դարեր շարունակ հեծող հայ ժողովուրդը, չհաշտուելով օտար տիրապետութեան հետ, պայքարում էր իր ազգային ազատագրութեան համար: Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարն առանձնապէս ուժեղացաւ ժժ. գարու երկրորդ կէտին, երբ Թուրք կեղեքիչները լուծը այլեւս ամտանքի դարձաւ: Պայքանեան դէպքերի հնարաւոր կրկնութիւնը կայսրութեան այլ շրջաններում կանխելու նպատակով, Սուլթանական կառավարութիւնը գնալով անլի էր սաստկացնում հայաթմաքաների ու բռնի քրքացման իր վաղեմի քաղաքականութիւնը: Նա դաժան միջոցներ էր ձեռնարկում հայ եւ իրեն հաջատակ ուրիշ ժողովուրդներու ազատագրական շարժումները մնչելու համար:

«Թրքական բռնակալական կարգերի պայմաններում կայսրութեան քրիստոնեայ հպատակները համարուում էին իրաւագուրկ ռայաներ, որոնց կեանքն ու ունեցուածքը օրէնքի կողմից չէին պաշտպանուում:

«...Ժժ. դարի 90ական թուականներին ամբողջ Թրքահայաստանով մէկ ծաւալուած հայ ժողովուրդի ազգային-ազատագրական շարժումը ճնշելու եւ այդպիսով Թրքական գործերին Մեծ Տէրութիւնների միջամտութեան պատրուակները վերացնելու համար Սուլթանական կառավարութիւնը մշակեց հայ ազգաբնակչութեան ոչնչացման հրէշաւոր ծրագիր»:

Լսենք Ռուսիոյ Պոլսոյ դեսպանատան զին. կցորդ Ն. Պէշկովի վկայութիւնը 1896-ին.—

«Սիստեմատիկ զանգուածային ջարդերի միջոցով Ապտիւլ Համիտը յոյս ունի վերացնել հայ ազգի ազդեցութիւնը երկրում...»:

Սուտ վկայութիւններու դէմ.—

«... Դրանով էստ Ուրասը, Չարքը եւ ուրիշներ ուզում են ցոյց տալ, որ Թուրքիայում չի եղել եւ չէր կարող լինել ազգային ազատագրական շարժում, որ Հայկական Հարց գոյութիւն չի ունեցել եւ այդ հարցը յօրինուել է հայ քաղաքական կազմակերպութիւնների եւ որոշ գործիչների կողմից, որ Հայկական Հարցի բարձրացման համար համապատասխան պայմաններ չեն եղել, քանի որ հայերը Թուրքիայում ապրում էին լաւագոյն պայմաններում եւ վայելում լայն իրաւունքներ:

«Յայտնի է որ այդ «տեսակէտը» փորձում են պաշտպանել ո՛չ միայն էստ Ուրասը, Չարքը, այլ նաեւ Հիքմէթ-Պայուրը, Շեմսետին Կիւնալթայը, Քէօփ-Իւլիւ Ֆուատը, Մատրի Մակուտը, Արսալը եւ ուրիշներ:

«Թուրք պատմաբանները երեւի մոռանում են, որ ամբողջ աշխարհին քաջ յայտնի են Թրքական Սուլթաններու Ֆէոտալական-բռնապետական, ձուլող ուժիւր, սիստեմատիկօրէն կազմակերպուած հայերի մասսայական ջարդերը, որոնց հետեւում էր Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութիւնը եմքարկուեց ֆիզիկական ոչնչացման:

«... Բանը հասել է այնտեղ, որ էստ Ուրասը նոյնիսկ հայ ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի հերոսական եւ փառաւոր էջերը, ինչպիսիք են Ձէյթունի 1862ի, Մուշի 1863ի, Չարսանագի 1875ի, Ձէյթունի 1875 եւ 1884ի ապստամբութիւնները կապում է Դաշնակ եւ Հնչակեան կոմիտէների գործունէութեան հետ, մինչդեռ փաստ է, որ մշուած կոմիտէները այդ քուականներին դեռեւ գոյութիւն չունէին»:

(Տես՝ «Արեւելագիտական Ժողովածու» Թիւ 1, Ե. Սարգիսեան եւ Ա. Խ. Սաֆրաստեան, Երեւան, 1960, էջ 379-398):

Անմահ ժիրայրի վկայութեանէն.—

«Այո՛, իմ հոգեհատորս, սիրէ հայրէնը, մանաւանդ իմաստասիրէ ազգային անցեալ եւ ներկայ պատմութիւնը, այն ատեն պիտի համոզուիս, թէ հայը աշխարհի համար ապրած է եւ յաւիտեան ապրելու իրաւունք ունի:

«... Սիրելիս, զիս հայրենիք կը հրաւիրէք, մի՞թէ հոս բուն հայրենիքիս մէջ չե՞մ, կ'ուզէի որ դուն, մայրիկս նաեւ գտնուէիք այս նուիրական հողին վրայ, որ մարդկութեան օրրանն է, մի՛ փորձի դնէք իմ որդիական սէրս, ես լաւ կը ճանչնամ իմ պարտականութիւնս»:

Բարձր Հայք
11 Մայիս, 1880

Եղարար՝
ԺԻՐԱՅԻ Ղ. ՊՅԱՆՆԱՆ

«Բռնութիւն ու զուլում կը ծնին բողոք, կարմիր ընդվզում, հոգեբանութիւններ, զորս պէտք է գիտնան բռնակալները», կը գրէ Ա. Նազարբէկ:

Իսկ Փարամազ պիտի գոչէ Թրքական բռնակալութեան երեսին.—

«Հոն, ուր կախաղաններն են ճօճում, ազատութիւնն է ման դալիս, հոն ուր մեռելներն են ննջում, Յարութիւնն է մօտալուտ», ակնարկելով Արեւմտահայաստանի վատ դրութեան:

**

Դժբախտաբար հայրենի պատմաբաններ 1956էն առաջ դժուարութեան առջեւ գտնուեցան եւ իրենց իրաւ համոզումներում հակառակը գրեցին յաճախ: Արիւնները Բերիաներու Թոյլատուութեամբ օգտագործուեցան: Մեր ժողովուրդի իրաւ պատմութիւնը «կեղծ» մեկնաբանութիւններու զոհ գնաց, Սարտարապատի մասին արտասայտուիլը «յանցանք» նկատուեցաւ... Ասոր արդիւնքը ժխտական եղաւ հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման, իրար հասկացողութեան զօրացման մէջ:

Բարեբախտաբար 1956էն ասդին, մտաւորականներ ճշմարտութիւնը երեւան բերին: Թրքական բռնակալութեան եւ ցարական ճշնչումի դէմ ժողովուրդներու պայքարը չնկատուեցաւ «իմքերիալիզմի գործիքներ» ելոյթներ, մարդիկ տեսան ու հաստատեցին, որ արիւնքեան սքանչելի էջեր կտակած է Հայ Յեղափոխութիւնը Մասունէն, Վանէն, Կիլիկիայէն, Ղարաբաղէն, Շապին-Գարահիսարէն, Սարտա-

Մ.— Նամակը ուղղուած է քրոջ Հայկանոյչին:

բազմաթիվ սկսեցին և թէ Գուգ Գափուրի մէջ 5000 Հնչակեան ցուցաբարներու բողոքի ճիշդ առաջին էրոյթն էր Օսմանեան բռնատիրութեան կեղծ զիմազիծը պատուելու տեսակէտով և այլ՝ 1890 Յուլիս 15ին... , տայու համար օրինակ մը :

Բարեբախտաբար, հայրենի պատմաբանները արժանի պատասխան տուին ո՛չ միայն սփիւոքի պահպանողական տարրերուն, այլ նաև Ա. Ոսկերիչեաններու, Ա. Կարինեաններու, Ա. Մակարեաններու, Գ. Գ. Իսահակեաններու, Լէօներու, Ա. Յովհաննէսեաններու, Խիկար Բարսեղեաններու և զեռ բոլոր անոնց, որոնք կը ձգտէին ծաղրել փորձել արեան տուրք վճարած սերունդի մը ազգային և ընկերային արդար պայքարը Օսմանեան և Յարական բռնակալութեանց դէմ :

Փոխանակ 90ական թուականներու պայքարի շարունակութիւնը և մեծ մասամբ եզրակացութիւնը նկատուելու, 1905ի Ա. յեղափոխութիւնն ու 1920ի Խորհրդայնացումը պէտք է դիտուէր եզրակացութիւնը այն բալոր ընդվզումներուն՝ որոնք մեր ժողովուրդին էին անկէ առաջ՝ յատկապէս Թրքահայաստանէն ներս :

Ճիշդ է որ կուսակցական նեղմտութիւնը իր տխուր դերը խաղաց ազատագրական պայքարի հետադադման և ճիշդ մեկնարանման հարցին մէջ, սակայն ատոր մէջ նոյնքան յանցանքի բաժին ունի հայ մամուլը և կրակորական մտաւորականութիւնը :

Դժբախտաբար, այսօր զեռ անիմաստ Փետրուարեան արկածախնդրութիւն մը կը ներկայացուի որպէս «առաջին ըմբոստութիւն՝ Վարդանանց սպիտակ(?) հաւատարիմ...» : Այստեղ իրատուութիւնը պահանջողները պէտք է աւելի շրջանայեաց ընթացք մը որդեկրած ըլլային... Յետոյ պատմական դէմքերուն և դէպքերուն հանդէպ միատեսակ մօտեցումները չէ որ գրեւորուեցան հոս կամ հոն :

Օրինակի համար, Գորիսի շրջանի Խնձորեակ գիւղը ամբողջութեամբ Հնչակեաններէ կը բաղկանար. անիկա կուրծք ցցած էր Ե՛ւ Դաշն. մենատիրական ձգտումներուն, Ե՛ւ 1917-21ի շրջանին կուրծք ցցած էր յետադիմութեան դէմ : Եւ երբ կը գրուի այդ շրջանի պատմութիւնը, այդ գիւղի քաջազորութիւնները կը վերադրուին հոն մատի մրայ համբուող հայ կոմունիստներուն, իսկ մնաեալը «հայ գիւղացիութեան...» :

Կը խօսուի Մայիսեան (1920) ցոյցերուն մասին : Կ'անտեսուի այն, որ այդ ցոյցին Երեւանի Հնչակեան Կուսակցութեան «Արարատ» մասնաճիւղը մասնակցած է Հնչակեան գրօջով, զո՛հ և բանտարկուածներ տուած է կուսակցութիւնը և սպառնալիքի տակ վարչապետ Յ. Քաջազնունին զանոնք ազատ արձակած է, մօտ 30 հոգի :

Կը խօսուի Հայաստանի և Անդրկովկասի մէջ 1890-1907ի շրջանի բռնութեան շարժումներուն մասին, «կոմունիստներու գլխաւորութեամբ տեղի ունեցած ցոյցերուն և գործադուլներուն» մասին : Մենք գիտենք՝ Ս. Սպանդարեանն ալ իր գիրքին մէջ կը վկայէ, թէ՛

որ հայ գիւղը որ երթայինք «Հնչակ» կամ «Դաշնակ» կուսակցութիւններու ազդեցութեան տակն էին... : Արդ, մեր մամուլի և իրենց այդ շրջանի մամուլի մէջ և արխիւներուն մէջ միացեալ թույլիկներ տպուած են ցոյցի հրաւիրող, Ռուս. Ս. Դեմ. և Ս. Գ. Հնչ. Կուսակցութեանց ստորագրութեամբ, բայց երբ այդ մասին կը գրուի, որոշեալ արխիւներ և շատ յաճախ որոշուած ՄԱՍԵՐ միայն լոյս կը տեսնեն, փաստելու համար, որ այդ ազատագրական պայքարներուն և բանուորա-գիւղացիական էրոյթներուն մէջ Ռուս Ս. Դեմով-բառները առանձինն էին, իրե՛նք միայն պայքար տարած են... «գիւղացիութիւնը» իրենց ետեւէն քալած էր :

Ա. Միսանիկեանը՝ ինքը կ'ընդունի, թէ Հնչակեաններն ալ իրենց դրօշով կը քայլէին Երեւանի Մայիս Մէկի ցոյցին... բայց այդ մասին ո՛չ մէկ ակնարկութիւն կը տեսնէք Հայաստանի մէջ լոյս տեսած պատմութեան հատորներուն մէջ... :

Գուցէ ժամանակը կուզայ և այդ մասին նոր խօսք կը խօսուի, կրնան ըսել ոմանք... : Բայց շարունակենք :

Ինչո՞ւ այն քար լուսութիւնը՝ որ գոյութիւն ունի Աւետիս Նազարբէկեանի, Ստեփան Սապահ-Գիւլեանի, Մուրատ Պոյաճեանի, Փարամպի, Գազիկ Օղանեանի, Ս. Տիրուհիի, Մ. Ազապարեանի, Ս. Շահէնի, Ա. Կէնճեանի մասին... : Արդեօ՞ք բանաստեղծութիւն պէտք է գրել կամ քանի մը վիպակ՝ կարենալ զնահատուելու համար... Ինչո՞ւ Ֆրանսական կայսերապաշտութեան զո՛հ Սարգիս Տիրուհիի մը յուշարձանը պիտի չկանդնեցուէր, իր մասին մենագրական աշխատանք պիտի չկատարուէ՞ր... :

Ինչո՞ւ Ս. Սապահ-Գիւլեանի անունով փողոց մը պիտի չբարձրանար Երեւանի մէջ :

Դժբախտաբար, կարգ մը մարդիկ կ'առաջնորդուին հոս կամ հոն, անիմաստ լուսութիւն պահելով հայրենիքի և սոցիալիզմի սիրոյն նահատակուողներուն նկատմամբ :

Պատմութեան հետադադման համար անհրաժեշտ պատմաբանները ունի մեր երկիրը, բարեբախտաբար անոնք կուտան տակաւ ձըլմարտութիւնը և լայնախոհութեան իրենց ընթացքով կը լուսարանեն այնպիսի հանդուցային հարցեր, որոնց մասին զեռ երկէ արատայատուիրը կրնար սուղի նստիլ :

Հայրենի պատմաբան Կ. Քարամեան իր «Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարի Օրինաչափութեան Հարցի Շուրջը» հատորին մէջ իրատուութիւնը ունի գրելու —

«Վերջին ժամանակներս վերականգնուեցին շատ հարցերի լուսաբանութեան իրաւունքը, վերագնահատուեցին հայ ազատագրական ու ազգային ազատագրական շարժման հետ կապուած խնդիրները : Նարից սկսուեց թէ՛ բանակալի, մտաբաղխուներ, որոնք կրկին ապացուցին, թէ մեր ժողովրդի պատմութեան այդ ողբաշարային խնդիրը տակաւին կարօտ է խորն ու բազմակողմանի լուսաբանութեան : Եզակուսումնասիրողներ, որոնք փորձեցին պաշտպանել մայրիկներու վարձարած բարձր-

նույնը, վերակենդանացնել այն՝ ինչ մերժուել էր վաղուց, սակայն ապարդիւն: Գոնէ այժմ այդ փորձերը այլեւս յաջողութեամբ պսակուել չեն կարող»:

Եւ կը շարունակէ .—

«Ինչպէս տեսնում եմք, ազգային ու ազգային-ազատագրական շարժումների հետ կապուած հարցերը չափազանց բարդ են, վիճելի, չկան նրանց ընդհանուր օրինաչափութիւնները ներկայացնող, հայերի քաղաքական արեւելումի ու շարժիչ ուժերի խնդիրը բազմակողմանիօրէն բացայայտող գործեր: Հարցաւոր ու խստապահանջ ընթերցողը պահանջում է այդ»:

1890-1915ի շրջանի ազատագրական մեր պայքարի գնահատման հարցին շուրջ զանազան մօտեցումներ եղած են: Եղած են պատմաբաններ, որոնք արդարացուցած են 1860ական թուականներու ընդ-վըզումները, սակայն վերապահութիւն ցոյց տուած են 1900ական թուականներու հայ ազգային ազատագրական շարժումներուն նկատմամբ, զայն նկատելով կղզիացած, ընդհանուր աշխատաւորական շարժումներէն մէկուսացած ըլլալու յանցանքով: Ուրիշներ՝ արդարացուցած են օրինակ, Պուլկարիոյ անկախութեան համար մղուած պայքարը, Ռուսաստանի անմիջական բանակներուն օժանդակութեամբ անոր անկախութեան տիրանալը, սակայն իրաւունք չեն տուած Հայ Յեղափոխութեան՝ նոյն Ռուսաստանի օժանդակութեան դիմելու արարքին եւ անամօթաբար մեղադրած են, անտեղի կերպով պնդած են, թէ Հայ Յեղափոխութիւնը իր յոյսը կապած դրսի օժանդակութեան՝ անուղղակի հացին իւղ լեցնելով կայսերապաշտներուն, անոնց թուրքիոյ մէջ աւելի զիջումներ կատարելուն նպաստած է: Տակաւին, Հայ Յեղափոխութիւնը քննադատողներ կը մեղադրեն հայ մտքի երէկի Առաջնորդները, որոնք չեն ուզած լեզու գտնել եւ կամ չեն փորձած միացեալ ձևակառ կազմել թուրք, քիւրտ աշխատաւորութեան հետ, միասնաբար տապալելու համար Սուլթանական ռէժիմը: Տակաւին, ծայրայեղ մտածողներ, աւելի առաջ երթալով պնդած են, թէ Հայ Յեղափոխութիւնը Արեւմտահայաստանի մէջ պէտք է սպասէր մինչեւ որ սոցիալիզմը յաղթանակէր Ռուսաստանի մէջ եւ ատով իսկ լուծուած պիտի ըլլար ազատագրական պայքարի հարցը եւ մեր ժողովուրդը պիտի տիրանար այսպէս կոչուած ինքնավարութեան:

Բազմիցս կրկնուած այս սխալ մեկնաբանութիւններուն ուժ տուողներէն հանդիսացան Աճօն եւ իր հետեւորդ կարգ մը պատմաբանները Հայաստանէն ներս, իսկ սփիւռքի մէջ Ազատագրական Պայքարին գրեթէ բաժին չբերող պահպանողական-պուրժուայ տարրերը, որոնք կարծեցին թէ ժխտելով Ազատագրական Պայքարի զոհերուն ընծայուելիք արդար զովասանքը, պիտի կրնան աւելի տրամաբանող, պիտակից եւ ծանրախոհ սերունդ մը խանդավառել պուրժուական տեսակէտներով, եղափոխութեամբ (էվոլուցիոն) ձեռք բերուելիք ռէժիմներով...:

Արդէնքը գիտենք այդ փրփականտին: Սթալինի եւ Բերիայի անկումէն ետք, ռուս, հայ, վրացի պատմաբաններ գտան, որ փոքր

ժողովուրդներու ազգային ազատագրական պայքարներու գնահատման հարցին շուրջ ցարդ գոյութիւն ունեցող տոկմաքիք եւ ազաւաղեալ փաստերով վերլուծումները սխալ եւ անտեղի էին, թէ բաղդատած այլ երկիրներու տնտեսական եւ ընկերային պայմաններուն, հայ եւ այլ ժողովուրդներուն դրութիւնը հազար անգամ անչնչելի պայմաններու մէջ կը գտնուէր Օսմանեան Թուրքիոյ եւ Պարսկաստանի մէջ, որ տկար, լքուած, իր հողին վրայ անտանելի պայմաններու մատնուած էր: Փանաթիկ կրօնամոլ, իր իսկ նիւթական անձուկ վիճակին անտեղեակ կամ ցեղային ատելութեամբ կշտացած թուրք գիւղացին եւ քիւրտ ղօլամը չէին կրնար զգալ եւ համողուիլ, որ պրոլետարներ բոլոր երկիրներու միացէք լողունքը, որ կ'արձակուէր հայ մտքի Առաջնորդներուն կողմէ, կը ձգտէր նաեւ ազատագրմանը որքան հայուն, նոյնքան թուրքին, արաբին, եգիպտին, յոյնին եւ քիւրտին:

Հայ ժողովուրդը իր վերջին 200 տարուան փորձառութեամբ համոզուած էր, որ միակ ազատութեան արշալոյսը Ռուսաստանը կրնար բերել իրեն, ու որքան ալ Յարիզմէն յուսախար եղած էր Օրիններու, Դաւիթ Բէկերու, Աշտարակեցիներու, Խրիմեաններու օրով, որքան ալ Ա. Համաշխարհային պատերազմին Յարիզմը կը ձգտէր սուտ խոստումներով օրօրել մեր ժողովուրդին առաջնորդները հողը Յարին վերապահելով, առանց հայու, կամ ստրկացած հայերով... սակայն այդ բոլորէն ետք՝ ո՛չ Օրին, ո՛չ Դաւիթ Բէկը, ո՛չ Աշտարակեցին կամ Գէորգ Ե.ը, երբեք միտք չունէին Յարիզմի հաշտոյն կրակէն շագանակ հանել, ո՛չ ալ սկուտեղի վրայ Հայաստանը Ռուսաստանին նուէր մատուցանել:

Ի վերջոյ, վերջին 200 տարիներուն մեր համեստ բայց հայրենասէր հայ ժողովուրդի զաւակները փորձով համոզուած էին, թէ Ռուսաստանն էր միայն, որ յարաբերաբար աւելի լաւ կեանք կը խոստանար թրքա-պարսկական բռնակալութեանց լուծին տակ տուայտող մեր ժողովուրդին, հետեւաբար քաղաքական մարզանքներ կատարել մտքէն անգամ չէր անցըներ, հետեւաբար ճիշդ ուղին ընտրած էր, պայքարելով միատեղ Սուլթանին եւ Յարին դէմ, նախընտրելով միշտ Ռուսը, առանց որուն մեր ամբողջական շնչելու հնարաւորութիւնն անգամ անհնար էր Օսմանո-Պարսիկ բռնութեանց լուծին ներքեւ:

Հայ քաղաքական միտքը երէկ եւ այսօր ալ կը տեսնէ, թէ ճիշդ վարուած են իր նախորդները սեփական ուժի ապաւինելով հանդերձ՝ ռուսական օրէնթացիայի հետեւելով:

Եթէ Պուլկարիոյ ազատագրումը կը նկատուէր բռնակալութեան լուծէն ազատագրուիլ, ապա ո՛չ մէկ կասկած որ 500 տարիներէ ասդին միայն աւեր ու սուգ տեսած հայ ժողովուրդի ազատագրումը բռնակալ աւատատիրական ռեժիմի մը ճիրաններէն, անհրաժեշտ միջոցառում մըն էր: Գ. Մարքսի բացատրութեամբ .—

«Վաղ քէ ուշ երեւան կուգայ մեր ցամաքամասի վրայ ամենէն զեղեցիկ մասերէն մէկը այդ խուժանի (թուրքերու) տիրապետութիւնից, ագատագրելու բացարձակ անհրաժեշտութիւնը», մի խուժանի «որի համեմատութեամբ Հոռովմէական կայսրութեան ժամանակներին խուժողը իմաստուններին եւ հերոսներին ժողովուրդ էր»:

«Թուրքիոյ մէջ պահել սքաթիւտն... Այդ նոյն իրաւունքով կարելի է փորձել ստոկիւմ ձիւնը հիւսիսը պահպանել նիւսման միեւնոյն աստիճանի վրայ, քոյլ չտալով, որ այն լիովին քայքայուի»: (Ք. Մարքս եւ Ֆ. Էնգէլս, Հատոր Թիւ 9, էջ 372-73): (ՏԵՍ՝ Կ. Ն. Քարամեան «Հայ ժողովրդի Ազատագրական Պայքարի Օրինաչափութեան Հարցի Շուրջը», 1969, Երեւան, էջ 17):

Կ. Քարամեան կը գրէ, թէ Մարքսի վերոյիշեալ բացատրութիւնը կը վերաբերի նաեւ Հայաստանի՝ որքան Պալքանեան երկիրներու ազատագրական պայքարի արտայայտման:

Լենինը կը գրէ.— «Սոցիալիստներու տեսակէտէն անպայման սխալ է ազգային նշանակալի պայմաններուն մէջ անտեսել ազգային ազատագրութեան խնդիրները»: (Վ. Լենին, «Երկեր», հատոր 20, էջ 540, Գ. հրատ.):

Տոքթ. Փրոֆէսէօրներ Ար. Մնացականեանը, Եր. Սարգսեանը, Ռուբէն Սահակեանը, Ճոն Կիրակոսեանը, Մ. Ներսէսեանը եւ Վ. Պարսամեանը խօսելով հայկական կոտորածներու պատճառներու մասին, ասպնուցած են, որ հայ ժողովուրդի զանգուածային կոտորածներու քաղաքականութիւնը քրքական բռնակալները կիրարկած են որպէս պետական ծրագրով հախտաբար միջոցառում: Յեղատուութեան քաղաքականութիւնը հայ ժողովուրդի նկատմամբ, ազգաբարձուած է մեծ կոտորածներէն զեւ տասնամեակներ առաջ, բան մը, որ կը ջանան ժխտել ժամանակակից Թուրք յետադիմական պատմաբանները:

(ՏԵՍ՝ Կ. Քարամեանի գիրքը, էջ 18-19):

Հայ ազատագրական պայքարի առաջնորդները քննադատողները լաւ գիտեն, որ 1878ին արդէն Քէլամիլ փաշաները սուլթանին կը թելադրէին վերցնել հայերը՝ վերցնելու համար հայկական ինքնավարութեան կամ հողային պահանջի հարցը...: Այդ քաղաքականութիւնը պիտի զործադրուէր ո՛չ միայն Սուլթան Համիտ օրով, այլ նաեւ Իթթիհատի տիրապետութեան եւ 1919-22ի քեմալականներու օրով: Բոլորին մէջ կը խօսէր ոչ-Թուրքերէն՝ Թուրքիան ու Անատոլուն, Պաքուն եւ Հաճընը, Ալեքսանդրաբոյն ու Սարտարապատը, Փոքր Հայքն ու Մեծ Հայքը մաքրագործելու մտադրութիւնը: Այս անկիւնէն գիտած հարցը, այդ մնայուն վտանգի գէմ լաւադոյն պատուարը Ռուսաստանը զարձաւ: Այս կարգի հարցերուն լուսարանութիւնը կենսական նշանակութիւն ունի հայոց համար, այսօր ալ: Պնդէլ որ Կարմիր Ռուսաստանը Պրեսթ-Լիթովսքի զաշնադրով եւ Կարսի համաձայնագրով մեր հողերը յանձնեց Թուրքին... կը նշանակէ անձանթ ըլլալ օտար եւ ձերմակ զօրավարներու զործակցութեամբ Հոկաւմերեան Մեծ Յեղափոխութեան գլխուն կախուած զամովկեան սուրի

վտանգին, կը նշանակէ շտեմել այն ահաւոր կայութիւնը, երբ զերման զօրքերը Պրեսթէն զէպի հարաւ իջնելով կը սպառնային Ուքրաինոյ անջատման եւ ինչո՞ւ չէ, Կարմիր Ռուսաստանը ստրկացնելու քաղաքականութեան:

Քէլամիլ Փաշան հետեւաբար, երբ կ'առաջարկէր հայերը մաքրել ազատուելու համար հայկական հողային պահանջներէն, չէր մտադրար մանրամասնելու իր բռնածելը.

«Մեր շահերը կը պահանջեն», կը գրէ ան, «որ որեւիցէ կասկածելի տարր անհետ ընենք, որպէսզի ապագան ապահովենք, ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ եւ անհիտելու ենք: Եւ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզի, ամէն գործիք պատրաստ ունինք՝ ֆիւրտ, շէրֆէզ, կուսակալ, դատաւոր, հարկահան, ոստիկան, վերջապէս ամենայն ինչ. կրօնական պատերազմ կը յայտարարենք, եւ դիրքին պատերազմ այնպիսի ազգի մը դէմ, որ ո՛չ գէնք ունի, ո՛չ զինուորաբիւն եւ ո՛չ պաշտպան, երբ ընդհակառակն, մենք գէնք էլ ունինք, զինուորաբիւն էլ, աշխարհիս ամենամեծ տէրութեանց մէկը եւ ամենէն հարուստը մեզ զինակից է, (Անգլիոյ մասին է. Հ. Գ.), եւ մեր Ասիական աշխարհին երաշխաւորը: Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ լինի եւ ֆրիստոնեայ Եւրոպա կրօնակից փնտռէ եւ չի գտնէ Տանկական Ասիոյ մէջ, կը բազու գտնէ հանգիստ եւ այն ատեն կը գրադինք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»:

(«Փորձ», 1879, Թիւ 6-8, էջ 204-205):

Ահա թէ ինչպիսի թելադրանքներ կը կատարէր Սուլթանին Մեծ Եղաբարձը՝ Քէլամիլ Փաշան եւ ասիկա ժամանակաշրջանի մը մէջ, ուր տակաւին հրատարակ չէին իջած ո՛չ Արմենականը, ո՛չ Հնչակեանը եւ ո՛չ ալ Գաշնակցականը, շրջանի մը մէջ, երբ յեղափոխ. յարձակողական եւ նոյնիսկ ինքնապաշտպանութեան փորձեր չէին կատարուեր: Շրջան մը, ուր հայ մամուլը, ամիրաները, ազգին զեկավարները «կեցցէ՛» կը զոչէին եւ երկար կեանք ու արեւաշատութիւն կը մաղթէին Սուլթանին...:

Շրջան մը, ուր Անգլիոյ զրամով Սուլթանը հրատարակ զբաւ Գրոտիստանի «անկախութիւն» խոստանալու բռնածելը: Պէտք էր բաժնել ոչ-Թուրքերը: Քիւրտերն ու հայերը հակառակ նոյն բռնակալութեան լուծին ներքեւ զտնուելուն, միասնական ճակատ կազմելու հնարաւորութեանէն պէտք է ձերբազատուէին: Անոնց միացեալ զբոհին առջեւ կրնար փուլ գալ Օսմանեան տիրապետութիւնը, Թուրքիոյ փոքրամասնութիւններուն ազատ շնչելուն եւ ստեղծագործելուն ատիթ կրնար ընծայուիլ: Ահա թէ ինչո՞ւ, Սուլթան Համիտ քիւրտերուն խոստացաւ հայկական երեք նասահանգներէն՝ Վանը, Տիգրանակերտը, Պիթլիսը, ինչպէս նաեւ Ատրպատականէն մաս մը միացնելով ընդարձակ պետութիւն կազմելու ծրագրով...: Պետութիւն մը որ հովանաւորութիւնը պիտի վայելէր սուլթանին... Երբ Երիտ. Թուրքերէն քիւրտերը պահանջեցին իրականացնել Սուլթանի խոստացած քրտական իշխանութիւնը... անոնք ամենէն վայրագ ձեւով դատաստան տեսան քիւրտ պարագլուխներուն հետ:

Հայ եւ քիւրտ փոխ-յարարերութիւններուն սերտակցութիւնը

Հնարաւոր չդարձաւ ՏՕական թուականներուն: Ա. Համաշխարհային պատերազմի շրջանին անոնց պետերէն մաս մը ռուսական զէնքին յաղթանակին հաւատաց: Մնացեալները սակայն, չկրցան դնահատել իրենց շահերուն սպառնացող թրջական վտանգը՝ ժամանակին: Հայ մեծ յեղափոխականներ փորձեր կատարեցին միասնական ճակատ կազմելու համար: Ժիրայր ու Մուրատը, Չէլլօն եւ Գ. Արիսանեանը, Գէորգ Չալուչը, Մինաս Օղլուն եւ Լազօն, Արամ Աչքապաշեանը, Ա. Ռչտունին, Փիլիկը եւ Փարամազը եւ դեռ ուրիշներ, այլ զործակցութեան հաւատացողներն էին յանուն երկու ժողովուրդներու ազատագրմանը, պէտք չէ ժխտել որ, որքան ալ կոյր գործիքներ դարձան քիւրտերը իթթիհատի եւ աւելի շատ Սուլթանի՝ անոր շտապած կրծքանշաններէն եւ ամսականներէն խաբուելով, բայց եւ 1915ի եղեռնին՝ Տերսիմի, Խարբերդի, Վանի շրջաններուն մէջ գտնուեցան քիւրտեր, որոնք փրկեցին որոշ չափով հայորդիներու կեանքը, բայց ատիկա ո՛չ յատուկ ծրագրով եւ ո՛չ ալ հեռաւոր նպատակի մը հետապնդումի հաշտոյն: Քիւրտերը Համիտի խոստումներէն շրջաձ, չէին կրնար եւ չուզեցին ալ հայ յեղափոխական ազատագրական նախաձեռնութիւններուն իրենց բաժինը բերել. ընդհակառակը, իրենց տրամադրուելիք հողերու շրջուցիչ հեռանկարը կուրացուց աչքերնին եւ կարծեցին, թէ հայկական հողերն ու կալուածները իրենց պիտի մնան, եթէ հայ զիւղացիները մաքրագործուին հայկական նահանգներէն ներս:

Յետագային, շատ ուշ անդրադարձան անոնք, որ իթթիհատի մօտաւոր նպատակը եթէ բանթուրքիզի ծրագրին արդեւք հանդիսացող հայերը մաքրագործելն էր, ապա իթթիհատի եւ Քեմալիզմի նպատակը Արեւելեան նահանգներուն մէջ ապրող միլիոնաւոր քիւրտերը փոքրամասնութեան մէջ պահելն էր ի վերջոյ... Այդ ուշ հասկացողութիւնը սակայն ոչինչով փրկեց մեծ երազներ սնուցող քիւրտ աշխրապետներու ծրագիրը...: Անոնք աւելի վատ դրութեան մէջ ինկան, թէեւ մնացին Թուրքիոյ իրենց հողերուն վրայ, սակայն 1930ական թուականներուն այնպիսի հարուածներ ստացան թուրքերուն կողմէ, որ չլմած վիճակի մատնուեցան:

Սուլթանի թելադրանքով 1876-ին Վասսուրականի Աղրակի շրջանին մէջ Շէյխ Ուլայիզուլլահ գումարեց քիւրտ ցեղապետներու համագումար, որոշելու համար քրտական պահանջներն ու անելիքները: Այս շէյխը հայատեաց ու դազան էր: Անոր կողքին էին Շէյխ Աւլախտտին Պետրիսանի ժառանգորդները՝ Պահրի Պէյի զլխաւորութեամբ: Այս վերջինը կը վայելէր քիւրտերու անվերապահ սէրն ու յարգանքը: Յետագային ան դարձաւ փաշա, սակայն կառավարութիւնը միշտ կասկածով կը նայէր անոր եւ ի վերջոյ սպաննեց զինք:

1880ին, Խրիմեան Հայրիկ մերկացուց Շեմսինանի քրտական «համագումար»ի յետադիմական եւ հակահայ ընոյթը եւ հայերուն կոչ ըրաւ պատրաստ գտնուել զիմագրաւելու համար նոր վտանգը:

«Կասկած չկայ», կը գրէր Ն. Հայրիկ, «քրտական մի միութիւն է կազմակերպուած կեդր. կառավարութեան դրդումով, որ ուզում է անդամալուծել հայոց հարցը. նրան հակադրելով մի նոր հարց՝ քրտականը... Քրտական միութիւնը Թուրքիայում իր համար օճալ կազմելու մտքով՝ ամենավայրագ գործողութիւններ է կատարում՝ Արապը, «Հէֆարին» հայերից դատարկելու համար»: (Տես՝ Կ. Քարամեանի գիրքը, էջ 21, մէջբերումը Լէոնէ կատարուած է):

Շէմսինանի մէջ հաւաքուած թրջական կառավարութեան կազառուած քիւրտ ցեղապետներէն ոմանք առաջարկեցին անմիջապէս սկսիլ «Քիւրտիստանը հայերէն մաքրելու աշխատանքին»: Չանոնք կ'ոգեւորէր անպատիժ սպաննելու, թալանելու, բռնաբարելու հեռանդարի քաղցրութիւնը: Նենդամիտ Ուլայիզուլլահն անոնց ետեւը չափաւորեց, հասկցնելով, որ տուեալ պայմաններուն մէջ, հայերու ոչնչացման անմիջականօրէն կը յաջորդէ քիւրտերուն ալ բնաջնջումը: Այդ պատճառով ալ, քիւրտերը նախ պէտք է իրենց դիրքերը ամրացնեն, ուժեղանան այնքան, որ Սուլթանը չկարենայ կամայականօրէն վարուել իրենց հետ, եւ թէ առայժմ հայերը սարսափի եւ մահուան վախի մէջ պահելու է եւ պէտք չէ թոյլատրել իրենց որ անոնք կազմակերպուին եւ հակադրուին քիւրտերուն:

Ուլայիզուլլահի տեսակէտը ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Սան Սթեֆանոյի, Պերլինի եւ այլ դիմումագրերուն ու մեր ազգային երգերուն մէջ քիւրտերուն ու չէրքէզներուն հարստահարութեանց դէմ կատարուած բողոքներուն ետին պէտք է հասկնալ ընդհանրապէս թուրքերը, եւ ո՛չ թէ քիւրտերը: Հայ ժողովուրդի նման, անոնք ալ անկախութեան ձգտումը ունէին, ու Արեւմտեան Հայաստանի մէջ երկուքին համար ալ բաւարար հող կար 200-250 հազար քառ. քմ. տարածութեան մը վրայ սեփական հայրենիքներ ունենալու: Կարելի՞ էր այս հազարամեայ բախտակից ժողովուրդներուն ճակատադիրը տարբեր ձեւով տնօրինել: Այո, եթէ շէյխերը աւելի իրապաշտ մօտեցում ունենային եւ Օսմանեան կառավարութեան «սիրաշահելու» քաղաքականութեան հակադրուէին հայոց հետ միասնաբար: Ողբերգութիւնն հոն էր, որ քիւրտ աշխրաթապետները աւելի շատ իշխանութիւն ունէին իրենց քիւրտ զիւղացի կամ հօտաղ մասսային վրայ: Շատ դիւրին պիտի ըլլար սերտ կազմակերպուած ընդդիմադրութիւնը Սուլթանի, ապա իթթիհատի դէմ, եթէ քիւրտ զիւղացիին կամ հօտաղը ձայն ունենար, կարծիք ունենար իր մեքենական հնազանդութեամբը աւատատէր ազաններուն ենթակայ չըլլար:

Հետաքրքրական է լսել, Թուրքիոյ մնայուն բարեկամ Անդլիոյ պատմաբաններէն Մ. Մաքուլը որ 1896ին հրատարակեց ուշագրաւ աշխատութիւն մը «Անգլիոյ պատասխանատուութիւնը Հայաստանի առջեւ»: Ան կը գրէ. «... Քրիստոնէաներուն ջարդը Օսմանեան կայսրութեան մէջ կը կատարուի պարբերաբար, ոչ որպէս տեղական Ֆանաթիզմի պայթիւնի հետեւանք, այլ որպէս քաղաքական ակտ, կապուած որոշ սխտեմի հետ եւ կը կատարուի մշտապէս Սուլթանի եւ անոր խորհրդատուներու հրամանով ու ներշնչմամբ»:

Ասկէ աւելի զօրաւոր վկայութիւն մը աւելորդ է փաստելու համար, որ ազատագրական մեր պայքարը անհրաժեշտ, տեղին եւ ո՛չ ժամանակավրէպ շարժում մըն էր:

ՀԱՅ ԵՒ ՔԻՒՐՏ ԿԱՊԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«Զօր. Սմբատի Յուշերը» գրքին մէջ որ Գէորգի, Հրայրի, Անդրանիկի, Սասնոյ Բ. Ազատամբուժեան մասին լուսադոյն վկայութիւններէն կարելի է սեպել, կը խօսուի հայ եւ քիւրտ փոխ-յարարելու թեանց մասին:

«Քիւրտերու հետ բարեկամական յարաբերութեանց մշակման մէջ, զլիսաւորաբար՝ երկու նպատակ կը հետապնդէինք.— նոյն նպատակին լծելով, զինակից դարձնել մեզ զանոնք: Հոն ուր կարելի չէր ատիկա, ապահովել անոնց չէզոքութիւնը:

«Անհերքելի է թէ այդ թուականներուն, քիւրտերու հետ սերտ, հաւատարիմ զինակցութիւն մը ոչ միայն կրնար հիմնովին յեղաշրջել կացութիւնը, այլ Օսմանեան կայսրութեան ճակատագիրը կապել ներքին յեղափոխական զէպերու ընթացքին:

«Պէտք է խոստովանել թէ ո՛չ մենք այդքան հետունքը կը նայէինք, ո՛չ ալ Քիւրտերը տրամադրութիւն ցոյց կուտային իրենց եզները մեր սայլին լծելու: Նախ որ, նոյն իսկ 1904ի Սասնոյ կռիւններուն, Հայ Յեղափոխական Շարժումը տակաւին չէր գտուած իր ժողովրդային գրեթէ բնագոյնական պոսթկոմի տարբերէն: Տեսարանութիւն մը եթէ կար մեր շարժումին մէջ, ամբողջութեամբ կը պարտկուէր չորս բառերու մէջ — կեանքի, ինչքի եւ պատուի ապահովութիւն, տեղակամ ինքնավարութեան մը անդին չէին անցնէր մեր ամենէն հեռուոր ձգտումները: Այդ էր Թրքահայաստանի ազատագրումը գոր կ'ըսէին:

Իսկ Քիւրտերը չէին կրնար հասկնալ մեր ցաւերը: Ազգային մշակոյթէ բուրրովին զուրկ, մահմետական ազդեցութեան տակ հողելին այլասեռած, բաժնուած յաճախ հակամարտ ցեղախումբերու, կ'ապրէին կիսանկախ կեանք մը՝ թուրք բուրձնակցութեան արեւհամ տրամադրութեան տակ: Չունէին եւ չէին կրնար ունենալ հաւաքական ուրոյն գոյութեան հեռանկար մը, որ զիրենք հակազդէր թուրքին եւ մեզ բարեկամ ու զինակից դարձնէր, շահերու նոյնութեամբ:

«Ընդհակառակն, ամէն ինչ կը նպաստէր Հայն ու Քիւրտը թշնամարար զէմ զէմի կանգնեցնելու: Քիւրտ աւատակտներու զանձին ամենէն ատատահոս ազրիւրը հայ զիւղերն էին:

«... Ու կը քաջալերուէին կառավարութենէն: Տուրք ալ չէին վճարեր յաճախ: Կամ աւելի ճիշդը, իրենց տուրքի բաժինը՝ հայերն էին որ կը վճարէին:

«Ատկից զատ, քիւրտերը կառավարական սրել ճնշումէ գերծ էին: Բոնապետութիւնը առաւելապէս կը գործէր հայերուն վրայ, մինչ քիւրտերու նախնական, գրեթէ նահապետական կենցաղը՝ իր անհրաժեշտ ապատութիւնը կը գտնէր բռնատիրական դրութեան ու կացութեան մէջ:

«Այս վիճակին մէջ, անպատի բարոզ կը դառնար՝ Ազատութիւն ճառել մարդոց՝ որոնք զո՛հ էին իրենց յատուկ ազատութենէն...:

«Ուսկայն անկարելին իսկ պէտք էր փորձել՝ Հայ Յեղափոխութեան գոյն նպատ մը բերելու համար: Եւ պէտք է ըսել թէ թափուած քանքերը բուրրովին ապարդիւն չէին անցնէր: Նուէրներով, ցեղապետներու անձնախրութեանց զգուստով, ոճանց զժողովրդեանց շահագործումով, կը յաջողէինք յաճախ ժամանակաւոր կապեր հաստատել քիւրտերու հետ եւ ատեն մը, օգտագործել անոնց բարեացակամ տրամադրութիւնները:

«Քիւրտերու հետ բարեկամութեան հաստատման ամենէն հաւատար տոտրեալն էր Գէորգ Չաուշը, որ արդէն իր սիրազորութիւններով համբաւաւոր էր աշխրեթներուն մէջ: Ինք ծանօթ բրտական վարք ու բարքին եւ բարբառին, գիտէր իւրարանջիւրին համեմատ լեզու թափելու զաղտնիքը:

«Կրցանք բաւական սերտ կապեր հաստատել քիւրտ աշխրեթներուն հետ ... որոնք մեր յետագայ ճշմարտագոյն պահերուն դաւեցին անուշտ, միանալով կառավարութեան ուժերուն եւ ըստ սովորութեան թայանի տալով ու աւերելով զիւղերը: ... Մաս մը միայն չէզոք մնաց, ինչպէս Սասնոյ սահմանակից մէկ քանի ցեղեր, օրհասական մեծ կռիւներու պահուն:

«... Անոնց միջոցաւ զէնքի փոխադրութիւն կ'ապահովէինք ... սերտ կապեր ունէինք Մուսա Պէյի եղբոր Ղասթի հետ, որուն տան մէջ օրեր կ'անցընէինք»:

(Տես՝ «Զօր. Սմբատի Յուշերը», Մ. Երեցանց, Ա. հատոր, (1900–1914), Փարիզ, էջ 193–196):

Սասունի շրջանէն, Պողբքի թէլօ 400 կուսուցներով, Խճուրդ զիւղի Տէրվիշը, Տրպոյի Սայխար, Սասունցի քիւրտ Շեկոյի ցեղը, Լուսին, կարելի եղած է մասամբ մտնեցնել Հայ Յեղափոխական Շարժումներուն...: (էջ 196–197):

«Սասնոյ Բ. Ազատամբուժեան՝ (1904) հայ յեղափոխականները 100 մարզուած մարդիկ, օժանդակ զիւղացիներով 1000 հրացան բունոց կը հաշուէինք: 18 հազար կանոնաւոր զօրք՝ հայոց զէմ: Քէօսէ Պին Պաշին, (չէրքէզ) Սայիհ Փաշան (Եթր զումարտակով) եւ Պիթլիսի կուսակալ Ֆէրիտ Փաշան Սասունը ընկճելու համար Էկաժ էին:

«Անդրանիկ՝ Տափըզ, կեղտոնը՝ զլիսաւոր ճակատի պաշտպան (Հրայր), Իշխանձոր՝ Գէորգ Չաուշ եւ Սմբատ:

«Կրնայի՞նք հանդարտ խղճով՝ թուրքին ու քիւրտին զրգուտած վայրենի ախորժակներուն յանձնել ժողովուրդը՝ որուն միակ ապաւէնը մենք էինք, իր պատրիարքներէն ու կաթողիկոսներէն, օտար հիւպատոսներէն ու դեսպաններէն աւելի: (էջ 219):

«Տարոնի մէջ Սասունցի Մանուկի, Պոլսեան Մկրտիչի, Կոստյեան Հաճի Յակոբի, Գարմէնի (Պատարմաճեան) կողմէ կեղտոնական Կոմիտէ կը կազմուի, կը քննուի Գէորգ Չաուշի կոնսակէն սպաննուելու պարագան, Յանձնախումբը քննութիւն կը բանայ հայ կուսուցներու եւ քիւրտերու մօտ:

«Դիմեց Ղարմ Պէկի եւ քիւրտերուն՝ Ավշար գիւղացի Ռէս Մալխասի միջոցաւ, ու հասաւ այն եզրակացութեան, թէ Գէորգը մահացնող դատադիւր ձեռքը՝ Ռուբէն Տէր Միմասեանինն էր:

(«Զօր. Սմբատի Յուշերը», Փարիզ, էջ 326):

Նշակեան Յակոբ Սարկաւադի խումբին միանալու մտքով 1889ին զէպի Վան ճամբայ կամ Վարդան Գոյուշեան, Յովհ. Ազրիպատեան եւ Կար. Գուլազորսեան թուրք ոտտիկաններու ջոկատին հետ բախումի ընթացքին միայն վերջինը կը յաջողի փախչել: Հերոս նահատակ Վարդան Գոյուշեանը կը զրէ —

«Ռաֆֆիի ընթերցանութիւնը զիս ներշնչեց մէջս վառ եւ ազնիւ սէր դէպի ազգ ու հայրենիք, դէպի տառապեալ հայութիւնը: Ես վնասեցի մինչեւ մահս գործել հայրենիքի փրկութեան համար, նրա բարօրութիւնը իմ երջանկութիւնը համարել: Եւ այդ վնասը չէր այն վաղանցուն կրօնքէն մէկը, որ քամու պէս ծնունդ եւ կորչում են, ո՛չ, նա անկի խոր արմատ ունէր: Եւ զգում են, որ առանց հայրենիքի եւ ոչինչ են, առանց նրա բարօրութեան եւ քշուառ են, վերջապէս զգում են, որ անկարելի է ինձ մի այլ նպատակի ծառայել: Ես տեսայ մեր հայրենիքի քշուառ կացութիւնը, նրա ժողովուրդի անտանելի դրութիւնը, ես այդ երկրի, այդ ժողովրդի մէջ ապրեցի եւ իմ վնասու աւելի եւս հաստատուն ու ամփակտելի եղաւ: Այդ գազափարն էր որ փայտեց ինձ տնից...»

«...Գուցէ եւ մեծ կ'ընկնեմ շուտով եւ շատ շուտով: Բայց մեր անկումը պիտի այլոց գրգռէ եւ մեծ շատերին օրինակ կը լինեմ մեր գործունէութեամբ...»:

(«Հորիզոն», 1913, «Նորք», 1924, Ռ. Յովհաննիսեան «Արեւմտահայ Ազգային-Ազատագրական Շարժումները եւ Կարիքի «Պաշտպան» Հայրենեաց Կազմակերպութիւնը», 1965, Երեւան, էջ 256):

**

«Երևացի է առուած, որ կուռղը, միայն այն դէպքում չի կուռում, երբ համոզուած է, որ ինքը կը յաղթի: Նա կուռում է, որովհետեւ չի կարող չկուռել, նա կուռում է երբեմն մեռնելու համար»: (Ռ. Յ. էջ 257):

«Ազատագրական շարժման յառաջընթացի իր ճանապարհին հայ լիպերալ եւ դեմոկրատական ուղղութեան գործիչներն անհաշտ պայքարի մէջ էին ազգային-պահպանողականների հետ, որոնց հմայել էր գիտութեամբ ու մշակութային նուաճումներով յառաջդիմելու եւ այլ ճանապարհով ազատագրուելու սին կախարհանքը: «Դուք մի շտապէք, գայթակղութեամբ առիթ մի տաք: Ժամանակը ինքնիքն, կամաց-կամաց կ'անի ինչ որ հարկաւոր է, այսպէս էր դատում «Մեղու Հայաստանի» սրենների մէջը, Ռաֆֆու ազատագրութիւնը որպէս հէքիաթ ընդունող եղիչէ Գահանայ Գեղամեանը: (Հիմ շնորհակարանքը «Մշակ»ի յորեկանին», Պաքու, 1915, էջ 83):

«Կարոյ մէջ հայ մատնիչը ժողովրդի քահանան է, դայրոյթով գրում էր Ա. Արփիարեանը, — վանայ մէջ հայ մատնիչը Եպիսկոպոս է, Թաղական Խորհուրդն է, երեւելի վաճառականն է եւ կը հաղորդէ տեղական իշխանութեան, թէ հայերը վտանգաւոր են պետական շահուց... Թիֆլիսի մէջ հայ մատնիչն հրապարակախօս է, խմբագիր է, քննադատ է, սպազայ քահանայացու է եւ մատնանիչ կ'ընէ հայ վիպասանն իբր աշակերտ ուսու վիպասաններու, որոնք աքսորուած են ի Սիպիր»:

(Ռ. Յ. ի գիրքը, էջ 264):

Ա. Արփիարեան իրաւացի նկատում է.—

«Թուրքերում համար միեւնոյն է, թէ նպատակին դիւանագիտութեամբ պիտի հասնեմք, յեղափոխութեամբ կամ բարեկարգութեան սկզբնաւորութեամբ: Թշնամիմ նպատակն է եւ ո՛չ թէ միջոցը»:

(Տես՝ «Նոր Կեանք», 1898, թիւ 10, էջ 146):

Ազատամբռութեան կոչելով հայ ժողովրդի ընդդէմ Բրթական բռնապետութեան, Արծրունիին պայքարի իր նիզակներն ուղղում էր նաեւ Եւրոպայի դէմ, մարտահրաւիր նետում ճննդաւոր, եսական... ճնշող ու հարստահարող Անդլիային, որը հնարաւորութեան դէպքում կը կողոպտի, կը քամի հայ ժողովրդին այնպէս, ինչպէս կեղեքում էր իր զաղութներէ բազմամիլիոն ազգաբնակչութեանը («Մշակ», 1887, թիւ 35):

«Յետագայում Ղ. Աղանը, ազատագրական շարժման հետ միասին, շեփուրում էր հաւատարմութեամբ սկզբունքով կառուցուելիք ապագայ հասարակարգի մասին: (Ղ. Աղան, «Երկերի ժողովածու», հատ. 3, էջ 98):

«Հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախօսութեան սոցիալական եւակտով ինքնին բնորոշում է օտար լուծը Թոթափելու հետամուտ հայ ազատամարտի ժողովրդական-Դեմ. բովանդակութիւնը»:

(Ռ. Յովհաննիսեանի գիրքը, էջ 281):

Անդրադառնալով Ժընեվի ուսանողութեան մտայնութեան 1900-ական թուականներուն, դաշնակցական Մալխաս, իր «Ապրումներ» Ա. հատորին մէջ, Պէյրութ, կը գրէ թէ՛

«Անոնք սակայն դարձանալի հեշտութեամբ կը հուզեն սոցիալիզմը: Ըսենք ստոր համար համալսարան երթալու բնաւ պէտք չկար, ուսանողական ժողովները, բաւական էին, որոնք կը սկսէին էնկէլս, Կարլ Մարքսով ու կը վերջանային Կատուցելով: ... Պաքուցի միլիոնատէրի տղան կարմիր սոցիալիզմ կը խաղար Ժընեվի մէջ, Թիֆլիսցի հաստափոր վաճառականի աղջիկը ... Սոց. Դեմ. ժողովներու ընթացքին թէյի բաժակները կը լուար...»:

«Հագիւ Ժընեւ եկողներէն 20 առ հարիւր բան մը կ'աւարտէր, Լթէ նոյնիսկ աւարտելէր զբանակներն ըլլար...»: (էջ 38):

«... Ռ. Խանազատը իր կենդանի բնաւորութեամբ օրուայ մարդն էր: Քիչ ցուցական, հասարակութեան բոլոր խաւերուն հետ շփուող, լեզուանի եւ ոչ շատ զգուշաւոր, ամբողջ Տրապիզոնցիներու սիրելին էր»: (էջ 73):

«... ԱՅՏԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ԳՐԵԹԷ ԱՄԷՆ ՄԱՐԻ ՀՆՁԱԿԵԱՆ ԷՐ (90ԱԿԱՆ ԹԻԻ) ԱՅՍԻՆՔՆ՝ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ, ԱՅՆՔԱՆ ԱՅԻ ԲԱՌԵՐԸ ՀՈՄԱՆԻՇ ԷՆ ԻՐԱՐՈՒ»: (էջ 130):

Մալխաս կը նկարագրէ Քիւրտ Շէյխ Մէհմէտ Սատըլի հետ իր տեսակցութիւնը, անոր բացատրելով որ հայերը հարց չունեն ջիւրտերուն հետ, Պետրիան Պէյի կողմ (միասին կուռելու Սուլթանին դէմ) կ'ըսէ, թէ համապետական պէտք է ըլլայ ընդդէմադիր շարժումը: Մալխաս նոյնիսկ ըսած է, թէ «Մենք ջիւրտերը կը համարենք նոյն երկրի գաւազ», թէ «հարկադրաբար կը կուռնք անոնց դէմ...»:

Ան կը յիշեցնէ, թէ հայերը կը վայելեն Եւրոպայի պաշտպանութիւնը, թուրքը կը սպաննէ եւ ջիւրտի վրայ կը ձգեն յանցանքը: Կատուարութիւնը կը հալածէ՝ «ջիւրտն է յանցաւորը»: «Այդպէս կ'ըսէք հայերը ալ: Ձեզ սիրելու մասնաւոր պատճառ մը չունինք, բայց ջիւրտնք որ այս հողի վրայ դուք այնչափ հին էք որքան մենք: Նորեկը Թուրքն է եւ որուն հանդէպ սիրալիւ տրամադրութիւն ունենալու պատճառ չունինք: Մեր հողամասը լայն է կը բաւէ երկուքիս ալ: Սկսելով Պաշկալայէն ու Նորտուզէն մինչեւ Մուսուլ մերն է, վերն ալ՝ ձերը»:

Երբ կ'առաջարկուի Շէյխին որ Մար-Շիմոնի (Ասորիներու Եկեղեցապետ) հետ ալ համաձայնին՝ Քիւրտ Շէյխը վերապահ կը գտնուի»:

(Տես՝ «Ապրումներ», Մալխաս, 1956, Պէյրութ, էջ 210):

Դժբախտաբար սակայն Հայ Ազատագրական պայքարի եւ ջիւրտ ղեկավարութեանց միջեւ՝ ինչպէս Փիլիկի պարագային ալ շեշտած ենք, հնարաւոր չեղաւ դործակցութիւն ստեղծել մեզի ծանօթ պատճառներով, ինչ որ վնասակար հետեւանք ունեցաւ թէ՛ մեզի եւ թէ՛ իրենց համար յետագային:

Հնչական գործիչ Ղուբրիկեան հայ եւ ջիւրտ մերձեցման դժով Տերսիմի եւ Երզնկայի շրջանին մէջ դեր խաղացած էր: «Ան Տերսիմ դացած ու ՄԵԾ Շէյխին (Մէյիտ Իպրահիմ) ու երկու աղաներու հետ տեսնուած էր Հնչական Նորսիկեանի

հետ: «Եւ հայ-քրտական համադրժակցութեան մը պայմանները կը ճշդունին, ըստ որում հայերը պարէն, նոր ձեւի զէնք, ռազմաթերք պիտի հայթայթէին քիւրտներուն ու որոշ թիւով ալ հայ մարտական ուժեր պիտի մտցնէին Տերսիմ, իսկ Սէյիտ Իպրահիմ ո՛չ միայն իր ազդեցութեան տակ եզոզ ցեղախումբերը պիտի ապստամբեցնէր, այլ եւ պիտի աշխատէր իրենցմէ դուրս քիւրտեր ալ մասնակից դարձնել այդ շարժման: Բայց ստիկա դիւրին դորժ չէր եւ մեծկակ գումար մը անհրաժեշտ էր ծրարիւրը յաջողցնելու համար, որ գոյութիւն չունէր սակայն... Ասով մէկտեղ դորժի կը ձեռնարկուի, կը գնուին բաւական զէնքեր»:

(Տես՝ «Ներգնկա», Գ. Սիւրմէնեան, Գահիրէ, 1947, էջ 36):

«Այդ շրջանի ամենէն նշանաւոր դորժիչը կը հանդիսանայ Հնչակեան Ռուբէն Եիշմանեան (Քեռի) իր 18 կտրիճներով:

«Սահմանադրութեան օրերուն, Գաշակցականները մտքերը յեղաշրջելու քաղաքականութեան լծուեցան: Զէնքի տեղ գրիչը ձեռք առին, յեղափոխական մարտիկներու տեղ խմբազիրներ, Մարքսի «կապիտալ»ը գոց դիտարկ վերոֆ. ներ մէջտեղ իջան: Անոնք սկսան ճառել հողերու համայնացման, արհեստակցական միութիւններու, Գոռպիրաքիւններու եւ նման այլ նիւթերու մասին, որոնք այն օրերուն այնքան ալ կենսական չէին»: (էջ 62):

«Հողային հարցին մէջ սկիզբը լոնայրաւուած հողերու հարցին մէջ դատարաններ արդարութիւն ըրին, սակայն... «Բայց ի վերջոյ, ամենք միայն յաճախութիւններով ու խստամտներով բաւականացան»: (էջ 63):

«Հնչակեանները բռնաւորին դէջ տրամադրութիւնները սրելու անուղղակի առիթ տուին... Սահմանադրութեան վաղորդայնին Գերջանի գիւղերէն մաս մը փերտեր՝ Հնչակեան արձանագրելով: Կառավարութիւնը հաշտ աչքով չէր դիտեր այդ բոլորը: Դիտողութիւն ըրի Հնչակեաններուն, բայց Ամերիկայի իրենց կեդրոնէն կծու գիրք մը ընդունեցի: Հայեր եւ Հնչակեան փերտեր բանտարկուեցան Հայտար Պէկի ամբաստանութիւններով, բայց կարելի եղաւ ֆանի մը ամիս ետք թէ՛ հայերը եւ թէ՛ փերտերը ազատ արձակել տալ»:

Երուանդ Եպիս. Փերտահճեան կը գրէ, թէ —

«Իթթիհատի ներկայացուցիչը, առաջին իսկ առիթով թունաւորեց թուրքերը: Այն ժամանակ ՀԱՄԻՑԱՆԹ Թէ (Երանի՛ ուրիշներ ալ հասկնային — Հ. Գ.), Օսմանեան Սահմանադրութիւն բերողները ի՞նչ բաներու կը ձգտէին: Իր խօսքերուն համար բողոքեցինք Վէհիպ Պէկին, երբ ան այցելեց Առաջնորդարան»:

«Իթթիհատի թաղուն նպատակներուն համար անմիջապէս տեղեկագիրք մը յղեցի Պատրիարքարան՝ նոր աէթիմի վերաքերմամբ մեր յուսախարութիւնը շեշտելով»: (էջ 67):

«Թուրքերը 1910ի Սելանիկի իրենց համաժողովին մէջ վերջնականապէս բնորոշեցին համա-թուրանական ծրարիւրը, «Թուրքիան թուրքերուն» սկզբունքը: Ե. Թուրքերը շուտով մոռցան (յիշած էին արդեօք Երրեք) այն մեծ ծառայութիւնները, զոր հայ ժողովուրդը ու Հ.Յ.Դ. մատուցած էին իրենց թէ՛ Համիտեան շրջանին եւ թէ՛ տապալումի օրերուն»: (էջ 68):

Գ Լ ՈՒ Ռ Գ.

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԹԱՑՔԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՒՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

Թուրք բռնակալութեան դէմ (1890–1910) հայ ժողովուրդի հերոսական պայքարներու մեկնարանման հարցին մէջ տարակարծութիւններ կան մինչեւ այսօր ալ:

Հայրենի պատմաբաններ երկու մօտեցում ունին այդ շարժումներուն դնահատման հարցին մէջ: Անոնցմէ մաս մը կը հետևի Լէոյի եւ Ա. Յովհաննէսեանի թեզերուն, որոնք իրենց պաշտօնը ելոյթներուն մէջ կ'աշխատին քննադատել հայ յեղափոխութիւնը իր «անիմաստ» խիզախումներուն համար եւ կամ կ'աշխատին ջարդերու պատասխանատուները մեր Յեղափոխական Շարժումները նկատել Թրքահայաստանի մէջ:

Ուրիշներ 1890–96ի շրջանի Սասնոյ, Զէյթունի, Վանի, Շապին-Գարահիսարի, Սէուտիոյ, Փոքր Հայքի, եւ Մնձուրի լեռներուն վրայ հայ Փետայիներու խիզախումները նկատելով հանդերձ Ազատագրական Շարժման օրինակներ, կը ձգտին այդ շարժումներուն հազցնել միմիայն «գիւղացիական» շարժիչ, եւ նկատելով որ, անոնք համընկնած են թրքական հայասպանութեան ծրարի գործադրութեան հետ, ուրեմն զանոնք կը նկատեն «ճախող» եւ «սխալ»: Մանաւանդ որ, կը պնդեն անոնք, հայ ժողովուրդի քաղաքական մտքի այդ շրջանի առաջնորդները անտեսած են քիւրտ եւ թուրք գիւղացիներու հետ դորժակցութիւնը, միասնական ճակատ կազմելու անհրաժեշտութիւնը:

Անոնք կը մոռնան որ, քիւրտերու Ալքակի 1876ի Համապուժարը, ուր հաւաքուած էին բոլոր աշիրաթապետները, ո՛չ միայն հայերու հետ սերտ դորժակցութեան հարցին մէջ կը թերանար, այլ հայերը ջարդելու հարցին մէջ «նեղութիւն» պատճառելու որոշումը կուտար, այն համոզումով, որ ջարդի «կարգը իրենց կրնայ գալ», եթէ առանձինն մնան Համիտի դիմաց:

Մենք չենք խօսիր այն վնասներուն մասին, որոնք յառաջ եկան քիւրտերու Կովկասէն Արեւմտահայաստան անցնել փորձող Կուկունեանի (1890), 1904ին Սասնոյ Բ. ապստամբութեան շրջանին Հնչակեան Բարբէնի խումբին, Նիկոլ Թումանին, Վանի 1896ի հերոսամարտին Արմենական, Հնչակեան, Դաշնակցական ուժերուն Գարահիսար լեւրան լանջին սպանութեան մէջ: Չենք խօսիր 1896ին արդէն 50 հազար հաշուող Համիտիէի դուռներուն հայկական դիւղերուն եւ արտերուն բերած աղէտներուն մասին: Քիւրտերը՝ Մուսա Պէկերէն մինչեւ Շարաֆ Պէկ, Սասնոյ վրայ խուժող տասը հազարէ աւելի քիւրտերը, ո՛չ միայն աղէտ դարձան եւ մանաւանդ զործիք՝ Սուլթանի մութ հաշիւներուն իրաւորման ճամբուն վրայ, այլ անոնք տապարը զարկին այդ ձեւով «Անկախ Քիւրտիստանի յետագայ ծրագրին իրականացման դէմ»:

Ահա թէ ինչու, երբ հնարաւոր չէր ժողովրդական լայն մասսաներուն միացումով մղել հերոսական ազատագրական պայքարը Օսմանեան Բռնակալութեան դէմ, հայ յեղափոխութիւնը ստիպուեցաւ առանձինն գնալու, առանձինն կազմակերպուիլ, իր բոլոր յոյսը դնել իր սեփական ֆետայիներու եւ հայրենաւէր հայ գիւղացիութեան եւ աշխատաւորութեան բազուկներուն վրայ:

Բարեկարգութեան նպատակ չունէր Սուլթանը, չէր կրնար պարտքերու տակ խեղդուած երկրի մը պետը, Պալքաններու մէջ հարուածուած Սուլթանը, խորդախուժիւնը, կաշառքը, բռնութիւնը հովանաւորող, ազդամիջեան կռիւներ հրահրող Սուլթանը թոյլատրել՝ որ հիմնական բարեկարգութիւններ տեղի ունենան Թուրքիոյ մէջ, որովհետեւ սնանկացած տնտեսութիւն ունեցող Թուրքիա մը անձնատուութեան մղել պիտի նշանակէր այդ, մանաւանդ 1877–1878ի ուս–թրքական պատերազմէն ետք, այնքան պարտքի տակ խրած էր պետութիւնը, որ իր տոկոսները միայն կը վճարէր Փրանսական եւ անգլիական շնորհութիւններուն, որոնք աստիճանաբար երկրին տնտեսութիւնը ձեռք առած էին, իրենց դատարաններով եւ յատուկ դանձիչ պաշտօնեաներով:

Անգլիացի դիւանադէտ Լորտ Ստրաֆորտ Ռեզկլիֆն ըսած է, թէ Պոլսոյ իր ամբողջ պաշտօնավարութեան ընթացքին «ես միշտ կը ձգտէի պաշտպանել Անգլիական առեւտուրը եւ օժանդակել քրքական կառավարութեան, անոր ձեռնարկած բարեկարգութիւններու դժուարին գործին մէջ: Ժամանակ մը յոյս ունէի յաջողութեան վրայ: Այժմ ես հարկադրուած եմ խոստովանիլ, որ չնայած Սուլթանի բարի մտադրութեանց, չնայած անոր օգնականներէն մի քանիսն սաղմուտն էին եւ իրենց հայրենիքին նուիրուած ըլլալուն, անհնարին էր յաջողութեան հասնիլ: Բնակչութեան մասամբ խորացուած էր, ամենուրեք կը տիրէր վատնումներ, գողութիւն, ծախսածութիւն, ընդհանուր քայքայում: Իմ կարծիքով այդ չարիքն այսուհետեւ անուղղելի է»:

(Տես՝ Ս. Մարկոսեան, «Արեւմտահայերի վիճակը ԺԹ. Դարի վերջերին» էջ 47–48):

Հայ ազատագրական շարժումը գնահատողներէն ոմանք կը մոռնան, որ քրտաբնակ շրջաններուն մէջ անհող հայ գիւղացիները՝ 100էն 100 տոկոս չկարենալ վճարելուն համար վաճառուներուն՝ դարձած էին մարապա՝ ընչազուրկ, իսկ այն հայ գիւղացիները՝ որոնք փոքր չափի վրայ հող ունէին, պարտաւոր էին տուրք վճարել ե՛ւ կառավարութեան ե՛ւ ֆիրտ աշիրապայտներուն: Մինչ Թուրք գիւղացին կը վճարէր միայն կառավարութեան, իսկ քիւրտ գիւղացին՝ միայն քիւրտ շէյխին:

Պատմաբան Ա–Դո–յի բերած տուեալներով մարապայտ իւնը որոշ շրջաններուն մէջ խիստ զարգացած էր: Ան կ'արձանադէ, որ քիւրտ աղաներուն պատկանող 77 գիւղերէն 62–ը եղած են մարապայտական:

Պետական պաշտօնեաներէն մինչեւ գինուորականները, գաւառական պաշտօնեաները կաշառքի ճամբով կ'ընթանային: Այդ պատճառով ալ անգլիական հիւպատոսներէն մին կը գրէ. — «Հայ ժողովրդին բացէ ի բաց կողոպտելի այստեղ յանցանք չի համարուիր»:

Հայրենի պատմաբան Ս. Մարկոսեան կը գրէ. —

«Սառաֆներու, փաշաներու ու աղաներու կուռ միասնութեան առաջ կը փոշիանային բոլոր տեսակի օրէնքներն ու վերահսկողութիւնները: Իսկ երբ շատ եղակի դէպքերու մէջ այս կամ այն աստիճանաւորը, այս կամ այն պատճառով կը ցանկանար կիրառել պետական գրաւոր օրէնքները, այնպիսի պատճառով կը հանդիպէր, որք անգլիքը նրա համեստ ուժերից շատ վեր էր լինում»:

Նոյն պատմաբանը թրքական կեղեքումի մասին կը վկայէ. —

«ՍԿՍԱԾ ԺԹ. ԴԱՌՈՒ ԿԵՍԵՐԷՆ ԵՒ ՅԱՏԿԱՊԵՍ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ (ընդգ. Հ. Գ.), Թուրքիոյ բոլոր ժողովուրդներին եւ առանձնապէս հայ գիւղացիութեան կեղեքումն ահռելի չափերի էր հասել, տարեց տարի ԱԻԵԼԻ ՍՈՍԿԱԼԻ ԷՐ ԴԱՌՆՈՒՄ... , ինչու՞. որովհետեւ արտաքին փոխառութիւններու վիթխարի անը պետութիւնը գամած էր եւրոպական ֆինանսական դրամագլուխին, իսկ այդ պարտքերու տոկոսները մարելու եւ պետական պիւտճէի բացը զոցելու համար ժողովրդէն միջոցներ քամելու մեթոտները պահպանուած էին անաղարտ, աւատատիրական եղանակով»:

Սուսերով ուս–թրքական պատերազմի յաջորդող շրջանի էր–զըրումի չբաւոր գիւղացիութեան կարիքներուն եւ հարկերու դանձման մասին, էրզրումի անգլիական հիւպատոս Էյրստ կը գրէ թէ՛

«Պատերազմի պատճառով կիսով չափ աւերուած ըլլալով, գիւղացիները սովի ու չքաւորութեան մատուցան վատ բերքի հետեւանով: Այդ դժբախտները ամենամեղք կերպով կը հետապնդէին հարկահանները, գանձի բանու կը դնէին, երբ անոնք ի վիճակի չըլլային հարկերը վճարել. մինչ կառավարութիւնը բնակչութեան մեծամասնութեան նկատմամբ ինքը պարտապան էր այն մեքրներու համար, որ վերջին պատերազմին (1877–8), իրած էր անոնցմէ: ... Անասնակերի բացակայութեան պատճառով, մեծ քանակութեամբ ոչխարներ սատկեցան, չնայած ատոր, սատկած ոչխարներու յառաջիկայ տարուան հարկը անխնայօրէն կը գանձուի»:

«Հարկերու այդպիսի անարդար գանձման մեղքը կ'իյնայ գլխաւորապէս Բ. Դրան վրայ: Բ. Դուրը անընդհատ փող կը պահանջէր վալիներէն, ասոնք ալ իրենց հերքին՝ միւթասարքօններէն, իսկ միւթասարքօններն ալ գայմագամներէն: Այդպիսի պահանջները սովորաբար կ'ուղեկցուին պաշտօնանկ ընելու սպառնալիքներով. փողը ժամանակին չհայքայքուելու դէպքին»:

«Կապալառուներու եւ պետական պաշտօնեաներու միջեւ փոխադարձ սակարկուած համաձայնութիւն կար»:

«Ժողովուրդը, մանաւանդ հայկական նահանգներուն մէջ, ամենէն աւելի կը ճնշէ ո՛չ թէ հարկերու ծանրութիւնը, այլ զանազան տեսակի կողմնակի կորուստները, որոնց մեղքը կ'իյնայ կառավարութեան եւ անոր գործակալներուն վրայ», կը գրէ Նիւպատու մը:

Ռուս պատմարան Գոլլորտիին կը գրէ. «Նահանգապետը պարբերաբար կը շրջի իր մարդը եւ կը վերադառնայ աւարով բեռնուած, զոր կը հուարէ իր խնամքին յանձնուած բնակչութիւնէն: Մէկ ճանապարհորդութենէն ան կը բերէ 30-40 ձի, 20-30 հազար ոռայլի, զանազան զանձեր, որ կը մտնեն իր սեփական դրպանը: Նոյն բանը կ'ընեն նաեւ երկրորդական իշխանաւորները: Անոնցմէ ոչ մէկը սրաշտօնէն չի հեռացուիր, մինչեւ որ քանի մը անգամ ծայրէ ծայր շրջի իր տեղամասը, ամէն միջոցներով բնակչութենէն գրամ չկորցէ»:

(Տես՝ Ս. Մարկոսեան, «Արեւմտահայութեան վիճակը ԺԹ. Դարու վերջերի», էջ 93-6):

Հիւպատու մը կը գրէ. —

«... Բաշկալայի մէջ կառավարութիւնը կ'ուզէ զանձել նոյնիսկ յաջորդ տարուան հարկը: Ան հայ գիւղացիներէն կը պահանջէ այն ոչխարներու հարկը, որ ֆրտերը բշած տարած են, ինչպէս նաեւ այն հողերու հարկը, որ կառավարութիւնը ինքը յատկացուցած է չէրքէզներուն: Հարկերու զանձումը տրադացելու համար, հարկահանները, չուն հասցուցած են գործը, որ գիւղացիներէն կը խլեն սովի դէմ սայլաբելու համար անոնց ունեցած դրամները»:

Հայ եւ քիւրտ փոխ-յարարերութիւնները եթէ լաւ չէին, աշխարհապետներու անխմտտ հակահայ տրամադրութեանց իրը հետեւանք, ապա իւր ու մեկը չէր թուրք եւ քիւրտ փոխ-յարարերութիւնը Արեւելեան նահանգներուն մէջ, յատկապէս այն օրէն ասդին, երբ պարտքերու տակ խեղդուած Օսմանեան կառավարութիւնը կը փորձէր խլել քիւրտ աշխարհապետներուն դրպանը մուծուող հարկերը:

Այդ շրջանի քիւրտ ցեղախումբերէն նշանաւորներն էին Քերքեանլի, Իսիանլի, Շամդիլի, Քչուրի, Ռժգոթանլի, Հասարլի, Փիրոզլի, եւ Փենքքենարլի, որոնք իրենց անունով սարսափ կը տարածէին մօտ կէս միլիոննոց Տիգրանակերտի, Մուշի եւ Պիթլիսի հայկական շրջաններէն ներս: Անոնք իրենց որպէս պետ կը ճանչնային թամո Ազան: Քիւրտերու եւ Սուլթանի միջեւ պայքարը 1863ին ապա 1870ին արեւնալի բաղխումի պատճառ դարձաւ: Սուլթանը չկրցաւ քիւրտներուն արդիւնը որ հայերէն զանձուած հարկերը կառավարութեան փոխանցուի: Սուլթանը քիւրտ ցեղերու միջեւ երկպառակութեան որոմ ցանկելու քաղաքականութիւնը կիրարկեց՝ բայց մեծ յաջողութեան չհասաւ:

Ինչ կը վերաբերի չէրքէզներուն, Սուլթանը զանոնք եւս գիտնեց, անոնց տրամադրելով հող ու արօտ: Անոնք եւս կը նեղէին հայերն ու յոյները: Անոնք միանալով Աննեկի քիւրտներուն, յարձակեցան նոյնիսկ եղիտի քիւրտերու վրայ, ապա չէզոքացնելէ ետք եղիտիները, յարձակեցան Աննեկի քիւրտներուն վրայ:

Էրզրումի անպիտան հիւպատու Համպսոնը 1891ի Յունուար 16ի իր գեղուցադրին մէջ կը նշէ քիւրտ աշխարհապետի մը արարքները. —

«Մը մուտքով թեւեւ 5-6 տարուան ընթացքին, Հիւսէյն Ազան սարսափի առարկայ էր Ալաշկերտի ինչպէս քրիստոնեայ, այնպէս ալ մահմեդական բնակչութեան համար: Նախանցեալ ձմեռն Պատնոսի քրիստոնեաները (հայերը) անոր հարստահարութենէն այնքան անապահով էին, որ բոլորը գաղթեցին Ղարաքիլիսէ: Այդ ժամանակ Հիւսէյնը եւ անոր քիւրտերը շրջապատեցին տեղական քրիստոնեայ եպիսկոպոսի տունը, բայց երբ ան խոստացաւ չզանգատել, անոնք հետացան, իսկ գիւղացիները վերադարձան Պատնոս: Հիւսէյնը հրդեհած էր 9 գիւղ, սպաննած էր 10 հոգի եւ կորած էր 11 մարդու ալ ձեռքը, քիթը կամ սկանջը: Ան յափշտակած էր 2600 ոչխար, 9 ձի, բազմաթիւ եղջերաւոր անասուններ... Եւ ասիկա ո՛չ թէ էրզրումի շրջանին մէջ, ուր միւտի էր ան, այլ Վանի նահանգին մէջ»:

Յարական արիւններուն մէջ Հայտարանլի ցեղը 35 գիւղ հրկիցող Ալի Ազալի եւ Մուսա Ազալի մասին կը կարդանք. —

«Դժուար է ըսել, թէ հայկական հարցն իսկապէս կրէն ի վեր սուր բնոյթ ստացած է: Ան կը զարգանար աստիճանաբար եւ արդէն 80ական թուականներուն վերջերը հայերու նկատմամբ քիւրտերու եւ թուրքերու ճնշումները եւ որոշ քիւրտերու ու յատկապէս Մուսա Պէյի շարագործութիւնները աղմկալի հուշակ ստացան»:

Մինչ Պոլսոյ ռուս դեսպանին Համիտի լիազօրը կ'աշխատէր փաստել, թէ՛

«Հայերը սուլթանի միւս հպատակներուն հետ կ'օգտուին եւ լիակատար իրաւահաւասար հպատակներ են: Սուլթանի լիազօրը շեշտեց, թէ ամենահարուստ դրամատուներու տէրերը եւ բարձրագոյն աստիճանադասներէն շատերը հայեր են եւ թէ Համիտը անոնցմէ միշտ ջերմագին շնորհակալական հետազիրներ կը ստանայ. եւ թէ հայերու իրաւագրկութեան եւ քիւրտերու շարագործութիւններու մասին լուրերը խիստ չափազանցուած են եւ կ. ՊՈԼԻՍ ԿԱՆՉՈՒԱԾ ՄՈՒՍԱ ՊԵՅԸ ՈՅԻԼԷՆԻՍԻՎ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՄԵՂԱԳԻՆԷԼ»:

Օտար ճնշումի հետեւանքով ձերբակալուած Մուսա Պէյը սակայն կրկին ազատուեցաւ:

Հայրենի պատմարան Ս. Մարկոսեան այս առթիւ կը պնդէ իրաւամբ. —

«Վերջապէս Արեւմտահայ գիւղացիութեան անտեսական քայքայման գործում շատ մեծ դեր սկսան խաղալ ստանձնապէս 80-90-ական թուականներին ահալի շափերի հասած կողոպուտներն ու աւերումները, որ սուլթանական կառավարութեան դրդմամբ ու հովանաւորութեամբ կատարուէին քրտական աշխարհապետները»:

Հայերու իրաւագուրկ վիճակը, տուրքերու տակ անտանելի դրութեան մատուցելով աւելի ընչազօրկ պատնալը, քիւրտ, չէրքէզ եւ թուրք տիրապետող գասին սանձարձակ կողոպուտը, Պալքաններէն եկած թուրք զաղթականներու հայկական հոգերու վրայ տեղաւոր-

ուելիլը, «Հայաստան ատանց հայու» Սուլթանական քաղաքականու-
թիւնը ստիպեց հայերը որ դիմեն Ազատագրական Պայքարի, թէկուզ
տկար միջոցներով:

Լսենք վկայութիւնները:

Ինչ կը դրէ հայրենի պատմարան Փրոֆ. Ա. Մնացականեան —

«Քրքական լծի տակ տառապող հայ բնակչութիւնը ձգտում էր վերամիա-
ւորուել իր Արեւմտահայ եղբայրների հետ, ազատուել Օսմանեան բռնապետու-
թիւնից: Այդ հարցով էր զբաղուած հայ ազատագրական շարժումների առաջ,
մանաւանդ ուսու-Քրքական պատերազմների ժամանակ, երբ ուսական բանակը
շարժուում էր դէպի Կովկաս եւ Մերձասոր Արեւելք:

«... Ընդհակառակը, Արեւմտահայ աշխատաւորների շարժումը Լենինեանները
համարում էին ժողովրդական, դեմոկրատական շարժում, որն ուղղուած էր Սուլ-
թանական բռնակալութեան դէմ: Այդ շարժման արմատները գտնուում էին ժո-
ղովրդի ընդերքում, նրա հիմնական շարժիչ ուժը գիւղացիութիւնն էր:

«... Միաժամանակ «Պրատա» քննադատել է Քրքական ռէժիմը, դատա-
պարտել Քրքական պուրժուազիայի «Իքթիսատական» յետադիմական քլիքի գոր-
ծելակերպը:

«... Ս. Շահումեանը կեցցե՛լ է մաղթում հայկական ազատագրական շարժ-
ման գործիչ Ղազարու Ազաբանին (Հնչակեան — Հ. Գ.), որը «երկար տարիներ
պահպանել է իր բարոյական մաքրութիւնը, գեղեցկութիւնը»:

«Կնուենեանցը «Իսկրա» թերթի մէջ, հայերի ազատագրական շարժումները
բնութագրել է որպէս ժողովրդական-յեղափոխական շարժումներ, որոնք ուղղուած
էին միապետական կարգերի դէմ:

«... Միասնիկեանը գովերգել է Գամար-Քաթիպայի կոռուղ գրիչը, ըմ-
բոստ ոգին, յեղափոխական ստեղծագործութիւնները»:

«... Որոշ մարդիկ էլ դեռեւս չեն ազատագրուել գոհհիկ սոցիոլոգիզմի ազ-
դեցութիւնից եւ պնդում են, թէ հայերի «ազգային շարժումը չունեցաւ դրական
հետեւանքներ», պատճառ հանդիսացաւ Սուլթանական թուրքիայի հայերի «մաս-
սայական ջարդեր կազմակերպելուն»: Դժուար չի հասկանալ հարցի արմատապէս
սխալ գնահատականը եւ այն որ այդ դրոյթները գուրկ են հիւմբից»:(*)

Դարձեալ նոյն պատմարանը կը դրէ —

«Հայ ժողովրդի բազմաթիւ զաւակներ կազմակերպում էին ինքնապաշտպա-
նութեան շոկատներ, որոնք բաղխուում էին Օսմանեան իշխանութեան գինուած ու-
ժերի հետ, դառնում ժողովրդական վրէժառուներ, բարթիզաններ, հայդուկներ,
որոնց պայքարը մանր խմբերի առանձին ելոյթների աճում եւ հասնում էր Սուլ-
թանական կարգերի դէմ գինուած ընդհարման: Այդ գինուած ելոյթները ուղղուած
էին Օսմանեան միապետութեան ֆէոտալական ռէժիմի դէմ: Հայերի ազատագրա-
կան պայքարը համընկնում էր Պուլկարների, Մակեդոնացիների, Յոյների, Արար-
ների, Գրտերի եւ Սուլթանի կողմից ճնշուող այլ ժողովրդների պայքարին, հա-
մապատասխանում նաեւ թուրք աշխատաւորների շահերին: Հետեւաբար, դա ո՛չ
թէ «նացիոնալիստական», այլ իսկական ինքնիշխանաշխատական, ռեոլիցիոն-ազա-
տագրական շարժում էր:

«Այդ բնութագրութիւնը հաւասարապէս վերաբերում է Զէյթունի շարունակ
կրկնուող ապստամբութիւններին, Սասունում մղուած մարտերին, Առաքելոց վան-
քում Անդրանիկի շոկատների մղած կռիւններին, Պալքանեան պատերազմում հայ-

կական զորամասի գործողութիւններին, Վանի ինքնապաշտպանութեան եւ Մուսս-
Լերան հերոսական էպոպեաներին, Ատանայի եւ Մարաշի հերոսամարտերին եւ Սար-
տարապատի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերին»:

«Հայկական յառաջդիմաւոր մամուլը, հրատարակախօսները, գրողները, ար-
ուեստի գործիչները, դպրոցի եւ լուսաւորութեան աշխատողները, ժողովրդի մէջ
պատուաստում էին ազգային զարթօնք, երազում հայ ժողովուրդի կորցրած պի-
տականութեան վերականգնումը, նրա անկախութեան եւ ազգային վերածնունդը:
Նրանք հասկանում էին, որ այդ նուիրական իտէալներին կարելի է հասնել միայն
յեղափոխական պայքարի միջոցով, ուստի ժողովրդին մղում էին դէպի յեղափո-
խական ըմբոստութիւն, դէպի գինուած կռիւ: ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ԶԿԱՐ»:

«Հայկական ազատագրական շարժումը 19րդ դարի վերջերում եւ 20րդ դարի
սկզբում խորապէս ժողովրդական էր, հետեւաբար, ան խորթ էր շահագործող դա-
սակարգերին, որոնք համակերպուել էին, ցարիզմի եւ սուլթանիզմի կարգերի հետ
ու իրենց համար ստեղծել ապահով կեանք...»:

«Կոմ. Պարտիան Հայ ժողովրդի Ազատարարն է», (Հայաստան
Հրատիկ. 1964) Տորթ. Փրոֆ. Արամայիս Մնացականեանի սոյն
դրքէն առնուած են վերի վկայութիւնները:

«Խմբապետ Շաւարշը», պատմական դարաշրջանի լոյսի տակ,
իր յօդուածին մէջ զբաղատ Փրոֆ. Հրանդ Թամրազեան կը գրէ —

«... Այդ մասին քէ է խօսուել հէնց այն պատճառով, որ գոհհիկ-սոցիոլո-
գիան 20-30ական թուականներին երկար ժամանակ ճնշող ազդեցութիւն է գործել
մեր զրական-քննադատական մտքի եւ պատմագրութեան վրայ: Այդ տարիների հայ
պատմագրութեան մէջ մարքիզմի դրօշի տակ առանձին ուժով եւ եռանդով զար-
դացում էր մի խորապէս իտալիստական հայացք՝ հայ ժողովրդի պատմութեան
ամենա-ողբերգական շրջանի 20րդ դարի իրադարձութիւնների մասին: Այդ տեսա-
կէտը... պնդում էր որ հայ ժողովրդի պատմական ողբերգութիւնը արդիւնք էր
ազգային-նացիոնալիստական պարտիաների աւանտիւրիստական քաղաքականութեան,
անտես էր առնում կամ գրեթէ երկրորդ բլանն մղում արտաքին գործունեւրի նշա-
նակութիւնը փոքր ժողովրդների ճակատագրի մէջ: Այսպէս պատկերացնել բանը,
ամէն ինչ կապել բուն ժողովրդի ներքին մի շարք ուժերի հետ, մինչեւ անգամ
Նացիոնալիստական պարտիաների գործունէութեան հետ, նշանակում է քննադատ
չոյլ կամ օրէկտիւրիւն արդարացնել թուրք բռնակալութիւնը, որին զո՛հ էին դնում
հայերը, յոյները, պուլկարները, նշանակում է պնդել, թէ հայերն իրենք են իրենց
ծեծել կամ նրան ֆիզիքապէս բնաջնջել են ներքին թշնամական ուժերը: Հարց է
ծագում, իսկ եթէ մեր իրականութեան մէջ չլինէին ազգային շարժումները, չգոր-
ծէին նացիոնալիստական պարտիաները, կը փրկուէ՞ր արդեօք ժողովուրդը: Միթէ՞
մամօրինակ մտածողութիւնը պարզապէս չի ենթադրում ստրկական հպատակութիւն,
ապալինութիւն թրքական բռնակալութեան «մեծախոթութեամբ» եւ ուսական ցու-
րիզմի «ամսահամա հումանիզմին»:

«... Արդեօք ազգային շարժումները, մինչեւ անգամ նացիոնալիստական պար-
տիաների գործունէութիւնը հետեւանք էին ժողովրդի պատմական քաղաքական
թշուառութեան, թէ՞ նրանք էին պատճառը այդ թշուառութեան: Արդեօք այդ
պարտիաները երկմից իջան հայ իրականութեան բուն ժողովրդին թշուառութիւն
բերելու, թէ՞ ՆՐԱՆՑ ԾՆՈՒՆՎԻՆ էլ ՊԱՅՄԱՆԱՌՈՐՈՒԱԾ էՐ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՊԱՏ-
ՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

«... Եւ իսկապէս, թուրքիան դանդաղ ու ծրագրուած ուժեղացնում էր ճնշ-
ուումը իրեն եւթակայ միւս ազգերի նկատմամբ, աշխատում էր նրանց խեղդել տըն-
տեսապէս, քաղաքականապէս ու հոգեպէս, ոչ միայն արգելակել նրանց բնական
զարգացումը քաղաքակրթութեան ուղիներով, այլեւ ֆիզիքապէս բնաջնջել: ԱՅԳ-
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆԱ ՍԿՍԵՑ ԵՐԲ ԴԵՌ ԵՐԿՐՈՒՄ Ո՛Չ ՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԱՂ-

(*) Այս եւ յաջորդ բոլոր ընդգծումները մերն են — Հ. Գ. :

ԳԱՅԻՆ ՊԱՐՏԻԱ ԶԿԱՐ: Այդ դաժան ճնշումը չէր կարող հակառակ երևոյթը չծնել, չէր կարող առաջ չբերել հակաճնշում, քանի որ ժողովուրդը բանական, զգացող, ապրող ու շնչող մասսա է, որը ներքին, օրկանական ընդհանուր ձգտում ունի պահելու իր գոյութիւնը: Նրա պայքարը ազգային ճնշման դէմ խորապէս բնական էր. եւ դա ամենուր, մի շատ արդարացում երեւոյթ էր: Հայ պահպանողականները քարոզում էին հնազանդութիւն իշխող պետութեան նկատմամբ: Անշուշտ, նրանք էլ ձգտում էին մի լաւ բան անել իրենց ժողովրդի նկատմամբ: Բայց եթէ մինչև անկամ լուրը ազգային գործիչներն ու պարտիաները համաձայն լինէին նրանց հետ, այնուամենայնիւ, այդպիսի շարժումը չէր դադարի, քանի որ նա ունէր խորապէս ժողովրդական հիմք, տարերային բնոյթ, եւ ինչպէս յիշեցինք, օրինաչափ երեւոյթ էր, ստուգում ոչ միայն հայ ժողովրդի պատմական փորձով: Բացի այդ, ամեն դէպքում ստրկամտութեան հասնող այդ ֆազակականութիւնը հազիւ կարողանար փրկել մի ժողովուրդ, որն արդէն կաշտուրապէս ու տնտեսապէս յառաջդիմում էր պորթուական զարգացման ուղիներով, առաւել էւս, որ թուրք բռնակալութիւնը շատ լաւ զգայով ձեւաւորուող վտանգը, հետեւողականօրէն ծրագրել էր իրագործում էր բնաջնջման արիւնալի ֆազակականութիւնը»:

(Տես՝ «Գրական Ուղիներում», Երեւան, 1962, էջ 207-209):

«Եթէ Թուրքիայում յայտնաբերուած էր որեւէ թրքական հակա-կառավարական կազմակերպութիւն, ապա նրա անդամները ենթարկուած էին համապատասխան պատասխանատուութեան՝ գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն: Իսկ եթէ յայտնաբերուած էր հայկական հակա-կառավարական թէկուզ ամենատանջան կազմակերպութիւն՝ օրէնքից դուրս էին յայտարարուած տեղական բոլոր հայերը. եւ այդ հանգամանքը բուռն էր հայկական կոտորածներ յառաջացնելու համար», կր գրէ Փրոֆ. Ս. Մարկոսեան:

Իսկ Պոլսոյ Ռուս Դեսպան Նելիտով 1895ին կը տեղեկագրէր. —

«Չնայած տեղութիւնների եռանդուն պահանջներին, դեռ ո՛չ մի բարեկարգութիւն չէ մտածարկուած (Համբար կողմէ): Հայ բնակչութեան ունեցումները, նրա աշխատասիրութեան արդիւնքը առաջուամ պէս կողոպտում են հարեւան քրտերն ու չէրբէզները. սրանց կամայականութիւնից են կախում հայ գիւղացիների ե՛ւ հաւաքած բերքը, ե՛ւ ամասունները, ե՛ւ գոյքը, ե՛ւ հէնց կեանքը»:

Արեւմտեան Հայաստանի ազատագրական պայքարը տարուեցաւ ո՛չ միայնական ճակատով: Ներքին համերաշխութիւնը պակսեցաւ տեղ տեղ, բայց յեղափոխական ուժերու միջեւ վճռական վայրկեանին կարելի էր աւ միասնութիւն ստեղծել՝ յանուն մեր ժողովուրդի ընդհանրական մտահոգութիւններու իրականացման:

Եթէ 1890ի Գում-Գարուի, 1894ի Սասունի, 1895-6ի Պապը Ալիի, Սուէտիոյ, Շապին Գարահիսարի, Ջէյթուի, Տրապիզոնի, Փոքր Հայքի, Կեսարիոյ ընդգրկումներուն մէջ Հնչակեան Կուսակցութիւնը ստիպուեցաւ առանձինն մղել ազատագրական պայքարը Օսմանեան Բռնատիրութեան դէմ, ապա Վանի Ա. և Բ., Շապին Գարահիսարի Բ., Սասնոյ Բ. ազատամբռութեան (1904), Սուէտիոյ, Հաճընի, Ջէյթու-

նի, Սիւսի, Ատանայի, Սարտարապատի, Պարսուի կռիւներուն հայ քաղաքական լուրը հոսանքները միացեալ ճակատ կրցան կազմել եւ զիմադրել թշնամիին:

Այդ կռիւներուն յաղթանակ ապահովեցին Ջէյթուը (1895-6) եւ 1915ի Վանի եւ Սուէտիոյ (1915) կռիւները եւ Սարտարապատը (1918): Այդ բոլորը ճամբայ բացին յետագայ մեր հանրապետութեան իրականացման: Հանրապետութեան շրջանի կացութիւնը կամ անոր ժխտական արեւելումը զէպի խորհրդային կարգերը կամ անոր կախեալ ըլլալու հանգամանքը արեւմտեան (եւեզ դիւաւագիտութեան) ներկայացուցիչներէն՝ մեր նիւթէն դուրս է: Բայց ընդունինք որ, ամբողջ յանցանքը օրուան իշխանութեանց վերադրողները պէտք չէ՛ տնտեսն իրենց վերլուծումներուն մէջ Արեւմուտքի գիւանազէտներուն տխուր դերը, մեր «Վարժապետ» գիւանազէտներուն վրայ, խոստումներով մեզ շրջանողները, մոտալաթական, մենչեւիկեան, ինչո՞ւ չէ քեմալական անհանդուրժող իշխանութեանց մնայուն սպառնալիքները՝ մեր երկրի գոյութեան նկատմամբ:

Գաղնակցութեան մտաւորականութենէն մաս մը այսօր կ'ընդունի, որ սխալած է «կարմիր իշխանութիւնը» տապալելու իր ցնորքին մէջ: Բայց անոնք չեն ընդունիր, որ այդ «սխալիլը» շատ սուղի կրնայ նստած ըլլալ ազատագրական արիւնոտ պայքարով, հազար հազարներով կեանք ու արիւն տրամադրած ժողովուրդի մը ճակատադրին վրայ:

Բայց իրականութիւն է նոյն ատեն, որ ատանց Ռուսաստանի Հայաստան գոյութիւն չունի եւ չի կրնար ունենալ: Իրականութիւն է նոյն ատեն, որ եթէ չըլլար 1920-72 ռուսական օգնութիւնը մեզի՝ լուրը մարդերէ ներս, մենք այսօր պիտի չունենայինք 30 հազար քառքով հողամաս կամ ունենալու պարագային ալ, 1941ին ո՛չ ոք կրնար երաշխաւորել, որ ան «Այնչլուսի», բռնադրաման ենթարկուած չըլլար Գորշ Գայլին կողմէ:

Հայ ազատագրական պայքարի առաջնորդները ստիպուեցան երկու ճակատի վրայ կուռիլ:

ա) Ներքին քակաւի վրայ — լրտեսներու, մատնիչներու, ամիրաներու, բարձր դասակարգի ներկայացուցիչներուն դէմ, որոնք «խմաստուն»ի հովեր առած 90ական թուականներուն ո՛չ միայն արեան տուրք չէին ուզեր մուծել հասարակաց պայքարին, այլ կ'աշխատէին փոքրացնել պայքարի իմաստը, անխուսափելի թերութիւնները ծաղրանքի առարկայ դարձնել, «յեկալ» մամուլի միջոցաւ զգաստութեան թելադրանքներ կատարել, եւ համակերպելու, ենթարկուելու, քննելու ճանապարհը իմաստութեան ուղի սրպէս մատնանշել:

բ) Արտաքին քակաւի վրայ — Հայ ազատագրական պայքարի մտքի առաջնորդները կ'աշխատէին նախ ծանօթացնել մեր ժողովուր-

դը, անոր բարեկարգութեան կամ ինքնապարտութեան ձգտումը իրաւունքը, որպէսզի միջազգային հանրային կարծիքին առջեւ կարենան արդար դատ որպէս ներկայացնել մեր հողային հարցը: Ապա անոնք կը ձգտէին հնարաւոր եղած չափով օգտագործել Օսմանեան կայսրութեան մէջ ապրող այլ ժողովուրդներու գործակցութիւնը եւ ի հարկին նաեւ օտար պետութիւններու հակասութիւնները...

Այս մասին կարելի է ըսել, որ, քիչ աշխատանք կատարուած չէ: Անկլո-հայկական միութիւնը օրինակ, Լոնտոնի մէջ, մեծ դեր խաղացած է ի նպաստ Սասնոյ աղէտեալներուն: Ռուս մտաւորականներ նոյնպէս ի նպաստ մեզի դիրքորոշուած են: Ի վերջոյ Անգլիոյ, Փրանսայի, մանաւանդ Ռուսաստանի պարկեշտ մտաւորականութեան դիրքորոշումը մեր ազատագրական պայքարի ի նպաստ, ցոյց կուտայ, թէ որոշ գնահատելի աշխատանք կատարած են մեր նախորդ յեղափոխական սերունդի ներկայացուցիչները՝ արտասահմանի բազմաթիւ երկիրներէն ներս:

Սուլթանական թուրքիան կորանցուցած էր իր երբեմնի կայսրութեան հողամասերէն մեծ մասը, որովհետեւ պետութիւնը յատուկ ծրագիր չունէր երկիրը առաջ տանելու, տնտեսական գետնի վրայ կարևոր փոփոխութիւններ առաջադրելու մասին չէր իսկ խորհեր: Կթան կով դարձուցած ոչ-թուրք ժողովուրդները, որքան ալ պետութիւնը կը փորձէր պետական սնտուկը լեցնել, բայց եւ այնպէս, նոր պարտքերու տակ կը ձգէր երկիրը, հետևաբար նոր ճնշումներու ենթակայ կը դառնար: Անգլիական, յատկապէս Փրանսական կայսերապաշտները ապահոված էին շահագործման համար անհրաժեշտ հում նիւթի շուկայ մը երկրէն ներս, գերման նորագործ կայսերապաշտութեան թաթերը, կ'երկնային Պաղտատի երկաթուղիին ե՛ւ քարիւղին, ե՛ւ արարական երկիրներու հում նիւթի շահագործման ապահովման:

Երիտ. թուրքերը աւելի մօտ էին գերման քաղաքականութեան եւ անոր հետ մերձեցման, մինչ Սուլթան Համիտը եւ իր շրջապատը Անգլիան կը նկատէին իրենց դարաւոր բարեկամն ու պաշտպանը:

Երիտ. թուրքերը մօտեցում ցոյց տուին ոչ-թուրքերուն, հաւասարութիւն, եզրայրութիւն եւ ազատութիւն բառերը ո՛չ ոք իրենց չափ գործածեց. ո՛չ ոք այդ բառերը իրենց չափ խաչեց յետադային: Հայ քաղաքական մտքի ներկայացուցիչներէն Դաշնակցութիւնը եղաւ անոնցմէ՝ որոնք 1902էն սկսեալ շփումներ հաստատեց իթթիհատի հետ, յուսալով եւ հաւատալով, որ Սուլթանի յաջորդները անպայման աւելի լաւ քաղաքական պայմաններ պիտի ստեղծէին թուրքիայէն ներս: Այդ արեւելումին շարունակման՝ Ատանայի կոտորածը (1909) արդէլք մը չեղաւ: Աւելցաւ նոյնիսկ սերտացումը 1910-14ի շրջանին եւս, նոյն ցանկով երեսփոխանական ընտրութիւն խաղալով: «Դազանը զսպելու համար էր», կը պնդեն Դաշնակցական ղեկավար-

ները, երբ կը խօսին այդ շրջանի մասին եղած արդար քննադատութիւններ կատարողներուն դէմ... բայց ախոս, այդ մերձեցման «մեք օսմանցի եմք», «հողային հարց» կամ «թուրքիայէն բաժանման հարց չունինք», պրոպագանդները յուսախար եղան: (*)

Ընդունինք, որ իթթիհատը կրցաւ որոշ ազատ միջնորդ ստեղծել: Բանտարկուած յեղափոխականներ ազատ արձակուեցան, մամուլի ազատութիւնը 1909-1913, դրեթէ կատարեալ էր թուրքիոյ մէջ. հայ կուսակցութիւններուն գործունէութիւնը որոշ չափով ազատ դարձաւ: Մամուլի, բեմի, սրահի յաճախորդները շատցան: Բայց հոս ալ միամտութիւնը մերիներուն: Զկրցան հասկնալ որ ծափերու աղմուկին մէջ կը կարուէր դիմադրական կորովը այս ժողովուրդի գաւակներուն, որ կոռուզ մեր պիտուորներուն ու Ֆետայիներուն «գիւնվութիւնը» միասակար էր, որ օրը օրին ապրելու եւ գործելու իրականութիւնը՝ զոյնութիւնը ջլատեց մեր արթուն պահակներուն, ու քիչեր, շատ քիչեր էին անոնք, որոնք 1908-1914 անընդհատ եւ հետեւողական պայքար մղելու առաւելութիւնը փորձեցին ընդհանրացնել ո՛չ միայն մամուլով, բեմով եւ 1913ի Քէօսթէնճէի Դըլ համագումարով, այլեւ անձամբ շրջեցան պաւտները, համոզելու համար հայ ժողովուրդի գաւակները, որ պէտք է վերջ գրուէր իթթիհատի պիտիով արբենալու միամտութեան, ընդհակառակը, անհրաժեշտ էր դայն մերկացնել եւ անոր ջարդի սպառնալիքներուն դէմ պատրաստ դնուիլ: Այդ փորձը կատարեցին Փարմազ, Մուրատ, Սալահ Գիւլեան, Ալքալաշեան, Եսալէմ, Գ. Օղանեան, Սալը Ծետային, Արծրունին, Վանիկը եւ դեռ բազմաթիւ այն գործիչները՝ որոնք ափսո՛ս առանձինն էին եւ որոնց բրորականտը շտարածուեցաւ պէտք եղածին պէս: Խաղաղութեան ձգտող թուլամորթութիւնը կեցնել զժուար էր եւ երբ պատահեցաւ նախատեսուած եղեւնը, հայերը քիչ բացառութեամբ անպատրաստ գտնուեցան...:

Թուրքիոյ մէջ Համիտեան օրով եթէ աւատատիրութիւնը կը շահագործէր բոլոր հպատակները, անդին օտար դրամադուլտի հոսանքը, իր ափին մէջ տակաւ կը փորձէր կեդրոնացնել երկրին շուկաները: Արհեստները ոչ-թուրքերու ձեռքն էին: Իթթիհատի օրով մանր գործարաններ սկսած էին գործել, հայ առեւտրականներ որոշ չափով կը տիրէին քաղաքներէն ներս: Իտալո-թուրք պատերազմը, ապա Պալքանեան պատերազմը նեղ դրութեան մատնած էր թուրքիան, որ ստիպուած էր նոր դաշնակից մը որոնել, յանձին Գերմանիոյ:

(*) Մեր գրքին Բ. Մասին մէջ պիտի անդրադառնանք իթթիհատի եւ հայ կուս. յարաբերութեանց:

Ամէն կողմ պատերազմի, նոր պաղութներու տիրանալու ճգնաժամ պետութիւններ, սուրբ կը սրէին եւ առիթի կը սպասէին զիրար յօշոտելու համար: Երիտ. Թուրքերու Դահլիճին մէջ միայն Սաիտ Հալիմ Փաշան որպէս Վարչապետ՝ Անգլիոյ հետ բարեկամութիւն եւ ի հարկին զինակցութիւն հաստատելու կողմնակից էր, մինչ Գերմանիա ուսում առած եւ նուէրներով շրջած Պատերազմական Նախարար Էն-վերն ու իր անմիջական գործակից Թալասթը՝ Գերմանիոյ հետ ամէն զնով զինակցութիւն կնքելու կողմնակից էին: Հակառակ Վ. Պաշայի պահանջները նոր հողեր զիջելու զնով Թուրքիոյ ամբողջականութիւնը պահելու փորձերուն, Իթթիհատը կարենալ ժողովուրդը իր պատերազմական կառքին լծելու համար, անոնց աչքին առջեւ կը բանար Մեծն Թուրքիոյ ծրագրի իրականացման հեռանկարը: Ոչխարամիտ Թուրք զիւղացին, դեռ Սուլթան Սելէյմաններու եւ Փաթիհներու հին աշխարհակալութեան վերադարձի առաջարկութեանց առջեւ կը խանդավառուէր:

Իթիլաֆի զեկավարները աւելի շատ Դահլիճիցներու հետ գործակցութեան եւ որոշ բարեկարգութիւններ մտցնելու կողմնակից ըլլալով, գիրքորոշուած էին Իթթիհատի իշխանութեան դէմ: Հնչակեաններու եւ անոնց համաձայնազիրը (Սատրղ-Սապահ Գիւլեան) ժամանակաւոր բնօրէն անտարակոյս, բայց անմիջական կերպով Թուրք պղպայծամով չըջանակներուն դէմ ուղղուած միակ հնարաւոր համաձայնութիւնն էր: Հարկւարաւոր Իթիլաֆականներ՝ հայ յեղափոխականներուն նման կախազան բարձրացուեցան որպէս «Պետական շահերու դէմ դաւադրողներ»:

Իշխան Սապակտաինի կողմնակիցները զժբախտաբար չկրցան մխատարր եւ Թուրքիոյ բոլոր կողմերը զօրաւոր կազմակերպութիւն յառաջացնել:

«Հայաստանը առանց Հայերու» Լորանովեան լողունը եւ «Ո՛ր Օսմանցիները չէզոքացնելու» Իթթիհատի որոշումներուն միջեւ տարբերութիւնն այն էր, որ ցարական բանակին մէջ հաւատարմօրէն հայերը ծառայեցնելու հեռանկարով, Յարը 1914 Յունուար 26ին, Թուրքիոյ պարտադրեց Հայաստանի նոր բարեկարգութիւններու ծրագիրը մը՝ Հոֆի եւ Վեսթենեկի քննիչ որպէս՝ հայկական վեց նահանգներուն մէջ նշանակելու իրաւունքով: Հայ ժողովուրդը ստիպուած էր նախընտրել ուսական հրացանի կողքին եաթաղանի դէմ գիրքորոշուիլ: Ուրիշ ելք չկար:

Գրասենեակներու կամ բաղկաթոններու վրայ նստած, առանց մեր ժողովուրդի իրաւ գրութեան ծանօթ ըլլալու, հայ յեղափոխութիւնը մեղադրողներուն թիւը շատ է անշուշտ: Սակայն, փաստն այն է, որ մահացող Թուրքիոյ այդ շրջանի պետերը՝ աւելի շատ մտահոգուած էին հայերը եւ փոքրամասնութիւնները «կարգի բերելու»

հարցով, քան այլ շրջաններ Թուրքիային կորսնցնելու հարցով: Այդպէս ալ պատահեցաւ: Թուրքիան կորսնցուց մօտ 1,5 միլիոն քաղաքի մ. հողամաս եւ ատոյ ալ կրցաւ պահպանել մնացեալ իր հողամասերը: Գերմանիոյ պարտութիւնը իր ալ պարտութիւնը հանդիսացաւ, իսկ հայ ժողովուրդը քանի մը տարի ետք յաջողեցաւ զէթ մէկ մասին վրայ իր հողին՝ Հայրենիք մը ունենալ եւ կերտել:

Կամաւորական շարժումը որոշ դեր մը կրնար խաղալ, եթէ 1915ին ուստական բանակին անկախ իրենց գոյութիւնը պահէին եւ փոխանակ անոր հետ նահանջելու եւ յառաջանալու՝ թոյլ տրուէր որ անոնք Արեւմտահայաստանի մէջ որպէս բարթիղաններ գործէին ազատօրէն: Առանց արտաքին օժանդակութեան հնարաւոր չէր թրքական բանակի դէմ ճակատիլ... մանաւանդ որ հայ երիտասարդութեան մեծ մասը բանակի մէջ էր այլ «ամալ թապուրի»ի մէջ էր առ հասարակ: Անոնք զէնք չունէին եւ բանակէն ներս յատուկ աշխատանք կատարելու հնարաւորութիւնն զուրկ էին:

Ինչ կը վերաբերի հայ-յոյն-քիւրտ-արաբ-ասորի համագործակցութեամբ թրքական բանակի թիկունքը կազմալուծելու հնարաւորութեան, ապա այդ եւս կարելի էր, որովհետեւ նախ այդ ժողովուրդներու միջեւ զօրաւոր կապեր չկային եւ հիմնական առաջադրանք մը՝ միասնաբար իրադրծելու մշակուած ծրագիր չունէին:

Բ. Աշխարհամարտին՝ աւելի հնարաւոր էր բարթիղանական կոսիւր, որովհետեւ Հիթլերի դէմ ճակատող պետութիւններուն համար, զբաւեալ շրջաններու մէջ գտնուող յատուկ դուրսէն զրկուած կուուղներ, թեքնիսիէներ, զէնք մատակարարողներ, անթէն գործիքներով կապ պահողներ, թշնամի կեղրոնացումներու դէմ օդային յարձակումներ նախատեսողներ կը գտնուէին: Վտանգուած բարթիղանները ընդծովեաներով կամ օդանաւերով փոխցնելը, սովորական երեւոյթ էր: Այդպիսի աշխատանքներ կատարուեցան Տէօնքերքի, Նորվեկիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Եւեկոսյալիոյ, Լեհաստանի եւ Պ. Միութեան սահմաններէն ներս: Կը բաւէր որ այդպիսի կազմակերպութիւններ յառաջանային Ա. Աշխարհամարտին եւ հաւանաբար Օսմանեան կատալարութեան ջարդի քաղաքականութեան դէմ ընդվզումի ատակ բոլոր ժողովուրդները՝ աւելի լաւ եւ յարատեւ զինեալ պայքարի կրնային սկսիլ եւ շարունակել մահաւաճը:

Անգլիացիները՝ Գնդապետ Լորանով, Ֆէյսալ իշխանը կրցան Սուրիոյ ու Արարիոյ մէջ ստքի հանել, կրցան կամաւորներ հաւաքողի եւ զինել եւ նոյնիսկ 1918ին Արարայի ճակատը նետել... բայց ատկա բաւարար չէր: Արարական երկիրները՝ ուր թրքական զօրքերու անմիջական ներկայութիւնը մեծ թիւ էր կազմեր 1915ին, ճակատի կարենալու համար Թուրքերու դէմ պէտք եղած կազմակերպուած ուժը չունէին: Արդէն այս մասին հայրենի պատմաբան Կ. Ն. Քարամեանը, անդրադառնալով իր նախապէս կատարած հաւաքական ընդվզումի ծրագրին անկարելի ըլլալուն, կը գրէ յատուկ կերպով

պով. «Սակայն դրանում մեղաւոր էին յետամնաց, կիսավայրենի ֆիւրտ վերնախաւը ու իսլամի հաշիշով արբեցած, աւարածարաւ քուրֆ խուժանը: Հայերը համագործակցութեան փորձեր արեցին, սակայն յաջողութեան չհասան»:

Հիմա հարցը հետեւեալն է, Թուրքիոյ թէ կովկասի մէջ, մեր մղած ազատագրական պայքարը՝ որ աւատապետութեան հիմքերը սասանեցնելու կը ձգտէր, սոցիալիստական բնոյթ ունէ՞ր թէ՛ ոչ:

Ի վերջոյ Սասնոյ, Զէյթունի, Պապը Ալլիի եւ Գում Գարուի, Վանի, Շապին Գարահիսարի, ապա Իթթիհատի դէմ պայքարելու մեր ձգտումը լոկ ազգային դիմագիծ ունէր: Մենք կը պատասխանենք.

— Մեր ազատագրական պայքարը որքան ազգային դիմագիծ ունէր, սակայն նոյնքան կը ձգտէր հայ եւ այլ ժողովուրդներու Օսմանեան աւատապետութեան լուծէն ազատագրման եւ ընկերային արդար կարգերու հաստատման: Ի վերջոյ գաղութատիրական ճնշումէն ազատագրուելը՝ պիտի առաջնորդէր Հնչակեան Կուսակցութեան ընկերային ազատագրման ծրագրի իրականացման:

Ազգային ազատագրումը կղզիացած բնոյթ չունէր եւ չէր կրնար ունենալ: Փարամազի 1897ին տպուած ճառը Վանի դատավարութեան ընթացքին, ինչպէս եւ Անտոն Ռչտունիի Գաղատիոյ դատավարութեան ընթացքին արտասանած ճառը՝ լաւագոյն վկայութիւնն էր այդ մասին: 1903ին ցարական Հայ Եկեղեցական կալուածները բռնադրուելու ձգտող ծրագրի իրականացումին դէմ ընդվզած էին ո՛չ միայն Հայ յեղափոխութեան առաջնորդները, այլ նաեւ Ռուս Սոց. Դեմոկրատները, որոնք շատ լաւ համոզուած էին, թէ մեր ժողովուրդի տարրական իրաւունքներուն դէմ ցարիզմի ոտնձգութիւնները ի վերջոյ կը վնասէին ընդհանուր աշխատաւորական շարժումին եւս, որ հայ-թաթարական շարժումներուն հրահրումը պարզապէս բանուորական միասնական պայքարի զօրացման արդելք կը հանդիսանար եւ թէ 1905-7ի չըջանին, որքան ալ ազատագրական պայքարի մտքի ստաշնորդներէն ոմանց մօտ վերապահութիւն կը տիրէր, սակայն Թրքահայաստանի մեր ժողովուրդին օգնութիւն կազմակերպելու անհրաժեշտութիւնը կը շեշտուէր: Սահմանէն այն կողմ պայքարը չթուլցնելու դիժը կարեւոր կը նկատուէր, սակայն իրողութիւն է, (ինչ կը վերաբերի մեզի), որ մեր ընկերները հայ-թաթարական բաղխումներուն զօրացման դէմ էին, չէին ուզեր որ անմեղներ ջարդուին անդիտակից եւ Փանաթիզէ դարձած թաթարներուն կողմէ:

Նոյն ատեն Զանգեզուրի, Պաթումի թէ Պաքուի մէջ, մենք համագործակցութեան եւ եղբայրասպան կռիւներուն վերջ տրուելուն կողմնակից էինք:

*

**

Կը սխալին բոլոր այն նիւթիւստ կամ ազգայնամոլ պատմաբանները, որոնք ազատագրական մեր պայքարը կ'ուզեն անշքացնել, անոր հաղցնելով ցեղամուլական պատմուճան:

Մեր շարժումները եթէ 1878ին գեո կը ձգտէին բարեկարգութեանց, ապա 90ական թուականներուն՝ Հայաստանի ազատագրման, որմէ ետք ընկերային արդար կարգերու հաստատման: Երբեք այդ բոլորին մէջ Հայ Ազատագրական մտքի ստաշնորդները չէին ձգտեր Հայ ցեղի տիրապետութեան եւ այլ ցեղերու ոչնչացման: Տարբեր հարց, որ այդպիսի ծրագիր մը ո՛չ ոքի մտքէն կ'անցնէր եւ չկար հայ մը, որ Թրքական գերիշխանութեան հակադէպ հայկական գերիշխանութիւնը Թուրքիայէն ներս: Սուլթանիզմի եւ ցարիզմի տապալումին համար պայքարել, կը նշանակէր բռնակալութեան դէմ դիւրբորոշուել, իսկ ասոր անհրաժեշտութիւնը տեսած էին բոլոր մեծ ու փոքր երկիրներու ազատատենչ ժողովուրդները մեզի հետ կամ մեզմէ առաջ:

Պատմութեան տիպեկալիկ օրինաչափութեան սահմաններուն մէջ կը դանուէր եւ անխուսափելի էր բռնակալութեանց տապալումը՝ շահագործուող ժողովուրդներու ազատատենչ երիտասարդներուն մղելիք պայքարին իբր հետեւանք:

Ի վերջոյ բռնադրուեալ հողերը պաշտպանելու չափ «Մեծն Թուրքիա» երազողներուն ծրագիրը բեկանելը անհրաժեշտութիւն մըն էր: Այդ ծրագիրը հասկցնել, բացատրել Հայ քաղաքական մտքին պարտաւորութիւնն էր:

3000 տարիներէ սողին նոյն երկրի մէջ հաստատուած հայութիւնը՝ 500 տարիներէ ի վեր Օսմանի յաջորդողներուն ամբողջութեամբ զոհը դառնալու ստիպուած չէր: Ահա թէ ինչո՞ւ, ինքնապաշտպանութիւնը կենսական եւ անհրաժեշտ միջոցառում էր, մահուան դատապարտուած, ցեղասպանութեան մը զոհ դառնալու կոչուած ժողովուրդի մը քաղաքական մտքի ստաշնորդներուն համար:

1913ի Քէօսթէնճէի Դրդ Հնչակեան Համադումարի որոշումները՝ Իթթիհատի դէմ դրօշ պարզելու համար, Հայ քաղաքական մտքի ամենէն խելացի որոշումներէն մին կը հանդիսանայ: Դժուար էր «Թմրած» ժողովուրդի բոլոր զաւակները ոտքի հանել, սակայն անհաղանդ պէտք է հնչեցուէր Թրքահայաստանի բոլոր կողմերը: Մեմֆ հնչեցուցիմ տագնապի ազդանշանը եւ հպարտ եմֆ, որ 1913ին պաշտօնապէս հրապարակ իջանք, ամէն վտանգ աչք առինք, գլխաւոր ջարդի ծրագրին դէմ մեր ժողովուրդը անպաշտպան չձգելու համար:

Մենք յանցաւոր չէինք, եթէ մեծ պետութիւններէն Անգլիան կամ Ռուսաստանը իրենց սեփական հաշիւներէն տարուած չէզոքացուցին մեր Ազատագրական Շարժումին թափը: Դժուար չէր նահանջող ցարական բանակներէն անկախ զինուած կամաւորական հայ ջոկատներ պահել ու ցրուել Արեւմտահայաստանի զանազան լեռնային շրջանները եւ դեռ պէնք բռնող հայ ժողովուրդի պատկաներուն հետ շարունակել կազմակերպուած պայքարը: Բայց մենք զիտենք, թէ ցարական իշխանութիւնը 1916ին արդէն իսկ լուծարքի ենթարկեց հայ կամաւորներուն 7 գունդերը, որոնցմէ մաս մը կրկին վերադարձաւ հայ զապուժները, ոմանք ցարական բանակներուն մաս կազմեցին, ուրիշներ ալ Գոյի նման (Յրդ կամաւորական Հնչակեան գունդի հրամանատար) ռուսական Կարմիր Բանակին մէջ գործեցին, մեծապէս օգտակար հանդիսանալով Ռուսաստանի մէջ աճող Հոկտեմբերեան Յեղափոխութեան ուժերուն:

Նոյնքան մեղադրելի էին Անգլիան եւ Ֆրանսան: Անգլիոյ համար երբեք դժուար չէր Կիլիկիոյ, Սուէտիոյ, Սուրիոյ շրջաններուն մէջ արար եւ հայ գոմանտոսներ պահել, օժանդակել եւ մտանդի պահուն պանոնք ետ քաշել: Պէտք չէ մոռնանք, որ Անգլիան եւ Ֆրանսան ծովու վրայ անպարտելի ուժ էին այդ շրջանին եւ անոնց զրահաւորներուն դէմ որքան ալ պերման ընդծովեաները կը փորձէին հակադրուել, բայց եւ իրականութիւն է, որ չէին կրնար չէզոքացնել: Անգլո-Ֆրանսական նաւատորմին համար Կիլիկիոյ եւ Սուրիոյ ծովեզերքները ոմրակոծել անակնկալ կերպով, Կիպրոսէն կամ Եգիպտոսէն զբերուած ռազմանաւերով, երբեք դժուար չէր, եւ տակաւին, Մուսա Լեռ բարձրացած 5000 խիզախ հայորդիներուն առաջարկը՝ որպէսզի Դաշնակիցները զէնք տրամադրեն առնուազն, որպէսզի կոտին թուրք զօրքին դէմ, մերժուեցաւ: Մինչդեռ անհրաժեշտ ուժ տրամադրելու պարագային անոնց, զիւրին պիտի ըլլար տեղական արար հայրենասէրներու հետ միասեղ զօրաւոր ճակատ մը ստեղծել: Եւ դեռ Անտիոքէն մինչեւ Ալեքսանդրէթ՝ զէպի արեւմուտք յառաջացող ռուսական զօրքերուն հետ միացում մը իրականացնելով՝ կը փրկուէր առնուազն մէկ միլիոն հայութիւն, որ դատապարտուած էր անապատներու մէջ ոչնչացման եւ դեռ աւելին, այդ բանակներուն միացումով թուրքիոյ պատերազմէն դուրս գրուելուն պատճառ կրնային դառնալ Դաշնակիցները:

Ինչո՞ւ չեղաւ այդպէս, ինչո՞ւ չիրականացաւ այդ: Հոս արդէն Ռուսաստանի դէպի հարաւարեւմուտք յառաջխաղացքին դէմ դիրքորոշուած Անգլիան ու Ֆրանսան է որ պէտք է պատասխանատուութեան կանչել:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«Ապտակ», (1894 թիւ 2, Ապրիլ թիւին մէջ) Ա. Նազարբէկի եւ Պ. Մարիմեանի կողմէ լոյս տեսնող Հնչակեան երզլիճաթերթը կը վըրկայէ թուրք կառավարութեան տրամարանութեանց մասին:—

«Թուրքիայի թշնամիներն ասում են միշտ, թէ օրէնքի տեղ մեր երկրում կաշառակերութիւնն է տիրում: Այո՛, բայց որովհետեւ կաշառակերութիւնը դարձել է օրէնք թուրքիայում, ուրեմն տիրողը դարձեալ օրէնքն է»:

«Ներկայումս ամէն տէրութիւնների սկզբունքն է ազատութիւն: Այսպէս, օրէնքը տրամադրում է հարստին — ազատ եւ վայելելու, աղքատին — ազատ եւ... մեռնելու»:

«Թուրքը հային կոչում է «կեաւուր», «հայ ազգասէրը» թուրքին «մուստա»: Ինչո՞ւմն է տարբերութիւնը այդ երկու խօսքի մէջ՝ իբրեւ բարոյական տրամաբանութիւն»:

«Ազատութիւնը նպատակ չէ, այլ անհրաժեշտ միջոց է մարդոց բարեկեցութեան համար»:

«Ապտակ» թերթը Իթիթհատի օրկան «Մէշվէրէթի Ապտամբուութիւնը» խորազրոյց կրութեան մէջ (1896 Յունիս, թիւ 2, Գ. Տարի, Լոնտոն), կը գրէ:—

«Փարիզի «Մէշվէրէթ»(*) թուրքը թերթը երեմիականներ կը կարգայ կրեւելի ապտամբութեան եւ Մակեդոնիոյ խլրտումներու առթիւ: Այդ «ազատամիտ թերթն» հայերու, կրեւացիներու, մակեդոնացիներու եւ առ հասարակ, ուեէ դժգոհ տարբերու մէջ անկախութեան ձգտումը կը դատապարտէ՝ իբր Օսմանեան երկիրներու ամբողջութեան պահպանման զերազրոյն սկզբունքին դէմ մահացու մեղք մը: Ո՛րչափ էին թուրքերը վնասեն Քրիստոնեաներուն եւ երիտասարդ թուրքերն անշարժ եւ անզորժ կենան, դարձեալ պէտք չէ երբեք քրիստոնեայ ազգութիւնները թուրքիայէն անջատան, անկախութեան եւ կամ նոյնիսկ ինքնավարութեան զազախարն անցընեն իրենց մտքէն: Քրիստոնեաները պէտք է սպասեն որ «Երիտասարդ» թուրքերը շափահասութեան հասնին եւ սկսին գործել, այն ատեն տեսէք ինչե՞ր պիտի ըլլայ: Սահմանադրութիւն պիտի հաստատուի, «բարեկարգութեան եւ յառաջդիմութեան» դարազուլու պիտի բացուի ամենուն համար, դժգոհութեան ուեէ առիթ պիտի չմնայ... եւ այս ամէնը պիտի ըլլայ «խաղաղ» միջոցներով, առանց բուն միջոցներու, առանց ընդհարումի, առանց ցնցումի»:

«Մէշվէրէթ»ի տրամարանութիւնը հետեւեալ կերպով կը հասկնանք, «իին» թուրքերը քանի որ հին մարդիկ են, ծեր են, անուշտ անոնց օրհասը մօտ է եւ երթալով պիտի պակսին, մինչեւ որ մնան միայն «Երիտասարդ թուրքերը», որոնք, ինչպէս յայտնի է, «ազատամիտ» են, այդ երջանիկ օրը, արդէն ամէն բան ինքնին կարգի պիտի մտնայ, առանց մէկու մը քիթը արիւնելու: «Ամէն պարագայի մէջ պէտք է պահուի թուրքիոյ ամբողջութիւնը — ահա «Մէշվէրէթ»ի առաջին «վերջին» խօսքը: Իսկ եթէ թուրքիոյ կործանումը ճակատագրական է, կ'երևի «Մէշվէրէթ»ը դո՛ւ պիտի ըլլայ որ թուրքիա իբր ամբողջութեամբ կործանի»:

Ծ.— «Մէշվէրէթ» Փարիզի Իթիթհատի օրկանն էր: Անիւտ Ռիզա՛ խմբագիր:

«Մէշվէրէթ»ի կարծիքով Սալզպրի, Կլատսթոն, Կոլուխովսկի, Ֆրանս. դեսպան՝ Կամպոն, Հ. Շարմթան եւ ուրիշ շատեր չարաչար կը սխալին, երբ թուրքերուն կը վերագրեն կրօնական մոլեռանդութիւն եւ Քրիստոնեաները մասնաւոր կերպով պաշտպանութեան կարօտ կը նկատեն: «Մէշվէրէթ» կը պատմէ, թէ նոյնիսկ ներկայ կառավարութեան օրով, թուրքերոյ մէջ կատարեալ կրօնական ազատութիւն կը տիրէ մինչեւ անգամ Եւրոպայէն եւ Ամերիկայէն ալ աւելի... պէտք է կ'ըսէ թուրքերն ալ վայելեն ճիշդ միեւնոյն չափով պաշտպանութիւն քրիստոնեայ պետութիւններէն: Թերթը կ'անտեսէ որ այդ պաշտպանութիւնը, չնայելով որ մինչեւ հիմա լոկ անուանական եղած է, զոհը յարձակողին ղէմ պաշտպանելու սահմանէն անդին չէ անցած:

«... Մենք կը կարծենք որ կը գրէ. «Ապտակ», «Մէշվէրէթ» աւելի լաւ կ'ընէ, եթէ փոխանակ Սալզպրիներու, Կլատսթոններու, Քամպոններու կրօնական ազատամտութեան դասեր տալու, նոյն դասերը տալ առաջնապէս իր իսլամ կրօնակիցներուն»:

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՆԱՀԱՏՈՒԻՆ ՄԱՐԴԻԿԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

- Ունիս հանճար — զեզմէ կը վախնան,
- Ունիս ազատութիւն — կ'ըսեն զեզ պարզամիտ,
- Ունիս ընկերական ոգի — զեզ կը դաւաճանեն,
- Ունիս անկեղծութիւն — զեզ կը զրպարտեն,
- Ունիս եռանդ — այն կը մարեն,
- Ունիս կամք — կ'ըսեն բռնաւոր,
- Ունիս խելք — տխմարներն են դատաւոր,
- Ունիս հասարակական դիրք — զեզ կը գլորեն,
- Ունիս աշխատութիւն — այն կը քանդեն,
- Ունիս խօսք — այն կ'աղաւաղեն,
- Ունիս զաղափար — զեզ կ'այլապնեն,
- Ամէն առաքինութիւն կը հալածուի:

(«Ապտակ», Օգոստոս, 1896, թիւ 4 Գ. Տարի, Լոնտոն):

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Հայոց Թագաւորներին ու մինիստրներին,
— Ե՞րբ էք ի վերջոյ մտածում վերջ տալ Սուլթանի ու թուրքիայի գոյութեան.

— Երբ նա կը լրացնէ իր պատմական դերը, խողխողելով ու բնաջինջ անելով փոքր ազգերին — Կրեոտէ, Հայաստան, Մակեդոնիա, Յունաստան եւ աւելին իսկ՝ Բալկանեան Թերակղզիի վրայ...:

«Քաղաքականութիւն ժի. Դարու Վերջին Օրերի»: («Ապտակ», 1897, Փետր. Լոնտոն):

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

«... Մէշվէրէթ» թերթում (Իթթիհատի օրկան) յայտարարում է որ ժէօն Թիւրք «Կոմիտէներն» ուզում են եղել Ընդհ. Ժողով գումարել... բայց ժողովի հէնց կայանալիք օրերը նրանց պարագլուխները ստանում են իրանց Սուլթանից մի «Մըրաբ», որի մէջ սա նրանց «հրաւիրում» է ժողով չանել, նախատեսելով որ, թուրքիան, իրանց հայրենիքը գտնուում է վտանգի մէջ «Մահմետականն այդպիսի մի ծանր ժամին չպիտի վատ գտնուէ դէպի իր հայրենիքը: Ժէօն Թիւրքի պարագլուխներն այնքան տրամաբանական ու հայրենաշունչ են գտնում իրենց տէր Սուլթանի այդ կոչն ու յանդիմանութիւնը, որ անմիջապէս որոշում են ... ժողովն այլևս չգումարել ... խօսք չկայ, որ Սուլթանն Ամենագոր է այսօր եւ եթէ այդպէս գնայ, շատ բան խոստացող է, ինչպէս եւ ժէօն Թիւրքը—ի պարագլուխներն էլ խոստանում են այդ ուղիով շատ հեռու ու բարձր գնալ... մինչեւ Սուլթանի զոզը... եթէ արդէն չեն հասել...»:

(«Ապտակ», 1897, Յունիս-Յուլիս, Դ. Տարի):

Ակնարկելով 6 Մեծերու նենդութեանց «Ապտակ», (Գ. Տարի, Ապրիլ, 1897) կը գրէ.—

«Եւ ինչպէս չմաղթել, որ օր առաջ, հասնէ այն ժամը, երբ կատաղած ժողովուրդները — զայրացած, որ մի խումբ մարդիկ, Թագաւոր ու կառավարիչ, իրենց զմահաճոյքին ու շահին խաղալիք են դարձրել ամբողջ մարդկութեանն ու Արդարութեան դատը, զինուած յեղափոխութեան ցախաւելով վերջապէս կը մաքրեն աշխարհից այդ ամբողջ դարձահոտ աղբը»:

Թուրք եւ քիւրտ կրօնամոլ եւ ցեղամոլ տարրերուն ցուցաբերած հակառակութիւնը տխուր դեր խաղցան եւ յեղափոխութեան առաքեալներուն գործը կրկնակի դժուարութեան մատնուեցաւ:

Հայ յեղափոխութեան յանցանքը չէ՛ր, եթէ զօրակոչուած հայ երիտասարդութիւնը, Եղեռնի նախօրեակին փորձ չկատարեց փախչելու լեռները եւ հոն ինքնապաշտպանութեան նուիրելու ինքզինքը: Ընդհանրապէս հայութիւնը կը խորհէր, որ իր պարտականութիւնը պէտք է կատարէր Օսմանեան կառավարութեան բանակին մէջ, որպէսզի առիթ չտրուէր թուրքերուն կոտորելու մեր ժողովուրդը:

Կ. Ն. Քարամեանը իր «Հայ ժողովուրդի ազատագրական պայքարի օրինակալութեան հարցի շուրջ» գրքոյկին մէջ, խօսելով Արեւմտահայութեան զօրակոչի մասին, կը հարցնէ, թէ հնարաւոր չէ՞ր արդեօք, որ անոնք զինուոր չերթային եւ զօրակոչուած երիտասարդութիւնը ըմբոստութեան կամ դասալքութեան հրաւիրուէր: Ան հարց կուտայ, թէ ինչո՞ւ բարթիզանական շարժումներ չստեղծուեցան, ինչ որ բազմաթիւ ռազմաճակատներուն վրայ կռուող թուրք բանակին կրնար ուժգին հարուած հասցնել...:

«Եթէ, կը զրէ ան, իրարմէ այնքան հեռու զտնտոյ շրջաններու մէջ առանց նախապէս պատրաստութիւն տեսնելու, միայն տարեբային բանկումով կարելի էր ամիսներով զիմադրել, ինչպէս Վանի, Եղեւիայի, Մուսա Լեւան, Շապին Գարա-հիսարի եւ այլ վայրերու մէջ, ինչո՞ւ չունենայինք հարիւրաւոր այդպիսի մարտկոց-ներ, ինչո՞ւ Արեւմտահայաստանը չդառնար միաձուլ այդպիսի մարտկոց մը: «Եթէ այդ մարտկոցները գործէին միանգամից, ինչպէս քարդերը եղան, օգնէին իրար փոխադարձաբար, ամբասային հայրենի լեռների բաւիղներում, մղէին բարբիզա-նական մարտեր, ջլատէին թուրքական բաժակի թիկունքը ռուսական, իրաքի եւ սուրիական ռազմականացներում, կը փրկէին արեւմտահայութիւնը»:

Ինչպէս շեշտած ենք այլ առիթներով, զժրախտաբար Սահմա-նագրութեան շրջանը աղէտալի եղաւ մեր ժողովուրդին համար: Եր-կու թեւեր յատակ կերպով գերքորոշուած էին Իթթիհատի զէմ:

Պսլոսյ մէջ Իթթիհատի զէմ գործող գլխաւոր թուրք կուսակ-ցութիւնը Իթթիհատին էր: Ազատական այդ կուսակցութեան հետ գոր-ծակցելը ճիշդ եւ հնարաւորն էր այդ պայմաններուն մէջ: Իթթիհատը ինքն ալ փորձեց Իթթիհատի պարագլուխները չեզոքացնել եղեռնի նախօրեակին եւ արդար ըլլալու համար ըսենք, որ 30է աւելի Իթթիա-Փականներ 1913ին կախուեցան:

Գ Լ Ո Ւ Ւ Դ .

ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

Ա. — ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Շատերու նման Մկր. Փորթուզալեանը եւս կը զրադեցնէր ազգին ճակատա-զիրը: «Արմենիա»ի հրատարակութիւնը ապահովելու համար Մ. Փորթուզալեանը 1888ի վերջերը կը ստեղծէ «Հայոց Հայրենասէրներու Միութիւն»ը: Թերթի շուրջ համախմբուած մտաւորականները ինքզինքնին կը համարէին Արմենականներ: «Ար-մենիա»ն ի հարկէ, կուսակցութիւն չստեղծեց եւ նա նման առաջադրանք խնդրի ալ չունէր: «Արմենիա» անունով յեղափոխական կուսակցութիւն մ'ալ երբեք չենք կազմակերպած», — 1906 թ. Օգոստոսին «Արմենիա»ի 21րդ տարեկարձին — իրաւամբ զրել է Մ. Փորթուզալեանը: Արմենականութիւնը պուրժուական հոսանք էր, որն իր բրորականտով, ազատագրական պայքարի կրակը բորբոքում էր հայրի սրտում, ձգտում «հայ ժողովրդի համար իրաւունք ձեռք բերել, ինքզինքն ազատօրէն կառա-վարելու, որով միայն կարող կը լինի իրրեւ մարդ ապրելու միջոցներ գտնել եւ զանոնք գործադրել ժամանակի պահանջներուն համեմատ»:

(Արտակ Դարբինեան «Հայ Ազատագրական Շարժման Օրերէն», էջ 125-126):

Արմենականները Վանի 1896ի ինքնապաշտպանութեան կռիւ-նէրէն ետք բուլղարներու տկարացան ըստ Ռամկալար Ա. Դարբինեանի եւ զրեթէ հետացան քաղաքական ասպարէզէն: Անոնք առանձին նոր փոքր խմբաւորումներու հետ ձուլուեցան:

1907ին կը կոչուէին «Գաղափարական Միութիւն», 1908ին «Սահմանադիր Ռամկալարներ», իսկ աւելի ուշ (1921) միացան՝ գա-նազան խմբաւորումներու հետ՝ յատկապէս Վերակազմեալ Հնչակ-եաններու հետ եւ կազմուեցաւ Ռամկալար Ազատական Կուսակցու-թիւնը:

Ա. Միասնիկեանի բնորոշումով Ռամկալարը «Գաղութահայ պուրժուակալի. ասել է թէ Տաճկահայ, աւելի ճիշդ արեւմտաբնակ հայ մեծատունի մերկայացու-ցիչն է»: (Ալ. Մարտունի (Միասնիկեան) «Կուսակցութիւնները Գաղութահայու-թեան Մէջ», էջ 14-15):

Անդրադատնալով ԼԿՈյի «Անցեալից» և «Թուրքահայ Յեղա-փոխութեան Գաղափարաբանութիւնը» աշխատութիւններուն մէջ միա-կողմանի կատարուած վերլուծումներուն՝ Փրոֆ. Ս. Բարսեղեանը իր «Մարքսիզմի Տարածումը Հայաստանում» հատորին էջ 164ին մէջ կը գրէ, թէ՛ «Լէոն միակողմանի է լուսարանել Արմենականների գոր-ծունէութիւնը, ժխտելով նրանում եղած առաջադիմականը, անվե-րապահ յայտարարելով նացիոնալիստական»:

Հնչակեան Կուսակա՛ն 7 հիմնադիրներէն Գեորգ Ղարաճեանը որ լքեց Կեղրոնը եւ Մէնչեիկ դարձաւ, կը գրէ. «Հնչակ»ը ստեղծելու օրերին, զոյւթիւն ունէր խզճուկ նայրնալիտատական «Արմենական» մի կուսակցութիւն, որի հիմնադիրն էր Մկրտիչ Փորթուզալեանը: Դա յեղափոխական կուսակցութիւն չէր, այլ մարդկանց մի խայտաբղէտ խմբակցութիւն, որը տիրացուական «ազատասիրութեան» եւ սուրբուստեւարական ազդայնամուտութեան սահմաններից դուրս այլեւս ոչինչ չէր ճանաչում»:

(Գ. Ղարաճեան «Յեղափոխականի Յիշատակարանը», Մարքս -- Լենինիզմի արխիւ, Փ. 51, գ. 90, թիւ 37):

«Արմենականների գործունէութիւնը գունազարդուած եւ սիրեկտիւ զերքերէ գրուած են՝ Արտակ Դարբինեանի «Հայ Ազատագրական Շարժման Օրերէն», Սարգիս Իզմիրլեանի «Դատումներ Մեր Հարիւրամեայ Յեղափոխութեան Մասին», Արմենակ Եկարեանի «Յուշեր Արմենակ Եկարեանի», Կարօ Սարաֆեանի «Ակնարկ Մը Արմենական Կուսակցութեան Պատմութեան Վրայ», եւ սիրւեցում լոյս տեսած մի քանի այլ գրքերն ու յօդուածները»:

(Տես՝ Խիկար Բարսեղեան «Մարքսիզմի Տարածումը Հայաստանում», 1967, Երևան, էջ 165):

Արմենականներուն մէկ մասը, եթէ Եւրոպայի միջամտութեան ապաւինելով կ'ուզէր լուծել Հայկական Հարցը, միւս մասը համաժողովրդական ազատամբութեան վրայ դրած էր յոյսը: Արմենականներու մէջ 1887ին արդէն անջատում տեղի կ'ունենայ: Եւրոպայի վերայ յոյս դնողները, այսինքն միջազգային դիւանադիտութեան հետ Հայոց Հարցը կապողները կ'ապաւինին Կլատտիստներին, Կ. Յակոբեանի նախաձեռնութեամբ: Լոնտոնի մէջ կը հիմնեն «Անգլո-Հայկական Ընկերութիւնը», որ 1887ի Հոկտեմբերին հայերէն եւ Ֆրանսերէն լեզուներով կը հրատարակէ «Արմենի» թերթը: Խմբակիրներն էին Ժան Պրուսարի, Միհրան Սվազլեան եւ Ջէյմս Մաքքըրմ: Անոնք Հայկական Հարցը ծանօթացնելու, Անգլիական Կապոյտ Գիրքի նիւթերը թարգմանելու եւ տարածելու մէջ օգտակար եղան:

«Արմենիա» եւ «Հայաստան» Արմենական երկու թեւերուն գաղափարական առանցքը, ըստ կոթեան, մէկ էր՝ Արեւմտահայերի սոցալիստ-ազատագրական պայքարի կազմակերպումը, իսկ գործողութեան տակտիկան՝ տարբեր:

Արմենականութիւնը, թէեւ կուսակցութիւն չդարձաւ, բայց անոնցմէ անջատուածները, մասնաւորապէս Եւրոպայի քաղաքներուն մէջ սորվող հայ երիտասարդներու մէկ մասը, յետազգային նորաստեղծ ազգային կուսակցութիւններու մէջ մտան:

Բայց պէտք է արդար ըլլանք խոստովանելու համար, որ Արմենական կազմակերպութիւնը, որքան ալ գաղափարական յատակ զիրբորոշում չունէր, եւ որքան ալ «սուրբուստեական» որակուի, իր համեստ գերը ունեցաւ: Վանի 1896ի Ա. հերոսամարտին Հնչակեան եւ

Դաշնակցական կուսակցութիւններուն հետ, նոյնպէս՝ Վանի 1915ի Ապրիլեան հերոսամարտին: Բայց ընդունինք նաեւ՝ որ Վանի սահմաններէն դուրս մեծ շարժում մը չկրցաւ յատկացնել եւ գանդուածային կազմակերպութիւն մը չդարձաւ մինչեւ ետքն այլ: Սխալ է նոյնպէս այսօր, Ռամկավար Կուսակցութեան կնքահայր որակել 1885ին հիմնադրուած Արմենական կազմակերպութիւնը, ինչ ինչ մտահոգութենէ տարուած:

Բ. — ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍ. ՄԱՍԻՆ

1890-1900ի հայ ազատագրական շարժումներուն գլխաւոր ուժը հանդիսացաւ Հնչակեան Կուս.ը՝ որուն ուսերուն ծանրացաւ Էրզրումի, Դուռ Դափուի, Պապը Ալիի, Սանոյ, Ջէյթիւնի, Փոքր Հայքի, Պոնտոսի, Սուէտիոյ, Կիլիկիոյ մէջ յատկապէս մղուած հերոսական գործունէութիւնը՝ Սուլթան Համիտի բռնակալ ոչեթիմին դէմ:

Պիտի չճանրանանք Հնչակեան Կուս. կազմաւորման, ծրարքին եւ կազմակերպչական աշխատանքներուն մասին: Կարելի է կարդայ «Պատմութիւն Ս. Դ. Հնչ. Կուս.» երկու հատորները, թէեւ այդ գրքին մէջ կան պակասներ՝ յատկապէս Կովկասեան շրջանի մէկ պատմութեան մասին: Հոս պիտի տանք կարգ մը մանրամասնութիւններ՝ որոնք կապ ունին ազատագրական պայքարի եւ գայն առաջնորդողներու ընդհանուր մտահոգութեանց հետ՝ Սուլթանի եւ Իթթիհատի օրով:

Հնչակեան Կուսակցութեան 1887ի հիմնադիրներէն Աւետիս Նազարբէկեանը ուսանող եղած էր 1883ին՝ Ս. Փեթսպուրկի համալսարանը եւ մօտէն ծանօթ էր հոն խմորուող ընկերային շարժումներուն: Արտասահմանի մէջ ան կապեր հաստատած էր Նարտոնիկներու եւ Պեխանովի հետեւորդներուն հետ: Ան սերտ շփումներ ունէր սուս յեղափոխական վտարանդիներէն՝ Պ. Լաւրովի, Լ. Ռէյչի, Պ. Ակսելրոտի հետ:

Մարօ Նազարբէկեանը Ս. Փեթսպուրկի Բեստոթեւեան կանանց բարձրագոյն գասընթացքներուն կը հետեւէր եւ կապ ունէր յեղափոխականներու հետ:

Գեորգ Ղարաճեանը, Անդրկովկասի հայ անդրանիկ Նարտոնիկական խմբակի կազմակերպիչներէն էր:

«Հնչակ»ի Ա. թիւը (1887, Նոյ. 1), Ա. Նազարբէկի գրչին տակ կը գրէր «Հրատարակութեան Մասին» խմբագրականին մէջ. «Նյք, որ տեսնում ենք ծանրացած բուրբի անարգ շղթաներով, աշխարհիս մէկ անկիւնում՝ մեծակ ու որբացած հայ ժողովրդի մասան, բնդհանրութիւնը դարերի ընթացում ողբում, ցնշում, հարստահարում, հալածում, մի բուն ցանկութիւն, մէկ անկեղծ միտք ծագում է մեր մէջ այդ ժամանակ, առաջացնել հայ ժողովրդի փրկութեան խնդիրը եւ պատերազմի այդ խնդրի համար»:

Հնչակեան Կուս.ը եղած է ազգային եւ երբեք ազգայնական, ուզած է հայ ժողովուրդը ազատաւերել՝ առանց ճնշումի ենթարկելու այլ ժողովուրդները եւ անոնց ալ ընկերային արդար իրաւունքներուն համար պայքարած է: Մեր սոյն գրքին մէջ կը կարդանք, Հնչակեան բաղձաթիւ կախաղան բարձրացած հերոսներուն վերջին կանչը՝ ազգային եւ ընկերային անարդարութեանց դէմ, բողոքի ճիշդ եւ բռնակալ աւատատիրութեանց եւ ազգայնամուլ Բանթարքիստ իթթիհատի դէմ պայքարի կոչերը: Հնչակեան Մարքսիստական գիծը 86 տարուան շարունակուող գիծն է, ո՛չ խառնաշփոթութիւն, ո՛չ ալ «քողարկուելու» պատճառներ ունի, ո՛չ ալ «յեղյեղուկ» Ֆրազներով ան կը յայտնէր իր հաւատարմութիւնը սոցիալիզմին, ինչպէս կը կարծեն ձախլիկները կամ աջ գրողները:

Տոկմաթիկ մտեցում ունենալ, շինարար սգիէ զուրկ, առնել 8 տարուան մէջ սոցիալիզմի միակ ջահակիրը հանդիսացող Կուս. մը դեկավարին հաղարատը գրութիւններէն քանի մը տող եւ անոնցմով դատել, թէ՛ դեկավարը եւ թէ՛ Կուս. մը, ասիկա հակա-պատմական մեթոտ մըն է անտարակոյս...:

Մէկ էջ ստաջ գրել, թէ Վերակազմեալները կը պահանջէին «ծրաղրից հանել «սոցիալիզմ» արտայայտութիւնը, «Հնչակ»ը կոչել «հայկական ազգայնական կուսակցութիւն», պատճառաբանելով, որ նախ՝ Եւրոպական կառավարութիւնները թշնամարար են վերաբերում Սոցիալիստական կուսակցութիւններին եւ երկրորդ՝ Հնչակեան Կուս.ը իր բախտը կապելով սոցիալիզմին եւ գործելով այդ ուղղութեամբ, դրանով իսկ լիովին վերացնում է «Հայկական Հարցը»:

Երկրորդ էջին մէջ գրել, թէ... Հնչ. Կուս.ը սոցիալիզմի նրկատմամբ իր հաւատարմութիւնը հաւաստում էր սոսկ յեղյեղուկ փրագներով, ընդհանուր ոչինչ ունէր գիտական սոցիալիզմի հետ... ասիկա միայն իր կար Բարսեղեաններու ուղեղէն կրնայ ծնիլ. որպէս վիժած թէպէ: (Տես՝ Խ. Բարսեղեան, «Մարքսիզմի Տարածումը Հայաստանում» գիրքը):

Հարց կուտանք — 1890-1905ի միջեւ, բացի քանի մը մասի վրայ համբուող հայ Ռուս Սոց. Դեմ.ներէն որո՞նք էին Պաքուի, Պաթումի, Երեւանի, Ալեքսպոլի, Կարսի եւ Զանգեզուրի մէջ Մարքսիզմը տարածողները... Մարքսի եւ Էնկէլսի Կոմ. Մանիֆեստը եւ տասնեակ ծանօթ սոցիալիստներուն երկերը թարգմանողները, եթէ ոչ Հնչակեանները...:

Հնչակեան Կուսակցութիւնը վարկաբեկելու իր ճիղին մէջ, Խ. Բարսեղեանը 1901-1902ի Վերակազմեալներու հետ վերստին միաւորման շրջանին յոյս տեսած քանի մը «Հնչակ»ներ ձեռք ձգելով, անոնցմէ «ազգայնական» տողեր կը մէջընթաց, լաւ գիտնալով, որ Վերակազմեալներուն տեսակէտը ի՞նչ էր եւ չգիտնալով անշուշտ՝ որ 1902ին Որսորդն, Համբը ու Սաղունին սպաննուեցան այդ նոյն Վերակազմեալ ազգայնամուլներու կողմէ «ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԳԻՆՔ ԿԱ-

ՐԵՆԱԼ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ»։ Եւ ի՞նչպէս կը պատահէր, որ Ս. Շահումեանը իր «Երեւանից» յօդուածին մէջ, 1904ին կը նշէ, թէ «Հնչակ»ի մի քանի կազմակերպութիւններ համակրանք են տաժում դէպի մեզ Սոցեալ Դեմոկրատներին եւ տեղ տեղ, ուր նրանք չեն վախճում բնակչութեան մէջ դրանով իրենց վարկը կորցնելուց, տարածում են մեր գրականութիւնը: (Մեր թերթերն ու պրոչիւրները):

«... 1905ին «Ապաղայ»ն որ Ա. Նազարբէկի խմբադրութեամբ հրատարակում էր Փարիզում հաստատեցնում էր որ «Ինքն ամէն կերպ ձգտելու է հայկական Սոցիալ-Դեմոկրատական բոլոր ուժերը համախմբելու Ռուս Ս. Դ. Բանուորների միասնական կուս. դրոշի ներքոյ»: «Ապաղայ»ի երեւան գալը Ստ. Շահումեանը համարում էր «ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺԱՆ ՄԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿ ԵՒ ՆՈՐ ՆՈՒԱՆՈՒՄ ԿՈՎԿԱՍՈՒՄ»։ (Տես՝ «Ստ. Շահումեան, Նամակներ», էջ 24, Խ. Բ. ի գիրքը, էջ 175):

Այստեղ հարց կը ծագի. — Եթէ 1905ի «Վերածնութիւն» եւ «Ապաղայ» Հնչակեան թերթերը եւ անոնց խմբադիր Ա. Նազարբէկի ղաւանած տեսակէտները Ս. Շահումեանի կողմէ կը համարուի «Բանուորական շարժման մի նոր յաղթանակ եւ նոր նուաճում», ապա նոյն Նազարբէկի կողմէ առաջին անգամ թարգմանուած Կոմունիստական Մանիֆեստը (1894) եւ անկէ առաջ 1887ի Նոյ. 1ին լոյս տեսած «Հնչակ»ի Ա. թիւը, ինչո՞ւ պէտք է նկատուի «բանուորական շարժման մի նոր յաղթանակ եւ նուաճում»: Չէ՞ որ Խ. Բարսեղեանի գրքին նոյն էջին մէջ կը կարդանք. —

«Անդր-կովկասում ուսական Ա. յեղափոխութեան տարիներին Հնչակեանների մի մասը (ինչո՞ւ մի մասը — Հ. Գ.) մասնակցում էր բանուորական ցոյցերին եւ աստիճանաբար ազատագրելով նացիոնալիստական պատրանքներից (որ պատրանքներից — Հ. Գ.) անցնում Ս. Դ. Բ. կազմակերպութիւնների կողմը»:

Ռ. Ս. Դ. Բ. Կնունեանցը կը գրէ 1903ին, թէ՛

«Հնչակեան եւ Դաշնակցական Կուս. Կովկասի մէջ իրենց կը քաշեն մտաւորական մարտական ուժերը, կը հաւաքադրեն բանուոր եւ գիւղացի երիտասարդութիւնը, յեղափոխական խմբեր (հայդուկային) կազմակերպելու համար: Հէկնց այստեղ էլ հայթայթում էին զլիսուր միջոցներ, բանուորների, մտաւորականների եւ սովորողների շրջանում, նրանք ունէին խմբակներ, կազմակերպուած կերպով մշուում էր բրորականտան: Հայ լաւագոյն ամբողջ լեկալ գրականութիւնը գովելու էր Թուրքահայերի քաղաքական ազատագրական գաղափարը: Ռուսաստանի սահմաններում պայքարի գաղափարը ջանասիրութեամբ լուծեան էր տրուում, քանի որ վախճում էին զբանուոր ուժերը շեղել զլիսուր պայքարից»:

1898ին Թիֆլիսի մէջ կը կազմակերպուի Հայ Բանուորներու առաջին Ս. Դ. Մարքսիստական խմբակը, որուն ստեղծողները... Հնչակեաններ են: Ինչպէս Մելիք Մելիքեան (Դեմոկրատ), Ասատուր Կախոյեան (Բանուոր Խեչո), Հայկ Փիլոսոֆեան, Ալեքսանդր Վարդանեան, Գարեգին Կոզիկեան (Շահալէմ): Այս վերջինը 1915ի Եղեռնի զոհ, Պոլսոյ Հնչ. Վարիչ Մարմնի անդամ), եւ Գէորդ Ղարաճեան եւ կը հրատարակեն «Բանուոր» թերթը...:

Չարմանալի չէ՞, որ «յեղեղուկ», «մշուշոտ» գազափարաբանութեան շարքային ղեկավարներէն մէկ մասը՝ յանկարծ կը սրբանայ, կը գառնայ սոցիալիզմի հետեւորդ, մարքսիզմի՝ դրօշակակիր, երբ Կովկասի մէջ հիմը կը զնէ՝ Բանուարական Ա. Կուսակցութեան:

Առանց մեկնարանութեան:

Բայց մենք պիտի խօսինք փաստերով և փաստերով միայն: Լսենք Մարքսիստ տեսարաններու վկայութիւնները մեր մասին.—

«Թուրքիան միշտ եղել է եւ պիտի լինի կռուածադիկ», կ'ըսէ, Բու Լաֆարկը՝ (Սոցիալիստ նշանաւոր գործիչ) Հնչակեան Ռ. Բերբերեանին, ակնարկելով Եւրոպական կապիտալիստ պետութիւններին: Ինչ որ էլ անէք, մի մոռանաք մի բան, որ մեծ պետութիւնները գործ ունեն վարի խաւի հետ (Թուրքիայի հետ): Նրանք գիտեն, որ պէտք է սպանել այդ կատաղած վայրի խողը, բայց քանի որ չեն գտնում համաձայնութիւն՝ թէ խողի ո՞ր մասը ուժ է տրուելու, ուստի նրանք ազատ են թողնում այդ որսը, թէկուզ վայրի խողը անզօին շարժարանները պատճառէ իր շուրջը գտնուած բանջարանոցում»:

(Տես՝ «Հայրենիք», Պոսթոն, թիւ 4 Նոյ. 1939, էջ 69):

Ա. Նազարբէկը ծանօթ ըլլալով Ժ. Փորէսի (Ֆրանս. Սոցիալիստ Լիտր — Հ. Գ.) և Ե. Լոնկէի և այլոց հետ, նրանց պատմում էր Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարի և Հայկական Հարցի մասին, յողուածներ գրում Եւրոպական սոցիալիստական քերթերում: Նա այդ ողով մի ծաւալուն յողուած է գրել «Լա Բըթիթ Բէրլալիք» սոցիալիստներու թերթին մէջ «Ձարկ Գրպանին» խորագրով որ հրատարակուած է իր ստորագրութեամբ, իբրև առաջնորդող: Նրանում հեղինակը մերկացրել է Թուրքիայի և Եւրոպական կապիտալիստական կառավարութիւնների հայկական հարցում բռնած վնասակար քաղաքականութիւնը: Ե. Լոնկէն հաւնելով սոյն յողուածը, Հնչակեան ղեկավար Ռուբէն Բերբերեանին ըսած է. «Յայտնեցէք Ձեր ընկերոջ, որ շարաքը մէկ անգամ քերթում նրան սպառում է առաջին սիւնակները: Մենք քիչ ենք կարգացել նման մտքեր, որոնք այսպիսի ուժեղ տրամաբանութեամբ պարզաբանում են ընթերցողին, քէ որտեղ են քաճուած հայկական ողբերգութեան բուն պատճառները»: Եւ ասիկա ըսուած է Ֆրանսայի Սոցիալիստ Կուսակցութեան Փորէսի օրկանին խմբագիրներէն Ե. Լոնկէի կողմէ... և այս մէջքերումը... կատարած է «անորոշ» և «մշուշապատ» ծրագրով մեկ ամբաստանող Խիկար Բարսեղեան... իր գրքին էջ 244ին մէջ...:

Ո՞վ կը համարձակի այսօր այդ շրջանի Սոցիալիստ ղեկավարներ՝ Փան Փորէսը, Գլարա Յևակինը, Կարլ Լիպնեխտը ամբաստանել, որոնք ըստ Հ. Աճառեանի «Կեանքիս Յուշերից», 1967ին Երևան տպուած գրքին վկայութեամբ.—

«Հայ ժողովրդի ազատագրութեան մասին ցերմ համակրանքով են արտայայտուել»:

«Անթուլ Ֆրանսը 1890ական թուականներից իր ձայնը բարձրացրել էր ի պաշտպանութիւն Հայ Ժողովրդի և ասում էր. «Մենք պէտք է խստովանինք, որ հայ ժողովուրդը խելօք եւ քաջարի ժողովուրդ է. որը ձգտում է իւրացնել քաղաքակրթութեան բարձր գաղափարները, նա իր հանճարով եւ անօրինակ դժբախտութիւններով համակրանքի է արժանացել այն ժողովուրդների մօտ, որոնք արդարութեան եւ ազատութեան գաղափարների սկիզբն են առաջադրել»:

Լսենք Պլեխանովը.— Հայ Ազատագրական շարժման անդրադասնալով ան կ'ըսէ.—

«... Թուրքիայում եւս հայ ժողովուրդը պէտք է ծաւալի յեղափոխական շարժումները, սերտօրէն համագործակցելով միւս ժողովուրդների աշխատաւոր զանգուածների ազատագրական պայքարին»:

Տարբեր էր տեսակէտը Նազարբէկի, Մարոյի, Փարամազի, Ժիրբայրի, Մուրատի, Չէլլոյի, Ռուս. Մարքսիզմի Հայր Պլեխանովին...:

Առանց մեկնարանութեան:

Սոցիալիստ Օկրեստ Պէպէլը կարծիքը.—

«... Միապետական ռեժիմի պայմանները միանգամայն սուկալի են ողջ Թուրքիայի համար, ուստի եւ հայերի դուրքիւնը կը բարելաւուի այն ժամանակ, երբ կը բարելաւուի ամբողջ Թուրքիայի ժողովրդների բախտը: Իսկ բոլորիդ հարցը կը լուծուի, երբ կը տապալուի Սուլթանական ռեժիմը»:

— Իսկ ե՞րբ կը տապալուի Սուլթանական ռեժիմը, կը հարցնէ Ա. Աթանասեան:

— Երբ որ Թուրքիայում նոյնանման պայմանների տակ ազգայն ազգութիւնները և նամանակնոր նրան ամենից շատ տանջուած տարրերը կը միանան փշրելու դոյութիւն ունեցող կարգերը, կ'ըսէ Օկրեստ Պէպէլը (Մարքսիստ տեսաբան) և կը թելադրէ անկախ կրօնէ և ցեղէ՝ միասնաբար յառաջ տանի ազատագրական պայքարը քրքական բռնակալութեան տակ հեծող այլ ազգերու հետ:

(Տես՝ Ո. Բարսեղեանի գիրքը, էջ 240-244, Երևան):

ՀՆՁԱԿԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ի՞նչ էր պահանջում նա («Երկրասարդ Հայաստանը») —

«Որովհետեւ ամէն ազգ մարդկայնութեան մէկ անդամը լինելով, կատարեալ իրաւունք ունի ազատ լինել, իր անկախ հայրենիք ունենալ եւ իր բախտը իր ձեռքով տնօրինել, գերծ որեւէ կաշկանդումից, ուստի «Ե. Հ.»-ն էլ մի եւ նոյն արդար եւ անձեռնմխելի իրաւունքն է պահանջում իր ազգի, իր երկրի համար, մի իրաւունք, սակայն, որ սրբագործել եւ նանաչել է Եւրոպական քաղաքակրթութիւնը, մարդկային յառաջդիմութիւնը, ժամանակակից գիտութիւնը:

— Ահա՛ այն սկզբունքը, որ «Ե. Հ.»ի անմիջական, մտակայ պահանջն է:

«Ազգային անկախութիւնը մի միջոց է, քաղաքական մի ձեւ, աւելի բարձր նպատակների հասնելու համար:

«Մի ժողովուրդ միայն այն ժամանակ կատարեալ բարեկեցիկ, ազատ, անկախ կը լինի, տէր իր բազդին, իր երկրին, երբ նրա միջից կը վերանան դասակարգային խտրութիւնները, ընկերը ընկերոջ շահագործման միջոցները: Երբ աշխատաւորը տէր կը լինի իր աշխատանքի ամբողջական արդիւնքին, երբ արդիւնաբերութեան բոլոր աղբիւրները, հարստութեան բոլոր միջոցները դրականապէս կը պատկանին արդիւնաբերողներին, աշխատաւորներին: Երբ կը տիրէ համայնական հողատիրութիւնը, արդիւնաբերական հաւաքական ձեւը: Միայն այն ժամանակն է որ կը տիրէ ընկերային ընդհանուր ներդաշնակութիւնը, այլեւս մարդը մարդու գայլ չի դառնար եւ Զօրեզը թոյլին ճնշողն ու բոլոր ազգերը եղբայրական կապով իրարու հետ կապուած կը լինին: Իսկ այդ միայն այն ժամանակ կը լինի, երբ կ'իրականանան *Սոցիալիստական Սկզբունքները*, որոնք դեկավարիչ սկզբունքներն են եւ «Երիտասարդ Հայաստան»ի ու նրա հետաւոր նպատակը կազմում Հայ կեանքի մէջ:

«... Այս ծրագիրն է եղել մեր նախորդների, ծրագիրն է մեր, ծրագիրը պիտի լինի ե՛ւ մեր յետնորդների, *մինչեւ որ այդ բոլորը իրականութեան մէջ մտնեն*»:

(«Երիտասարդ Հայաստան», *Խմբ.* 1903 *Մայիս* 1, Ա. թիւ, Ս. Սապահ-Գիւլեան):

Հնչակեան Կուս. օրկան «Ե. Հայաստան»ի ղանադան թիւերէն կատարուած սոյն վկայութիւնները մեկնաբանութեան չեն կարօտիր ցոյց տալու համար մեր քաղաքական ընկերային հարցերու մասին դիրքորոշումները Համիտեան եւ յետագայ շրջաններուն: 1903էն առ ղին լոյս տեսող Ե. Հ.ի մէջ ոչ միայն Հնչ. Կուս. պատմութիւնը, այլ նաեւ հայ ժողովուրդի պատմութիւնն է քանդակուած «70 տարի պատմէջի վրայ...», *խօսք չէ անշուշտ*:

ՅԵՂ. ՆՊԱՏԱԿ.— Մեր մեծիմաստ ստրկական լուծը քօթափելն է, որի տակ հիւժում է, տփնում է, ճնշում է, չարչարում է Հայ ժողովուրդը դարբերից ի վեր. խորտակել այն ամուր շղթաները որոնցով կապուած են նորա ոտները, եւ վերջապէս ազատել, բռնի ոյժով հայրենիքը Օսմանեան քաղաքական իշխանութիւնից եւ կազմել, ստեղծել մի նոր *Երիտասարդ Հայաստան*, ազատ քաղաքական եւ տնտեսական կապանքներէն:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԻՐԱԽՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ.— Եթէ անհատական եւ ազգային գոյութեան, անկախութեան իրաւունքն անձնամիջեւի է եւ այդպէս է նանչցուած քաղաքակրթութեան, մարդկային յառաջդիմութեան կողմից: Ապա հարց.— Ի՞նչ պիտի անել այն պարագային, երբ մի անհատ գրկում է ուրիշ անհատներին եւ նրանց միջոց, պայման չի տալիս ունենալու, վայելելու այն՝ ինչ որ իրենց իրաւունքն է: Ի՞նչ պիտի անել այն հաւաքական մարմնի հետ, որ մի ուրիշ հաւաքական մարմնի իր գործիքն է դարձրել, դրե՛ է նրան իրաւագրկութեան օղակների մէջ եւ նրա ո՛չ յառաջդիմութեան եւ ո՛չ էլ կատարելագործուելու միջոցներ է տալիս:

«Այդ պարագային... կամ ճնշողը ճնշուողին իրաւունքը կը նանչնայ կամ պէտք է «դիմել միակ եւ վերջին վեհագոյն միջոցին՝ *Ապստամբութեան, Յեղափոխութեան* եւ այդ կերպով խորտակել տիրող կարգ ու կանոնը, տապալել արգիլող, խտրող պատմէջները եւ նանչցնել իրաւունքը»:

«Յեղափոխութիւնը ո՛չ ոքի է, եւ ո՛չ էլ յանցանք, այլ իրաւունքի նախազործումն, զի նրա միջոցաւ է որ ապրելու, զարգանալու, կատարելագործուելու վեհագոյն իրաւունքը գոյութեան մէջ է մտնում եւ փշուում, խորտակում է ճնշողը, հարստահարողի պատմական իրաւունքի արուեստական կապերի հանցոյցը»: (Ա. Տարի, թիւ 3):

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.— Մեր գոյութիւնը իբրեւ ազգ, իբրեւ մարդ ազատութեան մէջ պիտի որոնենք, առանց այդ անհրաժեշտ միջոցի մեկն չենք կարող ո՛չ ապրել եւ ո՛չ էլ գոյութիւն ունենալ: («Եր. Հայաստան», Ա. Տարի, թիւ 5):

«Քանի որ ոյժը մի տեղ գործիք է անարդարութեան, իսկ մի ուրիշ տեղ պաշտօնեայ արդարութեան, ուրեմն ազատուիլ ուզող ժողովուրդները, համաձայն իրականութեան, իրենց արդար իրաւունքը պաշտպանելու համար պարտաւոր են դիմել ոյժին»: («Եր. Հայաստան», Ա. Տարի, թիւ 23):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ.— Քաղ. կուս.ը անհրաժեշտութիւններ են եւ երեսան են գալիս քաղաքականապէս ազատ երկրների մէջ: Ժողովուրդի մը կենսունակ ուժերն են նրանք, որ երեսան են գալիս հանրային ծառայութեան մէջ:

«Քաղաքական կուս.ը կենդանի ժողովրդների քաղաքական հայեցողութեան են, ժողովրդների՝ որոնք ապրում են մի կեանքով՝ որից դժգոհ են — ուզում են ապրել մի կեանքով որ չունեն եւ ունենալ են ցանկանում ու դրա համար էլ կուս.ը բաժանուած պայքարում են ունեցածներից աւելի լաւ ձեռք բերելու համար... Այն ժամանակ ընկերութեան բոլոր անդամների շահերը կը լինի միեւնոյնը, բոլորն

էլ կը նկատուին մի ներդաշնակ համայնքի անդամներ եւ ահա այդ ժամանակն է որ այլեւս կուսակցութիւններ չեն լինել: Իսկ դա կը կատարուի այն օրը, երբ կը տիրէ *«Սոցիալիստական Աշխարհը»*: («Ն. Հայաստան», Ա. Տարի, Թիւ 30):

ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ.— Ոչ-յեղափոխական մամուլից սպասելիք շատ բան չունենք, նրա հայեացքները պետական տիրող հայեացքներից հեռի չի կարող անցնել: Յեղ. Մամուլը — ահա միակ եւ ճշմարիտ օգտակար ազդակը մեր կեանքի: Բայց Յեղ. մամուլը իր վերանորոգիչ դերը կը կատարէ երբ նա կը լինի *Սոցիալիստ*: («Ն. Հ.», Ա. Տարի, Թիւ 33):

ԳՈՐԾԱԽՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.— Այս անարդարութեան, չարիքի արմատը արդիւնաբերութեան ներկայ եղանակն է՝ վարձու աշխատանքի սխտեմը: Այդ սխտեմն է որ մարդկային ահագին մի դասակարգ ժառանգագուրկ է անում եւ հարստութիւնը կեդրոնացնում փոքրաթիւ կապիտալիստների ձեռքը եւ նրանց միջոց տալիս ընկերութեան անդամների մեծամասնութեան կեանքի պայմանները իրենց ձեռքի մէջ առնելու:

«... Սրանք բոլորը կը վերանան Սոցիալիստական իրաւակարգի ներքեւ»: («Ն. Հայաստան», Ա. Տարի, Թիւ 33):

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՆՊԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ.— ... Պարզ է ուրեմն, որ պետութիւնը իբրեւ երեւոյթ եւ կազմակերպութիւն, բացակայելու է այն ընկերութեան մէջ, ուր չկայ դասակարգ: Ան... կը տեւէ այնքան ժամանակ, որքան որ այդ պայմանները գոյութիւն ունեն: Իսկ այդ պայմանների չփանալովը պիտի չփանայ եւ պետութիւնը ինքը: («Ն. Հայաստան», Բ. Տարի Թիւ 21):

ԻՍԿԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.— ... Իրական ազատութիւնը կը լինի այն ժամանակ, երբ ընկերութեան բոլոր անդամները համահասար իրաւունքով տէր կը լինեն իրենց աշխատանքի ամբողջական արդիւնքին, երբ մէկը իր գոյութեան համար նիւթապէս կախում չի ունենալ, երբ արտադրութեան միջոցները ոչ թէ մէկի կամ մի քանիսի կամ մէկ դասակարգի, այլ ամբողջ ընկերութեան սեպիականութիւնը կը դառնան, երբ արտադրութեան բոլոր գործիքները ընկերային կը լինեն, որ ասել է թէ իրական ազատութիւնը կը լինի այն ժամանակ, երբ կը տիրէ սոցիալիզմը: («Ն. Հայաստան», 1904, Բ. Տարի, Թիւ 29):

ՑԱՐԻՉՄԻ ՄԱՍԻՆ.— ... Ցարիզմի մահացու հարուածների տակ ոռոսահայ պրոլետարիատը կոչուած է մղելու յեղափոխական կռիւլը իր բաղադրիչների հետ՝ շուտով կործանելու հոգեւարքում գտնուող վիթխարի ցարիզմը... (Բ. Տարի, Թիւ 39-41, 1904):

«Ազգային ամէն խտրականութիւններից բարձր կանգնելով, մեր ցանկութիւնն է որ Հայ պայքարողը, Հայ Ս. Դ., ամենայն անվերապահութեամբ իր բազուկը, իր ոյժը միացնի Ռուս Սոց. Դեմոկրատիային, որի մղած պայքարը, տարած յաղթութիւնները ո՛չ թէ մէկ ազգի, այլ բոլոր ազգերի ճնշուածների համար են:

«Ռ. Ս. Դ., որ ամբողջութիւնն է հարստահարուած ամէն ազգերի Ս. Դեմոկրատների կանգնած պատմական մի գծի վրայ, Հընչակեան Կուս. հետ, իր պայքարի ծայրն ունի վերջնական յաղթութիւն:

«Ապագան պրոլետարիատինն է:

«Կեցցէ՛ Ռ. Ս. Դեմոկրատիան:

«Կեցցէ՛ Հնչ. Ս. Դ. Կ.ը (Գ. Տարի, Թիւ 38, 1905, «Ն. Հայաստան»):

ՊՐՈՂԵՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ.— «... Պրոլետարիատը երբ կը յաղթանակի, պատմական տխուր երեւոյթները, որ մարդկային պատմութեան արիւնլուայ էջերն են կազմում, կը վերջանան ընդմիջու: Պրոլետարիատի յաղթանակով ազատուում է թէ՛ անհատը եւ թէ՛ հաւաքական մարմինը տնտեսական եւ քաղաքական կապանքներից, նա ազատ է խօսելու, գրելու այն լեզուն, ինչ որ իրն է, պահպանելու այն սովորութիւնները, այն յիշատակները, ինչ որ իրեն ցանկալի են: Յեղայնականութիւնն ու ազգայնականութիւնը պրոլետարիատի յաղթանակի օրն իսկ կը մեռնին»: («Ն. Հ.», Բ. Տարի, Թիւ 40-41-42):

(«Քառասնամեակ», (1903-1943), «Նրիտասարդ Հայաստան»ի, 1944, Նիւ Եորք):

Ծանօթ տեսարան եւ հասարակական գործիչ Լ. Մարտիրոսեան, անդրադառնալով հայ քաղաքական հոսանքներու դադարաբանութեանց, կը գրէ. «Եթէ Կուս. ներք պիտի դատենք 90ական թուականներուն իրենց ունեցած մտաւորականներուն քանակով... անտարակոյս Դաշնակցութիւնը պիտի նկատենք հայ իրականութեան մէջ ամենէն զօրաւոր կուսակցութիւնը: Բայց եթէ նկատի պիտի ունենանք կուսակցութեան մը զտարիւն, անխառն ու անչեղ դասակարգային դադարաբանութիւնը, Դաշնակցութիւնը զուրկ այլպիսի դադարաբանութենէ, եղած է դադարաբանական գեանի վրայ յարատեւօրէն գոնափոխ կազմակերպութիւն մը, որ ուժ տուած է սոսկ ահաբեկչական քաղաքականութեան:

«Չենք ուզում պղտորուել», կրկնած Լր Դաշնակցութիւնը ամէն ատեն, երբ Հնչակեան Կուսակցութիւնը զինքը տանիլ կ'ուզէր ուղիղ ճամբու վրայ»: (Տես՝ «Դասակարգային կռիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ», Ա. Հատոր, Լ. Մարտիրոսեան, 1963, Պէյրութ, էջ 166):

«Հնչակեանները ըլլալով ձախ թեւի ներկայացուցիչները, կը պաշտպանէին այն դաշափարը, որ հայութեան ազատագրումը զուտ ազգային հարց ըլլալէ աւելի՝ սոցիալիստական հարց է, որու լուծումը կապուած է սոցիալիստական ուժերու զարգացման Պրոցեսին հետ: Գալով աջ հատուածին, (Վերկզ) անոնք բացարձակապէս զուրկ էին իրերու խորը թափանցելու կարողութենէն: Նախ որ հայ կղերը հետեւելով հայ հարուստ դասակարգին, հակառակ էր արմատական յեղափոխութեան եւ ժողովուրդը կապուած էր հայ հոգեւորականին»: (Տես՝ «Դասակարգային կռիւներու Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ», Լ. Մարտիրոսեան, Գ. հատոր, 1967, Պէյրութ, էջ 478):

ՓԱՐԱՄԱԶԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ

«Չորս տարուան ընթացքում կոտորել են 175·000 հայեր, 80 հազարից աւելի ընտանիք կողոպտուել են, 2500 գիւղ կրակի է տըրուել: Սրանք կոտորուել են Տէրութեան (Օսմանեան) հրամանով:

«... Գիւղերի երեսը վաճառուած է հարուստ կապալառուներին, որով եթէ գիւղը պիտի տայ 100 ոսկի, կապալառուն ստանում է 200 եւ աւելի: Զինուորական տուրքը փոխանակ ստանալու 21 տարեկանից, ստացուած է ծծկերից, դեռ չծնուածից, նոյնպէս եւ մեռածներից: Չորքոտանիների տուրքը ստացուած է այն չքաւորներից, որոնք կենդանի անգամ չունեն կամ ունէին՝ կողոպտուել, թալանուել է:

«Մէկ Արտամետցի Տաճիկ ինձ պատմել է. «Մեր ծառի տանձը գնահատեցին 20 դր., իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց գնել 10 դրուով, որի փոխարէն լաւ ծեծուելուց յետոյ՝ վնասների տուրքը»:

«Մենք կը պահանջենք՝ մամուլի, դումարման եւ խօսքի ազատութիւն, կեանքի, ինչքի ու պատուի ապահովութիւն, անուղղակի տուրքերու ոչնչացում...: Մենք յեղափոխականներս մարդկային ամենայն իրաւունքով պահանջում ենք՝ Հայաստանի Ազգաբնակչութեան բաժանումը Օսմանեան պետութիւնից: ... Մենք թթու ազգայնամոլներ չենք, մենք անենք ժողովրդասէրներ ենք ու շատ լաւ գիտենք, որ ազգայնական թաղաւորը, պէկը նոյն բռնութիւններն են գործելու ինչ գործում է օտարը: Մեր պահանջն է Հայաստանի ազգաբնակչութիւնը, այսինքն հայ, քիւրտ, թուրք, տրաք, լազ, չէրքէզ, ասորի, եղիտի, մինչեւ անգամ Մութրուպ դնչուն իր քուէով ընտրի իր կառավարիչը ու կառավարուի իրենց կարգուած մարդերով ու օրէնքներով, որ բարբոթեան հասնելու կարճ ճանապարհն է: Մենք պահանջում ենք Հայաստանը իր մէջ ապրող ամբողջ ազգաբնակչութեան համար»:

(Կարգացուած վանի վնասու Ատեանի առաջ, 1898 թ. Օգոստոս 1ին, որմէ յետոյ ստացաւ կախաղանի վճիռ):

**

«Մարդկութեան ահագին մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր, արդիւնաբերող դասակարգի կատարեալ ազատումն ամէն շահագործումից, որոնց նա ենթակայ է կապիտալիստ, սեփականատէր ու իշխող փոքրաթիւ դասակարգի կողմից — կը լինի միայն այն ժամանակ, երբ արդիւնաբերողները կը լինեն տէր արդիւնաբերութեան բոլոր ուժերի ու միջոցների որպիսիք են հողը, դործարանը, հանքերը, հաղորդակցութեան ու նիւթական յարաբերութեան ամէն միջոցները:

«Ազատումն արդիւնաբերող դասակարգի՝ նշանակում է ազատումն ամէն մարդու, երկու սեռին էլ պատկանող, նշանակում է հասարակական տնտեսական ազատութիւն ամբողջ մարդկութեան»:

(Հատուած՝ Հնչակեան Ծրագրի Ա. բաժնէն, 1887):

«Հայ ժողովուրդը ներկայումս դտնուած է միապետական քաղաքական կարգերի տակ, որոնց կառավարական, հարկային ու ֆինանսական սխտեմներն աւերիչ են նրա համար, նա դտնուած է նաեւ այնպիսի տնտեսական մի շրջանում, երբ մի կողմից սկսեր են ծաղեւ արդիւնաբերութեան կապիտալիստական կերպեր եւ միւս կողմից շարունակ ընկնում ու քայքայւում են տնտեսական նահապետական կերպերը...:

«Այդ մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում՝

«Յեղափոխել ու ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ընդհանուր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարեւորութիւն միջամտելու քաղաքական գործերում, վերացնել այն խռնուղիները, որոնք արգելի են լինում նրա տնտեսական զարգացման, առ հասարակ նրա կալուտական յառաջդիմութեան, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատաւոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի ու աւելի բարելաւելու աշխատանքի ծանր պայմանները, դասակարգային գիտակցութիւն ձեռք բերելու ու կարգաւարարութիւն իրրելու ինքնուրոյն քաղաքական մարմին՝ եւ դիւրացնելու նրան այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է ամէն տրամադրելի հասարակական պայմանների միջոցով նպաստեն նրա առաջխաղացութեան դէպի հեռաւոր նպատակը:

«Այդ բոլոր նկատումների հիման վրայ Հնչակեան Կուսակցութեան մտակայ նպատակն է կռիւ մղել միապետական կարգերը տապալելու համար եւ նրանց փոխարինելու հանրային ռաւկալարական սահմանադրական կարգերով»: (Հնչակեան Ծրագիր, 1887, Բ. Մաս):

«... Որ հայ ժողովուրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամ ընդմիջտ պէտք է գատուի քրքական կայսրութեան քակատագրից, ըստ որում պատմական պահանջն ու անհրաժեշտութիւնն է ներկայա-

նում — Հայ Ազգային անկախութիւնը, որն էլ այդպիսով կողմում է մտաւայ յայտատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը :

(Տես՝ «Հնչակեան Ծրագիր», 1887, Գ. մաս) :

Փրոֆ. Ս. Մարկոսեանը կը գրէ իր գրքին մէջ.—

«Ամփոփելով մեր տրամադրութեան տակ եղած ինչպէս տպազիր, այնպէս էլ արիւնքային փաստաթղթերը, մենք զալիս ենք այն եղբակացութեան, որ 1894—96 թուականներին Թուրքիայում կատարուած Հայկական կոտորածների կազմակերպողը քրքական պետութիւնն էր, որին ամէն գնով պաշտպանում էին կայսերապաշտ պետութիւնները՝ Սրաքիւֆոն պահպանելու նպատակով : Միակ ապստամբութիւնը որ այդ ժամանակ տեղի էր ունեցել Հայկական նահանգներում, դա Սասունի (1894) ապստամբութիւնն էր : Բոլոր կոտորածներին մէջ հիմնական դերը կատարել է թրքական կառավարութեան բրովոֆացիան, որի նպատակն է եղել Հայկական վերլայէթներում վերացնել հայ բնակչութիւնը, որպէսզի վերանայ Պերլինի դաշնագրով նախատեսուած բարեկարգութեանց անհրաժեշտութիւնը» :

(«Արեւմտահայութեան վիճակը ԺԹ. Գ. Վերջերին», Երեւան, 1968) :

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

«Հնչակեան Կուս. Կարսի մէջ, առած տպաւորութիւններէն դատելով, բոլոր տուեալներն ունէր համախմբելու ինքնարոյս յեղափոխական տարրեր հոսանքները եւ ամբողջական մէկ ոյժ կազմելու : Սա էր ամենահինը, իր համատարած կազմակերպութիւն : Ան էր, որ կ'ընդգրկէր ազգային ու բնկերային յառաջողէ՛մ գաղափարները : Անոր մէջ էին համախմբուած ժամանակի ամենէն զոհարբող, անշահահնդիր տարրերը հայկական երկու հատուածներու երիտասարդութեան : Անոր ձեռքին էր ջահը, որ կը հրդեհէր յեղափոխական բոցը Ձէյթունէն Սասուն, Սասունէն Կովկաս : Ազգը անոր կը նայէր :

«Շատ կարճ ժամանակով հեռուոր Կիլիկիայէն ԳՅՅական թուականներուն սկիզբները, Կարս այցելած էին Ժիրայր եւ Մուրատը, երբ անոնք դեռ եւս անծանօթներ էին, բայց այնպիսի շունչ, այնպիսի ոգի էին ցոյց տուած, որ կարճ միջոցի մէջ նուաճած էին բոլոր հոսանքներու սիրտը եւ մի հօտ ու մի հովիւ էին կազմած յարկի մը տակ, որ Հնչակեանութիւնն էր» :

(Տես՝ «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Ռուբէն, 1972, Պէյրութ, Ա. հատոր, էջ 113) :

Ռուբէն կ'ըսէ թէ «Իսլամական դո՞ւ պաշտերը կատարել» եւ Տամատեանի ու Մուրատի (Պոյաճեան) յորինած երգերը ազգային երգեր էին դարձած, «Տալուրի զաւակ եմ քաջ»ը ազգային քայլերուն էր :

«Կարսի հայութիւնը թէեւ կը հետեւէր Դաշնակցութեան, կը զրկ Ռուբէն (1904), «բայց Թուրքիոյ մէջ եղած շարժումներուն առաջնորդը Հնչակեաններն էին եւ անոնց վրայ կ'իյնար ձախողութեան պատասխանատուութիւնը : Այսուհանդերձ որեւէ քննադատութիւն

չկար այս ու այն կողմի դէմ : «Ինչ որ եղել է եղել է : Մտածենք բուն պատասխանատուի օձիքը բռնելու մասին, որ Սուլթան Համիտը եւ Լոփանով Ռոստովսկին է», կ'ըսէին : (Նոյն, էջ 115) :

Սասուն օդնութեան դացող Հնչակեան խումբերէն յիշենք Հընչակեան Մուրատի խումբը, որ կը զինուի Կարսի մէջ, Դզրլազաճցի Պոլոսի խումբը, զոր Հրայրը իրեն հետ բերած էր Կարս, եւ որ ապահով կը հասնի Տարօն եւ Սասուն, Հրայրի Բ. խումբը կը զինուի Կարսի մէջ եւ կը վերադառնայ Սասուն (1894) եւ Իշխան Գրգէի ազգական Շէնիկցի Ստեփանի խումբը, Արարոյի խումբը, նաեւ Յունոյի, Ջալլաթի խումբը, Սերոր Փաշայի խումբը, եւ այլն :

Ռուբէն Հնչակեան խումբի մը 1904ին Տարօն եւ Սասուն օդնութեան հասնելու պարագան կը յիշէ, բայց չի յիշեր որ այդ խումբը կը կոչուէր «Արծիւ» եւ խմբապետն էր Բարդէն եւ որ նահատակուեցաւ կռուի բռնուելով քիւրտերու հետ : (էջ 334) :

ՀԵՐՈՍՈՒՀԻ ՆԱԶԵՆԻ

Տիկինը՝ Գէորգ Արքեպիսկոպոս Ասլանեանի : Բինկեանի մէջ հերոսարար կը կոուի Հնչակեան Ժիրայրի շունչով խանդավառուած Գարեգին, խումբ մը Հնչակեաններու հետ եւ կ'ազատեն շատ մը այրեր, բայց իր կինը Նազենի, ի ինզիր իր պատուին պաշտպանութեան, առեւանդիչ սպաննիչներու ձեռքէն փախուստ տալով իր երկու ձագուկներուն հետ կը նետուի Բինկեանի հայաթաղը մոխրացնող ճարճատող բոցերու մէջ, կը դառնայ ինքնասպան՝ ուրիշ հրաշքով կ'ազատի մեծ դուստրը իննամեայ, որ խուսափելով մօրը գիրկէն կը զլորի կրակներէն ցած դանուող արահետի մը մէջ :

Ամուսինը բնկեր Գարեգին այնքան կը ցնցուի այս դէպքէն՝ որ 1898ին Եւգոկիոյ մէջ Սարկաւայ կը ձեռնադրուի եւ ինքզինք կը նուիրէ եկեղեցական ասպարէզին : 1900ին Սերաստիոյ մէջ վարդապետ՝ 1904ին Մալաթիոյ առաջնորդ, 1908ին՝ Պոլիս, 1909ի Ատանայի ջարդին քննիչ, Խարրերդի առաջնորդ, 1914ին՝ Ատանայի Առաջնորդ, 1922ին Պոլսոյ Պատրիարքական Տեղապահ :

(Տես՝ «Ակն եւ Ակնցիւն», (1020—1915), Ա. հատոր, Ա. Քէչեան, Պուրբէշ, 1942, էջ 127) :

*:

«Ելակէտ բնդունելով մարդկային բնկերութեան մէջ արիւղ գասակարգային կուուի թէսրին, մենք սոցիալիստներս, կուզանք յայտարարելու, թէ՛ մեր ջանքերը շահագործուող գանդուածներու ազատագրութեան, հետեւապէս անոնց դասակարգային գիտակցութեան զօրացման համար են : Այլապէս՝ եթէ մեր աշխատանքը միշտ միակ

նպատակը շունենար շահագործուող պրոլետար դասակարգի շահերուն պաշտպանութիւնը, մենք ամէն ինչ եղած կ'ըլլայինք, բացի ընկերութեան սոցիալիստ լինելէ :

«... Ռուսական մեծ յեղափոխութեան ժամանակ, ուստի ուսանողը պարիքատներուն (պատնէշ) ետեւէն կը կոուէր ուստի հիւանդ միտակերպութեան հետ՝ բանուորի կողքին: Ու այսօր, երբ առ երեսույթս մարած է յեղափոխութիւնը եւ կը տիրէ բէականները, դարձեալ նոյն ըմբոստ, կորոյի եւ ո՛չ մէկ երկրի մէջ նմանը չտեսնուած ուստի ուսանողութիւնն է՝ որ իր տկար, շատ տկար անհասար ուժերով, հրապարակ եկած է անտախ ու համարձակ կոուելու ցարի կառավարութեան դէմ: Նա է որ յամառ ջանքերով կը կազմակերպէ ուստի բանուորութիւնը, ապագայ հսկայ յեղափոխութիւնը պատրաստելու համար»:

(«Կայծ» ամսաթերթ, օրկան Ս. Դ. Հ. Կ. Պոլսոյ Ուս. Միութեան, Ա. Տարի, Թիւ 6, 1911, Սեպտ.) :

**

Ա.— Ս. Դ. Հնչակեան Կուս.ը գիտական սոցիալիզմից բխող, միջազգայնական սկզբունքներ ունի:

Բ.— Ընդունում է դասակարգային կռիւ, որի քաղաքական արտայայտիչ ազդակն է ինքը:

Գ.— Պաշտպանում է Հայ ազգի եւ Հայ հայրենիքի պատմա-անհատական դոյուքեան իրաւունքը եւ նրա ազատագրութեան դաշտաբարձ՝ համաձայն իր ծրագրի մօտաւոր եւ հեռաւոր նպատակներին:

Դ.— Նա կանգնած է Ս. Դեմոկրատական հողի վրայ այն բոլոր վայրերում, ուր ինքը կազմակերպութիւններ ունի:

Ե.— Պարտաւորեցրել է իր բոլոր շրջանները կազմակերպութիւններին՝ Ս. Դ. գործունէութիւն ունենայ՝ համաձայն իրենց տեղական պայմաններին:

Զ.— Հայ ազգային խնդրի, Հայ Ազատագրութեան գործի, սկզբունքային հարցերի տեսակէտից, այդ բոլոր շրջանները մի ամբողջութիւն են կազմում միանման իրաւունքով եւ պարտականութեամբ:

Է.— Նա ունի կեդրոնացման սխառն, շրջանային վարչական հաստատութիւնների ինքնապարտութեան ձեւով:

(«Սոցիալիզմ եւ Հայրենիք», Սա. Սապահ-Գիւլեան, Պրակ Բ., 1916, Փրովիտէնս, էջ 94-95):

Արեւմտահայաստանի ազատագրման մտահոգութեամբ 1890ին հիմնուեցաւ «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»ը: Կուս. առաջին ժողովին կը մասնակցէին Թիֆլիսի մէջ՝ «Երիտ. Հայաստան»ի խմբակէն՝ Յ. Արզուման, Մ. Շաթիրեան, Տ. Ստեփանեան, Ա. Թադևոսեան, Ա. Նազարեթեան, լիպերայ նորոյնիկ՝ Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Սա. Զօրեան (Ռոստոմ), Արք. Դատակեան, Հնչակեաններէն, Ռ. Սանազատ, Հմայակ Սուրբաբեան, «Մշակ»ի հետեւորդ՝ Սա. Մարտիան (Ի. Ակնունի):

1890ին կը ձեւաւորուի ի վերջոյ, 1892ին Ա. Համապայմարը կ'ունենայ եւ հոն կ'անուանուի «Հայ Յեղ. Դաշնակցութիւն», նպատակ ունենալով ազատագրական պայքարը ղրխաւորաբար Օսմ. Բընաւորութեան դէմ:

Հայ Յեղ. միացումը տեղի չունեցաւ, սոցիալիզմը խորթ թուեցաւ, ատով չկրցան միանալ Հնչակեաններու հետ: 1891ին «Դրօշակ» պաշտօնական թերթը հրատարակեցին եւ Պոստական թուականներուն շատ անգամ «Դրօշակեաններ» կ'որակուէին:

Առաջին Կեդրոնի անդամները եղան՝ Քր. Միքայէլեան, Ս. Զաւարեան, Ար. Դատակեան, Լորիս Մելիքեան եւ Լեւոն Սարգիսեան:

Անոնց առաջին Մանիֆեսթին մէջ ըսուած է.— «Հ. Յ. Դ. ն սրանով զիմում է բոլոր հայերին եւ հրաւիրում է կանգնել իր դրօշի տակ... նպատակ զնելով Թրքաց-Հայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը, «Դաշնակցութիւնը» մտել է այն կոուի մէջ որ սկսել է ինքը ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ, ուխտելով մինչեւ արեան վերջին կաթիլը կոուել Հայրենիքի ազատութեան համար...:

«... Համախմբուենք հայեր, եւ քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատագրութեան սուրբ գործը»:

(Տես՝ «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմ.», Մ. Վարանդեան, Ա. հատոր, էջ 81, նաեւ Խ. Բարսեղեան, նոյն զիրքը, էջ 178):

Դաշնակցութիւնը 1890-1900ի շրջանին ղեռ տարածուած էր Արեւմտահայաստանի մէջ, սակայն յետագային լայն չափով իր մասնաճիւղերը, Փետայիները, մամուլը ունեցաւ: Անոնք գուտ ազգայնական հաղի վրայ գործեցին, մասնակցեցան 1896ի Վանի, նոյն թուի՝ Պանք Օթոմանի եւ 1897ի Սանասորի արշաւանքներուն եւ 1904ի Սասնոյ Բ. ապստամբութիւնը կազմակերպեցին: 1905ի «Երլարդի ումբը» պայթեցուցին, 1903ին էջմիածնի կալուածներու դրաման շրջանին ցարին դէմ պայքարեցան, տեղորներ կազմակերպեցին ցարի պաշտօնեաններուն դէմ, 1905ի հայ-թաթարական բախումներուն մասնակցեցան, ազատագրական պայքարի մէջ իրենց բաժինը ունեցան, բան-

ուորական շարժումներէ հետո մնացին Կովկասի մէջ: Հակադրուեցան Ռուս Ս. Գեմոկրատներուն: 1907ին Վիեննայի Համադումարին Սոցիալիզմը ընդունեցին, բայց չհետեւեցան անոր: ԻԹԹիհատի հետ միացան՝ Համիտը ստապալելու համար, սակայն տարուեցան անոր սուտ խոստումներէն և սուժեցին: 1915ի Հերոսամարտերուն մասնակցեցան Քրքահայաստանի մէջ, կամաւորական շարժումներու մէջ արդար բաժին բերին: 1918–20ի հանրապետութեան օրով դժուար պայմաններու մէջ չկրցան ճիշդ կողմնորոշուիլ և յեղու գտնել Կարմիր Ռուսաստանի հետ: Փետրուարեան անիմաստ շարժումով վարկաբեկուեցան և հետոյն վերջնականապէս Հայաստանէն, ապա ներկայ Ս. Հայաստանի դէմ երկար տարիներ անշահ պայքար մղեցին, Արեւմտեան Երջանակներու խոստումներէն տարուելով...: Ունեցան ցնցումներ (Միհրանական, «Մարտկոց»ական, «Ազգարար»եան, եւայլն):

Իրենց քաղաքական մեղքը պիտի մնայ՝ ԻԹԹիհատի հետ սերտակցութիւնը 1907–1914 և 1921ի Փետր. ապստամբութիւնը և Արեւմտեան Օրիէնթալի: Պիտի գնահատուի Սուլթանիզմի դէմ իրենց անշահախնդիր, հետեւողական և ազնիւ պայքարը:

**

Մեր նպատակը Հայ Կուսակցութիւններու մանրամասն պատմութիւնը տալը չէ: Մեր նպատակն է մասամբ ցոյց տալ անոնց պաշտօնաբարձութիւնն ու մտահոգութիւնները, որոնք ազերս ունին 1890–1910ական շրջանի հայ յեղափոխութեան ազատագրական պայքարի հետ և դրական ու ժխտական գիրքորոշումները անոնց՝ Սուլթանի թէ ԻԹԹիհատի Օսմանեան Բռնատիրութեանց դէմ:

Մեզի համար այն տարակարծութիւնները որոնք ծագեցան 1890–1910ի շրջանին թէ տարբեր կուսակցութիւններու միջև և թէ նոյն կուսակցութեան ներս, բնական, թէ և ցնցող երեւոյթներ էին: Արեւմտահայ ազատագրական պայքարներու տուն տուող սոցիալ տնտեսական պայմաններուն նկատմամբ, բնական է իւրաքանչիւր Կուս. իր գիրքորոշումը պիտի ունենար: Եստ անգամ դէպքերը աւելի արագ բնթացան քան կը խորհէին կուսակցութիւնները:

Մինչ Հնչակեան Կուս. ր Լոնտոնի իր 1896ի Ա. Համադումարին կ'որոշէր մասնակի ցոյցերուն վերջ տալով հուսաբակի և կազմակերպում ընկալուար շարժումով մը տապալել Օսմանեան Գահին բռնակալը. Դաշնակցութիւնը կը խորհէր, թէ՛ կարելի էր եւ պէտք է շարունակուէր մասնակի ցոյցերն կամ շարժումները: Արեւմտահայերէր 1896ի Վանի դիմադրութեանէն ետք հրապարակէն քառուսած էին՝ մեծ թիւով գտնելու ետք Պարսկական սահմանը անցնելու իրենց փորձին մէջ: Վերակազմեալ Հնչակեանները ոչ միայն

չկրցան «առանց սոցիալիզմի» ոչ մէկ դործ կատարել, այլ 1906ին արդէն դրեթէ հրապարակէն քառուսած էին... իսկ Ռ. Ս. Դ. ներք 1903էն ետք հրապարակ իջան, սկսան ուժ դառնալ Կովկասի մէջ, բայց փաստորէն Արեւմտեան Հայաստանէն ներս չէին կրնար օգտակար հանդիսանալ՝ բռնակալ ցարին դէմ կոուելու և աշխատաւորներ պայքարի մղելու ծանր գործին լծուած ըլլալով: Միջազգային կացութիւնը միշտ կը փոխուէր 1878էն յետոյ, սակայն 6 Մեծերը նենդութեամբ և խարկութեամբ կը վարուէին մեր վճարուած ծով արեան հետ... Այդ հակասութիւններէն կ'օգտուէր Համիտ, միշտ եւրոպայի 6 Մեծերուն վճարելով նոր նահանգներ, նոր տնտեսական զիջումներ: Ռուսաստանը Ֆրանսայի հետ, Գերմանիան՝ Ռուսաստանի հետ, Անգլիան՝ Ֆրանսայի դէմ, ապա անոր հետ, քաղաքական զաշինքներու առատութեան մէջ... Ափրիկեան շահերը, Մայր. Արեւելքի զիբքերը, Պալքաններէն ներս թափանցելու, տիրելու փորձերը, մէկ խօսքով կեղծիքի միջոցաւ որ զիւանազիտութեան պտուղն է... չզիւրացուցին մեր Հողային Պահանջներուն լուծումը: Բայց ատրիկա պատճառ մը չկու, որ միրաւոր, անտեսուած, ստրկացուած ժողովուրդի մը գաւակները, թուրք ընդգլխութեան հետ չողջունեն պահ մը... վախճանը Սուլթան Համիտի բռնատիրութեան 1908ին: Հոս է որ երկուքի բաժնուեցաւ հայ քաղաքական միտքը: Ռուսիոյ բանուորները 1917ին ցարի բռնակալութեան վերջակէտը պիտի դնէին: Անոր տապալումով միայն, հնարաւոր պիտի դառնար մեր ժողովուրդի հերոս գաւակներուն, Փետայիներուն երազած աշօրուան Հայաստանը, բայց պիտի մնար Արեւմտահայաստանի ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ՝ որպէս կտակ նոր սերունդին...:

Բայց լաւ պիտի ըլլար լսել... քիչ անդրադառնալ՝ Հ. Յ. Դ. պատմութիւնը գրող Մ. Վարանդեանի մտքերուն:

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆԻ ԹԵՁԵՐԸ

Միք. Վարանդեանի «Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութիւնը» (երկու հատոր), կարգացողը կը համոզուի, որ զիտական լուրջ գիրքեր չեն անոնք: Կոմսի, Ռուբէնի, Մալխասի յուշերուն մէջ աւելի ատաղձ կայ Կուս. իրաւ պատմութեան ծանօթանալու՝ քան Մ. Վարանդեանի՝ «որ տեսարան» ըլլալու պատուին ալ կ'արժանանայ յաճախ իր հետեւորդներէն:

Նոյնիսկ մուկոսնոյ Անկյո–Սաքսոն պատմարաններ՝ Հոկտեմբերեան Սոցիալիստական Յեղափոխութեան առթիւ չեն գրած անոր հասցէին «յետամնաց շարժում» և որ «այնքան չարաշուք անդրադարձումներ ունեցան մասնաւորապէս մեր հայկական քաղաքային վրայ»(?): Մ. Վարանդեան կը գեղգեղէ. «Այդպիսի մէկն էր կարմիր կոչուած յեղաշրջումը Ռուսաստանի մէջ, որ 1917ի Հոկտեմբե–

րին մէկէն ի մէկ խաւարեցուց Փետրուարեան Յեղափոխութեան (Կե-
րենսքի, Մենչեւիքներ, Գատէթներ) պայծառ արեւը եւ դարբնեց սո-
ցիալիզմի անուանով բռնակալութեան ամենէն մռայլ, ազատասպան
սխտեմներէն մին... (Երանի՛ ուրեմն, Համխտեան, Իթթիհատական
եւ ցարական ուժիմներուն — Հ. Գ.):

Գլխաւոր Կուս. հանդուանները պիտի տանք կ'ըսէ ան «հրա-
ժարելով մանրամասն նկարագրութիւններէ, ընդարձակ ֆազուած-
ներէ, վերլուծումներէ եւ մեկնութիւններէ: (Ինչ որ կը դարձնէ պատ-
մութիւն մը... չլրացիլաւ — Հ. Գ.):

(«Հ. Յ. Գ. Պատմութիւն», Ա. հատոր, Միք. Վարանդեան,
էջ 6-8, 1932):

Ինչո՞ւ չեն կրցած մէկ կուսակցութիւն կազմել Հնչակեաններն
ու Դաշնակցականները 1890ին:

«Ուստի մերինները (Դաշնակց. հիմնադիրները) շատ աշխա-
տեցան, յայտարարեցին, որպէսզի Հնչակեան Պատուիրակը (Ռ. Սա-
նազատ եւ Հմայեակ Սուչուլեան որ 1893-96ի թուականներուն ազատ
ունկնդիր էր ժընեւի համալսարանում, շատ աւելի մոլեռանդ իր
Մարքսիզմի մէջ քան իր ընկերը), առժամապէս լռութիւն պահէ այդ
բառին շուրջ, բայց սա (Ռ. Սանազատ) խորիստ կերպով կը պնդէր իր
ըսածին վրայ, յայտարարելով սոցիալիզմը, իբրեւ անհրաժեշտ պայ-
ման ուժերու միութեան:

«Զէ՞ որ յեղափոխական կուսակցութիւնը պէտք է իր պարզ
եւ որոշ ծրագիրն ունենայ... երբ ցանկանում էք, որ Հնչակեան Կու-
սակցութիւնն էլ միանայ ձեր կազմակերպութեան հետ, պէտք է որ
ձեր ծրագիրը անպայման սոցիալիստական լինի...»:

Այսպէս կը պահանջէր Հնչակեան Պատուիրակը իր իսկ խոստո-
վանութեամբ, (Ռ. Սանազատ, «Հայրենիք», ամսագիր, Դեկտ. 1927
եւ Մ. Վարանդեան, էջ 63):

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵՁԸ .—

«Ի հարկէ, ծրագիր կ'ունենանք, սակայն, այնպէս պիտի անենք, որ մեզնից
չխորշեցնենք շատ շատերին... իսկական դործիչները մենք ենք լինելու, իսկ նրանք
օժանդակողներ, դրամ տուողներ միայն, մենք ինչպէս ուզենանք, այնպէս էլ կը
տանենք գործը: Պէտք է իմանալ, թէ ո՞ւմ հետ ի՞նչպէս խօսելու եւ վարուելու
է... ամէն կերպ պիտի աշխատենք Կուս. եւ նպատակը այնպիսի ֆորմիւլայի տակ
դնել, որ չոր ուզածը լինի եւ Հնչակեան Կուս. էլ մեր ընդհ. միութեան մէջ մտնի...
Մենք բռնեցին մեծ Յշմանկութիւն չեմք տալիս, գլխաւորը գործն է...»:

«Եւ փրկարար ձեւը գտնուեցաւ մշակուող ծրագրին մէջ իբրեւ նպատակ ըն-
դունուեցաւ ժողովարարի տնտեսական եւ ֆազակական ազատութիւնը, (ընդգ. Մ. Վ.):

«Զափազանց վախենում էի նոյնպէս — կը շարունակէ Ռ. Սանազատ — որ
ժընեւի ընկերներս չպիտի համաձայնին ընկերվարական տեսակէտով այդպիսի ա-
նորոշ ծրագրին ընդունելու»:

«Որոշուեցաւ «Հնչակ»ը թողնել ժընեւում, որպէս նոր Կուս. օրկան — Քրիս-
տոփորի եւ Նազարբէկի խմբագրութեամբ — եւ հրատարակել նաեւ մարտական
թերթ մը «Իրօշակ» անունով:

«Հնչակեաններու Միութեան յարիւր տարաբախտարար կարճատեւ եղաւ, ժը-
նեւեան Կեդրոնի (Ա. Նազարբէկ) որոշումով այդ Կուս.ը վերստին հեռացաւ ու
մեկուսացաւ»: (էջ 65):

Ապա Մ. Վարանդեան իր թոյնը կը թափէ Հնչ. Կուս. բա-
ժանման, ցնցումներուն (1896), մոռնալով որ 1890-1910 Արեւմտա-
հայաստանի մէջ այդ Կուս.ը ամբողջ Կիլիկիոյ, Փոքր Հայքի, Հա-
րաւ. Հայաստանի եւ մասամբ Մեծ Հայքի մէջ գլխաւոր ազատագրա-
կան պայքարը առաջնորդողը եղաւ, առանց ժխտելու Դաշնակցու-
թեան խմբակներուն եւ Ֆետայիներու հետ շատ անգամ միասնա-
բար բոլոր կռիւներուն Հնչ. Կուս. բերած բաժինը Թրքա-Հայաստա-
նի մէջ մասնաւորաբար, ինչպէս նաեւ Կովկասի մէջ եւ դեռ աւելին՝
1890-1905ի շրջանին սոցիալիստական պայքարներն ալ հայ կեան-
քին մէջ առանձին տարաւ Հնչակեան Կուսակցութիւնը եւ դեռ չենք
խօսիր Ռ. Ս. Գ.ներուն հետ իր գործնական պայքարներուն շուրջ՝
Հոկտ. Յեղափոխութեան շրջանին:

Ինչպէ՞ս թէ գոյութիւն չունէր Մեծ Հայքի մէջ Հնչ. Կուս.ը:
Գոյութիւն չունէ՞ր Կարսի, Ալեքսոյի, Տրապիզոնի, Պարբերդի,
Տիգրանակերտի, Վանի, Տրապիզոնի, Սեւ Մովու եզերքները, Շապին
Գարահիսարի մէջ...:

Մ. Վարանդեան կը պոչէ. «Այս է իրողութիւնը, զոր պարտա-
ւոր ենք արձանագրել»:

Սինիզմը Մ. Վարանդեանի — «իր կարճատեւ (ինչո՞ւ կար-
ճատեւ — Հ. Գ.) գոյութեան ընթացքին Հնչակեան Կուս.ը շարք մը
ծանր վերլուծումներու հետ, ունեցաւ ֆանի մը յաջողութիւններ: Քիչ-
շատ կրցաւ օգտագործել առաջին շրջանի համատարած ոգեւորու-
թիւնը (ո՞ր սղեւորութիւնը) եւ կատարեց զուտ ազիտարար աշխա-
տանք (յուզել, ցնցել դանդուածները, յանկարծակի խլրտումներով,
անհատական տերորներով, կախազաններով...):

— Սասունի խլրտումը (1894) առանց քիչ-շատ լուրջ ու զինեալ
պատրաստութեան: Պապը Ալիի (1895) թափորը, որ նոյնպէս կա-
տարուեցաւ յախուռն կերպով, առանց զէնքի եւ կազմակերպութեան:

«... Կուս.ը կ'անտեսէր ժողովուրդի ինքնապաշտպանութեան
հոգը, որ սակայն հայ շարժման ամենէն հրատապ հոգերէն էր... Նա
չէր մտածեր ժողովուրդը զինելու, մարզելու մասին (իրա՞ւ...), եւ
Մուրատը 1893ին Սասունէն Կովկաս կ'անցնի, կը դիմէ Դաշնակցու-
թեան օժանդակութեան ինչ որ իրեն չմերժուեցա՞ւ կը զրէ՞ Մ. Վ.:
(Այո՛, մերժուեցաւ... պայման դրուեցաւ, որ ապստամբութիւնը
Դաշնակցութեան «հալը» նկատուի... եւ ատիկա Զաւարեանի՛ կող-
մէ, Պրն. Մ. Վարանդեան...):

Ապա կը յիշէ որ Զէյթունը յաջողութիւն մըն էր, իսկ «Նոր
Դար»ի եւ «Արձագանգ»ի մարզիկը Հնչակեան դրօշին տակ կը դոր-
ծէին...»:

Մենք համբերութեամբ մտիկ ընենք... Մենք աւելի արնիւ
 դանուէնք, հող չէ եւ չխորանանք, քէ ինչո՞ւ 1890ին սոցիալիզմը ա-
 տելորդ իսկ 1904ին Սոցիալիզմի նախագիծ, ապա 1907ին Սոցիալիզ-
 մի դրօշ... ո՞րն էր ցուցականը, — Խանասո՞րը, Պանք Օթոմանը թէ
 Համիտի ղէմ մահափորձը... Սասնոյ Բ. ապստամբութիւնը... Տե-
 րորնե՞րը... Հայ թաթարական կռիւներուն մանուկներու սպաննու-
 թեան ղէպերուն Հ. Յ. Դաշնակցութեան գրքին մէջ տեղադրուե՞-
 լը... 1907ին Իթթիհատի հետ համաձայնի՞լը... 1908ին եւ 1912-1914ին
 անոր հետ միացեալ ցանկ կազմե՞լը... Սոցիալիզմի հակադրուող
 Միջրանական շարժումը: 1907ին Մուրատի հայ կուսակցութեանց
 միջեւ համադրականցութեան կոչը մերժելով... Իթթիհատի հետ
 «Մենք Օսմանցիներ ենք» եւ հողային դատը լքելը չէ՞ր արդեօք ցու-
 ցական մասը...: (Առանց մեկնաբանութեան — Հ. Գ.):

Մտաւորականներով ազատ չմնաց Հնչ. Կուս.ը... Շիրվան-
 դատէ, Լ. Փաշայեան, Երուխան, Ա. Իսահակեան, Յովհ. Թուման-
 եան, Ատրպետ, Ա. Արփիարեան, Մ. Տամատեան, Վէսպեր, Գարե-
 գին Կողիկեան, Պետրոս Մարիմեան, Հմ. Խուչումբեան, Ս. Սապահ-
 Գիւլեան, Ա. Վշտունի, Ա. Մարտեան, Ժ. Միրզախանեան, Հ. Գա-
 լիկեան, Լ. Մարտիրոսեան, Ե. Զոփուրեան, Կ. Գարիկեան, Գ. Օ-
 գանեան, Մարօ, Թ. եւ Մ. Մինասեաններ, Թ. Խանապատ, Շ. Կաֆ-
 եան, Ս. Շահէն, Սաղունի, Որսորդ, Համբ, Ա. Ռշտունի, Ազատի,
 Ապահ, Լ. Մկրտիչեան, «Կայծ»ի սերունդէն Վ. Զէյթունցեան,
 Ամատունի, Գ. Վանիկեան, Ա. Կիտուր: Ա. Աջգալչեան, Արծրունի,
 Մուրատ եւ Ժիրայր, Ս. Տաշիր, Ղ. Աղաեան, Սիրվարդ, Ա. Կէնճ-
 եան, Ա. Եսսեան, Յ. Բարեջանեան եւ Ար. Շուշանեան, Յովհ. Սոլով-
 եան եւ Թ. Ս. Դ. ի հիմնադիրներէն Կովկասի մէջ 10է աւելի մեծ զոր-
 ծիչներ եւ մտաւորականներ Ա. Խումարեանէն մինչեւ Վարլամ Յով-
 հաննէսեանը, Վարդանեան, Մելիքեան, Խանոյեան, Ատրպետ, Ս.
 Կասեան, եւ զեռ հարիւրէ աւելի այլ մտաւորականներ... որոնց յան-
 ցանքը գէշ պայմաններու մէջ ժողովուրդին ազգային դասակարգային
 պայքարի դրօշակակիրներ հանդիսանալն է եղած... ու կը մոռնա՞յ
 Մ. Վարանդեան, նաեւ, որ Գ. Գյճեան, Հրաչեայ-Մարալ, Անդրա-
 նիկ, Հրայր, Գէորդ Զաւուչ, Բթէեան, Սերաստացի Մուրատ եւ
 Վանի ու Սասնոյ բազմաթիւ մարտական ուժերը Հնչակեան աւազանի
 մէջ մկրտուած են, ապա՝ երբ Կուս.ը իր ցնցումը ապրեցաւ եւ 1896ին
 հաստատելէ ետք, թէ 6 Պետութիւնները երբեք ալ Սուլթանի վրայ
 ճնշելու քաղաքականութիւնը չէին փորձեր, որոշեց վերջ տալ «ցու-
 ցական» գործունէութեան եւ երբ «ասպարէզը»... Դաշնակցութեան
 մնաց, ան տէր դարձաւ Անդրանիկին կամ Հրայր-Դժոխքին, Գէորդ-
 րին կամ Գ. Գլըճեանին եւ ուրիշներուն...:

Մենք սակայն երբեք բացակայ չէինք ո՛չ միայն Տէօրք Եալի,
 Զէյթունի, Հանրի, Այնքէպի, Մարաշի, Ատանայի, Սեբաստիոյ,
 Կեսարիոյ, Մալաթիոյ եւ Խարբերթի մէջ, Բիւնկեանի, Մնճուրի, Շա-

պին Գարահիսարի, Տրապիզոնի, Օրտուի, Ակնի, Թումարգայի, Սա-
 սունի, Վանի, Մուշի, Կարսի, Տիգրանակերտի, Քիլիսի, Ուրֆայի
 թէ Սամսոնի, Կիրասոնի եւ Արեւմտահայաստանի բոլոր գաւառնե-
 րուն մէջ, այլ նաեւ Պարսի, Պաթում, Թիֆլիս, Անապա, Ռոսթոմ,
 Երեւան, Ալեքսոյլ: Մենք ներկայ էինք 1903ին Կոլիջիւնի ղէմ, հայ
 եկեղեցւոյ կալուածներուն, Հայ-թաթարական բախումներուն եւ մա-
 նաւանդ՝ ուր որ ներկայ չէր Դաշնակցութիւնը — 1890-1907ի ԱՇԽԱ-
 ՏԱԻՈՐԱԿԱՆ ԲՈՂՈՐ ՅՈՅՑԵՐՈՒԻՆ ՅԱՐԻԶՄԻ ԴԷՄ ՄԵՐ ԲԱԺԻՆԸ
 ԲԵՐԻՆՔ: Իսկ միայն Հնչակեան Կուս.ը ներկայ էր ԻԹԹԻՀԱՏԻ ԴԷՄ
 1896էն սկսեալ, իսկ իր Կուս.ը ԻԹԹԻՀԱՏԻ ՀԵՏ ԷՐ... 1907-1914՝
 սուբով գլխով:

Այս վերջին պարագան պէտք է «ցուցակա՞ն» բաժնի մէջ անցը-
 նել մեր յեղ. պատմութեան գրքին մէջ, թէ «գիտակցուած» եւ «լրջա-
 խոն» պարագայ մը որպէս ներկայացնենք սփիւռքի մէջ հասակ առած
 նոր սերունդին...: Իսկապէ՞ս «մարդոց» սով ունեցող Կուս. մը եղած
 է Իթթիհատի շրջանին... բայց ստիկա Ս. Սապահ Գիւլեանի եւ Փա-
 բամազի Կուս.ը չէ եղած Պրն. Վարանդեան:

Մ. Վարանդեան կը մեղադրէ իր կուսակցութիւնը Կերեկցեա-
 նի, Յունոյի եւ Սարկաւազի նման անկեղծ գործիչներու տեսութիւն հա-
 մար... (էջ 84-87):

«Յետադային Սոփիայի Ընդհանուր Ժողովին մէջ (1904 Յունուար) պարզուե-
 ցաւ որ, Կերեկցեան (Հնչ. էրզրումի ցոյցի կազմակերպիչներէն) գաւառն մը չէ՞ր
 եղած, բայց խիստ կրքոտ ձեւերով վարած է իր պրօպագանդը նոր յեղափոխական
 (իմա Դաշնակցական) գործիչներուն ղէմ... (Տե՛ս՝ «Հ. Յ. Գ. Պատմ». Մ. Վա-
 րանդեան, էջ 87):

«... Այսպէս թէ այնպէս, Դաշնակցութեան առջին քաղաքակրթութիւնը, այն
 օրերու պայմաններուն մէջ, հրաժարեցան անկախութեան սկզբունքէն»: (Նոյն, էջ
 119):

Հրայր-Դժոխքը 1894ի «Հնչակ»ի թիւ 3ին մէջ կը գրէր. — Տա-
 րօնի Հնչակեան կազմ, յայտարարութեան մասին.

«Հասաւ վերջապէս, դարերէ ի վեր սպասուած կարմիր օրն, ահա կը ինչ
 սրբազան զանգակն Սասնոյ բարձրաբերձ լեռներէն, ահա կը ծածմնի այդ բարձանց
 վրայ հայութեան եւ մարդկութեան ոսմակախուած իրաւունց նախանձախնդիր
 կարմիր դրօշակն, ահա գրկելոյն վրիժուց եւ բռնաւորին դատաստանի կենաց եւ
 մահու ժամն վճռական»:

Շեշտելէ ետք թէ մեծ պատրաստութիւն չունին, կը գրէ. —

«... Այլ յուսահատութիւնը, ծայրայեղ ճնշումը, լուռ ու մունջ կորսուելու
 տեղ կռուելով մեռնելու պատրաստակամութիւնը մղեցին գեղցիկ այս ի գործ...»:

Մ. Վարանդեանի կողմէ անպարկեշտութիւն է շարաթներով
 15-20 հազար թշնամիին ղէմ 1894ին ղիմադրող Կուս. մը համար
 գրել՝ թէ «տարրակա՞ն պատրաստութիւն» չէր տեսնուած եւ թէ
 6-7000 մարդ կոտորուած է... բայց մենք այդ հարցումը չենք ընել

Պանք Օթոմանի գրաման մասին եւ Պոլսոյ կոտորածին մասին... ընդհակառակը, մենք յարգանքով կը խոնարհինք Քրիստափորներու, Ռոստոմներու, Պուլկարացի Գրիգորներու, Նիկոլ Թումանեաններու, Վիշապեաններու, Սէրէմճեաններու, Պետոներու, Բարզէն Սիւնիներու, Կուկունեաններու, Սերոբներու եւ հարիւրաւոր Հնչակեան, Գալ-նակցական, Արմենական թէ՛ Վերակազմեալ այն բոլոր Փետայիններու շիրմին առջեւ, որոնք «ազգի ազատութեան համար իրենց արիւնը չսակարկեցին», երբ հայրենիքը զիրենք կանչեց պատասխանատուութեան, երբ հայ գիւղացին ու աշխատաւորը պէտք ունեցաւ իրենց բազուկին եւ կեանքին... Սուլթանական թէ՛ ցարական բռնատիրութեան դէմ մղուող պայքարին մէջ: Մեզի համար հատուաբար սիրելիներ են՝ Մուրատ Պոյաճեանը, Սերաստացի Մուրատը, Կովտունցի Մուրատը, Խորխորունցի Մուրատը, Շապին Գարահիսարցի Ղուկաս Վարժապետը, կամ Մարգպետը, Հնչակեան Մարտիկը, Գալնակցական Պետոն եւ Արմենական Աւետիսեանը՝ որոնք նոյն նպատակի համար Վանի Ա. հերոսամարտը կերտեցին... Բայց մենք նոյն ատեն սիրելի կը նկատենք բոլոր Ս. Գ. ընկերակարականները՝ հայ թէ՛ ուսուցիչները՝ որոնք պայքարած են եւ կը պայքարին ազգային եւ ընկերային յատուկ գիրքորոշումներով՝ բոլոր տեսակի բռնութեանց դէմ, ահա թէ ինչո՞ւ մենք կը սիրենք նաեւ Շահումեանը, Կասեանը, Կնունեանցը, Խանճեանը...:

Այլեւս վերջ պէտք է դրուի սուրբերու աստիճաններ որոշելուն... բոլորն ալ նոյն ժողովուրդի զաւակներն են եւ բոլորն ալ սիրոյ արժանի, այնքան ատեն, որ չեն դաւած իրենց պարտականութեանց ընթացքին, այնքան ատեն որ չեն սակարկած իրենց արիւնը ստրկութեան եւ բռնութեան շղթաներուն դէմ տարուած պայքարին մէջ, այնքան ատեն որ տէրն են մեր ժողովուրդի հոգային դատին:

1896ի եւ 1915ի Վանի, 1915ի Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Կիլիկիոյ, 1920ի Հաճնոյ, 1918ի Սարտարապատի կռիւները ցոյց տուին, որ հայ քաղաքական մտքի բոլոր հոսանքներն ալ կրնան հաւաքաբար դիմադրուել ազգին սպառնացող վտանգը:

*
**

Գէորգ Չաւուշ եւ Ռուբէն 1907էն շփումներ ունեցան քիւրտ պէկերու հետ հայ-քիւրտ մերձեցում մը ստեղծելու համար, յատկապէս Տիգրանակերտի քիւրտ Իպրահիմ Փաշային հետ, նաեւ Փենջանարցայ եւ Սլիվանի կիսանկախ ցեղերուն հետ, նաեւ Սեւերեկի քիւրտներուն հետ... նոյնիսկ Մուսա Պէկի եղբոր Ղասրմ Պէկի հետ... անօգուտ: (էջ 256):

Արամ, Իշխան, Կոմս, Մալխաս, կը փորձեն այլ քիւրտ ցեղերու հետ կապեր հաստատել... արդիւնք՝ ոչինչ:

Գալնակցութիւնը 1897էն ետք զործակցեցաւ Մահմետական Յեղափոխական Շարժումներուն հետ: Իսկ 1907-1914 զործակցեցաւ պաշտօնապէս Իթթիհատի հետ: 1914ին բաժնուեցաւ անկէ՝ էրզրումի Համապումարէն ետք:

Ծ.— Պիտի անդրադառնանք Մ. Վարանդեանի Բ. հատորին մասին յետագայ էջերուն մէջ:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Ա. ԷՐԶՐՈՒՄԻ ԴԵՊՔԸ (1890 ՅՈՒՆԻՍ 20)

Սուլթան Համիտը Հայկական նահանգներուն հայերու թիւը չէ-
զոքացնելու համար, մտածեց Պալքաններէն թուրք զաղթականներ
տեղաւորել հոն:

Հետաքրքրական է 1880ի Օղոստոս 18ին Անգլիոյ փոխ-հիւպատոս Սթիվրտի 240 թուրք զաղթականներու մասին տուած վկայու-
թիւնը: Ան կը գրէ .

«Անոնք ցնցոտիներու մէջ էին, 70 հոգին ջերմախտէ կը տառապէին,
զրկուած՝ մարդկային ամենէն տարրական յարմարութիւններէն: Անոնցմէ 8 հո-
գին մահացեր էին սովէ: Անոր այն հարցումին, թէ «ինչո՞ւ թողած էք ձեր երկիրը
հոս եկած...», անոնք կը պատասխանեն, թէ չէին կրնար սպրիլ քրիստոնեաներու
որպէս հպատակ: Բայց աւելի մանրամասն հարցումին՝ անոնք կը պատասխանեն.
«Մեզ բերած են պետական (օսմանեան) աստիճանաւորները»:

Կ. Պոլսոյ Անգլիոյ դեսպանութեան քարտուղարներէն Ստ.
Ջոնը՝ Պոլսէն քանի մը ժամուան հեռաւորութեան վրայ գտնուող
զաղթականներու կայանը կ'այցելէ. 7000 մահմետական Աճարներ
բերուած էին Վրաստանէն կառավարական նաւերով: Անոնցմէ 1500
մարդ որ 2-5 ամիսէ ի վեր ցամաք հանուած էր, կառավարական ո՛չ
մէկ նպաստ ստացած էր, եւ ոչ ոք չէր մտածեր անոնց մասին: Այդ
խումբէն 211 մարդ մահացած էր տենդէն ու սովէն: Մոլլա մը Ստ.
Ջոնին ցոյց կու տայ կառավարական թուղթը, ուր մէկ տարի զաղ-
թականներուն խոստացուած էր հացով ապահովում, հող՝ ցանկաց-
ուած տարածութիւնով, զործիքներով, երկրագործութեան յարմար
անասուններով: Եւ դեռ մզկիթներ, դպրոցներ, սուսուցիչներ եւ
դրամ:

Փաստօրէն, կը գրէ հայրենի պատմարան Փրոֆ. Ս. Մարկոս-
եան «Անբաւ խոստումներ, իսկ իրականութեանց մէջ, թշուառու-
թիւն»: Անոնց մեծ մասը կ'ուզէր վերադառնալ Աճարիա, սակայն
այդ ալ զործին չէր ծառայեր թուրք կառավարութեան:

Կենսամակարդակէ զրկուած այս դանդուածները Սուլթանը կը
քշէր դէպի Հայկական Յ նահանգները, հայ դիւղերու կից բնակու-

թիւն հաստատելու համար: Հայ դիւղացիները բազմահազար այդ
թուրք զաղթականները պահելու ստիպուած էին:

«Զօրքէ մէջ գրանցուած քիւրտերը ձգուած են իրենց վիճակին իրենց հայ-
րենի վայրերուն մէջ, ազատուած են ծառայելէ, կը մատակարարուին զէնքով,
օժտուած են դեսպանական անձեռնմխելիութեամբ, եւ ապահովուած են ամսակա-
նով... Վեւ Համիտի գունդերը իրենց պաշտօնը կը կատարեն փութաջան ճը-
ղութեամբ՝ կը կողոպտեն հարուստ հայերը, կը քանդեն տունները, կ'այրեն հացն ու
անասնակերը, կ'ոչնչացնեն դիւղերը, կը մորթեն անասունները, կը յափշտակեն
երիտասարդ աղջիկները, կը կոտորեն ամբողջ դիւղեր եւ կը կոտորեն բոլոր ա-
նոնք, որոնք այնքան արիւթիւն կամ անխոհմտութիւն ունին, որ կը փորձեն
ընդդիմանալ անոնց: Այժմ հայերը կը պատկանին երկրագործութիւնի ամենաչափար
եւ ամենաղքատ ժողովուրդներու թուին»:

Այս կարծիքը յայտնուող Իրլանտացի պատմարան իմիլ Տիլմոն
է, մէկը որ աւելի իրատես է դէպքերու քննութեան մէջ քան Լէոն,
Ա. Մակարեանը, Ս. Բարսեղեանը եւ դեռ այն պուրժուայ եւ «չէզոք»
հայ պատմարանները, որոնք շատ լաւ դիտնալով կամ յաճախ ան-
տեղեակ մեր ժողովուրդին սպասնացող մահուան վտանգին, դիւրին
եւ աժան ձեւերով կ'ուզեն մոռնալ Արեւմտահայութեան պայքարի
էտպէս Ազատագրական բնոյթ ունենալու իրողութիւնը եւ հացին իւր
կը քսեն թուրք պատմարաններուն՝ անոնց հետ կրկնելով թութակի
պէս, քանի որ հայերը ապստամբեցան, սուրեմն ջարդուեցան եւ հե-
տեւաբար Հայ Յեղափոխութիւնը պատասխանատու է... Հայոց կո-
տորածին: Ասկէ աւելի սխալ մօտեցում կարելի չէ երեւակայել:

Արեւմտահայ ապստամբական պայքարի կարեւոր զէպքերը
սկսան Էրզրումի 1890ի բախումով:

«Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն,
խումբ խումբ ելան հայոց քաջեր գէնքի շաչիւնէն»:

Թուրքերը կազմակերպեցին այդ: 1890ի Յունիսի սկիզբը թուրք
զաղտնի սպասարկութիւնը իր զործակալներու միջոցաւ տեղեկու-
թիւն կը ստանայ, որ իբր թէ Էրզրումի Սանասարեան դպրոցի Հա-
յոց մայր եկեղեցւոյ ու Առաջնորդարանի մէջ թաքցուած են մեծ
քանակութեամբ հրացան եւ համապատասխան քանակութեամբ փամ-
փուշտ: Դպրոցը, եկեղեցին եւ Առաջնորդարանը ամենախիստ խու-
զարկութեան կ'ենթարկուին: Խուզարկութիւնն իր նպատակին չի
հասնիր, քանի որ նոյնիսկ մէկ հրացան չի՛ դտնուիր: Սակայն թուրք
ոստիկանութեան անպատկառ վերաբերմունքը եկեղեցւոյ եւ հայ
դպրոցի նկատմամբ, խիստ դժգոհութեան տեղի կու տայ եւ կը յու-
զէ հայ ժողովուրդի զաւակները:

Նոյնիսկ Պատրիարք Խորէն Աշըգեան կը ստիպուի, հակառակ
իր Սուլթանին հանդէպ որդեգրած քծնողի դիրքին, բողոքել Էրզրու-
մի եկեղեցւոյ խուզարկութեան դէմ, եւ խնդրադիր կը ներկայացուի
Սուլթանի քարտուղարին, սակայն անհետեւանք կը մնայ:

Տրապիզոնի Հնչակեան վարչութիւնը կը ղեկավարէ ընդդիմութիւնը՝ էրզրումի ղեկավար ընկերներէն Ս. Կերեքցեանի, Յ. Նշկեանի եւ Յ. Իշքարացեանի ղլխաւորութեամբ:

Էրզրումի մէջ եկեղեցւոյ, Առաջնորդարանի եւ հայոց վարժարանի խուզարկութիւնները պատճառ հանդիսացան, որ հայ խանութպաններն ու արհեստաւորները փակ պահէն իրենց խանութները քանի մը օր: Անոնցմէ շատերը կը հաւաքուէին եկեղեցւոյ բակը: Այդ բաւարար էր, որ կառավարութիւնը ատիկա համարէր յեղափոխութիւն: Արդէն յար կը տարածուէր՝ թէ հայերը ապստամբութեան կը պատրաստուին: Առաջնորդարանը զօրքով կը շրջապատուէ, զրգոտած եւ զինուած մահմետական ամբոխը, ծպտեալ զինուորներու առաջնորդութեամբ, հոծ զանդուածով կը շարժի դէպի եկեղեցւոյ բակը: Հայերէն շատերը լսելով այդ, խեղճ կը ցրուին, մնացեալները կը բողբեն, իրենց տարրական համախմբումին դէմ եղած այդ սոնձուութեան դէմ: Այդ ժամանակ զինուորներուն հրաման կը տրուի գէնքի ուժով ցրուել եկեղեցւոյ բակին մէջ մնացած հայերը: Կը յստի տարձանակի կրակոց, սրը զինուորներուն ազդանշան կը ծառայէ սուլիններով յարձակելու հայերու վրայ: Նոյն պահուն վրայ կը հասնի մոլորած խուժանը, կը խռնուի զինուորներուն հետ եւ կը սկսի եկեղեցւոյ բակին մէջ մնացած հայերու ջարդը: Ըստ ուստական ազբիւրներու, հոն սպաննուածներու եւ վիրատուներու թիւը 200ը կ'անցնէր:

Դէպքերու մասին, երբ եւրոպական մամուլը կ'արձագանդէ, Բ. Գուրը կը հարկադրուի իր ղեկավարներու միջոցաւ էրզրումի դէպքը ըստ թրքական պետական շահերուն ներկայացնել:

1890ի Յունիսի 21ի թիւ 89 թրքական ղեկուցադրին մէջ ըսուած է.

«Դէպքերը շարադրուած են խեղաթիւրուած եւ կապակցութեան գուրկ: Բ. Գրան հաղորդումէն յայտնի կը գառնայ, որ տուժած հայերը վիրաւորած ու սպաննած են իրենց ցեղակիցները»: Ահա այս խեղաթիւրուած շրջաբերականն է որ հրապարակուած է մամուլի մէջ եւ աղբիւր ծառայած է էրզրումի այդ շրջանի մեղքը վերագրել «հայ յեղափոխականներուն» եւ լէոն ալ «ի ԵԱՐՍ ԱՅԼԱՅ ՀԱՌԱՏԱՅԱԾ Է ԱՅԴ ՅԵՐԻԻՐԱՆՔՆԵՐՈՒՆ»:

(Տե՛ս, Ս. Մարկոսեանի ղիրքը):

Անդլիոյ հիւպատոսը այս առթիւ կը գրէ.

«Այն քուականի Յունիսի 20ին մահմետականների ամբոխը էրզրումի փոզոցներում յարձակուեց ամպաշտպան հայերի վրայ եւ նրանցից շատերին սպաննեց ու վիրաւորեց, միաժամանակ կոզոպտելով նրանց տներն ու խանութները, բայց մինչեւ այժմ, ինչքան ինձ յայտնի է, ոչ մէկ միջոց չի ձեռնարկուել յանցաւորներին հետապնդելու: «...Միւս կողմից քրիստոնեաներ ձեռքարկուեալ են եմքարկուել եւ երկար ժամանակ պահուում են բանտում, թէպէտ նրանց դէմ ո'չ մի մեղադրանք չի յարուցուել»:

Ռուբէն Սանազատ կը գրէ, էրզրումի դէպքի մասին.

«Ամենից հետաքրքրականն այն է, որ մենք Տրապիզոնում եղածներս (Ա. Հնչ. Կեզր. Վարիչ Մարմինը) այն համոզումն ունեւինք, թէ էրզրումի եւրոպական հիւպատոսներն իսկոյն ահագանգ պիտի հնչեցնեն այդ դէպքերի առթիւ եւ «Հայկական Հարցը» պիտի հրապարակ ցար եւ շուտով իր լուծումը ստանար, իսկ երբ տեղի չուներ, ամենուրեք մեծ հիասթափութիւն յառաջացաւ»:

Ատիկա առաջին ընդդիմութիւնի ազդակն էր էրզրումի մէջ: Մեր ժողովուրդի յուզումին ու անարգարութեան զոհի ճիշն էր, ու որքան ալ ընկ. Ռ. Սանազատը յուսախար եղած էր պահ մը, սակայն այն իրողութիւնը, թէ ամիս մը շանցած 1890ի Յունիս 15ին Պոլսոյ մէջ պիտի կայանար 5000 Հնչակեան, զիւղացի, աշխատաւոր սասունցի, խարբերոցի, մշեցի, պիթլիսցի, տրապիզոնցի, մալաթիացի, էրզրումացի հայորդիներուն ահեղ ցոյցը, կը վկայէ այն մասին, որ լուսթիւնը, վերապահութիւնը, սարկամտութիւնը չէր կրնար առաջնորդ հանդիսանալ, չէ՞ որ յեղափոխականները համոզուած էին թէ՛

«Ամենայն տեղ մահը մի՛ է,
«Մարդ մի անգամ պիտ մեռնի,
«Բայց երանի որ իւր ազգի
«Ազատութեան կը գոհուի...»:

Էրզրումը ազդանշանն էր, մեկնակէտը՝ գրոհելու համար սուլթանական բռնակալութեան դէմ:

Անոր պիտի յաջորդէր 600 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով Գում-Գափուի 5000 հոգիով ցոյցը՝ որուն մաս պիտի կազմէին ո'չ միայն շարքայիներ, այլ նաեւ ղեկավարներ՝ Յ. Ճանկիւլեան, Մուրատ, Ա. Արփիարեան, Լ. Փաշալեան, Գ. Գլըճեան, Ա. Աչըքպաշեան եւ դեռ «Հայրենիք» թերթի շուրջ համախմբուած բազմաթիւ մտաւորականներ եւ գործիչներ՝ որոնք Հնչակեան շունչին տակ իրապաշտ դպրոցը հիմնադրած էին եւ Պոլսոյ, եւ Կովկասի մէջ:

Բ. ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՅՈՅՅԸ (1890 ՅՈՒԼԻՍ 15)

Գում Գափուի ցոյցի մասին մանրամասն գրուած է հայ յեղափոխական գործիչ Վանեցի ընկեր Յ. Ճանկիւլեանի եւ բազմաթիւ ուրիշներու կողմէ: Արփիար Արփիարեանի «Կարմիր ժամուցն» ալ այդ ցոյցի ազդեցութեան տակ երկնուած գործ մըն է, եւ Արփիարեանի յստակ դիրքորոշումը այդ գրքովէն կարելի է հետեւցնել, երբ հայ յեղափոխական շարժումը քննադատող Լէոններու դժին հետեւող Հայրապետ Ամիրան ալ կը ստիպուի — պաշտել էտք Համիտը, երբ վտանգի ահաւորութիւնը կը սպառնայ իր ալ շահերուն — հետեւիլ, համեստ, բայց իր ժողովուրդին իրաւունքները պաշտպանելու կոչուած յեղափոխական Տէր Յուսիկի դժին: Էֆէնտին կարմիր ոսկին կը դնէ անոր ափին՝ որպէսզի «Կարմիր ժամուց» ընէ, այ-

սինքն զհնքի եւ յեղափոխութեան յատկացնէ : Այս առթիւ նոյն ս-
գիտով պանդուխտներու վիշտը կ'երզէր Հրանդ (Մեղքոն Կիրոսեան) ,
նոյն մտահոգութեամբ քերթուածներ, քրոնիկներ կը զրէին կամ
գրութիւններ՝ Մ. Պէշիկթաշեան, Ղ. Աղայեան, Ռաֆֆի, Ք. Քա-
թրպա, Պ. Պոռչեան, Աշուղ Զիւանի, Ատրպետ, Յ. Թումանեան, Ա.
Իսահակեան, Յ. Շահնազար, Տ. Կամսարական, Լ. Փաշալեան եւ
զեռ բազմաթիւ ուրիշներ :

Յոյցը տարերային բնոյթ ստացաւ անոր համար, որ Արեւմը-
տահայաստանի բազմաթիւ շրջաններէն Պատրիարք Աշրղեանի հաս-
նող արդար բողոքները Բ. Դրան չէին հասներ եւ կամ հասնելու պա-
րագային այ, անյսելի կը մնային :

Յոյցը կազմակերպուած էր Տրապիզոնի եւ Պոլսոյ Հնչակեան
Կուսակցութեան Վարիչ Մարմիններու խորհրդակցութեամբ, զլիսա-
ւոր նպատակ ունենալով ցնցել միջազգային հանրային կարծիքը՝
հայոց դէմ կիրարկուող ընկերային եւ տնտեսական Սուլթանի նեւեգ
ծրագրին դէմ, եւ նոյն ատեն հասկցնելու համար մեր ժողովուրդի
պատեհապաշտ, անտարբեր, պահպանողական եւ Սուլթանի հետ ա-
մէն զնով գործակցիլ ուզող տարրերուն, որ միայն ընդվզումի քա-
նապարիով կարելի էր իրաւունքի եւ արդարութիւն ձեռք բերել Թուր-
քիոյ մէջ :

Գում Գափուրի եկեղեցին Պատրիարքարանի կից է, հին եւ
մասնաւոր ճարտարապետական արժանիք մը չունի թէ եւ, բայց հա-
մեատ աշխատանքներու թաղն էր : Մենք հոն այցելեցինք 1962ին՝
Ընկեր Մ. Ալֆէրեանի, Ընկեր Պ. Սիմոնեանի եւ Մ. Գուշազեանի
հետ : Մութ եւ խորհրդաւոր եկեղեցի մը՝ շուրջը տախտակաչէն տը-
նակներ :

Յոյցի կազմակերպումը երկար ժողովներու արդիւնք էր . նա-
խատեսուած էր ճառարարք եւ Պատրիարքը զէպի Բ. Դուռ առաջնոր-
դողը : Անոնք պիտի ըլլային անպուշտական յեղափոխականներ,
Բժշկական Համալսարանի ուսանող Մուրատ Պոյաճեան եւ Յարու-
թիւն Ճանկիւլեան :

Յիւնապետներ եւ տասնպետներ որոշուած էին եւ մարտա-
կան յատուկ ջոկատներ ի հարկին պիտի միջամտէին, եթէ թուրք
նստիկանութիւնը արդեւ չհանդիսանար իսողող ցոյցին :

Յոյցը որոշուած էր Օսմանեան Բանակաւորութեան մայրաբա-
ղաքին մէջ իրադրոճել, ցնցելու համար եւ Սուլթանը եւ Եւրոպա-
յի Վեց պետութիւններու հանրային կարծիքը եւ ինչու չէ, նաեւ
ցոյց տալու համար հողազուրկ, անպաշտպան, մութ անկիւններու եւ
խաներու մէջ Խորբերդը, Մուշը, Վանը, Պիթլիսն ու Տրապիզոնը
երազող հայ պանդուխտներուն, թէ զիրենք ընկերային անարդա-
ւորութեան զոհ դարձնողներուն զէմ կայ ուժ մը, որ կ'ուզէ իրենց
զգացումներուն թարգմանը հանդիսանալ, բռնակալ Մուսա Պէկերուն

չքանչանով վերստին Մուշ ու Պիթլիս զրկուելուն՝ փոխանակ ար-
դար պատիժի արժանանալու : Էրզրումի մէջ անիրաւութեամբ եկե-
ղեցի, գալոց եւ Առաջնորդարան խուզարկելու ուղի թուրք ստիկա-
նութիւնը՝ չէր կրնար ամբողջովին արգարանալ հանրային կարծիքի
առջեւ :

Հակառակ հայ ազատագրական պայքարի զէմ զիրքորոշուող
լէռներու եւ անոր ժառանգորդներուն «իմաստուն» բննադատի փոր-
ձերուն, հայ ազատագրական պայքարի թարգմանները՝ յաջողեցան
5000 հայեր ոտքի հանել եւ առաջնորդել զէպի Բ. Դուռ :

Օսմանեան Կայսրութեան պատմութեան մէջ մինչեւ 1890 քուա-
կանը ո՛չ իսկ քուրքերը համարձակած են այդ տարողութեամբ ցոյց
կազմակերպել : Աշխատաւոր ու գիւղացի այդ ցուցարարները ստի-
պումի տակ չփայտեցին դէպի Բ. Դուռ :

Անոնցմէ մեծ մասը զիտէր թէ ի՞նչ կը նշանակէ Համիտեան
բռնակալ ուժի մը՝ եւ թէ լմբոսներուն եւ պայքարողներուն մասն էր՝
կախազանով սպառնացողը : Սուլթանի հաշտոյն հազարաւոր լրտես-
ներ իրենց տիրու դերը կը կատարէին . . . Իսկ անձնուրաց զեկալար-
ները շատ լաւ զիտէին՝ թէ նուազագոյն պատիժը աքսորն ու կախա-
զանն էր իրենց զէմ եւ այդ զիտակցութեամբ այ ճամբայ ելան, բո-
լորին առջեւ վկայելու որ Խանապատներն ու Ճանկիւլեանները, Մու-
րատներն ու Փիրայները Լոնտոն կամ Փընսել նստած հրահանգներ
չէ որ կ'արձակէին եւ թէ իրենց կեանքի նուիրումին զիտակցութիւնը
ունենալով «Դէպի մահ կամ ազատութիւն» լողունդին կը գիմէին,
հայ ժողովուրդին պատուութեան սիրոյն :

**

1890ի Յուլիս սկիզբն էր այն ազատագրական վսեմ շարժու-
մին՝ որ պիտի տարածուէր Թրքահայաստանի մէջ :

Պատմաբաններ, Ս. Մարկոսեան, Ա. Ոսկերիչեան, Լէօ, ա-
մէն անգամ որ անգրագասնան Արեւմտահայաստանի տնտեսական եւ
ընկերային անտանելի դրութեան՝ նիշդ կերպով կը բնորոշեն մեր
վատ կացութիւնը եւ նիշդ կերպով կը վերլուծեն սուլթանական,
ուսական, փաշայական եւ աշիրէթական դրութեան կեղեքումի,
ննչումի, հալածանքի, հողագործի դարձնելու քաղաքականութիւնը :
Բայց երբ անոնք կը խօսին այդ դրութեան դէմ մարտնչող, իրենց
արիւնը տրամադրող հայ քաղաքական հոսանքներու ցոյցերուն կամ
ազատագրական գետնի վրայ մղած կռիւներուն մասին, հոն գալ-
մանալի կերպով կը դառնան վերապահ, կը մեղադրեն արիւն քա-
փող հայ դիւցազունները, կը խօսին համահայկական ճակատ չկա-
մելու իրր հետեանք մեր կրած կորուստներուն մասին, կամ կը մե-

ղաղրեն Հայ Յեղափոխութիւնը, որ չկրցաւ յաղթանակ ապահովել՝ ընդունալ թուրք-արաբ-չէրքէզ աշխատաւորութեան հետ միասին ճակատ չկազմելուն համար:

Բոլոր հայրենի պատմաբանները այդպէս չեն խորհիր բարե-րախտարար: Մ. Ներսէսեանը, Ա. Մնացականեանը, Զոն Կիրա-կոսեանը, Վ. Պարսամեանը, Ռ. Սահակեանը, Մ. Արեղեանի ինս-տիտուտի գլխաւորտղները՝ Ս. Սարինեանի գլխաւորութեամբ, դրականագէտներ Հրանդ Թամրազեանը, զրոյններուն մեծ մասը, ե-կած են այն ճիշդ կերակացութեան, թէ հայ ժողովուրդի ազատա-գրական պայքարը 1890-1915, տեղին էր, անհրաժեշտութիւն էր, քէկուզ այդ պայքարի ընթացքին քաղաքական սխալներ ալ գոր-ծուած ըլլան:

Անոնք համոզուած են, թէ թուրքերուն քաղաքականութիւնը, մասնաւորաբար ԺԹ. դարու վերջերը «ազամանդը ազամանդով յըղ-կել» այսինքն՝ ամբողջ Արեւելեան նահանգների բնիկ տէրերը հայն ու քիւրտը իրար սննչացնելու մղելով թափուր երկիր ժառանգելն էր եղած, որը յաջողութեամբ պսակուեցաւ ԺԹ. դարու 70ական թը-ւականներէն յետոյ, չէ՞ որ Քէամիլ Փաշան 1876ին դեռ Սուլթանին կը թելադրէր:

«Ամէն գործիք պատրաստ ունիմք՝ քիւրտ, չէրքէզ, կուսակալ, դատաւոր, հարկահամ, ոստիկան, վերջապէս ամէն ինչ... կրօնական պատերազմ կը հրա-պարակենք եւ դիւրին պատերազմ այսպիսի ազգի մը դէմ, որ ո՛չ գէնք ունի, ո՛չ զինուորութիւն եւ ո՛չ պաշտպան... Ընդհակառակը, մենք գէնք ալ ունիմք, զին-ուորութիւն ալ, աշխարհիս ամենամեծ տէրութեանց մէկը եւ ամենէն հարուստը մեզ զինակից է, մեր Ասիական աշխարհին երաշխաւոր: Եւ եթէ այդ հայ ազգը բնաջինջ ըլլայ եւ քիւստոնեայ Եւրոպա կրօնակից մը փնտռէ եւ չգտնէ Տաճկական Ասիոյ մէջ, կը թողու գնեց հանգիստ եւ այն ատեն կը գրադիմք ներքին գործերով եւ բարեկարգութեամբ»:

(Տես «Փորձ» 1879, թիւ 6-8, էջ204-205):

«Կարդացէք ԺԹ. դարի հայ մամուլում երատարակուած նիւթերը եւ դուք յստակ գաղափար կ'ունենաք Արեւմտահայութեան սարսափելի դրութեան մասին, որի մի ջնջիմ մասը յուսաբանուել է մամուլի էջերում», կը գրէ հայրենի պատ-մարան Կ. Ն. Քարամեան, եւ կ'աւելցնէ:—

«Պատահական չէ որ Լեւոնը Համիտը կոչած է. «...ԹՐԳԱԿԱՆ ՆԻԿՈՒԱՅ Բ.»: ... Արեւմտահայ ժողովրդի ազատագրութիւնը կարող էր գալ ցարիզմի եւ սուլթանիզմի տապալումով: Նա (Լեւոնը) ամենամեծ անհեթեթութիւն... էր հա-մարում Թուրքիայի դաժան լծի դէմ ընդվզող մնչուած ժողովուրդների քաղաքա-կան ինքնորոշման եւ անջատման իրաւունքը ուրացողների վարքագիծը», կը գրէ նոյն պատմաբանը՝ «Հայ ժողովուրդի ազատագրական պայ-քարի օրինաչափութեան հարցի շուրջը» հատորին էջ 27ին մէջ:

Սուլթանիզմի դէմ մեր ժողովուրդի ազգային ազատագրական պայքարը ձեւով ազգային ըլլալով հանդերձ, կը հանդիսանար օր-կանական մէկ մասը այն հուսկու պուրժուա-դեմոկրատական շար-ժումներուն, որոնք կը տարածուէին Օսմանեան Թուրքիոյ ողջ հպա-տակ ժողովուրդներուն մէջ:

«Թուրքիայից ազատագրուել փորձող ո՛չ մի ժողովուրդի չի կարելի մեղա-դրել սուլթանների դէմ իր ազատագրական պայքարի որեւէ շրջանի գործերի հա-մար: Թրքական բարբարոսական փետուալիզմը միայն հայերի համար չէր չարիք: Դա համամարդկային չարիք էր»:

«Հայ ժողովուրդի բոլոր խաւերի միացեալ ճակատը կազմելու ցանկութիւնը առաջ էր դրին ցարի համազգային լինելուց: Հայ աստատուէրը, կղերականը, պուրժուան ինչքան էլ հասէր լինէին, նոյնիսկ հէնց այդ հաստիքութիւնից զրոուած, Թրքական դժոխքում պիտի ցանկանային բարբարոս, սննչով վատահա-թիւն ներշնչող թուրքերի գործերի տնօրինութիւնը փոխարինել սեփական տնօրի-նութեամբ, իսկ այդ կարող էր տեղի ունենալ միայն սեփական ժողովուրդի բոլոր խաւերին յենուելով եւ այդ հանգամանքը օգտագործելով իր քննակէտ լծակի այն թեւի համար որը դուրս էր զցելու աստղադիմութեան արդելակը՝ Սուլթանիզմը:

«Բոլոր լըջամիտ եւ իրատես հայերի համար նախքան ազգային ազատա-գրական պայքարի դրական լուծում ստանալը, միջ-դասակարգային հակասու-թիւնները սրելը կը նշանակէր ազատագրական պայքարի մէջ ձեղք բանալ: Ժողո-վրդական իմաստութիւնը պատգամում է. — «Տուն բաժանեալ՝ անկցի»:

Հետեւաբար Փրոֆ. Ս. Մարկոսեանը շարաշար կը սխալի ծաղրական շեշտով «աւանդուրա» երբ կ'որակէ Հնչակեան Գում Գափուրի ցոյցը Թրքական բռնութեան դէմ:

Ան պէտք է պատասխանէ մեզի, եթէ ինք ըլլար Թրքական դժոխքի մէջ ապրողը 90ական թուականներուն եւ եկեղեցին զտնուէր, Յուլիս 15ին պիտի հետեւէ՞ր ձանկիւլեանի եւ Մուրաաի զէպի Նըլլազը բողոքի երթին, թէ ոչ... տուն պիտի վերադառնար... իմաս-տունի խրատներ բաշխելով շուրջիններուն...:

**

Այդ Կիրակին, 15 Յուլիսին, նոր եւ հետեւողական արդար պայքարի իջած կուսակցութեան մը գոյութիւնը կը պատկերէր Թուր-քիոյ մէջ: Այդ ցոյցին բովանդակութիւն տուողը, ինչպէս շեշտե-ցինք նախապէս, Հայկական Յ նահանգներու մէջ գործադրուող կա-մայական ճնշումներն էին, հայ գիւղացիներուն աննշնչի դարձած կեանքին ազգային էր՝ որ կը բարձրանար համեստ եկեղեցիի մը խորանէն՝ Յարութիւն ձանկիւլեանի պահանջադրի ընթերցումով: Ան չի քաշուէր Պատրիարքը ամբաստանելէ որպէս ազգի դուաճան եւ Թրքահայաստանի իր հօտին նկատմամբ անտարբերութեան հա-մար մահուան արժանի: Պատարաւ կ'ընդմիջուի եւ Աշրգեան Պատ-րիարքին երբ կ'ատաջարկուի ժողովուրդին պիտի անցած բողոքի համար զէպի Բ. Գուրբ ճամբայ էլլել, այս վերջինը կը յաջողի Պատրիարքարան ապաստանիլ: Ժողովուրդի գժուհ մասը կը խուժէ Պատրիարքարան Յ. ձանկիւլեանի ատաջողութեամբ եւ կը պա-հանջէ որ Աշրգեանը, իրբեւ ազգին ներկայացուցիչը զինք առաջ-նորդէ զէպի Սուլթանի պալատը՝ իր բողոքը յայտնելով Հայկական Վիլայէթներուն մէջ տեղի ունեցող վայրագութիւններու դէմ: Երբ

Պատրիարքը կը մերժէ, Յ. Ճանկիւլեան ատրճանակով կը սպառնայ անոր, վար կ'առնէ օսմանեան քաւրան եւ կը կոխկռտէ: Պատրիարքը հարկադրուած կ'առաջնորդէ ժողովուրդը, սակայն ճամբան կ'ուշաթափուի: Զինք կառք կը նստեցնեն եւ թափօրը ցուցարարներուն կը ղրմէ գէպի Բ. Դուռը, Եւլալը Բէտօքը:

Այդ օրը Ղուբայան Պայրամի տօնն էր եւ պալատին մէջ կը կատարուէր տօնական արարողութիւն, որուն ընթացքին Սուլթան Համիտը անձամբ պէտք է կտրէր զոհարեցող անասունի գլուխը: Գում Գափուի ցոյցի յարը սրայտ կը հասնի արարողութեան ժամանակ:

Թրքական կառավարութեան համար անմարսելի բան էր «կեանքներու այդ արշաւը», այդպիսի տօնական օր մը: Առանց հարցնելու ցոյցին պատճառը, առանց հետաքրքրուելու նոյնիսկ, որ մեծ մասամբ գիւղացիներէ, մարապաններէ, աշխատաւորներէ, բեռնակիրներէ, թուլումպաճիներէ, մէկ խօսքով պանդուխտներէ բողկացած այդ մարդիկը մահը աչք առնելով ինչո՞ւ կը ղրմէին Սուլթանին... Այս վերջինը կը հրամայէ իրեն հաւատարիմ Տերփիշ փաշային, որպէսզի բոնի միջոցներու ղրմէ, անմիջապէս ջախջախելու համար «խտովարարները» եւ զանոնք պատժելու՝ որպէս պետութեան թշնամիներ:

Մինչ այդ, զինուորներու ջոկատ մը կտրած էր գէպի Եւլալը պալատը յառաջացող ցուցարարներու ճամբան, տեղի ունեցած բողխումի ընթացքին՝ երկուստեք զոհեր եւ վերաւորներ... որոնց մէջ էր Կէմ Ալմապ Մանուկը, անձնուէր հնչակեան շարքայինը:

Զինուորներու բիրերուն եւ սուրին սարսափին առջեւ, ցուցարարներէն մաս մը կը ցրուի: Անմիջապէս անոր կը յաջորդեն ձերբակալութիւններ: Ճանկիւլեան Աբքայի աքսորավայրին մէջ պիտի քաւէր իր «յանդգնութիւնը», Մուրատ փախստական պիտի ապրէր շրջան մը, ուրիշներ՝ Պոլսոյ բանտերուն մէջ պիտի քաւէին «բողոքած» ըլլալու յանցանքը:

Ողբերգութիւնը Լէոյի «աւանտիւրա» որակելը չէ, ողբերգութիւնը հայրենի պատմարաններէն ոմանց, թուրքի շափ այդ ցոյցին հանդէպ որդեկրած ժխտական կեցուածքն է:

Ս. Մարկոսեանը պէտք է գիտնայ, որ այդ Յոյցը իր տարույութեամբ աւելի արժէք կը ներկայացնէր՝ քան նոյնիսկ 1902-1905ի շրջանի Կովկասի մէջ պատահած ցոյցերէն մեծ մասը: Եթէ Կովկասի՝ Պաթում, Պաքո, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Երեւան, տեղի ունեցող ցոյցին հիմնական մտահոյութիւնը ցարիզմը տապալելն էր... եւ որ ձախողեցաւ այդ շրջանին, եւ որուն մասին լորճնաչուրթն փոտարանանք կը լսուի արդարօրէն այդ շրջանի պատմութիւնը գրող պատմարաններուն կողմէ... ապա ինչո՞ւ Նիկոյա Բ.ի աստիճանի բռնակալի մը, սուլթանին գէմ մղուած խաղաղ ցոյց մը «աւանտիւրա» էր:

Զէ՞ որ Պաքուի ցոյցերն ալ արիւնով խեղդուեցան, չէ՞ որ Բանակալներուն դէմ մղուած Ազատագրական Պայքարի իրաւունքը ճանչցուած է բոլորին կողմէ, չէ՞ որ այսօր ալ այդ ազատագրական պայքարներուն շնորհիւ է, որ ժողովուրդները տիրացած են անկախութեան, հաւասարութեան... չէ՞ որ 22 միլիոն սեւերու պայքարը անխմաստ է, երբ նկատի ունենանք Մ. Նահանգներու գերհզօր պետութիւն ըլլալու հանգամանքը, չէ՞ որ Յ. Գասթրօ մը հազար անգամ աւելի տկար էր Մ. Նահանգներէն... չէ՞ որ Վիեթնամի մէջ հարիւր անգամ աւելի զինուորական գետնի վրայ տկար Հիւսիսային Վիեթնամ մը 22 տարի անընդհատ կոխ մղեց, կարենալ իր ժողովուրդին արդար իրաւունքները պաշտպանելու համար:

Ինչո՞ւ պատմարան Ս. Մարկոսեան որ ուսումնասիրած է ԺԹ. դարու մեր կեանքը, կ'անճրկի, կը շփոթի, երբ ի՞ր կողմէ կը գրէ ցոյցին առթիւ.

«Ճողպուրդի դժգոհ մասը յարձակում է պատրիարքարանի վրայ եւ պահանջում է, որ Աշըգեանը, իբր ազգի ներկայացուցիչ, իրեն առաջնորդի դէպի Սուլթանի պալատը՝ իր բողոքը յայտնելու Հայկական վիլայէթներում տեղի ունեցող ՎԱՅՐԱԳՈՒԹԻԻՆՆԵՐԻ ԳԵՄ»:

Ի վերջոյ ինչո՞ւ յանցանք պիտի նկատուի ժողովուրդին անտանելի կացութիւնը պարզելու համար բողոքի ցոյց մը Սուլթանին գէմ...:

Եթէ էրպրումի առաջին առթիւ ցոյցի կազմակերպիչներէն զարցի տեսուչ Գր. Զիլինկիրեանը փախաւ Կովկաս, ցոյցի կազմակերպիչ Հնչակեան ղեկավարներ՝ Յակոբ Իչքալացեան, Խաչ. Կերեկեան, Սահաթճեան եւ Յակոբ Նչիկեան մնացին հոն, պատնէչի վրայ եւ շարունակեցին կազմակերպչական եւ յեղափոխական իրենց գործունէութիւնը:

Հայ բանաստեղծ Ռ. Պատկանեան կը գրէր.
Փշրեցան դուռներն սուրբ տաճարներին,
Նորից խոխոջաց արիւն յարգառատ
Լին քստմենի դարձաւ խեղճ կարին,
Հայ արտասուէի, արեան անարատ...:

Իսկ Սմբատ Շահազիզը պիտի մեղադրէր անտարրեր Եւրոպան որ՝

Լախտեր չափելով կաշեհան մէջքին,
Քաշում են ամապատ անմեղ Յիսուսին...
Ազատ բարբառ՝ գոգ ու աւագակ,
Ազատ է օսման, վճռեց Եւրոպան,
Խեղճեցէ՛ք դրան, ջարդեցէ՛ք կգակ,
Որ այլեւս մեզ բողոք չկարդայ:

Անդրապանալով մեր ժողովուրդի անտանելի դրութեան, բանաստեղծ Ալեքսանդր Մատուրեան «Ես չեմ երգում» բանաստեղծութեան մէջ կը գրէ.

Ես չեմ երգում: Իմ երգերում ցաւատանջ
Այն հարագատ իմ տառապեալ խեղճ եղբայր.
Գու՛մ լո՛ւ՛մ է՛ք խուլ հեծեծանք ու հառաչ
Եւ կարգո՛ւմ է՛ք ազգիս վիշտը դարաւոր:

Ա. Մատուրեանը երբեք նկատի չունէր մեր օրերու կաշաղակներուն «աւանտիւրա» արտայայտութիւնը: Էրզրումի եւ Գում Գափուի, ազատագրական պայքարի մէջ ամբողջութեամբ ինքզինքնին զոհարարողներուն ի նպաստ օգնութեան կոչ ուղղելով — Արեւելեան Հայաստանի իր եղբայրներուն — ան կը ցանկար որ օգնութեան հասնին կոուողներուն: Այդ հերոսներէն էր Դաշնակցական Մարզիս Կուկունեանի հարիւր հոգինոց խումբը՝ որ ցարական զօրքերուն զոհ դարձաւ 1890ին, երբ սահմանէն անցնելու կը փորձէր դէպի Արեւմտահայաստան...:

Լսենք Ա. Մատուրեանը՝

Յառաջ իմ եղբայր... հերիք, որքան՝
Խղճուկ, անճանաչու, ապիկար լացի՝
Ողբացի անլուռ, սրգաւորի նման,
Ուր սպասելով վարդ լուսաբացին,
Յառաջ... քաջաշունչ, յաղթական հոգով
Բա՛ց քեզ ճանապարհ.— վաղ թէ անգամ
Քո հարթած ուղիմ կը ծածկուի ծաղկով.
Այլ ուղի չունի քո յոյս ապագան...:

Անդրադառնալով այդ իրաւ հայրենասիրական տրամադրութիւններուն, հայրենի պատմարան Հ. Գ. Վարդանեան իր «Արեւմտահայերի ազատագրութեան հարցը», 1967ին Երեւան ասորում հատորին էջ 186ին մէջ կը գրէ.—

«Իրենց եղբայրների ապագայի նկատմամբ եղած այս վառ յայտարարութեամբ, ծանր փորձութիւններ յաղթահարելու ճանապարհով, հայ երիտասարդները մեկնում էին կռուի դաշտ եւ մասնակից դառնում Սուլթանական Բոնապարտութեան դէմ ուղղուած Արեւմտահայ հատուածի ազատագրական պայքարին»:

**

1890ի Յուլիս 15ի Գում Գափուի ցոյցին խոչոր անդրադարձ ունեցաւ Եւրոպայի հանրային կարծիքին մօտ:

«Անդրիոյ Գոլոյ դեսպան Սըր Հուայթը իր կառավարութեան կը փոխանցէ 21 Օգոստոս 1890ին Թուրքիոյ Չին. Ատեանի վճիռները ընդգէտ Գոլոպան Գայրա՛մի օրը ցոյց կազմակերպող Հնչակեաններուն, «որոնք հաւաքուելով պատրիարքարանի մէջ՝ կը զործեն ոճրագործ արարքներ՝ մեծ խռովութիւն մը յառաջ բերելով, անտեսելով իրենց հպատակութեան պարտաւորութիւնները: Արթին ճանկիւլեանը, որ առաջին դերակատարը եղած է օսմանեան հպատակներուն մէջ ազատամարտութիւն մը ծագեցնելու ընդդէմ օսմանեան կառավարութեան... մահուան դատապարտուած է»:

Պատմարան Ս. Մարկոսեանի զօրախտարար տարուելով Լէոյի սխալ մեկնարանութիւններէն կ'եղբակացնէ .

«Ահա այս էր Գում Գափուի այն տիրահոչակ (?) յեղափոխութիւնը, որի հետ այնքան վարդագոյն յայտեր էին կապուած հնչակեանները: Մեր կարծիքով դա պարագայէ մի աւանդուրա էր, որ այնքան բանկ նստեց թուրքահայ ժողովուրդին»:

Ապա պատմարանը կը մէջբերէ նաեւ այսօր Հայաստանի մէջ անգամ կշիռ շներկայացնող Լէոյի խօսքը.

«Մի խելագար գիտաւորութիւն, որին, ի հարկէ, ոչ ոք չէր հաւատում եւ ամենից առաջ՝ հենց հայր-ալա սոցիալիստները (իմա հնչակեանները): ... Ի՞նչպէս չասել թէ այս մարդիկ երեխաներ էին. եւ միայն դժբախտ իրակամութիւնն էր կարող այդպիսիներին յանձնել ամբողջ ժողովրդի ճակատագիրը» (?):

(Լէօ «Թրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» հատոր Ա., էջ 174—175):

Մենք պիտի չվիճինք այդ մասին: Բայց գիտենք, թէ աւանտիւրա չկայ, այլ կան աւանտիւրիստ պատմարաններ, որոնք զըժբախտարար զանազան հաշիւներով, հայ ազգային ազատագրական պայքարի կենսական անհրաժեշտութիւնը շեշտելէ, հայ ժողովուրդին ահաւոր դրութիւնը փաստելէ Լաք հարիւրաւոր օտար ազդիւրներու դնահատմամբ, կը ժխտեն այդ ազատագրական պայքարը զեկալվարող, կռիւներուն առաջին շարքին վրայ մարտնչողները...:

Ի՞նչ կը գրէ «Հնչակ»ը.—

«Թուրքիոյ բաժանման խնդիրը նորից երեւան եկաւ: Ամէն ճիգ, ամէն ջանք գործ դրուած՝ սարսփած թուրք կառավարութեան ու նրա կեղտոտ մամուլի կողմից Եւրոպայի այժմ աննշան դարձնելու Յուլիս 15ը: Ապարդիւն անցաւ... Թուրքիոյ բազմաւեր մերկ մարմինը կրկին ընդհանուրի քննութեան ենթարկուեց, ամէնքը տեսան, որ Թուրքիան երկուսի մէջ է, նրան դեռ սարսիկ մնացած օտար ազգութիւնների ազատութիւնը ծնուելու վրայ է, գնովը նրա՝ Թուրքիայի սեփական մահի»:

Լէոն փոխանակ Հայ Դատի լուծման համար մարտնչող Յուլիս 15ի Գում Գափուի ցոյցին կազմակերպիչներէն Մարո Նազարբէկը, Գ. Աչըքպաշեանը, Գր. Գլըճեանը, Յ. Գազանճեանը, Մուրատն ու Յ. Ճանկիւլեանը, Արփիարեանն ու Լեւոն Փաշալեանը զընահատելու, (որոնք կ'ուզէին Եւրոպայի հանրային կարծիքը ցնցել ի նպաստ հայ տառապանքին), ցոյցը «ռումանդիկ զառանցանք» կ'որակէ եւ զայն հայկական ջարդերու սկիզբը դնող կը դաւանի...:

Լէոն աւելի վատ վերաբերմունք ունի վրդին եաթաղան զըրուած մարդոց արդար ընսվողումին դէմ՝ քան 1908—1909ին այդ յեղափոխականները բանտէն ազատող Երիտ. Թուրքերը:

1890ին Սերաստիոյ վային կը զեկուցէր, թէ «Իր բանտերուն մէջ տեղ չմնաց...» իսկ Նոյ. Տին թիւ 154 զեկուցին մէջ, ուստի դնահատիտական ներկայացուցիչը կը յայտնէր, թէ «Հայ գիւղացիու-

քեան դուրսիւնը այդ ժամանակի ընթացքին իսկապէս զգալիօրէն փոխուել է դէպի վատը ու հիւպատոսարանները դեռսպանատուն են ներկայացնում քուրքերի եւ քրտերի կողմից կատարուող սպանու- յիւններին, կողոպուտներին եւ բռնութիւններին երկար ցուցակներ...»:

Գում Գափուի ցոյցը հետեւանքն էր շարադործութիւններու եւ կեղեքումի, որոնք 1878էն սողին կը շատնային անհամեմատօրէն:

Պատմարան Համօ Վարդանեան իրաւունք ունի նշելու. «ԱՅՍ- ՊԻՍՈՎ ԲՈՂՈՐՈՎԻՆ ԱՐԴԱՐԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱՂԱՂ ՅՈՅՅԻ (ընդզժ. Հ. Գ.) ԴԻՄԱՍ ՀԱՅԵՐԻ ՇԱՐՔԵՐԸ ԳՆԴԱԿՈՍՈՒԵՑԻՆ, իսկ մեծ տէրութիւնները դեռսպանները իրենց անտարբերութեամբ քաջալերում էին Սուլթանին եւ հայկական կոտորածները համարում նրա ներքին գործը»:

(Տես՝ «Արեւմտահայերի Ազատագրական Հարցը» զիւրքը, էջ 187):

Իսկ ինչո՞ւ պատմարան Ս. Մարկոսեան, խօսելէ Լուր «աւան- տիւրաք» մասին, իր գրքին յաջորդ էջին մէջ կը գրէ.

«Դեռ 1880-ական թուականների վերջերից, Էրր Թուրքիան համոզուել էր, որ հայկական հարցին տէրութիւնների միջամտութիւնը լոկ երկրեսանի շարժ- ւած ցուցադրութենէն այն կողմը անցնելու նպատակ չունի, այլ շարարաստիկ հարցը վերջնականապէս վերացնելու համար, ԴԻՄՈՒՄ է ՀԱՅԵՐԻ ՏՈԿՈՍԸ ՀԱ- ՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՋԵՑՆԵԼՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ: Միւս կողմից, Ռուսաստանի սահմանադիրն յուսալի յենարան ունենալու համար Թուրքիան ան- հրաժեշտ էր համարում ԱՅԴՏԵՂ ՍՏԵՂՄԵԼ ՀՈՍ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Քիւրա տարրը, իր ռազմատենչ բնազդներով, հէնց անդիւական դիւանադիտութեան յոր- դորանքներով շատ յարմար նիւթ էր համարում ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻՆ, ԾԱՌԱՅԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»:

«... ՀԱՄԻՏԻԷ ԳՆԴԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԻ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՈՒՀԱՍ ԷՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԳԼԽԻՆ», կը գրէ Ս. Մարկոսեան, առանց անդրադառնալու, որ այդ պատուհասներուն դէմ է որ կ'ընդ- վըզեր հայ ժողովուրդը, առանց անդրադառնալու, թէ խօսիլ ա- գատագրական պայքարի մասին, եւ չխօսիլ Գում Գափուի, Սասնոյ եւ Զէյթունի հերոսական դիմադրութեանց մասին, իմաստէ զուրկ բառ կը դարձնէ այդ պայքարը...:

Ինչպէս կարելի է անտեսել քիւրտերուն եւ թուրքերուն վատ ընթացքը, որուն մասին օտար աղբիւրներէ վկայութիւններ կը բերէ պատմարանը, առանց սակայն ըմբոստութեան դիմելու կենսական նշանակաւոր անհրաժեշտ նկատելու:

Ան կը մէջըրէ Տիւնի վկայութիւնը

«Ոչնչացման այդ բացայայտ քաղաքականութիւնը ճշորէն իրագործուելու էր եւ զգալիօրէն ընդլայնուեց այդ ժամանակին, եւ եթէ դրան շուտով վերջ չտրուի, ապա անտարակոյս կը հասցնի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՈՒԾ- ՄԱՆԸ, (այսինքն՝ հայերի ոչնչացման — Ս. Մարկոսեան), բայց այդ լուծումը խայտառակութիւն կը լինի Քրիստոնէութեան համար եւ նոյնպիսի ծագումով՝ քա- ղաքակրթութեան նկատմամբ»:

էրզրումի անդիւական հիւպատոսը կը հաղորդէ, թէ Համիտի գունդերը ա- ու սարսափով կը դիտուին հայերու կողմէ, չէ՞ որ քիւրտերը բացէն կը յայտարա- րեն, որ «Էրր քէ իրենց նշանակուած են հայերին սամահարելու համար եւ իբր քէ իրենց երաշխարարութիւն են ստացել, որ դատական պատասխանատութեան չեն ենթարկուելու Քրիստոնէաների նկատմամբ ճշուններ գործադրելու համար:

Իսկ հայերը... Նոյն գեկոյցին համեմատ «չայտարարում են, որ մտա- դիր են նախապահները բացուելուց յետոյ հեռանալ քաղաքից»:

Այսքան տրամաբանական վկայութիւններէ Լուր, որեւէ պատ- մարան պիտի հարց տար «աւանտիւրաք» որակելէ առաջ Գում Գա- փուի ցոյցը, թէ արդեօ՞ք ուրիշ էլ մ ունէր մեր ժողովուրդը իր դէմ կիրարկուող խոշտանգումի առաջը առնելու համար...: Արդեօ՞ք 50 հազարնոց Համիտի գունդերը, քիւրտերու 1876ի Ազրակի գաղտ- նի ժողովը, քրքական ճնշումին ահաւորութիւնը պէտք է վերագրել մէկ օր տեւած ցոյցի մը...:

Մենք կ'ըսենք. կարելի չէր լոկ բռնակալին անմարդկային վերաբերմունքին դէմ, եւ կամ դիւանագիտութիւն փորձելով ծա- փահարել մեր ժողովուրդին ամբողջական ջարդը:

**

Բայց լսենք այս առթիւ հայրենի զրոյններու վկայութիւննե- րը՝ առանց մեկնարանութեան:

Գրողատ Հր. Թամրազեանի տեսակէտը

«Բայց այդ դէպքում, այնուամենայնիւ, ինչո՞ւ 20-ական թուականներն եւ մինչեւ անգամ այսօր այդ շարժման բովանդակութեան եւ ուղիների, առաւելա- պէս այդ շարժման ղեկավար ուժերի մասին գոյութիւն ունի ծայրայեղ սուրբեկ- տիւ, ո՛չ պատմական վերաբերմունք: Խնդիրն այն է, որ մեր պատմարաններն ու դրական մարդիկ յաճախ անտեսում են ազգային ու միջազգային կեանքի մի շարք շօշափելի պայմաններ եւ ընդհանուր դիժ են անցկացնում Արեւմտեան Հայաս- տանի եւ Ռուսահայաստանի, կիսաֆէոտալական Թուրքիայի եւ յեղափոխական իրավիճակի մէջ գտնուող Ռուսիայի միջև: Արեւմտեան Հայաստանը, ուր բը- նակում էր հայ ժողովուրդի մեծ մասը, գտնուում էր տնտեսական-քաղաքական ամենածանր պայմանների մէջ, տնտեսական, քաղաքական, կրօնական եւ դանազան այլ պատճառներով Թուրքիայում վտանգի տակ էր գրուած հայ ժողովուրդի փոխ- փակման գոյութիւնը, ըստ որում՝ ինչպէս փորձը ցոյց տուեց, դա վերաբերում էր ո՛չ միայն աշխատուոր ժողովրդին, այլ բուն սոցիոթեանը՝ բոլոր սոցիալական շերտերով եւ խաւերով: Անշուշտ այդ վտանգը տարածուած էր նաեւ միւս փոքր ազգերի վրայ, բայց առաւելապէս մեծ էր վտանգը հայ ժողովրդի եւ յոյների վրայ, քանի որ նրանք քանակապէս, հողամասերով, տնտեսապէս եւ կուլտուրա- պէս առաւել ամբողջական, ուժեղ միաբերներ էին... Ռուսահայաստանում սո- ցիալ-քաղաքական հարցը՝ կապուած համառուտական դեմոկրատիայի ընդհանուր պայքարի հետ, ազգային ազատագրական պայքարը գուտ հայկական բնուորու- թիւն չունէր, այլ միանում էր ընդհանուր շարժման հետ: Հետեւաբար հայ ազգա- յին-ազատագրական շարժումները պէտք է գնահատել ո՛չ միայն ռուսական յեղա- փոխութեան դիրքերից, այլ նաեւ քրքական բռնակալութեան դէմ մղուող պայ-

ֆարի տեսանկյունից, հետևաբար նոյն չափն ու կշիռը ամէն անգամ մեզ կը տանին դէպի մեխանիկական, հակապատմական մտեցում...:

«Բնականաբար, Արևմտեան Հայաստանի ազատութիւնը պէտք է զիտուէր թուրքիոյ ժողովուրդներու ընդհանուր ազատագրական հիմքի վրայ, չկար այդ պայքարի համար ամուր հող, չկար ընդհանրութիւն անոնց միջեւ... Թուրքիոյ ժողովուրդները ցրուած էին, ցեղերու, կրօններու բախումը, սոցիալական գիտակցութեան պակասը: Այսպիսով յեղափոխական վիճակ ժԹ. դարու վերջը եւ 20-րդ դարու սկիզբը դեռ չկար եւ երկար ժամանակ ալ չեղաւ:

«... 20-րդ դարի սկիզբը Թուրքիայում ասպարէզ եկան թրքական նոր պուրժուազիայի ներկայացուցիչները: Բայց նրանց օրով ոչնչով չփոխուեց փոքր ազգերի վիճակը, քանի որ Երիտ. Թուրքիան արտայայտում էին քրիստոնէական պուրժուազիայի ամենամոլի մացիոնալիստական տրամադրութիւնները: Աւելին... Ներանք ժառանգելով Սուլթան Համիտի քաղաքականութիւնը, առաւել գիտակցուած, կազմակերպուած ու խարդախ ձեւերով էին ձգտում խեղդել ժողովրդներին...:

«Այս պայմաններում, բնականաբար, բնաջնջուող ժողովուրդը պէտք է եւթ փնտուէր: ՆԱ ՁԷՐ ԿԱՐՈՂ ՍՊԱՍԵԼ... ՍՊԱՍՈՒՄԸ ԿԱՐՈՂ ԷՐ ՀԱՒԱՍԱՐՈՒՅԵԼ ԻՆՔՆԱՊԱՆՈՒԹԵԱՆ...:

«... Ժողովուրդին չես կարող թելադրել՝ թէ մի՛ աշխատիր, մի՛ մտածիր, գերադասիր ստրուկի վիճակը եւ վերադարձիր դարերի խաւարը, քանի որ այսպէս միայն կարող ես ժամանակաւորապէս պահպանել ֆիզիքական գոյութիւնդ: Ժողովուրդը մաքառում էր իր գոյութեան համար, ծայր էր առել մի շարժում, որը բնականաբար, ինչպէս ամէնուր տուեալ պայմանների մէջ, ղեկավարում էին ո՛չ թէ մարքսիստները, այլ պուրժուա-նացիոնալիստական կուսակցութիւնները: Այդ կուսակցութիւնները չէին կարող աւելի խելոք լինել քան հնարաւոր էր, քան մտնում դէպքերում լինում են բոլոր պուրժուա-նացիոնալիստական կուսակցութիւնները՝ բոլոր փոքր ժողովրդների մէջ:

«Այդ կուսակցութիւնները չէին կարող փրկել ժողովուրդին ո՛չ միայն այն պատճառով, որ չէին վարում զգաստ քաղաքականութիւն, ՓՈՐՁԸ ՑՈՑՑ ԵՍ ԱՍԻՍ, որ ո՛չ մի փոքր ժողովուրդ էրքե՛ք չի կարողացել ազատագրուել բռնակալութեան ճիրաններից՝ առանց դրսի օգնութեան, արտաքին ու ներքին նպաստաւոր պայմանների: Գտնուելով երկու հօր տէրութիւնների արանքում, բնաջնջուելով աջից եւ խարուելով ձախից, այնուամենայնիւ, այդ ժողովուրդը յուսահատ թիգեր էր անում արեւի տակ իր տեղը պահելու համար: Ազգային կուսակցութիւնները ձգտում են գտնել որեւէ յենարան դրսում, քանի որ բուն ժողովուրդը միայնակ ի վիճակի չէր նուճել իր ազատութիւնը: Բնական էր նրանց միամիտ պատրանքները եւրոպական տէրութիւնների մեծահոգութեան նկատմամբ, բնական էր փորձը՝ լեզու գտնելու Երիտ. Թուրքերի հետ, առաւել բնական էր նրանց յոյսերը՝ կապուած Ռուսաստանի հետ, քանի որ ժողովուրդը ներքինապէս իրեն հարազատ էր զգում քրիստոնեայ Ռուսիային եւ նրա ժողովուրդին»:

(«Գրական Ուղիներում», 1962, Երևան, էջ 209-211)

Ուրիշ վկայութիւններ:

«Ազգային հարցում եւս Երիտ-Թրքական կառավարութիւնը ընթանում էր Ապտիւլ Համիտի շովինիստական քաղաքականութեան տրորուած ճանապարհով եւ ձգտում էր բռնի կերպով քրիստոնէական Օսմանեան կայսրութեան այլազգի բոլոր ժողովուրդներին: Երիտ. Թուրքերը տե՛սակո՛թիկ կերպով կը պնդէին, թէ իր երկրում բացի Օսմանեան ազգից, ուրիշ ազգութիւններ չկան: Դրանով Երիտ. Թուրքերի ափսոսալիտորները ցանկանում էին ոչ-թուրք ժողովուրդներին ստիպել հաշտուե-

լու իրենց իրաւազուրկ վիճակի հետ, ձգտում էին բոնի միջոցներով կուսեցնել տարբերի, հայերի, Գալլեանեան թրքալզու սլաւական ժողովուրդների, յոյների, ալպանացիների ու քրտերի ազգային ազատագրական շարժումը»:

(Տե՛ս՝ «Թուրքիան եւ նրա մուսուլմանական ֆաղափականութիւնը անդրկովկասում», Երևան, 1964):

ՓՐՈՑ. ԵՐՈՒԱՆԻ Ղ. ԱԱՐԳՍԵԱՆ

«Երիտ. Թուրքերը որ «ազգային հարցերը վճռում են բոլոր ազգութիւնների ֆիզիքական բնաջնջմամբ՝ բացի Թուրքերից եւ նրանցից, ովքեր անմիջապէս կը համաձայնուէին Թուրք դառնալու»:

Ե. ՏԱՐԷԷ

Գ.— ԳԱՂԱՏԻՈՑ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հնչակեան ծրարին մէջ ոչ մէկ ատելութիւն գոյութիւն ունէր աշխատաւոր Թուրք, քիւրտ, չէրքէզ ժողովուրդին դէմ, հակառակ անոր որ քիւրտ չէյիները, Թուրք աղալայնամուլ զիւլացիները, չէրքէզներն ու լազերը, միշտ ալ խաղալիքն էին դարձած տիրապետող սուլթանական ռեժիմին եւ դժբախտաբար, ո՛չ միայն չէին միանար բռնակալը դահձին վար առնել ուղող բոլոր աշխատաւորներուն իրաւունքին համար մարտնչող յեղափոխական ուժերուն, այլ ընդհակառակը, չքանչաններէ եւ նիւթական նուէրներէ շլացած, կը կոտորէին հայ անղէն զիւլացիները եւ շատ անգամ դէն ի ձեռին կը կոռուէին ինքնապաշտպանութիւն կազմակերպող հայ յեղափոխականներուն դէմ:

1890ին դաշնակցական Սարգիս Կուկունեանի խումբին, Խանի խումբին, հնչակեան Բարդէն խմբապետին Սասուն 1904ին օդնութեան հասնող խումբին, Սասնոյ 1894ի Հնչակեան ապստամբութեան, Ձէյթունի 1895-1896ի ապստամբութեան ընթացքին, Ատանայի կոտորածին եւ 1915ի Եգեռնի չըջանին, Թուրքերը, չէրքէզներն ու քիւրտները կրօնամոլութենէ տարուած, միշտ ալ սոսանց խորքը թափանցելու մեր արդարութեան համար մղուող պայքարներուն, գործիք դարձան նախ Սուլթանի, ապա Իթթիհատի ձեռքին եւ այդ ձեւով ուշացուցին Սուլթանի բռնակալութեան տապալման ժամանակը եւ հաւաքաբար արդարութեան ի նպաստ տարուելիք յաղթանակի մը իրականացման ուշացումին պատճառ եղան: Ազգամիջեան բախումներուն առաջը առնել փորձող հայ յեղափոխականները՝ (Ժիրայր, Ռշտունի, Ձէյլօ, Մինաս-Օղլու, Փարամազ) մնացին լքուած եւ բնական է որ գտնուեցան աղալայնական հայեր ալ՝ որոնք ստիպուեցան երբեմն ոչ-յեղափոխականի վայել ընթացքներու մէջ գտնուիլ եւ փոխադարձութեանց դիմել:

1893ին Չէլլօ եւ իր 50 Հնչակեան ընկերները, Սուլթանի տապալումը պահանջող թուրքիկներ ցրուած ըլլալուն համար կեսաբիոյ մէջ կը ձերբակալուին եւ Անգարա կը զրկուին: Անգարայի բանտէն զրկուած նամակին մէջ Թորոս Ծառուկեան (Չէլլօ) կը գրէ իր ընկերներուն.

«Հիմա կեանքիս վերջին ժամերը կը մտնան, կը վստահեցնեմ ձեզ որ պաշարիւն կերպով կը դիտեմ այս վայրէջումը, սա գարմանայի չէ, արդէն հաշուի մէջ էր ինձ եւ իմ ընկերներուս համար: Բայց ես աւելի գործելու փառք կ'ուզէի ժառանգել, էիջ գործեցի, ահա միակ ցաւս: Ժողովուրդին ծառայելու ցերմ փափակներս չի յագեցան: Ցաւս թող մարի շունչիս հետ, փափակներս կը կտակեմ ընկերներուս: Ներկայիմ վրայ չեմ խորհիր... կը տեսնեմ իմ բազմաթիւ սիրական հայ գիւղացիներս, որոնց օգտակար ըլլալու համար սրտանց ուրախ եմ: Գիտեմ, ազգային յոյսերս պիտի կատարուին անշուշտ: Կախազանիս տակէն կարծես աւելի պարզ կը տեսնեմ մեր ցանկացած առաւօտեան արշալոյսը. այն համագումար ալ միշտ պիտի մնայ, որ նահատակներու արիւնով միայն հայ ժողովուրդը կրնայ ունենալ մեր բախտաւոր կեանք մը: Այդ կեանքին համար որքան արիւն թափուի՝ էիջ է: Մեր ուզածները օր մը անպատճառ պիտի իրականանան, ժողովուրդը մզուած իր թշուառութենէն պիտի շարժի միշտ. մինչեւ որ մեր կեանք մը ձեռք բերէ, միայն թէ անոր արդար, խելացի առաջորդներ պետք են, այդ ալ դուք պիտի ըլլաք միշտ: Մի մտնաք ձեր Թորոսի այդ կտակը:

Կիւլպէնկը կ'ըսէ. «Ա՛յ իմ սիրելիս, խեղճ հայ ժողովուրդ. եթէ տապը կեանք ունենայի, տասն ալ կու տայի քեզի համար»:

Չէլլօ կ'ըզրակացնէ. «Բազալեյեցէ՛ք իմ սիրական գիւղացիներս, ըսէ՛ք անոնց, թէ Թորոսները կրնան մեռնիլ ու պէտք է որ մեռնին, բայց անմահ են լուսաւոր գաղափարները, հաւատք գոյացուցէ՛ք մեր արդար դատի յաղթանակին մասին: Կրճիս վրայ կը սեղմեմ բոլոր պաշտելի հայ գործիչները, թող երբեք չթուլան եւ միշտ բարձր պահեն յեղափոխութեան Դրօշը-Հնչակեան Դրօշը: Կորուստով պիտի շահինք»:

ԳԱՂԱՏԻՈՅ ԲԱՆՏ

ԹՈՐՈՍ

1893ին, 6 ամիս բանտային ահուկ շարժարաններէ ետք, Յուսիսին կը սկսի դատը:

Հոս կու տանք Հնչակեան ուսուցիչ էֆֆերէյցի 24 տարեկան Մարտիրոս Ճիւանեանի պաշտպանողականը՝ որ մեծապէս կը տպաւորէ հիւպատոսական թարգմանները:

«Քննութեան մէջ արդիւնքը պատճառէն կախում ունենալուն պէս, կ'ըսէ ան, քաղաքական գործերուն մէջ եւս դէպքերու պատճառներ կան, որոնք հասկընալու համար անոնց մասին ընդարձակ ծանօթութիւն ունենալ հարկաւոր է...»:

«Երկիրը կորստեան անդունդին եզրին տանող Սուլթանին ռեժիմը միայն հայերս չէ որ կը գգամք, ԹՈՒՐԿ ԱՇԽԱՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԻՒՆՆ ԱՂ ՄԵՋ ՆՄԱՆ ԿՈՒՂԱՆ, ՍԱԿԱՅՆ ԼՈՒՒ ԵՆ, ՔԱՋՈՒԹԻՒՆ ԶՈՒՆՆ ՄԵՋ ՆՄԱՆ ԲՈՂՈՔԵԼՈՒՆ:

«Ներկայ դուրսեան բարեկարգութիւնը, գեղձումներով, ազատ դասակարգը կողոպտելով, ժողովուրդի իրաւունքները յափշտակելով... պաշտօնեաներու եւ հարուստներու գործին չի գար, հետեւաբար՝ արդարութեան վերահաստատման համար աշխատող եւ հայրենիքի ստնակոյս եղած պատիւը անհամբար պաշտպանող հայերը ջնջելու վատ դիտաւորութիւնով եւ գազափարներով ներշնչուած են»:

Գաղափարային դատաւարութեան գլխաւոր հերոսներէն էր ընկ. Անտոն Ռշտունի՝ 45 տարեկան պոլսեցի, որ Փոքր Հայքի շրջանի գաղափարական անմահ վերափոխականն էր՝ Ծմաւոն Կաֆեանի, Ժիրայրի հետ եւ որուն դատաւարութեան ընթացքին արտասանած ճառը հոյակապ մէկ վկայութիւնն է Հնչակեան ծրագրին՝ թուրքին, քիւրտին եւ հայուն բերելիք ազատութեան, կոչ մըն է բռնակալութեան դէմ հաւաքարար պայքարելու: (Տես՝ «Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան պատմութիւն» Ա. հատոր, Պէյրութ):

Հայ Ֆետայիները ցեղամոլութեամբ չէին առաջնորդուել: Թորոս Ծառուկեաններն (Չէլլօ), Կարապետ Թումանեանները, Յովհաննէս Գալսեանները, Մարտիրոս Ճիւանեանները, Դանիէլ Վարդապետները, Կիւլպէնկներն ու անոնց ընկերները կախազաններուն կամ զնաաններուն մէջ հարազատ թարգմանները հանդիսացան մեր ժողովուրդի ծոցէն ծնունդ առած ազատագրական պայքարի այդ շրջանին առանձին մղող Հնչակեան ծրագրին, զարմացնելով բոլոր թուրք պետական մարդիկը: Ներքնապէս թուրք գիւղացիին համակրանքը չահեցան անոնք եւ պատրաստեցին մթնոլորտը, որով թուրք մտաւորականները եւս սկսան աստիճանաբար համոզում գոյացնել, թէ Սուլթանի տապալումը անհրաժեշտ միջոցառում մըն էր տարրական իրաւունքներ ձեռք ձգելու համար: 1893-1894ի կախազանները, Չէլլոսները, Կիւլպէնկներն ու Մուրաթները 1908ին սղջունեցին Սուլթանի Համիտի բռնակալութեան տապալումը եւ Սահմանադրութեան հռչակումը երլորդի պալատէն ներս:

Կրկնեք Հնչակեան ձիւանեանի խօսքը.—

«Երկիրն կորստեան անդունդին եզրին, Սուլթանին ռեժիմը միայն հայերս չէ որ կը գգամք, թուրք աշխատաւորութիւնն ու գիւղացիութիւնն ալ մեզ նման կուլան, սակայն լուս են, քաջութիւն չունին մեզ նման բողոքելու»:

Ասկէ լաւ վկայութիւն չկայ, կը կարծենք, ցոյց տալու համար, որ մեր ազատագրական պայքարը կը ձգտէր հաւաքական (Թուրք, հայ, քիւրտ, արաբ) միասնական ճիւղերով տապալելու Օսմանեան դահուլն վրայ բազմած Սուլթանի Համիտի ռեժիմը եւ... ափսոս սակայն, որ հայը, այս պարագային հայ յեղափոխութիւնը կը մնար առանձին...: Այդ մտեցումը՝ 1970ի շրջանին միայն թուրքերոյ մէջ ազատագրական պայքար մղող ուսանողները եւ Իշի բարթիի անդամները, իւրացուցած են միայն: Ափսո՛ս:

Ինչպէ՛ս չյուզուիլ կախազան բարձրանալէ առաջ Թորոս Ծառուկեանի նամակին հետեւեալ տողերը կարդալով.

«... Հարուածներէ եւ կորուստներէ մի՛ վհատիք, այս՝ ցաւերուն սկիզբն է, կռիւներ, արիւն, այս է ազատութեան ճամբան: Բնաւ մի թուրնաք, փրկութեան օրը մօտ է, եթէ անօղնական չմնան գործիչները: Հայուն ազատութիւնը հայը պիտի իրականացնէ, մտրալը օգուտ չունի, միշտ պիտի խաբեն ձեզ: Շուտ պիտի հասնի ցանկալի օրը: Շատ ուժ պէտք է տալ ասպատակներու կազմակերպութեան, ատոմք հրաշքներ կրնան գործել: Շատ գործեցէք, ազէկ գործեցէք, միասին գործեցէք: Թուրք բռնակալի ապականած կառավարութիւնը միշտ առիթներ պիտի տայ ժողովուրդը կատղեցնելու, այդ կատարութեանէն միշտ պէտք է օգտուիլ: Մերտ տուէք, պատրաստեցէք ժողովուրդը... ԶԳՈՒՇԱՑԷՔ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԻՐԱՐՈՒ ԴԷՄ ԳՐԳՈՆԷԼԷ, ՄԵՐ ԴԱՏԸ ԱՆԻՐԱՒ, ԲՈՆԱԿԱԼ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ Է, որ կառավարութիւն չէ, այլ հրէշայիմ մի ճիւղ, որ իր հոտած գոյութիւնը պահպանելու համար իր ԲՈՒՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԱՐԻՒՆԸ ԿԸ ԾԾԷ: Ապագան երկու թուրք ունի, մին պիտի թքնէ այս անարգ կառավարութեան աղտոտ գոյութեան վրայ, միւսը պիտի թքնէ մեր ներքին եւ եՒՐՈՊԱՑԻ ԹՇՆԱՄՈՒՆԵՐՈՒՆ ԵՐԵՍԸ, իսկ մեր քշուառ սիրելի ժողովուրդին կը մնայ փառաւոր յաղթանակը, եթէ գիտնայ առանց յուսահատելու առաջ ընթանալ այս փշոտ ու արիւնալի ճամապարհէն»:

«Կեցցէ Հայաստան...»:

Գազատիոյ (Անգարա) բանս

17 Յուլիս 1893

ՁԵՐԴ՝ ԹՈՐՈՍ

**

Գազատիոյ դատարանին 41 ձերբակալուած Հնչակեան յեղափոխականներուն դէմ տրուած միջոց ծանր էր անշուշտ: 17 մահուան, 6 հողի՝ 15 տարի բերդարգելութեան, 8 հողի՝ 10-ական տարի բանտարկութեան դատապարտուած էին:

Ցոյց տալու համար ստոնց դասակարգային դիմագրիծը, ըսենք թէ 41 դատապարտուածներուն մէջ էին՝ 9 ուսուցիչներ, 5 վաճառականներ, 6 խանութպաններ, 14 արհեստաւոր, 1 տանտիրիկին, 1 սպասաւոր, 1 քարոզիչ, 1 գործիչ, 1 վանահայր, եւայլն:

Ասիկա ցոյց կու տայ որ ազատագրական պայքարի սկզբնական շրջանին, հայ վաճառական եւ խանութպան տարրերն ալ, որոնք ուրիշ պայմաններու մէջ պուրժուազիայի կողքին կրնային զտնուիլ, տիրող պայմաններէն իսկապէս դժգոհ՝ չէին քաշուեր իրենց կեանքը զոհելու դնով՝ մաս կազմել քաղաքական կուսակցութեան մը, անտեսելով անոր ընկերվարական եւ դասակարգային դիմագրիծը:

Զէլլօներն ու Մինաս Օղլուները ժողովուրդին զրկէն ծնունդ առած, անոնց հետ տառապած, անոնց անմիջական օղնութեան ձեռք երկարելու համար Փետայական գործունէութեան ծաւալած մարդիկ էին: Կը զարնէին ոստիկանապետներուն, Համիտի հայ թէ թուրք գործակալներուն, փոստաներուն:

Մեքալիկի տեղ ոսկիներ բաժնող՝

Աստուծոյ առիծը՝ դուն ես քաջ Զէլլօ:

Կ'երգէր ժողովուրդը, ազնիւ ու արդար այս մարդոց կեանքը:

Անոնց գործունէութեան ամբողջ տեւողութեան, մենք չենք հանդիպիր թուրք զիւղացիին կուրծքն ի վեր մաւզեր պարպող դէպքերուն: Հակառակ անոր, որ կը մատնուէին ալ թուրք զիւղացիներէն, սակայն իրենց նպատակը բռնակալութեան հարուած հասցնելն էր եւ նոյնիսկ եղած են պարագաներ, որ անոնք ժիրայր, Զէլլօ թէ Մինաս Օղլու, Կիւլպէնկ թէ Փոքր Զէլլուները օգտակար եղած են թուրք զիւղացիներուն ալ: «Արծիւը ճանն չ'որսար» ժողովրդական առածը անոնց համար ըսուած է:

Զէլլոյին նուիրուած ժողովրդական երգերուն մէջէն կարելի է այդ շրջանի բռնութեան դէմ անզօր դարձած Փոքր Հայքի մեր ժողովուրդին տրամադրութիւնները շօշափել:

Այսպէս՝

Ունեցող չուտողէն առած՝ չբաւորին կուտաս,

Գոզ մը չես դուն, այլ՝ փրկիչ ես Զէլլօ:

Արիւնստ դաշայնով չարը գեցտնող...:

Զարէն հարուածող՝ քոզ իմ քոզ քան,

Քաղցրութեամբ երակէս արիւնս ընծայեմ

Վերաբերում հինգող՝ իմ քոզ քոզ քան,

Ոսկիին, կերպասին հաւաք-կալ Զէլլօ:

Թովուտունի ճամբուն վրայ կտրած մագերդ

Տէր ազգկանց, ոգրին ու կոծին,

Եւ ամոնց քափած աղի արցունքներն,

Եիզնդ սարսեցին, դիւցազն Զէլլօ:

Ազգիքդ դադրեցան ոսկեգարդ կրելէ.

Համբաւդ հասաւ մինչեւ Զին ու Մաշին,

Թեքքերը հասան երկիրն Մոսկոփին,

Մարտացուցիք թուրքիան, ազգիկ դուն Զէլլօ:

Արծաքեայ խորջինը առած իր քամրին,

Բռնակալութեան փոստան գրակեց,

Առիւծ Կիւլպէնկով Եոզկատը գարկաւ,

Հոն ալ հրապարակաւ փայլեցաւ Զէլլօ:

Զէլլօ պատնէշուած իր քամրին ետեւ,

Նետած իր գնդակն՝ պարապի չ'երթար,

Մերատիոյ կուսակալը գինք կը հալածէ,

Քարճարցած հաշակով կը քալէ Զէլլօ:

Ազատ գիւղացուց տէր ես դուն Զէլլօ:

Ձոռ պիտի դառնաս հայութեան, Զէլլօ:

Անկցին ոճրագործք, կեցցէք դուք՝ Զէլլօ:

Շապին Գարահիսարի Էնտրէաս զիւղաքաղաքէն ընկ. Առաքել ձերմական կը վկայէ:

«Երբ պատմի էի, որոշ կը յիշեմ որ Թորոս Մառուկեանի անուան մուրթուած երգերը կ'երգէին մեր գիւղին երիտասարդներն ու եարսները՝ ոգևորուած ու խանդավառ»:

«Թորոս էր բուն անուրը,

Զէլլօ դրին կեզն անուրը,

Ո՛վ Հնչակեան կուսակցութիւն

Շատ լաւ գիտեն այդ անուրը...»:

Ընդ. Ե. Սիրվարդ, 1960ին Թորոս Մատուկեանի նուիրում
իր գրքոյկին ԵՂ 65ին մէջ կը բերէ վկայութիւնը Ձէլլոն մօտէն ճանչը-
ցած Գալֆայեան Աւետի:

«Օր մը Թորոս գիւղ գալով իօսած է յեղափոխական քարոզ մը եւ թուա-
մօրթնէրը մտաբանած, բակով թէ ամենէն հաւատարիմ կենդանին, երբ կը տեսնէ
որ իր տէրը կը նեղէ, կը շարժարէ գինք, կը սպասնայ իր կեանքին, կը գիտէ ինք-
նապաշտպանութեան, փորձ կ'ընէ խածնելու: Մի՞թէ դուք այդ կենդանիին շփ
հասկացողութիւն չունիք: Ձեր իրաւունքը կը յափշտակեն, ձեր պատիւը կը բռնա-
բարեն եւ դուք ձայն չէք հաներ: Գուցէ իրաւունքի եւ պատուի հասկացողութիւն
չունի՞ք: Այդ քարոզին յետոյ եկաւ «Ինքնապաշտպանութեան մարմինը»:

Ձէլլոն եթէ այդ գիւղի հայերը ստքի կը հանէր, ապա կախա-
ղան բարձրացող հայ Ֆետային պիտի բռնէր այսօր գիրենք մեղադրող
բազմաթոններու մէջ նստած կաշաղակ-պատմարաններուն:—

Մենք մեր կեանքով հայրենիքին համար նահատակուեցանք, առնուազն պար-
կէշտ եղէք եւ յարգեցէք մեր յիշատակը. բնդվզումի գիտող հայ ազատագրական
պայքարի հերոսներուն առջև խոնարհեցէք, անոնց յիշատակը մի աղարտէ՛ք՝
թրքական թեղերուն իրաւունք մի՛ տաք...:

Ո՛չ չիրիմ սոնեցան, ո՛չ կոթող...: Այսօր ալ, տակաւին ա-
նարգոյններ կան այդ հօյակապ արժիւններուն յիշատակը...: «Հայ-
րենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ» երգողներուն, բռնութեան
դէմ բնդվզումը սխալ մեկնարանոց տարրեր կան, որոնք կը շփո-
թեն արեան տուրք վնասողները... նապատակեան հոգեբանու-
թեամբ, քննող, ուրացող, սայաքարի դաշտէն փախչող կեղծարար-
ներու «հայրենասիրութեան» հետ:

*
**

Մուրատ՝ Գուգ Գալուի ցոյցին եւ Սասնոյ ապստամբութեան
Հնչակեան ղեկավարը՝ կը գիտադրէ Յրֆո-քարի կատարին, սակայն
կը ստիպուի անձնատուր ըլլալ իր ընկերներով եւ Պիթլիսի բանտէն
ետք, կը փոխադրուի Պոլիս: Հոն, գատաւարութեան Սուլթանը վա-
րագոյրի մը ետին կը հետեւի Մուրատի պատասխաններուն: Ելը-
տրդ պալատի արեւնի որջին մէջ դատախազ Հասան փաշայի հար-
ցումին, թէ ի՞նչ բանը մղեց ձեզ որ մեր վեհափառ Սուլթանին շատ
սիրելի ժողովուրդը բմրոստութեան մղէք, Մուրատ կը պատաս-
խանէ:

— Ինչո՞ւ այդ հարցումը, փաշա: Մի՞թէ չէք գիտեր որ ժողովուրդ մը երբ
կ'ըմբոստանայ, կը նշանակէ որ ան կը ճնշուի ֆիզիկապէս, բարոյապէս եւ ան-
հատապէս: Երբանկութեան եւ խաղաղութեան մէջ ապրող ժողովուրդ մը ո՛չ
միայն ըմբոստութեան մասին չի մտածեր, այլ իր մէջէն կը վտարէ խաղաղու-
թիւնը խանգարողները: Ասոր համարայն եմ ձեզի հետ որ Սուլթանը շատ կը սի-
րէ հայութիւնը, եւ իր այդ սէրը կ'արտայայտէ բալաններով եւ ջարդերով:

— Ըսել կ'ուզէք որ մեր վեհափառ աշօրը կը ջարդէ հայերը:
Չգոյշ եղէք ձեր արտայայտութիւններուն մէջ, կը հրամայէ Հասան
փաշան:

— Ան չի ջարդեր, սակայն անոր հրամանով թիւրք, քիւրտ խումար եւ կա-
նաւոր զօրքեր կը ջարդեն, կ'ամայացնեն գիւղերն ու քաղաքները, եւ յետոյ կը
մեղադրեն հայերը որ կ'ըմբոստանան: Չարդը, քալանը դադրեցուցէք, օրէնքի
առջեւ հայը հաւասար նկատեցէք իսլամին, երկրին ամէն կողմը արդարութիւն
քող սիրէ, այն ատեն ըմբոստութիւնը, յեղափոխութիւնը վերջ կը գտնեն: Իսկ
եթէ մերկայի աւագակային դրութիւնը շարունակուի, ըմբոստութեան կայծերը
ուշ կամ կանուխ պիտի վարակեն քոյր գաւառները:

Վարագոյրը կ'երերայ: Սուլթան Համիտի անհանգստութիւնը
յայտնի էր: Թահսին փաշա կ'անցնի վարագոյրին ետին եւ քանի մը
վայրկեան մնալէ ետք դուրս գալով, Նազրմ փաշայի ականջին բան
մը կը փախայ:

— Այդ սրիկան պէտք է կախուի, կ'որոտայ Համիտ, Մուրա-
տին դուրս հանուելէն ետք: Ի վերջոյ վիտակից յեղափոխականը
Ափրիկեան Տրիպոլի կ'աքսորուի, ուր կը մնայ մինչեւ 1906, ապա
կը յաջողին զինք փախցնել: 1905ին Կեղրոնի անդամ ընտրուած էր
ան:

Մուրատ 1906ին կոչ ուղղեց բոլոր հայ կուսակցութիւններուն,
սրբապի միասնաբար տանին ազատագրական պայքարը Համիտի
դէմ:

Ան կը գրէր «Հնչակ»ի մէջ.

«Եթէ բռնակալ ցարիզը տապալելու համար, Ռուսաստանի գանգան սպ-
գութեանց պատկանող յեղափոխական Մարմիններն, ընդհանուր շահը աչի առ-
ջեւ ունենալով, գոնկրէս կը գումարեն եւ յաճախ համերաշխութեամբ կ'ընթանան,
ինչո՞ւ ուրեմն մենք, որ միեւնոյն ժողովուրդին կը պատկանինք, միեւնոյն ցաւե-
րով կը տանջուինք, եւ ամէնքս ալ հայ ազատագրութիւնը ամենամտակայ մպա-
տակն ունինք, չկարողանաք ընդհանուր համաձայնութեան եւ համերաշխութեան
գալ»:

Ափսո՞ս սակայն, Դաշնակցութիւնը կը մերժէ հայկական
Գոնկրէն, ազատագրական պայքարը միասնաբար տանելու համար
եւ կը նախընտրէ Իթթիհատի Գոնկրէին ներկայանալ Փարիզի մէջ եւ
անոր հետ համաձայնիլ... Ինչ որ շատ սուղի պիտի նստէր յետա-
գային— մանաւանդ 1915ի ազատագրական պայքարներու թափը
պիտի կտորէր, անակնկալի առջև գնելով Հայկական Նահանգներու
ընակչութիւնը...:

Այդ պոյնի յեղափոխական Մուրատը, որ Օսմանեան խորհրդ-
դարանին մէջ ալ պիտի մնար բնդվզումադիր, պիտի նահատակուէր
ի վերջոյ Կեսարիոյ մէջ Եղեոնի օրերուն, մնալով խրախօս, միշտ
հաւատարիմ, միշտ գիտակից իր յեղափոխական կոչումին, միշտ
այլատէր եւ հակա-ցեղապաշտ:

Հնչակեան Քսան Կախաղաններէն Շապին Գարահիսարի եւ Փոքր Հայքի կազմակերպիչներէն ղեկավար ընկեր Արամ Աչըզպաշեան, Սեպուհ լեւոն (Երեւանի ժողով) ստորոտին հաւաքուած Հնչակեան մարտական խումբերուն հետ ժողովի կը նստի: Իր հետն են Շապին Գարահիսարի վարչական ընկերներ: Հոն են Դանիէլ Զաւուշ, Քեռի, Ս. Ճանիկեան, Գ. Վէլիկեան, Մ. Տիւլպեան, Զ. Գլըճեան, Գ. Անդրէասեան, Յ. Թէվէջէլեան, Գ. Վարդանեան:

1895ի ջարդի նախօրեակն էր, կը խօսի Աչըզպաշեանը: Նոր տեղեկութիւններ հասած են Պոլսէն եւ չըջանի կառավարական աղբիւրներէն թէ «հայերուն հալածանքը աւելի պիտի խստանայ, Համիտի հայաջինջ քաղաքականութիւնը համատարած պիտի ըլլայ, պէտք է համարձակուիք: Ասպատակային մեր խումբերը կեդրոնի մը կապուելով կրնան մեծ օգտակարութիւն ունենալ», կ'ըսէ ան:

«Մենք պէտք է ձգտինք ներգրաւելու նոր երիտասարդական ուժեր եւ ապահովել թուրք եւ քրիտոստոնքային տարրերու բարեկամութիւնը»:

Այս առթիւ նախապէս մեր անդրադարձած հարցին՝ հայ-քրիտոստոնքային գործակցութեան վերաբերեալ շահեկան մանրամասնութիւններ կու գան վկայելու, թէ այդ գործակցութեան արդեւիք հանդիսացողը ո՛չ թէ Ազատագրական պայքարի ելած հայութիւնն էր, այլ թուրք եւ քրիտոստոնքային տղայն եւ մոլեռանդ տարրերը: Հետաքրքրական է այդ ժողովի լայնախոհ ոգին հանդէպ քրիտոստոնքային եւ թուրք աշխատաւորներուն:

— Առաջին մասին, այսինքն ասպատակային խումբերու համագործակցութեան գաղափարին համաձայն ենք, կ'ըսէ Անդրէասեան: Բայց թուրք եւ քրիտոստոնքային աջակցութիւն սպասելը անիմաստ է: Ժիրայրի (Պոյաճեան) կազմակերպած հաւաքովէն ասդին Երեւան եւ Սյուսի կ'ըսէին: Երբեք տեսնուի չեղաւ, նոյնիսկ չենք գիտեր, թէ ո՛ր կը դռնօրին անոնք եւ ի՞նչ կ'ընեն:

— Մեր յոյսերը մասամբ իսկ շարժարացուցին անոնք, կ'ըսէ Քեռի, թուրք եւ քրիտոստոնքային միշտ մեր ճամբուն վրայ դարձնակալ կը սպասէ:

— Ճիշդ էք, կ'ըսէ Ա. Աչըզպաշեան, բայց կարելի չէ տգէտ ամբողջ գիտակից դարձնել կարճ ժամանակի մէջ: Դէպի հայրս սերմանուած ատելութիւնը այնքան խոր է, որ գիւրութեամբ արմատախիւ կարելի չէ ընել, երկար եւ համբերատար աշխատանքի կը կարօտի: Մեր ջանքը պիտի ըլլայ, եթէ ստիպուած չենք, մեր զէնքերը միշտ հեռու պահել ամբոխէն, թիրախ դարձնելու ենք միայն շարժարձները, բռնապետները, ամբողջ գրգռողները:

— Այդպէս ալ ըրած ենք մինչեւ հիմա, կ'ըսէ Դանիէլ Զաւուշ, եւ չենք փորձած շեղիլ այդ հասկացողութենէն, դարձեալ այդ ամբողջ աւելի մեզ նեղած է, քան ոստիկան-զինուորը:

— Կարելի է մասամբ հաւատք ընծայել քրիտոստոնքային, բայց ոչ թուրքերուն, որոնց պէտք չէ խնայել, կ'ըսէ Ղուկաս Վարժապետ Տէօվլիթեան (1895ի է. 1915ի Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութեան ղեկավարներէն):

— Ղուկասի մտածումը շատ արժատական կը գտնեմ, դիտել կուտայ Ս. Ճանիկեան (Պոստոսի շրջանի հերոսներէն), բոլոր թուրքերն ալ մէկ շուրջով պէտք չէ լուալ. անոնց մէջ ալ կան լուսեր, հասկացողներ կան, որոնցմէ մենք օգտուած ենք եւ կրնանք վաղն ալ օգտուիլ մեր խոհեմ քայլերով:

— Ընկերներ, իսլամ տարրերու հետ հասկացողութեան դժուարութեան գիտակ է Հնչակեան Կուսակցութիւնը, կ'ըսէ Արամ մեղմօրէն: Այդ դժուարու-

թիւնը սակայն կարելի կ'ըլլայ աստիճանարար յաղթահարել, եթէ մեր պայքարի ընթացքին գործող ջոյց տանք, որ մեր կոնքը ճնշուածներու դէմ չէ: Ս. Դեմոկրատական Հնչակեան սկզբունքը դաւանող եւ գոյն կեանքի մէջ կիրարկելու համար պայքարի դաշտ իջնողներս պիտի պաշտպանենք բոլոր ճնշուածներու շահերը, առանց ցեղի եւ դաւանամքի խտրութեան: Թուրք եւ քրիտոստոնքայինութիւնն ալ կը ճնշուի ու կը շահագործուի համիտական ռեժիմէն, քէն անգիտակ այսօր, սակայն վաղը կրնայ գիտակցիլ եւ մեզի մեցուկ կենալ:

Բրոխտրանեան վանահայրը կ'ըսէ .

— Հայութեան որեւիժ թշնամին իսլամ (թուրք) հասարակութիւնը չէ, այլ տիրող տարրերն են, որ օգտուելով ժողովուրդի տգիտութենէն՝ գոյն հայուն դէմ կը գրեն:

Օր մը զինուած քրիտոստոնքային մը եւ թուրք մը վանք կը հրաւիրէ ան: Քրիտոստոնքային սէ. «Մեծ հայրս հայերու բարեկամ էր, կը հաւատար թէ հայերը ազնիւ ժողովուրդ են: Սակայն չեմք թուրքը ջոյց տալով կ'ըսէ, թէ ան այնպիսի բաներ ըսաւ հայերու մասին, որ սկսայ ատել, մեր կրօնին կատարել թշնամիներ նկատել եւ հետեւաբար հալածել»: Թուրքը անմիջապէս կը պատասխանէ. «Ես ինչո՞վ մեղաւոր եմ, երբ մեր մոլլան, եւ հօրեղբայրս որ մեր զիւղին միտին է, միշտ հայերու մասին վատ խօսելով նախապաշարեցին ինձի պէսները հայերու դէմ»:

— Հնչակեան կուսակցութեան որդեկրած ուղին քրիտոստոնքային է, եւ մենք՝ քրիտոստոնքայիններս այդ ոգին սպրկելու եւ պահելու ենք, կ'ըլլայ վահագր վերջին խօսքը:

Արամ Աչըզպաշեանի առաջարկը կ'ընդունուի:

Ղուկասի խումբը պիտի գործէր Մեծուրի գաւառին մէջ, Քեռիի խումբը՝ Շապին Գարահիսարի շրջանին մէջ, Դանիէլ Զաւուշիներ՝ Բիւրքնի դաշտին վրայ, որոնք սակայն պիտի կապուէին Շապին Գարահիսարի կեդրոնին հետ:

(Տես մանրամասն այս մասին «Արամ Աչըզպաշեան» (հերոս Փոքր Հայքի), Սիրվարդ, 1957, Փրոպիտենս):

Պիտի շուղենք այսքան յստակ վկայութիւնները ծանրաբեռնել մեկնարանութեամբ: Հայ պատմարաններ պէտք է սերտեն մեր այդ շրջանի ազատագրական պայքարները բուն իսկ հերոսներու վկայութիւններէն եւ ո՛չ թէ այս կամ այն հաշիւներով հրապարակ իջած Արտակ դարբինեաններու կամ Լէսներու գործերէն...:

ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ՊԱՀԱՆՁԱԳԻՐԸ

Աւելորդ չենք նկատեր քանի մը պարբերութիւններ եւս մէջըրերել 1890ի Յուլիս 15ի Գում Գափուի ցոյցին պահանջագրէն, զոր խմբագրած էին ընկերներ Գրիգոր Աչըզպաշեան, Մուրատ եւ Գլըճեան: Այդ պահանջագրերը ո՛չ միայն այդ շրջանին, այլ ներկայ ժամանակաշրջանի համար ալ իր ուժն ու արժէքը կը պահէ:

«Հարազատ ժողովուրդ, «Մեմֆ հայերս, ունիմֆ երկիր մը, հայրենիք մը, գայն մեր նախահայրերը մկրտեք եմ Հայաստան անունով, որուն ալ օժիտ է դարձեր թշուառ ամականը: Քեզ քաջ ծանօթ է այդ երկիրը, վասնզի

դուն անդիէն եկած ես հոս, ուր կ'ապրիս պանդուխտ: Այդ երկրին տնտեսական, հասարակական եւ քաղաքական վիճակն հիմա կ'ա՛մ արիւն. կ'ա՛մ արցունք կը հոսեցնէ ամէն մէկ հայու սրտէն: Անտա- նիի հարստահարութիւնք, անիրաւ ձեռքակալումներ, սպօրէն դա- տապարտութիւնք ու անխիղճ ւաճառանք այնտեղ անպակաս են: Սոյնպիսի արարքներու դէմ ժողովուրդի բողոքող արդար ձայնը անլսելի կը մնայ եւ մինչեւ իսկ կատաղի գործերով անխնայ կը կո- տորուի. սուրհակար կ'իշնայ նա ինչպէս Վանայ, Մշոյ, այլ տե- դերու եւ վերջերս կարնոյ մեծ դէպքին մէջ: Մեր հագարաւոր վիժող քոյրերի աղաղակը եւ մեր նահատակուող եղբայրներու տակաւին տա՛մ արիւնը մինչ այժմ անուշադիր ու ծաղրուած է իսկ: Զուրկ ա- մէն տեսակ իրաւունքներէ, ծանրաբեռնեալ սարսափելի հարկերով, անխիղճ հարստահարուած պաշտօնեայէն, վաշխառուէն, Մուլքա- գիւմէն եւայլն, գուրկ նաեւ ինքնապաշտպանութեան իրաւունքէ... գուրկ հաց կտրելու դաւակէն անգամ, — Հայերս կը քայքայուինք. կը կորսուինք: Ժողովուրդ, դուն պիտի կորսուիս, դուն պիտի վե- րանաս, եթէ քո վիճակը նոյնութեամբ տեւէ: Պատառ հաց մը. քիչ մը սեւ գլգիլ, որ հարստահարողին հարկեր ժողովելէն ետքը կը մը- նայ քո վր. այն ալ քու կը չէ: Զինեալք կու գան, կը գարնեն գլխիդ, կ'այրեն տունդ, կ'անպատուեն կինդ. լանիդ բերնէն կը խլեն պա- տառ հացն ալ, գլգիլն ալ: Ի՞նչ ես դուն այսօր քո հայրենիքին մէջ... անասուն մը»:

Գում Գափուի պահանջագիրը դասակարգային անկիւնէ կ'ընէ նաեւ չետեւեալ մասնանշումները.—

«Քո անքիւ, անհամար քշուառութիւններու բուն պատճառը, իսկական արմատը քո փոքրիկ քաղցած ըլլալն է: Կ'ուզեմ ըսել քե՛ քո տնտեսական սնանկացեալ եւ քայքայուած վիճակն է: Հայրենիքիդ հողը քու կը չէ ամենեւին: Գուն կը վարես, կը ցանես, ոչխարներու հօտեր կ'արածեցնես կալուածատէր հարուստներու, բէշերու տե- րութեան հողերը՝ սրունց համար կը վնարես սիւղի տուրքեր, ու- յով իրաւունք կ'առնես մշակելու: ... Զարատանց կ'աշխատես եւ ա- ռած արդիւնքն ալ կրկին քու կը չէ եւ ո՛չ իսկ 5 առ հարիւր: Քո տնտեսական դրութիւնդ է որ յեղափոխուելու անհրաժեշտ է... դուն կ'ուզես որ այդ հողէն առած արդիւնքն ալ պատկանի անոնց, որոնք կ'արտաբերեն զայն»:

«Քայց կրնա՞ս արդեօք քո այդ տնտեսական պահանջներն ի- րագործել, երբ դուն ստրուկ ես, երբ դուն քո նահատակներին տէրը չես, երբ դուն հայրենիք չունիս: Ճակատագրիդ տէրը դուն ինքդ պիտի ըլլաս»:

Հայաստանի ապագան...

«Հայաստանի նահանգները պիտի ունենան տեղական ընդար- ձակ ինքնավարութիւն: Պիտի ըլլայ նաեւ մամուլի, խօսքի, խիղճի, գումարուծի, բնկերութիւնների եւ բնորական ապատութիւն»:

Պահանջագիրը կը յայտնէ որ այդ օրուան ցոյցով չէ՛ որ պիտի իրականանայ հայ պանդուխտին եւ զիւղացիին պահանջները, դիւ- րին չէ այդ, քանի որ մահուան վտանգը կ'իշխէ, բայց «ուրիշ անե- լիք չմնաց: Գուն պարտաւորուած ես դիմելու ամէն ծայրայեղու- րեանց, որոնց միջոցաւ միայն կրնաս արդար ձայնդ լսել տալ աշ- խարհին եւ քո արդար պահանջների նպատակին հասնիլ: Ահա այս է մեր այսօրուան ցոյցին խորհուրդը: Գիտնանք մեր գործը յառաջ մղել եւ մեր դատը պաշտպանել նոյնիսկ ամենաձանր եւ ամենասուղ գնով...»:

«Կեցցէ հայ ժողովուրդը, որուն միակ ազգական այժմ պիտի ըլլայ «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԱՀ»:

(Յոյցին մասին տես «Յիշատակներ Հայկական ձգնաժամէն» Յարութիւն Ճանկիւլեան):

1896ի կոտորածներէն ետք ընդհանուր յուսահատութիւն պա- տած էր հայոց երկիրը: Ամէն կողմ աւեր եւ ջարդ: 300 հազար ան- մեղ հայեր կոտորուած էին Սուլթանի հրամանով, Հայկական Յե- հանգներէն ներս, հայերը փոքրամասնութեան մէջ պահելու Սուլ- թանի ծրագիրը մասնակի յաջողութիւն գտած էր: Արեւմտեան նենդ դիւանագիտութիւնը մէկ կողմէն ազատագրական պայքարը կ'ու- ղէր շահագործել տնտեսական նոր քափանցումները իրականացնելու համար, միւս կողմէ, չէր ուզեր, որ Թուրքիան՝ «Հիւանդ Մարդը» տեղի տար ռուսական ցնջումներուն առջեւ: Նեղուցները եւ Արեւմը- տահայաստանը Ռուսիոյ խնամակալութեան յանձնել, կը նշանակէր անոր առջեւ բանալ Միջերկրականի ճամբան, իսկ այդ պիտի նշա- նակէր Անգլիոյ Հնդկաստանի գաղութին եկամուտը նուազեցնել: Վերջին 150 տարիներու պատմութիւնը, խորքին մէջ Ռուսիոյ տա՛մ ջուրերը իջնելու ցանկութեան եւ Անգլիոյ՝ այդ ցանկութիւնը չե- գոքացնելու պատմութիւնն է դժբախտաբար, Մերձաւոր Արեւելիքի մէջ: 1916ի գաղտնի համաձայնութիւնը Դաշնակիցներուն միջեւ Մեր- ձաւոր Արեւելքի երկիրներուն կապակցութեամբ, արդիւնքի մը չհասաւ: Ռուսական յեղափոխութիւնը մեծապէս նպաստեց Անգ- լիոյ, քանի որ Յարին խոստացուած Նեղուցներու եւ Հայկական Նահանգներու Ռուսիոյ կցուելուն պահանջը վերջնականապէս դուրս կը մղուէր...: Անգլիան կը շահէր Եգիպտոսը, Արարական Թերա- կղզին, Իրաքն ու Պաղեստինը՝ Եռեակ գիւնակցութեան պարտութենէն ետք, Սուրբան-Լիրաններ իր ազգատ ազգականին Ֆրանսայի բաժին կը հանուէր... եւ անկէ ետք «Փոքր Դաշնակից» հայոց ալ «խոս- տումներ» միայն: 1920ի Օգոստոսին Սեւրի գաշնադրով 4 նահանգի խոստումը կը տրուէր մեզի:

**

1895-96-ի կոտորածները կազմակերպողները անպատիժ մնացին, Հայ քաղաքական հոսանքները ցնցումներ ապրեցան: Արեւմտահայ մտաւորական-գրագետները թուլցան եւ սկսան յանցանքը սոցիալիզմի մէջ որոնել... Անոնք կը կարծէին, թէ 1890-1896-ը բաւարար ժամանակ է ինքնավարութիւնը իրականացնելու համար: Անոնք թէեւ իրապաշտ դպրոցի շեփորահարներն էին՝ Օտեան, Զոպանեան, Արփիարեան, Տամատեան, Լ. Փաշալեան, սակայն կը պահէր իրենց մէջ խոր հաստեղ՝ Հայ Դատին նկատմամբ: Անոնք աժան եղանակներու դիմեցին՝ ամբաստանելու համար Հնչակեան կեդրոնը, յատկապէս արեւելահայ ղեկավարները, որոնց հեռաւոր նպատակը՝ սոցիալիզմը խոչընդոտ կը նկատէին մեծ երազի ճամբուն վրայ, հայկական ինքնավար պետութիւն մը կազմելու ճամբուն վրայ: Անոնք մինչեւ իսկ տեղորոշումներու դիմեցին: (*)

Գ. — ՎԱՆԻ 1896Ի ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ ԱԿՆԱՐԿ

Վանի մէջ Պահրի Փաշային յաջորդը՝ Նազրմ Փաշան, մեղմ եւ հաշտարար ուղի մը ունէր:

300 հազար հայերու ջարդը հայկական 6 նահանգներուն մէջ, արդիւնքն էր Օսմանեան կառավարութեան այն ծրարքին, որով ան կ'աշխատէր թրքահայաստանի մէջ գտնուող հայերու թիւը կարելի եղածին չափ փոքրացնել:

Եթէ Վանը ազատ մնաց թրքական ջարդերէն, ատիկա կը պարտէր մէկ կողմէ Նազրմ Փաշայի, եւ միւս կողմէ հոն գործող Հնչակեան, Դաշնակցական եւ Արմենական կուսակցութեանց կոռուղ ուժերուն: Այս առթիւ յիշենք, որ Վանի 200 շրջակայ գիւղերը աւերուեցան եւ կոտորուեցան:

1896ի գարնան Վանի մէջ տազնապալի վիճակ ստեղծուեցաւ: Մայիս 29ին, 30ին եւ 31ին թրքական թաղերէն անընդհատ հրացանաձողութեան ձայներ լսուեցան: Դուրսի հայերը հոն ապաստանեցան. կատարուեցան ձերբակալութիւններ. 5 Յունիսին ջարդը սկսաւ: Հայեր զոհեր տուին: Կացինով, փայտով, սուրով ջարդուեցան անոնք:

Արմենական Աւետիսեանէ, Հնչակեան Մարտիկ (Մարուխանեան), Դաշնակցական Պետոյէ (Աղեքսանդր Պետրոսեան) կազմուած ղեկավար մարմինը ուժ կը հասցնէր հոն ուր կընար:

Մօտ շարաթ մը հերոսարար պաշտպանուեցաւ քաղաքը, շնորհիւ երեք կուսակերտ գինուորական գործակցութեան:

Նշանաւոր կը հանդիսանան Արմենակաճեքեան՝ Կ. Սանոյեան, Ղ. Թանկարաճեան, Հաճի (Զէյթունցի), Հնչակեանճեքեան՝ Մարտիկ, Վահէ, Դաշնակցական-ճեքեան՝ Պետո, Վարդան:

Շարաթ մը տեւող կռիւները շարունակուեցան դիշեր եւ ցերեկ շտանուած խստութեամբ մը, հայերը յաջողեցան պահպանել իրենց դիրքերը, թշնամիին պատճառելով շատ կորուստ: Սաստետտին Փաշան ուզեց ջիւրտերը օգտագործել հայերու դէմ, անաս կողոպուտի հեռանկարը ցոյց տալով անոնց:

Հայերը բանուկ փողոցներուն անցքերը գոցեցին կտրուած հարիւրաւոր ուռնիներով:

(*) Պիտի անդրադառնանք:

Անդրիա կը վախնար որ Վանի ինքնապաշտպանութիւնը կրնայ պատրուակ ծառայել ուսուական միջամտութեան, ուստի իր հիւպատոսը Մր. Ուիլիամս միջամտեց: Անոր համար կ'ըսուէր, թէ՛ Սեւ Քրայի վրայ զետեղուած թնդանօթիներուն ուղղութիւն տուողը եղած է: Ան հայ կոտորուածներուն եւ անոնց զէնքին յանձնուիլը պահանջեց: Հայերը պատասխանեցին թէ՛ իրենք պատասխանելու չեն, այլ ինքնապաշտպանութեան դիմած կոռուղներ են. եւ ատիկա անոր համար, որ կառավարութիւնը չէ՛ պաշտպանած անմեղ հայերը:

Բանակցութեանց կը մասնակցէին նաեւ ուսուական, պարսկական եւ Ֆրանսական հիւպատոսները: Ռազմաթիւրքը հատնելու վրայ էր, հիւպատոսներու այն խոստումները՝ թէ բոլոր կոռուղները անվնաս պիտի կրնան Պարսկաստան հասնիլ՝ խորհուրդին մըն էր: Վանի Հայոց Խառն Ժողովը նոյն առաջարկը կ'ընդունի: Ճամբան 600 կոռուղներ կը նահատակուին:

Թուրքերը 600, հայերը՝ 5-10 սպանեալ եւ վիրասոր տուին կոռուղ ընթացքին, այրուած տուններու թիւը 500 էր եւ 700 հայեր կոտորուեցան:

Այդետեանը փրկուած էր Զէրքէզ էմին Պէյի վեհանձն պաշտպանութեան շնորհիւ: (Տես մանրամասն՝ «Յուշեր Արմենակ եկարեանի», 1947, Գահիրէ, էջ 98-104):

Ե. — ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԶԵՅԹՈՒՆԻ ՅԵՂ. ՄԱՍԻՆ

Զէյթունի 1895ի պատերազմը տեւած էր 45 օր: 110 հազար հողիէ բաղկացած հսկայական ուժի մը դէմ 6000 հայերու ընդդիմազիր ուժով մը, թշնամույն 13 թնդանօթին դէմ, որ 3800 ուժը կ'արձակէր, հայերը ունէին 2 թնդանօթ՝ զօրանոցէն զբաւուած: Այսու ամենայնիւ թուրք բանակի Թապուր Քեաքիլիի վկայութեամբն իսկ հաստատուած է, որ բացի անկանոն զօրաց կորուստէն եւ ցուրտի պատճառաւ եւ թէ գնդակահար մնաստուածներէ՝ 32 մաշտ զօրք փճացած են: Ըստ «Դեղին Տետրակ»ի (էջ 84-85)ին, 1895-6ի հաշույն թըշնամույն կորուստը 20 հազար էր, 13 հազարը՝ կանոնաւոր զօրք: Բանակը կը բաղկանայ եղեր 50 հազար զօրքէ, 20 հազար կանոնաւոր եւ 30 հազար պաշրպօղուր:

«... Թապուր Քեաքիլի Մուսթաֆա Էֆէնտիի կարծիքով՝ թշնամույն բանակը 25,600 մարդ կորսնցուցած է, մինչ հայոց ուղղակի պատերազմին մէջ ունեցած կորուստն է 71 անձ... տարափոխիկ հիւանդութենէ՝ 500 Զէյթունցի, իսկ հոս ապաստանածներէն՝ 3000 հողի:

(Տես՝ «Զէյթունի Անցեալէն» Ա. հատոր, Մնացական Սէմէր-ճեան, Պոլիս, 1909, էջ 251):

Զէյթունի հերոսամարտի յաղթական Հնչակեան ղեկավարին պատասխանը.—

Ռուսական Հիւպատոս Պարոն Եաֆի Միանսֆիին
Ի Հալէպ
Մեծ պետութեանց Հիւպատոսներու ընկերակցութեամբ ձեր ուղարկած հեռագիրը ստացանք: Օսմանեան կառավարութեան եւ մեր միջեւ կատարելիք ձեր միջամտութիւնը կ'ընդունինք:

1895 Դեկտ. 25
Զէյթունի Ապստամբութեան
Հնդհանուր Հրամանատար
Պարոն ԱՂԱՍԻ

(Տես՝ մանրամասն եւ օրը օրին նկարագրութիւնը Աղասիի «Զէյթուն եւ իր Շրջակաները» հատորին մէջ, 1968ին Պէյրութ տրւած, ինչպէս նաեւ Վարդ Մեխակի, Մ. Սէմէրճեանի, Լեւոն Նորաշխարհեանի, Ահարոնեանի, Պօղոսեանի հատորները) :

Մեր կողմէ ըսենք, թէ Զէյթունի 1895-96ի 45 օրուան Հնչակեան Կուս. կողմէ կազմակերպուած ապստամբութիւնը՝ ԺԹ. դարու հայոց պատմութեան ամենէն սքանչելի եւ յաջողած ազատագրական պայքարի լուսապսակն է : Դարեր ետքն ալ՝ հայ ժողովուրդը ինչպէս ԺԸ. դարուն մէջ Դաւիթ Բէկով, ԺԹ. դարուն համար ալ Աղասիներով եւ Նապարէթ Չաւուշներով պիտի հպարտանայ :

ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.—

1895ի Զէյթունի ապստամբութիւնը սովորական յեղափոխութենէ մը աւելի կանոնաւոր պատերազմ մըն էր, համաժողովրդական ցասումին պոռթկումը արեւնարբու կայսրութեան անարկու ուժերուն դէմ : Հայ ռազմավարութիւնը, ճակատ առ ճակատ պատերազմելու արուեստը իր կատարելութեամբ կիրարկեց ու եւրոպա կամայ-ակամայ, սքանչացումով հաստատեց այս կատարելութիւնը :

«Վերածնունդը երկուեքը Լ. ԱՐԱՄԵԱՆՅ 1918, Պոլիս



ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.—

«Հայերը պայքարում էին իրենց իրաւունքների, իրենց ազատութեան համար, թուրք բարբարոսները նրանց կոտորում էին, Ֆիզիքայէս ոչնչացնում : Նոյնիսկ այն դէպքում, երբ հայերը խաղաղ ցոյցեր էին կազմակերպում եւ պահանջում 61րդ յօդուածը իրականացնել, թուրքական Սուլթան Համիտը արեան բաղնիքներ էր սարքում, իսկ այսպէս կոչուած «քաղաքակիրթ» պետութիւնները հանդուրժում էին այդ բոլոր բարբարոսութիւնները :

«1890ական թուականների հայերի մասսայական կոտորածների ժամանակ մեծ պետութիւնները ղրսեւորեցին իրենց զիշատիչ, նենդ ու խարդախ քաղաքականութիւնը : Թուրքիային իր ազդեցութեան տակ պցելու համար Գերմանիան օղնում էր նրան, հրահրում հայկական ջարդերը : Անգլիոյ վարչապետ Լորտ Սալսպրին հայերի աղերսադրերին պատասխանում է, թէ՛ «Անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ Հայաստանի լեռները» : Ֆրանսական եւ Յարկան Ռուսաստանը նոյնպէս ոչինչ չարին հայկական կոտորածները կանխելու համար : Աղեքսանդր Գ.ի ոչակցիոն կառավարութեան Ա. Գ. Նախարար, մեծապետական շովինիստ Լորանով Ռուստովսկին յայտարարում էր, թէ՛ «Հայաստանը մեզ հարկաւոր է առանց հայերի» :

(Տես՝ «Հայ Ժող. Պատմութիւն», Փրոֆ. Վարդան Պարսամեան, դասագիրք Թ. դասարանի համար, Երեւան, 1972) :

ՆԱՀԱՏԱԿ ԺԻՐԱՅՐ ՊՅՅԱՃԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՆԶԿԱԹԻ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ, 1894ԻՆ

«Քանիցս ըսի ձեզ, մեր ուզածը ուրիշ բան չէ, եթէ ոչ կեանքի, գոյքի եւ պատուի ապահովութիւն :

«Մի մտնաք որ այս դժբախտ երկրին աղն կազմող աշխատաւոր ժողովուրդը գրաստի մը պէս ենք-ակայ է բոնաւոր ձեռքերու շահագործման եւ անլուր հարստահարութեան :

«Մենք կ'ուզենք կտրել այդ ձեռքը, որպէսզի ժողովուրդը կարող լինի իր մարդ ապրիլ եւ ծառայել հայրենիքին :

«... Պարոններ, մեր պահանջները ամփոփ կերպով հետեւեալներն են.—

«**ԽՕՍՔԻ, ԽՂՃԻ, ՄԱՄՈՒԼԻ, ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆ Է :**

«**ԱՆՁԻ, ԲՆԱԿԱՐԱՆԻ, ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹԻՒՆ :**

«**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԷՄ ՊԱՇՏՊԱՆՈՂ ՕՐԷՆՔՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏ ՔՈՒՆՈՎ ԸՆՏՐՈՒՄՈՒ ՕՐԷՆՄԴԻՐ ԺՈՂՈՎ :**

«**ՓՈՔՐ ԱԶԳԵՐՈՒ, ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, ՏՈՒՐՔԵՐՈՒ ԱՐԴԱՐ ԲԱՇԽՈՒՄ :**

«**ՊԱՏԻԺ ԲՈՂՈՐԻՆ, ՈՐ ԵՐԿԻՐԸ ԱՅՍ ՈՂԲԱԼԻ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՍՑՈՒՑԻՆ :**

(Տես՝ «Հայ Ազատագրութեան ձանապարհին», Ա. Կիտուր, Պէյրութ, 1949) :

ՏԵՍԱԲԱՆ, ԳՈՐԾԻՉ, ՀԵՂԻՆԱԿ Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ.—

«Հայ ազգը եղել է անհուն կորովի, անպառ եռանդի մի աղբիւր — դա նրա ազգային յատկանիշն է :

«Իր կամքին հակառակ ստեղծուած միջավայրին, խեղդող, կաշկանդող պայմաններին՝ երբեք չի յարմարուել, չի համակերպել վերջնականապէս : Նա միշտ ըմբոստացել է : Այեկոծ, վարար կեանք է ունեցել : Դա նրա առնականութեան ստորոգելին է :

«Նա միշտ ձգտել է, աշխատել է իր համար նոր միջավայր ստեղծել, աչքը շարունակ բարձրացրել է դէպի վեր, դէպի անհո՛ւն հորիզոններ, եւ միշտ էլ քայլեր՝ քայլեր՝ է՝ դէպի յառաջ — դա նրա խոհալիստ հոգու յայտարար նշանն է :

«... Նա ընկել, կանգնել է, անհաւասար կոիւնք շատ է մղել . բայց միշտ էլ, լուսոյ կերտնը ձեռքին է մնացել : Դա նրա պատմական մեխիան է» :

(Տես՝ «Սոցիալիզմ եւ Հայրենիք», Փրոֆ. Կոնստանտին, 1916) :

Սասնոյ Ա. ապստամբութիւնը թէեւ մղուեցաւ 1894ին, սակայն աւելորդ չենք նկատեր անկէ առաջ հոն տեղի ունեցած կռիւներուն մասին անդրադառնալ:

1890ական թուականներուն, Սուլթանի բռնութեան դէմ Սասնոյ, Տալուրիկի, Խուսի-Բոնաչէնի, Շատախի շրջաններուն մէջ տեղի ունեցան ասպատակային եւ ընդդիմութեան դէպքեր, որոնք հպարտութեամբ կը լեցնէին բոլոր տառապող հայերուն սրտերը: Կառավարութիւնը միշտ ալ Սասունէն զգուշացած է: «Սարի զաւակ քաջի որդի հին քաջ հայոց մնացորդները» չէին կրնար տանել ե՛ւ թրքական ե՛ւ քրտական պէկերու ե՛ւ փաշաներու բռնութիւնները եւ չէին կրնար — մարդկորէն անտանելի էր — ե՛ւ Օսմանեան պետութեան ե՛ւ քիւրտ աղաներուն տուրք վճարել: Սասնոյ շրջանէն բազմիցս դիմումներ կատարուած էին Սուլթանին՝ որպէսզի առաջը առնուի երկու տիրոջ ծառայելու ստիպողականութեան առջեւ գտնուող հայ զիւղացիին տնտեսական նեղ դրութեան: Սուլթանը կ'աշխատէր կարելի եղածին չափ հայ եւ քիւրտ փոխ-յարարեքութիւնները լարուած պահել եւ երկու ազգերը իրար դէմ ցցել: Սուլթանը թէեւ հայերը ընկճելու կը ձգտէր, սակայն հեռաւոր իր նպատակն էր ձնել նաեւ քիւրտերը, որոնք միշտ ալ հաւատարիմ «հպատակներ» չէին եւ Տերսիմի, Ազր-Տաղի շրջաններուն մէջ կ'ընդդիմանային, իրենց կիսանկախ գործունէութեան արգելք հանդիսանալ ուզող թուրք աւատապետական իշխանութեան դէմ:

Հատուակելով բայց տղտ քիւրտ պէկերը Սուլթանին շքանշաններէն եւ նուէրներէն խանդավառուած, բայց եւ կեղծական ղեկավարութիւն չունենալուն, մասնատուած վիճակ ունէին եւ յաճախ հակառակ դիրքորոշումով հրապարակ կուզային: Ընդ է որ Շէյխ Ուպեղուլլահներ կը փորձէին զգուշացնել զիրենք Սուլթանի նեղ քաղաքականութեան հանդէպ, սակայն ցրուած ըլլալով Արևմտահայաստանի գանազան շրջաններուն մէջ, իրենց կը պակսէր յստակ ծրագիր մը, ու չէին կրնար առաջը առնել կառուած քիւրտ պէկերու Սուլթանի գործիք ծառայելու քաղաքականութեան: Հակառակ իրենց յարարեքարար լաւ պայմաններուն, քիւրտ պէկերը չէին ուզեր իրենց հաստատարիմ զիւղացիներուն զարգացումը: Ուսման ճամբով գիտակից երիտասարդութիւն մը ունենալու ճամբան աւելորդ եւ վտանգաւոր կը նկատէին: Այդ էր պատճառը, որ պարզ զիւղացի քիւրտերը շատ անգամ ստիպուած կ'ըլլային կուրորէն ենթակուիլ աղաներու հրահանգին՝ հակառակ զգացական գետնի վրայ աւելի մօտ զգալուն ինքզինքին՝ հայ շահագործուող զիւղացիութեան հետ: Իրաւունք ունին անոնք որ կը պնդեն, թէ որքան ալ ստելի էր Սուլթանը քիւրտ պէկերուն աչքին՝ սակայն Սասունը աւերելու, զառանձնապէս Տալուրիկը», համապատասխանում էր նրանց շահերին: Հայերի նկատմամբ քրտական վերնախաւի հակադիր շահերը եւ թալանի տենչը՝ նպաստաւոր հող էին հանդիսանում նորանոր կռիւների համար: (Կ. Թառոյեան):

Ահա թէ ինչու, 1891ին Սուլթանը գիւնուրական ջոկատներ գրկեց Սասունի վրայ: Այս ջոկատները զօրաւոր դիմադրութեան հանդիպեցան եւ չկրցան Սեմալէն անդին անցնել: Անկէ յետոյ պատրուակը դիւրին էր: Սասունը նկատելի ապստամբ չըջան:

1891ին Խիւսիքի քիւրտերը՝ զրգուած Սուլթանի զործակալներուն կողմէ, Տալուրիկի դէմ կը դիրքորոշուէին: Պիթլիսի վալի Հասան Թահսին Փաշան իր մօտ հրաւիրելով Զիւրիի չէյի Մեհմէտը, Դուսէրի չէյի Ամարը եւ ուրիշներ, կը յանձնարարէ անոնց Սասուն անցնել հակահայ բրտականտ մղել այդ շրջանի մահմետականներու մօտ, զանոնք կրօնական պատերազմի մղելու համար հայոց դէմ: Մինչ այդ քիւրտ գանազան միաբուրմեր տեղական կռիւներ կը մղէին Սասնոյ շրջանի ուժերու դէմ կը զնէին: Ազրակի 80ական թուականներուն կայացած քրտական համազումարի ղեկավար Ուպեղուլլահի հետեւեալ տրամարանական խօսքը յատկանշական է.— «... Եթէ Բարձրագոյն Դուրը ամէն բանի մէջ փութոյնու կողմը կը բռնէ, ատիկա միայն այն պատճառով, որ մեզ հակադրէ քրիստոնէական տարրին Անատոլիոյ մէջ եւ երբ հայերն այստեղ ոչնչանան, այն ժամանակ փութոյնը կը կորսնցնեն իրենց նշանակութիւնը քրտական կառավարութեան աչքին»:

1891ի Յունիսի թուրք ու քիւրտ զօրքերը կը յարձակին Տալուրիկի, Անտոքի եւ Մոլասարի վրայ, կը թալանեն հայկական զիւղերը, կը սպաննեն շատերը եւ կը տիրանան քանի մը ամուր դիրքերու: Սասունցիները 3 ճակատով յարձակումի կ'անցնին: Տալուրիկի ճակատը կը ղեկավարէին տալուրիկցիներ՝ Գասպարը եւ Արէն, Շատախի ճակատը՝ Շէյխիկցի Գրիգորը, Մոլասարի ճակատը՝ Մակարը: Տեղի կ'ունենան յամառ կռիւներ եւ որոնք կը վերջանան հայերու յաղթանակով: Երկու ամսուայ կռիւներէն 1891ի Օգոստոսի վերջը պարտուած թշնամին ետ կը նահանջէ Սասունի բոլոր շրջաններէն:

Շարունակելով սակայն նոր յարձակումները, թշնամին 1892ի դարձան նոր ուժեր կը կեղրոնացնէ Սասնոյ շուրջ:

Սասնոյ, Շէյխիկի եւ Շատախի շրջանները կը զրկուին Հաճի Ֆէլիմի, Իսկէնաէր եւ Ռաշիտ պէկերու ուժերը:

1891ին կազմաւորուած Համիտիկ ուժերուն մեծ մասը կը կեղրոնանայ Սասնոյ շրջանը: Անոնք կ'աշխատին ամէն գնով կողակացնել Սասունը միւս շրջաններէն, յատկապէս հիւսիսի կողմէն:

Շենիկի մօտ կանոնաւոր ուժերը կը յարձակին կէլիկլանման եւ կէլիկլանուող զիւղերուն վրայ, եւ կը ձերբակալեն 5 հողի: Հայ զիւղացիները կը յարձակին ոստիկաններու վրայ եւ կ'ազատեն ձերբակալուածները, ապա իրենց ունեցումքով կը փոխադրուին Ալիանք զիւղը ապահովութեան համար: Անկէ ետք թուրքերը կը շրջեն 100 հողինոց պատժիչ ոստիկանական խումբ: Ալիանքի հերոս սասունցիները ոտքի կը կանգնին եւ կ'առաջարկեն ոստիկանութեան հետանալ զիւղէն: Ոստիկանները վախճալով վրէժխնդրութենէ կը հեռանան Ալիանքէն:

Խաղաղ միջոցներով թշնամին հեռացնելու քաղաքականութեան կողմնակից էր կէլիկլանուող Պետոն, որուն հետ համաձայն չէին Շէյխիկցի Գրիգորը եւ անոր ընկերները: Վերջինները կը ձգտէին դիմելու վճռական միջոցներու եւ առաջ յարձակիլ ոստիկան ջոկատներու վրայ եւ զինաթափել զանոնք, քանի զեւ անոնք նոր ուժերով չէին զօրացուցած իրենց քանակը:

1892ին Հաղոյի գայմապաճը կ'անցնէ Սասնոյ կամուրջը եւ կը մտնէ Տալուրիկի սահմանը: Անոնք կը հասնին հարթք զիւղը: Հաշուի առնելով իր ուժերու փոքր թիւը, ան ռազմական գործողութիւններու չի դիմեր: Կը յայտնէ, թէ ինք եկած է հարկ հաւաքելու (իւրաքանչիւր սասունցիէ տասը փարա): Սասունցիները վճռակամօրէն կը մերժեն այդ պահանջը: Անկէ յետոյ ոստիկանական ջոկատը ետ կը քաշուի դէպի Սպաղանք եւ Խոնովանք զիւղերը:

Գայմազամը այդ փոքր երկու գիւղերու վրայ կը փորձէ իր քաջութիւնը: Սպաղանքի տանուտէրը Մակարի զլիսաւորութեամբ՝ թրքական ոստիկանական ջոկատի դէմ ոտքի կ'ելլէ ողջ գիւղը: Ապստամբները կը յարձակին ոստիկաններուն վրայ եւ զանոնք կը քշեն գիւղի սահմաններէն հեռու: Ոստիկանները նահանջելով կ'անցնին Սասունի կամուրջը: Որպէսզի այլեւս նման անախորժ «հերեր» չունենան, սպաղանքիները կը քանդեն հինաւորաց այդ կամուրջը:

Ոժոժովանքի քերտերն ու հայերը միասին զէն ի ձեռին կը յարձակին ոստիկաններու վրայ եւ զանոնք դուրս կ'ընեն գիւղէն:

Զինուած ընդհարումները կը շարունակուին Հազդոյի գայմազամին եւ հայերուն միջեւ:

(Տես՝ Գլխիկ Տարոնցի եւ Կ. Թառոյեանի գիրքը, էջ 68):

Նոյն վիճակին մէջ էր նաեւ Մուշի հազարապետ Հաճի Փահլամը, որ գտնուելով Սասնոյ ծայրագաւառի գիւղերուն մէջ, ոչինչ չէր կրնար ձեռնարկել: Ան իր յոյսը դրած էր քոչուոր քրտերու վրայ, որոնք այնքան ալ դէշ յարարերութեան մէջ չէին հայերու հետ:

Շենիկցի Գրիգորը կազմած էր քանի մը մարտական խումբեր, որոնք կը շրջէին Սասնոյ լեռներուն մէջ, հաւանական յարձակումներէն պաշտպանելու համար հայ գիւղացիները: Հաճի Փահլամը նոյնպէս ստիպուած էր նահանջել Սասունի շրջանէն:

Հազդոյի գայմազամը Եղկարա գիւղին վրայ կը յարձակի: Հայքրտական ուժերը կը յարձակին կառավարական զօրքի վրայ, դերի կը վերցնեն գայմազամը, բայց բարդութիւններէն խուսափելու համար, ազատ կ'արձակեն զայն: Գայմազամը ողջ մնացած իր ուժերով Փսանք գիւղը կը նահանջէ: Կառավարական ուժերը կը նահանջեն դէպի Հազդո:

Սասունը ժամանակաւոր հանդարտ շրջան մը կը բոլորէ, սակայն Սուլթանը կաշառքով եւ շքանշաններով կը յաջողի քրտերու եւ հայ յարարերութիւնները սրել եւ հայերու դէմ լարել քրտերու ամենէն աւելի ազդեցիկ ցեղերը, յատկապէս Պալաքցիներու ցեղէն՝ Շաքիր աղան:

Քրտերու գինուած ուժերը իրենց յարձակումը կը կատարեն Շուշամբերկի վրայ: Գիւղը յաջող կռիւ մղելով պարտութեան կը մատնէ քրտերը եւ դուրս կը մղէ գիւղի սահմաններէն:

1893ի Մայիս 31ին Սեմալ գիւղի մէջ թրքական ոստիկանութիւնը կը ձերբակալէ Հնչակեան զործիչ եւ ուսուցիչ Միհրան Տամատեանը եւ կը նետէ բանտ, ապա հարիւրապետ Իսկէնտէր աղան ոստիկանական ջոկատով կը յարձակի Շենիկ գիւղի վրայ, գիւղին ազդեցիկ հայերը ձերբակալելու միտքով: Շենիկցիները Գրիգորի ղեկավարութեամբ, չեն թոյլատրեր որ ոստիկանները գիւղ մտնեն: Ատկէ ետքն է որ կառավարութիւնը բացայայտ կերպով յարձակումի կ'անցնի:

1893ին հարաւի շրջանի քրտերը բռնած էին Սասունի լեռները: Այս վերջինները յետադիմական շէյխերու միջոցաւ հայերու դէմ տրամադրուած էին եւ պատրաստ էին յարձակելու հայոց գիւղերուն վրայ:

1893ին հայկական Սասունը ամէն կողմէն կը պաշարուի: Հիւսիսէն Կորտուքի վրայով Սասուն կողպայ Պիթլիսի կուսակալ՝ Հասան Թահսին Փաշան: Շուտով անոր կը միանայ Կէնճի միւթասարքը իր ոստիկանական վաշտով: Մուշի ոստիկանութեան հարիւրապետ՝ Իսկէնտէր աղան՝ Ղալազաճի վրայով կ'անցնի Սասնոյ արեւ-

մըտեան կողմէն դէպի Շենիկ՝ այդ կողմերը բնակող քրտերը ոտքի հանելու համար: Իսկ Սասնոյ հիւսիս-արեւմտեան կողմէն 400 հոգինոց զօրաջոկատ մը կ'ամբարնայ Քոփի բարձունքներուն վրայ՝ Շատախի շրջանին վրայ յարձակելու համար: Իսկ Սասնոյ շուրջը պատած էին քրտեր պէկերը Հազդոյի ոստիկաններով: Անոք հասած թուրք ոստիկանները Յունիսի սկիզբը առաջին բաղխումը կ'ունենան Շենիկցիներու հետ: Շենիկի անմասն քաջ տանուտէր Գրիգորը թշնամի ամէն մէկ հարուածին կը պատասխանէ աւելի զօրաւոր հարուածով: Թահսին Փաշան իր հեծեալներով եւ հետեւակ ուժերով Սեմալին կը մօտենայ վերջնապէս ձեռքին:

Թահսին Փաշան իր մօտ կանչելով Սասնոյ գիւղապետները եւ ղեկավարները, կ'առաջարկէ հետեւեալ պայմանները. 1) Յանձնել զուրսէն Եկած Հնչակեան զործիչները, 2) յանձնել ղէնքերը, 3) վճարել բոլոր տուրքերը եւ 4) տալ ստորագրութիւն, որ իրենք ապստամբած են Հնչակեան Մ. Տամատեանի թելադրանքով եւ թէ իրենք գոհ են Օսմանեան պետութենէն:

Փաշան ներկայացնելէ ետք սոյն պահանջները կ'ազդարարէ, որ եթէ անոնք չընդունուին, ապա կառավարութիւնը Սասունցիներուն հետ պիտի վարուի որպէս ապստամբներ: Դարձեալ բաղխում: Ալիանքէն օգնութեան կը հասնի Մանէ Պօղոսի ջոկատը, որ յարձակելով թշնամիին աջ թեւին վրայ կը ջախջախէ զայն եւ կը փորձէ անցնիլ թշնամիի թիկունքը: Թշնամին կը նահանջէ:

Ապա սասունցիները Թահսին Փաշային կ'ուղարկեն հետեւեալ պատասխանը, թէ Սասնոյ մէջ օտարական չկայ, միայն Տամատեանն էր, ան ալ ձերբակալուած եւ տարուած է հեռուն, ղէնքերը չեն կրնար յանձնել, որովհետեւ հինէն ի վեր իրենք ունեցած են այն եւ անկէ չեն կրնար բաժնուիլ: Այնուհետեւ կ'աւելցնեն, որ եթէ բոլոր աշխրթները զինաթափուին, իրենք ալ իրենց ղէնքերը կը յանձնեն, իրենք չեն կրնար ստորագրութիւն տալ, թէ ղիրենք մոլորեցուցած է Մ. Տամատեանը, քանի որ ատով հաստատած կ'ըլլան, որ իրենք ապստամբներ են, բան մը որ իրականութեան չի՝ համապատասխաներ, որովհետեւ իրենք ո'չ հետեւած են Տամատեանին եւ ո'չ ալ անոր միջոցաւ մոլորուած ու ապստամբած են: Իսկ ինչ կը վերարկի տուրքերուն, թէ եւ իրենք ճիշդ չեն գիտեր ո'չ այս տարուայ եւ ո'չ ալ մինչեւ այժմ եղած տուրքերու չափը, բայց պատրաստ են վճարել՝ ապստամբ չհամարուելու համար, միայն թէ կառավարութիւնը պէտք է հաշուի առնէ իրենց տնտեսական դառն ու աղքատ վիճակը եւ ներէ տուրքերուն չվճարուելուն համար եւ դեռ օգնէ իրենց: Իսկ եթէ կառավարութիւնը եւ կուսակալ փաշան անպայման եւ անմիջապէս կ'ուզեն տուրքերը զանձնել, այն ժամանակ իրենք կը հեռանան երկրէն եւ կ'այրեն ամէն ինչ:

(Տես՝ Գլխիկ Տարոնցի «Ապստամբ Սասունը»):

Այս նամակէն ետք Թահսին Փաշան Յունիս Տիւրքի կը հեռանայ Սեմալէն իր տեղ նշանակելով Կէնճի միւթասարքի Մուսթաֆա Փաշան:

Այդ շրջանին Տալուրիկի իրանքի կողմերը մօտ 5000 զօրք կը կեդրոնացուի՝ նպատակ ունենալով գրաւել Մերկերի բարձունքը, այստեղէն զրոհելու համար Տալուրիկի գիւղերուն վրայ:

400 սասունցիներ կը ծրարեն թշնամիին դէմ հակադրուիլ յատուկ ինքնապաշտպանութեան Մարմին կը ստեղծեն, որուն կը յանձնուի ամբողջ շրջանի պաշտպանութեան կազմակերպումը:

Յունիս 17ին թուրքերը կը յարձակին Տալուրիկի վրայ, հայեր կը դիմադրեն, 2000նոց ջոկատ մը օդնութեան կը հասնի թուրքերուն: Հայերը կը նահանջեն, Շենիկցիները հերոս Գրիգորի ղեկավարութեամբ եւ Կելիկիւզէնցիները կը հասնին, յանկարծակի յարձակումով կը զրաւեն թշնամիի որոշ զիրքերը, թուրքերը կը դիմեն փախուստի, հայերը կը վերադարձնեն իրենց կորսնցուցած զիրքերը: Այս արիւնայի կորուստն հայերը կ'ունենան 200, իսկ թշնամին 1000է աւելի մարդու կորուստ:

(Տես՝ «Յուշարձան, նուիրուած Ս. Գ. Հ. Կ. Քառասնամեակին», էջ 286):

1893ի մարտերէ յետոյ, կառավարութիւնը կը սկսի նոր զօրքեր կեդրոնացնել Սասունի սահմաններուն վրայ: Տալուրիկի զիւզերը, ինչպէս նաեւ Շենիկը, Սեմալը, Ալիանքը, Կելիկիւզէնը, Աղբիկը կը պաշարուին:

Գրութիւնը ծանր էր: Բնակչութիւնը բաւականաչափ պաշար չունէր, թրքական զօրքի առկայութեան պատճառով, ան ստիպուած էր երեսի վրայ ձգել երկրագործական աշխատանքները եւ բարձրանալ լեռները: Սակայն թշնամին մարտական զործողութիւններու չի դիմեր: Սասունցիները, լքելով իրենց զիւզերը, լեռ բարձրացած էին գլխաւորաբար Անտոք, Քեփի եւ Մովսար: Իսկ լեռներուն վրայ դանոնք պարտութեան մատնելը շատ դժուար էր:

(Տես՝ Կ. Թառոյեան, «Ժողովրդային Շարժումները Սասունում», Երեւան, 1966, էջ 76):

Հաշուի առնելով այդ պարագան, թրքական զօրքի հրամանատարութիւնը բաւարարուելով քանի մը սասունցի հայերու ձերբակալումով, զօրքերը ետ կը քշէ դէպի Մշոյ դաշտերը: Սասունցիները լեռներէն կ'իջնեն իրենց զիւզերը եւ ամբողջ աշունն ու ձմեռը կը մնան խաղաղ:

1893ին Հնչակեան Կեդրոնի որոշումով Մուրատ Պոյաճեան Թիֆլիս եւ Անդրկովկասի այլ շրջանները կը շրջի զէնք ապահովելու համար: Հնչակեան զրոյզ Ղազարոս Աղայեան օգտակար կը հանդիսանայ:

Նոյն թուականին Գրիգոր Մովսիսեան 7 ընկերներով կը մեկնի Ահարոնք՝ աշխատելով զէնք փոխադրել Տալուրիկ եւ Շենիկ: Շատ բնական է որ Սասնոյ ղեկավարները 1890–1894ի շրջանին թուրք ու Համիտիէ զուղերուն յաճախակի յարձակումներուն ետին կը տեսնէին սպառնացող ահաւոր վտանգը եւ ահա թէ ինչո՞ւ 1894ին պայթելիք աղէտին առջեւ պատրաստ գտնուելը կը նկատէին կենսական գործ:

1894ի վարնան Հնչակեան գործիչներէն Արմենակը զէնք բերելու համար կը զրկուի Խնուս, Կարին, ապա Կարս: Խնուսի մէջ ան կը հանդիպի Հ. Պոյաճեանի (Մուրատ):

Անկէ ետքն է որ տեղի ունեցաւ 1894ի Յուլիս–Օգոստոսեան ապստամբութիւնը, որ պիտի մնայ որպէս ամենէն հերոսական էջերէն մին հայ ազատագրական պայքարին:

Փոքր փակագիծ մը:

Անձանօթ անուն մը չէ պատմարան Անուշաւան Մակարեանը: Այս պատմարանը գրեց «Երուանդ Օտեան»ի մասին հսկայ հատոր մը, անոր պորձերուն մէջէն ծաղրանքի առարկայ դարձուց «Ղասարէկեանն» (Նազարբէկեան Աւետիս), Յարութիւն Ճանկիւլեանը, որ Եզիպտոսի մէջ ապտակած էր զինք, այն օրերուն, երբ Օտեան՝ փաշայի մը ազարակին մէջ ծուարած, Պոլսէն եւ պայքարէն փախուստ տուած, կը ծաղրէր մարդիկ՝ որոնք առնուազն տասնեակ տարիներ բանտերու մէջ քաւած էին Սուլթանի դէմ զլուխ չձուլու իրենց յանցանքը եւ որոնք 1915ին կա՛մ կախաղանի վրայ եւ կա՛մ եղեռնին զոհերը դարձած էին... Այս մարդը՝ որ անձնական կեանքին մէջ «փանջունի» մը եղած էր սրբան Ռամկալար, նոյնքան Դաշնակցական թերթերուն մէջ օր նոր, տեսակէտ նոր փոխած էր... Անուշաւան Մակարեանի գրքին մէջ դարձած էր սոցիալիզմի առաջնորդ եւ չափանիշ(?) Թուրքիոյ մէջ սոցիալիզմի իրաւ հետեւորդ Հնչակեան պարազուխները դատելու համար... եւ մարդիկ գտնուեցան, որ տէր կանչուեցան 1960ական թուականներուն հոս, եւ կրկնեցին Մակարեանին ցարտուքները...

Ազգային ազատագրական պայքարը հետեւանքն էր, թուրք եւ ցարական բռնակալութեան կեղեքումի քաղաքականութեան, ժամանակի ընթացքին ձեւ փոխեց, սակայն խորքը մնաց նոյնը՝ ազատագրել հայկական հողերը, եւ ի վերջոյ անկախութեան տիրանալ, բան մը՝ որուն նուիրուեցան բոլոր այնիւ յեղափոխականները:

Ա. Մակարեանի դէմ, հայրենի պատմարան Կ. Քարամեան կը գրէ. —

«Իրաւացի չէ Ա. Մակարեան, երբ գրում է. «Ձեռքով ընդհանրութեան, 1860ական թուականների եւ յետագայ շրջանի ազգային ազատագրական շարժումները էպպէս տարբերում են միմեանցից նրանով, որ եթէ առաջին շրջանում շարժումը հեռանկար ունէր, ապա երկրորդ շրջանում ո՛չ մի հեռանկար չունէր»: Ինչ է ուզում ասել Ա. Մակարեանը: Անհեռանկար պայմաններում ձեռնարկ փոխելիս ազգային-ազատագրական պայքարից: Բայց դա իսկական մահ էր: ՔԱՂԱՔԱՎԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԱՍԱԽՈՐՈՒՄԸ ԻՆՉՊԻՍԻՆ ԷՆ ԼԻՆԷՐ, ՄԵՆՔ ԶԵԻՆՔ ԿԱՐՈՂ ԶԵՆՆԱՅՄԱՓ ԼԻՆԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՑ: Նման գծախային պայմաններում բնական եւ անհրաժեշտ էր նայել եւ ուղղել որոշ տակտիկական հարցեր, բացարձակից անցնել ընդյատակական:

«Եթէ ճշումների ուժեղանալը, աննպաստ պայմանները մեզ վախեցնէին եւ գէթ առժամեայ կերպով հեռացնէին ազատագրական պայքարից, այդ կը նշանակէր հաշտուել մահուան հետ: Ընդհակառակը, ուժեղացող յետադիմական պայմաններում պէտք էր ուժեղացնել ընդդատակեայ ընդվզումը եւս: 1905ին դաժանօրէն ճշուեց ոռոսական յեղափոխութիւնը: Տակտիկայի փոփոխութեամբ այդ «լիկվիտացում» յեղափոխութիւնն այնքան ուժեղացաւ, որ 1917ին հասաւ իր նպատակին, հաստատեց պրոլետարիատի տիկտատուրան, «մեզ էլ մնում էր անել նոյնը», կը գրէ Կ. Քարամեան:

Շարունակելով իր տեղին թելադրանքները, պատմարան Կ. Քարամեան կը նշէ, որ յաջողութեան հեռանկարի (անմիջական — Զ. Գ.) բացակայութիւնը ստուեր չպէտք է գցէր մեր ունեցած հեռանկարի վրայ: Այդ հեռանկարը ի հարկէ հայ ժողովուրդը միայն իր սեփական միջոցներով չէր կրնար իրականացնել: «Դրա համար էլ ճշուած միւս ժողովուրդներէ եւ աշխարհը զեկավարող մեծ տէրութիւններէ շրջանում մեզ օգնողներ որոնելը հրամայական պահանջ էր դարձել, փրկութեան պատրանք: Մենք լաւապէս պէտք է ուսումնասիրենք ժողովուրդներէ կեանքի դասաւորումը, փոխ-ներդրութիւնը եւ փորձէինք այն ի նպաստ մեզ ծառայեցնելու: Մեր ազգային ձգտումները իրականացումը տարիներ, զուգէ դարեր տեւէր»:

(Տես՝ «Հայ ժողովրդի Ազատագրական Պայքարի Օրինաչափութեան Հարցի Շուրջ», Կ. Քարամեան, Երեւան, 1969, էջ 38-39):

«Անուշաւան Մակարեանը դարձեալ սխալում է երբ կարծում է, թէ նոր դարաշրջանում հայ ազգային ազատագրական շարժումը Արեւմտահայաստանում յառաջդիմական չէր, որովհետեւ «... դեկավարում էր ուստիայ յետադիմական պուրժուազիայի եւ նրա պարտիայի՝ Դաշնակցութեան կողմից...»:

Ըստ պատմարան Ան. Մակարեանի հայ ազգային, ազատագրական շարժումը ծառայում էր «... մի կողմից անգլիական, գերմանական ու ֆրանսիական իմբերիալիստներին, իմբերիալիստական պուրժուազիային, միւս կողմից ցարիզմին»: Նոյն հաւանականութեամբ Ա. Մակարեանը կարող էր ասել նաեւ, որ այն ծառայում էր նաեւ թուրք Սուլթանիզմին եւ նրա նորածաղ պուրժուազիային: Չէ՞ որ Դաշնակցականները Երիտ. Թուրքերի մտերիմներն էին եւ հայ ազգային-ազատագրական շարժման «զեկավարները»...:

«Կրկնում ենք՝ դերակատարները մնում են դերակատարներ, բայց նրանց սոցիալական ծագումը երբեք չի կարող ազգային-ազատագրական շարժումը վերածել «ԱՆՏԵՂԻ», «ՄԽԱԼ», «ՎՆԱՍՍԿԱՐ», «ԻՄԲԵՐԻԱԼԻՉՄԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» մի ձեռնարկութեան: Հայ ազգային-ազատագրական շարժումը միշտ մնաց ողբանալ ճգնաժամարդու միջ ու ջանք: Հայ ազգային-ազատագրական շարժումը վնաս էր միայն անշուշտ ժողովրդների թշնամիներին, կեղեքողներին: «Թշնամուն թշնամին իմ թշնամին է» կամ «Բարեկամիս թշնամին իմ թշնամին է» ընդունուած ճշմարտութիւններ են: Հայ ազգային-ազատագրական շարժումը ուղղուած էր ժողովրդների թշնամի, արիւմախում սուլթանիզմի դէմ, հետեւաբար եւ դրական մի շարժում էր: Ցարիզմը բարեկամ էր մեր թշնամի սուլթանիզմին, հետեւաբար թշնամի էր եւ մեզ: Այդ այդպէս լինելով հայ ազգային-ազատագրական շարժումը կարող ենք ասել. «ՈՅ ՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՏԱՂԻՄԱԿԱՆ ՁԻ՝ ԵՂԵԼ, ՁԻՐ ԷԼ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ, քանի որ այն միշտ սահմանափակուած էր իրրեւ մարդ սպրեւու, սեփական տուն ունենալու, կեանքի, գոյքի ու պատուի ապահովութիւն ձեռք բերելու մէջ: ՄԵՆՔ ՄԻԾՏ ՁԳՏԵԼ ԵՆՔ ԼԻԾՑ ԱՁԱՏ ԼԻՆԵԼ, ԵՐԲԵՔ ՁԵՆՔ ՑԱՆԿԱՑԵԼ ԼԾԱՂԻՐ ԼԻՆԵԼ: Մեր ազգային-ազատագրական շարժումը միշտ էլ դրական է եղել, որովհետեւ թուլացնել ժողովրդների բանտը, նշանակում է ուժեղացնել պրոլետարիատի վերելքը»:

(Տես՝ Կ. Քարամեանի գիրքը, էջ 41-42):

*
**

«1893 եւ 1894 թուականների ամառը, Սասունի լեռներում Հնչակեան ակիտացիայի հետեւանքով տեղի ունեցան զիւղացիական շարժումներ — դրում է լէօն — որոնք Հնչակեանների կողմից որակուեցին որպէս ապստամբութիւն թուրք կառավարութեան դէմ: Այդ շարժումների ողին Հնչակեան հայդուկային մի փոքրիկ խումբ էր, որի ղեկավարն էր Մուրատ անունով Հնչակեան յայտնի գործիչը (Համբարձում Պօրաճեան): Այս հատուածում Լէօն երկու կարեւոր միտք է արտայայտում: Այդ մտքերից մէկին մենք համակարծիք ենք, իսկ միւսը ստորկի էր ենք համարում, մեր կարծիքով, Լէօն Սասունի այդ ղեկավարն ամենայն իրաւամբ զիւղացիական շարժումներ է համարում, ըստ երեւոյթին նկատի ունենալով, որ այդ շարժումները զիւղացիութեան սոցիալ-տնտեսական անազորոյն կեղեքման հետեւանք էին եւ իրենց մէջ որեւէ քաղաքական պահանջ չէին պարունակում: 2) Լէօն այդ շարժումների ողին, հետեւաբար, կազմակերպիչը, համարում է Հնչակեան Կուսակցութիւնը: Մեր կարծիքով, այդ ղեկավարն իրաւացի չէ (?) մեր յարգելի պատմաբանը: Այդ մասին նա որեւէ տուեալ չունի, բացի նրանից, որ շարժման մասնակիցների մէջ արձանագրում է Հնչակեան մի փոքր խմբակ: Գոնէ՞ մեր տրամադրութեան տակ եղած արխիւային փաստաթղթերի հիման վրայ այդպիսի եզրակացութեան գալը ոչ մի վկայութեամբ չի հաստատուում... մինչդեռ ցարիզմի դիտարկումները հայերի ամէն մի թէկուզ չնչին քաղաքական էլոյթ ունեցնում եւ պատկերում էր որպէս քաղաքական ապստամբութիւն: «... Լէօն պարզապէս հաւատացել է «Հնչակ»ի անհիմն յայտարարութիւններին, որը Սասունի ապստամբութեան մէջ տեսնում էր մի յեղափոխութիւն, որի նպատակն էր լուծել հայկական հարցը»:

(Տես՝ Ս. Մարկոսեան «Արեւմտահայութեան վիճակը ԺԹ. Դարու վերջերին», Երեւան, 1968, էջ 191-192):

Թէ՛ Ս. Մարկոսեանը զիւղացիական շարժում որակուելուն համաձայն է Լէօնին հետ, ատիկա իրողութենէն բան չի փոխեր անշուշտ, բայց թէ՛ շարժումին Հնչակեան Կուսակցութեան կողմէ կազմակերպուած ըլլալուն մասին Լէօնը, «Հնչակ»ի, Կ. Թատոյեանի, հայրենի եւ թուրք պատմաբաններու, վեց մեծ պետութիւններու եւ Հայաստանի արխիւներուն, հայոց պատմութիւնը դրող բոլոր պատմաբաններուն արխիւները չէ՛ տեսած, չէ ուզած տեսնել, կամ իր չուղած տողերը աչքէ անցընելու եւ համոզուելու քաջութիւնը չէ ունեցած, ատիկա իր գիտնալիքն է: Սասնոյ ապստամբութիւնը 1890ին սկսած էր կազմակերպուիլ: Մ. Տամատեանը հոն մասնաճիւղեր հաստատած էր եւ Դէնքու Չաուշը, Քօլօղը, Անդրանիկը, Հրայրը, Մուրատը այդ շարժումները զիւղացիական կազմակերպած էին Հնչակեան Կեդրոնի հրահանգով, ատիկա այնքան անտարակուսելի է, որ այդ մասին չենք ուզեր ծանրանալ: Միայն կը ցուինք որ Ս. Մարկոսեան արխիւի տապանակի մէջ խեղդուած է...: Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի եւ Մեսրոպ Մաշտոցի Մատենադարանը պէտք է գիմէ համոզուելու համար, որ շարժումը Հնչակեաններու կողմէ կազմակերպուած էր եւ թէ՛ Լէօն ասելի ծանօթ էր մեր պատմութեան, թէ՛ կուզ մենք անոր հետ պատմական հարցերու եւ յատկապէս ազգա-ազատագրական պայքարներու դիտարկման հարցին մէջ ամենէն ասելի տարակարծիք եղողներէն ըլլանք:

**

Մուրատ իր շուրջ կը համախմբէ Շենիկի, Սեմալի կոուուզ ու-
ժերը իրենց խմբապետներով եւ կ'ըսէ:—

«— Ժամանակն է կոուուզ ուժերը կարգի դնելու, թշնամին կամաց կամաց
կը մտնենայ: Ուրեմն դո՛ւն, Գրգօ, քու խումբովդ եւ Սեմալիցիներով բռնէ աջ
կողմը, իսկ դուք՝ Աւօ, Պետօ, Սազօ, առէք Կելիեցի եւ Աղբաջի ձեր քաջերը եւ
խմբապետ Պօղոսի հետ միասին անցէք դէպի ձախ թեր: Դո՛ւք ալ, Տէր Գարբեէլ
եւ Տէր Քաջ, առէք Տալօրիկցի քաջերը եւ մեր Գէորգի (Չաւուշ) ու Աղամի հետ
կանգնեցէք մէջտեղ, սպասելով իմ կարգադրութիւններուն: Կին կոուուզներուն մէջ
էին 67 տարեկան Ալիանցի Համաէն 7 մանչ գաւակներու մայր, Շաքէն՝ Գրգօյի
հարսը եւ Մարգօն՝ Սեմալի Գորգէի մայրը:»

Այս կարգադրութիւններէն յետոյ Մուրատ երգել կուտայ «Մեր
Հայրենիք»ը, ապա առջեւ կուզայ ու յուզուած ձայնով կը յայտա-
բարէ:—

— Սիրելի եղբայրներ՛ր, քաջ ընկերներ, այսօր մեզի համար
տօնի եւ ուրախութեան օր է, որովհետեւ մենք կը կոուիմք Հայրենիքի
Ազատութեան համար: Գուցէ մեզմէ շատերը իյնան այս կռուին մէջ
ու մեռնին, բայց այդ մահը կ'ըլլայ մեր պարծանքը, մեր պսակը:
Զվհատինք թշնամիի բազմութեան առաջ. ան անարգար է, շուտով
կը տապալուի: Մեր կռակը ցոյց չտանք թշնամիին, այլ ցոյց տանք,
որ մենք արժանի գաւակներն ենք մեր քաջ նախահայրերուն, հերոս
Սասունցիներուն:

«Կեցցէ՛ Հայաստան, Կեցցէ՛ Սասուն:»

(Տես՝ «Գէորգ Չաւուշ», Պէյրութ, 1972, Աւօ, էջ 53-54):

**

Տարոնի Հնչակեան Վարչութիւնը ընդառաջելով Սեմալի Ժո-
ղովի կոչին, կը հրատարակէ հետեւեալ կոչը:—

«Հայ ժողովուրդ, Սասուն եւ Տարոն սաստիկ հալածանքներէ
հարկադրուած, պարգած են յեղափոխական կարմիր դրօշակը: Ուրի
կանգնեցէ՛ք ամենուրեք եւ միեւնոյն ուժգնութեամբ կռուեցէ՛ք թշնամ-
ւոյն դէմ, քանի որ ամենուրեք միեւնոյն վիճակն ու հալածանքը
կը տիրէ:»

«Թող չկարծեն մեր հայ եղբայրները, թէ մենք ընդարձակ պատ-
րաստութիւն, պաշար, զէնք, դրամ, ռազմամթերք ունինք երկար
դիմագրաւելու թշնամւոյն յարակիմանց, այլ՝ ունինք յուսահատու-
թիւն, ծանր ճշմունք: Լուս ու մունջ կորսուելու տեղ՝ կռուելով մեռ-
նելու պատրաստակամութիւնը մղեցին մեզ այս գործին»:»

(Տես՝ «Պատմութիւն Ս. Դ. Հ. Կ.», Ա. Կիտուր, 1963, Պէյ-
րութ, էջ 143-4):

Սուլթանը կ'որոշէ կործանել Սասունը: Բաղէշի կուսակալ
Թահսին Փաշան կ'անցնի արշաւողներուն գլուխը եւ կը յարձակի Կե-
լիէկիւզանի վրայ, Սալիլ Փաշան՝ Անդոքի վրայ, Զէքի Փաշան՝ Կէլէի
վրայ:

1894 Օդոստոս 3ին ընդհ. յարձակողականի կ'անցնին թուրք
զորքերը: Թնդանօթի ռումբեր կը տեղան ամէն կողմէ:

Օդոստոս 8ին Անդոքի եւ Սպաղանքի վրայ յարձակում, Սա-
սունցիք կը կռուին յուսահատօրէն, բայց քաջարար:

Օդոստոս 9-12 կոիւնները կը մեղմանան: Անօթութիւնը կ'ընկճէ
կոուուզները:

Օդոստոս 13ին թշնամին նոր ուժերով կը յարձակի Անդոքի
վրայ: Ռազմամթերքը կը սկսի հատնիլ: Հայեր հերոսաբար կը դի-
մադրեն:

Թուրքերը հաշտութեան առաջարկ կը ներկայացնեն: Ժողով:
Երկու տեսակէտ: Մուրատ կ'ազաչէ որ չխարուին: «Ծուղակ մըն է»
կը կրկնէ ան: Օդոստոս 15ին կուսակալը անձամբ կը միջամտէ որ
հաւատան հաշտութեան առաջարկին:

(Տես՝ «Մեծն Մուրատ», Սիրվարդ, Փրոփիտենս, էջ 41-42):

Հաշտութեան հաւատացողներ կը կորսուին ձորի մէջ, մնաց-
եալները կը շարունակեն կռիւը հերոսաբար: 160 հողի ձորին մէջ կը
Չարգուին Անդոք լեռնէն վար իջնելէ ետք: 11 հողի կ'ապաստանին
քարայր, Շաքէ իր ընկերուհիներով հերոսաբար կը նահատակուի:
Ծուխին չղիմանալով կը յանձնուին Մուրատ, Գէորգ Չաւուշ եւ ըն-
կերները:

«Քիրտ մը հրացանի կոթով ուժով մը զարկաւ Մուրատի գլխուն եւ զայն
ուշաթափ բրաւ, կը գրէ Գէորգ Չաւուշ: Մեզ տարին բանակ, եօթ անգամ թնդա-
նօթ պարպեցին: 15 օր ետք մեզ փոխադրեցին Սեմալ: Ներկայացուցին Երզնկայի
Միւշէր Շաքիի Փաշային... ապա ծեծել ու շարչարել, ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ բուն
քնացանք...»

«Հարցաքննիչին առջեւ հանեցին... Մուրատ մէկ մէկ պատասխան գրեց...
չորրորդ օրը մեզ տարին Մուշ, հոն ալ բաւական շարչարեցին: Երկու ամիս ետք
գիս, Մուրատ, Գասպար, Աղամ եւ Կարապետ տարին Բաղէշ: Մեր ընկերներէն մէ-
կը՝ Ռուսաստանցի Սենեքերիմ Մուշ բանտին մէջ մեռաւ:»

«Բաղէշի մէջ բանտ գրին... Մուրատը շատ շարչարեցին... Ջուրի տեղ քա-
րիւղ խմցուցին, 24 ժամ ոտքի կանգնեցուցին... Այդ շարչարանքներէն ետք՝ Մու-
րատ հիւանդացաւ ամբողջ մէկ ամիս: Մուրատին 101 տարի վճիռ տուին, իսկ ինծի
եւ ընկերներուս 15ական տարուան վճիռ:»

«1895ի Յունուարին վճիռ տուին, Ապրիլ 10ին կրկին մեզ Մուշ վերադարձու-
ցին հիւպատոսներուն հրամանաւ: Ապա տոանձին սենեակներու մէջ գրին, 10 օր
ետք մեզ տարին հիւպատոսներու քով... Երկար բարակ հարցաքննութիւն... Մու-
րատին քննութիւնը 3 օր տեւեց... ծեծը գաղբեցուցին...»

«Այս հարցաքննութիւններուն ժամանակ ոչ ոքի մտքն կ'անցնէր, թէ ձեր-
բակալուածներէն մէկը իրենց փնտած Մուրատն է, զոր ողջ բռնողին բաւական
մեծ գումար մը խոստացուած էր»:

Սպաներէն մին կը մտնենայ, ապա կը սլոռայ.

— Ասիկա ապստամբներուն պետն է, նոյնինքն Մուրատը, իմ դասընկերը Պոլսոյ Բժշկական վարժարանէն...:

Թուրքերը իրենց ուրախութենէն խելայեղ բացազանութիւններ կ'արձակեն:

Մուրատի եւ Գէորդի ձերբակալութենէն յետոյ, Սասունի մնացած Ֆետայիները առիժ կտրած կը կոտին թշնամիին դէմ, կուրծք տալով բոլոր շրջաններուն մէջ:

Կառավարութիւնը կը հեռացնէ Ձէքի Փաշան ... Սասունցիներու մէկ մասը կ'ապաստանի Մշոյ դաշտը, միւս մասը կը մնայ լեռներու մէջ:

«... Մուրատ կը մերժէ բանտէն փախչիլ, պատճառներ յառաջ բերելով խորհուրդ կուտար Գէորգիին, որ ինք փախչի...»:

*
**

Դժբախտարար Ս. Մարկոսեան ալ, փոխանակ անձամբ Հնչակեան արխիւներուն դիմելու, բաւարարուած է Լէոյի գործէն մասնակի մէջբերումներով եւ հետեւարար արիշին եզրակացութիւնը շահագործած:

«... Մենք չենք ժխտում, որ այդ ժամանակ Հնչակեանները գործում էին Թուրքիայում, բայց նրանք աշխատում էին կեդրոններում՝ Կ. Պոլսում, Տրապիզոնում, Վանում եւ այլ քաղաքներում ու դաւադրական(?) խմբակներից այն կողմը չէին անցնում, նպատակ ունենալով իմբերիալիստ պետութիւնների ուղղորութիւնը հրաւիրել հայկական հարցի վրայ», կը գրէ Ս. Մարկոսեան:

Հակառակ Ս. Մարկոսեանի ցանկութեան, ըսենք, որ Հնչակեան Կուսակցութիւնը ԳՕական թուականներուն Թրքահայաստանի, Կիլիկիոյ, Փոքր Հայքի եւ Մեծ Հայքի բոլոր նահանգներուն, գաւառներուն մէջ հիմնած էր իր մասնաճիւղերը, զինուորական խմբակները ինքնապաշտպանութեան համար՝ Ձէլլոյի, Մինաս Օղլուի, Ժիրայրի, Ա. Աչքպաշեանի, Ղուկաս Վարժապետի, Անտոն Ռշտունիի, Յ. Մեղաւորեանի, Ռ. Պէրպէրեանի, Ռ. Խանազատի, Մարո Նազարբէկեանի, Ծ. Կաֆեանի, Խ. Կէրէքցեանի, Արփիարեանի, Փարամազի, Սեւ Սանդրոյի, Գայի եւ հարիւրաւոր գործիչներու շնորհիւ: Այս մասին թող կարգայ թէկուզ Հայրենակցական Միութիւններու հրատարակած բոլոր զիրքերը եւ բոլոր այն հրատարակութիւնները՝ որոնք գրուած են Արեւմտահայաստանի օրեւէ գաւառի մասին, եւ ցոյց տայ մեզի մէկ շրջան, ուր Հնչակեան վարչութիւն գոյութիւն ունեցած չըլլայ: Յարգելի պատմաբանը պէտք է զիտնար, թէ քանի մը ուսուցիչներ չէ՛ որ այդ հսկայական տարածուած աշխատանքներուն լրծուած էին, այլ այդ աշխատանքին լծուած էին բոլոր այն հայորդիները, որոնք կը տաղանայէին, կը տառապէին մեր ժողովուրդի դժոխային պայմաններուն մէջ՝ Յովհաննէս Թումանեանը, Երվանդատէն, Ա. Իսահակեանը, Ղ. Աղայեանը, գաղաթները մեր գրականութեան՝ որպէս Հնչակեան գործիչներ Թիֆլիսի Մետեխի բանտը նետուած էին 1895ին եւ արսորուած մինչեւ Օտեսա...:

Բարեբախտարար, հայրենի պատմաբաններ չեն բաժներ մեծ մասամբ Արտ. Ոսկերիչեաններու, Լէօներու, Ս. Մարկոսեաններու տեսակետները, ազատագրական պայքարի զնահատման մասին սխալ նկարկացութիւնները:

Ինչ կը գրէ պատմաբան Կնեսպ Թառոյեանը, «ժողովրդական Եւրոպացիները Սասունում», 1966ին Երեւան լոյս տեսած իր հատորին 102րդ էջին մէջ: Սուլթանական բռնակալութեան դէմ ուղղուած 1894 թուականի սասունցիների ելույթը ինքնապաշտպանական բնույթի ժողովրդական ապստամբութիւն էր, որը հետեւանք էր այն դժոխային պայմաններին, որոնցում ապրում էին Սասունի հայ գիւղացիները: Այդ ապստամբութեան եւ ընդհանրապէս Սասունի շարժումների մէջ Հնչակեան գործիչների մասնակցութիւնը անհերքելի է:

Եւ աւելին՝

«Հնչակեաններից Մ. Տաւատեանը, Հ. Պոյանեանը, Ա. Ղազարեանը (Հրայրը) եւ ուրիշներ ձգտում էին համազգային բնույթ տալ ներքեւից ծաւալուող Սասունի շարժումներին, համախմբել հայերի ուժերը ընդդէմ թուրք ու փրյուտ կեղեքիչներին»:

Կ. Թառոյեան կը մեղադրէ, որ Մ. Տաւատեանի Սասնոյ վիճակի մասին գրած նամակը լոյս ընծայուած է «Հնչակ»ի մէջ եւ ասիկա վնասակար եղած է շարժումին:

Կրկին Կ. Թառոյեան կը նշէ. «1894ի Սասունի ապստամբութիւնը սուլթանական բռնակալութեան դէմ ուղղուած ժողովրդական ելույթ էր, որ հետեւանք էր Սասունի հայ բնակչութեան սոցիալ-ֆառաքական եւ ազգային դաժան ճնշման հարստահարման ու իրաւազրկման»:

Այս մէջբերումէն ետք կը կարծենք որ աղնուութիւնը պիտի ունենայ հայրենի պատմաբան Ս. Մարկոսեան, առնուազն չժխտելու, թէ այդ շարժումը Սասունի՝ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութեամբ եւ որոշ աշխատակիցներու շնորհիւ հնարաւոր եղաւ: Մեր նպատակը Սասնոյ պատմութիւնը տալ չէ, ոչ ալ մանրամասնութիւնները ապստամբութեան: Սասունցի հայրենի մշակոյթի ծառայ Վարդան Պետոյեանի ձեռագիրը՝ որ շատ մանրամասնութիւններ կուտայ Սասնոյ պատմութեան այդ շրջանի վերաբերեալ, դեռ հայրենի խմբագիրներուն քննութեան առարկայ կը մնայ... Սակայն կարելի է կարգաւ այս առթիւ մանրամասն Հնչակեան Սմբատ Բիրատի «Յիւտըզէ Սասուն» հատորը, որ ըստ 1962ին անձնապէս վկայութեամբը Վ. Պետոյեանի՝ վաւերագրական բնույթ ունեցող գիրք մըն է:

Այս մասին կ'եզրակացնենք, ընդհանրապէս մեր մասին ժխտական կեցուածք ունեցող պատմաբան Համոյ Վարդանեանի վկայութեամբ:

«Սասունի ապստամբութիւնը ինքնաբոյիս էր եւ արդարացի, որը նշանակալից աւանդ է հայ ժողովրդի ազատագրական պայլարի տարեգրութեանց մէջ»:

Սասունի ժողովրդի անձնուրաց զաւակները, նախապատրաստեցին ու ղեկավարեցին ժողովրդի հերոսական սլայքաբլիթը թրքական բռնապետութեան դէմ:

Պատասխանելով Ս. Մարկոսեանի նման շարժումի ղեկավարութիւնը Հնչակեաններուն չիջողներուն՝ Հ. Գ. Վարդանեանը իր «Արեւմտահայերի ազատագրութեան հարցը» հատորին մէջ կը գրէ. «Անկասկած է, որ նրանց ապստամբական շարժման կազմակերպման, դեկավարման եւ ուղղութիւն տալու գործում նշանակալից դեր խաղացին Հնչակեան կուսակցութեան մի քանի աչքի ընկնող գործիչներ՝ Մուրատը (Հ. Պոյաճեան), Միհրան Տամատեանը, Բուրգը, Գէորգ Զաւուշը, Հրայր-Դժոխքը»:

Հ. Գ. Վարդանեան կը վկայէ, որ Սասունի կոտորածը Սուլթանական կառավարութեան զիտակցօրէն կազմակերպած զործն էր, բայց միջազգային յառաջդիմական մարդկութեան խոր ցասումը լռեցնելու նպատակաւ, նա փորձած էր հերքել կատարուած դէպքերը եւ անոնց մասին եղած հաղորդումները:

«Մշակ» թերթին ղրկած իր թղթակցութեան մէջ Արփիար Արփիարեան կը գրէր. «Սասունի Յանձնախումբին Եւրոպացի անդամները գացած են Սասուն, գացած են լեռները, հորեր փորել տուած եւ ցարդուածներուն ոսկորները գտած են: Այլ ամէն ինչ հաստատուած է»: («Մշակ», թիւ 51, 1895):

Իսկ Թուրքիոյ բարեկամ անգլիական պաշտօնական «Կապոյտ Գիրք»ին մէջ գրուած է. «Թուրք անկարգ կառավարութիւնը վաղուց ի վեր է, որ մտածում էր ոչնչացնել Սասունի շրջանի ազգաբնակչութիւնը: Այդ բնակիչների անկախութեան ձգտումները նա հանդուրժել չէր կարողանում: Իր մտադրութիւնն էր ոչնչացնել հայերին քիչ-քիչ, անգգալապէս եւ առանց աղմուկ հանելու»:

Եւ դեռ ակնարկելով քրտական ցեղապետներուն եւ զօրքին «Կապոյտ Գիրք»ը կը յիշէր, որ «Սովի մատնուած հայ գիւղացիներից պահանջում էր — Սուլթանը — կերակրել գիրեմի կոտորող զինուորները, կը վերցնէր նրանց ոչխարներն ու կովերը, նրանց վերջին պատառ հացը: Բայց գիւղացիները անգոր էին բաւարարելու կառավարութեան պահանջը եւ ահա թէ ինչու գայլը բարկացաւ գառան վրայ եւ ասաց նրան. «Մի՛ պղտորիր իմ ջուրը»:

Թուրք բռնակալութեան մասին տարրական դադափար կազմելու համար, աւելորդ չենք նկատեր հոս մէջբերել հետեւեալ թիւերը կոտորածներուն՝ որոնք տեղի ունեցած են ԺԹ. դարուն:

1822ին կոտորուած են 50 հազար Յոյն:

1850ին կոտորուած են 10 հազար Հայ եւ Նեստորական:

1860ին կոտորուած են 11 հազար Մարոնի եւ Յակոբիկեան:

1876ին կոտորուած են 10 հազար Պուլկարներ:

1894ին կոտորուած են 12 հազար Սասունցի Հայեր:

Գումար՝ 93 հազար Քրիստոնեայ:

«Ամբողջ Թուրքիոյ հայերուն թիւը, կը գրէ «Սապահ» թրքական թերթը, 1893ին մայրաքաղաքի մէջ բնակուածներն ալ նկատի առնելով 997,369 է»...:

«Անա այն գործեան հանդոյցի յուժումը, որ վաղուց թրքաց կառավարութիւնը աշխատած էր դտնել եւ կարծում էր, թէ արդէն դտնէ է: Ի՞նչ պէտք կայ բարենորոգութիւնների, քանի որ բովանդակ Թուրքիոյ մէջ հայերի թիւը 997,369 է... Հայերն այլեւս Ալլահի կամքով եւ Սուլթանի շնորհիւ պաղթելու վրայ են, եւ շուտով այդ կեա՛վուրների հետքն անդամ չի մնար»:

«Այսպիսով, կը գրէ Հ. Վարդանեանը, հայերին գաղթականութեան մղելու, նրանց մեքոտարար բնաջնջելու եւ նրանց թիւը արիեստականօրէն նուազեցնելու մտապարհով քրքական կառավարողները իրենց իրաւունք վերապահեցին արխիւ նետելու ինչպէս Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածը, այնպէս էլ Մայիսեան բարեփոխումների ծրագիրը»:

Նախապէս ըսուածներէն կը պարզուի, որ նախորդ շրջաններուն ալ Սուլթանները ձգտած են իրենց ջարդի քաղաքականութիւնը կիրարկել, երբ որ վստահ եղած են մեծ պետութիւններու գործնական միջամտութեան անկարելիութեան, երբ որ հաստատած են, թէ հաստատութիւնները զօրացած են անոնց միջեւ եւ կամ երբ կրցած են սկուտեղի վրայ, օրինակ, Կիպրոս մը նուիրել Անգլիոյ որպէսզի պաշտպանուին Ռուսիոյ դէպի Հարաւ-Արեւմուտք յառաջխաղացքին դէմ: Դժբախտաբար, վեց Պետութիւններն ալ շարժած են իրենց սեփական տնտեսական շահերէն թելադրուած, եւ կողորդիտեան արցունք թափելով, փորձած են իրենց իսկ երկիրներէն ներս արդարութեան ի նպաստ զիրքորոշուած ազնիւ մտաւորականներուն աչքին փոշի ցանել, «ձեւական» կերպով բարեկարգութիւններուն ի նպաստ արտայայտուելով:

Սխալ է կարծելը, թէ Հայ Ազատագրական Պայքարի Ղեկավարները Գոսական թուականներուն այնքան ալ միամիտ էին չտեսնելու չափ 6 Պետութիւններուն լարախաղացութիւնը եւ Թուրքիոյ, «հիւանդ մարդու» հանդէպ Եւրոպայի նպաստաւոր դիրքորոշման ետին սեփական շահերով առաջնորդուելու պարագան... Սակայն տուեալ պայմաններուն մէջ, սեփական ուժերուն յենած կռիւը — կամքէ անկախ յաճախ — անխուսափելի էր, իսկ կարելի չէր միայն սեփական միջոցներով անկախութեան տիրանալ՝ առանց նաեւ փորձելու վեց Մեծերու հակասութիւններէն օգտուելու ճանապարհը: Իսկ ինչ կը վերաբերի ազատագրական պայքարը առաջնորդող ազնիւ յեղափոխականներուն, ի վերջոյ անոնք ուրիշ էլք մը չէին դտներ եւ չէին կրնար դտնել քան ըմբոստանալու արդար ուղին, բռնութեան դէմ, ջարդի դէմ հնարաւոր միջոցներով դուրս դալու ուղին:

Առանց Գուժ Գափուի, Սասունի, Ձէյթունի, Շապին-Գարահիւսարի, Վանի, Սուէտիոյ, Փոքր Հայքի եւ այլ շրջաններուն հայկական դիմադրական փորձերուն ալ, մտածուած ջարդի եւ տեղահանութեան քաղաքականութիւնը պիտի կիրարկուէր հայուն դէմ: Այդ ընդվզումները ոչ թէ պատճառը, այլ՝ արդիւնքը հանդիսացան, եւ կամ շարունակուող եւ վտանգաւոր դարձած ջարդերուն դէմ հերքաբար կոուելով մահաճառը՝ սողալէն նախընտրելու քանապարհը: Անխուսափելի էր կորուստը, սակայն ուրիշ ճանապարհ չունէին «Սարի գաւազ, քարի որդի, չին քաջ հայոց» նոր Վարդանները՝ որոնք Սուլթանական եւ Յարական բռնակալութեանց դէմ իրենց դոյուլթիւնը պահպանելու համար նախընտրեցին ՊԱՏՈՒԱՒՈՐ ՄԱՀԸ՝ ՍՏՐԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ:



Գ Լ ՈՒ Ն Զ.

ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՒՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Եւրոպական Յանձնաժողովը կը կազմուի եւ տեղւոյն վրայ (Սասուն) հասնելով գործելու կը սկսի եւ կը գործէ 24 Յունուար 1895էն մինչև 6 Յունիս 24 «... Կը յաջողին հաստատել տալ, թէ Հայք ո՛չ թէ ապստամբ էին, այլ յարձակման դէմ ինքզինքնին կը պաշտպանէին (Գ. Օգանեան «Հայապատում», Մարգուան, էջ 300) եւ թէ հայեր ջարդուեցան առանց հասակի եւ սեռի խտրութեան երեք շաբաթուան ժամանակամիջոցին մէջ Օգոստոս 12էն Սեպտեմբեր 4, եւ թէ թուրք կառավարութեան փնտռածը ո՛չ թէ այնչափ խանակիչ Մուրատ (Պոյաճեան) մը գտնելն էր, որչափ Կէլէյիկիւզան եւ Տալուրիկ գաւառները հիմնովին ջնջել, այսինքն հայ Սասունի կեդրոնները: («Պատմութիւն Արեւելեան խնդրոյ եւ առաջնորդ Հայկական Հարցի», փրագ. Կ. Թումայեան, Լոնտոն, 1905, հատոր Բ. էջ 676):

«Մայիսեան ջարդերը... որ յայտնի նշան մըն է թէ Բարձրագոյն կամքի գործադրութիւնն էր որ համարձակօրէն կը կատարուէր, ապա թէ ոչ կառավարական իշխանութեանց զիւրին էր կոտորածին առջեւն առնել, Լիթլ լոկ խուժանին յանկարծական շարժումը եղած ըլլար անոր պատճառը: Թող որ այդ տեսակ շարժումներ բնական չեն տաճիկ տարրին, որ սովոր է միայն բարձր հրամանով մը գործել իր ամէն ձեռնարկները եւ շարժումները:

«... Բարձրագոյն քննիչ Շաքիր փաշայի հոն դրկուելը ժամանակագրական եւ տեղագրական զուգընթացութիւն մը կը ցուցնեն կոտորածներուն տարածուելուն հետ, եւ թէ ամենուրեք քաղաքական եւ զինուորական իշխանութիւններ ո՛չ միայն չեն արգիլած, այլ եւ յաճախ ուղղակի գործակցած են, եւ յայտնի միջոցներ բանեցուցած են ջարդուողներուն հակառակ եւ ջարդողներուն պաշտպանութեան: (Տես՝ «Ազգապատում», Գ. հատոր, 1961 Պէյրութ, էջ 5027): ... Այդ ամէն ձեռնարկներու (կոտորած) հիմ կազմած է հայերու կարծեցեալ ապստամբութիւնը, որ երբեք իրականութիւն ունեցած չէ Եւ ուրեք ուրեք (տեղ տեղ) ցոյց տրուած ընդդիմութիւնը քրտական հոսանքին դէմ անանպաշտպանութեան տարբեր բան մը չէ եղած: Իսկ կոտորածին զերկատարներուն զլուխը գտնուած են նոր կազմակերպուած Համիտիկ գունդերը: ... Որոնց կ'օգնէին զրդուած ամբոխը ու զրդուած խուժանը, եւ երբեմն նոյնիսկ կանոնաւոր զինուորութեան զուժարտակները: («Ազգապատում» էջ 5031):

**

Սուլթանին Բ. Դրան պատասխանը՝ Ֆրանսայի, Ռուսիոյ, Անգլիոյ դեսպաններու կողմէ մատուցուած Հայկական Բարեկարգութեան Ընկերութեան (Սամոյ պատմութեան) յանձնարարութեան 3 Յունիս 1895ին:

1) Սուլթանի գլխաւոր ցանկութիւնը եւ ձգտումները, իր երկրին եւ իր հպատակներուն բարգաւաճութիւնը ամէնէն արգարագոյն կզանակով աճեցնել եւ զարգացնել լինելով, Ն. Կ. Վեհափառութիւնը (Համիտ Բ.) արգարագատ համարեց չսահմանափակել վարչական այս բարենորոգումներու կիրարկումը, իր կայսրութեան միայն մի մասի մէջ, այլ բոլոր վիլայէթներն ալ անոնցմով նպաստուորեալ:

Ուրիշ սուտ խոստում...

Յօդուած 4.— «Որոշուեցաւ վարչական պաշտօնէութիւններու, քաղաքային զօրքի, ոստիկանութեան մէջ, մուսուլմաններէն զատ, Օսմանեան երկրին մէջ բնակող ոչ-մուսուլման ուրիշ հպատակներ կանչել եւ գործածել, իւրաքանչիւր վիլայէթի մուսուլման եւ ոչ-մուսուլման ազգաբնակչութեան համեմատութեամբ»:

(Տես՝ «Հայոց Հարցի վաւերագրերը» Լէօ, Թիֆլիս, 1915):

**

«...Սակայն Երեսասարգ Թիւրքերի կուսակցութիւնը, տիրանալով կառավարութեան, շատ շուտ ցոյց տուեց որ նա էլ չպիտի կարողանայ արմատապէս փոխել զրուսութիւնը Թուրքիայում: Որքան հեռանում էին Սահմանադրութեան առաջին օրերի հանդէսները, այնքան աւելի ու աւելի պարզուում էր որ Համիտեան րեժիմը բոլորովին չէ անցել եւ Յրա աւանդութիւններէ շատերն ընդգրկել են եւ Երեսասարգ Թիւրքերը:

«Այս հանգամանքը շատ պարզ արտայայտուեց մանաւանդ Հայաստանի զործերի մէջ: Սահմանադրութիւնը, խորհրդարանը, ազատութիւնները համարեայ ու չինչ փոփոխութիւն չէին մտցրել այն յարաբերութիւնների մէջ, որոնք տիրում էին այդտեղ: Քրդերի վերաբերմամբ կառավարութիւնը նոր քաղաքականութեան չդիմեց եւ հայերին կեղծեց թուրքացիներու պէս մնաց նրանց արտօնութիւնը: Հարտահարութեան հարցը, որից ծնուել էր Հայոց Հարցը, չէր լուծուում, հետեւաբար եւ անլուծելի էր մնում նաեւ Հայոց Հարցը:

«... Եւ հայ ժողովրդի զրկանքներն ու տառապանքները մնում էին առաջւան պէս, եւ դարձեալ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանն էր, որ ինչպէս Բոնապետական Ռէժիմի ժամանակ, հաղորդում էր Թիւրք կառավարութեան գաւառներում կատարուած հարստահարութիւնների դէպքերը եւ խնդրում էր — զուր, ի հարկին — միջոցներ ձեռք առնել»:

(Տես՝ «Հայոց Հարցի վաւերագրերը» Լէօ, Թիֆլիս, 1915):

**

«... 1894-1896 յիշատակելի տարիներից, երբ հայերը ենթարկուեցին բարբարոսական կոտորածի Փոքր Ասիայում եւ Կ. Պոլսոյ մէջ անգամ, նրանց զրուսութիւնը բոլորովին չէ փոխուել դէպի լաւը: Հայկական նահանգների մէջ մտցուելէ րեֆորմների այն հրամանը, որ հրատարակեց Սուլթան Ապտիւլ Համիտը

1895 թ. Հոկտեմբեր 20ին Ռուսաստանի, Ֆրանսայի եւ Անգլիոյ ճնշման տակ, մեռած տարբեր մնաց. Հայոց Հարցը օրը օրին սուր կերպարանք է ստանում, հողերի մեծամասնութիւնը յափշտակուած է եւ յափշտակուած է քրդերի ձեռքով եւ իւրանութիւնները ո՛չ միայն չեն արգելում այդ, այլ նոյն իսկ հովանաւորում են որ քրդերի աւագութիւններն ու կողոպուտները զաղար չեն առնում, որ նրանք սպանում են հայերին եւ բոնի հարկադրում են հայ կանանց իսլամանաւորութեան: Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի քաբիրը, որ ներկայացուած է Բ. Դրան եւ Արգարագատութեան Միաստիւն, ճիշդ է նկատում այն քշուտութիւնների եւ հարստահարութիւնների պատկերը, որոնց ենթարկուած են Սուլթանի հայ հպատակները:

«Վերոգրեալ հանգամանքները ինքն ըստ ինքեան բաւականաչափ բացատրում են հայ զանգուածների աւելի եւ աւելի ուժեղացող ձգտումը դէպի Ռուսաստան եւ կատարեալ հիմք են տալիս հաւատալու այս ուղղութեան անկեղծութեանը: «... Մեր հիւպատոսները միաձայն վկայում են, որ այժմ բոլոր հայերը, առանց կուսակցութիւնների խտրութեան Ռուսաստանի կողմն են»:

(«Հայոց Հարցի վաւերագրերը» Լէօ, 1915, Թիֆլիս, էջ 302-3):

**

Հայրենի պատմաբան Հ. Հ. Մարտիրոսեանի վկայութիւնը.

«Սուլթանական Թուրքիայի ժողովուրդների ազատագրական շարժումները մէկ միասնական հոսանքի մէջ համախմբելու գործին մեծ խոչընդոտ էին հանդիսանում միւսուլմանական մոլեռանդութիւնը, պուրժուական նացիոնալիզմը եւ կայսերապաշտ տէրութիւններու մեքենայութիւնները: Այստեղ Համիտի բոնակաւական ուժեղում տապալելու համար այդ բոլոր ազգային ցաք ու ցրեւ ուժերից մէկ ընդհանուր ճակատ կազմելու խնդիրը իրենց վրայ վերցրին Երիտ. Թուրքերը... եւ դառնալով զրուսութեան տէրը, հռչակեցին «ազատութեան», «հաւասարութեան», «արդարութեան» եւ միայն իրենց Թուրքերի համար հասկնալի սպեսեֆիկ «արդարութեան» լուծանքները:

«... Բայց իրականում նպատակ ունէին (Ե. Թուրքերը) պահպանել Թուրքերի գերեշխանութիւնը ոչ-Թուրքերի նկատմամբ, այն տարբերութեամբ միայն, որ քրդական փեոտալական (Սուլթան Համիտի) ճնշումը փոխարինելու էր զալիս պուրժուական ազգային ճնշումը:

«Թուրքիայում ծաւալուած ազգային-ազատագրական պայքարը իր զարգացման ճանապարհին բախուում էր Երիտ. Թուրքերի Հակա-Դեմոկրատական եւ հակա-ժողովրդական շովինիստական քաղաքականութեան հետ, բանի որ, ինչպէս նշել է Լենինը. «Երիտ. Թուրքերի «այդ յեղափոխութիւնը քշումի է Օսմանեան կայսրութեան մէջ սկսուող պրոլետարական պայքարին»:

(«Մերձաւոր ու Միջին Արեւելի Երկիրներ եւ Ժողովուրդներ, Ե. Թուրքիա» 1970, էջ 298-9):

**

Պատմաբան Եր. Մարգարեանի վկայութիւնը.—

«Սուլթանական կառավարութիւնը, ջնալով ցոյց տալ, որ Թուրքիայում Հայկական Հարցը զոյոթիւն չունի, դիմում էր ամէն մի խարդախ միջոցի՝ հայերի Թիւր Արեւմտեան Հայաստանում պակաս ցոյց տալու համար: Քաղաքական

այդ նկատառումից ելնելով, 19րդ դարու երկրորդ կեսից Արեւմտեան Հայաստանի վարչական կառուցումաճշքը նա յաճախ փոփոխութեան էր ենթարկում: Հայալատ Հայկական Վիլայէթներին միացնում էր ջրտարնակ եւ թրքարնակ շրջաններ, որպէսզի նուազեցնէի Հայերի տոկոսային գերազանցութիւնը մահմետական ժողովրդներին նկատմամբ: Հետագանիներով այդ նոյն քաղաքականութիւնը, սուլթանական կառավարութիւնը յաճախ դիմում էր մարդահամարի վիճակագրական տուեանները միտումնաւոր նենդափոխմանը: Իր պաշտօնական հրատարակած սալնամեներում Արեւմտեան Հայաստանի 2.5 միլիոն Հայերի թիւը նուազեցնում էր մինչեւ 700 հազարի»:

Փրոֆ. Մ. Արզումանեան կը վկայէ.—

«Վիճելեան Գերմանիան, արտօնեալ դիրք գրաւելով թուրքիայում պաշտպանում էր Ապտիւլ Համիտի արիւնոտ ուժիւրը: Այդպէս, 1896 թուականի Հայկական ջարդերի կազմակերպման ժամանակ Սուլթան Ապտիւլ Համիտի անձնական խորհրդատուն էր գերման դեսպան Ջաուրման, որը մեծադոյն զոհունակութեամբ հաղորդեց Պերլին, «Նա, ով պատկանում էր այդ ազգին (Հայերին) անպայմանօրէն մտրուում էր, անկախ նրանից, թէ որտեղ են գտել կամ հանդիպել: Ամենքին գետին են գլորում ու ոտնատակ տալիս, սրախողխող անում կամ կրակում այնքան, մինչեւ որ շունչը փչի: Ջաուրման իր բրուսական ըթամտութեամբ դտնում էր, որ այդ ջարդերն ունեն «սոցիալիստական գումաւորում», բոտ որում թուրքերի կոխը Հայերի դէմ իրը «չունենուր դասակարգի պայքարն էր ունենորնների դէմ»: Բայց երբ դեսպանի տէրերը Պերլինից հաղորդեցին, թէ «սոցիալիզմը, վտանգ է սպառնում ո՛չ թէ թուրքերի, այլ Հայերի կողմից», նա անմիջապէս շրջադարձ կատարեց ու պաշտպանելով այդ կարծիքը Սուլթանին ասաց, որ Հայերին կոտորելը «նրա՛ որպէս սովորեցի իրաւունք ու պարտականութիւնն է» ուստի եւ արդարացի են գործադրուած բոլոր խիստ միջոցները»:

(Տես՝ «Հայաստան 1914—1917» Երեւան, էջ 49):

«Հայերին հալածելն ու բնաջնջելը՝ բուն թրքական բնակչութեան պետական քաղաքականութիւնն էր, որը յատկապէս ուժեղացաւ ժ.թ. դարի կէսերից: Արիւնարբու կամ «Կարմիր Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.ի» տիրապետութեան շրջանը (1876—1909)՝ դա զուլումի ժամանակաշրջանն էր, որը Հայ ժողովուրդին պատճառեց ահաւոր աղէտներ եւ զոհեր: Նենգ ու դաժան այդ վախկոտ բռնակալը... պահանջում էր «Վերջ տալ Հայկական Հարցին՝ ոչնչացնելով բոլոր հայերին»:

(Նոյն գիրքը)

«Բնորոշ է, որ Երիտ. Թուրքերը մոռացան նաեւ իրենց նախկին «եղբայրներին»՝ Դաշնակներին, որոնք ակտիւօրէն մասնակցել էին նրանց յեղաշրջման կազմակերպմանը: Այժմ նրանք բոլորովին աւելորդ էին, եւ Երիտ-Թուրքերը դիտմամբ լուծեան էին մատնում Դաշնակցութեան բոլոր պահանջներն ու նոյնիսկ արհամարհում դրանք»:

(Նոյն, էջ 37):

«Իզրայէլին (Անգլիոյ վարչապետ)՝ Թուրքիոյ տէր կանգնելը իր քաղաքականութեան տակմը դարձուց: Օսմանեան գերիշխանութեան պահպանութիւնը նեղուցներու եւ Միջին Արեւելքի մէջ անոր կը թուէր անհրաժեշտ Հնդկաստանի ճամբուն ապահովութեան համար, որովհետեւ Սուլթանը բաւարար ուժ ունէր այդ շրջանի մէջ կարգը պահպանելու համար, բայց ոչ վտանգելու չափ Հնդկաստանի ճամբան»:

«Կիրոսը (4 Յունիս 1878ին) ստանալէ ետք, հարիւր հազարաւոր Հայերու յաջորդող քսան տարիներուն զոհ դառնալը... դինն էր Կիրոսի հաւույն Անգլիոյ կողմէ վճարուած»:

«Սուլթան Համիտը՝ «Կարմիր Սուլթան», Հայաստանը նկատեց Երկրորդ Պուլկարիա մը, զոր պէտք էր բնաջնջել ժամանակին... Հետո գործադրելէ խոտացուած բարեկարգութիւնները, ան ցոյց տուաւ աճող անդթութիւն...»:

«1894—1896ին պատրուակ բռնելով Սասունի ժողովուրդին տուրք չվճարելը... ահաւոր ջարդի ձեռնարկեց թուրք բանակը: Սուլթանը Լորանովէն քաջալերուած... ջարդի դիմեց»:

ԺԱՆ ՓԻԷՐ ԱԼԵՄ
(Ֆրանսացի պատմաբան)

(Տես՝ «Լ'Արմենի» 1962, էջ 49—50):

Պատմաբան փրոֆ. Ջոն Կիրակոսեան կը վկայէ.—

«Թուրքիայի դէմ մղուող պատերազմը հայ ժողովուրդի համար ո՛չ թէ ուրիշ հողեր զաւթելու, ուրիշ ժողովուրդներ ստրկացնելու, նոր զաղութներ նրուանելու պատերազմ էր ներկայանում, այլ սեփական հայրենիքը, թրքական տիրապետութեան դարաւոր ստրկութիւնից ազատագրելու, սեփական հայրենիքը վերադառնալու մի պատեհ առիթ: ... Մի շարժում՝ որն ուղղուած էր թրքական բռնակալութեան դէմ, «պայքար էր Հայաստանում հայկական պետութեան համար»:

(«Առաջին Համաշխարհային Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը» 1914—1916 թ., Երեւան, 1967, էջ 203):

Գրականագէտ Սերկէյ Սարինեան կը վկայէ.—

«90-ական թուականները հայկական ազատագրական շարժումների պատմութեան մէջ գրուեցին մի քանի հերոսական դրուագներ...»:

«Պատահական չէ որ Լեինը «Հայկական յուզումները» յիշատակում է որպէս դարավերջի ազատագրական շարժումների պատմութեան ուշագրաւ արտայայտութիւններից մէկը:

«1894 թուականի Օգոստոս-Սեպտեմբերին տեղի ունեցաւ Սասունի աչքաւորութիւնը: Ազատաւեր յեռնաբնակները ազատագրական շարժումների պատմութեան մէջ վաւերացուցին Մի ՆՈՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐՈՒԱԳ...»:

«90-ական թուականների ազատագրական շարժումների շրջանում ուրոյն մշակակութիւն ունի նաեւ 1896ի վամի ինֆնապաշտպանութիւնը:

«90-ական թուականների ազատագրական շարժումների ԱՄԵՆԱՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐՈՒԱԳԸ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԵՆ ԷՐ՝ 1895—1896 թուականներին:

«Ամիսներ շարունակ ապստամբ հայերը դիմադրում էին քրքական 60 հազարնոց բանակին, մի քանի մակատամարտում տանելով փայլուն յաղթանակ, մինչեւ որ պարտուած Սուլթանը ստիպուած եղաւ ընդունել հաշտութեան բանակցութիւնները՝ ի կամս Զէյթունցիների»:

(«Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն», Գ. հատոր, Երեւան, Ներածութիւն, էջ 16):

«Ապտիւլ Համիտի 33 տարուան թագաւորութիւնը՝ Օսմանեան պատմութեան ամէնէն սեւ եւ ամօթալի շրջանը կը կազմէ՝ իր անորակելի եւ աննախընթաց վայրագութիւններով, հրէշային ոճիրներով, հարիւր հազարաւոր անմեղներու նահատակութեամբ եւ իր անբարոյացուցիչ, քանդող ու աւերող քաղաքականութիւնով»:

«Համիտ, իր վրէժխնդրութեան թոյնը ամէնէն աւելի թափեց մարդկային ամէնէն արդար եւ բնական իրաւունքներ եղող եւ քանի քանի անդամներ թանգիւմաքներով եւ դաշնադրութիւններով հանդիսաւորապէս խոստացուած եւ միշտ խոստում մնացած կեանքի, պատիւի եւ ստացուածքի ապահովութիւն պահանջող հայերուն վրայ եւ կազմակերպուած ջարդերով 300 հազարէ աւելի կեանքեր բնաջինջ նահատակեց Հայաստանի մէջ, ամբողջ գիւղեր ու քաղաքներ աւերակոյտի վերածելով»:

Ազգային աղատագրական պայքարի 1890-1896ի շրջանին անդրադառնալով, կարգ մը մտաւորականներ այն սխալ կարծիքը կը յայտնեն, թէ նկատի ունենալով որ անմիջական արդիւնք մը չտուին Պոլսոյ Գում Գափուի ցոյցը, Սասնոյ, Ձէյթունի եւ Վանի ապստամբութիւնները Օսմանեան Բռնակալութեան դէմ, եւ նկատելով որ 1895ի Մայիս 11ի 6 Պետութիւններուն ճնշումով հրապարակ դրուած եւ Սուլթանին կողմէ խոստացուած բարենորոգումները տեղի չունեցան եւ 300 հազար հայերու ջարդին պատճառ հանդիսացան, ուրեմն կը պնդեն ու կը կրկնեն, թէ մեղադրելի են հայ յեղափոխականները, քանի որ անոնք «Սուլթանին պատրուակ» ծառայած էին եւ ան ալ ջարդեց հայերը...:

Այս տրամաբանութեան հետեւողները կը մոռնան 1878ին ծրագրուած ջարդը, Արեւմտեան նահանգները հայերէն պարպելու, անոնց հողերը բռնազբաւելու, անոնց մինչեւ իսկ ընտանիքներուն պատիւը բռնարարողներուն կատաղի մոլեռանդութիւնը եւ դեռ, 50 հազարի հասնող զիւրտ եւ մարդասպաններէ կազմուած Համիտի կոշուղ պատժիչ խումբերուն կողոպտանքը, որոնք պատահական երեւոյթներ չէին...: Եթէ 300 հազարի ջարդը 1896ին տեղի ունեցաւ, ապա մէջ յանցաւոր չեն շնչակեան, Արմենական, Գաղափախական յեղափոխականները: 6 Մեծերու միջեւ սուր պայքարի իբր հետեւանք տեղի ունեցած տարակարծութիւններէն օգտուելու Սուլթանի ջարդի մտադրութիւնն է մեղադրելին: «Մայիսեան ծրագիրը» չգործադրելու չափ քաջութիւն մը չէր կրնար Սուլթանը ցուցաբերել, եթէ Գերմանիոյ, Աւստրո-Հունգարիոյ տնտեսական գետնի վրայ Թուրքիան սիրաշահելու նոր քաղաքականութիւնը չըլլար, կամ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ Թուրքիայէն ներս գիրար չէզոքացնելու, «պատուը» իբրամէ խելու խուլ եւ յաճախ հրապարակային պայքարը տեղի չունենար:

Սասունի ապստամբութեան համար Սասնոյ շրջանին մէջ միայն պէտք է տեղի ունենար ջարդը, Գում Գափուի ցոյցին համար՝ Պոլսոյ, իսկ Ձէյթունի ապստամբութեան համար՝ Ձէյթունը միայն «պատժուէր», (եթէ յեղափոխականներ չէզոքացնել եղած ըլլար Սուլթանի մտադրութիւնը, մինչդեռ 3000 հայաբնակ գիւղեր կ'այրեն եւ մոխրի կը վերածեն թուրքերը՝ Հայաստանի ամէնէն հեռաւոր եւ շատ հանդարտ գիւղերուն իսկ չինայելով), յատկապէս տուժող կը հանդիսանան 6 Նահանգները՝ ուր 1878ի զոյգ դաշնագիրներուն հիման վրայ, Թուրքիան խոստացած էր բարենորոգութիւններ մտցնել:

Թրքական զօրքը նոր թափով շարունակեց իր ցեղասպանութեան քաղաքականութիւնը Թուրքիոյ հայաբնակ բոլոր շրջաններուն

մէջ, ո՛չ թէ որովհետեւ քանի մը ապստամբական փորձեր կատարուած էին հայերու կողմէ, այլ որովհետեւ 6 Նահանգներուն մէջ գտնուող հայերը մեծամասնութիւն ըլլալով՝ կրնային ռեֆերանտումով կամ միջազգային քաղաքականութեան ի նպաստ հայոց դիրքորոշումէն օգտուելով՝ անջատուիլ Օսմանեան Կայսրութենէն...: Չէ՞ որ Յունաստանը, Սերպիան, Պուլկարիան, Հերցեգովինը, Ալպանիան, Խրիմը, Լեհաստանը, Ռումանիան մէկիկ մէկիկ բրցուած էին Օսմանեան Կայսրութեան ամբողջութենէն...:

Այդ Կայսրութեան մէջ, ո՞ր յիմար ժողովուրդը, ակնատես Օսմանեան Սուլթանի գլխի բռնութեան կրնար անտարբեր մնալ... եւ չիորձել ընդդիմել... Այսօր անոնք որոնք 70-80 տարի ետք կը փորձեն ազատագրական պայքարի մեր հերոսները ծաղրել ու անոնց ընդդիմումը անարգել, նոյն այդ պատմաբանները չեն փորձեր ծաղրել պուլկարները, յոյները, եւ վերջին 20-ամեակին արիւնոտ 7 տարի կռուելէ ու մէկ միլիոն զոհ տալէ ետք անկախութեան տիրացած ալճերիացիները...:

Ինչ կրնար ընել հայ յեղափոխութիւնը եւ չըրաւ, ունէ՞ր Սոցիալիստական Ռուսաստան մը՝ որուն կարելի ըլլար աղաւթիլ: Ուժերու անհաւասար ըլլալը պէ՞տք է մղէր մեր ժողովուրդը կքելու, սողալու, Սուլթանին ոտքը կամ ցարին ձեռքը համբուրելու համար:

Բնական է ուրեմն, որ անմիջական արդիւնք մը չտար Ազատագրական Պայքարը, ինչպէս բնական էր արդիւնք չտար ուսական Ա. յեղափոխութիւնը, բայց եւ վերջնական նպատակի հասնելու համար էր որ կ'առաջնորդէր հայ ֆաղափական միտքը եւ ատիկա տուեալ պայմաններուն մէջ ճիշդ ուղին էր հայ իրականութեան համար:

Բայց աւելի լաւ է որ փաստերը խօսին:

Անգլիացի պատմաբանի վկայութիւնը.—

«1893ին յեղափոխական քարոզչութիւնն ու գործունէութիւնը շեշտուեցաւ հայերուն մէջ: Քիւրտերը, որ կէս ոստիկանական ուժ մըն էին, բոլորովին անկանոն, կը քաջախիտեին աւելի ու աւելի ծանր տուրքեր գանձելով հայ գիւղացիներէն: Հայերը պարտաւորուած կը դիմադրէին անոնց պահանջներուն, որոշ պարագաներու մէջ բացայայտ կերպով: Թուրք իշխանութիւններու թիկունքը վայելելով զիւրտերը, հետեւաբար կը ձեռնարկէին ըմբոստութիւնը արեան մէջ խեղդելու:»

(Էջ 339):

«Գլխաւորաբար երեք պատճառներ նկատի առնուելու է Սուլթան Համիտի հայերը կատաղութեամբ ջարդելուն մէջ: Ա) Անհանդարտութիւն նախկին հաւատարիմ իր հպատակներուն մէջ՝ արդիւնք Պոսիոյ, Սերպիոյ եւ Պուլկարիոյ մէջ ծաւալուող ազգայնական շարժումներուն: Բ) Եւրոպական ուժերու միջամտութեան: Գ) Եւ ի վերջոյ այս վերջիններուն փոխադարձ կասկածանքներն ու մրցակցութիւնները»:

(Տես՝ «Արեւելեան Հարց»ը, Սըր ձոն Ա. Մէրիքը,

Էջ 397, 1963, Օֆսֆորտ):

Այլ տեղ մը նոյն գրքին մէջ՝

«Եթէ ըսուած է, Ռուսերու կողմէ Պաթումը, Արտահանը, Կարսը կամ անոնցմէ մէկը պահուին, եւ եթէ ապագային որեւէ փորձ կատարուի Ռուսիայէն, խաղաղութեան վերջնական դաշնագրի մէջ ճշդուած հողամասերէն զատ սեփականացնելու նորին Կայսերական Վեհափառութեան ասիական որեւէ նոր հողամաս, Անգլիա յանձնառու կ'ըլլայ միանալու նորին Կայսերական Վեհափառութեան զանոնք զէջի ուժով պաշտպանելու համար:

«Փոխարէնը, նորին Կայսերական Վեհափառութիւն Սուլթանը կը խոստանայ Անգլիոյ՝ զործադրելու անհրաժեշտ բարեկարգութիւններ եւ աւելի ուշ երկու Ուժերը պիտի համաձայնին կառավարութեան մէջ՝ Բարձրագոյն Դրան՝ այս հողամասերուն մէջ զանուող քրիստոնեայ եւ այլ հպատակներու պաշտպանութեան շուրջ: Եւ որպէսզի կարելի ըլլայ Անգլիան ի վիճակի դարձնել անհրաժեշտ քայլերը առնելով զործադրելու իր յանձնառութիւնը, նորին Կայսերական Վեհափառութիւն Սուլթանը կը հաւանի Կիպրոս կղզիի զբաւուրին ու կառավարուիլը Անգլիոյ կողմէ»:

(Մ.— Անգլո-թրքական գաղտնի համաձայնութիւնը՝ 1878ին Պերլինի ժողովին նախօրեակին, որպէսզի Կիպրոսը նուէր ստանալէ ետք Սուլթան Համիտէն, Անգլիա զայն պաշտպանէ ռուսական վտանգին դէմ...):

«... Ո՛չ թէ Հայկական Ազատագրական Շարժումները կամ ազգային կուսակցութիւնների գործառնութիւնն առաջ բերին քրքական բռնութիւններ եւ հայաջինջ ծրագրեր, այլ ընդհակառակը, աւելի վաղ ժամանակ Սուլթանական իշխանութեան մշակած հայաջինջ ծրագրերը եւ հայերի կոտորածներն առաջ բերեցին իրաւագուրկ հայ ժողովրդի պայքարի նոր բռնկումներ, ազատագրական ճիգեր եւ ձեւաւորուեցին հայկական ազգային կուսակցութիւններ, որոնք տարբեր ծրագրերով եւ տարբեր տակտիկական միջոցներով մասնակցում էին Հայկական Հարցի լուծման շուրջը մղուող պայքարին»:

(Տես՝ «Հայ ժողովուրդի Ողբերգութիւնը», Երեւան էջ 28):

ՏՈՒՓԹ. ՓՐՈՅ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

Լենին Օսմանեան Իթթիհատի մասին.—

«Երիտ. Թուրքերու պարթուական յեղափոխութիւնը, «թըշնամի էր Օսմանեան Կայսրութեան մէջ սկսուող պրոլետարական պայքարին»: ... Այդ յեղափոխութիւնը, ըստ Լենինի, չէր յարուցում մնչուած ազգերի աշխատաւոր մասսաների ինֆուրմացիոն եւ գործօն գործադուրսիւններ, չէր միաւորում թուրք աշխատաւորների եւ մնչուած ազգերի ազատագրական պայքարը»:

(Տես՝ «Լենին», «Երկեր», հատոր 15, էջ 268-269, Երեւան):

ԸՍՏ ԻԹԹԻՀԱՏԻ

«Օսմանեան Կայսրութեան բնոյթը պէտք է ըլլայ Մահմետական, պէտք է ապահովուին արտօնութիւններ մահմետական սովորութիւններու եւ հիմնարկներու համար: Միւս ազգութիւններուն կազմակերպութիւններ ունենալու իրաւունքը պէտք է արգիւլել, քանի որ ապակենտրոնացումը դաւաճանութիւն է կայսրութեան: Փոքրամասնութիւնները կը հանդիսանան այնպիսի մեծութիւններ, որոնք կարելի է հաշուի չառնել: Անոնք կրնան պահպանել իրենց կրօնը, բայց ոչ լեզուն: Թրքերէնի տարածումը կը հանդիսանայ լաւագոյն միջոց մահմետականութեան առաւելութիւնը հաստատելու եւ միւս ազգերը ձուլելու համար»:

**

«Երիտ. Թուրքերը պահանջում էին խաղաղ եւ բռնի միջոցներով ձուլումի ենթարկել հայերին, վերացնել պատմական մեծ անցեալ ունեցող հայ ազգը եւ հայոց լեզուն, աշխարհագրական քարտեսից, ջնջել Հայաստան անունը:

«... 1909ի Ապրիլին Ատանայում, Զէյթունում, Մարաշում եւ Հալեպում տեղի ունեցած հայկական կոտորածները, որին գահ գացին 30 հազար մարդ, ակնբախ ցոյց տուեցին, որ Երիտ. Թուրքերի համար հոգեհարազատ է արիւնարբու Սուլթան Համիտի հայաջինջ քաղաքականութիւնը Պանիսլամիզմի ու պանթուրիզմի ամենամոդային ու հրէշաւոր գաղափարը»:

(Տես՝ «Հայ ժողովուրդի Պատմութիւն», Գ. հատոր, Երեւան, 1967):

Վ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

Մ. Գիրսը՝ Պոլսոյ Ռուս Դեսպանը կը գրէր 1912ին.—

«Դրութիւնը Հայաստանի մէջ, իսկապէս այնքան ցաւալի է, որքան հին ռէժիմի ժամանակ»:

Ֆրանսացի տաղանդաւոր գրող Անաբոլ Ֆրանս կ'ըսէր.—

«Երբ մենք տեսանք Թուրքիոյ մէջ այդ դժբախտ դոճը՝ որուն հայեացքը լիակատար յոյսով ուղղուած էր դէպի մեզ, մենք վերջապէս հասկցանք որ Արեւելքի մէջ կը մեռնի մեր քոյրը, որ ան կը մեռնի միայն այն րանի համար, որ մեր քոյրն է: Անոր յանցանքը այն է, որ ան բաժնած է մեր զգացումները, սիրած է այն, ինչ սիրած ենք մենք, մտածած է այնպէս, ինչպէս մենք, հաւատացեր է այն ամենուն, ինչ րանի որ հաւատացած ենք մենք եւ մեզի նման ընդունած է իմաստութիւն, բանաստեղծութիւն ու արուեստ: Ատոր մէջ է անոր յանցանքը...»:

(1916, Փարիզ, Սորպանի մէջ խօսած մատեն հատում):

Լսենք Հայրենի զրոյղ Հրաշեայ Քոչարը.—

«... Ուրեմն քրքական բռնութիւնները եւ ազգասպանութեան այդ վայրենի ծրագիրն ու նրա գործադրութիւնը հայ ժողովրդի մէջ պիտի դիմադրութիւն յարուցանէին ու կազմակերպութիւններ ըստեղծէին՝ այդ դիմադրութիւնը ղեկավարելու համար եւ ո՛չ թէ այդ կազմակերպութիւնները եղան պատճառ թրքական բռնակալութեան, ինչպէս փորձում էին բացատրել իրենք, թուրք ջարդարարները եւ նրանց էլ կրկնել են տկարամիտ մարդիկ»:

(Տես՝ «Հայ ժողովուրդի Ողբերգութիւնը», Երեւան, Արամայիս Մնացականեանի զրքի յառաջարանը, էջ 8):

**

«1902ին Օստանայի գրաքննութեան կոմիտէն բռնադատուած էր հայերէն լեզուով գրուած 139 անուն թերթեր ու ամսագրեր, որոնք բերուած էին արտասահմանէն: Արգիւրուած գիրքերի մէջ կային «Հնչակեանների ընկերութեան հրատարակութիւններ»: Գրաքննիչը ուշադրութեան հրաւիրած էր Հնչակեանների ընկերութեան կողմից հրատարակուած (Սոցիալիստների Գրադարան, Լոնտոն 1891) Ս. Դիկչտայնի «Ո՛վ ինչով է ապրում» գրքի նախարանի վրայ:

«Եւ իսկապէս կարելի չէր շրջանցել այդ նախարանում շարադրուած մտքերը: Այնտեղ ասուած էր. «Հայերը ներկայումս ապրում են այնպիսի պահ, որը խոշոր նշանակութիւն ունի իրենց ապագայի համար: Կեանքն առաջադրել է այնպիսի հասարակական հարցեր, որոնք իրենց լուծումը կը գտնեն գոյութիւն ունեցող հասարակական կարգը բռնութեամբ փոխելու մէջ: Փոխել գործերի ներկայ վիճակը եւ ստեղծել նոր յարմարակէտ պայմաններ, որոնք մարդկանց համար վերջնական ազատութիւն տալու միջոցներ տային — ահա այն խնդիրը, որ առաջադրել է ինքը՝ կեանքը: Համագործակցել այդ խնդրի լուծման, կոչել յեղափոխութեան՝ յառաջադէմ եւ սոցիալիստական մամուլի պարտքն է: Նախանշուած նպատակին հասնելու համար անհրաժեշտ է սկզբում նախաձեռնել սոցիալիզմի հայր Կարլ Մարքսի, Ֆր. Էնկէլսի եւ նրանց հետեւորդների ուսմունքի թարգմանութիւնը»:

(Տես՝ «Մարքսիստական Տնտեսագիտական Մտփին Տարածումը Հայ Իրականութեան մէջ», (1890-1920), 1961 Երեւան, էջ 80):

ՓՐՈՑ. ԽԱՉԻԿ ԳՈՒՎԱՆԵԱՆ

«... Արտասահմանէն բերուած գիրքերը... Մարքսի «Վարձու աշխատանք եւ կապիտալը», Աթէնքի Սոցիալիստական Գրադարանի հրատարակութիւնները, 1893 թ. «Սահմանադրութեան էութեան մասին» Ֆ. Լասալի գիրքը եւ այլ գիրքեր: (Նայմ)

**

«... «Աշխատանքի Ազատագրութեան խմբի» գործիչների եւ անձամբ Պլեխանովի հետ ծանօթ են եղել Հնչակեանների պարտիայի հիմնադիրներ՝ Աւետիս Նազարբէկը, Մարո Նազարբէկը եւ ուրիշներ, պէտք է ենթադրել որ Պլեխանովը որոշակի ազդեցութիւն է ունեցել նրանց վրայ»:

«Նազարբէկը աշխարհ ման եկաւ, չարն ու բարին տեսաւ, ուրախացաւ եւ տխրեց եւ վերջը եկաւ Մոսկուա՝ յոգնած ու ծերացած, մէջքին անցնալի բեռը, դիմացը լուսալող վերելք...»

«Յանկացաւ, երազեց, գործեց ու պայքարեց յանուն տառապող մարդկութեան երջանկութեան եւ տեսաւ սեփական աչքերով, տեսաւ իր երազանքների իրականացումը, տեսաւ ու հրճուեց»:

(«Հանդիպումներ անցեալի հետ», Երեւան, 1969, էջ 177):

ԱՐՇ. ԱՐՇԱՐՈՒՆԻ

**

«Բ. Դուռը իր գործելակերպով, հայերուն առջեւ բաց կը թողու միայն մէկ ճամբայ եւ դա՝ Յեղափոխութեան ճամբան է»:

1904, Յունիս 9

Ֆրանսայի Ա. Գ. Նախարար Պ. ՏԵԼՔԱՍԷ

**

«Հայ Ժողովուրդին մտաւորական եւ մարտական ընտրեալ զաւակները Լորտ Գիմպլըէյէն, Լորտ Սալզպրիէն եւ Տէլքասէէն շատ առաջ ըմբռնած էին Թուրքիոյ ներքին անիշխանական կացութիւնը եւ այդ կացութեան գլխաւոր պատասխանատուն Համիտին ըլլալը եւ ըստ այնմ կազմակերպուելու եւ թշնամիին դէմ պաշտպանուելու անհրաժեշտութիւնը: Հրապարակ կ'իջնէին հետզհետէ Ժերայրներ, Քաջ Վանահայր Դանիէլ Վարդապետներ, Չէլլօներ եւ բազմաթիւ Հնչակեան հերոսներ, որոնք պատուհասեցին վատ թշնամին եւ քաղցին դէպի ազատութիւն տանող այն ճանապարհէն, ուրկէ քաղած էին ճնշուած բոլոր Ժողովուրդներու անվեհեր զաւակները»:

Փարիզ

Բ. ՎԱՐԱԶՊԱՏ

**

Պատասխան Բիւսթէմ փաշայի .—

«Ես պատասխանեցի, թէ մեր տեսակէտով, իր պաշտպանողականը բոլորովին թոյլ էր, մենք կը գանգատինք այն բանի համար, որ Թուրք կառավարութիւնը իր պարտականութիւնը չի՝ կատարեր, որ դաւառական շատ քաղաքներու մէջ ընկերային դրութիւնը կատարեալ անիշխանութիւն է, եւ որ վերջապէս պէտք է ընդունիլ թէ՛ այս կացութեան ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնար Սուլթանի վրայ»:

(«Կապոյտ գիրք», Թուրքիա, թիւ 1, էջ 118):

Անգլիոյ Ա. Գ. Նախարար ԼՈՐՏ ՍԱԼԶՊՐԻ

**

«Չէլլօները իրենց մարտական խոյանքներով եւ համբրական քաջութեամբ մշած յաղթապանծ կռուներով, Սուլթանական Բռնակալութեան կաշմուած կապանքներուն տակ հեծող հայութեան հողիին մէջ անթեղուած ռազմունակ բոցերը արծարծող Առաքեալները հանդիսացան»:

ԱՌ. ԱՐԱՊԵԱՆ

ԿԱՆԱՂԱՆԻ ԱՌՋԵԻ

«Կրծքիս կը սեղմեմ բոլոր հայ պաշտելի գործիչները: Թող երբեք չթուլնամ եւ միշտ բարձր պահեմ յեղափոխութեան դրօշը — Հնչակեան դրօշը: Կարուստով պիտի շահիմք: ... Կեցցէ՛ մոր Հայաստան»:

Գաղատիոյ բանտ

Թորոս Մառուկեան - ԶԷԼԼՕ

**

«Թորոսները անմահացան իրենց մահովը: Խորին յարգանք անոնց անթառամ յիշատակին»:

ՆՂ. ՍԻՐՎԱՐԳ

**

«Սուլթան Համիտ Բ., որ սկսած էր Կայսրութիւնը կառավարել որպէս բիրտ բռնակալ մը, օգտուելով Մեծ Պետութիւններու հակամարտութիւններէն, հայերու նկատմամբ որդեգրեց սիստեմաթիկ հալածանքի եւ կոտորածի քաղաքականութիւն մը: Հայաստանի մէջ քրտութիւնը եւ ընդհանրապէս՝ պահպանողական եւ կրօնամոլ թրքութիւնը իր ձեռքին լաւագոյն գործիքները եղան, որոնց շնորհիւ կըրցաւ 33 տարի (1876-1909) ճնշումի տակ պահել Թուրքիոյ մէջ ապրող այլազան ազգութիւնները»:

«... Մոլեռանդութիւնն ու նեղ ազգայնականութիւնը ծայր աստիճանին հասցնելով, իշխանութեան գլուխ գտնուող Երիտ. Թուրքերը ձեռնարկեցին ոչ-Թուրք ազգութիւնները իրենց մէջ ձուլելու կամ թրքացնելու քաղաքականութեան, բան մը որ Սուլթանական վարչակարգը իր հինգ հարիւր տարիներու իշխանութեան ընթացքին չէր կրցած իրագործելը»:

(Տես՝ «Կտակն էր Նահատակներուն», 1965, Պէյրութ, էջ 14-15):

ԱՐՇ. ՇԻՐԱԿԵԱՆ

«Պատահած էր աւելի կանուխ, Պոլսահայութիւնը խորապէս ցնցող դէպքը: Պայազիտի հրապարակին վրայ կախաղան կը հանուէին Հնչակեան 20 յեղափոխական եւ մտաւորական լաւագոյն գործիչներ: Ամէն տուն կու լար ու կ'ողորար եւ վրէժը կը փոթորկէր մեր պատանի հողիները»:

Նոյն

«Սահմանադրութեան հինգ տարիները Հայնի համար Ոսկեդարու մը չափ արժէք ունեցաւ: Իսկապէս Հայնեցին (Տիրանակերտի շրջան) զարգացման մէջ թռիչք կը կատարէր:

«Յեղափոխական դործիչներ՝ Փարմազ, Վահագն, փոթորկեցին կարծես, կրթական մշակներ իսկապէս լուսաւորեցին: Չարմանալի էր տեսնել Հասարակ ջուլհակներու, կոշկակարներու ընկերարանական, գիտական հարցերու շուրջ ցոյց տուած հետաքրքրութիւնները, յաճախ գոլջնականներու հետ ունեցած վիճարանութիւնները:

«Ո՛չ միայն դպրոցական պարզ հանդէսներ, այլ ներկայացումներ, քաղաքական դասախօսութիւններ կը տրուէին ամէն կիրակի:

«Ցաւալի էր որ շատ կարճ տեւեց:

«Դուր կը լարուէր, հասկցողներ եղան, ըսին թայց լսող չեղաւ»:

(Տես՝ «Հայնի», Բ. Կ. Ժամկոչեան, 1952, Պէյրուք, էջ 281):

«Արդարեւ, նոյն այն ողին որ ջարդերու միջոցին իսկ հերոսական դիմադրութեան եւ ինքնապաշտպանութեան հրաշները գործած էր Վանայ մէջ Աւետիսեանի՝ եւ Զէյթունի մէջ Աղասիի առաջնորդութեամբ, 1896ի Օղոստոսին յանկարծ պայթեցաւ Պոլսոյ Օսմանեան Իրամատան մէջ, Դաշնակցականներու սարքած աներեւակայելի ցոյցովը, որ թէեւ պատճառ եղաւ մայրաքաղաքին մէջ իսկ տեղի ունեցած նոր եւ սոսկալի ջարդի մը՝ բայց նոյն ատեն հասկցուց բռնակալ դահիճին՝ Եւրոպայի եւ Ազգին իսկ երկշտ պահպանողականութեան, թէ այլ աննուաճ սաստկութեան մը աստիճան հասած էր հայութեան կուրծքին տակ բոյն դրած յեղափոխութեան կիրքը:

«Երկու ամիս վերջը, Նոյեմբերի սկիզբները կառավարութիւնը կը սկսէր հետեւիլ մեղմացումի սիրաշահող քաղաքականութեան»:

(«Խրիմեան Հայրիկ», Թորգ. Ե. Գուշագեան, Փարիզ, 1925, էջ 166):

«Դրաքննութիւնը խիստ եւ դերակայ կը սպաննէր մամուլը: Մամուլի մէջ ուրիշ բան չէր կարգացուեր, բայց եթէ Սելամլիի արարողութիւնը, պաշտօնատուութիւնները, աստիճանի բարձրացումները, պատուանշանի բաշխումները, ժամանումները եւ մեկնումները, մահերը, շոգենաւերու ժամանակացոյցերը եւ ծանուցումները»:

«Մղձաւանց»

ՃԵՆԱԼ ՆՈՒՐԻ
(Թուրք գրող)

«Հայ ազատագրական շարժումները սոցիալ-տնտեսական խոր արմատներ ունեցող շարժումներ էին: Դրանք որպէս կանոն, եղել են օտարերկրեայ զաւթիչների դէմ մեր ժողովրդի ազատութեան ու անկախութեան համար մղուած մասսայական շարժումներ, կրել են արդարացի բնոյթ, ողբնչելի են ժամանակակիցներին ու ապագայ սերունդներին, իրենց անջնջելի կնիքը դրել մեր պատմութեան վրայ»:

(Տես՝ «Հայ Ազատագրական Շարժումների պատմութիւնից», 1962, Երեւան, էջ 7):

«Թրքական Սուլթանները, որոնք ամբողջ աշխարհին յայտնի էին որպէս բիրտ ու դժման բռնակալներ, բարբարոսաբար ճնշում ու կեղեքում էին ոչ միայն հայերին, այլև իրենց լծի տակ գտնուող վրացիներին, յոյներին, սերպերին, պուլկարներին եւ ուրեշներին: Թուրքիայի տիրապետութեան տակ գտնուող հայերը զրկուած էին ամենատարրական իրաւունքներից, ապահովուած չէր նրանց կեանքն ու գոյքը, ամէն քայլափոխին ոտնահարում էր նրանց ազգային արժանապատուութիւնը, կրօնը:

«... Սուլթանական Թուրքիան հպատակ ժողովուրդների համար մի կատարեալ բան էր: Ինչպէս Պալքանեան սլաւ ժողովուրդները, այնպէս էլ հայերը ազգային եւ սոցիալական դժման ճնշման էին ենթարկուում: Շատ աւելի ծանր էր Արեւմտահայ գաւառների գիւղացիութեան վիճակը, որտեղ սանձարձակ կերպով իշխում էին Թուրք փաշաներն ու քերտ պէկերը:

«... Եւ որքան ուժեղ էր լինում ճնշումը, այնքան ցատումսալից էր լինում ըրողը: (էջ 31): Արեւմտահայերի ճնշումն աւելի ուժեղ էր, այդ պատճառով էլ նրանց մօտ ազատագրական պայքարն աւելի սուր բնոյթ ստացաւ»: (էջ 32): («Տես՝ «Հայ Ազատագրական Շարժումների պատմութիւնից», Փրոֆ. Վ. Պարսամեան, 1953, Երեւան):

*

**

«Բանուորը յառաջդիմութեան միակ անխորպիս, վստահելի ու յանդուգն տարն է, սոցիալիզմի փառաւոր դրօշին ներքեւ ծառայող անխորտակելի ու աննահանջ մարտիկը: Բայց դա երբեք մեզ չի արդիւնէր, որ մենք գիւղացիութեան մէջ ալ պրոպականտ մղենք, ընկերվարական շունչը տարածենք ու կազմակերպենք զայն ընկերվարական հողի վրայ՝ որքան որ պայմանները մեզ ձեռնտու կը լինեն: Մի՞թէ ընկերվարական կարող է վհատիլ՝ դժուարութիւններու առաջ»:

(«Կայծ», 1911, Պոլիս, քիւ 6, Գեղամ վանիկեան, էջ 18):

*

**

«Արդէն Հնչակեան կուսակցութիւնը առաջին օրէն կասկածոտ վերաբերում ունեցաւ Ազատական Թուրքերու հանդէպ եւ չիաւատաց անոնց խօսքերուն անկեղծութեան՝ օսմանցիկներու միջեւ կատարեալ հաւասարութիւն հաստատելու անոնց մեծաշուք յայտարարութիւններուն վերաբերմամբ: Բայց Դաշնակցութիւնը, որ գործակցած էր անոնց՝ ազատական կարգերը վերահաստատելու համար Օսմանեան կայսրութեան մէջ, դեռ երկար ատեն պահեց անոնց հանդէպ իր վստահութիւնը, եւ քուրբերէ աւելի եռանդ բերաւ, իր միամտութեանը մէջ, քուրբ Սահմանադրական (?) պետութեան տալու իր բացարձակ եւ անվերապահ անկախութիւնը, պետութեան մէջ հիմնել ի վեր գոյութիւն առած պետականութիւնները ջնջելու Իքթիհատեան ֆազաֆականութեան ուժ տալով, բոլոր հոգիով»:

(«Պարտիզակն ու Պարտիզակցիկ», Գրիգոր Մխալեան: 1938, Գահիրէ, էջ 615):

*

**

«Մամսնի մէջ սարսափ կը տիրէր, բայց թայան եւ կոտորած տեղի չունեցաւ: Չարձակայի զաւառակին մէջ թէեւ յարձակումներ, սպանութիւններ եւ թալան եղան, բայց հայերու կողմէ ցոյց արուած աժեղ դիմադրութեան շարժիչ զանգուածային բնոյթ չստացան: Միհաս Օղլուի (Հնչակեան) խումբը եւ անուրը, այս տեսակէտով, ունեցան մեծ նշանակութիւն եւ ազդեցութիւն: Կիրատն եւ Թիբէլյուի դերը մնացին բնզանուր ջարդէ: ... Օրտու քաղաքի հայերը պատրաստ էին զիմադրելու»:

(Տես՝ «Պատմութիւն Հայկական Պոնտոսի», Յովակիմ Յովակիմեան, Պէյրուք, էջ 188):

«Իթիլաֆ կուսակցութիւնը... Ասոնք Իթիլաֆի ընդդիմադիր ուժ մըն էին եւ կողմնակից էին վարչական ապակեզրոնացման: Ինչպէս Իթիլաֆու, նոյնպէս Իթիլաֆը ժողովրդական կուսակցութիւն մը չէր...»:

«... Իթիւաֆականները զօրաւոր չըլլալով հանդերձ, պատեհ առիթին Իթ-
թիւստը տապալելու եւ իշխանութիւնը իլելու յաւակնոտութիւնը ունէին»:
(Նոյն գիրքը, էջ 211):

«Սուլթան Համիտը Կայսրութիւնը շրջանակած էր լրտեսներու ցանցով մը,
որոնք կը հսկէին բոլորին վրայ եւ կը զրկէին տեղեկութիւններ Պոլիս: Ամէն ոք
մատնուելու վտանդին ներքեւ էր: Ոչ ոքի համար ազատութիւն եւ ապահովութիւն
գոյութիւն ունէր: Բանտերը լեցուած էին ձերբակալուածներով: Դժգոհութիւնը
ընդհանուր էր: Ամէն օր նոր թուլացիկներ լոյս կը տեսնէին, զաղտնի կազմակեր-
պութիւններու կողմէ, որոնք Սուլթանի լրտեսներուն ձեռքը չէին իյնար: Մուս-
թաֆա Քեմալ յափշտակութեամբ կը կարողար գանոնք... Բոլորն ալ յեղափոխու-
թեան կոչ կ'ողջէին եւ Սուլթան Համիտ բռնակալին տապալումը կը պահանջէին:

— Արթնցէ՛ք, ինչ կը սպասէք գործելու համար, կը զոչէր, չէ՞ք տեսներ
որ Թուրքիան «երկաթներու մէջ է»: Ձեր Թուրքիան պէտք ունի օտար ջղջիկնե-
րու եւ փճացած պաշտօնեաներու կողոպտանքէն փրկուելու:

«... Պոլսոյ Ձինուորական վարժարանին մէջ Յեղափոխական Կոմիտէ մը
ստեղծուած էր: Ասոր հիմնադիրները գայն ուղեցին Հայքեմիք կոչել, բայց քանի
որ հայքեմիք բառը չունէր համապատասխան թուրք բառը, անոնք բաւարարուեցան
արաբերէն վաթամ բառով: Այդ կոմիտէի անդամները ղէմ էին իսլամութեան,
մուլաններու, մզկիթներու, Ղուրանին եւ կը ձգտէին Սահմանադրութիւն հաստատել
Սուլթանը տապալելէ ետք»:

(Տես՝ «Մուսթաֆա Քեմալ կամ Կայսրութեան մը մահը»,
Պրնուա Մէշէն, 1954):

Վկայութիւններ նոյն պատմաբանէն —

«Մ. Քեմալի յաճախած սպաներուն մէջ կը գտնուէր Մակեդոնացի Ֆեթ-
հի՝ որ Մասոնական օթեակի մը անդամ էր: Օթեակներու ապստամբ անոնք
ստեղծած էին «Իթթիհատ վէ Թերաքը» կուսակցութիւնը: Անոնք իրենց ժողով-
ները կը գումարէին հրեաներու սուներէն ներս եւ որոնցմէ խոշոր գումարներ կը
ստանային: Նոյնպէս Երիտ. Թուրքերը կապեր հաստատած էին Համիտի կողմէ
քսան տարիներու ընթացքին դատապարտուած կամ աքսորուած քաղաքական անձ-
նաւորութիւններու հետ:

«Անոնց թելադրանքով Մուսթաֆա Քեմալ յարեցաւ Մասոնական Վիտաքա
օթեակին: Այդ օթեակին մաս կազմողները կը խօսէին յեղափոխութիւն կազմակեր-
պելու մասին Յունաստանի, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Չինաստանի մէջ եւ մասնա-
ւոր «Կարեւորութիւն» մը չէին ցուցարբեր Թուրքիոյ նկատմամբ: Անոնք կը մե-
ղադրէին Ռուսիոյ Նիքոլայ Բ. Ցարը, որ կը կոտորէր թուրքերը... եւ կը զո-
վէին Ֆրանսուա Ժօզէֆը՝ որ թոյլ կու տար հրեաներուն հարստանալու:

«Քեմալի աչքին «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» շարժումը դատապար-
տուած էր ձախողանքի, անոնցմէ լուրջ գործ մը մէջտեղ պիտի չգար: Աւելի շատ
ճառերով քան գործով տարուած էին: Ինչ կը վերաբերի անոնց պետերուն, անոնց
մասին Երքեմ վստահութիւն չուներ եւ գանձ կը դատապարտէր խստօրէն:

«Ասոնց մէջ էնվէրը՝ մեծամիտ եւ յոռի կատակերգակ մըն էր, ձեռքը՝
անկէ լաւ չէր, ան մեքենայութիւն լարող եւ խեղաթիւրող մըն էր: Ծաւար՝ հրե-
ութեան իսլամ դարձած մը, Նեազին ապուլ Ալպանացի մը, որ միայն յիմարու-
թիւն կրնար գործել: Թալաթը՝ սահմանափակ քոսթիկ մըն էր առանց լայն
մտահորիզոնի... Իրենց նշանաբանն էր Նարքուրան, — Նոր թուրքերուն՝ նոր
թուրքիա: Գիտէի՞նք արդեօք թէ ինչ կը նշանակէր այդ... Անոնք (Իթթիհատական-
ները) որոնք ծագումով յոյն, արլպանացի, Չէրքէզ, կամ հրեաներ էին, անոնցմէ
ո՛չ մէկը իսկապէս թուրանական ցեղին կը պատկանէր:

«Իթթիհատի պարզալուրինքէն ձեռքը՝ Քեմալի կողմէ ծաղրանքի առար-
կայ դարձաւ սրճարան Կնոկնոյի մէջ հրապարակաւ...»:

«Իթթիհատի Սալոնիկի Կեդր. Կոմիտէն մերժեց Քեմալը իրենց ժողովնե-
րուն կանչել: «Իթթիհատ»էն անկախ կը գործէր «Թիւրք Օնալը կազմակերպու-
թիւնը՝ որ հիմնուած էր կեդրոնասէր՝ Մակեդոնիոյ Արեւելեան շրջաններուն մէջ:
...Իթթիհատը հազիւ 300 անդամ ունէր, անոր ղեկավարները յատուկ ծրագիր մը
չունէին... Բայց բախտը քանի մը օրուան մէջ իրենց ի նպաստ դարձաւ — եւ տէր
դարձան իշխանութեան»:

Եւ դեռ՝

«... ձաւիտը 500 միլիոն ոսկիի փոխառութիւն կնքած էր Անգլիոյ եւ Ֆը-
րանսայի հետ... էնվէր որ կը խոստանար օտար տնտեսական թափանցումին ղէմ
որպէս թէ պայքարի՛լ... զուռները լայն բացած էր Գերման թափանցումին թուր-
քիայն ներս...: Ան հասկցած էր, թէ Թուրքիան երբեք չէր կրնար օտար ճնշում-
ներուն ղէմ կենալ, այնքան առեւն որ զինուորապէս զօրաւոր չէր... ան իրեն-
քած էր գերմանացիներէն՝ որպէսզի թուրք բանակը վերակազմէն... Պերլինէն
վերագրած էր էնվէր՝ խանդավառ Գերմանիոյ զինուորական ուժով: Անոնք սի-
րով զրկած էին Յոն Տէր Կոլոյ զօրավարը, որ խորհրդականը որպէս թէ Սուլթանին,
փաշա տիտղոսը ստացած էր:

«1898ին Բան-Գերմանիստները թուրքիկ մը հրատարակած էին «Գերմանիոյ
իրաւունքը Թրքական ժառանգէն» խորագրով»:

Ֆրանսացի Թրֆօֆիլի պատմաբանը կը շարունակէ —

«Նոյն տարին Կիլոյս Բ. Դամասկոս եւ Երուսաղէմ ուխտի եկած էր եւ
ինքզինք նկատած էր «Պալիֆի բարեկամ եւ Իսլամի պաշտպան»: Այս առիթը Պաղ-
տատի երկաթուղապահի շինութեան հարցը միջազգայն հարց էր: Ռուսիա եւ
Գերմանիա համաձայնագիր մը կը կնքէին որ կը բաժնէր Մերձուոր Արեւելքը
երկու ազդեցութեան գոտիներու: Պարսկաստանն ու Հայաստանը ներառեալ էին
ռուսական գոտիի մէջ, մինչ Գերմանիան Անատոլուն եւ Միջագետքը իրեն կը վե-
րապահէր (19 Օգոստոս 1911):

«1913ին Կիլոյս Բ. ցարին աչքին կը շողացնէր Պոսֆորի եւ Նեղուցներու
տիրապետութեան առաւելութիւնները... Մինչ ինք պիտի բաւարարուէր Սուրիա-
յով եւ Սուէզով:

«Ո՛չ արտաքին եւ ոչ ալ Ֆինանսական մարզի մէջ Երիտ. Թուրքերը չօ-
շափելի բարեկարգութիւններ մտցուցած էին: Նոյնիսկ ներքին քաղաքականու-
թեան մէջ անոնք չէին տուած յուսացումած արդիւնք: Թշուառութիւնը ընդհանուր
էր, անկարգութիւնը իր գագաթնակէտին եւ դժգոհութիւնը ո՛չ մէկ տոնն այդքան
ցցուն վիճակ կը պարզէր»:

(Տես՝ «Մուսթաֆա Քեմալ», Պրնուա Մէշէն, էջ 113-114):

Լսեմք նախկին Իթթիհատականի վկայութիւնը —

«Իթթիհատ վէ Թէրաքը կուսակցութիւնը... կառավարութիւնը տեւական
կերպով իր ձեռքին մէջ ունենալու համար տարբեր քաղաքական կուսակցութիւն-
ներուն գործունէութիւնը կը խափանէր եւ իրենց ղէմ պայքարիլի ազատամիտ
ամնաւարութիւններն ալ իր գաղտնի կազմակերպութեան եւ իր ձեռքը ունեցած
պետական ուժերու աջակցութեամբ անհետացնել կու տար:

«Իթթիհատ վէ Թէրաքը կուսակցութիւնը կը մզտէր քուրք տարրը օս-
մանցի այլ տարրերու վրայ տիրապետող դարձնել, անոր բազմաթիւ դիրք մը ա-
պահովել, մնացեալ տարրերը լուծելով եւ կամ ձեռով մը բնազդելով Օսմանեան
միութիւնը քանդելու եւ անոր տեղ նոր քրքական պետութիւն մը հիմնել կը ծրա-
գրէր:

«Իթթիհատ վէ Թէրաքը կուսակցութեան ղեկավար անձնաւորութիւնները,
մասնաւորապէս զինուորական բարձրաստիճան անձնաւորութիւնները չէին կրցած

հասկնալ, թէ Սելանիկի հաւատափոխներուն յղացած այս Թուրանի քաղաքակա-
նութիւնը երկրին մէջ ի՞նչ տաղնապ, ի՞նչ բաժանումներ պիտի յառաջացնէր»:
«Օսմանեան Յեղափոխութեան Մութ Մալքերը», Մէվլան Զատէ
Րիֆար, 1968, Պէյրութ, Բ. տպագրութիւն:

Փրոֆ. Վ. Պարսաւեանի վկայութիւնները:—

«Անխոր բոլոր մեծ պետութիւնները Հայկական Հարցն օգտագործում էին
իրենց զաղութարարական նպատակների համար: Հայաստանի ժողովրդի ազատու-
թեան ու անկախութեան գաղափարը նրանց համար ոչ մէկ արժէք չունէր»:

(«Հայ ժողովրդի պատմութեան դասագիրք», 1972 Երեւան):
Հնչակեան Կուսակցութեան մասին:—

«Պատմական, գիտական անաչառ մօտեցումը պահանջում է ա-
սել, որ իրօք Հնչակեանների խորք չի եղել մարքսիզմը եւ սոցիա-
լիզմը: Ուստի ճիշդ չեն նրանք, ովքեր Հնչակեաններին համարում
են հակա-յեղափոխականներ, պուրժուական նացիոնալիստներ»:

«...1880-1890-ական քուականներին Հայաստանում Հնչակ-
եաններն ստեղծեցին առաջին խոշոր կազմակերպութիւնը»:

Համիտեան ռեժիմի մասին:—

«... Սուլթան Համիտը, շատ սահմանափակ, վախկոտ ու կասկածամիտ,
բայց վերին աստիճանի խորամանկ, նենդ ու դաժան մարդ էր: Իր ամբողջ դահա-
կալութեան շրջանում նա երկու գիշեր միեւնոյն սենեակում չքնեց եւ մահուան
սարսափից հանգիստ չունեցաւ: Կեղծիքի, կաշառքի ու անարեւմտական ճանապարհով
նա հպատակ ազգերին լարում էր միմեանց դէմ, թշնամանք սերմանում նրանց
մէջ: Նա կարողացաւ սեպ խրել հայերի ու քրդերի միջեւ, ստեղծեց հայ-քրտա-
կան կնճիռը, իր կողմը գրաւելով քիւրտ ցեղապետների ու տէրէպէյիներէ մի մա-
սին, նրանց հանց հայերի դէմ: «Համիտեան» կան ջոկատները համարւում էին
քրտական վերնախաւի հէնց այդ կարգի վաճառուած, թալանի ու կողոպուտի
հակուած տարրերից: Գոթախտաբար ո՛չ հայ եւ ո՛չ էլ քիւրտ գործիչները չկա-
րողացան ընդհանուր լեզու գտնել եւ երկուսն էլ շատ սուտեցին Սուլթանական
կառավարութեան նենդ քաղաքականութիւնից»:

(Տես՝ «Հայ ժողովրդի պատմութիւն», Վ. Պ. Երեւան,
1967, Գ. հատոր, էջ 331):

**

Արդար բողոքի ձայն էր մեր ազատագրական շարժումը: Ու
տատանումներ, անհամաձայնութիւններ, սխալներ անխուսափելի
էին այդ շարժումին զեկավարներուն համար: Եթէ կարելի չեղաւ
500 տարուան ստրկութեան մատնուած, կեղեքուած հայ զիւղացիու-
թիւնը ամբողջութեամբ մարտի մէջ նետել, եթէ կարելի չեղաւ
«փշերելու համար ծանր շղթան» մասսաները իրենց իսկ ազատութեան
սիրոյն պայքարի նետել, եթէ ամիրայական ու պուրժուա խաւին
մէջ համոզուած հակառակորդներ ունեցան անձնուրաց Ֆետայինե-
րը, եթէ ցարիզմը ձգտելով հանդերձ Հայկական Նահանգներու ա-
զատագրման, անտեսեց այդ հողերուն վրայ ապրող ժողովուրդին
անկախութեան ձգտումը եւ շատ անգամ Կովկասէն հոն փութացու

հայ Ֆետայիններուն կուրծքին քոզաքներ կապար սարսեցին, եթէ 6
Մեծերը խարեցին մեղ, այդ բոլորին մէջ յեղափոխական բազուկները
յանցաւորներ չէին: Անոնք գիտակցաբար ուժեղին դէմ ընդվզումի հա-
ւատացողներն էին, յատկապէս այն թելը, որ յուսահատութիւն
չմանցաւ, համոզուած որ բռնակալ ուժիւրը պիտի տապալի տաս-
նեակ մը տարի չանցած: Այդ պայքարին մէջ ամենէն շատ ընկերող-
ները զժբախտաբար հայ զրոզները եւ մտաւորականները հանդի-
սացան: Անոնցմէ՝ Վ. Թէքէեան, Շիրվանզադէ, Ա. Արփիարեան,
Ե. Օտեան, Ա. Չոպանեան, Լ. Փաշալեան, Մ. Տամատեան 1895ի
Պապը Ալիի ցոյցէն եւ Զէյթունի ապստամբութենէն ետք նահանջի
ճամբան բռնեցին...: Ոմանք իրենց յուսահատութեան պահերուն
մամուլով պայքարի անցան: «Մարտ», «Նոր Կեանք», «Ազգ», «Պա-
հակ» թերթեր են, որոնք լոյս տեսան յեղափոխական շարժումնե-
րուն անմիջական արդիւնք չտալուն իբր հետեւանք: Անոնք «խոհմու-
թեան» քարոզներով իրենց կրաւորականութիւնը արդարացուցին վը-
տանդին դիմաց: Արդարօրէն պէտք է ըսել որ 1888-1896 տարիներու
հայ ժողովուրդի ազատագրական պայքարի դրօշակակիրը առանձինն
հանդիսացաւ Հնչակեան Կուսակցութիւնը ե՛ւ Արեւմտահայտանի,
ե՛ւ Կովկասի, ե՛ւ Պարսկաստանի, ե՛ւ Միացեալ Նահանգներու եւ
այլ գաղութներուն մէջ: Դաշնակցութեան գործունէութիւնը կը
սկսի 1896ի Պանք Օթոմանի եւ 1897ի Խանասորի արշաւանքով, իսկ
փաստօրէն 1892ին էր որ Դաշնակցութիւնը հիմնուեցաւ որպէս կու-
սակցութիւն յաջորդելով «Հայ Յեղափոխականների Դաշնակցու-
թեան»:

Չենք անտեսել Արմենականները՝ որոնք Վանի շրջանէն դուրս
չկրցան տարածուիլ, չէին կրնար տարածուիլ, որովհետեւ չունէին
ժողովուրդը իրենց կապելու, խանդավառելու միջոցներ... Կը ծիծա-
ղինք միամիտ Արտակ Դարբինեաններուն վրայ, որոնք Սասունը կ'ա-
նարդեն Հնչակեան գործ որպէս, «Ջարդի պատճառ հանդիսացող» կը
դրեն, եւ սակայն եօթը երկինք կը բարձրացնեն Վանի 1896ի ապս-
տամբութիւնը՝ կարծես հոն ներկայ չեն եղած Հնչակեանները (Մար-
տիկ) եւ Դաշնակցականները (Պետո), կարծես հոն 10 օր դիմադրե-
լէ ետք չեն զոհուած մեր ընկերները: Արմենականներուն շուքին ա-
պաւինած Ռամկավարները՝ երկար տարիներ փորձեցին տէր կանդ-
նիլ Վանի Արմենականներուն, այսօր ալ կը փառաբանեն զանոնք...
Վանի 1896ի եւ 1915ի կոիւններուն մէջ առիւծի բաժին մը վերապա-
հելով մարդոց՝ որոնք կապ կապակցութիւն չունէին Սահմանադիր,
Վերակազմեալ, «Միութեանական» խաժամութիւն հետ...: Բայց որ-
պէսզի վկայական մըն ալ իրենց տրուի, չեչտուած գոյնով մը այ-
սօրուան Սահմանադրական Ռամկավարները կ'աշխատին անոնց քղա-
միթին ներքեւ «Լեւի ալ կոռուած եմք» դոչել: Անոնք կ'անտեսեն այն
իրողութիւնը, որ Սահմանադիր Ռամկավարները 1908ին կը յայտա-
բարէին, թէ վերջ գտած է ազատագրական պայքարը իրենց համար

Թուրքիոյ մէջ, թէ իրենք ալ Օսմանեան քաղաքացի եւ «հաւատարիմ քաղաքացիներ» են: Այո՛, այդպէս կը գրէր Պոլսոյ «Ձայն Հայրենաց» իրենց օրկանը, Լեւոն Լարենցի, Մարկոս Նաթանեանի թերթը...:

Բարեբախտաբար պատմութիւնը ուրացումով, անտեսելով, ուրիշներուն «անդրանկութեան» իրաւունքը խլելով չի՛ գրուիր: Բարեբախտաբար այդպէս է... այլպէս «5000 տարիէ սուրին Թուրքիան մերն է... Սուրարիներու հարազատ ժառանգորդներն ենք» պոռագող թուրքերէն տարբերութիւն պիտի չունենային վերոյիշեալները...:

Բարեբախտաբար ազգային հիմնադրամներով գիրք հրատարակող ջոջ Արտակ Դարբինեանները չէ որ Փարամազի նման անվեհեր ու նուիրեալ անուններուն մուր պիտի փորձեն քսել... Փարամազը Արարատ մըն է, իսկ Արտակ Դարբինեանը Վերակազմեալներու ճահիճի մէջ բուսած խոտը՝ որուն քաղաքական իմաստութեան չափանիշը կը հասնի 1921ին կոմկուսի դէմ պայքարի որոշում առնել տալու ճիգին՝ ՌԱԿի համագումարին մէջ... (*)

Դժբախտաբար Արտակները 1896ին բաժնուելով Մայր Կուսակցութենէն Բարեգործականի կամ այլ գրասենեակներու պաշտօնեաներ դարձան եւ միշտ հեռու մնացին մեր ժողովուրդի արդար պայքարներէն: Որովհետեւ բոլորիկ էին, փորձեցին Արծիւները անարդել...:

Ուրիշ մեկնակէտ մըն է 1890ական թուականներու մեր ազատագրական պայքարը նկատել, անտեղի, անշահ, ոչ-տրամաբանական, իմբրիալիզմի հաշտոյն կատարուած, ժողովրդական մասսաներու շուտաբանուած պայմաններուն մէջ տեղի ունեցած, իսկ 1862ի Ձէյթունի ապստամբութիւնը նկատել 1896ի հակադրուող իրաւ, տրամաբանական, արդար եւ տեղին շարժում...:

Տակաւին, ամենէն վերջին մանրամասնութեամբ կ'ուսումնասիրուին 1862ի Ձէյթունի ապստամբութիւնը եւ կը դնահատուի բոլորին կողմէ: Կը դնահատուի՝ Հայկը, Արամը, Արշակն ու Պապը, Վարդանն ու Վահանը, Թաթուլն ու Ռուբէնը, Լիպարիանն ու Դաւիթ Բէկը, Օրինն ու Բաղրամեանը, Մինաս Վարդապետն ու Նրիմեանը, Աշտարակեցինն եւ Գէորգ Ն.ը... սակայն մարդիկ կան որ 1890ի շրջանին երբ հասնին, հոն շունչ մը կ'առնեն, կարծես կ'ընկերակին, կը նահանջեն եւ կը լռեն, ոչ թէ Համիտի դիմապիծէն սարսափած, այլ Ազատագրական Պայքարի Հերոսներուն լուսապանծ ճակատներէն ու աչքերէն... ու անոնց ազատութեան բազինին առջեւ տրամադրած մաքուր արիւնէն...:

(*) Տես Արտակ Դարբինեանի գիրքը:

Ասիկա յատկապէս Հայաստանէն ներս, 1956ի շրջանը մինչեւ, երբ նիւիլիստ պատմաբաններ, կը կարծէին թէ հայոց պատմութիւնը դադարած է յառաջանալէ 1878էն սուրին, Նալպանտեանէն սուրին: Կը յիշուէր 1905ի Շահումեանը... իսկ Եղեռնի մասին արտայայտուելը «Անդէ» կը նկատուէր, իսկ Սասնոյ կամ Ձէյթունի կամ Վանի հերոսամարտներուն անդրադարձող պատմաբանները դժուարութիւններու կը հանդիպէին Պերիայի, Եթովի, Եակոտայի օրերուն... Շատ բան կը պարտի Հայաստան Նրուշտովի եւ ապա անոր յաջորդ Պրեժնեկին, որոնք լայն ազատութեան պայմաններ տուին հայ մըտքի անկաշկանդ դարպասման: Ստեղծագործելու կարելիութիւնը, մշակոյթի վերելքը, Գիտական Ակադեմիան նոր որակի գիտաշխատողներուն մուտքը հայ կեանքի անդաստանէն ներս, 1890-1921ի հայ ժողովուրդի ամենէն հերոսական եւ նոյնքան դժբախտ շրջանի պատմութեան մանրամասն ուսումնասիրութեան ճամբան բացին, ինչ որ կ'ուրախացնէ իսկապէս ոեւէ հայ:

**

Կամաւորական շարժումներու՝ յատկապէս 1915ին գործող 7 դունդերու մասին դնահատուի պէտք է արձանագրել, քանի որ անոնք երբեք հիմնուած չէին ցարիզմի գործիք դառնալու համար, ո՛չ ալ անդլիական եւ Ֆրանսական կայսերապաշտութեան ուղեկից: Հայ կամաւորական շարժումներուն հիմնական մտահոգութիւնը ազատագրելն էր Թրքահայաստանը եւ հոն ցեղասպանութեան դատապարտուած Արեւմտահայութիւնը՝ որուն 2.5 միլիոն ժողովուրդը մահուան դատապարտուած էր Իթթիհատի ազգայնամուղ ղեկավարութեան կողմէ եւ անոր բանթուրքիզմի ծրագիրներուն զոհը դառնալու սպանալիքին տակ կը գտնուէր: Հայ կամաւորները որքան ալ կը ծառայէին ուստական, անդլիական, Ֆրանսական, եւ ամերիկեան զրօշներու ներքեւ, բայց անոնք երբեք չէին ուզեր իրենց ժողովուրդի ազատագրական մտահոգութիւններէն անդին այս կամ այն աւատապետական կամ կայսերապաշտական պետութեան հաշտոյն կրակէն շագանակ վերցնողի դիրքին մէջ մնալ...:

Բոլորովին անջատ բանակ կազմելու հնարաւորութենէն զուրկ էր հայութիւնը: 200 հազար զօրք տրամադրած էր ռուս ցարական բանակին: Եթէ ուզէր ալ չէր կրնար չտրամադրել, ո՛չ ալ կրնար չհրաժարուիլ պահպանել չլուսելով, լուս մնալով: Կամ մէկ կամ միւս կողմին ի նպաստ պիտի դիրքորոշուէր հայ քաղաքական միտքը եւ ան նախընտրեց ռուսական արեւելումը, Դաշնակից բանակներուն միջոցաւ անկախ Հայաստանի մը իրականացումի տեսակէտը էջմիածնի կաթողիկոսի նախաձեռնութեամբ, միակ ճիշդ կողմնորոշումը նկատեց: Առանց «փոքր դաշնակից» դառնալու, կարելի չէր հերիսայէն որեւէ բաժին վերցնել արեւմտահայ հողերու հաշտոյն, առանց արեւան տուրքի կարելի չէր պետութիւն հիմնել: Այդ

գլխավորապես կր մեր ժողովուրդի անձնուէր կամաւորները Կովկասեան կամ Պաղեստինեան ճակատ նետողը եւ ի վերջոյ Սեւրի դաշնադրին մէջ հնարաւոր չէ՛ր հայոց ի նպաստ որոշում մը միջազգային շուկայ հանել՝ յաղթականներու ճնշումին տակ, եթէ չկուէր հայը:

Մեր նպատակը Գաղափարներուն եւ 1916ին իսկ հայ կամաւորական շարժումը չէզոքացնող ցարական նենգութեանց մասին անդրադառնալ չէ այս առթիւ: Այդ մասին կարելի է հսկայ հատոր գրել: Մեր մտահոգութիւնն է, որ հայրենի կամ օտար պատմարաններ, երբ կը խօսին Կամաւորական շարժումի մասին, անոր չհաղցընեն այնպիսի մտադրութիւններ, որոնց անտեղեակ եղողները կըրնան սխալ գնահատանք տալ այդ շարժումներուն:

Ի վերջոյ պէտք չէ՛ մոռնանք, որ այդ հայ կամաւորներէն մէկ մասը ցրուելէ ետք, եթէ հեռացան ռազմաճակատէն, ուրիշներ, ընդհանրապէս Գայի (Հայկ Բժշկեանց) հետեւողը Հնչակեանները՝ Կարմիր Բանակի հրամանատար կամ զինուոր դարձած՝ ո՛չ միայն սղատագրեցին Սիմպլիոսն ու Սամարան ձերմակներու ձեռքէն, այլ Պորտըզալին Հայաստանի եւ ապա Կարմիր Բանակի ռազմական զպրոց Ֆրոնցէի մէջ դասախօս դարձան...:

Արդ, կարելի՞ է ուրանալ հարիւր հազարաւոր ցարական բանակի մէջ ծառայած ռուս, ուքրայնացի զինուորներուն գործը, երբ իրենց արեան զնով հետազային ապահովեցին Կարմիր Բանակի յաղթանակը՝ երբ 14 պետութիւններ՝ 1918–1920ին ահաւոր կերպով ճնշեցին Լենինի հաստատած աշխատաւորական ռեժիմի վրայ:

«Անկախ ցարիզմի նպատակներից Ռուսաստանի քաղաքականութիւնը օրեկօրեան ունէր բրոկրատիկ նշանակութիւն: Այդպէս էր օրինակ, Թրքական ճնշման տակ գտնուած Արեւելեան Եւրոպայի նկատմամբ: Թուրքիոյ պարտութիւնները ԺԸ–ԺԹ. դարերում Ռուսաստանի հետ մղած պատերազմներում հսկայական նշանակութիւն ունէին Թրքական ճնշման տակ գտնուած ժողովուրդների ազատութեան համար եւ օրեկօրեան նպատակ էին յառաջդրուածները»:

Հայրենի պատմարան Կարապետ Քարամեան, իր զիրքին մէջ անդրադառնալով ընդհանրապէս ցարական Ռուսաստանի եւ հայ ժողովրդի կապերու ամրացման, կը գրէ, թէ ի՛նչ ալ եղած ըլլան ցարիզմի նկատառումները պարսկա–թրքական բռնակալութիւնների դէմ ԺԹ. դարուն, իր տարած վճռական յաղթանակներէն յետոյ, հայ ժողովրդի նկատմամբ, կարելի է ըսել, «որ Ռուսաստանի հզօրացումը ի վնաս պարսկա–թրքական բռնակալութիւնների յառաջդրուական դեր է կատարել»:

Հայրենի արժէքաւոր պատմարան եւ զրականագէտ Արամ Ինճիկեան կը գրէ, թէ ռուսական տիրապետութեան տակ անցնելով, հայ ժողովրդի Արեւմտեան հատուածը եւս ոչ միայն կ'ազատուէր սխտեմատիկ եւ զանդուածային կոտորածներէն, ձեռք կը բերէր «կեանքի եւ դոյլի ապահովութիւն», այլեւ կ'ունենար անհամեմատ նպաստաւոր պայմաններ տնտեսական եւ մշակութային զարգացման

համար, կը թօթափէր կրիստոսեանական կայսրութեան կաշկանդիչ կապանքները եւ Ռուսաստանի տիրապետութեան տակ անցած միւս ժողովուրդներու նման կ'ընթանար կապիտալիստական զարգացման ուղիով:

«Հայ ժողովրդի եւ նրա առանձին գործիչների յանցանքը չէ, որ տեղի չունեցաւ Արեւմտեան Հայաստանի ազատագրութիւնը կամ նրա միացումը Ռուսաստանին, ինչպէս պարտութեան մատուցեց հայ ազատագրական պայքարը»:

(Ա. Մ. Ինճիկեան «Հայ ազգային ազատագրական շարժումների գնահատութեան հարցի շուրջ», «Պատմա–բանասիրական հանդէս», 1961, թիւ 1, էջ 142, երեւան):

Հայ բանաստեղծութեան իշխան Յովհաննէս Թումանեան, կը պաշտպանէ այն տեսակէտը, թէ հայ ազգային ազատագրական շարժումը համաթողութրական էր, արդիւնք «պարսկա–թրքական բռնատիրական արինոտ կարգերի»: Ան կը գրէ, թէ «Իււանի էս վերջին գիրքը, արցունքոտ աղբասագրերով ու արինոտ հաշուեցուցակներով ցոյց է տալիս, որ Տանկաստանում սխտեմատիկ բռնութիւնը, քաւաւաւ առեւանգում, սպանութիւն, կրօնափոխութիւն — չեն դադարած, եւ հայի համար Տանկաստանը եղել է ո՛չ թէ մի պետութիւն, այլ սպանանոց... Իււանի էս գիրքը՝ յուսահատական դիմումներով՝ բարձրագոյ բողոքով ու ըմբոստ ծրագրիներով՝ ցոյց է տալիս, թէ սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թէ էս ամենը կարող էին անցնել ծայրայեղ դժգոհութեան բռնկումի. առանց յեղափոխութեան: Այլ եւ սխալ են նրանք, որոնք կարծում են, թէ յեղափոխութիւնը դրոյցիները — առաւելայեւն են սկսել Տանկաստանում»:

(Յովհաննէս Թումանեան, «Երկեր», հատոր 4, 1951. էջ 317–318):

Ազատագրական մեր պայքարը ո՛չ թէ պատմա ալ՝ արդիւնքն էր այդ «հայը չէզոքացնելու» թրքական ծրագրներուն: Այդ քննադատներուն ակնարկելով, հայրենի պատմարան Կ. Քարամեան կը գրէր իր գրքին մէջ. «Քանի որ Արեւմտահայ ազգային ազատագրական շարժումներն ի վերջոյ յանգեցին արեւմտահայութեան անկախութեան սպանդին, գոնեւեցին հասարակական գործիչներ, որոնք տրբաբար արդիւնքների ծանրութեան տակ, ՅԱՌՈՒՌԻ ԿԵՐՊՈՎ ՍՍՍՏԻՆ ԴԱՍԱՊԱՐՏԵԼ ԱԶԳԱՅԻՆ–ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԳՈՐԾԻԶՆԵՐԻՆ, ՓՈՒՍՏԱՆԻ ԵՐԿԻՂԱԾՕՐԷՆ ԽՈՆԱՐՀԵԼՈՒ ՆՐԱՆՅ ԳՈՐԾԻ ՈՒ ՅԻՇԱՍԱԿԻ ԱՌԱՋ: ԳՈՐԾՈՂ ՄԱՐԿԸ ԱՆՏՈՒՍԱՓԵԼԻ ԿԵՐՊՈՎ ՆԱԵՒ ՍԵԱԼԻՈՒՄ Է: ԶԻ ԿԱՐԵԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼ ԻՐԵՆՅ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՐԳԻՆՔՈՎ: Նոյն հարցին անդրադառնալով, պատմարան Արամ Ինճիկեան կը գրէ, թէ՛ «Կարելի չէ պատմական անցքերը գնահատել անմիջական «շօշափելի» արդիւնքով՝ յաղթանակով, թէ պարտութիւն»: Ան այս առթիւ հարց կու տայ, թէ՛ «Մի՞թէ պարտութեան հանգամանքը որեւէ չափով կը նուազեցնէ» Պուշտովի, Ստեփան Բաղդի, Դեկապրիստների, ՅՈՒՍԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆԻ ԳԻՂԱԳԻՅԱԿԱՆ շարժումների, փարիզեան Կոմունայի, 1905ի ռուսական առաջին յեղափոխութեան պատմականօրէն անգնահատելի, առաջդիմական նշանակութիւնը:

«Այդ նոյնը պէտք է ասել նաեւ ազգային ազատագրական շարժումների մասին»:

«Այդ շարժումների եւ նրանց գործիչների գիտական, պատմականօրէն ճիշդ արժէքաւորման մենք կարող ենք հասնել, եթէ լրջօրէն վերանայեմք մեր հասարակական մտքի եւ գրականութեան պատմութեան վերաբերեալ դեռեւ գոյութիւն ունեցող եւ աւանդութեան ուժ ստացած քաղաքացիական տեսակետներ, ո՛չ տակնափակ կերպով, այլ ստեղծագործօրէն կիրառելով մարքսիզմ–լենինիզմի ուղեցոյց սկզբունքները»:

Ափսոս սակայն... Լէոյի սխալ մեկնարանութիւնները հալած իւղի պէս կլլեցին շատեր եւ Լէոն դարձաւ դատելու եւ եզրակացնելու սահմանուած իրաւասու դէմք, ինչպէս լեզուաբանութեան մէջ հայերէնը ոչ-հնդեւրոպական լեզու, այլ Կովկասեան սեմական լեզու դաւանող Փրոֆ. Մառի տեսակէտները:

**

Չարմանալի պիտի չըլլա՞ր որ ազատագրական պայքարի նուիրուած միայն մէկ կուսակցութիւն հրապարակ դար եւ միայն մէկ ուղի որդեգրուէր: Բոլոր ազգերու պատմութեան մէջ, ազատագրական պայքարի ելած են զանազան դասակարգեր, զանազան ծրագիրներով եւ թաքթիկայով: Նոյնը պատահեցաւ հայ իրականութեան մէջ, ուր պիւղապին, բանուորը, մտաւորականը, պուրժուան, կղերը, իրենց առանձին հայեցակէտերը ունէին, բայց փաստորէն բոլորն ալ ենթակայ ըլլալով մեծամասնութիւն կազմող Օսմանցիներու բռնութեանց, աստիճանաբար իրենց հայեցակէտերուն դրսեւորումը հանդիսացող հայ քաղաքական հոսանքներուն հետեւեցան: Անխուսափելի դարձաւ ո՛չ միայն բախումները հայ քաղաքական հոսանքներու ղեկավարութեանց միջեւ, այլ նաեւ նոյն կուսակցութեան պատկանող ղեկավարներուն միջեւ: Տեղի ունեցան երկփեղկումներ, մատնութիւններ, տեղորոշումներ:

Այսպէս, մինչ Հնչակեան Կուսակցութիւնը կ'առաջադրէր նախ ազատագրել Արեւմտահայաստանը, Անդրկովկասը եւ Պարսկաստանը, ապա ընկերվարական ռեժիմ մը հաստատելը պայման կը դնէր, Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'առաջադրէր դասակարգային պայքարը մէկ կողմ դնել, հայ պուրժուազին ալ ներդրուելու համար ազատագրական պայքարին մէջ, թէեւ կը յայտարարէր 1890ին հրատարակած իր մանիֆեստին մէջ, թէ Դաշնակցութեան նպատակն է «Թուրքահայաստանի քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը»:

Դաշնակցութիւնը իր ծրագրի քաղաքական պահանջներ բաժնին մէջ կ'ըսէր, թէ՝

«Թուրքահայաստանը պիտի կազմի Օսմանեան Սահմանադրական պետութեան անբաժան մասը, հիմնուած տեղական լայն իմֆնավարութեան վրայ»:

(Տես «Ծրագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան», վաւերացուած 1907ին, վերահրատարակուած 1917 թ. Թիֆլիս, էջ 22): «Թուրքահայաստանը, ըսուած է յաջորդ կէտին մէջ, Թուրքիոյ միւս շրջանների պէս, իրեն օսմանեան պետութեան մէկ մասը, ազատութիւն պիտի վայելէ իր ներքին գործերում»:

1902ին Դաշնակցութիւնը Ֆրանսա ծուարած Երիտ. Թուրքերու հետ չկրցաւ լեզու դանել, մինչ 1907ին Երիտ. Թուրքերու կողմէ Սուլթանի Սահմանադրութիւն պարտադրելու թեզին կողքին էր:

Անմիջականօրէն Դաշնակցութիւնը անկախութեան զաղափարին, Թուրքիայէն անջատման սկզբունքին հետ հաշտ չէ եղած, այդպիսի տող մը ո՛չ Դաշնակցութեան ծրագրին եւ ո՛չ ալ մամուլին մէջ չենք տեսներ: Վերջերս լոյս տեսած «Դրօշակ»ի հաւաքածոյին մէջ ի դուր պիտի փնտռէր մէկը անկախութեան ակնարկութիւն:

Իսկ Արմենականները, նոյնպէս կը պնդէին Մ. Փորթուզաւեանի «Արմենիա» թերթին մէջ, թէ իրենք կը ձգտէին բարենորոգումներու Եւրոպայի միջամտութեան ապաւինելով:

Ասդին, Հնչակեան Կուսակցութիւնը 1897ին Լոնտոն հրատարակուած իր ծրագրին մէջ յատուկ կերպով կը բանաձեւէր իր առաջադրանքները.

«Մօտակայ նպատակը կայանում է հետեւեալում — Յեղափոխել եւ ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովրդին իր ստրկական դրութիւնից, տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու քաղաքական գործերում: Վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են լինում նրա տնտեսական զարգացման, առ հասարակ նրա կուլտուրական յառաջդիմութեան, ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատուոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտայայտուելու իր ձգտումներն ու պահանջները, աւելի եւ աւելի բարելաւելու աշխատանքի ծանր պայմանները, դասակարգային գիտակցութիւն ձեռք բերելու եւ կազմակերպելու իրենք քաղաքական մարմին ու դիրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պէտք է ամէն տրամադրելիք հասարակական պայմանների միջոցով նպաստեն նրա յառաջխաղացութեան դէպի հեռաւոր նպատակը»:

Այսքան յատուկ բանաձեւում մը հպարտութեամբ կրնայ լեցնել բռնակալներու դէմ պայքարող սեւէ ժողովուրդի զակի մը սիրտը:

Եւ ըսել թէ Լէոն մէջբերելէ ետք սոյն ծրագրի հատուածը՝ յաղթական շեշտով մը կը պատգամէ իր «Թրքահայ յեղափոխութեան քաղաքաբանութիւնը» հատորին էջ 154ին մէջ.

«Մի սոցիալիստական կազմակերպութեան համար կարող էր լինել մի ծրագիր, մի նպատակ, թէ ներկայի եւ թէ ապագայի, թէ մօտիկութեան եւ թէ հեռաւորութեան մէջ՝ սոցիալիզմը եւ միայն այն»:

Փոխանակ անդրադառնալու, որ ազատագրուելէ ետք հնարաւոր է սոցիալիզմը իրականացնել, փոխանակ գնահատելու որ Արեւմտահայաստանի ազատագրումը միակ հնարաւոր եւ տրամաբանական մարման էր սոցիալիզմի հասնելու, Լէօ կարծես մոռցած մեր իրականութիւնը, զրէի հարուածով մը կը պահանջէ, որ մենք չունենայինք մեր ծրագրին մէջ ազատագրական մօտաւոր նպատակը եւ դառնայինք փանջունիական եւ սոցիալիզմը հաստատելէ ետք միայն ազատագրական պայքարի սկսէինք: Անհեթեթ է այս պնդումը իր կողմէ: Ի. դարուն բազմաթիւ ազգեր իրենց երկիրները այս կամ այն

բռնակալութեան լուծէն ազատադրելէ ետք է, որ տիրացան անկախութեան, ապա աշխատեցան եւ կ'աշխատին կապիտալիզմի զարգացման պայմաններուն մէջ իրականացնել սոցիալիզմը՝ իրենց պատկանած երկիրներէն ներս:

Պատասխանելով Լէոյի, ընկ. Անդր. Կէնճեան իր «Լէօ եւ Հնչակեան Կուսակցութիւնը» գրքոյկին մէջ գիտել կու տայ.

«Ո՞վ կ'ըսէ թէ՛ տան մը վերնայարկը բարձրանալու ծրագիրն ու նպատակը ունեցողը, երկու տարբեր նպատակի ծառայած կ'ըլլայ, երբ որ Լէոյի նման խելահաս գրողէտ մը պարզել կամ հասկցնել ուզէ, թէ առանց սանդուխի չի կարելի հասնիլ կամ իրադրժեւ տան վերնայարկը բարձրանալու նպատակը, նպատակ որ առաջին քայլէն սկսեալ մինչեւ վերջինը է եւ կը մնայ նոյնը, այն է բարձրանալ վերնայարկը:

«Ինչ ընել սակայն, երբ այդ սանդուխը երկար է, շատ երկար, սրովհետեւ շէնքը շատ բարձր է, չըսե՞լ արդեօք որ մատ առ մատ սանդուխէն պէտք է վեր ելնել»:



Գ Լ ՈՒՒ Է.

Կ ՈՒ Ս Ա Կ Ց Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ա Ր Ա Կ Ա Ր Ծ ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1896ը դադար մըն է մեր պատմութեան ընթացքին մէջ: Ազատներ, Ապահներ կը լքեն Կեդրոնը: Աւետիս Նազարբէկեանը կ'ամբաստանուի ամենէն գիւրին ձեւով... չկարենալով անոր կարողութեան հետ հաշտուիլ, 8 տարի «Հնչակ»ը իր անձնական միջոցներով հրատարակող, «Գաղափար» (1894) եւ «Ապտակ» (1895) պարբերաթերթերը լոյս ընծայող, խանդավառող, առաջնորդող, սիւլուքի բոլոր պողոթներուն եւ սոցիալիստական եւ այլ շարժումներուն հետ կապ պահող, Արեւմտա-Հայաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի մէջ կուսակցութեան զիրքը ամուր պահող, Աւետիս Նազարբէկեանի գլխաց փրտացող ճճիներու նման Վ. Արզուեանները սկսան իրենց սրդնոտ ուղեղներով հրապարակը աղմկել: Անոնք «Հնչակ» հրատարակել փորձեցին՝ ձախողեցան, «Հնչակ»ը բռնադրուեցու համար Մ. Սիւսանի գատ բացաւ: Լոնտոնի գատարանը թերթին արտօնատիրութեան իրաւունքը ասուաւ Աւետիս Նազարբէկեանի: Անոնք փորձեցին Հնչակեան Կեդրոնը Լոնտոնի մէջ գրաւել, դարձեալ ձախողեցան, փորձեցին Արեւմտահայաստանի, թէ Կովկասի Հնչակեան մասնաճիւղներուն մէջ զժողովութիւն յառաջացնել՝ դարձեալ չյաջողեցան: «Մարտ», «Անահիտ», «Նոր Կեանք», «Ազգ» թերթերը հրատարակեցին, սակայն կարճատեւ կեանք ունեցան, սրովհետեւ Թրքական Բռնակալութեան գէմ Ազատագրական Պայքար մղած հայ ժողովուրդը, ինչպէս անտարբեր գտնուած էր Արմենականներուն ծրագրին նկատմամբ, նոյնպէս անտարբեր գտնուեցաւ Վերակազմեալ Հնչակեաններուն նկատմամբ: Ապա տեսներով, որ պիտի չկարենան դուրս ելլել, 1902ին Բ. Համազումարէն ետք անոնք սպաննեցին Հնչակեան Սաղաթիլ Սպորտին, Համբը եւ Որսորդը:

Վերակազմեալները կը կարծէին, թէ մեր ազգին զլխուն իջած 95-96ի Օսմանեան լախտի հարուածի պատճառը Արեւելահայերն էին... Անոնք կը խորհէին որ, եթէ հեռացնեն Նաղարբէկեանը, Շ. Կաֆեանը, Մարօն, Ռ. Խանազատը, Ս. Սապահ-Գլխանը, Ղազարոս Աղայեանը, Ատրպետը եւ անոնց սոցիալիստական ծրարիւրը, ապա կարելի կ'ըլլայ աւելի լայն շարժում յատաջացնել եւ յաջող ելք մը գտնել հայ դատին:

Վերակազմախնդրուն մէջ անտարակոյս անկեղծ տարրեր ալ կային: Միհրան Տամատեանը, Աղասին, Ապահը, Լ. Փաշալեանը, Ա. Ռչտունին անկեղծ յեղափոխականներ ըլլալէ չէին դադրեր. իրենց պահողը, աւա՞ղ, հետեւողականութիւնն էր եւ հաւատքը ղէպի նպատակը:

Այս առթիւ ըսենք որ Հնչակեան յետազայ պործունէութեան վրայ մեծ ազդեցութիւն չունեցաւ Վերակազմեալ շարժումը, որոնց հետ 1901ին, 1902ին վերամիացման փորձեր ալ կատարուեցան: Անոնք յաջողեցան նոյնիսկ «Հնչակ»ի մէջ կարգ մը հակա-սկզբունքային յօդուածներ սպրդեցնել, զոր շահագործելու առիթ համարեցին հայրենի պատմարանները ժամանակի ընթացքին, մեղադրական եւ «հակա-սկզբունքային» սխալներ» մատնանշելով եւ «ուրախանալով» որ այդպիսի սխալներ գործած կրնայ ըլլալ Հնչակեան կուսակցութիւնը՝ 90ական թուականներուն:

Հայրենի պատմարաններէն ոմանք, փոխանակ լուրջ մենադրութիւն մը կազմելու այդ շրջանի կուսակցական կամ զաղափարական հոսանքներու զարգացման, բաղխուելու եւ հակադրութեան վերաբերեալ, միայն ժխտական ֆրագմերու մէջընթացում կատարելով այդ շրջանի ազատագրական կամ սոցիալիստական շարժումներէն, կը սահմանափակուին ուրիշներուն որոշ հաշիւներով կատարած մէջբերումներով եւ սխալ եզրակացութիւններ կը պարտադրեն իրենց հետեւորդներուն:

Անոնցմէ «Մարքսիզմի Տարածումը Հայաստանում» գրքի հեղինակ Խիկար Բարսեղեանը օրինակ, կը մէջբերէ 1900-1902ի շրջանի Վերակազմախնդրուն եւ Հնչակեաններու միացման առթիւ լոյս տեսած ազգային դիմագիծի յատուկ տողեր... կամ «Հնչակ»ի մէջ լոյս տեսած երկար բացատրական յօդուածէ մը կը վերցնէ այն միտքը, թէ կապիտալիզմի զարգացումը անհնար է թուրքիոյ մէջ եւ անմիջապէս կ'աղաղակէ — տեսա՞ք թէ մանր — պուրժուական տեսակէտ ունին Հնչակեանները...:

Հ. Գ. Վարդանեանը այնքան կը չփոթէ Հնչակը Դաշնակիւն հետ... որ Պապը Ալիի 1895ի Սեպտ. ցոյցը կը դրէ, կազմակերպած էին Հնչակեանները եւ Դաշնակցականները...:

Հոս կը մէջբերենք Հ. Գ. Վարդանեանի տողերը.—

«1895 թ. Սեպտ. 18ին Հնչակեանների ու Դաշնակիւնների ղեկավարութեամբ Կ. Պոլսում հայերը կազմակերպեցին խաղաղ ցոյց (Պապը Ալիի ցոյցը) եւրոպական Տէրութիւնների ակտիւ միջամտութիւնը հայցելու նպատակով: Ոստիկանները նախօրօք տեղեկացել էին հայերի մտադրութիւնների մասին: Աւելի քան 4000 հայեր՝ Երկուշաբթի օրը շարժում են դէպի Սուլթանի պալատը՝ «Ձայնը հնչեց էրպրումի հայոց լիւններէն» երգելով:

Այն շփոթը, թէ Պապը Ալիի ցոյցը Դաշնակցականներն ալ ղեկավարած են, ծիծաղ կը պատճառէ եւ ցաւալին այն է, որ այդ շարժումին մասին տարրական գաղափար չունի հայրենի պատմաբանը...:

(Տես՝ «Արեւմտահայերի Ազատագրութեան Հարցը», Հ. Գ. Վարդանեան, 1967, էջ 216, Բ. պարբերութիւն): Իսկ գե՞րբը... հրատարակուած է Գիտութեան Ակադեմիայի պատմութեան ինստիտուտին կողմէ...:

1896ին Հնչակեան կուսակցութիւնը կանգնած էր ապստաղական պայքարը նոր եղանակով շարունակելու հարցին առջեւ: Առաւելաբար Աջակողմեան թեւը՝ որ Արեւմտահայերէ կը բաղկանար, կը կարծէր թէ 1890-96ի ցոյցերն ալ ապստամբութիւնները քանի որ Թրքահայաստանի ազատագրման արդիւնքին չէին յանգած, ուրեմն ատոր մէջ յանցաւոր էին Կեդրոնի ղեկավարները՝ Ա. Նաղարբէկեանի զլխաւորութեամբ, հետեւաբար, եթէ վերցուէր հեռուոր նպատակը՝ սոցիալիզմը, ապա հնարաւոր կը դառնար հայ յեղափոխութեան յաղթանակը Հայաստանէն ներս: Այդ շրջանին գումարուած Հնչակեան Ա. Համագումարը բացառիկ նշանակութիւն ունէր: Մ. Տամատեանը որ փրփականտով մասնակցած էր Սասնոյ ապստամբութեան եւ Վ. Արզուեանը որ Պապը Ալիի ցոյցին մասնակցած էր, Աղասի Թուրսարգիսեանը որ Զէյթունի ապստամբութիւնը ղեկավարած էր, Անտոն Ռչտունին որ 1893ին Գաղատիոյ մէջ գատապարտուած էր եւ դեռ ուրիշներ՝ գրեթէ մեծամասնութիւն կազմած, զօրաւոր զրոհի անցան Նաղարբէկեան Կեդրոնին դէմ: Անոնք, դատ բացին Ա. Նաղարբէկեանի դէմ եւ ուղեցին «Հնչակ»ի արտօնութիւնը սեփականացնել: Լոնտոնի դատարանը իր արդար փճիւրը տուաւ եւ Մ. Սվազլըն՝ որ Վերակազմախնդրուն կողմէ դատը կը հետապնդէր, չյաջողեցաւ իր ծրարին մէջ:

Լոնտոն հաւաքուած ներկայացուցիչներուն մէջ էին՝ Արփիար Արփիարեան, Միհրան Տամատեան, Միհրան Սվազլը, Լեւոն Մկրտտիչեան, Անտոն Ռչտունի, Աղասի եւ ուրիշներ:

Իսկ Կեդրոնի կողմէն՝ Աւետիս եւ Մարօ Նաղարբէկեաններ, Ռուբէն Խանազատ, Ռուբէն Բէրբերեան, Սաղունի, Համր (Արամ Գրիգորեան), Տիգրան Իզմիրլեան (Որսորդ), Ռ. Մովսիսեան, Շմաւոն (Գարրիէլ Կաֆեան) եւ ուրիշներ:

Հնչ. կուսակցութեան Պատմութեան մէջ կը կարգանք (էջ 268).

«Նախապատրաստական ժողովներու պահուն՝ յստակօրէն կը յայտնուէր հա-կա-նազարբէկեան խմբակի բիբային կերպարը: Ընդդիմադիրները՝ խրախուսուած փաշաներու, կզերներու, միսինաբներու եւ մամուլանգ՝ քուրք կառավարութեան ներկայացուցիչ Մուսիք Պէյի կասկածելի օժանդակութեան (որոնց մանրամասնութիւնը դիտնալուն համար եւ Վ. Արզուեանին Մուսիք Պէյին ստացած գումարներուն տեղեկ ըլլալուն համար էր որ Արփիար Արփիարեան 1903ին Վենետիկի մէջ «Հայ Հանդէս», ապա 1908ին Գահիրէ «Շիրակ» հրատարակած առեւ մնայուն սպասնալիքին տակ էր Ամերիկա հաստատուած «Ազգ» թերթի խմբակիրներուն եւ յատկապէս Վահէ Արզուեանի): Մենք անձամբ Ապահի ողբացեալ գազին՝ Մուսիք Պէյի րոտեանի բնակարանին մէջ կարգացած ենք Ապահի գրկուած Ա. Արփիարեանի նոմակները, ուր ան մանրամասն կը վկայէ, թէ իրեն դէմ տեսոր եթէ կազմակերպուի, ատիկա Վ. Արզուեանի կողմէ կրնայ ըլլալ — քանի որ ինք տեղեկ է տնոր զաղտնիքներուն...:

Դժբախտաբար, հոս թէ հոն, պատմարաններ այս պարզան նկատի չեն առներ, եւ չփոթելով իրողութիւնը, առանց քաշուելու կը գրեն... Թէ՛ Արփիար Արփիարեանը Հնչակեանները գարկին... այդպիսի ցաւալի վրիպում մը տեղ դրած էր «Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն», հատոր Դ. էջ 384ին մէջ, ուր հայրենի վերլուծող արժէքաւոր գրականագէտ Գառնիկ Ստեփանեան գրած է. «Ռուսական յեղափոխութեան մասին յօդուածները հետ մէկտեղ, Արփիարեանը շարունակում է մերկացնել դաշնակ ու հնչակ տեռորիստներին(?), ստեղծելով կատաղի բշտամալութիւն իր դէմ: Հնչակեանները, որ դեռ եւս 1903 թուականին փորձել էին սպաննել Արփիարեանին, մի նոր տեռոր են կազմակերպում նրա դէմ: 1908ին, Փետրուարի 12ի գիշերը, Կահիրէում. Արփիարեանի տան մօտերում լսում է ասորեանակի երեք կրակոց եւ մթութեան մէջ ընկնում է աննկուն հրապարակախօսը»:

Այս տողերը պէտք է սրբազրուին: Նախ՝ ԱՄՆ-էն Արզուեանի խմբակի կողմէ զրկուած երկու վերակազմեալ տեռորիստներն են պատասխանատու Ա. Արփիարեանի սպանութեան, ապա 1896ին Դաշնակցութիւնը Պոլսոյ մէջ տեռոր կազմակերպեց անոր դէմ, ձախողեցաւ, սպառնաց, բայց Հնչակեան Կուսակցութիւնը զայն պաշտպանեց, պահանջելով խոսն դատարանի կազմութիւն՝ «մատնիչ» Արփիարեանը դատելու համար:

Դաշնակցութիւնը կը պնդէր, որ ան մեղադարձ ստորագրած եւ Պոլսոյ բանտէն ելած է, հետեւաբար Նազըմ Փաշայի զործիքն էր... Դաշնակցութիւնը աւելի առաջ չընաց իր այդ պնդումին մէջ եւ չէր ալ կրնար, որովհետեւ 1896ին Պանք Օթոմանի դէպքը եւ ընդհանուր յեղափոխականներու դէմ ձերբակալման հրամանագիրը ստորագրած էր Ս. Համիտ: Յեղափոխականները ստիպուեցան Պոլսէն հեռանալ: Ա. Արփիարեանի դէմ Արշակ Չոպանեանն ալ սեւազրէքեան աշխատանք տարած է 1900-3ի շրջանին, երբ Լեւոն Փաշալեանի հետ Արփիարեան «Մարտ» եւ «Նոր Կեանք» թերթերը կը հանէր, իսկ վերակազմեալներու կեդրոնը Վահէի գծով կը պաշտպանէր Արշակ Չոպանեանի «Անահիտ»ը: Նկատելով որ, այս երկու թերթերն ալ վերակազմեալներու ազդեցութիւնն ու ուղղութիւնը ունէին, ապա Չոպանեան եւ Արփիարեան իրարու դէմ սուր կը ճօճէին...: Արփիարեանի Ապահի տղայն ձեռք ձգած նամակները, որքան որ իմացանք, «Արեւ»ի շրջանակը Ապահի տղայն ձեռք ձգած եւ զրկած են Երեւան, ինչ որ ստուգումի կը կարօտի...:

Արփիարեանը վերակազմեալներու դէմ թոյն կը թափէ 1899ին գրած իր նամակներուն մէջ եւ 1899ին արդէն քաղաքական դործունէութենէն քաշուելը կ'իմացնէ:

Մեզի համար Արփիարեան կը մնայ Հնչակեան, իր գրականութիւնը՝ «Կարմիր ժամուց», «Մինչեւ Ե՞րբ», «Ոսկի Ապրիլ» լաւագոյն վկայութիւնն են, ցոյց տալու համար որ սոցիալիզմի ո՛չ միայն հետեւորդ մըն էր ան, այլ իրապէս հերոս մը, որ մերժեց Մալկո-եաններու, Ե. Օտեաններու, փաշաներու կամ ամսականներով սնանելով հակասոցիալիստական ուղղութեան հետեւելու առաջարկը:

**

Օշականի գրականութեան զիրքին մէջ ալ սխալմամբ յիշատակուած է որ Ա. Արփիարեան «Հնչակ» թերթի խմբաւոր եղած է:

Դժբախտաբար հայ ազատագրական պայքարի մէջ զեր ունեցած, ղեկավար զիրքեր գրուած քաղաքական դործիչներուն մասին

երբ մենադրութիւններ կը գրուին, կ'անտեսուի անոնց կուսակցութեան պատկանելութիւնը, կ'անտեսուի անոնց տուեալ ժամանակաշրջանի մէջ ունեցած դործունէութիւնը, ինչ որ պակասաւոր բնոյթ կուտայ շատ դնահատելի աշխատանքով հրապարակ հանուած մենագրական աշխատանքներուն:

1901ին վերակազմեալ Հնչակեաններէն կը հրաժարի Ա. Արփիարեան: «1901ի վերջերը, եկա Փարիզ՝ նրա թակահար շատ անձուկ վիճակի մը մէջ»: 1902ին կը հրատարակէ «Կարմիր ժամուց»ը Վենետիկի մէջ: Վերակազմեալներու կեդրեկներուն չկրցաւ տոկալ եւ 1905ին, ազդեցութեանը ներքեւ Ռուսական Յեղափոխութեան, որուն մասնակից էր Նազարէկեանի շիժնած կուսակցութիւնը եւ որուն օրկանները՝ «Ապագայ» Ռուսոճուգ, «Հնչակ», «Երիտասարդ Հայաստան», ամբողջ ուժով ցարիզմի դէմ դիրքորոշուած էին. ան գրեց եւ «Երիտակ»ի մէջ տպեց «Մինչեւ Ե՞րբ», «Ոսկի Ապրիլ» ընկերակարականի վայել պատմուածքները: Եւ ինչո՞ւ զարմանալ, որ 1906ին ստանձնելէ ետք Գահիրէի «Լուսարեք» թերթի խմբաւորութիւնը պիտի դէր յօդուածներ, ուր հայ ժողովուրդի Ազատագրական Պայքարներուն մէջ Ռուսաստանի դերը պիտի ընդգծէր որպէս դրական, համաշխարհային յառաջընթացի մէջ:

«Քան երկուամ Ասորեստանը, կը գրէ ան, այսօրուան Ռուսաստանը մանչ-մալու պէտք ունիմք, Ռակեբբանին տեղ կարլ Մարքը»:

(«Երիտակ», 1905, թիւ 10-11):

«Հիմակ սկսած են ձմիլ թերեւս աւելի մեծ մարտեր, քան Լոռի Մելիխովները, Տէր Դուկասները, Լագարեւները...: Մեծագոյնները ժողովրդին ազատութեան համար անփառունակ մեռնող հերոսներն են»:

(«Լուսարեք», 1905, թիւ 175):

«Պայքած յեղափոխութիւնը, կը գրէ ան, միաեծան իշխանութիւն մը չէ, որ պիտի տապալէ, այլ նաեւ տնտեսական դրութիւն մը, ուստի եւ տարակոյն մը չկայ, թէ իր յաղթանակն օր մը չէ օր մը պիտի սարսէ ո՛չ միայն թագաւորութիւնները, այլ եւ հանրապետութիւններն ալ»:

(«Լուսարեք», 1905, թիւ 147):

«Թող չկարծուի, թէ Ռուսական շարժումը ջախջախուեցաւ, լմնցաւ: Անեղ պատերազմ մըն է, որ կը մղուի միաեծանութեան եւ ժողովրդական իրաւունքի միջեւ: Յեղափոխութիւնը կրնայ քանի մը նակատամարտ կորսնցնել, բայց վերջնական յաղթանակը իրեն պիտի մնայ երկարատեւ կռուի մը յետոյ»:

(«Լուսարեք», 1905, թիւ 172):

Հիմա կը հասկցուի նաեւ, թէ ինչո՞ւ աչքի փուշ դարձած էր Սոցիալիզմի կուսակցութեան հետեւորդը վերակազմեալներու աչքին. հետեւաբար վերի վկայութիւնները յաւադոյնս կը փաստեն, որ ան կը մնար Գում Գափուի 1890 Յուլիս 15ի ցոյցին առիթով Ընկ. Յովհ. Շահնազարեանի Պոլսոյ «Հայրենիք» գաղափարապաշտ թերթին մէջ «Հնչակեանութեամբ հնչեցիմ գանգակները» գրող Արփիարեանը...: Վերի տողերը կարգալէ ետք, պահ մը կը մտածէ մարդ այն վատ տրամադրութեան մասին զոր պիտի ունենան հայրենի մտաւորականներ, կարողալով Գ. Ստեփանեանի «Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն», Գ. հասորին էջ 384ի մէջ, թէ հայրենասէր դրողը սպանուած է Հնչակեաններո՛ւ կողմէ... Եւ ոչ թէ երկուքի բաժնուած վերակազմեալներու մէկ խմբակին կողմէ Գահիրէի մէջ...:

1896ը՝ ուրեմն ճակատագրական նշանակութիւն ունեցաւ:

1896ի Յունուարի Հնչակեան Համագումարը Կուսակցութեան ծրագրէն սոցիալիզմը դուրս հանելու կը ձգտէր: Ու Վերակազմեալներու բանաձեւը մանաւանդ... «նկատելով որ սոցիալիզմը աւելորդ եւ վնասակար է հայոց դատին համար, ժողովը որոշում է դադարեցնել այդ գործունէութիւնը եւ պատրաստուիլ ընդհանուր ապստամբութեան»:

Նոր Վերակազմեալներու Կեդրոնի անդամները կ'ընտրուին Մ. Տամատեան, Մ. Սվազլը, Ա. Արփիարեան, Լ. Մկրտիչեան եւ Ս. Սուրէնեան (Կտլովեան):

Ամիսներ տեւող պայքարէ ետք, Նազարբէկեան Կեդրոնը կը մնայ անսասան իր սոցիալիստական ուղիին վրայ: Իրաւ եւ ծանր մտաւորականութիւնը որ չէր յուսահատած ազատագրական պայքարի հետեւողականօրէն շարունակման հարցին մէջ, ունէր իր հետեւորդներուն մէջ Մարո եւ Աւետիս Նազարբէկեանց, Պետրոս Մարիմեան, Հմ. Խուշպուլեան, Ղազարոս Աղայեան, Թուրէն Պէրպէրեան, Հրահատ Կամսար (Գրիգոր Վարդանեան), Երուանդ Պալեան, Սաղունի, Լազո (Ղազարեան) եւ ուրիշներ:

«Հնչակ»ը, դաւադրարար Կեդրոն նստած Վերակազմեալներու դէմ՝ օրինաւոր Համագումար առաջադրեց:

1896ի «Հնչակ»ի 18րդ թիւին մէջ կը յայտարարուի թէ «Հնչակեան Կուսակցութեան ծրագրին եւ սկզբունքներուն հաւատարիմ Մասնաճիւղներուն կողմէ ընտրուած Պատգամաւորական Ժողովը նիստի կը հրաւիրուի՝ 1896 Սեպտ. 28ին Լոնտոն»:

Անդրադառնալով սոցիալիզմի դիմին սպառնացող վտանգին՝ կուսակցութեան Համագումարը կ'ընտրէ Կեդրոնի նոր անդամները՝

- Աւետիս Նազարբէկեան
- Մարո Նազարբէկեան
- Ղազարոս Աղայեան
- Պետրոս Մարիմեան
- Հմայեակ Խուշպուլեան
- Երուանդ Պալեան
- Սարգիս Մուպահաճեան (Ատրպետ):

Ժողովը կ'որոշէ չըջարեականով շարքերուն յայտարարել, թէ կուսակցութեան անջատուած հերձուածողները դէմ են սոցիալիստական սկզբունքին՝ (իմա հեռաւոր նպատակին) եւ նաեւ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՐԳՈՎ ՍՏԵՂԾՈՒԵԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ:

1896ի վերջաւորութեան Հնչակեան Կուսակցութեան բացի Հիւսիսային Ամերիկայի, Եգիպտոսի, Անտիոքի կարգ մը շրջաններէն՝ մնացեալ բոլոր շրջանները յատկապէս երկրի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի՝ իրենց հաւատարմութիւնը յայտնեցին Նազարբէկեան Կեդրոնին եւ անոր քաղաքական ուղղութեան:

«ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ» ՎԵՐԱԳՐՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

«Թուրէն Խանազատ քիչ յետոյ Մ. Նահանգներու մէջ (1893) կը խօսի «Դասակարգային եւ Բանուորական Հարցեր», «Դարիթալ ու Գործաւոր», «Պուրժուա ու Պրոլետար», «Հողատէր ու Գործաւոր», «Ընչատէր ու Ընչագործ», եւ այլն նիւթերու շուրջ»:

«Ապագայ Հայաստանի քաղաքական ու տնտեսական ծրագիրներն էին որ կը բացատրուէին Ամերիկայի գործաւոր եւ մեծ մասամբ անուս դասակարգին»:

«Հնչակեան Կուս. Թրքահայ առաջնորդներէն ոմանք եւս կը տարուին ընկերվարական այս նոր վարդապետութենէն, անոնք ալ, իրենց հայրենաշունչ ու յեղափոխական ատենարանութեան հետ կը վերլուծեն ու կը քարոզեն զայն պանդուխտ հայերուն»:

«Նշան Կարապետեան (Ռ. Խանազատ) Ամերիկայի մէջ յարարութիւն մշակեց ուս եւ հրեայ ընկերվարականներու հետ, անոնց գլխաւորները Էրբեմն կը հրաւիրուէին խօսելու Հնչակեան բեմերէն: Օրինակ՝ Տիկին Քոնիքով, Ա. Կրէր, Մր. Քոնիքով, եւ այլն: Հայկական դատէն աւելի կարեւոր էր անոնց համար, որ հայերը հոս միանան գործաւորական կազմակերպութեանց, միւս կողմէ քաղաքացի արձանագրուին Մ. Ն.ի եւ քուէ տան Ընկերվարական ընտրելիներու»:

«Ընդհանուրէն արհամարհուած հայ բանուորներու համար, զրպէն եկած սա համակարանքն մեծ արժէք ունէր: Ոմանք զրկարաց ընդունեցին ընկերվարական վարդապետութիւնը, առանց երկար քննութեան եւ դարձան մոլեռանդ հետեւողներ Քարլ Մարքսի»:

(Տես՝ «Պատմութիւն Ամերիկահայ Քաղք. Կուսակցութեան», Մ. Ճիգմէճեան, 1930, Փրէզիս, էջ 22-23):

Ամերիկայէն մեկնող, Հնչակեան Ծաւարչ Երչմանեան, Սարգիս Պալեան (Քեռի), Սիւսակ Վանիկեան (Սիւսակ), Եփրեմ Կաճարեան (Ռուրէն), Յակոբ Ժամկոչեան (Ներսէս), Լեւոյն, Սուէտիոյ, Չոք Մարզումի, Հաճընի, Ուրֆայի, Քեսապի եւ Զէյթունի շրջաններու հայ ժողովուրդը կը կազմակերպեն եւ ինքնապաշտպանութեան հերոսական էջեր կ'արձանագրեն:

Ամերիկեան միսիոնարներ թռուցիկներ եւ յօդուածներ կը գրեն Հնչակեան Կուսակցութեան դէմ:

1893ի Դեկտ. 28ի թիւին մէջ «Գօնկրէկաշրնալիստ»ը հրաւէր կը կարդայ, որ հայ բողոքականներ չքաջալերեն Հայոց Յեղափոխական Ծարժումները եւ Հնչակեան Կուսակցութիւնը:

Հատուած մը.—

«Հնչակեան Յեղ. Կուս.ը միակ հայ կուս.ը է սա, որ Հայաստանի մէջ Յեղափոխական շարժումը կը վարէ: Կեդրոնը Աթէնք է, Հայաստանի ամէն գիւղ ու քաղաք՝ մասնաճիւղեր ունի, ինչպէս նաեւ արտասահման: Նշան Կարապետեան հիմնադիրներէն մին (Ռ. Խանազատ) Ամերիկա կը գտնուի»:

«... Բոլոր միսիոնարները, ներքին թէ արտաքին թող դատապարտեն զայն: Բողոքական հայեր ամենուրեք թող դատապարտութիւն կարդան անոր: Ան (Ռ. Խանազատ) կը փորձէ ամէն Կիրակնօրեայ Դպրոց մտնել, խորել եւ խոտորեցնել անմեղ ու անգիտակ տարրերը որ խարէութեան ուժ տան»:

«... Ամերիկայի եւ արտասահմանի բոլոր միսիոնարներ՝ զո՛ր չէ՛ դաշնակցել կամ հաւանել Հնչակեաններուն»:

«Լեֆսիմիթըն», Դեկտ. 23, 1893

ՍԱՅՐԸ ՆԱՄԻՆ

Ուրիշ վկայութիւն՝

«Նկատելով որ Հնչակեան Կուս. Յեղափոխական եւ զրգոյն նպատակները հայերու մէջ... Մուսաշուսեթի Հօմ Միշըն Ընկերութիւնը պարտք կը դնէ իր բարեկամներուն վրայ հաւանութիւնը եւ օգնութիւնը չտալ այդ կուսակցութեան»:

ԶԱՐԼ Պ. ԲԱՅՍ
Ատեմապետ Գործադիր Յանձնախումբի
ՃՈՇՈՒԱ ՔՈՑԻՎ՝ Ատեմապալի

Պոսթոնի «Թրանսքրիպթ» թերթին մէջ Ռ. Խանազատ պատուախանեց, փաստացի բաց նամակ մը գրելով։—

«Հայ ժողովուրդի քառասունութնեկն օգտուող կեղծաւոր Ամերիկեան միսիոնարներուն...» խորապրոփ: Ան կը գրէ։—

«Թուրքիոյ մէջ գործող միսիոնարները եւ ասոնցմէ էն հեղինակաւորները կը դատապարտէին... կ'ամբաստանէին Հնչակեան առաջնորդները ու անոնց շարժումը՝ իբրեւ ոռուսական օսկիներուն եւ դաւերուն ծախուած վարձկաններ...»:

(Տես՝ Մ. Ճիզմէճեանի *Կիրքը*, էջ 41-42):

Պայքարը այնքան սուր ընդթ ստացաւ կողմերու միջեւ, որ Միսիոնարներու պարապլուխ՝ Համլինը «Մոլլա» որակուեցաւ հայ թերթերու մէջ:

«Ճերէնու Ավ Արմինիա» Հնկերութիւնը ի նպաստ հայոց փրփուականտ կը կատարէ, իսկ հայեր Մայիսեան Զարդերու առթիւ բողոքի թափօրներ կը կազմակերպեն, պարզելով Ամերիկեանին հետ՝ սեւ եւ կարմիր դրօշակներ:

«Այս թափօրները կազմուեցան Պոստոն, Ուստը, Փրաւտենս, Լին, Մուլըն, Լովել, եւայն քաղաքներ: Այս ձեւով Հայ Դատը Ամերիկեան մամուլի նիւթ դարձաւ: Այն Պէքուէլ, Մերակուտական ձօրճ Հօր, Մեսեչուսեց նահանգի կառավարիչ Տրէտէրիք Կրին Հաճ հրապարակային ելոյթներ ունեցան:

«Ժողովներէն ետք բողոքի բանաձեւեր կը հեռագրուէին թէ՛ Ուաշինկթընի կառավարութեան եւ թէ՛ Եւրոպական դահլիճները, պահանջելով Հայաստանի բարեկարգութեանց անմիջական գործադրութիւնը:

Մանուկ Ճիզմէճեան նախանձէ կուրցած՝ իր գրքին մէջ միակ հեռատեղը կը նկատէ Վերակ. Հնչակեանները, միակ խոհեմը Արժեանականները եւ Սահմանադիր Ռամկավարները... ասեալը թոյն կը սրսկէ՝ Հնչակեան Կուս. հիմնադիրներուն եւ Դաշնակցութեան դէմ... ան պուրժուազիայի եւ ամիրայական հարուստ խաւի ձայնատուն է եղած Արտակ Դարբինեանի նման... Տարօրինակն այն է... որ այս մարդուն համար 1887-96 Հնչակեան Կուս.ը մաքուր, յեղափոխական, գործունեակ՝, ազատագրական պայքարի դրօշակակի՛րն է... բայց Երբ տեղի կ'ունենայ բաժանումը եւ Վերակազմաւորները սոցիալիզմը ծաղրելնուն համար կը գատուի՛ն... Հնչակեանք կը դառնան վնասակա՛ր...: Մինչդեռ Վերակազմաւորն ո՛չ մէկ գործ կատարած են ո՛չ կովկասի եւ ո՛չ ալ Արեւմտահայաստանի մէջ եւ 1903ի վերջնական խզումէն ետք՝ կտոր կտոր եղան եւ 1906ին կորսուեցան պատմութեան թատերաբեմէն: Վերակազմաւորներու ողջ մնացածները մերժեցին Հնչակեան առաջարկը 1908ին՝ վերջնականապէս Իթիհատի դէմ պայքարելու... Կենք հայթայթելու, այդ դժով աշխատելու...: 1921ին դարձան Ռ. Ա. Կ. որ այդ շրջանին փաստօրէն եթէ ուզէր ալ, չէ՛ր կրնար ազատագրական պայքար մղել ո՛չ Ռուսիոյ, ո՛չ Արեւմտահայաստանի մէջ:

**

Այս ծիծաղելի ոչնչութիւնը՝ Մ. Ճիզմէճեան, կը մեղադրէ Նազարէկը. տեսէք թէ ինչպիսի ճղճիմ տրամաբանութեամբ:

Մ. Տամատեան, Մ. Սվազլը, Լ. Մկրտիչեան, եւայն Լոնտոն կ'երթան 1896ի Հնչ. Ա. Համապումարին եւ ի՛նչ տեսնեն... Հնչ. Կեղ-րոնը պահանջուած ձեռնհասութեան գուրկ՝ վարելու համար յեղափոխական գործը Թուրքիոյ մէջ: Ինչո՞ւ... լսեցէք.—

«Անոնք կը տեսնեն, թէ ի՞նչպէս յեղափոխութեան սնունով հաւաքուած դրամները մոխուած են ընկերվարական փրփուականտին համար, կտրով ու ջանք կը վատնուէր Հնչակեան մամուլով ընկերվարական պրոչիւրներ հրատարակելու, ինչպէս «Քաղաքիար» ամսաթերթ, «Մայիսի Մէկը», «Ռ՞ով Ինչով է Ապրում» (Տիբլատայն), «Իրաւունք Ծուլախալու» եւայն, եւայն»:

(Ականջը խօսի մեզ նացիոնալիստ որակող հայրենի որոշ պատմաբաններուն... ասկէ լաւ վիպայութի՛ւն...): Անցնինք:

Բայց ուրիշ ծիծաղելի վերագրումներ ալ կ'ընէ 1930ին իր գրքը գրած Ճիզմէճեան Մանուկը: Նազարէկ վիժեցուցած է եղբր Փոքր Հայրի, Արարկիբի, Սասնոյ եւ այլ տեղերու յեղափոխական ձեռնարկները...:

Կը կարծենք, թէ այս ծիծաղելի հէքիաթներուն անիմաստ ըլլալը մեկնաբանութեան չի կարօտիր:

Իսկ ի՞նչ կ'որոշեն Աւետիս եւ Մարօ Նազարէկեանները Հնչ. Կեղրոնէն հեռացնող Մ. Սվազլեանները, Գար. Զթչեանները, Վ. Արզուեաններն ու Սուրէն Կտրղեանները...:

«... Աւելորդ եւ վնասակար կը նկատեն ընկերվարականութեան քարոզութիւնը՝ Տաճկահայ դատին հետ, եւ իսպառ կը վտարեն ընկերային այդ վարդապետութիւնը Հնչակեան Ծրագրէն»:

Եւ այս պղտիկ Արեւմտահայ պատեհապաշտ խմբակը, կը տեսնէ՞ք հիմա, թէ ի՛նչ մեծ գործ կատարած է՝ 8 տարի թերթը իր դրամով հրատարակող, գրաչարութիւն կատարող եւ խմբագրող, հարիւրաւոր Կուս. Շրջաններու հետ մօտէն կապ պահող, (որուն խմբագրականները այսօր ալ հիացում կը պատճենեն եւ պատկը կը բերեն հեղինակին), եւ որ 1936-9 Մոսկուայի մէջ վեքթրան յեղափոխական որդէս, ամսական կը ստանար Խորհ. Պետութեանէն, որ 1971ի Երևան տպուած Ակադեմիայի Գիտակ. Ինստիտուտի «Հայ Նոր Գրականութեան Պատմ.» հատորին մէջ «առաջին պրոլետարական երգիչ քանաստեղծը» կ'որակուի...: Այո՛, Արեւմտահայ Մանուկ, 1890-96 թ. անկախութեան հասնելու ուշացումը, նոր պայքարներէն խուսափելով եղիպտոսի կամ Մ. Նահանգներու մէջ Բարեկործանի հայ փաշաներու հացի մնացուկներով սնանող, պատեհապաշտ, Սուլթանի Փարիզի Դեսպան Մունիր Պէյին հետ գործակցող Վահէ Արզուեանները չէ որ պիտի վճռէին Աւետիս եւ Մարօ Նազարէկեաններու հետեւողականօրէն շարունակուող Ազատագրական եւ Սոցիալիստական գծին ճիշդ կամ սխալ ըլլալը, կամ աւելորդ որպէս դատէին հեռաւոր նպատակը Հնչակեան Կուսակցութեան: Անոնք է որ ծաղրանքի առարկայ պիտի դարձնէին «Քաղաքիար» (1894) Աթէնք հրատարակուած Լոսանջոս թերթին մէջ Մարքսի եւ Էնկէլսի «Կոմուն. Մանիֆեստը» առաջին անգամ հայ կեանքին մէջ քարգամնող Ա. եւ Մ. Նազարէկեանները...:

Բայց լսենք.—

«Ամերիկայի մէջ կարգ մը Հնչակեաններ՝ սպրած ըլլալով գործաւորական դառն կեանքը, անկէ փրկուելու եւ ազատ ու մարդավայել կեանքի մը տիրաւայութեան միջոցը ընկերվարութիւնը սեպելով, կը յարին ընկերվարութեան եւ ուժ կուտան Նազարէկի Կեղրոնին ու կը պաշտպանեն զայն»:

(Տես՝ «Պատմ. Ամերիկահայ Քաղ. Կուսակցութեանց», (1890-1925), Մ. Ճիզմէճեան, Պրէզիտ, 1930, էջ 65-67):

Վերակազմեալներու միջեւ վէճը կը սրի: Փոխանակ 3 տարիէն զուամբողջութեամբ, 2 տարիէն կը զուամբոյն իրենց Բ. Համազումարը (1898), կորսնցնելէ ետք «Հնչակ»ի ղէմ Մ. Սվազլըի բացած դատը՝ Լոնտոնի մէջ: Դատարանը «Հնչակ»ին Ա. Նազարբէկին պատկանելը կը վճռէ:

Լսենք Մանուկը.—

«Ինչպէս Լոնտոնի, նոյնպէս այս Բ. Ընդհ. Ժողովին մէջ Կուս.ը (Վերակազմ.) կ'որոշեզրէ գործել ըստ նախորդ Ընդհանուր Ժողովի որոշման՝ գուտ ազգայնական հողին վրայ»: (Ընդդ. — Հ. Գ.):

«Անգամ մը եւս ընկերվարութիւնը (սոցիալիզմը) կը նկատուի աւելորդ ու վնասակար Տաճկահայ Դատին համար, քանի որ Թուրքիոյ մէջ Եւրոպական իմաստով ո՛չ գաբիթալ եւ ո՛չ ալ պրոլետարիատ գոյութիւն ունէին, այլ կային Տաճիկը եւ Հայը ղէմ առ ղէմ»:

Սոյն Ժողովին մէջ (1898 Եգիպտոս) կ'որոշուի «Վերակազմեալ Հնչակեան» անունով մկրտուիլ եւ «Մարտ» եւ «Նոր Կեանք» թերթերը հրատարակել:

Մ. Ժիզմէճեան կ'ըսէ, թէ ընկերվարական վարդապետութեանց յարողներ կը հետեւին Նազարբէկի եւ կը կոչուին Ս. Դ. Հընչակեան, իսկ Վերակազմուող մեծամասնութիւնը (?) (միայն Ամբրիկա, Եգիպտոս) ազգային դատին հաւատարիմ մնալով, կը գործէ Վերակ. Հնչակեան Կուս. անուան ներքեւ համախմբուած:

1996-1903 ո՛չ մէկ գործ կը կատարէ Վերակազմեալ Հնչակեան Կուս.ը, ո՛չ ալ գործնական պայքար կը տանի գուտ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ(?) գետնի վրայ Թուրքիոյ մէջ...:

1900ի զուամբողջութեամբ Ուստրի Ամբրիկահայ Անդրանիկ Վերկ. Ժողովը կ'որոշէ, որպէս գործունէութիւն՝ որքերու օգնել, գրքոյկ հանել եւ դիմումներ կատարել, համակրական ուղերձ գրելով՝ «Փրօ Արմենիա» (Փարիզ) թերթին...:

1901-2ին կրկին վերամիաւորման փորձ կը կատարուի երկու հատուածներուն միջեւ:

Վերակազմեալները երկու հիմնական պահանջներ կը ներկայացնեն: Առաջինը.— Ա. Նազարբէկի հեռացումը... Երկրորդը.— «Պէտք է մէկզի թողուլ Ընկերվարութիւնը (Սոցիալիզմ), եւ թէ Կուս. պաշտօնական օրկանը պէտք է զբաղի գուտ յեղափոխական եւ ազատամբական հարցերով»:

(Տես՝ Մ. Ժ.ի գիրքը, էջ 73):

Ռուսաստանի հին Հնչակեան հատուածը կը սպառնայ նոյնիսկ «հերձուած» յառաջ բերել, «եթէ ընկերվարութիւնը իբր Միութեան հիմնական պայման չընդունուէր»:

Միութիւնը 1902ին կայացած էր, Վեր. Հնչակեանները կը փորձեն «Հնչակ»ը ձեռք ձգել, կը գրեն նոյնիսկ հակա-ընկերվարական յօդուածներ հոն, սոցիալիզմի ընդունման կամ մերժման հարցը չի լուծուիր, թէեւ որոշ շրջաններու մէջ խանդավառութիւն կը ստեղծուի: Աւետիս Նազարբէկը ժամանակաւոր կերպով Կեդրոնէն կը հեռացուի... Սաղաթել Սազունի, Կեդրոնի Անգամը որպէս՝ սոցիալիստ Իգմիլեանի հետ Լոնտոնի մէջ պիտի սպաննուէր շուտով՝ Վերակ. Հնչակեաններու կողմէ...:

1903ի Հոկտ. 19ին մահափորձ կը կատարուի Ա. Նազարբէկի ղէմ Զուրիցերիա: Յուլիս 7ին՝ Արարկիցի Սամուէլ Կիւլեղեան կը վերադառնայ Ս. Սապահ-Գիւլեանը Տալէյ փողոցին վրայ (Պոստոն, ուր ան կը խմբագրէր «Քր. Հայաստան»ը):

1903 Հոկտ. 28ին Տիգրան Թերաքեան կը սպաննէ Հնչակեան Սաղաթել Սպանիին, Նոյ. 6ին կը սպաննուին Ա. Գրիգորեան եւ Ս. Սըմէիկեան Լոնտոնի մէջ:

Վերակազմեալներու «հեռատեսութեան» նմոյշ մը:

Հեռագիրները կը գուժեն Պոլսոյ հարուստ հայերէն Արիկ Ունճեանի սպանութիւնը (1906), Ամբրիկայէն զացող Վերակազմեալ Հնչակեանի մը կողմէ գործադրուած...:

«Ընկերներէն ոմանք այս մահափորձը կը նկատեն զերպոյն նպատակէն հասնելու համար առնուած քայլ մը, եւ կը սպասեն նպատակաւոր արդիւնքի...»:

(Տես՝ Մ. Ժիզմէճեանի գիրքը, էջ 118):

«Վերակազմեալներու պետը... Արշակ Տէր Մարկոսեան, ներքին ըսի ըսուները նկատի առնելով՝ Վեր. Հնչ. Կեդրոնին մէջ, 1906 Ապրիլ 27ին շրջաբերական մը կը ղրկէ. «Այսօր յանուն Կեդր. Վարչութեան, լուծեցի Նահանգային Կեդրոնը...»:

Նշանաւոր Վերկ. Հնչ. Վահէ Արզուեան (Արփիարեանը սպաննել տուողը), որպէս թէ Զէյթունի մէջ կը գործէր... Ամբրիկա կուղայ... Կուս. հաշտոյն կը դարձանուի... ուրիշ ղեկավար Վեր. Հնչ. մը՝ Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեան շտալ ծախսեր կատարած էր Վահէի հաշտոյն, գանձապահի պաշտօնին տիրանալէ ետք: (Ասոնք ըսողը Մ. Ժ.ն է):

«Ընկերներու հաւատքն ու վստահութիւնը խախտած էր այլեւս Վարչներուն վրայ»: (Ի՞նչ շուտ — Հ. Գ.): Ղեկավարներ... «Անհատական կիրքի, ատելութեան գզգզումներու անձնատուր եղած՝ աւելի գրգռեցին ընկերները ու շրջանակը մեղեցին դէպի բաժանման գահավճը...»:

1906, Յուլիս 1ին Ֆիշպուրկ զուամբողջութեամբ Պատգ. Ժողովը չկրցաւ... բաժանման առաջին անգամ եւ ահա... երկրորդ պատակտում: (Ընդդ. մերն են Հ. Գ.):

«Հոս կը փակեմք մեր պատմութեան սեւագոյն մէկ էջը» կը գրէ Մանուկը: (Իսկապէս սեւ էջ — Հ. Գ.):

Վեր. Հնչակեանները կը սպաննեն 1907ին Նիւ Եորքի մէջ մեծահարուստ գորգի վաճառական Յովհ. Քալանճեանը որ մերժած էր զերկրի յեղափոխական գործին» (որ յեղափոխական գործին — Հ. Գ.) նիւթական օգնութիւն տալ...:

Ամբրիկայէն զրկուած Վերակազմեալ Հնչակեան, Տիգրանակերտցի Պետրոս Հիւսնեան՝ հրազէնի 3 հարուածներով կը սպաննէ Արփիար Արփիարեանը Գահիբէի մէջ...:

«... Արփիարեան 1901ին վերջնականապէս հեռացաւ Վեր. Հնչակեան հատուածէն»:

«... Արփիարեանի ղէմ բուն պայքար կը մղէ Վեր. Հնչ. օրկան «Ազատ Բեմ»ի մէջ Լեւոն Լարենց, որ Արիկ Ունճեանի սպանութենէն ետք՝ եգիպտոս ապաւինած էր:

Զկարենալով մարտել ամբողջութեամբ սնանկ դուրս ելած Վեր. Հնչակեաններու սեանկ եւ անգոյ գործունէութիւնը, Մ. Ժիզմէճեան իր գրքին մէջ երկար մէջբերումներ կը կատարէ Ընկ. Ս. Սապահ-Գիւլեանի «Փոքր Հայքի Յիշատակներէն» եւ «Պատմախանութիւններ» հատորներէն, կը գնահատէ Հնչակեան Հակա-Իթիլ-հատական գործունէութիւնը... Իթիլաֆի հետ գործակցութիւնը, բայց... ո՛ւր պիտի մնար... Նիւ Եորք, Գահիբէ բազմած Սահմանադիր, «զաղափարական», Վերակազմեալ խաթամուտը... որպէս «հեռատես»... Ի՞նչ բրած էին, ի՞նչ գեր վերցուցած: Ինչո՞վ անոնք օգտակար հանդիսացած էին շարժուելու դատապարտուած 2,5 միլիոն հայութեան... ՌՕՄԲՈՎ ԵՒ ՌՕՄԲՈՎ ՄԻԱՅՆ...: Եւ կը կատարէ մեր Մանուկը, երբ կը կարդայ:

«Մեր գործիչները, քէն սակաւաբիւ, բայց ամէն տեղ հասան եւ կարողացան իրենց վրայ դրուած պատմական պարտականութիւնը կատարել», Ս. Սապաճի խօսքը: Ապա կը զարմանայ որ Սապաճ Գիւլեան «անզգոյ՞» կը վարուի... մերկացնելով Իթթիճատի Սեւ Ծրայի բնիկը իրենց իսկ ներկայութեան, Պոստոնի թէ Փոքր Հայքի շրջաններուն մէջ:

Իսկ հարց է գիտնալ, թէ Սահմանադրական, Վերակազմեալ Կուս. էն Մէկ ՀՊԳԻ (1909-1915ին) անձը վտանգելով կրցա՞ւ դեր մը կատարել Իթթիճատի օրով... թէ միայն «խեղճ» տուաւ, հեռու մնաց զիմուելու գազափարէն եւ կախազաններու վրայ իրենց գործնական հայրենասիրութիւնը պոստսոցոյններուն... դէմ 50 տարի անընդհատ քրքական թեզերը փրփակմանց մամուլով եւ բեմով... նոր նոր անդրադառնալով, որ Սոցիալիզմը աւելորդ չէր Հնչ. Ծրագրին մէջ, Սապաճին զգուշացումները 1896-1914 Իթթիճատի պարագլուխներուն դէմ գործնապէս եւ որպէս ընդդիմադիր պայքարիւր, զիմուելու անհրաժեշտութիւնը հիմնական էին եւ խօսքեր չէին լսիլ:

Հմայեակ Արամեանցները չեն կրնար դատել Հնչակեան Կուս.ը, ո՛չ ալ «իմաստուն», անգործունեայ, նենգամիտ ձիգմէճեանները...:

Հնչակեան Կուս.ը իր խօսքը ըսած էր Սապաճի մասին, ուրիշներ 1920էն չա՛տ յետոյ խոնարհեցան այն մեծ ուժին առջեւ, հսկայ տեսարանին, խմբագիրին, գործիչին, հեռատեսիլն որ եղաւ Ս. Սապաճ-Գիւլեան: Իսկ ձիգմէճեանները օգտագործելով չին տեսարաններ, ոչինչ կրնան փոխել իրողութենէն: Ս. Սապաճ-Գիւլեանին դէմ ո՛չ մէկ զեկազար կրնան հակադրել որպէս իրատես, հեռատես, հետեւողական հակա-Իթթիճատական թեզի առաջնորդ:

1914 Նոյ. 12ին պաշտօնական նիստի մը մէջ Ս. Գ. Հնչ., Հ. Յ. Գ., Վերկ. Հնչ., Հայ Ս. Ռամ. Կուսակցութիւնները Մուշեղ Սերոբեանի տան մէջ Մ. Ն., Կ'որո՞ւն՝ «աջակցիլ հայ ազատագրութեան համար ներկայ պատերազմին առքիւ ըլլալի՞ համազգային բանքերուն»:

«Ոգնել այժմ իսկ երկրին մէջ կոուռ խումբերուն»:

«Զինեալ շարժում յառաջ բերել երբ կարելի ըլլայ Դաշնակից Պետութեանց հաւանութիւնը եւ օժանդակութիւնը ստանալ»:

«Իւսանագիտական հետապնդումներ կատարել»:

Հնչակեանները 1896էն սկսեալ չէին վստահիր Իթթիճատին:

Իսկ Ս. Ռամկավարնե՞րը «Ատանայի ջարդէն յետոյ վստահութիւն չունէին դէպի թուրքերու անկեղծութիւնը», կը գրէ Մանուկ Ընդմէճեան:

Այսօրն ալ բաւարար կը նկատենք՝ Ամերիկայ ազգային կեանքի, Վերակազմեալ Հնչ. եւ Հնչ. Կուս. տարակարծութիւններու մասին արձանագրել: Ասկէ անգին պատմութիւնը թող վճռէ, թէ որո՞նք իրենց լեկալ ժողովուրդին կեանք ուզեցին փրկել եւ որո՞նք... բազկաթռակներու մէջ նստած... չիմաստութիւն իսպաղան հայ կեանքէն ներս... Արեւմտահայաստան յանախ ուտ իսկ չնետելով՝ 1896-1915ի շրջանին:

Լսենք ուրիշ վկայութիւններ.—

«Վերակազմեալ Հնչակեան Կուս. յետագայ (1898ի Բ. Համապետմարէն ետք, Եղիպտոս — Հ. Գ.) գործունէութիւնը եղաւ առաւելապէս ներքին աններդաշնակութեան շրջան մը: Մինչեւ ծայրայեղականներու դէմ դանդաղածային ընդվզումը, մինչեւ Արփիարեանի ողբերգական վախճանը Տամատեան ապրելցաւ մեկուսացած՝ առանց յարած ըլլալու ուրիշ կուսակցութեան մը, ո՛չ ալ միջամտեց Կուս. ներքին գործերուն: («Միւրաւ Տաւատեան», 1863-1945, Պետրոս Յ. Տեփոյեան, Պէյրութ, 1964, էջ 104):

1901ի Սեպտ.ին Հնչակեան եւ Վերկ. Հնչակեան բանակցութիւնները 8 ամիս կը տեւեն: Աւետիս Նազարէկը հեռացնել պայման կը դնէին Վերակազմեալները:

«Ներկուրդ» ընկերվարականութեան հարցը, որ Կուս. Երկպառակումէն զխաւոր պատճառն էր եղած 1896ին:

Առաջին հարցի լուծումը.— 6 հոգիներ Մարմնի մը խմբագրութեամբ լոյս պիտի տեսնէր «Հնչակ»ը, իսկ սոցիալիզմի պահպանման հարցը կ'որոշուի առկալ ձգել իրրեւ վիճելի խնդիր, մինչեւ Միացեալ Կուս. Ա. Ընդ. Ժողովին գումարումը, պայմանաւ որ «Հնչակ»ը նուիրուի գուտ Յեղափոխական փրփակմանին՝ առանց սոցիալիստական գաղափարաբանութիւն տարածելու: Այս կերպով կ'ընդունուի Միութիւնը 1902ի Մարտին խախտու հիմերու վրայ, քանի որ բուն զրմտութեան խնդիրը «Ընկերվարութիւնը» բոլորովին մէջտեղէն վերցուած չէր: (էջ 105):

**

«Հնչակեան եւ Դաշնակցական Կուսակցութիւններու այնքան արագ զարգացումը եւ տարածումը, անհնարին է բացատրել առանց յեղափոխութեան գաղափարին հանդէպ Թրքահայութեան ներկայացուցած պայմաններուն: Յեղափոխական կուսակցութիւններու ծնունդին եւ ժողովրդականացման նպատակով կ'իման ստեղծուած էր Թրքական իշխանութիւններուն կողմէ իսկ:

«...Ուրիշ խօսքով, կուսակցութիւններն ալ կը պահանջէին, այդ ատենի ազգային իշխանութիւններուն նման քաղաքացիական իրաւունքներ հայ մարդուն համար, ազատութեան, արդարութեան, հասարակութեան կիրարկումը Հայերուն համար եւս, կայսրութենէն ներս: Իրենց գործադրած միջոցներով միայն կուսակցութիւնները կը տարրերէին սոցիալիստական իշխանութիւններէն: Մինչդեռ այս վերջինները «Թաղերիցներով, բերանացի եւ գրաւոր խնդրանքներով կը դիմէին պետութեան վարիչներուն, ներկայացնելով Հայերու դժնդակ կացութիւնը եւ դարձան մը խընդրելով, կուսակցութիւնները ընդունած էին բանութեան դէմ բռնութիւն գործածելու, բռնութեան բռնութիւնով պատասխանելու եղանակը, հաստատած ըլլալով որ ազաւանքը, պետութեան ապահովումը բռնատէրերուն, երբեք զրական արդիւնք չեն տուած եւ որեւէ չափով չեն մեղմացուցած կեղեքումները եւ սարսափները: Միշտ եւ ամէն տեղ ապացուցուած պատմական իրողութիւն է որ, որեւէ բռնութիւն, իրմէ աւելի զօրաւոր ուժի մը առջեւ միայն տեղի տուած է:

(«Կուսակցութիւնները», Լեւոն Զորմիւսեան, Պէյրութ, 1965, էջ 38-9):

Մեր դրբին ծաւալը թոյլ չի տար նախկին Դաշնակցական, ապա «Մարտկոցական, ապա ձախակողմեան, ապա իւրայատուկ ըմբռնումներով դատող մտաւորական Լ. Զորմիւսեանի բազմաթիւ յարուցած հարցերուն անդրադառնալ: Ան վերլուծելու մէջ յաջող, բայց փաստագրութիւններով եւ վկայութիւններով պակասաւոր դրբի մը հեղինակն է նաեւ «Համապատկեր Արեւմտահայոց Մէկ Դարու Պատմութեան», Պէյրութ, 1972:

Վիճելի է իր այն տեսակէտը, թէ Արեւմտահայ յեղ. մասնակցող հայրենի հողին վրայ ապրող յեղափոխականները վճռական եւ պատասխանատու դեր չեն ունեցած... թէ դուրսէն ղեկավարուած է միշտ յեղափոխական շարժումը, թէ ուսումնասիրուած չեն Շրջանները՝ դուրսի ղեկավարներու կողմէ (էջ 44), թէ Սահմանադրութեան շրջանին անորոշ կեցուածք որդեգրած էին կուսակցութիւնները... :

«Դիտելի է, եղբր որ Հնչակեանները եւ Դաշնակցականները 1914 թուականին սպասեր են դիրք ճշգրտու համար ԻԹԹԻՀատի դէմ» : Այս նախադասութիւնը ցոյց կուտայ, որ ծանօթ չէ Լ. Զորմիսեան հայ քաղք. կուս. դիրքորոշմանց այդ շրջանին : Առնուազն 1909ի Պոլսոյ Հնչ. Զ. եւ 1913ի Քէօսթէնճէի է. Համադրումարին ծանօթ եւ անոնց որոշումներուն տեղեակ պէտք է ըլլար ան :

ԻԹԹԻՀատի հանդէպ «սոցալեզրոնացման» պահանջը մինչեւ ետքն ալ Հնչակեան տեսակէտն էր հրապարակաւ դրուած : «Կուսակցութիւնները Սահմանադրութեան առաջին օրէն իսկ վար դրին իրենց գեները», արտայայտութիւնը ճիշդ չէ : ԻԹԹԻՀատի եւ Դաշնակցութեան ղեկավարներու միջեւ կապի կամ համաձայնութեան մասին փաստաթուղթեր չեն պակսիր, սիրելի Զորմիսեան եւ ո՛չ ալ Հնչակեան եւ ԻԹԹԻՀատի դործակցութեան մասին... քիչ մը յոգնութիւն յանձն առնել պէտք էր... : Ո՞վ կ'ըսէ թէ հայերը իրենց հողային, կալուածային, իրաւական հարցերը չէին զբաղ պետութեան առջեւ... Նոյնիսկ (էջ 6) Լ. Զորմիսեան Գոտտանցան (Հնչակեան Կրթ. Համադրումարի վայրը կը շփոթէ Պուրէշի հետ...) :

«Մինչեւ հիմա, կը դրէ ան, չփոթ ու մութ կը մնան Հնչակեաններու որոշման գլխաւոր զրդապատճառները...» : Այսքան տգիտութիւն ներելի՞ է մտաւորականի մը... Թող կարգայ Հնչ. Կուս. պատմութիւնը կամ «Պատասխանատուները» Ս. Սապահ-Գիւլեանի 1916ին Փրոփիտանս ստուած, որմէ լայն մէջբերումներ կատարուած է մեր այս գործին մէջ... :

Վիճելի են իր «դինական գործ չկատարեցին Կուս. ները, թուլցողներ եղան» խօսքերը, բայց Վանի, Սուէտիոյ կոիւնները դարձեալ նոյն կուսակցութիւնները գեներով վարեցին... :

Հարցարան մըն է «Կուսակցութիւնները» Լ. Զորմիսեանի եւ սակայն հարցարանը չունի իր պատասխանները հեղինակին կողմէ տրուած : Տրուածներն ալ առանց վկայութիւններու ըլլալուն՝ կը կորսնցնեն իրենց կշիռը :

**

1959ին լոյս տեսած Մ. Վ. Արղումանեանի «Բոլշեւիկների գործունէութիւնը եւ ռեւոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907–1917 թուականներին», հսկայ հատորը կը խօսի Հնչակեան Կուսակցութեան մասին : Յայտնի է որ ան եւս գլխաւոր իր դինանոցի կապարները մեր կուսակցութեան դէմ քաղած է Լէոյի «Թրքահայ Յեղափոխական Գաղափարարանութիւնը» հատորէն : Կը պարզուի, որ սոցիալիզմի ուղիին հետեւորդ եւ ձայն ամբաստանուած Ա. Նազարբէկը ազգայնամուլ է... : «Հնչակ»ի հիմնադիրներից մէկը՝ Ա. Նազարբէկը ուղղակի դրուած էր, որ «Հնչակ»ը «Նացիոնալիստական պարտիա է» : ?

Մենք որ «Հնչակ»ի բոլոր թիւերը (1887–1915) աչքէ անցուցած ենք (Գահիրէ Ընկ. Մ. Պալալեանի մօտ), չենք հանդիպած այդպիսի տողի մը Նազարբէկի կողմէ գրուած... :

«Դժուար չէ տեսնել, որ Հնչակեանները ոչ միայն սոցիալիզմը համարում են հեռուոր մտայն, այլև փաստօրէն անտեսում էին այն եւ ամբողջ ուշադրութիւնը բացառապէս կեդրոնացնում քրքահայ դատի վրայ... Ի հարկէ, կարելի էր, պէտք էր խօսել արեւմտահայերի ազատագրման մասին : Բայց ի՞նչպէս հասնել դրան : Հնչակեաններն այդ հարցի լուծումը գնում էին ոչ թէ սոցիալիստական, այլ բացառապէս ազգայնական հիմքի վրայ այսինքն՝ արեւմտահայ ժողովրդի բախտը կտրում էին Օսմանեան կայսրութեան ժողովրդների բախտից, խօսում բացառապէս «հայկական յեղափոխութեան» մասին, եւայլն : Այս տեղից էլ նրանց ձգտումն ու պահանջը՝ աշխատել միայն Արեւմտեան Հայաստանում եւ հայերի մէջ» :

Հնչակեանները իմբերիալիստների վրայ դրած չէին իրենց յոյսերը... (Թող Լէոյի գիրքը կարգայ) : Անոնք 61րդ յօդուածի դէմ դիրքորոշուած բազմաթիւ յօդուածներով կը դատապարտէին 6 Պետութիւններուն ապաւինողները : Ապա Հնչակեանները իրենց սեփական ուժին ապաւինած էին եւ սակայն հաւանական պատերազմի մը պարագային օգտուելը տրամաբանական կը նկատէին ազատագրական պայքարի հաշտոյն : Յենելով հանդերձ հայ աշխատաւորին եւ գիւղացիին վրայ, անոնք ձեռք կ'երկարէին բոլոր հայերուն թէկուզ ունեւոր խաւին ալ... Հնչակեան շարքերուն մէջ պատահական ունեւորներ եթէ գտնուած են, բայց կուսակցութեան արեւելումին վրայ անոնք ո՛չ մէկ ազդեցութիւն ունեցած են :

Հնչակեանները հայ եկեղեցւոյ հանդէպ անտարբեր չէին : 1903ին կռուեցան այդ եկեղեցւոյ իրաւունքներուն սիրոյն... Եթէ այդ թուականի իրենց երդման արարողութեան մէջ Ս. Երրորդութեան, Աւարայրի անունով երգում կ'ընէին՝ նաեւ Հայաստանի, Կովկասի մէջ հայ ժողովուրդի ազատագրութեան համար նահատակուած 300 հազար անմեղ զոհերու անունով եւ դեռ «Երգում ենք բոլոր երկրներում, յաճուե՛ն սոցիալիզմի իրականացման գոհուած անմահ հոգիների սրբազան անուխով, Երգում ենք Ս. Գաղափարով... մինչեւ մեր արեւան վերջին կաթիլը հաստարիմ կը մնանք այդ կուսակցութեան սկզբունքներին, արին թափելով, կոռելով ողւա բոնակալ (ցարիզմ) կառավարութեան եւ միապետական կարգերի դէմ՝ այդ կուսակցութեան դաւանանք նրանց՝ թող Հնչակեան զինուորի սուրը կտոր–կտոր անի» : ... Այո, այդպէս էին «Հնչակեանները անդամներ հաւաքագրում գիւղացիներից» :

Ի՞նչ մեծ յանցանք... «1903ին Բաքուի մի խումբ բանուոր Հնչակեաններ տօնախմբութիւն են կազմակերպում էջմիածնի 1600 ամեակի առթիւ... այն թուականին, երբ էջմիածնի, Ալեքսոյի, Երեւանի մէջ ցոյցեր եւ ցարի փոխարքայ Կոլիցիների դէմ տեւոր կը կազմակերպէին եւ արեան զնով կը պաշտպանէին էջմիածնի կալուածներ» :

ըր... իսկ ի՞նչ կ'ընեն ուրիշները, տան մէջ թէ Հայաստանէն դուրս կը պաշտպանէին էջմիածնի դրաւուած եւ հայ զպրոցներու բռնապրաւուած շէնքերը... :

Ինչո՞ւ Մ. Արզումանեան կը յիշէ Հնչակեան գինուորի ուխտը Աւետարանի վրայ եւ չի դնահատեր անոր ցարիզմի դէմ եւ սոցիալիզմի իրակամացման համար արևմտ քափելու պատրաստակամութիւնը... : 1890ական թուականներուն եթէ խորհրդային ուժը չկար, Ռուս. Սոց. Դեմ. շատ տկար էր, ինչո՞վ կարելի պիտի դառնար Սուլթանի նման Բոնակալի մը տապալումը, կարելի՞ էր այդ :

Մ. Արզումանեան իր դիրքին 219ին մէջ կը յիշէ, թէ իրենց օրկան «Ապագայ» (?) թերթին միջոցաւ, (պէտք է ըլլայ «Գաղափար», 1894, Աթէնք), թարգմանեցին եւ տպեցին Մարքսի եւ Էնկէլսի «Վոլունտարիստական մանիֆէստ»ի մի մասը... արդեօք հարց սուսմած է ինքնիրեն Մ. Արզումանեան, թէ ինչո՞ւ «ճանր սուրբուսայ» Հնչակեանները կը նախընտրեն Մարքսէն թարգմանել եւ ոչ թէ պուրթուսայ, մանրպուրթուսայ, յետադիմական, հակասոցիալիստ օտար հեղինակներէն... չեն թարգմաներ եւ ոչ իսկ մէկ գործ... : Կը մոռնայ Մ. Արզումանեան, որ 1890ական թուականներուն ո՛չ մէկէն քաշուելիք եւ ո՛չ մէկէն ալ վախնալիք ունէին Հնչակեանները այդպիսի քայլ մը տոնելու համար...

Հնչակեանները հայ կեանքին մէջ սոցիալիզմի յաղթանակին հաւատացող եւ Անդրկովկասի մէջ Ռուս Սոց. Դեմոկրատներու հետ սերտ գործակցող կուսակցութիւն մը եղած են : Արեւմտահայաստանի մէջ իրենցը չէր յանցանքը, եթէ իրենց պաշտպարակից, սոցիալիզմի հաւատացող քիւրտ, թուրք, արաբ կամ եզիտի տարբեր չլիտան, հակառակ թափուած աշխատանքներուն... Հնչակեանները իրենց սոցիալիստական գիծը կարենալ պահելու համար էր, որ Դաշնակցութեան հետ (1890), Վերակազմեալներու հետ (1896), չկրցան համաձայնիլ : Այս մասին այսպէս :

Մ. Արզումանեանները կ'ընդունին որ Հնչակեանները Անդրկովկասի եւ Ռուսաստանի մէջ 1905ին մեծամասնութիւն էին բանուորական ցոյցերու եւ սոցիալիստական պայքարներու ընթացքին : Շահումեանը կը գրէ, 1904ին, «Հայ իրակառութիւնից» յօդուածին մէջ. «Ներկայումս «Դրօշակ»ի եւ «Հնչակ»ի պարտիական կազմակերպութիւնները իստ, հոծ ցանցով պատել են հայկական ամբողջ բրովկեմցիան, քափանցել են ամենախուլ գիւղերը, ամբողջովին տիրապետել են բնակչութեանը» :

Այս վկայութիւնը բաւարար է ցոյց տալու համար, որ ամենէն խուլ անկիւններն ալ սոցիալիզմի սերմնացանները եղած են Հնչակեանները եւ առանց անոնց նախապէս տարած զաղափարական աշխատանքին, դժուար թէ Ռուս. Սոց. Դեմոկրատները կարենային 1905ին այդքան նուիրուած Պաքուի գործաւորները վերջին պահու կոչերով հրապարակ իջեցնել :

Պնդե՛լ որ «նացիոնալիստ» էին Հնչակեանները, Արեւմտահայաստանի մէջ, սոցիալական պայմանները չճանչնալ կը նշանակէ... պնդել որ մեծ պետութիւններու միջեւ կամ անոնցմէ մէկուն եւ թուրքիոյ միջեւ բաղխումի մը պարագային հայոց անջատումը թուրքիայէն խաղ է, այդ պարագային թող դատապարտէ հրապարակաւ, Պուլկարիոյ ազատագրումը ցարակամ գործերու յաղթանակին շնորհիւ... 1878ին :

Այնպէս կը տեսնուի, թէ տակաւին պատմարաններ կան, որոնք համարձակութիւնը չունին հրապարակաւ այլանելու այն նիւթիստ գրողները, որոնք աղատադրական պայքար մղած հերոս ժողովուրդի մը յիշատակը կ'անարգեն սխալ վերադրումներ կատարելով անոնց հասցէին :

Բայց կարդանք արժէքաւոր պատմարան Տոբթ. Փրոֆ. Արամայիս Մնացականեանի «Հայ ժողովրդի Ոգեբերգութիւնը», ուստ եւ համալսարհային հասարակական մտքի ղեկավարմամբ 1965ին լոյս տեսած զրբին նախարանը, զոր զրած է Հրաչեայ Քոչար :

«Հասկնալի կերպով երկչոտ էր մեր պատմութիւնը Ստալինի պաշտամունքի տասնամեակներին, երկչոտ էր նամանաւանդ 1890–1920 թուականների պատմութեանը մերձենալուց : Երեք տասնամեակի շատ դէպքերին եւ դէմքերին զրեթէ անծանօթ էին մնում քսաներորդ դարու երկրորդ տասնամեակից յետոյ ծնուած հայ տղաներն ու աղջիկները, մինչդեռ երեսուց տարին մեր բազմադարեան պատմութեան ամենաողբերգական, ամենահերոսական ամենափրկական շրջանն էր, որ ունեցել է միլիոնաւոր նահատակներ, մէկ երկուսի վոթարէն՝ հարիւրաւոր հերոսներ, զոհերի մէջ եղել են գիտուններ ու բանաստեղծներ, ճարտարապետներ... :

«Ժողովուրդն ազլովին պատմութիւնից ջնջուելու վտանգի տակ էր... սարսափելի էր յիշել մանրամասնութիւնները... Դահիճները չէին խնայում նոյնիսկ ծծկեր երեխաներին... :

«Եւ ցաւալի էր, որ ժամանակների պատմագրութիւնը ինչպէս հարկը չէր յիշում դոնէ այդ, ճամարտապէս հերոսական այդ դրուագները, Սասունի ու Տարսնի կռիւները, Վանի դիւցազնական պաշտպանութիւնը, Շապին Գարահիսարի հերոսամարտերը, հայ գիւղացիների խիզախ ընդվզումը Մուսա Լերան վրայ : Մեր պատմութիւնից դուրս էր մնում նոյնիսկ հայ ժողովուրդի՝ քսաներորդ դարի Աւարայրը՝ Սարտարապատը, որի սպիտակաւուն հողի վրայ, հին Արմաւիրի այդ դաշտում, ժողովուրդը, արդէն հազար տեղով մարմինը խոցոտուած, արիւնքած, յուսահատ, ոտքի ելաւ ո՛չ թէ յաղթելու, այլ պատուով մեռնելու համար, դէմքը թշնամուն ուղղած, թիկունքը Արաղածի, Գեղամայ լեռների եւ Սեւանի կողմը : Եւ կատարուեց հրաշքը... Ժողովուրդը յաղթեց, ջախջախեց թշնամուն դերպանց ուժերն ու ետ մղեց նրան Ախուրեանի միւս ափը... :

«Հիմա 1915ի բարձրունքներից նայելով անցած տարիներին, զարմանալով զարմանում ենք այն ժամանակուայ մեր մտածողութեան վրայ : Ողբերգութեան պատմութեանը թեթեւակի անդրադառնալով, չէինք բացայայտում իսկական սճրապործներին : Մեղաւորներ համարում էին հայ հայուկներին, որ գէնք վերցնելով սարերն էին գնում, հայ կամաւոր գինուորներին, որ հաւատալով, թէ ուստ բանակը արեւմտեան Հայաստանը կ'ազատազրի, գնում էին կուուելու թրքական բռնակալութեան գէմ, ոպէշնուած այդ հաւատով : Մեղաւոր էին համարում բոլոր այն անհատներին ու կազմակերպութիւններին, որոնք գէնք էին վերցրել թշնամուն դիմադրելու, որ կուուել էին, մեռել, կամ հազար վէրքերով խոցուած, սպրեւ էին : Ե՛տ Չի՛ն ԳԻՏԱԿՑՈՒՄ ԱՅԴ ՄԱՐԴԻԿ, ՈՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՑ ՓՐԿՈՒՄ ԵՆ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԵԱՆ ԵՒ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԲՈՆԱԿԱԱՆՆԵՐԻՆ, ՈՐ ԴԱՀԻՃՆԵՐԻՆ ԱՐԴԱՐԱՅՆՈՒՄ ՈՒ ՅԱՆՑԱՆՔԻ ԶՈՂԵՐԻ ՎՐԱՅ ԵՆ ԴՆՈՒՄ» :

Հրաչեայ Քոչար որ լաւապէս սերտած էր մեր պատմութիւնը բոլոր մանրամասնութեամբ, կը զրէ՛, թէ՛ ո՛չ քէ կռուելուն համար պէտք է դատապարտուէին ազատագրական պայքար մղողները, այլ սնորհ համար որ «լաւ չէին կռուել քուրք ջարդարարների դէմ, որ հարքել էին ժէ՛օն թուրքերի «յեղափոխական» խոստումներից, որ չէին զինել ժողովուրդին ամէն տեղ ու ամենուրեք, պաշտպանութիւն չէին կազմակերպել, ինչպէս ժողովուրդն ինքը վարուեց Վանում ու Սարտարապատում»:

**

Հնչակեան Կուս. Անդր-Կովկասի մէջ շարունակեց իր քաղաքական եւ դադափարական պայքարը յանուն Յարիզմի տապալման եւ սերտորէն զործակցեցաւ հայ թէ՛ ռուս բանուորական շարժումներուն հետ, որ առաջ հասնելու հեռանկարով Սոցիալիզմի յաղթանակին եւ ատով մարդկութեան տառապող մեծամասնութեան տանելի կեանք ստեղծելու հնարաւորութեան: Մեր նպատակը Անդր-Կովկասի եւ Պարսկաստանի ազատագրական եւ յեղափոխական շարժումներուն մեր բերած բաժինը տալը չէ: 1896ի ներքին բաժանումները աւելի զօրացրին Հնչակեան Կեդրոնի հաւատքը դէպի սոցիալիզմի ճակատի կազմակերպուած աշխատանքի մարդը: 1890-1905ի Սոցիալիզմի ի նըպաստ մեր մամուլով, բեմով, ցոյցերով, հայ Ս. Դ. երուն մեր տուած ղեկավարներով, 1890-5ի Կովկասի մէջ բոլոր զինեալ թէ՛ խաղաղ ցոյցերուն մեր մասնակցութեամբ, մենք մեր համեստ բաժինը բերինք ընկերային անարդ բռնապետութեան մը դէմ մեր գործով: Արեւելահայաստանի մեր գործունէութիւնը մանրամասն գրուած չէ ցարդ: Մենագրական աշխատանքներ, պատահական յուշեր բաւարար չեն անշուշտ: Կ'արժէ որ լայն ուսումնասիրութիւն մը կատարուի այդ շրջանի մեր մամուլի եւ հակա-ցարական եւ համա-աշխատաւորական պայքարներուն նուիրուած:

Նոյնն է պարագան Պարսկաստանի շրջանի մեր գործունէութեան մասին: Ալեքսանտր Տէր Վարդանեան եւ Սոկրատ Գելոֆեանց, Գրիգոր Եղիկեան մասամբ խօսած են: Տրուածը բաւարար չէ:

Այս առթիւ մեր գործունէութեանց մասին զոյգ շրջաններէն ներս՝ կուտանք նմոշներ, տալէ ետք այն ծանր կացութիւնը՝ որ կը տիրէր Անդրկովկասի մէջ ցարական բռնատիրութեան օրով:

**

ԶԱՓԱՐԻՁԷԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ Ս. Գ. ՀՆՁ. ԿՈՒՍ.ԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(1905, Ապրիլ, Լոնտոնի Ռ.Ս.Դ.Բ.Կ. Գ. Համագումարին)

«Նա նշում է, որ ազգային կազմակերպութիւնները տարբեր են լինում. «Օրինակ Կովկասում կան «Իրօշակեաններ» եւ «Սաբարփիօ» (Վրացական) կուսակցութիւնները: Այլ բան է «Հնչակեանների» կուսակցութիւնը, որն ընդունել է մեր ծրագիրը եւ իր աշխատանքը համաձայնեցնում է մեզ հետ»:

«... Իսկ «Հնչակեանների» հետ մենք համաձայնութիւններ ենք ունեցել եւ այսուհետեւ էլ անհրաժեշտ է մրանց հետ համաձայնութիւնների մէջ մտնել»: (Պ. Ա. Զափարիձէ, «Յօդուածներ», էջ 25-26):

«Ազգային Ս. Դ. կազմակերպութիւնների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին բանաձեւում, Համագումարը յանձնարարում էր, «ինչպէս Կենտրոնին, այնպէս էլ տեղական կոմիտէներին՝ բոլոր ջանքերը գործողելու համաձայնութեան դալու ազգային Ս. Դ. կազմակերպութիւնների հետ, նպատակ ունենալով համաձայնեցնելու տեղական աշխատանքը եւ այդպիսով նախապատրաստելու բոլոր Ս. Դ. կուսակցութիւնները մի միասնական Ռ.Ս.Դ.Բ.Կ. մէջ միաւորելու հնարաւորութիւնը»: (Տես՝ «Լրաբեր Հասարակական Գիտութիւնների», Գ. Բ. Ղարբի-Ջանեան (Ակադեմիկոս), 1971, թիւ 11, Երեւան, էջ 9):

**

1900-1904ի շրջանին 670 գիւղացիական ըմբոստութիւններ տեղի ունեցան աւստրապետներուն դէմ, Ռուսաստանի մէջ:

Իսկ 1905-7ի բանուորական ցոյցերուն մասնակցեցան մօտ 3 միլիոն պրոլետարներ: Քաղաքական եւ տնտեսական մարզի մէջ 1905ին 13,955 գործադուլներ տեղի ունեցան:

1905-1907ի յեղափոխութեան շրջանին պատճառը գիւղացիներու, բանուորների եւ զինուորների միասնական պայքարի բացակայութիւնն էր: Գիւղացիները աւելի շատ ենթակայ էին տարբեր ոչ-յեղափոխական ուժերուն ազդեցութեան: Բանակը յեղափոխութեան կողքին չկեցաւ: Ս. Դ. ներքին անհրաժեշտ միութիւնը չունէին, Մենշևիք-Պոլշեիք պայքարը վնասեց գործադուլներու զօրացման:

1905ի ձմռանի հետ ցարի կնքած հաշտութիւնը ծառայեց միակետութեան ամրացման: Ծրանական դրամատուները 1906ին՝ 843 միլիոն ռուպլի փոխարութիւն ըրին ցարին: Բայց հակառակ ձախողելուն, այդ յեղափոխութիւնը ցնցեց խորապէս ցարիզմը: (Տես՝ «Նորիդային Միութեան Պատմութիւն», Մոսկուա, 1956, էջ 160-163):

**

«Մանր եւ անուրախ էր բանուորներու կեանքը Ռուսաստանի: Բանուորների աշխատանքային օրը տեւում էր 12-13 ժամ, իսկ արդիւնաբերութեան մէջ 15-16 ժամ: Զեռնարկատէրերը կը քամէին բանուորի բոլոր ուժերը, հարկադրելով արտաժամեայ աշխատանքներ, ցած աշխատավարձ, յատկապէս կիներու եւ մանուկների: Կը ստիպէին որ բանուորը տիրոջ խննութէն վատորակ սպրանք դնէ եւ երեք անգամը վճարէ բուն գնին»:

«Անասելի ծանր էին նաեւ բանուորներու բնակարանային-կենցաղային պայմանները»:

«Ուժէ վեր աշխատանքը, կիսաքաղց դրութիւնը եւ կենցաղային սոսկալի պայմանները առաջ կը բերէին պրոլետարական մասսաներու բողոքները, դանոնք պայքարի կը հանէին կապիտալիստներու դէմ: Բայց անտանելի շահագործման, ճնշման ու ազատութեան դէմ ուղղուած անջատ-անջատ տարբերային ընդվզումները սովորաբար կը վերջանային բանուորներու պարտութեամբ: Ով որ բողոքէր, ընդդիմանար տիրող կարգերու դէմ, դաժանօրէն կը հետապնդուէին, բանտ, աքսոր, տաժանակիր աշխատանքի կը դրուէին»: (Տես՝ «Լեհիմի Կենսագրութիւն», Պ. Պասպելով, 1961, էջ 32, Երեւան):

ՍԵՒ ԾՈՎՈՒ ԱՓԵՐՈՒՆ

կողմանից յանձնարարական շարժումներուն մէջ կարեւոր դեր խաղցած է նաև Պաթումի Հնչակեան Մասնաճիւղը, որ կազմուած էր մեծ մասամբ նաևահայերէտի եւ գործարանային բանուորներու հոծ բազմութենէ մը:

Մօտ 10.000ի կը հասնէր Պաթումի բնդհանուր բանուորութեան թիւը, որոնք համախմբուած էին Ռոթշիլտի, Մանթաշեանի եւ Սալապուրեանի նախախաչի գործարաններուն մէջ: Պէտք չէ մոռնալ որ Պաթումի քարտէզը յատուկ խողովակներով կը հոսէր մինչև Պաթում՝ հսկէ նաևերու վրայ բեռնուելու համար. որով՝ քարտէզի ընկերութիւնները իրենց բաժանմունքները ունէին նաև Պաթումի մէջ:

1906 Հոկտեմբեր 17ի Մանիֆէսթէն յետոյ Պաթում կը դառնայ կատարեալ յանձնարարական հնոց մը, ուր համագործակցարար կ'աշխատին Ռուս. Սոց. Դեմ. Բան. կուսակցութիւնը, Հնչակեան կուսակցութիւնը եւ Ֆետերալիստները:

Երեք սոցիալիստ կուսակցութիւններու այս օրինակելի համագործակցութեան հետեւանքով, կարճ ատենուան մէջ, յեղափոխականները կը դառնան քաղաքին տէրը: Երեք կուսակցութեանց ներկայացուցչական ժողովն է որ կը տնօրինէր ամէն բան, ինչպէս օրինակ՝ գործադուլները սկսելու եւ դադարեցնելու հրահանգները, խանութները բանալու կամ պոցելու կարգադրութիւնը, եւայլն:

Այդ օրերուն, ինչպէս կը նկարագրէ ՀնչԱԿի Պաթումի թղթակիցը, Քաղաքային Տան մէջ տեղի կ'ունենայ ժողովրդային մեծ միթինկ մը, ուր կը բանաձևուի նահանգապետին մօտ պատուիրակութիւն մը ղրկել՝ պահանջելով որ քաղաքի պաշտպանութիւնը եւ հակողութիւնը յանձնուի քաղաքային միլիցիային: Պատուիրակութեան կ'ընկերակցի նաև քաղաքապետը: Նահանգապետը իր համաձայնութիւնը կուտայ եղած առաջարկին եւ կը թելադրէ մանրամասն կերպով քննել հարցը եւ ղեկուցող մը տեղեկագրելով իրեն վաւերացման յանձնել:

Տեղեկագրերը մշակելու համար կը կազմուի 14 հոգիներ յանձնարարութեամբ մը, որուն չորսը հայեր: Հնչակեան ներկայացուցիչը կը նշանակուի միլիցիայի կազմակերպութեան կոմիտէի անդամ եւ ծախսարար: Նահանգապետարանի կողմէ անմիջական ծախքերու համար անոր տրամադրութեան տակ կը գրուի 45.000 ռուբլի:

Նահանգապետը թէևս առերես համակրութեամբ ընդունած էր յեղափոխական կոմիտէի առաջարկ-պահանջը, սակայն, իրականին մէջ ան գաղտնօրէն կը պատրաստուէր խափանելու եւ բարոյալքելու ծրագրերը եւ անոր հեղինակները: Այդ ուղղութեամբ ան հրահանգ կու տայ Պաթումի քոզաք պահակախումբին որպէս զի անակնկալ յարձակում մը գործեն խաղաղ բնակչութեան վրայ՝ ահաբեկելով զայն: Նոյեմբեր 28ին, առանց ունէ դրդապատճառի, ցարիզմի ամենէն հաւատարիմ բանակի Պաթումի ջոկատը, կը կազմակերպէ ահաբեկչական ցոյց մը, հրազէն պարպելով անոնց քաղաքացիներու — կին կամ այր — վրայ, որոնց հետեւանքով Եօթի հոգի կը սպաննուին: Քանի մը օր վերջ, յեղափոխական կոմիտէն Քաղաքային Տան մէջ բողոքի հակայ նոր ցոյց մը կը կազմակերպէ, որուն մէջ կ'որոշուի պահանջել նահանգապետին՝ քոզաքներու ջոկատը արդելափակել զօրանոցներու մէջ եւ անոնց քաղաքի մէջ պտտիլը արդիւնել: Այս որոշումը կ'առնուի կատարութեան այն չքմեղանքին հետեւանքով, որու համաձայն, իրբև թէ ինք տեղեկութիւն չէ ունեցած եւ քոզաքները խախտելով տխրիլինը, կատարած են անպատասխանատու եւ աններբի անկարգութիւններ:

Միթինկի մէջ առնուած որոշման նահանգապետը կը պատասխանէ թէ իր իրաւասութիւններու սահմանէն դուրս է քոզաքներու արդելափակումը. պէտք է դիմել Թիֆլիզ: Սեղափոխական կոմիտէն քաղաքապետի առաջնորդութեամբ երեք հոգի-

նոց պատուիրակութիւն մը կը ճամբէ Թիֆլիզ՝ այդ ուղղութեամբ աշխատանք տանելու համար: Առանց սպասելու Թիֆլիզէն գալիք պատասխանին, եւ ազդելու համար պատուիրակութեան առաջնութեան արդիւնաւորման, Սեղափոխական կոմիտէն Պաթումի մէջ ընդհանուր գործադուլ կը յայտարարէ. կը դադարի ամէն շարժում, խանութները կը գոցուին, գործարաններու մէջ կը տիրէ մեռելութիւն եւ քաղաքը կը ստանայ կրկին բոլորքուած վիճակ:

Այն օրը որ հողին պիտի յանձնուէին Նոյեմբեր 28ի ղեկներուն հետեւանքով սպաննուած Եօթի զոհերը, քաղաքը կ'առնէ կատարեալ յեղափոխական կերպարանք: Կը կազմուի հակայական թափօր մը, որուն առջեւն էր տարուին Երեք կուսակցութեանց դրօշակները: 15 հոգիներ յատկապէս այդ օրուան համար կազմուած միջկուսակցական Գործադիր կոմիտէն կը հսկէր կարգապահութեան: Երեք կուսակցութիւնները շարժման մէջ կը դնեն իրենց պահանջի բոլոր ուժերը:

Հազիւ թափօրը կը սկսի ղէպի հիանդանոց շարժիլ, ուր բազմութիւնը իր վերջին յարգանքը պիտի բերէր զոհերուն եւ անոնց դիակները ղէպի դերեզմանատուն առաջնորդէր, երբ դիմացէն կ'երևին 15 զինուած քոզաքներ, որոնք կը սպառնան կրակ բանալ, եթէ չցրուին: Ժողովուրդը կը տատանի, կը բորբոքի, որուն ի տես քոզաքները կրակ կը բանան եւ ցուցարարները կը ցրուին, քիչ վերջ նորէն զիրար գտնելու եւ Քաղաքային Տան մէջ հաւաքուելու համար:

Յայտնի կ'ըլլայ որ նահանգապետը խարած էր Սեղափոխական կոմիտէն՝ խոտանալով թոյլատրել ցոյցը եւ քոզաքները զօրանոցներէն արդիւն դուրս ելլել:

Քաղաքային Տան միթինկի ընթացքին կ'արտասանուին կրակոտ ճառեր եւ տեղույն վրայ կը կազմուի չորս հոգիներ Մարմին մը, որոնցմէ մին՝ Հնչակեան Մասնաճիւղի ներկայացուցիչը, որը պիտի զբաղէր քաղաքի պաշտպանութեան կազմակերպութեամբ: Սոյն միթինկի մէջ կ'որոշուի այլեւս քաղաքի պաշտպանութիւնը յանձնել յեղափոխական ուժերուն: Հնչակեան զինուորներուն կը յանձնուի երեք թաղամաս, որոնք պիտի պաշտպանուէին 70 հոգիներ խումբի մը կողմէ:

Հակառակ այս յեղափոխական տրամադրութիւններուն, ցարիզմի հաւատարիմ սպաներ եւ բարձրաստիճան զինուորականներ, ինչպէս ամբողջ Ռուսիոյ, նոյնպէս եւ Պաթումի մէջ մտած ժողովրդական խաւերուն մէջ, ամէն կերպ բռնաբարձներ կը ստեղծեն, որպէս զի առիթ տան բանակին միջամտելու, խափանելու համար յեղափոխական շարժումը:

Միևս կողմէ ալ՝ կառավարութիւնը նորանոր ուժերով կը զօրացնէ իր դիրքերը: Անդտոճ չեն նստիր նաև յեղափոխական շրջանակները, որոնք իրենց հերթին խրամատներ կը բանան փողոցներուն մէջ, պատնէշներ եւ դիրքեր կանգնեցնելով կարեւոր հրապարակներուն վրայ:

Ի տես այս եռանդուն պատրաստութեանց նահանգապետը վերջնադրի ձեւին տակ կը պահանջէ որ դադրին գործադուլները, քանդուին դիրքերն ու պատնէշները: Սեղափոխական Գործադիրը երկար խորհրդակցութենէ յետոյ կը պատասխանէ թէ՛ գործադուլը կը դադարեցուի եւ խրամատներն ալ կը քանդուին, եթէ կառավարութիւնն ալ վերջնէ պատերազմական վիճակը եւ ժողովուրդի ապահովութեան համար անհրաժեշտ երաշխիքը տայ:

Նահանգապետը կու տայ պահանջուած խոստումը, որու հետեւանքով վերջ կը դրուի գործադուլին եւ դիրքերն ու պատնէշներն ալ կը վերցուն իր փողոցներէն ու հրապարակներէն: Սակայն հազիւ այս կարգադրութիւնները կը լրանան, բոլորովին անսպասելի կերպով կը սկսին անցած կը զանգուածային խուզարկութիւններ: Սպաներ, քոզաք խումբերու գլուխն անցած կը յարձակին Քաղաքային Տան վրայ, որ յեղափոխականներու ձեռքը կը գտնուէր եւ տեսակ մը խորհրդանիշ եղած էր յեղափոխութեան, կը խորտակեն դուռերը, կը կոտրեն, կը թափեն ամէն բան՝ ահ ու սարսափի մատնելով ժողովուրդը: Սեղափոխական կոմիտէն կ'որոշէ նոր պատուիրակութիւն մը ղրկել Թիֆլիզ՝ կացութիւնը պարզելու համար:

Սակայն Թիֆլիսի մէջ ալ սեւ յետաշրջութիւնը սկսած էր ինքզինք վերազդանել, որով պատուիրակութիւնը կը վերադառնայ գրեթէ ձեռնունայն:

ՍԵՒ ԾՈՎՈՒ ՄԻՒՍ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Պաթումի Յեղափոխական Գործադիրը, որուն մէջ, ինչպէս բոլորեցաւ Հնչակեան Մասնաճիւղը իր ներկայացուցիչը ունէր, Պաթումի ղէպքերու ընթացքին իր ձեռքն առած էր, Պաթումէն դուրս, քանի մը ուրիշ կեդրոններ, որոնց օրը օրին հրահանգներ կու տար: Գործադիրի ձեռքն էր նաեւ երկաթուղիի զիծը մինչեւ Քուլթայիս: Պաթումի ղէպքերուն առթիւ Կովկասի փոխարքայ Վորոնցով Դաշքովի հետադիրը՝ Յարին ուղղուած, թէ՛ ինք անգոր է տուելու պայմաններու մէջ զսպել Պաթումի յեղափոխականները, եւ ինք զինք ազատ կը նկատէր ոեւէ պատասխանատուութենէ, մեծ ազդակ մը եղաւ յեղափոխական ճակատի համար, որպէս խանդավառութեան եւ ոգևորութեան շարժաստիթ:

Ռուս. Սոց. Դեմ. Բանուոր. Կուսակցութեան հետ սերտօրէն կը զործակցէր Հնչակեան Կուսակցութիւնը բոլոր այն վայրերուն մէջ, ուր ան մասնաճիւղ մը ունէր — Եալթա, Սոչի, Կերչ, Նովորոսիսք, Անապա, Եւայլն: Սեւ ծովեան այս փոքրուն մէջ հինէն ի վեր թրքահայ զաղթականներ տեղափոխուած էին եւ որոնք կապուած էին Ազատագրական Շարժումին:

Մասնաւորաբար Եալթայի մէջ երկու կուսակցութիւնները համազորակցաբար կը կազմակերպեն տեղւոյն բանուորութիւնը եւ զանազան առիթներով ցոյցեր կը կազմակերպեն: Այսպէս օրինակ, նշանաւոր կը դառնայ 1906 Մայիս Մէկի ցոյցը, որ կը կազմակերպուի հակառակ ոստիկանութեան արգելքին:

Գործադիր միացեալ յանձնախումբը կ'որոշէ խուսափիլ հրապարակային ցոյցէ եւ գոհանալ մի օրեայ զործադուլով:

Օր մը առաջ, Ապրիլ 30ին, տեղի ունեցած երկու կուսակցութեանց խառն ժողովը կը հաստատէ այս որոշումը եւ կը յայտարարուի ամէն կողմ: Ոստիկանութիւնն ալ իր հերթին կ'ուզէ բարոյալքել յեղափոխական շարքերը եւ կը յայտարարէ թէ երեք հարիւր բուրլի տուպանքի պիտի ենթարկուին բոլոր անոնք, որոնք զործադուլին կը մասնակցին կամ խանութնին չեն բանար:

Հակառակ այս սպառնալիքին Մայիս Մէկին բոլոր խանութները զոց կը մնան: Քաղաքը կ'առնէ տոնական կերպարանք. բանուորները խումբ խումբ փողոցները կը պտտին՝ յաճախ ալ Մարտէյնէզը երգելով, որ այդ օրերուն Յեղափոխութեան քայլերը կը նկատուէր:

Պուստփելու համար ոստիկանական հետապնդումներէն, երկրոյեան ղէմ, ցուցարարներու բազմութիւն մը, 25-30 նաւակներ առնելով, զրօշակներ պարզած կ'ընեն ծովուն բացերը, ուր եւ ճառեր կ'արտասանուին եւ յեղափոխական երգեր կ'երգուին:

Ընկ. Մ. Արեւելքի կը վկայէ թէ՛

«Նմանօրինակ ցոյցերու, զործադուլներու եւ բողոքի այլեւայլ արտայայտութիւններու մենք կը հանդիպինք Կերչի, Սոխումի եւ այլ քաղաքներու մէջ, ուր բազմաթիւ Հնչակեան Մասնաճիւղեր կազմուած էին եւ շատ զործօն մասնակցութիւն ունէին յեղափոխական շարժման մէջ: Աւելորդ կը համարենք բոլոր այդ ելոյթներուն անդրադառնալ, որոնք կը հաստատեն այն մեծ նպաստը զոր բերած է Հնչակեանութիւնը Ռուսական Յեղափոխութեան»:

— Սոյն Դաշնաթուղթով պարսիկ յեղափոխական կուսակցութիւնը՝ 1908էն սկսեալ որոշում կ'առնէ յետադիմական բռնակալ Մուհամմէտ Ալի Շահը տապալել եւ Սահմանադրութիւնը իրականացնել — ներկայացուցչական ժողովը — Համաձայնագիր մը կը կնքուի Կովկասի Հնչակեան պատասխանատու Մարմնի հետ:

Ա. Երկու կուսակցութիւններն էլ պիտի կանգնած մնան Սոցիալ Դեմոկրատ սկզբունքների եւ ծրագրի վրայ:

Բ. Պարսկաստանի նկատմամբ առնուելիք բոլոր քայլերը պիտի լինեն երկու կուսակցութիւնների կատարելու համաձայնութեամբ:

Գ. Հնչակեան կուսակցութիւնը յանձն կ'առնէ... Պարսկաստանի խառն ժողովների հիման վրայ, Պարսկաստանի շարժման յաջողութեան համար տալ հարկաւոր եղած ազգակամ, միութակամ ու ֆիզիկական ուժերը, որ է զէնք, փող ու կռուող ուժեր:

Դ. Պարսկաստանի կեանքին վերաբերելու որեւէ թերթ, ֆալսափական ծրագրի եւ գրակամութիւն երեւան պիտի գան երկու կուսակցութիւնների համաձայնութեամբ:

ԷՋԹԻՄԱՑՈՒՆԻ ԱՄՆՈՒՆԻ (ԿՈՒՄԻՄ)

Նոյ. 27 1909

Ռ. Ս. Դեմ. Բանուորական կազմակերպութեան հետ կապեր կը հաստատուին որ իր հերթին 23 հոգիներէ բաղկացած վրացի Վալիքովի խումբը զինուած կը զրկէ Պարսկաստանի էնդէլի եւ Ռաշտ շրջանները: Կովկասէն զրկուած Հնչակեան զէնքերով էջթիմայունի Ամիրունը զինեց պարսիկ Մուհամմէտներու զօրաւոր խումբ մը: Էմիր Խան շնորհակալութիւն կը յայտնէ Հնչակեաններուն զէնք տրամադրելուն համար:

1909 Յունուարին Պարսիկ կուսակցութեան խմբապետ Հոսէյն խան, Ս. Դ. Հնչակեան, Ռ. Ս. Դ. Վալիքով Ռաշտի մէջ կը զրաւեն Ռաշտի պալատը, կը սպաննուի նահանգապետ Սարտար Աֆխանը: Կուսակցութեան մէջ էր Դաշնակցական եփերմը՝ 3 հոգիով...:

Պարսաստութիւն կը տեսնուի, եօթը խումբեր կը կազմուին Թեհրանի վերայ քալելու: Ընդհանուր հրամանատար Սափեհգար:

Սոյն արշաւախումբին կը մասնակցէին՝ Ս. Դ. Վրացիներու խումբ՝ 23 հոգի, խմբապետ Վալիքով, Ս. Դ. Հնչակեան խումբ՝ 21 հոգի, խմբապետ՝ Մելիք Անդրէասեան, Հ. Յ. Դ. խումբ՝ 17 հոգի, խմբապետ՝ Եփրեմ, Սաթարական խումբ՝ 45 հոգի, «Բարկ» խումբ՝ 46 հոգի, Կովկասեան թուրքերու խումբ, Եւայլն: Մօտ 1500 հոգի:

Սուլթան Ահմատ Միրզան զահ բարձրացաւ Յուլիս 8ին:

Ատրպատականի նահանգապետը 1909 Յուլիսին շնորհակալութիւն կը յայտնէ Հնչակեան Կուսակցութեան, Սահմանադրութեան Վերահաստատման պայքարին իր բերած նպաստին համար:

«Այս սուրբ ու ազատաբեր տօնը չպիտի ունենայինք ... Եթէ այդ քաղաքներով մարմինը, Հնչակեան Կուսակցութիւնը իր թանկագին եւ անդնահատելի զօհոթութիւններով իր բաժինը չբերէր, ընդհանուր պարսիկ ժողովուրդի զոհարարութեան մէջ, Եւ այդ պատճառով իսկ զայլիս եմ ի դիմաց ինձ յանձնուած երկրամասի, մեր երախտագիտութեան հետ յայտնել նաեւ մեր խորին շնորհակալութիւնը:

ՍԱԴԵՂ ՍՈՒԼՔԱՆ (ԿՈՒՄԻՄ)

Պարսկաստանի իսկական ազատարար հերոս Սաթար Խան.—

«Այսպիսի հսկայական արդիւնք, եւ այսպիսի մեծ յեղաշրջում եւ միայնակ երեւան դնել չպիտի կարենայի առանց ձեր եւ բոլոր գործող ու մարտնչող տարրերի: Թոյլ տուէք շնորհակալութիւն յայտնել ձեզ եւ ընդհանրապէս բոլոր քրիստոնեայ մարտիկներին, առանց որոնց զոհողութեան եւ չպիտի կարողանայի նրանց շնորհաւորել այսօրուան նուիրական Համազգային տօնը»:

1909ի Յուլիս 8ին

ՍԱԹԱՐ
(Կնիք)

**

Մուհամէտ Ալի Շահը զահրնկեց եղաւ եւ իր տեղ զահ բարձրացաւ իր մանկահասակ որդին Սուլթան Ահմէտ Միրզան եւ վերահաստատուեց Պարսկաստանի սահմանադրութիւնը:



Գ Լ ՈՒ Խ Ը.

**ՕՍՄԱՆԵԱՆ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Հայ Յեղափոխութիւնը վարկաբեկելու նիգերը ճախլիկ կամ աջակողմեան պահպանողական պատմաբաններու կամ լրագրողներու՝ շարունակուեցաւ մինչեւ 1960ական թուականները: Նուագախումբը ֆայֆայուեցաւ, երբ հայրենի պատմաբաններ 90 տոկոսով վերանայեցան երէկուան նիհիլիստական սխալ մեկնաբաններուն՝ շատ անգամ պարտադրուած կամ գրուած «հանելի երեւոյլ»ու գնով պերիական քեզերուն: Մեր քեզին ի նպաստ վերջին 15 տարիներու հայրենի պատմաբաններու գործերէն առատ մէջբերումներ կատարած ենք: Աշխատած ենք տարբեր ասպարէզներու մէջ անուն հանած պատմաբանները վկայակոչել, որոնք Լէոններու եւ Արտ. Դարբինեաններու սխալ քեզերը կը ջրեն: Գիրքը խնդրելու գնով ստիպուեցանք օտար եւ հայ վկայութիւններու դիմել փաստելու համար՝ որ երէկի մեր յեղափոխութիւնը ո՛չ միայն *արդար ընդվզում էր Օսմանեան Բոնատիրութեան դէմ, այլեւ միակ հնարաւոր եղանակը հասնելու այսօրուան Հայրենիքի կերտումին: Առանց արիւնի չկայ ազատագրութիւն եւ անկախութիւն:* Առանց երկարաշունչ պայքարի կարելի չէր նուաճել տարիներու ստրկութեան մէջ անբանացած հայ գիւղացին եւ գայն համոզել ստրկական շղթաներու դէմ պայքարի: Հայ Յեղափոխութիւնը ո՛չ զուրսէն ներածուած ապրանք էր, ո՛չ զուրսէն ղեկավարուած շարժում, ո՛չ ալ զուրսի վրայ միայն յոյս դրուած զազափարարանութիւն: Մեզի համար վաստակաւոր պատմաբան Լէոններու եղեռնը հայ կուսակցութեանց վերագրելու ամբաստանութիւնը անբաւելի յանցանք մըն է, քրքական քեզին արձագանգը: Այդպէս չէր խորհեր ինք Եղեռնի շրջանին— այդպէս չէր խորհէ՛ր գուցէ եւ «Թրք. Յեղ. Գաղափարաբանութիւնը»: 1934ին Փարիզ տպուած ատեն: Ո՞վ գիտէ ինչո՞ւ, ի՞նչպէս եւ որոնց քե-

լադրանգով գրեց Թիֆլիսի մէջ նստած այդ գիրքը՝ որ այսօր հայրենի պատմաբաններուն ալ կողմէ կը նկատուի «սխալ քեզերու կուտակում»։ Բայց մենք ստիպուած ենք պատասխանել Լէոյի քեզերուն՝ որովհետեւ անոնք հայ թէ քուրք պարզուազիայի Հայ Յեղափոխութեան դէմ արձակած նետերուն գլխաւոր կապարճակիրը որպէս կը ծառայէ դժբախտաբար...

Կարելի՞ է հայ պատմաբանի մը ներել, երբ ան կը գրէ 1928ին գիրք մը՝ «Ապսպարանք»ի վրայ, զայն կը հրատարակէ Փարիզի ՀՕԿը, որուն պարտականութիւնը Սփիւռքը Հայրենիքին կապելը պէտք է եղած ըլլար լոկ...։ Մարդ մը՝ որուն վաստակը ծանր է եւ որ խաշոր հեղինակութիւն է մինչեւ 1880 թուականներուն պատմութեան շրջանի համար։ Մարդ մը, որուն պատմութեան հատորները լոյս տեսած են Հայաստան եւ որ աւատապետութեանց ռիսակալ քշմամին է եղած։ «Թուրքահայ Յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» հատորին մէջ գրեց տողեր՝ որոնց տակ սիրով պիտի ստորագրէր Թալաաթը... կամ Էսատ Ուրասը։

«Թուրքահայ յեղափոխութեան գաղափարախօսները, թէեւ այսօր գաղափարապէս անցել են ստուերների ցուրտ աշխարհը՝ բայց նրանցից շատերը դեռ ապրում են եւ կատաղութիւնից փրփրում՝ երբ նրանց դնելով Արդիւ Համախոսների, Թալաաթ-հնվէրների, Լորանով-Ռոստովսկիների, Նիկոլայ Երկրորդների, Չէմբրլէնների եւ Թուրքի Քամի, ուրիշ հայասպանների հետ միասին՝ իրարեւ նրանք ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ, (Ընդգծ.՝ Հ. Գ.), հարցում ենք անում՝ «Ո՞ւր է եղբայրդ»։ Բայց այդ կատաղութեան ամբողջ փրփուրը, որքան էլ ժահրոտ խորքերից լինի դուրս ժայթքելիս, երբեք եւ երբեք չպիտի մեզ չեղի հանգիստ, պաղարիւն ուսումնասիրողի եւ զբոսաբանի գիտական գերբից։ Նրանք մեզ յիշոցներ, իսկ մենք նրանց՝ փաստեր, փաստեր, անվերջ փաստեր...»։

(Տես՝ Լէոյի դրքին նախարանը, էջ 5-7)։

— Ո՛չ, ողբացեալ պատմաբան, անոնք յիշոցներ չեն արձակեր քեզի դէմ, պէտք չունին։ Հիմա գլուխդ վերցնէիր եւ տեսնէիր, թէ քեզ ինչպէ՛ս կը զարնեն անոնք, որոնց հաշւոյն գրելով, կ'աւզէիր ինքիդ ու Թալաաթի հետ շփոթել Աղատաղրական Պայքարի հերոսները, որոնց տեղը աւելի բարձր է Հայ Ժողովուրդի պատմութեան մէջ, աւելի մնայուն, քան քու այդ գիրքդ որ նենգափոխող թուրք պատմաբաններուն շարքին է դրուած, աւա՛ղ...։

Բարեբախտաբար, այլևս անցած է այն ժամանակը, երբ Պերիան զոհ կրնար դարձնել «ն'չ» ըսող անկեղծ համայնավար իրաւ պատմաբանը։ Անցած է ժամանակը, երբ Սթալինը «համար» կրնար որակուիլ, կամ «անսխալակամ հայր», եւ ժողովուրդներուն անցելի հերոսական կջերը թողել փորձող Լէոներու կողմէ ծափահարուիլ եւ միայն ծափահարուիլ...։ Կոմկուսի Ի. համագումարը եկաւ վկայելու (Այս մասին պէտք է կարգաւ իրուելու Նշանաւոր Ի. Համագումարի զեկոյցը), թէ Սթալինը, Պերիան, Եսկոտան, Ետովը, Ապարտամովը, ո՛չ թէ մտքի տիրաններ, կուսակցութեան հերոսներ, այլ իրաւ հերոսները մաքրողներ եղած են, որ Սթալինը Հարաւ Ուրբանիայի շրջանին մէջ 1941ին, հակառակ Պուտինի, իրուելու, Չոր. Գիրբանուի, Յ. Բաղրամեանի նահանջի թելադրութեան... մէկ միլիոն կարմիր Բանակի զինուորներուն ջարդուելուն պատճառ հանդիսացած է...։

**

Այս առթիւ լսենք հայրենի զոյգ պատմաբաններուն կարծիքը, պատասխանելէ առաջ Լէոյի սխալ թեզերուն։

Ազգային ազատագրական պայքարը ուղղուած էր ստալին առթիւ Թուրք Բունակալութեան դէմ, որովհետեւ հայութեան համար ամէնէն մեծ ցեղասպանութեան վտանգը անկէ կու գար, որքան ալ ըսենք, Հնչակեան Մրազրին մէջ դրուած էր Ռուսահայաստանի, Պարսկահայաստանի ազատագրութեան հարցերը եւս, սակայն մօտ երեք միլիոն բնակչութիւն ունեցող Արեւմտահայութեան զոյութիւնը ինչորոշ առարկայ դարձած էր Պալքաններէն աստիճանաբար նահանջող թրքական բռնապետութեան կողմէ։

Լսենք Կարապետ Քարամեանի վկայութիւնը։

«Հարց է առաջ գալիս եւ շատ տրամաբանական հարց։ Ինչի՞ց ելնելով Փրոֆ. Լէոն քուրքերու ջարդարարութիւնը բացատրում է որպէս հայ ռայայի շարժումների, Հայ Ազգային Ազատագրական պայքարի հակազդեցութիւն, իբր թէ չլինէր այդ պայքարը, չէր լինի նաեւ հայկական ջարդը կամ ցեղասպանութիւնը։ Բայց ո՞ր մէկն է միւսին ծնունդ տուողը՝ պայքարը ցեղասպանութեան թէ հակառակը։ ՆՄԱՆ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԵՆ ԵՒ ԶՈՒՐ ԵՆ ԼԸՑ-ՆՈՒՄ ԹՐԻԱԿԱՆ ԻՆՔՆԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԶՐԱՂԱՑԻՆ։

«Միեւնոյն պատմաբաններն ունենում են նաեւ նոյն հետեւանգները։ Եթէ Պալքանեան ժողովրդների, ապա ռայայի, ազգային նրամանօրինակ շարժումները հող ու արմատ չպիտի ունենային Արեւմտեան Հայաստանում, կամ լինէին յետադիմական, քանի որ երկու շարժումներն էլ արդիւնք էին նոյն պատճառի՝ քրքական տիրապետութեան անշոք լծի։ Այժմ ողջ լինէր ինքը՝ Լէոն «Թուրքահայ Յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» աշխատութեան հեղինակը եւ պատասխանէր այս արդարացի հարցին։ Պատասխանէր նաեւ, թէ ինչո՞ւ համար յոյն, սերայ մակեդոնացի, պուլկար, ռումինացի հայդուկին «Կայէն» չի անուանում, իսկ հայ հայդուկին հաւասարեցնելով բոլոր հայակեր գաղաններին նրանց երեսին նետում է՝ «...Ո՞ւր է եղբայրդ»։ Փրոֆ. Լէոն եւ այսօրուայ կենդանի հետեւողները լաւ պէտք է հասկնային, որ Հայ Ազատագրական շարժումն ինքնապաշտպանական բնոյթ է կրել միայն եւ ծնունդն է եղել տիրողների անհանդուրժելի վարքապծին՝ մեր նկատմամբ։ Նրանք պէտք է հասկնային, որ գայլը «ուտելու էր գառը», ուրեմն գառը պէտք է փնտաէր փարախի ապահովութիւնը, հովվի ու շան պաշտպանութիւնը»։

Ուրիշ ձախլիկ պատմաբան մը՝ Բ. Բորեան կը գրէր.

«... Հաստատում է, որ Օսմանեան Սուլթանները սկսած ԺԶ դարէն մինչեւ մեր օրերը (1876) ընդհանրապէս սիրում էին եւ հնարաւորին չափ պաշտպանում հայերին»։

Պատասխանելով Բ. Բորեանին, Կ. Թառոյեանը իրաւամբ նշել կու տայ, որ ան ծանօթ չէ մեր «յիշատակարան»ներուն: Այլապէս չէր համարձակուեր ժխտելու ե՛լ խաղաղ, ե՛լ պատերազմական շրջանին հայուն ապրած դժոխքի փաստը Թուրքիոյ եւ Պարսկաստանի մէջ, չէր գովաբաներ արիւնկալ Արեւելեան Բոնակալները՝ որպէս «մարդասէր»:

Պատասխանելով Ակադեմիկոս Արտ. Կարինեանին «Թուրքիա եւ Թուրքահայերը յողուածաշարքին մէջ «Հայոց աւելի ունեւոր ըլլալով Թուրքերը չահագործելու թեզին», Կ. Քարամեան հարց կու տայ զրպարտութիւն որակելէ ետք Ա. Կարինեանի թեզը. — «Էլ ինչո՞ւ էր Հայաստանը հայերից դատարկում...»: «Ապա թե՛ս իսլամի եւ քրիստոնեայի միջեւ անհասարկութիւն կար Թուրքիոյ մէջ այդ անուրանալի է: Իսկ նոյնպէս անուրանալի է, որ այդ անհասարկութիւնը միշտ յօգուտ թուրքերուն էր»:

(Տես՝ «Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարի օրինաչափութեան Հարցի շուրջը», Կ. Ն. Քարամեան, Երեւան, էջ 104–106):
Հայրենի ուրիշ պատմարան Փրոֆ. Մ. Ներսէսեանը անդրադառնալով ազատագրական շարժման արտաքին ազդեցութիւններու արդիւնք ըլլալու հարցին, կը գրէ՝

«Փրոֆ. Լեոն սիւլուում է նաեւ մի այլ հարցում: Թրքական Բոնակալութեան դէմ ուղղուած հայ ազատագրական շարժման պատճառները նա փնտռում է, ո՛չ թէ ժողովրդի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կեանքի, այլ դրսի ազդեցութիւնների ու անհատների գործունէութեան մէջ: Նա գտնում է որ եթէ շիւնեիսն ուսուցողները, մասնաւորապէս Բակունինը եւ նրանց հետեւող մի շարք հայ մտաւորականներ, ապա չէին լինի հայ ազատագրական շարժումները: Լէոն գրում է՝ «... Բակունինեան յախուռն ապստամբականութիւն, տարիներ շարունակ արհեստակամօրէն փաթաթուած է եղել «հայ ժողովրդի շիւնեիսն»: Այս ըմբռնումի իտէլական հակազիտական էութիւնն ինքնին ակնյայտ է: Լէոն Չիլիմարեան, ՈՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՇՈՒՄԸ ՈՒՆԵՑԵԼ Է ԻՐ ՆՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ»:

(Տես՝ Մ. Գ. Ներսէսեան «Հայ Ժողովրդի Ազատագրական Պայքարը Թրքական Բոնակալութեան դէմ», Երեւան, 1955, էջ 276):

Լէոյի փաստերը չզիմացան ժամանակի ընթացքին, մաշեցան, որովհետեւ չինձու էին:

Այսօր Հայրենի իրաւ պատմարանները եկած են այն ճիշդ եզրակացութեան՝ թէ Արեւմտահայ Ժողովուրդի պայքարը՝ արդար էր, տեղին էր, անհրաժեշտ էր, Օսմանեան բռնատիրական ռեժիմէն ազատագրուելու կոչուած:

Հայրենի իրաւ պատմարանները շատոնց ջարդու փշուր կը դարձնէին Լէոյի կեղծ «փաստերը», եթէ Պերլաներու կողմէ ահաբեկումի մթնոլորտը չստեղծուէր 1953էն առաջ...:

Լէոյի գիրքը ծառայեց արեան տուրք չվճարած մարդոց թեզին, ծառայեց թուրք պատմարաններուն եւ Հայ Ազատագրական Պայքարի լոյսէն կուրացած Սփիւռքի «Խելօք Դաւիթներուն»:

Ընկ. Անդրանիկ Կէնճեան իր Լէոյի տուած պատասխանին մէջ կը գրէ. — «Ի՞նչ ըսել ժ՞. դարու շրջանին համար, ուր դարաւոր հալածանքին կուրծք տուող հայ ժողովուրդը, տեսնելով որ մեծ կամ փոքր ազգեր կամ ժողովուրդներ կը վերագտնեն իրենց պատմա-անհատականութիւնը, կը զարթնու. կը գիտակցի, կը կազմակերպուի եւ ինքը, ու կ'ուզէ տիրանալ իր այդ մարդկային բնական իրաւունքին, եւ սակայն կը գտնուի իր ծնած գաւակներէն բազմամեայ վաստակաւոր մտաւորական մը, որ կը մեղադրէ կարծես զինքը, Սուլթան Համիտի ձեռքերը չհամբուրելուն համար... Ինչո՞ւ չըսել Լէոյի, իր գաղափարաց նոյն կարգին քէ՛ երէ բրֆահայութիւնը իսլամանար... անկասկած որ չէր քարդուեր ու չէր ալ վրտարուեր երկրէն... Բայց թէ կ'ազատագրուէ՞ր իր ստրկութենէն, գոնէ որպէս աշխատաւոր...»:

(Տես՝ Անդրանիկ Կէնճեան, «Լէո եւ Հնչակեան Կուսակցութիւնը», էջ 20):

Ներքե՞լ է պատմարան Լէոյին, երբ կը գրէ, թէ Թանգիմաթը (1839) թուրքի վրայ միայն բարեկարգութիւն մնաց եւ բառանական թուականներուն մասսայական կոտորածներ կատարուեցան «Սիրիայում եւ Վրտիստանի լեռներում... Բայց զանց կ'անէ այդ մասսայական կոտորածների պատասխանատուութիւնը նշելի... Բանի դեռ թրֆահայ յեղափոխական շարժում չկար»:

Ա. Կէնճեան հարց կու տայ. —

«Այս մասսայական կոտորածներուն ծանօթ պատմարանը՝ ի՞նչ տրամաբանութեամբ ուրեմն, թուրք կառավարութեան դիմել կը յանձնարարէր. երբ որ դիւանագիտական եւ տնտեսական նկատումներով, կառավարութեան հրապարակած Թանգիմաթի օրէնքն ալ անգործադրելի կը մնայ ու նոյնիսկ կոտորածներու տեղի կու տայ, եւ կառավարութիւնն ալ չի բարեհաճիր գոնէ իր փրկութիւնը պահպանելու համար աւատապետներուն խօսք հասկցնել»: (Տես՝ նոյնը, էջ 21):

Տարօրինակ կերպով, Լէո փոխանակ տրամաբանական գտնելու Հնչակեան մօտաւոր եւ հեռուոր Ծրագրի միութիւնը, կը դատապարտէ զայն, պնդելով, որ մէկ ծրագիր պէտք է ունենար, այսինքն սոցիալիզմը եւ մէկընդէն ազգային մօտաւոր, ազատագրական պայքարի բաժինը:

Մենք կը կարծենք, թէ այդ պարագային ինք Լէոն պիտի ըլլար առաջին մեզ քննադատողը, թէ ինչպէ՞ս կարելի է սոցիալիզմի դրօշով ճամբայ ելլել, երբ ճարտարարուեստ ու մեծաթիւ բանուորութիւն չունէր Թուրքիան... Հաւանաբար ամբաստանելու համար նաեւ մեզ, թէ Թուրքիոյ իրականութեան անտեղեակ մարդիկ էին Հնչակեանները...:

Մօտաւոր նպատակը առանց իրականացնելու հնարու՞ր էր Թուրքիոյ մէջ սոցիալիզմը հաստատել, այսինքն բռնակալ ռեժիմը տապալելէ առաջ, հայ-թուրք չեւրտ-արար զանգուածները կրնային սոցիալիզմի դրօշը բարձրացնել Օսմանեան կայսրութեան մէջ, երբ այդ ազգերու միջեւ կարելի չէր դարձած բռնակալի դէմ ընդվզումի շուրջ միտակց գործունէութիւն, երբ բանուոր դասակարգը սողմանային վիճակի մէջ գոյութիւն ունէր, երբ կրօնական եւ ցեղային դարբուրութիւն մը հրահրուած էր թուրք Սուլթանի կողմէ... Ինչո՞ւ կարելի չէր նախ բռնակալը տապալել, հող պատրաստել եւ ապա հաստատել բնակչութիւնը: Պատմութիւնը ցոյց տուաւ, որ Սուլթանի դէմ ընդվզած երիտ. Թուրքերն, ապա Քեմալականներն ալ, չկրցան Հասարակաց Դատի մը շուրջ համախմբել ոչ-օսմանցիները: Հայ, արաբ, յոյն, քիւրտ:

Ազատագրական պայքարի գնահատման հարցի շուրջ լաւ պիտի ըլլար լսել նախկին քաղաքական գործիչ Մուշեղ Սերոբեանի տեսակէտները նաեւ, որ ապրած ըլլալով Համիտեան եւ Իթթիհատեան ուժերէն բնորոշուող օրով Արեւմտահայաստանի մէջ, իր բազմաթիւ պատմական հեղինակութիւններով կը փաստէ, թէ հայ յեղափոխութիւնը յանցաւոր չէր իր ազատագրական պայքարին համար Օսմանեան Բռնատիրութեան ուժերին դէմ:

Լսենք զինք.

«Չէզոքները» կամ ուղիւսակցականները, ինքնարդարացումի չքմեղանքով մը չեն կրնար եւ իրաւունք չունին, ներքին քայքայումի պատասխանատուութիւնը նետելու Հայ Յեղափոխութեան ուսին վրայ: Իրենց զանգուածային անտարբերութիւնը մեծագոյն պատասխանատուն է այդ աղէտին: Եթէ իրենք ազգային ոգիով մտած ըլլային հոսանքին մէջ, եւ իրենց ենթադրուած իմաստութեամբ օգտակարապէս գործածած ըլլային յանուն ազգային շահերու, կը հաւատամ, թէ հատուածական շարիքը ա՛յնքան ծաւալ պիտի չգտնէր մեր մէջ»:

(Տես՝ «Հայկական Միգրանցի», քննական վերլուծումներ, Մ. Սերոբեան, 1916, Պոսթոն, էջ Բ.):

«Մեր խօսքը անոնց մասին է որոնք կը վարդապետեն, թէ հայ ազգին տառապանքը արդիւնքն է Հայ Յեղափոխական գործունէութեան, եւ թէ Հայկական վերջին բնաշնչումի եղեռնը ի գործ պիտի չդրուէր, եթէ Կովկասի սահմանադրուածներուն վրայ կամուրական շարժումներ սկսուած չըլլային»:

«Այսպիսի մտածումներ ինծի համար ուրիշ բան չեն, եթէ ո՛չ կարգ մը մարդերու կողմէն պատմութեան վրայ պատուաստուած թունաւորում մը միայն»:

(էջ 5):

«Երբ մենք կը հարցնենք կեղծ տրամաբաններուն, թէ պատմութեան մէջ ո՞րն է որ առաջ երեւցած է տառապանքի թէ յեղափոխութիւնը, հարցը իր ճշգրտութեամբ լուծումի փուլին մէջ դրած կ'ըլլանք: Որովհետեւ աներկարայօրէն կոյրերն անգամ գիտեն, թէ Հայ Յեղափոխութիւնը երբ հազիւ 35 տարուան կեանք ունի, Հայ տառապանքը իր մարտիրոսի ճակատին վրայ կը կրէ դարերու արհաւիրքին աղուխաղորդմը: Հայ Յեղափոխութիւնը արդիւնք է եւ ոչ թէ պատճառը Հայ տառապանքին: Վերցուցէք տառապանքը եւ յեղափոխութիւնը կը դադրի գոյութեան իրաւունք ունենալէ, բայց յեղափոխութեան մը դադարեցումը բնաւ չէ կըրցած բուժել արդէն իսկ դարերէ ի վեր գոյութիւն ունեցող տառապանքն ու կեղեքումները»:

(էջ 6):

«Յեղափոխական կոմիտէները 1887ի շրջանին կազմուած են, իրականութիւնը սա է, թէ թուրք կառավարութեան կողմէ կազմակերպուած առաւել կամ նուազ փոքր ջարդեր, առաւել կամ նուազ կանոնաւոր հալածանքներ 500 տարիէ ի վեր գոյութիւն ունին: Ուրեմն, ջարդերը աւելի առաջ են քան յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք արդիւնք մըն են եւ ո՛չ պատճառ: (ՎՄԻՄԻՄԻ ԼԷ Մասսաքր է Լա Գետքեմ Տ'Օրիան», Էմիլ Տումբրի, էջ 153-154):

Երբ Ատանայի կոտորածին մասին Մուշեղ Սերոբեան կը գրէ «Լէ Վէրբը Սիլիսիէն» (Փրանսերէն) գիրքը եւ կը փորձէ յանցանքը Երիտ. Թուրքերու վրայ նետել, ամբաստանելով զանոնք որպէս մարդասպան, հայասէր ձէյմա Պրայս, Ատամս Կիպպրնս, Տոքթ. Ուոշըրն եւ Պարթըն «Վերապահութեամբ» կ'ընդունին գրուածները...:

Ատանայի մէջ, ձեմալ, Առաջնորդ Մուշեղ Եպս. Սերոբեանի հետ իր զրոյցին՝ Իթթիհատի մտադրութիւնները կը յայտնէ անոր.

«Ձեզի ազգութիւններու առանձնաշնորհումները, եւ յանդուգն քայլով մը ԹՐԲԱՍՆԵԼ ամէն ինչ, ամէն տեղ, ամէն հաստատութիւն...»: (էջ 10):

«Իթթիհատի հայաջինջ քաղաքականութեան ծրագրին գործադրութեան անընդհատ շարունակութիւնը, խոստացուած բարեկարգութիւններուն գործադրուած չըլլալու պարագան, եւ երոպական դիւանագիտութեան հակամարդկային պողպատէ սառնութիւնը, եւ հայ տառապանքին օրըստօրէական անուր միակ ստեղծողը եւ դրդապատճառը եղան Հայ Յեղափոխութեան»:

«Եթէ մասնաշուռած պատճառները գոյութիւն չունենային յեղափոխական մտածումը արդէն իսկ լինելութեան իրաւունքը պիտի չունենար: Հայ ժողովուրդը ակամայ եւ առանց ուզելու ընդգրկեց Յեղափոխութիւնը, իրեւ իր վերջին փրկչութեան լաստակը, եւ եթէ կան մարդիկ որ յեղափոխութիւնը յանցանք կը նկատեն, այդ յանցանքին պատասխանատուութիւնը թող երթան փնտռեն թուրքերուն եւ եւրոպացիներուն մօտ, որովհետեւ անոնց ցոյց տուած հակամարդկային վերաբերումէն ծնաւ այդ շարժումը: ... Եւ եթէ ընդվզեցաւ (հայը), այս կը նշանակէ, թէ հարկադրուած էր ընդվզելու ճակատագրով հարկադրուած: Այդ անխուսափելի եւ կրակէ լուծը նախամեծար համարեց իր ամենօրեայ տառապանքէն իր ամենօրեայ լիւրճանքէն ու բռնարարութիւնէն»:

«Յեղափոխական այդ շարժումը ապրուած հակաբնական քաղաքական եւ ընկերային կեանքի բնականոն հետեւանքն էր ու կը մնայ, որչափ ատեն, որ այդ ընդվզումի պարագուիսները կը մնային բուն իսկ տառապանքները, անոնք որոնք իրենց մտքով կը կրէին քրքրական բարբարոսութեան հետեւելը»: (էջ 28):

«... Իթթիհատ իր կանխորոշող նախարանաձեւուած դատավճիռը Փարիզէն միասին բերած էր բարեկարգեալ Թուրքիոյ մէջ գործադրելու համար հայութեան պէս անմարսելի, անկլանելի ցեղի մը վրայ»:

«... 1904ին Փարիզի Իթթիհատի օրկան «Մէշվերէթ»ի Յունիսի 1ի թիւին մէջ Աճէտ Ռիզան՝ Իթթիհատի գաղափարախօսը կը գրէր. «... Անկեղծօրէն, ի՞նչ պիտի կրնամ պատասխանել Պետութիւնները, եթէ Սուլթանը իրենց սա դիւանագիտական պատասխանը տայ. — «Ես ապստամբ հպատակներս կը պատժեմ»: (էջ 36):

«Ինծի համար զարմանալին սա էր, որ այն ատեն ալ զտնուեցան ԹՐԲԱՍՆԵՄ հայեր, որոնք իրենց այլատեսածի եւ օսմանցիի հոգեբանութեամբ, ականջին խրփեցին հայերու անմեղութեան աղաղակին առջեւ եւ ուզեցին անպատճառ ??? հայերու կողմէ առնուած սխալ քայլեր տեսնել այդ ջարդերուն խորը»: (էջ 36-37):

«Հայկական սիստեմաթիւ ջարդերը կը սկսին Հայկական ինքնագիտակցութեան զարթումին հետ, այսինքն այն օրէն, երբ հայը զգաց, թէ ինք խուզուելիք ոչխար մը, կամ կ'ընկելիք կով մը չէ թուրքին ձեռքին տակ, թէ ինք ալ անհատ մըն է, բարոյապէս աւելի բարձր, աւելի ընդունակ ճարտարարուեստի եւ յառաջդիմութեան, թէ իր մարդկային իրաւունքն է, իր ազգային ու անհատական ընդունակութիւններուն չափով զարգանալ, եւ տիրանալ իր գործելու ազատութեան: Եւ ասիկա կարելի պիտի ըլլար ջնջելով իր ճակտէն բայաի դատակնիքը, եւ անոր տեղը դրոշմելով Օսմանեան քաղաքացիի իրաւունքը»: (էջ 51):

«Եթէ մեղադրուելիք կայ...: Մեղադրեմք ոչ թէ տկլոզ եւ անօրի յեղափոխականները, այլ մեր հարուստները, որոնք իրենց հարստութեամբը թուրք վայրագութեան կողպատի ախորժակը սրեցին...: (էջ 54):

«Գաղափարաբանական Թուրքիոյ Սահմանադրական ռեժիմի ամբողջ շրջանին իր քրիստոնեական շարժումներն իր նախընտրութիւնը ըրաւ Թալաաթ պէլի վրայ, մասնաւորապէս, եւ գանիկա պատուեց «ընկեր Թալաաթ» եւ «մեր Թալաաթը» պատուանշաններով: (էջ 89):

«Դաշնակցութիւնը չորսիւ Թալաաթի «Դաշնակցական ըլլալը պայման դրաւ պետական կամ ազգային պաշտօնի մը զլուխ կարենալ մնալու համար:

«Մեծահարուստները Մուլթան Համիտի օրով... զտնուեցան մարդիկ որոնք ամենատարբին մասնութեան զիջան, իրենց խախտուած դիրքերը վերահաստատելու համար: Անոնք կ'ըսէին:

« — Կ'ուզենք օղնել, բայց չենք կրնար: Չենք կրնար անոր համար, որ նախ մեզմէ պահանջուած դրամը չունինք ու յետոյ անոր համար, որ չենք ուզեր վտանգուիլ կառավարութեան առջեւ:» (էջ 150):

Հնչակեան Կուսակցութիւնը եթէ Ազատագրական Պայքար (Թուրքիա), սոցիալիստական ուժերու կողքին, ընկերվարական պայքար մղեց (Կովկաս), ատրիկա շատ բնական երեւոյթ էր:

1887-1905ի շրջանին Կովկասի մէջ մեր Մասնաճիւղերը յատկապէս Պաքուի հայ աշխատակորներուն մեծամասնութիւնը կը կազմէին: «Բանուոր» մասնաճիւղի մեր ընկերները, ո՛չ միայն շահագործեցան Ռուս Սոցիալ Դեմոկրատներուն, այլ անոնց հետ կողք կողքի կոուսեցան: Բայց ինչո՞ւ յանցանք պիտի նկատուէր Ազատագրական Շարժումը Թրքահայաստանի մէջ. չէ՞ որ աւատապետութիւնը շնչահեղձ կը դարձնէր 2,5 միլիոն հայութիւնը եւ անոր սննդացումը իր գլխաւոր օրակարգին ներքէ կ'ընէր՝ հայ կուսակցութիւններուն ստեղծումէն իսկ առաջ: Երկիր մը, ուր չնչելու, ապրելու, ստեղծագործելու, տարրական իրաւունքն անգամ կը զրացուէր ազգի մը տառապելու գրասկներուն:

— Ո՛չ, Թրքահայաստանի, Կովկասի, Պարսկաստանի հայութիւնը, Խորհրդարանական ռեժիմի մը ներքեւ համադրելու ձգտումը, Հնչակեան Կուս. համար մեղք մը չէր: Ո՞ր կուսակցութիւնը հիմնուած տարին իր ծրագրերն էր զործադրելու բաղձին արժանացած է: Ինչո՞ւ «մեծամուլութիւն», ըստ Լէոյի, եթէ բռնութեանց տակ ճնշուած աշխատաւոր ու զիւղացի հայ տարրերը ուզուած է ազգային զրօշի ներքեւ համախմբել եւ իրաւունքի ու ազատութեան համար պայքարի առաջնորդել...:

Հսկայ հատոր մը նուիրած է Լէօն ԺԸ. դարու Դաւիթ Բէկի եւ Օրիի շրջանին: Դարարաղի Մեղիքները, ըստ Լէոյի տրամաբանութեան, պէտք է դատաւարտուի: Պէտք է դատաւարտուի Օրիին իր «ցնորական» անկախութեան զաղափարին համար, պէտք է դատաւարտուի Մեղիքները, հօր Պարսկաստանի եւ Թուրքիոյ դէմ առանց ուսական զօրքերուն ժամանումին, տկար ուժերով ապստամբութիւն կազմակերպելուն եւ «Ջարդի պատճառ» դառնալուն համար... սակայն Լէօն այդպիսի վերագրում չի կատարեր ԺԸ. դարու Դարարաղի գինուած ապստամբութեան կողմնակիցներուն դէմ... Մոռնալով որ այդ բռնակալութեանց Սեւ Մրազին զործադրութեան դէմ 250 հազար վանի եւ շրջաններու հայութիւնը՝ իր ատած կուսակցութիւններն է որ ամիս մը կոուսելէ ետք յաջողեցան փրկել 1915ի Ապրիլին: Սարտարապատի մէջ իր ատած կուսակցութիւններն են որ փրկեցին ներկայ Հայաստանի ժողովուրդը...: Համայնալար, Դաշնակցական եւ Հնչակեան ուժերն են որ պաշտպանեցին Պաքուի Սովետը եւ Շահումեանը՝ 1918ին: Լէոյի համար (էջ 156) Հնչակեանները յանցաւոր են որ փոխանակ Պարսկաստանէն սկսելու ազատագրական պայքարը, սկսած են եղեր Թրքահայաստանի մէջ: Բայց ինչո՞ւ... որովհետեւ «Հնչակ»ը կը գրէ. «Հայութեան ամենատուար մեծամասնութիւնը կազմում են քրքահայերը եւ նրանց բնակավայրը մեր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է»: Ինչո՞ւ հարց չի դնէր յարգելի պատմաբանը, թէ կարելի չէր նոր ստեղծուած կուսակցութեան մը համար նոյն ուժգնութեամբ 3 Հայաստաններու մէջ

դործել, թէ տրամաբանական էր կեղծոնանալ այն Հայաստանէն ներս, ուր արիւնարցունք կուլար հայ ժողովուրդը ամենէն աւելի. մինչ միւս երկու Հայաստաններուն մէջ յարաբերարար տանելի պայմաններ գոյութիւն ունէին եւ որոնք կրնային ի հարկին զինուոր, զէնք տրամադրել իրենց Արեւմտահայ եզրայրներուն, պայքարին յաջողութիւնը ապահովելու համար:

Լսենք այս առթիւ Ե. Օտեանի վկայութիւնը.—

Յեղափոխութեան Օգուտը վերնադրին տակ Աղէքսանդրիա հրատարակած Թերթին մէջ կը կարդանք.—

«... Արդ, նոյնիսկ ընդունելով որ այսօրուան հայութեան թշուառ ու անտանելի կացութեան բոլոր պատճառը Յեղափոխական շարժումը եղած է, բնութեանով որ, եթէ այդ շարժումը գոյութիւն չունենար այսօր չա՛տ աւելի հանգիստ եւ տնտեսապէս չա՛տ աւելի բարգաւաճ վիճակ մը պիտի ունենայինք Թրքահայաստանի կամ Կովկասի մէջ, ես պիտի ըսեմ քէ յեղափոխական շարժումին առաջ քերած օգուտը, բազդատմամբ իր տուած վնասին, անհուօրէն բարձր, անսահման ու անվիճելի է:

«Յեղափոխական շարժումը, քան տարուան մէջ, ամբողջ հայ ժողովրդին նկարագիրը փոխեց, նոր ու առոյգ ցեղ մը ըրաւ զայն, մարդու կարգ անցուց վերջապէս:

«Յեղափոխութիւնը ջնջեց, մաքրեց մեր վրայէն դառաւոր ստրկութեան մը ապակեանց արտոնները:

«Յեղափոխութիւնը մոզական հրաշագործ ջուրին պէս, մեր ցաւագար գաւառաբնակները կայտառ երիտասարդութեան փոխեց»:

(Տես՝ «Կրակ», (յեղափոխական Թերթ), Երուանդ Օտեան, Աղէքսանդրիա, 22 Ապրիլ 1906, թիւ 3):

«... Հայ Կուսակցութեան միայն խեղճ ու կրակ ժողովուրդը ովկէան թշուառութիւններէն, կրած անտանելի գուլումներէն ազատելու, ապահովելու, ինքնապաշտպանութեան ու անկեղծութեան առաջնորդելու միակ ու միակ գործին պէտք է փարին եղբայրակցած ու գործակցած»:

(Տես՝ «Տաճար», 2 Փետր. 1913, թիւ 3, Պոլիս):

Պատմաբան Բիէր Հէրբսի վկայութիւնը.—

«... Մասնական Օթեակներու անդամ էին՝ Միտհաթ Փաշա, Թալաաթ, Էնվէր, Ճախտ, Ալի Ռիզա, Մալիա, Շաքիր Պէտէտտին, Քարասու...: Անոնց մեծերն էին՝ Տիգրակէի, Սալպրի, Կատաթոն, Գլեմանսօ, Ռէնհաք, Հիբը, Ռոշիլա, Լոյս ձօրճ, Վանկէյհամ, Ռուզվէլթ, Մէյլը, Պրիան, Պենագէ, Մ. Ճրանս, Տալաթի, Հէրիօ, Լ. Պլում, Ճրանքլին Պույոն, Կուրօ, Միլլրան, Խ. Վայզման»:

(Տես՝ «Լը Տէրնիէ Պալ Տիւ Կրան Սուար», 1956, Բ. պրակ, հայերէն, էջ 25-26):

Պատմաբան Յրթ. Թուրքեանի վկայութիւնը.—

«1908ի Յուլիսեան յեղաշրջումից անմիջապէս յետոյ, Երիտ. Թուրքերի Կուս. Վէհիպ Պէյին ուղարկել էր Պիթիւի վերայթր՝ կատարուած յեղաշրջումից (Համիտի) դժգոհ քրտերին հաւաստիացումներ տալու համար:

«Նոյն այդ ժամանակ Վէհիպ Պէյը Մշոյ եւ Սասունի Դաշնակցական գործիչներին հետ առանձին հանդիպումներ ունենալով, նրանց հանգստացրել էր ասելով, թէ՛ Թրքական «յեղափոխութեան» շահերի տեսակէտից առ այժմ նպատակաւոր մարջէ զօրամիւտորում: Այսպիսով, ղեւ տասը տարի առաջ Իթիբակտին յաջողուել էր միամտացնել Դաշնակցական գործիչներին, թէ կը վերջիններին անյայտ չէր, որ համիտի քրտական արտօնեալ չե՛ծելագորքը «Համիտիէն» կազմակերպուել էր հիմնականում հայ ժողովրդի դէմ գործելու համար»:

(Տես՝ «Սարտարապատի Հերոսամարտ», 1969, Երեւան, էջ

Իթթիհատական Պէտէտտին Շաքիրի գրոյցը Ա. Սատիսեանի
հետ. —

«Հայերը կանգնած են մեր համիւլամական եւ համաթուրանա-
կան սրբազան իտէալների իրականացման ճամբու վրայ, եւ մենք
անխուսափելիօրէն կը բախուենք անոնց հետ: Ատիկա վեր է եւ դուրս
մեր անձնական գլխացումներէն եւ տրամադրութիւններէն: Մենք հար-
կադրուած ենք տարերայնօրէն ոչնչացնել մեր նամբու վրայէն այն
ամէնը, ինչ որ արգելի կը հանդիսանայ մեր ազգային սրբազան ի-
տէալներուն: Եւ յետոյ դուք միշտ ուսններուն հետ էք, դուք անոնց
յառաջապահն էք, իսկ ուսնները մեր յիշարհիմ քննամիներն են: Պատ-
մական քննամիները»:

(Տես՝ «Հայաստանի Հանր. Մագումն ու Ջարգացումը», Ա. Սատիսեան, էջ 60):

Գրականագէտ Հեքտոր Ռշտունիի վկայութիւնը. —

«Հայաստանում կատարուող այս իրադարձութիւնները (ջորդ) փոթորում
էին առաջադէմ գաղափարներով տարուած աշակերտների սրտերը, համախմբում հայ-
րենիքի ազատութեան գաղափարի շուրջը: Հայրենակարօտ այդ սերունդը մերթ
խանդավառում էր մեր անցեալի հերոսական դրուագներով, մերթ տառապում
հայրենիքի ողբերգութեամբ»:

«1914 թուականի պատերազմի հէնց առաջին ամիսներին թրքական կառավա-
րութիւնը Գայգերական Գերմանիոյ թելադրանքով ընդունեց մի ծրագիր, որով
նախատեսուած էր, յարմար առիթից օգտուելով իրագործել տարիների մտադրու-
թիւնը՝ կոտորել, բնաջնջել Արեւմտեան Հայաստանի ամբողջ հայ բնակչութիւնը»:

(Տես՝ «Դ. Վարուժան», 1961, Երեւան):

Անդրադառնալով Պերլինի 61րդ յօդուածով կատարուելիք բարեկարգութիւն-
ներուն, «Հնչակ» Բ. տարի, թիւ 4, կը գրէ. «Ոչ միայն չի պաշտպանել 61րդ
յօդուածը եւ պահանջել Եւրոպայից նրա գործադրութիւնը, այլ նա միշտ յայտնել
է, որ այդ յօդուածը, բացի մուք ու երկմտի բառախաղութիւնից ուրիշ ոչինչ չի
ներկայացնում եւ որ ոչինչ միտք չունի դիմել Եւրոպային, պահանջելով այդ յօդ-
ուածի գործադրութիւնը, այլ թէ ընդհակառակը, հայերը պիտի մէկ անգամից ընդ
միշտ թողնեն այդ սխալ եւ հայ ժողովրդի շահերի հակառակ ընթացքը եւ իրենց
բոլոր յոյսը դնեն սեփական հայկական ուժի վրայ՝ գործադրելով դրան յեղափո-
խական ապստամբական շարժումներով, որոնց նպատակը շատ աւելի ընդարձակ ու
մեծ է 61րդ յօդուածի իմաստից»:

Սակա՛յն... Լէօն կ'ամբաստանէ որ «Հնչակ»ը հետեւողական շմանց այդ
հարցին ճիշդ մեկնարանման մէջ, առանց մասնաւոր փաստեր բերելու:

«Հնչակ»ը ծաղրի կ'ենթարկէր Անգլիոյ կամ Գերմանիոյ յղուած դիմումնա-
գիրները, երբ կը գրէր. «... Ամբողջ 8-9 տարի Եւրոպայի հայերը այդպիսի
յիշատագիրներով քարկոծեցին Եւրոպական պետութիւններին, որոնք իրենց կողմից
անգլիական պաղտութեամբ տալով սովորական պաշտօնական երկդիմի պատասխան,
ամենահանգիստ կերպով հաւաքում էին այդ թղթի բառերը եւ չպրտում իրենց
զամբիւղները փոսելու համար»:

Ապա «Հնչակ»ը կը գրէ, թէ տարին քանի մը դիմումագիր ներկայացնելը
դժուար չէ, ոչ մեկան եւ ոչ թուղթ կը պակսի:

«Ամբողջ տասը տարուան փորձը մեզի ցոյց տուաւ, կը գրէ
«Հնչակ»ը, որ այդպիսի յիշատագիրները նշանակութենէ զուրկ է,
քանի անհետեւանք կը մնայ: «Եւրոպական այս կամ այն պետութեան

շահն ինքն է քելադրում իր անելիքը հայ ժողովրդի վերաբերմամբ
եւ ոչ մի յիշատագիր նրա ուշադրութիւնը չի գրաւել, եթէ շահերի
հմայքը չյափշտակէր նրան» (Ընդգ. Հ. Գ.):

Անդրադառնալով կրկին «Հնչակ»ի վերոյիշեալ տողերուն, Լէօն
կը գրէ. — «Այսպիսի առողջ եւ իսկապէս օգտաւէտ դատողութիւն-
ները «Հնչակ»ը շատ է հրապարակ բերել մեր բնութեան երկրակայ
ըրջանում: Այսպէս, նա երկար ու բարակ բացատրել է թէ ի՞նչ է եւ-
րոպական պետութիւնների կոլոնիալ (գաղութային) քաղաքականու-
թիւնը, եւ նոյնիսկ մի երկրի մէջ տնտեսական բարեկարգութիւններ
մտցնող օտար կապիտալը ստրկութիւն է բերում այդ երկրի բնիկ ժո-
ղովրդին, եւայլն, եւայլն: Իբրեւ դրական երեւոյթ, այդ սկզբունք-
ները հայ իրականութեան մէջ շատ գնահատելի տնտեսագիտական եւ
քաղաքագիտական երախայրիքներ էին»:

(Տես՝ «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւ-
նը», Լէօ, Ա. հատոր, 1934, Փարիզ, էջ 161-162):

Հայ եկեղեցւոյ կալուածները երբ գրաւուեցան...

Յեղափոխական կուս. թուրքիները բոլորովին հրահրեցին զգացումները, ու
ամէն կողմ դիմադրութեան ոգին կազմակերպուեցաւ զմայլելի կարգապահութեամբ:
(1903) Հոկտ. 5ին Յարական սատիկանութիւնը մտաւ Աղբաւանի շրջան, բայց ամ-
բողջ քաղաքը դտաւ ամայի, բոլոր վաճառատուները փակուած էին, չկրցան նոյն-
իսկ զանկ կառք մը...:

Շարժումներ տեղի ունեցան նաեւ Երեւանի, ինչպէս նաեւ Ախալքալաքի, Կար-
սի, Գանձակի, Թիֆլիսի մէջ...:

«Պաքուի մէջ զիմադրութիւնը սոսկալի եղաւ. սատիկանները հարկադրուեցան
թղանօթ բերել եկեղեցւոյ դէմ, բայց սատիկա աւելի արծարծեց ամբոխին ցասումը:
Քանի մը օրեր տեւեց ընդհարումը եւ պատճառեց 11 մեռելայ և 65 վիրաւոր:

«Շուշիի, Նոր Նախիջևանի, Մեծ Ղարաբաղի սայի և բոլոր գիւղերուն մէջ
պարզուեցան նոյն տեսարանները:

«Ընդդիմութեան կոմիտէ»ն որ կազմուած էր յեղափոխական զործիչներէ,
գործանալի արթնութեամբ վարեց զործը մինչեւ ցվերջը»:

Հոկտ. 14ին իշխան Կալիցին, Երբ Երեկոյեան պտոյտ մը կ'ընէր կառքով,
քաղաքէն դուրս գրօսալայրի մը մէջ երեք յեղափոխականներ (Հնչակեան՝ Շանթ,
Փայլակ, Կայծակ) դաշոյնով վիրաւորեցին զինք:

(Տես՝ «Երիմեան Հայրիկ», Թ. Եպիս. Գուլագճեան, Փարիզ, 1925):

Երիմեան Հայրիկի նամակէն՝ Նուպար Փաշային. հատուած մը. —

«... Այսպէս ի զործ դրաւ Բարձր Դուռն իւր գաղտնի նպատակը. այնչափ
խղճեց ու ճնշեց հայու կեանքն ու ոգին, մինչեւ նա ստիպուեցաւ թողուլ իւր սի-
րելի բնակավայրը՝ որ իւր պապերուն թողած արդար ժառանգութիւնն էր, ու զիմէլ
օտարութեան»:

**

«Անդրանիկ Շապին Գարահիսարի մէջ Հնչակեան ուխտը կատարելէ ետք կը
բանտարկուի, Հնչակեաններ զինք կ'աղատեն, Պոլիս կ'երթայ, հոն կուս. որոշու-
մով կը սպաննէ թուրք սատիկան մը: Ապա կ'անցնի Մլոյ և Սասնոյ շրջանը: Ապա
կը մղէ Գէորդ Չաւուշի հետ Առաքելոց կոխը»:

(Տես՝ «Ազգ. Հերոս Զօր. Անդրանիկ եւ իր Պատերազմները», Գառնիկ Կա-
րինեան, 1953, Փարիզ):

«1907ին Գաշնակցութիւնը կը համերաշխի Իթթիհատի հետ, եւ 1902ին անկա-
րելի կարելի կ'ընէ 1907ին՝ հրատարակելով Պերլինի 61րդ յօդուածէն, որուն գոր-
ծադրութիւնը յեղափոխական ուղիով ձեռք բերելու նպատակով կազմուած էր: Եւ
իր պաշտօնաթերթը այն ատեն յայտարարեց, թէ՛ «Պերլինի 61րդ եւ 23րդ յօդուած-
ները այլեւս կորսնցնում են իրենց գոյութեան իրաւունքը... դառնում են Օսման-
եան պետութեան ներքին խնդիրներ» («Դրօշակ», 1909, թիւ 4): Եւ այս ազգային
պահանջին ուրացումը տեղի կ'ունենար ի զին քանի մը Երեսփոխանական Աթոռներու»:
(Տես՝ «Հայաստանի Անկախութեան Առիթով», Մ. Սերրուհան, Գահիրէ, 1950):

«Հին կամ Նոր Թուրքիա՝ մէկ քաղաքականութիւն ունի հայոց հանդէպ.—
Բնաջնջել՝ խախտելու համար անոր իրաւապահանջումը»:
(Տես՝ «Հայաժապանի Յուշեր», Ա. Կէնճեան, 1964, Պէյրութ):

«... Այս կաշկանդումները ամենից առաջ իրենց վրայ էին զդուժ մտքի մը-
չակները՝ զրոյնները, հրապարակախօսները: Առաջին գրաքննիչը ինչը՝ զրոյն էր:
Նա դիտէր, թէ ինչը հնարաւոր է սպազրութեան յանձնել, ինչից պիտի զուշանալ,
հետեւաբար նախ ինչն էր անդամատուժ, աղճատում իր զբաժը, հանում նրա մի-
ջից ամենակականը՝ հասարակական ջիղը, նիւթը դարձնելով թոյլ, կրաւորական
մի բան»:
«Արեւմտահայ Գրողների Նամակամի», Գ. Ազնաւուրեան, Գ. Ս. Ստեփան-
եանի յատարանը, 1972, Երեւան, Գիրք Գ. պրակ):

«... Հիբիթ Պայուրը կուրս կերպով նենդափոխելով պատմական իրակա-
նութիւնը, ամբողջ աշխարհին յայտնի Հայկական մեծ եղեռնը կ'անուանէ «Հայկ-
րու Ապստամբութեան ձեւ մը»:

«Հայկական ջարդերը, այնքան ալ լայն չափերով չեն կատարուած»:
(Տես՝ «Թիւրք Իմֆիլապի Թարիհի», Ե. Հիբիթ Պայուր, 1957, Անկարա):

«Թուրքերը կը շարունակէին իրենց զազանային հայաժանջներն ու կոտորած-
ները, մանաւանդ Հայաստանի մէջ, ուր 1895-1896ին, 300 հազար հայեր կոտորուե-
ցան: Համիտի անկումէն ետք, կարծուեցաւ թէ Երիտ. Թուրքերը բարձրում մը
պիտի մտցնեն Երկրի վարչութեան մէջ, բայց չուտով յուսախար եղան»:
(Տես՝ «Քննադատութիւն», Հ. Ամիրեան, Գահիրէ, 1953, էջ 159):

«... Յետոյ երախան պինդ մը զրկած, անգամ մըն ալ բարձրացուց իր մե-
ղուշ ըրերը, վերջին անգամուան համար աչքերը պտտցուց հետապահին վրայ,
հորիզոնին մշուշապատ լուսներուն կապոյտը ծծե՛ց վերջին անգամ»:

«Սասուն, Շէնիք, քաղցր հայրենիք...»:
Այս եղաւ իր վերջին հառաչանքը:
«Ոտքերը գատուեցան քարաժայռէն ու Շաքէ մէկ ստուամով նետուեցաւ ան-
զունդին մէջ...»:
(Տես՝ «Յերտուգ Մատուց», Սմբատ Բիրատ, Գ. Հատոր, 1935, Աղեքսանդրիա):

Ժիրայր կախաղանի առջեւ.—

«Տէր Հայր, ազդիս դաւակներուն ըսէք, ինձի համար թող
չտրամին միայն. աներկիւղ եւ առանց քաշուելու, սրբազան գործին
յառաջընթացութեանը թող աշխատին, ես ազգին եւ հայրենիքին հան-
դէպ ունեցած պարտքերս կատարեցի, խիղճս անհանդիստ ընելիք ա-
նիրաւութիւններէն հեռու պահելով, ազգին սիրտը ազատութեան,
Եղբայրութեան եւ հաւասարութեան սերմերը ցանցելի, ուչ կամ կա-
նուխ պտուղը պիտի հասուննայ»:

(Տես՝ «Ֆետայի Ժիրայր, Անճուրաց Յեղափոխականը», Յ.
Տէմիրճեան, Բ. սպազրութիւն, Պէյրութ, 1939):

«Մի՛... հրամայեց մահէն չվախցող հսկան, ու շարունակեց.
«Ի՞նչ կարող էք իմ վրիս անցնելու մահը, այդ բանը ընելու քաջու-
թիւնը ունիմ ես», ըսաւ ու ցատկեց աթոռին վրայ, բոնեց օդակը, եւ
անոր մէջէն վերջին անգամ մըն ալ նայեցաւ ամբիսին, ժպիտներ
զրկելով անոնց ու մօտեցուց իր գլխին: Ոստում մը եւ կից մը աթո-
ռին... վերջացած էր ամէն բան...»:

(Տես՝ «Խորհրդաւոր Յեղափոխականը, Անմահն Ժիրայր», Ե.
Սիրվարդ, Փարիզ, 1953, էջ 101):

«Ես եւ իմ ընկերներս, ըսեմ ողջ հայութիւնը, Թուրքիոյ մէջ
ապրող ժողովուրդներու բարօրութեան բաղձանքէն զատ ուրիշ բաղ-
ձանք չունեցանք: Արդարութեան եւ ազատութեան համար կոտորու-
նները կախաղաններէն չեն վախնար, թող վախնան անոնք որ անմեղ-
ները, ժողովրդասէրները կախաղաններով կը լուսնեն: Թուրքիան կը
խրուի անելի մէջ ձեր ընթացքով եւ ո՛չ թէ հայ ժողովուրդին...», կը
զոչէ Մուրատ:

(Տես՝ «Մեծն Մուրատ», (Համբարձում Պոյանեան), Ե. Սիր-
վարդ, 1955, Փրափիտենս, էջ 133):

... Ատեմախօսութիւն՝ Պալսոյ Կետիկ Փաշա քաղը գումար-
ուած, 23 Սեպտ. 1908ի Սահմանադրութեան հռչակման տարին.—

«Հնչակեան Կուս. ը որ իրեն նպատակ է զբաժ պաշտպան հանդիսանալ, ամէն
կերպ եւ ամէն դնով, աշխատող ու արդիւնաբերող ժողովուրդի շահերուն, ընդդէմ
ամէն կարգի շահագործողներու, որպէսզի ժողովուրդը ո՛չ թէ խօսքով այլ իրապէս
տիրանայ քաղաքական ու տնտեսական ազատութեան»:

(Տես՝ «Ազատութիւն Բաղաճական եւ Տնտեսական», Հ. Արամեանց, Մ. Տ.
Շուտ, Կ. Պոլիս, 1908, էջ 22-23):

Դարձեալ Լէռնի քեզերուն մասին:

Լէօ կը գրէ.—

«Միանգամայն անտես էր արուած Գրտական Հարցը, որ կեանքի ու մահուան
հարց էր հայերի համար դարերից ի վեր: Հայ յեղափոխական նացիոնալիզմն էր,
որ իր արհամարհանքը դէպի այս հարցը տարածում էր մինչեւ այնտեղ, որ պա-
տերազմ էր յայտարարում քիւրտ ժողովուրդին»:
(Տես՝ «Թրք. Յեղ. Գաղափարա-
բանութիւնը», 1934, Փարիզ, էջ 65):

Ինչպէ՛ս... պիտի գարմանայ ընթերցողը, Երբ Լէռնի գրքին մէջ նախապէս
«Հնչակ»էն արտատպուած հետեւեալ տողերը պիտի կարդայ.—

«Բոլոր ցաւը նրանում է, որ մեր հայրենասէրները, ազգասէրները իրենց
հայրենասիրութեամբ, իրենց ազգասիրութեամբ հասել են այն աստիճանի կուրու-
թեան, որ առ հասարակ ատում են տանկիմ, որովհետեւ տանկի է, ատում են քրտիմ,
որովհետեւ նա քիւրտ է, ատում են ռուսիմ, որովհետեւ նա ռուս է: Նրանք չեն նա-
յում տանկի, քիւրտի, ռուսի վրայ իրքեւ ՄԱՐԴՈՒՄ վրայ»:

«... Մի՞թէ այս բոպէիս մեմ ակամտես չեմ տանկի ժողովուրդի քաղաքա-
կան կատարեալ ստրկութեան, որ հայոց քաղաքական դրութիւնից ո՛չ մի կերպ
տարբեր չէ:

«... Աշխատանքը ժողովուրդները միմեանց մոլեռանգարաբար ատել չզիտեն: Նրանք գաւակներ եւ մշակողներ են միեւնոյն հողի, կամ ընկերներ միեւնոյն հողի եւ ցրանք... կեղեքուում, հարստահարուում ու ճնշուում են միեւնոյն ձեռքով ու միջոցներով»:

Այս տողերը լատիւնով փաստն են գրուած 1891ի «Հնչակ»ի մէջ, թէ Քիւրտերու նկատմամբ Հնչակեան կուս. ռ. միայն ժխտական դերք չունէր, այլ ինչպէս նախապէս ալ անդրադարձանք Սեպուհ լեւոն ժողովի Ա. Աշքըպաշեանի եւ իր ընկերներուն ելոյթներուն, անոնք միշտ ալ շեշտած են միասնական պայքարով դուրս գալու անհրաժեշտութիւնը քիւրտերու հետ, բռնակալութեան լուծին դէմ, հետեւաբար կը շողանայ Արտի մեզի վերադարձ նացիոնալիզմն ու շովինիզմը...:

Բայց այս տոթիւ խօսքը տանք Հնչակեան դործիչ Փիլիկի (Փիլիպոս Քէչեան), որ 1980ին Տէրսիմի Ազճէ Տաղը զրկուած է հայ եւ քիւրտ համադրածակցութիւն մը ստեղծելու համար Խրիմեան Հայրեկի թելադրութեամբ: Ան կը մեկնի նաեւ Միջազգային շրջանները նոյն ատարեկութեամբ եւ կը վերադառնայ Ս տարի աշխատանք կատարելէ ետք:

1894ին դարձեալ, այս անգամ Հնչակեան կուս. կողմէ կը զրկուի լիազօրուած՝ նոյն նպատակով դէպի գաւառները: Ան կը շրջի տարիներ եւ 1900ին Պոլիս կը վերադառնայ, կը մասնակցի Պոլսոյ Հնչակեան Վարիչ Մարմնի գաղտնի մէկ ժողովին եւ կը զեկուցէ:

Ապա կը պատմէ, թէ ինչպէս 1880ի Մարտին Տէրսիմի ցեղապետներուն հետ ազատագրական պայքարի մասին խօսած է: 36 քիւրտ մեծամեծները իրեն կ'ըսեն. «Հայե՛ր, կ'ուզէ՞ք գերութեան գաւառի, կ'ուզէ՞ք յեղափոխութեան դիմել, մեզ տրամադրեցէ՛ք մեր կարելի միջոցները՝ դրամ, զէնք, մեք գիտնոր բլլանք եւ մեք լեռները, դուք քաղաքները մեք մեք եւ քաղաքները մեք մեք»:

Ընկեր Փիլիկ, կը մէջընդմիջ Քիւրտ Սուլթանի նշանաւոր մէկ խօսքը. — «Հայե՛ր, մեզի գէնք տուէ՛ք ու մէկ գէնքի փոխարէն մեք մէկ գիւղ կրնանք մուսնել, մեզի դրամ տուէ՛ք ու մեք մէկ ոսկիի փոխարէն մէկ թուրքի դրոշակ խլենք»:

«Տէրսիմէն Ազճէ Տաղ անցած էինք. հոն եւս նոյն զգացումն ու նոյն ընդունելութիւնը»:

«Ազճէ Տաղ, որ 150 հազարնոց թրքական բանակ մը զրազեցուցած էր երկարատեան, այդ լեռնորդները մեզմէ շատ աղէկ ըմբռնած էին հայ եւ քիւրտ դործակցութեան մը օգուտները ու մեզմէ առաջ անոնք է որ պատրաստակամութիւն կը յայտնէին՝ ցոյց տալով տիրող յայտնութեան գաղտնիքները, թէ թրքական բռնակալութիւնը կը հիմնուէր հպատակ տարրերու հակակրօթիւններուն վրայ եւ «Բաթմէ՛ք որ տիրես»ի քաղաքականութեամբ էր որ միայն փոքրամասնութիւն մը կողմէ թուրք ցեղը ընդարձակ երկրի մը բազմաթիւ ցեղերը զերած եւ յաջողած էր պահել իր մականին տակ»:

«1895-6ի շրջանին, կը գրէ ընկեր Փիլիկ, Ազճէ Տաղի քիւրտերը, չընդառաջեցին թուրքերուն եւ չօգնեցին Ձէյթունի դէմ կոտոր Սուլթանի բանակներուն»:

Փիլիկ կը շարունակէ. «Քիւրտ Հիւսէյն հայ ազգային պատմութիւնը եւ Աւետարանը գոց դիտէր»:

«Քիւրտ Հիւսէյն խոհական եւ խիստ հեռատես էր, զարմացայ երբ ան յայտնեց, թէ Ձէյթուն, Ազճէ-Տաղ, Տէրսիմ եւ Տալուրիկ պէտք է շարժուին միասնաբար, իսկ Ռշտունիները պէտք է մնային ինքնապաշտպանութեան մէջ, զործակցելով քաղաքներ հայութեան: Հստ անոր, բախումի մը պարագային թուրքերու հետ, հայերը ինքզինքնին Մամուլամի (Մամուլանեան), Բարբազմընբու (Բարբազուանի), Ազուլազմընբու (Արշակունի) եւ այլ համացեղ տարրերու շնորհիւ պիտի կարենային պաշտպանել»:

«... 1895ի ընդհանուր ջարդերուն Մալաթիա ունեցաւ իր պատուաւոր հերոսամարտը, եւ ազատագրութիւնը, շնորհիւ իր ունեցած գիտակցութեան, որ էր միութիւն՝ առանց դաւանանքի եւ դադարի խտրութեան, սիրուելով Մեկտիւնէն»:

չընդառաջ կարմիր ազանդուոր քիւրտ զանգուածէն, վերոյիշեալ քաղաքականութեամբ՝ Մեկտիւնէն չէր քաջացնելով Ազճէ-Տաղի եւ Դիւլիանիներու ցեղերը, իր դէմ ունեցաւ միայն թուրքին հետ Միւսնի Քիւրտը, որոնք թէպէտ բազմաթիւ, բայց անկարող եղան փչրելու Հայոց Ինքնապաշտպանութիւնը, կոտորի երկար օրերու ընթացքին»:

(Տես՝ Փիլիկի կեանքի մասին մանրամասն «Ուխտաւորները», 1963, Պէյրութ, Առաքել Քէչեանի):

Փիլիկէն յետոյ կամ անոր շրջանին հայ եւ քիւրտ մերձեցման փորձերը շարունակուեցան: Քեռի, Շիւմանեան, Հրայր, Ժիրայր, Ա. Աշքըպաշեան, Դանիէլ Չաւուշ... Աւետեան կը պնդէ որ Գիւրդ Չաւուշ բաւական յաջողութեան հատաստիքներ տուաւ այդ ուղղութեամբ»:

Քիւրտը, այսօր Հայաստանի թէ սփիւռքի մէջ նոր նոր կ'անդրադառնայ թէ եւ, բայց կ'ընդունի, թէ ամենէն խոշոր սխալը որ դործած են իրենց հայրերը՝ ատիկա հայ յեղափոխութեան հետ չկարենալ դաշնակցելն է եղած՝ Սուլթանական եւ Իթթիհատեան ուժերին ներքին դէմ կազմակերպուած պայքար տանելու համար»:

Այս կը վարմանայ որ 1888-90ի թիւերուն մէջ «Հնչակ»ը տեսական, թէորիկ հարցեր շատ մշակած է, իսկ Գ. տարին գործնական աշխատանքի լծուած է: «Հնչակ»ը տպած է Արեւմտահայաստանէն զրկուած թղթակցութիւններ, որոնց մէջ նկարագրուած էին իրերի վերութիւնը, թուրք կառավարութեան խտրութիւնները, եւ այլն: «Նշանակում էր, որ տեսարան «Հնչակ»ը դառնում էր կեանքի քերթ, որ պիտի իրագործէր իր քեորիաները կեանքի մէջ»: (Ընդդ. Հ. Գ.):

«Այս կողմից շատ նշանաւոր է «Հնչակ»ի յաջողութիւնը: Նա գտնում է իր ծրագրի համակող շատ տարրեր, որոնց վրայ յենուելով՝ մի աննշան խմբակցութիւնից դառնում է Մի ԱՄԲՈՂՋ ՅԵՂԱՓՈՅԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ՈՐ ՄԻ ԿԱՐՃ ՄԻՋՈՑՈՒՄ ՄԵՄ ԱՆՈՒՆ Է ՀԱՆՈՒՄ»:

(Տես՝ Ա. Գ. «Թրք. Յեղ. Գաղափարաբանութիւնը», էջ 169):

Իսկ ինչո՞ւ... հարց կուտայ պատմաբանը. «Այս յաջողութիւնը հեշտ բացատրելի է: «Հնչակ»ը երեւան էր եկել, ինչպէս տեսանք, այնպիսի մի ժամանակ, երբ սկսել էին առաջ զալ Հայաստանն ազատող երիտասարդական Կազմակերպութիւններ, որոնց մէջ ամենից շատ տարածուած էր Արմենակառուցութիւնը, մի կազմակերպութիւն, որ աւելի խօսքի կազմակերպութիւն էր, գրեթէ միանգամայն կորած գործնական կեանքի համար: (Ընդդ. Հ. Գ.): Նրանից աւելի կենսունակ էր համարուում «Հնչակ»ի խմբակցութիւնը, որի երկու երազուտ (ինչո՞ւ. երազուտ — Հ. Գ.) անդամները, մեր վերոյիշեալ հաջող-ազա սոցիալիստ Ռուբին Խանապուր եւ Շմաւոն կեղծ անունով գործող Գարրիէլ Կաֆեանը՝ կարողանում են Հնչակեան կենտրոններ հիմնել Թիւրքիայում (Տրապիզոն եւ Կ. Պոլիս), իրենց կողմը քաշելով, մանաւանդ այս վերջին քաղաքում, Արմենակառուցութիւնը»:

«Ճիշտ է, Ապտիւլ Համիտը մի ճիւղ էր, մէկը պատմութեան մէջ հաղուս-գիւտ մարդախողող ճիւղերից: Բայց նրան առիթներ էին հարկաւոր... Եւ այդ առիթը մատակարարում էին հայ թեթեւաբան յեղափոխականները...»: (Ա. Գ., «Թրք. Յեղ. Գաղափարաբանութիւնը», էջ 175):

Հիմա հարց է դիտաւ, թէ Սուլթան Համիտը «ճիւղ էր եւ հազուադիւտ մարդախողող» որակելէ ետք, ի՞նչպէս կրնայ Այս ծաղրանքի առարկայ դարձնել յե-

դափնոխակներն՝ որոնք իրեն նման Հանգիստ կեանք չունէին Թիֆլիսի մէջ... այլ անձամբ կ'առաջնորդէին ցոյցերը այդ միւսադին դէմ, որուն 1876ին արդէն, մաս առ մաս Հայաստանը դատարկելու քաղաքականութիւնը ծանրածանօթ է աշխարհի բոլոր ժողովուրդներուն պատմութեան եւ որուն «կարմիր» մակդիրը Փրանսացիներ տուած են... Սուլթանը հայոց կողմէ կազմակերպուած ցոյցի՞ պիտի սպասէր առիթ գտնելու համար հայերը ջարդելու, թէ արդէն ջարդերն առիթն էին որպէսզի յեղափոխութիւնը պաշտպանէր բոլորին կողմէ լուծուած հայ աշխատաւորն ու գիւղացին:

«Հնչակ» կը գրէ. —

«Բոլոր ցարը նրանումն է, որ մեր հայրենասէրները, ազգասէրները իրենց հայրենասիրութեամբ, իրենց ազգասիրութեամբ հասել են այն աստիճանի կուրուքեան, որ առ հասարակ ատում են տանկին, որովհետեւ նա տանիկ է, ատում են ֆրտին, որովհետեւ նա ֆիւրտ է, ատում են ռուսին, որովհետեւ նա ռուս է. նրանք չեն նախում տանկի, ֆիւրտի, ռուսի վրայ իբրեւ մարդու վրայ, իբրեւ տանկի, ֆիւրտի, ռուսի վրայ: Բայց ժամանակն է ուշիմ ու քանիմաց կերպով նայելու իրականութեան վրայ: Երբեք ԶՊԻՏԻ ՇՓՈԹԵԼ ՏԱՃԻԿ ԲՈՆԱԿԱԿԱԿԱՆԱՎԱՐՈՒԹԻՒԻՆԸ ՏԱՃԻԿ ԹՇՈՒԱՌ ՈՒ ՍՏՐՈՒԿ ԱՇԽԱՏԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԻԻ ՀԵՏ»:

... «Փաստերը մեր ձեռքի տակ են: Աշխատաւոր ժողովուրդները միմեանց մոլեռանդաբար ատել չգիտեն: Նրանք գաւակներ եւ մշակողներ են միեւնոյն հողի, կամ ընկերներ միեւնոյն հողի, կամ ընկերներ միեւնոյն գործարանում եւ նրանք կեղեքում, հարստահարում ու մնչում են միեւնոյն ձեռքով ու միջոցներով»:

Առանց մեկնաբանութեան:

Լէօ կը շարունակէ. —

«Մուրատն իր հայրուկային խմբով (հինգ հոգուց) յարձակումներ է դործել քրտերի վրայ եւ չէր քաշուել նոյն իսկ գազանութիւններ անելուց: Բնականաբար քրտերն էլ աւելի կատաղութեամբ են վարուած իրենց ճորտ հայերի հետ...»: (Ընդգծ. — Հ. Գ.):

Այս տողերը գրողը Թալաթ մը չէ. այս տողերուն հեղինակը պատմաբան Լէօն է... Ինչո՞ւ չէ, Մուրատը Պոլսոյ բժշկական համալսարանի ուսանող — Հնչակեան գործիչը — «գազանութիւն» կը ցուցաբերէ... միայն «5 հոգինոց խումբ» ունի, 20 հազարնոց թուրք եւ քիւրտ կռուողներուն դէմ, եւ բնականաբար... քրտերն էլ աւելի կատաղութեամբ են վարուած... բնականաբար հայ պատմաբանն էլ ուրախանում է...:

Բնակա՞ն է... 1893-94ին հինգ հոգին միայն շարաթներ կը դիմադրեն... Սասնոյ մէջ Սասունցի Գաւիթը յիշեցնող քաջութեամբ...: Այս բոլորը, որպէսզի հրահանգի կամ թելադրանքի վրայ «Թրքահայ Յեղ. Գաղափարաբանութիւնը» գրող Լէօն փաստե՞ր... փաստե՞ր... փաստե՞ր կարենայ հրատարակ դնել, ըսելու համար, որ Սասնոյ ապստամբութիւնը... «5 հոգինոց» յեղափոխական անփորձ Հնչակեաններու գործն էր... որոնք «գազաններ» էին, որոնք բնականաբար ջարդուեցան, հետեւաբար Սասնոյ ապստամբութեան յանցանքով ալ քիւրտերը եւ թուրքերը ջարդեցին մեզ եւ... իրաւունք ունէին...:

Բայց Լէօն մեռաւ... իրեն հետ մեռաւ հայ ազատագրական պայքարը հեղեղողներու տեսակէտը, որովհետեւ մեռաւ տոկմաթիզմը... որովհետեւ արդարութեան հետեւորդ ուրիշ պատմաբաններ տարբեր ձեւով եզրակացութիւններ հանեցին եւ կը հանեն Սասնոյ հերոսական ապստամբութեան մասին:

«Սուլթանական բռնակալութեան դէմ ուղղուած 1894 թուականի Սասունցիները ելոյթը ինքնապաշտպանական բնույթի ժողովրդական ապստամբութիւն էր, որը հետեւանք էր այն դժոխային պայմաններին, որոնցում ապրում էին Սասունի հայ գիւղացիները»:

(Տես՝ Կենազ Թառոյեանի «Ժողովրդական Շարժումները Սասունում», Հայաստանի Հրատարակչ. 1966, Երևան, էջ 102-105, բոլոր ընդգծ. մերն են — Հ. Գ.):

Լենինի խօսքերով «Գիւղացիութեան՝ որպէս բնակչութեան ամենից ատելի թուաշատ եւ ամենից աւելի «ծանրաշարժ» խառն շերտումն է այդ շարժումների մէջ, երբ պայքարը մղուած է թէ՛ ընդհանրապէս քաղաքական ազատութեան եւ թէ՛ մասնաւորապէս ազգութեան իրաւունքների համար»: (Լենին, «Յեղեղ», հատոր 20, էջ 499):

1877ին Օսմանեան Խորհրդարանի Յոյն երեսփոխան Սալիտա Էֆենտին պիտի ընդգէր «Մի»՞ք արդարութիւն է, որ հայը... այսպէս շարժարուի ու կեղեքուի...»:

(Տես՝ «Մասիս», 1897, էջ 1885, Պոլիս):

Իսկ Կենազ Թառոյեան կ'ըզրակացնէ. «Հայերի վիճակը գնալով աւելի է ծանրանում: Սուլթանական կառավարութիւնը ո՛չ միայն չի լուսնում նրանց ճայնը, այլ աւելի է սաստկացնում իր հայաջինջ փառականութիւնը»:

Լէօ կը գրէ. «Եթէ «Հնչակ»ի ղեկավարները մկրտուած լինէին Պիտանովեան աւագանի մէջ... եթէ նրանք լինէին իսկական մարքսիստ սոցիալիստներ, բոլորովին այլ կը լինէր Թիւրքաց Հայաստանի վիճակը»: (Տես, էջ 152):

Լէօ մեզ կը մեղադրէ, թէ գիւղացիական հարցը, այսինքն զուտ տնտեսական հարց մը քաղաքական հարցի վերածե՞ր ենք:

Ընդ. Ա. Կէնճեան կը գրէ. «Լէօ կը մոռնայ կամ կ'անգիտանայ սակայն, թէ «Պիտանովեան աւագանի մէջ» մկրտուածներու ծրագիրն ալ՝ գիւղացիական հարցը փառախակամի վերածած ըլլալով կը գատորոշուի արդէն եւ կ'ըլլայ հակառակորդ դպրոց՝ ո՛չ թէ միայն ընդդէմ նարոնիկութեան այլ նաեւ ընդդէմ ռուս էփոնո-ՄիՍՏԵՐՈՒՆ»:

Լէօ Հնչակեանութիւնը կը դատապարտէ, որովհետեւ իր ծրագրին մէջ նշանակած է ՄՕՏԱԿԱՅ եւ ՀԵՌԱՒՈՐ ՆՊԱՏԱԿ: Լէօ կ'անգիտանայ սակայն, թէ «Պիտանովեան աւագանի» մկրտեալներու ծրագիրն ալ ունի նոյն այդ բաժանումը, որով, ըստ Լէօյի «Աշխատանքի Ազատագրման» Պիտանովեան խմբակն ալ կ'ըլլայ «ազգայնամուլ», «երկերեսանի ճանուս»:

Լէօն երբ կը պնդէ գիւղացիական հարցը զուտ տնտեսական կրատարական դրութեան մէջ պահուելու անհրաժեշտութեան վրայ՝ էֆենտիստներու կողմնակից կը դառնայ ինքնաբերաբար եւ հետեւաբար կը դառնայ անոնց դէմ միջուկ Լուր պայքարող Լենինի հակառակորդ: Լենինի «Կապիտալիզմի Զարգացումն ի Ռուսիա» 1899ին երկին մէջ գրուած է «Մ. Գ. Կուսակցութիւնը՝ շարունակելով հանդերձ իր պայքարը ընդդէմ մանր սեփականատիրութեան, ընդդէմ մանր շահագործումի, պարտի եւ աշակցի գիւղացիութեան — այն չափով որ գիւղացի դասակարգը կառայ ըլլայ յեղափոխականորէն կռուի ընդհանրապէս ընդդէմ աւստրապետական եւ նորտատիրական վերջամասնութեան, եւ մասնաւորապէս ընդդէմ բոնապետութեան (բացարձակապետութեան)»:

Կէնճեան կը գրէ. —

«Մ. Գ. Հնչ. Կուս. ծրագրով՝ ո՛չ թէ ընկերվարութիւնը մեղքեցնուած է ծառայեցուցած է թրքահայ գիւղացիական կամ ըսենք «Հայոց Հարց»ին, այլ ընդհակառակը՝ Ազգային Հարցն է որ ծառայեցուած է ընկերվարութեան, պատմութեան մատերիալիստական լինելութեան պրոցեսին եւ օրէնքներուն կրամայական պահանջին համաձայն»:

Վկայութիւններ Յարիզմի Բոճատիրութեան մասին .—

«Ներկայումս Ռուսաստանը գտնուում է պատմական մի շատ հետաքրքիր բնույթով, յեղափոխութեան նախընթաց օրումն ենք, թէ այս բոլոր շարժումները ինչպէս եւ ինչով կը վերջանան՝ այժմ ոչ ոք կարող է նախագուշել: Միայն մի բան շատ պարզ է.— այն՝ որ Ռուս միապետութեան օրերը հաշուած են: Յարը եւ իր պնակալէզ նախարարները գլուխները կորցրել են՝ չգիտեն ինչ միջոցի դիմել, որ այդ հիւանդ պետութիւնը կործանումից ազատեն»:

(«Երիտ. Հայաստան», օրկան Հնչակեան Կուս. թեան, Ա. տարի, Նոյմ. 14, 1903, Պոսթոն):

«Յարիզմի մտրակի տակ» ... Ռուսահայերը կոչուած են յեղափոխական կռիւ մղելու բռնակալ կարգերի դէմ, եւ արդէն նրանց դրութեան ըստ ինքնեան մահու գնով նրանց հարկադրում է, ինչպէս տեսանք այս ամառ, ընդգրկելու յեղափոխական գործը: Գլխաւոր հիմնաքարը յեղափոխութեան, բուն դրոշմը յեղ. զաղափարի եւ միակ ընդունակը յեղ. Կուս. ի լինելով ռուսահայ բանուոր դասակարգը, հէնց նոյն այդ դասակարգն է որ պէտք է կազմակերպել յեղ. կազմակերպութեան մէջ, արձանագրելով նրա կարմիր դրոշակի վրայ պրօլետարիատի ազադակը — «Կեցցէ՛ Սոցիալիզմ, Կեցցէ՛ Ռամկավարական Սահմանադրութիւն, Անկցի՛ Յարիզմ, Անկցի՛ Բռնապետութիւն»:

«... Միատեղ կռիւ զանազան ազգերի զաւակներին Ռուսաստանում»:

«... Ահա թէ ինչո՞ւ Ռուսաստանում հայերը, իրենց բանուոր դասակարգի հետ միասին, կոչուած են եւ պէտք ունին գործելու տեղական բոլոր ժողովրդներին Յեղ. տարրերի հետ եւ միահամուռ ընդհանուր ուժերով կործանելու հոգեւարքում գտնուող վիթխարի ցարիզմը, որն իր հիւս. բեւեռից խեղդում է ո՛չ միայն հայ ժողովրդի մէկ ամբողջ կէսին ռուսահային եւ նոյնքան զօրութեամբ ու թշնամութեամբ գործում է թուրքահայ Դատի յաջողութեան դէմ, իրրեւ անկից ու քաջալիք Սուլթանական զազանային քաղաքականութեան, որը դարձած է մի բաժինը, մի ստորագրեալ մասը բուն ռուսական քաղաքականութեան»:

(«Երիտ. Հայաստան», 1904, Յունուար 30, Պոսթոն):

«... Երբ մենք ասում ենք, թէ ամէն ընկերութեան, ամէն ազգի մէջ երկու որոշ դասակարգեր կան, որոնք շահերի ներհակութեամբ են գինուած իրարու դէմ, երբ պնդում ենք թէ հարուստ, կապիտալիստ հայը նոյն աչքով եւ շարժառիթներով կը վերաբերուի դէպի գործաւոր, անժառանգ հայը՝ ինչպէս որ նրանց եղբայրակից օտարները, երբ կրկնում ենք թէ ամէն բանից առաջ պրօլետարիատ հայը իր անդաւան եղբայրակիցը պիտի ճանաչի իր այլացեղ գործակից եղբայրները եւ նրանց հետ համագործակցութեան մէջ պիտի մտնի իր տնտեսական եւ քաղաքական դրութիւնը բարելաւելու, միամիտները կարծում են թէ այդպիսով մենք անժամանակակից հարցեր ենք զարթեցնում եւ հայ ժողովրդի մէկ մասին զրգուում ենք միւսի դէմ՝ ի վնաս Հայկական Դատին»:

(«Երիտ. Հայաստան», 1904, Սեպտ. 14, Պոսթոն):

«Եւ դո՛ւ, հայ աշխատաւոր, աչքի առաջ ունենալով յառաջադէմ ժողովրդներին կեանքը, լաւ ըմբռնիր, որ դու ինքդ քեզ համար գործած, զո իրական փրկութեան համար աշխատած կը լինես միայն այն ժամանակ, երբ կ'առաջնորդուիս միայն եւ միայն սոցիալիստական ուղեգծերով»:

(«Երիտ. Հայաստան», Սեպտ. 28, 1904, Պոսթոն):

«... Ամէն գիտակից անհատի նուիրական պարտականութիւնը եւ գործունէութեան ուղեգիծը պիտի լինի ուժ տալ սոցիալիստական զաղափարների տարածմանը եւ անցմանը, ուժեղացնել Սոց. Կուս. ներք, որպէսզի նրանք կարողանան նուաճել պետութիւնը, ապա այս երկրի վրայ իրականացնեն... Սոց. աշխարհի տիրապետութիւնը»: («Երիտ. Հայաստան», Հոկտ. 5, 1904):

Առանց մեկնաբանութեան:

**ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄՈՒԹԻՒՆԸ
ԻԹԹԻՂԱՏԻ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԹՐՋԱՆԻՆ**

(Բ. Մ Ա Ս)

Մ Ո Ւ Տ Ք

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

(1907-1914)

Ս. Համիտ Բ.ի տապալումը, 1908ի Սահմանադրութիւնը՝ Թուրքիայէն ներս մեծ փոփոխութիւն չբերաւ: Երկտ. Թուրքերը ազմուկով իշխանութիւնը ձեռք ձգեցին, բայց այն խոստումները՝ զորս որոշած էին գործադրել 1907ին՝ թուղթի վրայ մնաց: Անոնք՝ ինչպէս պիտի տեսնենք, մէկ լեզու, մէկ ժողովուրդ լողունդին փարած էին իշխանութեան հասնելէ առաջ եւ յետոյ: Հայ յեղափոխական մտքի մէկ թեւը տատանումներ արձանագրեց, նահանջեց նոյնիսկ իր կորովին մէջ եւ դործեց աններելի սխալ՝ վստահելով Իթթիհատի եւ անոր խոստումներուն: 1907-1914ի 7 տարիներու ընթացքին հայ եւ թուրք փոխադարձ կապերը շահագործուեցան առաւելագոյն չափով Իթթիհատի կողմէ՝ նախ իր դիրքը զօրացնելու, հայ քաղաքական միտքը օրօրելու եւ ապա հարուածը իջեցնելու համար 1,5 միլիոն հայութեան գլխուն եւ ամենէն ողբերգականը՝ Իթթիհատը հայը իր հողէն հեռացնելու ծրագիրը գործադրութեան դրաւ: Քիչեր՝ 1896էն ի վեր ճանչցած ըլլալով Իթթիհատը՝ զիրքորոշուեցան անոր դէմ, պայքարեցան... Ափսո՛ս սակայն, չկրցան զեղումի ուզողութեան հետեւորդ հոսանքը ժամանակէն առաջ լրջութեան ճամբուն բերել:

Բայց ի՞նչ էր դուրսէնը Միջազգային կեանքէն ներս այդ շրջանին: 6 Մեծերը կը շարունակէին իրենց սեփական նուաճողական ծրագիրներով առաջնորդուիլ: 1909ին արդէն իսկ Երկու Ճակատներ սկսած էին պատրաստուիլ նոր ահաւոր բախումի մը համար «աշխարհի նոր բաժանման մը» պարազային հարուստ հում նիւթի շուկաներ ապահովելու, նոր զաղութներ շահագործելու մտահոգութեամբ: Վերջին 150 տարիներուն Օսմանեան Կայսրութիւնը միշտ կը կորսնցնէր իր դիրքէն, ուժէն եւ կշիռէն՝ Միջազգային շուկաներու վրայ տուրք վճարելով, հող զիջելով:

Իթթիհատը կ'ուզէր վերականգնել Մեծն Թուրքիան՝ առանց նկատի առնելու որ մահուան դատապարտուած Հիւանդը չէր կարելի փրկել «Օսմանցի եմք» ղուլլով կամ փոքրամասնութիւնները «չարդիլու ծրագրով»: Անոնց համար Սուլթանը ատելի էր Օսմանեան Կայսրութիւնը տկարացնելուն եւ անոր շահերը չկարենալ պաշտպանելուն համար: Տարբեր հարց, թէ իրենք 1909-1917 պիտի կորսնցնէին Պալքանները, Արարական երկիրները եւ Ափրիկեան զաղութները՝ մօտ 1,5 միլիոն զո. զմ. հողամաս՝ Թուրքիան Գերմանիոյ կողքին պատերազմի մտցնելով...

Անգլիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի «ճակատ»ին կը հակադրուէր Գերմանիա՝ Աւստրո-Հունգարիոյ, Պուլկարիոյ, Թուրքիոյ, Իտալիոյ հետ: 1914 Յունուար 28/ Գերմանո-Ռուս եւ Թուրք փոխադարձ զիջումներով՝ կրկին հրապարակ կը դրուէր Հայկական Յ նահանգներու բարեկարգութեանց ծրագիրը, զոր Թուրքիա չուզէր ընդունել... երբ նոյն շրջանին ան Պալքանները վերջնականապէս կորստնցուցանած՝ կատարած վիճակի մէջ Գերմանիոյ հետ զաղտնի համաձայնութիւն մը կը կնքէր Արեւելեան կողմէ կարենալ չեղտացնելու համար «Հայերը» որոնց դէմ՝ 1909ի, 1910ի, 1911ի Ալանիի մէջ գաղտնարար որոշած էր «միջոցառումներու» դիմել:

Մինչեւ հիմա ալ հարց է, թէ ո՞վ մղեց Իթթիհատը որ Գերմանիոյ զիրկը նետուի... Միջազգային սիոնիզմին էր որ կ'ուզէր Կայսրութիւնը իջնել եւ Դաշնակիցներուն հող ու քարիւղ նուիրել... հրէական օճախի մը հաշտոյն... , թէ «խենթութիւնը» միայն էնվէր-Թալաաթներուն... Մեծն Թուրքիան Ռուսիոյ պարտութեամբ ապահովելու... :

Բայց տեսնե՞ք այն քաղաքական խաղերը որոնք դոյութիւն ունէին պատերազմի նախորեակին աշխարհի Մեծ պետութիւններուն միջեւ:

1908ի Սեպտեմբերին Ռուս-Աւստրիական զաղտնի խօսակցութիւններու իբր հետեւանք՝ Աւստրիա տէր կը դառնար Պոսնիա-Հերցեգովինի, իսկ այս վերջինը կը խոստանար ռուս. ուղղմաններուն նեղուցներէն ազատ անցքը ապահովելուն ուժ տալ... նոյնպիսի խոստում՝ Գերմանիան կուտար Ռուսիոյ: Իտալիան եւս կողմնակից էր Գերմանիոյ թեղին, փոխարէն՝ Ռուսիա դէմ պիտի չըլլար Լիպիոյ Իտալիոյ կողմէ զրաւուելուն... :

Բայց նեղուցներու հարցին ի նպաստ Ռուսիոյ կարգադրութիւնը աւելի շատ Անգլիային եւ Ֆրանսային կախեալ էր քան վերոյիշեալ միւս երկիրներէն:

1912-13ին Թուրքիա կը կորսնցնէր Պալքաններու իր հողերը:

Աշխարհի նոր բաժանման մը սակարկութիւնները սկսած էին, պատերազմի սեւ դիմազիծը կը նշմարուէր հորիզոնէն: Գերման յառաջացած ճարտարարուեստը պէտք ունէր ե՛ւ հում նիւթի նոր աղբիւրներուն ե՛ւ Ասիական ու Աֆրիկեան շուկաներուն՝ որոնք փակ էին իր առջեւ Անգլիոյ կողմէ: Գերման ճարտարարուեստը պէտք ունէր մանաւանդ Միջազգային քարիւղին, որուն բանալիները Անգլիոյ ձեռքը կը դնուէին սակայն:

Ռուսական Լորանովեան «Հայաստան առանց հայոյ» քաղաքականութեան յաջորդած էր «Հայերով դէպի Հրաւ» իջնելու նոր քաղաքականութիւն մը, որ անորոշ խոստումներ տալով հանդերձ, առնուազն Օսմանեան Բոնատիրութեան դէմ հայերը պաշտպանելու եւ անոնց հաշտոյն բարեկարգութիւնները (հողային, վարչական) իրականացնելու կը ձգտէր: Իրականութեան մէջ, Հայ քաղաքական միտքը համոզուեցաւ, թէ միմիայն Ռուս, ապա Դաշնակից յաղթանակ մը կրնար ազատութիւն եւ անկախութիւն բերել Հայ ժողովուրդին... :

Ռուսաստանը 1916ին կնքուած Անկլո-Ֆրանսական Սայքս-Քիչօ համաձայնութեան իրեն խոստացուած բաժինը պիտի ստանար եւ... Արեւելեան Նահանգներուն մէկ մասին եւ նեղուցներուն տէր պիտի դառնար ի վերջոյ, ըստ այդ դաշնագրէն բխող տրամադրութեանց:

1914 Յունուար 28ին, Իթթիհատի պարտադրուած Բարեկարգութեան Ծրագիրը Ռուսիոյ կողմէ նոր աշխուժութիւն մը պիտի բերէր Հայ կեանքէն ներս, աւելցնելով նոյն ասեռ Պոսնիա Հերցեգովինը, Պուլկարիան, Լիպիան, Պալքանեան երկրամասը կորսնցուցած Թուրք Իթթիհատին կատաղութիւնը... Հայերու նկատմամբ:

Եթէ Հայ Յեղ. Կուսակցութեանց մօտ տակաւ շեշտուեցաւ Իթթիհատի դէմ անելութիւնը եւ անոր ընաջնման Ծրագրին դէմ Միասնական ճակատ կազմելու անհրաժեշտութիւնը, ապա մէկ միլիոն Թուրք մուհաճիներ հայաբնակ շրջաններ կեղծողնացնելու Իթթիհատի ծրագիրը, յստակ կերպով կը հետապնդէր Յ նահանգներու հայութեան կոտորածի իրականացումը:

Իթթիհատ սկիզբը անգլիական քաղաքականութեան կողմնակից էր, ինչպէս Համիտը, սակայն տակաւ հեռացաւ անկէ եւ Գերմանիա ուսած Իթթիհատական էնվէրի, ապա Թալաաթի ճնշումին տակ նախընտրեց պատերազմի մտնել Գերմանիոյ կողքին՝ Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ:

Իրականութեան մէջ՝ 1907-14 երկարող շրջանը՝ Համիտեան եւ Իթթիհատեան Բոնատիրութեանց դէմ պայքարող Հայ քաղաքական կուսակցութիւններու կոիւնի մէջ ընդմիջում մըն էր: 1908ի Սահմանադրութենէն մինչեւ 1914ի Յ տարուան շրջանը կը տարբերէր անով՝ որ Համիտ մասնակի կոտորածներով կը բաւարարուէր, իսկ Իթթիհատը յաջողած էր ոչ-Օսմանցիները «օրօրել գիտնալ», ծուլակը ձգել եւ ապա յօշոտել: Ցեղասպանութիւն մը որ ծրագրուեցաւ ո՛չ թէ 1911ի Ալանիի ժողովին մէջ, այլ Աճմէտ Ռիզաներու կողմէ 1890ական թուականներուն Փարզի մէջ եւ «Մէլիքէթ»ի նման թերթերու միջոցաւ... : Հայ քաղաքական միտքը տատանումներ արձանագրեց եւ եթէ գոնուեցան մարդիկ՝ որոնք հետեւողականօրէն Իթթիհատի դէմ դիրքորոշուեցան առաջին օրէն (1890ական թուականներուն) պէտք է զնահատեանք զանոնք, որ Իթթիհատի տեսարաններուն մէջ (Տօթթ. Նազիմ, Աճմէտ Ռիզա, Եւայն) հաստատեցին ցեղամալուքեան, ցեղասպանութեան սերմ եւ Օսմանցիութեան մէջ ոչ-թուրքերու ձուլման ծրագիրը... : Ուրիշներ, չմտած Համիտի վերադարձի հեռանկարէն՝ աւելի փարեցան Իթթիհատի, նոյնիսկ Առանայի հայոց կոտորածէն ետք նոր նոր համաձայնագիրներ կնքեցին անոր հետ, այն յոյսով որ կարելի է քնացնել վիշապ Թալաաթներն ու էնվէրները, եւ Լըր արթնացան՝ ուշ էր արդէն:

Ըստ Կարնիէ պատմարանին՝ 400 անդամ ունէր 1909ին Իթթիհատը... 1911ին 100 հազար հետեւորդ ունէր... : Իթթիհատը օրօրեց Հայ քաղաքական մտքի առաջնորդներէն կարեւոր մաս մը, Հայ պահպանողական-պոթոլուա խաւը նոյնպէս նիւթապէս օգնեց Իթթիհատի զօրացման եւ 1907-1914ի շրջանի այս կրուստականութիւնը պատճառ եղաւ, որ ներքին գործարար կապեր չստեղծուին հայ քաղաքական հասանքներուն միջեւ, թէեւ Պուլկարիա, Ռուսիա, Երկպոստ, Ամերիկա, Անգլո-կովկաս՝ Հնչակ-Դաշնակ միթիսկներ, համաձայնութիւններ եղան 1913-14ի շրջանին, սակայն 1914ի էրզրումի Դաշնակցութեան Համազումարին միայն եւ անկէ ետք Իթթիհատի ոճրագործ դիմազիծը ճանչնալով՝ Ռուսիոյ ի նպաստ դիրքորոշում մը՝ ոչինչ պիտի կրնար ընել Թուրքիոյ բոլոր անկիւնները տեղաւորուած, տարածուած Իթթիհատի մասնաճիւղերուն... որոնք առիթի եւ հրահանգի կը սպասէին զայլերու նման նետուելու համար Հայ ժողովուրդի անպաշտպան բեկորներուն վրայ... բայց մենք պիտի խօսինք փաստերով, վկայութիւններով, շատ անգամ թոյլ տալով՝ որ ընթացողները եզրակացնեն... առանց մեր կողմը մեկնարկութեան... :

Այս գիրքի Բ. Մասը հեղինակուած է յատկապէս նոր սերունդին համար: Յուսկանտութիւնը չունի բոլոր հարցումներուն պատասխանը տուած ըլլալու, անոր նպատակն է եղածը ցոյց տալ, որ դարերու մղած ազատագրական մեր պայքարները եղած են ժողովուրդի մը ապագան ապահովելու ձգտումով, այդպէս եւ տրամաբանական: Եղած են թերիներ, եղած են զղացական շարժումներ: Զօրաւորին դէմ ճակատելու ստիպում է հայը, անսակարկ իր արինը արամաղած է Հայ Ֆետային իր հողին ու պատիւին համար, սակայն եթէ արդիւնք չէ տուած Հայ լեզուիստական պայքարը, պէտք չէ սխալ կերակացութիւններ հանել՝ Հայ կուսող ուժը՝ յեղափոխութիւնը մեղադրելու համար: Ո՛չ թէ ուրիշներէն աւելի քիչ արին թափեց Հայ

Յեղափոխութիւնը, այլ ուրիշներէն նուազ բախտաւոր՝ միջազգային նեղ դիւանագիտութեան հաշիւներում գոհ դարձաւ... Անոր հետ մէկտեղ, հայ երիտասարդութիւնը իրաւունք ունի յեղափոխական իր անցեալի ղեկավարներուն քաղաքական գործունէութիւնը աչքի առաջ ունենալով՝ հարցումներ ուղղելու, անոնց սխալները իւրացնելով չպաշտպանելու, ֆեթիշացած անձեր վար բերելու, անոնց Աթոռներուն չինայելով եւ դատապարտելով ի հարկին անոնց սխալները, պաշտպանելու եւ զնահատելու անոնց արդար դործը ի հարկին, պաշտելու չափ սիրելով՝ չըմկելով, կախազան բարձրացող իր հեռատես զաւակները, ատելու եւ արհամարհելու նոյն ատեն բոլոր անոնք, որոնք զանազան դրօշներու ետին կանգնեցան եւ սակայն... վտանգի պահուն արթուն չզտնուեցան՝ որմէ տուժեց ամբողջ մեր ժողովուրդը...

Միւս կողմէ, պէտք է դաս վերցնել պատմութեան դառն դէպքերէն, տեսնել կեանքը Կուս. նեղմտութեան անդին, տեսնել 1973ի աշխարհը... Զարուհեակէլ քաղաքական ճամբան 1907-1914ի կամ՝ 1919-20ի տուեալներով, որովհետեւ նոր աշխարհ մը երկնուած է մեր երկրէն ներս, արդիական բոլոր հնարաւորութիւններով: Հին աշխարհի հետ Գորշ Գայլը բարեկամ է հիմա ալ, միայն դիմացը «կուսակի եւ հրթիռի» սարսափը զգալուն սահմակած է... Պէտք չէ մոռնանք, որ միշտ ալ ծաղկող Արագածը՝ վրէժխնդրութիւն կ'արթնցնէ անոր ուղեղին մէջ, որ կը շարունակէ Բանքուրքիզմի երկըրպապուն որպէս մտածել, խոկալ եւ նոր գոհեր որոնել երբ ճանկերը երկարին... Հետեւաբար այս դիրքը կ'ուզէ իրապաշտութեան մղել հայ նոր սերունդը՝ որպէսզի դաս վերցնէ անցեալի մեր յեղափոխութեան զուպարներէն, լեցուի հողի պաշտամունքով, դատէ երէկը եւ հետապնդէ իր հողային դատը, բայց եւ զգուշանայ խոշոր քաղաքականութիւն խաղալու Արեւմտեան նեղ քելադրանքներէ: Եղածը պահելը իմաստութիւն է: Եղածը զօրացնելը աւելի իմաստութիւն եւ եղածով դէպի մեր իրաւունքները մամբայ ելլելը հաւաքական, լուս, գիտակից աշխատանքով եւ հիմնաւորուած եղանակով միակ հաւատարմութեան ուղին է՝ մեր խնկելի Յեղափոխականներուն Յիշատակին:

Գ Լ ՈՒՒ Ա.

ԻԹԹԻՆԱՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ

Ա.

Թուրքերու մէջ 1868ին սկսաւ ազատական շարժում մը: Փարիզի մէջ կազմուեցաւ Իթթիհատ վէ Թերազըը Կուս.ը: Անոնք դժգոհ էին Ալի եւ Ֆուատ Փաշաներու գործունէութենէն եւ զանոնք կ'ամբաստանէին իրեն. նուազ հայրենասէրներ, քանի որ կ'ուզէին խօսիլ թուրք ազգային աւանդութիւններէն: Իթթիհատ վէ Թերազըը իր առաջին օրերուն իսկ ներկայացաւ՝ չափազանց քուրք, չափազանց ազգայնական եւ չափազանց հակա-եւրոպական հանգամանքով:

1869ին Ֆուատ Փաշա իր մահէն օր մը առաջ Սուլթան Ապիզի ներկայացնել տուաւ իր քաղաքական կտակը, ուր կը կարդանք.— «...Օսմ. Կայսրութիւնը վտանգի մէջ է... մեր նախահայրերու գործած անբարեկարգ սխալները այսօր մեզ կը դնեն չափազանց տագնապալից կացութեան մը մէջ:

«Ներքին գործերու մասին մեր բոլոր ջանքերը պէտք է ձգտին դէպի մէկ նպատակ, որ է մեր ցեղերու համաձուլումը: Առանց այս համաձուլումի, կայսրութեան միութիւնը անկարելի կը քուրք ինձի»:

«Մասնաւորաբար հայերը հակում ցոյց կուտան դէպի ստորնձրութիւն, եւ խելացիութիւն է ԱՆՈՆՑ ԵՌԱՆԴԸ ԶԱՓԱՒՈՐԵԼ, սպարէզ տալով միայն անոնց, որոնք պարկէշտօրէն կ'ընդունին մեր Կայսրութեան միասնութիւն սկզբունքը»:

Իթթիհատ միեւնոյն սկզբունքներով առաջնորդուեցաւ, եւ իր կեանքը քաշկոտեց մինչեւ 1902, երբ ան հրաւէր կարդաց Հայ Յեղ. կազմակերպութիւններուն համապումար մը կազմելու: ... Այդ ժողովին հայերը Իշխան Սապաէտօնի առջեւ պնդեցին ճշգր. յօդուածի տառացի գործադրութեան մասին, մինչ թուրքերը կը պնդէին Ընդհ. Բարեկարգութեան վրայ, մերժելով Հայկական Բարենորոգումներու առանձնաշատութիւնը: (Տես՝ Մ. Սերօբեան «Հայկական Հարցը եւ Անոր Փուլերը», 1937, Պէյրութ, էջ 117-8):

Երիտ. Թուրքերը 1896ին արդէն Փարիզի մէջ որոշ տարւեր կը համբէին իրենց շարքերուն մէջ: Ստորեւ 6 Մեծ Պետութիւններուն ուղղուած անոնց բաց նամակէն մտքեր.—

«Կոմիտէն (Իթթիհատ) նկատելով որ Սուլթանը միայն ուժի առջեւ տեղի կուտայ ազգի կամքին, հաշտութեան ամէն մի միջոց անտեղի համարելով, վճռել է մղել իր ստարշաւանք եւ կատարել կոբու, որպէսզի կարողանայ մեր դժբախտ երկրի մէջ հաստատել ներկայ յառաջդիմութեան համապատասխան իրերի մի զբոսութիւն:

«... Օսմանեան Սահմանադրութիւնը միակ իրական դարմանն է վերջ տալու Միապետական եւ շարադործ իշխանութեան զեղծումներին, որից բխում են Տաճկաստանի մի ծայրից մինչեւ միւս ծայրը ամէն օր կատարուող ջստմանի գործերը, որի զոհն են քրիստոնեաներն ու մահմետականները:

«Մեծ Պետութիւններն ահազին ծառայութիւն մատուցած կը լինեն ո՛չ միայն Օսմանցիներին, այլ եւ ընդհանուր խաղաղութիւն պահպանելուն եւ դբանով ամբողջ մարդկութեան, եթէ կատարեն այն, ինչ կարող են արագացնելու համար՝ առանց կրօնի եւ ցեղի խտրութեան, բոլոր Օսմանեան հպատակների վերաբերող բարեկարգութիւնների հարցը»:

(Սոյնին լման պատճէնը տպուած է 1898ի «Դրօշակ»ի Ա. Թիւին մէջ):

ԵՒՐՈՊԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Հայերը, ինչպէս եւ միւս ժողովուրդները՝ որոնք այսօր Թուրքիոյ բռնութեան լուծը կը կրեն, եթէ ազատ ըլլալ կ'ուզեն, պէտք է այդ արդարութեան եւ մարդկայնութեան գործը պահանջեն զէնքը ձեռուրնին»: (27 Մարտ 1909, Հոգովմ):

Խտալացի հերոս Ամիլիար Զեպրիանի կը գրէ.—

«Այո՛, Եւրոպան ձեր սպանչին (Համիտ) մեղսակիցը եւ քերտերուն հետ համերաշխ եղաւ: Ան նախագասեց ձեր արիւնին մէջ թաթաւ ձեռքեր ունենալ, քան ձեռք դպցնել գահու մը, նոյնիսկ երբ այդ գահուն վրայ կը բազմէր գոհճիկ չարագործ մը, աւազակ մը, եղեռնագործ մը: Այս տխուր փորձերէն ետք ալ քաղաքակիրթ Եւրոպայէն յուսալից բան չունիք»:

«... Եւրոպայէն որեւէ բան մը յուսալու չէք ուրեմն: Ան... փորձով ցոյց տուաւ եւ առաջին առիթով նորէն պիտի տայ փորձը»:

«... Հարստահարուած ժողովուրդները մէկ իրաւունք միայն ունին, անվիճելի իրաւունք՝ ապստամբութիւնը»:

Փարիզ, 4 Ապրիլ, 1899 Ամիլիար Զեպրիանի

Անգլիական «Թեյլերամ» թերթը — «Եթէ Հայերը Սուլթանի բռնապետական լուծը խաղաղօրէն եւ լուռ տանէին, այդ պիտի ցոյց տար միայն, որ անոնց չափ ստոր ոչ մէկ ուրիշ ազգ չկայ աշխարհի վրայ»:

Պատմաբան Մաք Քոլ — «Կոտորածները Սուլթաններու քաղաքականութիւնը կը կազմեն եւ վերջին 60 տարիներու ընթացքին կրկնուած են միջին թիւով ամէն 10 տարին անգամ մը... բնութեան օրէնքի կանոնաւորութեամբ...»:

Մոսկուայի համալսարանի փրոֆ. Լ. Կամարովսկին կը գրէ.—

«Տաճիկները համոզուելով որ իրենց տիրապետութեան ամէն կողմէն վտանգ կը սպառնայ՝ այժմ զէպի քրիստոնեաները՝ բացի արհամարհանքէն, նաեւ կատարել, անողորմ ատելութիւն ունին: Իրենց կոյր ատելութեան մէջ անոնք չեն տեսներ ուրիշ ոչ մէկ միջոց իրենց զօրութիւնը պահպանելու եւ սպառնացող վտանգներու առաջին անելու, բացի կոտորածներու միջոցաւ քրիստոնեաներու ջնջումը»:

Անգլիայիս ժամ ժօրէս.— «Եւ ինչ կրնայ ըլլալ արդեօք քանի մը մարդոց կամ քանի մը կոմիտէներու պատասխանատուութիւնը ամբողջ ժողովուրդի նահատակութեան ու կոտորածի դիմաց, զոյք մոռցաք յիշեցնել, որ այդ մարդոց պատասխանատուութենէն շատ առաջ եւ անկէ ալ վեր կար Սուլթանի եւ Եւրոպայի պատասխանատուութիւնը»: (Ֆրանսական խորհրդարանէն ներս արտաքին գործոց նախարար Հանտային կատարած հարցապնդումէն հատուած, 1898 Հոկտեմբեր 3ին խօսուած):

«Եւրոպան կամակատար անզորութեամբ մը մեղսակիցը կ'ըլլայ Սուլթանին ոճիրներուն»:

«Յոյսերնիդ ձեր վրայ դնելու էք ուրեմն»:

«Լա Բըքիթ Ռէփուպլիք»ի խմբագիր Ժէրօ Ռիշար.—

Անստ Ռիզա Պէյ (Իթթիհատի տեսարան եւ «Մէլէրէթ»ի խմբագիրը), իր կուսակցութեան կողմէ Լահէյ դացած է խաղաղութեան համաժողովին, յիշատակագիր մը մատուցանելու, որուն մէջ իրենց ցաւերը լալէ ետք, ապաշխարանք մըն ալ կ'ընէ, թէ «Իրեմք յեղափոխականներ չեն եւ կը խնդրէ ժողովէն որ արդարութեան անուով, Օսմանեան Կայսրութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնքները որոնք անգործածելի մնացած են, գործ դնել տան»:

Խմբագրականի մը մէջ Ռիզա պէյ աւելի վճիտ է, «Մեմք Երբեք չենք ուզած յեղափոխութիւն քարոզել, անոր օգտակարութիւնը չիմանալու չէ, հապա, օտարը պիտի օգտուէր անկէ եւ Թուրքիոյ ապագան պիտի վտանգուէր»:

Իր կողմէ «Դրօշակ» 1899ի Օղոստոսի թիւին մէջ կը գրէ, թէ Սուլթան Համիտ խելացնորի պէս շատոնց է այդ անյնաս ու անմեղ մարդուն փէչին վրայ ինկեր կը հալածէ, բունէ՛ հում-հում պիտի ուտէ:

«Ռիզան ե՛ւ կը խորշի Եւրոպայի միջամտութենէն, ե՛ւ կը խնդրէ որ միջամտեն Թուրքիայէն ներս»:

«Ռիզան միայն Սահմանադրութիւն կը տեսչայ, դէմ է յեղափոխութեան, իսկ «Օսմանլը» (Թրքական Իթթիհատի օրկաններէն) կը մաղթէ որ Տէրը շուտով առնէ Համիտի հողին...»:

«Ռիզա պէյ երեխայի պարզամիտ ոգեւորութիւն եւ հասարակ ունի այդ բրածոյ Սահմանադրութեան հրաշագործութեան վրայ, որը կարելի է միջնորդութեամբ մէջ տեղաւորել եւ ոչ խնդացնել անով: (Այդպէս չէ՛ր գրեր 1907ի «Դրօշակ»ը...):

«... Ռիզան կը հաւատարմացնէ թէ Տաճկաստանի փրկութիւնը հոն է եւ բաւ է որ ահուան դպի մէջ մը այդ պտուղին... Աստուածներու պէս պիտի ըլլայ: Երանի քեզի Թուրքիա»:

Փիէր Քիտ Փրանսական «Օրօք» թերթին մէջ «Մեծ Մարդասպան» խորագրին տակ, կը նշաւակէ եւ նշաւակել կը խոստանայ շարունակաբար Ապոսիլ Համիտի բոլոր ոճիրները, ինչպէս նաեւ անոր մեղսակիցներունը, եթէ մինչեւ իսկ Հաննոս (Ֆրանսայի արտաքին գործոց նախարար) կամ Գոնսթան ըլլայ անոնց առնուը:

(«Դրօշակ», 1900, Թիւ 5):

Հայերուն ուղղուած կոչէն — «Աշխատինք միասին ջնջելու համար մեր հայրենիքը կեղեքող բռնակալութիւնը, վերականգնելով Միտհաթ փաշայի հրատարակած Օսմանեան Սահմանադրութիւնը, զոր Ապոսիլ Համիտ իսպառ խափանեց»:

«Պոլիսը ձգելով ես եւ իմ դաւակներս ուրիշ նպատակ չունեցանք՝ բայց եթէ աշխատիլ իրապօրծել այս օրինաւոր ծրագիրը: Սուլթանին մեզի բրած սպառնալիքները... պիտի չխեղդեն մեր խղճին ձայնը:

«Համիտի «բաժնէ ուր տիրես» նշանարանին պատասխանենք «Միւսթիւնը ուժ է»:

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ

«Դրօշակ» — Թերթեցէք Երիտ. Թուրքերի հրատարակութիւնները, եւ դուք չէք գտնար նրանց մէջ ո՛չ մի կոիւ տաճկական կեանքի այն ներքին կաշկանդիչ դործօնների դէմ, որ մենք՝ հայ ժողովրդի կեանքում չենք խնայել երբեք եւ հարուածել ենք ոչ պակաս քան արտաքին թշնամունք:

«Մէշէվերէք», Իթթիհատի օրկանը, 1900ի Սեպտեմբերին կը զայրանայ այն բողոքի համար, որ Եւրոպացիք եւ Եւրոպական լրագիրները Սպաղանքի կոտորածի առիթով կատարած են եւ հարց կու տայ — Ինչո՞ւ Անգլիա եւ Ֆրանսա կրնան Ափրիկէի մէջ սպաննութիւններ կատարել, իսկ քիւրտերը կամ Թուրքը իրենց երկիրներուն մէջ չեն կրնար իրենց հասկցած ձեւով դատաստան տեսնել հայ աւագակներու դէմ: «Մէշէվերէք»ը կը բողոքէ Եւրոպական միջամբտութեանց դէմ եւ կը յայտնէ թէ Սպաղանքի ջարդարար Ալի փաշայի դէմ ինչո՞ւ կ'ընդվզին Եւրոպացիները»:

ԲիէՆ Քիառ.— «Իրենց քրիստոնեայ եւ քաղաքակիրթ անուանող Եւրոպայի ներկայացուցիչները համբերող են եւ կը քաջալերեն Արքայ մարդասպանը — առնոց պարտականութիւնն է դունչը կապել ու խոզխողել կարմիր զազանք»:

Համաձայն 1900ի Սոցիալիստական Միջազգային Գոնկրէսի մէկ վճռին, Միջ. Սոց. Բիւրոն այն օրերս հրաւէր զրկեց բոլոր երկիրներու Սոցիալիստական կուսակցութեանց, որ անոնք ազդեն իրենց խորհրդարաններուն ու կառավարութիւններուն վրայ, որպէսզի պետութիւնները վերջ դնեն Հայաստանի կոտորածներուն:

«Աշխատաւորներ, սոցիալիստներ, ջանացէք որ 1900ի միջազգային Գոնկրէսի խօսքը վերածուի գործի»:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՅՐԱՆՍԱՑԻ
ՄԻԱՑԵԱԼ ՍՈՑ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
(Մանիֆեստէն հատուած)

Համիտեան բռնակալութեան դէմ ամբողջ աշխարհի հանրային կարծիքը կը բողոքէր, բացի օտար պետական այն մարդոցմէ՝ որոնց համար քարիւղը, հանքային հարստութիւնը, նոր զրամագլուխներ մուծելը Թուրքիա աւելի շահաւոր գործ կը նկատուէր: Իթթիհատի պարագլուխներուն ելոյթները կեղծ էին «Մէշէվերէք», «Օսմանլը», «Միգան» թերթերուն մէջ: Համիտի դէմ անոր դիրքորոշումին եւ քաղաքական եւ յեղափոխական մտքի ու բազկի դիրքորոշումին մէջ մեծ տարբերութիւն մը կը տեսնուի Սահմանադրու-

թեան հռչակման (1908) շրջանին: Մինչ հայ, արաբ, պալքանեան ժողովուրդներուն համար Համիտ բռնակալ մըն էր՝ որուն տապալումով շնչելու ազատութիւնը եւ հողային բարեկարգութիւնները պէտք էր իրականացուէին Թուրքիոյ մէջ, Իթթիհատի պարագլուխներէն Ահմէտ Ռիզայի եւ Տօքթ. Նազըմի համար Համիտին Օսմանեան կայսրութեան շահերը չկարենալ պաշտպանելն է խնդրոյ առարկան, իսկ յանցանքը՝ բոլոր հայ հպատակները Օսմանցի չկարենալ դարձնելը: Սահմանադրութիւն մը՝ որ 1876ին Միտհատի կողմէ մէջտեղ բերուած, լքուած, 33 տարիներ ետք փրկութեան լաստը որպէս հրապարակ կը դրուէր... եւ ի՞նչպէս կարելի էր հաւատալ, թէ Երիտ. Թուրքերը ոչ-Օսմանցիներուն բարեկարգութեան, ինքնավարութեան, հողային, տնտեսական, ընկերային բարեկարգութեանց պահանջները պիտի կարենային՝ բաւարարել... միամտութիւն էր առնուազն եւ եթէ Սահմանադրութեան նախօրեակին տկար Երիտ. Թուրքերը ձեռք կ'երկարէին ոչ-Թուրք յեղափոխականներուն, անով կ'ուզէին նախ իշխանութեան տիրանալ, ապա դառնալ Համիտի բռնակալութեան շրջանի քաղաքականութեան (ջարդ, բռնութիւն, անապահովութիւն) սխտեմաքիկ գործադրողները, Եւրոպան համոզելէ ետք՝ թէ բան մը փոխուած է Իթթիհատի օրով... Թուրքիոյ մէջ:

Իայց Իթթիհատի մասին մանրամասն խօսելէ առաջ՝ կարդանք Թուրք պատմարան Շաքիրի Համիտի կասկածամտութեան մասին մէկ վկայութիւնը:

«Սուլթան Համիտ Շահիէթի վէ Հուսուսիէթլիքի», 1943ին Պոլիս տպուած 370 էջոց հատորէն վկայութիւն մը կարդանք:

Գիրքը կը ներկայացնէ Համիտը իր ընտանեկան, հարեմական, անձնական նախասիրութեանց մէջ զգուշաւոր պարող, բայց մանաւանդ ժուրնալիստներով շրջապատուած եւ կասկածամիտ:

Օրինակ մը բաւարար է գաղափար տալու համար Ապտիւլ Համիտի մահուան սարսափին մէջ ապրած ըլլալուն:

Հակառակ պայտի պարտէզներուն մէջ հասունցող առատ պտուղի տեսակներուն, անոնցմէ չէր ուտեր... մասնաւոր մարդ կը զրկէր որ գնեն: Փարիզէն Թուրհան Պէյ իրեն երեք սնտուկ պտուղ կը զրկէ:

Կը բանայ՝ խնձոր, տանձ, դեղձ... լեցուն է: Կանչել կու տայ Տօքթ. Իպրահիմ փաշան: Մարդը սարսափով տունէն կանչուելուն համար մտահոգ վիճակ ունի... Սուլթանին սենեակը կը մտնէ, ուր գրադուած էր ան աղբսագիր մը կարդալով: Իպրահիմ Փաշան տեսնելուն թուղթերը մէկ կողմ կը նետէ եւ «գիտեմ որ պտուղ կը սիրէք» կ'ըսէ անոր եւ երեք սնտուկները ցոյց կու տայ... Ասոնք Եւրոպայէն զրկած են ինձի... մինչ ես Եւրոպական պտուղները բնաւ չեմ սիրեր...: Իպրահիմ փաշան կը ծոխ բամպակներու մէջ տեղաւորուած պտուղները կը դիտէ... գունաւոր եւ համեղ... բերնին ջուրերը կը վազեն:

« — Հաւնեցա՞ք, կը հարցնէ...: Դրական պատասխանին վրայ.

« — Լա՛ւ, լա՛ւ բայց անոնց մէջ բաներ մը դրած չե՞ն կրնար ըլլալ... օրինակ թո՛յն...:

Փաշան Սուլթանին՝

« — Ձեզ կարծեր տէր իմ, բայց քանի որ կասկած արթնցաւ ձեր մէջ, չեմ թելադրեր որ ուտէք կը մրմոռայ:

« — Փաշա, ուշադի՛ր, միտքդ գէշ բան մի՛ բերեր: Ես ասոնք քեզի նուէր կ'ընեմ, ուզես նետէ, ուզես կեր, բայց եթէ տակէն գէշ բան ելլէ, պատասխանատու չեմ»:

Փաշան տուն կը տանի սնտուկները, փառաւորապէս կ'ուտէ պտուղը՝ ընտանիքի անդամներուն հետ...

Յաջորդ օրը երբ պալատ կու գայ, Համիտ զինք կը կանչէ եւ կ'իմանայ որ պտուղները ճաշակած է փաշան...: — Բան մը պատահեցա՞ւ, կը հարցնէ: Այո վերջինը ո՛չ միայն «բան մը չպատահեցաւ, այլ ստամոքսիս մէջ ցաւ մը ունէի այդ ալ անցաւ», կը պատասխանէ:

« — Լաւ, անոյ ըլլայ, — կ'ըսէ Համիտ եւ կ'աւելցնէ. «Ի՞նչ բախտաւոր մարդիկ էք, որ առանց մտահոգուելու ամէն ինչ կ'ուտէք ու կը խմէք... կեանքի բարիքներէն լայնօրէն կ'օգտուիք...»:

(«Սուլթան Համիտ», Ջիա Շաֆիր, էջ 351-354, Պոլիս, 1943):

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Հետաքրքրական հաւաքածոյ մըն է Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ 1893-1897ի շրջանին հրատարակուած «Իրևանադիրտական փաստաթուղթեր», «Հայկական Հարց» հսկայ հատորը, ուր մանրամասն տրուած են ո՛չ միայն հայկական բարեկարգութեանց ծրագիրները, կոտորածները, Մայիսեան Ծրագիրը, այլ նաեւ այդ շրջանի Ֆրանսայի պետական մարդոց տեսակէտները: Դժբախտաբար, Հայկական 6 Նահանգներուն մէջ ալ հայերը ներկայացուած են որպէս փոքրամասնութիւն... Այսպէս

Վան՝	80.798 հայ	խլամ՝	241.000
Պիթլիս՝	131.390 հայ	խլամ՝	254.000
Խարբերդ՝	69.718 հայ	խլամ՝	505.446

(էջ 6-7)

Կամպոն՝ Ֆրանսայի Պոլսոյ Դեսպանը կը գրէ Գաղիմին Բերէի.—

«Հայերը բրտականտի անցան Ֆրանսան սիրաշահելու համար... Ֆրանսան, պէտք է ընդունի, որ բան չհասկցաւ եւ չհետաքրքրուեցաւ մարդոցմով՝ որոնք իրեն կը խօսէին Արարատ լեռան, Նոյի եւ Խաչակիրներու մասին...»:

«Հայերը Լոնտոնի կողմէ աւելի լաւ ընդունուեցան: Կլատսթոնի դահլիճը կը ցաւ իրեն կապել դժգոհները, զանոնք համախմբել եւ կազմակերպել, անոնց խոստացաւ իր օգնութիւնը, անկէ ետք բրտականտի կոմիտէն հոն հաստատուեցաւ եւ ամրացաւ իր ներշնչումը: (էջ 12):

Սասնոյ մասին Կամպոն կը գրէ Արտաքին Գործոց Նախարար Հանտոյի:

«Քանզումն ու գիւղերու հրէհները ո՛չ մէկ կասկած կը ձգեն, ժողովուրդին ջարդը ո՛չ մէկ կասկած կը ձգէ ոսկորներու կոյտերով եւ կոտորկոտոր եղած դիակներով, որոնք դեռ կը մնան Կէլիէկիւզանի փոսերուն մէջ: (էջ 65):

«Մենք կոչ կ'ընենք մեր բոլոր հայրենակիցներուն առանց խորութեան ցեղի ու կրօնի համախմբուելու ու միանալ ընդհանուր թշնամիի դէմ. այս խօսքերն ենք կարողու մերջին թիւ «Օսմանլը»ի մէջ, որի վարչներն են Երիտասարդ Թուրքիայի երիտասարդագոյն ներկայացուցիչները:

«Ահա քսան տարի զոյութիւն — եւ անպտուղ — Երիտ. Թուրքիայի քարոզած դազափարները դժբախտաբար չկարողացան լայն հող բռնել թիւրք ժողովուրդի մէջ եւ ստեղծել հանրային շարժում: Նրանց ծրագիրն էր «ուտոպիակալն»: «Յեղափոխութիւնը վերուստ պիտի դայ», զոչելով, նրանք մի հսկայական սխալ դործեցին: Նրանք չիմացան, որ պատմութեան մէջ յեղափոխութիւնները երբեք ի վերուստ չեն յառջացել, չեն կատարուել բռնաւորների յօժար կամքով ու նախաձեռնութեամբ: Նրանք չհասկացան որ բնակչութեան մարդասիրութիւն եւ արդարութիւն քարոզել միեւնոյնն է թէ հրահանգել քամուս, որ նա կանդ առնէ կամ փոխէ ուղղութիւնը:

«Համիտի վրայ չազդեցին... Եւ քսան տարին անցաւ Երիտ. Թուրքիոյ համար տժգոյն ու տրտում...»:

«Հակառակ որ մենք ուզած ենք տարրերել Սուլթանը եւ գիւղացի թուրքերը, սակայն... Երիտ. Թուրքերը Եւրոպայի առջև մեզ ցոյց կուտան «Քիւրք գիւղեր կործանողներ եւ հայ յեղափոխականները անգատակալն» կ'որակեն»:

(Տես՝ «Դրօշակ», 31 Մայիս, 1898, թիւ 5):

Նիազի պէյ կը յայտնէր Սահմանադրութեան հռչակման նախօրեակին, (1908 Յուլիս):

«Կ'երգում խորութիւն չգնել ո՛չ ցեղի եւ ո՛չ կրօններու դէմ: Իմ դրօշակիս վրայ գրուած է «Ազատութիւն եւ ճշմարտութիւն»: Կը յուսամ որ բոլոր Օսմանցիները արժանի մեծ համակրութեամբ պիտի ողջունեն այս շարժումը եւ պիտի պաշտպանեն այս իտէալը, որուն համար ուխտած ենք կոտիլ»:

... Յուլիս 31ին իթթիհատ վէ թէրաքըը Եւրոպական պետութիւններուն ուղղուած հետեւեալ յայտարարութիւնը.—

- Ա.— «Պիտի խուսափինք աւելորդ արիւմանեզութենէ:
- Բ.— «Մեր պահանջն է 1876ի Սահմանադրութեան վերահաստատումը:
- Գ.— «Օսմանեան բոլոր կրօնները եւ ցեղերը հաւասար կը նկատենք ու բաճակը պիտի պաշտպանէ երկրին անձեռնմխելիութիւնը»:

«Դրօշակ» խանդավառ տողերով «Կը բացուի նոր դարագուլիս» կը գրէ Սահմանադրութեան առթիւ: («Դրօշակ», 1908, Յուլիս, թիւ 7):

Դաշնակցութիւնը այս առթիւ կը պահանջէ.—

- 1 — Նահանգային վարչական ապակեդրոնացում,
- 2 — Մշակութային ինֆրավարութիւն:
- 3 — Վարչական նոր բաժանումներ՝ հիմ ունենալով ազգագրական միատարրութիւնը:

Կոմս կը վկայէ.—

«... Գաւառներու մէջ կեղեքումները պահ մը դադարած էին եւ մեղրածոր ժպիտներ կը բաշխէին ժողովուրդին, սպասելով նոր կարգերու ձեւաւորման»:

«Մեր նպատակն էր պաշտպանել ձեռք բերուած Սահմանադրական իրաւունքները, չթողուլ որ ազարտին, անդործադրելի մնան: (էջ 14):

«Դեռ պարզ չէր սակայն, «գաղտնաբերում» բերող Ժէօն Թիւրքերու զիմազիծը, անոնց հետագայ քայլերը, ծրագրերը, փոքր կամ զբոստոնեայ ազդերու հանդէպ անոնց վերաբերմունքը: (էջ 14):

«Զեմ կարծեք թէ առաջին օրերուն անհանգուրժող կամ ռերային միտքեր սնուցած լինէին մեր հանդէպ:

«Պոլսոյ մեր Պատասխանատու ընկերները գոնէ լաւատես էին թիւրք յեղափոխական դեկավարներու բարեացակամութեան եւ անկեղծ ժողովրդավար ըլլալու վերաբերմամբ: Կը յարդարէին սպասել եւ չչտապել, դեռ յեղափոխութեան շրջանը ապրած չէ, պէտք է մաքրել հրապարակը կասկածելի տարրերէ, սերտացնել մեր գործակցութիւնը յեղափոխական վստահելի թիւրք տարրերու հետ, Սահմանադրութեան պաշտպանութեան համար եւ զգուշանալ գաւառներու մէջ շեշտուած գուտ հայկական պահանջներ դնել», այսպէս կը թելադրէին մեզի Պոլսէն:

Դաշնակցութիւնը կը պահանջէր երաշխիք եւ թէ ինք պիտի պաշտպանէր 1907ի Փարիզի Գոնկրէի որոշումները՝ կազմուած Հ. Յ. Դ. -Ներխ. Թուրք եւ այլ յեղափոխական կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն:

Կոմսը կ'ըսէ, թէ ղեկավարները (Դաշնակցական) եւ յեղափոխական խաւերը տարբեր տեսակետներ ունէին: Ղեկավար Սարգիս լաւատես եւ խանդավառ էր բնական եւ ընկերային ու տնտեսական շարժում կը նկատէր եղածը...:

Արամը (Մանուկեան) համոզուած էր, որ բարձր դասը եւ զինուորականութիւնը չէին կրնար յենարան դառնալ իրական յեղափոխութեան:

Իշխանը կը խորհէր, թէ բանակի կողմէ յեղաշրջումը արժէքէ զուրկ էր:

Մելոյեան.— Դար մը պէտք էր ինքզինք «տէր» նկատող Թուրքին մէջ փոփոխութիւն յառաջացնելու...:

Կոմս.— Ես քիչ մը աւելի լաւատես էի: Առիթ մը կը նկատէի Սահմանադրութիւնը մերձեցման՝ հայ եւ Թուրքիոյ փոքրամասնութիւններու միջեւ... զինուորականութիւնը աւելի վստահելի էր, քան... Իշխանութեան ցանկացող տարրերը:

«Կովկասէն եկած հայդուկները խանդավառ էին, 1905ի ռուսական շարժումներուն կը նմանցնէին եղածը...:

«Շատ բացասական էին Արեւմտահայ եւ տեղացի հայդուկներու տրամադրութիւնները. «Թուրքին կարելի չէ վստահիլ, թուրքը թուրք է՝ ի՞նչպէս կարելի է հաւատալ նոր կարգերու, շունք կամ, որ պոչը շարժելով կը մօտեցնէ քեզի յամկարծ խաճմելու համար, մի՛ հաւատաք, Աստուծոյ սիրոյն, ամէն բան մի ցուցնէք անոնց, բոլորք երեսն մի՛ ելնէք...», կ'ըսէին անոնք:

Կոմս — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՕՍԷՐ ԱՆՈՆՑ ԲԵՐԱՆՈՎ:

«Մեր տարեց խումբերը եւ զաւառի ժողովուրդը վերապահ էին: Տեսնանք ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլայ»: (էջ 18):

«Եկած էինք այն եզրակացութեան, որ Օսմանեան Սահմանադրութիւնը պէտք էր նկատել իրրիւ գրական երեւոյթ:

«Իթթիհատի կողմէ հակերոյթներ, զինուորականներ... ոմանց կ'երթայինք, ուրիշներ կը մերժէինք», կը զրէ կոմս:

«1908ին Դաշնակցութիւնը կը դուժարէր Պիթիսի համաժողովը:

«Իթթիհատի կողմէ Վէհիպ (փաշա) ներկայ. հիմնական հարցերու շուրջ որոշում չեն կրնար առնել...:

«Դժբախտաբար Պատասխանատու Մարմնի ներկայացուցիչ Ակնունին, չափազանց լաւատես, (մինչեւ իր նահատակութիւնը այդպէս ալ մնաց) Սահմանադրական Թուրքիոյ եւ Իթթիհատի անկեղծութեան, զէնքի ներածման անհրաժեշտութիւնը չեշտող Դաշնակց. ղեկավարներէն Մելոյեանը «միամիտ» անուանած եւ աւելցուցած էր. «Այնպիսի օրերու մէջ կ'ապրինք, որ թիւրք ուսիկանը պիտի պաշտպանէ հայ կնոջ պատիւը...»: Դժբախտ Ակնունին թուրքը բաւականաչափ չէր ճանչցած դեռ: Այսպէսով անհոգ գոնուեցանք այդ կարեւոր եւ նախապատրաստուած ձեռնարկին հանդէպ:

Որհնագրական ընտրութեան մէկ Դաշնակցական մէկ Իթթիհատական թեկնածուներու շուրջ համաձայնութիւն կը կնքուի Վասպուրականի շրջանի համար:

Պոլսէն՝ չէզոք Գր. Զօհրապը եւ Պետրոս Հալաճեանը (չարքային Իթթիհատական — Հ. Գ.), էրզրումէն՝ Դաշնակցական Վարդուշտը եւ Գ. Փաստրմաճեան (Արմէն Գարօ), իսկ Տարօնէն՝ Գեղամ Տէր Կարապետեանը: Վանի շրջանէն կ'ընտրուի Կոմս եւ Իթթիհատական՝ Թէֆիք պէյ:

«Պոլի՛ս...»

«Իթթիհատը առաջին ամիսներուն շատ սիրալիք ու պատրաստակամ խոստումներ կը շուրջէր, միայն ժամանակ կը խնդրէր... կ'ուզէր Սահմանադրական ոչժիմը ամբապնդել, իսկ երբ բնական վիճակ ստեղծուէր, հարցերէն մէկը պիտի դարձնէին առաջին հերթին հայկական պահանջները...»: ԱԿՆՈՒՆԻՒՆ ԸՍԱՄ ԷԻՆ ԱՅՍ ԽՕՍՔԵՐԸ ՈՒ ՄԵՐ ԸՆԿԵՐԸ «ՀԱԼԱՄ ԻՒՂԻ» ՏԵՂ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ՝ ՄԵՁ ԵՒՍ ԿԸ ՀԱՄՈՁԷՐ ԱՅՍ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ»:

«1909ին Կովկասէն Թուրք-թաթար զործիչները (Բանթուրքիստ) Պոլիս եւ «զբկարաց» ընդունուեցան Իթթիհատի վարիչներուն եւ զլիաւորներուն կողմէ»:

Նախ Համիլախանի, ապա Համաթուրանի կողմից արտոնութեան հիմնադիրներ եւ առաքեալներ էին նորեկները, որոնք անմիջապէս պատրաստ հոյ պտան, յանձին Իթթիհատական քանի մը մոլեոսանդ ցեղապաշտներու: Եկած էին Գասիիրիսքի, Աքչուրան, Չէրքէյ Թոսուն, Ահմէտ Ալաու, Մարտան Թօփչիպաշե, Եւայլն:

1907ին Թուրքիոյ պետական պիւտճէն 40 միլիոն տոլարի բաց ունէր, թէ եւ 1909ին այդ բացը իջաւ 17 միլիոնի բաց 1910ին կրկին 40 միլիոնի բարձրացաւ: 1908ին կառավարութիւնը զիմեց նոր փոխառութիւններու, նախ՝ 20 միլիոն տոլար, 1909ին՝ 35 միլիոն, 1910ին՝ կրկին 35 միլիոն եւ պետութեան ընդհանուր ծախսը հասաւ 525 միլիոն տոլարի: «Մտախոհները հսկայաքայլ կը բարձրանային, իսկ երկրի արտադրութիւնը անշարժ էր...»:

Հետաքրքրական է Օսմանեան Ա. Խորհրդարանի պատկերը: 125 թուրք, 141՝ ոչ-թուրք: Կրօնաւորներ՝ 35 տոկոս, կալուածատէրեր՝ 30, պաշտօնեայ՝ 20, ազատ արհեստ՝ 10, անորոշ կազմով՝ 5:

«Մեր եւ միւս քրիստոնեայ երեսփոխաններու դժբախտութիւնը պետական լեզուի անձամբօրութիւնն էր, այդ պատճառով լուռ ու մուռ ունկնդրի դերին մէջ էինք, առանց նոյնիսկ հասկնալու մուլաններու արարախառն եւ «գիտուններու» խօսած տաղտկալի ճառերու բովանդակութիւնը: Ամէնէն ինքզինքն եւ էի եւ մասամբ՝ Արմէն Գարօն...»:

Հայ երեսփոխանները՝ Պոլսէն Գ. Չօհրապ եւ Պ. Հալաճեան, Իզմիրէն՝ Սպարթալը, Յակոբ Պապիկեան, Գողանէն՝ (Կիլիկիա) Մուրատ Պոյաճեան, Էրզրումէն՝ Արմէն Գարօ եւ Վարդգէս, Մուշէն՝ Գեղամ, Սեբաստիայէն՝ Տօքթ. Տաղաւարեան, Վանէն՝ Վ. Փափաղեան (Կոմս): Կային արարներ, քիւրտեր, պուլկարներ, Ալպաններ: (Հրեաներէն՝ Գարասու՝ Մասոն Իթթիհատական):

Ըստ կուսակցական բաժանումի՝

Իթթիհատ՝ 160, Ահրար՝ 20-25, Դաշնակցական՝ 4, Հնչակեան՝ 1, պուլկար «Կլուպիստ» 2, պուլկար Ս. Դեմ.՝ 1, անկուսակցական՝ 70է աւելի

Նոյն նստաչըջանի վերջերուն՝

Իթթիհատի կուսակիցներուն թիւը կը հասնէր՝ 85-90ի, կրօնաւորներու նոր կուսակցութիւնը՝ «Ճէմիյէթը Իլմիյէ»՝ 25-30, Ահրար՝ 55-60, իսկ անկուսակցականները՝ 90-100 աթոռներ ունէին:

Մարտ 31ի (1909) Սուլթանի յեղաշրջման՝ խորհրդարանը ունէր՝ Իթթիհատական՝ 125-130, Դաշնակցական՝ 4, Հնչակեան՝ 1, Ս. Դ. Պուլկար՝ 1, Պուլկար «Կլուպիստ»՝ 2: Մնացեալը «Իլմիյէ Ճէմիյէթ» (Գիտուններու ընկերութեան կը պատկանէր, այսինքն 80 մուլաններ, որ Շէրիաթի օրէնքներուն վրայ կ'ուզէին հիմնել պետութիւնը): Իթթիհատի դէմ դժգոհները շատցան, «Թուրք մտաւորական երիտասարդներ իբր «Ահրարական կազմակերպուեցան ապա կոչուեցան Սապահէտիւնի յարելով՝ ապակեղրոնացման կողմնակից «Հիւրրիէթ վէ Իթիլաֆ»:

Հետզհետէ Իթիլաֆի յարեցան Կիւմիլճինայի Հօճա Սապրի, Տէրիտ Պէյ, հայերէն եւ Չօհրապ յարեցաւ անոնց՝ յափշտակուած գեղեցիկ սկզբունքներէն, բայց հիասքափուած շուտով լքեց: Տօքթ. Տաղաւարեանը մինչեւ վերջ մնաց անոնց մէջ:

Կուսակցութիւն հիմնեցին նաեւ արարները «Արարական ազգայնական կուսակցութիւն»:

Խորհրդարանի 10 հայ երեսփոխաններէն երկուքը՝ Հալաճեան եւ Յ. Պապիկեան Իթթիհատական էին: Մենք չորս Դաշնակցականներս, մէկ Ահրար (Տաղաւարեան), Սպարթալի (անկուսակցական), եւ Չօհրապ՝ անկախ թէեւ, բայց գրեթէ միշտ մեզի հետ էր:

Դաշնակցական Պլատֆորմը կ'ընդունէր Օսմանեան Կայսրութեան ամբողջականութիւնը:

«Թուրքիոյ Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը՝ հիմնուած ապակեղրոնացման դրութեան վրայ, որմէ պիտի օգտուին երկրի մէջ ապրող բոլոր ազգերը, գաղանի ընտրութեամբ (պետական):

«Սահմանադրութեան վերաքննութիւնն ապակեղրոնացման իմաստով, Եւրակոյտի ջնջում, ձրի, պարտադիր ուսում, մայրենի լեզուով դաստանդում, շրջաններու մէջ թրքերէնէն զատ դատարանի, եւայլնի մէջ տեղական լեզու... զինուորները խաղաղութեան ընթացքին իրենց ապրած կամ մերձաւոր վայրերու մէջ պիտի մնան, ջնջում աշխատանքներու «չետամնաց» տուրբերուն», եւայլն:

Իթթիհատի Պլատֆորմը — (կարեւորները) Եւրակոյտի 2/3ը ընտրովի, 1/3ը Սուլթանը պիտի նշանակէ, վարչական ինքնավարութիւն, պետական լեզուն թրքերէն, հաւասարութիւն օրէնքի առջեւ, կրօնի ազատութիւն, գործաւորի եւ տիրոջ միջեւ օրէնք հաստատել, երկրորդական ուսում (պետական) թուրքերէնով:

«Մուրատ (Պոյաճեան) բացի զինուորակալութեան օրէնքէն ազգային, աշխատաւորական եւ ապակեղրոնացման խնդիրներու մէջ շատ մօտ էր մեզի», կը գրէ Կոմս: Վերին աստիճանի բարեկիրք շիտակ եւ ազնիւ մարդ մըն էր, հին երախտաւոր յեղափոխական մը»:

(էջ 97): Օսմանեան Եւրակոյտի անդամ էին՝ Նորատունկեան, Աղաբեան, Երամեան, Հիւրմուզ եւ Չ. Տիւպէր: Մենք ունէինք կապ չունէինք անոնց հետ: (էջ 102):

Շէրիաթական շարժումը 1909ի Մարտին Սուլթան Համիտի կողմնակիցներուն կողմէ տեղի ունեցաւ: (Այս մասին տարրեր կարծիք ունի թուրք պատմաբան Մ. Թուրան, զոր պիտի տանք յետոյ — Հ. Գ.):

Մուլա մը, ապա զնդապետ մը Մուհամէտի սիրոյն ֆետա դառնալու ճառեր կը խօսին խորհրդարանէն ներս...:

«Մեր նախնիքներու սուրբ կրօնը աղարտուած եւ ծաղրի առարկայ դարձած է, մեր մեծ մարգարէն... լուսնոտ կը յայտարարուի (Երեսփոխաններ — «բահր օլտուն» պոռպոյն), երկիրը ֆրան-մասոն դարձած անհաւատներու ձեռքն է եւ ոտքի տակ է ձուլուած մեր սուրբ օրէնքը: Այս երկիրը պապերէ-պապեր սուրբ չէրիաթով է կառավարուած... Շէրիաթը հիմը պիտի դառնայ մեր զարգացման եւ յառաջդիմութեան... աղջիկ տղայ խառնեցին մեր զարգացման մէջ, բնական կան սրբութիւն չէ մնացած, կիները դայթակեցուցին, սրբապղծեցին մեր հարկմանը»:

Հօճան կը պահանջէր դատի տալ Ահմէտ Ռիզան, Հիւսէյն Ճահիտը, տէօնմէ (դաւանափոխ — հրեայ) Ճալիտը եւ ուրիշներ:

Իթթիհատականներէն քիչ թիւով ներկաներ հաւանութեան նշան տուին...:

Հալաճեան կը յայտնէ, թէ ժողովուրդէն ընտրուած են իրենք եւ թէ սուրհանբու տակ չեն կրնար որոշում առնել...:

10 օր ետք Սուլթանը դահլնկէց եւ Երիտ. Թուրքերը իշխանութեան կրկին տէրն էին դարձած...:

Ատանայի (1909) կոտորածին առթիւ Հիւրմի փաշայի կը ներկայանան (Սատրաղամ), «Մուրատ Պոյաճեանը, իբր Կիլիկիոյ (Գողանի) երեսփոխան, իր ստացած մանրամասնութիւնները կը կարգայ

և բերանացի հետեւեալ խօսքերը կ'արտասանէ. «Բռնապետութեան օրերուն լեռները կռուեցանք: Մի՞թէ Սահմանադրութեան այս շրջանին հարկադրուած պիտի ըլլանք նորէն լեռ բարձրանալ...»: (Կոմս, էջ 118):

Ատանայի կտորածէն ետք Պատրիարքարանը բողոքագիրներուով կը լեցուի...:

«Այդ վայրկեանին քերես հետեւողական եւ իրաւացի էր մէկ անգամ ընդմիջու խօսքու եւ վերջ տալու մեր յարաբերութիւններուն իր քիտի հետ», կը գրէ Կոմս (էջ 124), սակայն կը զգուշանան Շէրիաթիներու նոր շարժումէ մը...:

«Դաշնակցութիւնը սրտի մորմոքով դէմ կանգնեցաւ հայ հանրային կարծիքին, նորանոր վտանգներ նախատեսելով խղճան մէջ»:

Վերին Մարմնէն Դաշնակցութիւնը հետեւեալ հրահանգը կը ստանայ. «... Դաշնակցութիւնը հաւատարիմ իր սկզբունքին եւ գործելակերպին, պիտի շարունակէ ՆՈՅՆ ԹԱՓՈՎ եւ աւելի լայն ծաւալով ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻԼ Քուրք Երիտկուսակցութեան (Իրքիստ)ի եւ մտաւորականութեան հետ ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ եւ համադրել այդ գործակցութեան շուրջ այն բոլոր դիմադիր տարրերը — հայ եւ օտար — որոնք գիտակցութիւն եւ նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ ժողովրդի կեղեքուած դասին շահերը»:

«... Իսկ պիտի պայքարի (Դաշնակցութիւնը) կառավարութեան դէմ՝ նոր շեղումներ ԼԹԷ ըլլան Սահմանադրութենէն: Ապա կը պահանջուէր Ատանայի կտորածի ղեկավարներուն դէմ պատիժ»:

Դաշնակցութիւնը այս հիմերու վրայ չի հրաժարիր զործակցել Իթթիհատի հետ»: (Հ. Յ. Գ. Ընդհանուր ժողովի բանաձեւը). տես Կոմս «Իմ Յուշերը», Բ. հատոր, Պէյրութ, 1952, էջ 126):

1909ին, Սելանիկ կ'ուղեւորուին Յ. Շահրիկեան եւ Ա. Գարօ՝ Իթթիհատի հրաւերով, նոյնպէս՝ Սարգիսը (Օտապաշեան) եւ Ղ. Մելոյեան: Անոնք եւս մասնակցած էին Խորհրդակցութեան: Համաձայնիլ դժուար եղած էր: Իթթիհատը մերժած էր խստն յանձնախումբի կազմութիւնը, Համիտիէի ղուեղերու չէզոքացումը: Նոր բանակցութիւններ տեղի կ'ունենան Կոմսի բնակարանին մէջ՝ Պոլիս:

Ներկայ են՝ Իթթիհատի կեդրոնի ընդհանուր քարտուղար միտհաթ Շիւքրի եւ Տօքթ. Նազըմը: Դաշնակցութեան կողմէ՝ Գ. Փաստրմաճեան եւ Կոմս:

Համաձայնագիր —

«Օսմանեան հայրենիքի ամբողջականութիւնը եւ անկախութիւնը ապահովուելու եւ ձեռք բերուած Սահմանադրական իրաւունքներու անխախտ պահպանման եւ պաշտպանութեան նպատակով, Իթթիհատ վէ Թերաքըր եւ Հ. Յ. Գ. կը կնքեն հետեւեալ համաձայնագիրը.

- 1.— Անշեղ գործադրութիւն ժողովրդավար Սահմանադրական օրէնքներուն,
- 2.— Միացեալ ուժերով պայքար հակասահմանադրական յետադէմ տարրերու դէմ,
- 3.— Ապակեդրոնացեալ հիմերով վերակազմել վարչական հիմնարկութիւնները,
- 4.— Հաւասարութիւն եւ անխտրակամութիւն փոքրամասնութիւններու իրաւանց»:

Իրը յաւելուած —

«Վերոյիշեալ որոշումներու իրագործումին հսկելու նպատակով երկու կուսակցութիւններու կողմէ լիազօրուած յատուկ Մարմնի մը կազմութիւնը ընդունուած է:

«ՄԻԱՅՆ ՄՈՒՐԱՏԸ (ՊՅՅԱՃԵԱՆ) ՀԱԿԱՌԱԿԵՑԱԻ ՄԵՐ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ, ՄԻՆՁԵՒ ՎԵՐՉ ԴԷՄ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԵՑԱԻ ՈՁ-ԻՍԻԱՄՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻՆ»: (Կոմս, էջ 131):

«Ներքնապէս դէմ էինք այդ օրէնքին», կը գրէ Կոմս: (Ինչո՞ւ ներքնապէս — Հ. Գ.):

1911ին Պոլսոյ մէջ կը ցումարուի Դաշնակցութեան Յոյ Ընդհ. ժողովը, որ որոշում անձած է «խօսի կապերը եւ առաջադրած հայկական պահանջները հետապնդելու անկախօրէն...: Թէ Իթթիհատը աստիճանաբար նահանջներ է Սահմանադրական ժողովրդական սկզբունքներէ, թէ Իթթիհատը «միջոցներ ձեռք չառաւ պայքարելու եւ մաքրելու իր կազմը աշակողմեան խայտաբղետ տարրերէ», որոնք «հետզհետէ բազմանալով գերակշիռ ազդեցութիւն ձեռք կը բերեն...»:

Թէ հայ ժողովուրդի վերաբերեալ կենսական պէտքերու մասին համաձայնութիւնները առանց հետեւանքի մնացած են, թէ Իթթիհատը չէ խորհրդակցած երկրի կացութեան վերաբերեալ հարցերու մէջ Դաշնակցութեան հետ, եւ թէ անպատիժ կը թողու չարագործները... Եթէ Իթթիհատը գործով երաշխիքներ չտայ կրկնուած խոստումներու մասին, արտօնել Արեւմտեան պիւրոն որ դադարեցընէ իր կապերը Իթթիհատի հետ:

(Տես՝ Կոմս «Իմ Յուշերը», էջ 158-160):

«... Բայց Իթթիհատը ո՛չ միայն գործով երաշխիքներ չտուաւ, այլ ճիշդ հակառակ ձեւով վարուեցաւ»:

«1911ին Իթթիհատի կեդրոնէն գաղտնի հրահանգներ ղրկուեցան գաւառի իրենց գլխաւորները, որոնք կը հրահանգէին անհմարելի եւ անուզողակի միջոցներով սահմանափակել հայերու սրացքը ազգային, կրթական եւ տնտեսական բոլոր մարզերու մէջ, հսկել խտրուած քաղաքական կուսակցութիւններու գործունէութեան եւ ձեռնարկներու վրայ»:

«Հայ ժողովուրդի բոլոր հոսանքներու համբերութեան բաժակը մեզմէ առաջ իսկ լեցուած էր: Շարունակ յանդիմանութիւններ կը ստանայինք, թէ՛ դեռ ինչո՞ւ կը շարունակեմք հանդուրժել իթթիհատական քշնամական այդ քաղաքականութեան, թէ՛ դեռ կը հաւատա՞նք կեղծ ու պատիւ այդ Սահմանադրութեան եւ «Օսմանեան Հայրենիք»ին...: Ատանայի ջարդը դարձակետը եղաւ, որ վերջնականապէս ջախջախեց մեր ժողովուրդի հաւատը եւ սքափեցուց մեզի: (Իրա՞ւ արդեօք — Հ. Գ.):

Ազգային Վարչութիւնը 1912 Դեկտեմբեր 21ին կը վերահաստատուի հետապնդելու համար Բարենորոգումներու հարցը: Ազգային Վարչութեան անդամներ՝ Հնչակեաններ՝ Մուրատ Պոյաճեան եւ Ներսէս Զաքարեան, Դաշնակցականներ՝ Կոմս եւ Տօքթ. Փաշայեան, չէզոք՝ Տ. Երկանեան, Լ. Տէմիրճիպաշեան, Ոսկան Մարտիկեան եւ Ս. Սուրն:

Կ'ընտրուի «Ապահովութեան Յանձնաժողով» մը, Հայկական Հարցը հետապնդելու կոչուած Քաղաքական Մարմին մը՝ Պատրիարքարանի խառն նիստին 21 Դեկտեմբեր 1912ին հետեւեալ կազմով՝ Դուրեան Պատրիարք, Պալաքեան Վրդ., Ստ. Գարայեան, Ոսկան Մարտիրեան, Լ. Տէմիրճիպաշեան, Մուրատ Պոյաճեան եւ Կոմս: (էջ 185):

Սեւանիկի 1911ի Հոկտեմբեր ամսուան Իթթիհատի համադումարին առնուած որոշումէն հատուած.—

«Պէտք է փութացնել ղէպի Կովկաս եւ Թուրքեստան ներգաղթը: Թուրք սպառնալից գաղթականներուն յատկացնել հողեր, եւ արգելել քրիստոնեաներուն, սեփականատէր ըլլալ: Քանի հակա-սուրբ պայքարը ձախողեցաւ, փոխարէն պէտք է ձեռնարկել քահանաներու եւ ոչ Թուրք ուսանողներու եւ պաշտօնեաներու վտարումը Թուրքիայէն: Պէտք է որ Թուրքիան էպպէս եւ իրապէս իսլամ երկիր մը դառնայ եւ իսլամական աղղեցութիւնը պէտք է որ գերակշռութիւն ունենայ: Կրօնական ամէն ուրիշ փրօփականտ խեղդուի: Կայսրութեան զոյուցութիւնը կախում ունի Երիտասարդ Թուրք կուսակցութեան ուժէն եւ ըստը հակամարտ գաղափարներու ճնշումէն»:

Հիւսէյն ճահիտ կ'եզրակացնէ. «Թալաթ իր հեռատես եւ պայծառ ըմբռնումով թէ ղի'ս փրկեց եւ թէ զետիմ պատրաստեց Թուրքիոյ ապագայ փրկութեան համար»:

... Բայց այժմ ինձ պարզ էր նաեւ այն, որ համադործակցութեան ըստը ջանքերը Թուրք մտաւորականութեան հետ արդիւնք չեն տալիս, որ նրանց մէջ կամք չկայ, ցանկութիւն չկայ ընդառաջելու հայ ժողովրդի ամենատարրական պահանջներին եւ Իթթիհատականների վերարեմուտքը ղէպի հայերը տարբերում է Համիտի քաղաքականութիւնից միայն իր «արդիական կեղեւով»:

(«1915 Թուականը», Վ. Մինախորեան, 1949 Վենետիկ, էջ 39):

Յարութիւն Շահրիկեան (Ատոմ) Իթթիհատի օրով Դաշնակցական երեսփոխան.—

«Շատ ջանք թափեցինք... յանուն համերաշխութեան մէկ կողմ դրինք մեր բուն հայեցակէտերը, մեր հաւատոյ հանգանակը՝ Ժողովրդի ինքնապաշտպանութիւնը...»:

«Լոնց ու մնաց: Հայեցքը կորաւ (Ակնունիի) այնպսութեան մէջ: Ապա, մահուան դատապարտուածի պէս, մըմնջաց»:

« — ԽԱՐՈՒԵՑԱՆՔ, ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ, ԽԱՐՈՒԵՑԱՆՔ:

« — Զգուշացէ՛ք, կառավարութեան ընթացքը խարդախ է. կամք չունի ընդառաջելու մեր արդարագոյն պահանջներուն եւ առաջին յարմար առիթով կը պատռէ բարեկարգութիւններու ծրագիրը, դուրս կը վնասէ բարեկարգիչները եւ դէմ առ դէմ հաշուի կը մտի մեզի հետ»...:

«Ապա կը նայի Դաշնակցական Գարեգին Թերզեանի եւ կը հարցնէ Ակնունի.—

« — Ի՞նչ կը մտածէք...»

Եւ կ'եզրակացնէ.

« — Ազատութիւն ստացանք, որ մո՛ւլ-մո՛ւլ ջնանա՞նք. իսկ ո՞ւր են ձեր խմբերը, ղէնքերը ո՞ւր են...»:

(Տես՝ Վահան Մինախորեանի «1915 Թուականը», էջ 51-52):

(Բայց Ակնունին այդպէս կ'արտայայտուի էրզրումի 1914ի Դաշնակցութեան Համադումարէն ետք... Պոլիս վերադարձի ճամբուն վրայ... 1907 եւ 1914 տարբէ՛ր թուականներ են անշուշտ. ղի'նուիլ թելադրելու համար — Հ. Գ.):

«Երազանքի ու տաղնապանքի տարիներ», զրբին մէջ Գարբիէլ Թազուրեան, Գահիրէ, 1961, կը գրէ.—

1908 Յուլիս 10... Ամէնէն աւելի ուրախ էր, ուրեմն հայ ժողովուրդը եւ իրաւա՛մբ: Այն օրերուն (Սահմանադրութիւն) ԲԱՅԱՐ-ՁԱԿԱՊԵՍ ՉԿԱՐ ՀԱՅ ՄԸ՝ ՈՐ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԻ ԼԵՏՈՒԱԾ ՁԸԼԼԱՐ ԼՐԻԻ: (էջ 12):

«... Վաղը ի՞նչ կրնար բերել — ՄԱՐԴ ԶԷՐ ԳԻՏԵՐ: Ո՞վ ԿՐՆԱՐ ՏԻՐԱՊԵՏԵԼ ՎԱՂՈՒԱՆ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐՈՒՆ»: (Ընդդժումները իմա են — Հ. Գ.):

Ազատ Ոստանիկ կը կազմակերպէ եւ Իթթիհատի Ատանայի 1909ի կոտորածին, մեծ դեր կը խաղայ Կեսարիոյ շրջանի մէջ: Դաշնակցութիւնը եւ Հնչակեանները կը համաձայնին միասնաբար պաշտպանել Կեսարիան, որ ջարդի սպառնալիքին տակ էր... Իթթիհատը պայման կը դնէ որ Ազատ Ոստանիկ (Սաչը Ֆետային) հեռանայ շրջանէն, (յետոյ զայն պիտի սպաննէր Իթթիհատը Վանի մէջ Եղեռնէն առաջ, որպէս թունդ հակա-Իթթիհատական): Միւս միտ Թազուրեան սեւցնելէ ետք Կեսարիոյ Հնչակեան կարգ մը ընկերները, կը գրէ թէ «Հնչակեան զործիչ Ազատ Ոստանիկ կ'ուղէր զործի ինքնազլուխ, առանց անսալու իր սպառնալից կոմիտէին, որ շուարած, ստիպուած էր ազատ ձգել զայն, աղէտ մը կանխելու համար խոհեմարար»:

Ազատ Ոստանիկ Փարամազի հետեւորդ մըն էր...: (Պիտի անդրադառնանք իր մասին):

Միւս միտ Թազուրեան, զրբին էջ 79ին մէջ կը գրէ, թէ 1910ին սկսեալ Թուրքիոյ քաղաքական հորիզոնը ամպոտելու նշաններ ցոյց կուտար: Սահմանադրութիւնը անբովանդակ բառ մը դարձած էր ա՛լ եւ անոր ղիմակաւոր ախոյեանները — մոլեռանդօրէն անփորձ Թուրք քաղաքագէտներ...: Իսկ հարց է ղիտնալ, թէ ամպոտելու այդ նշանները ինք 1914ին տեսաւ, թէ 1961ին, երբ այդ ղիբքը զրբեց... Իսկ Ակնունին, Վարդգէսը, Գարօն, Վրամեանը, Կոմսը — զղացին այդ վտանգը էրզրումի Դաշնակցութեան համադումարէն յետոյ, թէ Չանկըր «գաղթելու» 1915ի շրջանին: Թազուրեան կը գրէ, թէ Հնչակեան Կուսակցութիւնը ԶՊական, սպա Անգարայի դատաւարութեան եւ կախաղաններուն, Համիտեան հալածանքներուն շնորհիւ իր հետ Կեսարիոյ մէջ ցիրուցան անհատներ մնացած էին 1913ին... մինչ Դաշնակցական ցանկին ղէմ Կիւմիւլեան մարմարանը ձեռք կ'առնէր Հնչակեան Կուսակցութիւնը եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղական ընտրութիւնը կը շահէր...:

Միամտութիւն չէ՞ իր կողմէ գրել, «Հայը կը զզար միամտորէն վտանգը, բայց անկարող հակադրելու», հարկադրուած էր ճակատադրապաշտութեան ապա-
հինիլ, ի՞նչ կարելի էր ընել «Անհնաւորին» առջեւ, երբ ան կը զլանար նոյնիսկ
չնորհել ապահով ապրելու տարրական իրաւունք մը իր բախտին ձգուած ժողո-
վուրդի մը, ինչպէս էր հայն այն տարիներն: (Էջ 136): (Այդ հարցումին պա-
տասխանը Ակնունին տուած է «Մեմֆ սխալուեցինք»... Իքթիհատին վստահելով,
(Տես՝ Վ. Մինախորեանի «1915 Թուակամը» գիրքը):

Այս «միսքիքը» իթթիհատին հետ «Նույա երթալու» ցնդեցաւ
Ակնունիի ու Կոմսի մօտ, երբ հայ ժողովուրդի Եղեռնը սկսած էր
եւ «Գորշ Գայլը կատար» էր... Նաեւ իրենց դէմ...:

Ե. ԹՈՓՃԵԱՆԻ ՎԿԱՑՈՒԹԻՒՆԸ

1876Ի ՄԻՏՀԱՏԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

«Երիտասարդ Թուրքիան եւ Հայերը», լոյս տեսած 1909ին Թիֆլիս, իր Ա.
Մասին մէջ կը խօսի ծանր դրութեան մասին որուն մատնուած էին ոչ-Օսմանցիները
Օսմ. բռնատիրութեան շրջանին. տուրքերու ծանրութեան ներքեւ: Ըստ գիրքին՝
Սուլթան Համիտ տարեկան կը ծախսէր յիսուն միլիոն ռուպլի իր կանանոցին հա-
մար: Եթէ տարեկան 500 ռուբլի էր արհեստաւորի մը ծախսը, այդ հաշուով դուրս
կուգայ, որ այդ գումարով կրնային ապրիլ 100 հազար ընտանիք: Անոր կիներու
թիւը կը հասնի 300ի:

Մեծ կաշառք տուողը պաշտօն կրնար ստանալ: Կաշառակերութիւն՝ վարչա-
կան բոլոր ասպարէզներուն մէջ:

Հասարակ գրադրէն ու մուխթարէն սկսած մինչեւ վալի, նախարարն ու
նոյնիսկ Մեծ Վէզիրը բռնուած են այդ հիւանդութեամբ: (78):

ԺԲ. դարու Օսմանեան Կայսրութեանն անջատուած էին Յունաստանը, Սեր-
պիան, Չերնոգորիան, Ռումինիան, Պուլկարիան 349,121 քա. քմ. հողամաս,
14,712,000 բնակչութեամբ եւ կարելի էր Օսմ. անմիջական իշխանութեանն րաժնուած
երկիրներ նկատել Եդիպտոսը, Կիպրոսը, Պանիա Հերձեկովէնը, Կրէտէն, Սամոսը:
Մէկ միլիոն քա. քմ. եւ 13 միլիոն բնակչութեամբ:

«Պաթթը Հիւսթայոնը» որ 1856ին բարեկարգութիւն կը խոստանար «Թանդի-
մաթթ»ի կրկնութիւնն էր:

Մէճլիսները պիտի բարեկարգուին, հարկահանութիւնը պիտի կանոնաւորուի,
... բայաներն ալ պատգմ. պիտի կրնան ունենալ, օտարներ պիտի կրնան Թուրքիոյ
մէջ հողեր ձեռք բերել:

... Սուլթանը չի գործադրեր Սահմանադրութիւնը, Միտհատ խիստ բողոքելէ
ետք «Իզգետտին» նաւով կ'աքսորուի Եւրոպա... ապա Սուրիոյ, Իզմիրի վալի, ապա
ձերբակալուած ու դատ: 1891ին կը սկսի դատը, զրպարտուած Միտհատ մահուան
կը դատապարտուի... Եւրոպայի հանրային կարծիքը կ'ընդվզի... Արարիոյ Թաիֆ
քաղաքը կ'աքսորուի Միտհատ, Տամատ Մահմուտ Փաշայի եւ Շէյխ իւլ Իսլամ Խայ-
րալլա Էֆէնտիին հետ... հոն կը հիւանդանայ... առողջանալէն ետք Ս. Համիտ
կը փորձէ թունաւորել տալ գինք... ապա բանտին մէջ կը խեղդեն, 1883ի Ապրիլ
2ին: (Էջ 180): Նոյնպէս կը խեղդեն Տամատ Մահմուտ Փաշան... Համիտ կ'իմանայ
որ Միտհատ Եւրոպա փախած է, դահիճ կը զրկէ, Թաիֆ եւ հոն զլխատել կուտայ
դիակը... Միտհատի զլուխը Պուլիա Համիտին կը բերուի... (Տես մանրամասն՝
«Revue des Deux Mondes, 1908»):

1877ի սկիզբը դուստրուած Օսմանեան Խորհրդարանի անդամ էին 13 հայեր:
Վիչէն Զօլաս, Սերվիչէն, Յովհ. Ալլաշվերտի, Սեպուհ Պէյ Մաքսուտ, Միմոն Պէյ
Մաքսուտ, Ալ. Մաքայեան, Յակոբ Մաքայեան, Յակոբ Գազաղեան (Փաշա), Ռուրէն
Էֆ., Մանուկ Խարաճեան, Համզ. Պալլարեան, Յակոբ Շահինեան, Յակոբ Էֆ.
Յրէնկեան:

Երևի. Խարաճեան Մանուկ (1877ի նիստին) կը յայտնէ թէ — օտարի պէտք
չունին, դո՛ւ են հայերը իրենց ճակատադրէն, եւ թէ պատրաստ են իրենց վեհա-
պետ Ռուսիոյ դէմ պաշտպանելու:

Մաքսուտեան Սեպուհ կ'երկրորդէ Մանուկ Էֆէնտիին: Սուրիոյ յոյն եւ մարոնի
երեսփոխանք Նոֆէլ եւ Նազազ նոյնպէս համամիտ կ'ըլլան հայ երեսփոխաննե-
րուն տեսակէտին:

... Կառավարութիւնը ճառերը հրատարակեց: Այս ատիւ հայոց դէմ դատու-
ներու մէջ գործադրուող ոչ-օրինական ճնշումներուն դէմ կը բողոքէ յոյն երեսփո-
խան Սուլիատէս Էֆէնտի. «Քրտաց Երեսէն հայոց կրած անթիւ չարչարանքն ու
աղէտը»: Հայ երեսփոխանք օրինակ կուտան 1876ի Վանի հրդեհն ու թալանը որ
կատարուած է իշխանութեանց քաջալերութեամբ: («Մասիս», 1877, թիւ 1985):

Ե. Թոփճեան կը գրէ, թէ՛ Խորհրդարանը դարձած էր կառավարութեան կա-
մակատարը: (Էջ 197):

Այլ նիստի մէջ երեսփոխանք՝ նոյնիսկ թուրքեր, կը դատապարտեն Նահանգ-
ներէն ներս տիրող բռնութիւնները:

Այսինքն երեսփոխան Ահմէտ Էֆէնտի կ'ըսէ. — «Թուրքիոյ մէջ դատական
պաշտօնեաները մեծ մասամբ անբարոյական եւ կաշառուած մարդիկ են»: («Մասիս»,
Պուլիս, 1878, թիւ 2080-2):

Նիշի երեսփոխան Սուլէյման Էֆէնտի. — ... Բայց պատիժ կրող պաշտօնա-
տար մը երբեք տեսած չենք, եւ սակայն յանցաւոր պաշտօնատարք խիստ շատ կան,
պէտք է որ պատժուին:

ԻԹԹԻՀԱՏԻ 1902Ի ՓԱՐԻՋԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

4-9 Փետր. կը մասնակցին Թուրք, հայ, յոյն, քիւրտ, ալպա-
նացի, չէրքէզ եւ հրեայ պատուիրակներ: (Ա. Ահարոնեան՝ ներկայ):

Խորմաքըն Բամսը կը յիշէ թէ՛ «Հայերը լաւ կազմակերպուած եւ որոշ ծրա-
դիրներ ունեցող միութիւններ կը ներկայացնէին: Համաժողովին ներկայացած էին
որոշ շահեր հետապնդելու հաստատամտութեամբ: Անոնք նախապատրաստուած էին
շահագործելու առիթը, եթէ հնարաւոր ըլլար բայց տրամադիր չէին երբեք իրենց
ծրագիրներէն սեւէ մէկը ենթարկելու մեծամասնութեան կամքին...»:

Իշխան Սապաէտտին, ժողովին նախապահ: Իր բացման ճառին
մէջ կը յիշէ տիրող թուրք վարչակարգին թերութիւնները, հպատակ
ժողովուրդներու կրած զրկանքները եւ կը շեշտէ Բարենորոգումներու
անհրաժեշտութիւնը:

Որոշումները՝

«Մենք, Օսմանեան ժողովուրդներս, կը զլանանք որեւէ տեսակի միանու-
թիւն այն վարչակարգին հետ, որուն իշխանութեան ներքեւ ապրած ենք 25 տարի,
հարստահարիչ վարչակարգ մը, որ միակ ազգիւրն ու ներշնչիչն է Կայսրութեան
մէջ գործադրող բոլոր շարքեաց եւ մարդկային նախատիւնքի:

1. — Մեր մտադրութիւնն է Կայսրութեան զանազան ժողովուրդներուն եւ
ցեղերուն միջեւ դոյացնել համաձայնութիւն մը, որ բոլորին անխտիր պիտի ապա-
հովէ կատարեալ վայելքը իրաւունքներու — հաստատուած «խաթթեր»ով եւ նուի-
րադրուած Միջազգային Համաձայնագրերով — տեղական վարչութեան մէջ
պաշտօններ պիտի հայթայթէ անոնց, զանոնք պիտի զնէ քաղաքացիական իրաւունք-
ներու եւ պարտականութեանց հաւասար գետնի վրայ եւ պիտի ներշնչէ զանոնք
հաւատարմութեամբ մը զէպի պահն ու Օսմանեան արքայատոհմը, ատանց որու
կարելի չէ միութիւն դոյացնել:

3.— Պիտի ջանանք ամէն պարագայի բոլոր Օսմանեան ժողովուրդներու փափաքներն ու հայրենասէրներու ջանքերը կեդրոնացնել հետեւեալ նշանարաններուն շուրջ:

Ա.— Օսմ. կայսրութեան ամբողջականութեան պահպանումը:

Բ.— Յառաջդիմութեան որպէս անհրաժեշտ պայման, վերահաստատել մերփին կարգապահութիւնն ու խաղաղութիւնը:

Գ.— Յարգանք կայսրութեան հիմնական օրէնքներուն հանդէպ: Մասնաւորաբար 1876ի Սահմանադրութեան, որ անվիճելի գրաւականն է Ընդհ. Բարենորոգութեանց, Օսմանեան ժողովուրդներու իրաւունքներուն եւ քաղաքական ազատութեանց եւ հակասողը՝ կամայականութեանց:

Դ.— Մեր հաստատ որոշումն է յարգել Միջազգային Համաձայնագրերը, մասնաւորապէս Պերլինի Համաձայնագիրը, որուն տրամադրութիւնները — Թուրքիոյ կարգապահութեան հետ ազերս ունեցողները, պիտի գործադրուին կայսրութեան բոլոր գաւառներուն համար:

Չորրորդ կէտը հաճելի չէր կրնար թուիլ Իթթիհատի աջ թեւին, սակայն լուռ մնացին: Երբ եւրոպական զործոն միջամտութեան մասին յօդուած մը պէտք եղաւ աւելցնել՝ Ահմէտ Ռիզա եւ իր համախոհները որոտնդոստ բողոքեցին, հակառակ ատոր որոշուեցաւ:

«... Յանձնարարութեամբ կազմել, 1878ի Դաշնագրի գործադրութեան ի նպաստ: Ահմէտ Ռիզա ցոյց կուտայ Եւրոպացիներու շահամոլութիւնը, անոնց միջամտութեանց բերելիք վնասները:

«Վեր. Հնչակեան եւ Դաշնակցական պատուիրակները յայտնեցին թէ պատրաստ են ոչ թիմի տապալման համար գործակցիլ, անկախ պիտի գործեն, 61րդ յօդուածի գործադրութիւնը կը պահանջեն ինչպէս նաեւ բարենորոգութիւն»:

Համաժողովի վերջին եղբակցութիւնն այն էր որ նոր վարչակարգը պիտի ըլլար արդար եւ ազատ... յիշեցնելով Եւրոպայի տէրութեանց, որ իրենց եւ Բ. Դրան միջեւ գոյութիւն ունեցող Դաշնագրերու եւ Միջ. Համաձայնութիւններէն Օսմ. կայսրութեան բոլոր մասերը պիտի օգտուին:

Յոյն եւ Ալպանացի մեծամասնութեամբ յայտնած են, թէ իրենք ազգու միջոցներու նախաձեռնութեան կողմնակից են տեղական ինքնավարութիւն ապահովելու հայերով բնակուած գաւառներէ ներս եւ հաստատումը Կեզր. կառավարութեան մը հիմնուած ազատական գաղափարներու վրայ...:

(Տես՝ Էրնէստ Բամսէօր «Տը Երնկ Թիւրքս», Նիւ Ճըրսի, 1957, էջ 10-20):

Կայսրութեան հպատակներուն յատուկ «Օսմանցի» բառը Ալի Ռիզայի համար քուրք կը նշանակէր եւ եթէ Օսմանցի անհատը քուրք մը չէր, պէտք էր քուրք դառնար:

Բժիշկ Իպրահիմ Թեմօ — 1889ի Թերաքը վէ Իթթիհատի հիմնադիրը՝ անկարող եղած է համոզել Ա. Ռիզան, թէ առանց զիջումներու կարելի չէ փոքրամասնութեանց ազգային մտիւրում մերընչել:

«Ինքնավարութիւնը դաւաճանութիւն է, ատիկա անցատում կը ձեռնարկէ», կ'ըսէր Ա. Ռիզա:

«Թուրքերը ժողովին ձախողութիւնը կը փորձեն վերագրել հայոց»:

Եւ տակաւին՝ «Ընդհանուր ապստամբութիւն, ի պահանջել հարկին եւ գործող գաղտնի Յեղփ. Կազմակերպութիւններու հետ մնայուն Գործադիր Մարմին մը կազմել»:

«Ազատարար Շարժուն Բանակին Յաղթական Մուտքն ի Կ. Պոլիս», Պրակ Ա. 1909ին Պոլիս լոյս տեսած գիրքը՝ տպուած Ձղօն Փափաղեանի տպարանին մէջ, որոշ գաղափար կուտայ 1908-9ի շրջանի հողեկան միջոցներուն եւ Յետաշրջական շարժումին յաջորդող Ազատարար բանակի զսպողական միջոցառումներուն, Համիտի զահնդեան կեցութեան, Սուլթան Մուհամմէտ Ռէշատ Ե.ի զահակալութեան եւ այդ առթիւ Թրակապուլթեան արարողութեան եւ նոր Սուլթանին Սահմանադրութեան հաւատարիմ մնալու երդումին շուրջ:

Ամբոխը քարուքանդ կ'ընէ Մարտ 31ի ղէպքին երկրորդ օրը Իթթիհատի «Թանին» եւ «Շուրայի Իւմմէթ» օրկանները, որ Շէրէֆ փողոցի Իթթիհատի Ակումբը կը տպուէր... Ըստ ամբոխին, Իթթիհատը խարած էր զիրենք եւ բանակը իր գործիքը դարձուցած եւ պաղ վերաբերում ցոյց տուած էր կրօնական պարտականութիւններու նկատմամբ, միշտ իր արբանեակները տեղաւորելով պաշտօնի վրայ... (էջ 55):

Համիտի ի նպաստ դիրքորոշուող սպանները ոչ-պարոզական, պատահարաբար պաշտօնի հասածներ, կը պահանջէին որ ուսումնական սպանները գործի չմղուին: Շփոթ կացութիւն կը տիրէ, Համիտի կողմնակից ո'չ մէկ զինուորական Փաշա ղուլիը շանցնի Երիթիականներուն, Համիտ բնականէն կասկածամիտ, ղէպքերուն զարգացման կը սպասէր զիրքորոշուելու համար: 10 օրերը ի նպաստ Երիտ. Թուրքերուն վերջացան, որոնք Սելանիկի Գ. եւ Բ. բանակներով աւելցին յետադիմական շարժումը զոր որքան ալ կը փորձեն արդարացնել պատմարաններ Մ. Թուրան եւ Ա. Պետեի Գուրան որպէս Իթթիհատի մենատիրութեան ղէմ ուղղուած շարժում, սակայն իրողութիւն է որ մեզմիտ, յետադիմական, կրօնամոլ բնոյթ ունէր ան: Երբ Մ. Շէվքէթ Փաշայի զօրքերը Պոլիս մտան... 1500 հոգաներ փախած էին Պուլէն... Սուլթանը փորձեց անուշի կապել գործը... եւ Իթթիհատի յանձնեց իր ամենէն հաւատարիմ զգործակիցները, Շաքիր, Սայիտ, Մուրատ, Իլիաս, Թահիր, Մէվլան Չատէ Ռիֆաթ, Ա. Ճէվտէթ «Իզտամ»ի արտօնատէր... Շէյխ Վահտէթ... Իսմայիլ Բէմալ 600 հազարնոց չէք ստացած էր Համիտէն այս նպատակով... 543 հոգի էին «դաւաղիրներ»... (էջ 143):

Դաշնակցական (Ազարիկ) եւ Հնչակեան (Կայծ) Սելանիկի բանակի հրամանատարին կողմն ընդառաջելով Սկիւտարի Սելիմիէի զօրանոցը կ'երթան... (*) «Մեր նպատակը մէկ է, կ'ըսէ Օսման Էֆէնտի որ հրամանատարն էր, կը խնդրէ որ զիշերը Պոլսոյ թաղերու պաշտպանութեան օգնեն... «Ինչպէս կ'ընէք արդէն...»:

«Անմիջապէս խումբ մը Հնչակեան եւ չէզոք բժիշկներ գացին վերաուր զինուորները... դարձանելու: Դաշնակցականներ երկու բժիշկով եւ բոյժքոյրերով նոյնպէս օգտակար եղան»:

«Իսկ Հնչ. մասնաճիւղը Գանճեան(?) Շ. Փանոսեան եւ ուրիշներ, մասնակցութեամբ Ե. Փափաղեանի ու թաղեցի երիտասարդներու, հանդանակութիւն կատարեցին տուններու մէջ եւ փառաւոր ճաշ մը տուին իրենց թաղի զինուորներուն: (էջ 164-65):

(*) Ստուգումի կարօտ է:

Ի՞նչ կը զրէր 1913ին Հ. Յ. Դ. ի հրատարակութիւն եղող «Հայկական Շարժման Նախապատմութիւն», Բ. Հատորին մէջ, Միք. Վարանդեան Երիտ. Թուրքերու մասին.—

«... Թէ՛ 1908ին եւ թէ՛ 1876ին Երիտ. Թուրքիոյ հեղինակած Սահմանադրութեան մէջ չկայ անկեղծութիւնը: Հաւասարութիւնը եւ համա-Օսմանեան եղբայրութիւնը լոկ շլացուցիչ բառեր էին. «թիրք» անուան տեղ «Օսմանցի» անունը հռչակելով (այդպէս էր աստղադրում Միտհատ Փաշայի քաղաքական իմաստութիւնը), չէր փոխուում ուսիսի ստորադրեալ վիճակը, չէր թաքցուում սրբազանագոյն եւ սիրական օրէնքն էր»:

ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Մինչ այդ՝ մենք հայերս, յոյս ունէինք, թէ անցելի դասերէն օգտուելով Թուրք ղեկավարները (Իթթիհատը) քաղաքացիական իմաստութիւն պիտի ունենան վերջին փորձ մը ընելու՝ Օսմանեան կայսրութիւնը ազատելու համար անխուսափելի քայլերու մէջ: Միակ ճամբան որ ունէին, հասկացողութեան եղբ մը գտնելն էր հպատակ ցեղերուն հետ: Մեր այդ յոյսերը օղբ ցնդեցան 1910 թուականին, երբ Երիտ. Թուրքերը սկսան իրացնել, իրենց նախորդներուն պետական տեսակէտները եւ նոր միջոցներով աշխատել յաւերժացնել Թուրք ցեղին ճրիակերութիւնը ի հաշիւ հպատակ ցեղերուն:

«... Միւս կողմէ կը խուսափէինք յարձակողական քաղաքականութիւնը Թուրքերուն (Իթթիհատ) հանդէպ, որոնք իրենց ամբողջ ուժն ու ուշադրութիւնը դարձուցնէին Մակեդոնիոյ վրայ: Մենք ուրիշ կերպ ալ չէինք կարող անել, մեր դաւանները արիւնքամ էին եղած Համիտեան ուժերի օրով եւ պէտք ունէին համգիտի:

«1908ին մօտ 50 հազար զաղթական հայեր կողմակէն վերադարձան այս երեք նահանգները, իրենց քանդուած տները վերաշինելու:

«... Ասոր համար էր որ մենք՝ Դաշնակցական երեսփոխաններս, Պոլսոյ փարլամէնթին մէջ խիստ ընդդիմութիւն ցոյց չէինք տար Ե. Թուրքերու (Իթթիհատ) կառավարութեան հանդէպ մինչեւ 1912 թուականը: Ձէինք մոռնար երբեք Ե՛ւ այն պարագան, որ անոնց ընդդիմադիր Թուրք տարրերը մեծամասամբ Սուլթան Համիտի քաղաքականութեան կողմնակիցներն էին եւ հակամէտ էին նոյնը ընելու երբ ուժը իրենց ձեռքն անցնէր...»:

«Ապրում Օրեր» (Հայկ, 1937), գրքին տէրը Արմէն Գարօ, էջ 259ին մէջ կը վկայէ, թէ «1910 թուականին Սելանիկի (Իթթիհատի) Համագումարին մէջ «Երիտասարդ Թուրք»ները վերջնականապէս ընդգրկեցին Համաթուրքական կամ աւելի ճիշդը, Համաթուրքական ծրագիրը»:

Ապա մեր կողմէ հարց կը տրուի, թէ ամենէն շատ երեսփոխան ունեցող Դաշնակցականները եւ անոնց թեկնածու Արմէն Գարօն, ի՞նչպէս եւ ինչո՞ւ լոռիքիւն կը պահեն 1910-13ի շրջանին եւ ինչո՞վ կ'արդարացնեն Կուս. կրաւորականութիւնը մինչեւ 1914ի կարճոյ Դաշն. Համագումարը, Եղեռնէն տասնեակ տարիներ ետք գրելու համար «Ապրում Օրեր»ուն մէջ, թէ «Մեր այդ յոյսերը օղբ ցնդեցան 1910ին»... ցնդեցա՞ն թէ շարունակեցին զործնական զետեղի վրայ համաձայնաբար մէկ ազգութիւն, Օսմանցիութիւն գաղափարին շուրջ գործել... Երբէ՞ն ի վեր փառաբան կուս. մը նկատի առած էր կրաւորական դիրք բռնել Համիտեան շրջանէն ամայացած հոգեբուն սիրոյն՝ ցարդի ծրագիր որոնացող Իթթիհատի հաշտոյն...:

Ինձ հետ հազիւ մէկ քանի ազդ. երեսփոխաններ կը փորձէին ի զուր մատնանիչ ընել Թուրքիոյ հայութեան սպառնացող վերահաս ահաւոր վտանգը: Սակայն աքսորի սպառնալիքներով յոռութեան դատապարտած էին բողոքողները, շնորհիւ մայրաքաղաքին ոստիկանական Ընդհ. Տնօրէն Պէտրիի ամենազօր միջամտութեան...: (1914 թ.):

(Տես՝ «Հայ Գողգոթան», (1914-1920), Ա. Հատոր, Գրիգորիա Մ. Վրդ. Պալաքեան, Վիէննա, 1922, էջ 45):

«Ստուգիւ Սելանիկէն կարծեցեալ ազատութիւնը բերող Երիտասարդ այս Թուրքերը, գաղափարապաշտ ազատականութեան դիմակին տակ թագնուած ամենավայրագ կատաղի վագրերն էին»: (էջ 54):

Ոստիկանապետը երբ կը ներկայանայ Ակնունիի (Պաշտուր Մալումեան) եւ կը հրաւիրէ որ իբր ձերբակալեալ հետեւի իրեն ղէպի ոստիկանատուն, սա ապշած կը հարցնէ, թէ — Թալաք լուր ունի... — Եւ երբ քաղաքային հազուատով ներկայացող ոստիկանապետը ցոյց կուտայ Թալաքի ստորադրութիւնը կրող ձերբակալման հրամանագիրը, ողորացեալ Ակնունի ալ աւելի զարմացած կը պատասխանէ թէ — ի՞նչ Թալաքի մօտ նաշի էր քիչ առաջ, հապա ինչո՞ւ ոչինչ չէր ըսած իրեն...:

Օսմանիէի մէջ Ակնունի կ'ըսէ.— Ձեմ ցաւում մահուանս վրայ, զի մի օր անպայման պիտի գար մահը մեզ գտնել, այլ միայն ցաւում եմ, որ մենք էս քուրք սրիկաներից խաբուեցանք...»:

Թուրք Կիւպլիւզ Չատէ Սիւրէյա Պէյի պէս հայոց ղէմ վրէժով լեցուած հրէշ մը, որ իբր չէթէպետ հազարաւոր հայերու սպանութեան պատճառ եղած էր, ըսած է հայու մը. «Ես յաճախ ներկայ եղած եմ ծեծի ու փետի արարողութեան, Մուրատի (Պոյաճեան), կարապետ Չէյտեմեանի (Ղարա ձէհէնէմ, Հնչ.) եւ Վիշապեանի (Դաշն.) հայրենասիրութեան վրայ հիացած եմ, Թուրք մը ըլլալովս հանդերձ: Եթէ ասոնց պէս քանի մը հարիւր յեղափոխականներ գտնուէին, այդ գուրու կալապալըք հազարներու տեղ, Հայ ազգը փրկուած էր արդէն ինքնին: Ծեծի անտանիլի հարուածներուն տակ, ժայռ քարէն պատասխան կ'առնուէր թերեւս եւ սակայն ասոնցմէ բառ մը կորզել կարելի չեղաւ»: (Տես՝ «Պատմ. Հայ կեսարիոյ», 1937, Արշակ Արլոյաճեան, Բ. Հատոր, Գահրէ, էջ 1442):

ԻԹԹԻՀԱՏԸ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋ

Ա. Նազարբէկ «Կրան Օրեր»ի մէջ Փարիզ, 1896 Յունուարին կը խօսի.—

«Կար ժամանակ, որ հայու գլխուն կը գարնէին, ան կը սմէր, կը կծկուէր, կը պզտիկմար, կ'աղաչէր, կը պաղատէր, կ'երկրպագէր, ոտք, ձեռք կը համբուրէր, գրութիւն կը հայցէր, բայց հիմա այդպէս չէ՛: «Հիմա հայը կուտմ է յեղափոխական կարմիր դրօշ է ծածանեցնում, եթէ մեռնում է, ապա մեռնում է ո՛չ թէ ստրուկի, այլ ազատ մարդու մահով, որոշեալ իրաւունքի եւ նպատակի համար...»:

«Իթթիհատականները քմիծաղ արձակեցին: «Ու յանկարծ Ա. Նազարբէկ ծոցի զրպանէն հանեց էտհէմ Փաշայի բանակներուն ղէմ ամիսներէ ի վեր կուրծք տուող Չէյթունի մարտիկներէն Եկած կարմիր մեկանով գրուած նամակը, որ այսպէս կը սկսէր. «Յաղթեցի՛նք, Յաղթեցի՛նք...»: Դահլիճը աննկարագրելի ողբերգութեան մէջ մտաւ, ծափահարութիւնը, ուրախութիւնը, արտասուքը, ցնծութիւնը թեւ առին:

Հազիւ խաղաղութիւն տրեց, երբ Աճմէտ Ռիզան կերկերաձայն բացազան- չեց. «Թոզ կուրնայ Սուլթան Համիտը, երբ երկրի մը գինուորները փոխանակ Մեր- սին հանելու, նաւապարք նանապարիք կորսնցնելով՝ Երանց Սուէզ է տանում, հար- կաւ վերջը այս կ'ըլլայ»: Ու գլուխը կախ, փնթինթալով Իթթիհատի պարպուիլը դուրս գնաց, կը վկայէ Ընկ. Ս. Սապահ Գիւլեան:

Հնչակեանները կը կաղմակերպեն 1896ի գարնան «Օթէլ տէ Սոսիէթէ Սա- ւան»ի մեծ սրահին մէջ հրատարակային ժողով: Կը խօսին ժիւլ Ռոշ եւ Մինաս Զերազ: Երբ ժիւլ Ռոշ կը խօսի թուրք զազանութեանց մասին, Իթթիհատական թուրք մը, չկարենալով ինքզինք դսպել, կը պոռայ, թէ «այդ բոլորը սուտ, շին- ծու եւ յերիւրածոյ են, Հնչակեաններու սարքածները», ապա «ձանր ակնարկներ, հայհոյանքներ» կ'ընէ հայոց եւ Հնչակեաններուն հասցէին: Աճմէտ Ռիզան բանա- խօսին մօտ նստած էր իր սպայակոյտով: Ժողովը պահ մը կը խանդարուի, կռիւ՝ Հնչակեան երիտասարդներուն եւ Իթթիհատականներուն միջեւ — հայհոյող թուր- քին գլուխը, թեւը կտրելով դուրս կը նետեն...:

Դարձեալ դասախօսութիւն, «Փարիզի Աշխ. Ընկերութեան» սրահին մէջ, պաշտօնական եւ օտար բարձրաստիճան անձերու ներկայութեան, ուստական զեւ- պանատան քարտուղար Նարիշկին եւս ներկայ է:

Նախագահ Կոմս Տը Մէնն, դասախօս՝ ակադեմիկոս Վանտալ:

Դասախօսը հակառակ Հանոտոյի թելադրանքին որ խիստ լեզու չզործածէ Համիտի դէմ, պատմական փաստերով ցոյց կուտայ, որ մասնակի բարեկարգութիւն- ներու եւ ինքնավարութիւններու զրութեամբ կարելի էր մօտենալ թուրք պետու- թեան վերաբերեալ խնդիրներուն: Այդտեղ է որ, ան աշխարհին ժառանգ կը ձգէ «Կարմիր Սուլթան» մակդիրը, որ շատերը սխալմամբ կ'աւտոթոնին կը վերագրեն: Այդ օրը, կը գրէ Ընկ. Ս. Ս. Գիւլեան, Աճմէտ Ռիզան, իր ընկերներով նստած էր յոյն նիկոլայիտիսի կողքին, «Լօրիոն» թերթի խմբագրի, որ Սուլթան Համիտի առաջին հաւատարիմ ծառան էր, պաշտօն ունէր մամուլի ներկայացուցիչները կա- շառելու, մեզ հետապնդելու եւ սեւցնելու:

Յետոյ փողոցային կռիւ կը ծագի Հնչակեաններու եւ Իթթիհատականներու միջեւ:

«Թուրքիա եւ Հայկական Բարեկարգութիւններ» զբոյժը 5 հազար օրինակ կը տպագրուի եւ ձրի կը բաժնուի ժողովուրդին եւ բոլոր ծանօթ օտար դիւանա- գէտներուն՝ Հնչակեան Ուսանողացի կողմէ:

«Նոր Դար»ի մէջ մանրամասն նկարագրուած է սոյն դասախօսութիւնը, իսկ «Նովոյէ-Վրեմիա»ն ուստ թերթը անդրադարձած է այդ հարցին եւ բուն յարձա- կում գործած՝ Ընկ. Սապահի հասցէին:

Հնչակեան Կուսակցութիւնը այս առթիւ կը յաջողի Ֆրանսայի նշանաւոր Սա- րտաներու տէր տիկիններով քացառիկ ժողով յառաջացնել: 300 տիկիններ ներկայ: Նպատակը հայկական խնդրին ծաւալ տալ եւ Մայիս 11ի Ծրագրի ժողովրդակա- նացումը յաջողցնել էր:

1896ի Օգոստոսի Պանք Օթոմանի դէպքը կրկին առիթ կուտայ, որ Եւրոպա նստած Իթթիհատականները փրփրին: Տոքթ. Նազըմն ու Աճմէտ Ռիզան Ընկ. Ս. Ս. Գիւլեանի կը հանդիպին եւ կ'ըսեն. «Պրն. Ս. Ս. Գ., այս անգամ 10 հազարով են կոտորում... ո՞ր մնաց Հայ- կական Դատը, Մայիս 11ի Ծրագիրը, Եւրոպական միջամտութիւ- նը...»: Տոքթ. Նազըմը. «Այս մի քանի օրուան կոտորածներու քիւր 100 հազարից անցել է, երեւի էլ հայ չպիտի քողոցեն»:

Ընկ. Ս. Ս. Գիւլեան թէեւ ազդուած այդ արտայայտութիւններէն, կը պա- տասխանէ. «Պրն. Ռիզա Պէյ, գեղտի՛ր, համոզուի՛ր, որ 10 հազար ունեւի կոտորուե- լու, 100 հազարներ ալ Օսմանեան Բոնաստիքութիւնը փլցնելու, միւսներն ալ՝ Ազատ Անկախ Հայաստան յառաջ բերելու: Դուք մեռնում էք անհետանալու համար, մեք մեռնում ենք վերածնունդու, ապրելու նպատակով: Իսկ Տոքթ. Նազըմի հրճուան- քին էլ այն կ'ստեմ, որ ապագայ Ազատ Հայաստանի մէջ, Մենթ Զեք Զեքի ԿՈՏՈ- րի, ԱՅԼ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՄԱՐԳԻԿ Կը ԴԱՐՁՆԵՆՔ, ԱՌ ԱՅԺՄ ԴՈՒՄ ԶԵՐ ՃԱՆԱ- ՊԱՐՀՈՎ, ՄԵՆՔ՝ ՄԵՐ: Ու իրարից հեռացանք՝ սուսնց ձեռք տալու»:

Երբ պատուիրակութիւն մը (Հնչակեան եւ Դաշնակցական) զի- մոււմներ կը կատարեն Փրանսական «Ժուրնալ տը Տեպա», «Լը Թան», «Ժուրնալ տը Բարի», «Սուար» թերթերուն, Պանք Օթոմանի դէպքին ետին կեցող Արեւմտահայ ժողովուրդին ողբերգական վիճակը պար- զելով, բացի վերջին երկու թերթերէն, միւսները ի նպաստ թուրք պետութեան կը դիրքորոշուին...:

Իսկ Իթթիհատը Սուլթանի դեսպան Մունիր Պէյին հետ պատ- ուիրակութիւններ կազմած կ'այցեյին Փրանսական մամուլին, հայե- րը մեղադրելու համար...:

Իթթիհատը, «եղբայրութիւն, հաւասարութիւն» քարոզող Իթ- թիհատը, հայոց տարրական պահանջներուն դէմ որդկորած էր հա- միտեան կեցուածք. ո՛չ մէկ տարբերութիւն ունէին անոնք Համիտի Փարիզի դեսպան Մունիր Պէյին: 300 հազար հայոց 1895-96ի կոտո- րածները ուրախութիւն կը պատճառէր իրենց, ո՛չ մէկ բողոք ու- նէին եւ դատապարտութեան խօսք մը չէին արտասանել բռնակալին դէմ...: Անոնց համար կարելորդ Համիտը տապալելը չէր, անոնց համար կարեւորը Համիտին տեղը գրաւելով աւելի ուժգին Օսման- ցիութեան փողը հնչեցնելն էր:

«Մէշվերէք»ը հայկական այդ կոտորածները կ'արդարացներ: Անոնք ոչինչ խնայեցին մեզ վարկարեկելու, հայկական դատը ամե- նաչիութիւնը զոյններով ներկայացնելով:

ՀԱՐՑԱՊՈՒՄՆԵՐ

Թէեւ անդլիական խորհրդարանէն ներս հարցապնդումներ կը կատարուէին հայոց հարցի մասին, բայց տակաւին մինչեւ 1895 թուականը, Փրանսական խորհրդ- դարանէն ներս հարցապնդում չէր եղած: Այդ նախաձեռնութիւնը վերցուց Ս. Գ. Հնչակեան Կուսակցութիւնը, որ քանի մը անգամ դրադեցնել տուաւ Փրանսական խորհրդարանը Հայկական Հարցով:

Ընկ. Սապահ կը պատմէ. — Խորհրդարանին մէջ ժողովը հարց տուաւ, թէ ո՞րքան ձեռք պիտի ըլլար սոցիալիստի մը պահանջողական եւ պուրժուայ տար- րերուն հետ կողք կողքի հրատարակուելու յոյսով ի նպաստ Հայ Դատին:

Ժողովը ապա լայն ծանօթութիւններ կը հաւաքէ մեր ժողովուրդի պատմա- կան եւ մշակութային կեանքի մասին: Նոյնիսկ կը խնդրէ որ իրեն տրուին այն պատմագիրներուն անունները, որոնք ամենէն լաւ արտացոլացուցած են հայ ժո- ղովուրդի բարձր ու վարքը, անոր հոգին, անոր միջոցային յարաբերութիւնները:

1896 Նոյմ. Տին տեղի ունեցաւ Փրանսական խորհրդարանէն ներս Հայկական հարցի կապակցութեամբ առաջին հարցապնդումը: Խորհրդարանի սրահը մինչեւ բե- րանը լիքն էր, ժողովուրդը խանուած էր չըջարակի շորս կողմը: Դիւանագիտական Օթեակը լի էր: Խօսքը բացաւ Տընի Գոշէնը, անոր յաջորդեց Կոմս սը Մէնը եւ պաշտպանեցին հայոց դատը:

Նախագահը խօսք տուաւ քաղաքացի սոցիալիստ պարագլուխ՝ Ժ. Ժորէսի...: Ժորէսի այդ օրուան ճառը կը մնայ գլուխ գործոց: Կենդանի, սքանչելի հոետորական շունչով, ան Սասնոյ 1894ի սպարա- տամբուսեան եւ կուսակցութեան իրադարձութեան մասին անդրա- դարձաւ «մէկը չկար որ չզգացուէր, ամէնքը իր շրթունքէն կախուած էին»: Ապա աջ երեսփոխաններուն դառնալով ըսաւ, թէ ասպետական ծրանսան իր պարտականութիւնը չէ կատարած եւ քննադատեց ուս- ֆրանսական միացեալ քաղաքականութիւնը, որով յառաջ չնետուեցան եւ Բոնապարտի բազուկը չխորտակեցին ու թոյլ տուին որ ազդ մը կո- տորուէր ու իրենք ոճրագործ հանդիսատեսի դերին մէջ մնացին...:

Վարչապետ Մելիքը յայտնեց որ «իր երկրին (Ֆրանսա) վնաս կուտայ այդ պիտի խօսքեր արտասանելը բեմէն: Նախագահ Պրիան պահանջեց որ Ժորէս ետ առնէ իր խօսքերը: Ժորէս պատասխանեց թէ՛ «պատրաստ է իր խօսքերը ետ առնելու, եթէ Ֆրանսան իր այս չորս տարուան պատմութիւնը չմզեր»:

Ու բեմէն իջաւ մօտ 1.30 ժամ խօսելէ ետք:

(Ժորէսի ելոյթը ինչպէս եւ խորհրդարանի այլ երեսփոխաններու ելոյթները մանրամասն տրուած են, «Նոր Դար» թերթի մէջ):

Ապա բեմ կը բարձրանայ Իթթիհատի բարեկամ Հումպերտը: Ան կը խօսի վարձկանի ոճով, հայ դատը սարքող եւ յառաջ մղողը ըստ իրեն Անգլիան էր, հետեւաբար Ռուսիան եւ Ֆրանսան պէտք չէ թոյլ- լատրէին որ Ալպիոնի խարդախութիւնը յաջողէր, թէ հայերը դո՛ւ էին իրենց վիճակէն, միայն զանազան պետութիւններու ձեռքին գոր- ծիք եղող խմբակներն են, որ Անգլիոյ հաշույն խռովութիւններ կը հանեն... մինչդեռ հայ ազգի մեծամասնութիւնը ո՛չ մէկ զանգատ ունի Օսմանեան Կառավարութեան դէմ: Եւ թրքական դեսպանատան տեղեկութիւններու վրայ, պնդեց որ հայկական կոտորածներուն բուն պատասխանատուն հայերն են, որովհետեւ բուն նախադրձակը անոնք եղած են եւ թէ թուրքերը միայն պաշտպանուած են...:

Հնչակեան Կուսակցութիւնը Երիտասարդ Թուրքերու խոստա- ցած «Սահմանադրութեան» մասին կուսակցութեան Բ. Ընդհ. Հա- մադումարէն ետք զբաղուեցաւ լայնօրէն: «Հնչակ»ը 1899էն սկսեալ մինչեւ 1901 մանրամասնօրէն վերլուծեց, պատմականը ըրաւ «Երի- տասարդ Թուրքիա»ի (տես՝ Ս. Սապահ Գիւլեանի «Երիտասարդ Թուր- քիան»)(*) ցոյց տուաւ Իթթիհատի ներքին միտումները եւ «Սահմա- նադրութեան» ազգայնական էութիւնը:

Սուլթանի անկումը ապահովելու ձգտող Իթթիհատը, ինչպէս տեսանք, կը փորձէր դժգոհ տարրերը երկրէն ներս թէ դուրս, իր դրօշին շուրջ համախմբել, առանց փոքրամասնութեանց տարրական իրաւունքները ճանչնալու: Օսմանցիութեան գաղափարարանութիւնը աստիճանաբար կը զօրանար: Սուլթանէն դժգոհ էին, որ չէր կրնար պաշտպանել Կայսրութիւնը պէտք եղած չափով, չէր յաջողած մեծ Թուրքիոյ մը գաղափարը իրականացնել...:

(*) Պիտի տակ բովանդակութիւնը առանձին:

Այդ էր պատճառը, որ դժգոհ թուրքեր կը խուժէին երրօպա- կան մայրաքաղաքները, յատկապէս Փարիզ: Հոն միասնական ճակատ մը կազմելու փորձերը ձեւական բնոյթ կը կրէին, ու հայերուն հետ գործակցելու մտքերն ալ կը ձգտէին Իթթիհատի յաղթանակի ապա- հովման:

Պէշտուտին Շաքիր պաշտօնական տեսակցութիւն խնդրեց «հա- մաձայնութեան պալու» նպատակով, քանի որ կը պնդէր. «Երկրի դը- րուքիւնը անտանելի է եւ քաղաքական պայմանները՝ շատ ծանր»:

Հնչակեան Կեդր. Վարչութիւնը երկար խորհրդակցելէ ետք, որոշում կը կայացնէ՝ սկզբունքով ընդունելու եղած «պաշտօնական առաջարկը»:

Նախապէս որոշուած ձեւով հանդիպումին ներկայ կը դնուին Ահմէտ Ռիզան, Տոքթ. Նազըմը եւ Շաքիր Պէշտուտինը:

Ահմէտ Ռիզան կ'ըսէ. —

— Մեր առաջին Գոնկրէի մէջ Պրն. Ահարոնեանն ըսաւ որ «Հայերը ամէն թուրքի հետ կարող են համաձայնել, բայց Պրն. Ահմէտ Ռիզա, թե՛ հետ՝ երբեք»: Ծակատիս ըսաւ. «Քանի որ դուն կաս, հայերի եւ բուրքերի միջեւ ո՛չ մի հասկա- ցողութիւն կարող է լինել, հայ կուսակցութիւնների եւ բուրք կուսակցութիւնների միջեւ ո՛չ մէկ համաձայնութիւն կարող է տեղի ունենալ...»: Այդ կարծիքը փաս- տօրէն չեղբելու համար՝ ես ալ, իմ ընկերներովս, որոշած եմ ամէն գնով՝ իմ ֆանչցած հակառակորդներու հետ համաձայնութեան գալ:

Ապա Տոքթ. Նազըմը ածապարեց փաստելու համար, որ Կովկասի ինչպէս եւ բուն Թուրքիստանի թաթարներու միջեւ քաղաքական որոշեալ ձգտումներ կան ու անոնք «լիցապէս անշարժ» զանդուածներ չեն եւ նոյնիսկ անոնց պարագլուխներէն շատերը իրենց հետ կանոնաւոր յարաբերութեան մէջ են: (Տես՝ «Պատասխանատու- ները», Ս. Սապահ Գիւլեան, Ֆրոլիտենս, 1916, էջ 187-189):

Հետաքրքրական է Իթթիհատի պարագլուխ Ահմէտ Ռիզայի այն միտքը, թէ իրենք Պարսկաստանի «Ազգայնական տարրերուն հետ» յարաբերութեան մէջ էին, նոյնպէս Աֆղանիստանի:

Պէշտուտին Շաքիրը կը զեկուցէ ծովեզերեայ քաղաքներու՝ մանաւանդ Սե- լանիկի, Իզմիրի եւ Մակեդոնիոյ զանազան վայրերու մէջ գործող իրենց հետեւորդ- ներուն մասին:

Ապա Ահմէտ Ռիզան Հնչակեան ղեկավարներու հարցումին պատասխանելով կ'ընդունի, որ իրենք Երկրորդ ազգայնական կուսակցութեանն են Գոլտոյ «Աւագա- նիէն» գումարներ կը ստանան:

Այս տեսակցութիւնը այն օգուտը ունեցաւ, կը գրէ Ս. Սապահ Գիւլեան, որ մենք հասկցանք, թէ Իթթիհատը կը նախատեսէր Օսմանեան պետութեան փլու- զումը:

Իթթիհատի պարագլուխ Ահմէտ Ռիզան Հնչակեան Կեդրոնի ընկերներուն առջեւ կ'ըսէ այս տեսակցութեան առթիւ (1906 Յուլիս). «Սը խոստովանիմ, որ եթէ ես հայ ըլլայի ձեր դիրքը կը բռնէի, բայց չեմ կարծեր, թէ դուք ալ տարբեր դիրք կը բռնէիք, եթէ իմ տեղս ըլլայիք»:

Շարունակ կ'ազաչէր ինծի, կը գրէ Սապահ Գիւլեան, որ ես իրիստ ընթացք չբռնեմ, հաշտաբար ողի ցոյց տամ, եւ թողում որ իմ միւս ընկերներս աւելի խօսին, նոյնը խոստացաւ ընել նաեւ ինք:

Յաջորդ հանդիպումը «Գաֆէ Լիլա»ի ատանձնասենեակներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ:

Ա.— ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏ ԵՒ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Օսմանեան պետութեան ամբողջականութեան պահպանման գրծով, համապետական ձեւով պէտք է լուծուի այս հարցը, ըստ Իթթի-հատի:

Հայկական, արաբական, մակեդոնական տարրերը Օսմանեան պետութեան ամբողջութիւնը կը հետաքրքրէր...: Անոնք օրինակ կը բերեն Ռուսաստանի մէջ ապրող փոքրամասնութեանց պայքարը ցարիզմի դէմ:

ՀՆՁԱԿԵԱՆ ԹԵՁԸ

«Ռուս պետութեան եւ Օսմանեան պետութեան ներկայ կացութեան եւ պատմական զարգացման պայմաններու միջեւ՝ ամենափոքր հանդիտութիւն, նոյնութիւն չկայ: Ռուսական ընդդիմադիր տարրերը կը կռուին ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ դէմ եւ ո՛չ թէ պետութեան: Իսկ Տաճկաստանի մէջ՝ պատմութեան ընթացքին կռիւներն եղած են եւ այժմ ալ կը շարունակուին Պետութեան դէմ... Օսմանեան Պետութեան դէմ բազմապիսի ազդերու կռիւը դադար կ'առնէ, երբ ան բնաշրջման մէջ կը մտնէ եւ նորադոյն պետութեան ձեւեր կ'որդեգրէ, իսկ մինչ այդ, իրերու առած ուղղութիւնը կարելի չէ փոխել, բոլոր Դատերը կը մնան դատ: Ուրեմն Հայկական Դատը իր որոշ պատճառաբանութեամբ պիտի շարունակէ մնալ իր ինքնայատուկ պայմաններու մէջ, ան չի կրնար լուծուիլ, հալուիլ Օսմանեան համապետական խնդիրներու հալոցին մէջ: «Հայկական խնդիր» եզրէն մեծ չէիմք կրնար ձեռք բաշխել ո՛չ մէկ պայմանով:

ԻԹԹԻՀԱՏԻ ԹԵՁԸ

«Երիտ. Թուրքերը առարկեցին որ իրենց հայրերը սխալած են եւ թէ իրենք մտադրած են բոլորովին նոր հիմերու վրայ դնելու պետութիւնը: Եթէ Օսմանեան պետական դատ, Օսմանեան պետական ընդհանուր խնդիր ընդունուի եւ այդ ուղղութեամբ աշխատուի բաւարար լուծում յառաջ բերել, այն ժամանակ մասնաւոր դատերը ինքնին լուծուած կ'ըլլան եւ տիրոզներու եւ տիրուողներու մէջէն ամէն տեսակի Թիրիմացութիւններ, փոխադարձ ատելութիւններ եւ թշնամութիւններ կը վերանան»:

ՀՆՁԱԿԵԱՆ ԹԵՁԸ

— Օսմանեան պետութեան եւ Արեւելեան Հարցի պատմութիւնը որոշակի ցոյց կուտան, որ 17րդ դարու վերջէն «խնդիրները անբաժան մասը կը կազմեն Օսմանեան պետութեան, կարելի չէ դարերու բերածը մէկ օրուան մէջ քանդել եւ այդ անհատներու, խմբակցութիւններու կամքէն կախում չունի: Իսկ Հայկական Դատը արդէն իր պատմութիւնը ունի եւ ան արդիւնք է որոշ տուեալներու, որոնց բնաւորութիւնը փոխելու ո՛չ ոյժ ունինք, ո՛չ ալ փորձելու անխոհեմութիւնը: Հետեւաբար ան կը մնայ այնպէս, ինչպէս որ էր, իր ուրոյն պատուանդանի վրայ: Եթէ «Երիտասարդ Թուրքերը» կ'ուզեն վերանորոգել ամբողջ Թուրքիան, Թուրքիոյ մէկ մասի՝ Հայաստանի վերանորոգութիւնը, Հայկական խնդիր լուծումը պիտի զար, որոշ աստիճանով, նպաստելու ամբողջութեամբ՝ մասնաւորէն ընդհանուրի երթալու մեթոտով:

1815էն սադին Վիեննայի Համագումարէն ի վեր Թուրքիոյ բարեկարգութեան թեզն մէջտեղ եկած է, բայց ատիկա ո՛չ միայն դրական արդիւնք չէ տուած, այլ ծառայած է որպէս պատրուակ մասնաւոր խնդիրներու լուծման խոչընդոտ համադիսամալու:

Ապա պահանջեցինք — կը դրէ Սապահ Գիւլեան որ Հայկական խնդիրի եզրը ո՛չ միայն ընդունուի իրենց կողմէ, այլ անոր բրտրականտն ալ ընեն, եթէ կ'ուզեն իսկապէս մեղի հետ հասկացողութեան գալ:

«Երկար թեր ու դէմ խօսելէ ետք, Երիտ. Թուրքերը խոստացան Հայկական Դատ եղբը ընդունիլ, պահանջելով որ մենք ալ նպաստենք համապետական խնդիրներու լուծման»:

1906ի Յուլիսին Իթթիհատի եւ Հնչակեան ղեկավարութեան միջեւ հիմնական, զոյգ ժողովուրդները հետաքրքրող հարցերու շուրջ խօսակցութիւնները, թեկերը եթէ մանրամասն կուտանք, ատիկա նպաստելու համար է Իթթիհատի յետագայի «բանթուրքիստական» ծրագիրները հասկնալու, եւ նոյն ատեն կ'ուզենք, որ նոր սերունդը իմանայ, թէ 1908ին սուլթանը տապալող Երիտ. Թուրքերու հիմնական մտահոգութիւնը Թուրքիոյ ամբողջութիւնը վերկեն էր՝ չկողբացնելով Թուրքիոյ ամբողջականութեան դէմ զիրքորոշուած հայ եւ օտար կուսակցութիւնները եւ ազգերը:

«Գափէ Լիլա» սրճարանի ատանձնատենեակ ժողովին մէջ որուն կը մասնակցէին Հնչակեան Կեդրոնի 3 անդամները՝ Սապահ Գիւլեան, Արամ Ալըքպաշեան եւ Համբարձում Պոյաճեան (Մուրատ), իսկ Երիտ. Թուրքերու կողմէ՝ Ահմէտ Ռիպա, Տոքթ. Նազըմ եւ Պէհմէտտին Շաքիր, երկրորդ օրակարգը «Ինքնավար Հայաստան եւ Թուրքիա» բուն վէճի նիւթ դարձաւ:

ՀՆՁԱԿԵԱՆ ԹԵՁԸ

— Թուրքիան իր գոյութիւնը կրնայ պահել — եթէ հնարուոր է — միմիայն բազմակցուցիչ ազդութիւններուն քաղաքական ինքնավարութիւն տրուելովը:

— Բերինք օրինակներ նորադոյն պետութեանց կեանքին. «Հայաստանի քաղաքական ինքնավարութիւնը մեր էական եւ առաջին պայմանն էր, միայն այդ զաղափարի ընդունուելովն էր, որ մենք կարող պիտի լինէինք համաձայնութեան եզր գտնել», ըսինք մենք:

ԻԹԹԻՀԱՏԻ ԹԵՁԸ

Տոքթ. Նազըմը ուղեց փաստել, որ բարեկարգութիւններու հարցին վարչադրուիլը ցարէ արդիւնքն էր արտաքին խարդուանանքներու, ստաջարիկ քառականաւ տեղական լայն բարեկարգութիւններով, մինչեւ որ պետութիւնը ձեւափոխուէր եւ արդիւնաբար:

— Մեր կողմէ մերժուեցաւ, ապացուցանելով «բարեկարգութիւն» եզրի անիմաստ ըլլալը եւ բոլորովին անհամապատասխան ըլլալը Հայ Ազգի հրամայական պահանջներուն:

Պէհմէտտին Շաքիրը հարցուց, թէ ի՞նչ պիտի ընէինք Հայաստանի մէջ գտնուող Թուրքերն ու քիւրտերը:

— Անոնք իրենց տեղը կը մնան եւ կը վայելեն այն բոլոր քաղաքական, տնտեսական, ընկերային իրաւունքները, ինչ որ՝ հայերը: Բոլոր հաստատութիւնները՝ Հայաստանի մէջ եղողներուց պիտի ըլլան անխտիր:

— Քանի որ մեծամասնութիւնը մահմետականներ են, այդ դէպքին, ինքնավարութիւնը ի՞նչ նպատակի կրնայ ծառայել, վրայ բերաւ Տոքթ. Նազըմը:

— Առարկեցինք, որ ստուար մեծամասնութիւնը մեր կողմն է, քեւ խնդիրը իր պատմական, մշակութային, ազգային տեսակետներով աւելի նշանակութիւն ունի, քան քուակամ:

Երկար ու բոբոբուած վիճարանութիւններէն ետք, Աճէտ Ռիզան ըստ. «քանի որ վճռած ենք ձեզի հետ համաձայնիլ, ՌԻՍՏԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ Կ'ԸՆԴՈՒՆԻՆՔ, բայց աւելի մանրամասնութեանց հետ ծանօթանալու համար կ'ուզէինք տեսնել քարտէսը ձեր պահանջած վայրերուն, եւ մեզի երկարորէն բացատրեցէք ո՛չ միայն ինքնավարութեան ձեւն ու կիրառութիւնը, այլ նաև, թէ ան ինչպիսի կապ եւ յարաբերութիւն պիտի ունենար Օսմանեան պետութեան հետ»:

Պոստացանք իրենց բարարութիւն տալ:

Յաջորդ հանդիպումին Հնչակեան Կեդրոնի ընկերները կը ներկայացնեն Պատմական Հայաստանի քարտէսը, կը պնդեն որ Կիլիկիոյ մէկ մասն ալ ինքնավար դառնայ: 1895 Մայիս 11ի Ծրագրի ընդգրկած տարածութիւնը ընդունուի: Երկաթուղիները ո՛չ միայն տիրեցան, այլ շէնքեցան, հազիւ թուրքերին կուլ կուտային: Մեր բացատրութիւնները լսելով հողեկան տաղնապը, խոտվքը կը դրսեւորուէր իրենց շտապունած դէմքերուն վրայ:

Կիլիկիոյ Հայաստանի հետ կցման գաղափարին առաջին բողոքէն հակառակեցան, «որովհետև, փաստեցին թէ կայսրութիւնը երկու մասի պիտի բաժնուէր — Միջագետքը, Արարիան, Սուրիան... Իրապէս — պիտի կտրուէր Օսմանեան պետութեան «մայր կտորէն»:

«Փաստեր ըրինք ապացուցանելու համար որ քաղաքական լայն ինքնավարութիւն ունեցող երկիրները, երբեմն ո՛չ միայն իրենց բարոյական կապըրը աստիճանաբար աւելի կ'ամրապնդեն մայր երկրի հետ, այլ եւ նիւթականը, քաղաքականը: Բայց ատկա ազատութիւն ունենալէ յետոյ եւ իրերու բնական անհրաժեշտութենէն մղուած:

Պէտէտտին Շափր.— Հայաստանին Ռուսական վտանգ կը սպառնայ, իսկ Կիլիկիոյ՝ ոչ մէկ: Ուստի այդ երկրի համար որեւէ զիջում պիտի չկրնանք ընել:

Իսկ ինքնավար Հայաստանի գլխաւոր զօնըրը եղան.—

Քաղաքական ինքնավար Հայաստան՝ թուրք գերիշխանութեան ներքոյ, բայց երապակամ պետութիւններու երաշխարութեամբ,

Ընդհանուր կառավարչապետ՝ նշանակուած երապակամ պետութիւններու կողմէ,

Բարլամեմտական դրութիւն,

Գործադիր իշխանութիւնը պիտի բախտը կառավարչապետէն՝ խորհրդարանի հաւանութեամբ, որուն առջեւ պատասխանատու կը մնար,

Նահանգային տեղական ինքնավարութիւններ,

Ինքնավար Հայաստանի պաշտօնական լեզուն բոլոր հաստատութիւններու մէջ պիտի ըլլար հայերէնը: Տարեկան որոշ գումար՝ համապետական ծախսերուն օժանդակելու, ժողովրդական ոստիկանութիւն, եւայլն:

«Կիլիկիոյ համար քարեկարգութիւն, Հայաստանի համար ինքնավարութիւն «ոչ-անջատողական հիմունքներով» եզրակացուց Անիէտ Ռիզա»:

ԻԹԹԻՀԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

1906ի Փարիզի մէջ Յուլիս ամսուն տեղի ունեցած ԻԹԹԻՀԱՏԱՆԻ Կուսակցութեանց խօսակցութեանց աւարտին, թուրքերը ընդունեցին ի վերջոյ քաղաքական ինքնավար Հայաստանի մը դոյուլթեան գաղափարը ոչ-անջատողական սկզբունքով, ընդհանուր երապակամ կառավարչապետի մը նշանակումով:

Երկրորդ օրակարգին՝ Դեմոկրատական Սահմանադրութիւն եւ Միտհատեան Սահմանադրութիւն, Հնչակեանները պնդեցին որ մի-միայն լայն դեմոկրատական Սահմանադրութիւնը կրնար ընդհանուր թուրքերոյ հրատապ պահանջներուն բաւարարութիւն տալ, քանի որ Տաճկաստանի մէջ, բացի կայսերական զերդաստանէն, աղնուական ուժեղ եւ ժառանգական դասակարգ չկար, պէտք է ջնջուէր թէ Աստուածային իրաւունքը եւ թէ աւատապետական հաստատութիւններու մնացորդները:

ԻԹԹԻՀԱՏԻ ԹԵՁԸ

Այդպիսի Սահմանադրութեամբ՝ պետական ղերիշխանութիւնը պիտի անցնէր ոչ-թուրք տարրերու ձեռքը, ինչ որ անկարելի էր իրենց համար ընդունիլ: Անոնք մինչև ետք կեցան Միտհատեան Սահմանադրութեան վրայ, պնդելով որ այդ ծանօթ էր թուրք ժողովուրդին եւ հին հաստատութիւն էր, որուն վերստին հաստատութիւնն էր որ պէտք է պահանջուէր, հանգամանք մը, որ կուզար մեծապէս դերացնելու թուրքեան Սահմանադրական երկրի վերածելու գործը: Անգամ մը որ այդ Սահմանադրութիւնը կիրարութեան մէջ մտնէր՝ անկէ յետոյ միայն կարելի կը դառնար փոփոխութիւններ մտցնել՝ դեմոկրատական ուղղութեամբ:

Անկարելի եղաւ համաձայնիլ: Ինչիւրը մնաց անորոյ:

(Տես՝ Ս. Սալպահ Գիլիկեանի «Պատասխանատուները», էջ 193-4):

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ օրակարգին երբ կ'անցնէին, թուրքերը կը յայտնեն, թէ իրենք կ'ընդունին այդ հարցը եւ անոր պաշտպանութիւնը, բայց կը պահանջեն որ արտաքին միջամտութեան հետ մնանք, քանի որ այդ ձեւով Օսմանեան վեհապետական իրաւունքներու ղէմ էր որ պիտի գործէինք:

ՍՈՑԻԱԼԻՉՄ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Այդ մասին հարց դրինք, թէ ընդունելով դասակարգային կռուի եւ ազգերու ինքնորոշման սկզբունքը «արդեօք չէին ցանկար ազգայնական եւ անջատողական ամէն ձգտումներ աւելորդ եւ ապարդիւն դարձնելու տեսակէտով՝ փշրել յեղափոխական ոգիով, թուրքիայում գոյութիւն ունեցող քաղաքական, սոցիալական, ընկերային բոլոր հաստատութիւնները եւ յարաբերութիւնից յետոյ՝ հիմնադիր ժողովով մը ամէն ինչ նոր հիմունքներ վրայ դնել:

ԻԹԹԻՀԱՏԻ ԹԵՁԸ

Սոցիալիզմի մասին խօսք անգամ չի կրնար ըլլալ, այդ մասին, նախ, իրենք շատ բան չեն գիտեր, եւ երկրորդ՝ ո՛չ մէկ ղէպքին, չեն համաձայնիր թուրք ժողովուրդին քարոզելու, քանի որ ան պատրաստ չէ այդպիսի գաղափարներ ընդունելու: Իսկ հիմնադիր ժողով — այդ կը նշանակէ նոր պետութիւն մը մէջտեղ դրել, որ ամէն բան կրնար ըլլալ՝ բացի Օսմանեան պետութենէ: Հետեւաբար այդ մասին աւելորդ համարեցին երկար վիճարանիլ, որքան ալ այդ թեզը մեզ համար՝ այդ ուղղութեամբ գնալը՝ աւելի նպատակարար հորիզոններ կը բանար:

ՏՈՒՐԻ. ՆԱԶԸՄ.— Ազգայնական չեմք կրնար չըլլալ, մեր եւ մեր կուսակցութեան գոյութիւնը, անոր գործունէութիւնը ատով է պայմանաւորուած, ազգայնականութեան մէջն է, որ մեմք կը տեսնենք մեր յարատեւութեան առաջին գրաւակամը:

— Զըլլալ ազգայնական, կը նշանակէր թուրք տիրապետող Օսմանցի չդառնալ:

ԱԶԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ — այս մասին իթթի-
հասի թեզն այս էր .

— Թուրքիոյ մէջ կայ մէկ ազգութիւն՝ Օսմանեան: Օսմանեան
ազգութեան մէջ պիտի տարրալուծուէին բաղկացուցիչ բոլոր տար-
րերը: Չկային ազգեր, այլ ԱԶԳ:

Անոզուտ եղաւ ամէն յիմարանութիւն:

— Օսմանականութիւնը իթթիհատի հիմնական գաղափարներէն մէկն էր, հե-
տեւապէս, որեւէ գնով չէին կրնար տեղի տալ:

«Մեր չորրորդ եւ հինգերորդ ժողովներուն իթթիհատականները յուսարար
հոգեբանութիւն ցոյց կուտային», կը գրէ Ս. Սապահ Գիւլեան:

Երբ առաջարկեցինք իրենց, որ իրենց կազմակերպութիւնը եւ բրորականտան
ինքնավար Հայաստանի գաղափարը պէտք է արտացոլացնեն եւ միջ-կուսակցական
մարմիններ ստեղծուին, որ որոշումներու գործադրութեան վրայ հսկեն, եւ յեղա-
փոխական գործունէութիւն ընդգրկուի, իթթիհատականները բացէ ի բաց մերժե-
ցին այնպիսի առարկութիւններով, որոնք կը փչէին առաջին քննադատութենէն:

Հնչակեան վերջին խօսքը իթթիհատի պարագլուխներուն, Սապահ Գիւլեանի
բերնով .—

«Պրն. Ա. Ահարոնեանը երբ ասում էր, թէ Հայերը կարող են համաձայնել
ամէն թուրքի հետ բացի Ահմէտ Ռիզայէ, դրանով նա կարծում էմ՝ աչքի առաջ
չունէր Ահմէտ Ռիզայի անձը, այլ նրա գաղափարները: ... Ո՛չ մի հայ, ո՛չ մի հայ
կուսակցութիւն չի կարող համաձայնել ո՛չ ձեր սնուցած գաղափարների, ո՛չ էլ
ձեր գործելակերպի ու վարուելակերպի հետ: Խնդիրը անձնական չէ, այլ գաղա-
փարական — դէմ դիմաց են կանգնում հակոտնեայ գաղափարներ, հակոտնեայ
մարմնացող կուսակցութիւններով, ուստի նրանց մէջ, այս պայմանների տակ ո՛չ
խամաձայնութիւն կարող է լինել, ո՛չ էլ համագործակցութիւն»:

Պէտք է նշել, որ Սոքթ. Նազըմը աճապարեցին հաւաստեացնել, որ
վերջին խնդիրները իրենք լաւ ուսումնասիրած չէին, ուստի թիւրիմացութիւնները
աւելի զրանից ծագեցան եւ իրենք խոստանում են յաջորդ ժողովին աւելի պատրաս-
տուած գալ, եւ յոյս ունեն, որ այդ նկատմամբ էլ մեզ կը բաւարարեն: Այդ վերջին
համդիպումը եղաւ:

1907 Մարտ 16ին Հնչակեան Կեդրոնը լաւապէս ուսումնասիրեց
Իթթիհատի ազգայնամուլ քաղաքականութիւնը: Ան նախ Ընկ. Մու-
րատ Պոյաճեանի կողմէ 1906ին Սեպտ.—Հոկտ., «Հնչակ»ի միջոցաւ
առաջարկեց գործող բոլոր հայ կուսակցութիւններով «Հայ յեղափո-
խական գոնկրէ» մը մէջտեղ բերել, համադրել ցրուած ուժերը հա-
ւաքաբար գործի ձեռնարկելու մտահոգութեամբ եւ գալիք քաղաքա-
կան անհրաժեշտութիւնները միահամուռ ջանքերով ղիմադրաւելու
համար:

1908 Փետր. 23ին Մուրատ Մ. Նահանգներու մէջ եւս ժողո-
վրդական խանդավառ միթիւններուն պիտի պաշտպանէր միացեալ
ուժերով «աշխատելու, զոհուելու եւ կոտելու Հայ Անկախութեան
համար: Էն վերջը ցաւ յայտնեց, որ Դաշնակցութիւնը հրամայական
պահանջին առջեւ կը մնայ անտարբեր ու ուժերու համագործակցու-
թիւնը «վաղաժամ» կը համարէ»:

(Տես՝ «Մեծն Մուրատ», Սիրվարդ, 1955, Փրովիտէնս, էջ
97—98):

Նոյն Մուրատը «Հնչակ»ի Դեկտ. 1907 թիւին մէջ կրկին պիտի
գրէր .—

«Համերաշխութիւնը հայ կուսակցութիւնների միջեւ — դա այն բնական ու-
ղիւն է, որով անպատեալ պիտի անցնին այդ կուսակցութիւնները, երբ ուզում են
Տանկահայ Յեղափոխական Գործին բաւարար լուծում բերել: Հալառակ դիպում
դարձաւ տուժող իրենք պիտի լինեն, երբ կիսատ ճանապարհին մնան»:

1907 Նոյ. 24ին կնքուեցաւ Վերակազմեալ Եւ Հնչակեան կու-
սակցութեանց միջեւ համաձայնութիւն Գահիրէի մէջ:

Դաշնակցութիւնը 15 Յունիս 1907ին «վաղահաս» նկատելով
մերժեց համերաշխութիւնը: Անոնք 1907ի իթթիհատի Գոնկրէն նախ-
ընտրեցին: Մենք մերժեցինք իթթիհատի Գոնկրէն ներկայ գրու-
նուիլ... 1906ի խօսակցութիւնները շատ բան սորվեցուցած էին մեր
արթուն ղեկավարներուն:

Ձրաւարարուելով զեկոյցներէ, Հնչակեան Կուսակցութեան օրկան «Հնչակ»ի
թիւ 2, 1907ի թիւին մէջ, Ընկ. Սապահ Գիւլեան «Մեր ետրուորը» վերնագրով
խմբագրական մը կը գրէ, մերկացնելով իթթիհատի դիմադիր: Փարիզի մէջ Համ-
բարձում Մեխքեանի տան մէջ կը տեսնուին ընկերներ Սապահ Գիւլեան եւ Մու-
րատ, Դաշնակցութեան պատասխանատու, Թիֆլիսի Ներսէսեանէն շրջանաւարտ Ակ-
նունիի հետ՝ 1907ի Դեկտ. Ի վերջերս:

Ակնունի տրամաբանական կը գտնէ իթթիհատի հետ գործակցութիւնը, Դաշ-
նակցութեան համար:

Հնչակեան տեսակէտը .— Ձիջումներ, անշուշտ, կարելի է ա-
նել, բայց ո՛չ թէ Հական, դոյուութեան հիմունքը քանդող: Տաճկաս-
տանի նկատմամբ համապետական ուղղութիւնը սխալ է, իսկ Հայ-
կական Խնդիրը թողնելը՝ ոճիր:

«Դաշնակցութիւնը պատասխանատու է մնում հայ ազգի, հայ
յեղափոխութեան եւ իր սեպական նահատակ ընկերների առաջ, ո-
րոնց արեան շիթերը պիտի ցանուին կենդանի, ապրող այդ ոճիրը
գործող Դաշնակցականների խղճին, հոգուն, ճակատին...»:

Դաշն. Ակնունի .— Բողոքում եմ եռանդաղին՝ այդ անարդար
յարձակումների դէմ...:

Հնչ. Ս. Ս. Գ. — Դուք բողոքի իրաւունքը կորցրիք այն օրը,
երբ Հայկական Դատի ուրացման փաստաբանը դարձաք... (Տես՝ «Պա-
տասխանատուները», Ս. Սապահ Գիւլեանի, էջ 211):

Իթթիհատի Բ. Գոնկրէին Փարիզ, Հնչակեան Կուսակցութիւնը
ո՛չ միայն չմասնակցեցաւ, այլ անոնց հրաւերին դէմ հրապարակա-
յին պատասխան տրուեցաւ Փրանսերէն «որից այսօր մի բառ ջնջելու
հարկին տակ չենք գտնուում», կը գրէ Ս. Սապահ Գիւլեան:

Իշխան Սապահեանին կը տեսնուի Համապայմանը ետ Հնչակեան Կուսակ-
ցութեան կեդրոնին հետ:

Ներքուստ շատ զոհ էր, մանաւանդ մեր պատասխանից եւ «Հնչակ»ի քննա-
դատութիւնից, որի բերած բոլոր փաստերի եւ դատողութիւնների հետ համաձայ-
նելով հարցեց, թէ ինչպէս էր եղել, որ մենք այդքան խորը կերպով թափանցել
էինք իթթիհատականների հոգու մէջ: Մեր անցեալի համատու պատմութիւնն
արեցինք:

«Սահմանադրութիւն եւ քաղաքականութեան պարագլուխ Սա-
պահեանինը խնդրեց, որ աւելի մօտենանք իրեն, քանի որ շատ հարցերու մէջ
մենք իրարու աւելի մօտ ենք, պիտի կարենայինք համաձայնիլ»:

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ...

Ահմէտ Ռիզային Հնչակեան Կեդրոնի ընկերները հարց կուտան, թէ ի՞նչ զերբ պիտի բռնէին Երևո. Թուրքերը Սուլթան Համիտի նկատմամբ, ան կը պատասխանէ. —

— Ինչ բանի կը ձգտէինք հասանք, Սահմանադրութիւնը ձեռք բերինք: Սրանից յետոյ Սուլթան Համիտը մեզ շատ պէտք է. ՆԱ ՄԵՄ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՄԱՏՈՒՑԱՆԵԼ՝ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՔԱՆԻ ՈՐ ԻՆՔԸ ԱՆՄՐՑԵԼԻ ՔԱՂԱՔԱԳԷՏ Է Եւ ահագին թիւով անձնական բարեկամներ ունի Եւրոպայի բոլոր ղեկավարիչ շրջաններում: Նրա ազդեցութիւնից եւ կարողութիւններից մենք պէտք է օգտուենք, նա մեզ պէտք է»:

Յետոյ մեզմէ ինչոքին որ այլևս յարձակում չզործենք Համիտի վրայ, քանի որ ան ասկէ ետք «իրենցն» էր եւ չէին ուզեր փառիշտաբան եւ խալիֆայութեան վարկը չափէն աւելի նուաստացած տեսնել: Մեր առջեւ դրին Իթթիհատի Փարիզի օրկան «Մէլլէրէթ» վերջին թիւերը, որոնց մէջ ըսուած էր թէ Համիտը «Սուլթանների ամենակորովամիտը, ամենաիմաստունն էր եղած...»:

Իշխան Սապահէտտին կը յայտնէ Հնչակեաններուն:

— Եթէ Իթթիհատը 8 ամիս կառավարութեան գլուխը մնայ եւ պետական դործերը ինք վարէ, լաւ համոզուած եղէք, որ բազկացուցիչ բոլոր ազգերու եւ մասնաւորապէս հայերու ապագան քախտաւորութեամբ վերջացած է: Ես այս կ'ըսեմ խղճիս թելադրութենէն մղուած: Այդ մարդիկը (Իթթիհատ) ինծի հետ մտերմական խօսակցութիւններ ունեցած են ԻՐԱՐՈՒ ԲԱՑՈՒԱՄ ԵՆՔ ՈՐՊԷՍ ԹՈՒՐԲ: Անոնց ըրած որոշակի յայտարարութենէն եւ խոստովանութիւններէն՝ այդ յայտնի կ'երեւի, պարզ ու մեկին կերպով: Ուստի, օր առաջ, ձեր գլխի ճարը պիտի տեսնէք եւ ձեր անելիքը պիտի դիտնաք: Կը կրկնեմ, որպէս գործէն տեղեակ, 8 ամիս ալ եւ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԷՍ ԱԶԳ, ԱՅԼԵՒՍ ԽՈՐՏԱԿՈՒԱՄ Է ԱՆՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԻ ԿԵՐՊՈՎ»:

— Ձե՞ր առաջարկը, կը հարցնեն Հնչակեանները:

— Ձեր ազգին պատնացող այս վերահաս վտանգին առջեւ դուք եւ Դաշնակցականները իրարու պիտի մօտեմաք եւ մասնաւոր հասկացողութեան գաք: Պէտք է իրարու ձեռք տաք, մէկ գծի վրայ կանգնիք, վերջապէս հասկնաք թէ ձեր թշնամին ո՞վ եւ ի՞նչ կը խորհի ձեր մասին»:

(Տես՝ Ս. Ս. Գիւլեանի «Պատասխանատուները», 1916, էջ 220):

— Ձեր դե՞րբը, Պրն. Սապահէտտին:

— Անվերժանելի հակառակութիւն: Իմ տեսակետով, անոնք (Իթթիհատ) Թուրքիոյ դոյութեան համար նոյնքան վտանգաւոր են, որքան Համիտի բռնակալութիւնը: Սուլթան Համիտն ու զանոնք միասին պէտք է կործանել, առանց ատոր ո՛չ մէկ փոփոխութիւն պէտք է ըլլայ, առ առաւելն անձեր կ'երթան, անձեր կուզան եւ իրերու դրութիւնը կը շարունակուի նոյնը մնալ, եթէ դեռ աւելի չվտարանայ:

Հնչակեան Կեդրոնի ընկերները Պոլիս կը ժամանեն: Պէտքէտտին Շաքիրը Իթթիհատի Սելանիկի Կեդրոնական Կոմիտէի վարչութեան կողմէ տեսակցութիւն կ'առաջարկէ: Տեսակցութիւնը (Մուրատի եւ Սապահ Գիւլեանի) տեղի կ'ունենայ Շահէտտի Պաշը Իթթիհատի կեդրոնավայրին մէջ: Պէտքէտտին կը ներկայացնէ Մեհմէտ Թալաաթն եւ Ահմէտ Էնվերը:

«Քանի մը հարեանցի խօսակցութենէն յետոյ Էնվերը հեռացաւ: Նա մեզ վրայ թողուց կնամարդու տպաւորութիւն: Արցախեցիներէ դործածած կուստո բառը նրան շատ լաւ էր պատշաճուած, — մի մարդ որ գոհնիկ հողի ունի, չքեղազարդ հանդերձներով, նազանքը, դիմացիներն ամէն զնով հաճելի երեւալու ունակալութիւնը այդ մարդու մէջ ծայրագնութեան էր հասել:

Թալաաթը՝ դա շահմար օձ էր, աչքերի բոլորակներ վրայ արեան բիծեր, պարանոցը կարճ, Թուրք պաշտօնէի կիրթ ձեւերով, կեղծաւորութիւնը, խորամանկութիւնը, խարեքայութիւնը քանդակուել էր դէմքի գծերի մէջ: Պատմ էր պիտահակ, աչքերը միշտ վար պահած, շարունակ թարթիչները իրար զարկելով: Պօքի թելը շարունակելիս՝ նա խօսակցի երեսին էր նայում՝ գաղտադողի, տեսնելու համար, թէ ի՞նչ տպաւորութիւն է թողնում իր ասածը: Իսկ խօսակցի պատասխանի ժամանակ՝ անթարթ աչքերով դիտել եւ ժպտալ, հաւանութեան նշաններ ցոյց տալ — հողին արհեստականօրէն վարադուրողի ունակութիւններ են դրանք: Դրանք արեւելեան դիւանադէտներէ պատմական շարք ու ձեւերն են, որոնք նշանակուած են թոյլ չտալու դիմացիներն, որ իր հողին կարգայ, մինչդեռ ինքը՝ այդ յաջողութիւնը ձեռք պիտի բերի՝ այդպիսի վախառնովի եւ չինձու ձեւերով: — Մի անգարգացած մարդ:

Ընկեր Մուրատը մինչեւ անգամ քանիցս թեւքս մշտեց, երբ տաքանում, ձայնս բարձրացում էի:

Թալաաթի առաջին խօսքը եղաւ այն, որ ինք Սելանիկի իրենց Կեդր. վարչութեան կողմէ յատուկ եկած է եւ հրահանգ ունի ուսումնասիրելու բոլոր կուսակցութիւնները, տեսնելու թէ՛ ի՞նչ հոսանքներ կան եւ ծանօթանալու Կուս. ղեկավարներու հետ: Ուստի ինչոքեց տեղեկութիւն տալ՝ Հնչակեան Կուսակցութեան հիմնական սկզբունքներու մասին:

Ձինք բաւարարեցինք:

— Շատ գեղեցիկ կուսակցութիւն, շատ օգտակար, երկիրը ձեզ պէտք ունի, ըսաւ Թալաաթ, սկսեց մի շարք սուտակասպաս, երեսպաշտ, մարդեյոյզ բառեր, դրուատիքներ թափել:

Ապա Թալաաթ հարց դրաւ, թէ ի՞նչ է ձեր եւ Դաշնակցութեան տարբերութիւնը:

Մեր պատասխանը եղաւ — արդեօք Պրն. լաւ ըմբռնեց մեր կուսակցութեան հիմնական սկզբունքները, մեր ըսածները...:

— Ո՛չ, ամէն ինչ պարզ է, հասկնալի եղաւ այդ մասին. չիտակը շատ դո՛ւ մնացի, պատասխանեց Թալաաթ:

— Ապա աւելի լաւ է որ ուղղակի Դաշնակցութեան ղեկավարութեան ղեմէք, որոնք արդէն ձեր բարեկամներն են եւ անոնցմէ հարցնել իրենց պաշտօնաբարանութիւնը, մեզ եւ զանոնք լսելէ ետք, դուք կրնաք եզրակացնել մեր տարբերութիւնները:

— Բայց անոնք յեղափոխական անուն ունին, կարելի՞ է, տեսնուած է, ո՞ր կառավարութիւնը թոյլ կուտայ որ Էրկրի մէջ յեղափոխական անունով կուսակցութիւններ լինեն:

— Այդ հարցը ինչո՞ւ մեզի կուտաք:

Մենք գիտէինք որ Գաւազնակցութեան հետ տեսնուած եւ նոյն հարցումները անոնց ուզողած էր թալաւաթ, կը գրէ Ս. Ս. Գիւլեան:

Թալաւաթ կ'առաջարկէ. «Քանի որ Սուլթան Համիտ ողջ է «հին ուժի մը» մարդիկ կրնան խռովութիւններ յարուցանել, աւելի լաւ չըլլա՞ր, որ զաք, միանաք եւ միատեղ Ազգային պահպանութեան թիկնապահներու զօրարանակ մը կազմենք, ամէն պատահականութեանց դէմ դնելու համար»:

Հնչակեան պատասխանը.— Սուլթանի ողջ մնալը իթթիհատէն կախում ունէր, ըսինք թէ մեզ համար թուրքիոյ մէջ ազգեր կան եւ ոչ թէ ազգ մը: Թէ Պուրտոյ մէջ ազգային թիկնապահներ կարգելով, դաւաճները փրկած չէինք ըլլար, եւ նախընտրելի էր զատ զրօշններու ներքեւ հսկիչ զուտներ կազմելը:

— Բայց ինչո՞ւ Օսմանցիութեան հողի վրայ չկանգնէինք, հարցուց թալաւաթ: Ըսինք որ մեզի համար օսմանցի եւ քուրճ հոմանիշ բառեր են.— Օսմանցի հայեր չկան, չեն կարող լինել, կան Օսմանեան եպատակ, Օսմանեան քաղաքացի հայեր:

— Բայց միթէ՞ Ֆրանսա մեր ըսածին պէս չէ. այնտեղ բոլորն ալ Ֆրանսացիներ չե՞ն:

— Թուրքիան Ֆրանսա չէ, այնտեղ կայ ազգութիւն, այստեղ՝ ազգութիւններ, երկու երկիրներու միջավայրը, տարբերը համանմանութեան եզրեր չունին:

ԹԱԼԱՎԱԹ

— Կարելի չէ՞ որ ձեզի հետ համաձայնութեան դանք, ի՞նչ պայմաններ կ'առաջարկէք:

— Ըսինք թէ իրենց հետ երկար փորձած էինք լեզու գտնել, չէինք յաջողած «իրեցից եւ մեր մէջ՝ որեւէ պայման համաձայնութեան չի կարող լինել, եթէ ուզեն ընդդիմադիր կուսակցութեան իրաւունքով կը մնանք եւ կը գործենք, իսկ եթէ ոչ՝ պատրաստ ենք ետ վերադառնալու:

Ընկ. Սապահ կը շարունակէ.—

Թալաւաթը զսկսու երկիմ գետին իրար խառնել, ջանալով մեզ համոզել՝ որ մենք ամէն ազատութիւն պիտի վայելէինք որպէս կուսակցութիւն, միայն թէ յարեց. «Իմ ասելս այն էր, որ կուսակցական տարբերութիւններից չարմատներ չ'օգտուեն»:

3—4 ժամ տեւող խօսակցութիւնը ոչ բարեկամական մթնոլորտի մէջ կը վերջանայ:

«Կ'երեւի թէ իթթիհատականները որոշած էին անպատճառ մեզ իրենց թալաւաթին մէջ ձգել եւ կերպով մը մեզի հետ համաձայնիլ՝ մեր բերանը զոցելու եւ մեր խօսքը կարճեցնելու զիտարութեամբ:

«Բայց սխալ դուռ էին զարկել»:

(Տես՝ «Պատասխանատուները», Ս. Ս. Գիւլեան, 1916, Փրովիտենս, էջ 234—5):

Քանի մը օր ետք կուզայ Յակոբ Պապիկեան՝ Հնչակեան Կեդրոնէն խնդրելու՝ որ իթթիհատի հետ տեսակցէին կարեւոր խնդիրներու շուրջ եւ համեմատելու Օսմանակառութեան հողի վրայ: Ինք ալ իթթիհատական մըն էր: Կեդրոնի ընկերները կը բացատրեն թէ Հնչակեան Կուսակցութեան համար ո՛չ մէկ հնարաւորութիւն կայ

Օսմանակառութեան հողի վրայ իթթիհատի հետ զործակցելու: Պապիկեանը կ'ըսէ, թէ ինք օսմանակառութիւն ըսելով միեւնոյն ատեն կը հասկնայ եղեր ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ:

— Մենք թուեցինք այդ բառի ետին կեցող քաղաքական եւ ազգայնական հասկացողութիւնները:

Անկէ ետք մենք այլեւս պաշտօնական ո՛չ մի յարարութիւն ունեցանք իթթիհատի հետ, ի բաց առեալ այն առաջարկները, որ մի քանի անգամ ընկեր Մուրատի բերնով թալաւաթը եւ ճապարակ ըրեր էին, յատկապէս երեսփոխանական ընտրութեան շրջանին, երբ իրենք կը գտնուէին տաղանապալից օրերու մէջ — ինչ որ մեր կողմից անհետեւանք էր մնացել:

Այդ օրերուն Փարիզէն ժամանող իշխան Սապահեանի զիմաւորութեան կ'երթան, պալատական, ժողովուրդ, կուսակցականներ կը զիմաւորեն:

Աքտրէ վերադարձած Տէլի Ֆուատ Փաշան որ հակա-իթթիհատական բոլոր շարժումներուն մէջ դեր վերցուցած էր, թրքական նաւուն մէջ կը յայտնէ հրապարակաւ. «... Ես Հնչակեանները կը ճանչնամ, այս երկրի ազատութեան առաջին մարտիկները, առաջին շարժում կատարողները եւ մեզ քնից զարթնեցողները... Այս ազատութիւնը իսկապէս մենք ձեզ ենք պարտական, դուք էք բերել...»:

Էտհէմ Փաշան (Զէյթունի 1895—6ի թրքական բանակի հրամանատար) վերջիչեց «սխուր անցեալը» եւ ասաց.—

«Հնչակեանները, իսկապէս այս երկրի առիւծներն են, նրանք ամիսներով իմ կանոնաւոր զինուորների դէմ կուռեցան, եւ դա արդէն նշան էր, թէ նրանք որքան ազատասէրներ են»:

Իթթիհատը... պիտի մնար, ուրեմն, իր ձուլող, ջնջող, թըրքացնող, ազգայնական նպատակների մէջ:

Պատմութեան ընթացքում մենք ճանաչել էինք «Միութիւն եւ Յառաջդիմութիւն» քաղաքական կոյտի էութիւնը, նրա կեանքի պատկերը մեր առաջն էր: Մենք օդի մէջ չէինք, դիտէինք որ նա՝ առանց ժամանակ կորցնելու՝ շեշտակի կերպով, իր նպատակների իրագործմանը պիտի դիմէր եւ մեզ էլ զժուար կացութիւնների առաջ դնէր:

Փարիզ գտնուած շրջանին Հնչակեան Կեդրոնը Մուրատի գծով Սելանիկ զրկած էր զԷրտ Պէտիր Պէյ Պէտիր ինանը որ շատ թանկազին տեղեկութիւններով վերադարձած էր Պոլիս:

Ահա թէ ի՞նչ որոշած էր իթթիհատը իր Սելանիկի Ա. Համազումարին մէջ:

Ա.— Թոյլ չտալ որ քուրճ ուրիշ կուսակցութիւններ յառաջանային:

Բ.— Սապահեանի կուսակցութեան եւ անոր գաղափարաբանութեան դէմ պայքարիլ:

Գ.— Սուլթան Համիտը պահել եւ անոր ազդեցութեան օգտուիլ:

Դ.— Մինչեւ իրենց հզօրացումը Հայ կուսակցութիւններու հանդէպ համբերող դիրք բռնել:

Ե.— Սոց. Դեմ. Հնչակեաններն հսկողութեան տակ առնել:

Զ.— Ուժ տալ օսմանցիացման գաղափարին, համախառնութիւնը իրենց գաղափար-առանցքը դարձնել:

Է.— Իսլամ տարբերու տնտեսական տիրապետութեանը ձգտիլ, արհեստ եւ վաճառականութիւն քուրճերու մէջ ծաղկեցնել, խորհրդարանական մեծամասնութիւնը միշտ քուրճերու ձեռքը պահել, եւն.:

Համիտի կողմնակիցներուն հակա-Սահմանադրական շարժումը քանի մը օր առաջ զսպուած էր: Գ. Եղիկեան կը գտնուէր Օսման Պէյլի դպրիւնային մէջ՝ թուրք փրկիստօֆայ եւ թարգմանիչ՝ Տոքթ. Ճովտէ-թի հետ սեղանի մը շուրջ եւ ուր կը խօսուէր հայ եւ թուրք համե-րաշխութեան մասին: Գոյի սեղանը նստած էին քանի մը սպաններ, որոնք Ազատարար բանակի հետ Պոլիս եկած էին, կը խմէին: Անոնք միանալով Գ.ի սեղանին՝ հարցազրոյց կ'ունենան:

Լսենք թուրք սպանները.—

— Օսմանեան պետութեան եւ նրա սահմաններում ազդող ժողովուրդների շահերը պահանջում են, որ այդ բոլոր ժողովուրդների մէջ համեմադրութիւն լինի, հակառակ պարագային պետութիւնն էլ կը կործանի, ժողովուրդներն էլ իրար կը խողիսուեն:

Հակառակը սնդոդներ չեղան:

Գոյի սեղանի մօտ նստած էր Շուշեցի (կովկասցի) Ահմէտ Պէկ Աղաբեր, հայ-թաթարական (1905) ընդհարումները հրահրողներէն, լրագրող եւ քաղաքական գործիչ, նաեւ Տոքթ. Քարապետովը՝ Պա-րուի, թուրք ազգայնականներու ղեկավարներէն:

«Մութի մէջ ոչ Աղաբեր եւ ոչ Քարապետովը ինձ չճանաչեցին, եւ որովհետեւ խօսակցութիւնը թրքերէն էր, թուրք սպանների մասնակցութեամբ, կարծեցին, թէ ես էլ թուրք եմ, եւ ազատորէն, անվերապահ արտայայտեցին իրենց մտքերն ու տեսակէտները»:

ՏՈՔԹ. ՔԱՐԱՊԵՏՈՎ.— Օսմանեան պետութեան ապագան եւ մեծութիւնը ապահովելու համար պէտք է որ Հայերը եւ Յոյները չապրեն այս երկրում: Քանի այդ երկու ժողովուրդները ապրում են մեր երկրի սահմաններում, մեր պետու-թիւնը միշտ բաժանման վտանգի է ենթարկուած:

ՏՈՎՏԵՔ.— Ի՞նչպէս կարելի է մօտ 7 միլիոն ժողովուրդ զրկել թուրքիայում ապրելու իրաւունքից եւ աւելացրէք.—

— Գուցէ յարգելի Տոքթ.ը առաջարկում է գլխովին կոտորել հայերին էլ, յոյներին էլ:

ԱՂԱԵՒ.— Այդ ամենայաւ միջոցը կը լինէր իսլամ այս պետութիւնը եւ երկիրը՝ Հայերի ու յոյների ներկայութիւնից ազատելու, բայց դժբախտաբար Սահ-մանադրական մի երկրում այդ միջոցներին չի կարելի դիմել:

Դեռ մի քանի օր առաջ տիրապետող կուսակցութիւնը՝ Իթթիհատ վէ թէ-րաքէն հայ յեղափոխականների օգնութեան դիմել էր Սահմանադրութիւնը փրկելու համար, եւ ստացել էր այդ օգնութիւնը, դեռ մի քանի օր առաջ հայ ազգիկները՝ իրենց բարի անունն ու կեանքը վտանգի դնելով՝ որպէս գթութեան քոյրեր կամ զէնք տեղափոխողներ՝ իրենց աշխատանքը միացրել էին իրենց եղբայրների աշ-խատանքին, դեռ մի քանի օր առաջ Ազատարար Բանակի յաղթանակը հայ եւ թուրք եղբայրորէն միացած էին տօնել, եւ, ահա այսօր, Կովկասից եկած երկու հայա-կերները՝ Ազատարար Բանակի սպանների եւ թուրք մտաւորականների ներկայու-թեամբ խօսում են հայերին եւ յոյներին ոչնչացնելու մասին...:

Ապշեցուցիչ էր: Գոնէ այդ օրերին:

Տոքթ. Ճովտէթը կամեցաւ նիւթը փոխել, եւ միջամտեցի եւ հարցրի.

— Բացի կոտորածից կա՞յ արդեօք ուրիշ միջոց հայերին եւ յոյներին մի-ջամտելու:

Աղաբեր դրական պատասխան տուաւ:

Մի սպայ կամեցաւ իմանալ այդ միջոցը:

Շուշեցի հայակերը պատասխանեց.

— Պէտք է քանդել նրանց ընտանիքը, նրանց ընտանեկան կաղձակերպու-թեան հիմքերը: Այդ երկու ժողովուրդների, մանաւանդ հայերի ամբուսեանց միջ-նաբերը ընտանիքն է: Եթէ քանդուի այդ միջնաբերը, բոլոր նրանց ամբու-թիւնները կը քանդուեն եւ նրանց կոտորելու պէտք չի զգացուիր, որովհետեւ ինք-նաբերաբար կ'ոչնչանան որպէս ազգային միութիւններ:

(Տես՝ Հնչ. «Ուսանողաց Տարեգիրք», 1937, Պէյրութ, Գ. Ե-դրկեան, էջ 71-79):

Ինչպէս կը տեսնուի, Իթթիհատի հետ կարելի չէր եւ չէր եղած միասնանալ, հասկնալի պատճառներով, կարելի չէր եղած Դաշնակ-ցութեան ներկայացուցիչ Ա.ի (Ակնունիի — ըստ Փերուզ Ս. Սապահ Գիւլեանի «Ս. Սապահ-Գիւլեան»-ի նուիրուած գրքին):

«Մի օր, երբ Դաշն. գործիչ Ակնունին Փարիզ էր եկած Հ. Մելիքեանի միջ-նորդութեամբ ու խնդրանքով իր տան մէջ հաւաքուեցին Մեծն Մուրատը, ամուսինս եւ Ակնունին. կուսակցական իրարահակացողութեան փորձեր կատարեցին. սակայն փորձը ձախողեցաւ եւ ընդհակառակը, աւելի խոր վիճ բացուեցաւ երկու կուսակ-ցութեանց միջեւ, ի մեծ ցաւ Մելիքեան Համբարձումի... Ակնունին պարտուած էր իր վիճարանութեանց մէջ...»

«Մերոնք (Մուրատ եւ Սապահ-Գիւլ) զնացին, Տամատեանի հետ տեսնուեցան, բայց միութիւնը չկատարուեց, «Սոցիալիզմի» պատճառաւ կրկին...»

«Ամուսինս «Թրքական Սահմանադրութեան» չհաւատաց առաջին մէկ օրէն իսկ, եւ կոչեց զայն «Պոլաւ»: Նա համոզուած էր թուրքի անհաւատարմութեան, հայաբնիշ քաղաքականութեան սկզբունքին եւ երբեք չէր ուզի որ կեդրոնը (Հնչակեանց կուսակց.) փոխադրուէր Պոլիս:

«... Տունս մնացած էր անինամ, ո՛չ վառելիք կար, ոչ ուտելիք, այդ պատ-ճառով էլ սաստիկ պաղատութեան հետեւանքով՝ Տիգրանս մահամերձ հիւանդ ինկաւ»:

Այսպէս կ'ապրէր Ս. Սապահ-Գիւլեանի ընտանիքը...: Առանց մեկնարանութեան:

Սապահ կը գրէր իր տիկնոջ.—

«Գասապա, Մանիսա գնացի... երկու օր հիւանդացայ: Քաղաքական կացու-թիւնը ծանր կերպարանք ստացած է: Տիկիները խնդրեցին իրենց համար յատուկ ժողովներ կազմել: Այստեղ իմ քննապաշտպանութեան ենք պատրաստուում...»:

Սապահ կը գրէ այլ առիթով մը.—

«Եթէ Պոլսոյ վրայ քափած ուժիս քառորդը գաւառների վրայ քափելու լինէի, աւելի մեծ արդիւնքի հասած կը լինէի...: Եթէ մեռ-նիլս ալ գիտնամ, պիտի տամ այս ժողովուրդին, ինչ որ կարող եմ...»:

1909ին ուրեմն Իթթիհատի Ա. Համազումարը Սելանիկի մէջ յստակ կերպով ցոյց կուտար որ Իթթիհատը անխնայ պիտի հար-ուածէր բոլոր ոչ-օսմանցի տարրերը եւ միայն ժամանակի հասունաց-ման կը սպասէր Օսմանցիութիւն կամ մահ լողունը իրականացնե-լու համար: Բնական է թալաթ-Սապահ Գիւլեան հարցազրոյցը եւ

նախապէս 1896–1906 Փարիզի Հնչակեան Կեդրոնին եւ Իթթիհատի պարազլուիներէն Տօքթ. Նազըմի, Ահմէտ Ռիզայի եւ Պէշտատին Շաքիրի տեսակցութիւններն ու խօսակցութիւնները՝ Սելանիկի Իթթիհատի կեդրոնի ղեկավարներուն վրայ՝ Շէրիաքի (Համիտ) կողմնակիցներուն եւս չէզոքացումէն ետք, լաւ տպաւորութիւն պիտի չձգէր: Իթթիհատը հակառակ իր խոշոր աղմուկին, տակաւին տիրապետողը չէր թուրք իշխող ղիւանազէտ շրջանակէն եւ շրջաններէն ներս: Անիկա պէտք ունէր դաշնակիցներու՝ նախ խորտակելու համար Համիտը, ապա սմբանայու համար երկրէն ներս:

Իթթիհատը շատ մօտէն կը հետեւէր Եւ Սապահէտտինի, Եւ Իթիլաֆի, Եւ Հնչակեան, Եւ Դաշնակցական կուսակցութիւններու ազատ երթիւկին, խօսքերուն, ճառերուն, դիրքորոշման... բայց այս պարագային հարցը հետեւեալ ձեւով կը ներկայանար: Առաջին իսկ առթիւ 30 հազար Ատանայի շրջանին մէջ հայեր կոտորող Իթթիհատին կարելի՞ էր փրկութեան յոյս կապել... 30 հազարի անիրաւ զոհուիլը բաւարար պէտք չէ՞ նկատէին այն կուսակցութիւնները, որոնք հաւատքով մը — անօրինակ ըսուելու չափ հաւատքով մը — Իթթիհատի գործակցութիւնը կը նկատէին կենսական...:

«Մէշվէրէք»ը հայկական այդ կոտորածները կ'արդարացնէր:

Իթթիհատի օրկան «Թանին» թերթին մէջ Փարամազը կը կարդայ Հետեւեալ տողերը. «Հայ ազգային ժողով չի կարող լինել, որովհետեւ հայ ազգ չկայ: Թուրքիայի մէջ կայ մէկ ազգ, այն է Օսմանեան ազգ»:

Կամ՝

«Ճերդ յօդուածի գործադրութիւնը՝ բարեկարգել տալու համար Օսմանեան Կայսրութեան Արեւելեան նահանգները, մեզ համար անկարելի է եւ երբեք չենք ներք այդ տեսակ խնդիրներով մեզ գրադեցնելը» (Հիւսէյն Ջահիտ):

Կամ՝

«Այն վայրերում, ուր իսլամները փոքրամասնութիւն են կազմում, անհրաժեշտ է զինաթափ անելով բոլոր քնակիչներին, ծածուկ վերադարձնել իսլամներին իրենց գէնքերը»:

(Իթթիհատի Սելանիկի ժողովի որոշումը):

Այս կոչերը եւ ասոնց նման ցեղապաշտական տողերը սովոր լոյս կը տեսնէին Պոլսոյ մէջ, ամէն օր կը կարդային Ուստանները, Ակնուները, Ջարդարեանները... եւ չէին անդրադառնար... Ակնուները՝ որոնք 25 տարուան բարեկամութեամբ կապուած էին Ս. Սապահ Գիւլեանի հետ Թիֆլիսի Ներսէսեանէն ի վեր, որուն 1906ի Իթթիհատ-Հնչակեան վէճին մանրամասնութիւնը փոխանցուած էր...: Ակնուներն եւ իր ընկերները՝ Եթէ «Ազատամարտ»ով թաղուած էին մշակոյթի, ռազմա-գիւղիքի եւ զբոսայգիների շուրջ կարծիք յայտնելով, ի՞նչպէս կրնային շտապել եւ կամ տեսողներուն վկայութիւններն ալ իմանալէ ետք խուլ ձեւանալ եւ ի՞նչպէս չէին տեսներ «Վոհակ» 1909–14, «Կայծ», «Նոր Աշխարհ» Հնչակեան թերթերուն, ապա «Ների». Հայաստան», «Հնչակ» պաշտօնաթերթի մէջ լոյս տեսած Իթթիհատի դէմ գրուած յօդուածները տարբեր զաղափարի՝ բայց այս պարագային հայուն գոյութիւնը իսկապէս պաշտպանող հոսանքը:

«Դաշնակցութիւնը միտքուտեմ պաշտօնական աթոռներու մէջ. Օսմանցիութեան համար վտանգաւոր չի կարող լինել: Հնչակեաններն են մեր քշնամիները, որոնց վրայ էլ տէրոքի սարսափով պիտի ազդել եւ իրենց մտադրութիւնը (ինքնավար, Թուրքիայէն անջատ Հայաստան՝ հոն ապրող բոլոր ժողովուրդներուն համար) իրենց հետ մեռցնել»:

Այս յայտարարութիւնը կատարողը եղեռնի զլխաւոր կազմակերպիչներէն Ներքին Գործոց Նախարար Թալաթն է, ըստ Փարամազի:

«Հայկական հարց: Այդպիսի խնդիր չունիմք: Կառավարութեան նպատակն է Բարեբաղի եւ Հայերի գծութիւնները կարգադրել: Մենք ամէն բան անելու ենք ուժով, մէկ Օսմանեան Կայսրութիւն հիմնելու համար», կը յայտարարէր Պերիւի թուրք ղեկավար Մահմուտ Մուրթաք Փաշան:

Իսկ հայկական նահանգներու մէջ «մենք հայերու չէ որ բարեկարգութիւն պիտի ընենք, այդ բոլոր օսմանցիներու, մանաւանդ իսլամներու», կը յայտնէր Իթթիհատական Ապտիւլ Րահման Պէյ:

«Հայաստանի բարեկարգումներով մեզ չեն կրնար վախցնել: Եւրոպայի հաւասարակշռութեան համար Թուրքիոյ յարատեւութիւնը ամէն տարակոյտ վեր է», պիտի յայտարարէր Ասըմ Պէյ, Իթթիհատական երեսփոխանը:

Կամ՝

«Եթէ արտաքին պետութիւնները փորձեն մեր երկրի վրայ յարձակում գործել բարեփոխելու մտքով, անոնք միայն մոխրակոյտի տէր կը դառնան», պիտի գոչէր Էմրուլլահ Պէյ, Իթթիհատի կրթական նախարարը:

Կամ՝

«Երկրի մը մէջ առանձին Ազգային Բարձրագոյն վարժարան հիմնելը վտանգաւոր է: ... Օսմանեան կառավարութեան գրութեան շնորհիւ է, որ իր պետութեան մէջ առանձին բաղձանքներու հետամուտ ազգութիւնները իրենց յատուկ վարժարաններն ունեցան: Մեր երկրի մէջ տարբեր վարժարանները Օսմանեան միութեան արգելք են: Այսուհետեւ ժամանակն է որ ազգային քաղաքականութեան հետեւիմք»:

(«Իզտամ», «Վնասակար է ոչ իսլամ համախմբումներու կոչումը» խմբագրականէն):

Այս արտայայտութիւնները պատահական չէին, դժբախտաբար 1909–15ի շրջանի Իթթիհատի օրկանները լեցուն են այսպիսի վկայութիւններով, թէ եւ ցաւալի է որ այդ մասին ցարդ հատոր մը լոյս չէ տեսած հայոց կողմէ:

Այդ կացութեան մէջ էր՝ որ Հնչակեան Կեդրոնի անդամ ընկերները՝ Ս. Սապահ Գիւլեան, Փարամազ, Արամ Ալքըրպաշեան, Մուրատ, ապա՝ Գ. Կողիկեան, Ազատ Ոստանիկ, Գ. Վանիկ, Յ. Արծրունի, սկսան լուստարանել եւ կազմակերպել Արեւմտահայաստանի բոլոր շրջանները:

«Որոշեցինք նաև դրան զուգընթաց՝ զինել, ժողովրդին ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել, առանձին «մարտական խմբերի» միջոցաւ: Ուղարկել յատուկ մարզիչներ՝ զինավարժութեան գործը դիւրացնելու համար:— Այդ բոլորը հարկաւ մեր կուսակցական կարողութեան սահմանների մէջ: Այս մասը մեր ոչօրինական գործունէութեան մասն էր, կը դրէ Ընկ. Ս. Սապահ Գիւլեան իր «Պատասխանատուները» հատորին մէջ: (Էջ 247):

«Ջանացինք ուժ մթերել, ծաւալ տալ մեր զաղափարներին եւ ժողովրդին մղել բոպէի պահանջած գործունէութեան մէջ, միշտ մասնաւոր ուշադրութիւն տալով ինքնապաշտպանութեան եւ զինման գործին, որ մեզի համար է՛ն կենսական նշանակութիւն ունեցող հարցերից մէկն էր:»

«Քաղաքական այդ պայքարի մէջ՝ մենք աշխատեցինք օգնական ուժեր էլ ձեռք բերել:»

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՅԼ ՏԱՐԲԵՐՈՒ ՀԵՏ

Պոլիս դալէն ետք, Հնչակեան Կեդրոնի ընկերները անմիջապէս յարաբերութեան մէջ կը մտնեն Վերակազմեալ Հնչակեաններու այն հատուածին հետ, որոնց հետ համաձայնութեան եկած էին 1907 Նոյ. 24ին Գահիրէի մէջ: Տամատեան, Վահան Թէքէեան եւ Մուշեղ Եպս. Վերակազմեալներու կողմէ՝ իսկ Ս. Սապահ Գիւլեան եւ Մուրատ Պոյաճեան Հնչակեան Կեդրոնի կողմէ ժողովի կը նստին:

Մեր առաջարկը եղաւ պարզ ձուլում՝ առանց պայմանի:

Վերակազմեալները նախ կը հակառակին, առարկելով Հնչակեան ծրագրի մէջ գոյութիւն ունեցող սոցիալիզմին, թէ մա ազգութիւնը զնշում էր եւ մենք սոցիալիզմով պարագելով՝ Հայկական Դատը մոռացութեան կը տայինք»:

Հնչակեանները կը փաստեն որ սոցիալիզմը, ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի երկրի մէջ ո՛չ նպատակ, ո՛չ էլ իրեն նպատակ է դրել ազգութիւնները ջնջել, ընդհակառակը՝ նա ազգերի պատմա-անհատական գոյութեան ամենաջերմ պաշտպանն էր: Մենք բերեցինք օրինակ, բոլոր հեղինակաւոր սոցիալիստների գրածներից եւ Միջազգայնականի որոշումներից:

Խնդիրները լուսարանելէ ետք «Մուշեղ Եպիս. եւ Ընկ. Վահան Թէքէեան ձուլման կատարելապէս համամիտ եղան: Վերջին բոպէին նրանց միանալ չուզեց Ընկ. Մ. Տամատեան, թէեւ չուզեց էլ միւս երկուքին խոչընդոտ լինել, եւ ասաց՝ որ իրենք ազատ են: Այդ բարոյական ճնշումի տակ էր որ ձուլումը չկայացաւ»:

Վերջնականապէս բաժանումից առաջ՝ իրենց պարզեցինք, որ «Վերակազմելութիւնը» ո՛չ մի փիլիսոփայութիւն ունի, եւ նա պարզապէս հոմանիշ է անզաղափարակամութեան, որ նա ո՛չ միայն աւելորդ է մեր կեանքին մէջ, այլ գոյութեան հաստատուն հող չունենալով՝ անպայման դատապարտուած էր մեռնելու:

Իսկ «Վերակազմելների միւս հատուածի մնացորդները, ուր որ կային ձուլեցինք մեր մէջ եւ ամէնից աւելի եռանդուն կարմիր Սոց. Դեմ. երը դարձան:

ՔԻՒՐՏԵՐՈՒ ՀԵՏ

Քիւրտ Պետր Պէյը եւ իր բարեկամները Հնչակեան կազմակերպութեան կանոնադրի հիման վրայ մեր օգնութեամբ ծրագրի մը կազմեցին, իրենց շուրջ հաւաքեցին Կ. Պոլսոյ մէջ եղող քիւրտ դպրոցականներ, ուսանողներ եւ պաշտօնատարներ:

Բացուեցաւ քրտական ակումբ, որ բաւական մեծ թիւով անդամներ ունեցաւ: Կազմուեցաւ Կեդրոնական վարչութիւն, կրցաւ քանի մը մասնաճիւղեր եւ ակումբներ հիմնել երկրի մէջ, Մուշի իրենց մասնաճիւղը ամենայնիւ համընթաց էր եղած Ս. Դ. Հ. Կուսակցութեան մասնաճիւղի հետ:

Հրատարակեցին մի թերթ, որի մէջ ղեկավարեցան մեր վերջին երկու շրջաբերականները եւ «Հնչակ»ի խմբադրականները, ինչպէս նաև մեր կողմէ տրուած ուրիշ յօդուածներ: Պոլսոյ քիւրտերու ակումբին շատ շուտով կրցանք տայ հակա-իթթիհատական գոյն եւ ուղղութիւն:

Իթթիհատը հակադարձեց, քայքայեց եւ ձեռք առաւ Սուլէյմանիէի քիւրտերը, որոնք աւելի տաճկացածներ էին (տաճկա-քրտեր):

ԻԹԹԻՀԱՏԻ ԹԵՁԸ

— Ինչո՞ւ համար առանձին ակումբ եւ ազգային հողի վրայ կազմակերպութիւններ յառաջ բերել «Խլամութեան» մէջ ճեղքուածք բանալ, քանի որ «Խլամ բոլոր տարրերն ալ համահաւասար իրաւունքներ ունէին եւ պետութիւնը բոլորինն էր...»:

Քայքայումի դարձը յաջողուց քրտական ծագում ունեցող Պապանդատէ, որ յետոյ Կրթական Նախարար ալ դարձաւ, կը դրէ Ս. Սապահ Գիւլեան: Թէեւ օր մը Տոքթ. Արդուեանի հետ եկած էր առաջարկելու, որ քրտա-հայկական դաշնակցութիւն մը կազմուի ընդդէմ թրքութեան: «Ան ազճատ ողիւով տիպար մըն էր...»:

ՀՆՁԱԿԵԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ

Քիւրտերը թուրքերէն բոժնելը շատ մեծ հետաքննարկներ կը բանար, բայց ցեղամուլութիւնը, դարաւոր ոխակալութիւնները, թըշնամութիւնները, թրքական խարդաւանքներու ցանցերը, որ այդ ցեղերէն շատերու սիրտն արդէն մաքրիներու մէջն առած էր, որոնք «Մեզ անկարող դարձուցին որոշ եւ դրական արդիւնքներ ձեռք բերելու: Ըրինք այն ինչ որ մեր միջոցները թոյլ կուտային»:

ԹՈՒՐԻ ԿԵՄՈՒԿՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ո՛չ միայն մեր անհատական տեսակցութիւններու, այլ դաստիարակութիւններու եւ հրատարակային ժողովներու մէջ երբեք առիթը չփախցուցինք իթթիհատի ողին մերկացնելու եւ մատնանշելու այն վտանգը, որ անխուսափելի հետեւանքը պիտի ըլլար անոր գործունէութեան:

«... Իթթիհատականները ահապէս հարստութիւն դիպեցին եւ ամէն մէկը իր շրջանի տէրեպէյի դարձաւ: «Հին ուսման» սիւներէն շատերը կարմիր «Միութեան» կղանք՝ կաշառով: Եւ Սոդոմ Գոմորը, Բարելոնի խառնակութիւնը տիրեց, հին Բիւզանդիոն նորին երկրպագութեան եկաւ:

«Գժպոհութիւնները թշնամութեան փոխուեցան: Զսպումի թափը աւելի տեղացաւ:»

«Ինքնաշխատութեամբ եւ տեղական պայմաններէն յառաջացած շատ թիւով թուրք երիտասարդներ աւելի շուտ նշմարեցին այդ վտանգը: Յայտնի պատմաբան Մուրատը, Կովկասցի, անոնց արտայայտիչը դարձաւ: Զինք եւ իր կուսակիցները (Աքարականներ) հրատարակէն մաքրեցին, որպէս յետաշրջականներ»:

«Իթթիհատը սակայն երբեմնի թուրք Համիտականները իր յենարանները սկսաւ դարձնել:»

«ԻԹԹԻՀատը Ֆիդիբալան (գինուորական) ուժը ունէր, սակայն մտաւորականը, խելամտութիւնը, պետականութեան յատկութիւնը չունէր... Եւ իբ շարունակական տատանումներուն մէջ կորսնցնելով հաւասարակշռութիւնը դարձաւ յետադիմական, մի օրհասական արջ, որ ամէն գնով իր գոյութիւնը պահելը իր առաջին նպատակն էր դարձնում»:

(Տես՝ Ս. Սապահ Գիւլեան «Պատասխանատուները», 1916, Փրովիտենս, էջ 253-5):

Բոլոր անոնք, որոնք միամտաբար կը կարծեն, թէ հայ ազատագրական պայքարի ղեկավարները չեն ուզած, չեն փորձած ԻԹԹԻՀատի դէմ համադրել աշխատաւոր, ազատական թուրք, քիւրտ, չէրքէզ, արաբ, ալպանացի եւ այլ դժգոհ տարրերը, պէտք է աւելի մօտէն հետաքրքրուէին, քննադատելէ առաջ հայ քաղաքական մտքի առաջնորդները այդ շրջանին... Եւ չմեղադրէին անոնք, որոնք 1896էն ի վեր շփումներ ունեցած, տեսակէտներ պարզած եւ փորձած էին համոզել ԻԹԹԻՀատը, թէ օսմանցի ազգ չկար այլ կային Օսմանեան երկրին մէջ ապրող ազգեր, որոնք այդ երկրին մէջ կ'ուզէին իրենց համար արդարութիւն եւ իրաւունք:

«Մեր Պայքարը Հայ Ազատագրութեան Ուղիով» 1948ին Գահրէրէ լոյս տեսած գրքին էջ 218ին մէջ կը գրէ Մ. Սերոբեան:

«Այս մտահոգութիւններէն առաջնորդուած երկար տեսակցութիւններ ունեցայ Ալմուսիի եւ Ռ. Զարդարեանի հետ, մատնանշելով այն համագործակցութեան վնասները, եւ խնդրելով որ գոնէ հայ յեղափոխական կուսակցութիւններու միջեւ հասկացողութիւն մը ստեղծուի, զինելու համար հայ ժողովուրդը, վաղուան հաւանական ջարդերու միջոցին կարենայ ինքնապաշտպանութեան դիմելու համար: Այդ պահուն մեր Դաշնակցական բարեկամները չափազանց լեցուած էին ԻԹԹԻՀատական հակումներով, կարենայ ըմբռնելու համար ցուցումներուս հիմնաւորութիւնը»:

Հայկ Խոճասարեան իր «Խոնարհները» գրութեան մէջ, երբ կը նկարագրէ իրենց աքսորի առաջին օրերը, կ'ըսէ.—

«Աքսորի հետեւեալ աւտուս երբ շոգեկաւքը իզմիտի մօտերը հասաւ, Ալմուսին խանգաւառութեամբ ըսաւ մեզի, «Տղաք, հիմա մեր վերադարձի հրամանը պիտի գայ, անպիտան ոստիկանները չքոյլատրեցին որ Թալաթիս հեռաձայն ընեմ, հիմա մեր ընկերները դիմած են եւ նա տեղեկացած է այս սխալին»:

(«Լրարբեր» 1943, Ապրիլ 24):

Ատանայի ջարդէն ետք «Ազատամարտ»ի մէկ թիւին եւ «Ժուրնալ տը Սալոնիք»ի մէջ ԻԹԹԻՀատի եւ Դաշնակցութեան նոր պայմանագիրը տպուած է, իսկ «Բիւզանդիոն» կը գրէ այս մասին.—

«Հ. Յ. Դ. եւ Օսմ. Գոմիթէի (ԻԹԹԻՀատ) միջեւ կնքուած դաշինքին հայերէն թարգմանութիւնը, զոր հրատարակեց «Ազատամարտ» խեղաթիւրուած է, ինչպէս կը տեսնուի ընդերքէն...: Ա. յօդուածը կ'ըսէ. «Ո՛չ մէկ ջանք, ո՛չ մէկ գոհողութիւն պիտի խնայուի ամուր հիմերու վրայ հաստատելու համար Սահմանադրութիւնը, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՒՂՈՒՄԸ եւ ՄԻԱԲԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ...»: իսկ Ե. յօդուածին մէջ «ԱՐԵՆՆ ՏՈՒՐՔ նկատուած են Պոլսոյ դէպքերը եւ Ատանայի ջարդերը», մինչ Գ. Լազեան իր «Հայաստան եւ հայ դատը ըստ դաշնագիրներու» հատորին մէջ (1942) կ'անտեսէ այդ դաշնագիրը եւ ակնարկութիւն անդամ չ'ընելու անոր մասին: Եւ կը բաւականանայ գրելով. «Յետադիմական շարժումի մը դէմ պաշտպանողական նպատակով գոյացաւ Թուրքիոյ վարիչ տարրին, ԻԹԹԻՀատ-Թէրաքըլի եւ Հ. Յեղ. Դաշնակցութեան միջեւ համաձայնութիւն մը...»:

Իսկ Մուշեղ Սերոբեան իր գիրքին 220րդ էջին մէջ այս մասին կ'անդրադառնայ եւ հարց կուտայ. «Ինչո՞ւ այս խուսափումը, երբ անդին ամենէն անկարելի դաշնագրերն անդամ կը ներկայացուին ընթերցողին...»:

Իսկ Դաշնակցութեան տեսարան Մ. Վարսնդեան ժամանակին «Հօրիզոն» թիւթի մէջ, ակնարկելով ԻԹԹԻՀատ-Դաշնակցութեան համադրութեան կը գրէր. «Մեմֆ մեղանչել ենք, հարկաւոր է խոստովանել այդ, դէ՞ զնահատելով այդ լուտարբի (ԻԹԹԻՀատի) քաղաքական եւ սոցիալիստական կոթիւնը...»:

Պոնտոսի, Տրապիզոնի շրջանի Դաշնակցական կոմիտէն եւ այլ շրջաններուն խմբապետները աւելի խմատուն դուրս եկան եւ զինուելու եւ պայքարելու թեղին կողմնակից էին...:

Իսկ Եղիպտոսի մէջ կը կազմուի 1912ին բոլոր կուսակցութեանց կողմէ «Ազգ. Պաշտպանութեան Կոմիտէ» մը: Այդ կոմիտէի գիտանը 1912 Փետր. 8ի շրջաբերականով կը յայտարարէր, թէ Սահմ. Ռաւկավար կուս. Կեդր. Վարչութիւնը «չգիտցաւ իր կացութեան բարձրութեան վրայ գտնուել: Չորս տարուան ընթացքին (1908-12) նոյնիսկ խաղաղ զարգացման շաւիղին մէջ Կեդրոնական Ակումբը չգիտցաւ կենդանութեան եւ ողբերգութեան մթնոլորտ մը ստեղծել, ապատական չունէ մը ներշնչել շարքերուն»: Թէ Կեդր. Վարչութիւնը իր «վերջին շրջաբերականով» իր մանկութեան ամենէն խոշոր վաւերագիրը ստորագրած եղաւ...»: Այս շրջաբերականը կը ստորագրէին Վերակազմեալներու եւ Հայ Սոսմանագրական Ռամկավարներու պետերը՝ Մ. Տամատեան եւ Բ. Օհանեան:

(Տես՝ «Մեր Պայքարը Հայ Ազատագրութեան Ուղիով», Մ. Սերոբեան, 1948, Գահրէրէ, էջ 220-222):

Անդրադատնալով ԻԹԹԻՀատի եւ Դաշնակցութեան կապերուն՝ Հանրի Պարպի իր «Մարափի երկրին Մէջ», (1965, Պէյրութ, էջ 16) հատորին մէջ կը խորհրդածէ.

«Շատ մտերմիկ յարաբերութիւններ հաստատուած էին հայերու եւ երիտ. Թուրքերու պետերու միջեւ, որոնք ամէն առիթով բարեկամութեանց հետամուտ էին եւ ո՛չ մէկ խոստումի առջեւ կ'ընկրկէին իշխանութեան գլուխ անցնելու համար: Եւ հայերու Դաշնակցական կուսակցութիւնը հաւատք ընծայելով այս գեղեցիկ խոստումներուն, նոյնիսկ տեսալ մը զինակցութիւն կնքած էր «Միութիւն եւ Յանազնիմութիւն» կուսակցութեան հետ»:

«... Միայն Եւրոպայի վախը կ'արգիլէ Թուրքիոյ նոր տէրերը, սպանութիւնը ամբողջ Հայաստանի վրայ տարածել»:

Յետոյ անոնք դեռ ինքզինքնին այնքան ուժեղ չ'էին զգար իշխանութեան ներս եւ պիտի սպասէին յարմար ժամանակին...: (Նոյն):

ԻԹԹԻՆԱՏԻ ԴԻՄԱԳԻԾԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Պընուա Մէշէնէն, Մորկնթաուէն, Ռ. Պիշոֆէն, Լեփսիւսէն, Մանտէլշթայմէն մինչեւ Գեմալական պատմութիւնը զրոյ ժամ Բու Կարնիէ («Լա Ֆէն Տը Լ'Ամբիթ Օթուման»), 1973, Փարիզ), կը քըննադատեն Համիտը եւ Երիտ. Թուրքերը որպէս բռնակալներ, Թուրքիոյ Կայսրութեան կորստեան պատճառներէն մին:

... Երիտ. Թուրքերու 1895-1902ի շրջանի զլխաւոր կեդրոնները՝ Փարիզ, Ժընևե եւ Գահիրէ կը դառնուէին:

1896ին Մուրատ պէյ Գահիրէէն Փարիզ կու գայ: Անոր «Միզան» թերթը լոյս կը տեսնէ Ժընևեի մէջ եւ ըստ Փրանսացի պատմաբանի մը աւելի փնտռուեցաւ, քան «Մէշէվէրէթ»ը Ալի Ռիզային:

Մինչդեռ հայերը Եւրոպական պետութեանց գործակցութիւնը անհրաժեշտ կը նկատէին Բարեկարգութեանց հսկողութեան հարցին մէջ, Աճմէտ Ռիզա եւ իր կողմնակիցները բացարձակապէս դէմ էին ատոր: Անոնց համար Բարեկարգութիւններու հարցը զուտ ներքին հարց մըն էր Թուրքիոյ յատուկ, Թուրքերով լուծելի հարց:

1902ին եւ 1906ին Իթթիհատի զաղափարները տարածուեցան, երկրէն ներս թէ դուրս: Ժընևեի, Պոլսոյ, Գահիրէի մէջ ուրիշ խմբակներ հրապարակ եկան:

1906ին Իսմայիլ Ճանպուլաթ եւ Միտհատ Շիւքրի կը հիմնեն «Ազատութեան Օսմանեան Ընկերութիւնը», որուն տասը հոգիները Կեդրոնական Կոմիտէին մաս կը կազմէին Պուրսալը Թահիր, (Սալունիքի զինուորական դպրոցին տնօրէն) եւ Թալաաթ (փոսթի պաշտօնեայ Սալունիքի մէջ):

Ինչ կը վերաբերի Սելանիկի, ապա ըսենք, թէ 60 հազար հրեայ, 30 հազար մահմետական եւ 24 հազար քրիստոնեայ բնակչութիւն ունէր: Բազմաթիւ Մասոնական Լոճեր կը գործէին հոն եւ այդ Լոճերուն մէջ մեծամասնութիւնը հրեայ Մասոններն էին եւ ինչ որ յետագային Իթթիհատի կազմած դահլիճներուն մէջ անոնց գերակալը զիրք մը կ'ապահովէր:

Իրական իշխանութիւնը զաղտնի Իթթիհատական կոմիտէութեան կը պատկանէր եւ Սելանիկի շատ զաղտնի այդ Կեդրոնն էր որ ուղղութիւն կու տար կառավարութեան եւ անոր յայտագրին:

Ի՞նչ կ'ուզէին այս Երիտ. Թուրքերը, երբ կը յայտարարէին. «Կայսրութիւնը Օսմանցիներուն», զայն պէտք էր հասկնալ «Թուրքիան բուրժուան», կը գրէ Փրանսացի պատմաբան մը այս տարի լոյս ընծայած իր գրքին մէջ: Համիտը, իշխանութենէ զրկուած խամաճիկ պէտք է դառնայ, ո՛չ աւելի:

Անոնք շատ աւելի մտահոգուած էին պետութեան պահպանմամբ քան այդ պետութեան ազատութիւն տալիս ռեժիմով:

Մէշմէտ Ալթայ կը գրէ, թէ զաղափարական եւ փիլիսոփայական կատու չունենալուն՝ Իթթիհատ կատաղի ազգայնամոլութիւնը ընդգրկեց: Այս Անատոլիոյ խորերէն եկած սպաններէն կարելի էր ուրիշ բան յուսալ...:

«Այս կայսրութիւնը մեզի կը պատկանի եւ այնքան ատեն որ Թուրք մը պիտի ապրի մենք պիտի չթոյլատրենք որ Թուրքերէն զատ ուրիշներ հոն օրէնք գործադրեն:

«Մեր նպատակն է, կ'ըսէին այս տէօմաէ Իթթիհատականները, ազատութիւն տալ իւրաքանչիւր ազգութեան, իւրաքանչիւր կրօնի, պայմանաւ որ քրիստոնէականները վերջ տան նախկին իրենց պահանջներուն (բաժանման, անկախութեան ձգտումին) եւ որոնք ներկայ այս կացութիւնը ստեղծեցին: Սուլթան Համիտ Նիզամի պաշտօնանկ ըրաւ, եւ հրաւիրեց էնվէրը Պոլիս՝ պաշտօնի բարձրացում խոստանալով անոր: Էնվէր ի զարմանս Սուլթանին, նոյնիսկ չպատասխանեց անոր...»:

Երբ Քէամիլ Փաշա փորձեց քննադատել, Երիտ. Թուրքերը, էնվէր եւ իր մարդիկը ատրճանակ ցոյց տուին եւ սպառնացին երեսփոխաններուն: 24 ժամ ետք Հիլմի փաշան վարչապետ որպէս՝ կը պարտադրուէր Թուրքիոյ:

13 Սեպտեմբեր 1909ին Թաքսիմի զինուորներու սպաններէն մաս մը աչք կը դառնային կացութեան, եւ կը սպառնային Սելանիկի «անհաւատներուն», որոնք կը սպառնային իսլամ կրօնին: Բայց անոնց կը պահպէր զեկավարը: Զինուորները, իւլէմաները կը պահանջէին կառավարութիւն մը որ յարգէր Ղուրանը:

Հիլմի փաշա իր հրաժարականը տուաւ եւ Իթթիհատի պարտադրուիները պահալուեցան: Թէֆէք փաշա վարչապետ կը նշանակուէր, Սուլթանը նոյն ատեն Իթթիհատին կը հասկցնէր, թէ Սահմանադրութիւնը վտանգուած չէր:

Մերակուտականներ եւ երեսփոխաններ հաւաքուեցան, հազիւ մեծամասնութիւն մը որոշեցին Սուլթանին դահլիճացութիւնը...: Անոր կը յաջորդէր Համիտի եղբայրը, Ռէշատը՝ Մուհամէտ Ե. անունին տակ՝ որ 32 տարի հսկողութեան տակ, զրեթէ բանտի մէջ ապրած էր: Սակայն Թոյլ մարդ մըն էր... որ յետոյ միայն Իթթիհատի որոշումները ստորագրող մը եղաւ...:

Երիտ. Թուրքերու իշխանութեան զլուխ զայլը խանդավառութեամբ միայն չընդունուեցաւ Օսմանեան Կայսրութեան մէջ, զայն ծափահարեցին նաեւ Եւրոպայի բոլոր պետութիւնները... յուսալով որ բան մը պիտի փոխուէր այդ երկրէն ներս...:

Բոլոր պետական որոշումները Մերթէզի Ռումուլի Իթթիհատի Կեդր. Կոմիտէն կ'առնէր եւ զոր գործադրել կու տար կառավարութեան իր ներկայացուցիչներուն միջոցաւ:

Մոնասթրի Անպիլոյ հիւպատոսը 1910ին Սելանիկի ժողովին մէջ Թալաաթի մէկ ելոյթը կու տայ, ուր ան կ'ըսէ թէ, թէ եւ հասարակութիւն խոստացուած է բոլոր փոքրամասնութիւններուն Թուրքիոյ մէջ, բայց մենք կը զգանք բոլորս որ «ստիկա անիրագործելի խեղալ մըն է»:

«...Մեր ճիշդ կեանքը օսմանցի դարձնելն է և ուրեւէ հա-
կադրութեան փորձ այս մարդին մէջ՝ ճախողութեան դատապար-
տուած է... «Հաստատութեան հարց չի կրնար դոյութիւն ունենալ,
մինչև որ մենք Օսմանցի չդարձնենք կայսրութիւնը...: Դժուար և և
երկարատեւ ճիշդ կը պահանջէ այդ: Եւ մենք պէտք է բարեկամ ըլ-
լանք Աւարո-Հունդարիոյ և Գերմանիոյ...»:

Բրնէ Բինոն «Թուրքիոյ պատմութիւնը», Գնդապետ Լամուշի
1934ին հրատարակած գրքին նախաբանին մէջ անդրադառնալով
1908ի Երիտ. Թուրքերու յեղափոխութեան տուած խոստումներուն
չդորձադրուելուն, կը գրէ այն յուսախարութեանց մասին զոր ու-
նեցաւ մարդկութիւնը Երիտ. Թուրքերէն՝ որոնք «աւելի անհանդուր-
ժող, աւելի ազգայնական, աւելի մահմետական, աւելի քուրք եղան
քան Ապտիւլ Համիտի միապետութիւնը»:

Շէվքէթ փաշան քաղց Գոլտոյ վրայ, անոր միացան քրիստոն-
եաներ և հրեաներ, մանաւանդ պուլկար յեղափոխականներ:

«Իթթիհատի հայրենասիրութիւնը շուտով փոխակերպուեցաւ
Թուրք ազգայնամոլութեան»: (Էջ 337):

«Ասոնք չէին ուզեր իրենցմէ դատ այլ քաղաքական կուսակցութիւններու
դոյութիւնը քաղաքական կեանքէն ներս, ինչ որ դժգոհութեան առիթ տուաւ նոյնիսկ
բանակէն ներս 1911ին և պատճառ եղաւ որ տապալի Իթթիհատի դահլիճը:

«Ապստամբութիւններ ծագեցան Սուրիոյ Տիւրքներուն մէջ, ինչպէս նաև
Եմէնի մէջ: Կառավարութիւնը ստիպուեցաւ բանակցել յեղափոխական պետեր՝
իմամ Եահիայի և Սէիտ Իտրիսի հետ:

«Որքան ալ ներկայ Թուրքիոյ վարիչները յատկապէս թշնամի ցոյց տուած
ըլլան ինքզինքնին Իթթիհատի, «իրենց քաղաքական ըմբռնումը կը համապատաս-
խանէ անոնց»: Չուտ թրքական պետութիւն — ինչ որ արարական նահանգներուն
բաժանումով և փոքրամասնութեանց (ոչ-մահմետական) տկարացումով դիւրա-
ցոյց այդ նպատակը»: (Էջ 395):

«1924ին «Յատաշրիմական» շարժում անունի ներքև նախկին Իթթիհատա-
կաններ ուղեցին Քեմալը սպաննել, սակայն Անկախութեան դատարաններուն առ-
ջև դատուելէ ետք ուրիշներու շարքին կախաղան բարձրացան Ճաւիտ և Տոքթ.
Նազըմ»:

ԵՐԻՏ. ԹՈՒՐԿԵՐՈՒ ԷՆՈՒԹԻՒՆԸ ԸՍՏ ՀՆՁ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

«... Ի՞նչ են սրանք — սրանք դարձեալ իրենց հայրերն են, միայն անուան
տարբերութեամբ: Եթէ սրանք (Ե. Թուրք.) անկեղծ էին ապա ինչո՞ւ ամենակա-
տաղի կուիւ են մղում այն ժողովուրդների դէմ, որոնք իրենց պահանջները առաւե-
լագոյն մասովը երեւան են դալիս, որպէս մարդկային տարրական իրաւունքներ
ձեռք բերել ցանկացողներ: Եթէ ամէն ժողովուրդի անհատականութիւնը ոչնչացը-
նելը, նրա մարդկային իրաւունքները խլելը ոճիւր էր, ապա այդ ոճիւրը լի ու լի
կերպով կատարում է ներկայ կառավարութիւնը, ուրեմն իրենք ինչո՞վ են տար-
բերում նրանցից, երբ բոլորն, ամենակից բռնելով հայհոյում են Մակդոնացուն,
Հային, Յոյնին, որոնք իրենց պաշարի մէջ չեն բերում ոչինչ, որ դուրս լինէր
հասարակ իրաւունքների պահանջների շրջանակից: ... Համիտից վար չեն մնում,
իրենց խօսքի ու գրի յուզումների մէջ...»

«Երիտ. Թուրքերը իրենց իսկ շահերն մեկնած պէտք է լքեն թունայից ար-
շաւանք դէպի օտարազգի պաշարողները...»:

«Եւ Երիտ. Թուրքերը առաջինը կը լինէին շահողը, իրենք և իրենց կրկրր,
եթէ քաղաքակրթութեան հոսանքը իրենց պաշարի ուղեղիծը անէին և նրա հետ
միասին ընթանային: Ինչ որ մեր էլ ցանկութիւնն է արդէն»:

«Թուրքեան կամ կը խորտակուի բեկորների վերածուելով, բաժան-բաժան
լինելով, և կամ կ'ապրի միայն այն ժամանակ, երբ կը մշակի այնպիսի ուժիմ,
որ բոլոր ժողովուրդները կարող կը լինեն իրենց անհատականութիւնը և ինքնու-
րոյնութիւնը պահել: Այլասեռ տարրերից կազմուած, թրքական կայսրութեան մէջ
գտնուող ժողովուրդների զարգացումը ունեցող մի կրկրի համար փրկութեան այլ-
ևս ուրիշ ճանապարհ չկայ, բացի այդ մէկից»:

(«Երիտ. Հայաստան» Խմբ. 1905, Մայիս 31, Պոսթոն):

Ս. Սապահ Գիւլեան կը շարունակէ. — Երիտասարդ Թուրքե-
րի «Մէչէվէրէթ»-ի խմբակը «հայկական դորձեր» խմբադրականով
նորից դիմում է անում հայ ժողովուրդին և նրան հրաւիրում զալ միա-
նալ, գործակցել իր հետ Օթոմանեան ընդհանուր հայրենիքի համար:

«... Հայերը իրենց ջանքը միացնեն Ե. Թուրքերի — ինչո՞ւ — Համիտին
փոխելու համար, մեզ պատասխանում են: Համիտի փոխուելով ի՞նչ պիտի լինի —
Օ՞, Թուրքեան ոտից ցզուլ Արեւելեան դրախտ կը դառնայ, կանչուրուում են «Ե-
րիտ. Թուրքերը», բայց դա մի պատրանք է, որի մէջ տարիներ շարունակ ընկած
են Թուրք Երիտ. ասուածները և զրա համար էլ մնում են քաղաքական անգոր-
ծութեան մէջ: — Լաւ, ի՞նչպէս փոխել Համիտին: — Խնդրելով, ազաւելով, խոր-
հուրդ (մէշէվէրէթ) տալով, շարունակ կրկնում են Մէչէվէրէթեանները: Այստեղ
Երիտ. Թուրքերը հանդիսանում են, որպէս պարզ կատակարաններ: Բոնաւորին
խորհուրդ տալ, որ ինքն իրեն զահնկէց անի, ինքն իր ձեռքով զլուրը կախաղանի
թակից կախի, դա պատմութեան ամէնէն սքանչելի կատակարան էջը պիտի լինէր,
եթէ բռնաւորները այդպէս վարուէին. դժբախտաբար ոչ մի ազգի պատմութիւն,
և մասնաւորապէս Օթոմանեանը, պատմական այդպիսի իրողութիւններ մեզ ճա-
շակել չեն տուել: Ընդհակառակը՝ ամէն անցեալ մեզ ցոյց է տալիս, որ բոնա-
ւորների դահը խորտակում են, նրանց զլուրը կտրում են՝ ոյժով, միայն ոյժով:

«Եթէ Երիտ. Թուրքերը ցանկանում են Համիտին զահնկէց
անել, նրա զլուրը կտրել, — կայ միայն մի միջոց, մի ուղի, որ
սրբազործուել է բոլոր ազգերի պատմութեամբ, դա յեղափոխական
ճանապարհն է: Պոտալով, ճշալով, խորհուրդ տալով չէ, որ Համիտը
պատժից կարելի է ազատել, այլ տեղի ունեցող քաղաքական ըն-
կերային կարգ ու կանոնը խորտակելով, փշրելով:

«Եթէ Երիտ. Թուրքերը չեն ուզում պարապ շուր ձեռքել, ամէն բանից առաջ
պէտք է, որ իրենք յեղափոխական դառնան:

(Իթթիհատը միայն Միտահթեան Սահմանադրութեան շուրջ կ'ուղէ միացը-
նել Համիտի դէմ պաշարողները, անոնց համար Պերլինի ՅԼրդ յողուածը «կատա-
կարանութիւն» է: Մինչ Միտահթեան Սահմանադրութիւնն է կատակարանու-
թիւնը...):

«... Երիտ. Թուրքեան իր ամբողջ գոյութեան բնիկացում կատարելով ա-
պիկարութիւն ցոյց տուեց և ոչինչ, ոչինչ անել չկարողացաւ: Անունը չէր որ
իրեն «Երիտասարդ» համարել պիտի տար, այլ գաղափարը, սկզբումէր, միտքը,
բայց որովհետև իրենց մտածմունքները այնքան հին էին, որքան Մեր Թուրքերը,
ուստի իրենց պատմաբան մէջ չերիտասարդացած՝ ձեռացած կը մնային նոյն
Օսմանցիները, ինչ որ էին իրենց պապերը և նախնայերը, քէն եւրոպական
զգեստներ վրանին առած:

«Երբ մարմին չառա խոստացուած բարեկարգութիւնները, հինը իր հին մեթոտներով շարունակեց իր գոյութիւնը: Պաշտաններու մէջ անկախութեան հովեր կը փչէին ու ան մէջտեղ եկաւ Ռէչիտ, Ալի, Յուստ Փաշաներու բարենորոգչական գաղափարներու դէմ:

«Հիւրիէք» իր ազգայնամոլական ձգտումներուն մէջ այնքան վայրագ էր, որ անկեղծութեամբ կը յայտարարէր, թէ «Օսմանականութեան, Օսմանեան ազգայնականութեան մէջ չձուլուող եւ ընդդիմացող ցեղերը հարկաւոր էր բնաջնջել որպէս անհրաժեշտութիւն եւ ապահովութիւն ապագային»:

1894-1895ին Հնդկաստանէն Լոնտոն աքսորուած հնդիկները թունալից յողաւաններ կը գրէին Հայկական Դատին դէմ եւ պաշտպան կը կանգնէին Օսմանեան պետութեան ոմրողութեան գաղափարին:

Ընկ. Ս. Սապահ Գիւլեան կը գրէ թէ (1905ին «Երիտասարդ Հայաստան»-ի մէջ) Աղուէսը նոր չէ որ կովկասի մէջ Համիլամութեան առաջալը կը հանդիսանայ: «Նա դեռ առաջները կատարել յարձակումներ է գործել Տաճկահայերի դէմ՝ Իսլամութեան շահի անհրաժեշտութեան տեսակէտից: Նա մէկն է Համիլամական այն բազմաթիւ Համոզուողներէ, որ Միջերկրականից մինչեւ Ձիւսաստան, Ղազուանից մինչեւ Հնդկական ովկիանոսը՝ մօտիկ ապագային ընդհանուր սեպհակա-նութիւն են համարուում Իսլամութեան»:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սահմանադրական յեղաշրջումից յետոյ Իթթիհատի հանդէպ համեմատաբար ճիշդ դիրք էր բռնել Հնչակեանների մի թեւը, Սապահ Գիւլեանի խումբը: Վերջինս խիստ քննադատութեան էր ենթարկուում Իթթիհատի ռեակցիոն քայլերը, յետոյ նրանք համաձայնութեան էին եկել Իթիլաֆականների հետ եւ նախապատրաստուում էին պետական յեղաշրջում առաջ բերել, երբ վրայ հասաւ պատերազմը: Հնչակեանների այդ շարժումը, չնայած իր սահմանափակ բնոյթին, ըստ էութեան արտացոլում էր Իթթիհատից դժգոհ ազգային փոքրամասնութիւնների ու թուրք ժողովրդի արամադրութիւնները: Ծարժումը կարող էր աճել եւ դուրս գալ դաւադրական շարժման շրջանակներից եւ վերածուել զանգուածային շարժման, եթէ վրայ չհասնէր համաշխարհային պատերազմը, եւ Իթթիհատը օգտուելով պատերազմական իրադարձութիւնից, չջանալուէր Հնչակեաններին եւ շարժման համար պազա հանդիսացող հայ ժողովրդին:

«Եթէ նոյնիսկ Հնչակեանները չկարողանային շատ հեռու դնալ եւ գործը վերջանար միայն Իթիլաֆի յաղթանակով, դա եւս նուաճում էր լինելու ազգային փոքրամասնութիւնների, հայերի համար, որովհետեւ Իթիլաֆը աւելի չափաւոր էր, բարեացակամօրէն էր արամադրուած ազգային փոքրամասնութիւնների հանդէպ, եւ որ զլիսաւորն է, ձգտում էր թուրքիան դուրս բերել գերմանական իմպերիալիզմի ճիրանների միջից: Ուստի Հնչակեանների այդ թեւի նկատմամբ Օսմանը դրական վերաբերմունք ունի եւ նրանց հանդէպ է բերել «Թիւ 17 խաֆիէն» վէպում»:

(Տես՝ «Երուանդ Օտեան» Ա. Մակարեան, Երեւան, էջ 216-217):

«...Այսպէս ուրեմն՝ Հայկական Գաւառներու մէջ քիչ թէ շատ տանելի կեանք մը ստեղծելու փոխարէն՝ իրադրութեանցաւ Հայութիւնը բնաջնջելու քաղաքականութիւնը:

«Բայց այս բոլորին հակառակ՝ Պանք Օթոմանի գրաւումը, Ձէյթունի սպարտամբութեան, Խանասորի Արշաւանքի, Պապը Ալին օղը հանելու փորձը՝ ծառայեցին միմիայն մէկ վկայութեան՝ այն որ՝ օրհասականի գալարումներուն դատապարտուած Հայութիւնը այնուամենայնիւ անկենդան դիակի վերածուող ժողովուրդ չէ: (Ատոմ էջ 55):

«...Մակեդոնական ու Հայկական Յեղափոխական Կադմակերպութեանց մարտական խումբերը զինաթափ եղան: Անոնք հաւատացին Սահմանադրական նոր Թուրքիոյ վերածնութեան ու ազգերու իրաւանց պաշտպանութեանը: Ասով ապացուցուեցաւ ... թէ հայ յեղափոխականներու էութեան ու նպատակին մէջ բնա՛ւ անջատողականութիւն չկայ»:

«Իթթիհատը՝ որ Փարիզի մէջ դաշնակցած կուսակցական տարրերու հետ համադրուակցութիւն ստեղծելու յանձնառութիւն ունէր, դրութեան տէրը դառնալէ յետոյ (1908) ԲինՈՒԵՅԱԻ ԿԱՐՄԵՍ ՄԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԱՆՏՈՎ:»

«Իթթիհատը չէր ուզեր նոյնիսկ լսել վարչային ապակեդրուացման խօսքը ու չէր կրնար հանդուրժել թուրք տարրեր կուսակցութեան մը գոյութեան:

«Ահար եւ Իթթիհատ իրար ինկան: Ահարը իր անհուսար ուժին իսկ բերումով դիմեց Մահմետական հոգեւորականութիւնն ու մուսուլմանութիւնը զուելու եւ մասսայական յուզում յառաջ բերելու մեթոտին:

«Միակ քաղաքական կուսակցութիւնը որ Մահմանադրութեան եւ Ազատութեան գոյց է եւ երկրի բաղդին սպառնացող վտանգը տեսնելով չէր թերաճար իր հայրենասիրական-հազաբացիական պարտականութիւնները կատարել եւ զգուշացնել մէկգմէկ յօշոտող եւ խելակորոյս կողմերը, այդ կուսակցութիւնն ալ եղաւ Հ. Յ. Գաղնակցութիւնը: (Ընդգծումը Հ. Գ.: Յարութիւն Շահրիկեանի միամիտ սոյն տողերը՝ առանց մեկնարանութեան ալ, շատ խօսու են կը կարծենք):»

«Բայց ի դուր անցան յորդորները: Վրայ հասաւ 1909 Մարտ 3ի յետադիմական պետական հարուածը:

«Հայ Ազգը բաժնուած է այնպիսի ազգերու եւ պետութիւններու մէջ եւ շրջապատուած է այնպիսի ժողովուրդներով՝ որ անոր համար խելակորոյս ինքնասպանութիւն պիտի ըլլար եթէ յաւակնէր Անկախ Հայաստան ստեղծելու: (Տես՝ Ատոմ, (Յ. Շահրիկեան), «Բարեկրօնագումներու Հարցը», Կ. Պոլիս, 1914, էջ 73):»

«Գտայ որ Թուրքիա պարզապէս կը բաղկանար անկենդան, տղտ ու խեղճ ճնշուած գերիներու խառնուրդէ մը, իրենց զլուխ ունենալով անգոր ու տկար սակաւապետութիւն մը... եւ ասոնք (Իթթիհատ) ճիշդ այն մարդիկն էին՝ որոնք քանի մը տարի առաջ իրենց հայրենիքը օժտած էին Մահմանադրական վարչութիւնով մը: Կարելի չէր երեւակայել աւելի ապշեցուցիչ անկում, ամենէն ազնիւ գաղափարապաշտութեանն ամենէն անարդ նիւթապաշտութեանն»:

«Անոնք, կը գրէ Մորկնթաւ (Իթթիհատի պարագլուխները), իրենց ծրագրին մէջ ունէին սպանութիւնը եւ իմբական մահապատիժը: Անոնք իրենց իշխանութիւնը շահած էին՝ միւս հերձուածներուն վրայ՝ գործածելով այս բնութայքը»:

«Երիտ. Թուրքերը շատ ալ գոհ չէին Հայոց Թուրքերէն աւելի Սահմանադրութեամբ խանդավառուելէն: Հայոց մակարդակով բարձր ըլլալը վտանդ մըն էր... անոնք կրնային մեծ դեր խաղալ Կայսրութեան մէջ աւելի յատկադրմել...», կը գրէ Կիւպլոնս:

Թուրքերու մօտ՝ դարեր իշխելու վարժ՝ «վերացուած էր նախնականութիւնը ոգին», կը գրէ Թէքին Ալի:

Թէքին Նուրետտին կը յայտնէր թէ «Հայերը իրենց երեխաները կը դրկեն երոպական համալսարաններ, իսկ քուրճերը ատոր կը նային քերականութեամբ»:

Ըստ ցարական արխիւներու «Իքսիատ ինքն է որ կը հրահրէ միւսիման բնակչութիւնը, որպէսզի այդ ձեւով հարկադրէ հայերը՝ հրաժարելու իրենց իրաւունքներէն»: «Պալքանեան պատերազմէն ետք 1,5 միլիոն մուսուլմաններ հրով ու սուրով գրաւեցին հայոց հողերը»:

Ըստ ցարական արխիւի «Երիտ. Թուրքերու աչքին Դաշակցականներն ալ աւելորդ էին, եւ Երիտ. Թուրքերը դիտմամբ լուծեան էին մատնուած Դաշակցութեան բոլոր պահանջներն ու նոյնիսկ արհամարհուած դրանք»:

«... Հայ գիւղացին հարկ կը վճարէ ամէն մէկ անդամի համար, անասուններու համար, ինչ որ կը ծնի հողը, իսկ գանձուող հարկերու գումարը կ'որոշուի նահանգապետերու հայեցողութեամբ, որոնք մերկայ ուժիմի պայմաններուն տակ Ատանայի մէջ արդէն գնդակահարած են ժողովուրդէն 30 հազար մարդ», կը գրէր «Փրատա»:

Միասնիկեան — «Հայկական Հարցը բան-արմենիզմ չէ» այլ «Թրքահայ խնդիր», «այսինքն Թրքահայերի բարեկեցութեան, նըրանց կայք ու գոյքի, կեանքի ապահովութեան, նրանց մարդավայել կենցաղի հարցն է»:

ԱՅՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

«1915ի Հայկական Զարդերը» հատորը Փրանսերէն լեզուով լոյս տեսած Պէյրութի մէջ, վկայութիւններն են ձէյմա Պրայսի, Արնոլտ Թոյնպի, Հ. Ատամս Կիւպլոնսի, Մորկնթաուի, եւ Զրիտրոֆ Նանսէնի հայկական Եղեռնի գոհերուն եւ ջարդին մասին:

Կուտանք քանի մը հատուածներ Իթթիհատի քաղաքականութեան մասին.

«Հայերը, կը գրէ Թոյնպի, Սահմանադրութեան հաստատիմ մնացին այնքան ատեն որ չէր շատ ազատական եւ դեմոկրատ քաղաքականութիւն մը կը կիրարկէին Երիտասարդ Թուրքերը: Ատանայի կոտորածը պաղ «տու» մը պէտք է ձգէր հայ-թուրք փոխ-յարաբերութեանց վրայ... հաւատարմութիւններն հայերը փաստեցին, երբ Թուրքերը կը կոտէին իրենց զոյւթեան համար 1912ին (Պալքանեան պատերազմ):

«... Հայ զինուորները հաւատարմօրէն ծոռայեցին եւ նոյնիսկ դնահատուեցան իրենց Թուրք հրամանատարներուն կողմէ:

«Տարօրինակ պիտի չըլլա՞ր... որ իրենց ծնողներուն դեռ քանի մը տարի առջ սպաննուիլը Ատանայի մէջ տեսնող հայերը, խանդավառութեամբ, ղէնքերով ինքզինքնին տրամադրէին անոնց, որոնք այդ ջարդերը կազմակերպած էին»:

Ակնարկելով Իթթիհատի դէմ ապստամբելու գծին ճշգրտութեան, Դաշակցական գործիչ Կարօ Սասունի իր «Ապրիլեան Եղեռնը Քրեանական Ակնոցով» գրքին էջ 43ին մէջ կը գրէ. —

«Այս պայմաններու մէջ հնազանդութիւնը, անխելք ինքնուրացում մըն էր, ձեռնու թշնամուն, դիւրութեամբ ջարդն իրականացնելու: Իսկ կրաւորական ինքնապաշտպանութիւնը ինքնախաբէութիւն մըն էր, վերջին շունչը փչելու ջանք մը, որ իր նպատակին չէր կրնար ծառայել: Ինքնապաշտպանութիւնը Թուրքիոյ մէջ, այն ժամանակաշրջանին կարելի էր միայն ապստամբութեամբ, վճռական ու խիզախ Վանէն մինչեւ Կիլիկիա: ... Ապստամբութեան հոգեբանութիւնը գոյութիւն չունէր, այդպիսի ծրագիր մը նախապէս գծուած չէր: Հայութիւնն ու Հ. Յ. Դաշակցութիւնը այնպիսի ձեռնարկ մը զլուխ հանելու համար պատրաստուած չէին»:

1972ին «Հայ Ժողովուրդի Պատմութիւն» (Հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը), փրոֆ. Մ. Գ. Ներսէսեանի խմբագրութեամբ լոյս տեսած գրքին էջ 420ի մէջ կը կարդանք Իթթիհատի քաղաքականութեան մասին. —

«Իշխանութեան զլուխ անցնելուց յետոյ Երիտ. Թուրքերը ղէն նետեցին իրենց դիմակը: Շուտով ակնյայտ դարձաւ, որ նրանք ազգային ճշունքներն ու համայնքների քաղաքականութեան մէջ գերազանցում են ջարդարար Ապտիլ Համիդին: Թրքական պորտուական այդ նացիոնալիստները ամէն կերպ ձգտում էին իրականացնել ունկնդրոն (յետադիմական) Բանթուրքիստական զազախարները, հըրապարակօրէն յայտարարեցին այն մասին, թէ իրենց նպատակն էր թրքացնել, ձուլումի ենթարկել Օսմանեան Կայսրութեան մէջ գտնուող բոլոր ժողովրդներին եւ մերժում են ուրեմն իրաւունք կամ կեանքի ու զոյքի ապահովութիւն միւս, ոչ-թուրք հպատակներին»:

«Երբ սկսուեցին համընդհանուր ջարդերը, Արեւմտահայութեան մի մասը դիմեց ինքնապաշտպանութեան եւ փորձեց, որտեղ այդ հնարաւոր էր, պաշտպանել իր կեանքն ու պատիւը: Զէնքի դիմեց Վանի, Զէյթունի, Շապին Գարահիսարի, Սասունի, Ուրֆայի, Սուէտիոյ եւ մի շարք ուրիշ շրջանների բնակչութիւնը»: (էջ 435):

Անտրէ Մանտէլլթայմ իր «Ազգերու ընկերութիւնը եւ Պետութիւնները Հայկական Հարցի առջեւ» հատորին (1970 Պէյրութ), էջ 43ի մէջ կը գրէ, թէ՝

«Ատանայի կոտորածները տիւր շրջան կը կազմեն Ապտիլ Համիտի մըսազորութեան շարունակման... Իթթիհատականներուն կողմէ: Համիտի եւ Իթթիհատի ղեկավարութիւնը նոյն ատելութիւնը ունէին հայերու նկատմամբ»:

«Օթոմանեան Կայսրութիւնը եւ իր յաջորդները» (1809–1927) գրքին հեղինակը Ուիլիլմ Միլլըր խօսելով Երիտ. Թուրքերու կազմաւորման մասին, կը գրէ, թէ 1891ին հիմնադրուած՝ 1896ին մինչեւ Փարիզ, ապա Մալոնիք փոխադրուած կուսակցութիւն մըն էր: Անոր մեծապէս զօրավիդ կանգնեցան Հրեաներն ու Մասունները, որոնք կարեւոր քանակ մը կը կազմէին Սելանիկի մէջ: Կոմիտէն որոշած էր Սուլթանի գահակալութեան տարեկարձին կատարել յեղափոխութիւնը»: (էջ 775):

ԻԹԹԻՆՏԱՏԻ ԺՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԾ ՄՐ ԽԵՂԱՆՈՐԱԾ Է «ՏՐ ԷՄԸՐ-
ՖԷՆՈՒ ԱՎ ՄՈՒՐՐՈՆ ԹՐԲԻ», 1961ԻՆ ԽՈՒՐԱԾ ԳՐՔԻՆ ՄԷՂ ՊԵՐՆԱՐ
ԼԷՆԻՆԻ, ԼՈՆՈՆ:

Հատուած մը՝

«Նախագրուչացնելու համար մեր խումբը եւ քրիստոնեայ հայրենակիցները
ներկայ վարչաձևի (Համիտ) կառավարման սխտեմին գէտ, որ կը բռնարարէ
այնպիսի մարդկային իրաւունքներ՝ ինչպիսիք են՝ արդարութիւնը, հասարակ-
ութիւնը եւ պատասխանը, ինչ որ կ'արդեակէ բոլոր Օսմանցիները յատուցողութե-
նէ եւ մեր երկիրը կը յանձնէ օտար տիրապետութեան, կազմուած է Միութեան եւ
Յաստիքի Օսմանեան կազմակերպութիւն մը՝ որ բազմապէս է այրելէ եւ
կենդանի, որոնք Օսմանցիներ են: (Էջ 206):

Լորտ Պրայսի «Հայկական Զարդերու Փաստաբույրքերը»,
Ա. մաս, Պոլիս, 1920ԻՆ ԽՈՒՐԱԾ, կը կարդանք:—

«Պատերազմի շրջանակներում մէջ հայերը չունին որեւէ յանցանք, եւ
ուստի ապաղայ գերիշխանութեան մէջ ալ անոնք չունին որեւէ պատասխանա-
տուութիւն: Եւ սակայն անոնք շատ աւելի տուժած են քան մեզմէ ուրիշ մէկը:
(Նախարան. էջ 10):

«Օսմանցի դարձնելը երիտ. Թուրքերու մտքին մէջ դարձաւ բեւեռուն գա-
ղափար ու անոնց վերջին հարուածը եղաւ հոչակել Թուրք լեզուն որպէս բացար-
ձակ միջոցը կայսրութեան պաշտօնական առուժարի մէջ»: (Էջ 37):

Պալքանեան պատերազմին եթէ Օսմանեան հպատակ հայերը
իրենց պարտականութիւնը կատարեցին Թրքական բանակին մէջ եւ
քաջութեան օրինակ տուին ու շքանշանի արժանացան Թրքական
սպայակոյտի կողմէ, Պուլկարիոյ ու Յունաստանի մէջ ապրող հա-
յերն ալ իրենց զինուորական պարտականութեան մէջ չթերացան եւ
յատկապէս Անդրանիկի կողքին առանձին շոկատ մը կ'ուսուցաւ Պուլ-
կարիոյ բանակին կողքին եւ աննման քաջութեան օրինակ տուաւ:

ԻԹԹԻՆՏԱՏԻ ՄՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Յեղասպան Թուրքը» հատորի հեղինակն է «Հայրենիք»ի խմբ-
րադիրներէն, Դաշնակցական Հ. Ղազարեան: Եղեոնի շրջանի մասին՝
յատկապէս ԻԹԹԻՆՏԱՏԻ ԿՈՐԾՈՆԵՒՄԻ ԿԱՐԶՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՐԱԾ
ՄՐԸ ԽԵՂԱՆՈՐԱԾ Է ԵՎ ՀԱՄԱՐԱԾ Է ԵՎ ՀԱՄԱՐԱԾ Է:

1910 Հոկտ. 3Ի ԻԹԹԻՆՏԱՏԻ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՐ՝ 13 օր տեւեց.
«Ժողովին մէջ, կանխամտածութեամբ, որոշուած եւ ընդունուած էր
բնաջնջման կտրուկ ծրագիր մը: Այդ ժողովին որոշումներուն հիմը
կազմեցին քուրք կառավարութեան ցեղասպանական յետագայ քա-
ղաքականութեան՝ զինուորական բռնի ուժով բնաջնջ ընելու — ոչ-
քուրք տարրերը, քուրք միաձոյլ պետութիւն մը հաստատելու հա-
մար»:

«ԻԹԹԻՆՏԱՏԻ 1910 ՆՈՂ. Ի ԱՅՍ ԿԱՂԱՆԻ ԺՈՂՈՎԻՆ ՀԵՄԵՆՆԵՐ ԵՂԱՆ ՍԱՍՏԿԱ-
ՑՈՒՄ ԵՎ ԿՈՐԾՈՆԵՒՄԻ ՎՐԱՅ ԹՐԵԱԿԱՆ ՀԱԿԱԿՆԻՆ, ՀԱՐԱԾԱՆՔ՝ ՈՒՐԹՈՒՐՔ ԼԵ-
ՎՈՆԵՐՈՒ ՂԷՄ: ՄԷՂ ԽՈՒՐԱԾ ԶԱՓԵՐ-ՁԵՆԵՐ ԷՆ ԹՈՒՐԲԻԱՆ ՄԻԱՅԻ ՔՈՒՐԲԵՐՈՒՆ ԿԱ-
ՄԱՐ» սկզբունք մը: Այդ մտադրութիւնները արձանագրուած էին 1913 Յուլիսին
յարուցուած Հայկական Բարենորոգումներու բանակցութիւններէն երկուսէ ու կ'ես
տարի առաջ: (Հ. Գ. Ղազարեան «Յեղասպան Թուրքը», 1968, Պէյրութ, էջ 16-17):

1914-1918Ի արեւահեղ Թրքական ներքին քաղաքականութիւնը շարունակու-
թիւնն էր 1910Ի Նոյեմբերեան գաղտնի ժողովի դաւաճանակամ աշխատանքներուն:
(Հ. Ղ., էջ 17):

«... Այդ «զարգացեալ» Թուրքերը, երբ իշխանութեան գլուխ
եկան, շուտով մոռցան իրենց փայլալայտ «ազատական» դազափար-
ները:

«1908ԻՆ Սահմ. առաջ եղած քանի մը հարիւր ԻԹԹԻՆՏԱՏԱԿԱՆ-
ներ, զինուորականներ, փաթթոցատուներ, Պալքաններու մէջ ինք-
զինքնին պաշտօնի պահելու համար կը մասնակցէին Ազատ Որոշողի-
ներու (Մասոններու) «Մակեդոնիա», «Բիզանթա», «Լէյպքը»,
«Լիւքս» իտալական Օթեակներուն, «Վերիքաս» Ֆրանսական Օթ-
եակին, «Փերսեպոլիտանցա» սպանական Օթեակին, նոյնիսկ յունական
«Ֆելիպոս» Օթեակին: (Էջ 19):

«1910ԻՆ ՎԵՂՆ ԸՐԿ ԹԱՓԵՅԻՆ ԸՆԿՈՒՄՈՒՄԻ ԿՈՐԾՈՆԵՒՄԻ ԿԱՐԶՆԵՐԸ
ՀԱՄԱՐ...:

«ԻԹԹԻՆՏԱՏԻ ՈՒՂՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԸ 40 անձեր էին,
զրեթէ հաւասար իրաւասութեամբ:

«... Սարսափի մասնակցին վարչապետ Քեամիլ Փաշան եւ նա-
խարարները եւ Յունուար 9, 1913ԻՆ սպաննեցին Պատ. Նախարար Նա-
զըմ Փաշան, որ Ֆրանս. Սէն Սիւր զինուորական վարժարանէն շրջա-
նաւարտ եղած էր:

«... Մակարոյձներով ԻԹԹԻՆՏԱՏՐ ԼԵՅՈՒՅ ԿՈՍՍ. ԱՎՆՈՒՆԵՐԸ:
«Էօմէր Նաճի՝ Կեղր. Անաստու, Մուսթաֆա Նէճիպ՝ Սեւ Ծո-
լու, Մուսմէր՝ Փոքր Հայքի եւ Տոքթ. Նազըմ՝ Փոքր Ասիոյ յիւ-
զօրները կարճած էին:

«... Համիտեան ոչժիմի տակ 20 հազար լրտեսներ կը գոր-
ծէին... ըստ Պէրնար Լուիսի՝ ԻԹԹԻՆՏԱՏՐ 1892ԻՆ հիմնադրուած է:

«1910ԻՆ Թալատի կ'ըսէր Սելանիկի Համադումարին... Մենք
ուրեցիք կեալուրը Օսմանցի շինել եւ չկարողացանք: Այժմ միակ
միջոցը կը մնայ գէնիով հզուի զանգ... Ապա ժողովը ընդունեց
կեղրոնաձիգ ճնշողական քաղաքականութիւն մը՝ բանքուրքիզմի
գործադրութեան, ջարդի միջոցներով: (Տես՝ Կուչ-Թեմիզլըլի, հա-
տոր 4, էջ 207, Հ. Ղազարեան, էջ 319):

«Այդ շրջանին Հնչակեանները գործակցեցան Իթիլաֆի հետ, որոնց ջերմ
կողմնակիցն էր 1911ԻՆ Քեամիլ Փաշան, որ կը մերժէր Վարչապետի Աթոքը, ըսե-
լով: «Մինչեւ որ երիտասարդ սրիկաները (Իքթիսատական) չմտնուին, չեմ ըն-
դունիր վարչապետութիւնը»: (Տես՝ Հ. Ղազարեանի գրքը, էջ 319):

1911Ի Սելանիկի ժողովին «որոշուեցաւ որ ջնջուի ոչ-քուրքե-
րու լեզուն եւ քրքացուին այդ տարրերը եւ երէ կարելի չըլլայ՝ գէն-
իով բնաջնջուին: Թուրքերէն ոմանք այդ որոշումներուն համակար-
ծիք չեղան եւ Նոյ. 21, 1911ԻՆ մտան «Հիւրիէք վէ Իրիլաֆ»ի մէջ:

«1912ԻՆ Խորհրդարանը լուծելով ԻԹԹԻՆՏԱՏՐ Դաշնակցութեան հետ նոյն
ցանկով էջաւ... Այս ընտրութիւնէն ետք Թուրք ընդդիմադիրներու թիւը իջաւ 6 ե-
րեսիստանի»:

Աճմէտ Ռիզայի՝ ղեկավարած Փարիզի ԻԹԹԻՆՏԱՏՐ ՈՒՆԷՐ ՄԱՍ-
ՆՈՒՆԸ մը Կովկասի մէջ:

ԻԹԹԻՀատականները նախապէս ունէին կազմական կանոնադիր մը 30 յօդուածներէ բաղկացեալ, իսկ 1902ին այդ կանոնադիրն վրայ յաւելումներ եղան:

1902ին ԻԹԹԻՀատի մէկ յայտարարութիւնը («Թարիխ», 2. Թունայա, էջ 122-123) տպուած, կ'ըսէր.—

Թէ հայերը Պապը Ալիի վրայ (Բ. Դուռ) յարձակում գործել համարձակած են: Մեր մայրաքաղաքը ցնցեցին: Կը ցաւինք հայ հայրենակիցներու այս լիր շարժման համար: Բայց ճշմարտութիւնը այն է որ հալածանք, զոլում», բռնութիւն եւ յոռի վարչութիւն (իրատեսիլիք) պատճառ եղան որ այս ցաւալի դէպքերը տեղի ունենան:

«Մենք, քուրֆերս ալ, միւս բոլոր Օսմանցիներուն հետ, բարեմորոգում եւ ազատութիւն կ'ուզենք այս բռնակալ կառավարութենէն: Մեր նեմիլէթը (Կուսակցութիւնը) կ'աշխատի ատոր համար: Մենք, այսօր, փոխանակ հայերը պատժելու մասին խորհելու, յոռի վարչութեան, զուլումի եւ բռնապետութեան կեդրոն Պապը Ալին (Բ. Դուռը), Շէյխ Իւլ Իսլամի պաշտօնատունը եւ Երլտըզը կոխելով (պասարաք) այդ պաշտօնատեղիները բռնապետներուն գլխուն վրայ փլցընենք (պու տայիրիլերի միւքնպիտլերի պաշընա երբալըմ): Զեռք ձեռքի տանք, հաւաքուինք, շատնանք եւ ցոյց տանք քաղաքակիրթ աշխարհին, թէ մենք ալ ազատութեան սիրահար եւ անոր արժանի ենք»:

Մասնաճիւղերուն հետ կապը կը պահէր Տօքթ. Պէտէտին Շաքիր:

Ասոր մէկ հրահանգադիրը Կովկասի Թրքութեան ուղղեալ իր թիւ 7 կէտին մէջ կ'ըսէ. «Մեր քշնամին եղող եւ Ձեզ ռուսերու լուծէն ազատելու դէմ ամենամեծ արգելքներէն մին հայերն են: Մշակեցէք կանոնաւոր ծրագիր մը գանձել տկարացնելու համար»:

1906ին Սելանիկի մէջ Կեդրոնէն վաւերացուած Մասնաճիւղ մը կը կազմուի հետեւեալ կազմով՝ Պուրսալը Թահիր, հարիւրապետ Նաճի, Թալաթ, Միտհատ Շիւքրի, Բահմի, Էմէր Նաճի, Քէպրիմ Նամի, Իսմայիլ Ճամպուլթ, հարիւրապետ Իսմայիլ Հազըզ եւ Սուլէյման Ֆէհմի (6 զինուորական եւ 4 ոչ-զինուորական):

1906ին Սելանիկի մէջ ԻԹԹԻՀատի ժողովները տեղի կ'ունենային Իսմայիլ Ճամպուլթի եւ Միտհատ Շիւքրիի տան մէջ:

1907-8ին հրապարակ կուզան Էնվէր, Սալահետտին, Նիսպի, Էյուպ Սապրի: Թիքվիլի շրջանին մէջ եւ միւսները՝ Բենէէի եւ Օխրիտայի շրջաններուն մէջ:

Տօքթ. Նազըմ Փարիզէն Իզմիր կ'անցնի եւ հոն, հազարապետ Թահիրի հետ, ԻԹԹԻՀատի ըջիջներ կը կազմակերպէ:

1907ի ԻԹԹԻՀատի Գոնկրէին կանոնադրի մէջ կարգ մը յաւելումներ եւ փոփոխութիւններ կը մտցնեն եւ 39 յօդուածէ բաղկացած նախկին կանոնադրին յօդուածները կը բարձրացնեն 67ի, ապա կ'աւելցնեն 10 յօդուած «պատժակալ» բաժնին մէջ:

1907ին, ԻԹԹԻՀատը խառն Գոնկրէի կը հրաւիրէ իշխան Սապահէտտինը (որ ապակեղորոնացման կողմնակից էր), Հ. Յ. Դ. կողմէ ներկայ կ'ըլլայ Ս. Մալումեան (Է. Ակնունի): (Տես՝ Հ. Ղազարեանի գիրքը, էջ 356):

«1911ի Գոնկրէն որոշում տուած էր ոչ-թուրք տարրերը ձուլել, այդ մասին տեսնել «Թամիմ»ի Օգոստոս 12, 22, 29, 1911 (1327) եւ Սեպտ.ի 4, 14, 18, 23 եւ 24, եւ Հոկտ. 1, 3, 1911 (1327), 1912ի Մարտ 1ի յաւելուածը եւ մասնաւորապէս՝ «Մալնամէի Սերվիթը Ֆունուն» պատկերազարդ հանդէսին 1912 (1328) 238, 239 եւ 240 էջերը»:

Էւ ըսել թէ՛ է. Ակնունի, Վառճեան, Կոմս, Գարօ, Շահրիկեան Պոլիս կապրէլին եւ այս թերթերը չէին տեսներ...:

Թուրքիոյ մարաջախտ նշանաւոր զինուորական Ահմէտ Իզզէթ Փաշան, զերմաներէն իր լոյս ընծայած «Յուշեր»ուն մէջ (տպուած Լայփցիկ) կ'ըսէ.—

«Երիտ. Թուրքերը անդամաւորուածեցին եւ քանդակեցին երկիրը, բարոյապէս ապականեցին գայն, ի հաշիւ իրեցն գրպանին, իրեցն անարգ ընկերներով» (էջ 299, նաեւ Հ. Ղազարեան, էջ 367-8):

ՍԻՈՆԻԶՄԻ ԴԵՐԸ ԻԹԹԻՀԱՏԻ ԿՈՂՔԻՆ

Մեկլան Զատէ Թիֆաք կը գրէ.—

«Սիոնական միութիւնը Երբ զբամի ուժով չյաջողեցաւ Պաղեստինի անկախութիւնը ստանալ, ներքին յեղափոխութիւններ ծրագրեց:

«Այդ Թուականին Աստրիոյ Ա. Գ. Նախարար հրեայ Պրն. Էրէնթաւի հետ համաձայնելով Մակեդոնիոյ մէջ մեծ յեղափոխութեան մը կազմակերպութեան ձեռնարկեց եւ Մակեդոնիոյ Յեղափոխական Կուս. գործիչներէն Սանտանաքին Իսկուպ հրաւիրելով զաղտնի համաձայնադիրը ստորագրեց:

«1902ին Մակեդոնիոյ մէջ մեծ յեղափոխութիւն ծաղկեցաւ եւ Սանտանաքի խումբերը ըստ համաձայնադրին, գործի անցան:

«Սիոն Միութիւնը» Մակեդոնիոյ 1902ի յեղափոխութեան ակնկալուած արդիւնքը չկարենալով ձեռք ձգել, Բուսնիայի մէջ գտնուող Գ. բանակը կառավարութեան դէմ ըմբոստացնել ծրագրած եւ այս ծրագրին գործադրութիւնը իմամանալ Գարասուի յանձնելով՝ Սելանիկի մէջ՝ Վիեննական դրամատան մօտ, անոր անուան մեծ վարկ մը բացած էր:

«Իմամանուէլ Գարասու կարճ ժամանակի ընթացքին զբամի ուժով Գ. բանակի շատ մը սպանները կրցած էր համոզել եւ ասոնց կեդրոնը Սելանիկ ըլլալուն՝ յաջողած էր Իքթիսատ վէ Թէրաֆէք անունով յեղափոխական կուսակցութիւն մը հիմնել եւ Մանասթրի, Իսկուպի եւ Շեստրայի մէջ ալ Մասնաճիւղեր բանու:

«Սուլթան Համիտ տեղեկալ էր: Եանեացի էստա Փաշա տեղեկացուցած էր. թէ Մասոն-սիոնիստ Գարասու Սելանիկ պահուրած է, թէ բանակի սպաններէն մեծ մասը համոզելով Օսմ. կառավարութեան դէմ Յեղ. Կուս. մը հիմնած է, որոնք կը բաղկանային հետեւեալներէ. Նախագահ՝ Ռումելիի Ընդհ. Քննիչ Հիւսէյն Հիլմի Փաշա, սպաններ՝ Գ. բանակի հրամանատար Շիւքրի, Զօր. Իսմայիլ Մահէր, Զօր. Սապր, Զօր. Ռէճէպ Փաշա եւ Տեղ. Ֆէհմի Պէյ:

«Կանոնաւոր տեղեկատուութեան բաժիններու եւ աշխարհի բոլոր մասերուն մէջ կարեւոր թերթերու տիրացող Սիոն Կազմակերպութիւնը պայտախ այս վեճակէն օգտուելով եւ ինչիւրը շտապանցնելով բրտրականա կը մղէր, զրկ տալով, թէ ամբողջ բանակը Սուլթան Համիտի կառավարութեան դէմ ըմբոստացած եւ Մահմանադրական վարչաձեւ կը պահանջէ, թէ Օսմանցիներու սիրտէն բխած է: Սուլթան Համիտի եւ արբանակներուն հասցէին ալ անարդական խօսքեր պակաս չէին:

«Այս միջոցին Սիրոտի մէջ ալ կարգ մը Մակեդոնացիներու կազմէ Մահմանադրութեան հռչակումը պահանջող հետադիւրներ ստորագրել տուած էր: Կառավարիչ Ռէշիտ Փաշան ալ կը գրէր. «Երբ անմիջապէս Սահմանադրութիւն չտրուի, բանակը եւ Ռումելիի ամբողջ ժողովուրդը ի նպաստ գոհաժողովուրդի ինքնուրուի կ'ըլլան»:

«Պալատական լրտեսներէն շատեր, կուսակցութեան մէջ մտնելով մէկ մէկ ազատութեան հերոս դարձած եւ ստեղծուած անիշխանութիւնը ակնի սաստկացուցած էին:

«Սիոնականները այսօր աշխարհի կը տիրեն, ուզուած պահուն կրնան մնացեալ գահերը կործանել: Մենք Սիոնականներս դարերէ ի վեր Քրիստոնեաներու գերին դարձած էինք, սակայն ասկէ ետք ամբողջ աշխարհը մեզի գերի պիտի դառնայ»:

(Տես՝ «Օսմանեան Յեղափոխութեան Մուք Ծալքերը», 1938, Պէյրութ, Մելլան Զատէ Րիֆաթ, էջ 77-86):

«... Հրեաները այսօր աշխարհի հարստութեան կէսին տիրացած եւ աշխարհի քաղաքականութեան անտեսանելի մղում տուող հանդիսացած են»: (Նոյն, էջ 88):

Իթթիհատի որոշումները հետեւեալ չորս կէտերուն մէջ ամփոփուած են.

Ա) Յետ այսու Թուրքիոյ մէջ կրօնի ազդեցութիւնը բեկանել:

Բ) Թուրքիոյ հարստութեան ազդիւրները ընկերներու մէջ բաժնել:

Գ) Մարգարէի փոխանորդութիւնը իշխանութեան գատելով տկարացնել:

Դ) Առիթը ներկայանալուն միապետութիւնը տապալել եւ Հանրապետութիւն հռչակել:

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ս. Շամլեան իր «Դէպի Պատերազմ», Պոլիս, 1939ին տպուած պատմութեան զրքին մէջ ցաւ կը յայտնէ, որ հայ եւ թուրք ժողովուրդները սխալ ըրած են իրար դէմ զիրքորոշուելով, կ'արդարացնէ Լէոյի Հայ Յեղ. Շարժումներուն դէմ զիրքորոշումները, կը մեղադրէ Սուլթանն ու Իթթիհատի պարագլուխները՝ որոնք քանի մը հողիով անպատրաստ Թուրքիան պատերազմի մղեցին 1914ին: Կը խօսի նաեւ Թալաթի եւ Էնվերի մասին:

Վեր. Ա. Կէօրկիզեան իր «Վասպուրականի Հերոսամարտը», 1965ին, Պէյրութ լոյս տեսած հատորին մէջ անդրադառնալով Սահմանադրութեան չրջանի առաջին օրերուն կը գրէ. —

«... Բայց հազիւ քանի մը ամիս անցած, յայտնի եղաւ, որ Օսմանեան Սահմանադրութիւնը պատրանք մըն էր միայն: Եւ թուրքը, հին թէ նոր, նոյն թուրքն էր: Որովհետեւ երբ քիչ յետոյ Պոլսոյ մէջ կը պայթէր Մարտ 31ի յետաշրջական շարժումը, նոյն Երիտ. Թուրքերը կամ Իթթիհատ վէ Թէրաքըր կուսակցութիւնը կը սարգէր Կիլիկիոյ եղեռնը 1909ի Ապրիլի առաջին օրերուն, որուն զոհ կ'երթային տասնեակ հազարաւոր հայեր: Արդարեւ ոչինչ կար փոխուած թուրք հողերանութեան մէջ»:

Քիչ յետոյ յայտնի եղաւ նաեւ որ Սահմանադրութիւնը եկաւ խարխուլուելու պահան: (էջ 39):

1921 Մարտի 15ին Սողոմոն Թեհլիրեան Պերլինի փողոցին մէջ մահափորձի ենթարկեց Իթթիհատի ղլխաւոր պարագլուխներէն Մէհմետ Թալաթը: Դատաւարութեան օտար վկաներու շարքին էին Լիման Ֆոն Սանտերգ եւ Լեփսիւս:

Այս առթիւ պաշտօնական փաստաթղթի Տորթ. Վերթաուր կը յայտարարէ. Թալաթը մէկն էր նրանցից, որ քէւր զինուորականի համագրեցտ չի կրում, բայց կաղամարի առջեւ նստած՝ հրամաններ կը յղէ եւ գազանօրէն կը պաշտպանէ բոկուրեան դրօշը: Մի ամբողջ ժողովուրդ տեղահանելու հրամանը ամենից հրէշային բանն է, որ կարող է ծնունդ առնել միայն ռազմատենչ ուղեղի մէջ, եթէ, ինչպէս այստեղ ասուեց, Երիտ. Թուրք Կոմիտէն համոզուած էր, որ լաւ ժամտարմաները հետացուած էին ու մնացել էին միայն սինֆուրները, այդ դէպքում իրաւունք չունէր տեղահանութեան հրաման արձակելու: Եւ եթէ տեղահանութեան գործը յանձնեց նրանց, ուրեմն ինքն է պատասխանատուն հետեւանֆներին: Եթէ հայերը մինչեւ իսկ դաշնակցած լինէին ուրիշ ժողովրդների հետ եւ դաւաճանած, Երիտ. Թուրքերը այնու ամենայնիւ զիտէին, որ կային հազարաւոր կանայք, երեխաներ, որոնք այդ գործից ոչ մի լուր չունէին, եւ հետեւաբար տեղահանութեան հրամանի առաջին պայմանը պիտի լինէր խիստ կարգադրութիւն՝ հոգալու կանանց, երեխաներին եւ այն այրերին մասին, որոնք կապ չունէին «դաւաճան»ների հետ»:

(Տես՝ «Վերլիշումներ, Ըստ Ս. Թէհլիրեանի» գրքի առաւ. Վ. Մինախորեան, 1943, Պելկրատ, էջ 415):

Կիլիկիոյ Տան Սահակ Կաթողիկոս 1911 Դեկտ. 17 թուակիր Գրեւ Վարդապետին ուղղուած նամակին մէջ կը գրէ. —

«... Պոլսէն Ձեզ հաղորդուածը իրարմատականներու եւ անոնց համախոնկներուն փորին ցաւն է, ծայրագոյն յիմարութիւն է հաւատալ տալաւին, որ ներքին խռովութիւններու ստեղծ տարբեր տարբերու առաջին ջարդարարները անոնք (Իթթիհատականները) չըլլան:

Քսաններէն Թուրքն Կարապետեան Եղիպտոսի Հնչ. Վարիչ Մարմին. —

«Ոչինչ փոխուած է Թուրքիոյ իրականութեան ներս: Սուլթանի գլխին շատ աւելի վտանգաւոր են Երիտ. Թուրքերը, որոնց ազգայնական շովինիզմը մեծ աղէտի մը ձայները լսել կուտայ»:

1909, Պոլիս(*)

Երուսաղիմի հարբերդէն 1914ի Յունուար 20ին գրած նամակի վկայութիւնը. —

«... Հոս Պոլիս չէ, ամէն բան մտղի վրայ: Անցեալ օր տեղոյս նախնական դատարանին դատարարը. — Լրեւակայէ, դատարարը. — յայտարարեց Հայերու որ, եթէ ընտրութեանց (Գ. Երեսփոխանական Օսմանեան ընտրութիւնը) չմասնակցին, ահռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպէս ըրին Ատանա: Եւ այդ Իթթիհատական սրեկան՝ դատարար է, մնացեալը դատէ:

«... Անպատմելի է հողեկան վիճակս, սասանկ ստեղծ մը Անատոլիոյ խորերը գտնուիլը «չօլուխ-չօճուխ»ով՝ զիւրին բուն չէ: Ողջ առողջ օր մը զերբար պիտի տեսնե՞նք արդեօք»:

(«Ամենուս Տարեցոյցը», Թէհլիզի, 1916-20, Կ. Պոլիս, էջ 53):

(*) Բնագիրը, Եգիպտոս, Հնչ. արխիւ:

Աղամ Կիւպոնս կը դրէ .—

«1909ի չարդին (Ատանայի) ժամանակ բուն իսկ տեղին վրայ, ես ուսումնասիրեցի հայոց դէմ եղած ամբաստանութիւնները: Կիլիկիան Հայերու դէմ եղած միեւնոյն ամբաստանութիւններու անհիմն ըլլալը հրապարակաւ փաստեցի՝ ի գոհացում իմ անձիս: Հարիւր հայէն մէկն իսկ ոչինչ չունէր Յեղափոխական Ղնկերակցութիւններու հետ: Խոնարհ դասակարգը այդօրինակ փրփակաւնտէ մը կարեւորագոյնը համար շատ տգէտ էր: Հայ եկեղեցին արդէն դատապարտած էր դատեաններու ցնդումը: Գոլէմներու փրփակեցումները հակառակ խօսած եւ գրած են: Փազաֆցի հարուստ դասակարգը համարձակօրէն ցոյց տուած է գրգռիչներուն, որ իրենք չէ քէ կրաւորապէս, այլ եւ գործնականապէս հակառակ են այդ փրփակեցումին:

«Թուրքերը սակայն հայ յեղափոխականներէ վախճալու բնաւ պատճառ չունէին:

«Ատանայի կոտորածին յաջորդող զինուորական ատենի մէջ, արդարութեան դարձուրելի վիժումը Երիտասարդ թուրք ուժերի անկման սկիզբն էր: Այդ հեղինակն ցուցադրումն էր Երիտ. թուրքերու այն յայտարարութեան թէ Օսմ. կայսր. վերականգնումը կարելի էր Ազատութեան, Հաւասարութեան եւ Եղբայրութեան սկզբունքներուն վրայ: Այդ օրէն ի վեր, թուրքերոյ նոր բարեկարգիչներու իրաքանչիւր քայլը իրենց զաւանճի ստութիւնը ի յայտ բերաւ: Արդարութեան սարսափելի վիժում, ըսի, որովհետեւ ո՛չ մէկ տարր հայերուն պէս ծափողջունեց Սահմ. Ռէփրմի զարուստը: Ո՛չ մէկ ուրիշ տարր, անոնցմէ աւելի, հաւատարմօրէն զօրավիզ կանգնեցաւ Երիտ. թուրքերու:

«Հայերու դործած միակ սխալը, Սահմ. Ռէփրմի առաջին ինը ամիսներուն, Սելանիկի մարդոց վրայ իրենց հաւատքին յայտնի եւ խանդավառ արտայայտութիւնն էր:

«Անոնք յեղափոխութեան փարեցան բոլորանուէր: Նոր Ռէփրմի հանդէպ անկեղծ եւ ինքնարուխ հողածութիւն ցոյց տուին... եւ հաւատացին Երիտ. թուրքերուն՝ մինչեւ դառն յուսախարութիւն...»:

(ՏԵՍ «ժամանկ. Պատմութեան Սեւագոյն էջը», Հ. Կիւպոնս, 1916, Նիւ Եորք, էջ 45-50):

«... Այնուամենայնիւ, Քրիստոնեայ Եւրոպան միահամուռ ջանք չթափեց՝ ազատելու այս դժբախտ ցեղը, քուրքին հետ, բուն ինդիք չունենալու Եւրոպայի ունեցած անձնական հաշիւներուն հետեւանքով:

«... Պոլսոյ մէջ Գերմանիոյ ղեկավանն էր այն միակ անձը, որ իր կառավարութեան աջակցութեամբ, մէկ խօսքով կրնար արգիլել հայաջինջ հրամաններու գործադրութիւնը»: (էջ 78):

ԱԶԱՏ ՈՍՏԱՆԻԿ՝ ԻԹԹԻՀԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԶՈՂՆԵՐԷՆ

Վանեցի Ազատ Ոստանիկ «Սաշլը Ֆետայի» կ'որակուէր թուրքերէն: Բուն անունով՝ Մելքոն Միր Սապոյեան: Ան Փարամազի Ա. խումբը Պարսկաստանէն ապահով կ'անցնէ Վան:

Կազմակերպիչ՝ 1896ի Վանի հերոսամարտին, կը ձերբակալուի եւ կը նկատուի բանտ: Հարցաքննութեան ատեն բոլոր ընկերներուն յանցանքը իր վրայ կ'առնէ: 15 տարի բանտարկութիւն կ'ըլլայ Սուլթանի դատարանին վճիռը:

1908ին Սահմանադրութենէն ետք բանտէն կ'ազատուի: Նախ կովկաս, ապա Պոլիս բժշկական Համալսարան կը յաճախէ: Վկայեալ ատամնարոյժ: Իթթիհատի ծրագրին դէմ պէտք էր կազմակերպել հայութիւնը: Փոքր Հայք կ'անցնի, Երբ կը ծաղրուի Դաշնակ եւ Իթթիհատ գործիչներէն որոնք նոր ուժերին ներքեւ ինքնապաշտպանութիւն քարոզելը անպատեհ կը նկատէին, ան հետեւեալ պատասխանը կուտայ.—

«Ինքնապաշտպանութեան համար մեր պատրաստութիւնը մէկ նպատակ ունի, այն է պաշտպանել ազատութիւնը, ժողովուրդներու բարեկամութիւնը եւ երկրին շահը: Մենք ազատութեան զինուոր ենք, եւ երբ այդ ազատութիւնը վտանգուի, մեր պարտականութիւնն է պաշտպանել գայն: Պաշտպանել ազատութիւնը կը նշանակէ պաշտպանել այս երկրին բոլոր ժողովուրդները անխտիր: Մենք, Հնչակեաններս կոռած ենք ազատութեան համար, կրկնակ քաջութեամբ կռուելու պատրաստ ենք պաշտպանելու ձեռք բերուած ազատութիւնը: Ժողովուրդներու կեանքին մէջ անակնկալներ շատ կը պատահին, անոնց աղջեւ ՊէՏԳ ՉԷ ԱՆՊԱՏՐԱՍՏ ԳՏՆՈՒԻԼ: ԵՒ ՄԵՆՔ ՊԻՏԻ ԶՈՒՋԵՒԻՔ ԱՆՆԵՌԱՏԵՍ ՈՒ ՔՆԱՅԱԾ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԱՊՐԻԼ...»:

Կեսարիոյ շրջանին մէջ Սահմանադրութեան շրջանին, ան բացայայտ պայքար տարաւ Երբ նախատեսեց՝ որ Իթթիհատը Ատանայի կոտորածէն ետք պիտի կոտորէր նաեւ Կեսարիոյ հայութիւնը:

«Գիրք Ելից Հայոց»ի հեղինակ՝ Ա. Քհնյ. Գալֆաեան կը դրէ իր գրքին մէջ, թէ Կեսարիոյ թուրք Իթթիհատականները ջարդի շուրջ կը տարածէին, իբր թէ հայերը՝ Զէյթունցի, Հաճնցի յարձակեր եւ կոտորեր էին Կէօթիւրէի հարիւրաւոր իսլամ պիղերը...:

«Մենք ալ մեր դիրքերու վրայ էինք, ձե՛մալ Պէյի աննահանջ կորովին շնորհիւ ջարդ տեղի չունեցաւ Յունուարին: Մարտին տեսանք որ հարիւրաւոր վրաններ կան Կեսարիոյ շուրջ, թուրք զինեալ խումբերով լեցուն: Ամէն հայ գէնք կ'ուզէր: «Ազատ Ոստանիկ պտեպինդ գործի լծուած էր, Սոսունցի Դաւիթի նման էր, մտպերը թափած ուն ի վար...»:

«Իթթիհատը անոր գործունէութիւնը շմբտեց եւ պայման դրին թուրքերը որ ան հեռացուի Կեսարիայէն:

«Ազատ Ոստանիկի գլխաւորութեամբ յանձնախումբ մը զիմեց կառավարութեան եւ ինդրեց, որ թոյլ տրուի զինել նաեւ Քրիստոնեայ փոքրամասնութիւնը, երբ թուրք բնակչութիւնը զինուած է»:

Կառավարութիւնը տեղի չի տար հայոց խնդրանքին: Երկու Հընչակեան Սերաստացի երիտասարդներ Իզմիրէն Կեսարիա յայտնի վաճառատուն մը կը փոխադրեն պերմանական գէնքեր, գլխաւորութեամբ եւ հրահանգով Ազատ Ոստանիկի:

«Կեսարիոյ գլխակից հայերը Ատանայի կոտորածէն ետք (1909) Ապրիլ), համոզուեցան որ Իթթիհատն ալ հարազատ ծնունդն էր հայաջարդ Համիտին:

«Ապրիլ 12ին թուրք խումբերը կառավարութենէն պէտք կը պահանջէ: Օրուան զինուորական Ֆէրիտ Փաշան համաձայն էր, թուրքերը զինելու եւ ջարդը գլխաւորելու... խումբերը ամէն բանէ առաջ կը պահանջէր Ազատ Ոստանիկը իրեն յանձնել:

«Ձե՛մալ Պէյ հակառակ էր ատոր, Կեղրոնէն հրահանգի կը սպասէր:

«Ֆէրիտ Փաշան 200 զինեալ ուժերով պաշարեց Հնչակեան ժիրայր Ակումբ Գրադարանը եւ պահանջեց անմիջական յանձնումը Ազատ Ոստանիկի:

«Ֆէրիտի հրահանգով 200 հրացանի փողեր ուղղուած էին շէնքին եւ պատրաստ էին կրակելու: Մենք ալ պատեհէններու ետին պատրաստ էինք:

«Յանկարծ, հերոսական ուսուցումով մը՝ Ոստանիկ բարձրացաւ տանիքը եւ ձեռքը ուժով՝ դռանց» :

« — Հեռացէ՛ք, դաւաճաններ, հեռացէ՛ք շուտով, եթէ չէք ուզեր շան սատակ դառնալ :

«Ձիռուած թուրք ամբոխը փախաւ... :

«Կեանքի մեծ փրկում էր :

«Այդ դէպքէն ետքն է որ, չէզոք հայերու խնդրանքով եւ Հնչակեան Մարմնի որոշումով Ոստանիկ ինքնաբերաբար յանձնուեցաւ ձէմալ Պէյի եւ որու կարգադրութեամբ ան մեկնեցաւ Պոլիս :

«... Պալքանեան պատերազմի շրջանին, որպէս բժիշկ միացաւ թրքական կարմիր Մահիկին եւ հարիւրաւորներ դարձանեց պատերազմի ճակատին վրայ :

«Պատերազմէն ետք 1913ին կը մեկնի Վան եւ կը սպաննուի նոյն տարին Իթթիհատի դաւաճան զնդակով... :

«Անոր մահուան լուրը ցնցեց Վանի հայութիւնը, համաժողովրդական գործադուլ յայտարարուեցաւ, ժողովուրդը փակեց խանութներն ու դպրոցները... խռնուեցաւ Հնչակեան Մարտիկ գրադարանին առջեւ, հսկայ թափորը կ'առաջնորդէր զինք... Փարամազ կը խօսի դամբանական, խարանելով մութ ուժերը... Արարքի գերեզմանատան մէջ 14 դամբանականներ կը խօսուին դատապարտելով ոճիրը : Վանի հայութիւնը իբր բողոք չորս օր փակ պահեց խանութները իր սիրելի գաւկիս կրօնատին առթիւ...» :

Իթթիհատի դէմ ո՛չ մէկ կազմակերպութիւն չընդդիմացաւ, կը գրէ Եղեռնի 50ամեակի նուիրուած Յուշարձանին մէջ Լ. Չորմիսեան, մինչդեռ Հնչակեանները 1896էն սողին դէմ էին Իթթիհատի եւ ատիկա լաւ դիտելին ե՛ւ թուրք ե՛ւ հայ քաղաքական հոսանքները : Ի՞նչ ըսաւ Ազատ Ոստանիկ Թումարզայի մէջ 1909ին :

«Խօսեցաւ համարձակ կերպով, եւ վեր առաւ Իքթիհատի հետապնդած քաղաքականութեան ներքին փուլերը : Յորդորեց ժողովականներուն կազմակերպուիլ եւ միշտ աչալուրջ գտնուիլ, պարզելով Ս. Դ. Հնչ. Կուս. ծրագիրը եւ անոր ներկայ հակա-Իքթիհատական դիրքին շարժառիթներուն հիմունքները» :

«Վանահայրին մօտ համակրական ժողովի մը ընթացքին, նոր ուժեր կ'անդամադրուին Հնչակեան շարքերուն մէջ՝ Ոստանիկի խօսքերէն յետոյ» :

«Յուշամատեան Թումարզայի», Թորոս Մատաղճեան, 1959, Պէյրութ, էջ 196) :

1911ի աշնան Ընկ. Ս. Սապահ Գիւլեան Թումարզա կը ժամանէ : «Ու խօսեցաւ Սապահ Գիւլեան մօտ երկու ժամ... Էն վերջը ըսաւ որ բաղկացուցիչ ազգերու ինքնավարութիւնը երբեք արգելի չէ ժողովուրդներու ազատ զարգացման» :

«Թումարզայի երկու հարիւր Հնչակեանութեան վրայ 100 անդամներ եւս աւելցան, որոնց մէկն ալ ես էի : (Նոյն, էջ 195) :

1910ին երբ առաջին անգամ Ընկ. Սապահ կ'այցելէր Թումարզա. հրապարակային 3 ժողովներ կ'ունենայ եւ երկու դասախօսութիւններ, որոնց առանցքը կը կազմէին Համիտի քաղաքականութիւնը, գուգորդուած Իքթիհատականութեան յայտնի եւ ծածուկ միտումներուն հետ» : (էջ 192) :

Որպէս ընդհ. լիազօր Իթթիհատի՝ նէճիպ Պէյը այցելած էր հայկական 6 նահանգները, ապա Պոնտոսի եւ Փոքր Հայքի շրջանները : Ընկ. Սապահին կ'ըսէ. —

— Քննութիւն կը բանամ, ոչ-Իթթիհատական պաշտօնեաները դործէ կը հեռացնեմ եւ անոնց աւել ընկերներ (Իթթիհատականներ) կը կարգեմ : (էջ 83) :

Եւ դեռ՝ մեր ժողովուրդը տղետ է : Հայերու, Յոյներու չափ զարգացած չէ : Խնդիրն այն է, որ մենք այլեւս ի՞նչպէս պիտի կրնանք Հայերուն, Յոյներուն հասնիլ, քանի որ սապարէզը անոնք գրաւած են, կը յայտնէ Ամասիոյ Մուսսեպեհին :

ՄՈՒՍԹԱՖԱ Նէճիպ. — «Այո՛, բոլորն ալ Օսմանցի պիտի ըլլան, Օսմանցի դառնան հոգիով, ու սրտով, մենք համազուտ եմք, որ այս երկրի փրկութիւնը միայն եւ միայն ստոր մէջ պիտի ըլլայ : ԴՈՒՔ ԱՅՍ ԳԱՂԱՓԱՐԻՆ ՀԱԿԱՌԱԿ ԷՔ ՄԵՐ ԷՕՄԷՐ ՆԱՃԻ ՊԷՅԻ ՀԵՏ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԽԻՍՏ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՅԵՐ ԷՔ՝ ՉԱԲՄԱՔՃԸԼԱՐ ԵՆԻՈՒՇԻ ՎՐԱՅ...» :

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ. — Հարց է, մենք որպէս ազգ այս երկրի մէջ պիտի ապրե՞նք, մեր կեանքի ինքնայատուկ պայմանները պիտի ունենա՞նք, ապա եթէ այո՛ է, ապա անջատողական ո՛չ մէկ ձգտում կրնայ իրականանալ : Մեր ծրագրի մէջ յստակ բաժնէք որ ձշմարիտ Սահմանադրական Թուրքիայի հանդէպ՝ մենք անջատողական ոչինչ ունինք : Այս երկրը կ'ապրի, եթէ ազգերու ինքնորոշման սկզբունքը ո՛չ թէ խօսք, այլ իրականութիւն կը դառնայ եւ այդ պէս քաղաքական հաստատութիւններ յառաջ կուզան իւրաքանչիւր ազգին իր ինքնայատուկ պայմանները աչքի առաջ ունենալով : ... Եթէ ինքնավար Հայաստանը իրականութիւն դառնայ, ապա անջատողականութեան խօսք չի կրնար ըլլալ : Իսկ երբ ձեռք առնուանք քաղաքականութիւնը չլքէք, մէկ ազգի, մէկ լեզուի սկզբունքը շարունակէք պաշտպանել եւ ձգտիք բաղկացուցիչ ազգութիւնները սպանել՝ Օսմանեան միաձուլութիւն յառաջ բերելու դիտումով, համազուտեք որ անջատողականութիւնը ինքնին կուգայ, որպէս պատմական անհրաժեշտութիւն : Իրերու ընթացքը մեզմէ աւելի ձեռքով կախում ունի : Կայ հայ ազգ, կայ Հայաստան : (Տես՝ «Փոքր Հայքի Յիշատակներ», Ս. Սապահ Գիւլեան, Ա. հատոր, էջ 90-92) :

1911 Մայիս 13ին Իթթիհատական հռետոր գործիչ Էօմէր Նահին այցելած էր Սեւ Մովսի քաղաքները, նաեւ Սամսոն եւ պաշտպանած էր եւ ջատապօղած ձուլման եւ Օսմանցիութեան գաղափարները : Շատ մը հայեր անդամադրուած էին Իթթիհատականները Ա. շարքի վրայ կ'ունեցորեն Ընկ. Սապահ Գիւլեանը. «... Յոյց տուի պաշտօնական Իքթիհատեան ազգայնութեան առնուած վաերազրերու համաձայն, լարուած այն մեքենայութիւնները, որոնք ուղղուած էին մասնաւորապէս հայերու դէմ եւ... շեշտեցի քեզ կամ նախկին քաղաքի դէպի անկում, կամ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, ԻՐԱՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ՝ ԻՆՉ ՈՐ ՀԵՉ. ԿՈՒՍ. ՊԱՀԱՆՁՆ ԷՐ» :

«... Հայկական Դատ կայ եւ կը մնայ, քանի կայ հայ ազգ եւ քանի ձեռք չէ բերուած իր արդար իրաւունքները, որոնք բոլորը պիտի խտանան ինքնավար Հայաստանի մէջ»:

Նոյն օրը դասախօսութենէն ետք Մուսթաֆա Նէճիպ ցաւ կը յայտնէ, որ Իթթիհատի եւ Հայերու միջեւ նախկին մտերմութիւնը չկայ...: Ասոր կը պատասխանէ՝ Սերաստացի Հնչակեան Ղազարեան, որ «մեղադրեց Իթթիհատը, պատճառ բերաւ Ատանայի կոտորածը եւ այդ առթիւ Իթթիհատի բռնած դիրքը եւ այն նեղմտութիւնը որ Իթթիհատի ակումբներէն ներս ցոյց կը տրուի»:

«Իթթիհատականները բոլոր մեղքը մասնաւորներու վրայ ձգեցին...»:

Ներկաներէն մին Հարց կուտայ Մուսթաֆա Նէճիպին, թէ ինչո՞ւ իրենք այս աստիճան կեդրոնացման ուղղութեան կը հետեւին որպէս կուսակցութիւն՝ ան կը պատասխանէ—

«Ամենաի՞նչ րապակեղրոնացումն անգամ այս երկիրը դէպի անվերականգնելի կործանում պիտի առաջնորդէ: Մեր երկրի մէջ ապրող տարբերը այնքա՞ն տարասեռ են, իրարու խորք, որ գանձնէ իրարու հետ կարելի է միացնել, միայն խիստ Կեդրոնացման միջոցով»: (էջ 98):

«Ես ուրախ էի, կը գրէ Սապահ, որ հոն ներկայ եղող բոլոր հոսանքներու ներկայացուցիչները կը լսէին այդ խօսքերը...»:

Մեկնելէ առաջ Մ. Նէճիպ.— «Մենք հակառակ ենք Ս. Գ. Հնչակեաններուն, չենք ուրանար անոնց աշխատանքը... ես այցելած եմ Ս. Գ. Հ. Կ. բոլոր ակումբները եւ տեսած եմ թէ անոնք ինչպէս լռիկ մնջիկ կը գործեն...»:

Նոյն պիչեր — «Պարզուեցաւ Իթթիհատի ներքին քաղաքականութիւնը, կարգացուեցաւ անոնց հրատարակած ներքին շրջաբերականներէն կոտորներ, բացատրուեցաւ ինքնապաշտպանութեան հանդէպ պարտաւորութիւնը...»:

Մարգուան... 3000 հողի հաւաքուած են, հայ եւ թուրք: Սապահ Գիւլեանն է խօսողը.—

«Այս Սահմանադրութիւնը, նա նպատակ չէ մեզի համար... այլ սեղմ միջոց մը՝ իսկական խորհրդարանի եւ ազգերու ինքնորոշման իրաւունքի հասնելու համար:

«Մենք դեռ շատ նամբայ ունինք քայլիք, շատ խուսեր անցնելիք, գուցէ նորէն արեան գետեր ունենանք մինչեւ մեր վերջնական յաղթանակը ձեռք բերելը:

«... Մի՛ մոռնար, որ ձեռք բերուածը ինչ արեան գետն է եղած... աշխատեցէք հայ ազգի ազատագրութեան համար»: (էջ 117):

Ամասիոյ մէջ Ընկ. Սապահ Գիւլեան կը խօսի՝

«Պարլամենտականութիւն եւ Ս. Գ. Հնչ. Կուսակցութիւն» նիւթին շուրջ: Կ'անդրադառնայ Իթթիհատի տեսարանութեան, մեր դիրքին եւ ինքնորոշման հարցին շուրջ: Ան կ'այցելէ Իթթիհատի ակումբը Ընկ. Թապիպեանի հետ, պատի վրայ փակցուած թուղթեր... «Կրօնական ծիսակատարութեան մէջ քերականները չեն կրնար Իթթիհատի անդամ ըլլալ... Ամէն միւսիման պիտի աշխատի որ իսլամութեան սուրբ դրօշը միշտ յաղթ ծածանի: Այս երկիրը Օսմանցիներու երկիրն է, եւ ամէն ցեղ, լեզու՝ մենք Օսմանցի կը նկատենք. բացի Օսմանեան ազգութենէ ուրիշ ազգութիւն չկայ: Մեր ցամաքային ու

ծովային ուժերը մեր քեւերն են, ամէն հաւատարիմ Օսմանցի, իր ազգի փառքն ու մեծութիւնը սիրող, քող ջանայ մեր նաւատարմիլը ուժեղացնել եւ բարձրէն եկած կարգադրութիւնները կատարել»: (էջ 195):

Ընկ. Թապիպեան Հայկազուն կը պատմէ, թէ Սահմանադրութեան նոր օրերուն բոլոր հայերն ալ ուրախ էին:

— Ատանայի կոտորածի ժամանակ այստեղ հեռագիր եկաւ, Իթթիհատական Հալիմ էֆէնդիին ուղղուած Սելանիկէն՝ որով կը հրահանգուէր «հայերու վրայ յարձակիլ եւ ընել ինչ որ կրնան»: Գացինք Ձերքէլ Պէքիր Սամիի մօտ, որ բոս իրեն հայկական ծագում ունէր: Ան ինձի թելադրեց որ հայ երիտասարդները հաւաքեմ եւ զինեմ, զէնք ալ տուաւ, զինուեցանք: Ան շուկայ իջաւ եւ սպանաց որ ի հարկին Թոքաթէն իր Ձերքէլները կը բերէ եւ կը կոտորէ գիրները: Ամբոխը ցոյց տուաւ Սելանիկէն եկած հրահանգը... բայց շնորհիւ Պէքիր Սամիի կոտորած տեղի չունեցաւ...: Ատէէ ետք Իթթիհատի Կեդրոնը պաշտօնանկ բրաւ Հալիմ էֆէնդիին... (էջ 197-8):

Ամասիոյ մէջ եւս Ընկ. Սապահ Գիւլեան կը խօսի «հայկական դատը եւ նրա ներկայ դիրքը» նիւթին շուրջ: Ապա «մեր դիրքը ներկայ (Թուրքիոյ) հոսիքաբանին համդէպ»: Ան կը խօսի Թոքաթի մէջ նաեւ նոյն նիւթի շուրջ:

«... Հիմա երջանիկ ենք, հայ, թուրք չկայ: Բոլորս ալ մէկ հայրենիքի գաւազ՝ Օսմանցիներ ենք», կ'ըսէ Սերաստիոյ մէջ Շէյխ Աէյֆէտտինը՝ ընկեր Սապահ Գիւլեանին:

«... Թուրք մեր ժառանգական թշնամին է, մենք ինչպէս կրնանք անոր հետ բարեկամ ըլլալ, Դաշնագիր կնքել, մեր պետութիւնը փյոյնողը, մեզ այսօրին հասցրնողը ան եղած է, կը յայտնէ Իթթիհատական Նուրի Պէյ»:

Սահմանադրութեան առաջին օրերուն Սերաստիոյ Հնչակեաններուն թիւր 1500ի կը հասնէր: Հոն եւս դասախօսութիւններ, Սահմանադրութեան, Իթթիհատի կազմակերպութեան շուրջ: Ամենէն աւելի թուրք ազգայնամուլ ուղիին հոն կը հանդիպի Ընկ. Սապահ Գիւլեան:

Հիմա կը տեսնէ՞ք բոլոր Լ. Չորմիսեաններ, որ հայ յեղափոխութեան իրաւ առաջնորդները ո՛չ միայն պաշտօնապէս քուղքի վրայ որոշումներով միայն դէմ դիրքորոշուեցան Իթթիհատի, այլ եւ գործիչներ որպէ՛ս՝ անձամբ իջան դատաւանները՝ Սապահ, Փարամազ, Շահէն, Մուրատ Պօյաճեան, Ոստանիկ, Թապիպեան, Սիւնիք, Եսալէմ եւ ուրիշներ, Իթթիհատին բրորականտին հակադրեցին պատրաստ գտնուելու, կազմակերպուելու եւ վտանգի դէմ պաշտպանուելու ուղին, որ շօշափելի վտանգին դէմ միակ տրամաբանական ուղին էր, այդ կացութեան մէջ:

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Բ

«Պալքանեան պատերազմէն ետք Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ Պօլսոյ Նուպարի նախագահութեամբ կազմուած Ազգային Պատուիրակութիւնը դիմումներ կատարեց, այդ առթիւ ցոյց տալու համար թէ Օսմանեան Սահմանադրութիւնը բնաւ չէր կրցած հայերու կեանքը, ստացումէք եւ պատիւը պաշտպանելու կազմուած են վաւերագիրներու հաւաքածոներ այն հարստահարութիւններուն, որոնք 1908էն ետք գործադրուած են եւ տպագրուած են փրանսերէն ինը տետրակներու շարքով մը («Թուրքիոյ Հայոց Կացութիւնը վաւերապատկերով պարզուած» 1908-1912):

Ամփոփումը բողոքներու — (1908) «Մեր յայտերը զինուժ-
բական տուրքի կանոնադրման՝ անկացած են: Այս տուրքերը կը
պահանջուին վերջին ծայր խստութեամբ, առանց բնաւ նկատի առ-
նելու դոյզն չափով ժողովրդի թշուառութիւնը, նոյնիսկ անոնք, որ
կտոր մը հաց չունին ուտելու, կ'առաջնորդուին բանտ» ջրդ տեա-
րակ, էջ 36):

31 Օգոստոս 1908ին Սահակ Կաթողիկոս Խաչատրեան կը հա-
ղորդէ՝ «քէ կեանքը, պատիւը եւ ինչքը հայ ժողովուրդին Մալաթիոյ
եւ շրջակայ գիւղերուն մէջ, կեղեքումի եւ անիրաւ հարկահանու-
թեան ենթարկուած են միշտ»:

«Քրեառ ցեղերու միջև կոխ... Քէախտէի 200 տուն հայերը նախ կը զոհեն:
Իրաքանչիւր կողմ իր մարդոց նախ հայերուն նշան առնել կը յանձնարարեն:

«Միւտի Գէճմի 1911ին Սառա անուն հայ աղջիկ մը առեւանգած է Քիախ-
տէի մէջ եւ... պաշտօնի բարձրացում ստացած է:

«Եւ ասիկա միայն Մալաթիոյ շրջանին մէջ պատահած դէպքերէն մաս
մըն է...»:

(Տես՝ «Պատմութիւն Մալաթիոյ Հայոց» Ա. Ալպոյաճեան, 1961, Պէյրութ, էջ 862):

Մալաթիոյ շրջանի բռնութեան դէմ (1895) Հնչակեաններու
գլխաւորութեամբ կոչուներու մասին կարգալ նոյն դրքէն էջ 885-890:

Սոսերով 1915ի Եղեռնի շրջանին հայ եւ քիւրտ զործակցու-
թեան մը հնարաւորութեան մասին, Հնչակեան Գ. Երեւանեան կը
դրէ.

«Տէրսիմի մեկուսացած դիրքը եւ հայերուն անհեռատեսութիւնը աղէտի
առաջնորդեց երկուքն ալ: 1915ի հայոց ջարդը տեսնելէ ետք է որ Տէրսիմ (քիւրտ
պետերը) զոգաց իր գործած պատմական մեծ սխալը, երբ աչքերը դոցած էր իր
հարեւան հայերու սպանդին ժամանակ»:

«1915-1916ին, թէեւ Տէրսիմը սթափեցաւ եւ ուզեց կանխել նաեւ իր մա-
հաճոյնի գործադրութիւնը եւ զէն ի ձեռին իջաւ Մեծկերտէն մինչեւ Խարբերդ,
բայց շատ ուշ էր արդէն»:

1916ին ըստ Լ. Լիւլէճեանի՝ Կովտունցի Մուրատ, Տէրսիմցի-
ներու հետ խորհրդակցելով կ'աշխատի ստեղծել հայ եւ քիւրտ զոր-
ծակցութիւն մը: Կը ձախողի բռնակցութիւնը դժբախտաբար:

(Տես՝ «Պատմութիւն Չարսանձաղի Հայոց», Գ. Ա. Երեւանե-
ան, 1956, Պէյրութ, էջ 142):

Փարամազ մէկն էր այն երեքէն, որոնք Յրդ (Պուլիս 1909)
Ընդհանուր Համազումարին Հնչակեան Կուսակցութեան սկզբունք-
ները անվթար պահեցին եւ յառաջացուցին «Հակա-Իթթիհատակա-
նութեան», «Հակա-Օսմանցիականութեան» ծանօթ որոշումը:

«Ան այցելեց 1909ին եւ վերակազմակերպեց Տիգրանակերտ,
Վան, Խարբերդ, Սեւերեկ, Ուրֆա եւ Այնթապի Հնչակեան Մասնա-
ճիւղերը: Չարքաչ եւ աննիւթական, կէս կուշտ եւ կէս անօթի յա-
ճախ: Փարամազ՝ Տիգրանակերտ այցելութեամբ, օրհնութիւն մը ե-
ղաւ թէ հայուն, թէ թուրքին ու քիւրտին:

«Տիգրանակերտի մէջ ընկեր Փարամազի ներկայութիւնը...
ամբողջ յեղափոխութեան ողին, ինքնապաշտպանութեան անյե-
տաճգելի պահանջը շեշտեց, հայ քաղաքական կուսակցութեանց եւ
յարանուանական մարմիններու զործակցութիւնը սերտացուց եւ քա-
ղաքի ինքնապաշտպանութիւնը կազմակերպեց:

«Ընկեր Սեղբակ Շահէն կազմակերպեց Հայնի, Լճէ, Փարպին,
Փիրոն մինչեւ Մուշ ու Սասուն, իսկ ընկ. Գրիգոր Նալբանտեան
(Վահագն) Մերտինի շրջանը»:

(Տես՝ «Ամիտայի Արձազանդներու Վերակոչում» Բ. Հատոր, 1953,
Նիւ Ճըրջի, Տիգրան Մկուչ, էջ 284-286):

«Իթթիհատի շէֆեր 1908 Յուլիս 11ին մեր Ալպոյաին առաջնոր-
դարանը այցելեցին, կը զրէ Տիգրանակերտի Դաշնակցական դեկա-
վարը Յովհ. Երէցեան. Սահմանադրութեա՛ն ի նպաստ նառե՛ր...
յոյսեր նոռումարանցիցին»:

«Հակառակ (դեկավար) Վարդգէսի քելադրանքներուն, մենք
չուզեցինք Դաշնակցութեան մեր կազմը յայտնել իր քիստական-
ներուն:

«Մեր համոզումներուն դէմ էր: Չարդարար թուրքին հաւա-
նական կասկածները մեր սրտերուն մէջ էին դեռ, ու՝ մանաւանդ կը
տեսնէինք որ իր քիստի խումբերու գլուխը կանգնողները, հայր ու
որդի՝ Արիֆ եւ Ֆէյզի պէկերուն նման անխիղճ, անհոգի գազաններ
էին: Արիֆ 1895ի Տիգրանակերտի ու շրջաններուն հայկական ջար-
դերն ու ատերումները սարքողներէն եղած էր...» (Տ. Մկուչ, էջ
300):

Դաշնակցական գործիչ Բ. Շահպազ կը թելադրէ գործակցի իր քիստի
հետ — 1909 — Շահպազ գլխաւոր շեշտը դրաւ «այդ որոշումին մէջ, հակառակ
մեծամասնաբար ընկերներու թուրքերուն հանդէպ ունեցած յոռտեսութեան ու
անվստահութեան: Իթթիհատին մօտենալու անոնց հետ գործակցելու համար,
Պուլսոյ պատասխանատու մարմինն ալ մեզի քելադրանքներ կ'ընէր»:

(Տ. Մկուչ, էջ 305):

ՆՄՈՅՇ ԹՐԻՓԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵՆԷՆ
Շապին Գարահիսարէն Խարբերդ կու դան Յակոբ եւ Յարէթ,
կը գործեն, Հնչակեան Մասնաճիւղեր կը կազմեն, կը ձերբակալուին
կռուելէ եւ վերջին փամփուշտը սպառելէ ետք: Յակոբ դատաւորին
կ'ըսէ.

«Դուք իբր դատաւոր զիտնալու էք որ ազգերու կեանքին մէջ բռնութիւնը,
ննչումը եւ անարդարութիւնը յեղափոխութիւն կը յառաջացնեն: Յեղափոխու-
թիւնը անարդարութեան դէմ բողոքելու եւ տառապող ժողովուրդները ազատագրե-
լու աստուածային պատգամն է, որ ի վերջոյ պիտի յառաջանայ նաեւ թուրքիոյ
մէջ: Դուք կ'ըսէք ու կը կրկնէք թէ՛ մենք յեղափոխական Հնչակեաններ ենք: Թող
այդպէս ըլլայ: Մենք երկուքս յեղափոխականներ ենք: Չեր տեսակէտով մեռնելու
արժանի է այն հայը՝ որուն ձեռքը կը դպի իրացանքին: Բայց դուք թուրքերուն ու
փիւրտերուն իրաւունք կու տաք զինուելու. միթէ նոյն երկրի գաւախ հայը իրա-
ւունք չունի՞՞ գէնք ունենալու՞ ինքզինքը պաշտպանելու համար: Ա՛յ բաւական է
սէր դատաւոր, մենք, յոռի մտքերով եւ կաշառակերութեամբ հոչակ կանգ բեր-
ական դատարանէն արդարութիւն չենք սպասեր: Տուէք ձեր վճիռը: Կեցցէ՛ յե-
ղափոխութիւնը»:

եւ Յակոբը (Գալուստ Անդրէասեան) եւ Յարէթ Թէվէքէլ-եանը (որուն տղան Մոսկուայի ամէնէն տաղանդաւոր դրողներէն դարձաւ) 101 տարի ցմահ բանտարկութեան վճիռի կ'արժանանան:

«Արիւնի դէմ արիւն կը պահանջենք» կը գոռայ թուրք ամբոխը... Պոլիս կը դիմեն եւ մահուան գլխատման վնասը ձեռք կը քան:

«Պարբերէն՝ ամերիկեան, գերմանական, ֆրանսական Միտիոնները իրենց հիւպատոսարաններուն միջոցաւ Պոլսոյ դեսպաններուն խնդրազիր մատուցին վճիռը բեկանելու մտքով: Պարբերող ժողովուրդը երկու լիթր ոսկի խոստացաւ Ասլմ պէյի միջոցաւ որպէս արեան դին... Հայ կիներ ու աղջիկներ իրենց ոսկեղէն զարդերը... բանտէն ի դո՛ւր կուսակցութիւնը փորձեց փախցնել... 1904 Նոյեմբեր 29ին Յարէթ եւ Յակոբ Մեզրեպի մէջ գլխատուեցան, եփրատ Գուլէճի մէջ ուսանողներ երգեցին. «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ պիտ մեռնի, բայց երանի որ իւր ազգի ազատութեան կը գոհուի...»:

«Յակոբ-Յարէթի Յեղափոխական զաղափարը բուռն թափով սկսաւ ծաւալ ստանալ, առանձնապէս դպրոցներու ուսանողութեան մէջ: Եփրատ գուլէճը զրաւեց առաջին տեղը, վերին կարգերուն մէջ կազմուած էին երկու ուժեղ խումբեր:

«Վերին Մարմինը (Ս. Դ. Հ. Կ.) կը կազմուէր «Անդր Տաւրոսեան Վարչութիւն», Յովսէփ Մալեմէզեան ատենապետ: «Հնչակ»ը կու գար Գուլէճի զբաղարանի հասցէին... Փրոֆ. Լիւլէճեան համակիր էր, իզական սեռէն՝ ճուհար Պողոսեան, իսկ «Քէթէնեան»՝ Ուրֆայի 1915ի հերոսամարտի անվեհեր քաջուհին՝ Հնչակեան արձանագրուած էր հոն: 1907ին Յակոբ-Յարէթին վրէժը կը լուծէ Հնչակեան Կուսակցութիւնը»:

(Տես՝ Ս. Շահէնի դրութիւնը, «Պարբերուք եւ անոր ոսկեղէն դաշտը», Յուշամատեն, 1959, Վահէ Հայկ, էջ 604):

«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐՁԱՆԻՆ ԷՇՐԷՑ ՊԵՏԻՐ ԽԱՆ ՊԷՅ ԻԹԹԻՀԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ՝ (1909) ՍԵԼԱՆԻԿԻ ԺՈՂՈՎԻՆ) ԿԸ ՅԱՅՏԵՆԷ ԻՐ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՆԿԻԼԵԱՆԻ ԵՒ ԱՐԱՄ ԱԶԸՔՊԱՇԵԱՆԻ»:

«Իթթիհատի այս եւ դեռ այլ վայրազ արարքներէն խոռված Հնչակեանները իրենց Պոլսոյ օրկան «Նոր Աշխարհ» օրաթերթի առաջնորդող յօդուածի վերնագիրը կը դնեն «Իթթիհատի ԱՄՐԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ԱԹՈՒԻՆ ՎՐԱՅ» եւ կը մերկացնեն իր քիտաւորի Հակա-Սահմանադրական տխուր արարքները, որաւ հետեւանումով, իր քիտաւորի կառավարական հրահանգով, ընդմիջտ դադարման ենթարկուեցաւ «Նոր Աշխարհ»ը:

Ընկ. Բենիամին Ժամկոչեան կը վկայէ՝ որ Յակոբ - Յարէթի դերերգմանը կ'այցելէ Փարամազ, Սահմանադրութենէն ետք եւ Պարբերողի հայութիւնը հոն է: «Այդպիսի արցունք խլող հոյակապ մառ դեռ լսած չեմ»... մօտ երկու ժամ խօսեցաւ, եւ հոն է որ իր նոյնքան հրաշունչ մէկ պատգամը արտասանեց՝

«ՀՈՆ ՈՒՐ ԿԱՆԱՂԱՆՆԵՐՆ ԵՆ ԶՕՃՈՒՄ,
ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Է ՄԱՆ ԳԱԼԻՍ,
ՀՈ՛Ն, ՈՒՐ ՄԵՌԵԼՆԵՐՆ ԵՆ ՆԵՋՈՒՄ,
ՅԱՐՈՒԹԻՒՆ Է ՄՕՏԱԼՈՒՏ...»:

Տէրսիմցի քերտեր այս առթիւ Միութիւն եւ բարեկամութիւն կը խոստանան, մատանչելէ ետք Իթթիհատի վտանգը կ'առաջարկեն որ «հայ զինուորները բանակէմ փայտելով Տէրսիմ ապաստանին»: Պարբերող վրայ մենք կը յարձակինք «Հարստութիւնը՝ Տէրսիմ, իսկ դուք մեր մօտ կ'ապաստանուիք... մինչեւ փոքորիկը անցնի»: Հակառակ Տէր Պսակի եւ Տէր Վարդան Սալանեան բահանայի խնդրանքներուն, Ազգային Իշխանութիւնը այդ առաջարկը կը նկատէ «անգործնական եւ վտանգաւոր», ու կը մերժէ քերտերու առաջարկը...:

Ճիշդ է որ Տէրսիմցին յարձակեցաւ յետոյ, սակայն... Իթթիհատի մանդաղը անցած էր Պարբերողէն...:

«Հայ կազմակերպութեանց մէջ Դաշնակցութիւնը մնաց Իթթիհատին հետ, իսկ միւսները (Հնչակեան, Վերակազմեալ Հնչակեան) Իթթիլաֆի հետ, անոր ղէթ երեւութական կամեցողութենէն քաջալերուած եւ մանաւանդ Իթթիհատի մոլեռանդ ու կասկածելի ընթացքէն վախցած» («Պարբերուք եւ Անոր Ոսկեղէն Դաշտը», Վահէ Հայկ, էջ, 630):

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«Երբ սկսաւ ընդհանուր պատերազմը, ո՛չ միայն Օսմանեան կայսրութեան ոչ-թուրք ժողովուրդները, այլ թուրքերու մեծ մաս մը իսկ կը ձգտէին նոր ուժի մը՝ աւելի ազատական՝ նուազ ստրուկ օտար կամքերու: Հակառակ Օսմանցիներու մեծամասնութեան կամքին էր որ թուրք կառավարութիւնը, կամ աւելի ճիշդը էնվէր փաշան, մղեց Թուրքիան եւրոպական համաշխարհային բախումին, հպատակելու համար Գերմանիոյ»:

(«Հայերու Բնաջնջումը Գերմանական մեթոտ եւ թրջական գործելակերպ», Ռենէ Բինոն. Թարգմանութիւն՝ Ե. Չոփուրեան, 1919, Պոլիս էջ 17):

«Ատանայի ջարդերէն, 1909էն ի վեր, անդորրութիւնը Հայաստանի մէջ երբեք կատարեալ չէր եղած: 1912-1913ին, Պալքանեան Պատերազմին ատեն, դանդաղ հարստահարութիւն մը սկսաւ: Թալան, սպանութիւն, բռնի կրօնափոխութիւն, առեւանգում բաւական շատ եղան, բայց ոչ ընդհանուր: Ֆրանսական եւ անգլիական դիւանագիտութիւններուն կորովի ազդարարութիւնները եւ Ռուսիոյ սպանական միջամտութիւնը արդիւցին սպանդին ընդհանրացումը» (էջ 18):

«Երիտ. Թուրքերը նպատակաւոր առիթի մը կը սպասէին իրականացնելու համար իրենց ազդեալութիւնը: Սահմանադրի իրադարձութիւնները բաւականաչափ պատրուակներ էին, Տարտանէլի դէմ դաշնակիցներու յարձակումին ձախողանքէն ետք, ըսպէն թուեցաւ յարմար գործադրութեան» (էջ 23):

Ս. Վրացեան «Կեանքի Ուղիներով» 1955ին Գահրիէ տպուած հատորին մէջ կ'անդրադառնայ Եղեռնի նախօրեակին իր կարգ մը ընկերներուն տեսակէտներուն Իթթիհատի հանդէպ:

Սահրատ — (Դաշնակցական գործիչ) Այո՛, ամէն ինչ փոխուելու վրայ է... եւ էլ այս թակարդից ելք չկայ... Միթէ՞ դեռ չես տեսնում... որ մեր վրայ կախուած է պատերազմի մղմանը:

«Արդար լինելու համար պէտք է խոստովանիմ, որ ես պատերազմի մղմանը չէի տեսնում: Եւ մեր շրջապատում ո՛չ ոք դեռ չէր տեսնում: Հրանդը վեցերորդ զգայարանը զգում էր այն ինչ որ նախապատրաստում էր տարերային ուժով մթութեան մէջ:

Վրացեան — տղայ՛, ի՞նչ յիմար բաներ ես ասում, ի՞նչ պատերազմ, ինչ բան... խելքդ գլուխդ հաւաքիր:

Սահրաւ... Ես զիշերները չեմ քնում... կատաղած թուրք խուժանն է աշ-
քերիս առջեւ ու ինձ թու՛մ է, թէ հիմա կը յարձակուեն մեր վրայ, լրիկ-լրիկ
կ'անեն մեզ... :

«... Չնկատեցի՞ր թուրքերի սաղայէլական նայուածքը նաւահանգստում...
Պոլսում մերոնք Մարզպան են խաղում, իսկ տուղանքը մենք պիտի քաշենք դա-
ւաւանքում... Պիտի տեսնես 95ի սարսափները պիտի կրկնուեն աւելի մեծ չափով,
եթէ պատերազմ լինի...» : (Էջ 147) :

ՍԵՐԱՍՏԱՅԻ ՄՈՒՐԱՏ՝ ԽԻՉԱՆ ՄԱՐՏԻԿԸ

1890ին կը հասնի Պոլիս, կը մտնէ Հնչակեան Կուսակցութեան շարքերը, կը
դորձադրէ գաղտնի հրահանգներ: Պատրիարք Աշըղեան անարգած էր Յեղափոխու-
թիւնը: 1893ին Հնչակեան Պոլսոյ Վարչութիւնը կը հրահանգէ բոլոր հայ եկեղե-
ցիներուն մէջ չլիշատակել անոր անունը, կը սպառնայ պատժել անաստորները:
Բոլոր գաւառացիները Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին կը հաւաքուին բողոքե-
լու եւ «ՔՅՅՂ չտալու որ յիշատակուի պատրիարքին անունը»: Ոստիկաններ ներ-
կա էին: Երբ ոստիկանը կ'արգիլէ հայու մը ներս մտնելը, Մուրատ դուրս կ'ելլէ
եւ գայն ներս կը մտնէ: 9 ոսկիով Մուրատ կը փախչի Հնչակեանի մը տունը:
Տերորի դորձեր ալ կը կատարէ... Կը կուռի, կ'ապաստանի Ղալաթիոյ եկեղեցին,
Իզմիրլեան Պատրիարք կը յաջողի զինք հեռացնել... Եղիպտոս:

Ըստ Տէր Մեսրոպ Տ. Մեսրոպեանի յուշերուն՝ Մուրատի բոլոր ազգական-
ները Հնչակեաններ էին: Յեղափոխական շարժումին սկիզբը արդէն Պոլսոյ մէջ
տիրող կուսակցութիւնն էր Հնչակեանութիւնը:

Տեղի կ'ունենայ Պապը Ալիի 1895ի Հնչակեան ցոյցը: Ժողովուրդը եկեղեցի
կ'ապաւինի: Ղալաթիոյ եկեղեցին ապաստանողներու թիւն էր 450: Մուրատ Տնօ-
րէն խորհուրդի մաս կը կազմէ, զինուորական կարգապահութիւն կը հաստատէ...
Դեսպաններ կը միջամտեն, 72 հոգի չեն մեկնիր, Մուրատ հետերին էր: Հոն
մնացողները կը պահանջէին բարենորոգումներու դորձադրութիւնը...: Կ'անցնի
արտասահման, ապա Մասնոյ Բ. Ապստամբութեան կը մասնակցի 1904ին... Անդ-
րանիկի հետ կը մտերմանայ... Միհրանական շարժումի կողմնակից, Հայ-թաթա-
րական կոիւններուն կը մասնակցի Սիւնեաց աշխարհի մէջ՝ որպէս զաւանկական
խմբապետ:

«Մուրատ Սահմանադրութեան չհաւատաց, ո՛չ ալ Իթթիհատի սուտ խոս-
տումներուն եւ բարեկամութեան, Մուրատ քաղցրութեամբ ըսաւ, թէ պէտք չէ
խարուինք մեր դարաւոր թշնամիի յայտարարութիւններէն, թէ ապազան դեռ
անստորջ է եւ հարկ է օգտուիլ ծանուցուած ազատութիւններէն մեր շարքերը սեղ-
մելու եւ զիրքերը ուժեղացնելու համար»:

(Տես՝ Մ. Վարանդեան, «Մուրատ», 1931, Պոսթոն) :

«Հակառակ ուրիշներու պնդումներուն, 1910ին կը բնակի դիւղ: «Զէր ա-
խորժեր Իթթիհատական կուսակալին, ինքնապաշտպանութեան դորձը չէր լքած,
1910ին կ'ախատի Սերաստիոյ մէջ հնչակ-դաշնակ ինքնապաշտպանութեան մար-
մին կազմել... Երբ Ատանան կոտորուեցաւ... Մուրատ Սերաստիոյ մէջ զինքեր
ցրուեց եւ զիրքեր յարդարեց...»:

«Հայաջինջ Մուրամէրի ներկայութեան, 1913 Նոյեմբերին կ'ըսէ. «Իթթիհատը
չէ չեղած Սուլթաններու քաղաքականութենէն... Ես ալ եւ ձեզմէ շատերն ալ տե-
սանք, լսեցինք, որ Կիլիկիոյ աղէտին մասնակցեր է Ազատութեան բանակը, օդ-
ներով ջարդարարներուն եւ բնաջնջելով հայութիւնը այդ շրջանին մէջ... Երբ կը
խօսինք Օսմանեան Հայրենիքի պաշտպանութեան մասին, պէտք չէ խորութիւն դը-
նենք ազգերու միջեւ, պէտք չէ ընթանանք հին ուղիով» : (Էջ 197) :

Մուրամէր, Զէրքէղ Ահմէտը կը զրկէ դայն սպաննելու...
Բայց բրածեծ կը մեռնի վերջինը:

Էնվէր Էրը Սարըզամէն պարտուած կը վերադառնար զրոյց
մը ունեցաւ անոր հետ:

Մուրատ.— Փաշա՛, ինչպէս որ մենք թրքահայերս կը կատարենք մեր
պարտականութիւնը Օսմանեան հայրենիքի հանդէպ, նոյնպէս ուստահայերն ալ
ստիպուած են կատարել իրենց պարտքը ուստ պետութեան նկատմամբ:

Էնվէր — Թրքահայերն ալ կամաւորներ ունէին, որոնցմէ մեր ձեռքը չէրի
ընկածներ ալ կան... Վստահ եղէք, շատ խիստ պիտի պատժուիք...»:

Սերաստիոյ հայութիւնը... կը մերժէ Մուրատներու խոր-
հուրդին անսալով յարձակողական կոչի սկսիլ...:

«...Եղեռնէն յետոյ Մուրատ փայլեցաւ Երզնկայի շրջանին մէջ, կիներ ս.
Երեխաներ ազատեց: «Մէկ հայ մէկ ոսկի» կոչով շատերուն կեանքը փրկեց»:

Քիւրտերու միջոցով Տէրսիմի վրայով Մուրատ եւ ընկերները կ'ազատա-
զրեն բազմաթիւ հայեր, որոնք մնացեր էին Խարբերդի եւ այլ շրջաններու մէջ:
(Էջ 247) :

1917ի Երզնկայէն — Կարին մեծ քաջութեամբ հայ զաղթականները պաշտ-
պանելով, կոռուելով կը յաջողի ողջ հասցնել որոշուած վայրը:

1918ին կոռուեցաւ Ս. Շահումեանի կարմիր Կոմունայի պաշտպանութեան
համար եւ սպաննուեցաւ Պաքուի մէջ, խեղախորէն կոռուելով...: Ան պաշտի յե-
ղափոխական որպէս կը մնայ մեր պատմութեան մէջ:

(Մուրատի մասին կարդալ նաեւ «Մուրատի ձամբորդութիւնը Սվազէն Պա-
քում», Զապէլ Եսայեանի, 1920ին Պոսթոն տպուած գիրքը) :

ԾԱԾԿԱԳԻՐ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ ՄԸ ԻԹԹԻՀԱՏԻ ԿՈՂՄԷ

«Ասիկա սուրբ պատերազմ մըն է միացնելու թուրք ցեղին բու-
լոր բաժանումները. ասոր համար առաջին անհրաժեշտութիւնն է
հայ ցեղին բնաջնջումը: Հայերը Անդլիոյ ձեռքին դորձիքներ են եւ
միակ արդեւթը մեր քաղաքականութեան յաջողութեան, քաղաքա-
կանութիւն՝ որ Հնդկաստանի ճամբան պիտի բանայ: Անհրաժեշտ է
փճացնել հայերը եւ անոնց զիւղներուն վրայէն քալելով հասնիլ մեր
նպատակին, հետեւաբար մի՛ խնայէք ո՛չ ոքի եւ ըրէք ճշգիւ ինչ որ
ձեզի խտորէն հրամայուած է: Այս միջոցով է որ միայն Պոլիս կըր-
նայ ազատագրել Հնդկաստանը»:

(«Օրերուս հետ», Միսաք Թորլաքեան, 1953 Լոս Անճելոս,
էջ 470) :

ԻԹԹԻՎԱՏԸ ԵՒ ԲԱՆԹՈՒՐՔԻԶԱԸ

«Ի՞նչ կը Ծրագրեն թուրքերը» (Միացեալ Անկախ Թուրանիա), Զարեանդի գիրքը՝ 1926ին տպուած՝ Բանթուրքիզմի մասին ընդարձակ ծանօթութիւններ կը բովանդակէ:

Ինչպէս կը պարզուի՝ շարժումը ուսական իսլամական երկիրներու մէջ ծընունդ առած էր: Անոնք անդադար դործիչներ կը շրջէին թուրքիա, որովհետեւ Օսմանեան Թուրքիան էր որ զիրենք պիտի առաջնորդէր Մեծն Թուրանիայի իրականացման: Սուլթան Համիտ Բանիսլամիստ էր, եւ երես չտուաւ Բանթուրքիստներուն, որոնք շեշտը Յեղուկ Յեղուկութեան եւ ո՛չ թէ Կրօնի վրայ դրած էին: Սուլթանի աչքին կասկածելի էր ազգայնականութեան ամէն արտայայտութիւն, իբրեւ արտանիշ ազատականութեան:

1889ին բժիշկ Հրակէյնատէ Ալի պէյ Պաքուէն Պոլիս կ'անցնէր եւ բժշկական վարժարանի դասախօսի դիմակին տակ Բանթուրանիզմ կը քարոզէր:

1905ին Նիժնի-Նովկորոտի տօնավաճառին (չոզենաւի մը մէջ) Խրիմի, Կովկասի, Միպերիոյ, Թուրքեստանի, Սիմպիրաքի, Քազանի Բանթուրքիստ տարրերը գաղտնի ժողով գումարեցին: Քանի մը հարիւր պատգամաւորներ ներկայ էին հոն: Ատիկա Ռուսիոյ Մահմետականներու Ա. Համազումարն էր:

1905ի Ա. Ռուսական յեղափոխութիւնը ազգայնական իսլամներու զօրացման պատճառ եղաւ: 1906ին իսլամական Բ. Համազումարը Ս. Փեթրսպոլսի մէջ ստիպուեցաւ ցրուիլ ոստիկանութեան հրամանով:

Նիժնի-Նովկորոտի մօտ տեղ մը գումարուած՝ Գ. Համազումարին ներկայ էին 800 հոգի: Կը նախազանգէր Ատրպէյճանցի Թօփճիպաշեւ: Թրքերէնը որոշուեցաւ պաշտօնական լեզու որպէս: («Ի՞նչ կը ծրագրեն թուրքերը», էջ 32-33): 50ի մօտ թերթեր՝ Կովկասի եւ Թուրքեստանի մէջ, ինչպէս՝ «Հայաք», «Թագէ Հայաք», (Նոր Կեանք) «Իլըաք», « Թերաք», «Հաֆիաք վէ Իֆալ», «Ֆիլիուաք»: Ծախքերը կը հոգային Պաքուի թուրք միլիոնատէրերը, մանաւանդ յայտնի Թաղիշֆը:

Սոյն թերթերը մեծ դեր կատարած են Ազրպէյճանի ազգայնական հոսանքին յարումին մէջ:

Քազանի մէջ կը հրատարակուէին «Երլուրգ», «Դանկ», «Դանկ Երլուրգ» եւ «Պէյլամ իլ Հաֆ» թրքերէն թերթերը, նաեւ Թիֆլիսի, Խրիմի, Օրէնպուրկի, Թոմսքի, Աստրախանի մէջ թրքերէն թերթեր ունէին:

Հունգար արեւելադէտ Վամբրի «Նայնթիմ Անշլըրի» մէջ (1906 Յուլիս) կը գրէր. «Յարի մահմետական հպատակներուն կարգախօսն է «Միութիւն» բառը...: Թաթարներուն գլխաւոր ճիգը ունի մէկ թիրախ — Թուրք ազգութեան տարրեր ճիւղերուն, տոհմերուն եւ ընտանիքներուն սերտ զինակցութիւնը»:

Պոլիսը Բանթուրքիզմի կեդրոն դարձնել որոշած ըլլալով, Բանթուրքիստները տարածուեցան Պոլսոյ բոլոր կողմերը:

Ատանայի կոտորածի նախօրեակին, Տոքթ. Նազըմ կը յայտնէր. «Պետութիւնը պէտք է այլամերձօրէն թուրք ըլլայ. օտար տարրերու գոյութիւնը պատարըուակ է եւրոպական միջամտութեան. պէտք է ընդ թրքացնել զանոնք»: (Տես՝ Ռ. Բինոն, «Ռեզվիլէ Տէ Տէօ Մանս», 1919, Սեպտեմբեր):

«Այնուհետեւ 1909ին թուրք պետերը դեռ պատրաստ չէին պաշտօնապէս ընդունելու քիւրճիստեան սկզբունքը: Հաւանարար կը վախճային կոստակցութեան արար, ալպանացի, չիւրտ, չէրքիզ, մահմետական անդամներէն:

Այսպէս Իթթիհատեան Օքումանիզմին եւ Բանթուրքիզմի քարոզած թուրք-ճիւրքեան մէջ մեծ տարբերութիւն չէր մնացեր: (էջ 53):

ԶԻԱ ԿԵՕԳ ԱԼՓԻ ՔԵՐԹՈՒԱԾԷՆ ՏՈՒՆ ՄԸ.—

Երակներու մէջ կու գան
Արձագանգներ պատմութեան
Խորէն եկող ձայներու,
Ո՛չ գիրքերու էջերուն,
Այլ երակիս գարկերուն,
Մէջ է որ ես կը կարդամ
Յազքանակներն հեռուոր՝
Ազնի ազգիս ընտրեալ:

Օգուց համ...
Կը ներշնչէ սիրտս ան,
Թուրքիա չէ՛ հայրենիքը թուրքերուն
Թուրքեստանն իսկ չէ՛... այլ հեռու՛ն
Երկիր մը մե՛ծ, յաւերժական
Թուրքա՛ն...:

Իսլամները (Սուլէյման Նազիֆ - չիւրտ) Հակառակ էին Թիւրքիստներուն: Անոնք ալ ունէին մամուլ եւ կազմակերպութիւն:

Համաթուրանականութեան դէմ էին նաեւ Ալի Բէմալ, Ջէլալ Նուրի, Լուիֆի Ֆիքրէթ եւ առհասարակ «Ահար» կոստակցութեան յարողները:

Ի՞նչ կը պահանջէին անոնք. «Թուրանական ժողովուրդներու ազատագրումը օտար լուծէ եւ միութիւնը քաղաքական մեծ ամբողջութեան մը մէջ, յենուելով ցեղաբանական, ընկերաբանական, պատմական, հոգեկան եւ քաղաքական տուեալներու վրայ:

«Անոնց քաղաք. պահանջը՝ Թուրքիոյ շուրջ համախմբուիլ որպէս ամենէն զօրաւոր Թուրանական ժողովուրդին շուրջ, ուժ տալ այդ նպատակին, վերածել անդիմադրելի կամքի: Թուրքիա պէտք է ըլլայ թրքական ժողովուրդներու համար այն, ինչ որ Բրուսիա եղաւ գերման ժողովուրդներուն համար, անոնցմէ ստեղծեց մէկ հզօր, միացած, Դաշնակցային կայսրութիւն»:

(էջ 104):

«1913ին Պայազիտի մէջ գումարուած Բանթուրքիստներու համոթողովը կ'որոշէր «Թուրք ժողովուրդի Արեւելեան եւ Արեւմտեան Հատուածներուն (Թուրքիա եւ Կովկաս) Միութիւնը եւ կը կնքուէր համազօրեակցութեան դաշինք՝ երկու կողմերու ներկայացուցիչներուն միջեւ»: (էջ 123):

Զարեանդի գիրքին մէջ շատ յատկանշական է Բանթուրքիզմի վտանգին նկատմամբ իր՝ (Դաշնակցական) «Մեր իմտելիզեցիլայի մասին» վկայութիւնը:

«Իսկ մեր Ինտելիգենցիան (մտաւորականութիւնը) կ'ուրախանար որ ազգային գիտակցութիւնը վերջապէս զարթներ էր Թուրքերուն մէջ... Կը յուսար որ «Օսմանեան Կայսրութեան Թուրք տարրը», սորվելով դնահատել ազգայնականութեան արժէքը, պիտի յարգէր զայն նաեւ «Օսմանեան Կայսրութեան միւս տարրերուն մէջ» եւ կազմակերպուելով ուրոյն դժերու վրայ, պիտի քաջալերէր նաեւ միւս ազգերու ինքնուրոյն կազմակերպութիւնը: Թուրանական Գայլին երեւումը կ'ողջունուէր մեր իտալիստներու կողմէ իբրեւ յուսատու նշան մեր ազգի թշուառ ճակատադրին բարեփոխութեան, իբրեւ քայլ մը դէպի Օսմանեան Փետերացիա»: (Զարեանդ, էջ 29):

Իթթիհատի պատերազմի կողքէն... «Մեր ժողովուրդին եւ հայրենիքին ազգային իտալիստ մեզ մէկ կողմէ կը մղէ խորտակելու Մասկովեան քշումին, ատով հասնելու մեր կայսրութեան համար բնական սահմանի մը, ուր պարփակուին, միանան մեր բոլոր ազգակից եղբայրները»: «... Մենք կը կոչուինք մեր ազգին, մեր կրօնին եւ մեր ազգային իտալիստ համար»:

Եւ հիմա՝ յստակ մեղադրանքը գիտակից եւ հեռաւոր Գաշնակցական Զարեանդին՝ այդ շրջանին «Օսմանցի եմք»... պոռացողներուն...

«Այս գիտակցութեան եւ այս վնասակարութեան հանդէպ ի՞նչ ոյժ կրնային ունենալ հայ քաղաքակրթութեան շեղումները: Ի՞նչ արձագանգ կրնար գտնել անոնց յուզիչ կոչը «յանուն հասարակաց հայրենիք»ի, ուրկէ վերջապէս տարագրուած էր ոչ-քուրքը (հայը) իբրեւ իրաւատէր քաղաքացի:

«Ի՞նչ արժէք կը ներկայացնէր անոնց յեղեղած «Օսմանցիութեան սկզբունքը», որմէ բուրք քաղաքական միտքը հրաժարած էր»:

Ակնունի, Զարդարեան, Շահրիկեան, Կոմս, Արմէն Գարօ, եւ այլ ղեկավարներուն է ուղղուած բողոքը...

«Մեր հաւատարմութիւնը, ինչպէս պէտք է սարկուցած ըլլար մեզ դարաւոր անցեալի դասն ու փորձաքննութիւնը, առանց յաջողելու ողորդել բուրքը եւ ամոքել անոր դաժան ցասումը... ԿԱՇ-ԿԱՆԴԵՑ ՀԱՅ ԻՆՔԻՍՊԱՆՏՈՒԹԵԱՆ ԹԵԻԵՐԸ ԵՒ ՄԱՏԵՆՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒԹԻՂ ԱՆԻՐԱԶԵԿ ԵՒ ԱՆՊԱՏՐԱՍՍ ՄՈՒԵԳՆԱԾ ԹՈՒՐԿԻՆ ԱՀԱՐԿՈՒ ՎՐԷՃԻՆԴԻՐՈՒԹԵԱՆ: (Առանց մեկնարանութեան): «Եւ երեւակայել, որ կան քաղաքական գործիչներ, որոնք դեռ չեն կարող կասկածիլ այն ատենուան բուրք կառավարութեան եւ իթթիհատի լիազօրներուն անկեղծութեան... ԲԱՅՑ ԱՆՑՆԻՆԻ»:

«...ԴԱԻՈՒԼ ԶՈՒՌՆԱՆԵՐԸ ՈՐ Կ'ԵՐԹԱՅԻՆ ՄԵՐ ՕՍՄԱՆՑԻՈՒԹԵԱՆ ԼՈՅԵԱԼՈՒԹԵԱՆ ԹԱՓՕՐՆԵՐՈՒՆ ԱՌՁԵՒՆՆԵՐ՝ ԵՂԱՆ ՍԻՐԵՆԱՆԵՐ (Ժողովուրդներ) ՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԵՑԻՆ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ ԿՈՐՍՏԵԱՆ ԱՆԱՊԱՏԸ»:

(«Ի՞նչ կը Մրադրեն Թուրքերը», Զարեանդ, 1926, էջ 140):

Երբ կը խօսինք Երիտասարդ Թուրքերու ազգայնամոլ զաղափարաբանութեան մասին կամ կը լսենք «բոլոր օսմանցիներ եւ Թուրքիոյ մէջ ապրողներուն», բացատրութիւնը, «Մեծն Թուրքիան ստեղծել փորձող Բանքուրքիզմի (Համաթրքութեան) զաղափարաբանութեան մասին ծանրանալը տեսլորդ չենք նկատել»:

Պոլսոյ Իթթիհատականներու զործերուն եւ խօսքերուն հետեւողներուն համար զաղափար մը չէր, որ «Մեծն Թուրքիա», «Օրօսմանակառնութիւն» աստիճանաբար կը զօրանար եւ անհանդուրժողութիւնը ծայրայեղութեան կը հասնէր ու Թուրքերու նկատմամբ: Երիտ. Թուրքերը կը կարծէին, թէ «մեմէ օսմանցի եմք» պոռացող ոչ-թուրք փոքրամասնութիւնները արդէն իսկ իրենց կողմէ «մարտուած» կրնային նկատել՝ Սահմանադրութեան յաջողող տարիներուն:

«... Վերահաստատել ձեռնկիրականներու, Թիմուրներու, նամանաւնդ Օղուզի Թուրք Կայսրութիւնը իր բոլոր կազմուածքով, մէջտեղ բերելու հուժկու զինուորական պետութիւն մը իր բանակով եւ իր ինքնուրոյն քաղաքակառնութեամբ եւ գրաւել ամբողջ Ասիան վերջն վար, որուն առջեւ պիտի զոզար ամբողջ քրիստոնեայ եւրոպան»:

(«Ջահալիք» 1919, Գրական հաւաքածոյ, Գահիրէ, Վահան Ենիգոմէան, էջ 65-67):

Պատմաբան Ե. Ղ. Սարգսեան կը գրէ.

«Ապա նոր զաղափարախօսութիւնը՝ Բանթուրքիզմը, կոչուած էր հեշտացնելու նրանց քաղաքականութիւնը Թուրքիայի Գրիտոնեական ազգաբնակչութեան բուն իրաւունքները: Բանթուրքիզմը զանազան կը թրջական չփոխիչի նոր ձևեր, երիտ. Թուրքերի ձուլման քաղաքականութեան գլխաւոր գնչքերէն մէկը»:

Քաղաքի շրջանէն Ազէօրէ Օղուզ Եուսուֆ Եղիպտոսի «Իթթիհատ» Թուրք ընդդիմադիր թերթին մէջ սկսաւ հրատարակել յօդուածաւարք մը «Ինչ քարգ սիւսէք» (Երեք տեսակ քաղաքականութիւն) խորագրով:

Պախարակելէ ետք Համիտեան ուժիմը, ան կը քննէր Թուրքիոյ վերականգնման ազգակները, կը վերլուծէր այն երեք տեսակ քաղաքականութիւնները, զորս կրնային ունենալ Թուրքիոյ վարիչները եւ կ'ընտրէր անոնց մէջէն մէկը: Համիտախօսութիւնը իրականացնել անկարելի կը գտնէր, քանի որ իսլամներ ազգային դիմադրի ունէին, երբ զարգանային՝ Օսմանեան կառավարութեան համար յենակէտ մը պիտի չըլլային:

Երկրորդ քաղաքականութիւնը Օսմանցիական քաղաքականութիւնն էր (որուն փարած էին Իթթիհատականները Սահմանադրութեան օրերուն):

Երրորդ ուղին բանթուրանիզմն էր:

Ենիգոմէան կը պնդէ, որ այդ շրջանին Համիտախօսութիւնը տրեւաբար կը կրօնամոլը:

Մամուլը, ընտր. հրատարակութիւնները, թատրոնը, ընկերակցութիւնները նոյնիսկ երաժշտութիւնը օգտագործուեցան Աղաւելի խմբակին կողմէ: Ետուով Թուրք Կայսրութեան ստուար մեծամասնութիւնը հակացու դէպի Բանթուրքիզմ: Անոնց շուրջ հաւաքուեցան պետական անձեր, ձեռակոտականներ, երեսփոխաններ, պաշտօնեաներ, համալսարանի իրոֆեսօրներ, ուսուցիչներ եւ ուսանողներ:

Քանի մը տարի ետք արդէն Իթթիհատի կեղծումը մասնաւորաբար կրթական եւ զինուորական նախարարութիւնները Թուրանիստներու ձեռքն անցած էին:

Ենթադրելով իր տայ Բանթուրքի գծի բրոնզե կանաչը ընդ թուրք մամուլին ցանկը:—

ՊՈՒՍՈՅ ՄԷՋ՝ Թուրան (մեծ օրաթերթ), Թիւրք Եւրոպա (կիսամսեայ), Թիւրք Տէրմէկի (պարբերաթերթ), Պիլկի (պարբերական), Եէնի Մէնաուա (չարաթաթերթ), Թիւրք գաւառը (չարաթաթերթ):

ԻՉՄԻՐԻ ՄԷՋ՝ Բէօյլի (օրաթերթ):

ԳՈՆԻԱՅԻ ՄԷՋ՝ Պապալըզ (օրաթերթ), Թիւրք Սէօգի (օրաթերթ):

Սոյն թերթերուն կ'աշխատակցէին Թուրանիստ գրողներ՝ Ռալիա Ձիա, Ահմէտ Էմին, Աքա Կիւնտիւզ, Ձիա Կէօք Ալի, Եագուպ Գատրի, Ճէլալ Սահիր, Եահանա Քեմալ, Իսմայիլ Հոզզը, Համտուլլահ Սուպհի, Քէօփրիւլի Չատէ Ֆուատ, Ահմէտ Ռեֆիք, Ալի Ուլի, Մէհմէտ Էմին (Ժանօթ բանաստեղծ) Սէյֆէտտին Կալիպ, Միհրատին, Ռալիա Էմին (կին գրող), Եւայն: Սոյն թերթերը կը ծախւէին աժան եւ պարզ ոճով գրութիւններ կը բովանդակէին: Իրենց իտէալը բացատրող գրքոյններու հեղեղ մը լեցուց հրատարակելու, որոնք գրեթէ ձրի կը բաշխուէին: Գրատուն մը հաստատուած էր, որ միայն Թուրանիստ գիրքեր կը ծախէր հասարակութեան: Թուրք դիցարանութեան անուած հեքիաթներ, առասպելներ, դիւցազներգութիւններ, վէպեր, Եւայն առատօրէն կը գտնուէին հոն:

Նոյնպէս մէջտեղ եկան դպրոցական դասագիրքերու շարքեր, բոլորն ալ թուրք ազգայնական ոգիով գրուած, որոնց մէջ յանուն համաթրքութեան նպատակը զոհուած էր միջոցին: Մանկավարժական որոշ մեթոտներ անտես անուած էին՝ գիրքերը Թուրանական իտէալներուն ծառայեցնելու համար:

Պոլսոյ եւ գաւառի բոլոր դպրոցներուն մէջ մուտք գտած էին «Միլի» (ազգային) ընթերցարաններ, որոնց հեղինակները յայտնի Թուրանիստներ էին ... Ինչպէս՝ Քէօփրիւլի Չատէ Ֆուատ:

Ստորեւ Թուրք Օնալի քայլերը:

... Մեմէ կ'ուզեմք ամբողջ աշխարհին տիրանալ, Այլեւս մեր տաճարը «ԹՈՒՐԻՔ ՕՃԱՂԸ»ն է, Եւ մեր «ՔէԱՊէ»ն ալ բարձր ու յուսաշող՝ — Թուրանն է միակ:

Թատրոններուն մէջ հեշտարոյր տրամներուն յաջողեցին ազգային պատմական ներկայացումներ: Թուրք պատմական կեանքը սկսաւ ներկայացուիլ հանրութեան իր խաղաներով, սուլթաններով, իրենց ժամանակի տարազներով, բարբերով, խօսելու եւ հրամայելու ձեւերով, «հերոսական անցեալ» մը կը ցուցադրուէր միամիտ ամբոխին...:

Թուրանիստ մը ներկայացումէն առջ կը ներկայացնէր նիւթը, ոգին եւ կը դիւթէր ներկաները... նոյնպէս՝ մեղկ երաժշտութեան եղանակներուն յաջողեց կրակ ու բոց ժայթքող երգերու շարանը...:

Իսկ Բանթուրքիստ Թեքին Ալիի խօսքերով «Մեծ Թուրանը կը ստեղծուի հրով ու սրով»: Ուրիշ Բանթուրքիստներ կը յայտնէին. «Ազգը կ'անի պատերազմի ժամանակ», «Ցեղերու պայքարը անխուսափելի է», «Մեր ցեղի (քրֆուքիւն) բարօրութեան համար մեմք ստիպուած կ'ըլլանք երկար պատերազմի», «Մեր ազգի ամենափոքր իսկ բարօրութեան համար կարելի է գոհաբերել ամբողջ աշխարհի շահերը», «Մի մտածէ՛ք մարդկութեան մասին, ի՞նչ ունինք մեմք ա-

նոր հետ...»: — Այս բոլորը կը վկայեն, կը գրէ Փրոֆ. Ե Սարգլու-եան իր գրքի էջ 102ին մէջ, Թուրք յետադիմականներու ծայրայեղ խաւարամոլութեան մասին:

296

Բանթուրքիստներու պաշտօնական օրկաններն էին Սելանիկ լոյս տեսնող «Կէմ Գալմէր» (Երիտասարդ գրիչներ) եւ Պոլսոյ մէջ հրատարակուող «Թիւրք Եւրոպա» ամսագիրը: Ասոնք կը ձգտէին արդարացնել Իթթիհատի արտաքին «տարածողական» քաղաքականութիւնը:

Ինչ կը վերաբերի ասոնց ֆինանսաւորման, ապա անոնք բացայայտօրէն աջակցութիւն կը ստանային կառավարական հիմնարկներէն:

Վազֆի եւ ներքին գործերու նախարարը, Շէյխ իւլ Իսլամը բրոնզեկանտի հաշուոյն շատ խոշոր գումարներ կը տրամադրէին:

«Ժեմ Թիւրք» թերթը այդ բոլորը ազատագրելու մասին կը գրէր դեռ 1910ին, «Պիտի փրկուին Օսմանեան այն հողերը, որոնք նուաճուած էին մեր նախնիների արիւնով եւ կորսուած մեր հայրենիքի կողմէ»: Իսկ «Միլի» (Չէնք) թերթը 1911ի Մայիսի կոչ կ'ողջէր՝ պատերազմ սկսիլ Ռուսիոյ դէմ: «Մենք կը զոհարենք Անատոլիոյ բոլոր գումարտակները Ռուսաստանը խորտակելու համար», կը գրէր թերթը:

Բանթուրքիստական շարժումն աջակցութիւն կը ստանար նաեւ արաբլոյսնական պուրժուա-ազգայնական «Մուսավաթ» կուսակցութեան գործիչներու, Տաղատանի ազգայնամոլներու, ինչպէս նաեւ Հիւսիսային Կովկասի ազգութիւններու պուրժուական տարրեր խմբաւորումներու կողմէն:

«1911ի տազնապը խորհրդարանի լուծումը յառաջ բերաւ եւ Երիտ. Թուրքերը վախցան որ քրիստոնեաները մի գուցէ իրենց աննպաստ ըլլան, նորէն Դաշնակցութեան մտեցան, անոնց հետ համաձայնութիւն մը կնքեցին եւ խոստացան 19 աթոռ (Երեսփոխանական — Հ. Գ.) շուրջ 2 միլիոն հայ ազգարնակչութեան թիւին հետ համեմատութեամբ: Երկու կուսակցութեանց կողմէ ստորագրուած յայտարարութիւններ ցրուեցան եւ Կայսրութեան ամէն կողմէ Դաշնակցականները աշխատեցան ի նպաստ Երիտ. Թուրքերուն (Իթթիհատին): Երբ անոնք կրկին իշխանութեան տիրացան, գործերը անանկ կարգադրուեցան որ 19 աթոռներ չունեցան հայերը եւ նախկին 12 աթոռին տեղ 9 աթոռ ունեցան... ոյս բոլոր յուսախարութեանց հակառակ, Դաշնակցականները հաւատարիմ մնացին Երիտ. Թուրքերուն»:

«Ո՛չ Տրիպոլի (Լիպիա) պատերազմին եւ ոչ Պալքանեստն պատերազմին, Դաշնակցականները մտքերնէն չանցուցին օգտուիլ Կայսրութեան տկարութենէն»:

(Տես՝ «Հայկական Չարդերը», Տոքթ. Եոհանէս Լեփսիւսի տեղեկագիրը, 1965, մատենաշար «Ազգակ»ի էջ 211-212):

«Սելանիկի 1911ի Հոկտեմբերի Իթթիհատի Համագումարը Բանթուրքիզմի «գործնական» հետեւողական դիժը ցոյց կու տայ»:

Ստորեւ Լեփսիւսի գրքի էջ 265ի վկայութիւնը առ այդ:

«Հարկ է արգիլել խորհրդարանի մէջ կուսակցութիւններու կազմութիւնը եւ երկրին մէջ նոր ազատական գաղափարներու տարածումը: Թուրքիա պէտք է որ էսպէս իսլամ երկիր մը դառնայ, եւ իսլամական գաղափարներն ու ազդեցութիւնը պէտք է որ գերակշռութիւն մը ունենան այնտեղ: Կրօնական ուրիշ ամէն բրորական սէտք է ճնշուի: Կայսրութեան զօրութիւնը կախում ունի Երիտասարդ Թուրք կուսակցութեան զօրութենէն, եւ բոլոր հակամարտ գաղափարներու ճնշումէն»:

Թէքին Ալի Բուրքիզ և Բանքուրքիզ (Անզլ.) գրքին էջ 46ին մէջ կը գրէ. «Եթէ Թուրքերը այսօր կը հանդիսանան Գերմանացիներու Դաշնակիցները, ապա աստիկա համաշխարհային պատմութեան հասարակ բարեկամական քմահաճոյք չէ, այլ զէնքի հազարամեայ բարեկամութեան գիտակցական արտայայտութիւն: Երկու ժողովուրդները աւելի քան հազարամեակի ընթացքին կանգնած են ընդհանուր թշնամի սլաններու դէմ»:

Իթթիհատը կ'ըսէր. «Մեր մասնակցութիւնը Ա. Համաշխարհային Պատերազմին կ'արդարացուի մեր ազգային խտէալով: Մեր ազգի խտէալը... կը տանի մեզ դէպի Մոսկովեան մեր քշնամիի ոչնչացումը, որպէսզի անոր շնորհիւ հաստատուին մեր կայսրութեան բնական սահմանները, որոնք կ'ընդգրկեն ու կը միաւորեն մեր ցեղի բոլոր սիւղերը: (Նոյն՝ էջ 86):

Երևո. Թուրքերը կը յաւակնէին յատկապէս Ռուսաստանէն գրաւել Կովկասը, զոր կը համարէին Թուրանի նախադուռը, Խրիմը, Պովոլթիէն, Միջին Ասիան եւ ապա Իրանի ու Աֆղանիստանի վրայով շարժիլ դէպի Հնդկաստան ու Զինաստան:

Զէ՛ որ Իթթիհատը կ'ըսէր. «Մենք պէտք է ձգտինք նոր նուաճումներու եւ փոխ-հատուցման Արեւելքի մէջ Արարատի ուղղութեամբ: (Ե. Սարգիսեանի գիրքը, էջ 100, Զ. Արզումանեանի գիրքը, էջ 141):

Գաղմի Գարապեղիի «Ճիշտ Հարպընա Նասըլ Կիրտիք...» հատորին (1938, Պոլիս) էջ 29ի համաձայն՝ Թուրքերը Կովկասեան ճակատը կը համարէին Թուրանի ճամբայարի եւ անոր համեմատած միւս ուղղութիւններէն երկրորդական նշանակութիւն ունէին:

Ըստ ուսուական աղբիւրներու՝ 1911ին էրզրումի, Վանի, Պայաղտի, Դամակոսի Ռուսական հիւպատոսները եւ Կովկասի զին. իշխանութիւնները կը հազորդեն, որ Թուրքեան ուղղակի բնոյթի միջոցառումներու կը դիմէ Անդրկովկասի ու Պարսկաստանի սահմանազօծելու վրայ: 1912ի մէկ տեղեկագրին մէջ ըսուած է, թէ Թուրքերը Վանի շրջանին մէջ կ'աւելցնեն զինուորներու թիւը, Պարսկական սահմանազրուի մօտ՝ նոյնպէս եւ ջերտերը կը գրգռեն պատերազմի ի նպաստ:

ԲԱՆԹՈՒՐԳԻԶՄԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՇՐՋԱՆԻՆ

Բ. Համաշխարհային պատերազմին Թուրքիա «չէզոք» դիրք բռնեց, որովհետեւ Կարմիր Բանակը կարծուածէն աւելի զօրաւոր դուրս եկաւ, ջախջախելով Սթալինկրատի մէջ Ֆոն Բալլուսի 300 հազարնոց բանակը 1943ի Յունուարին... աւելի զօրաւոր հարուած տրուաւ 1943ի Յունիսին Գուրաքի մէջ՝ գերման զօրքերուն: Պաքու հասնելու Հիթլէրի երազը օդը ցնդեցաւ եւ 1943ին նահանջեց Գերման Ա. զօրաբանակը Կովկասէն...:

Պատերազմի աւարտին Կարմիր Բանակը ձեռք ձգեց «Գերմանիոյ Ա. Գ. Նախարարութեան փաստաթղթերը»: Սոյն 1941-43ի շրջանի գերման եւ Թուրք փոխ-յարաբերութիւնը պարզաբանող փաստաթուղթերը լոյս տեսան Խ. Միութեան Ա. Գ. Ն. արխիւային վարչութեան կողմէ՝ ուսերէն՝ ապա 1947ին Հայպետհրատի կողմէ հայերէն:

Մեզ հետաքրքրող Բանթուրանիզմի մասին հոն տրուած փաստաթուղթերը աւելորդ չենք նկատեր տեղաւորել այս գրքին մէջ, որպէս ազդարարութիւն «տաք-գլուխ» այն հայերուն, որոնց մօտ՝ մեր ժողովուրդի ապահովութիւնն ու մեր ներկայ պետութեան գոյութիւնն ու պահպանութիւնը, այնքան ալ մտահոգութեան առարկայ չի դառնար եւ որոնք կրնան տարուիլ դեռ փոքր շրջան մըն ալ դուրսը՝ ներսէն նախընտրելու յիմարութեամբ... մոռնալով երէկի բանթուրքիստներուն կացինը մեր ճիտին...:

Թիւ 10 փաստաթուղթ՝ 5 Օգոստոս 1941ին Պոլսոյ ղեսպան Ֆոն Բարէնի կողմէ ղրկուած՝ Գերման Ա. Գ. Նախարարութեան. — Բովանդակութիւն — Բանթուրանական շարժում: «Հաւատեցեալ մի վստահելի անձնաւորութիւն հազորդու է նկատի ունենալով գերմանացիների յաջողութիւնները Ռուսաստանում, թրքական կառավարական շրջանակներն աւելի ու աւելի են սկսում զրադուել իրենց այն հայրենակիցների վիճակով՝ որոնք գտնուում են առաքրական սահմանի միւս կողմը եւ առանձնապէս ատրպէյճանական թուրքերի վիճակով: (*)

«Այդ շրջաններում, ըստ երեւոյթին, հակաձէտ են վերադառնալ 1918 թ. դէպքերին (20-30 հազար հայերու շարքը Պաքուի մէջ — Հ. Գ.) եւ ուղում են իրենց միացնել այդ մարզը, յատկապէս Պաքուի ամենաարժէքաւոր քարիզի հանքավայրերը: Այս նպատակի համար, որոշ անձերից, որոնք Ապտիւլ Համիտի ժամանակ արդէն մասնակիորէն կատարում էին նման ծառայութիւն, կազմուել է մի իւրատեսակ «Մասնագէտների կոմիտէ», որին յանձնարարուում է հաւաքել այս հարցին վերաբերող ամբողջ նիւթը, եւ ինչպէս երկրի ներսում՝ արտասահմանից գաղթած իմիկրանտների շրջանում, այնպէս էլ արտասահմանում, առանձնապէս Իրանի ատրպէյճանական մասում, ՀԱԻԱՔԱԳՐԵԼ ՆՈՐ ԹՈՒՐԳԻԱՆ ԹԻՒՐԳԵՐՈՎ ԲՆԱԿՈՒԱՍ ԱՅՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՌՈՐԵԼՈՒ ԿՈՎՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՆ ՆՐԱՆ ԱՐԵՒԵԼՔԻՑ ԸՆԴՀՈՒՊ ՄԻՆՉԵՒ ԿԱՍՊԻՑ ԾՈՎԸ»:

«Այս խմբի ղեկավարը Սթամպուլի երեսփոխան Շիւքրիւ Ենի Պախջան է (որն ինքնիրեն համարում է Թաթար, թէպէտ նրա ընտանիքն արդէն մի քանի սերունդ ապրում է Թուրքիայում):

«Այնուհետեւ այստեղ են մտնում եւ անոր կը գործակցին Նուրի Փալան, Փրոֆ. Զէքի Վելիտէն (Պաշկիր) եւ Ահմէտ Ճաթթարը (Խրիմցի):

«Այս խմբին պէտք է դասել նաեւ Քապուլում թրքական ղեսպան Մեմտուհ Շեվէթիմ, որ վերջերս մասնակցում էր Անդարայում տեղի ունեցած բանակցութիւններին: Լինելով աստիճանաւոր, նա հազիւ թէ կը կարողանայ այլ դիմ բռնել, քան կառավարութիւնը... նա համարում է Արեւելեան Թուրքերի իսկական բարեկամը:

Ինչ վերաբերում է Արեւելեան թրքական ժողովուրդներին՝ բացի Ատրպէյճանից, այսինքն Պովոլթի Թուրքերին, Թաթարներին, Թուրքմէններին եւ այլն, ապա թրքական կառավարական շրջանների ԱՅԺՄԵԱՆ ԲԱՆԵՐԸ ՅԱՆԳՈՒՄ ԵՆ ԱՅՍ ԹՈՒՐԳԵՐԻ ՄԻԱՌՈՐՄԱՆԸ ՍԵՓԱԿԱՆ, ԱՐՏԱՔՈՒՍՏ ԱՆԿԱՍ ԱՐԵՒԵԼԱ-ԹՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ, որտեղ, սակայն, Արեւմտեան թուրքերը (Օսմանցի) կը խազան «խորհրդատուների» վճարակաւ քաղաքական եւ կուլտուրական դիրք:

Ապա փաստաթուղթի համաձայն, Խ. Միութեան սահմաններէն ներս ապրող Թուրքերու համար Օսմանցիները գտարիւն Թուրքեր չեն... չէ՛ որ վերջին հարիւրամեակներուն արջունիքի եւ «կայսրութեան բարձր աստիճանաւորութիւնը միայն, աննշան մասով է բաղկացած Թուրքերից»: Այն յաջողարար հունգարական ծագումից էր, ալպանացիներից եւ ապա, Ապտիւլ Համիտի օրով, չէրբէկներից ու արաբներից, բայց երբեք Թուրքերից չէր:

(*) Բոլոր ընդգծումները մերն են — Հ. Գ.):

«... Թաւրիզի բնակիչները նոյնպէս, Ատրպէյճանական Թուրքերը եւ հան- դիսանում եւ իրենց զոլում են որպէս Պաքուի Թուրքերի արինակցական ազգա- կիցներ: Առանձնապէս անհրաժեշտ է նշել, որ Թաւրիզում այս շարժման առաջու- տար ղեկավարներից մէկը ինքը իրանական զորավար-նահանգապետն է»:

«Շարժման (Բանթուրքիստական) ղեկավարն այժմ, ինչպէս եւ առաջ, հա- մարում է Մէհմէտ Էմին Ռասուլ-գատէն (Մուսավաթ պարտիայի հիմնադիրը. Թուսավաթ նշանակում է հաւասարութիւն): Նա յարեց Լեհական «Պրոմէթէ»ի շարժման, որը ոչ այլ ինչ էր, քան Լեհական գլխաւոր շտապի ենթարածինը: Գլխա-ւոր շտապի ֆոնտերով (այսպէս կոչուած Բեյլուտսքիի ֆոնտերը) որոնք փոխադ- րուել էին Չուիցերիա, որ Ռասուլ-Չատէն ապրում էր 1939 թ. տեղի ունեցած Լե- հաստանի անկումից յետոյ էլ: 1940 թ. քաղաքական յանձնարարութեամբ նա եղել է Սիկորսկու մօտ Լոնտոնում: Իսկ այս ուրիշ Լեհական էմիգրանտների հետ ապ- րում էր Բուխարեստում, սա խոշոր քաղաքական գործիչ է, եթէ ուշադրութեան շահանք ֆինանսական կողմէ: ... Նրա համահարգը Թուրքիայում Միքա Պալան է, ներկայումս նա Թրքական բանակ է կանչուած եւ որպէս շարքային զինուոր ծա- ուայում է Սթամբուլի մօտերքում: Վստահուած անձի կարծիքով այդ երկուսի հետ էլ պէտք է աշխատանք տանել...»:

«Յ. Գ.— Անգարայում Արեւելա-Թուրքական հարցերի վերաբերեալ կառա- վարութեան վստահելի անձերի բուլին է պատկանում նաեւ քաքարական ծագում ունեցող Զօր. Հիւսէյն Հիւսնի Էմիր Էրէլէքը»:

Փոն Բարէն

Վեյցգիկերը(*) Ա. Գ. Նախարար Ռիպէնտորքին (Թիւ 11 վա-ւերաթուղթ 5 Օգոստ. 1941, Պերլին, Թիւ 494):

«Թրքական դեսպանն այսօր ինձ ներկայացրեց դեսպանութեան իր նոր խորհրդականին: Շուտով նա խօսակցութիւնն ուղղեց խոր- հըրդային երկրամասի վրայ ապրող քրքական ծագում ունեցող սահ- մանամերձ ցեղերի վերաբերեալ քեմալին: Ան ուշադրութիւն հրա-ւիրեց այս քրքական ցեղերի միջոցով հակա-խորհրդային պրոպա- կանտա մղելու հնարաւորութեան վրայ: Յետոյ նա բաւական ան- կեղծօրէն խօսում էր այն մասին, թէ հետադայում կարելի է կով- կասեան ժողովրդներին միաւորել մի պուֆերային պետութեան մէջ եւ ակնարկեց, որ կասպից ծովից դէպի արեւելք ճոյնպէս կարող էր մի ինքնուրոյն քրքական պետութիւն ծագել»:

«Սուրէվ Գերեթէն (Պերլինի Թուրք դեսպան) Թուրքիկ կերպով յիշատա- կեց այս մասին ոչ-պաշտօնական զրոյցի թոնով: Բայց նրա նկատողութիւնները ոչ մի կերպ պահատական չէին, որովհետեւ նրանք լիովին համընկնում են Պարոն Փոն Բարէնի հետ Ալի Ֆուատի զրոյցում արտայայտած կարծիքներին: Գերեթէն շուշացրեց շօշափել հիմնական հարցը, բնութագրելով Պաքուն որպէս մի քաղաք, որտեղ ամբողջ բնակչութիւնը թրքերէն է խօսում»:

Թիւ 12 փաստաթուղթ, 10 Նոյ. 1941, բնարանը գերման Ա. Գ. Նախարա-րութեան.—

«... Ալի Ֆուատը (Թրքական զորավար) այն հետեւութիւնն է արել, որ Ֆիւհ-րերը (Հիթլէր) որքան կարելի է արագ հասնելու է կասպից ծովին եւ կովկասին»:

(*) Հիթլերի Ա. Գ. Նախարարութեան Պետ. Կարտուղար:

Թիւ 14 փաստաթուղթ 1941 Նոյ. 24, Խենտիզը (Գերման Ա. Գ. Ն. Ի աշ-խատակից) հրդմանստորֆին եւ վերմանին.—

Գերման Գոնու. Հարունը (մասնազէտ Թրքական հարցերու, Պոլիս 17 տարի պաշտօնավարած), ցանկութիւն կը յայտնէ իմանալ, Գերմանիոյ զիբը Բանքու-րանիզի մասին: Թրքական սպայակոյտի պետ Ֆիզիկ Չաքմաք եւ Գերեթէ (Պեր-լինի Թուրք դեսպան) «երկուքն էլ յայտարարում են, որ նրանք անձնապէս վե-րին աստիճանի շահագրգռուած են բանթուրքիզի հարցով, «քեպէտ եւ հնարաւորու-թիւն չունեն պաշտօնապէս նրա օգտին հանդէս գալ»: Չաքմաք յայտարարեց որ «Թու-րանական հարցի հիման վրայ կարող է կազմաւորուել յարաբերութիւն Թուրքիոյ ու Գերմանիոյ միջեւ: ... Նա (Չաքմաքը) մեծ համակրութեամբ է հետեւում քուրդական ժողովրդների հանդէպ ունեցած մեր վերաբերմունքին: Ռազմագէտնե-րի շրջանում տարուելիք աշխատանքի համար նա պատրաստ է մարդիկ դնել մեր տրամադրութեան տակ»:

Փոն Բարէնի Գերման Ա. Գ. Նախարարութեան զրկած փաս-տաթուղթին մէջ (5 Յունուար 1941, Անգարա):

«Թուրքիոյ նախագահի հետ ունեցած տեսակցութեան տաթիւ «նշմարում էին հաւաստիացումներ, թէ Թուրքիան վերին աստիճանի շահագրգռուած է ռուսական հսկայի ոչնչացումով, եւ թէ ունէ Անգլո-Ամերիկեան ճնշում Թուրքիան Գերմա-նիոյ դէմ չի կրնար հանել»:

Թիւ 17 վաւերաթուղթ, Վերման՝ Վարլիմոնտին, (23 Յուն-ուար, 1942, Պերլին):

«Առանձնապէս ճիշդ է այն պնդումը, թէ Թուրքիայի համար անտարբեր չի կարող լինել այն ամէնը, ինչ մենք ձեռնարկում ենք արարական եւ ԹՈՒՐԱՆԱ-ԿԱՆ հարցերում»:

Զօր. Վարլիմոնտին (Գերման Զին. Պետ.) 2 Դեկտ. 1941ին.—

«... Զօր. Էրէլէքը բորթականտ կը ծաւալէ, որին նպատակն է հետաքրքը-րութիւն զարթեցնել ԹՐԳԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ, բորթականտա, որը ցոյց է տալիս, թէ ուր են մղում Թրքական կառավարութեանը, կամ ուր ինքը թոյլ է տալիս իրեն մղել»:

Փոն Բարէնը Ա. Գ. Նախարարութեանը.—

Անգարա, 13 Մայիս 1942ին

«Այսօր ինձի այցելեց Զօր. Միրսէլ Պաքու Փաշան եւ պատմեց, որ երկար զրոյց է ունեցել Մարշալ Չաքմաքի հետ: Վերջինս հաւաստիացրել է, որ քաղա-քացիական այն անձինք, որոնք այս հարցում հետաքրքրում են մեզ, անյապաղ թոյլտուութիւն կը ստանան Գերմանիա մեկնելու: ... Թրքական բանակում կան զգալի բուռով կովկասեան եւ առանձնապէս ատրպէյջանական նախկին սպաներ, ուրով հրաշալի գիտեն երկիրը: Եթէ գործողութիւնները յետադայում յաջողու-թեամբ զարգանան, նա, եթէ մենք այդ ցանկանանք, սպաներին արձակուրդ կըտայ»:

Հարունի հետ Խենտիզի ունեցած զրոյցի գրառումը — Պեր-լին, 1 Յունիս 1942ին.—

«... Ինչ վերաբերում է «թուրանական հարցին, ապա նա իր անձնական փորձի եւ Թրքական Խորհրդարանի Երեսփոխանական շրջաններից բխող տեղեկու-թիւնների հիման վրայ, ինչպէս նաեւ Մարշալի կողմից, հաւաստիացրեց, հակա-ռակ պաշտօնական յայտարարութիւններին, ինչպէս նաեւ Անգարայում, մեր դես-պանի զեկուցագրերին, ՄԵՇՆ ԹՈՒՐԳԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՈՉ ՄՈՒՍՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ, ԱՅԼԵԻ ԱՄԲՈՂ ԺԱՄԱՆԱԿ ԱՄՐԱՊԵՆԴՈՒՄ Է ՈՒ ԱՒԵԼԻ ԵՒ ԱՒԵԼԻ ՄԵՇ»:

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ Է ԶԵՌՔ ԲԵՐՈՒՄ: Ի միջի այլոց իրերի իսկական գրութեան վրայ լոյս է սփռում այն փաստը, որ Վարչապետը կարգադրութիւն է արել Սահմանադրութիւնից հանել բոլոր օտարազգի բռները եւ ընդամին ո՛չ միայն Թուրքիայի հանդէպ, այլ գլխաւորապէս միւս թրքական ժողովրդների հանդէպ տածած ուշադրութիւնից դրդուած»:

«Իմ հարցին, թէ հապա ի՞նչպէս է նա պատկերացնում դէպքերի յետագայ զարգացումը, Դոկտ. Հարունը պատասխանեց, թէ նկատի է առնում ո՛չ թէ այս երկրներին նուաճումը Թուրքիայի կողմից, այլ Դաշնակցային պետութեան ստեղծումը Պիտարքի կայսրութեան նմանութեամբ: ԲԱՅԻ ԱՆԱՏՈՒԻԱՅԻՑ՝ ՆՐԱՆ ՄԷՋ ՊԷՏՔ Է ՄՏՆԵՆ ԿՈՎԿԱՍՏ ԵՒ ՎՈՒԿԱՅԻՑ ԱՐԵՒԵԼՔ ԱՊՐՈՂ ԹՐՔԱԿԱՆ ԺՈՂՈՐԴՆԵՐԸ»:

Թիւ 27 փաստարար

Փոն Բարէն Ա. Գ. Նախարարութեան,

Անգարա, 27 Օգոս. 1942ին.—

«Սարաճողուն «իբրեւ բուրբ, նա բուռն կերպով ցանկանում է Ռուսաստանի ոչնչացումը»:

«Թէ ի՞նչ է որոշել Հիթլերն ազգային փոքրամասնութիւններով բնակեցուած մարզերու ապագայ կառուցուածքի մասին, իրեն յայտնի չէ: Այդ մարզերի բնակչութեանց գերակշռող մեծամասնութիւնը բաղկացած է թրքական ժողովրդներից, եւ այդ պատճառով Թուրքիան օրինական շահ ունի այդ հարցի լուծման մէջ... որ այդ երկրներին երիտասարդներ զրկուին թրքական համայնարան...»:

(Տես՝ մանրամասն «Գերմ. Ա. Գ. Մինիստրութեան Փաստաթղթերը», պրակ 2, «Գերմանական Բաղաձայնութիւնը Թուրքիայում» (1941-1943) Հայկ. տարած, Երեւան, 1947, թրգմ. ուսուերէնէ):

Հարկ կա՞յ խօսելու Ալփաւրան Թիւրքէններու այսօրուան համաթրքական շարժումներու, զիրքերու եւ թերթերու ալ մասին... ցոյց տայու համար, թէ մեռած չէ Էնվերներու եւ Իթթիհատի Մեծն թուրքացի ծրագիրը...:

1909Ի ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅՈՑ ԱՂԷՏԻՆ ՇՈՒՐՋ

Գ. Ի. Բ. ՄԱՍ

1909ի Ապրիլ 1ին սկսող ապա 12ին շարունակուող ջարդը իր բոլոր պատասխանատուներով ներկայացուած է Էտիքէն ընտրուած Իթթիհատական Յակոբ Պապիկեանի կողմէ՝ որ զրկուած էր Ատանա՝ Երիտ. Թուրքերու կողմէ կազմուած Քննիչ Յանձնախումբի որպէս անդամ: Իր տեղեկագիրը երկու օրինակով պատրաստուած էր, մէկը կառավարութեան զրկուեցաւ՝ միւսը Մուրատի (Հ. Պոյաճեան) կողմէ իր տունէն լուսանկարուած զրուեցաւ Պատրիարքարանի տրամադրութեան ներքեւ, ապա «Ատանայի Եղեռնը» խորագրով հրատարակուեցաւ: (*)

(*) «Ատանայի Եղեռնը», Տեղեկագիր Յակոբ Պապիկեանի (Օսմանեան Երեսփոխանի Էտիքէնի) Ֆրանսիա Տը Փրէսանսի յառաջաբանով, տպուած Կ. Պոլիս, 1919ին, 48 էջոց գրքոյկ մը:

Հայեր աղաղակ բարձրացուցին, երբ Յ. Պապիկեանի որպէս Քննիչ Յանձնախումբի անդամ նշանակուելը իմացան... Ձէ՞ որ Իթթիհատի շարքային անդամ էր ան... Երբ Պոլիս կը վերադառնայ «սեւ ձեռքեր կուգան խորհրդաւոր մահով մը վերջ տալու իր կեանքին»: Ժէօն Թիւրքերու կողմէ թունաւորուելով կը մեռնի 1909 Յուլիս 20ին: Կը թողու 4 աղջիկ եւ 2 մանչ զաւակներ:

Յ. Պապիկեան, Ֆայիք Պէյ, Յարութիւն Մոստիշեան, Երեսփ. Եռուստֆ Քեմալ 16 Մայիս 1909ին, կը հասնին Ատանա: Ան կը շքուած անուամբ ջարդի մասին մանրամասնութիւններ քաղելով հայ թէ թուրք պատասխանատուներէն «Օսմ. Պետութեան հաշտոյն ամօթ» կը նկատէ այդ Պապիկեան:

«Համիտը կը զրէ, դէթ կը խնայէր տղոց, կիներուն, հիւանդներուն, կողոպուտի եւ քանդումներու մասին տեսակ մը սեղմում կը դնէին: «Ատանայի մէջ ողջ ողջ այրած են հիւանդները եւ վիրաւորները: Գիւղերու եւ շրջակայի ագարակներուն, Միսիսի եւ Համիտի գաղանթներուն՝ ինչպէս նաեւ Հասան Պէյլիէն իրբեւ հարստութիւն եւ կալուած ոչինչ կը մնայ... Ատանայի Արդարեան Վարժարանին մէջ տեղաւորուած, շարժելու անկարող 150 վիրաւորներ՝ շէնքին հրդեհումին ատեն ողջ ողջ այրուած էին: Ատիկա ամենէն կսկծալի մանրամասնութիւններէն մէկն է: Շատ մարդիկ եւս մահը դտած են բոցերուն մէջ: 17 հոգի, երկուքը ամերիկեան միսիոնար, մէկը բողոքական հոյիւ, — անգլէն, անպաշտպան եւ ո՛չ մէկ բանէ դանդատող, զորս այրած են Օսմանիէի հայ եկեղեցիին մէջ՝ եկեղեցական սալաժամուռի ժամանակ: (էջ 15): Սուրիանիներ՝ 400, Սուրիան-Կաթոլիկներ՝ 65, Քրիստիաններ՝ 200, Յոյներ՝ 200, Հայ-Բողոքական՝ 655, իսկ Հայ-Կաթոլիկներ՝ 200 զոհ տուած են...:

Ըստ Ներքին Գ. Ն. ին ուղղուած Բ. Դրան Պատուիրակ Ֆայիք Պէյի, Մոստիշեանի եւ Մերսինի կառավարիչ Էսատ Բէուֆ Պէյի՝ «սպանեալներու քիւր մօտ 15 հազար հոգի է, 30 հազար փոքրեր անպաշտպան եւ առանց նիւթական միջոցներու կը մնան»: Ատանայի շրջանի զոհերուն թիւը 20.000է պակաս ըլլալու չէ, քաղաքին 5էն 1ը շէնքերուն այրած է, ըստ Ձէյնի Փաշայի: Հրդեհուած կալուածներու համապատասխան 96 հազար Օսմ. ոսկի կը դնահատուի: Ապահովագրական Ընկերութեանց հատուցանելի վնասներու զուժարը կը հասնի 750 հազար ոսկիի... համոզուած եմ որ 3 միլիոն Օսմ. ոսկիէն պակաս չէ...: (էջ 21):

Պոլսոյ 31 Մարտի հակա-յեղափոխական շարժումը սկսելուն հետ միասին, միեւնոյն օրուան ցերեկէն վերջ, անմիջապէս որ հեռագիրը արձագանդը տուաւ այն դէպքերուն, որոնց մայրաքաղաքը թատր հանդիսացած էր, Ատանայի մէջ խոտուութիւնները պայթեցան:

«Յաջորդ օրը Չորեքշաբթի, այս խոսվածքի մեջ կը փոխուէին շարժերու՝ որոնք տեսցին երեք օր եւ վերջացան Ապրիլ 3ին: Յետոյ Ռուսիայի եկած վաշտերուն հասած իրիկունն իսկ (Կիրակի 12 Ապրիլ), անոնք կը վերսկսէին, երեքշաբթի վերջ գտնելով (էջ 22): «Ըստ Պապիկեանի, նոր քէթիմէն դժգոհ տարրեր նոր քէթիմէն դէմ յաջողութեամբ յարձակելու համար կը մտածէին նախ հայերը բնաջերմը: Ամբոխին սգիտութեան եւ միամտութեան օգտուելով, ամէն կողմէ հայերուն դէմ տարածայնեցին գրպարտութիւններ՝ որոնք ժողովրդի ամենէն փափուկ գագուտները վիրատրելու բնոյթն ունէին»:

Ապա պատասխանելով Ատանայի վալի ձեւատ Պէյի, կ'ընդունին որ հայեր զէնք զնած են, սակայն 12 հազար ներմուծուած զէնքին մեծ մասը թուրքեր զնած են:

«... Եթէ հայեր անջատողականութիւն սնուցած ըլլային, անոնք 31 Մարտի Շերիաթական ապստամբութեան շրջանին այդքան մեծ սիրով պիտի շարժուէին Սահմանադրութեան նոր կարգերը»:

«Վերջացնելէ առաջ ստիպուած եմ ամենախոր ցաւով աւելցնելու որ, իթթիհատ վէ թէրաքը Կուսակցութեան անդամները, Ատանայի վայրազ եղբերակութեան կազմակերպման եւ գործադրութեան մասնակցած են: Այս իրողութիւնը հաստատուած է նահանգին զանազան տարրերուն կողմէ, հիւպատոսներէ, ամերիկացի միսիոնարներէ եւ Լատին քահանաներէ:

«Բաց աստի օտար թերթերը արձագանգը եղած են այն սարսափներուն, եւ հասարակաց կարծիքը զրեթէ համոզուած է որ՝ անոնք զործն են իթթիհատ եւ թերաքըրին»:

«Ներկայ ժամուս, երբ կառավարութիւնը, եթէ կարելի է այսպէս ըսել, բոլորովին մեր (իթթիհատ) Կուս. ձեռքը կը գտնուի, կրնանք զոհերուն անմիջական օգնութիւն մը հասցնել, առանց բացառութեան յանցաորները պատժել Օրէնքին բոլոր խտութիւնովը...»:

25 Յունիս (1909) Յ. Պապիկեան

Պոլիս լոյս տեսած «Ատանայի Աղէտը» 1913ին, զործն է Ատանայի մէջ դեղադործութիւն ըրած հայ մտաւորականի մը, որ ամենայն մանրամասնութեամբ 860 էջնոց հատորի մը միջոցաւ տուած է Ատանայի եւ շրջականերու 1909ի կոտորածի պատմութիւնը:

Իթթիհատական «Իքիտայ» Ատանա լոյս տեսնող թերթը կը զբէր «Սոսկալի Ապստամբութիւն» մը խորագրով իր 7 Ապրիլ 1909 թուին մէջ.—

«Աւա՛ղ որ հայոց սրտերուն խորը հաւաքուելով արմատացած, փոթորկոտ եւ ոճրագարտ պոռթկումով մը օրէ օր փքացող, վերջապէս եղբրական գոռուներով հիւանդագին եւ արատաւոր միմունջներով եռացող բարկութեան եւ անկախութեան հեղեղը երկիրը կործանեց:

«Ասոր հետ մէկտեղ, հայերուն զրեթէ ամէն կէտերէ ձգած հրկեհները՝ ամբողջ քաղաքը (Ատանան) կործանեց եւ աւերակ դարձուց»:

Մանօք.— Յ. Թէրզեանի — Ուշադրութիւն, «Իթիտայ»ի դատողութիւնով հայերը՝ իրենց թաղերուն մէջ կրակ զրած ըլլալու են, որովհետեւ այրած թաղերը միայն հայերուն կը պատկանէին...:

«... Անխել հայերը զմեզ, հայրենիքը, ինքզինքնին ալ կործանեցին: Դրժբախտ Ատանա, այս աղէտն ալ տեսար»:

ԻՍՄԱՅԻԼ ՍԱՖԱ (Իթթիհատական)

«Իսկ թուրք ոճրագործներէն շատ քիչերը իրենց արժանի պատիժները տեսան, պատճառը թուրքերու մասին վիճակներու պակասութիւնն էր, մինչդեռ անմեղ հայու մը դատապարտութեանը համար տասնեակներով սուտ վիճակներ կը ներկայանային Պատերազմական Ատանայի առջեւ»:

11 Մայիս 1909ի վարչակազմ շիւսէյն շիւմի Փաշայի կողմէ կարգացուած Դահլիճի ծրագրէն՝ Կիլիկիոյ աղէտին վերաբերեալ մասին մէջ 100 հազար ոսկի փոխառութեան արդար ըլլալը կը շեշտուի: Ժողովը կ'որոշէ Ատանայի վաճառականներուն վարկ բանալ, 20 հազար ոսկի:

Իսմայիլ Հաղզը 8 Յունիսի եւ 13 Յուլիս 1909ի նիստերուն կը բողոքէ քանի մը թուրք խմբակներու անիրաւ տեղ ձերբակալման դէմ...:

Յակոբ Պապիկեան.— Ատանայի մէջ 21 հազար մարդ սպանուեցաւ եւ հիմա էլ իր երկու մարդ կը պաշտպանէք...:

Իսմայիլ Հաղզը.— Այսչափ մարդ ջարդուած ըլլալը Պապիկեան էֆ.ի Երեւակալութեան արդիւնքն է:

Վարդգէս.— Ծարպիկ զողը ապրանքին տէրը կախել կուտայ...:

Թալաաք (Անգարայի Երեսփ.) — Պէտք է խնդրել լուսարանել: Ստոյգ տեղեկութիւն չկայ, մինչ Պապիկեան էֆ. կ'ըսէ, թէ 21 հազար հողի մեծած են կ'ըսուի...:

Յակոբ էֆ. Պապիկեան.— Պոտաց, թէ՛ «կ'ըսուի» չէ, այլ ինք կ'ըսէ:

Թալաաք.— Պէտք է բացատրութիւն ուղեկ կառավարութեան:

23 ՅՈՒԼԻՍ 1909Ի ՕՍՄ. ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՆԻՍ

Խորհրդէի Երեսփոխան Յակոբ էֆ. Պապիկեանի յանկարծակի մահուան առթիւ ցաւ յայտնուեցաւ: Վարդգէս կը պահանջէ որ ողբացեալ Յակոբ էֆ. Պապիկեանի տեղեկագիրն ալ կարդացուի: ... Կ'առաջարկուի որբերուն ամսական յատկացնել, վէճ կը ստեղծուի:

Ատանայի մասին Երեսփ. Քէմալի տեղեկագիրը քննելու համար յանձնաժողով կ'ընտրուի...:

Այս նիստին ետք Կիլիկիոյ աղէտին խնդրը փակուեցաւ եւ անգամ մ'ալ չի յիշուեցաւ Օսմ. Երեսփ. Ժողովին մէջ...: (Տե՛ս՝ «Կիլիկիոյ Աղէտը», Յ. Թէրզեան, Պոլիս, էջ 623):

2) Յունիս 1909ի Նախարարաց Խորհուրդը Ատանա զրկուած քննիչ Յանձնախումբի արդար տեղեկագրի հիման վրայ կ'որոշէ Ատանայի Պատերազմ. Ատանայի առջեւ դատի քաշել հետեւեալ անձերը.—

— Նախկին կուսակալ ձեւատ Պէյ, Մուսթաֆա Բէմզի Փաշան, ձեւատ Պէյրէքէթի Կառավարիչ Ասաֆ Խատ Պէյ, «Իթիտայ»ի խմբագիրները՝ Իհսան Պիքերի եւ Իսմայիլ Սաֆա, Ատանայի Պաշտատի Զատէ Ապտիլ Գատիր, եւ Պոշտազ Սալիհ, նաեւ որոշ թիւով անդորրութիւնը վրդովողներ...:

— Այս որոշումները միայն ձեւակերպութեան համար տրուեցան եւ գրեթէ չգործադրուեցան:

Կառավարութեան Երջարեւակներին մէջ — «Բացայայտ կերպով ապացուցուեցաւ, թէ հայ ժողովուրդը Օսմ. մեծագոր կառավարութեան հանդէպ իր ունեցած հաւատարմութենէն Երբեք չէ շեղած»:

«Կը խնդրենք մեր իսլամ հայրենակիցներէն, որ իրենց շահը շփոթուեն ուրիշի վնասին մէջ: Մենք տուեցինք... Բայց դուք իսլամներդ բարձրացա՛ք... Իսլամ եղբայրներ, մենք այս երկիրը մեր բոլոր սրտով կը սիրենք... մի՛ նեղէք դժբախտ ազգ մը՝ որ Աստուծոյ զատ ոչ ոք ունի»:

Եթէ էստա եւ Ռէմզի Փաշանբը վատութիւն գործեցին Ատանայի Եղեռնին, ապա դանդաղեցան թուրքեր ալ որոնք պաշտպանեցին Հայերը:
Ատոնցմէ՛ Ֆէֆէի զոյժազամ Նուրի Պէյ ազատեց ամբողջ Ֆէֆէն:
Տարսոնի էստա զոն ազատեց բաւական Հայեր եւ Ապէտին Չատէ Շէվզը ԵՓ.
200 Հայեր: Նոյնպէս Գիրպիթի էստա 30 Հայ ազատեց:
Պաղչէ — Փոյրազ Օղլու Քէօնէ Մէհմէտ՝ 168 Հայեր ազատեց:
Գարս Պագար — Հօճա Մահմուտ՝ 200 Հայ:
Հէֆիմ Խամ — Միւտիը Ղարիպ՝ 62 Հայ ընտանեք:
Էյրի Պուճագ — Հօճա Մուսթաֆա որ Ծրէ մէճիտիէով վարձատրուեցաւ:
Օսմանիէ — Մուլլա Ահմէտ բարեք ըրաւ:
Այնթապ — Քէմալ Պէյ ստոյգ Չարդի մը առաջը առաւ:
Ատանա — Մուսթաֆա Կիւվէն Չատէ 23 Հայ, Մեմոնան՝ 50 Հայեր: Հաքիմ՝
Բ. Չարդին կառավարտուն ապաստանած Հազարաւոր Հայեր ազատեց: Գատը Չատէ
Իր տան մէջ՝ 70 Հայեր, Բ. Չարդին 100ի չափ Հայեր ազատեց:

«Իրքիիստ» Կուս.ը կազմակերպեց Կիլիկիոյ Չարդը, կը գրէ թուրք պատ-
մարան-զրագէտ Մուրատ Պէյ, «Միզան» թերթի խմբագրապետը:

«... Ա. Իթթիհատի գլխակներուն Հաւաքոյթներէն ետք է որ սկսած են Ատա-
նայի Չարդերը:

«Բ. «Իթիտալ» Իթթիհատի օրկանը բացարձակ կերպով գրգռած է ժողո-
վուրդը:

«Գ. Ատանայի մէջ իշխանութիւնը՝ Եղեռնին ատեն բոլորովին անհող զըտ-
նուած է, եւ ամբողջութեամբ գրգռիչներուն ու Չարդարարներուն նպաստաւոր գե-
տին պատրաստած:

«Դ. Իթթիհատի գլխակէն 18 քաղաքներուն Հետեւեալ խիստ կարեւոր Հեռա-
գիրը ուղղուած է:

«Կէօվտէրէլեանը (Հնչ. գործիչ) երեք Հարիւր զինուած Հայ Ֆէտայիներով
ձեր գիւղը պիտի կոխէ, եւ տեղը գտնուող Հայերուն Հետ միացած ընդհանուր
Չարդ մը պիտի կատարէ, ուստի անոնք չեկած դուք պէտք եղածը ի գործ դրէք»:

«Գոզանի (Միս) Հազարապետ մը, մանաւանդ միւֆթին՝ փաստօրէն Միսի մէջ
«Թոյլ չտուեալ որ Չարդ տեղի ունենայ եւ նոյնիսկ անձամբ ժողովրդին առջեւ թուր-
քեր Չարդը դուրսէն գալիք թուրք խուժանին դէմ, որպէսզի չկարենային Հայ Չար-
դիւ (ըստ վկայութեան Սսեցի Ա. Գնդունիի): Նոյնպէս Մերսինի միւթասարըՓը,
բայց... այսպէս Չարդը արգիլողները ոչ թէ միայն անվարձ մնացած են, այլ եւ
պատիժի ալ ենթարկուած են. այսինքն պաշտօնանկ եղած ու բացը մնացած: ...
Ժողովուրդը գրգռող խմբագիրը չէ Հետապնդուած... Իթթիհատի պատկանող թա-
լանները՝ որոնց Հայերու տուններէն յափշտակուած գողոնի ապրանքները՝ Հաս-
տատած են իրենց ոճիրը, գերծ մնացած են ուսէ պատիժէ:

Կիլիկիոյ աղէտը նիւթ դարձաւ նաեւ Պոլսոյ Պատրիարքարանի Հայ Ազգ.
Ընդհ. Ժողովի ԺԹ. նիստին, Ուրբաթ 24 Ապրիլ 1909ին Տ. Յովհ. Եպիս. Արշա-
րուճիի (Պատր. Տեղապահ), Ատենապետ Մինաս Չերազի եւ Ատենազպիր Հրանտ
Ասատուրի դիւանին օրով:

Ապա Ազգ. Ժողովը կրկին 12 Յունիս 1909ի ԻԳ. նիստին կը քննէ Ատանայի
կոտորածի Հարցը: Եղիշէ Ե. Դուրեան նոր Պատրիարք ընտրուած էր: ԻԴ. նիստին
19 Յունիս, կրկին նիւթ կը դառնայ Ատանայի կոտորածը: Այս առթիւ վարչապե-
տին ուղղեալ դիմումագիրը կը կարդացուի: (23 Մայիս 1925ին):

Ատանայի կոտորածը ցոյց կուտայ՝ որ բան չէր փոխուած
Համիտեան ուժիմէն... եւ սակայն Հայ քաղաքական միտքի ներկա-
յացուցիչներէն մէկ մասը կը մրափէ՛ր ախոս այդ օրերուն...:

Ատանայի Հայոց կոտորածներուն առթիւ այն կարծիքը տի-
րեց պահ մը, թէ քանի որ 31 Մարտի (1909) յետաշրջական եւ Հակա-
յեղափոխութեան օրերուն տեղի ունեցաւ ան, ուրեմն Համիտի կողմ-
նակիցներուն գործն էր: Այս տեսակէտը յառաջ մղողները եղան
յատկապէս Իթթիհատականները:

«Չուսուցան 30 Հազար Հայեր, 300 կուլուած հրոյ ձարակ դար-
ձաւ, յափշտակուեցաւ աւելի քան 10 Հազար դուխ անասուն, իսկ
նիւթական վնասները՝ մինչեւ 20 միլիոն թրքական լիրա: (Մօտ 500
միլիոն Փրանք):

(Տես՝ Ժորժ Պրէզու «Լէ Թիւրք Օն Բասսէ Լա... Լա Վերիթէ
Սիւր Լէ Մասսարըր տ'Ատանա», Փարիզ 1911 էջ 12):

Ռուս պատմարան Գուրգո-կրեմսինը կը պնդէ որ Չարդը Սուլթանի գործն
է... նոյն կարծիքը կը յայտնէ ամերիկացի պատմարան Ճոզֆ Կրիմը: Ֆրանսացի
Ա. Մարբուն 1912ին հրատարակած «Ե. Թուրքիան եւ Յեղափոխութիւնը» գրքին
մէջ Կիլիկիոյ Հայկական կոտորածը կը համարէ «հին ուժիմի», այսինքն՝ Ապտիւլ
Համիտի իշխանութեան գործը, իսկ Իթթիհատը կը ներկայացնէ որպէս երկրէն
ներս «միակ կարգ կանոնը Հաստատելու ձգտող ուժը»:

Անգլիացի պատմարան Պերնար Լուիզ «Ժամանակակից Թուրքիայի Մագումը»
գրքին մէջ, յստակ կերպով կ'արտայայտուէր Ատանայի կոտորածին պատասխա-
նատուութեան հարցին մէջ:

Ըստ Հայրենի պատմարան Հ. Մարտիրոսեանի, Համիտ առանց իր գիւրջ
Պոլսոյ մէջ ամբապնդելու, պիտի չփորձէր կայսրութեան մէկ անկիւնը Չարդ
կազմակերպել...:

ձէմալ Փաշան իր «Յուշեր»ուն մէջ Չարդերու պատասխանատու կը բռնէ
Մուշեղ Եպիս.ը. «Ես անձամբ համոզուած եմ որ, այդ արիւնցի դէպքերուն զը-
խառը մեղաւորը մոնսեմեթր Մուշեղն էր»:

Ըստ Մ. Ն. Ի թուրք նախկին ղեկավան Ռուստէմ Պէյի, Հայ յեղափոխական
Կուսակցան են միւսյիման Հայ բախումներ ստեղծողները Ատանայի մէջ: Անոր Հա-
մար նաւասարդպէս զինուած մարդոց միջև բախում մըն էր եղածը...:

«... Երեք օր ու զիշեր շարունակուեցան Չարդերն ու արիւնահեղութիւնը
քաղաքին մէջ: «Մահմետալաններու վայրագութիւնները Ատանայի վիլայէթի մէջ
հասած էին հրշառք չափերու» կը հաղորդէր սուս ղեկավան Չինոյիէյ: «Սպան-
նուած քրիստոնեաներու, յատկապէս հայերու քիւր կը հասնի մինչեւ 15 հազար
մարդու: Ատանան... գոյութիւն չունի... ողջերն ալ սովի մատուցուած են...»:

Ինքնապաշտպանութեան Հերոսական մարտեր տեղի ունեցան Գեսապի, Չորֆ-
Մարգապանի, Ֆետագի, Շէյի Մուրատի, Շար Տէրէի, Սիսի, Կարս Փագարի Հա-
քընի մէջ եւ այլուր: (Մեր կողմէ աւելցնենք՝ որ առանց բացառութեան բոլոր
այս ինքնապաշտպանութեանց կրիւներուն ղեկավարները Հանդիսացան Մ. Դ. Հնչ.
ըջանի մասնաճիւղերը: Դաշնակցութիւնը սաղմնային վիճակ ունէր Կիլիկիոյ մէջ
— Հ. Գ.) եւ ուժ մը չէր դարձած: (Տես՝ Հ. Յ. Դ. Պատմ. Բ. Հատոր, Մ. Վա-
րանդեան):

Երբ Իթթիհատի պարագլուխները չկրցան Ատանայի կոտորածին պատասխա-
նատուութիւնը Հայոց վրայ ձգել, քաւութեան նոխաղ դարձնել ուղեցին Սուլթան
Համիտը:

Բայց փակենք այս էջը Մեկլան Չատէի «Օսմ. Յեղափոխութեան Մութ Մայ-
քերը», 1968ի Բ. տպագ. էն քաղելով Տոթթ. Նալբաթի վկայութիւնը. «Երբ 1909ի
մեր Ատանայի եւ այլ վայրերու մէջ կառարեյ տուածին նման տեղական ջարդերով
պիտի գոհանանք... օգուտի տեղ վնասը անպայման է»:

Առանց մեկնարանութեան:

Ատանայի 1909ի կոտորածին առթիւ Կ. Իզմիրլեան «Հայ Ժողովուրդի Քաղաքական Ճակատագիրը Անցեալին եւ Ներկայիս», 1964ին լոյս ընծայած գրքին էջ 147ին մէջ կը գրէ. —

«Ի՞նչ ալ եղած ըլլամ Ատանայի դէպքին պատճառները, անիկա երկրորդ ագրարարութիւն մըն էր հայ ժողովրդին ուզողուած: ... Կռիւի Բ. օրը երբ լսուեցաւ, թէ Մէրսինի Անզլիական Հիւպատոսը Ատանա եկած է, կը կարծուէր, որ ան վերջ մը պիտի տայ կռուին, եւ առ ի խրախնամութիւն՝ հազարաւոր զէնքեր արձակուեցան հայոց կողմէ: Հիւպատոսը քաղաքը պտտած ատեն ստացած վէճքը հայոց վերադրեց եւ կռիւը աւելի սաստկացաւ: Իսկ Մեծ Պետութիւններուն Մերսինի առջեւ խարսխած զրահաւորները պարահանդէսներ կը սարքէին, երբ անդին իրենց շուրջ կը ծփային հայ նահատակներու դիակները: Երբորդ օրը քաղաքին մէջ կռիւը դադարեցաւ, բայց 8-9 օր ետք, երբ Կ. Պոլսէն Ազատութեան Բանակ կոչուած զօրքերը եկան, նորէն սկսաւ, եւ բազմահազար հայեր նորէն ջարդուեցան եւ հրոյ ճարակ եղան տունները, այս անգամ ալ Ազատութեան Բանակի մեղսակցութեամբ»: (Իթթիհատի Թարմ ուժերն էին այդ զօրքերը — Հ. Գ.):

1909ի Ատանայի Հայոց Առաջնորդ Մուշեղ Եպիս. Սերորեան Եղիպտոս ապաւինելէն ետք գրեց «Ատանայի Զարդը եւ Պատասխանատուները» հատորը (Պոսթոն, 1910):

«... Սահմանադրական կառավարութիւնը փոխանակ միջոցառումներ ձեռք առնելու, բանտարկեալներէ բռնի ստորագրութիւններ կորզելով, այդ հրէշային կոտորածներուն պատասխանատուութիւնը բեռնել կ'ուզէ հայութեան ուսին վրայ...»:

«Զարդէն վերջ, անոր չափ անհանդուրժելի է, քստմնելի է սա խաղցուած շնական կատակերգութիւնը»: (Նախարան, էջ Բ. եւ Գ.):

Մ. Եպիս. Սերորեան կը պնդէ որ Ատանայի կոտորածին պատասխանատու են Համիտի կապուած ուժերը, տղէտ խլամ մասսան, Մուսթաֆա Ռէմզիին, կուսակալը եւ Իթթիհատի կարգ մը թերթերն ու ղեկավարները»:

ԻԹԹԻՀԱՍ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԶԱՐԴԸ

Իթթիհատական կուսակցութիւնը շուտով կը կռահէ Մուլթանի այդ դիտաւորութիւնը եւ կորովի միջոցներու կը դիմէ: Շարժման մէջ կը դրուի Սելանիկի բանակը, որ Մահմուտ Ենվեթ Փաշայի հրամանատարութեամբ Պոլիս կը մտնէ: Համիտ այս անգամ գահընկէց կ'ըլլայ եւ խաղաղութիւնը համեմատաբար կը վերահաստատուի Պոլսոյ եւ գլխաւոր քաղաքներուն մէջ:

Եթէ Պոլսոյ եւ կեդրոնական միւս քաղաքներուն մէջ յետաշրջական այս նոր շարժումը քաղաքական բնոյթ ունէր, դաւառներու մէջ անիկա ստացած էր «չէրիաթճիական» հանգամանք:

Հոն կրօնապետները եւ հակայեղափոխական տարրերը կրցած էին թուրք ամբողջը զրոգել քրիստոնեաներուն դէմ, այս պարագային Հայոց դէմ, որպէս հեղինակները Օսմանեան հակախլամ Սահմանադրութեան, հիմնուելով Դաշնակցութեան այն անխոհեմ բրորականտին թէ՛ իրենք բերած են Թուրքիոյ յեղափոխութիւնը...:

Յետաշրջական տարրերու քարոզչութեան կը հետեւի Ատանայի ջարդը, որուն դո՛հ կ'երթան 21.000 հայեր, ըստ Պատրիարքարանի պաշտօնական վիճակագրութեան, եւ կողոպուտի ու հրկիզման կ'ենթարկուին հայոց եկեղեցիները, տունները եւ խանութները:

Ատանայի ջարդին առիթով Պոլսոյ Ազգային Ժողովի մէջ տեղի կ'ունենան բողոքի բուռն ժողովներ, որոնց եզրակացութիւնը հայ երեսփոխաններու միջոցաւ կը փոխանցուի Օսմանեան Խորհրդարանին:

Ըստ Յ. Պապիկեանի, աներկբայ է Իթթիհատի մեղսակցութիւնը ջարդի անմարդկային արարքներուն մէջ:

Պապիկեանի մահէն անմիջապէս յետոյ անոր տունը կ'երթան Ընկեր Մուրատ եւ ուրիշ թուրք երեսփոխան մը, Տեղեկագիրը տեսնելու եւ անհրաժեշտը տնօրինելու համար: Պապիկեանի տանը մէջ կ'որոշեն տեղեկագիրը կնքել եւ յանձնել իր ընտանիքին, մինչեւ որ կառավարութիւնը իր ձեռքը կ'անցընէ զայն:

Մուրատի պաշտօնակից թուրք երեսփոխանը իր քովը Ընտանար իր պաշտօնական կնիքը, որով՝ Մուրատ ինք միայն կը կնքէ զայն: Մուրատ այդ մասին կը խօսի Մ. Տամատեանի եւ Սարգիս Սուրիի հետ եւ կ'որոշեն զաղտուկ կերպով կնիքը քակել, Տեղեկագիրը կարդալ եւ վերստին կնքելով ընտանիքին յանձնել: Այս ծրագրին իր համամտութիւնը կուտայ նաեւ Եղիշէ Պատրիարք: Տամատեանի, Մուրատի եւ Սուրիի կը միանան Եււարշ Հովիւեան եւ Հմայեակ Ազատեան, որոնք իրենց լուսանկարչական դործիքներով Պապիկեանի բնակարանը կ'երթան, կը բանան Տեղեկագիրը, կը լուսանկարեն եւ կը յանձնեն Պատրիարքին: Այս բոլոր մանրամասնութիւնները, Տեղեկագրին հայերէն թարգմանութեան հետ, լոյս կը տեսնեն Պոլսոյ «Կիլիկիա» զրատան կողմէ հրատարակուած զրքոյկի մը մէջ, 1919ին:



ԻԹԹԻՎԱՏՐ ԵՒ ՎԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Ի վերջոյ քուրփին գեները ձերբակալուած յեղափոխականներու որպէս դոյք ներկայացնող Իթթիհատականները, արդարացնելու համար 1,5 միլիոն հայոց ջարդը, նկարներ, շինծու վաւերաթուղթեր հրատարակ հանեցին: Հրատարակեցին նաեւ գիրքեր ու պրոշիւրներ, թրքերէն արարատառ «սու գիրքը» եւ զայն թարգմանեցին հայերէնի...: «Տաճար» Պոլսոյ թերթին անունով ալ տպեցին:

Վերջարանը թոյն սրսկող գրութիւն մըն է, հասկնալի պատճառով՝ Հայ կուսակցութիւններու «ապերախտութեան» մասին:

Բանի մը տող «երկու հոս»էն.—

«Գրքովը որ կը խօսի Հայ Յեղափոխականներու մասնաւորապէս Օսմ. Մայր Հայրենիքին դէմ անոնց անեղ դաւաճանութեան(?) մասին, կը բաղկանայ երկու մասէ»:

«Ա. Մասին մէջ կը խօսուի... հայ կուսակցութիւններու Օսմանեան կառավարութեան հանդէպ բռնած ընթացքի, դաւադրութեան, դաւաճանութեան պարագաներու մասին...:

«... Թէ ի՞նչ հրէշային միջոցներով ի դորձ դրուած է դաւադրութիւնը եւ թէ մինչև ո՛ւր հասած է դաւաճանութիւնը: «Անաշա՛ն եւ անկողմնակալ ըլլալ» կը խոստանայ հեղինակը:

«Օսմ. Հայրենիքի վատ թշնամիները եւ անոնց պաշտպանները ուշադրութեամբ թող կարգան այս քանի մը էջերը, որոնք ցաւոտ սրտի մը արտայայտութիւններն են»:

«Օսմ. Կայսր իրր բարրարոս ամբաստանող, 21րդ դարու (ինչո՞ւ 21րդ Հ. Գ), քաղաքակրթութեան պաշտպանները(?) թող լսնան ատելութենէ կուրցած իրենց աչքերը՝ տեսնելու համար, թէ «արո՞նք են բարբարոսները»: (էջ 6):

Կը խօսուի Գուլ Գափուի ցոյցին մասին ... անոր մաս կազմած են տղէտներ ու պանդուխտներ որոնք Պոլիս եկած ու «քերբուս գոհ իրենց կեանքէն» (խաներու անկիւնը օրէ օր մահացող, հողերնին գրաւի դրած, նոր հարսերը երկիր ձգած — անշո՛ւշտ թէ գոհ եւ դեռ 10 տեսակ տուրքերու տակ ընկճուած — Հ. Գ.): Ճանկիւլեանի Օսմ. քուրբան (գինանշանը) ոտքերուն տակ կոխկուտելը ... ուղղուած է եղբր բովանդակ թուրք ժողովուրդին դէմ... եւ Միջագոյն օրէնքով ալ դատապարտելի արարք է եղբր (անշուշտ 300 հազար հայերու 95-96ի կոտորածը միջագոյն օրէնքով... վկայականի արժանի պէտք է դարձնէր Համիտը — Հ. Գ.):

Ռուսերը կը պաշտպանէին կուսակցականները... Իգմիրլևան 1894ին Պատրիարք ընտրուելուն պէս՝ ինք կ'անցնի Կուս. գլուխը եւ կը հրահրէ յեղափոխութիւնը, ապա կը խօսի Ձէյթունի, Պանք Օթոմանի մասին... Հայերը գողորբ են... Յեղափոխականներու ապստամբական ընթացքէն զոտուած... Եւրոպա: 1896-1908ին յեղ. չէ դադրած, խռովութիւններ եղած են: Թուրք Իթթիհատականը կը խօսի էրզրումի, Ձէյթունի, Սասունի անցեալ եւ ներկայ «խռովութեանց մասին»:

«Հնչակեան ոճրագործները» կը յաջողին Ձէյթունը ապստամբեցնել (էջ 26): Անոնց նպատակը — կործանում Օսմ. կառավարութեան եւ անկախութիւն Ձէյթունի:

էրզրումի (1890) դէ՞պքը — Առաջնորդարանի մէջ պարզ խուզարկութիւն մը... Հնչակեանները Կերեկցեանի գլխաւորութեամբ կը բողոքեն կառավարութեան դէմ... «Ո՞ր կառավարութիւնը չի խուզարկուի...»: Դաշնակ պետերը... Օսմ. Երեսփ. ժողովի անդամ պիտի ընտրուէին յետագային հանդիսաւորապէս եւ անստօթաբար դաւելու համար գիրքնիք մեծարող, սնուցանող պետութեան դէմ...:

Սասնոյ կռուողները... «վարձուած եւ շփացած գիւղացիներ» են (որոնք թէ՛ Թուրքին, թէ՛ Քիւրտին տուրք տալու ստիպուած էին — Հ. Գ.): Երբտ. Թուրքերը մեծ ծառայութիւն մատուցած են Եղբր ԲՈՆԱԿԱԼ Ռէժիմի ՊէՄ (Համիտ): Հոս արդէն ընթացողը միայն կը ծիծաղի անշուշտ. հաստատելէ ետք, թէ Համիտեան ուղեւորը բռնակալի ուժով է Իթթիհատական պատմագրի իսկ վկայութեամբ, հետեւաբար հայուն աղատարական պայքարը սորաբար, իսկ Եթէ Համիտի ուժովը լաւ էր, ինչո՞ւ տապալեցին եւ արսուրեցին եւ ինչո՞ւ 1907ին Բ. համադումարին եւ իրենց թերթերուն մէջ «բռնակալ» որակեցին զայն...: Անցնինք: Ապա կը խօսի Սասնոյ Բ. ապստամբութեան, Սերորի, Անդրանիկի, Դրոյի, Նիկոլ Թումանի անունները որպէս զբոսիչներ կը յիշէ, կուտայ Անդրանիկի յուշերէն հատուած մը: Յեղ. քանի մը երգեր, Սասունի եւ Ձէյթունի նուիրուած... Ապա կը խօսի այն մասին, թէ ի՞նչպէս Սահմանադրութեան առթիւ Հայ Յեղ. Իթթիհատի հետ դորձակցելու կողմնակից է եղած, թէ ինչպէս հայ յեղափոխականներու սպահնակին Իթթիհատը ներկայ եղած եւ ողբացած են Համիտի դոհ հայ հերոսներու յիշատակը...: Եւ մինչ Իգմիրլևան Պատր. գրքին Ա. մասին մէջ «դաւաճան» կը ներկայացուի... Երուսաղէմէն Պոլիս վերադարձին «Օսմ. կառավարութեան եւ Իթթիհատի կողմէ յարգանքի կ'արժանանայ», հայոց պատուոյ տեղ կը տրուի... Խորհրդանշաններ: (Սուլթանի բռնակալութեան դէմ չպայքարելն ո՞ւր համար — Հ. Գ.):

Եւ որովհետեւ Սահմանադրութիւն հաստատուած էր, կը գրէ Իթթիհատական պատմագիրը, ուրեմն աւելորդ էր ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ: (էջ 46):

«Ազգ. Երեսփոխանական ժողովը քաղաքական դաւադրութիւններու կեղծում դարձած էր»: (էջ 47):

Բարենորոգումներու ծրագիրը հոն պատրաստած էին: Թէև գործակցութեան կողմնակից կը դաւանէին Կուս.ը, բայց ներքնապէս անկախութեան կը ձգտէին: Կը դաւանէին Սահմանադրութեան դէմ (Սահմանադրութիւնը կը դուրս հայոց իրաւունքներուն դէմ — Հ. Գ.): Ապա պարոց, ակումբ, հաստատու են հայերը...:

Բորբաղանտ կ'ընէին «Հայաստանի ինքնավարութեան ի նպաստ... բոլոր դասակարգերը ազգայնականութեան, անկախութեան սկզբունքներու վրայ պարաստուած էին: Եղածը՝ արտոյտարութիւն մըն էր: Վէճեր անպակաս էին դասախօսութեանց առթիւ: Առաջնորդարաններու մէջ Օսմանեան դրօշին ու թուրքային տեղ Մայր Հայաստանը, Հայկ. Ձինանշանը, Կուս. յատուկ գինանշաններ եւ դրօշներ... (էջ 54), բոլոր հայ թերթերը արտասահմանի մէջ անկախութիւն կը քարոզէին: Այս բոլորը... ապստամբութեան կը ձգտէին...:

«Իթթիհատը ամէն բանէ առաջ վարձատրուած կ'ուզէր տեսնել Բռնակալ Ռէժիմին դէմ պայքարողները՝ ասիկա դործով ալ ցոյց տուաւ»:

Մինչ գիրքը էջեր տրամադրած է Սուլթանի դէմ պայքարողները դաւաճան որակելու համար:

«Իրրեւ ընտանալ ուժի մի գրկեալներ, անիրաւեալներ, Իթթիհատը կուս. հիմ գործիչներուն պաշտօն կուտայ եղեր...: Կուս. ներք զէնք ներմուծեցին, «Իթթի- հատը սակայն կուսակցի աջ պարագան, ի վերջոյ արգելի հանդիսացաւ զէնք ներ- մուծելու գործին... նոյն ատեն ՄԵՆՔ ՍՏԻՊՈՒԵՑԱՆՔ ՏԱՐԲԵՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԳՈՐԾԵԼ (ն'չ մէկ կասկած որ զիրքը պետական Իթթիհատականի մը գործն է հայ մեղսակիցներով պատրաստուած — Հ. Գ.): Մենք, հայերս կը հասկնանք, թէ ի՞նչ կը նշանակէ «ստիպուեցանք տարբեր քանապարհով գործել»ը Իթթիհատին...:

Ապա զիրքը հայ կուսակցութեանց Ցարիզմի ղէմ մղած պայքարի, Հայ-Թա- Թարական կոնիներու, ցարի ձուլման քաղաքականութեան մասին կը խօսի, «Թուր- թիան ապաստան տուած է կովկասէն փախած Դաշնակցական եւ Հնչակեան գոր- ծիչներուն...»:

«Առաջին անգամ Հնչակն է որ՝ հակառակ իր խոստումներուն կը դաւէր երկրին եւ պետութեան ղէմ ու կ'երթար միանալ ընդդիմադիր եւ յետադիմա- կան(?) կուսակցութեան մը (Իթիլաֆ — Հ. Գ.) եւ քաղաքական մեծ շփոթութիւն մը կը ծրարէր...:

«Նոր Աշխարհ» (Պոլսոյ Հնչ. Պաշտօնաթերթ) Սապահ Գիւլի ձեռքերուն մէջ իր զրգոյն յայտարարութիւններով հրապարակ կ'ելլէր: Հնչակեաններու Նախադա- հը սերտ յարաբերութեան մէջ էր յետադիմական կուսակցութեան (Իթիլաֆ) շե- փերուն հետ:

«Յոստումներ ըրած էին իրեն, ներքին գործերու խորհրդական պիտի ըլլար եւ երկիրը պիտի փրկէր վաղահաս կործանումէ:

«Անկախ պիտի ըլլար Հայաստանը եւ Սապահ Գիւլ ի լրումն իր բաղձանաց, արտաքին գործերի միջխտորի Պորթ-Ֆէոյը ստանձնէր: (էջ 68):

«Յետադիմականները (Իթիլաֆ) յաջողած էին պահ մը... բազմախնդիրներու խուսանը հին ուժի մի բեկորներուն հետ համերաշխարար կը գործէր:

«Օրուան իշխանութիւնը (Իթիլաֆ) չկրցաւ Պալք. պատերազմին բանակ մը անգամ սպառազինել եւ հետեւանքը եղաւ այն որ Օսմ. բանակը վրայ տուաւ իր դարաւոր կուռոյի պատիւը՝ շնորհիւ նոր Ազատական (Իթիլաֆ) կուսակցութեան: (Կարծես թէ 1911ին եւ 1912-13ին Իթթիհատը կրցեր էր փրկել Հերձեկովէնը, Պուլկարեան, Լիպիան... Ա. Համաշխարհային Պատերազմին՝ Սարը Ղամիշի մէջ 100 հազար թուրքերուն ջարդուիլը էնվէր Փաշայի պատճառովը չէ՛ր... կամ 1916ին 60 հազար թուրք զինուորի կորուստը էրզրումի մէջ՝ իրենց օրով չէր պատահած — Հ. Գ.):

«Անդին Սապահ Գիւլ Եղիպտոս հասած էր եւ միացած յետադիմականներու (Իթիլաֆ) բեկորներուն: Դաւադրութիւնը սակարկուած էր, դահլիճին անդամները (Թալաթ, էնվէր, ձէմալ) տեղորի պիտի ենթարկուէին, 5000 ոսկիի սակարկու- թեան փոխարէն...:

«Քանի մը տէնորիստներ Պոլիս հասած էին գործադրելու համար դաւադրու- թեան ծրագիրը... Սապահ Գիւլ խոստում տուած էր լայն ազակեցողութեամբ: (էջ 73):

«... Անդին 1913 Սեպտ. 17ին Հնչակեան Կուս. իր Պատգ. Ժողովը կը դու- ժարէր Քէօսթէնէի մէջ:

Հ. Գ.— Գրքին մէջ տրուած են նաեւ 1913-14ի շրջանին Հնչակեան եւ Դաշ- նակցական Կուս. զինուելու մասին հրահանգները շրջաններուն ուղղուած, ինչ որ որպէս «զաւաճանութիւն» որակուած է:

Գիրքը արտադրած է «Իրօշակ»ի թիւ 1, 1914 Յունուարի թիւէն յօդուած մը, ուր կ'ըսուի թէ պէտք է «տանգ ժողովուրդին ամէն միջոց, իմօզինքը պաշտպանելու եւ այդպիսով առաջն առնելու լիւր մի եւ յուսահատութեամբ, որի անխուսափելի հետեւանքն է կործանարար հայրենասպան գաղթը...»:

Տրուած է Բարենորոգումներու մասին Պ. Նուպարի կոչը: (էջ 83-4):

«1914 Յունիս 21 Երկշ. Օսմանեան զօրաշարժի յայտարարութիւնը կ'ըլլար, Պոլսոյ Դաշն. Կեդրոնը ծածկադիր հրահանգ կը զրկէր դաւառի մասնաճիւղերուն, նոյնը կ'ընէր նաեւ Հնչակը:

« — Ռուսական բանակը դէպի Օսմ. Սահմանագրութիւն յայտարարուեցաւ պարա- գային՝ շարժուեցէք»:

«Վանայ մէջ Հնչակեան եւ Դաշնակցական շեփերը Սահմանագրութիւն վրայ Պալքանեան կոմիտէի անդլիացի պատուիրակներուն հետ դաւաճանութեան սակար- կութիւնը կ'ընէին...: (էջ 85):

«Ապա Վ. Թէքէեան «Արև»ի մէջ Օսմանեան կառավարութեան ղէմ կը զրկէ, իսկ Ս. Սապահ Գիւլեան Ռուսական կ'անցնի հոն հիմնելու համար «Իմօզակար Հայաստան» անուն թերթ մը: Մինչ այդ «Հնչակ»ի մէջ կը տպուի 1914 Գեղար. շարքերուն ուղղուած Կեդր. վարչապետան կոչը, ուր կ'ըսուի, թէ Հնչակեան Կուս. իրաւագուրկ եւ հարստահարուող դասակարգերու իտէպիներու ներ- կայացուցիչը, 25 տարի յաճուալ թրքահայ ազատագրութեան պայ- քար մղած, խոր գիտակցութեամբ կ'իջնէ քաղաքական կոուի դաշտը յեղափոխութեան մարտակոչ շեփորը հնչեցնելու Տարուսի լեռներում եւ հայկական Բարձրաւանդակում, Օսմանեան Բռնապետութեան ա- րիւնտ լուծը թօքափելու սրբազան ուխտով:

«Ա. Գարօ Պուլկարիոյ մէջ կը կազմէ կամաւորներու Ա. խում- քը՝ Օսմ. բանակին ղէմ կոուելու համար:

Ահա բովանդակութիւնը «Հայ Յեղափոխական Կուս.ը եւ Օսմ. Կառավարութիւնը» գրքին, որուն հիմնական առաջադրանքն է ցոյց տալ, որ հայերը ապստամբած են, Հնչակեան եւ Դաշնակցական ղե- կավարները 1914ի շրջանին դաւած են Իթթիհատի, ապերախտ գրո- նուած են Իթթիհատի բարիքները մոռնալով, որուն համար ո'չ մէկ փաստ կը յիշէ — եւ հետեւաբար զինուած են թշնամիին (ոուսին) օգնելու համար... եւ ատոր արդիւնքն ալ եղած է «հա՛յր» Իթթի- հատի ոճրադրոծները զսպելու համար ձեռք առած միջոցառումները: Որքան սուտ, այնքան կեղծիք: Աւելորդ է մեկնարանել, երբ դիտենք որ 1909ի, 1910ի եւ 1911ի Սելանիկի Իթթիհատի գաղտնի որոշումները կը ձգտէին ցեղասպանութեանը հայ ժողովուրդին... Երանի՛ թէ հայ քաղաքական մտքի Առաջ- նորդները աւելի արագ, շատ եւ շուտ զինուելու հրահանգները ստուած ըլլային գայլերու այդ վոհմակին ղէմ...:

Օսմ. Սահմանագրութեան ստթիւ Պոլսոյ «Ազդակ» շարաթաթերթի (Դաշ- նակցական) 1909 Ա. տարի, թիւ 17, 24 Ապրիլ էջ 268-269ի մէջ գրուած է Հ. Յ. Գ. կարէնի Կեդր. կոմիտէի հայերէն եւ թրքերէն թոռցիկը...:

«Սահմանագրութիւնը... դա լուսոյ աստղն էր, որ փայլեց մեր խաւար երկնակամարում...»:

«Կեցցէ ընդհանուրին հայրենի ազատ թուրքիւնը»:
Նոյն թերթի նոյն թիւի էջ 271ին մէջ «Մի՛ խարէք» վաքան ստորագրու- թեամբ գրութեան մը մէջ կը խօսուի սովի եւ թշուառութեան մէջ տուայտող դաւառի հայութեան մասին:

«Մի՛ խարէք, մի՛ խոսիք ազգերի հաւասարութեան անունով. դուք բոլոր այսօրուան Օսմ. պետութիւն վարողները»:

«Փա՞ստ...
«Ահա ձեզ Բուլանք գաւառակը. 14 գիւղ է. 3ը հայ. 11ը փուր: Նոյնիսկ այս տարի 3 հայ գիւղից տուրք է գանձուել 40 հազար դրո՛ւ, իսկ 11 փուր գիւ- ղից՝ 7000 դրու»: (էջ 272):

1907ի ԻԹԹԻՀԱՏԻ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1907ի Գեկտ. 27-29 Փարլզի ԻԹԹԻՀատի Համադումարի յայտարարը տպուած է «Ազդակ» Շարթ-ի 1909ի Մայիսի Թիւին մէջ (էջ 273-276): Հոն կը դատապարտուի Համիտեան երեսնամեայ բռնատիրութիւնը.

«Կայսրութեան բոլոր ազգերը զոհը եղած են Համիտեան ուժերին՝ Թիւրք, հայ, յոյն, սլուակար, վալաք, արլանացի, արաբ, հրեայ, տրուք եւ քիւրտ — իսկ հայկական կոտորածները... «Մեծ Մարդասպան» եւ «Կարմիր Սուլթան» անուներին արժանացուցին Համիտը: Համիտով Թուրքիոյ մէջ անդամալուծուեցաւ մտաւորական, անասական ու ընկերային ամէն կեանք: Գիտութեան եւ ուսումի թըշնամի, փակեց դպրոց, բանտարկեց ուսուցիչ եւ աքտորեց... ծայրայեղ գրաքննութիւն, մամուլը՝ ստրուկ... «տուրքերը գիշատիչ պաշտօնեաներու կողմէ նահանգներու մէջ կը հաւաքուին», «Ապտիւլ Համիտ ամենամեծ թշնամի իր երկրին ... «տուրք, անապահովութիւն...»: Ասիկա յանգեցաւ կայսրութեան հողային նուազման եւ եթէ յայպէս շարունակուի ուրիշ մասեր ալ «Ալլանիան, Մակեդոնիան, Արարիան, Հայաստանը կարճ միջոցի մէջ անվերջ պիտի բաժնուին կայսրութեանէն — արդէն իսկ կատարեալ քայքայման մէջ են — յոգուտ պետութեան, որոնք կը փնտռեն կամ հողային ընդարձակում, կամ զաղթարնակութեան վայրեր, կամ անտեսական առաւելութիւններ ... «Թուրք կառավարութեան մէջ անմիջական փոփոխութիւն մը միայն կրնայ արգիլել կայսրութեան վերջնական մեծ աղէտը եւ քայքայումը: Պէտք է տապալել ռեժիմ մը որ այնքան աղէտներու պատճառ եղաւ»:

Կը պահանջենք՝

- 1) Գահընկէցութիւն Ապտիւլ Համիտի:
- 2) Արմատակամ փոփոխութիւն ներկայ ռեժիմին:
- 3) Հաստատում ներկայացուցչական ռեժիմի (խորհրդարան):

«Բալոյրին հաւասարութիւն եւ ազատութիւն ու արդարութիւն... Ահա ներկայ Գոնկրէին միտքան նպատակը համապատասխան երկրի բոլոր ժողովուրդներու կամքին: Ապա կոչ կ'ընեն բոլորին աջակցել, Գոնկրէն յեղափոխական միջոցի դիմել կ'որոշէ, Թուրք-հայ խառն խումբեր արդիւնք տուած են, բոս Գոնկրէի...»:

Կ'որոշէ «Զինուած դիմադրութիւն քաղաքական եւ անտեսական զործադուլ, մերժում հարկերու, բրտրականտ զօրարանակի մէջ, կոչ, որ գինուորներ չբաշին յեղափոխականներուն դէմ, ընդհանուր ապստամբութիւն, մարտական միջոցներ...»:

Իքթիսատի կողմէ՝ «Շուրայի Իւմէթ» եւ «Մէշվերէթ»: Հ.Յ.Դ.՝ «Դրօշակ»:

Օսմ. Միւթեան անհատ. նախաձեռնութիւն Ազակեղրոնացման եւ Սահմանադրութեան՝ «Թեքագըթ» Թերթ, Եղիպտոսի Հրէական կոմիտէ՝ «Լավերա», Խըմրադրութիւն՝ «Եիլափաթ», «Արմենիա», «Ռազմիկ», «Հայրենիք», «Անտի Օսմանի»:

Հիմա զեռ հարը չխօսած Շ. Միսաբեանի վկայութիւնը...

«... Բայց զեռ առաջին քայլին, ահա (ԻԹԹԻՀատը) մատնեց իր վատաողջ ունակութիւնները՝ (ակնարկութիւնը 1909 Ապրիլի Ատանայի կոտորածին է — Հ. Գ.) : Ամբողջ 9 ամսուան ընթացքին ոչ մէկ լուրջ, իրական բարենորոգում, ոչ մէկ յեղ. զործունէութիւն... Ե. Թուրքիա Թոյլ տուաւ որ իրերը մնան իրենց տեղայն, անկենդան դրութեան մէջ յանգելու համար ճակատագրական աղէտին» : («Ազդակ Շարթաթերթ», 1909, Մայիս 15, Ա. տարի, Պոլիս):

«Օսմանեան «Սահմանադրութեան» վերահաստատումէն ապին՝ հայոց հանդէպ երկու. Թուրք քաղաքականութեան ուշադիր հետեւող ու իրազեկ ո՛չ մէկուն համար զաղտնիք մըն էր թէ ԻԹԹԻՀատը Սելանիկէն վճռած էր «Հայկական հարցը» լուծել հայերուն բնաջնջումովը եւ թէ իր այս ծրագիրը գործադրութեան փառաւոր սկիզբ մը ունեցած էր արդէն 1909ի Կիլիկիան արհաւիրքներով: ... Թուրք այլամերձ ազգայնամոլութիւնը սկսանքը կրճատեցնելով՝ պատճառ թիւն կը սպասէր, հայուն արիւնովը միանգամընդմիշտ մաքրելու համար «հայկական բէֆորմներուն հաշիւը»: (Տես՝ «Եղիպտոսիայ Տարեցոյց», Սուրէն Պարթեւեան, 1916, Գահերէ, էջ 9):

«Սապահ Գիւլեան «Երիտասարդ Հայաստան»ի մէջ կը խօսի երկու. Թուրքերու մասին: Սապահ Գիւլեան «Երիտ. Թուրք» անուան տակ ծածկուած քրքական ազգայնականութիւնը տեսած ու մատնանշած էր, այդ սպառնալից ուժին դէմ մաքառելու համար մտքին մէջ պատրաստած էր երիտասարդ Հայաստան մը: (Տես՝ «Անթրիկահայ Տարեցոյց», Մուշեղ Սերոբեան, Պոստոն, 1912, էջ 143):

Տ. Քէլէկեան որ Թրքերէն «Սապահ» Թերթի խմբագիր եղած է Պոլսոյ մէջ «Արեւելեան Խնդիրը եւ Սահմանադրական Թուրքիան» յօդուածին մէջ ակնարկելով երկու. Թուրքերու 1908ի Յուլիս 10ի յեղափոխութեան, կը գրէ թէ, «Թէեւ սպասելի չէր որ (1908-11) երեք տարուան մէջ իտէլացիներ իրազործուէին անոնց, սակայն կարելի էր ապացուցանել աշխարհի աչքին թէ՛ նոր ուժի մը կ'աշխատի անոնց իրականացումին»: Ասիկա պիտի բաւէր վառ պահելու քաղաքակիրթ աշխարհի ջերմ համարութիւնը՝ որու ապացոյցները բաւարար տրուեցան Յուլիս 10ի Յեղ. անմիջապէս ետք: Ու ուժը մեծ պիտի բլլար նամանաւոր երկրին մէջ՝ եթէ ամբարշտուէր Սահմ. ռեժիմի այն գերագոյն նպատակը՝ որ ցեղերու համերաշխութիւն կը կոչուէ»: (Տես՝ «Հայրենի Տարեցոյց», Սահակ Մեարոյ, Պոլիս, 1912, էջ 119):

«Այս Օսմանեան «Միութիւն եւ Յատաշղիմութիւն» կոմիտէն յաջողեցաւ սկզբնաբար Փրա-մասոնութեան շնորհիւ: Սելանիկի Փրա-մասոնները, որոնց զոյութիւնն իսկ բացարձակ զաղտնի պահուած էր, իրենց որոշեալ նշաններով ու շքադրամներով լուսանկարուեցան Սահմանադրութեան հռչակման օրը»: (Տես՝ «Ընդարձակ Օրացոյց», 1909, Ս. Փրկչեան Հիւանդանոցի Հայոց, Պոլիս, էջ 216):

Պատրիարքարանի ղեկավարը 1911 Փետրուար 11ին Բ. Դրան (ԻԹԹԻՀատին) նուազագոյն բարեկարգութիւն պահանջող՝ ցոյց կուտայ, թէ օրինաւորութեան սահմաններուն մէջ կատարուած որեւէ դիմում ԻԹԹԻՀատի կողմէ նկատի իսկ չէր առնուեր:

Հոն կ'ըսուի թէ առանց իսկապէս Սահմանադրութեան հաւատարիմ պաշտօնէութեան մը կարելի չէ Անատոլուի ժողովուրդին տալ Սահմ. բարիքները, որոնցմով միայն երկիրը պիտի փրկուի:

- Անարժանները փոխել, արժանիներով,
- Հայերէն ալ պատշաճ թիւով պաշտօնեաներ առնել զատուներու մէջ,
- Կաշառքի վերջ տալ, — ծանօթ բռնակալներուն պաշտօնին վերջ տալ — որոնք իսլամ թէ քրիստոնէայ, գիւղացիները կը շահագործեն,
- Հեռացնել հայ գիւղերէն՝ բոնի սեղանորոտող զաղթականները,
- Արդարութիւնը զործադրել: Հեռացնել եւ չկորսուցնել բոլոր այն աւազակները, որ զեռ ազատ թողուած են,
- Բոնի իսլամացումի, պիտեալ յարձակումներու տառաջը առնել,
- Զինեալ զիւրտ աշխրթապետներու բռնութեան գէմ պաշտպանել մարտիկները, գիւղական պահակախումբեր կազմելով,

— Բռնի անիրաւ տուրքերու զանձումը արգիւել: Մշոյ, Վանի, Պիթլիսի, Տիգրանակերտի մէջ կը շարունակուին բազմաթիւ տեսակի տուրքերու զանձումը (Պաֆրութեան, Օլամի, Անկարայի, Կապալայի, Գիւպերայի):

— Հակառակ Համիտիէ քրտական զօրքերու օրինաւոր բանակի մաս կազմելուն համար Օսմ. կառվ. որոշումին, անոնք դեռ կը շարունակեն զոյութիւն ունենալ...

— Սահմ. սկզբունքներուն դէմ է հայերը Անատոլի մէջ զինուոր անել եւ զանոնք շատ հեռու վայրեր փոխադրելը,

— Անգլն է հայը, մինչ քիւրաք եւ ուրիշներ զինուած են:

«... Միայն 1913ին թուրք կալուածատէրերը եւ քիւրտ պէ-կերը հայերէն 30 հազար զիւղացիական հողամաս խլած էին:

(ՏԵՍ՝ Հ.Ս.Ս.Հ. Ծ. 57, ց. 2, Գ. 666-9-11, Ջոն Կիրակոսեան, «Ա. Համշխ. Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը», 1967, Երեւան, էջ 53-54):

Դարձեալ Պոլսոյ Պատրիարքարանի 1912 Օգոս. 1913, Նոյ. կազմած մէկ տեղեկագրին մէջ ըսուած է.—

«Սահմանադրական ուժի մի վրայ մեր դրած յոյսերը խիստ քիչ ժամանակամիջոցի մէջ ի դերեւ ելան, մեզմէ ոմանք սկիզբէն թերահաւատ, վեց ամսէն արդէն յոյսերնին կորսնցուցած էին: Ոմանք Ատանայի ջարդին վրայ սքափեցան, մէկ մաս մըն ալ, նոյնիսկ այդ ջարդերէն վերջը, դեռ բաւական ժամանակ թուրքաց հետ գործակցութիւնը կարելի եւ անհրաժեշտ նկատեց, անսպառ համբերութիւն ցոյց տուաւ, լաւատես մնաց: Բայց վերջ ի վերջոյ ան ալ թուրքերէն հայոց վիճակին բարելաւումը սպասելու անկարելիութեանը համոզուեցաւ:

«Թուրքիոյ չովէն քաղաքականութիւնը երթալով սաստկացեր էր, Հայաստանի մէջ այս քաղաքականութիւնը, քիւրտերու հանդէպ ներողամտ եւ որոշ կերպով քաջախիւրդի բնոյթ մը կ'անէր: Ամենէն կոյրերն ալ տեսան ասիկա, այնպէս որ հինգ տարի վերջը թուրքիոյ հայերը առ հասարակ թուրք կառավարութեան վրայ մագի չափ հաւատք չունէին:

«...Մափերով ողջունուեցաւ Ատանայի (1909) կոտորածին առթիւ Մուսթէ-շար Ատիլ Գէյի յերիւրանքները Օսմ. Խորհրդարանէն ներս: (Ջ. Կիրակոսեան, էջ 56):

1909ին «Դրօշակ» Դաշն. օրկանը, թիւ 4ին մէջ կը գրէր. «Օսմանեան յեղափոխութեան շնորհիւ Պերլինի 61րդ եւ 23րդ յօդուածները կը կորսնցնեն իրենց ուժը, որ Հայկական, Մակեդոնական ինդիքները վերցուած են Միջագ. դիւանագիտութեան սեղանից եւ դառնում են Օսմանեան պետութեան ինդիքները»: (Ջ. Կիրակոսեան, էջ 65):

1910ի Մայիսին Աուաքելոց մանքի մէջ Տարոնի Դաշնակցական Շրջանային Ժողովում, պարագլուխներ Գարմէն (Պաստրմաճեան) եւ եւ Սիմոն Զաւարեան դէմ էին արտայայտուած Երիտ. Թուրքերի դէմ հայերի զինուելուն եւ ասպտամբուելուն»: («Արարատ» Օրաթերթ, 1962, 30/12):

Ռուբէն Դարբինեան «Գործ» թիւ 1, Բ. Մաս 1917ի, էջ 92ին մէջ կը գրէր.—

«Անգամ Ատանայի կոտորածը, ուր առաջին մահասարսուռ կասկածը ձգեց հայութեան սրտին մէջ է. Թուրքերի քաղաքական կուսակցութեան վերաբերմամբ, անկարող եղաւ զգաստացնելու հայ քաղաքական ղեկավարող տարրերը եւ ետ պահելու նրանց Երիտ. Թուրքիոյ գործակցելուց»: Դաշնակցութիւնը ընկաւ «ՆՈՐ ԻՇԵՆՈՂՆԵՐԻ ԳԻՐԿԸ»: (Ջ. Կիրակոսեան, էջ 19):

Գ. Գիւզալեան «Հայ քաղաքական մտքի զարգացումը եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը», Փարիզ, 1927, էջ 131, կը գրէր թէ՛ «Թրքա-Հայաստանի ապագան, տուեալ պայմաններում, հնարաւոր էր լուծել միայն Թուրքիոյ ներսում՝ Դաշնակցային ճանապարհով եւ ոչ Թուրքիոյ սահմաններից դուրս՝ անկախութեան ուղիով: Նովորոսիսքի հայկական դպրոցի ուսուցիչ Ժանօթ Դաշնակցական Գարեգին Սէյրանեան, 1912ին կ'ընէր ի թիթի-հատի հանդէպ Դաշնակցութեան որդեգրած տակտիկայի մասին հետեւեալ տեղին եւ իրապաշտ քննադատութիւնը.—

«Հայերիս «ինտելիկենցիա»ն Տաճկաստանում ցոյց տուեց իր կատարեալ խա-կութիւնը, երեսայական միամտութիւնը, բարեկամանալով սկզբից եւեթ Երիտ. Թուրքերի հետ: Այդ բարեկամութեան հետեւանքն այն եղաւ, ինչպէս մեզ յայտնի է, որ կարճ ժամանակամիջոցում Ե. Թուրքերը ծանօթացան մեր բոլոր զաղտ-նիքներին, չափեցին, կշռատեցին մեզ, քննեցին ոտից գլուխ եւ վերջն առացին՝ զնայեցին, քննեցին մեզ այլեւս պէտք չունիմք: Միայն այն ժամանակ մերոնք արթ-նացան լեքարգեան քնից, երբ ամէն ինչ վերջացեալ եւ կատարեալ էր: Այժմ հարց է առաջ գալիս. մի՞թէ նրանք՝ — Հայերի ներկայացուցիչները Տաճկաստանում — նախօրօք չէին կարող զգուշանալ, չխարուել, նրանցից (Երիտ. Թուրք), հեռու քայլել ու զաղտնիքի տուրակի բերանը պինդ կապել: Այդ անելու համար անհրա-ժեշտ չէր հանճարեղ ուղեղ, ստեղծագործ միտք, որպէսզի իրերի ներք թա-փանցել, պեղումներ կատարել... այլ շրջանայեցութիւն եւ ուրիշ ոչինչ: Եւ Թուր-քերի կեդրոնացման, ամէն ինչ թրքացման ձգտումը վաղուց անտի յայտնի է բո-լորոքեան, շատ անգամ է այդ հարցի շուրջը հայոց եւ օտարագի թերթերում յօսու-մել եւ եթէ Երիտ. Թուրքերը չեն կարողացել ամողովմի իրենց իրաւունքները կիրարկել կեանքում, այդ եղել է Տաճկաստանի ըէալ պայմանների՝ բաղում աշ-լազան եւ կեդրոնախոյս ազգերի եւ նոր կառավարութեան յեղաշրջող վիճակի շնորհիւ:

«... Ե. Թուրքերը կրցան տաճկահայ ինդելիկենցիայի ... աչքին թոզ փչել, հայկական «գիմնադիրն» բանալու իրաւունք տալ, դատարաններում հայերին յար-գել, զործադրելով Արեւելեան կեղծաւորութիւնը (այն էլ միայն նահանգական քաղաքներում) էֆէնտու սակ եւ այդ ձևով քննեցնել մի առժամանակ: Տաճկահա-յերը միաժամանակ շատ էին պարծենում, որ Թուրք կառավարութիւնը յոյներին, պուլկարներին... ատում է, իրեւ դէպի անջատումը հակուողների, իսկ մեզ, առ երես մեծարում, զովարանում, գլուխներին տակ փափուկ բարձ է դնում:

«... Մի կուս. որ իր զործած սխրագործութեամբ Համիտեան շահատակու-թիւններից ետ չի մտում, արժէ՞ր նրա հետ բարեկամանալ, նրան ովսաննա կան-չել, ամէն գալտնիք սանի եւ նոյնիսկ այնքան երեսայեանալ, որ ցանկութիւն յայտնել 61րդ դժուարութեամբ ձեռք բերած յօդուածը վերացնելու: Գոնէ վերջին Ատանայի կոտորածը պիտի գլխի բերէր մերոնք, որ թուրք ամբոխը շատ կայր ժամանակում երբեք չի՛ բարեկամանայ հայերիս հետ, որ նրանց բուրք մեծա-մասնութեան հոգում բուն դրած ատելութիւնը մոզակամ գաւազանի մի հարուա-ծով չի կարելի վաճել: Այդ բոլորից յետոյ մերոնք էլի չարքնացան...»

«... Կարմիր կոմիտէի ահ ու սարսափի տակ ընտրուեցին 270 պատգամա-ւորների դիմաց միայն (9-10) Դաշնակցականներ: Այդ ժամանակ մերոնք արթնա-ցան միջնադարեան քնից, ինչպէսզի գլուխների հաւաքեցին, բայց աւաղ փառացս անցաւորի: Այդ ընտրութիւնից յետոյ մերոնք իրենք խարուած դտան, սկսեցին վայնասուն բարձրացնել փոխանակ կարմրելու եւ լուելու ամօթից:

«Մօտ ապագայում աւելի եւս կը պարզուին մեր կուսակցութեան սխալ դիրքերը, երբ Ե. Թուրքերը իրենց գեները կ'ուղղեն մեր կուս. պարագուիները դէմ, եզրակացութեան յանգել եմ, ծախօթանալով Տանկաստանի իրական կեանքին»:

(Հ.Ս.Ս.Հ., Պ.Կ.Պ. Ֆոնտ 27, Գ. 394 թ. 6-12 եւ Զ. Կիրա-կոսեանի զիւրքը, էջ 71):

Անդրանիկի կեղծ Սահմանադրութեան եւ Իթթիհատի հանդէպ Դաշնակցութեան անսակարկ նուիրումի մասին այլ առիթով խօսած ենք: Հոս կուտանք՝ հայրենի պատմարան ձոն Կիրակոսեանի հայ քաղաքական մտքի այլ հոսանքներու կապակցութեամբ յայտնած մտքերը:

«Իթթիհատի հետ Դաշնակցութեան կնքած վնասարեւ դաշինքը ժամանակին դատապարտում էին Թուրքիայի պայմաններում գործած հայկական հասարակական, քաղաքական բազմաթիւ գործիչներ՝ Ռամկավարներ, Հնչակեաններ եւ անկուսակցական մարդիկ: Դրանից յատկապէս զժգոհ էին Կ. Պոլսոյ հայկական բարձր հոգեւորականութիւնը, նախկին ռէժիմի օրով որոշ արտոնութիւններից օգտուող մեծահարուստները»:

(Ճ. Կիրակոսեան էջ 72):

«... Դէպքերու ընթացքը կը համոզէր մարզկանց, որ ո՛չ մի լուր բան այլեւս Թուրքական կառավարողներէն հնարաւոր չէ սպասել:

«Ե. Թուրքերը յանցաւոր կը նկատէին իրենց նախորդները՝ որոնք չէին կրցած ձուլել Պալքանեան ժողովուրդները, 200 հազար Թուրք գաղթականներ կ'ուղղէին տեղաւորել հայոց աշխարհէն ներս»:

Տոքթ. Նազըմը որ ազդեցիկ էր ըլլալով հանդերձ ըստ Մ. Վարանդեանի «Լայնախոհ» էր նոյն ատեն(?) լսեմք, թէ ի՞նչ կ'ըսէր:

«Մի մտռամբ, որ մեր նախահայրերը Թուրքներէն եկած են եւ այսօր Անդրկովկասի, ինչպէս եւ Կասպից ծովէն դէպի Արեւելք տարածուող ընդարձակ հոգամասերու վրայ բուրք ցեղերը կ'ապրին գրեթէ միատարր: Աւա՛ղ մեր դարաւոր թշնամի աուսական լուծի տակ: Մեր քաղաքական հորիզոնը բաց կը մնայ այդ ուղղութեամբ միայն, եւ մենք պէտք է իրականացնենք բուրք ցեղի միաբերը Միջերկրականէն մինչեւ Արալի ծովը: Իրենց ծագումին եւ պատմական կոչումին գիտակից բուրք մտաւորական եւ քաղաքական գործիչները այս հեռանկարով միայն կը կարողանան առաջնորդուիլ եւ ատով խանդավառել նաեւ ժողովուրդը եւ երիտասարդութիւնը, որ իրար յաջորդող պարտութիւններէն եւ ձախդարութիւններէն յետոյ, կարծես մատնուած է յուսալուծման, («Արարատ», 8, 9, 1963, թիւ 6342):

Թուրք պատմարան Թէքին Ալը կ'առաջարկէր իր «Թուրքիա եւ Բանթուրքիզմի Իտէալը» 1915ին լոյս ընծայած (Անգլ.) գրքին մէջ «Նոր հողամասեր գրաւել Արեւելքի մէջ, համախմբել աշխարհի տարբեր երկիրներու մէջ բնակուող բուրք ցեղերը, (իւր հաշուամենքով 60-70 միլիոն մարդ) «ազատագրել զանոնք օտարերկրացի տիրապետութենէն, զանոնք միաւորել քրքական մէկ պետութեան մէջ, ձգտել միւս ազգերու տրամադրութիւնն իրենց ծրագիրներու իրագործման քանակաբարձին...»:

Պոլսոյ հայ գործիչներուն հասցէագրուած սպառնալից նամակներէն մէկուն մէջ ըսուած է. «Մենք խորհուրդ կուտանք ձեզի չիսուիլ այլեւս հայկական բարեկորագումներու մասին: Եթէ դուք այդ ընէք, գործը կը բարդանայ, եւ մենք կը կոտորենք ձեզ՝ ձեր քեզ երիտասարդ: Մենք ձեր բարոսիքը կը քափենք ուղղակի փողոցներու մէջ եւ դուք վերջին կոտորածները ցանկալի կը համարէք, նրանց համեմատութեամբ որ մենք կը կատարենք»:

(Պ. Փափաղեան, «Հայաստանի Ողբերգութիւնը», 1918, Պոսթոն (Անգլ.), էջ 101):

Այս ձեւի այլ նամակի մը մէջ ըսուած էր, որ «Գործը ծայրայեղութեան կը հասնի... բոլորիդ, մեծէն սկսած մինչեւ պոստիկը կը սպաննենք»:

(Տես՝ «Հորիզոն», 1913, թիւ 288):

Սահմանադրութեան նոր հռչակման շրջանին Ահմէտ Ռիզան (Իթթիհատի հիմնադիր, տեսարան) որ ընտրուեցաւ Համիտի զահակաւորութենէն ետք Օսմ. Պորհըրդարանի Նախագահ, կը յայտնէր. «Մենք արեւմտեան մէջ կը խեղդենք անգատողական որբէւ շարժումը»:

(Հ. Երամեան «Յուշարձան վան-Վասպուրականի», Աղեքսանդրիա, 1929, հատոր Բ., էջ 89): Ըստ Թէոդիկի Տարեգրքին (1916-1920), էջ 50ի «1914 Յունուարին Օսմանեան մայրաքաղաքի մէջ պաշտօնեայ մը հրապարակաւ կը յայտնէր, թէ «աեռելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպէս բրինատանա»:

Երիտ. Թուրքերու օրկան «Թասֆիրի էֆքեար» թերթը մուրաբիտ ատելութեամբ սողորուած հակահայկական նիւթեր կը տպագրէր: Իր համարներէն մէկուն մէջ կը գրէր, թէ «Հայկական խնդիրը պիտի վերանայ եւ այլեւս անոր հետ գրադուելու բան պէտք պիտի չտեսնուի»: Իսկ Օսմանեան Պորհըրդարանի Նախագահ Պալքըմը վրէժիւնդրական ճառեր կ'արտասանէր, Պալքըմը մէջ կորսնցուցած հողերը եւ գրաւելու համար»:

(«Մշակ», 1914, թիւ 113, ձ. Կիրակոսեան, էջ 113):

Թրքական «Ալլամ» թերթը. «Մի՛ վախճաք, հայրենակիցներ, մի վախճաք» խմբագրականի մէջ ուղղակի կը գրէր. «Օսմանցիութիւնը, իսլամութիւնը պիտի տիրապետեն Արեւելեան, ինչպէս Արեւմտեան Անատոլիոյ նահանգներուն վրայ, շատ չանցած հայութիւնը, հայ ցեղը կը կորսուի մեծ շտապումով»:

(«Հորիզոն», 1913, թիւ 131):

Ճիւղիտի Նանսէն որ անձամբ Հայաստանը շրջած է, կը գրէ մեր ժողովուրդին տաղանայներուն մասին, կը խօսի մեր կրած անիրաւութիւններուն, յուսալարութեանց եւ Արեւմուտքի քաղաքական մարդոց միայն իրենց շահերէն տարուած աշխատանքներուն մասին: Ակնարկելով Երիտ. Թուրքերուն, ան կ'ըսէ, թէ հայերու ուրախութիւնը երկար չտեսնուի, շուտով յայտնի եղաւ Երիտ. Թուրքերու «գուտ քրքական գերադասութիւնն ապահովելու ձգտումը: «Թուրքերէնը ազգային լեզու հռչակուեցաւ եւ պարտադրուեցաւ ամբողջ երկրին: Երկար չտեսնուի նաեւ երախտագիտութիւնը՝ գործարարները ցոյց տուած էին հայերուն հանդէպ, անոնց մատուցած օգնութեան համար, ի տապալումն Բոնակալութեան: Թուրք կրօնաւորները ժողովուրդը կը մղէին պայքարի: Ժէօն-Թուրքերը փոխեցին իրենց վարմունքը»:

(Ֆ. Նանսէն «Հայաստան եւ Մերձ. Արեւելք», 1958, Պէյրութ, էջ 257 — թրգմ.):

«... Միակ տարբերութիւնը որ կար Իթթիհատի եւ հին Թուրքերու հալածանքներուն միջեւ, հայերուն դէմ սարքուած հալածանքներուն կ'ակնարկեմ, հետեւեալն էր. «Ժէօն Թուրքերու հալածանքները հետեւանքն էին ինքնամոլ պատրաստուած ծրագրի մը, հետեւաբար անբաղդատելիօրէն աւելի վտանգաւոր էին: Ժէօն Թուրքերու կուս. պետերէն շատեր իրենց կրթութիւնը առած էին Բրուսիոյ մէջ, եւ լաւ սորված էին մեթոտը: Փաստաթուղթեր կան, որոնք կ'ապացուցանեն, թէ Թուրք կառավարութիւնը Համիտ. Ա. Պատերազմէն իսկ առաջ վնասած էր տկարացնել եւ քայքայել Հայաստանի բրիտանացի բնակչութիւնները, ներմուծելով անոնց մէջ այլ տարրեր»:

(Ֆ. Նանսէն, էջ 260):

Գերման Տոբթ. Եռհաննէս Լեփսիւսի «Հայկական Ջարդերը» հատորին մէջ տրուած է Իթթիհատի դէմ պայքարող Իթթիլաֆական Շէրիֆ Փաշայի ամենէն բուռն դանդաժը Հ. Յ. Գ. ի դէմ որ «Ց տարիէ ի վեր, այսինքն Երիտ. Թուրքերուն Իթթիհատ եւ Իթթիլաֆ հատուածներուն բաժնուելէն ետք» կուսակիցներն ու պաշտպանները եղած են Երիտ. Թուրք Կոմիտէին: Որքա՞ն անգամներ կ'եզրակացնէ ան, գգուշացուցի զիրեմի Իթթիհատի դէմ որոնց սեւ հոգին կը ճանչնայի: Գոնէ Ատանայի ջարդերը որոնք Իթթիհատի Կոմիտէի հրամանովը կազմակերպուեցան, պէտք էր որ Դաշնակցականները իրողութիւններու իմաստը հասկնայու մղէին: Ինքզինքնին Իթթիհատ եւ Թէրաֆէր Կոմիտէին հետ համերաշխ հռչակելով փոխանակ իրենց դատը պաշտպանելու՝ ասոր դէմ դաւաճանած եղան»: («Հայկական Ջարդերը», էջ 287-8, Պէյրութ, 1965, Մատենաշար «Ազգակ»ի, թիւ 98):

Անդրադարձանք շատ հակիրճ կերպով Դաշնակցական տեսարան Մ. Վարանդեանի «Հ. Յ. Գ. Պատմութիւն», Ա. հատորին կարգ մը մեկնաբանութիւններուն: Ըսենք որ ան միակն է որ ցարդ հեղինակած է Կուս. Պատմութիւնը: Իր մասէն ետք 1950ին Գահիրէի մէջ լոյս տեսած է անոր գործին Բ. հատորը, պատկերազարդուած՝ կուսակցական ղեկավարներով եւ Փետայիներով:

1902ին Փարիզի մէջ, Իշխան Սապահէտտիին եւ եղբոր նախաձեռնութեամբ դումարուած ժողովին, Չերազի հետ յանձին Պատմաձեռնի, Դաշնակցութիւնն ալ կը մասնակցի, սակայն (մասնակցողներուն մէջ — Հնչ. չկար, կային Վերկ. Հնչակեաններ — Հ. Գ.):

«Սակայն անկարելի եղաւ համաձայնութեան գալ էական խնդրին շուրջ, վասնզի Օսմանցիները ո՛չ միայն դէմ էին յեղափոխական տակտիկի, այլ եւ չէին ուզեր ճանաչուլ հայկական առանձին դատ մը, երաշխաւորուած միջազգային դաշնադրերով, բան մը որու վրայ կը պնդէին բոլոր հայ պատգամաւորները»:

«Մէկ խօսքով հայերը 61րդ եւ Մայիսեան 1895ի բարեկարգութեանց գործադրութիւնը կը պահանջէին»:

«Երիտ. Թուրքերը կատաղաբար ընդդիմացան հայոց պահանջներուն»:

(Մ. Վարանդեան «Հ. Յ. Գ. Պատմութիւն», Բ. հատոր, 1950, էջ 2-3):

«Հայ պատգամաւորները ստիպուեցան հեռանալ համաժողովէն»:

Դաշնակցութեան Արդ. Ընդհ. Ժողովը Վիեննայի մէջ ընդունած էր՝

«Ճետերաթիւ» սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագիր, որ սպահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը:

«Միեւնոյն ատեն, Թուրքերու մէջ տարածուած անհիմն թիրիմացութիւններուն վերջ տալու համար ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատական ո՛չ մէկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն եւ տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական 6 վիլայէթներուն մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին»: (Մ. Վարանդեան, էջ 5):

Փարիզի 1907ի համազումարին (Իթթիհատի) որուն կը մասնակցէր Դաշնակցութիւնը, 1908ին Յուլիսին, ինչպէս տեսանք, Իթթիհատը Սահմանադրութիւն պահանջեց Սուլթանէն՝ որ տեղի տուաւ: — Ողջագուրում, բանտերու դռները բացուեցան, Իզմիրեան վերադարձաւ, Օրմանեան հրաժարեցաւ, միթիկներ տեղի ունեցան:

«Ո՛չ մի անջատական ձգտում, ո՛չ մի խօսք այլեւս եւրոպական միջամտութեան, 61րդ յօդուածի մասին, դադարեցուցինք «Բեր-Արմէնիան» ու եւրոպական բորբականալը, լծուելով մեր իսլամ դրացիներուն հետ՝ ընդհ. ուժերով սատարելու ողջ կայսրութեան յառաջդիմութեան ու բարորութեան»:

1908ի Սեպտ. 1ին, Դաշնակցութեան Ներկայացուցչական ժողովի կողմէ շրջաբերական մը կը յայտնէր (26 կէտերէ բաղկացած), թէ «Թրքաց Հայաստանը Օսմ. կայսրութեան անբաժան մասն է, հիմնուած ապակեղրոնացման սխտէմի վրայ, երեսփոխանական ժողով, դադարեցուցուած թուէարկութիւն, հաւասարութիւն բոլոր ազգերու եւ կրօնական համայնքներու»:

«Շատ ջանցաւ, հայ շրջաններու մէջ ծայր տուին կասկածն ու վհատութիւնը»:

«Իթթիհատը գինովցած կը սիրարանէր Համիտի հետ, Սուլթանը նոր դաւեր կ'որոնար եւ պետական հարուած կը պատրաստէր»:

«Իթթիհատը հաստատեւ էր կուսակցական տիկզադրութիւն: Նա իւրացուցեր էր վատթարագոյն նացիոնալիզմի, ազգայնամուլութեան հաւատաձգք եւ կը ձգտէր ձուլել բոլոր այլազան ցեղերը Օսմանցիութեան մէջ, ստեղծել Օսմանեան կայսրութեանն ոչ միայն մէկ պետութիւն, այլ եւ մէկ ազգ — Օսմանեան ազգը»: (էջ 14):

«Այստեղ չկայ հայ, յոյն, պուլկար, ալպան, տարր, ամէնքն ալ օսմանցի են», կը գոչէր Ահմէտ Ռիզա... «Եր գուր ու-թուրք երեսփոխանները եւ Իթթիհատի հակառակ թուրքեր (Իթթիլաֆ, Ահրար) կ'ազդակէին, թէ Միութիւնը տարբեր տեղերու ներդաշնակ այլազանութեան մէջ է եւ թէ Օսմանեան պետութիւնը կարող է իրօք յառաջդիմել ու բարգաւաճել միայն այն պարագային, երբ անոր այլացեղ հատուածները կը վայելեն որոշ չափով ինքնավարութիւն»:

«Միութիւնը ըսելով, Իթթիհատը կը հասկնար պարզապէս ձուլում... տաճկութեան մէջ: Եւ այդ նպատակով նա կերտեց բացարձակ կեղրոնացման մէկ սխտէմ՝ Թուրք տարրի գերակայութեամբ: Արդարեւ, 8-9 ամսուան Իթթիհատեան իւրախութիւնը կը յատկանշուէր պաղ անտարբերութեամբ դէպի ոչ-թուրք ազգերու կեցակայան պահանջները: Հայ տարրը հին ուժիմի մեծագոյն զոհն էր, բայց մենք չտեսանք տիկզադր Կոմիտէի կողմէն որեւէ լուրջ փորձ դարձանելու այդ տարրի արհեստու վէրքերը: «Ջարդարարներ... բազմած էին նոյնիսկ Օսմ. Խորհրդարանին մէջ: Ո՛չ մէկ լուրջ փորձ՝ մաքրագործելու, թարմացնելու վարչական, ոստիկանական, դատաստանական մթնոլորտը: «Ամէն ինչ կը մնար ըստ հնոյն: «Հուրիէթ» միայն կար, խօսքի, մամուլի, երթեւեկի ազատութիւնը, որ անշուշտ, մեծ բարիք մըն էր, բայց քիչ կը սփոփէր թշուառութեան մէջ զեղբորդ մեծ զանդուածը»:

Գրողութեան քաղաքականութիւնը յառաջ տարուեցաւ նաեւ Իթթիհատի հակառակորդ կուսակցութեան դէմ — Ահրարներու, հայրենիքի դաւաճան հռչակուեցան բոլոր անոնք — քրիստոնէայ թէ իսլամ — որոնք պաշտպան էին ապակեղրոն սխտէմի եւ ազգերու իրաւահաւասարութեան: (էջ 15):

«1909ի Մարտ 31ին «...Սուլթանի կողմնակիցները վերստին բազմեցուցին զինք բռնապետի դահին վրայ...»:

«Մակեղոնիոյ բանակը Շէյքիթ Փաշայի՝ չուտով օդնութեան հասաւ Իթթիհատի, դահնկէց ըրաւ դաւադիր Սուլթանը եւ Մակեղոնիա աքորեց, (Սեյանիկ): (Յետոյ Պուլիս բերուեցաւ՝ ուր մեռաւ — Հ. Գ.):

«... Անդին տեղի կ'ունենար Կիլիկիոյ կոտորածը... 1909ին... որ «Համիտականներու գործն էր... ըստ Մ. Վարանդեանի, իսկ Իթթիհատի գործն էր՝ ըստ մնացեալ բոլոր պատմիչներուն...: (Ի՛նչ միամտութիւն — Հ. Գ.):

«Կասկածը մտեր էր մեր շարքերուն մէջ Իթթիհատի քաղաքականութեան հանդէպ... «ԱՅԴ ԱՀԵՂ ՕՐԵՐՈՒՆ, կը գրէ «տեսարանը», ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԻԱԿ ԽԱՐԻՍԵԸ ԴԱՐՁԵԱԼ ՆԱ ԷՐ — ԻԹԹԻՀ-ՀԱՏԸ: Իսկ Ահմէտ Ռիզա՞ն... մոլեռանդ թուրք, այո՛, թրքական գերակայութեան ու բացարձակ կեդրոնացման ախոյեան, հակառակորդ Ինքնավար Հայաստանի՛ (որ Հնչակեան թեզն էր — Հ. Գ.) բայց եւ Սահմանադրութեան ու խաղաղ յառաջդիմութեան ՀԱՄՈՁ-ՈՒԱՄ ՊԱՇՏՊԱՆ (ընդգծ. Հ. Գ. — Մեկնաբանութիւն՝ միամիտ մեկնաբանութեանց մասին, անխորդ է կը կարծենք):

«Այդպէս խորհեցան Դաշնակցութեան ղեկավարները» կը գրէ Մ. Վարանդեան (էջ 17): «Մերոնք (Դաշնակցականները) որոշեցին նորէն ժպտերես դիմաւորել Երիտ. Թուրքերը... շարունակել բարեկամական յարաբերութիւնները Իթթիհատի հետ, որ նորէն տէր էր կացութեան եւ նոյնպէս կը փնտռէր Դաշնակցութեան բարեկամութիւնը: (էջ 17):

1909ի Սեպտ.ին Դաշնակցութեան Ծրգ Ընդհ. Ժողովը, խորապէս գիտակցելով նոր Ատանաներու վտանգը՝ կ'որոշէր —

«Շարունակել համագործակցիլ Իթթիհատի հետ ընդհանուր ձեռնարկներու եւ երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներէ կազմուած խառն կոմիտէներու միջոցով... դուրս չգալով Ընդհ. Ժողովի գծած ուղղութենէն»: (էջ 18):

«Եւ քիչ յետոյ... հանդիսաւոր ուխտ մը կը կնքուի —

Յօդուած 3 — Օսմ. նուիրական հայրենիքը անջատուձէ եւ բաժանուձէ ղերծ պահելը երկու կազմակերպութեանց միացեալ գործունէութեան նպատակակէտը ըլլալով, անոնք պիտի աշխատին գործնականապէս փարատել հանրային կարծիքին մէջ բռնակալ ուժ-ժիւղէն ժառանգ մնացած այն սուտ զրոյցները, թէ հայերը անկախութեան կը ձգտին»:

Կրք յօդուածով «նահանգային իրաւանց ընդարձակման» մասին համաձայն են եւ կ'որոշեն «աշխատիլ ձեռք ձեռքի տուած՝ վերոյիշեալ կէտերու իրականացման համար:

Ստորագրութիւն՝

Իթթիհատի Կեդրոն

Դաշն. Պոլսոյ Պատասխանատու Մարմին

Իսկ 1909ին՝ Ե. Ընդհ. Ժողովի Յայտարարութիւնով Դաշնակցութիւնը կը խոստանայ՝

«Որ՝ Դաշնակցութիւնը, իրրեւ կռուող, յեղափոխական Կուս. վար կը դնէ դաւադրական այն միջոցները՝ որոնցմով կը պայքարէր Հին բռնակալ ուժի մինչեւ դէմ եւ... ի հարկին հանդէս կուզայ ռազմական իր ամբողջ ուժով՝ կռիւ մղելու ուժակցիւնի դէմ, երբ ան կը սպառնայ Սահմանադրական կարգերուն...»:

«Որ՝ Դաշն. պիտի շարունակէ նոյն թափով... համագործակցիլ բուրք երիտ. կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ՝ ի պաշտպանութիւն Սահմանադրութեան եւ համախմբել այդ գործակցութեան շուրջ այն բոլոր ընդդիմադիր տարրերը, հայ եւ օտար, որոնք դիտակցութիւն եւ նպատակ ունին պաշտպանելու նոր կարգերը, ինչպէս նաեւ Ժողովրդի կեղեքուած դասին շահերը...»: (?)

«Որ՝ Դաշնակցութիւնը վնասակամապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տփնի վերակազմել երկրի քաղաքական եւ տնտեսական կարգերը Օսմանեան Պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններուն տեղական լայն ինքնավարութեան վրայ եւ ամրապնդուած բոլոր տարրերու կապերով...»:

«... Ժողովը կոչ կ'ընէ Դաշնակցական բոլոր Մարմիններուն ճշգրտէն հետեւիլ Կազմ. Բարձր. Ատանի դժած շաղկի... խորապէս համոզուած, որ կարծիր ու մահարոյր անցեալէն յետոյ, կարող պիտի ըլլանք պատրաստել վաղուան յաղթանակը, ժողովրդապետութիւնը, հիմնուած աշխատանքի գաղափարին վրայ:

«... Դաշն. սկսաւ ... դատարարակել հայ երիտասարդութիւնը նոր կարգերու, նոր հաւատամքի ոգիով...»: (էջ 21):

Քանի մը էջ առաջ Ատանայի կոտորածը... Համիտին վերադրող Մ. Վարանդեան, քանի մը էջ ետք (էջ 23) կը գրէ. «Իթթիհատը իր յետադէմ տարրերով (չենք գիտեր թէ յատաճողէ՞մ սարբերը էն-վէրն ու Թալա՞թն էին, թէ ոչ Նազրեմ կամ Պ. Շաքիր — Հ. Գ.), մեղսակից էր կատարուած եղեռնին, իսկ Դաշնակցութիւնը բարեկամ էր Իթթիհատին, Փարսիեան օրերէն ի վեր... եւ հետեւաբար ո՛չ-Դաշնակցական հայ թերթերը «Բիւզանդիոն», «Արեւելք», «Հայրենիք» Ատանայի փաստը լայնօրէն «օգտագործեց մեղի դէմ», կը գրէ. «Իսկ երբ Դաշնակցականները ստորագրեցին ծախօք համաձայնագիրը Իթթիհատի հետ — Ատանայի 30 հազար հայոց Իթթիհատի կողմէ ջարդուելէն ետք — ԲԱՐՁՐԱՅԱԻ ահաւոր վայնասուն, Դաշնակցութիւնը որակեցին դաւանան, ազգադաւ մակդիրներով...»: (էջ 23):

— Ո՛չ Դաշնակցականներու վերեւի ամբաստանութիւնը, «Անոնք կ'ազդէին իսակ ու պարզուկ մտքերուն վրայ... (Երանի ազդէին ղեկավարներուն... վրայ — Հ. Գ.) եւ կը ստեղծէին համապատասխան տրամադրութիւն: «Նոյնիսկ այնքան յատաճ գացին մեր հակառակորդները, կը գրէ Մ. Վարանդեան, որ ամբաստանած են Դաշնակցութիւնը որ Սելանիկի մէջ կնքած համաձայնութեամբ «յանձնառու եղած են Իթթիհատի առջեւ յաջողակելու հայութեան ձուլումը թուրք իշխող տարրին մէջ...»:

«Ազատամարտ»ի հերթումն անգամ անկարող եղաւ ջրել ի սպառ այդ անհեթեթ յերիւրանքը»:

«Կր պոռային թէ Դաշնակցութիւնը կ'ուզէ քանդել Եկեղեցին, անկրօնութիւն կը քարոզէ, ազատ սէր կը քարոզէ նոյնիսկ Եկեղեցիներու բեմերէն: Եւ այդ վայրենի ժխտէն ծնունդ առաւ ազմկայոյց վէճը, որ Երկար ժամանակ թունաւորեց մթնոլորտը, Պոլիս, Իզմիր եւ այլուր»: (էջ 24):

Մեզ չի հետաքրքրեր «բաց ու գոցի» հարցը, բայց ընթերցողը հարց կուտայ — եթէ 1908ին ԻԹԹԻՆատը կը ձգտէր բոլոր ոչ-թուրքերը թրջացնել, «Օսմանցի եմք» յայտարարել տալ, յեղափոխական Դաշնակցութեան կը պարտադրէր որ «զէմ-քը վար դրած եմք» յայտարարէ, Ատանայի կոտորածէն ետք, Դաշնակցութիւնը կրկին կը կանչէ «անջնտողական», «ինքնավարութիւն պահանջողներու դէմ պայքարելու դիրքերուն», (ԻԹԻԼԱՖ-Հնչակեան ճակատի դէմ), երբ Դաշն. ի հարկին «ուղղակիան ամբողջ ուժով ո՛չ միայն գիտակցօրէն կը գործակցի... այլ նաեւ ոչ-Դաշնակցականներն ալ ԻԹԹԻԽատի փարսիքը բերել կ'որոշէ... (Այդպիսի փորձ եղաւ 1912ի Երեսփ. ընտրութեան 9 Հնչակեան եւ 11 (3ը չէզոք) Դաշնակցական երեսփոխան ընտրելու համար: Ակնունին դիմած էր Պոլսոյ Հնչ. Կուս. Ընկ. Սապահ Գիւլեանին, որ մերժեց), երբ Սերաստացի Մուրատներն, Տրպիզոնի Դաշնակցութիւնը, Մուշի եւ Սասնոյ գործիչները, Օսմանցիներու նոր Սահմանադրութեան հանդէպ վերապահութիւն կը յայտնեն... ապա ինչո՞ւ մեղադրել եւ գրել, թէ միամիտներու վրայ կ'ազդէր այդ գործակցութեան «սխալը...»:

«1909-1910-1911 անցաւ մեզ մօտ ներքին սուր պայքարի նշանակին տակ», բայց ատկէ տարի մը յետոյ (1912) երբ հասան ոչ-թուրքներու եւ ուսուցիչներու բանակցութեանց օրերը, երբ հարկ եղաւ մէկ ճակատ կազմել եւ ազգային մէկ կամք ցուցնել պետութիւններուն — մէկէն ի մէկ չքացան հատուածային բախումները, կիրքը լոց ու տեղի տուաւ, օրինակելի համերայնութեան»:

Էջ 44-55ի մէջ Մ. Վարանդեան կ'ընդունի որ Դաշնակցութիւնը չկրցաւ կիրկիոյ մէջ Մասնաճիւղեր կազմել:

«Այսպէս թէ այնպէս, ամբողջ 11 տարի, 1895էն ի վեր, երբ Հ. Յ. Դ. սկսաւ շահագրգռուիլ կիրկիւնով, նա չկարողացաւ խոշոր քայլեր ընել այդ ճակատին վրայ եւ նոյն իսկ քիչ-չատ լուրջ կազմակերպութիւն ստեղծել: Մեր գործունէութեան շրջանէն դուրս կը մնար նաեւ Փոքր Հայքը, ուր Դաշնակցութիւնը գրեթէ գործօն դեր չունէր մինչեւ Օսմանեան «Հուրիէթ» (1909): (Մ. Վարանդեան, «Հ. Յ. Դ. Պատմութիւն», էջ 53):

Իսկ մենք կ'ըսենք — կիրկիւնը եւ Փոքր Հայքի ազատագրական, Ֆետայական, բոլոր շարժումները Մ. Դ. Հնչ. Կուս. բաժինն են եղած Համիտի օրով եւ մեծ մասամբ ԻԹԹԻԽատի օրով:

Ասիկա հաստատելէ ետք, մարդ կը ծիծաղի Մ. Վարանդեանի վրայ որ... 1896էն ետք մեզ «մարդու սո՛վ»ի հետեւանքով չքացա՞ծ կը նկատէր ասպարէզէն իր Ա. հատորին մէջ...:

Մեր կողմէ ըսենք, թէ այնքան ծանր յանցանք չէր Դաշնակցութեան համար 1907ին Մուլթանը տապալելու մտքով գործակցելը ԻԹԹԻՆատի հետ՝ որքան... ԻԹԹԻՆատի դիմագիծը պարզելէ ետք Ատանայի կոտորածին՝ անոր վստահելով Հայ Յեղափոխութեան առաջադրանքները մոռնալու մեղքն էր, ինչպէս որ տեսանք: Բայց աւելորդ չենք նկատեր լսել նաեւ անկեղծ յեղափոխական Ս. Զաւարեանի վկայութիւնը «Ազատամարտ» Պոլսոյ Դաշն. օրկանին մէջ:

1912ի Օսմանեան Պորհրդարանի ընտրութեանց հակառակ Դաշնակցութեան հետ սերտ բարեկամական դաշինքի, ԻԹԹԻՆատը շահեցաւ... բայց Դաշնակցութիւնը չչահեցաւ...: Ահա թէ ինչ կը գրէ ղեկավար Սիմոն Զաւարեան Պոլսոյ «Ազատամարտ»ի 22 Ապրիլ 1912ի թիւին մէջ ԻԹԹԻՆատը մեղադրելէ ետք.—

«... Տարրական քաղաքավարութիւնը կը պահանջէր — չըսենք յանձնառութիւններն ու ազնուութիւնը կը պահանջէր բարեացակամ ու փոքրիկ գտնուիլ դէպի իր «բարեկամ Դաշնակցութիւնը, դէպի Սահմանադրական քաղաքականութեան համակիր հայ տարրը»:

«Ասոր փոխարէն՝ մեր «բարեկամ»ները մերժեցին նոյն իսկ հայոց պահանջը իր օրինական սեպուած թիւին նկատմամբ... Ափսոս միայն, որ 1000 տարի քաղաքական կեանք վարելէ ետք, մենք չենք իւրացուցած աւելի բարոյական սկզբունքներ եւ հասարակական կեանքը ղեկավարող աւելի հաստատուն կիմեր:

«... Սակայն մարդկային գոհերէ պակաս չէ միլիոնաւոր հայերու կրած յուսահարութիւնը, եւ այն՝ որ Թուրքիայի վերածնութեան կողմնակից ու աջակից հազարաւոր հայեր խախտուած կը տեսնեն իրենց վստահութիւնը եւ մեռած՝ իրենց հաւատքը դէպի ԻԹԹԻԽատի խոստումները, դէպի Սահմանադրական կառավարութեան արդարամտութիւնը...»:

Ի՞նչպէս տեղի ունեցած են 1912ի ընտրութիւնները — Ս. Զաւարեան «Ազատամարտ» օրկանին 24 Ապրիլ 1912ի թիւին մէջ կը գրէ.—

«Տիրականակերտի մէջ ընտրական ցանկերը առնուած են 15 տարի առաջուան մարդահամարի տեղակիներէն (մինչդեռ անկէ ետք երկու մարդահամար եւս տեղի ունեցած է, որով հազարաւոր անուններ դուրս ձգուած են): Ցանկերու մէջ պակաս չեն մեռեալներու ու զաղթողներու անուններ, մինչ ընդհակառակը, 1880-1894ի ծնունդներէն շատեր իսպառ չեն նշանակուած:

«Երկրորդ աստիճանի (բուն ընտրողները) չեն ընտրած քուէաթուղթով եւ ո՛չ ալ սուսփերով, այլ նշանակուած են ազդեցիկներուն կողմէ:

«... Ահա այս ձեւով է, որ ԻԹԹԻՆատական կառավարութիւնը ապահոված է իր Բ. կարգի ընտրողները, ամէն տեղ որչափ կարելի է նուազեցնելով հայ ընտրողներու թիւը...:

«... Տիրականակերտի մէջ առաջինը եղան որ բողոքեցին ԻԹԹԻՆատի ու կառավարութեան ապօրինութեանց եւ խարէութեան դէմ, եւ բոլորը միարեան՝ Դաշնակցական, Հնչակեան, կղերական, հարուստ, աղքատ, հայախօս ու քրտախօս որոնցքին բողոքել եւ չմասնակցիլ ընտրութեանց...:

«Բողոքեցին նաեւ Շապին Գարահիսար, Ռարբերդ, Ամասիա, Պիթլիս, Մարաշ, Ատանա, Տրապիզոն, Իզմիթ...: Հայ պլօքի կողմէ բանակցութիւններ կատարող Դաշնակցութիւնը մնաց յուսախաբ եւ խաբուած, ակամայ յուսախաբելով իր հետ գործակցող միւս հայ խմբակցութիւնները...:

ԻԹԹԻԽատը՝ Դաշնակցութեան.— «Ձեզի գործն է կարելորդ, իսկ գործը մեմք ձեզի կը խոստամանք, արդէն գրաւոր կերպով իսկ յանձն եմք առած...»:

« — Բարեկամութիւն» որ անուշահոտ սուրճէն ու քաղցր խօսքէն անդին չէ անցած տակաւին:

«Ա՛խ այս բարեկամութիւնները, որ վնասել չեն գիտեր, այլ միայն՝ պահանջել:

«Ակամայ կը յիշեմ հին առածը.— Փրկէ զիս Աստուած, «բարեկամ»ներէս, իսկ թշնամիներէ ես զիս կը պաշտպանեմ»:

(Տես՝ «Նշխարներ Ս. Զաւարեան», 1968, Պէյրութ, էջ 172-174):

Հ. Վահան Յովհաննէսեան «Պատմութիւն Հայոց» 2. (1958, Վենետիկ) հատորին մէջ կը վկայէ. «Պոլսոյ եւ գաւառի հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը համակիր չէր ԻԹԹԻՆատականներուն: Ատանայի շարքը շատ բան ըսած էր այն նորեկ ոճրագործներու սեւ ծրագիրներուն մասին: Հ. Յ. Դաշնակցութիւնը սակայն կը շարունակէր սերտօրէն գործակցիլ կառավարութեան, իր երեսփոխանները խօսարանի բեմերէն բռնօճ ճառերով պաշտպանեցին կառավարութեան ընթացքը:

«Յեղափոխական գործունէութեան ամբողջ թղթածրարներ, անուններ, ցանկեր, զինական պահեստի վայրեր այլեւս ծանօթ էին Թուրք կառավարութեան: (էջ 325):

Տրանսպի նշանաւոր պատմաբան Ժազ Տը Մորկան «Հայ Ժողովուրդի Պատմութիւնը» (1947, Պոսթոն) հատորին էջ 342ին մէջ կը նշէ. «Հայերը գործիք մը եղած էին իշխանութեան զլուխ անցած աւազակներուն, որոնք իրենք զիրենք դուրս գալով՝ այլեւս իրենց համխալածական ձգտումները ծածկելու պատճառ մը չունէին: Մուլթանէն նուազ խորամանկ, նուազ քաղաքագէտ, այս ինքնակալ յեղափոխականները կ'որոշէն շարունակել Ապտիւլ Համիտի արիւնոտ գործը՝ այն է ոչնչացնել կայսրութեան ոչ-մահմեդականները»:

«Երիտ. Թուրք մը կ'ըսէր. «Մահմետականներ ենք եւ անհաւատներու հետ հասարակաց բան մը չենք կրնար ունենալ. իսլամական կայսրութիւնը պէտք է մեզի վերադարձուի, ան այնքան ընդարձակ պիտի ըլլայ որ մենք կարենանք բոլորովին խզել կապը քրիստոնեաներու հետ» : (Էջ 242-243) :

ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆԴՀ. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՐԵՍՓՈՒՆՆԵՐՈՒՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՕՍՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ

1908ի 28 Հոկտեմբերի Ազգային Ժողովի Գ. Նիստին 9 երեսփոխաններ հարց կուտան գաւառներէն հետզհետէ հասած ցաւալի տեղեկութեանց հիման վրայ, թէ «Կեմաց, ինչքի եւ պատուոյ բռնաբարութեանց մասին» Պատրիարքարանը հետաքրքրուած է պետութեան մօտ :

Եղիշէ Եպիս. Դուրեան (Պատրիարքական Տեղապահ) ... Ո՛չ մէկ վայրկեան կորսնցուցած է եւ զանոնք ներկայացուցած է դիմումնադրերով Բ. Դրան : ... Կառավարութեան տրամադրութիւններն բարի են... Այսու հանդերձ, աւառարութիւններն ու բռնաբարութիւնները կը շարունակուին դժբախտաբար : Այս է իրաց կացութիւնը :

«... Գաւառային միջավայրեր կան, ուր հին ռէժիմին շարունակութիւնն է որ կը տիրէ տակաւին» :

Գեորգ Վրդ. Ասլանեան (Հնչակեան նախկին զործիչ) .— Մինչ կենաց, պատուոյ եւ ինչքի ապահովութիւնը բացարձակապէս կը պահպի գաւառներուն մէջ եւ ժողովուրդը սովամահ ըլլալու տաղանակին ալ ենթարկուած է : Մասնաւոր նամակները լրագրաց մէջէ հրատարակուածներէն շատ անիլի կակձալի վիճակ կը պարզեն... Կառավարութեան ընթացքը ձգձգումներէ եւ խոստումներէ անդին չ'անցնիր :

Յարք. Ճանկիւլեան (Հնչ. Երեսփոխան) .— Մէկ ու կէս ամիս առաջ գաւառներու սովեալ վիճակին դարման տանելու համար Նպաստից Յանձնաժողովին դիմեցի... որպէսզի կառավարութեան սերմցու առնուի... որ կրնայ փոխ սով ժողովուրդին : Եւ եթէ այս դիւրութիւնն ալ զլացուի, յառաջիկայ ձմեռ սով պիտի տիրէ ամբողջ Հայաստանի մէջ :

Դուրեան Սրբազան (ակնարկելով Պոլիս հասած հայ գաղթականներուն) .— Կառավարութիւնը չէնք մը չյատկացուց անոնց բնակութեան :

Պարզեւ Էփ. Փափագեան .— Դժբախտաբար օր չըլլար որ նոր խժոժութեան մը լուրը չհասնի եւ որ աւելին է՝ տեղ տեղ ջարդի երկիւղներ րսկ կան... :

Արիստ. Էփ. Գասպարեան .— ... Հաստատուած իրողութիւն է, որ գաւառներու մէջ իրերու վիճակը կը շարունակուի նախորդ ռէժիմի օրերուն նման եւ ամէն վայրկեան ահ ու սարսափի մէջ ենք, թէ ի՞նչ տխուր լուրեր պիտի հասնին տակաւին :

Յարք. Ճանկիւլեան .— Քանի որ այս Աթոռները գրաւած ենք ժողովուրդի շահերը պաշտպանելու համար, մեր առաջին զործը պէտք է ըլլայ սերմնցու պահանջել կառավարութեանէն՝ հացի կարօտ գաւառացի հայերուն համար :

Յարք. Էփ. Շահրիկեան (Ատոժ, Դաշն. Երեսփոխան) .— Հայաստանի վիճակը անհանդուրժելի է եւ չի բաւեր խնդրել կառավարութեանէն որ Քննիչ յանձնախումբ մը առաջէ :

Գեորգ Վրդ. Ասլանեան .— Ես հաստատ փաստեր ունիմ ձեռքս, թէ կառավարութիւնը բան մը պիտի չընէ անոնց ի նպաստ : Կը սպասէինք որ Երկրագործական Պանքէն փոխատուութիւն մը ըլլար կարօտ գիւղացիներուն, ո՛չ միայն չընծայուեցաւ այդ դիւրութիւնը, այլ երկրագործին ձեռքէն եզբ ու արօրն ալ կը խլուին : Հայաստանէն եկած նամակներն կակձալի նկարագրութիւններ կը պարունակեն : Կը ձայնակցիմ անմիջական Մասնախումբ կազմելու առաջարկին :

Ղազարոս Էփ. Զալաֆեան .— Կուս. ղեկը հին ռէժիմի մարդոց ձեռքն է տալուին, ծուռ քանակէն ուղիղ դիժ չ'ելլեր : ... Մի մոռնաք որ Խասգիւղի հայոց տուններուն դռները կախիճով գծուած են... : Իրաւունք ունիք զօրաւոր կերպով պաշտպանելու մեր եղբայրները :

Հմայեակ Եպիս. Դիմաֆեան .— Յարուցուած խնդրոյն մէջ էն ուշագրաւը ջարդի խնդիրն է որ կը կրկնուի 13 տարիներէ ի վեր :

Կ'որոշուի Յանձնախումբ կազմել : (Տես՝ Ազգային Ընդհ. Ժողով, 1908, Գ. Նիստ, էջ 42-44) :

Յաջորդ Նիստին Չօհրապ լանսաձեւ մը կ'առաջարկէ՝ որ հինէն մնացած պաշտօնեաներու փոփոխութիւնը, բռնադատուած հողերու վերադարձը վարչապետին (Քէմալի Փաշա) ուշադրութեան պէտք է յանձնուէր :

Իզմիրլեան Արք .— Այսօր որ վարչաձեւը Մահմանադրական է... Ի՞նչ եւ որո՞նք են պատճառները Հայաստանի մէջ տիրող սովին ու հարստահարութեան : Գիւղացին ո՛չ եղ ունի, ո՛չ արօր, իր բոլոր ունեցածը յափշտակութեան առարկայ կը դառնայ եւ հարստահարիչները, չարագործները բանտիմ մէկ դռնէն կը մտնեն՝ միւս դռնէն դուրս ելլելու համար... :

Ժէ. Նիստ՝ 1909ի Փետրուարին :

Չօհրապ .— ... Ես կ'աղաչեմ, որ Օսմ. երեսփոխանութեան զգացմանցը վրայ չկասկածիք :

Ասոնք ամէնքն ալ մեզի չափ ցաւակից են Հայաստանի վիճակին, որուն դարման հասցնելու համար իրենց բարեյօծարութիւնը ցոյց կուտան : (Մափահարութիւններ) :

Յ. Պաքի Էփ. — ... Մենք հիւանդ ենք եւ բժշկը Խորհրդարանն է, ան է որ մեր դարմանը պիտի որոշէ, բայց եթէ մենք չըսենք մեր ցաւերը, չպարզենք մեր պէտքերը, ի՞նչպէս պիտի բժշկէ զմեզ : (Էջ 260) :

Գրիգոր Չօհրապ ԺՔ. Նիստին կ'առաջարկէ. «Ամէն ժամանակ անիլի փարիլ Օսմ. Սահմանադրութեանը որ անիլի ուժովսմ է» :

Յրք. Ճանկիւլեան .— Ատանայի ղէպը դիտումնաւոր եղած է, քանի անգամ է որ դիմում կը կատարուի Ատիլ Պէյի (Ներքին Գ. Ն. ի խորհրդական) ուշադրութիւն չ'ընծայեր : Միւս կողմէ զնքերու հաւաքման խնդիր կը յարուցուի : Ես կ'առաջարկեմ որոշել, թէ եթէ մեր պահանջները չընդունուին, ի՞նչ ընթացք պիտի բռնենք :

Համբ. Պոյաճեան (Մուրատ) .— Ժամանակաւ կ'ըսէինք յեղափոխականներուն, թէ չի մոռնաք զէնք հայքայքիլ ժողովրդին : Մոռցա՞նք այդ պատուերը : Չօք Մարդուան եւ Հաճըն իրենց ինքնապաշտպանութեան շնորհիւ ընդդիմացան եւ ազատեցան ջարդէ : ... Ես դարձեալ վստահ չեմ զինուորակազմութեան վրայ (Երիտ. Թուրք), որ կրնայ փոխուիլ, ու նորէն տղէտ բազմութիւնը մեր ղէմ կը հանէ, իր սիրած սպաները կը սպաննէ. ո՞վ դիտէ թէ ի՞նչ վիճակի հանդէպ պիտի գրտնուինք յառաջիկային : Զինուորականի մը հանդիպեցայ որ նեֆերի զգեստ հագած էր եւ ըսաւ, թէ բանակին մէջ մտանք համոզելու համար զինուորները թէ Շէրիաթ ուղղորդողը (Համիտի կողմնակից), հակա-Մահմանադրականներ են : Որքան ատեն որ Սահմանադրութիւնը ժողովրդական չէ, պէտք է աչքի առջու ունենանք Ատանայի ջարդը : (Էջ 312) :

ԻԳ. Նիստին Պատրիարքարանի կողմէ Ատանայի կոտորածներուն առթիւ Վարչապետին դրկուած թագրերը կը կարգացուի (23 Մայիս 1909) վերջին մասին մէջ ըսուած է թէ՛ «Այլեւ Աստուծոյ դիմելէն ուրիշ ճար չ'է մնացած Հայութեան» :

Հ. Խոճաւարեան .— ... Մահմանադրական շրջանին մէջ ալ կացութիւններն նոյնն է, ինչ որ է Բռնապետութեան շրջանին :

Ն. շիւանեան .— Լորձնաւորութիւն փառարանները կը կատարէ Երիտ. Թուրքերուն, որուն վրայ իրարանցում տեղի կ'ունենայ Լ. Նիստի մէջ : (Էջ 520) :

Յ. Շահրիկեան.— Փոխանցման շրջանի մը եւ դժբախտ պայմանների մէջ կը գտնուիմք: Ի՞նչ կը կամենայիք: Կը կամենա՞ք որ յախումն կոխու մզնիմ կառավարութեան դէմ փոխանակ դէպի առաջ նրանց նեցուկ եւ առաջնորդ լինելու... (էջ 526):

Համբ. Պոյանեան.— Յ. Պապիկեան Ատանայէ վերադարձին ինչ որ տեսած էր Յ էջ նոթագրել տուած էր, իսկ մնացածը ուրիշին ընդօրինակել տուած, որ իր տպաւորութիւններն են... եւ արդէն Պատրիարքարանի մէջ պահուած է այդ տեղեկագրին ճիշդ գործին: ... Հայ Մեկուսները անտեղեակ չեն իրենց թուրք պաշտօնակիցներուն հոգեբանութեան, հակառակ պարագային, կրնաք վստահ ըլլալ, թէ մեմք պատրաստ էինք մեր կեանքի գնով երեսն քերթի ճշմարտութիւնը: (Ծափահարութիւններ): (էջ 153 թ. նիստ, 1910, Յունուար 22): ... Թուրքերուն փոքր մասը Սահմանադրականներ են...:

Վարդգէս կը պնդէ որ անպայման հայերը զինուոր տան Օսմ. բանակին:

Ժողովները բաղկացած էին մեծամասնութեամբ պահպանողականներէ: Կուս. ներկայացուցիչները աւելի աշխոյժ էլոյթներ ունեցած են, բայց տիրապետող խաւը եղած է ունեւոր եւ Աղա խաւը: Հարցեր երբեմն ներկայացուելէն տարի մը ետք քննուած են:

Դաշնակցութեան այդ շրջանի զգացած ահաւոր յուսախաբուութիւնը եւ իթթիհատի դաւադիր կեցուածքը արտայայտուած է Հ.Յ.Դ.ի օրկան «Դրօշակ»ի 1913ի զանազան թիւերուն մէջ: Արտագրելով քանի մը հատուածներ, ամբողջացուցած կ'ըլլանք իթթիհատի եւ Դաշնակցութեան փոխ-յարաբերութեան բաժինը:

«Մահաբեր Պատրանք» խմբագրականով (1913 Ապրիլ) «Դրօշակ»ի կողմէ ձեռնոցները կը նետուին իթթիհատին դէմ: «Սահմանադրական» Թուրքիան Ապրիլի Համիտի չարակամութեամբ ու զիւական եռանդով զինուած, բայց նրանից աւելի նենգօրէն եւ աւելի մեթոտով այս չորս տարուած հայ ժողովրդի արեւը ծծեց վամբրի պէս, նրա անդարձ կորստեան վիճը փորեց եւ «Մենք ԱԶՆՈՒՐԻՆ ԴԻԻՐԱՀԱՒԱՏՆԵՐ, ՊԱՏՐԱՆՔՆԵՐՈՎ ԱԶՔԵՐԵՆԻՍ ԵՆԱՅԱՑՄԱՆ ԴԻՐԱՀԱՒԱՏՆԵՐ, ՔԱՅԻ ԱՌՔԱՅԻ ԴԻՐԱՀԱՒԱՏՆԵՐ ԵՆԱՅԱՑՄԱՆ ԴԻՐԱՀԱՒԱՏՆԵՐ»: (Բոլոր Ընդդ. — Հ. Գ.):

«Յրեցիմք վերջապէս այդ մահաբեր պատրանքը...:

«Զխաբեմք մեզ եւ չխաբուիմք ուրիշներէ»:

«Հայ ժողովուրդի լինել չլինելու խնդիրն է հրապարակի վրայ. կամ այսօր նա պիտի ապահովի իր ազգային գոյութիւնը իրական երաշխիքներով կամ պիտի պատրաստուի, որպէս քառութեան նոխազ, վերան Թուրքիայի աւերակների տակ թաղուել:

«Միջին ճամբայ եւ միջին ելք չկայ:

«... Խաւարի մէջ դարբնուող դժոխային դաւը հայ ժողովրդի դէմ այլեւս գաղտնիք չէ, թուրք կառավարութիւնը — Երիտ. Թուրքեր (իմա՝ իթթիհատ), այլեւս պէտք չի զգում սքողել նիւթուող ոճիրը:

«Ե. Թուրքերի կառավարութիւնը կը հետապնդէ շուտով դատարկել Հայաստանը հայերէց հրով ու սուրով, հայ գաւառները լեցնել մուսաֆիրներով (գաղթական) եւ իսլամական միապաղաղ կուռ պետութիւն ստեղծել: Ատոր համար ալ կ'առեւանգեն, կը սպաննեն հայերը, կը գրաւեն հայոց հողերը, կը զինեն հրոսակները եւ ապօրինի հարկերով կը նեղեն, կը գրաւեն զէնքերը...: (էջ 49-50):

«Հ.Յ.Դ. Վասպուրականի Կեդր. Կոմիտէն, Ս. Ռամկ. Կուս. Վանի Երջ. Կոմիտէ եւ Ս. Դ. Հնչ. Կուս. Վանի Մասնաճիւղը Վարչապետին ընդարձակ բողոքագիր մը յղած են՝ բողոքելով տիրող անշնչելի մթնոլորտին դէմ, արդիւնք՝ պետութեան եւ քիւրտերու ապօրինութեանց»:

1913ի «Դրօշակ»ի Յունիսի թիւէն (էջ 98).— «Դիպուածն արդեօք, թէ անցքերի տրամաբանական իմաստութիւնը կամեցաւ, որ հայը իր այս անուշի ճղնաթմին իր ճամբի վրայ ունենայ «լուսազոյն» համարուած թուրք հայրենակցին, Թալաթ Պէյին, վերջապէս համոզուելու համար, որ լուսազոյն թուրքն իսկ հայակործական քաղաքակրթութիւնն ունի որպէս քրիստո, համիլամական սկզբունքը՝ որպէս առաջնորդ ու ղեկավար՝ ջարդը, աւերածն ու յաւիտենական կեղծիքը՝ որպէս վարչական մեթոտ:

«... Եկած է ժամանակը նողկանքով ու սարսափով երես դարձնելու թուրք կառավարութեան կեղծ ու պատիր խոստումներէց, նրա նենգ շողջորթութիւններից եւ հայի փրկութիւնը որոնել միայն ու միայն եւրոպայի հզօր, իրատես, անկախ Գոնդրոլի մէջ»:

ՌՈՒՍ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԵՏԸ
ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐԿ ՓՈՒՍԿԱՐԱՐՁ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ
(1912 — 1914)

Պոլսոյ ղեկավար Կիրսը Ա. Գ. Ն. Սազանովին կը գրէ 8 Յունիս 1913ին — Ղրկելով Հայաստանի Բարենորոգումների նախաձեռնողը, զոր մշակած է Ա. ՄանտէլՋաֆ (Ա. քարտուղար Ռուս Դեսպանատան), «Համաձայն եմ ցուցումների, որպէս հիմք այդ աշխատութեան ծառայել են 1895 թուի 20 Հոկտ.ի Սուլթանի հրովարտակը, 1880ի Եւրոպական Յանձնախումբի օրինագիծը եւ Լիբանանի արձանագրութիւնն ու Կանոնադրութիւնը»: (էջ 209):

Սազանով՝ Պոլսոյ դեսպան Կիրսին՝
13 Դեկտ. 1913ին.—

«Բարեհաճեցէք Բ. Դրան մատնացոյց ընել մերձակայ վտանգի վրայ, եթէ ան ձեռք չառնէ միջոցներ հայկական նահանգներու անկարգութիւններու նախազգուշացման համար, ամենավճուական կերպով հասկացրէք հետեւանքների մասին»:

Սազանով՝ Պոլսոյ Ռուս հաւատարմատարին՝
18 Յունուար 1914ին.—

«Մենք երկիւղ ենք կրում, մի գուցէ Թուրքիան վերանակեցման միջոցով Հայաստանում ստեղծի մահաբերական մեծամասնութիւն: Այդ պատճառով մենք բացասաբար ենք վերաբերում զէպի համեմատական սկզբունքը»:

Պոլսոյ Ռուս Դեսպանատան կցորդը, Սազանովին՝
5 Փետրուար 1914ին.—

«Սայիտ Հալիմ Փաշա (Վարչապետ), խնդրեց գնահատել Թուրքիոյ բրած զիջումները, որոնք խիստ ծանր են Թուրքիոյ ինքնասիրութեան համար»: (էջ 336):
«Ներկայ շովինիստական դաշինքն (Հալիմ, Թալաթ, Էնվեր, Ճէմալ) առանց արտակարգ ճնշման գործադրութեան դժուար է սպասել հաւասարութեան սկզբունքի անյապաղ ներմուծումը էրզրումի վիլայէթում: ... Մուսաֆիրները՝ բոլոր Հալիմի Բ. Դուռը պիտի տեղաւորէ ոչ թէ Հայաստանի մէջ այլ Փոքր Ասիոյ եզերքները...»: (էջ 337):

Ֆրանսայի Պոլսոյ Դեսպ. կցորդը Ա. Գ. Նախարար Տուսերկինի՝
25 Փետրուար 1914ին.—

«... Մահմետական հասարակական կարծիքը տրոհուած է: «Թասֆիրի էֆ-
ֆար» թերթը ամենարուած կերպով կը դատապարտէ «ամառադարալի միջամտու-
քիւնը», որ յանուն քրիստոնէութեան շահերի Եւրոպան իրաւունք է տալիս իրեն
կատարելու Թուրքիայի ներքին գործերին: Զարմանում են որ կայսերական կա-
ռավարութիւնը կարողացել է «պահպանել իր ստանտեսութիւնը» նմանօրինակ ա-
ռաջարկութիւններէ հանդէպ, որոնք նոյնքան «անտեղի» են...»: (էջ 363):

«Պատրիարքը ընտրական համաձայնութիւն կնքեց Իթթիհատի հետ, ըստ
այդ համաձայնագրին՝ 16 երեսփոխան պիտի տան հայերը յառաջիկայ Երեսփ-
ընտրութեանց»:

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԻԹԹԻՀԱՍԸ

Արամ Անտոնեանի «Պատկերազարդ Ընդհ. Պատմութիւն Պալ-
քանեան Պատերազմին» 1038 էջոց հատորը լոյս ընծայուած է
1912ին՝ Պոլիս: Գիրքը կուտայ Պալքանեան Ժողովուրդներու մասին
մանրամասն տեղեկութիւններ՝ պատմական, ազգագրական եւ ազ-
գային ազատազրական շարժումներու մասին: Իթթիհատը սխալեցաւ,
արհամարհելով զանոնք... եւ արդիւնքը ծանօթ է: Պալքանեան Օս-
մանցիներու վերջնական հետացումը...:

Պալքանեան պատերազմի ճակատամարտերուն հակիրճ կերպով
կ'անդրադառնանք, Թուրքիոյ ղեկավարներուն հոգեբանութիւնը
պարզելու համար, ինչ որ կրնայ յաւելեալ լուսաբանութիւններ տալ
Իթթիհատի յիմար հաշիւներուն մասին:

Կը գրէ Ա. Անտոնեան.—

«Յետոյ յաջորդեց հինգ տարուան ժէօն Թուրքերու վարչութիւնը. Սահմա-
նադրական դիմակին տակ, իր ապիկարութեամբ, իր անհետատեսութեամբ ու
սխալներով նոյնքան վնասակար երկրին յառաջդիմութեան ու զօրացման համար՝
որքան իր տապալած բռնակալութիւնը»:

«Կը յիշուի անշուշտ թէ դեռ Սահմանադրութեան մեղրալուսնի օրերուն՝
այնքան հրապուրիչ սկզբունքներու անունով երդուընցող ժէօն Թուրքերն իսկ չվա-
րանեցան հռչակելու «քուրքը պէտք է ըլլայ եւ պիտի ըլլայ գերիշխող տարրը
Թուրքիայ մէջ, որովհետեւ այս երկիրը քուրքերուն երկիրն է, անոր կառավա-
րութեան գործը քուրք եւ մահմետական պէտք է ըլլայ»: («Թանին», Իթթիհատի
պաշտօնաթերթ, 1908 Հոկտ., էջ 207):

«Թուրքիան Թուրքերուն», ասիկա իրենց նշանարանն էր, եւ այդ պայմանով
միայն կ'ըմբռնէին իրենց հռչակած ազատութիւնը...»: (էջ 309):

«Համիտի օրով կորսուած հոգերն ալ կ'ուզէին ետ խլել, ուր մնաց Օսմ.
կայսրութեան ենթակայ եւ վտանգուած երկիրները»:

«1908ի Օղոստոսին անդարմանելի սխալը Երիտ. Թուրքերուն, որ ներկայ
բոլոր աղէտներուն աղբիւրը եղաւ, Մակեդոնական Բարենորոգումներու ջնջումն
էր, կը գրէ Վիլհոլմ Գերար»:

«Երիտ. Թուրքերը ընտրեցին բացարձակ կեդրոնացման դրութիւնը. աստիճա-
նական ապակեզրոնացում մը անպայման աւելի դրական արդիւնք պիտի տար»:

«Պալքանեան պատերազմին Թուրքիա 1 միլիոն 400 հազար, Պուլկարիա՝ 378
հազար, Սերպիա՝ 324 հազար, Յունաստան՝ 192 հազար, Գարատաղ՝ 37 հազար,
Ռումանիա՝ 300 հազար զինուոր ունէին»: (էջ 389):

Իթթիհատի կողմէ միթիւնկ: Իթիլաֆի կողմէ միթիւնկ. կրակոտ ճառեր. «Երէ
մեր դէմ տարք քշեմաի, քամ քշեմաի ունեմայիմիք, աւելի գոհ պիտի ըլլայիմիք»,
կը գոչէին Իթթիհատականները: Համալսարանականներ ցոյցեր բրին... Սոֆիայի
մէջ իբրբու միանալու յոյսով... Իթիլաֆական դահլիճին դէմ բողոք եւ ընդվր-
զում... որ շուտով չէր յայտարարուեր պատերազմը...:

1912ի «Թանին» մէջ Ազա կիւնտիւզ կը գրէր.—

«Երէ քար քարի վրայ ձգեմ, կախս բողած օնախս քող քամ-
դուի...»:

Սեպտ. 21ին 100 հազարոց միթիւնկ սեղի ունեցաւ, Սուլթան Ահմէտի մըզ-
կիթին շուրջ: Անոնք պատերազմ կ'ուզէին... Տիրան Քէլէկեան «Սապահ»(*) թեր-
թի խմբագիր, խօսք առաւ եւ պատերազմին փոտարանութիւնը բրաւ: Պուլկար
դըջ մը կոխկռտուեցաւ: Իթթիհատի միթիւնկը, հարպ կ'ուզէր: 30 հազար հոգի՝
1000 դրոշներով, Թալաթի նախագահութեամբ... «Սուր սուին Թալաթ, Հասան
Տէհմէ, Ճէմալէտտին Արիֆ, Յակար էֆ. Պոյաճեան, Նէսիմ Մազլիա էֆէնտի եւ
ուրիշներ»: Տոքթ. Փաշաեան յանուն Դաշնակցութեան. «Հ. Յ. Դ. չի կրնար իր
համամտութիւնը չյայտնել պայքարի մը՝ որ նպատակ ունի պաշտպանել հայրե-
նիքը դուրսէն եկող յարձակումներուն դէմ»: (էջ 439):

Ազա Թալաթ կը կարգայ պատերազմի ի նպաստ բանաձեւ: Հիւսէյն Ճա-
հտ, Էօմէր Նաճի կը ծափահարուին:

«Կամաւոր զրուեցան բազմաթիւ հայեր ալ. ինչպէս կը գրուէին Պուլկարիոյ
մէջ...»:

«Պոլսոյ ցոյցերը զայրոյթով դիմաւորուեցան Պալքանեաններէն ներս»: (էջ 443):
Քէլէկեան Փաշան կը յայտնէր, թէ պատերազմը կայսրութեան կործանման
պիտի յանգի, եթէ զէնքերու բախտը չժպտի Օսմ. բանակին:

Իթիլաֆի մամուլը «Իգտամ», «Սապահ» բանակցութեան կողմնակից էին՝
հարցը լուծելու համար...: Ընդհակառակը, Իթթիհատի օրկանները կը գրգռէին
Ժողովուրդը որ պատերազմ ուզէ...:

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«Տարեկրութիւն Հայ Ժողովրդական Պատմական Ճակատագ-
րին», Վալերի Բրուսովի գիրքը լոյս տեսած է Վենետիկ, 1931ին,
Թարգմ. Հ. Մարգարեանի:

«1913ին Ռուսաստան նոր ազդու առաջարկութիւններով դուրս
ելաւ, որոնցմէ մեծ մասը Թուրքիան ընդունեց 26 Յունուար 1914ի
վաւերաթուղթով: Մեր օրերու համաշխարհային պատերազմը
խանկարեց զայն զործադրել: Ինչպէս յայտնի է, պատերազմի սկիզ-
բը Հայաստանի մէջ մասը (միւնչիւ Վանայ նահանգը) գրաւած էր
ուսուսաց զօրքը, միւս մասերուն մէջ Թուրքերը կը շարունակէին իրենց
հին քաղաքականութիւնը, դադար չտալով այնպիսի անաւոր կոտոր-
ածներու սրտնց եւ ոչ Լէնկիթիմուր յաւակնութիւնն ունեցաւ»: (էջ
239):

«Եւրոպայի Դիւանագիտութեան Պատմութիւնը» (Ֆրնս.) Հէնրի Հաուզըրի
(1929, Փարիզ), ի մէջ այլոց կը խօսի Երիտ. Թուրքերու Յեղափոխական շարժ-
ման մասին:

(*) Իթիլաֆական:

«1909ի օրէնքով՝ ազգային դիմագիծ ունեցող կուսմերու կազմութիւնը արգիւտեցաւ իրարմատի կողմէ... Կը փորձէին քրքացնել Մակեդոնիան, բուրք մուսուլմաններ տեղադրելով հոն, արտաքսելով բնիկ յայնքն ու սլաւները: Օսմ. խորհրդարանին մէջ պուլկար երեսփոխան մը կը յիշեցնէր 5000 սլաւներու ջարդը, առանց հաշուելու փախչելու ստիպուած պուլկարները... 1910ի Յուլիս 7ին Սոֆիայի մէջ Սլաւ համագումարը կ'որոշէ միացումը բոլոր Սլաւներու՝ մտաւորական, գրական, գիտական եւ տնտեսական մարդերէն ներս»:

1913ին երբ կրկին հրապարակ դրուեցաւ Հայկական վեց նահանգներէն ներս բարեկարգութեան հարցը եւ 1914 Յունուար 26ին Ռուս-թուրք դաշնագրով ընդունուեցաւ, Հայաստանի բնակչութեան թիւը հետեւեալ պատկերը կը պարզէր.—

Վան՝ 185 հազար, Պիթլիս՝ 172 հազար, Կարին՝ 205 հազար, Պարբերք՝ 168 հազար, Տիգրանակերտ՝ 100 հազար, Սեբաստիա՝ 218 հազար, գումար՝ 1.048.000:

Իսկ Կիլիկիոյ, Փոքր Հայքի եւ այլ շրջաններու ընդհ. հայութեան թիւը 1.035.000. ընդհ. գումար՝ 2.093.000:

Իսկ 1919ին ամբողջ հայերու թիւը՝ 3 միլիոն 630 հազար եղած է:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ունէր 13 Առաջնորդական վիճակ՝ Եոզկատը, Մալաթիան, Կիւրիներ, Մանճըլը, Տիվրիկը իրեն ենթակայ էին: Աթոռը ունէր 222 եկեղեցի եւ 12 վանք: Ունեցած է (1441էն մինչեւ 1919) 47 Կաթողիկոս:

Աղթամարի Կաթողիկոսութիւնը ունեցած է 1114ին հաստատուելէ ետք՝ 57 Կաթողիկոս, Երուսաղէմի Պատրիարքութիւնը մինչեւ 1919 ունեցած է 90 Պատրիարք (հաստատուած՝ 637ին): Պոլսոյ Պատրիարքութիւնը 1461ին հաստատուած՝ ունեցած է մինչեւ 1919, 108 Պատրիարք: 1388 եկեղեցի, 50 թեմ, 134 վանք իրեն ենթակայ եղած է:

1911ի տուեալներով հակառակ իթթիհատի կրթական մեր հաստատութիւնները հսկողութեան տակ առնելով ճնշելու փորձերուն՝ ամբողջ Արեւմտահայաստանի մէջ ունէինք 1083 վարժարան, ուր կը յաճախէին 80 հազար մանչ եւ 30 հազար աղջիկ:

Կարելի՞ է չափել այն մտքի կորուստը՝ զոր ունեցաւ Հայութիւնը Պոլիսը եւ իր մտաւորականները կորսնցնելով 1915ին...:

(Տես՝ «Յուշիկի Հայաստանի», Չիթուհի, 1919, Պոլիս, էջ 160-174):

1915ի Սեպտեմբեր 19ին Պոլսոյ Պատրիարք Ամենապատիւ Զաւէն Արք. Տէր Եղիայեան՝ շնորհիւ ինչպէս Պէյի՝ հնարաւորութիւն կ'ունենայ տեսնուելու իթթիհատի պարալլուիս Ն. Գ. Նախարար Թալաթի հետ, կարենալ մեղմելու համար իր հօտին տառապանքը, անապատի եւ ձորի մէջ խոշտանգուողներուն վիճակը...: Մեր նիւթէն դուրս կը մնայ եղեռնի պատմութիւնը: Բայց այս մէկ վկայութիւնը ցոյց կուտայ՝ թէ ինչպիսի՞ հրէշներու հետ գործ ունէր Հայութիւնը այդ շրջանին: Զաւէն Պատրիարք կը դիմէ Սուլթան Մահմուտ Ռէշատին, Սաիտ Հալիմ Փաշային, որ իր հերթին կը թելադրէ անպայման Թալաթը տեսնել:

Թալաթ կ'ըսէ, թէ Պատրիարքին բազմազգադուութիւնը նկատի ունենալով՝ չէ՛ ուզած տեսնուիլ, թէ ամէն մարդ կ'այսպանէ զինք որ Պատրիարքին դիմելով առաջը չառնուի՛ր... այս բաներուն:

ԹԱԼԱՍԹ.— Հայերը իրենք պատճառ եղան իրենց այս վիճակին, անոնց ներքինը ամենէն աւելի դիտցողը եւ եմ: Մենք ամէն բանէ տեղեկութիւն ունէինք:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐԻԱՐԳ.— Ընդունիմ թէ ճիշդ են ձեր ըսածները, բայց կառավարութիւնը հայր մըն է եւ հօր մը պէս պէտք է պատժէ:

ԹԱԼԱՍԹ.— Այսպէս չէ՛, երբեմն հայր է եւ երբեմն՝ ոչ. թէ ժողովուրդը իր հայրութիւնը չընդունի եւ սուսը իրեն հայր ընէ, այն ատեն կառավարութիւնը հօր մը պէս չի վարուի: Աշխարհի եւ ո՛չ մէկ կողմ չի գտնուիր ժողովուրդ մը՝ որ մայրաքաղաքէ մայրաքաղաք պտտի եւ իր կառավարական գործերուն մէջ միջամտել խնդրէ: Այս բոլոր բաները եղան եւ ազգին ամբողջութիւնը բան մը չըրաւ եւ լուսթեամբ հաւանութիւն յայտնեց:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Բայց վերջապէս այս բաները քանի մը մարդու գործ են:

ԹԱԼԱՍԹ.— Ո՛չ քանի մը, ո՛չ քանի մը հազարի եւ ո՛չ ալ քանի մը հարիւր հազար մարդու գործ են: Այսօր մէկ կուսակցութիւն մըն է, վաղն ալ ուրիշը կը ծնի, ոչ-կուսակցականն ալ կուսակցական կը դառնայ, գործը ընդհանուր հանգամանք ունի: Այդ պատճառաւ անհրաժեշտ եղաւ, որ այս ժողովուրդը իր բնակավայրէն հեռացուի եւ այլուր բնակեցուելով չկորցացուի:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Բայց կիներն ու տղաքը ի՞նչ յանցանք ունէին:

ԹԱԼԱՍԹ.— Անոնք ալ իրենց ընտանիքին հետ գտնուելու համար...:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Սերաստիոյ Շարքըլլա դասապայէն անցնող Սամսունի, Ամասիոյ եւ Մարզուանի հայոց բոլոր դասակները հոն առնուած են իրենց ձեռքերէն եւ զանազան անցորդներու յանձնուած են. մէկ մասն ալ Պոլիս բերուած են:

ԹԱԼԱՍԹ.— Ատիկա քննեք, զեղծանողները կը պատժենք:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Հայերը իրենց ամենէն սիրած անձնաւորութեանէն եկած այս հարուածը շատ ծանր կը նկատեն:

ԹԱԼԱՍԹ.— Ես հայերը կը սիրէի, որովհետեւ զանոնք երկրին օդտակար տարր մը գիտէի, բայց հակառակը եղաւ, բնական է հայրենիքը հայերէն աւելի կը սիրեմ:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Գոնէ այս չափով վերջ գտնէ...

ԹԱԼԱՍԹ.— Արդէն նոր բան մը ըլլալիք չունի...

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Ինձի ո՛չ եկեղեցի մնաց եւ ո՛չ եկեղեցական, որպէսզի անոնցմով դրաղուիմ:

ԹԱԼԱՍԹ.— Առաջնորդներէն շատերուն խայիմ (ղաւաղիբ) ըլլալը հաստատուեցաւ:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Մահուան դատապարտուածներէն մին Կեսարիոյ Առաջնորդն է, իբրեւ Քէօսթէնճէի Հնչակեան ժողովին նախագահող: Այդ մարդը կուսակցականներուն բարեւ անդամ չի տար, հին ոչ ժամի ատեն Մշոյ առաջնորդն էր եւ յեղափոխական Դաշնակցականները զինքը եւս պիտի սպաննէին, փախաւ:

ԹԱԼԱՍԹ.— Որովհետեւ Հնչակեան էր:

ԶԱԻԷՆ ՊԱՏՐ.— Սկիզբէն կուսակցութեանց հակառակ էր... Այս գէպը տեսնելով, եղած բոլոր դատապարտութիւնները արդար չեմ կրնար ընդունիլ:

Այս խօսքերէն յետոյ լուսն... (ղնա, այլեւս) հասկնելով:

(Տես՝ Զուէն Արքեպոս. «Պատրիարքական Յուշեր», վաւերագրեր եւ վկայութիւններ, 1947, Գահիրէ, էջ 126-127):

Հայոց նոյն Պատրիարքը կը տեսնուի վարչապետ Սայիտ Համ փաշայի հետ:

ՍԱՅԻՏ ՀԱԼԻՄ.— Կառավարութիւնը հայ ազգը բնաջինջ բնելու նպատակ չունի, միայն թէ միջոցներ ձեռք առած է... ու այդ նախնորհները հայերէ կը պարպէ: Այս կարողութիւնը ձեռք առ մեզի ալ օգտակար պիտի ըլլայ, որովհետեւ մինչեւ հիմա ուսուերն ու անպիացիք ձեռք իբր զործիք կը ծառայեցնէին: Ես անցեալները ամերիկեան դեսպանին ալ ըսի. «Եթէ հայերը հանդիստ ըլլալ կ'ուզեն, պէտք է ուսուերն ու անպիացիները մոռնան»: Ինչպէս ըսի, ասիկա պարզ (թէտպիւր) միջոց մըն է եւ ո՛չ թէ ճեղք մը:

1912... Պոլսոյ Եսայեան Վարժարան երկուական ներկայացուցիչներով համախմբուած են հայ կուսակցութիւնները: Գահիրէին յարակից սենեակները ունկնդիրներով ողողուած են: Օրուան հերոսն է չէզոք ազգային, պատեհապաշտ Ստեփան Էֆ. Գարայեան, որ բազմած է նախազանգի աթոռին վրայ: Այդ ժողովը հրաւիրուած է ազգին շահերը պաշտպանելու համար լուծում մը պահելու եւ ազգային պատուոյն վայել թուով երեսփոխաններ նշանակելու համար:

Դաշնակցութեան զիրքորոշումը յստակ էր Իթթիհատի հանդէպ: Կը մնար Հնչակեան զիրքորոշումը յստակացնել: Գարայեանն է խօսողը:—

«Ես կը նախընտրեմ երկու շարեաց փոքրագոյնը, ազգային շահը կը պահանջէ Իթթիհատականներու հետ երթալ քան Իթթիհատականներու եւ չեմ գիտեր, թէ ինչո՞ւ համար Ս. Գ. Հնչակեանները ազգային համերաշխութենէ կ'ուզեն հեռու մնալ»:

Հնչակեանները կ'ըսեն թէ համերաշխութիւնը քանդողը ինքը՝ Գարայեանն է: Այս վերջինը կը պնդէ. «Իթթիհատը՝ ծանօթ է, գէթ ասիկա Սահմանադրական է, միւսը՝ չենք գիտեր»:

Հնչակեան Կուսակցութիւնը այդ ժողովին ներկայացնողներն են Ս. Սապահ Գիւլեան եւ Գարեգին Կողիկեան (Եսայեմ):

ՀՆՉԱԿԵԱՆ ԹԵՉԸ.—

«Իթթիհատի դէմ զիրքորոշուիլը հայ ազգին շահը կը պահանջէ: «Նրա դէմ անողոք պայքար մղել, նրա անկումը, տկարացումը անխուսափելի դարձնել, տիրապետական ասպարէզից նրան դուրս նետել: Պատրաստ ենք ամէն տեսակի համերաշխութիւն կնքելու, համերաշխութիւն՝ որ ուղղուած լինէր Իթթիհատի դէմ»:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՉԵԱՆ (Կոմս, Դաշնակցութեան ներկայացուցիչ).— Իթթիհատը եթէ ընկնի, ասպարէզը որի՞ն պիտի մնայ, ո՞վ պիտի գայ նրա տեղը:

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ.— Նրա ժառանգը պատրաստելը մեր եւ ձեր գործը չէ, այլ ապրել ուզող թուրքիայի, նա տարրեր կը պատրաստէ, եթէ սահմանադրական նորէն ապրելու կենսունակութիւն ունի:

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ (Դաշնակցութեան ներկայացուցիչ).— Իթթիհատը ի՞նչ ըրած է, անոր ինչին պիտի վստահինք:

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ.— Իթթիհատը, դա մի բուրք ուժ է, մեզ կործանելու, մեզ ապագայնացնելու միտումներով լցուած Իթթիհատի դէմ: Հիմա նրան մեր զործակիցը կարող ենք առնել Իթթիհատը տապալելու տեսակէտով: Իսկ մի օր դայ, երբ նա էլ մեր ազգային կենսական շահերին հակառակ դիրք կը բռնէ, այն ժամանակ բոլորս միասին, ուժերս նրան դէմ կը դարձնենք: Այս բուրքից վտանգը նրանից չէ որ գալիս է այլ՝ Իթթիհատից: Իսկ մեր վստահութիւնը ամէն բանից առաջ մեր մէջ պիտի տեսնենք եւ ո՛չ թէ այս ու այն թուրք կուսակցութեան: Ապրել ուզող մի ազգ վստահութեան յետնակէտներ կը ստեղծի ինքնաբերաբար, նա ինքն է որ օրկաններ յառաջ կը բերի ինքնաբերաբար:

ԱՐԱՄ ՊԷՅ ՀԱԼԱՃԵԱՆ (Իթթիհատի շարքային).— Հեղնանքով — Միթէ դուք չէ՞ք գիտեր, որ Իթթիհատականներու մէջ շատ յետաշրջականներ կան:

— «Մեր ազգային շահը կը պահանջէ Իթթիհատին ուժ տալ, ան ինչքան գործնայ այնքան՝ լաւ: Ան եթէ գորեղ եղած ըլլար, մինչեւ հիմա քրտերը գապուած կ'ըլլային եւ մեր հողային հարցն ալ բաւարար կերպով լուծուած»:

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ.— Արդեօք Արամ Պէյ Հալաճեանը եւ Գարայեան Էֆէնտին այստեղ մեզ հետ խօսում են որպէս Իթթիհատականներ, թէ որպէս որեւէ հայկական հոսանքի ներկայացուցիչներ. չէ՞ որ իրենք կուսակցականօրէն Իթթիհատականներ են:

— Ո՛չ, մենք հոս ներկայ ենք եւ կը խօսինք յանուն Ազգային ժողովի Ազատական Խմբակի — պատասխանեցին Էֆէնտիները:

ՅԱԿՈՒ Է. ԵՍՍՅԵԱՆ (չէզոք).— Ախպար, դուք երկու դոյն ունիք, ո՛ր մէկին պիտի հաւատանք:

(Տես՝ Ս. Սապահ Գիւլեան, «Պատասխանատուները», 1916, Փրախտենս, էջ 293-4):

Ընկ. Սապահ կը յիշէ որ դժուար չեղաւ փաստերով եւ օրինակներով հաստատել, որ այդ բոլորը — յափշտակութիւն, կոտորած — կը կատարուէին Իթթիհատի թելադրութեամբ եւ հաւանութեամբ, թէ ամէն ինչ տեղի կ'ունենար համաձայն Իթթիհատի որոշեալ յատակագրին. հետեւապէս, թուրք ազգային այդ զայլը ո՛չ թէ պէտք էր այժմեանից իսկ փշրել. ո՛չ քէ գորացնել, այլ «նրա ատումները, նրա ուժեղացումը մեզ էլ աւելի վնասակար, էլ աւելի վտանգաւոր պիտի լինի»:

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ.— Մենք պատրաստ ենք համերաշխելու, համագործակցելու միմիայն նրանց հետ, որոնք հակա-Իթթիհատական քաղաքականութիւն կ'ընդգրկեն, այլապէս մենք պիտի պահենք մեր կուսակցական դիրքը եւ չպիտի ցանկանանք Իթթիհատի համակիր կամ նրա հետ գործակցելու. կամէնութիւն ցոյց տուող որեւէ մարմնի կամ մարմինների հետ գործ ունենալ, ազգային կամ այլ ի՛նչ անուր որ նրանք կրէին:

Ս. ԳԱՐԱՅԵԱՆ.— Բայց ամբողջ ազգը կ'ուզէ Իթթիհատի հետ երթալ:

Հնչակեան ներկայացուցիչները կը պատասխանեն, թէ հայ ազգը իր ջարհաբեր մեծամասնութեան մէջ իթթիհատին հակառակ է, ան այդպիսի ցանկութիւն եւ տրամադրութիւն ամենեւին չունի եւ «Ս. Գարայեանի էլ յանձնարարազիր չի տուել այդ ուղղութեամբ արտայայտուելու»: Աւելացրինք, որ եթէ հայ ազգը այդպիսի մի ձգտում էլ ունենայ, մենք դարձեալ պարտաւոր չենք զուգում մեզ, իթթիհատին հետեւելու, ընդհակառակը՝ պարտականութիւն կը սեպենք նրան (հայ ժողովուրդը) լուսարանելու, համոզելու, որ մեր ուղղութեանը դար: իթթիհատին հետեւողները, պետական պաշտօնեաներ են, եւ նրանից կրճօններ ապահովելու նպատակ ունին:

Ս. ՍԱՊԱՀ ԳԻՒԼԵԱՆ.— Եթէ ձեզանով ներկայացող հայ ազգը համերաշխում է իթթիհատի հետ երթալու, մենք այդ աղիտարեր համերաշխութիւնը պատաստում ենք, եւ դա կը լինի Հնչակեան Կուսակցութեան պատիւը:

«Հետեւեալ օրը, կը գրէ Ս. Սապահ Գիւլեան, Գաշնակցութեան օրկանը եւ իթթիհատի համակիր հայ ուրիշ թերթերը մեզ համարեցին «մեծ պառակտիչը»:

«Դա մեր կուսակցութեան պատուանունն էր, նրա անկեղծութեան, հեռատեսութեան վկայականը՝ մեր հակառակորդներից տրուած, եւ ասիկա կը պատահէր 1912ին...»:

Անդրադառնալով Սահմ. Ռամկավարներուն, որոնք սաղմնային կազմակերպութիւն էին Պոլսոյ մէջ, Ս. Սապահ Գիւլեան կը վկայէ. «Հաւաքեցինք նրանց զըլխաւոր անկամներին միասին, առաջարկեցինք որ իրենք էլ բաժին ստանան հայ ժողովրդի դինուելու գործին մէջ: Նրանք բացէ ի բաց հրաժարուեցան, ասելով՝ որ իրենք գտնուում են Սահմանադրական մի երկրի մէջ եւ չէին կարող այդպիսի վտանգաւոր քայլ առնել: Ասացինք, որ դինուելու գործը մեր կուսակցութեան միջոցաւ անեն, քանի որ վախենում են, եւ մենք կը պարտաւորուէինք իրենց մանրամասն հաշիւ տալ: Գրանից էլ հրաժարուեցին: Իրենք համաձայն էին հակա-իթթիհատական ուղղութեան պայքարին, բայց չէին համարձակուում հրապարակային դիրք բռնել: Իթթիհատի գորացման վտանգաւորութիւնը չէտեսլով՝ առաջարկեցինք, որ իրենք էլ մեզ հետ միասին կամ առանձին, ինչպէս որ կ'ուզեն, ուժ տան, աջակցին իթիլաֆին, սրա հակա-իթթիհատական պայքարին մէջ»:

ԴԱԻԹ ՏԻՐ ՄՈՎՍԷՍԵԱՆ (Սահմ. Ռամկավար պարագլուխ).— Ձեր կուսակցութեան դիրքը շատ ճիշդ է, շատ ուղիղ է, բուն չունինք բսելու, հարկաւ ազգային շահը կը պահանջէ իթթիհատի դէմ կռիւ մղել, բայց դուք կրնա՞ք մեզի երաշխաւորել, որ իթիլաֆին ուժ տալով կը յաջողինք մեր ընտրութիւնները ապահովել, կը վարենամ որ մեծամասնութիւն շահիլ չկարենան:

Առ այժմ սպասողական դիրք պիտի բռնենք, տեսնենք թէ որ կողմը ուժեղ դուրս կ'ելլէ:

Գաշնակցականները, չէզոքներն ալ հետեւին յարեցան իթթիհատին...:

ԽԱՏԱԿԸ՝ Գաշնակցութեան ղեկավար՝ Փոքր Հայքի մէջ ընտրական պայքարի ընթացքին, Մարտի 1-ին իթթիհատական պայմանագրի ներկայութեան կ'ուզէ փաստել որ առեւանդումները, կանանց յախչտակութիւնները միայն հիմա չէ որ տեղի կ'ունենան... դա գուրդընթաց է պետութիւնների պարզացմանը, թէ չին եւ միջին դարերուն սովորական երեւոյթ էր այդ... թուրք պետութիւնը ուժեղացրինք, իքթիհատին համագործակցիլը մեզ շատ օգտակար է, որովհետեւ որքան ցարակայ, այնքան հեշտ կերպով կարելի է քրտե-

րին սանձել եւ քոյլ չտալ, որ կոտորածներ սարքէ: ... «Ազգային համերաշխութիւնը (իթթիհատի շուրջ) մոզակամ գաւազանով խանգարեց Սապահ Գիւլեանը դեռ այստեղ Փոքր Հայք եղած ժամանակը...»:

Մեր Մարտի 1-ին Գործադիր Ենթակարգի անդամները բողոքած էին եւ տեղի ունեցած էր ժողովի խանգարում:

«Այսպէս, մենք շանչեցինք հայ ազգի արիւննուշտ թշնամուն, չափեցինք, կռեցինք իթթիհատին եւ մեր ձեռքից ինչ կը գտնուի՝ չինայեցինք, գործ դրեցինք, աշխատեցինք նրան թուրացնել, տկարացնել, տապալել, նրա գործունէութիւնը անդամաւոր ծել»:

«Մենք արինք այն՝ ինչ որ կարող էինք, ինչ միջոցներ որ մեզ տրուած էին»:

«Իրերը եկան հետզհետէ պայծառ կերպով ցոյց տալու, որ մենք կատարեալ իրաւունք ունեւինք նրա հանդէպ անողոք լինելու եւ մեր դիրքին մէջ յարատեւելու»:

Կը գրէ Սապահ Գիւլեան:

ԻԹԻԼԱՖԻ ՄԱՍԻՆ
«Իթթիհատի Սահմանադրաւոր տարրերը հեռացան եւ կազմեցին գառ կուսակցութիւն՝ իթիլաֆ անունով: Կռիւլ սաստկացաւ, յարարերութիւնները լարուեցան, անհաշտ թշնամականի վերածուեցան»:

«Ասիկա լաւագոյն ատիթն էր իթթիհատը տկարացնելու համար: Իթիլաֆականութիւնը ծաւալեցաւ»:

«Թորհրդարանական Բ. ընտրութիւնն էր: Երկու թուրք կուսակցութիւններ պիտի բաղխէին իրար դէմ: Ներքին փոթորկալից կացութիւն ստեղծուած էր: (1912):

Գաշնակցութիւնը եւ Հնչակեանները (Պոլսոյ վարիչ մարմինը) մեծամասնութեամբ որոշած էին միասին իջնել ընտրութեան: Ընկ. Սապահը որ շրջապատյոթի ելած էր Փոքր Հայք, Ասոյի (Տիգրան Օտեան) խնդրանքով կը վերադառնայ Պոլիս: Համերաշխութիւնը իրականացնողը եղած էր դերման հրեայ, սոցիալիստ Պարֆուստ: Ան մօտ էր իթթիհատին, կ'աշխատակցէր անոնց «ժէօն Թիւրք» Փրանսատառ թերթին»:

Հայերը պիտի տային 20 աթոռ:

Գաշնակցականները նախ պահանջած էին 12 աթոռ, Հնչակեանները կէս տակէսի առաջարկ բերած էին:

Ի վերջոյ 9 Գաշնակցական եւ 8 Հնչակեան թեկնածուներու աթոռի առաջարկը կը զրուի:

Գաշնակցականները յայտնած էին, թէ իրենք պատրաստ են ինքնավար Հայաստանի գաղափարը որդեկրելու, եւ ասիկա ժողովի արձանագրութեան մէջ մտած էր: Իթթիհատը նեղ օրերու մէջ էր, «նա իր ետեւից կը բարձր տալիս Գաշնակցութիւնը, եւ այս անգամ էլ նրա միջոցով՝ ուղղում կը իր հետ կապել եւ Ս. Գ. Հնչ. Կուսակցութիւնը»:

«Պոլսոյ վարիչ Մարմինը կը զգաստանայ եւ կը զղջայ, խղճում... բայց կրնայինք ամբաստանուիլ, թէ համերաշխութեան դէմ ենք»:

«Գործակցութիւն... այդ պիտի նշանակէր իթթիհատի գործիք դառնալ»:

«Կրկին միջ-կուսակցական ժողով: Ներկայացուցիչ Ընկ. Գարեգին Կոզիկեան հարց կուտայ, թէ Գաշնակցութեան եւ իթթիհատի փոխադարձ յարարերութիւնները ի՞նչ են»:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ (Կոմս՝ Գաշնակցութեան ներկայացուցիչ).— Մենք միշտ իրարու հետ փրկանքի ենք:

ԱԿՆՈՒՆԻ (Գաշնակցութեան ներկայացուցիչ).— Հնչակեանները եթէ չէր ուղեր իթթիհատի հետ գործ ունենայ, ձեր յարարերութիւնները մեր միջոցով կարող էր անել:

ԳԱՐԵԳԻՆ ԿՈՁԻԿԵԱՆ (Հնչակեան Վարիչ Մարմնի Լիազոր).— Մենք պատ-
րաստ ենք համաձայնագիրն ստորագրելու. միայն թէ՛ նախապէս կ'ուզէինք այս
սեղանի վրայ տեսնել Իթթիհատի Կեդր. Վարչութեան կողմէ գրուած եւ անոր
կուսակցութեան կնիքով կնքուած թուղթը՝ ինչ որ կը վերաբերի ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ:

Դաշնակցական ղեկավարները կը պնդեն, թէ իրենց խօսք
տրուած է Իթթիհատի կողմէ եւ թէ իրենք կ'երաշխաւորեն այդ:

Գ. ԿՈՁԻԿԵԱՆ.— Ձեզի կը հաւատանք, անոնք կրնան այս բոլորէն ընդունիլ,
խոստանալ Հայաստանի Ինքնավարութիւնը, բայց որպէսզի հայ ազգի առաջ ճակա-
տաբաց կանգնինք, նախ կ'ուզենք որ այդ վաւերաթուղթը այս սեղանի վրայ գայ
եւ անոր իրագործման համար մեզի երաշխիքներ տրուին. այդ մեր սէն գուռ մոմ
պայմանն է:

— Բայց ատիկա այս բոլորէն կարելի՞ է, կը հարցնեն Դաշնակցականները:

Գ. ԿՈՁԻԿԵԱՆ.— Եթէ այս բոլորէն կարելի չէ, կրնանք մեր համաձայնու-
թիւնը յետաձգել, մինչեւ որ պահանջուած պայմանները իրականանան: Իսկ մինչ
այդ մեր ժողովները դադար պիտի առնեն: Վաւերաթուղթը երբ ձեռք բերէք, մեզի
իմաց տուէք, որ դանք եւ համաձայնագիրը ստորագրենք, կնքենք:

«Մենք Իթիլաֆի մէջ մեծ ուժ չէինք տեսներ: Ասոնք մեզմէ
աւելի ուժեղ չէին: Անոր կը մօտենայինք որպէս Իթթիհատի դէմ հա-
կադրուող ուժ, իսլամ ախոյեան:

«Մեզ առաջնորդող ոգին, բացառապէս Հայ ազգի ոգրալի կա-
ցութիւնն էր, Հայաստանի տխուր վիճակն էր»:

«Բանակցութեան մտանք Տափաստանի Վարիչ Մարմնի որո-
շումով Իթիլաֆի հետ»: (Համաձայնագիրը կուտանք առանձինն):

Համաձայնագրէ ետք Իթթիհատի ակումբներուն մէջ իրարան-
ցում տիրեց:

«Եթէ մենք չըլլայինք, կը դրէ Ընկ. Սապահ իր «Պատասխանատուները» հա-
տորին մէջ, Իթիլաֆը շատոնց քայքայուած կ'ըլլար: Մենք ոչ միայն անոր կազ-
մակերպական գործին ուժ տուինք, անոր ճիւղաւորման նպաստեցինք, այլ անոր
ընդդիմադրական ոգին արծարծեցինք:

«Թէ՛ դաւաճանքու եւ թէ՛ մայրաքաղաքի շատ տեղերը մեր ակնկալութեամբ
եւ օգնութեամբն էր որ Իթիլաֆը կրցաւ մասնաճիւղեր հաստատել: Անոնք Իթթի-
հատի դէմ կուող ուժեր, հակա-Իթթիհատական կայանների հանգոյցներ, հնոց-
ներ էին:

«Անոր մենք կուրի զանազան միջոցներ սորվեցուցինք, մեր փորձառութիւն-
ներէն եւ գիտութենէն բաժին հանելով: Մեր ընկեր գործիչները, մեր մասնաճիւ-
ղերը, այդ տեսակէտով, հիանալի գործեր կատարեցին եւ մեծ օգտակարութիւն
ունեցան:

«Մեր համաձայնութիւնը Իթիլաֆի հետ (1912 Փետր. 7, Պոլիս), Իթիլաֆի
եւ Իթթիհատի յարաբերութիւնները ծայրագունորէն սրեց, անհաշտ բնաւորութիւն
ստացան, եւ Իթթիհատը ամէն բան ձգելով, նախ եւ առաջ իր սեփական կաշուի
վրայ ստածեց եւ իր վարիչներու կեանքի ապահովութեան ամենէն առաջին տեղը
տուաւ:

«Մեր գործակցութիւնից յետոյ էր որ զանազան կէտերի վրայ զինուորական
իրարանցումներ, ապստամբութիւններ տեղի ունեցան՝ հակա-Իթթիհատական ուղ-
ղութեամբ: Դրանից յետոյ էր, որ Իթթիհատի տապալումը պահանջող ժողովրդա-
կան շարժումներ, խոռովութիւններ մէջտեղ եկան»: (Ս. Սապահ Գիւլեան «Պատաս-
խանատուները», 1916, էջ 287):

ԳԼՈՒԽ Ե.

ԻԹԹԻՀԱՏԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Իթթիհատի դէմ դիրքորոշուած պայքարի մէջ էին Արարիոյ, Եէմէնի, Սուրիոյ, Լիբանանի, Իրազի հայրենասէր տարրերը, ու
եթէ անոնք ամբողջական ջարդի չենթարկուեցան, սակայն փաստօրէն
անօթութեան եւ կախազանի դատապարտուեցան: Պատերազմի ճա-
կատներուն վրայ (Կովկաս, Սուէզ, Միջագետք) Թրքո-Գերման ու-
ժերուն պարտութիւնը պատճառ եղաւ որ յետաձգուած ջարդը չոր-
ժադրուի արարներուն դէմ: Իսլամ եւ քրիստոնեայ արարները միաս-
նաբար պաշտպանեցին եւ բազմաթիւ իրենց կուսակցական ղեկավար-
ները՝ Դամասկոսէն Պէյրութ ու Ալէյ հերոսաբար կախազան բարձ-
րացան անկախութեան սիրոյն:

1922ին Գահիրէ տպուած Անթուան Եամմինի «Չար Տարուան
Թշուառութիւնը, Լիբանան եւ Սուրիա Պատերազմի Երջանին», 209
էջոց զիրքը, որուն նախարանը «Լա Սիրի» թերթի խմբագիր Բու
Լէր գրած է Պէյրութի մէջ 10 Օղոստոս 1921ին, կ'ըսէ, թէ բոլոր
անոնք որոնք պիտի կարդան այս զիրքը, յատուկ զաղափար մը պիտի
կազմեն երկար ու տառապանքով լի շորս տարիներուն մասին (1914-8)
որուն ենթարկուեցան Սուրիացիներն ու Լիբանանցիները: Մարտիթ
վարդապետ Հայր Եամմինի զիրքը ձօնուած է Փրանսացի ակադեմի-
կոս Եպիսկոպոս Ա. Պոտրիլլարի:

«Բնակալ կառավարութեան մը ոճիրներն են, անհանդուրժող ու ֆանաթիկ
մտայնութեան մը ներկայացուցիչ, որ Գերմանիոյ ցանցին մէջ ինկած ջարդեր գոր-
ծադրեց մարդոց եւ ազգերու դէմ»:

«Անօթութեան դատապարտել երկիր մը, մարտիրոսաբեր անոր բնակչութիւ-
նը, արգիլել ուտելիքի մուտքը, դատապարտել ազգ մը որ խոտերով սնանի, տես-
նել ճամբաներն ու անտառները զիւղներով եւ քայքայուած մարմիններով, լուն-
բարել ամէն իրաւունք եւ պատիւ, յափշտակել բոլոր տուններն ու քաղաքները, կա-
խել կամ աքսորել — ահա թէ ինչ եղաւ թուրքերու ծրագիրը Լիբանանցիներու եւ
Սուրիացիներու նկատմամբ, ահա թէ ի՞նչ եղաւ ձերմակ լեբան ճակատագիրը՝
1914-18ի պատերազմի շրջանին: (էջ 5):

Դէպքերը զարգացան երբ Զէքի Փաշայի տեղ ձեռնադրուեց Կարգուեցաւ... Դ. բանակին, որ կեդրոնացած էր Սուրիա-Լիբանան:

«Պատմութիւնը իրաւունք ունի պահանջելու այս բռնակալին (ձեռնադրուեց) հաշիւ, այն եղանակին շուրջ՝ զոր գործադրեց իր իշխանութեան օրով»:

Ձեռնադրուեց զարգացաւ ուղեց զբաւել Լիբանանը, Իտալիա բողոքեց, ըսուեցաւ անոր՝ թէ այդ որոշումը ժամանակաւոր ընդթ կը կրէ:

Ան իր մէկ հրամանագիր-կոչին մէջ կը յայտնէր, թէ պատերազմական դրութեան հետեւանքով զինուորական վիճակ կը յայտարարուէր եւ թէ զին. կառավարութիւնը պիտի զբաւէր բոլոր «Քշմամի երկիրներու» պատկանող հաստատութիւնները: 20-50 տարեկան այրերը զէնքի տակ կ'առնուէին, 1908ին Իթթիհատի ծրարագրին համաձայն բոլոր զբոստոնեաներն ալ զինուորացուցուցաւ պարտաւոր էին:

Բազմաթիւ Լիբանանցիներ վանքեր ու լեռնային շրջաններ ապաստանեցան զինուորութեան խուսափելու համար: Ինքնութեան մասնաւոր թուղթեր պատրաստուեցաւ, քիչ յետոյ 44 թրք. ոսկի վճարողները ազատ կացուցուեցան զինուորագրութեան: 7 հազար թուրք զինուոր զրկուեցաւ Լիբանան, որոնք ծովեզերքները պաշտպանելու սահմանուած էին, որոնք աւելի շատ մարդասպաններ էին: Լիբանանցիին ինչքն ու գոյքը անզուրկ մարդոց քմայքէն կախեալ էր:

60 հազարոց ձեռնադրուեց թուրք մէջ (Սուէզի ճամբան) ծանր պարտութիւն կրեց... բայց Պէյրութի մէջ պարտադիր զբաւազարդում եւ ուրախութիւն պարտադրուեցաւ... ապա ջաղացքները եւ փութերը բռնադրուեցան... ձեռնադրուեց կրկին կ'ուզէր Սուէզը վերադարձել... պարտադիր զինուորութիւն հաշուեց... սովը տիրեց երկրէն ներս: Հատկապէս մէջ Յանձնախումբի կեդրոն հաստատուեցաւ ժողովուրդը «կերակրելու» համար: Վախնալով Դաշնակից ցամաքահանումէ մը, ձեռնադրուեց պարտադրեց որ բոլոր սննդեղէնն ու փոխադրութեան միջոցները ծովեզերքներէն դէպի ներս կողմերը փոխադրուին: Ան կը գործադրէր Իթթիհատի որոշումները:

Սովին յաջորդեց մարտնչներու արշաւը: 10 օր կուուեցան մարտնչներու դէմ եւ կարելի եղաւ մէկ փոքր մասը փճացնել:

Ճրանսական մարտնչաւ մը՝ «Ժան Տարք», Շիքքայի եւ ձուկի մէջ քարերէղի կեդրոնը զարկած էր: Թէեւ գտարանները պարապ էին...:

Պէքեր Սամի Հալէպի վալի կը նշանակուի, զինք կը փոխարինէ Ազմի Պէյ: Յովհ. Գուլումեան Փաշան կանչուած էր Պոլսոյ Իթթիհատի հրամանով եւ տեղը նշանակուած էր Ալի Մունիֆ Պէյ, որ առաջին առթիւ կը յայտնէր թէ վերջ գտած է Լիբանանի ներքին ինքնավարութիւնը...:

Մունիֆ Պէյ Մարոնիթ Պատրիարքին այցելելով կը յայտնէ, թէ պարտադիր զինուորութիւնը վերջ գտած է: Ան նոյնիսկ դպրոցներ բանալ կուտայ... «Աւա՛ղ, Իթթիհատի Երբորդութեան դրածոն մեծապէս նպաստեց Լիբանանցիներու բնաջրնջման: (Էջ 36):

Եղան վաշխառուներ, որոնք մինչեւ 50% տոկոսով դրամ փոխ տունն այն Լիբանանցիներուն՝ որոնք երկրէն կը փորձէին հեռանալ մղուած ճնշումէ եւ ջրնջման»: (Էջ 36):

1916ի 20 Փետր.ին Էնվէր Պէյրութ կը ժամանէ: Եւ զարմանալով կ'ըսէ, թէ «Պոլսոյ մէջ այս ճերմակ հացը զոր դուք կ'ուտէք, գոյութիւն չունի»: Սաատնիյէլի մէջ (Այնճարի մօտ) ժողովուրդը «անօթի եմք», «հա՛ց տուէք», «կը մեռնի՛նք» կը պոռայ Էնվէրի եւ ձեռնադրուեց ինքնաշարժին առջեւ եւ պատանի մը սեւ հացը ցոյց տալով կը դռչէ. «Ահաւասիկ, թուրքեր, ահա այս վիճակը որուն մատնեցիք մեզ»:

11 Ապրիլ 1916ին Գերման զօրքեր կը հասնին Դամասկոս... առատ թղթադրամ հրատարակ գրուած էր եւ սարտագրուեցաւ զործածել անարժէք այլ դրամները...:

Այդ շրջանին համաճարակէ, ծաղկախոտէ, թանջքէ եւ այլ հիւանդութիւններէ բազմաթիւ թուրք զինուորներ կը մահանային: Ատկէ փոխանցուեցաւ Լիբանանցիներուն: 70 հազար Լիբանանցիներ մահացան թիֆուսէ (թանջքէ): 300% տոկոսով դրամ տուող վաշխառուներ կային այդ շրջանին...:

Թուրք Մուհեմետին Պէյ, որ 60 կոյսերու արիւնը մտած էր, խիստ անարգանքի ենթարկուելով եւ վախնալով սրտիժէ՝ անձնատուան եղաւ:

1916ին 100 հազար Լիբանանցիներ մահացած էին համաճարակէ, անօթութեան եւ թշուառութեան... օրական 30-40 հոգի կը մահանային: Հաւրանի պետելները հնչուն ոսկի կը պահանջէին ցորենի փոխան: Ձեռնադրուեց փոխանակ ոսկիի՝ զինուորութեան խուսափողներէն պահանջեց ցորեն, զարի, վարսակ՝ որոշ քանակութեամբ:

Ձեռնադրուեց Փաշա սկսուաւ երկրին անտանները կտրել տալ՝ որպէսզի երկաթուղիի համար գործածուին՝ հանքածուխի տեղ:

Երբ Մարոնիթ Պատրիարքը Պհամտուն (1917 Յուլիս 25ին) կ'այցելէ ձեռնադրուեց Փաշային, այս վերջինը կը պարտադրէ անոր գրաւոր կոչ մը՝ ուր Ֆրանսայի դէմ եւ Օսմանեան հայրենիքին կողքին ըլլալին պիտի յայտնէր...:

Պատրիարքը պիտի գրէր թէ՝ — Ամէն ինչ բնական էր, ո՛չ մէկ ջարդ, նեղութիւն, սով, դժուարութիւն պատահած էր Լիբանանի մէջ... թէեւ քսո գրքի հեղինակին, Պատրիարքը այս ձեռով կը փորձէր ողջը ողջ պահել:

Տուրքերը աներեւակայելի չափով աւելցուցին 1917-18ի շրջանին: «Գերման մտքին ու թուրք հոգիին ամասնութեան երկրին մէջ այս սեւ օրերուն ծնաւ աննախընթաց թշուառութիւն...»: (Էջ 67):

Ապա հեղինակը կուտայ երկրէն ներս տիրող թշուառութեան մասին աղիտալի մանրամասնութիւններ:

Գրքին Բ. մասին մէջ հեղինակը կը գրէ, թէ տարբերութիւն մը չկար Համիտի եւ Ն. Թուրքերու ուժիմին միջեւ. ինչ կը վերաբերի ջարդի, կողոպուտի: Ուէ՛լ բարեկարգութեան ցանկութիւն կը ճնշուէր: Միայն ճգմելու կը ձգտէին անոնք ոչ-թուրք արարները, հայերը, յոյները, սուրիանցիները: Սպաննել, լլկել, կողոպտել հազարաւոր անմեղներ: Ահա թէ ինչ բան կը գործադրէր Օսմանեան «արդարութիւնը»:

«Հայերն ու Նեստորականները գոհեցնուեցաւ «էնվէր, Թալատի, ձեռնադրուեց թուրքութիւնը զբաւազարդուեցաւ իր ծրագրի գործադրութեան (Ջարդի) Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, սովի միջոցաւ ջնջելու ուղեով բոլոր այն արաբ ազատագրական հոսանքները որոնք դեռ գոյութիւններն կրցած էին պահել Օսմանեան ճնշումին ներքեւ»:

ձէմալ Փաշան սկսու արար ընտրեալ յեղափոխականները հալածել հաղիւ Դամասկոս տեղաւորուած: Զինուորական դատարան մը հաստատեց Ալէյի մէջ, շրջապատեցաւ լրտեսներով: Ժորժ Փիքօ մեկնած ատեն արխիւներէն մաս մը Մ. Ն. Ի հիւպատոսարանը ձգած էր... լրտես մը զանոնք փոխանցած էր ձէմալի: Ֆրանսայի հետ կապ ունեցող կամ Թուրքիոյ ուժիմին դէմ դիրքորոշուած բազմաթիւ Սուրիացի եւ Լիբանանցի հայրենասէրներ մահուան դատապարտուեցան: ձէմալ Փաշա հրատարակեց. «Կարմիր Գիրքը», «Ճշմարտութիւնը Սուրիական Հարցի Մասին» խորագրով, ուր գրաւուած արխիւներու հիման վրայ ձերբակալութիւններ եղան: Այս առթիւ հոն յիշատակուած են այն գաղտնի յեղափոխական արար ընկերութիւնները եւ անոնց սլարազուխներուն գործունէութիւնը: Անոնց մէջ են.—

- 1.— Էլ Ահա-Իւլ Արապի (Արար Եղբայրներ).
- 2.— Էլ Միւնթետլ Էտէպի (Գրական Շրջանակ).
- 3.— Քահթանէ (Քահթանի Հետեւորդներ).
- 4.— Էլ Ահտ (Երզում).
- 5.— Էլ Թեվրիէթ Էլ Արապիէ (Արար. Յեղափոխութիւն).
- 6.— Նահտաթ Իւլ Լիպնանիէ (Լիբանանի Զարթօնք).
- 7.— Իսլահիէ (Բարեկարգութիւն).
- 8.— Էլ-Լամարֆէզիէ (Ազակեղորոնացում).
- 9.— Անգլիոյ եւ Ֆրանսայի Կառ. դերը մաքու տրուած էր հոն:

Ալէյի դատարանին կողմէ մահուան դատապարտուածներու ընդհանուր ցանկը:

1.— Էլ ԱՀԱ ԻԻԼ ԱՐԱՊԻ (Արար Եղբայրներ) հիմնադիրներ՝ Շէֆիք Պէյ, Նատրա Մութրան. նպատակ՝ արարներու իրաւունքը պաշտպանել, մշակ. մակարդակը բարձրացնել, օրկան՝ «Էլ Ահա Իւլ Օսմանի», կազմակերպութիւնը՝ Պոլսոյ մէջ եւ կը տարածուէր արարական երկիրներէ ներս:

2.— Էլ ՄԻԻԼԹԵՏԷԼ ԷՏԷՊԻ (Գրական Շրջանակ), (1909-1915) ղեկավար՝ Ապտիւլ Քերիմ Նալլի, Սէյֆէտտին Նաթիպ, Թէֆիք Ռըզէ Սէլլուս: Ասոնք նախաւոր Յեղ. Ապտիւլ Համիտ Չահրաուի թիւադրանքով կը գործէին Պոլսոյ մէջ, Գլիւպ՝ «Արաբիոյ Զուակները»: Հոն կը խօսուէր նիւթերու շուրջ, որոնք անկախութեան առաւելութիւնը կը շօշափէին:

3.— ԳԱՀԹԱՆԷ: Սահմ. Բ. Տարին (1909) Հիմնուած՝ Պոլիս: Հիմնադիրներ՝ Նալլի Համատա Փաշա, Ապտիւլ Համիտ Չահրաուի, Ազիզ Ալի, Սէլլուս Պէյ ձեղէյի: Ասոնց նպատակն էր արարներու ընկերային կեանքի բարելաւում եւ ազգային զգացումներուն զարթօնքը:

Քահթանէ շարժումը ծնունդ տուաւ երեք տարրեր շարժումներու:

ա) Ազիզ Ալի հիմնեց Ահտը (Երզում), որ գինուորական մարզով պիտի զբաղուէր. ապա իր ձերբակալութենէն ետք փախաւ Եգիպտոս, հիմնեց Արար Յեղափոխական Կոմիտէ, մինչեւ Ապտիւլ Համիտ Չահրաուի, Շէյխ Ռէշիտ Ռիզա, Ռէֆիք էլ Ազմ, հիմնեցին Եգիպտոսի մէջ «Ապակեղորոնացում» շարժումը:

«Երզում» կազմակերպութեան անդամները կը ձգտէին բանակի մէջ հակա-Իթթիհատ թեւը զօրացնելը:

«Արաբ Յեղ. Կուս.» (էլ Թէվրիէթ Էլ Ատապիէ), հրապարակաւ պայքարի կոչեր կը ստորագրէր Իթթիհատի բռնութեան դէմ:

«Լիբանանի Զարթօնք»: Ասիկա իր մէջ կ'ամփոփէր նախորդ յիշուած շարժումները, գաղտնի էր: Ասլ էլ Նազկն ընտանիքի անդամներ զայն հիմնած էին: Պէյրութի մէջ իր մասնաճիւղը ունէր, Ֆրանսական ազդեցութիւնը զգալի էր իր վրայ: Եգիպտոսի Լիբ. գաղութէն բազմաթիւ հետեւորդներ ունէր Ընկերութիւնը:

Ամերիկայի մէջ Նաուս Մուքարզէլ «Էլ Հոտա» թերթի խմբագիրը անդամ էր անոնց: Կը ձգտէին Պէյրութը կցել Լիբանանի եւ սահմանները մինչեւ Պէքաս երկարել երկրին:

«Բարեկարգութիւն» (Իսլահիէ): Ասոնք Պայքանեան Պատերազմին (1912) կը պահանջէին բարեկարգութիւն: «Օսմանցիները, կը զրէ հեղինակը, կ'աշխատէին համոզել ժողովուրդները, որ պատերազմին վախճանին սպասեն... Բարեկարգութիւններուն իրագործումը տեսնելու համար... 24 հոգինոց Յանձնխ. մը մինչեւ Պոլիս դիմում կը կատարէ, բարեկարգութեանց համար, սակայն... ո՛չ մէկ արդիւնք»:

«Ապակեղորոնացում» (Տ'էլլա Մէրքէզիէ): Տաւուտ Պէրէթի եւ Իսկէնտէր Ամմուն: Ահա եւ ցանկը յեղափոխական կուսակցութեանց ղեկավարներէն անոնց՝ որոնք Իթթիհատի դէմ ազատագրական պայքարի ճանապարհին իրենց կեանքը զոհեցին արար հայրենիքին սիրոյն.—

Ապտիւլ Համիտ Զահրաուի: Կուսակց. Փարիզի գաղտնի ժողովին մասնակցած:

Շէֆիք Պէյ Էլ Մուէլլէտ: «Էլ Ահա»ի հիմնադիր: Սուրիոյ եւ Լիբանանի անկախութեան ձգտող եւ Ֆրանսայի հետ գաղտնի կապ հաստատած:

Շիւքրի Պէյ Էլ Ասալի: Գահիրէ Իպրահիմ Փաշայի արձանին առջեւ բացայայտօրէն անջատողական ծրագրի մասին ճառ խօսած ըլլալուն համար:

Ապտիւլ Ղանի Էլ Իւրայսի: Սուրիոյ մէջ յեղափոխութիւն յառաջացնելու ձգտած:

Սէյֆէտտին Էլ Հաթիպ: Արարներու Օսմանեան կայսրութենէ անջատման է նպաստ յայտարարութիւններ հրատարակած է:

Մահմուտ Էլ Մահմասամի: Յեղափոխութիւն յառաջացնելու ձգտելուն համար, Մէրֆէզիէի գործիչ:

Մէհմէտ Էլ Մահմասամի: Նոյն ամբաստանութեամբ:

Սալիհ Պէյ Հայտար: Մէրքէզիէ Կուս. Պատկէզի ներկայացուցիչ:

Ապտիւլ Վահապ Էլ Ինկիլաբի: Մէրքէզիէի անդամ, Դամասկոս՝ յեղափոխութիւն կազմակերպելու համար գաղտնի ժողովի մասնակցած:

Թէֆիք Ռըզէ Սալլուս: Արար անկախութեան է նպաստ բանաստեղծութիւններ գրած եւ զրգոտած է ժողովուրդը:

Խամր Համիտ: Մէրքէզիէի անդամ, թատրոնի մէջ արար եւ թուրք յարաբերութիւններուն հանդէպ առելութիւն հրահրած:

Արեֆ Էլ Շէհապ: Մէրքէզիէի անդամ: Արարները անպատի շրջաններուն մէջ ըմբոստութեան մղող:

Ապտիւլ Քերիմ Էլ Խալիլ: Մէրֆէզիէի գաղտնի կոմիտէի անդամ:

Շէյխ Ահմէտ Թապպարա: Սայիտ Ազըլ անձը որ մահուան դատապարտուած մըն էր, իր թերթին խմբագիր նշանակելուն եւ բարեկարգութիւն պահանջելուն համար:

Էմիր Խամր: Ֆրանսայի շահերուն օժանդակած:

Ալի Էֆէնտի Էլ Իմնապի: Մէրքէզիէի անդամ:

Հաֆըզ Պէյ Էլ Սաիտ: Մէրքէզիէի Կաֆայի ներկայացուցիչ:

Մահմուտ Էլ Անէւ: Պէյրութի Մէրքէզիէի անդամ:

Նաիֆ Էֆ. Թեյլո: Պէքաս էլ Ազիզի Մէրքէզիէի անդամ:

Մէհմէտ Մուսլիմ Պիմ Ապտիմ: Լաթաքիոյ Մէրքէզիէի ներկայացուցիչ:

Սաիտ Էֆէնտի Էլ Քերիմ, Սէլիմ Էլ Ահմէտ Էլ Ապտիւլ Հատի, Սէլիմ Պէյ ձեվաիբի, Էմին Լուքթի Պէյ: Վերջին երկուքը գինուորներուն մէջ Իթթիհատի դէմ բորբականտ կատարողներ որպէս:

Ապտիւլ Գատր Էլ Հարսա, Ռիշուտի Շամաա, Մէհմէտ Էլ Շանթի, Ժորժի Հայտար (Լիբ. անկախ. աշխատած հրատարակութիւններով եւ «Էլ Իթթիհատ Իւլ Օսմանի» թերթով):

1915ին 40 հոդի հաւաքած կը իթթիհատը եւ 11 հոդի մահուան դատապարտած :

Երբ յայտնեցին 11ին թէ դատապարտուած էին մահուան , անոնք կոչեցին .

— Գնա՛ մարդ , ըսէ մեր դահլճներուն , թէ մենք անհամբեր մահուան կը սպասենք :

Ապտիւլ Քէրիմ կախազանին առջեւ Ռիզա Պէյի դէմքին .—

«Սիրելի հայրենակիցներ , թուրքերը կ'ուզեն մեր ձայնը խեղդել մեր կարծիքն մէջ , անոնք կ'ուզեն արգիլել որ մենք անկախութիւն պահանջենք եւ մեր ազատագրումը անարգ քրքական լուծէն , այս ընկճող լուծէն որ երկար ժամանակ ծանրացաւ մեր վրայ : Մենք պիտի խօսինք եւ պիտի պահանջենք մեր անկախութիւնն ու ազատութիւնը աշխարհի բոլոր քաղաքակիրթ ուժերէն :

«Հայրենի հող , յիշէ միշտ այս 11 նահատակները , հայրենի երկիրս , մեր եղբայրական սէրը տար բոլոր Լիբանանցիներուն , բոլոր Սուրիացիներուն եւ բոլոր արաբներուն , պատմէ անոնց մեր ողբերգական մահը եւ ըսէ իրենց՝ որ մենք անոնց անկախութեան համար ապրեցանք եւ անոնց անկախութեան համար ալ պիտի մեռնինք» : Այս ըսելով , ան աթորը հրեց ոտքին տակէն եւ շունչը փչեց :

(Տես՝ «Չորս Տարուան Թշուառութիւն , Լիբանան եւ Սուրիա Պատերազմի Ծրջանին» , 1922 , Գահիրէ , Անթուան Եամմին , էջ 209) :

Մէհմէտ Մահմատանի .— Դահի՛ն , եղբորս հետ նոյն վայրկեանին մեզ սպաննէ , որպէսզի մէկս միւսին վրայ ցաւելու առիթ չունենանք : Ապա ժողովուրդին դառնալով՝

«Ես երբեք չդաւաճանեցի հայրենիքս , թուրքերը զիս յանցաւոր հանցեցին , կը հաւատամ որ ազատութիւնը սիրելի եւ հայրենիքի ազատագրումը ցանկալ ոգիք մը չէ՛ երբեք :

«Կը մեռնիմ հայրենիքս համար , կեցցե՛ հայրենիքս , կեցցե՛ արաբ ազգը» :

Ապտիւլ Քասթըր էլ Հարաս .— «Ըստէ եղբորս որ երիտասարդութեան վրայ շլայ , որովհետեւ նահատակի մահով կը մեռնիմ , պատիւս ու կոչումս միշտ բարձր բանած :

«Մեզ ձեմալը դատապարտեց , որովհետեւ անգութ մարդասպան մըն է եւ սուսկալի բռնակալ մըն է . . .» :

Ռաս Պէյրութի մէջ 11 հոգիներ կախուցան իթթիհատի կողմէ :

Իրարմէ աւելի յուզիչ պարագաներու մէջ բազմաթիւ Սուրիացիներ եւ Լիբանանցիներ ջարդուցան անկախութեան սիրոյն :

7 հոգին Պէյրութի՝ 14 հոգին՝ Դամասկոս՝ 1916ին :

Բէքթէ Բըզը Սալլուս .— «Վայրենիներ , Անատոլուի ցեղախումբեր , ձեր բռնակալ ուժերը պիտի արագացնէ ձեր վայրագ կառավարութեան անկումը : Վայրագ երրորդութիւնը ձեր (էնվէր , Թալաթ , ձեմալ) որ կազմակերպեց Հայոց եւ Սուրիացիներու ջարդը , պիտի չկրնայ կեցնել այն ձեռքը , որ պիտի վրէժը լուծէ այս երկու ազգերուն» : (էջ 134) :

Ապտիւլ Վահապ էլ Ինկիլի .— «Ե. Թուրքերը կ'ըսեն , թէ Ապտիւլ Համիտ ամենէն մեծ եւ ամենէն անգութ մարդասպանն է աշխարհի , ահա քէ ինչո՞ւ , իրենք ուզեցին ազատուիլ անկէ , բայց առաջ մէկ Համիտ կար , մինչ այսօր բազմաթիւ Համիտներ , եւ դժբախտաբար այսօրուան Ապտիւլ Համիտները (Իթթիհատակները) քանդեցին , լլկեցին , չարչարեցին եւ սպաննեցին մէկ տարուան ընթացքին շատ աւելի քան Ապտիւլ Համիտը իր 33 տարուան իշխանութեան շրջանին» :

«Աստուած մեզ ազատագրէ՛ այս մարդասպան երկու . Թուրքերու ձեռքէն» : (էջ 135) :

Պէյրութի 14 կախազան բարձրացողները արար . ազլային քայլերը կրկեցին . . . :

Սայիտ Աբըլ .— «Թող մեր արեան կարիւր ապագային դառնայ կեանքի սկզբունք իմ երկրիս համար եւ պատուոյ բեմա՛ իմ ընտանիքիս եւ զաւակներուս համար» :

Օմար Հայտար՝ Ռիզա Փաշայի սուղեւ .— «Գիտցէ՛ք ո՛վ իր-թիհատակներ , որ ձեր բռնութեամբ , դուք կը քանդէ՛ք ձեր կայսրութեան հիմքերը :

«Կեցցե՛ք արաբները , անկցին բուրքերը , ես կը մեռնիմ անկախութեան եւ ազատութեան սիրոյն իմ երկրիս» :

«Ըստէ՛ք ձեմալ Փաշային որ այսօրուան մահացողներուն զաւակները վրէժը պիտի լուծեն իրենց հայրերուն» :

Էմիր Աբէֆ էլ Շէհապ .— «Կը մեռնիմ արաբ ազգի յարութեան համար , կեցցե՛ք արաբները» :

Թէֆէ էլ Պէսաթ .— «. . . Ողբո՛յն քաղերու կախազաններ — կախազանները վազուան մեր անկախութեան կառոյցն են» :

20 հազար հոգի Լիբանանէն՝ հայոց նման անապատները քըշուեցան : Ապա Հեղինակը արտօրի վացած բազմաթիւ արարներու կեանքէն ղէպքեր , յուշեր , տպագրութիւններ կուտայ :

«Սուրիա Էնտ Լէպանոն» (1951ին Լուստոն տպուած) գրքին մէջ Ա. Հուրանին կը գրէ .—

Իթթիհատի հանդէպ վերապահ դոնուեցան արարները , անոնք 1908ին սուալ ալ անջատ ընդդիմադիր խմբակներ կազմած էին , ինչպէս «Արար Հայրենիքի Լիկա» 1904ին , Փարիզի մէջ : Ըստ Ժորժ Անտոնիոսի արար սուալին յեղափոխական կազմակերպութիւնները կը ձգտէին ո՛չ թէ բացարձակ անկախութեան , այլ լայն ինքնավարութեան : Աստուծէ յիշենք «Օսմանցի եւ Արար Եղբայրութիւն» եւ «Գրական Ծրմանակ»ը : «Ազգակեդրոնացման Օսմանեան Կուս.»ը կազմուեցաւ 1912ին Գահիրէի մէջ , բայց ժամանակ մը ետք դադարեց կուսակցութիւններ մէջտեղ Էկան՝ որոնք արարներու բացարձակ անկախութեան կողմնակից էին : Աստուծէ նշանաւոր հանդիսացաւ «էլ Ֆաթաթ»ը , որ Փարիզի ուսանողներուն կողմէ հիմնուած էր եւ իրենց կեդրոնը հաստատած էին Սուրիոյ մէջ , իսկ «էլ Ահա»ը հիմնուած էր 1914ին , եւ ընդհանրապէս բանակի սպաներէն կազմուած էր : Անոնց մէջ բազմաթիւ Իրազցիներ կը գտնուէին : Անոնք ունեցան իրենց Համագումարը : Պատգամաւորներուն մեծ մասը Սուրիացի եւ Լիբանանցի էին եւ կէսը քրիստոնէաներէ կը բաղկանար : Համագումարը պահանջեց լիակատար իրաւունքներու արարներու համար եւ ազակեղորոնացում կայսրութեան ծիրէն ներս : (էջ 40) :

Համիտի եւ կայսրութեան տապալումէն ետք արարներու համար հարց էր դիտնալ , թէ անկա՞խ պիտի ըլլային , թէ նոր իշխանութեան՝ Իթթիհատին ձեռքին տակ պիտի գոյատևէին որպէս ծառաներ :

Արարներու մօտ ինքնավարութեան զաղափարները աւելի շատ տարածուած էին զարգացած խաւի մօտ : Սուրիոյ «Ֆաթաթ» Կուս. կառուցութիւնը արար այլ երկիրներու ազգայնականներուն հետ , մինչև իսկ Մ. Ն. ի արարներուն եւ Եգիպտոս հաստատուած Սուրիացիներուն հետ :

Շէրիֆ Հիւսէյնի հետ եւս կապեր հաստատած , նոյնպէս Ապտիւլ Ազիզ Իպն Սէուտի հետ , որ Սէուտ Արաբիոյ գորտար իշխաններէն էր :

Լիբանանցի քրիստոնէաներուն զաւա՛յն , անոնք Լիբանանի ինքնավարութիւնը ամբողջացուած նոր սահմաններու մէջ , կը պահանջէին : Անոնցմէ մաս մը դէմ չէր արար ազգայնականութեան եւ յոյսերին յատկապէս Ֆրանսայի կողմէն :

Երբ Թուրքիա պատերազմի մտաւ, ասոնց մեծ մասը առիթը յարմար նկատեցին իրենց նպատակը եղող ինքնավարութեան կամ անկախութեան հասնելու:

Անգլիոյ եւ Շէրիֆ Հիւսէյնի միջեւ սերտ կապեր հաստատուեցան:

Ան իրրիւ արար Յեղ. Կուս. կողմէ խօսք տուաւ Թուրքերու դէմ ապստամբիլ: Անգլիա ընտանիքն է օգնեց եւ խոստացաւ անկախութիւն՝ եթէ արարները ապստամբէին:

Շէրիֆ Հիւսէյնի եւ Եգիպտոսի Բարձր Գոմիսէր Հէյնրի Մք. Մահոնի միջեւ 1915 Նոյտ. 24ին նամակներու փոխանակում կատարուեցաւ արար երկիրներու ճակատագրին շուրջ, բացի Սուրիոյ եւ Լիբանանի շրջանէն, ուր Ֆրանսայի շահերը կը գտնուէին... որուն համար Անգլիա իր դաշնակցին տեսակէտով նկատի առնել ուզած էր... (էջ 44): Յառաջիկայի մասին անկախութեան խոստումներ արուեցան:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Պէյրուսի Իսլամ, Պալուս Էֆէնտի չվարանեցաւ հեռադրով ազդարարելու Պոլսոյ կառավարութեան, որ «Սուրիացիները բարենորոգումներ կ'ուզեն եւ որ եթէ իրենց օրինաւոր պահանջները նկատի չառնուին, որոշած են իրենց գլխուն ճարը նայիլ»:

86 հոգինոց արարներու Պատգ. Ժողովը գումարուեցաւ Պէյրուսի Քաղաքապետարանի շէնքին մէջ՝ 12 Յունուար 1913ին:

Ահմէտ Ապպաս, տնօրէն՝ Օսմանիէ Վարժարանին, կը նախագահէր: 12 իսլամ, 12 քրիստոնեայ, 1 հրեայ՝ 25 հոգիէ բաղկացած կոմիտէ մը նշանակուեցաւ, ուսումնասիրելու համար պահանջուելիք Բարենորոգումները եւ պատրաստելու համար համապատասխան ծրագիր:

Սոյն 86 պատգամաւորները ըստ կրօնական համայնքի՝ այսպէս բաժնուած էին: 42 իսլամ, 16 օրթոտքս, 10 մարոնիթ, 6 յոյն-կաթոլիկ, 2 լատին, 2 հայ-կաթոլիկ, 2 հայ-լուսաւորչական, 2 ասորի, 2 բողոքական եւ 2 հրեայ:

Էնվէրի Յունուար 1913ի պետական հարուածէն ետք, երկրին ղեկը ամբողջութեամբ Իթթիհատի ձեռքը անցաւ... Պէյրուսի վալին փոխուեցաւ... Եւ վստահելի Իթթիհատական մը զայն փոխարինեց... որ խը հաշուեյարդարի անցաւ բարեկարգութիւն պահանջողներուն դէմ: Պէյրուսի յեղափոխականները, արարներէն, Թրքերէն եւ Փրանսերէն լեզուներով հետեւեալ տիտղոսով գիրք մը տպեցին. «Մրագիր Բարեմարդմանց գործադրելի Պէյրուսի վիլայէթին մէջ, ընդունուած գաւազան հասարակութեանց ընտրական մարմիններու կողմէ՝ ընտրուած 86 անդամներու Ընդի. Ժողովի 3րդ նիստին մէջ, 31 Յունուար 1913ի Ուրբաթ օրը»:

Նազըմ Պէյ Ապրիլ 8ին Բարենորոգչական կոմիտէի մէկ նիստը ցրուեց, յաջորդ օր բոլոր Բարենորոգում պահանջողներու կողմնակից թերթերը հրատարակուեցաւ սեւածիր շրջանակուած, իրրեւ միակ բովանդակութիւն հրատարակելով կոմիտէի լուծման հրամանագիրը: Փակուեցան բոլոր վաճառատուները եւ բողոքի դիմումներն ու հետադիրները տեղացին դէպի վալին ու Բ. Դուր: Ապրիլ 11ին վալին յայտնեց մունետիկներու միջոցաւ, թէ նահանգներու օրէնքները պատրաստ է արդէն գործադրութեան գրուելու համար եւ ժողովուրդը կը հրաւիրուի վերսկսելու իր ընտանիքն կենքը:

Անօգուտ: Քաղաքը շարունակեց մնալ դիակի պէս անշարժ: Հայրմ Պէյ դադարեցուց այն ատեն բոլոր իսլամ բարենորոգչական թերթերը, ձերբակալեց մի քանի պարագլուխներ, զորս չարձակեց, մինչեւ որ կոմիտէն յանձնառու չեղաւ պոյքթիթը դադարեցնելու: (Ապրիլ 13):

Շէվքէթ Փաշան կը թելադրէր Օսմ. խորհրդարանին դիմել, որովհետեւ ոեւէ տարրեր միջոց հակառակ է Սահմանադրութեան... ան կ'եզրակացնէր. «Ջիմ. իշխանութիւնները հրաւան ստացած են Պատերազմական Ատեանի առջեւ երկու ժամուան մէջ դատելու ամէն անոնք, որ ապօրէն ցոյցեք կ'ընեն»:

Պէյրուսիցիները լռեցին սարսափահար, բայց չվճատեցան:

1913ի Յունիսի գումարուեցաւ Փարիզի Գոնկրէն: Հոն կային Պէյրուսէն, Դամասկոսէն, Հալէպէն, Երուսաղէմէն, Մուսուլէն, Պաղատոնէն, Պասրայէն եւ ուրիշ արարախօս շրջաններէն հաւարուած ներկայացուցիչներ:

Գոնկրէն կարճ տեւեց, տարակարծութիւն չկար սկզբունքներու շուրջ, տուաւ ուղղութիւն:

11 կէտերու մաքերը միայն — արմատական եւ ստիպողական բարենորոգում, պետական գործերու մէջ արարներու մասնակցութիւն, ապակեդրոնացեալ ռէժիմ, Պէյրուսի համար յատուկ սթաթիքօ մը, արարերէնը՝ արար երկիրներէ ներս, զինուորական ծառայութիւնը միայն արարական երկիրներու սահմաններէն ներս, իսկ ամենէն կարեւորը՝

Տրդ «ԳՈՆԿՐԷՆ ԿԸ ՀԱՒԱՍՏԷ ԻՐ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆՑԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԵՒ ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐՈՒՆ ԵՎԱՍՄԱՄ»:

Սոյն որոշումները պիտի հաղորդուին Օսմանեան կառավարութեան, յարեկամ պետութեանց, իսկ շնորհակալութիւն կը յայտնուի ասպնջական Ֆրանսայի, նոյնպէս Գոնկրէն կը յայտնէ, թէ ո'չ մէկ պաշտօն պիտի ստանձնէ իրենցմէ մէկը՝ այնքան ատեն որ չի գործադրուի իրենց ծրագիրը: Սոյն որոշումները քաղաքական ծրագիրը կը կազմեն արարներուն: Երեւի. բնտրութեանց այն թեկնածուն որ համաձայն կ'ըլլար վերոյիշեալ որոշումներուն, պաշտպանութիւն պիտի չգտնէր:

Կուս. գործիչ Բ. Շահպաղ Պոլսոյ մէջ տեսակցած է Իթթիհատի պետերէն մէկուն հետ արարներու Բարենորոգութեան պահանջին շուրջ եւ Իթթիհատականը անվերապահ յայտնած է, թէ Պոլսոյ կառավարութիւնը ամենեւին չի կրնար ընդունիլ այդպիսի ծայրայեղ որոշում մը:

«Լիբանան եւ Ալժարէի Պատմութիւնը» գիրքը, զոր խմբագրած են Մունիր Պապլպաքի, Պահիճ Օսման եւ Շաֆիկ Ճուհա (1969, Պէյրուս) բուարար եւ ամփոփ ծանօթութիւններ կուտայ Լիբանանի եւ Արարական ալժարէի Ա. Համաշխարհային Պատերազմի շրջանի Օսմանեան բռնատիրութեան ճնշումներուն դէմ մղած պայքարներուն մասին:

Դ. բանակը Լիբանան գալով ձկմալ Փաշայի հրահանգով խախտեց 1864ի Լիբանանի ներքին ինքնավարութեան մարդի իրաւունքը եւ զինուորական ռէժիմ հաստատուեցաւ երկրէն ներս, թէեւ 1912ին կառավարիչ նշանակուած հայազգի Յովհ. Փաշա Գուլուստանի իրաւասութիւնը փաստօրէն խախտած էր ձկմալ Փաշան: Ապա Ալէյի մէջ զին. զատարան... բռնադատուեցան Դաշնակից երկիրներու պատկանող ունեցուածքները: կրօնական հաստատութիւններ... զինուորական կայաններ հաստատուեցան, Թուրքեր միջամտեցին երկրի Համայնքային գործերուն: Մարոնիթ Պատրիարքարանի ներքին գործերուն եւ իրաւասութեան վրայ ճնշում բանեցուցին:

ԻԹԹԻՆՏԱՏՈՐ կը ձգտէր մեռցնել ազատութեան ոգին: Յեղափոխական զաղտնի կազմակերպութիւնները կը ձգտէին քաղաքական եւ ընկերային պայմաններու բարելաման: Մաս մը կը զործէր կրօնական եւ գիտական նպատակներու հետապնդման պատրուակին տակ, որովհետեւ ԻԹԹԻՆՏԱՏՈՐ հսկիչ աշխատակիցները խուսափէին:

Սոյն հայրենասէր կազմակերպութիւնները իրենց նպատակով երկու խումբի կը բաժնուէին:

Անոնցմէ մէկ մասը կը պահանջէր ինքնավարութեան՝ Օսմ. կայսրութեան ծիրէն ներս: Անոնք կը կոչուէին անջատողականներ: Միւս մասը կը ձգտէր ամբողջական անկախութեան՝ Օսմ. կայսրութենէն դուրս դալու գնով:

ԻԹԹԻՆՏԱՏՈՐ երկու հոսանքներն ալ կը հալածէր, վախճալով անոնց ազատարական շարժումներէն եւ ճնշումներ կը գործադրէր մամուլի եւ հրատարակչատանց վրայ: Ամէն կողմ կողմ լրտեսներ... Բանտերը լեցուեցան ընդդիմացող յեղափոխականներով: Պատերգ. Ատեանը կը գործէր ինքնակամ՝ առանց դատապարտեալին ինքզինքը պաշտպանելու հնարաւորութիւն տալու: Ընդհանուր ֆրոնտիստները 1915ին Օսմանեան բանակը պարտուած եւ քայքայուած նահանջեց Սուէզէն, ձկնալ ֆաշան ատոր պատասխանատու ուղեց լռեց լիբանանցի եւ Սուրիացի գիւնուորներուն դասալքութիւնը եւ բնիկներուն իր հետը չգործակցելը: Ընդհանուր ֆաշա արար յեղափոխականները որպէս «Երկրի դաւաճաններ» մահուան դատապարտեց 1915ի Օգոստոս 20ին: Ասոնք թիւով 11 հոգի էին: Բայց սոյն կախաղանները փոխանակ տկարացնելու աւելի զօրաւոր մղում տուին ազգային Ազատարական Շուրժումին, հակառակ բռնութեան եւ ետթաղանին: Յեղափոխականներէն մաս մը ձկնալ ֆաշայի կողմէ գին. ճակատ կամ Անատոլի խորերը աքսորուեցան եւ կասկածելիներն ալ բանտ առաջնորդուեցան:

Ընդհանուր սոյն կախաղանները պատճառ դարձան որ սերտ գործակցութիւն ստեղծուի յեղափոխական ուժերու եւ նաեւ քրիստոնեայ եւ մահմետական համայնքներու միջեւ, քանի որ դառնալով տարբերութիւն չէր դնել անոնց միջեւ:

Իշխան Ֆէյսալի եւ Իպն Նիսիցիի ուժերը կոտորեցան Օսմանեան բանակներուն դէմ:

Թրքացման այս ճիգերը արարներուն մէջ զօրացուցին ազգայնական ոգին:

Հիմնուեցաւ «Արար. Օսմանեան Եղբայրներ» Կուս.ը 1908ին Պոլսոյ մէջ, որուն նպատակն էր արարական նահանգներէն ներս բարեկարգութիւններ իրականացնել՝ հիմնուելով Օսմ. Սահմանադրութեան խոստումներուն վրայ, նպատակ ունենալով նաեւ տարածել արարներէնով ուսումը, արթնցնելով արարական անցեալ մշակութիւն հանդէպ սէրը:

Այդ շրջանին հիմնուեցան նաեւ «Բահթամիա» եւ «Երիտ. Արարներ» շարժումները, նոյնպէս 1912ին հիմնուեցաւ «Իլլախ» Կուս.ը որ կը ձգտէր ինքնավարութեան:

«Փարիզի 1913ի արարական ու Յեղափոխական Համաժողովը 5 կէտերէ բաղկացած որոշում մը փոխանցեց Պոլսո՝ պահանջելով արարներէն ընդունուելը որպէս պաշտ. լեզու Արարական նահանգներէ ներս, Երրորդ մասնազտներու ընկալումը տնտեսութեան բնագաւառէն ներս, արար կառավարիչներու նշանակումը՝ դէք 5 նահանգներու վրայ, Օսմանեան Դահլիճէն ներս երեք արար նախարարներու նշանակում եւ ընդլայնում նահանգապետներու իրաստութեանց»:

13 Օգոստոս 1913ին ԻԹԹԻՆՏԱՏՈՐ թէեւ որոշ կէտերու շուրջ համաձայն գտնուեցաւ, սակայն չգործադրեց այդ որոշումը:

Սպայ Ալի Մասրին որ նախապէս հաւատք ունէր ԻԹԹԻՆՏԱՏՈՐ վրայ եւ մեծապէս օգտակար եղած էր Լիլլիոյ մէջ Իտալիոյ դէմ կողող Օսմ. բանակին, յուսախար՝ քաշուեցաւ իր պաշտօնէն եւ հիմնեց «Ախտէ» Կուս.ը որ նոյնպէս կը պայքարէր ԻԹԹԻՆՏԱՏՈՐ դէմ: 1915ին «Ախտէ» եւ «Երիտ. Արարներ» Կուս.ները Դամասկոսի մէջ միանալով ԻԹԹԻՆՏԱՏՈՐ դէմ պայքար շղթայազերծեցին:

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«1875ին Պէյրութի մէջ Արարական ակնասուր լուսաւորիչ Իպրահիմ էլ Եազըճիի գլխաւորութեամբ ձեւաւորուեց զաղտնի կազմակերպութիւն, որը տարածում էր ազգասիրական զաղափարներ եւ նպատակ էր արարների ազգային ինքնագիտակցութեան զարթոնքին:

«1885ին Պէյրութի արար ազգասէրները զաղտնի ընկերութիւն յայտնարեցուց եւ թրքական ոստիկանութեան կողմից ցրուեց. նրա ղեկավարները վախճան Եղիպտոս:

«1907ին Մայիսի 1ին Պէյրութում կազմակերպուեց արարների, հայերի եւ ճնշուած այլ ժողովրդների ցոյց՝ ընդդէմ թրքական բռնութիւններին... Ժողովուրդը պահանջում էր վերջ դնել թրքական իշխանութիւնների կամայականութիւններին, առաջ էր քաշում «Դեմոկրատական Հասարակութիւն» ստեղծելու լռուողները, կոչ էր անում դիմել գինուած ապստամբութեան»:

«1908ին թրքական պարթուսայ յեղափոխութիւնը իր ձեռքը վերցրեց «Երիտ. Թուրք» Կուս.ը որն սկզբում հանդէս եկաւ դեմոկրատական խոստումներով, սակայն յետագիւորական զաղափարներով էր առաջնորդուած եւ բացայայտ թշնամարար էր տրամադրուած դէպի արարների ու հայերի Ազատարական Շարժումները՝ դէպի հէնց իրենց աշխատակցութեան խաւերի ձգտումները:

«... Դեռ եւս պատերազմի տարիներին արարական ազատարական շարժման գործիչները ստեղծեցին մի շարք նոր քաղաքական կազմակերպութիւններ, որոնք գլխաւորում էին պայքարը թրքական տիրապետութեան դէմ, քարոզում էին արարական երկիրները Օսմանեան լծից ազատագրելու ծրագիրը:

1915ին արար հայրենասէրները կոչ հրատարակեցին «Ամբողջ արար ժողովրդին» վերնագրով:

(Տես՝ «Արարատ» Օրաթերթ, Ա. Մնացականեան, 1961, Սևպտ. 5-6):

Արար զրոյ Միշէլ Թալհամէ իր «Սուրիան Պատերազմի Ընթացքին» 1921ին լոյս տեսած հատորին մէջ ակնարկելով Սուրիոյ եւ Լիբանանի ազատարական պայքարի շրջանին, Ա. Համաշխարհային Պատերազմի նախօրեակին կը դրէ, թէ ընդդիմադիրներու թիւը տուրու կ'աւելնար Օսմ. բռնատիրութեան դէմ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, որոնք դո՛ւ ըլլալու ո՛չ մէկ պատճառ ունէին ԻԹԹԻՆՏԱՏՈՐ արարներէնը չէզոքացնելու եւ բոլորը Օսմանցի դարձնելու քաղաքականութենէն: «Ոմանք անկեղծութենէ տարուած, ուրիշներ արար դատին ծառայելու մտահոգութեամբ Անգլիոյ եւ Ֆրանսայի գործնական օժանդակութեամբ կը ձգտէին թօթափելու Օսմ. լուծը»:

Իսկ տաղանդաւոր Լիբանանցի բանաստեղծ Միխայիլ Նախիմէ նահատակներուն նուիրուած քերթուածով մը կ'երգէր.

Եղբայր բախ առ եւ հետեւէ ինձի,
Փարենֆ փոս մը մեր մեռելները բաղելու,
... Ուրիշ փոս մը փարենֆ քաղելու համար վերապրողները...

Իսկ «Հայր ժառ Արթուրը Տը Լա Գրուա» (Ֆրնս․) հատորին հեղինակ՝ Հ․ Թէոֆան Տը Տէյր էլ Կամար, 1961ին տպուած իր գրքին էջ 134ին մէջ՝ այսպէս կը նկարագրէ Սուրբոյ-Լիրանանի կացութիւնը 1915ին :

«Առեւտրը կանգ առաւ զինուորագրութեան պատրուակով. վաճառատուները զինուորներու եւ ոստիկաններու կողմէ կողոպտուեցան, քրիստոնեայ տարրէն մաս մը Պէյրութէն ապաւինեցաւ Եգիպտոս կամ Լիրանանի լեռնային գոտիները, զինուորութենէ խուսափելու համար կամ ապահովութենէ թելադրուած: Հակառակ Գափուշին Եկեղց. հաստատութեան մէջ Աւստրիացի, Գերմանացի միարաններուն գոյութեան, 12 Դեկտ. 1915ին հրահանգուեցաւ ձէմալ Փաշայի կողմէ կոպտրէն, որ Միարանութիւնը Դամասկոսէն Դեկտ. 14ին զաղթէր:

13 Ապրիլ 1915ին Լիրանան խուժեց մարախներու ալիքը, արեւը խաւարեցաւ: 10 քմ․ երկարութեամբ եւ 4 քմ․ լայնքով...: Յունիսին կրկին ալիք մը մարախներու... բոլոր կանաչութիւնները փճացան: (Տես՝ «Լիրանանի Պատմութիւն», Մեղհէր):

Պաշտօնական աղբիւրներու համաձայն 200 հազար Լիրանանցիներ (ընդհ. բնակչութեան թիւը եղած է 500 հազար — Հ․ Գ․) մահացան անօթութենէ կամ հիւանդութենէ... Հիւսիսային մասը, յատկապէս Լեռնային Լիրանանը զրեթէ անապատի վերածուած էր:

1916ին անկարելի էր Սուրբոյ-Լիրանանի քաղաքները շրջիլ, որ մուրացիկներով լի էր...: «Անօթի ենք, պիտի մեռնինք» կը լսուէր ամէն կողմէ: ... Կառքեր մեռել կը հաւաքէին ամէն օր...: (Տես՝ Հայր Թէոֆանի գիրքը, էջ 142):

Իթքիհատի սեւ ձեռքը չկրցաւ խեղդել արաք հերոս յեղափոխականներուն ազատութեան ձգտումը:



ԳԼՈՒԽ Զ.

ԻԹԹԻՆԱՏԻ ՄԱՍԻՆ ԹՈՒՐԲ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԽՕՍՔԸ



«ԹԱԼԱԹ ՓԱՇԱՅԻ ՅՈՒՇԵՐԸ»

«Թալաթ Փաշայի Յուշերը» (Թալաթ Փաշանըն Հաթիրելերի), 1946, Իսթամպուլ, Հիւսէյն Ճահիտ Եալչընի յատաջարանով լոյս տեսած է ուր «նահատակ» կ'որակուի Թալաթ:

Ճեմալ Կիրաւէլը (Նախագահ) 1965ին կը յայտնէր՝ թէ՛ «Հայկական ջարդ գոյութիւն չունի, հայերը անսպասելի մէկ պահուն մեր բանակը կոնակէն զարկին, նախքանքը կտրեցին... ո՛չ թէ թուրք բանակը, այլ որեւէ բանակ այդ պայմաններու տակ ստիպուած էր զիմաղբել (իմ ջարդել): («Մարմարա», Կ. Պոլիս, 1965, Ապրիլ 30 եւ Մայիս 1): «Ճումհուրիէթ» թերթը 1965ի Ապրիլ 17ին կը գրէր. «Բնականաբար հայերը այս դէպքին մէջ ջարդ, իսկ թուրքերն ալ ինքնապաշտպանութիւն տեսնեն»:

Թալաթի Յուշերու գիրքը 151 էջերէ կը բաղկանայ: Կողքին իր նկարը՝ Վիլհելմի նկարչին կողմէ՝ իւզաներկ դնուած: Առաջին էջին վրայ Թալաթի ձեռագիրէն նմոյշ մը, ապա Հիւսէյն Ճահիտի երկու խօսքէն կը պարզուի, թէ մահէն (1921) քիչ առաջ զրի առնուած են նահատակին(?) սոյն յուշերը, Ա. Համալխարհային Պատերազմի ընթացքին Իթթիհատ վէ թէրաքըր կուսեան եւ թուրք ժողովուրդին հասցէին կատարուած անիրաւ վերագրումներուն դէմ պաշտպանողական մըն է... Հ. Ճահիտ իր «Իլք սօզ» խօսքին մէջ ցաւ կը յայտնէ, որ վաշան պայմաններու բերումով չէ կրցած իր լման յուշերը կտակել... Թէ պատմութիւնը կարելի չէ եղեր ծածկել, թէ Թալաթը հայրենիքին համար կեանքը տրամադրելու պատրաստ անձնուորութիւն մըն էր...: Եւ թէ «յուշերը արժէքաւոր են», եւսյն: Էնվէր Պօլալըր գրքին հրատարակիչը՝ Թալաթը Գարա Մուսթաֆա, կէտիկ Ահմէտ Սէօքիւլի եւ Միտհատ Փաշաներու հետ կը բաղդատէ՝ որ «Երմէնի բուրջունունա բուրպան կէքմիշ վէ Պերլին սոփալարբնտա նան վերմիշտիր» (որ հայու կապարին զոհ գացած եւ Պերլինի փողոցներուն մէջ հողին աւանդած է):

Բայց այս վշտին շափ եւ աւելին՝ կը գրէ Պոլալըր, գերման դատարանին ազատ արձակելն է Թալաթի մարդասպանը: «Այն Գերմանիա՛ն, որուն Թուրքիան 4 տարուան զանախիցն էր...»: Թալաթ այս գրքով Իթթիհատը, թուրք ժողովուրդը միջազգային հանրային կարծիքին առջև կը պաշտպանէ այդ շրջանի մեր թշնամիներուն մեզի դէմ կատարած սուտ վերագրումներուն դէմ: «Կը խոնարհիմ ողբացեալ Թալաթ Փաշային յիշատակին առջեւ...»:

Ապա «Մուտք»ի (Կիրիչ) մէջ Քալաթ կ'ըսէ, թէ բազմաթիւ դիմումներու ընդառաջելով է որ այս զերբը զրած է եւ թէ իր բոլոր յուշերը ճշմարտութիւնն են... (?):

Էջ 13ին մէջ կը խօսի 1908ի Միտհատեան Սահմանադրութեան մասին: Կ'ընդունի որ Համիտի օրով ժողովուրդը կը ճգնուէր... նաեւ Նահանգներուն մէջ... Յոյները հակադրուած են առաջին օրէն Իթթիհատի Սահմանադրական շարժումին՝ Որհնագրանին ներս դէմ քուէարկելով՝ բոլոր հպատակներուն զինուորացորդեան կանչուելուն օրէնքին: Հայերն ու Պուլկարները ներքնապէս անկախութեան կը ձգտին եղեր... Բուսնիի եւ Ատանայի կոտորածները Պուլկարներն ու Հայերը կազմակերպած են՝ որպէսզի յետոյ յանցանքը թուրքերուն վրայ նետեն եւ Եւրոպայի միջամտութիւնը ապահովեն ի նպաստ իրենց...: Ատանայի կոտորածին պատճառը Հայերը ըլլալով հանդերձ՝ ինք չէ քաշուած թուրքերն ալ պատժել... Հայոց յանցաւոր ըլլալն ալ քննիչներէն Յակոբ Պապիկեան անձամբ իրեն յայտներ է (մարդը թունաւորուած մեռաւ Պոլիս... Իթթիհատը յանցաւոր հանելուն համար — Հ. Գ.):

Երբ Պուլկարիան անկախ, իսկ Պոսնիա Հերձեկովէնը Աւստրիան խլից թուրքիայէն, ո՛չ մէկ պետութիւն բողոքեց: Ապա Իտալիան Լիպիոյ վրայ յարձակեցաւ անակնկալ կերպով...: Ան կը խօսի Պալքանեան Ա. եւ Բ. պատերազմներուն վախճանին թուրքիոյ հողամասերուն կորուստին եւ առ այդ զործուած անարդարութեանց մասին...:

Յատուկ զուրի մը յատկացուած է Քալաթի ուսուական նուաճողական քաղաքականութեան, որ Պուլկարիոյ եւ Հայաստանի միջեւ կ'ուզէր խեղդել թուրքիան եւ արդէն հանդիսանալ Կովկասի քուրճերուն Օսմանեան թուրքերուն հետ միացման...:

Ապա կը պնդէ որ Ֆրանսացի Գայյուն Ս. Փեթսպուրկ, ցարին խոստացած էր Նեղուցները՝ հակառակ անոր որ «Թան» Ֆրնս. թերթը այս տեղեկութիւնը հաղորդած էր... Ֆրանսա չմխտեց իր կողմէ տրուած խոստումը՝ Թուրքիոյ... Այդ առթիւ էնվէր ժողովի մէջ կը յայտնէ՝ թէ Գերմանական «Կէօպէն» նաւը Նեղուցները հասած է...: Մենք լուր չունէինք կ'ըսէ: Կը զովէ պատուաւոր Գերման դեսպան Վանկէյհայմի ուղղամտութիւնը... Ապա կը զրէ, թէ Ամերիկեան դեսպան Մորկինթաուն իր զրբին մէջ իր՝ Քալաթի «ո՛չ քուրք, ո՛չ ալ Մահմետական ըլլալուն մասին գրած է: Ասիկա Մարգարէին մահմետական չըլլալուն վրայ պնդելուն պէս բան մըն է: Ես կրնամ իսլամ թուրք հօր գաւակ ըլլալս ամէն վայրկեան հաստատել»: (էջ 26):

Ապա կը պատմէ, թէ ի՞նչպէս բանակցութիւններ կատարուած են: Քալաթ իր Յուշերուն Գ. եւ Ե. գլուխները յատկացուցած է Հայոց (էջ 43-118):

Մենք նպատակ չունինք ամբողջութեամբ տալու անոր նենդ, կեղծ, սուտ ու պատիւր մեկնաբանութիւնները, որոնք զրեթէ հասարակաց են թուրք պատմաբաններուն:

Ինքնապաշտպանութեան փորձ մըն է իր կողմէ կատարուածը... այն օրերուն, երբ թէ՛ թուրքերը, թէ՛ Դաշնակիցները եւ թէ՛ Միջազգային հանրային կարծիքը Իթթիհատի պարագլուխներուն հայոց ջարդի եւ թուրքիոյ Կայսրութեան անդամահատուիլը չէին ներքեր: Ամենէն մեծ վատար 1921ի Մարտին՝ երբ սպաննուեցաւ հրէշը Պերլինի մէջ Ս. Թէհլիրեանի կողմէ, Գերման դատարանը... ազատ արձակելու ստիպուեցաւ անմահ հերոս Սողոմոնը:

Պիտի տանք կարգ մը թեզերը Քալաթի, որոնք թուրք Իթթիհատի պարագլուխներուն հողեբանութեան եւ նենդութեան ու սուտին հետ կապ ունին:

«Հնչակ եւ Դաշնակ Կոմիտէները, 1908-1918 տարիներուն իրենց պահանջներուն եւ հայ ժողովուրդը զինելու ուղղութեամբ շատ ջանքեր թափեցին, կոչեր տպեցին թուրքիոյ դէմ եղան...»

Դաշնակցութիւնը Իթթիհատի հետ զործակցել չուզող հայերը պիտի ահարկէր... յանցանքը Իթթիհատի վրայ պիտի նետէ Լեզեր... հակառակ ատոր շատ ուղղամիտ ընթացք մը որդեգրած է Իթթիհատը Կուսակցութեան հանդէպ:

Հայերու ինքնավարութեան պահանջը կրնար միւս ոչ-Օսմանցիներն ալ հեռացնել եւ թուրք կայսրութեան մահուան պատճառ ըլլալ... Դաշն. եւ Իթթիհատ համաձայն չըլլալով հանդերձ իրար ծրարելներուն... յառաջիկային իրաւ հասկացողութեան մը յոյսը մուտքին իբրբու հանդէպ...:

Մինչեւ Պալքանեան Պատերազմը (1912) հայերը մասնաւոր պահանջներ չներկայացուցին... իսկ Իթթիհատը կը քաջալերէ Լեզեր որ պահուելու հայերը վերադառնան, եւ դեռ... իրենց նախկին կալուածներուն տիրանան... (Երանի՛ թէ...): Եւ թէ ատոր համար նեղ կացութեան մատնուած է Իթթիհատը...:

Էջ 55-58ի մէջ սուտ է Հնչակեան Կուս. Քլոսթրինէի Դրք Համազումարի որոշումներէն հատուածներ... նաեւ 1914ի Շամի շրջանին ուղղուած Դաշնակցութեան Պիւրոյի մէկ գաղտնի նամակը, որ պատերազմի մը պարտալսին ուսուցիչները անցնելով կուտիլ կը հրահանգուի: Ապա «Արեւ» թերթի 12 Սեպտ. 1914ին հայկական հարցի մասին գրած մէկ գրութիւնը, որ կուտի կոչ կ'ըլլայ ի նպաստ Դաշնակիցներուն...:

Նոյն «Արեւ»ին մէջ տպուած է Լեզեր Ֆրնս. 1914ին եւրոպական պետութեանց ուղղեալ Հնչ. Կեղրոնի կոչը: Հոն Հնչակեան Կուսակցութիւնը ուսուցիչները կողմէ պայքարի ըսուած է:

Այս բոլորէն ետք Իթթիհատը շատ բարի դատուած է... Էնվէրը Պատերազմին յիշեցուցած է, թէ հայեր թուրք պաշտօնեաներ սպաններ են, թէ թուրքիան հայերէն օգնութիւն գտնելու տեղ՝ թշնամութիւն կը տեսնէ... թէ Մուշի, Վանի, Պիթիսի մէջ հայերը թուրքերէն ջարդած են, ինչ որ անմարտելի է Լեզեր... ապա թէ ինք մեղմ մարդ, չէ՛ ուղած զէջութիւն ընել...: Չմեռնելու՝ աւելի ճիշդ չջարդուելու համար հայոց զիմադրութիւնները թուրք խուժանին դէմ... կը նկատէ ապստամբութիւն...: Կը խօսի Ուրֆայի, Շապին Գարահիսարի, Չէլթունի, Էնտերունի մէջ ջարդուած թուրքերու մասին... Չէլթունի մէջ Հնչակեան Փանոս Չաքրեանի խումբին կողմէ կատալարական զենքերու բռնադրաման մասին, Վանի, Իզմիրի, Պրուսայի մէջ հայեր ըմբոստացեր են... Ատանայի մէջ լրտեսութիւն ըրեր են ի նպաստ Դաշնակիցներուն, Սամսոնի եւ Իզմիրի մէջ զէջը բռնադրուած է: Ուրֆան ապստամբեր է... 25 օր հայերը պաշարուած կը մնան Շապին Գարահիսարի մէջ, շատ զէջը կեղրոնացուցած են... 84 զինուոր եւ 30 քաղաքացիներ սպաննուել են...:

Այս բոլորը ըսելու համար, որ երկուստեք զոհեր տրուեցան... եւ թէ հայերը կը ձգտին Լեզեր թուրք ազգը ջնջել... (?):

Աղուոր հէքեաթ մըն ալ կը պատմէ... Նկատելով որ, կ'ըսէ, Պոլիս վտանգուած էր Տարտանել Դաշնակից ցամաքահանման առթիւ, ապահովութեան համար Դոնիա զրկուած են Ապրիլ 24ին՝ 250 հայ մտաւորականներ, ապա մաս մը ինք ետ բերած է... Եթէ սպաննութիւններ ալ եղած են քանի մը ոստիկաններու կողմէ՝ անոնք իրենց արժանի պատիժը կրած են... ողորմած Ն. Գ. Նախարար Քալաթի կողմէ... Սպաննուածներն ալ «Ասիտ վէ Հիլալ ատրնաա իփի սէրսէրիմիմի հիւճիւմիմա ուղղամըշարտիր», որոնք յիշեալ «ապուշներուն յարձակումին ենթարկուած են», բայց... պատիժ կրած են:

Իսկ ողջ վերադարձողներու վկայութեանն կը պարզուի եղեր, որ կարգ մը անպատասխանատուներու զործն է Լեզեր... որոնք առթիւն օպտուել են... ջարդելու համար... ինք այնքան յուզուել է, որ «պիւր չօֆ կէմէլը ույլու ույլումաւըմ», (էջ 74): Քանի մը զիշերներ քուն չէ՛ քնացած... եւ Քինիչ Յանմախումբեր կազմելով Անատոլու զրկել է... որոնք չարազոր թուրքերը Պատերազմական Ատեանի յանձներ են...: Այդ փաստաթուղթերը կը պահուին Լեզեր պետութեան ձեռք... Հայերը զազթի կամ պատերազմի առթիւ շատ զոհեր տուել են... Բայց... «Արեւելեան նահանգներուն մէջ ալ հայ հայրենակիցներու կողմէ թուրքերու նոյնպիսի՛ կոտորածներու ենթարկուելու իրականութիւն է...»:

«600 հազար մահամեղականների սպաննուած են...»: Ուրիշ խօսքով հայերը թուրք ջարդեցին... Թուրքերն ալ՝ հայ...:

Գերմանիան յանցաւոր չէ եղեր... Նոյնիսկ միջամտել է: (Մի՛ մոռնաք որ Թալաթ իր «Հաթիրիւրին» գրած է Պերլին, երբ ծպտուած էր եւ տուրք տուած է Գերման Իշխանութեանց (1920):

Անկողմնակալ դատի մը պարագային կրնամ փաստել որ «ղէպքերուն» պատճառը հայերն են: (Սողոմոնի դատը փաստեց որ Թալաթ եւ իր Իթթիհատի ղեկավար ընկերներն են սակայն ջարդի պատճառները):

Լեփսիսի դէմ կատուած է զինք ջարդարար նկատելուն...:

Այստեղ Թալաթը իր մտածումը կը դնէ ուս գինուորի բերին մէջ. «Թուրքերը սա հայերուն լաւ մը հախէն եկան, սակայն գանձի վերջնական չկրցան մաքրագործել, մէկ հոգին ողջ չմնալու պայմանաւ մաքրագործուիմին անհրաժեշտ է»:

Երբ ուս գինուորներ կ'ուզեն առաջը առնել թուրք ջարդելուն, հայեր կը պատասխանեն, թէ «Թուրքերը տարբեր բան ըրին հայոց», կամ «Մեր ըրածը վրէժ լուծել է եւ ուրիշ ոչինչ»:

Անդրանիկի Կարին եկած օրը... Թէրիէէօյի բոլոր թուրքերը ջարդուեցան...:

Ձէթէպակտ Մուրատ (Սերաստացի) բոլոր թուրքերը հաւաքած է Երզնկայի եկեղեցւոյ բակը եւ հոն ջարդած եւ... այրած են անոնց տունները:

Ապա ցաւ կը յայտնէ որ երկու չափ երկու կշիռ կայ աշխարհի վրայ... Թէ հայոց կողմէ գործադրուած ջարդը չի դատապարտուիր:

Խուսերը զրգոած են հայերը՝ քանի որ անոնց նպատակը «Հայաստան առանց հայու» կազմելն է եղած...: Հայ Կուսակցութիւնները կը ձգտէին անկախութեան... հայ չգտնուող շրջաններու մէջ կ'ուզէին մեծամասնութիւն կազմել... բնիկները ջարդելով:

Ան Ե. Գլուխը սինիքարար կը վերջացնէ պնդելով, որ քանի Հայկ. Նահանգներուն մէջ հայերը 1/10 են կամ չկան... անիմաստ է Դաշնակիցներուն Հայկական Նահանգներով Հայաստան մը շնորհիւ Պաղատութեան Համաժողովին մէջ: (Ըստ իրեն հայերը 1917-18ին թուրք ջարդած են... իսկ 1915-1916ին Իթթիհատի կողմէ 1,5 միլիոն հայոց ջարդուիլը... ոչինչ...):

Գիրքին Զ. եւ վերջին գլուխը կը խօսի 1919ի թրք. դատարանի կողմէ Պուսոյ մէջ դատուած եւ որպէս յանցաւոր մահուան պատիժի դատապարտուած Իթթիհատի պարագլուխներուն «անմեղութեան» մասին...: Ինչպէ՛ս կարելի է գինուորական գօտիներէն ազգ մը հեռացնելու որոշումին համար, որ թագաւորին իսկ կողմէ վաւերացուած է, յանցաւոր նկատել եւ դատի կանչուիլ... հարց կուտայ Թալաթ Փաշա իր գրքին մէջ, թէ այդ «յանցանքը» ինչպէ՛ս կարելի է Իթթիհատի վերադրել...:

Բազմաթիւ հայերու կեանքը փրկած է եւ շնորհակալութեան արժանացած է հայերու կողմէ...:

Տարօրինակն այն է, որ Թալաթ իր գրքին էջ 138ին մէջ միայն կ'անդրադառնայ, որ «Հայերը գաղթականութեան գրկուած են...»:

Սինիքի կատարելութիւնը լսեցէք... Հայերու դէմ դադթականութեան շրջանին կարգ մը գործուած ռմիւրներու մասին վերջէն իմացայ: (Հարելաւոր հրահանգները ջարդի՛ իր կողմէն ստորագրուած եւ պատճենները Արամ Անտոնեանի գրքին մէջ տրուած են — Հ. Գ.):

Գիրքը կը վերջանայ իր անկեղծ հայրենասէր մը ըլլալուն վրայ պնդումովը: (Տե՛ս՝ «Թալաթ Փաշայի Յուշերը», 1946, Պուլիս, էջ 149):

Աւերող պիտի ըլլար Թալաթի իւրաքանչիւր տեսակէտը վերլուծել: Եթէ չիլ մը յամեցանք այս մարդասպանին դրած սուտերուն, ատիկա ցոյց տալու համար էր քրքալկան տեսակէտը 1908-1918ի շրջանի ղէպքերու մասին:

«Յաֆ Էպուսթ Թիւրքի» 1972ին թուրք Պետական Հրատարակչութեան կողմէ լոյս տեսած թուրքի յատուկ բրոսուրի գրքին մէջ տրուած է թուրքիոյ ամփոփ պատմութիւնը, հայ բառը եւ հայ մշակոյթը ամբողջութեամբ անտեսուած է Անատոլուի անցեալի նկարագրութեանց մէջ...:

Լսեմք սակայն գրքային վկայութիւնը...:

«Սուլթան Համիտ 1877-8ի ուսերէն պարտուելէ Լաք լուծեց Միտհատեան Սահմանադրութիւնը որ գործադրութեան դրուած էր 1876ին»:

«1876-1908 կայսրութիւնը կառավարուեցաւ Ապտիւլ Համիտի բացարձակ բռնատիրութեան ներքեւ: (էջ 32): Նահանջը շարունակուեցաւ եւ նահանգները՝ Պոնիա Հերձեկովէն, Թունուզ, Կիլրոս Կայսրութեան համար կորսուեցան: Համիտ շրջանը փոխարինեց «Աիւելի ԳիՇ Շիքալի ՄԸ ԵՐԿԻՆ ԶԱՄԱՐ»: Սահմանադրութիւնը 1908ին կրկին անգամ գործադրութեան դրուեցաւ Իթթիհատ եւ Թուրքը Կուս. Իշխանութեան օրով, բայց Իթթիհատը աւելի արագ թափով կորուստներու (հողային) պատճառ դարձաւ Գ միլիոն քո. քմ. տարածութիւն ունեցող երեք ցամաքամասերու վրայ տարածուող կայսրութիւնը փնացաւ: Օտար համայնքներ եւ փոքրամասնութիւններ հովանաւորուած Եւրոպական Մեծ Պետութիւններէն Մեծող Պետութեան (Թուրքիա), հաշտոյն ուզեցին բաժին վերցնել: Իսկ պատերազմէն Լաք 1912-3 (Իթթիհատի օրով) Օսմ. Պետ. սահմանները Ատրիադիքէն մինչեւ Մարիցա գետին հասաւ...»:

«Թրքական Ազգիւրներ», Ա. Մաֆրաստեանի եւ Գ. Սանթուրեանի կողմէ 1972ին Երևան հրատարակուած հատորին մէջ թարգմանուած են հատուածներ՝ Ահմետ Լութֆիի (1815-1907), Ապտիւլ Ռահման Շիքիֆի «Օսմանեան Կայսրութեան Պատմութիւնը», Մէհմետ Քէամիլ Փաշայի «Օսմանեան Պետութեան Քաղաքական Պատմութիւնը» եւ Օսման Նուրիի «Ս. Համիտ Բ. եւ Անոր Իշխանութեան Շրջանը», 3 հատորնոց աշխատութիւններէն: (1876-1909):

Կուտանք հատուած յատկապէս Ս. Համիտի բռնատիրութեան շրջանի մասին, Օսման Նուրիիին...:

«Ապտիւլ Համիտ մէկ կողմէն չէր ուզեր սուլթան Սուլթանի միջամտութեան, միւս կողմէ՝ կ'ուզէր երկրին ներքին գործերը վարել ըստ իր գանկութեան: (*) ... Երբ Անզիւրի թագուէն Համիտին նամակով հայոց նեղութեանց վերջ տրուելը կը խնդրէ... Համիտ կը պատասխանէ, թէ ան սխալ եւ սուտ լուրեր իմացած է կոտորածներու մասին եւ թէ հայերն են կոտորածի պատճառ եւ անոնք են բռնութիւն կատարողները...»:

Պանքայի ղէպքէն Լաքի ջարդին ակնարկելով՝ Օսման Նուրի կ'եզրակացնէ. «Իսկ այս եղանակի պատճառ հանդիսացողը, անկասկած նոյն Ապտիւլ Համիտն էր, որ կը ղեկավարէր երկրորդի այդ երեսօտները եւ կը կոտորէր ոչ միայն հայերը, այլեւ դէպի կործանում կը տանէր ամբողջ հայրենիքը»: (էջ 213):

«Թիւրքիյէ Թարիհի» (Թուրքիոյ Պատմութիւնը) ԺԹ.—Ի. դարերուն, 12րդն է «Սկիզբէն մինչեւ մեր օրերը» շարքին, գոր դրած է Թ. Երլմազ Օզդուսա, որ բազմաթիւ այլ պատմական գրքերու հեղինակն է նոյն ատեն: 304 էջնոց սոյն հատորը մանրամասն կը խօսի յատկապէս Թանզիմաթէն (1939) մինչեւ Սուլթան Համիտի շրջանը, սոյն 1908-1913ի Իթթիհատի շրջանի մասին:

Մանրամասն կուտայ միջնադարի ղէպքերը, Համիտի իշխանութեան շրջանը կը նկատէ օգտակար, զայն ղիւսնագլու եւ արդարաւէր հայր մը կ'որակէ եւ նոյնիսկ սիրուած խալիփ մը բոլորին կողմէ... որ յանդուած է 6 Մեծերը իրար զարնել, կրցած է Կայսրութիւնը վտանգաւոր կացութիւններէ փրկել եւ դժբախտարար Իթթիհատը սխալ բոլոր ատուած է զայն շեղութեան կողմէ, մինչ իրենք Օսմանեան Կայսրութիւնը ո՛չ միայն չեն կրցած իմաստուն կերպով առաջնորդել, այլ եւ Պալքանեան, ապա 1914ի Ա. Համիտ. Պատերազմին անոր փնացման պատճառ հանդիսացած են:

(*) Բոլոր ընդգծումները մերձ են:

Կոստովանութիւններ կան Սուլթան Համիտի, Իթթիհատի գործած սխալ-
Յերուս, քաղաքական տնտեսական, Թուրքիան քայքայումէ փրկելու համար Հա-
միտի եւ Իթթիհատի գործադրած «անիմաստ» զին. միջամտութեանց շուրջ: Թուրք
պատմաբաններուն մէջ շատ քիչ է թիւը անոնց՝ որոնք Հ. Եալընի նման կը
փորձեն արդար «նահատակ» որակել Իթթիհատի պարագլուխները...: Սոյն զբի
հեղինակին համար Իթթիհատի պարագլուխները՝ էնվէր, Քալաթ եւ ձէմալ,
ո՛չ միայն «մեծ գործ մը» չկրցան կատարել ի նպաստ Թուրքիոյ, այլ Լիպիոյ,
Պալէստինայի եւ Արարական Օսմ. Կայսրութեան անկման պատճառ դարձան...
որոնք երբեք պետական մարդիկ չեղան, չունէին մոյնիսկ վարչապետ դասնալիք
զեկավար... եւ թէ Թուրքիոյ երեսփոխանական ընտրութիւնները բնութեան, կոի-
ւի եւ ճշտումի մերժել տեղի ունեցան, եւայլն, եւայլն:

«Թուրքիէ Թարիհի» 12րդ հատորը Պապը Ալիի ցոյցը եւ Պանք Օթոմանի
զբաւումը Իզմիրեան Պատրիարքին կը վերադրէ: Գրաւման ծրագիրը Սուլթանի
լրտեսներուն ծանօթ էր... Սուլթանը Թուրք բեռնակիրներէն կամաւորներ ընտրեց
եւ բիրեր բաժնեց. «Այդ գիշեր քուրբերը, մամբան ձեռքերնին անցած հայերուն
դաս տուին»: (Սօփալարլա հաքլաուրլար): (էջ 146): Այս առթիւ քանի մը օր ու
գիշեր հարիւրաւոր հայեր սպաննուեցան: Թուրքերէն ալ սպաննուողներ եղան: Հայ
յեղափոխականներուն շունչը կտրեցաւ... եւ սպասեցին Ա. Հմէշի. Պատերազմին՝
Ռուսերուն իրենց կռնակ կենալուն... Սուլթանը Իզմիրեանը երուսաղէմ աքսո-
րեց եւ Սուլթանը յաջողեցաւ Պերլինի 61րդ յողուածը գործադրել ուղղը 6 Մե-
ծերը իրար ձգել եւ խաբել... Հայկական կոչուած 6 նահանգներուն 20% հայ,
մնացեալը՝ Թուրքերէ եւ քերտերէ բաղկացած էր...: Ս. Համիտի վարկը շատ
խոշոր էր Մահմետական աշխարհէն ներս, Գերմանիոյ, Պարսկաստանի թագա-
ւորները Համիտի բարեկամները դարձան... Իսլամութեան կեդրոնն էր դարձած
Պոլիսը եւ Եւրոպայի եւ Ասիոյ արքունիքներէն բազմաթիւ նուէրներ կը ստանար...
Պալէստինայը կը սարսափէին, Ռուսիան իր ներքին հարցերով չէզոքացած էր «Յու-
նաստան կոխկռտուած էր», Գարատաղի իշխանը Նիքոլա՝ Սուլթանին կողմէ պատ-
ուի շարժանանալուն համար կը տաղնապէր...: Գերմանիոյ եւ Աւստրիոյ նեցուկը
ապահոված էր եւ նոր հողամասեր զիջելու պատճառ մը չէր մնացած Սուլթանին...:

Մինչ անոնք՝ Իթթիհատականները, կողմնակալ, անփորձ, անհեղ, տգէտ
տարբեր էին... Մէկը հեռագրաթիւ պաշտօնեայ (Թալաթ) վարչապետ, մէկը՝
բուրպայ, 33 տարեկանին Պատերազմական Նախարար... եւ փոխ ընդհ. հրամա-
նատար (էնվէր), ամենէն անկարողները երկրին պաշտօնները բաժնուեցան իրա-
բու միջիւ...:

1902ին յաջողեցաւ ճնշել Պուլկար-Մակեդոնական ըմբոստութիւնը, որ 1903ին
կրկին տեղի ունեցաւ...:

Ահմէտ Ռեզա, Միտհատի որդի Ալի Հայտար մերժած են «Ապակեղորմաց-
ման» այս ծրագիրը...:

Այս համազումարին Ռուսիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ եւ Պալէստինայ երկր-
ներու վճարովի գործակալները ներկայ եղած են...:

Երբ Պուլկարիան եւ Պոսնիա Հերձեկովինը իրենց անփորձութեան երեսէն
կորսուեցաւ Օսմ. Կայսրութեան համար, Երիտ. Թուրքերը ընտրութեամբ զբաղ-
ուած էին...:

Ատանայի կոտորածին պատասխանատուն... հայերն են որ ջարդած են օրօ-
րոցի մանուկները «ջօնուխարքնը պիլէ»: Զինուոր եւ ոստիկան զէմ չեն դրած,
Թուրք ազնի է որ զէմ դրած է եւ «տարիներ, անգամ մըն ալ զլուխ չվերցնելու
հաշիւոյն հայոց համարակուրթիւնը կոտորող դաս տուին...»:

Իսկ հայերը կը կոտորեն եւ կ'ունենան 17 հազար զոհ, իսկ Թուրքերը կը
կոտորուին եւ կ'ունենան 1850 զոհ...:

Ատանց մեկնարանութեան:

Ապա թրջական նենգութիւնը... հայերը կը զբէ Պայ Օղզունա ամբողջու-
թեամբ վայրենի, բարձր մշակոյթէ եւ քաղաքակրթութենէ ամբողջութեամբ գուրկ,
երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը եւ կերպարվորի անսակն իսկ բուրբերէ...
ընդօրինակած են: Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ որպէս անմեղ ճանչցուեցան (Ատա-
նայի 1909 Ապրիլի ջարդին մասին է — Հ. Գ.):

Ապա կ'ընդգզի ձէմալի եւ Քալաթի զէմ, որոնք 30է աւելի թուրքեր եւ
միայն մէկ հայ կախել տուած են... որոնք 5 տարի յետոյ 1915ին «խարխր հազա-
րաւոր հայեր Անատոլու բշելու ստիպողականութեան տակ պիտի գանուէին...»:

Իթթիհատականները Համիտի Օսմ. Կայսրութիւնը քանդելուն համոզուած
էին:

Գարսու (պէտք է կարդալ Գարսու), Իտալիայէն դրամ ստացող լրտես մըն
էր, որ Լիպիոյ Իտալիոյ կողմէ կլլուելուն պատճառ հանդիսացողներէն եղաւ եւ
ազգին թշնամի մըն էր... (հրեայ, մասին — Իթթիհատի երեւոյթան — Հ. Գ.):

Արամ Հալաճեանն ալ որ Սուլթանի հրամարականը պահանջողներէն էր
(չարքային վստահելի Իթթիհատական — Հ. Գ.) հայ յեղափոխականներուն հետ
կապ ունենալուն «վրէժ» կ'ստնէր Համիտէն այս ձեւով...:

Հեղինակը շատ անպատուարեր կը նկատէ Համիտի հրամարականը պահան-
ջող Իթթիհատի կողմէ զբաւսոյի, Արամի, Արիֆ Հիքմէթ Փաշայի եւ
Էսաա Թօփթանէի պատուիրակութեան ընթացքը...:

Սաիտ Հալիմի վարչապետութեան ընթացքին երկրին տէրը փաստորէն Թա-
լաթն էր (էջ 212): «Ճահէլ» եւ «անփորձ» Օսմ. Կայսրութեան տասը տարուան
ընթացքին բաժան բաժան ըլլալուն եւ քննաւի ուժերուն միմյեւ Անգարա յատա-
ջանալուն գլխաւոր պատասխանատուն է: (էջ 212), որուն դիմակը 1944ին Պոլիս
Հիւրիէթ Թէփէսիի մէջ Պերլինէն բերուելով թաղուած է:

1910ին Չրազան պալատը կ'այրի...:

1911ին Պապը Ալիի Ն. Գ. Նախարարութեան շէնքը եւ գաղանի բարբերը
այրեցան հրեհէի մը պատճառաւ՝ որուն դերակատարը էնվէր Պէյն է, բառ հե-
ղինակին: Հոն կային Թէֆֆիք Պէյի, Շէֆքէթ Փաշայի Համիտին տուած տեղե-
կազինները...:

Մահմուտ Շէֆքէթ Փաշան իր «Յուշեր»ուն մէջ Իթթիհատի պետերը կ'որա-
կէ «Պէյիսիք ատամլար» ... Մինչ ինքն ալ գուրահու էր անոց հետ... կ'աւելցնէ
Երլմազ Օղզունա: (էջ 230-231):

Ըստ հեղինակին Պալէստինայի մէջ Թուրքիոյ հանդէպ ցոյց տրուած Գաշ-
նակիցներուն ոչ-բարեկամական ընթացքը պատճառ եղած է, որ ան Գերմանիոյ
կողքին պատերազմի մտնէ...: Հեղինակը փաստեր կը բերէ կոտոր կողմերու
ուժի, թիւի, երկիրներու անջութեամբ եւ համոզուած է որ Գերմանիան շահելու
ոչ մէկ յոյս ունէր: Գերմանիոյ Մարնի ճակատամարտը կորսնցնելէ ետք Թուր-
քիան պատերազմի մտաւ: Նի՞չ չմտնէր շատ մը արար երկիրներ չէր կորսնցներ...
Գարիւղի աղբիւրներ կորսնցուց: Գուրս մնալով պատերազմէն՝ գոչուոր պետու-
թիւն պիտի ըլլար եւ իր որոշ իրաւունքներուն պիտի սիրանար: 1911-1922ին հա-
րիւր հազարաւոր թուրքեր սպաննուեցան, կը զբէ...:

1914-18ին՝ տեղ մը թուրք բանակին 400 հազար մեռելու տուած բլլար կը
յիշէ եւ մէկ միլիոն ալ ժողովուրդէն եղած կորուստը: Պալէստինայի պատերազ-
մին հաւանարար 100 հազար, կովկասի շրջանին մէջ՝ 300 հազար, մօտ 2 միլիոն
զինուոր եւ ժողովուրդ կորսնցնող Իթթիհատը, բնական է, որ գովաւոր պիտի
շարժանանայ ներկայ Թուրքիոյ սեւէ պատմաբանին կողմէ:

Գրքին կցուած է Օսմ. Սուլթաններու եւ Պետ. մարդոց նկարները:

ԻԹԹԻՀԱՏԻ ԴԻՄԱԳԻԾԸ՝
ՏՐՈՒԱԾ ԹՈՒՐԻՔ ՍՊԱՅ ՄՈՒՍԹԱՅԱ ԹՈՒՐԱՆԻ ԿՈՂՄԷ

«Թաշֆշլատա 31 Մարտ Ֆահիաք» (1909), զբնիւն հեղինակը 1908-1909ի Երիտ. Թուրքիոյ յեղափոխութեան եւ անոնց Համիտը տապալելուն զլիսուր վկաներէն Մուսթաֆա Թուրանն է: Գիրքը 92 էջերէ բաղկացած լոյս տեսած է 1964ին Պոլսոյ մէջ:

1909ի Մարտ 31ի Սուլթան Համիտի վերադրուած Շէրիաթական հակա-յեղափոխական շարժումը վարողները եղան Իթթիհատականներ, կը զրէ ան, որոնք 1900էն սկսեալ որոշած էին Մասոն-Սիոնիստներուն հացին իւղ քսել ամէն գնով՝ տապալելու համար՝ Սիոնիզմի հակառակորդ Սուլթան Համիտ Բ.ը: Ան կը զրէ թէ՛ հեռանկարը շատ հանգիստ կ'ապրէին Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս, իսկ որոնց զլիսուր թնամիները Թուրքերն ու Համիտն էին: ԺԹ. դարուն 6 Մեծերը Բնվալի ժողովին որոշած էին Օսմ. Կայսրութիւնը մասնատել: Զուրեքերիոյ Պաշել բարաքի մէջ 1897ին Սիոնիստներու Գոնկրէն 204 ներկայացուցիչներով որոշած էին աշխարհի վրայ տարածուած հրեաներուն հայրենիք մը ճարել: Նախ որոշած էին հրեական հայրենիք հաստատել Արժանթին կամ Ուկրաինա: Սակայն Սիոնիստ պարագլուխ Թէոտոր Հէրզել այդ հայրենիքը Պաղեստինի մէջ հաստատելու թեզը յառաջ քշեց, ինչ որ ընդունուեցաւ Համաժողովին կողմէ: Ան խոստացաւ պատասխանատուութիւնը իր վրայ առնել՝ յաջողցնելու համար այդ ծրագիրը: Նիթաական միջոց տրամադրել սրոշած էր ժողովը:

1905ին Օսմանեան նոր երկաթուղիի կառուցման գործը ձեռք առնող Պարոն Հըրէ՝ հրեայ մեծահարուստներէն էր, որ մահուան անկողինն մէջ կտակեց 250 միլիոն Փրանք՝ Հրեական Օճախի կերտումին աշխատանքին յատկացուելու համար: Այդ շրջանին Յարէն հալածուած բազմաթիւ հրեաներ Թուրքիա ապաւինեցան:

1898ին Թէոտոր Հէրզել՝ Գերմանիոյ Վիլհելմ Կայսեր Թուրքիա այցելութենէն ուզեց օգտուել: Պոլիս եկաւ, երբ Կայսրը Սուլթանին հետ տեսակցելէ ետք Երուսաղէմ մեկնած էր, Հէրզել ինքն ալ հոն գնաց, եւ Կայսեր ընկերացող իշխան Ֆոն Պիլսոնին խնդրեց որ օգտակար ըլլայ իրենց... խոստումներ տրուեցան: Հէրզել Մոշէ Լեւի՝ այլ Սիոնիստի մը հետ Համիտի ներկայացան եւ ինդերցին՝ որ 5 միլիոն ոսկի նուէր ստանալով զիւրացնէ Պաղեստին բնակելու հրեաներու ցանկութիւնը... Սուլթանը թէ ասոնք եւ թէ Ռուսիայէն փախած հրեայ Սիոնիստները կը վռնտէ... Ասոր վրայ է որ անոնք թնամի դարձան Թուրքիոյ եւ որոնցին զահէն վար առնել տալ Սուլթան Համիտը: (Տես՝ «Թաշֆշլատա 31 Մարտ Ֆահիաք», Մուսթաֆա Թուրան, 1964, Պոլիս, էջ 9-11):

Սիոնիստները ուզեցին օգտագործել Անգլիոյ Ետտարտ է. եւ Շուէտիոյ Կիւսթաֆ Ե. Թաղաւորները ի նպաստ իրենց ծրագրին: Այս վերջինները Մասոնական Լոճերու մէջ զիւր ունէին: Անգլիոյ Թաղաւորը հայ յեղափոխականներուն 13 հազար ոսկի տրամադրած է Պանթալի՝ անկէ առաջ Պապը Ալիի զէպեքերը ստեղծելու համար... Ռուսեր պաշտպանեցին Հայ Յեղափոխականները: Թուրան ապա սիոնիստներու հրահանգով տեղի ունեցած 1905ի Երլտըզի մահափորձին մասին կ'անդրադառնայ... Ան կը զրէ թէ՛ 1892էն սողին մեր երկիրը հրեաներու թնամութեան առարկան էր...:

Հէրզել Փարիզ դացած էր... Ժէօն Թուրքերուն հետ լեզու գտնելու համար: «Իթթիհատը Է՛ւ Սիոնիստներէն Է՛ւ Սուլթան Համիտէն դրամ ստացած էր...»: (էջ 18):

Երիտ. Թուրքերու մէջ իրաւ հայրենասէրներ ալ կային՝ ինչպէս Սամի Պէյ, Տամատ Մահմուտ Փաշա, Հիւսէյն Զատէ Ալի Պէյ... Իթթիհատականները, կը

կարծէին թէ Համիտը տապալելը միայն իրենց ծրագիրն էր, մինչդեռ աշխարհի վրայ իշխող հրեայ մասոններուն ձեռքին եւ ասոնց վրէժ լուծելու ձգտումին գործիքն էին իրենք...: Էմանուէլ Գարաու (որ 1902ին Համիտին 5 միլիոն, Թուրքիոյ 20 միլիոն ոսկի խոստացած էր Սիոնիզմի կողմէ եւ մերժուած) տեօստէ ճաւիտի հետ գործի անցաւ:

Էմանուէլ Գարաու Իթթիհատի դրամ կուտար: Ան Իտալական Պանթալէն ստացած 4 հարիւր հազար ոսկիները չորս թիթէկներու մէջ դրած, յանձնեց մեծահարուստ Նեճիպ Տրակայի՝ ան ալ Իթթիհատի Կեդրոնին գտնուելի էլոյս Սապրի Պէյի տուաւ (Զորումի երեսփոխանն էր յետագային): Ահա սոս ար, կը զրէ Մ. Թուրան, այս դրամը յատկացուեցաւ 31 Մարտի տապալուի ջարդի մասնակցող զինուորներուն... (Շէրիաթիներու գէմ):

Սելանիկի Րիզոքթա Ֆրոս-Մասոն Օթեակը կարելուր դեր խաղացաւ: Այս Օթեակին պետը՝ Գարասուն էր: Ֆլորանցա Օթեակը նոյնպէս աշխոյժ էր: Ասոնք յաջողեցան Սելանիկի զինուորական, կրօնական աղագային զլիսուր բոլոր գործիչները Մասոն դարձնել: (էջ 19):

Ապա կը յիշէ ցանկը Իթթիհատի Մասոն զեկաւարներուն: Պուրասալը Թահիր Պէյ, Շէյխ Իւլ Իսլամ Մուսա Քալըմ, Շէյխ Իւլ Իսլամ Հայրի, Փիլիսոփայ Ռիզա Թէֆիք, Գալըմ Նամի, ասոնք դեռ՝ Պէքթաշի ազանդին ալ կը պատկանէին:

«Թաւաթ Փաշա, Սուլէյման Ասքերի, Վէհիպ, Նիպլի, էյուպ Սապրի եւ Ալպանացի սպաներուն բոլորը Մասոններ էին: Փարիզի Ռիզա Պէյն ու իր ընկերները ասոնց միացան, ասոնց անդրադառնալու թէ ով ի՞նչ կը մտածէր եւ ի՞նչ ծրագիր կը հետապնդէր:

Մինչ այդ, Փարիզէն զրկուած Իթթիհատի թերթերը կը տարածուէին Պոլսոյ զին. եւ ուսանողական շրջանակներէն ներս:

Զիւրուքուլու Մահմուտ Բուսուս տքորում, Ֆերիտ Պէյ՝ Եղիպտոս փախած էր, Հայպէլի ծովային զին. Վարժ.ի մէջ եւս շարժումներ կային: Էստրանցի Սամի Հայտար, եղբայրը Պեհնէթ, Տրակայիցի Օսման, ձեկաթ, Սաֆրթ, Իթթիհատի մաս կը կազմէին: Հակառակ Համիտի լրտեսներուն՝ շարժումը կը տարածուէր բոլոր կողմերը երկրին:

Գիրքը Համիտը կը ներկայացնէ որպէս չինարար:

Ինչ կը վերաբերի Թուրք եւ քիւրտ կապերուն, Թուրան կը զրէ, թէ քիւրտներուն մեծ մասը թրքախօս չեն, ալիւի են, քիչ են սիոնիստները, կիսանկախ Շէյխերու ենթակայ էին անոնք, Թուրքերու հետ շատ լաւ յարաբերութիւն չունէին: Համիտ յաջողած էր անոնց հետ քաղաքականութիւն խաղալ, Համիտի զօրադունդներու պետերէն հրամանատարներ կը նշանակէր... հաստատրիմ եւ ոչ-հաստատարիմ տարրեր կային անոնց մէջ:

Ինչ կը վերաբերի Համիտի եւ Հայոց փոխ-յարաբերութեան՝ խօսելէ ետք Պերիքի 1878ի Վեհաժողովին որոշումներուն, ան կը զրէ, թէ կարգ սպասողներու շարքին մէջ կը գտնուէին հայերն ալ (բաժին հանելու Օսմ. Կայսրութեան...): Հայերը Հայաստան մը ունենալու ճամբուն վրայ միշտ ոտսերուն առջեւն քալած են Թուրքիոյ պարտութեան ցանկալով...: Հնչակ Դանակ անունով կոմիտէներ Անատոլի մէջ ապստամբական շարժումներ յառաջ բերին եւ 6 Մեծերու միջամտութեանց պատճառ հանդիսացան...: Սուլթան Համիտի թնամի Սիոնիստները Հայ Յեղ.ը բաջալերած են Երլտըզի ոտմար արձակելու համար... Պանթան կոխած են, ... ըլլա՛յ Սիոնիստներով, ըլլա՛յ իրենց ձգտումներով Թուրք «միլիթ-քիմիկ երէքլմաւրնա չալըշտըլար» (Թուրք ժողովուրդին անկուսի ձգտեցան): Օսմ. Սահմանադրութեան շրջանին ալ ոչ մէկ ատեն հայ երեսփոխաններ օգտակար

չեղան: Ա. Համաշխ. Պատերազմին «մեր բանակը կոնակէն զարնել ուզող հայ կա-
մաւորներու պատճառաւ իրքիհատականներու հայերը գաղթեցնելը գուր տեղը չէ»:
Անտառուի եկեղեցիներուն մէջ իսկ ուստական զէնքեր դտնուեցան (անոնց կողմէ
պահուած): Ասոր պատճառաւ գաղթի զրկուեցան, բայց մէջերնէն կուսակցու-
թիւններու պատճառաւ «ԱՆԻՐԱԻ ՏԵՂԸ ԱՔՍՈՐՈՒԱԾՆԵՐՆ ԱԼ ԿՈՏՈՐՈՒԵՑԱՆ»:
(էջ 33):

Սելանիկի Մասնները կարծես թալաթ Պէյը սպաղաշին Օսմանեան կայս-
րութեան Վարչապետ դարձնելու մտահոգութեամբ զինք անմիջապէս մէջերնէն
առնելով յատկ մղեցին «աստիճաններ» տալով անոր եւ իրեն 10 Անգլ. հնչուն ոսկի
ամսական կապեցին: Ասիկա Գարաոյի զործն էր: Այս վերջինը փաստարանական
զրասնեակ մը բանալով թալաթին ալ զործ տուաւ, զայն ափին մէջ կարենալ
ունենալու համար: (էջ 37):

Գարաոն եւ թալաթ Պոլսոյ մէջ կը ձերբակալուին, սակայն Գարաոն
Գապաթաբալ Մեհմետ Փաշայի ներկայութեան կը պնդէ, թէ իրենք Մասոն են՝
բայց յեղափոխական ուժերու մաս չեն կազմեր:

Սահմանադրութենէն անմիջապէս ետք մարդասպաններ բանտէն ելան, մաս
կազմեցին իրքիհատի շարքերուն, սպանութիւններ քրիմ եւ հովանաւորուեցան,
լրագրողներ Զէֆի, Հասան Ֆեհմի, Ահմետ Սամիմ իրքիհատի որպէս հակառակորդ
մաքրեցին... Չոհրապն ու Վարդգէսը սպաննողներն էին բանտէն արձակուած մար-
դասպանները... Ահմետ Ռիզան Փարիզի մէջ Սիոնիստներու հետ համաձայնած եւ
Մասոն դարձած էր...: (էջ 53):

Ապա Մ. Թուրան կը պատմէ թէ Սուլթանը Շերիաթի Շարժումէն (31 Մարտ
1909) տեղեակ չէր, թաշքըշլայի զօրանոցի զինուորները զրդող եւ Սուլթանի
ենթադրեալ կոուելու հրահանգը եւ կնիքը կեղծողները իրքիհատականներն էին...
Եւ անոնք է որ այդ շարժումով Համիտը տապալել կ'ուզէին եւ յաջողեցան... Բայց
օրերով թուրք անմեղ զինուորներ սպաննուեցան բանտարկուեցան եւ աքսորուե-
ցան եւ անոնցմէ շատեր մահացան...:

«Իրքիհատի պատմութիւնը սկիզբէն մինչեւ վերջը սպանդ-
ներով լեցուն է», «թուրք ժողովուրդին բազմաթիւ ծանր հարուած
կրելուն պատճառ եղած է, եւ քիչ մնաց որ ամբողջութեամբ թուր-
քին փնացման պատճառ դառնային ասոնք»: (էջ 88):

«... Հսկայ պետութիւն մը տար տարուան ընթացքին տկա-
րացուցին եւ անոր կայսրութիւնը արմատէն փրցնող իրքիհատ վէ
Թէրաֆքի դեկալարները Ազատութիւնը բախտախաղ խաղողի պէս
ծախսեցին:

«... Սահմանադրութեան շրջանի մեր քայլերը «Օրտոմուզ
էթթի եմին...», նուազած օրերնիս յիշելով... այս օրերուն պէտք
է հասնէր ժողովուրդը ըսելով ներքնապէս կ'այրիւմ...»:

«... Տասը տարուան ընթացքին հսկայ կայսրութիւն մը ընկ-
նող եւ փճացնող անկիտակ կառավարողներու երեսնէն միլիոնաւոր
թուրքի զաւակներուն զլուխը ուտող (Իթթիհատ վէ Թէրաֆքը ձէ-
միյէթի) զեկալարները զիչեր մը զաղտնարար զերման ընդծով-
եայի մը մէջ հայրենիքը լքողներ «ֆահպէնէ ֆաշտըլար» եւ իրենք ալ
հետու, «եար էլլերտէ նեգալարընը պուլուպ էրիտիլէր, (մարելով
կորսուեցան...):

«Մեղք որ անոնց (իրքիհատ) ներքին երեսներուն ծանօթ չե-
ղանք...»: (էջ 91):

Գաղթմ Գարապէլքի «Ճիւղան Հարպրնա Նէտէն Կիլիսի, Նա-
սըլ Կիլիսի, Նասըլ Խտարէ էքքի», 1937ին սպտեմբ, 720 էջեր
բաղկացած հատորը՝ Պոլիս լոյս տեսած՝ յսկանական սնով, յատկ-
նոտ շունչով գրուած յուշագրութիւններու տպագրութիւնը ձյուպ
գիրք մըն է:

«Պետութեան մէջ պետութիւն դարձած Իթթիհատի կեզրոնը, Մասնական
Լոճերը՝ որոնք թիւը 58ի հասած էր, սրուն մաս կը կազմէին Իթթիհատի աչքի
զարնող պատասխանատուները, Թուրանական եւ Բանիսլամական գրականութիւնը,
իրենց տխուր դերը խաղցան Օսմ. կայսրութեան կործանման մէջ»:

Անոր կարծիքով Թուրքիան պէտք չէ պատերազմի մտնէր, Գերման Սոցյալ-
կոյտի ձեռքը խաղալիք պէտք չէ դառնար եւ ձյուպ ս'է թէ Մեհմետ Թուրքիոյ ծրա-
դիրներուն իրականացման... այլ բուն Թուրքիոյ պաշտպանութեան: Ինչպէս կա-
րելի էր թոյլատրել որ Գերման զօրավարներ տէր դառնային մեր գրեկալ ուժերուն...:

Մեծ պատերազմի մտնելով շատ դժ էր շատ բան կորսնցուցինք, Օսմանեան
կայսրութիւնը կտոր կտոր եղաւ... Գէշ կառավարչութեան մը պատճառաւ աւելի
շատ կորուստ տուինք: (Ա. հատոր, էջ 138):

Օսմանեան զօրքը այս պատերազմին մասնակցելու ուժը չունէր...:

Իթթիհատի պարազուինէրը... Թալաթ պետական մարդ ըլլալէ շատ հե-
ռու էր... օտար լեզու չէր գիտեր եւ հեռախօս չէր (Բ. հատոր, էջ 10): Թալաթ
էնվէրի ազդեցութենէն չէր կրնար ձերբազատուիլ, քանի որ ան իրմէ աւելի կա-
րող էր:

էնվէրը... Թուրքիոյ Սոցյալկոյտի անդամները իր անմիջական բարեկամնե-
րէն ընտրած էր... իսկ ձէմալ քիչ սիրուած էր Կեզրոնի մէջ... Գերմանները
էնվէրի խողովակով ամբողջ Թուրքիան իրենց ազդեցութեան տակ առնելու ճամբան
գտած էին:

Գարապէլքի Փաշա խիստ կերպով կը քննադատէ Իթթիհատի պարազուին-
ները՝ որոնք միայն անհատական նախասիրութեամբ առաջնորդուեցան: Մինչ ու-
րիչ երկիրներու մէջ խորհրդարանի որոշումով կը վճարուի հիմնական հարց մը, ա-
սանք Խորհրդարանն ալ լուծեցին, բացի «Թանկե»-ն միւս քերքերը փակեցին:

Գարապէլքի կը քննադատէ Ջիա Կէօք Ալիք՝ Բանիսլամիստ՝ եւ Պէտլատին
Շաքիրը՝ անպատասխանատու մարդ որպէս...:

Պ. Շաքիր Պալքանեան պատերազմին թրքական պարտութիւնը Պուլկարնե-
րէն էտիրնէի մէջ, կը ներկայացնէ... Թրքական փառաւոր յաղթանակ որպէս...:

Անոնց համար «Թուրանական կայսրութեան» ժամը հնչած էր եւ այս ա-
ռիթը փախցնելը ոճիր էր...:

Իր կարծիքով Բանիսլամիզն ու Բանիսլամիզմը քաջալերողները Գերմանա-
ցիները եղան:

Հրատարակուեցաւ «Իսլամ Մէճմուսար» թերթը՝ որուն վերեւ գրուած էր՝
«Միւսլիմանլարըն ֆայտասընա (օգտին) շալքըր (կ'աշխատի):

Ճելալ Նուրիի «Իթթիհատի Խոյամ» գիրքը ազմուկ հանց:

Ապա մանրամասն կուտայ Բանիսլամիզմի մասին տեղեկութիւններ:

«էն կիլգիլ Եիւզ պիլի չիրֆիմ
Պիլ սեւերիլ քիլք Եիլգիլ,
Պիլ քիլքիլքիլ, պիլ պու ֆանլա,
պիլ պու ատլա եաշարըլ...»

Տեմիշի ներէյէ կիրմիսէ հելալ,
Օրասը քուրան տըր օնու կերի ալ,
Տումուզ Չոպանլարի օլամագ Գրալ
Թանրըրն էօլ չէսի Թուրանի իչինտէ...:

կամ՝

ԲԸԶԸԼ ՏԵՍԹԱՆ

Տիւշմանըն էօլֆեսի վերան օլամագ
Թիւրֆիլէ պէօյիւյուպ քուրան օլամագ
Ալքայ եուրտա պէօյիւֆ վաք օլամագ
Թուրանըն հաֆիմի Սուլթան օլամագ:

Զիա Կէօք Ալիփ

Թուրանա նուր սաչըլսըն
ձէննէք պանա աչըլսըն:

Էրճիւմենտ Էքրեմ

«... Ողբերգութիւնը հոն է որ, Էնվէրի դրօշը դարձաւ Բան-
թուրանիզմը... մինչեւ ետքն ալ, ան Թուրք բանակը բոլոր ճակատ-
ներու վրայ փճացուց եւ եւ Թուրք ժողովուրդն ալ... կրակներու մէջ
ձգեց»: (Էջ 82):

Ան հարց կուտայ թէ հայերը Թուրքերուն դէմ լարողները, Մասոն հայերը
զբոսողները որո՞նք էին... 31 Մարտ 1909ի Շերիաթական շարժումը Պոլսոյ մէջ
կազմակերպողները Մասոնները չէին... Ասոնցմէ վախճող գերմանները մտահոգ
էին այդ շարժումի դորացումէն... «Հայերը կ'ուզէին Թուրքը ոչնչացնել» (Էջ 104),
արդեօք կապ չունէին Օթեմաններուն հետ...:

Էնվէրը Սարըղամիշի ճամբով երբ չկրցաւ Թուրանիզմը իրագործել, փորձեց
անոր հասնել Պարսկաստանի ճամբով եւ տարօրինակ կատակ... 100 հազարաւոր-
ներու մահուան պատճառ դառնալէ ետք, ինքն ալ Թուրանի կեդրոնը իր արիւնով
կարմիր ներկուած այդ հողերուն մէջ թաղուեցաւ... կը գրէ Գարապէֆի:

«Խսքիֆլալ Հնարքներն Էսասլարը» Գաղիմ Գարսպէֆի Փաշայի մէկ ուրիշ
գործն է: Անոր 13 գործերը հրատարակուած են մինչեւ սոյն գիրքին լոյս տեսնելը
եւ 30ի չափ ալ անտիպ գործեր ունի:

Կը մնայ որ նակայն՝ Թուրք նոր պատմարաններն ալ կեղծիքի եւ նենգու-
թեանց չզիմեն ղէպերը խեղաթիւրելու համար եւ ընդունին Իթթիհատի յանցանքը
հայոց ջարդին մէջ:

«... ձեմալ Փաշան որ Թուրքին հոյը վատնեց, իսկ արիւնը Պաղեստինի անա-
պատներուն անիմաստօրէն թափեց... ապա Անատոլու վերադարձին մեր հայրե-
նիքի հանդէպ իր գործած սխալներուն մասին խորհելէ ետք, աւա՛ղ... ըսաւ, սա-
կայն երկու տողով չանդրադարձաւ իր սխալներուն... Անմէտ ձեմալ Թիֆլիսի
մէջ զոհ զնաց եւ իր ղիսկը Էրզրումի մօտ Կարս Դրան մէջ թաղել տուի:

«... Այս ձեմալ մեծ գործողութիւններ մի՛ կատարէք, ճամբաներու (Անատո-
լու) բարեկարգման աշխատեցէք», ըսի:

Լեւան Ֆոն Սանտերզ կը թելադրէր առիթէն օգտուիլ: Ռուս-Աւստրիական
բախումը պատճառ մըն էր ըստ իրեն Թուրքիոյ կողմէ զոս մը տալու ուսու-
բուն... Այդ փորձութեան ամբողջ Թուրքիոյ փճացման պատճառ ըլլալուն մասին
երբ յայտնեցի, Սանտերզ -- կովկասի մէջ ուսու. բանակ չմնաց, բոլորը Աւստրիոյ
վրայ կը քալեն. «Մենք ինչո՞ւ վերապահ գտնուինք» թելադրեց: Նեղուցները փա-
կեցինք, Կովկասն ալ կրցածնուս չափ կը պաշտպանենք, դեռ ի՞նչ կ'ուզէք ըսի...
Հաֆըզ Հազըր Պէյին ալ Կարսի դէմ յարձակելու ծրագրին անիմաստ ըլլալը
յայտնեցի:

... Էնվէր, ձմրան Սարըղամիշի վրայ առանց խօսք մտիկ ընելու յարձա-
կելով Օսմանեան որակաւոր բանակ մը փճացուց... Զանաք Քալէի կոնիներուն
մասնակցեցայ. օր մը Էնվէր զիս կանչեց եւ ուզեց Կալիսոյի Գերման Սպաշակոյտի
մօտ ներկայացուցիչ նշանակել: Ես հակառակ էի Գերման գաղթականներու Անա-
տոլու տեղաւորման եւ Բանիսլամիզմի:

Էնվէր ըսաւ թէ խնդիրը պատերազմը չա՛նիւն է: Յաջող օր նոր հրահան-
գով Պաղտատ կը ղրկուէի: Ապա Կովկասեան ճակատ... հոն Սարըղամիշի մէջ 90
հազարնոց Թուրք բանակէն 2 հազար հօգի մնացած էր...:

«Էնվէր... աղէտ բերաւ մեր զլլիսուն, մեզի կը մնար միայն...
Անատոլուն պաշտպանելը...: Թալաաքն ու Էնվէրը մեր բանակներ-
ուն փնացման պատճառ դառնալէ ետք, ծծելէ ետք անխղճօրէն Ա-
նատոլուի արիւնը, ինչքը, իհասն Փաշայի նրդ բանակին փճացումն
ալ զիտելէ ետք 4 տարի մեր կարուստն ալ տեսնելէ ետք... փա-
խան... Խե՛ղճ Անատոլու»:

Անոնք ո՛չ անտեսութիւն, ոչ մէկ յաջողութիւն կտակած էին...
ամէն ինչ տմարդօրէն ըրած էին: (Հերշէյի ինսաֆարգճաւ եարմըլչար-
տը): (Էջ 30-34):

Ծանօթ. — Գրքին Բ. Մասին մէջ մանրամասն կը տրուի Քե-
մալիսիան Շարժումը, ինչ որ զուրս կը մնայ մեր նիւթէն:

«Թարիհ» Գ. հատոր, Պետական Հրատարակչութիւն (13 Նեղինակներով Պո-
լիս լոյս տեսած է): 146րդ էջին մէջ կը կարդանք Սուլթան Համիտի անհետատես,
անպատուաբեր եւ անշող կատավարելու եղանակին մասին, որ Օսմանցի Մասմե-
տական երիտասարդներէն մէկ մասը ընդվզումի մղեց: Ասոնք նոր Օսմանցիներ,
երկրորդ որակումը կէնչ Թուրքէր (երիտ. Թուրքեր) անունը առին եւ արտա-
սահմանի մէջ թերթեր Հրատարակեցին: Օսմանեան կառավարութիւնը ասոնց հետ
բաւական ատեն զբողուեցաւ, մերթ հրապարակաւ եւ մերթ գաղտնօրէն ասոնց
հրապարակէն մաքրուելուն համար աշխատեցաւ, բայց լման չյաջողեցաւ... Հայ-
կական Յեղափոխական շարժումները, Կրէտէի եւ Մակեդոնիոյ հարցերը, Աերֆիմ
տնտեսութեան քայքայումը, գեղծումները Ապտիլ Համիտի իշխանութեան՝ երիտ-
թուրքերուն զօրաւոր պայքարին առիթ տուաւ:

1900ին Եւրոպայի երիտ. Թուրքերը երկու մասի բաժնուած էին: Անկարոյ
ըլլալով ուրիշ քարեկարգութիւն առաջարկելէ, Երիտ. Թուրքերը Միտհատեան
Սահմանագրութեան հաստատման զլիսուր ատաջողորանքը ներկայացուցին...:

Սատի Քօշաշ 1907ին Անկարայի մէջ տպած է իր «Ատուտութեան ընթացքին
հայերը եւ Թուրք-Հայ փոխ-յարաբերութիւնները» հատորը, ուր կը խօսի հայոց
հիւրասիրութեան... Պէյրութ կամ Ռուսմանիա այցելած չըջանին հայերու ցոյց
տուած ազնիւ ընթացքէն... ներկայ Թուրքիոյ հայերուն լաւ պայմաններէն... յի-
տոյ կը գործանայ որ յանկարծ մոռցուած կարծուած եղանակ յիշատակը կոմի-
տէներու նախաձեռնութեամբ կը նշուի...: Ամէն տեղ կ'ուղեկոչուի 1,5 միլիոն

հայերու ցեղասպանութեան գոհ դառնալու յիշատակը... Ասկէ մղուած էր որ թուրք Մերակուտականը կը դիմէ պատմութեան, փաստեր կը բերէ, որ հայերը միշտ բարձր պաշտօններու հասած են Օսմանեան կայսրութեան մէջ... Հայ Յեղափոխութիւնը պատճառ եղած է ջարդերուն, օրինակ եւ վկայութիւն կը բերէ Լէոյնէն... րայց այս մարդուն պակասը... Յշմարտութիւնը ըսելու քաղաքիւնն է: Առնենք Սարգսիմիւրի մէջ 90 հազար թուրք զինուորներու էնվէրի երեսնէ սառելուն եւ կամ սպաննուելուն պարագան 1914 Գեղարքի վերջերս ուս բանակին կողմէ:

Այս առթիւ ըսենք Պայ Քոչաշին.—

ա) Գարապէտիւրէն սկսեալ բոլորը կ'որակեն էնվէրը որպէս յաւանտ, Նարուշոնի հետ ինքզինք չփոխող, անփորձ եւ ինքնահաւան: Լէման Ֆոն Սանտերզի «5 Տարի թուրքիոյ Մասին» գրքին մէջ ներկայացուած է էնվէրի «կարողութիւնը» որպէս ոչնչութիւն զինուորական գետնի վրայ:

բ) էնվէրը կը կարծէր թէ անակնկալ կրնար ճեղքել ռուսական բանակը...:

գ) էնվէր ստուած զինուորներով շարաթիւնով հոն կը մտար, առանց կարենալ հարուածելու պէտք եղածին պէս ուս բանակը...:

դ) էնվէրը այդտեղ ազատողը եղաւ Յովհաննէս անունով հայ զինուոր մը՝ որուն շնորհաւ երախտագէտ ըլլալ սպայի պաշտօն տալով...:

Իսկ դիտէ՞ք թէ ինչպէս 90 հազարնոց թուրք զօրքը ջարդուեց է... Ինքզինք փոքր Նարուշոն նկատող էնվէրի պատճառաւ չէ, հասկա թուրք բանակին մէջ ծառայող հայ զինուոր մը լուր տուեց է ուս բանակին, որ թուրքերը ստուած են: Թուրքերը որ նահանջելու սկսած են եղեր, ետ դարձեր են ու էնվէրն ու թուրք զօրքը ջարջախուեց է... (էջ 174):

Ակնարկելով 1,5 միլիոն հայոց ջարդին.—

«Զեմ գիտեր թէ, կը գրէ, ձեզի համար այս բանը հաւատարմօք բան է եւ դեռ... ասոր՝ (1,5 միլիոնի ջարդ եւ տեղահանութիւն եւ քսոր) հաւատացող խելքը գլուխը մարդ կը գտնուի... հարց կուտայ «հայասէր» Քոչաշ...:

«Հայասէր» այս Մերակուտականը՝ Ա. Հմշխ. Պատերազմին թուրքիոյ Գերմանիոյ կողքին կուրծի փոխանակ սխալ նկատելու... կը դսնէ որ անհրաժեշտութեան առջեւ կը գտնուէր թուրքիան...: Մինչ քեմալ, Գարապէտիւր, Քարիւհ, Ա. Քուրան բոլորը կը դատապարտեն եւ կայսրութեան կորսուելուն պատճառ կը նկատեն Իթթիհատը՝ Գոչաշ «ստիպուած ըլլալու» պատճառաբանութեամբ կ'արդարացնէ այդ:

Եւ դեռ 1920ին 36 հազար Հաճնոյ հայութեան 1500 ողջ մնացածները, ըստ Գոչաշի կը ջարդեն թուրքերը... եւ ամիսներ ետքն ալ թուրքերուն անձնատուր կը դառնան...: (Աղուո՛ր հէքիաթ):

«Այսօր թուրքիոյ մէջ ապրող հայերը քուրք են»: (էջ 275):

«Եթէ հայերը 500 հազարէն 1,5 միլիոն զոհ տուած են, թուրքերն ալ 600 հազարէն 1,5 միլիոն զոհ տուած են... 500 հազարը միշտ ըլլալու է», կը գրէ ան:

Հայոց կողմէ ջարդուած թուրքերուն գալով՝ 600 հազար հողիէն մինչեւ 1,5 միլիոն...: Մեծամասնութիւնը 1 միլիոն կը հաշուէ կորսուելու թուրքերու թիւը: Այսինքն թուրքերը աւելի զոհ տուած են... «Այս երկու ժողովուրդներուն ալ սպանող մեծ պետութիւններուն հաշույն տեղի կ'ունենար...»:

« — Իսկ յանցաւոր ռաքի... ո՞վ է յանցաւորը, Թալաթ — Ոչ. հասկա՛ ծարը, Հնչակը, Դաշնակը, Հայ եկեղեցականները եւ զինուած հրոսակները...:

Եւ ստախոսութիւնը կը հասցնէ հոն՝ որ ջարդողը արդարացնելուն համար... գոնիմ տէրերը հարիւրաւոր հեռագիրներով, նամակներով շնորհակալութիւն են գինք այս գիրքին համար...:

(Առանց մեկնաբանութեան, հիմա կը հասկնա՞ք, թէ որքա՞ն կը սիրէ հայերը Պայ Քոչաշ...):

«Քարիւհ Գ.» (Նոր եւ մօտիկ ժամանակի Օսմանեան թուրք պատմութիւն) 1931, Պոլիս, պատկերազարդ:

«Ինչ կը վերաբերի Համիտի ներքին քաղաքականութեան, ապա իր լրտեսներու կազմով կ'աշխատէր հրապարակներուն բոլոր շարժումները խափանել, մահմետականներուն ազատութիւններն ալ կաշկանդուած էին... նախարարներն անգամ իրարու հետ մասնաւոր տեսակցութիւններէ կը զրուշանային: (էջ 134-135): Լրտեսները «տեղեկութիւններ» շատու պարպային իրենց ամտականներ կորսնցնելու իրողութեան առջեւ հազարն սուտ եւ զրպարտիչ լուրեր կը հնարէին եւ Նըլսարգ կը գրկէին: Այս ժուրնալներու հիման վրայ ո՛չ միայն օրինաւոր դատ տեղի չէր ունենար, հասկա ամբաստանները «կ'ախտուէին Նեմեմ, Ֆետան եւ Թրիփոլի կը բշուէին... Այս լրտեսական կազմակերպութիւնները շատնալով քաղաքի բնակիչները մնայուն վախ տակ կը պահէին»:

«Խօսքի եւ գիրի ազատութիւն չէր մնացած» (*): Երբեմն պարզ բաներուն չունեցած իմաստը տրուելով եմբակային գլուխը վտանգի կ'ենթարկուէր: Եւ այս գիտութեան դարուն մէջ սիրային, եկեղեցային բանաստեղծութիւններէն գատ ուրիշ միւլքերու մասին կարելի չէր գրել: (էջ 136):

Թերթերը Համիտի հաշուին կամ ի նպաստ իրեն պարտաւոր էին գրել, եւ չէին կրնար քաղաքական հարցերու մասին բարգամնութիւններ կատարել: Գիբերը խիստ զբաշնութեան տակ էին... Գրաքննիչին մէկ քննադատ պատճառ կ'ըլլար որ խմբագիրը տուժէ... Գրաքննիչներուն մեծ մասը լրտեսներ էին եւ ո՛չ միայն խմբագիրը զբաշնուէր, այլ մանաւանդ «մտածումներուն» ալ մասին ժողովուրդը կ'աշխատէր:

1877ի պատերազմէն ետք ժողովուրդին կեանքի պայմանները աւելի վատացած եւ տուրք վճարելու հնարաւորութիւնը շատ պակասած էր: (էջ 137):

«Համիտի... անպատիւ եւ ճնշիչ իշխանութիւնը Օսմանցի մահմետական Երիտասարդները ընդդիմադրութեան մղեց... Համիտ շատ աշխատեցաւ Երիտ. Թուրքերը լաւութեամբ կամ զէնութեամբ չէր քաջանէլ... Հայ յեղափոխութիւնը, Կրեւտէն, Մակեդոնիայի ըմբոսները, Երկրին անիշխանական վիճակը, մահափորձները, առիթ կուտային Երիտ. Թուրքերուն ձեռքը... Փարիզ դաճուող Երիտ. Թուրքերէն մաս մը հայ յեղափոխականներուն հետ համաձայնեցաւ: Օտար Երկիրներու միջամտութեանց ապահովելով հանդերձ, ուրիշներ չէին ուզած հայոց հետ գործակցիլ... եւ 1900ին Երուսալի Թուրքերը երկու մասի բաժնուած էին»:

Պուլկարիան, Հերձեկովներ տակ ետք, Թուրքիա կորսնցուց Լիպիան, ապա Պալքանեան պատերազմի երբ մտաւ՝ 598 հազար զօրք ունէր... Պալքանեան Երկիրները՝ 568 հազար: Օսմ. բանակը վատ կազմակերպութեան Երեսն պարտուեցաւ:

Թէեւ Իթթիհատը փորձեց որոշ բարենորոգութիւններ մտցնել Երկրէն ներս, սակայն «միտտի պիլ իշ Երիտասարդ», կարեւոր դորձ մը չկրցաւ բնել: Մանաւանդ տնտեսական մարդի մէջ... տոկոսի աստիճանը աւելի ծանրացաւ Երկրին վրայ: Աչքի դարնողը կուսակցական ներքին պայքարներն եղան խորհրդարանէն ներս...:

Ի վերջոյ Իթթիհատը Պալքանեան պատերազմէն ետք հասկցաւ, որ բոլորը Օսմանցի դարձնելը անկարելի էր:

Երբ հայերը, արաբները, քիւրտերը, ալպանացիները անկախութեան ձրկուումը ցոյց տուին «քիւրքիւրքի գաղափարը աւելի յառաջ տարուեցաւ»:

Իթթիհատը... պատեհասպաշտ քաղաքականութեամբ չկրցաւ հիմնական ծրարի մը քայլեցնել:

Երբ մէկ կողմէն լաիք (ոչ-կրօնական) ծրարի մէջտեղ դրաւ... միւս կողմէ ալ կրօնական նեղմտութիւն ցոյց կուտար... տնտեսական զրութիւնը Երկրին Իթթիհատի օրով աւելի վատ դրութեան հասած էր քան Համիտի օրով:

(*): Բոլոր ընդգծումները մերն են:

Եւ ահա այս եւ ասոր նման պատճառներու հետեւանքով Կայսրութեան Բ. Սահմանադրութեան շրջանն ալ, կարեւոր դործ չձգած, պատմութեան խառնուելով պիտի կորսուէր:

Համարի Գերմանաէր ուղղութեան դէմ, Իթթիհատը Անգլո-Ֆրանսական ուղին որդեգրած էր... Սակայն Իթթիհատը չուտով Գերմանիոյ մօտեցաւ եւ պատերազմի մտաւ անոր կողքին: Օսմ. 4 բանակներէն Ա. եւ Բ. ր Պոլիսն ու նեղուցները, Գ. ր՝ Կովկասը, իսկ Գ. ն ալ արար երկիրներու եւ Եգիպտոսի մէջ պիտի կուտէր:

640 հազար զինուոր՝ 229 հազար անասուն, 1247 թնդանօթ եւ 520 այլ տեսակի հրետանի կար բանակին մէջ: Մովսիսն ու ժր նոյնպէս տկար էր:

«Այս կացութեան մէջ աճապարանքով պատերազմի մտնելը միշտ չէր իր թիւստակամբունքն»:

Գերմանիան ամէն գնով կ'ուզէր Թուրքիան պատերազմի մտցնել:

Էնվէր Փաշան, որ ինքզինք միախառնուած կ'զգար Գերման հրամանատարութեան հրահանգին՝ անմիջապէս պատերազմի մտնելու կողմնակից էր, սուսերն ալ ժամ առաջ նեղուցներուն տիրանալ կ'ուզէին:

Պատերազմի ընթացքին Օսմանեան կորուստը 1,5 միլիոնի հասած է:

Հակառակ միևնառ յայտարարուելուն՝ արարներ Խալիֆի (Սուլթան Ռէշատ) բանակներուն դէմ կուտեցան: (էջ 152):

1917ին լոյս տեսած է «Ձգտումն ու գործունէութիւնը Հայ Յեղ. կոմիտէներուն՝ Օսմանեան Սահմանադրութեան յայտարարութենէն առաջ եւ յետոյ, (Ֆրանս.)», Պոլիս, 1917: Թրքերէն եւ հայերէն լոյս տեսածներուն հետ միասին, Իթթիհատի բարեկամներն ծառայեցան եւ եղեռնի ցեղասպանութեան ամբաստանութենէն զայն ազատ արձակելու փորձ մըն է այս մէկն ալ: Միջազգային բնութեամբ հանրային կարծիքը Մեծ Եղեռնի առթիւ սկսած էր հաշիւ պահանջել: Թուրք զահիճները ստիպուած էին... ձեռով մը արգարացնել ինքզինքնին... իրենց իսկ կողմէ զետեղուած զէնքերով լուսանկարել հայ բանտարկեալները եւ տարածելով Եւրոպայի մէջ, կրկնելու համար յանկերզը, թէ «բնդվգեցան, ցարդեցին...»:

Հայերը...

«Ամենէն անշան դեպքը կը խոչորցնէին եւ Եւրոպայի կը հաստատեցնէին որպէս թրքական վայրագութիւն...»: (էջ 15):

Հոն կը կարգանք...

«Հնչակեան Կուսակցութիւնը չէր ընդուներ Հայկական բաղձանքներուն իրականացումը Եւրոպայի միջամտութեամբ կամ միջնորդութեամբ, այն համոզումով որ Եւրոպական ճակատը մրցակցութիւնը արգելք էր, ուստի անմաստ էր անոնց դիմել: Ատոր համար նահանգներու մէջ իր կողմակիցութիւնը զօրացնելու աշխատեցաւ, տեւոր կազմակերպեց եւ իշխանութիւնը տկարացնելով՝ յարմար ժամանակին ազգային բաղձանքներու իրականացման հասնելու մտքով:

«... Բայց ամենէն մեծ ցոյցը սր տեղի ունեցաւ Հնչակեաններու կողմէ Պոլսոյ մէջ՝ 1890ին էր, ճանկիւղեան, Գլըճեան, Ալըքսանդրեան, Պոյաճեան եւ Տաճատեան ղեկավարեցին... Եկեղեցւոյ մէջ ճառէն եւ ճանկիւղեանի Թուրքան կոխկրտուէն յետոյ, զէնքով Պատրիարքը առջևնին (բունի) զինուած Բ. Դուռ յառաջացան: Արդիւնք չուտաւ, Ալըքեան Պատրիարքը հրաժարեցաւ, բայց Հնչակը աւելի աշխուժացաւ... Անգլիոյ եւ Ռուսիոյ ղեկավարները կը քաջաբերէին Յեղ. կոմիտէները»:

«1894ին Իզմիրեան Էրր Պատրիարք զարձաւ՝ նախպահ զարձաւ Հնչակներուն...»:

Հնչակեաններու կողմէ տեւորի Ենթարկուեցան (ժառնիչներ — Հ. Գ.) Մամբրէ վարդապետ, փաստարան Խաչիկ, Տիգրան Կարապետեան... (գիրքը գուհեր կ'որակէ ժառնիչները):

... Իզմիրեան (ապաւինած Եւրոպայի) վերջնակիւններ կը կարգար Բ. Դրան. Զէյթունի եւ Սասունի մէջ հայերն է սր կը շարգէին մահապատեան թուրքերը (Ի՛նչ անդթութիւն):

Հնչակեանները Պոլսոյ իրենց վարիչ Մարմնի որոշումով, 1904 Մարտ 25ին Տիգրանակերտի Յակոբին կողմէ մահապատեան կատարեցին Ալըքեան Պատրիարքին դէմ, որ վերաւորուեցաւ:

Ակունին ուս մըն է, իսկ Սապահ Գիւլեան 1908ի Օգոստոսին Ս. Երբուրդութիւն Եկեղեցւոյ մէջ (Պոլիս) կը յայտնէ՝ թէ Յեղ. զործունէութեան վերջ տալով պիտի աշխատին Երկիր յառաջգիտութեան համար... (?):

Դպրոցներէն ներս հայեր Օսմ. զինանշանին տեղ Յեղ. նկարներ դրեր են...:

Իսկ Ատանայի կոտորածը... հայեր թուրքերու ազգային եւ կրօնական զգացումները վերաւորած են, սպառնական կոչեր փակցուեցան են պատերուն, ամէն քաղաքի եւ գիւղի փողոցներուն մէջ տեւորներ կատարեր են, Մուսլի Եպիսկոպ. (Ատանայի Առաջնորդը) նախապէս պատրաստած է զիրենք շարդի՝ իսկ Դանիէլեան (Եպիսկոպ.) Եկեղեցիներէն ուղղակի Յեղ. բարոյեր է...:

Պոսելէ Լաք, թէ Սապահ Գիւլեան ի՛նչպէս թելադրած եւ քաջաբերած է զինուելու անհրաժեշտութիւնը «Նոր Աշխարհ» (1913 Պոլիս) թերթին մէջ, կը գրէ, թէ բուրբ ընդդիմադրութեան հետ (Իթթիհատ) սերտօրէն գործակցեցաւ: Ան կը կողմակերպէր զաւազրութիւն եւ տեւոր կը պատրաստէր: (էջ 72):

Էջ 76-86ի մէջ տրուած է Բոսթանցայի Հնչ. Դրը Համապատեան որոշումը...: Գիրքը տուած է «Դրօշակ»ի Դանակ Կոմիտէներու զինուելու, Հայ Դուռ Տեսապընդիւր կապակցութեամբ նամակներէն նմոյշներ...: Դրած է Դանակցական եւ Հնչակեան Կոմիտէներու հրահանգողները... Դանակցութեան կանոնադրութեամբ զարգանաւ է...:

(Մնացեալը մօտաւորապէս Թալաթի վերադրումներն են... Թուրք(?) ջարդող հայերու մասին...):

Վ Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

Մուսթաֆա Քեմալի դէմ դաւադրութիւն կազմած նախկին Իթթիհատի պարագլուխներէն Տուրք. Նազըմի եւ Ճալալի մասին՝ որոնք 1926ին մահուան դատապարտուեցան, Քեմալ ամերիկեան թերթի մը ըրած է հետեւեալ յայտարարութիւնը.

— «Այս զաւազրներուն ցոյց տալու վրայ եմ, թէ Թուրք հանրապետութիւնը կարելի չէ կործանել մարդասպաններով կամ անոնց ոտքային ծրագիրներով: Նախկին Երթա. Թուրքերու (Իթթիհատ) այս աւելցումները, որոնք հաշիւ պէտք էր տային մեր միլիոնաւոր բնիտեանայ հպատակներու զանգուածային եւ անողոք տարագրութեանց ու ցարդերուն համար, ըմբոստացան հանրապետութեան տիրապետութեան ներքէն: Մինչեւ այսօր անոնք ապրեցան կողոպուտի, գողութեան, կաշառակերութեան միջոցով եւ անընդունակ զարձան ու շահաուտեցան իրենց ճակատի քրտինքով պարկեւորէն ապրելու պայտարին հետ: Ընդդիմադրութիւն կուտակուեցան դիմախիւն տակ, այս տարբը սր մեր Երկիրը մեծ պատերազմին մղեց հակառակ ժողովուրդի կամքին, եւ պատճառ զարձաւ Թուրք Երթապարտութեան թափած արեան հեղեղին, էնվէր Փաշայի սճրագորտ փառասիրութիւնը զօհանելու համար, վատօրէն եւ ստորին միջոցներով դաւադրած է իմ կեանքիս, ինչպէս նաեւ իմ զահլիճի անզամներուն կեանքին դէմ»: (Տես՝ «Ամենուն Տարեգիրքը», Կ. Գէորգեան, 1965, Պէյրութ, էջ 268):

Իր «Նուրբուք» (ձառ), 1938ին Պոլիս լոյս ընծայուած հատորին մէջ Մուս-
թաֆա Քէմալ ակնարկելով Իթթիհատի, կը վկայէ՝ թէ անոնց ձեռքին տակ գործող
վարչապետներէն եւ անոնց կառավարութիւններէն ժողովուրդին հասցուած «վնաս-
նները չհամարուելու աստիճան շատ չե՞ն միթէ»։ (Միլլէթէ կէլէն գաբարլար սսեբլու-
մըյաւմաք չոֆ տէյիլ միտիբ)։ (Էջ 59)։

Քէմալ նոյն «ձառ»ին էջ 508-9ին մէջ խիստ կերպով կը քննադատէ «Բանիս-
լամիզմի թուրք հետեւորդները՝ որոնք պատճառ եղան արարական երկիրներու կո-
րուստին...»։

«Իթթիհատ վէ Թէրաքը» Կուս. դեմոկրատական իմաստով Կուս. մը ըլ-
լալէ շատ աւելի՝ ձեռով մը դաղտնի Կոմիտէ մըն էր»։

«Ա. Պատերազմի սկսած միջոցին... բանակէն եւ նաւատորմիցէն ոչ-Իթթի-
հատական սպաները հեռացուած ըլլալով՝ իշխանութեան վրայ մնալու անհրաժեշտ
ուժը ունէին անոնք»։ («Նէնի Թուրքիյէ», 1959, Իսթանպուլ)։

Էսատ Ուրասի «Թարիստէ կըմէնիլէր վէ կըմէնի Մեսիյեսի» մեծածաւալ
գիրքը տպուած է Անգարա՝ 1950ին։

Այս հեղինակը հայերէն ստրված ըլլալով, առաւելագոյն չափով օգտուած է
հայ աղբիւրներէն եւ 150է աւելի թերթեր եւ գրքեր աչքէ անցուցած է իր գիրքը
գրած առնէ։ Նորութիւնը գուցէ այն է, որ իրեն «Նոյտաչ», հայերը մեկազրոյ հայ
պատմարաններու յայտնած հակասութիւններէն լայնորէն օգտուած է... Անոնցմէ
մին՝ Լէօն է...։

Թուրք պատմարան Ռ. Շարք «Թիւրք Տէօվլէթի Հիւմէթիմտէ
կըմէնիլէր», (*) 1953ին Պոլիս տպուած եւ 1453-1953ի շրջանի մա-
սին խօսող 310 էջոց հատորին մէջ ներկայացուցած է բոլոր պետա-
կան կամ այլ ասպարէզի գործած հայերը՝ որոնք օգտակար եղած են
Օսմ. Կայսրութեան եւ նպաստած անոր վերելքին։ Եզրակացութեան
տուած է հետեւեալ վկայութիւնը։

«Հայերը Պալքանեան եւ Ա. Հմշի. Պատերազմի շրջանին քաջութեամբ կոտուած
են... ամէն ինչը հայրենիքին նուիրող հայրենակից մը հարազատ քուրք չնկատ-
ուի... ձախտ Պէյը 1912ին յայտարարեր է «Թիւրքիսիզ կըմէնի օլմազ, կըմէ-
նիսիզ տէ Թիւրք օլմազ...»։ Այդ խօսքերուն վրայ գինք լսող թուրքերը պտոսցին.
«Կեցցեն մեր հայ եղբայրները» եւ բուն կերպով ծափահարած են Իթթիհատական
(տէօնմէ-հրեայ) ձաւիտը...։

Իսկ Փըոֆ. Էքըմ Թալու 1948ին վկայեր է. «Հայ հայրենակիցներու դերը
այս երկրին մէջ չի՛ մոռցուիր։ Անոնց պատուարեր յիշատակներուն սոջե կը խո-
նարհիմ»։ (Երանի՛ թէ... Հ.Գ.)։

Ահմէտ Պետեւի Գուրանի «Օսմանլը Իմբերաթորուկուուտա վէ
Թիւրքիէ ձիւմիլիթիթիմտէ Ինֆիլայ Հարեֆէթլէրի», 1959ին Պոլիս
լոյս տեսած գիրքը յարաբերաբար միւս թուրք հեղինակներու գոր-
ծերուն՝ աւելի փաստազրական բովանդակութիւն ունի։

910 էջոց «Օսմանեան Կայսրութեան եւ քուրք համրապետու-
թեան մէջ պետական հարուածներ»ու նուիրուած այս գիրքը մանրա-
մասնութիւններ կուտայ Իթթիհատի կազմաւորման, զօրացման, պե-
տական հարուածին, Իթիլաֆի, «Ահրար»ի եւ այլ Կուս. ներու, պա-
տերազմի շրջանի Իթթիհատի անկէլու գործունէութեան մասին։

(*) Հայերը Թուրք Պետութեան Ծառայութեան Մէջ։

Ապտիւլ Համիտի շրջանին մամուլին օժանդակել, ոմանքը գնել եւ կամ
«գործին չեկածը» ոչինչ պատրուակով մը փակել տարլը՝ սովորական երեւոյթ էր։
(Էջ 145)։

Ըստ Նիպի Ահմէտ Պէնոզուի յուշերուն, գոր կը մէջբերէ Գուրան, — 1890ին
Համիտ Սալիհ Մուսիբ Փաշայի գծով լրագրողներուն եօթը հազար ոսկի բաշխած է։

Այս դրամին 2200 ոսկին Օսմանեան Պանքի գծով դուրսի երկիրները զրկուած
են, 200 ոսկի Ժիլ Պլաս անունին եւ 500 ոսկի ալ «Ֆրանքտա Ալիս» անունին զըր-
կուած է...։

Ասոնցմէ զատ Փարիզ լոյս տեսնող «Իսթիքամէթ» թերթին 26 հազար զըր-
կուած «Օրիան» թերթին 10-400 զըր.։ Բէշտի մէջ լոյս տեսնող «Բըվի Տ'Օրիէն» թեր-
թին 150-000 զըր. փոխանցուած է եւ Պոլսոյ մէջ լոյս տեսնող «Լըվան Հէրալտ»
թերթին 100 հազար, «Մանիթըր Օրիան»ին 67-600, «Սասալթ»ին՝ 36 հազար, «Լա
Թիւրքի» թերթին՝ 84-160 զըր.։ «Սթամպուլ» թերթին 24 հազար դահլիւս վճարուած
է։ (Տես՝ Ահմէտ Պետեւի Գուրան, էջ 146)։

«Լըվան Հէրալտ» թերթի տէրը Էտիպար Վիթէրար (1890) Օսմ. Պետութեան
պահանջած է 20 հազար ոսկի, այլապէս սպառնացած է Եըլտըզ Պալատի բոլոր
դաղտնիքները հրատարակել։

Վարչապետ Քէմալի Փաշան զէմ եղած է մամուլին «օղնէլու» այս ձեւին։

Համիտ «Լա Թիւրք»ի, Պոլիս լոյս տեսնող թերթըր գնած է եւ 150 ոսկի ամ-
սականով Ֆրանսացի էօթէն Բարայրին թելադրած է Համիտեան ոչթիմին բրո-
քականոր կատարել...։

Իսկ «Մէշլէրէթ»ի Ֆրանս. բաժնին զէմ Լու Մուսիբ Պէյ դատ բացած է, ի
վերջոյ Ահմէտ Ռիզան եւ Պալիլ Կանէմ Պէյերը 15 Օգոստոս 1897ին 16 ոսկի Ֆրանք
տուգանք վճարելու դատապարտուած են, որմէ յետոյ թերթը Պուրսէլ փոխադ-
րուած է։ Պէյերայի կառավարութիւնն ալ լաւ աչքով չէ դիտած թերթին հոն
լոյս տեսնելը եւ Ահմէտ Ռիզան հեռացուած է երկրէն որպէս անհաղձալի տարր։
Հակառակ անոր Թուրքիոյ մէջ ազատութիւն հաստատելու համար անոնք կը շա-
րունակեն իրենց պայքարը եւ որոնց մտքերը տակաւ արմատ կը նետեն երկրի
դինուորական շրջանակներէն ներս։

Այս առթիւ Իթթիհատի մէկ կողմէն մէջ գրուած է, թէ հայերը համարձա-
կեցան յարգանք վայելող Պաղը Ալին կոխելու չափ Պոլիսը («Բայթաձթըրը»)՝
սարսեցին։ ... Բայց իրականութեան մէջ գուլումը, բռնութիւնը եւ անվարչադի-
տութիւնը այսպիսի բողոքներու պատճառ դարձած է, մենք քուրքերս ալ բոլոր
Օսմանցիներուն մամն կը պահանջեմք Բարեկերպութեան արգելադրութիւնը, գուլումի ու
բռնութեան կեղծոն հանդիսացող Պաղը Ալին, Շէյխ Իլ Իսլամի Գուրը Եըլտըզը
կոխելով այս վայրը բռնակալութեան գլխուն փլցնել։ Չեմք ձեռքի տանք, հա-
մախմբութիւնք, շատնանք, մեր ալ ազատութեան... կողմակից ըլլալը փաստեմք
ամբողջ աշխարհին»։

Անդրադառնալով հայերու պահանջներուն, Գուրան կը գրէ,
թէ 10% էր անոնց թիւը 6 նահանգներուն մէջ (էջ 208)։ Ապա ամփոփ
կերպով կուտայ Արմենական, Հնչակեան եւ Դաշնակցական կուսակ-
ցութեանց հիմնումը, անոնց հետապնդած քաղաքական նպատակնե-
րը, որոնց ուժ տուած է Իզմիրլեան Պատրիարք...։

1899ի Դեկտ. Ժրնէլի մէջ տեղի կ'ունենայ Իթթիհատի առաջին ժողովը։
Գիրքը (էջ 170-461) մանրամասն կուտայ իր քիստի մինչեւ 1908 ունեցած գոր-
ծունէութիւնը։ Բազմաթիւ պաշտօնական Ելոյթներ, հրահանգագիրներ, նախա-
ներ, ղեկավարութեան մէջ տեղի ունեցող բախումներ, Համիտի, ձէլալէտտիի
եւ այլ փաշաներու միջոցաւ անոնց զէմ տարուած սեւ աշխատանքներուն մասին
կը խօսի։

Ճարտի Պէյ ժընեի մէջ «Ինթերամ» և «Թոքմաք» թերթերը (Իթթիհատական) հրատարակած է: Կուտայ Իշխան Սապահատինի ելոյթը 1902ի Իթթիհատի Գոնդէլէն ներս, ուր ան կը պնդէ թէ միայն բրտրականտով կարելի չէ պետական հարուած յառաջանել, ասոր պէտք է ղինուորական ուժեր միանան, Իշխան Սապահատինը հայոց կողմէ յառաջ քշուած Բարեկարգութեան գործադրութեան մէջ ղրական Երեւոյթ կը նշմարէր Թուրքիոյ ի նպաստ:

Քուրան բուն կերպով կը քննադատէ Սապահատինի ղէմ ղիբբորշուած Իթթիհատականները՝ որոնք Երկիրը անարխիզմի վերածեցին... չանսալով նահանգներու որոշ ապակեղոնացման դրութեան՝ որմէ օգտուողը Թուրքիան պիտի ըլլար անտարակոյս...:

Երբ Անգլիոյ մէջ ուսման մակարդակը 97%, Ֆրանսայի մէջ՝ 95% էր, Թուրքիոյ մէջ 5% էր... Ահա թէ Սահմանադրութեան հռչակման շրջանին մենք (Թուրքերս) որքան ետ էինք մնացեր... (Էջ 475): Ռուսոյի մանկավարժ. գիբբը Թարգմանած ըլլալուն համար Ալի Քէմալ Պէյ դատապարտուած էր կտավարութեան կողմէ...:

Նախարարները իրենց պալատներէն դուրս որեւէ մէկուն հետ չկարենալ խօսելու վիճակի մէջ կը դտնուէին:

«Պետական գործերը Իթթիհատը ղաղտնի ժողովներով առաջադրած է... և ո՛չ մէկ ատեն ղաղտնի որոշումներէն շեն կրցած ձերբազատուիլ: Իւրաքանչիւրը անոնց պետերէն ինքզինք նախարարի տեղ դրած էր: Երկրին բոլոր նահանգներուն եւ մասերուն մէջ մէկպալան հսկիչ-ֆարտուղարներ տեղադրած էին...»:

Բանակը իրենց հրամանին ներքեւ առած, Երկրին պետական մեքանիզմը ամբողջութեամբ եղծումի կ'առաջնորդուէր: (Էջ 479):

Ասոնց հասցեին «կորուած մարդեր» որակուած արուած է: Ասոնց պատնառա երկիրը (Թուրքիա) փլած է, խոշոր կայսրութիւն մը քանի մը մարդոց կեղծիքին գոհ գացած է...:

Հիւսէյն ճահիտի նման անձեր որոնք վարանում ցոյց կուտային Սահմանադրութենէն առաջ Իթթիհատի անղամակցելու... այժմ պապէն աւելի պապական Իթթիհատականներ դարձած էին:

Թալաթ Սելանիկի մէջ Շիւքրի և Բահմի Պէյերուն հետ միասին Մասն դարձած էին: Ան կ'առաջարկէ որ իսլամական Մասն օթեակ կաղմեն: (Էջ 481):

1909ի Իթթիհատի Սելանիկի Համադումարին՝ հակառակ անոր որ ղինուորականներուն քաղաքական գործունէութեան ղէմ արտայայտուողներ եղած են՝ սակայն որոշում մը առնել չեն կրցած տալ այդ մասին: Իսմէթ Ինչճոնի և Ռիֆատթ Պէյ սոյն առաջարկը դրած են ըստ Քուրանի:

1908ին Համադումարէն ընտրուած Սելանիկի Իթթիհատի ղաղտնի կեղրոնի անղամներն էին՝ Հիւսէյն Գատրի, Միահատ Շիւքրի, Հայրի, Թալաթ, Ահմէտ Ռիզա, Էնվէր, Հապիպ, Հաֆրղ Իպրահիմ:

1909ին Իթթիհատի Համադումարին (Սելանիկ), 17 կէտերէ բաղկացած ներքին կանոնադրութիւն մը վաւերացուած է:

1910ի Համադումարէն (Սելանիկ) Կեղրոնի անղամներ ընտրուած են՝ Հաճի Ատիլ Պէյ, Տոքթ. Նաղրմ, Էյուպ Սապրի, Էօմէր Նաճի Ձիա, Հայրի, Միահատ Շիւքրի, Ընդհ. Բարտուղար՝ Հաճի Ատիլ Պէյ:

1910ի Համադումարին Ձիա Կէօք Ալի ևս ներկայ գտնուած է, (բանթուրքիստ) «Կէնջ Գալէմէր» և «Ենէնի Լիսան» շարժումներու ի նպաստ (Բանթուրանական) ելոյթ ունեցած են Ձիան, Օմար Սէյֆէտտին, Ալի Ճանիպ...:

1911ին, Իթթիհատի Սելանիկի Համադումարին (ուր հայոց կտորածը վերջնականապէս որոշուած էր — Շ. Գ.), Կեղրոնի անղամ ղնտրուած են՝ Հաճի Ատիլ, Ձիա, Հայրի, Տոքթ. Նաղրմ, Միահատ Շիւքրի, Էյուպ Սապրի, Էօմէր Նաճի, Ահմէտ Նեսիմի, Հիւսէյն Ձատէ Ալի, Ալի Ֆէհմի և Խալիլ:

Իթթիհատի Կեղրոնի անղամներուն կաղմը մինչև 1912 ղաղտնի պահուած են: Կայսրութեան անկման ղլխաւոր պատճառը Իթթիհատի Կեղրոնն է կղած (Մերթերը): Անոնց աննախարարութեան գոնը դարձաւ կայսրութիւնը: (Էջ 497):

Իթթիհատի իշխանութեան ղալուն տաթիւ Անգլիոյ Պոլսոյ ղետպանին Լոնտոնէն հրահանղուած է ղործակցել և ղժուարութիւն շտալ անոնց: Ֆրանսան ալ կր մտածէր աւելի շահ ապահղելու մասին, Եթէ ղահայնէր Իթթիհատը: Իշխան Սապահատինի «Ահրար» կուսակցութիւնը 1908ին կաղմաւորուած էր Պոլսոյ մէջ: Անոնք որոշ շափով աւելի աղատամիտ էին եւ հանղուրժող ոչ-բուրքիբու պահանղներուն նկատմամբ: Ղեկաղարները՝ Ալիմ Սըբրի, Նուրէտին Ֆերրուհ, Կարսլը Թէֆիկ և Շէլքէթ Պէյ:

Թուրքիոյ մէջ արեւմտան հասկացղութեամբ ղեմնղրատական տաղին Կուս. «Ահրար»ականներն էին, ըստ Քուրանի...:

Այս Կուս. ղէմ Իթթիհատական մամուլը պայքար ղղթայաղերձած է: «Օսմանղը» թերթն ալ այս Կուս. կողմէ լոյս տեսած է:

Աղա սոյն Կուս. կոշուած է «Օսմանղը Գեմնղրատ» ուրիշ Կուս. մը «Աելա-մէթի Ռամուսիլէ» (1907ին անոնց միացած է: Ղեկաղարներ՝ Տոքթ. Իպրահիմ Թեմօ, Տոքթ. Աղատուղա ձէվլէթ և Ֆուսատ Շիւքրի: 15 կէտերէ բաղկացած քաղաքական ծրաղիր և 66 կէտերէ բաղկացած կանոնաղիր ունեցած են: Անտարուի և Բուսէլիի մէջ 16 աղումներ բացած են: 1910ին Իթթիհատը չկոքացուցած է Կուս.ը, սակայն Իպրահիմ Թէմօ 1911ին կրկին ղեկաղարած է այդ կուսակցութիւնը:

«Միթեակի Հիւրիէթ Բերվերան» Կուսակցութիւնն ալ 1909ի հիմնուած՝ կը լուծուի «Իթիլաթ» Կուսակցութեան մէջ:

1909ի Մարաին կը սպանուի «Ահրար»ական և Հակա-Իթթիհատական մտաւորական Հասան Ֆէհմի Պէյ: Իսկ «Ահրար»ական մտաւորական Իպրահիմ «Օսմանղը Տեմնղրատ» Կուս. հիմնած էր: Աստիճանարար Իթթիհատը փակեց անոնց «Շարք» և «Թիւրքիէ» թերթերը... (Էջ 510):

Համիտի գանձը ըստ Քուրանի կողոպտուած է պալատ խուժաղ բանակաղիններու կողմէ... և առիթէն օղտուելով «Ահրար»ի օրկանները փակուած են Իթթիհատի կողմէ: Ձերբակղուած Իշխան Սապահատինը 4 օր Եաթ սղատ արձակած են, որմէ ետք ան կրկին եւրոպա վերաղարձած է:

«Իթիլաթ վէ Հուրիէթ» Կուս.ը հիմնուած է 1911ին: Ան մեծ համբու հանեց երկրէն ներս: Նախկին Երլաւ. Թուրք Իսմայիլ Հաղղը Փաշա և Սատղղ Պէյ ղեկաղարները ղարձան: Իթթիհատէն ղժղոհ բաղմաթիւ Կուս.ներ յոյն, հայ, սղուղիար, աղղանաղի այս կուսակցութեան յարեցան կամ ուժ տուին: (Էջ 523): 71 կէտէ բաղկացած ծրաղիր ունէր: Իթթիհատի հրամանով Մուհետտին Փաշայի կողմէ բաղմաթիւ հակա-Իթթիհատական ղինուորական վարժ.ի ուսանղղներ Ահմէտ Պետեի Քուրանն ալ մէջը ղլլաղով՝ աղսորի կը ղատաղարտուին...:

Մինչ Իշխան Սապահատին միջին ճամբով մը կը բաւարարուէր, Շէրիֆ Փաշան համողուած էր որ Իթթիհատի տաղաղումով բոլոր գործերը սղիտի կանոնաւորուին: Բայց Փարիղ հաւաղուած այս ընղղիմաղիրներուն միջև հաւաղական մտածղղակղղղ չղար:

«... Իրականութեան մէջ Եւրոպայի Պալատը «ազատասիրութենէ» տարուած... երկրին կարիքներով (գինուորական) գրադուելու առիթ չէր ունեցած... առանց ծրագրի կ'աշխատէին եւ որ կողմին յարելը չէին գիտեր...»:

«Իժմիհատի պարագլուխներուն մէջ ազնիւ նպատակներով հայրենասէրներ կային, բայց անոնցմէ խոր մտածող, լայնամիտ գրեթէ մէկ հոգի չկար, (հէմմին հէմմին, պիր քիշի եօքտու): (Էջ 538): Կայսրութիւնը ինչ ձեւով կարելի էր վեր-կել... այս հիմնական հարցով մտահոգուող իսկ չկար»:

«Մեր սեփական երկիրը պաշտպանելու հարցով մտահոգուելու փոխան «Թիւրք Եւրոպ», «Թիւրք Օճախ» շարժումներով, ուրիշներ փրկելու մասին մտահոգուեցանք... գրգռեցինք դրացի երկիրները: Բրինձ բերելու դացող եւ տան ձաւարը վրայ տուող մարդու պէս էինք...»:

Ասոնց (Իժմիհատ) ծրագրիներուն չհետեւողները Թուրքիոյ մէջ «վաքան խայիմի» որակուեցան, չէին որոմ ցանուեցաւ... Ժողովուրդին հանդէպ ցոյց տրուած ընթացքը Աուլթան Համիտի օրերը փնտռելի տուաւ մեզի... «Ահմետ Ֆեհմիլէր, Ահմետ Սամիլէր վէ Ձէֆի Պէլլէր պու եռլտա գուրպամ կիթթիլէր (այս ճամբան զոհ դացին...):»:

«... Իշխան Սապահէտտինի «ապակեղրոնացման» իրաւունք տրուելու պահանջը 1876ի Ա. Մահմանդուլթեան մէջ իսկ ընդունուած էր...»:

«Իժմիհատի Կեդրոնական Կոմիտէի աչքին Պուլկարներ, Սերպեր, Յոյներ եւ Հայեր «Մէմլէքէթ տիւնամը» (երկրի թշնամի) իսկ Արար, Ալպան եւ Քիւրտեր ալ «վաթան խայիմի» (հայրենիքի թշնամի) էին: Ընդդիմադիր Թուրքերը «փարա իլէ սաթլըմը» մարդիկ: (Էջ 539):»:

Քուրան թէ Ալպանիոյ, թէ Ելմէնի հարցերուն չկարգադրուելուն պատասխանատուն Իժմիհատը կը նկատէ...:

Իժմիհատի գորացման պատճառ եղան «Հըզպ էլ ձէտիտ», «Ահալէ», «Միւթե-տիլ», «Հիւրրիէյթ Բերկերան» հոսանքները:

Անոր կ'անդամակցէին՝ Ռիզա Նուր, Մահիր Սաիտ, Քեմալ Միտհատ Սէրէֆ, Միւրալայ Սատրպ Պէյ, Լուիֆի Տիքրի, Կիւմլիլիինելի Իսմայիլ, Ռիշիտ, Ռիզա Քէֆիք: Տամատ Տէրիտ, Սալիհ եւ Իսմայիլ Հազըր Փաշա, Հոճա Սապրի, Ջէյն էլ Ապտին, Մուսթաֆա Արիֆ, Միւլիթ (մարաջախտ) Տուտա Փաշան ալ նախագահ:

Անոնք յաջողեցան 60-70 ընդդիմադիր երեսփոխաններով Իժմիհատի դէմ ճակատել: Ռիֆաթ Փաշայի Փարիզի դեսպան նշանակուելուն առիթով Իժմիհատի եւ Իժմիհատի միջեւ սուր պայքար մը սկսաւ անոր տեղ Ա. Գ. Նախարար ընտրելու կապակցութեամբ: Իժմիհատական Մեմուտ Հէյ Չաիջախիզ կերպով պարտուեցաւ եւ Իժմիհատական Թահիր Հայրետտին Պէյ շահեցաւ 11-12-1911ին մասնակի ընտրութեան ընթացքին: (Էջ 553):»:

Քուրան կ'ամբաստանէ Իժմիհատը շրջաններու մէջ միջամտութեամբ: Նոյն-իսկ գինուորներուն կը թնկադէր (օր. Սքուպ) որպէսզի Իժմիհատին քուէարկեն: 1912ի ընտրութիւնը Իժմիհատը շահած էր: Սակայն Լիպիոյ կորուստէն ետք չիոթ վիճակ ունէր անոր ղեկավարութիւնը:

... Մոնաթըրի գին. շրջանակներ Իժմիհատի դէմ շարժում կը կազմակերպեն: Շարժումին ետին կը գտնուէր Իժմիհատի Կուսուր:

Ափսոս որ մեր գրքին ծաւալը թոյլ չի տար «Հեյաքար Չապրթանի» կողմ, հակա-Իժմիհատական եւ այլոց կ'ընթերցեն ու գործերը հոս ներկայացնելու... Ահմէտ Պետեի Քուրան... նոյնիսկ Ատանայի կոտորածի հարցին մէջ (1909) առնուազմ հայերը պատասխանատու չի բռներ եւ յանցանքը... Իքթիսատի կամխար-գելիչ միջոցառումներ ձեռք չառնելու կը վերագրէ... կախման կէտով:

Մահմուտ Ելվէթ Փաշայի սպաննութենէն ետք՝ Իժմիհատի եւ բոլոր ընդդիմադիրներուն դէմ 1913ի Յունիսէն սկսեալ հալածանք սկսաւ: «Ապտիլ Համիտալայել» ընթացք կ'որակուի ան հեղինակին կողմէ:

Պատերազմական Նախարարութիւնը Մահմուտ Ելվէթ Փաշայի սպաննութենէն ետք մահուան դատապարտեց՝ Իժմիհատականներէն՝ Իշխան Սապահէտտինը, Նախիկին Ն. Գ. Ն. Ռիշիտ, Կիւմլիլի-ճինելի Իսմայիլը, Քեմալ Միտհատը, Բերդեւ Թէֆիքը, Գալմազամ Ջէքին եւ բացակայ (քիւրտ) Ելվէթ Փաշան, Միւրալայ Թէֆիքը, սպայ Գազըմն ու Մուհիպը եւ Տամատ Սալիհ Փաշան՝ սրտեր 1913ին կախուեցան Պուլիս՝ Պալատի հրապարակին վրայ:

«... Թալաթն ու Գարսոն սպաննել ուզող Քեմալ եւ Հապ-դըն, ձէմալը սպաննել ուզող՝ Ժանտարմըրիի հրամանատար Մէհ-մէտ... մահուան վճիռ ստացան... Քուրան եւս ձերբակալուած է... աղատած՝ Մեկլան Չառէի միջնորդութեամբ՝ ձէմալ Փաշայի հրա-մանով...»:

Էնվէր Փաշան «Թէշէթլաթը Մահմուտ» խմբակը մէջտեղ բերած է: Անոր նպատակն էր բոլոր իւրամները մէկ գրօշի ներքեւ բերել եւ դեռ Չիւր Կէօք Արիի մտքերը Իժմիհատի ներարկել, նոր բացարականութեամբ գրացուիլ սալ եւ Բանիսլամիզմն ու Բանթուրքիզմը զորացնել: Բանիսլամիզմը յառաջացնել որքան դժուար էր, նոյնքան անկարելի էր Բանթուրքիզմը իրականացնելը...:

Ելվէթ Փաշայի դէմ մահապարտ կը կազմակերպուի Իժմիհատականներու կողմէ Փարիզի մէջ: ձէմալ Փաշայի ծառայող տեսու-րիտ Քեմալը եղած է (ընիկ Ակնցի): Սակայն Ելվէթի մօտ ապրող Սալիհ Պէյ տեսուրիտը կը սպաննէ:

«Տըրա-Մաամնները Իքթիսատի ղեկավարները իրենց ազդեցու-թեան ներքեւ առած էին»:

1916ին Համադումարին Իժմիհատի Կեդրոնի անդամներ ընտրուած էին՝ Տոքթ. Նազըմ, Պէհէտտին Շաքիր, էյուպ Սապրի, Չիւր Կէօք Արի, Ռիզա, Տոքթ. Ռուսուհի, Քեմալ, Թալաթ եւ Հիլմի Պէյերը:

1917ին Կեդրոնի անդամներ՝ Տոքթ. Նազըմ, Թալաթ, Քեմալ, Ռիզա, Չիւր Կէօք Արի, էյուպ Սապրի, Տոքթ. Ռուսուհի, Տոքթ. Պէտտտին Շաքիր եւ Հիլմի: Ընդհ. պետ՝ Թալաթ Փաշա, ընդհ. բարտուղար՝ Միտհատ Շիքրի:

Ապա օր մըն ալ Թուրքիան կըր պարտուեցաւ՝ Գերման ընդձայնակի մէջ 1918ին Թալաթ, Էնվէր, ձէմալ, Նազըմ, Պէհէտտին Շաքիր Ռուսիա անցան, ապա Գերմանիա փոխան: Իժմիհատի այլ պարագլուխներն ալ հոն ապաստանեցին:

Միւնիխի մէջ զաղտնի ժողով գումարած են, կրկին իշխանու-թեան տիրանալու ձգտումով... Աստուած սպորմի հոգուն... «Բայց երբեմն Թալաթ Փաշայի հասցէին այնքան գուլիստ կը շուայուի որ մարդու նախանձը կը գրգռուի... Եւ մարդիկ կը մտնան անոր Օսմ. Կայսրութիւնը պատմութեան անցրնելու (Թարիհէ մայ Կարիսիկի) պատճառ հանդիսանալը...»:

Կարելի է այս մասին մեր կողմէ յայտնել, թէ ինչ կը փերա-բերի Իժմիհատի անմարդկային դիմադրիւն, սեւ ծրագրիներուն, ընդդիմադիրները լուցնելու միջոցներուն, սպայանամոյ, Բանթու-րանիստական եւ Բանթուրքիստական ճեւանկարներուն, ատոնք ընդհանրապէս փաստացի կերպով տրուած են Ա. Պ. Քուրանի գրքին մէջ, սակայն ափսոս, նոյն Իժմիհատը 1.5 միլիոնէ աւելի հայեր ջարդելուն մէջ դատապարտեալի աթոսին վրայ չնստեցնել, հայերը

ըմբռստ, զէնքի զիմամ, Էտեւէն զարկամ (Թուրք բանակին) ջարդե-
րու զիմամ ըլլալը կրկնելը... չենք զիտեր թէ խկապէս ի՞նչ տեսա-
կէտներն են, թէ ստիպուած էր այդպէս ներկայացնել Աճմէտ Պե-
տեւի Քուրան՝ որ նուազագոյն արժանիք ո՛ւնէ միայն չի գտներ Թա-
լաաթի, Էնվէրի, Սալիլի, Նիւսէյն Ճաշիտի, Ճէմալի մօտ, այլ դա-
նոնք հայէ մը աւելի մերկացնելով, արդարութեան իր խօսքը կ'ըսէ :
Երբ հարցը կուգայ պաշտպանելու ազատութիւնը եւ արդարութիւ-
նը... սակայն ինչո՞ւ նոյն դատապարտութիւնը կը զլանայ անոնց
հասցէին՝ երբ Թալաաթներու կողմէ «մանուկներն անգամ հայոց»
ջարդելու հրահանգը հաւանարար մեղքէ աւելի լաւ զիտէ, մանա-
ւանդ որ Մեվրան Զատէի նման անկաշատ մարդու մը ձեռքին տակ
թերթի խմբագիր եղած է Փարիզի մէջ... Իթթիհատի զէմ զիրքո-
րոշուելու ստիպուած է Յ անգամ ձերբակալուելով եւ մինչեւ Սինոպ
արքայութեան Քուրան. չէ՛ որ սրպէս «դաւաճան» ամբաստանուած է
անոնց կողմէ... :

Ամենայն զէպս սոյն զերքէն կ'արժէ ամբողջ զլուծներ թարգ-
մանել... ցոյց տալու համար՝ որ մեզի չափ թուրքերուն մէջ ալ
Իթթիհատի սուտը եւ կեղծիքը չկլլող մարդիկ կան :

Մեր կարծիքը այն է, թէ հայկական Հողային Դատին ուժ
չտալու համար է որ լոստ են Աճմէտ Պետեւի Քուրանները՝ հայկա-
կան Եղեռնի առթիւ :

Եթէ Ատանայի կոտորածին մէջ հայերը յանցաւոր չեն, եթէ
Իթթիհատը Թուրքիան անգունդ ատաճորդեց, եթէ տնտեսապէս,
զինուորապէս, քաղաքականապէս չկրցաւ գործ մը տեսնել, եթէ
չկրցաւ ոչ-Օսմանցիներուն տարրական պահանջը եղող Բարեկարգու-
թեանց կարեւորութիւնը չափել, եթէ Պալքանները, Լիպիան, Արա-
րական աշխարհը մրայ տուաւ, եթէ Ֆեհմիները եւ Իթթիհատի ազա-
տական ղեկավարները կախաղանի մրայ հանեց... Եթէ ազատու-
թիւնը կաշկանդեց եւ երկիրը չկրցաւ բարեկարգութեամբ օժտել, ը-
սէք ուրեմն ո՛վ Աճմէտ Պետեւի Քուրան... միայն հայերը ջարդելու
պարագա՞ն նիշդ գործն էր Թալաաթի եւ Էնվէրի... :

ԳԼՈՒԽ Է.

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻԹԹԻՀԱՏԻ ԴԵՍ

Նախապէս տուիմ մինչեւ Սահմանադրութեան շրջանի Հեչ-
կուսեան դիրքորոշումը Իրքիստական պարագլուխներու թեգերուն
նկատմամբ :

Ստորեւ կուսակցութեան 1909-1914ի շրջանի Համագումարնե-
րուն որոշումներէն կարեւոր հատումներ, եւ այլ վկայութիւններ,
Իրքիաֆի հետ կապերու շուրջ նաեւ, յատկապէս բացատրելու համար
այն նշմարաւորութիւնը՝ թէ Հայ Յեղափոխութեան խմաստան հաստա-
ծը չտարուեցաւ ո՛ւնէ Թալաաթի խոստումներէն, ո՛ւնէ կոչաւոր, եւ ո՛ւնէ
ալ անտեսեց հայ ժողովուրդի գերագոյն շահը՝ ազատնացող մասնակի
զիմաց :

Կուսակցութեան դիրքորոշումը Իրքիստի դէմ արամարա-
նական եւ պատճառարանեայ ձեւով սրուած է, մեր կողմէ անկա-
ժեշտ չենք նկատել լայն մեկնաբանութիւն :

Բայց աւելի լաւ է փաստելը իստիմ :

Կուսակցի նախ՝ Հնչակեան թեգերը՝ Ս. Սապահ Գիւլեանի
«Երիտ. Թուրքիա» գրքոյկին :

«ԵՐԻՏԱՍԱՐԳԻ ԹՈՒՐԿԻԱՆ»

Գրքոյկը գրուած է սպարտէսի լեզուով «Հնչակ»ի 1909ի թիւ 76
եւ 1901ի թիւ 1, 2, 3ի մէջ :

Վերատպուած է փոքր յատկումներով, սրպէս Հնչակեան Կուս-
թիւ 10 հրատարակութիւն, Փարիզ՝ 1908ին : Աղբյւրով եւ գործելով
սրպէս ղեկավար, տեսարան եւ քաղ. գործիչ Ս. Սապահ Գիւլեան իր
սոյն գործով կրկին անգամ կուգայ յայտնաբերելու Իթթիհատի Կա-
թիւնը : Այն քիչ հայ քաղաքական մտքի ներկայացուցիչներէն է ան,
որ կրցած է ժամանակին գրայ եւ քարտեզ, զիրքով, թերթով, բեմով
այն մտանդը որ կը ներկայացնէր Իթթիհատի Օսմանականութիւնը
մեր գոյութեան իսկ համար :

Թուրքերան վերակազմել, վերահաստատել այնպիսի հիմունքներով, որ անոր մէջ ապրող զանազան այլացեղ, այլակրօն տարրերը, ժամանակի ընթացքին, յառաջացնէին, կազմէին մի զանգուած, մի մարմին, մի ժողովուրդ, մի ազգութիւն: Ո՛չ թէ կղզիացած, իրարու խորթ ու թշնամի ցեղեր, այլ մին միւսի շարունակութիւն կազմող մասեր, որոնց բոլորին մէջ պիտի տիրէր ընդհանուր ներդաշնակութիւն, ընդհանուր կապ: Տարրեր ժողովուրդների մէջ զոյւթիւն ունեցող վէճերը, խորութիւնները վերացնել, արմատախիլ անել, ջնջել նրանց ինքնուրոյնութիւն տուող պայմանները, արտօնութիւնները եւ այդ բոլորից՝ ատանց խորութեան կազմել մի ամբողջութիւն, որ ունենար նոյն ձևամաները, նոյն հաստատութիւնները, նոյն խոչալը: Ուրիշ խօսքով մինչ այդ զոյւթիւն ունեցող զանազան համայնքների տեղ պիտի տիրէր մի համայնք, մի ազգութիւն՝ ՕՍՄԱՆՆԱՆ:

«Օսմանեան ազգ» մէջտեղ բերելով նոր արիւն եւ աւելն պիտի ներարկուէր Թուրքիոյ... (էջ 9-10):

Իրենց այդ համոզումին մէջ այնքա՛ն առաջ կ'երթային, որ ի հարկին արդար կը դնէին օտար համայնքների ամբողջական կտորածները: Այդ բոլորը նրանք մեղմացուցիչ անհրաժեշտութիւններ էին համարում ապագայի սկզբունքի տեսակէտից:

«Ներտասարդ»ներ մեծ մասը բարեշրջականներ (էվոլիւսիոնիստ) ըլլալով եւ հետևողներ Օկրուտ Գոնդի փիլիսոփայութեան, իրենց դաւանած ընդհանուր փիլիսոփայութիւնն այն էր, որ էվոլիւցիայից պէտք էր սպասել Օսմանեան Կայսրութեան մէջ արմատական փոփոխութեան առաջ գալը եւ այդ փոփոխութիւնը պիտի կատարուէր յօգուտ տիրող Օսման. տարրի: Եւ հէնց այդ տեսակէտով ալ դէմ էին յեղափոխական շարժումներու, այդ միջոցը անօրուտ եւ վնասակար համարելով այն հիմունքով, որ կարող էր արտաքին միջամտութիւն լինել եւ խնդիրը վճռուել յօգուտ տիրուող աւելի յառաջադէմ ժողովրդների, մինչդեռ Թուրք տարրը դեռ բաւականին յետամնաց էր: (էջ 19):

Բոլորը ի մի ամփոփելով «Ներտ. Թուրքերու» սկզբունքը հետեւեալ կէտերէ կը բաղկանար. —

- 1. — Գահընկէցութիւն Սուլթանի:
- 2. — Պահպանութիւն Օսմանեան Հաստատութեան, Սուլթանի դիմի եւ Խալիֆայութեան:
- 3. — Հակառակիլ օտար պետութիւններու միջամտութեան Թուրքիոյ ներքին զործերուն, մասնաւորաբար դէմ ըլլալ անոնց միջամտութեան՝ հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական եւ այլանական շարժումներուն:

4. — Չճանչնալ ո՛չ Հայկական եւ ո՛չ ալ Մակեդոնական Հարցեր, դէմ ըլլալ, պայքարիլ բաղկացուցիչ ազգութիւններու շարժումներուն յանուն Օսմանեան Կայսրութեան միութեան եւ ամբողջականութեան:

5. — Պաշտպանել Թուրքիոյ ներկայ ընկերային, կրօնական եւ տնտեսական հաստատութիւնները իրենց ամբողջութեան մէջ:

6. — Ներքին քաղաքականութեան մէջ պաշտպանել եւ իրականացնել Օսմանականութեան գաղափարը քուրճ մացիոնալիզմը՝ իր բոլոր հետեւանքներով, ընդունիլ քաղաքական բացարձակ կեդրոնացումն, ժխտել ամէն տեսակ ազակեղրոնացումն:

7. — Վերահաստատել Միտհատի Սահմանադրութիւնը, եւ իրենց հեռաւոր ու մասնաւոր իղձերի իրականացումը նրա մէջը տեսնել եւ նրանով յառաջ երթալ:

8. — Արտաքին մարզի մէջ պաշտպանել բոլոր իսլամ շարժումները:

Ս. Սապահ Գիւլեան «Ներտ. Թուրքիա» իր հատորին մէջ կը խօսի անոնց միտումներուն եւ Միտհատի Սահմանադրութեան խորքին մասին: (էջ 20-23):

«... Չարմանալի տրամարանութեամբ օժտուած են Եղած ե. Թուրքերը: Բացարձակ միապետութիւնը չարք համարելով հանդերձ ո՛չ մէկ օրէնքով հակակշիռ բանեցնել չեն խորհած անոնց վրայ...»:

«... Հարցը հետեւեալն էր — արդեօք Թուրքիոյ բաղկացուցիչ ազգութիւնների ազգային գոյութեան եւ ինքնավարական ձգտումները տրամագծօրէն հակառակ էին Թուրքիոյ գոյութեան յարիսխների ամբապնդուելուն:

«... Կեանքի եւ զոյրի ապահովութիւն ուղղ, մարդկային տարրական իրաւունքների տէր լինել ցանկացող նուաճուող, բայց պարթնող ազգութիւնները կարո՞ղ էին բնաջինջ լինելու շափ վնասակար տարր նկատուիլ վերակազմուելիք, երիտասարդանալիք Թուրքիայի համար — ո՛չ»:

Եւ երիտասարդների հէնց ամենախոշոր սխալը դրա մէջը եղաւ: (էջ 38):

Դժպոհ ժողովուրդներու բարեկարգութեան պահանջները չէին հակադրուեր Թուրքիոյ շահերուն: (էջ 40):

Ը. գլխուն մէջ կը խօսուի Թուրքիոյ իրական կացութեան եւ կազմի մասին, ապա «Հայաստան եւ Թուրքիա» հարցին շուրջ, ուր տրամարանականօրէն կը խօսուի հայոց պատմա-անհատական իրաւունքներու, ՅԱՐԷ յօդուածի, Մայիս 11ի Բարեկարգութեանց զործադրման անհրաժեշտութեան մասին, ինչպէս նաեւ «ինքնավարութեան իրաւունքը Երիտ. Թուրքերը կամ պիտի ընդունին այդ կամ իրենք ալ «Սեր Թուրք» դառնան...»:

«Ներտ. Թուրքերը պէտք է ընդունին հայու ճանչցուած իրաւունքը՝ այն է ինքնավար Հայաստանի գաղափարը»:

ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

«Օսմանականութեան ձգտումը 100 տարուան պատմութիւն ունի: Ան կը ձգտի բոլոր ոչ-թուրքերը կլկել այդ յօդուածով: Ազգ մը կը ձուլէ եքէ աւելի բարձր մակարդակ ունենայ... հայր զարգացաւ եւ ինքնասպան չդառնալու համար ընդվզեցաւ... Ինքնավար սխալմը կրնայ փրկել կացութիւնը»:

Պոլսոյ Հնչակեան Զ. Ընդհ. Համագումարը 1909ի Յուլիս 12ին սկսաւ եւ տեւեց 4 ամիս: Իր ամբողջ պատմութեան ընթացքին ո՛չ մէկ Հնչակեան Համագումար (թիւով 12) այսքան ժամանակ չէր խլած:

Պատգամաւորներ եկած էին Ռուսաստանէն, Կովկասէն, Պարսկաստանէն, Հիւս. Ամերիկայէն, Պուրկարիայէն, Ռումանիայէն, Եգիպտոսէն եւ Թուրքիոյ բոլոր շրջաններէն: 124 Հնչակեան Մասնաճիւղերէն ներկայ էին 79 Մասնաճիւղ, 108 պատգամաւորի ձայնով:

Կուս. օրինակա՞ն թէ յեղափոխական ուղիի պիտի հետեւի:

Պատգամաւորներէն՝ Փարամազ, Սապահ Գիւլեան, Սիւնիք, Ազատ Ոստանիկ հաստք չէին ընծայեր «պոչատ» Սահմանադրութեան եւ կը պնդէին ձեռք առնել յեղափոխական (իլլեկալ) ոչ-օրինական գործունէութիւնը՝ հարուածելու համար Սուլթանի Բռնապետութիւնը շարունակող Իթթիհատ Կուսակցութիւնը:

Ա. Աչբազաւեան, Ն. Չաքարեան, Մուրատ Պոյաճեան դէժ էին դաւադրական ծրարդին, նկատի ունենալով Տաճկահայ ժողովուրդի ուժասպառ եւ քայքայեալ վիճակը՝ բնաւ նպատաւոր չէին գտնել հակա-օրինական դաւադրական նախկին ձեռք: Յոյս կը յայտնէին որ ժողովուրդներու միջեւ ատելութիւնը տակաւ կրնայ մեղմանալ եւ խաղաղ պայմաններու մէջ կարելի է աւելի լաւ կազմակերպել ժողովուրդի ինքնապաշտպանութեան ուժերը: Որպէսզի երբ մօտենայ Թուրքիոյ քայքայման պահը, կարենայ հայ ժողովուրդը դիմել վճռական (յեղափոխական) քայլին:

Կ'որոշուի. —

«Տանկաստանի մէջ գարծել օրինական (լեկալ) գետնի վրայ, ցորչափ այդ օրինական իրաւունքները չեն խլուած աշխատաւոր ժողովրդի ձեռքէն:

Կ'որոշուի. —

«Նկատելով որ քուրք մացիոնալիստները եւ այդ մացիոնալիզմի արտայայտիչ ֆաղափական գործիչները (Իթթիհատ) գիտակցաբար կը ձգտին ապագայնացնել Թուրքիոյ բաղկացուցիչ ոչ-քուրք տարրերը եւ ձուլել զանոնք քուրք ազգութեան մէջ Օսմանցի ընդհանուր անուան տակ, ժողովը ժխտելով կը ժխտէ ազգայնացման այդ գաղափարը եւ կը վճռէ պայքարիլ այդ ուղղութեան դէժ՝ բնորոշելով ազգերու անկաշկանդ ու ազատ զարգացման եւ ինքնորոշման իրաւունքը»:

Կ'որոշուի. —

«Աչբի առջ ունենալով Օսմանեան Սահմանադրութեան տակաւին ոչ լրիւ արմատացած վիճակը եւ յետադիմական արտայայտութեանց հասանականութիւնը՝ ժողովը պարտք կը դնէ Գործադիր Մարմիններուն վրայ՝ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ...»:

Կ'ընտրուի Տաճկաստանի Կեդր. վարիչ Մարմինը՝ Արամ Աչբազաւեան (Ատենապետ), Հ. Արամեանց (Ատենադպիր), Մեծն Մուրատ՝ (Գանձապահ), Ն. Չաքարեան եւ Յ. Արծրունի՝ Փոխ-անդամներ:

1910ին բարեփոխուած Հնչ. Մրադրին հիման վրայ տեղի ունեցաւ Տաճկաստանի Ս. Դ. Հնչ. Կուս. եան Ա. Պատգ. ժողովը:

Հողային հարցի կազակցութեամբ ժողովը կ'որոշէ՝ «Նկատելով որ հողը Թուրքիոյ մէջ որպէս արտադրութեան միջոց ենթարկուած է բնաջնջումի ընդհ. օրէնքներուն, ժողովը կ'որոշէ կապ պահել Թուրքիոյ բոլոր գործօն ուժերուն հետ եւ պաշտպանել իրաւագործներու տեսութեան վրայ կոթնած աշխատաւորներուն իրաւունքները:

«Ժողովը կ'որոշէ պարտադրել Կեդր. վարիչ Մարմինին՝ որ Օսմանեան եւ Ազգային Երեսփոխանական ժողովներուն մէջ ունենայ Հնչակեան երեսփոխաններ, իրատուք տալով անոնց որ կազմեն յարմար խմբակներ եւ ի պահանջէլ հարկին համերաշխին ուրիշ խմբակի մը հետ՝ ժողովրդավար իրատուքները բնաջնջող օրէնքներ քուլարկել տալու համար:

«Ժողովը վերին Մարմինին կը թելադրէ սերտ յարաբերութիւն մշակել զոչութիւն ունեցող այլ Սոց. Դեմ. կազմակերպութիւններու հետ, բարոյապէս աջակցելով անոնց, մանաւանդ թուրք Ս. Դ. ներու. թոյլ ջանքերուն»:

1912ի Սեպտ. 26ի Կուսակ. Տաճկաստանի Բ. Պատգմ. ժողովը կը գումարուի, — Ի՞նչ դիրք պէտք է բռնել Կուս. Իքթիհատի եւ Իթթիաֆի նկատմամբ:

Ժողովը կ'որոշէ «Ազգայնական, կարծաւարար հոսանքին դէմ (Իթթիհատ — Հ. Գ.) ընդդիմադիր ոյժ տեղծելու եւ քուրք տարրին յառաջդիմական հոսանքին նպաստելու եւ անոր մէջ ազատական ոգին զարգացնելու համար, նախապատուութիւն տալ ա՛յն քուրք ֆաղափական Կուս. եան որ համեմատաբար աւելի ձախ կեցած է եւ կը ներկայացնէ յառաջդիմական սկզբունքներ:

«Ընդհանուր ուղղութեամբ թուրք կուսակցութիւններէն մէկուն հետ ժամանակաւոր զործակցութիւն հաստատելով հանդերձ, ուշադրութիւն դարձնել մեր ազգային իրականութեան մէջ գործող հայ կուսակցութիւններուն, ազատ ձգելով մասնաճիւղերը, որ տեղական բնոյթ կրող խնդիրներու նկատմամբ ժամանակաւոր զործակցութիւն ունենան, համաձայն Կեդր. վարիչ Մարմնոյ այդ մասին տալիք հրահանգներուն:

«Հրահանգել Խորհրդարանի մեր ընկերներուն ազգու. միջոցաւ պայքարիլ ամէն տեսակ շահագործումի դէժ (հողային):

«Ս. Դ. Հ. Կ. Տաճկ. Բ. Պատգմ. ժողովը, նկատի ունենալով յառաջիկայ Օսմ. երեսփ. ընտրութիւնները կը վաւերացնէ 1912 Փետր. 7ի Իթթիաֆի հետ կնքուած համաձայնագիրը եւ կը հրահանգէ զործակցութեան դնել գոյն, համաձայն քաղաքական կուսակցութեանց հանդէպ մեր վերքը ճշդ ու բանաձեւին:

(Իթթիաֆ-Հնչակեան համաձայնագիրը տուած ենք սոյն գլխին վերջաւորութեանը):

1913ի Յունուարին Փրանսերէն կոչ մը տպեց Հնչակեան Կեդրոնը եւ ցրուեց Միջազգային հանրային կարծիքը լուսարանելու մասնագործութեամբ՝ թուրք նոր իշխանութեանց նկատմամբ:

Անդրազառանայէ կտր, թէ 25 տարիներէ ասդին հայ կեանքին մէջ գործող կուսակցութիւն մը եղած է Հնչ. Կուս.ը եւ ծով արին է թափած յեղափոխական շարժումներու մէջ, պատերազմը «սարսափելի» կը գտնէ եւ սակայն հարց կուտայ, թէ Թուրքիոյ մէջ հայը խաղաղ պայմաններու մէջ կ'ապրի... հալածանքներ չէ՞ կրեր հայը, Թուրքիոյ նոր տէրերուն նպատակը չէ՞ բնաջինջ անել մէկ աշխատատեք, քաղաքակիրք եւ կորովի ազգ (Հայը):

Ապա կուչը կ'ըսէ, քէ մեմք ժողովուրդներու եղբայրութիւնը կը դաւանիմք, անոնց ազատ զարգացումը... որ պիտի հասնի ամբողջական ազատագրութեան:

«Մեմք քուրք ժողովուրդին դէմ չեմք» կ'ըսէ կոչը, դժբախտաբար ան տիրող դասակարգին գործիքը կը դառնայ յաճախ եւ չ'երկրորդեք հայ ժողովուրդի ջանքերը երկրէն ներս ընդհանուր դրութիւնը բարելաւելու համար:

«Ահա այդպէս է որ Հայկական Հարցի անմիջական լուծումը զարձեւ է մի ստիպողական անհրաժեշտութիւն եւ այդ լուծումը պէտք է լինի ընդարձակ ռամկավարական ոգով, բնական ու պատմական պայմաններէ համաձայն եւ ամփոփուած այնպիսի ձեւերում, որ տրուի ազատ ասպարէզ բոլոր քաղաքական, սոցիալիստական ու տնտեսական դադափարներէ, հետեւողական զարգացման՝ դէպի յառաջդիմութիւն, դէպի խոչալ:

«... Հայաստանի անցեալը դեռ ամէնքի աչքին առջեւ է եւ նրա պատմութեան էջը դեռ չի փակուել, մինչեւ որ ազգայն չհատուցանէ արդար բաւարարութիւն բազմաշարժար ազգին:

«... Եւրոպան պէտք է տայ այդ բաւարարութիւնը Հայաստանին: Թուրքիոյ մէջ Բարեկարգութիւններու ծրագիրը ջուրը ինկաւ եւ քրքալիւն «Սահմանադրութիւնը» այսպէս կոչուած զինուորական ըմբոստութեան պտուղը եղաւ մի վիժումը: Անոր պատճառն է նաեւ ժողովուրդին անտարբերութիւնը... քաղաքական ու տնտեսական յառաջդիմութեան համար: «Բարեմարտում» բառը քուրք ժողովուրդի համար չունի ո՛չ մի հրապոյր...: Յոռի վարչութիւնը ան կը համարէ օրինակեմ եւ անհրաժեշտ: Ան միշտ դէմ եղած է բարեկարգութեան... որմէ օգտուած է ախրող Պետութիւնը: Հայը, Յոյնը, Մակեդոնացին մշակոյթով աւելի բարձր, լծի տակ ճնշուած, թալանուած եւ ջարդուած են: Այդ ժողովուրդները պէտք ունին իրենց կեանքի եւ իրենց պատուի պաշտպանութեան:

«... Թուրք դեկավարները վարած են մակարոյժի կեանք, քրիստոնեայ արտադրողներին հաշուցն: ... Թուրքը բնաջինջ ընել կը ձգտէր այն քրիստոնեայ ազգը, որ կը փորձէր արդար եւ իրաւացի պահանջներ ներկայացնել: Ահա այդպէս է որ ահաւոր մեղումներն ու կոտորածները դարձած են ծրագրուած աւանդական քաղաքակրթութիւն՝ որուն դիմած են Սուլթաններն ամէն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց իշխանութեան տակ հեծող այս կամ այն քրիստոնեայ ժողովուրդին: ... Եւ բնական չէ՞ արդեօք, որ հայուն էական հոգն ու նպատակը դառնար՝ իր Ապագան իբր ազգ»:

Ապա մէջբերում կատարուած է Պերլինի ժողովի ճշգրտումէն... ապա կուչը ջարդերու հետեւանք կը նկատէ Յ Նահանգներու մէջ ապրող հայերու ջախջախիչ մեծամասնութիւն չկազմելու պարագան... բայց որոնք դարերէ ի վեր բնակուած են հայերով: Մեծ Հայքի 2/3ը հայեր են, մնացածը մօտ 800 հազար հոգի մահմեդականներ: ... Մեմք չեմք ուզեր որ այսօրուան ճնշողները (Թուրք) վազուան մնչուածները դառնան:

Ինչպէս Ներսէս Պատրիարքի, նոյնպէս Նուպար Փաշայի առաջին հոգն են եղել, պահպանել հաւասարակշռութիւնը Հայաստանի քրիստոնեաների եւ մահմեդականների միջեւ:

Ապա կուչը կուտայ Ներսէս Վարժապետեանի Նախագիծը Բարեկարգութիւններու անշուքեամբ 12 կէտերէ բաղկացած:

(Տես՝ «Պատմութիւն Ս.Դ.Հ.Կ.» 1963, Պէյրութ, Ա. հատոր, էջ 352-358):

«... Նուպար Փաշան կը գտնէ թէ անհրաժեշտ է կառավարիչներուն տալ աւելի ընդարձակ իշխանութիւն, պահանջելով հանդերձ վարչական խորհուրդի երկուութիւնը, որ ունի Ներսէս Պատրիարքի պահանջած երկուութիւնը»:

Ս. Դ. Հնչ. Կուս. է. Պատգմ. ժողովը Քէօսթէնճէի մէջ 1913 Սեպտ. 5ին, հիմնովին կը դնէր Իքթիսատի քարդի վտանգին դէմ ընդդիմամալու պարագան: 109ի վրայ 59 պատգամաւոր ներկայ էին:

Հոն է որ յստակ կերպով բանաձեւուած է Կուս. դիրքը Իքթիսատի հանդէպ: Ստորեւ առաջին մասը որոշումներուն: Լսենք.—

Նկատի ունենալով որ, 1908 Յունիս 10ի դիմադրական ապստամբութեան հետեւանքով մէջտեղ բերուած «Օսմանեան Սահմանադրութիւնը» կը խոստանար բոլոր քաղաքական կուսակցութիւններուն օրինական դոյուքեան ամէն պայմաններ տալ՝ իրենց սկզբունքներու իրականացումը հետապնդելու, ինչպէս նաեւ այն՝ որ կը յայտարարէր թէ Թուրքիոյ բոլոր բաղկացուցիչ ազգերը լիակատար իրաւունք պիտի ունենային իրենց ազգային դոյուքիւնը պահելու, զարգացնելու եւ յառաջդիմութեան ամէն միջոցներ ունենալու՝ զերծ պետական ամէն կաշկանդումներէ:

Նկատի ունենալով որ՝ 26 տարիներէ ի վեր յեղափոխական անընդհատ պայքար մղող հայ ազգը սպառման էր ենթարկուեր եւ կարօտ էր դէթ ժամանակաւոր հանդիստի՝ իր ուժերը վերակազմուերելու եւ կրկին նոր թափով երեւան գալու:

Նկատի ունենալով որ, եղած «Սահմանադրական խոստումները» որոշ աստիճանի հող կը ներկայացնէին, որով Կուսակցութիւնս կարող էր իր դադափարներուն ծաւալ տալ եւ այդպիսով, դէթ առժամապէս օգտուիլ տրուած օրինական պայմաններէն:

Կուսակցութեան Զ. Պատգմ. ժողովը որոշած էր որ Ս.Դ.Հ.Կ. «Սահմանադրական Թուրքիոյ» հանդէպ կենար օրինական հողին վերայ (լեկալ) եւ չհետապնդէր անջատողական քաղաքականութիւն ու այդպէսով յառաջ տանէր իր կուսակցական գործունէութիւնը:

Սակայն, տեսնելով որ՝ այս 4-5 տարուան ընթացքին «Օսմանեան Սահմանադրութեան» խոստումները մնացին յոկ բառեր, առանց իրական նշանակութեան եւ պետական օրէնքները կաշկանդիչ պայմաններ յառաջացուցին բոլոր քաղաքական կուսակցութեանց համար ընդհանրապէս եւ ձախակողմեան եւ ծայրագոյն ձախակողմեան դրօշ ունեցողներուն համար մասնաւորապէս,

Տեսնելով որ՝ Օսմանեան ամբողջ պետական կազմը եւ անոր պետական ամբողջ հասկացողութիւնը որոշապէս ուղղուած է ձուլելու բաղկացուցիչ ազգութիւնները, ու տեսնելով որ՝ տիրող կուսակցութիւնը անընդունակ հանդիսացաւ ստեղծելու նորազոյն պետութիւն մը,

Նկատելով նաեւ՝ որ Տաճկաստանի մէջ ներկայիս կը տիրէ սակաւակետութիւն մը, որուն ղեկավարիչ միակ ուժն է Իթթիհատ կուսակցութիւնը,

Որոշ ըլլալով՝ որ այդ կուս. հիմնական սկզբունքներն են պահել Թրքական քիւրդերէնը, թոյլ չտալ որ նորազոյն պետութիւնը ստեղծուի, ու անոր ակնյայտ դիտարարութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ոչ միայն ձուլել, այլ եւ ոչնչացնել, ի հարկին ԿՈՏՈՐԵԼ,

Անվիճելի համարելով որ՝ իշխանութիւնը իր ձեռքը պահող դասակարգը՝ իր հայակործան քաղաքականութիւնը անողորմ կերպով յառաջ կը տանի,

Տեսնելով որ՝ Հայ ժողովուրդը Օսմանեան ներքին քաղաքականութեան հետեւանքով քայքայման շէմին վրայ կեցած է,

Համոզուած ըլլալով որ՝ քաղաքական այնպիսի կուսակցութիւն մը՝ որպիսին է Ս. Գ. Հ. Կ. ը, Օսմանեան Պետութեան տուած ներկայ պայմաններով չի կրնար այլեւս իր որդեգրած գաղափարներու իրականացումը հետապնդել եւ հայ ազգի գլխուն կախուած մահաբեր սուրբ ետ մղել ու Թուրքիոյ մէջ տիրող դասակարգը տապալել՝ միշտ օրինական հողի վրայ կանգնելով,

«Ուստի Ս. Գ. Հ. Կ. է. Պատգմ. Ժողովը սրտէց —

«Յանուն պրոլետարական շահի, մարդկային ու աղբյւրին անձեռնմխելի իրաւունքներու՝ այսուհետեւ կանգնել միմիայն իր սկզբունքներէն թողնող ոչ-օրինական (իլլէկալ) պետի վրայ եւ այդպիսով մղել կուս. պայքարը՝ մինչեւ որ աւելի նպաստաւոր քաղաքական ու անտեսական պայմաններ ստեղծուին»:

է. Համապատասխան կ'որոշէ. — Պաշտպանել Ինքնավար Հայաստանի դադարաւոր, որպէս միակ միջոցը Հայաստանի մէջ ապրող թէ՛ հայ եւ թէ՛ միւս տարրերու հաշտ, խաղաղ, անվրդով զարգացմանը եւ յառաջդիմութեանը, համոզուած ըլլալով որ ատիկա այն անհրաժեշտ պայմանն է, որով հայ ազգը կրնայ իր աղբյւրին անհատական գոյութիւնը ապահովել՝ ներքին ու արտաքին սոսնձութիւններուն դէմ:

«Եւ որովհետեւ Թուրք տիրող ազգի եւ անոր ղեկավար դասու պատմական անընդունակութիւնը եւ անբարեացակամութիւնը այլեւս անվիճելի է, ինչպէս՝ որոշ է նաեւ արտաքին ուժերու յարաբերութիւնները ու քաղաքական ձգտումները, որոշեց պահել ԻԹԻՀԱՒԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ:

Կ'որոշէ — նկատի ունենալով որ Իթթիհատ վէ Թէրքերը կուս. ը իր մէջ կը մարմնացնէ քուրդ ազգայնականութիւնը իր բոլոր ստորագիւններով,

«Որ՝ ան կը հանդիսանայ թէ՛ քաղաքական կուսակցութիւններու եւ թէ մանաւանդ բաղկացուցիչ ազգութիւններու համար վրտանգաւոր ու վնասակար,

«Ս. Գ. Հնչ. կուս. է. Պատգմ. Ժողովը խստիւ կ'արգիլէ իր բոլոր Գործադիր Մարմիններուն որեւէ գործակցութիւն ունենալ անոր հետ եւ կ'որոշէ ամէն միջոցներով անոյոք պայքար մղել անոր դէմ գայն բոլորովին փշրելու, տապալելու համար»:

Կ'որոշէ — Բոլոր շրջանները պարտաւորեցնել ուժ տալու Տաճկահայաստանին, Տաճկահայ Դատին»: (Տես՝ մանրամասն «Պատմ. Ս. Գ. Հ. Կ.», 1963, Պէյրութ, Ա. հատոր, էջ 352-368):

Իթթիհատի եւ անոր քաղաքական հաշիւներու մասին ի՞նչ կը զրէր Հնչակեան օրկան «Երիտ. Հայաստան»ը, երբ ուրիշներ անոր հետ գործակցութիւնը կը նկատէին «կենսական» հայ ժողովուրդի փրկութեան համար, ուրանալով ազատագրական մեր պայքարը:

Լսենք. —

«Թրքական ղեկավար դասակարգը այսօր էլ կանգնած է նոյն ուղղութեան վրայ, ինչ որ էր երէկ: Սահմանադրական կատակերգութիւնը նոյն ձեւով է խաղացում: Փոփոխուած ոչինչ կայ Թուրքիայի չքնաղ երկնքի տակ: Հին փոթորիկները շարունակուած են գործադրուել եւ այժմ: Կանգուն է Սուլթանական եւ իսլամական բռնապետութիւնը, իսլ թափով առաջ է տարուած համալսմանը եւ համաքրքրութեան պրոպականդը: Պարլամենտը մի գործիք է տիրող դասակարգի ներկայացուցիչ՝ «Իթթիհատի» ձեռքում: Ընդդիմադիր հոսանքները չեն կարող ազատորէն արտայայտուել, Ռամկավարական ազատութիւնները սեղմուած են եւ կաշկանդուած: Սպառնալիքը, սուրբը, կախաղանը միահեծան իշխում են ազատ խօսքի ու գրչի վրայ:

«Ի՞նչ է ԹԵԼԱԳՐՈՒՄ ՄԵՁ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. — Ամբողջ մի տարի դիւանադիտութիւնը խօսում, ճառում էր Հայկական Դատի մասին: Ամիսներ շարունակ Բարենորոգումների Նախագծեր էին մշակում եւ բանակցութիւններ մղում Բարձրագոյն Դրան հետ: Ի՞նչի յանդէպն այդ բոլորը. «Լեռը երկնց եւ ծնաւ մի մկնիկ»՝ Ռուսո-Գերմանական: Մեզ՝ Ս. Գ. Հնչակեաններին համար նախապէս յայտնի էր թէ՛ արդիւնքը դրանից աւելի չպիտի լինէր: Փաստը, սակայն, դալիս է մի անգամ էլ ասելու պարզամիտ «ազգասէր»ներին, որ Եւրոպական դիւանադիտութիւնը առաջնորդում է լուկ իր կապիտալիստական շահերով, թէ՛ նա մտահոգուում է միայն իր տնտեսական քափամցողութեան սահմանները ընդարձակելու խնդրով: Ներկայ նախագիծն էլ, հետեւաբար, չէր կարող փնտրուած սպեղանին լինել:

«Հայկական Հարցը մի քայլ առաջ չի դնաց Ռուսո-Գերմանական նախագիծով եւ մենք այսօր էլ զսնուում ենք նոյն վտանգների, նոր փոթորիկների նախօրեակին:

«Այսօր երբ երէկի կրկնութիւնն է, զիջումների եւ երկնարանքի քաղաքականութիւնը դադարում է իմաստութիւն լինելուց: Հայ ճնշումը եւ հարստահարուած մասսան պէտք է որոշակի դիրք բռնի, նա պէտք է ցոյց տայ, որ ինքը ցանկանում է ապրել եւ իր տեղը գրաւել արկղակի տակ: Իսկ դրա համար, նա պէտք է մի անգամ ընդմիջտ պատէ յանցաւոր անտարրերութեան այն բողբուէ միացած իր շահերի ճշմարիտ ախտեան՝ Ս. Գ. Հնչ. կուս. եւս, հետապնդել իր այն ուղին, որ Արեւելեան Խնդրի պատմութիւնն է գծել»: (Մայիս 10, 1914, րաջառիկ «Երիտ. Հայաստան»):

«Ի՞նչ ՊԻՏԻ ԱՆԻ ՀՆՁԱԿԵԱՆՈՒԹԻՒՆԸ.—

«1908 թուից մինչև այսօր անցել են ուրիշ հինգ տարիներ: Երիտ. Թուրքերի կառավարութիւնը չարգարացրեց այն ոսկէ յոյսերը որ շատեր զբաժ էին նրա վրայ: Տաճկաստանի բաղկացուցիչ տարրերը մասնաւորապէս, եւ Տաճկաստանի ժողովուրդն ընդհանրապէս ո՛չ միայն մաղաչափ անգամ փոփոխութեան չենթարկուեցին իրենց բարեկամութեամբ, այլ այնպիսի լարիւրինթոսի մէջ ինկան, որի առաջ կը նսեմանան Ապտիւլ Համիտի գործած արհաւիրքները եւ սարսափները: Բանի որ ներքին եւ արտաքին դաւադրութիւնները, շարունակուած են անվերջ շրջանառութիւններով, Հայ յեղափոխութեանը դաշոյնը պատրաստ պահելու է իր պատեանում առանց մի կողմ նետելու, պատեհ առիթին շողացնելու նպատակով...:

«Մենք չենք հաւատում ներկայումս «շնորհուած» Բարենորոգումների Մրադրին եւ նրա գործադրութեան եւ ո՛չ էլ զրանից սպասուելիք այն բարեփոխին, որոնց վրայ յոյս են դրել թէ՛ ներսը եւ թէ՛ դուրսը: Մեր միմիմա (նուազագոյն) պահանջն է Ինթիլ-ԱՎՍՐ ՀԱՅԱՍՏԱՆ, որ ԵԹԷ ԱՅՍՕՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՁԻ ԴԱՌՆԱՅ, ՎԱՂԸ ԴԱՌՆԱԼՈՒ Է ԱՆՊԱՅՄԱՆ: (Բացառիկ «Երիտասարդ Հայաստան»ի, 1914, էջ 10):

Ընկ. Ս. Սապահ Գիւլեան իր Բ. ճամբորդութիւնը որպէս Հընչակեան գործիչ կը կատարէ կրկին Փոքր Հայք, 12 Հոկտ. 1911–1912 Յունուար՝ չորս ամիս: Այս ճամբորդութիւնները մեծապէս կը լուսարանեն մեզ այն իմաստով, որ Իթթիհատի ղեկավարը, շրջաններու մէջ անոր քրքրեցնող աշխատանքները, ոչ-թուրքերու հանդէպ ցեղամոլ քաղաքականութիւնը կը դրսևորուի այս առթիւ:

Ընկ. Սապահ 1911 Հոկտ. կը հասնի Կէմէրէկ, կը խօսի, Կանցի Կեսարիա, Յունիս 11ին հոն մէջընթաց կը կատարէ Փարիզի Իթթիհատի «Մէշվերէք» Թերթէն, Ահմէտ Ռիզայի խօսքերէն... «Ապա պատմեցի Պալքէտէրի Իքքիտական Միլիթարարմի հետ ունեցած տեսակցութիւնս, անոր խօսքը. «Թուրքիոյ մէջ ժայռեր կան, մենք այդ ժայռերը պիտի փշրենք փոշիացնենք, մի ընդհանուր շաղախ կազմենք ապա՝ դրանով մեր տունը շինենք»:

(Տես՝ «Փոքր Հայքի Յիշատակներ», 1956, Պէյրութ, Բ. հատոր, մատենաշար «Արարատ», Թիւ 21, Ս. Սապահ Գիւլեան, էջ 76):

ԹԱԼԱՍ — Նիւթ՝ Ս.Գ.Հ.Կ. քաղաքական եւ տնտեսական հայեացքները, Իթթիհատի ղեկավար, անոր «Սահմանադրութեան էութիւնը եւ ինքնապաշտպանութեան միջոցներու զարգացման անհրաժեշտութիւնը»: Հետաքրքրական է Դաշակցական անկեղծ եւ նուիրեալ գործիչ Գէորգ Վերայեանի մասին ընկ. Սապահի վկայութիւնը.

«Մի կրակոտ Գաշակցական, որ չէր կարող հանդուրժել իրենց կուս.ը համաձայնութիւնը Իթթիհատի հետ, ուստի որոշեց ուղղակի Կ. Պոլիս երթալ եւ իր շրջանի (Կեսարիա) ընկերների կողմից՝ բողոք ներկայացնել իրենց վերին եւ Պատասխանատու Մարմիններին, ու պահանջել՝ որ խզում յայտարարուի: Նա իմ կատարեալ համամտութիւնս ունեցաւ»:

ԷՏԻՒՐԱ — Ուր կը շեշտուի հասարակական գործերու յաջողութեան համար ընդհանուր համերաշխութեան անհրաժեշտութիւնը: Թոմարգա ապա կ'վերէկ-Ֆէնէսէ՝ ուր դասախօսութեան կը բացատրուի Իթթիհատի ազգայնական քաղաքականութիւնը՝ ինչ կը վերաբերի ոչ-թուրքերուն: Զոմախլու, Օվա Զիֆլիկ, Արարիւպո, Էսկի Շէիիր Կայցելէ, ուր կայ Հնչակեան ակումբ: Դասախօսութիւնը՝ օրուան հրատապ հարցերուն շուրջ:

Իբր եզրակացութիւն — 1911 ... Հայ ժողովուրդը իր խանդավառութեան օրերէն սթափուած է եւ տակաւ սկսած է վերագնահատել «Սահմանադրութեան

կութիւնն ու Իթթիհատական քաղաքականութեան միտումները: «Ս. Գ. Հ. Կ.ը ձգտում է արթնցնել ժողովուրդին եւ ինքնապաշտպանութեան մղել, Իթթիհատի այդ օրերի ղեկը՝ դեռ 1900ից արտացոլացել է «Հնչակ»ի մէջ: Մեր գրքոյն «Երիտ. Թուրքիա»ն էլ իր որոշ ազդեցութիւնն էր ունեցել ամէն շրջանների մէջ»:

«... Վաղուայ անստուգութիւնն ու անպահանջութիւնը որքան որ համատարած է, բայց հայ «աղա», «բոջ», «Էֆլեմի», դասերը դեռ իրենց քրքրախաղակ զգացումներից բոլորովին վար չեն իջել. թէև տառանդական գիրքի մէջ են մտել: Հայ զելուացին, հայ աշխատասիրը շատ որոշ կերպով, տեսնում է բանագրաման եւ քայքայման այն բրոցներ, որ հետապնդում է Իթթիհատը, ուստի իր ուժերի սահմանների մէջ զանգ է քափում կազմակերպուելու եւ զինուելու՝ ամեն պատահականութեանց հանդէպ:

«... Պայքարը խիտ է. Իթթիհատը միջոց չի ինչպիսիք իր ճիրանները երկարացնելու եւ ամէն տեղ զգալի դարձնելու իր մութ ձգտումները»:

Ընկեր Ս. Սապահ Գիւլեանի «Փոքր Հայքի Յիշատակներ» Գ. հատորը Հնչ. կուս. Իթթիհատի վտանգին դէմ հայկական դատանիները յայտարարելու եւ ինքնապաշտպանութեան մղելու տեսակէտէն հայ քաղաքական մտքի արքունութեան իրափաստն է անտարակոյս: Գ. հատորը կ'ենդգրկէ 1911–1912ի Յունուարի շրջանի իր շրջան գործիչի վկայութիւնները, որոնցմէ միայն փոքր հատուածներ պիտի արտադրենք: Իրեն կ'ընկերանայ Վարդ Վարդիկեան՝ Տրապիզոնի Հնչակեան գործիչը՝ որ նշանակուած էր Պրուսայի շրջանի գործիչ, ապա Սև ծովու շրջանի գործիչ: Սապահ Գիւլեան կ'այցելէ Սամսոն, Զարշամպա, Թիբլի: Այս ատթիւ տարուած է նշանաւոր Մինաս Օղլուի կեանքը՝ որ շրջանին մէջ տարիներ ամբողջ գինեակ սապատակային կոխներ մղած է Սուլթան Համիտի բռնակալ ոչխորին դէմ (էջ 242–280): Կ'անցնի Մարգուան, Երբոլիա (Թոգատ): Այս ատթիւ կը խօսուի Շմաւոնի, Յարութիւն Թումայեանի, խմբապետ Նշան Մերլեանի, Փեշիվանի եւ այլ հերոսներու մասին: Այդ կ'անցնի Ամասիա, Մարգուան, Սամսոն, Կիրատոն, Օրտու: Այս ատթիւ կը խօսի Գէորգ Տէրաշեանի (Սև Հայկ) Օրտուի շրջանի գործիչի մասին, նաև Ընկ. Սեղբակ Գալաշեանի մասին որ Պրուսայի շրջանի գործիչ եղած է: Սև Հայկը գործիչ եղած էր Անապայի (Հիւս. կովկաս) Միմֆուրուրի, Օտեսայի, Եկեղերիտուարի մեր մասնաճիւղերու շրջան կազմակերպիչը:

Այդ Սապահ Գիւլեան կ'այցելէ Պալք-Քէսեր, Էրբաս, Թոգատ, Արբաստիա: Նոյն հետևողական ոգիով ընկեր Սապահ կը խօսի եւ կը յայտարարէ այդ շրջաններու հայութիւնը եւ կ'ըզրակացնէ. «Յ անգամ նամարդեցի փոքր Հայք, վերջին եզրակացութիւնս. «ԿԱՄ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՍՊԱՆՆԵՆՔ ԻՐԻԹԻՀԱՏՐ, կամ ԻԹԻԻՀԱՏՆ Է ՈՐ ՄԵՆՔ ՊԻՏԻ ՍՊԱՆՆԵՆՔ...»: ... Ինչ ալ պատահի, վաղ քէ ոչ Իթթիհատը իր արմատական հայացինց քաղաքականութիւնը ձեռք պիտի առնէ, ուստի ո՛չ միայն պէտք էր պատրաստուիլ, այլ Իթթիհատին սպաննելը՝ քաղաքական առաջին եւ անմիջական ձգտումը պիտի ըլլար՝ ժամանակի ոգին ու պատանցը հասկցող հայ գործիչի համար» (էջ 431):

«... Եւ այլևս բոլոր հասեր կը, որ Թուրքիան թողնէի, անցնէի արտասահման՝ գործնական միջոցների վրայ խորհելու, միւս բնկերակիցների հետ: (Քէսոթէնէի Դրդ Հնչ. Համապումարը):

«Հնչակ»ի մէջ գրեցի. «Իթթիհատը պատրաստուած, սցի ի բոլին աշխատում է հայկական մեծ կոտորած սարքել — եւ անա երկնորանին է — կամ մենք Իթթիհատին պիտի սպաննենք օր առօր, եւ կամ նա՛ է, որ պիտի յայտնի իր Սև ծրագիրը գործադրել. եւ այս անգամ, պետք է վարուել յեղափոխականով»:

«Յետագայ մեր կեանքը ցոյց տուեց քէ Հնչակեան տեսութիւնն ու ուղին որքան նշգրիտ ու արդար էր: (էջ 431):

Ընկ. Ս. Սապահ Գիւլեան 22 մասնան դատապարտուած Հնչակեաններին քիւ մէկն էր: Մեծ բարերախոսութեամբ մը 20երու ձերբակալութեանն առաջ կրցած էր բնկերթ մը (Պոլսոսան) օդնութեամբ Գահիրէ ապաստանիլ:

ԻԹԻԼԱՖԻ ԴԻՐՔԸ ԻԹԹԻՀԱՏԻ ԴԷՄ

Ընկ. Գուրգլեն Թաճաղեան 1913ին հարց կուտայ թէ Իթթի-հատի դիրքը ի՞նչ է Իթիլաֆի նկատմամբ. Իթիլաֆի ղեկավար Սա-տըղ Պէյ կը պատասխանէ .—

«Մեզի համակիր անհատները, պաշտօնեաները մօտ 30 հազար հոգի ասդին-անդին ցրուեցին Իթթիհատականները, իսկ հարիւրաւոր Իթիլաֆականներ Սելանիկի աֆտրալայրը կը տառապին :

«Այս պայմաններուն տակ որոշած ենք չմասնակցիլ ընտրու-թիւններուն, քերթեր չունինք, Փարիզի մէջ ֆրանսերէն «Մէշրուլէ-թ»ը ունինք :

— *Ի՞նչ հիման վրայ է Ձեր դործակցութիւնը Ս.Դ.Հ.Կ.ի հետ, հարցումին՝*

— Մենք Ս.Դ. Հնչ. Կ.ի հետ պիտի աշխատինք որ Սահմա-նադրական կարգեր հաստատուին եւ այս ո՛չ քէ յօգուտ քուրֆե-րուն, այլ քուրֆիարնակ ժողովուրդներուն :

— *Ի՞նչ հիման վրայ պիտի կատարուին երեսփոխանական ընտ-րութիւններ հարցումին՝*

— Երեսփոխանական ընտրութիւնները պիտի կատարուին ազ-գային համեմատական ներկայացուցչութեան հիման վրայ, կը պա-տասխանէ Իթիլաֆի պարագլուխը :

1915 Ապրիլ 20ին «Երիտասարդ Հայաստան»ն մէջ Ընկ. Մնա-ցականեան հարց կուտայ Դաշնակցութեան .—

«... Ինչո՞ւ ձեր հաւատացեալ չէ՞քերը՝ վրամեանն ու Փափազ-եանը (Կոմս) բազմած են Օսմանեան բարձրմենտում եւ պատերազ-մական վարկերն են ջուլարկում...» :

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

«Կոհակ» Պոլսոյ Հնչակեան թերթի 1912ի 438րդ էջին մէջ «Ընտրական Պայքարը» խորագրին ներքեւ Ընկ. Յ. Բարեջանեան կը գրէ Դաշնակցական-Իթթիհատ միացեալ ցանկով ընտրութեան իջած պլոքի մասին .—

«... Հ. Յ. Դ.ն Իթթիհատի հետ համագործակցութեան ակ-տովը ոչ միայն ստուեր ձգեց իր անցեալին վրայ, այլ ամբողջ հայ յեղափոխութեան, նոյնիսկ հայ ժողովուրդի պատմական ճիգին, ձգտ-տումներուն վրայ զրաւ անեղծելի արատը, որ չեմ գիտեր թէ կա-րելի՞ է սրբել եւ մաքրուիլ անկէ : Ետեւ կամ առաջ ոեւէ քայլով, կանուխ կամ ուշացած խոստովանութեամբ կամ անզօր եւ անշեղ բո-ղոքով մը եւ տոնքիչօթական սպառնալիքով մը» :

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐՈՒ ԿՈՁԷՆ ՀԱՏՈՒԱԾ ՄԸ

Վերակազմեալ Հնչակեան Կուս.ը «անջատողական ոգի չկարե-նալով ունենալ պիտի հրաժարի միջազգային դաշնագրերով Հայոց երաշխաւորած իրաւունքներէն : Տանկահայաստանը Օսմանեան կայսրութեան անբաժանելի մասը նկատելով հանդերձ, մենք, պիտի աշխատինք որ տակաւ հայկական գաւառները վայելեն տեղական ինքնավարութիւն, վարչական, կրթական ու օրէնսդրական գործե-րու մէջ» :

— *Յայտարարութիւնը ղէմ է Համիտի բռնատիրութեան վերա-դարձին, կողմնակից զին. ծառայութեան, Համիտիկ զուեզբուն ջնջումին... անկաշտո հայ երեսփոխաններու ընտրութեան :*

Ստորագրութիւն՝

Վերակազմ. Հնչ. Կուս. Կ. Պոլսոյ Վարչութիւն

(«Չայն Հայրենեաց», 23 Հոկտ. 1908, Պոլիս, էջ 5) :

Ծրագրէն՝

«Մեր Կուս.ը (Վերակազմ. Հնչակեան) իր տասնեակ տարի-ներու զոյսութեան ընթացքին, իր հիմնական ծրագրէն միշտ ի բաց թողած ըլլալով ընկերավարական (Սոցիալիզմ), սոսկապարական վարդապետութիւնները (տէմսքրաթիք) կամ նմանօրինակ միջազգայ-ին աշխարհայեցողութիւնները, այսուհետեւ ալ պիտի շարունակէ գործել միեւնոյն հիման վրայ, եւ իրրեւ զուտ ազգային քաղք. Կուս.» : (Նոյն, էջ 4) :

Առանց մեկնարանութեան :

ՊՈԼՍՈՅ ՀՆՁ. ՈՒՍԱՆՈՂԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վարիչ Մարմինը զազա-փարային բրորականոր հասարակական խաւերուն, մանաւանդ նոր սերունդին մէջ տարածելու համար, 1910ին կը հիմնէ Ուսանողական Միութիւնը : Կարճ տանուան մէջ միութեան շուրջը կը հաւաքուին Պոլսոյ նոր սերունդին մարքսիստական զազափարարանութեան հե-տեւող երիտասարդներէն բաւական թիւով ուսանողներ, որոնց Զան-քերով կը հիմնուի միութեան օրկան՝ ԿԱՅԾը :

ԿԱՅԾը, որպէս մարքսիստական օրկան, աննախընթաց զեր մը ստանձնած էր, որը կը մնայ Եզական ոչ միայն Հայութեան, այլ նաեւ ամբողջ Մերձասոր Արեւելքի ժողովուրդներու կեանքին մէջ :

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուրատ Պոյաճեան կը մերժէ պատասխանել Կեսարիոյ կառա-վարիչ Ջէքիի հարցումներուն :

«... Երեք օր շարունակ կը կրկնուի թրքավարի հարցաքննութեան Եզանա-կը, բայց Մուրատ անզրուելի կը մնայ իր պնդումին մէջ, թէ ո՛չ մէկ բացառ-րութիւն կրնայ տալ բռնութեան տակ : Ան անտրտունջ կը կրկ բոլոր տանջանքները, մինչեւ որ ջախջախուած, շարժելու անկարող վիճակի մէջ, կը զրկուի բանտին հիւանդանոցը, զարմանուելու համար : Պոլիս ճանչցած էի զինք, հարցուցի :

«Ի՞նչպէս էր Պոլսահայուն հոգեվիճակը ձեր մեկնումի պահուն :

«Հեզնանքով կրես նայեցալ :

« — Հոգեվիճակ... Ինչե՛ր ալ կը փնտռես... Երկու ամիս առաջ միտիւրիէթը (ոստիկանութիւնը) յայտարարութիւն մը հանեց, թէ դեռ 25 հայ զոր-ծակալներու պէտք ունի եւ 150 հայեր ներկայացան իրրեւ թեկնածու :

«Ահա ցայտուն պատկերը Պոլսոյ հայ ժողովրդին հոգեզրուժեան :

«... 150 հայ երիտասարդներ ջարդի մեկնած հայերէն ետք անձնուէր ծառայութիւն կ'առաջարկեն հայաջիմջ կառավարութեան... »: (Էջ 261-2):

«Ջարդերուն պատմա՞րը — Նենդամիտ թուրքին բարբարոսութիւնը, կեղծիքն ու դաղտնապահութիւնը մէկ կողմէն, հայ ժողովրդին հաւատարմութիւնն ու անկեղծութիւնը միւս կողմէն, մաւնաւանդ նուագագոյն վնասով մը փոթորկահար կամուրջէն անցնելու հայկական հաշուագիտութիւնը դիւրացուցին մեր ժամանակակից պատմութեան յաւէտ անմոռանալի եւ անգարմանելիօրէն ազիտաւոր այդ թուականին ստեղծումը »:

(Տես՝ «Գորշ Գայլը Կատար էր», (1915), Վկայութիւններ եւ սոցալոգիկութիւններ, Գարրիէլ Թագուորեան, 1953, Գահիրէ, էջ 355):

ԻԹԹԻՀԱՏԻ ԴԷՄ ԹՈՒՐԿ ԵՒ ՀԱՅ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ

«Օսմանեան Կայսրութեան ձակատագիրը», հատորին Ա. մասը «Երիտասարդ թուրքերը Պատերազմէն Առաջ» (128 էջ, Ա. Մանտէլլթայմ), մանրամասնութիւններ կուտայ Իթթիհատի կազմաւորման, ծրագիրներուն, քաղաքական եւ տնտեսական մարզէ ներս տարած աշխատանքներուն, ներքին եւ արտաքին քաղաքականութեան մասին: Թուրք պատմաբանի մը կարծիքով թէ եւ հայկական ծագում ունի կը կարծուի, սակայն Անտրէ Մանտէլլթայմ ըլլալով Միջագոյն Իրաւագիտութեան Տոքթ. Բեթրոկրատի համալսարանէն, անդամ Միջագոյն Օրէնքի Հաստատութեան, եւ մանաւանդ Ա. Թարգման Ռուսիոյ Պոլսոյ դեսպանատան, ո՛չ միայն իրազեկ է դէպքերուն եւ դէմքերուն, այլ ներքին անցուղարձերուն ժամանակի թուրքիոյ քաղաքական հոսանքներուն: 1919ին Միք. Շամտաճեան թրգմ. է անոր գիրքը եւ Պոլիս սոցալաճ է վերի խորագրով:

«... Մենք ուրախութեամբ ընդունեցինք 1908ի Երիտ. Թուրք Յեղի. ծագող արեւը՝ որ յոյս կը ներշնչէր: Եւ Արեւմուտքը յոյս ունէր որ նոր թուրքեան թումբ պիտի կանգնէր Համադերման ծրագիրներուն, որոնք «ամէն օր աւելի մտահոգիչ յստակութեամբ կը գծուէին: Երիտ. Թուրքերը դարձան ի վերջոյ ժաղոպէսներ... որոնց մօտ «քթու ազգամուլութիւն մը եւ մարտական համիսլամութիւն մը այնքան աւելի ընդլայնեցան որքան ան որեւէ կրօնական համոզումի մը վրայ չէր հիմնուեր, անցան յեղափոխութեան մեծ սկզբունքներուն տեղը»:

Մանտէլլթայմ կը նշէ, որ Երիտ. Թուրքերը սկիզբը անկղծ էին եւ իսկուպէս կը ձգտէին ազատութեան եւ հաւասարութեան, սակայն անոնք չէին հասկնար, որ «Կայսրութեան ոչ-թուրք հիմն գեղերէն որեւէ մէկը չպիտի հաւանէր անգոյն Օսմանցիականութեան մը մէջ ձուլուելու, եւ թէ մարդուն իրաւանց ճանաչողութեանը մէջ կայ... իր ազգայնութեան ոգիին ազատ գորգացումը: Մինչեւ 31 Մարտի Յետաջրական Շարժումը, անոնք հաւատարիմ մնացին... անկէ ետք փոխուեցան: Անոնք տղիտութեան եւ թուրքին սահմանափակութեան հետ դէմ դիմաց պալով՝ փոխանակ Շէվքէթ Փաշայի յաղթանակէն օգտուելու... «անոնք իրաւաբեցան իրենց բոլոր իտէլաներէն, եւ փոխանակ տղիտութեանէն զուրս յետք թուրք ժողովուրդը, որոշեցին շոյիլ անոր ամենէն ամարգ բնագոյնը, կարենալ իրենց ուղածին պէս գայն շահագործելու համար: Ինչ որ այդ ժողովուրդը եղած փոփոխութեան մէջ շահեցաւ, փոխանակ մէկի բազմաքիւ Ապտիլ Համիտներ ունենալը եղաւ: Երէկուան յեղափոխականները բախտախնդիրներ դարձան»:

«... Գերմանեան կը շոյէր անոնց զազտի փոտամտութիւնները եւ կը քաջալերէր անոնց առհաւական ընազդները: Կը մղէր զանոնք անգործանելի ծայրայն-զուժեաններու... »:

... «Ահարը» Կուս. 1908ին հրատարակ իջաւ Իթթիհատի դէմ, անոր մէջ կային յոյներ եւ հայեր ալ: Անոնք աւելի լայնախոհ եւ աւելի հանդուրժող ծրագիր ունէին ոչ-թուրքերու նկատմամբ:

Հիւսէյն ճահիտ «Թանին»ի մէջ 25 Հոկտ. 1908ին կը յայտնէր թէ «ամէն բանէ առաջ քուրք ազգն էր եւ պիտի մնար տիրող ազգը» (Միլլէթի Հաքէէմ): Թուրքիոյ մէջ Ա. բնորութեան (1908), Իթթիհատը լայնախոհ էր ոչ-թուրքերու նկատմամբ, սակայն կարծր կեցուածք որդեգրեց թուրք հակա-Իթթիհատականներուն նկատմամբ: Կոմիտէի անդամ Երեսփոխանները երդումով հրահանգի ենթակայ էին: «Անոնք նոյնիսկ չէին կրնար քուրալ Կուս.ը առանց վտանգումի ենթարկուելու» ըսած է Պէաէտտին Շաքիր:

Մուրեանդութիւնը այնքան զօրաւոր էր կրօնի հանդէպ, որ երբ Երիտ. Թուրքերը իրենց կրօններուն կամ քուրքերուն հետ կ'երթային, Շէքրի պաշտպանները կը յարձակէին անոնց վրայ եւ կը խոչտանդէին զանոնք: (էջ 48):

Նոր Սահմանադրութեամբ՝ Սուլթանը միայն վարչապետը եւ Շէյխ իւլ Իսլամը կրնայ անուանել: Միւս նախարարները վարչապետը կը նշանակէ: Մերակոյտը եւ Խորհրդարանը առանց Սուլթանի հրահանգին ալ նստաջրջանի գումարումներ կրնայ ունենայ:

1910էն սկսեալ նոր ուժի մի դէմ նոր յարձակում փորձուեցաւ: Մերակուտական Տամատ Յէրիտ Փաշան նոր օրինազծով մը կը պահանջէր. «300 միլիոն խորամներու Խալիֆան, ծնած էր ոչ թէ հաստատելու, այլ հրամայելու: Ազգային պետութեան տեսութիւնը, ըստ անոր, քայքայման կ'առաջնորդէր պետութիւնը»:

Շէյխ իւլ Իսլամ Մուսա Քեաղիմ կրցաւ իր Ելոյթներով շէյքաքանել Տամատի ծրագիրը յայտնելով թէ «Ազգային վեհապետութիւնը կը բխէր թէ՛ Գուրանէն եւ թէ՛ նոյն ինքն Մարգարէի օրինակէն, որ միշտ օրէնքին հնազանդած էր: «Երիտ. Թուրքերը տալաւ դարձան Համիտի տեսակէտի Համիսլամներ... »: (էջ 56):

Երևո՝ Թուրքերը գէպի Շէրի շրջափոխութիւնը, յառաջ բերաւ վերադարձ մը գէպի Համիտեան քաղաքականութիւն, հանդէպ քրիստոնեաներուն եւ ընդհանրապէս ոչ-թուրքերուն հանդէպ:

1910 Յունիս 19ի կանոնադրով բոլոր մասնաւոր նախադրարանները կը թուական նախ վերահսկողութեան կ'ենթարկուէր: Քննիչները մերժեցին կրօն, իշխանութիւնը ճանչնալ իր միջնորդ կը թ. նախարարութեան եւ Քրիստոնեայ դպրոցներու դատարարներուն միջև: Վէճ կառավարութեան եւ Պատրիարքարաններու միջև:—

1869ի օրէնքի պէտ. օժանդակութիւնը ջնջուեցաւ, նոր օրէնքը՝ ուսուցիչները կը բռնադատէր գինուորութեան:

«Երևո՝ Թուրքերը չտեսան վտանգը հանրային կը թուութեան եւ դատարանին Շէրիի օրէնքներուն վտանգելուն: Եւ հարկ է կորովամտութեան այս պակասին մէջ տեսնել զյխաւոր պատճառը իրենց անկումին»: (Էջ 64):

Բնոյցիմադրութիւնը... «Ահարար»ներուն տեղը զբաւեցին «Հիւրիէթ վէ Իթիլաֆ» եւ Ժողովրդական կուսակցութիւնները:

Իթիլաֆի հակառակորդներուն ձերբակալուելու պարագաները կը շատնային: 1910ին լրացող Սամիմ սպաննուեցաւ Իթիլաֆի թելադրանքով: 1910ին Իթիլաֆի գէմ դաւադրութիւն մը երևան եկաւ: Կոմիտէն լուսութեան մէջ իր վրէժը լուծեց: 1911ի սկիզբը Թալատթ հրաժարեցաւ Կոմիտէի հրահանգով: 1911 Ապրիլին Իթիլաֆի ներքին տաղանայ անցուց, խորհրդարանական հատուածին անդամներէն մեծ մասը Հոճա Մէճմիտի առաջնորդութեամբ կազմեցին «Տարակարծիքներու խմբակցութիւն», նոր պլոք մը («Հըզպ ձետիտ») անունին տակ, որ 10 կէտերէ բաղկացած նոր ծրագիր մը հրատարակեց: Անոնց անորոշ տեսակէտներ ունէին՝ բայց պայքար յայտարարած էին Մասոններու դէմ... նաեւ Իթիլաֆի սակաւագետական ձգտումներուն դէմ, նոյնպէս պէտք է արդիւնէր երեսփոխաններուն մենաշնորհներով կամ ուրիշ գործերով զբաղուիլ...:

Շարժումը վտանգաւոր էր, Իթիլաֆի 10 կէտերն ալ ընդունեց, սակայն Համադումարին ձղեց զայն վաւերացնելու դործը... «Տարակարծիքներու Շարժումը» մասամբ ներշնչուած էր զընդպետ Սատըղ Պէյի կողմէ, որ մէկն էր Ե. Թուրքերու յեղափոխութեան գլխաւոր գործիչներէն... Ան հրատարակեց իր սեփական ծրագիրը, որ կը նշէր թէ՛ «Կոմիտէն բնական պայմաններու մէջ պէտք է աճէր, որպէսզի բոլոր Օսմանցիներուն ամենէն զօրաւոր կազմակերպութիւնը դառնար, առանց ցեղի ու կրօնի խտրութեան: Կոմիտէն պէտք է ձերբազատուի «պալանի կառավարութեան» նկարագիրը ունենայլ... Ան կը պայքարի նաեւ Մասոնականութեան դէմ կամ աւելի ճիշդ քաղաքականութեան մէջ թափանցելուն: Բանակին իրաւունքն է պաշտպանել Սահմանադրութիւնը, եւ ո՛չ թէ անձուկ շրջանակի մը, քաղաքական կործիքները: Սպաները պարտաւոր են ո՛չ քաղաքականութեամբ զբաղուիլ, ո՛չ ալ Կոմիտէներու անդամ ըլլալ... Իթիլաֆի երկրին բովանդակ յեղափոխական ուժին արտայայտելը չէ: Նոր Թուրքիան ստեղծուած է... խոնարհ եւ համեստ քաղաքացիներու համանման ջանքերով: Օսմանցիութեան զանազան տարրե-

րու միութիւնը, չպիտի կրնայ այս կամ այն անհատներու շուրջը հաւաքուիլ: Այսու հանդերձ, պէտք չկայ կուրորէն ենթարկուիլ «ամբոխին արամբարանութեան», զայն ազգային վեհապետութեան տեղը դնելով, որովհետեւ ամբոխին մոլորանդութեան ենթարկուիլը երկիրը պիտի տանէր կործանումի:

Վերջացնելով, Սատըղ Պէյ, գայլույթով կը բողոքէ ամէն անոնց դէմ, որոնք կ'ամբաստանեն զինք, թէ յետաշրջականներուն գործիք եղած է եւ կը յիշեցնէ իր յեղափոխական անցեալը:

Իթիլաֆի երեսասարգ զննողները հանգստեան կուչեց: Սատըղ այն ատեն շատ գործունեայ պայքարի անցաւ գաւառի մէջ, բնդգէմ Մասոններու եւ Իթիլաֆի Կոմիտէի պետերուն դէմ:

Անոնց մէջ ընդդիմադիրներուն համար ամենէն աւելի առումներն էին Թալատթ Պէյ որ Ն. Գ. Նախկէն հրաժարելէ ետք, Իթիլաֆի խորհրդարանական հատուածի նախագահութեան ենթարկուած էր: Նոյնպէս առում էին Ելիմտահան Նախարար՝ ձաւիտ, Հիւսէյն ձահիտ՝ «Թանին» խմբադրուեցաւ, Պապան Չատէ Իսմայիլ Հազըր Պէյ՝ կը թակահար նախարարը... Իթիլաֆի Կոմիտէն նոր գործերուն մը ըրած էր Նախագահներով Թալատթ, ձաւիտ, եւ Պապան Չատէ Իսմայիլ Հազըր: Իթիլաֆի սպաննել տուաւ 1911 Մայիս 24ին բնոյցիմադրի երրորդ հրապարակագիրը՝ Չէքի Պէյը, որ զննողներ Սատըղի բարեկամն էր:

Թուրք-Իտալական պատերազմը աւելց Հազըր Փաշայի դահլիճը, բայց վերջ չըրաւ Իթիլաֆի ուժիմին: Սաիտ Փաշա նոր դահլիճը կազմեց: Կուս. ներքին պայքարը շարունակուեցաւ: Սուլթանին խորհրդարանը լուծելու եւ շրջելու կարենալու իրաւունքի հարցը նոր վեճերու գուռ բացաւ:

Այդ վեճերու հետեանքով 18 Յունուար 1912ին, Ա. խորհրդարանը լուծուեցաւ: Նոր ընտրութիւն՝ 1912ի 19 Ապրիլին եւ որ վաւերացուց Սուլթանի խորհրդարանը լուծելու իրաւունքը: Նոր սպաներ Ազգիմ Փրիլիչնիքը («Սալաթարանը Միլլէթ») անունին տակ միութիւն մը ստեղծեցին: Անոնք կը պնդէին որ Օսմ. Կայսրութիւնը խորխորատ կը դիմէ, որուն մտտեցած էր արդէն Ապրիլի Համիտի օրով: Սահմանադրութիւնը չէ ծառայած իր նպատակին, Երեսփոխաններուն նկատմամբ, ինչ որ տեսնուեցաւ Լիպիոյ պատերազմի ատեն: Իրեմն կոչ կ'ըլլար զինուորականներուն քաղաքականութենէ հեռու մնալ: Սահմ. իրաւունքները քմահաճօրէն եւ յանուն անձնական շահերու բռնաբարուած են, ուստի կը պահանջուի վտանգելիներէ կազմուած Դահլիճ, որ նոյնպէս վայելէ Երեսփոխանի վտանգութիւնը, ներքին գործերուն միջամտութեան վերջ պէտք է դրուի, բնդհ. ապօրինութիւնը հաստատելու պարագային լուծել խորհրդարանը:

Ապա նոր ընտրութիւն, առանց ստիկանական միջամտութեան: Արժանի սպաներ պաշտօնի կոչել եւ վերջը կը սպառնար մաքրագործել իր նախնի փախիլ փորձողները: Սպաներուն մեծ մասը «Ազգիմ Փրիլիչնիք»ուն յարեցաւ: 1912ի Յունիս 6ին Պատմ. մը ասոնց պահանջները ներկայացուց Սուլթանին: Իթիլաֆի սարսափած հրաժարական տուաւ: Սուլթանը Իթիլաֆի ազգայնութեան տակ «Ազգիմ Փրիլիչնիք»ուն դէմ հրամանագրով մը կը գատարարէր «անհնազանդ» այդ սպաները: Այդ կողմ արգիւնք չուաւ:

1912 Յունիս 9ին Ա. Սուլթանը Փաշան կազմեց նոր Դահլիճը որուն մաս կազմեցին շեշուած հակա-Իթիլաֆիական Քէամիլ Փաշա, Չօր. Նազըմ Փաշա իրր Պատերազմական Նախարար...:

Անկէ ետք 1913ի 10 Յունուարին նոր պետական հարուածով Նազըմ Փաշա կը սպաննուէր... իրիկունը Մահմուտ Շէվքէթ Փաշան վարչապետ կը հռչակուէր... 6 ամիս միայն ապրած էր «Իթիլաֆ»ական ուժիմը...:

«Գաւառի գանազան կողմերը Հայոց կացութիւնը այնքան ծանրացած էր, որ մէկ քանի առաջնորդներ Պոլիս գալ ուղեցին, մորթերնին փրկելու համար, սակայն Պատրիարքարանը հրաման չտուաւ»:

(Տէս՝ «Միլիոն մը Հայերու Զարդի Պատմութիւնը», Ս. Ակունի, Կ. Պոլիս, 1921, էջ 30-31): (Սարգիս Ակունի, Դաշնակցական մտաւորական մը Պոլսէն, «Ազատամարտ»ի աշխատակից — Հ. Գ.):

«Պոլսոյ Հայութիւնը նոր սարսափի մատնուեցաւ, երբ 1915 Օգոստ. 12ի առտուն կարգաց Պատերազմական Ատեանի մէկ «Հրաւերադիրը» Փարիզի Ազգ. Պատուիրակութեան պետ՝ Պ. Պոզոս Նուպարի ուղղուած, որով կը հրաւերուէր ան մինչեւ տասը օր ներկայանալ նոյն Ատեանին՝ դատուելու համար սա ամբաստանութեամբ թէ «Արեւելեան Նահանգներուն մէջ Հայաստան մը կազմելու համար կը պործակցի Եսեակ Համաձայնութեան, թէ էջմիածնի Կաթողիկոսին կարգադրութեամբ ու գործակցութեամբը հայերէն նուիրահաւաքութիւն ընկնով՝ Կովկասի մէջ ռուս բանակին կամաւորներ կ'արձանագրէ, ինչպէս նաև Օսմ. կառավարութեան դէմ ապստամբող հայերուն նիւթապէս եւ ուրիշ եղանակով օժանդակութիւններ կ'ընէ»:

«Իթթիհատի տուած որոշումը (Չարդի) կառավարութեան կողմէ արդէն իսկ շատոնց ի վեր գործադրութեան դրուած էր: Իսկ այս կարգի հրատարակութիւններով եւ միջոցներով իթթիհատը թէ՛ միտքերը կը պատրաստէր եւ թէ՛ ինքզինքը իրր թէ չքմեղացնել կ'ուզէր»:

«Աժսան Միլլին» կը հաղորդէր. «Ռուսերն ու հայ հրոսակախուժները նախապէս կրակի տուին վանի իւրամ գիւղերը եւ իրենց փախուստին ատեն լուրորովին հրէքնեցին հայկական թաղը: Նոյնպէս բռնարարեցին կիներ եւ երիտասարդ աղջիկներ, ջարդեցին ժողովուրդը... այրեցին ամերիկեան վանքը»: (էջ 32):

Հարկ կա՞ր մեկնարանելու սոյն եղծումներն ու շարափոխութիւնները...: «Մահամանադրութեան հռչակումէն ետք, երբ համաձայնութիւն գոյացաւ Դաշնակցութեան եւ Իթթիհատի միջեւ, որոշ խնդիրներու մէջ համադրեցուցուելու համար, Իթթիհատը իր ձեռքովը Դաշնակցութեան տրամադրեց բաւական մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմանիւթ, ամէն պատուի մէջ ի հարկին գործածուելու համար Մարտ 31ի Յետաշրջական Ծարժումի մը պահուն: Այս զէնքերն էին որ երեւան կը հանուէին եւ ցոյց կը տրուէին, որպէս թէ թուրքերուն դէմ գործածուելու համար գնուած են...»: (Նոյն՝ էջ 84):

Տաքիստանի Հնչակեան Գ. Համագումարը(*) երբ Իթթիհատը սպառնաց բոլոր Հնչակեաններուն... Ժխտական գիրք բռնեց եւ 3 հոգիինոց Յանձնախումբ մը ստիպուեցաւ փաստել, թէ Դրդ Հնչ. Համագումարը օրինաւոր պայմաններու ներքեւ տեղի ունեցած էր, եւ հետեւարար անոր իլլեկալ աշխատելու գիծը հակա-օրինական բնոյթ կը կրէր...:

Թէ Շէրիֆ Փաշան օժանդակած է «գործին», թէ 500 ռուկ տրամադրած է Սապահ Գիւլեանին, թէ այդ դումարը ծախսուած է ձերբակալելու 100է աւելի ընկերներու փրկութեան, Սապահի Եգիպտոս իր ընտանիքը Պոլսէն հեռացնելուն, Փարամազի եւ Ռ. Տէր Կարապետեանի Եգիպտոսէն Պոլիս անցնելուն՝ շատ հաւանական է: Մընացեալները՝ անիմաստ վերադրումներ են: Յատակ է որ Իթթիհատը որոշած եւ գործադրութեան դնել ուղած է Իթթիհատի պարագլուխներուն չկարգադրման՝ Փարիզէն, որովհետեւ ըստ Սատրդ Պէյի 30

(*) 1914ի Յուլիս 24ին:

հազար Իթթիհատականներ չէրուցուած, ախտուած, բանտարկուած էին 1913 Փետրուարէն սկսեալ... Սատրդ Պէյն ու Շէրիֆ Փաշան(*) որոշած էին պետական հարուստը, վստահած էին նաև Հնչակեան օժանդակութեան՝ Սապահ Գիւլեանի գլխավոր: Միտանական վարձ մը՝ Պոլսոյ մէջ պետի գործադրուէր: Երկու Կուսաներն ալ իրաքանչիւրը իր անկիւնէն՝ Իթթիհատը աղէտ կը նկատէին: «Թանին» Իթթիհատի օրկանը 31 Յուլիս 1913էն սկսեալ Շէրիֆ Փաշային Իսմայիլ Կիւմրուլիայի (Իթթիհատի պարագլուխներէն) թղթակցութիւնները տուած է:

«Չորս ամիս առաջ էր 1913 Յունիս 2ի Իթթիհատի վարչապետ Մահմուտ Շէֆքէթի սպաննութենէն՝ Իթթիհատական տեղապահներու կողմէ: 1913 Մայիս 30ին երբ Պաշաններու մասին համաձայնութիւն կնքուեցաւ, աւելցաւ սպաննուող զոհուութիւնը, կը զրէ Մանսէլըթայմ, երբ կարելի եղաւ համոզուիլ, թէ Իթթիհատի պետական հարուստը (Էնվէր) Ազրիանապոլիսը չէր փրկած թուրքիոյ համար:

«Այն աստիճան ատելութիւն մը մէջտեղ եկած էր, որ կրօնատարները, հոճանները Իթթիհատի թշնամիներուն կողմը անցան»: ... Սորհրդարանական ընտրութիւնները 1914ին տեղի տուին «ամենէն ընդվզեցուցիչ գեղծումներուն, գրեթէ միայն կառավարութեան կուսակիցներն էին որոնք ընտրական ցանկերու մէջ անցան: Պաշտօնանկ զօրավարները, սպանները եւ պաշտօնատարները, բնակխմարար կը կազմէին յեղափոխական կոմիտէները»:

«Սատրդ Պէյ միայն ղեղապետ մը չէր, առաջին օրերուն ինչն ալ Համիտի դէմ լայն գործունէութիւն ունեցած էր... Իթթիհատը ամենէն աւելի կը սարսափէր հետադարձական այս մարդէն, ապա Իշխան Սապահիտինէն, որոնք լայն ապակեղորոնացման սխտէմին կողմնակից էին համոզուումով եւ հաւատացած էին որ իրաւ բարեկարգութիւնները երկրէն ներս պիտի նպաստէր աւելի շատ սերտացման ոչ-Օսմանցիներու եւ Օսմանցիներու միջեւ: Անոնք համոզուած էին, թէ կարելի էր աւելի զարգացած ոչ-Օսմանցի հայն ու յոյնը, պուլխարն ու սերպը, ալպանացիներ եւ մակեդոնացիներ քով քովի բերել եւ երկիրը վերականգնել, արդէլը հանդիսանալով արտաքին միջամտութեանց...»:

Հակառակ հայածուելուն Սատրդ Պէյ իր զէնքի ընկեր Չէքի Պէյի Իթթիհատի կողմէ սպաննուելէն ետքն ալ՝ շարունակեց իր պայքարը, Մասոններու դէմ պայքարը այն աստիճան յառաջ տարաւ, Իթթիհատի ղեկավարներուն դէմ այնպիսի մթնոլորտ ստեղծեց, որ ըստ Մանսէլըթայմի թալաթ, Պապան Զատէլ Իսմայիլ Հազը Պէյ, Հիւսէյն Ճահիտ Իթթիհատի իսկ կողմէ հրաժարեցուեցան (էջ 71):

«Գնդապետ Սատրդ Պէյ կը նկատէր սակայն, որ կոմիտէն (Իթթիհատ) սարտուէր էր բնական պայմաններու մէջ զարգանալ, որպէսզի դառնար բոլոր Օսմանցիներուն ամենէն զօրաւոր աղապային կազմակերպութիւնը, առանց ցեղի եւ կրօնի խնդիրներու: Մինչդեռ... Կեղրոնական կոմիտէն (Իթթիհատ) ատած է զպոստի կառավարութեան մը նկարագիրը, ինչ որ երկրին մէջ շատ ցատալի տպաւորութիւն մը յառաջ կը բերէ:

«... Իմանակին իրաւունքն է կ'ըսէ Սատրդ, սաշտպանել Մահմանադրութիւնը, եւ ոչ թէ անձուկ շրջանակի մը քաղաքական կարծիքները. սպանները սարտատուր են ո'չ քաղաքականութեամբ զբաղուել, ո'չ ալ կոմիտէներու անպամ գառնալ»:

(*) Իթթիհատ փորձեց Շէրիֆ Փաշան սպաննել անկէ ետք, յատուկ տեղորիստ մը միկնելու փարիզ գրկելով... բայց անխոստացաւ իր մտադրութեան մէջ:

«Հակառակ ԻԹԹԻՏատի կողմէ Հանդատեան կոչուելուն», Սատրը Պէյ պառա մեկնեցաւ եւ Մատոններու ու ԻԹԹԻՏատի պարազը-լուիններուն դէմ պայքարը շարունակեց»:

ԻԹԻլաֆ-Հնչակեան 1912 Փետր. 7ին կնքուած համաձայնա-դիրը Օսմ. ծիրին մէջ հայոց ինքնավարութիւն կը խոստանար.

Հատուածները՝

Յօդուած 3.— Օսմանեան պետութիւնը կազմող զանազան ազգութիւններու քաղաքացիական իրաւունքները պիտի պաշտպանուին եւ բարձրագոյն կը մերժուի մէկ ազգին՝ քաղաքականապէս ստորադասուած միւսին:

Գպրոցները ազգային բնոյթը պիտի պահեն եւ անոնց վկայականները համա-գոր պիտի համարուին պետական մոյնաստիճան վկայականներուն:

Յօդուած 5.— Բանուարի, հոգաբարի գիւղացիի եւ մարապայի (օրթագճը, եարըճը, այլըճը) վիճակը բարւոյն օրէնքներ պիտի հաստատուին:

Յօդուած 6.— Բունի դրաւուած հողերն ու կալուածները ըստ օրինական դատի իսկական տէրերուն պիտի վերադարձուին:

Յօդուած 7.— Թուրք զաղթականները առանց տեղացիներու սեփականութեան իրաւունքի վնասելու, պետական քափուր հողերու վրայ միայն պիտի բնակեցուին:

Յօդուած 8.— Վերոյիշեալ յօդուածներուն շուրջ ԻԹԻլաֆ եւ Ս. Գ. Հնչ. կուսակցութիւնը համաձայնած ըլլալով 1912ի ընտրութեանց ատեն եւ ապա Խոր-հրդարանին մէջ գործակցութեան որոշում կուտան:

ԻԹԻԼԱՖԻ ԿՈՒՍ. ԸՆԴՀ. ԿԵԴՐՈՆԻ ԿՈՂՄԵ՝
Սատրը Մահեր
Ս. Գ. Հնչ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐՆԵՐ՝
Ս. Սապահ Գիւլեամ Բ. Վարազդատ

Սոյն համաձայնագիրը մեծ նուաճում մըն էր այդ ատենուան համար, երբ գիտենք որ ԻԹԻլաֆ կ'ամբաստանուէր որպէս Համիտական, յետադիմական, Հա-կասահմանադրական, Թուրքիոյ ամբողջականութեան հակառակորդ, հայրենիքի դաւաճան: Բնական է թէ իրազորութիւն մատնանուած լուրջ բարեկարգութիւն-ները հայ եւ Թուրք յետադայ բարձրագոյններուն եւ աղէտին առաջը առնուած պիտի ըլլար, միւս կողմէ բոլորովին անջատ Հայաստանի մը զաղափարը դեռ չէր կրնար 1912ի Փետրուարին սեղանի վրայ դրուել, ԻԹԻլաֆը պետութեան ղեկին կը ձգտէր եւ չէր կրնար ԻԹԹԻՏատի լաւ կազմակերպուած բրոքերականտին զոհ դառնալ լայն ինքնավարութեան մը մանաչումէն անդին: Երբ գիտենք, թէ ժողովրդական սկզբ-բունքները չէին յարգուեր, երբ Աղղ. վարժարաններուն վրայ ԻԹԹԻՏատը պետա-կան հսկիչներ կ'ուզէր տեղաւորել եւ հսկել անոնց ազգային ծրագրերուն վրայ, երբ 176 հազար քա. քմ. հող կորսնցնելու վրայ եղող ԻԹԹԻՏատը Պալքաններէն խուժող Թուրք զաղթականները կ'ուզէր... լքուած կամ հայոց եւ միւս փոքրա-մասնութիւններուն անմիջական հողերուն վրայ տեղաւորել, սոյն համաձայնու-թիւնը յաղթանակ մըն էր ի նպաստ հայութեան:

Միւս կողմէ, երբ զիւղացիին եւ բանուորին չարաչար շահագործման դէմ միջոցառումներ կը պահանջուէր եւ ղեռ, երբ Համիտի օրով հայերու բռնադրաւ-ուած հողերը չէին ուզեր լքել քիւրտերը, չէրբէզները, Թուրքերը եւ հակառակ դա-տարան դիմելուն՝ հայ զիւղացին չէր կրնար իր երբեմնի բռնադրաւուած հողա-չերտին տիրանալ... իսկական տէրերու վերադարձուելու որոշումը համաձայնա-գրին՝ զբազան էր հայութեան համար: Ասիկա ցոյց կուտայ որ ԻԹԻլաֆը շատ ա-ւելի մօտ էր իրաւ բարեկարգութեանց բան Բանիսլամիզմի, Բան-Օսմանցիութեան,

Բան-Թուրքիզմի զաղափարախօսներուն ազատինս ԻԹԹԻՏատը: Ահա թէ ինչու, առանց չափազանցութեան կարելի է սնդել, թէ բիրեղացած կուս. մը չըլլալով հանդերձ՝ Իշխան Սապահէտտինի եւ Սատրը Պէյի ԻԹԻլաֆը՝ իր Իրքիիսաօի դէմ խիզախ պայքարով մեր գնահատմանից կ'արժանանայ այսօր, աւելի քան միամիտ Իրքիիսաօպաշտները, որոնք Իրքիլաֆի չափ անգամ չհանչեցան Թալապրներու սեր հոգին...:

ԻԹԻԼԱՖԻ ԾՐԱԳՐԻՆ ԶԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

Գերապայծառ Ժան Նազըլեանի «Յուշերը» 1955 թուին Փրանս-սերէն, շոյզ հակայ հատորներով լոյս տեսած՝ տաստ փաստաթուղ-թեր կը բովանդակէ Եղեռնի եւ ԻԹԹԻՏատի գործունէութեան կա-պակցութեամբ: Ան Ա. հատորին մէջ Եղեռնի նախօրեակի քաղաքա-կան կացութեան մասին եւ Եղեռնի պատճառներուն վերաբերեալ վը-կայութիւններ տուած է: Լսենք.—

ԻԹԹԻՏատի եւ ԻԹԻլաֆի միջեւ իշխանութեան տիրանալու պայքարը, փո-խադարձ մահափորձերը սովորական երևույթ էին:

1912ին արդէն իսկ պետական հարուած մը կազմակերպուած էր ԻԹԹԻՏատի դէմ, Փարիզի ԻԹԻլաֆի պարագլուխներէն Շէրիֆ Փաշայի, Սատրը Պէյի կողմէ: Սոյն դաւադրութիւնը առաւելագոյն չափով շահագործուեցաւ. ԻԹԹԻՏատի պարա-զլուիններուն կողմէ եւ բոլոր հայերը մեղսակից ամբաստանուեցան: Այս մասին Տոքթ. Լէփսիւս կը գրէ, թէ ԻԹԹԻՏատը երկու անգամ տապալեցաւ: Մին հին Թուրքերու կողմէ 1909ին, եւ միւսը 1912ին ընդդիմադրութեան մը կողմէ որ յա-ռաջ եկած էր ԻԹԹԻՏատի իսկ կողմէ: Այս Բ. հարուածը կազմակերպուած էր Շիրիֆէթ եւ ԻԹԻլաֆի կողմէ: Գնդապետ Սատրը Պէյ կազմեց բնդդիմութիւնը ԻԹ-թիՏատի դէմ: Անոնք սպաննեցին Մահմուտ Շէֆքէթ Փաշան՝ դահլիճը ստիպուե-ցաւ հրաժարիլ: Թէեւ ամբողջութեամբ իշխանութեան ղեկը իրենց ձեռքը չառին, բայց ԻԹԻլաֆը տիրապետող դարձաւ երկրէն ներս եւ անոնց հետ գործակցեցան Մուսթաֆա եւ Քէմալի Փաշաները: Սոյն կուս. պետերն էին Իշխան Սապահէտտին, Իսմայիլ Կիւմրիլճինա եւ Հոճա Սապրի Էֆէնտի: «Մեծերու Դահլիճ» մը կազ-մուեցաւ որուն մաս կազմեցին նախկին նշանաւոր պետական մարդիկ... բայց որոնց օրով Թուրքիա կորսնցուց Պալքանեան 1912ի պատերազմը: Երբ Քէմալի Փաշան կնքեց համաձայնագիրը՝ որով Ազրիանապոլիսն ալ կը դիջէր թշնամիին, ԻԹԹԻ-Տատի պարագլուխները վերստին իշխանութեան զուլի եկան, Նազըմ Փաշան սպաննուեցաւ էնվէրի կողմէ, եւ զուտ ԻԹԹԻՏատական դահլիճ մը մէջտեղ եկաւ:

Այս պետական հարուածէն ետքն է որ ԻԹԻլաֆը բացայայտ պայքարի ան-ցաւ ԻԹԹԻՏատի պարագլուխներուն դէմ: Անոնք սպաննեցին 11 Յուլիս 1913ին Պա-տերազմական Նախարար ԻԹԹԻՏատական Շէֆքէթ Փաշան: (Մանրամասն տես՝ Մեկ-լան Զատէ Ռիֆաթի «Օսմ. Յեղ. Մուք Երալները», 1968, Պէյրութ):

ԻԹԹԻՏատը այս մահափորձին պատասխանեց ընդդիմադիր բոլոր տարրերը սպաննելով կամ աքսորելով Սինոպ: Մէկ մասը կըրո-ցաւ արտասահման փախչիլ: Պետական հարուածը ԻԹԹԻՏատի դէմ այս թուականին կազմակերպուեցաւ, բայց ժամանակին մէջտեղ ե-լաւ, դաւադրողներէն մէկուն մատնութեամբը:

Ընդդիմադիրները Փարիզի մէջ կապ հաստատած էին ԻԹԹԻ-Տատի ամենէն երդուեալ թշնամիներէն Շէրիֆ Փաշայի հետ, որ իր տրամադրութեան տակ ունէր հակայական միջոցներ... Դաւադրու-թեան մաս կը կազմէին Իշխան Սապահէտտին, Գնդապետ Սատրը, Իսմայիլ Կիւմրիլճինա եւ Շէրիֆ Փաշա որ միջոցներ պիտի հայ-թայթէր:

Լեփսիւս կը գրէ. «Հայ Սաղահ Գիւլեան որ Հնչակեան Կուս. Կոմիտէի անդամ էր եւ հեռացուած էր... այս դաւադրութեան մաս կը կազմէր: Միտհատ Էֆէնտի որ հիմնադիրներէն էր Ջին. սպանեալու «Հայրենիքի Ազատարարներ» («Հայաստանի ձեռնարկ») դաւադրութեան զազմանիքը տուաւ Պոլիս՝ ձեւացնելէն ետք երկու տարի, թէ ինք ալ կողմնակից էր...»:

Իթթիհատի օրկան «Թանին» դաւադրութեան ներքին ծախքերը՝ Իսմայիլ Կիւմիւլճիւնայի եւ Շէրիֆ Փաշայի միջեւ փոխանակուած նամակները հրատարակեց:

Իր կողմէ Նազրեան կը գրէ, թէ 4 հայերու մաս կազմելը քուրֆ ընդդիմադրութեան դաւադրութեան մէջ, հայ յեղափոխական շարժումի մը մասին վկայել... սխալ է: Այս հայերը տարի մը բանտի մէջ պահուելէ ետք զանոնք կախեցին Պատերազմական Նախարարութեան Պայազլուի հրապարակին վրայ՝ իրենց 17 այլ ընկերներուն հետ, որոնք Հնչակեաններ էին: Ուզեցին ատիկա պատրուակել որպէս Հայկական Յեղափոխութեան կողմէ դաւադրութիւն պետութեան դէմ:

Տոքթ. Ռիֆաթի կարծիքով՝ այս հրապարակային կախազանները կը ձգտէին Իթթիհատի կողմէ ցոյց տալու, թէ անդլիական ոսկիներով հայկական ըմբոստութիւն մըն էր եղածը:

«Դժբախտաբար, կը գրէ Տոքթ. Լեփսիւս, Գերմանացիները ինկան այս ծուղակին մէջ եւ հաւատացին իթթիհատի պնդումներուն»: (Էջ 7-8):

1919ին Պոլսոյ մէջ տեղի ունեցաւ Թուրքիոյ Սուլթանին հրամանագրով դատ մը՝ դատելու համար Իթթիհատի պարագլուխները: Իթթիհատը ամբաստանելի Աթոռին վրայ նստած էր, իր պարագլուխները գերման ընդծովեայով Կովկաս, ապա Եւրոպա փախած էին, մաս մըն ալ Անգլիացիներ Մալթա փոխադրած էին որպէս շարդարաններ հայոց...:

28 Յունուարին այդ դատարանին ներկայանալով վկայեց նաեւ Մուսթաֆա Քեմալ, ըսելէ ետք թէ ինք Սուլթանի կողմէ հաստատուած սոյն դատարանին կը ներկայանայ, թէ զինք ճանչցողներ զուցէ զարմանան այս առթիւ: «Այն փաշաները որոնք զործադրեցին այս անըմբռնելի ոճիւրները, երկիրը ներկայ վիճակին հասցուցին իրենց անձնական շահերուն համար... Անոնք հաստատեցին ամէն տեսակ բռնութիւններ եւ ահաբեկութիւններ, այրեցին քաղաքները, իրենց վերադարձած ծնողներուն ներկայութեամբ կիներ եւ դեռատի ազգիկներ, իրենց վերադարձած ծնողներուն ներկայութեամբ կիներ եւ զանազան քաղաքները քաղաքները իրենց ծնողները, բռնազրաւեցին գոյներն ու բնակարանները եւ զանազան քաղաքները միմեծ Մուսուլ ցաւալի վիճակներու մէջ, գործադրելով ամէն տեսակ բռնութիւններ ամոնց վրայ, նաւակներուն մէջ անոնք (Իթթիհատ) հազարաւոր անմեղներ ծով քափեցին... ապա պարտադրեցին որ իսլամութիւնը ընդունուի... ամիսներ ամբողջ ամօքի ծերունիները ստիպեցին քաղաքի եւ բռնի աշխատավի լծեցին, մայրիակ կիներ «մասնաւոր տուններ»ու մէջ նստեցին ահաւոր պայմաններու մէջ ինչ որ անմարտնչաց է ազգերու պատմութեան մէջ»:

Ճէրխա Փաշան Եւրոպացիներուն կը յայտնէր սոյն դատավարութեան առթիւ. «Իթթիհատականներու մեծ դատավարութիւնը Պոլսոյ մէջ ցոյց կուտայ պատասխանատուութիւնը Իթթիհատի Կոմիտէի՝ որոնք բոլորն ալ բարձր աստիճաններ ունէին պետութեան մէջ պատերազմի ընթացքին»:

(Տես՝ Mgr. Jean NASLIAN «Les Mémoires», 1955, Beyrouth, p. 44-45):

Իսկ «Սաղահ» թերթի մէջ 28 Յունուար 1919ին Ալի Քեմալ Պէյ՝ որ յետոյ Քեմալականներու կողմէ որպէս դաւաճան սպանուեցաւ, կը գրէր. «4-5 տարի առաջ պատմութեան մէջ բացառիկ ոնիր մը պատահեցաւ որ կը ցնցէ աշխարհը: Իր տարադուքիւնը եւ չափը նկատի ունենալով, հեղինակները 5-10 հոգիներ չեն այլ հարիւր հազարներ: Եթէ ջարդուողները 600 հազարի տեղ 300, 200 կամ 100 հազար ըլլային, 100, 500 եւ 1000 մարդասպան բաւարար պիտի չըլլար բնացնելու համար այդքան մարդ... Արդէն փաստուած է որ այս ջարդը տեղի ունեցաւ իթթիհատի կեդրոնական Կոմիտէի հրահանգով... գործադրուեցաւ կառավարիչներու... ժամտարմըրիի եւ ժողովուրդին կողմէ... եւ տարօրինակ չէ՞ մէկ կողմ դնել մեծ ու փոքր բազմաթիւ մարդասպաններ եւ կեդրոնաւոր Տիգրանակերտի, Սեբաստիոյ եւ հարբերդի կառավարիչներուն վրայ, որոնք երբեք չդատուեցան...»:

1919ի Յունուարին Թէֆլիք Փաշա խաղաղութեան Գերագոյն Ժողովին կը յայտնէ, թէ՛ «Իթթիհատ վէ Թերաֆը Կուս. 3 միլիոն մահմետականներուն մահուան պատճառ դարձաւ... եւ որոնցմէ քանի մը հարիւրներ դեռ կը քափուին հեռացուած իրենց բնակարաններէն փոքր Ասիոյ կեդրոնը, առանց օգնութեան... Փոքր Ասիան այսօր արեւակ է... Պոլսոյ մեծ դատավարութիւնը փաստեց իթթիհատի Կոմիտէի պատասխանատուութիւնը»: (Նոյն, էջ 558-559):

ՀՆՁԱԿԵԱՆ ԹԵՁԵՐԸ՝ 1914ԻՆ ԻԹԹԻՀԱՏԻ ԴԷՄ

«Երիտասարդ Թիւրքերու Հնչակեանութեան դէմ մղած հալածանքներն անազին ծաւալ ստացած են վերջին ժամանակներս, որովհետեւ Հնչակեան Կուսակցութիւնը միակն եղած է Թուրքիոյ մէջ, որ Միտհատեան Սահմանադրութեան հոչակումէն առաջացած ամբոխային խանդավառութեան շխարքով, զգուշացուցած է ժողովուրդը, Համիտի արժանաւոր յաջորդ Երիտասարդ Թիւրքերու շահուցիչ խոստումներուն գոհ չերբայու: Հաւատարիմ իր սկզբունքներուն եւ որդեգրած քաղաքականութեան Հնչակեանութիւնն անդու պայքար մղած է Երիտասարդ Թուրքերու դէմ, տապալելու համար այն բռնապետութիւնն որ Սահմանադրութեան պիտակին տակ հայ ժողովրդին բնացնուով կ'ուզէր առաջ բերել:

«Որչափ ալ կարգ մը հակայեղափոխական եւ պոթոնազական թերթեր՝ յազուրդ տալու համար իրենց կուսակցական ջինխիւրութեան, Կ. Պոլսոյ եւ գաւառներու մէջ կատարուած ձերբակալութիւնները զանազան գոյներով ներկայացուցին իրենց ընթացողներուն՝ Հնչակեանութիւնը վարկաբեկելու նպատակով, այնու ամենայնիւ Երիտասարդ Թուրքերու Հնչակեանութեան եւ Հայ Ժողովրդի հանդէպ բռնած ընթացքն ու հանած հալածանքներն եկան լիուրի հաստատելու Հնչակեան այն հետաքննարկութիւնը, որուն նա կը հետեւէր Սահմանադրութեան հռչակումին յաջորդ օրէն իսկ եւ որուն ուժ տուաւ դարձեալ իր վերջին Պատգամաւորական ժողովին մէջ:

«Ինչպէս չիշել եւ այն դժոխային ծրագիրն որ Կոմիտէին հաւատաւի՞ն հիմնական կէտերէն մին է, եւ որ կը կայանայ՝ ամբողջ հայ գիւղաբնակչութիւններ, հայաշատ վայրեր, տեղափոխել քրքաշատ տեղեր, եւ որուն գործադրութիւնը փութկոտութեամբ առաջ կը վարէ այսօր քուրֆ կառավարութիւնը»: (Տես՝ «Հնչակ», 1914, թիւ 2):

ՀԱՅԻ ՊԱՀԱՆՁՐ

«Սակայն Հայկական Հարցը մնում է հարց, քանի նա Հային չի տուել իր բաղձանքները, իր պահանջի դէժ նուազագույն չափը, որը կարողանար երաշխաւորել նրա կայքի, դոյքի, անձի անձեռնմխելիութիւնը, նրա աշխատանքի ապահովութիւնը: Հայկական Հարցը մընում է հարց, քանի որ նա՝ հայը, դուրս չեկաւ «ուայեայ»ի ամօթապարտ կացութիւնից տեղական ինքնավարութիւն, դէժ եւրոպական կոնտրոլ ստանալով: Եւ այնքան ժամանակ նա հարց կը մնայ, — որպէս եւ դրացի ու շահագրգռուող պետութիւնները համար — երբ թէկուզ մի հայ էլ մնայ Հայաստանի մէջ իր ներկայ վիճակով, իսկ այս վիճակից ազատուելը, Հայկական Հարցի վճիռը միայն եւ միայն կը վճռուի հայի հաւաքական եւ դրական ուժովը՝ Յեղափոխութեամբ:

«Ազգայն պատկանում է այն դասակարգին, որը ինքն է ստեղծում իր հաստատութիւնները», այսպէս ասաց Վանտէրվիլդէ, եւ մենք աւելացնում ենք՝ եւ այն ազգերին որոնք կենսունակութիւնն ունին ստեղծելու իրենց հաստատութիւնները:

«... Բայց այս կենսունակութիւնները խեղդում են, նրա ստեղծագործած հաստատութիւնները հիմնայտակ են անում: Աւերածութեան Կաղ-Դեւը՝ զինուած պանիսլամիզմի եւ «Տիրող-Ազգի» ամէն ինչ սառցակոյտ դարձնող սեւեռեալ դադափարով, ծուխի ծուխի է անում այն տուրքը, որի վրայ ձեւուած, հինուած է հայի ստեղծած հաստատութիւնները — Հայութիւնը: Քաղաքական ներութիւնները զուգորդուած իսլամական կոշտութիւնները հետ եւ համհարզ ընդունած եւրոպական շահագիտական ներհակութիւնները, ծուծն են քամում, այն մարտիրոսութեան խաչը շարակած ու Գողգոթայի բարձունքին կառչած Հայութեանը:

ՀԱՅԸ ՄԵՌՆՈՒՄ Է ԿԱԹՈՒԼ ԿԱԹՈՒԼ

«Բանականութիւնը, դոյութեան իրաւունքը, հրճուանքի եւ վայելքի ձայնը կոչ են անում ժողովրդի երաշխաւորներին ու իրենց հրամայական պահանջը չեչտում. «ՓՈՒՍԱՆԱԿ ԿԱԹՈՒԼ-ԿԱԹՈՒԼ ՄԵՌՆԵԼՈՒ ԵՒ ԱՆԷԱՆԱԼՈՒ, ՀԱՅԸ ՄԻԱՆԳԱՄ ԷԼ ՊԻՏԻ ՄԵՌՆԵՒ, ՈՐ ՀԱՅԸ ԱՊՐԻ»:

«Ահա Հայութեան պահանջը բղխած իրականութեան հրամայականից: Այս պահանջի դրական դիրքի պատուէրներին է որ մեզ պիտի դան այն դեմոկրատիք կերպերն ու դրութիւնները, որոնք միայն ընդունակ են երաշխաւորելու մեր կեանքի, կայքի, դոյքի եւ ազգովին ապրելու պայմանները: Եւ Հայը իր միջոցները չպիտի խնայէ մինչեւ չստանայ իր բաղձանքների իրական արժէքը՝ Հայաստանի տեղական ինքնավարութիւն լայն ուսմկավար կարգերով:

«Կրաւորական տենչերով չէ, որ Հայը պիտի հասնի իր մարդավայել ապրելակերպին: Իթթիհատը՝ երկիրը ծախելուն չնորհիւ, միչտ էլ շահագիտական եւրոպայի մէջ իր բարեկամները կ'ունենայ,

որոնք ընդունակ կը յինեն տարու միմիայն Իթթիհատ — Գերմանական բարեկարգումներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ Հայութեան դարեւոր կազմին ճշնաթափ անելու, օսմանցիտացնելու պատգիրը նրկրրտումներ: Յանդուգն պահանջ եւ ոչ կրաւորական աղերս — ահա մեր դիրքը:

«Ինքնապաշտպանութեան խնդիր կայ դրուած մեր առջեւ, մեր լինել-չլինելու խնդիրը՝ ազգովին ապրելու խնդիրը: Քան երբ եւ իցէ այժմ է որ մենք պիտի ստեղծենք մեր ազգային տոնական քաղաքականութիւնը հիմնուած դոյութեան կոտի երկաթէ օրէնքների վրայ, որի տրամադրութիւնն է հաւաքական ինքնապաշտպանութիւնը իր իրաւունքներով եւ միջոցներով: «Յարձակման դէմ դիմադրութիւնը ոչ միայն արդարանայի այլ եւ հարկադրական է: Անդիմադրութիւնը մեղանչում է թէ կոտորութեան եւ թէ այլատիրութեան դէմ միանդամայն»: Այսպէս է ձեւակերպում Հերպերդ Սպէնսէր տիեզերական բարոյազիտութեան այս հրամայականը, որին ի պաշտպանութիւն ոչինչ ունինք ասելու, եթէ ոչ միայն այն աւանդը որը Իզմիրլեանը տուեց իր հօտին երուսազէմ արտը ճանապարհուելու միջոցին՝

«Հոն ուր արդարութիւն չկայ, ամէն հաւատարմութիւն կեղծ է»:

«Ազգային տոնական քաղաքականութիւն՝ ահա՛ մեր պահանջը: Յանդուգն պահանջ՝ ահա՛ մեր դիրքը:

«ՓՈՒՍԱՆԱԿ ԿԱԹՈՒԼ-ԿԱԹՈՒԼ ՄԵՌՆԵԼՈՒ ՈՒ ԱՆԷԱՆԱԼՈՒ, ՀԱՅԸ ՄԻԱՆԳԱՄ ԷԼ ՊԻՏԻ ՄԵՌՆԵՒ, ՈՐ ՀԱՅԸ ԱՊՐԻ»:

«Հնչակ», 1914 Մայիս, քիւ 1 ՓԱՐԱՄԱԶ

ՈՐՊԵՍ ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Շատ քիչ էին անոնք, որոնք երկիւան վտանգէն աւելի մեծ վտանգի մը նախադպցումը ունէին եւ այդ քիչերէն էին Քասաներէն(*) Փարամոզ, Ռուբէն Կարապետեան եւ տեսարան Սապահ-Գիւլեան: Անոնք չէին սպասած նոյնիսկ Քէօսթէնճէի 1913 թուականին՝ կարենայ դերքորոշուելու համար Իթթիհատի դէմ:

Հնչակեան Կոստակցութիւնը եթէ մեծ եղաւ իր իրապաշտութեամբ եղեոնի նախօրեակին, այդ մեծութիւնը կը պարտի մեծ դեկափարներու եւ յատկապէս Փարամոզի եւ տեսարան Ս. Սապահ-Գիւլեանի, որոնք շատ լաւ կրցան թափանցել բանթուրքիստ Իթթիհատականներու հոգեբանութեան ներս, եւ ժամանակին մատնանչել վտանգն ու ձերբազատման միջոցները անոր ճանկերէն:

20երը նահատակուեցան այդ ՄԷժ Տեսիլքի ճամբուն վրայ: Յարդանք Հայ Յեղափոխականներուն յիշատակին:

(*) Քասաներու մասին տես՝ Սիրվարդի եւ Հ. Վանիկի Փարամոզի նուիրում երկերը:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

«Ազատարար Շարժման Բանակին Յաղթական Մուտքը ի Պոլիս», *Պրակ Ա.* 1909:
«Ազատութիւն Քաղաքական եւ Տնտեսական», 1908, *Պոլիս, Հմ. Արամեանց*:
«Ազգային Ընդհ. Ժողով 1908-1911», *Պոլիս, հրտր. Պատրիարքարանի*:
«Ազգային Կռուի Սկզբնաւորման Շրջանին», *Անդարա, Թալիպ Կէօբալիկէն*:
«Ազգային Հերոս Անդրանիկի Պատերազմները», 1953, *Փարիզ, Գառնիկ Կա-*

Գառնիկ

րիենան:

«Ազգապատում», Գ. *Հատոր*, 1961, *Պէյրուիթ, Մղ. Օրմանեան*:

«Ազգերու Ընկերութիւն եւ Պետութիւնները Հայկական Հարցի Առջեւ», 1970,
Պէյրուիթ:

«Ակն եւ Ակնցին» (1020-1915), 1942, *Պուքրէշ, Առ. Քէչեան*:

«Անդրանիկի Կեանքը, Պատերազմները եւ Յուշերը», 1932, *Պէյրուիթ*:

«Անդրանիկ կը Պատասխանէ իր Հակառակորդներուն», *Արսէն Ժամկոչեան*:

«Ամենուն Տարեցոյցը», 1916-20, *Պոլիս, Թէօդիկ*:

«Ամիտայի Արձագանգներու Վերակոչումն», Բ. *Հատոր*, 1933, Ն. *Ճրգի,*
Տ. Մկունց:

«Անդրանիկ, Մուրատ, Պօղոս Նուպար», 1921, *Պոլիս, Եղ. Զոփուրեան*:

«Ապրուած Օրեր», 1957, *Հալէպ, Արսէն Գարօ*:

«Ապրումներ», 1956, *Պէյրուիթ, Մալխաս*:

«Ատանայի Եղեռներ», 1919, *Պոլիս, Յակոբ Պապիկեան*:

«Ատանայի Եղեռներ եւ Գոնիայի Յուշերը», 1951, Նիւ *Եորք, Հ. Աշճեան*:

«Ապրումներ», 1956, *Պէյրուիթ, Մուշեղ Աւերբեան*:

«Ատանայի Զարդը եւ Պատասխանատուները», 1910, *Պոսթոն, Մ. Աւերբեան*:

«Արեւմտա-Գերման Մոնոպոլիստների Ներխուժումը Թուրքիա», 1963, Բ.
Կոնտաքէեան, Երեւան:

«Ա. Հմշի. Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը», 1967, *Երեւան, Ճ. Կի-*
րակոսեան:

«Արեւելեան Մամուլ», 1876, *Իզմիր, Մ. Մամուրեան*:

«Արեւելեան հնդիրը եւ Հայկական Հարցը», 1913, *Պոլիս, (Խրդմ.), Տրէօ*:

«Արեւմտահայերի Սոց. Տնտեսական Քաղաքական Կացութիւնը» 1800-1870,
1967, *Երեւան, Հ. Ղազարեան*:

«Արեւելագիտական Ժող.», թիւ 1, 1960, *Երեւան, Ե. Սարգիսեան, Ա.*
Մաֆրաստեան:

«Արեւմտահայ Ազգ. Ազատագրական Շարժումները եւ Կարճիկ Պաշտպան
Հայրենեաց Կազմակերպութիւնը», 1965, *Երեւան, Բ. Յովհաննիսեան*:

«Արեւմտահայերի Վիճակը ԺԹ. Դարու Վերջերին», 1968, *Երեւան, Ս. Մար-*
կոսեան:

«Արեւմտահայերի Ազատագրութեան Հարցը», 1967, *Երեւան, Հ. Վարդանեան*:

ՎԵՐՋ

«Արամ Աչբազան» (Փոքր Հայքի հերոս), 1957, Փրավիտենս, Ե. Սիրվարդ:
 «Արեւելեան Հարցը», 1963, Օքսֆորդ (Անգլիա), Սըր Ճոն Մէրիթ:
 «Արշակ Չոպանեան», 1938, Փարիզ, Գեղ. Ֆէնէրճեան:
 «Արեւմտահայ Գրողների Նամականի», Գիրք Գ. պրակ 1, Գ. Ստեփանեան (Գ. Աղնաուրեանի):
 «Արմենիա», Երզրան, 1947, Պուէնոս Այրէս:
 «Բարեկրթութեան Հարցը», Կ. Պոլիս, 1914, Ատոմ (ՅԲԹ. Շահրեկեան):
 «Բոլշևիկների Գործունէութիւնը եւ Ռեւոլյուցիոն Եւրոպայում» (1907-1917), 1959, Երեւան, Մ. Արզումանեան:
 «Գաղափար», 1894, Աթէնք, Ա. Նազարբէկ:
 «Գեորգի Ա. Գ. Միմիստրոսեանի փաստաթղթերը, Պրակ Բ., Գերմ. Գաղափ. Թուրքիայում» (1941-5), Երեւան, 1947:
 «Գեորգ Զաւուշ», 1972, Պէյրութ, Աւօ:
 «Գիտական Աշխատութիւններ», Հայ Գրկ. բաժին, 1968, Երեւան, Հ. Գ. Ռշտունի:
 «Գիտական Աշխարհայեացիի Ուղիներով», 1969, Երեւան, Ա. Կարապետեան:
 «Գործ Գայր Կատար էր», 1953, Գահիրէ, Գ. Թաղուրեան:
 «Գրական Ժառանգութիւն», 1961, Երեւան, Ալ. Մատուրեան:
 «Գրական Ուղիներով», 1962, Երեւան, Հր. Թամրազեան:
 «Գրիգոր Զոհրապ», 1959, Պէյրութ, Ստ. Շահապալ:
 «Դանիէլ Վարուժան», 1955, Երեւան, Սող. Տարոնցի:
 «Դանիէլ Վարուժան», 1961, Երեւան, Հ. Գ. Ռշտունի:
 «Դասակարգային Կոնկրետ Գիծը Ազգերու Պատմութեան Մէջ», Ա. Ե. Գ. Հատոր, Լ. Մարտիրոսեան:
 «Դատումներ Մեր 100ամեայ Յեղափոխութեան Մասին», 1962, Պէյրութ, Ս. Իզմիրլեան:
 «Դեպի Պատերազմ», 1939, Պոլիս, Ս. Շամլեան:
 «Դեմ Դիմաց Գայգերիզմի» (Ֆրանս.), 1919, Փարիզ, Ժերար:
 «Դիտումներ եւ Դատումներ», 1932, Պէյրութ, Մուշեղ Սերոբեան:
 «Դիւանագիտական Փաստաթղթեր» Հայկական Հարց (1893-1897), Հրատ. Ֆրանսայի Ա. Գ. Նախարարութեան, Փարիզ:
 «Եգիպտահայ Տարեցոյցը», 1914, Ա. տարի, Գահիրէ, Ս. Պարթեւեան:
 «Ելլողը Սասուն», Գ. Հատոր, 1935, Աղեքսանդրիա, Սմբատ Բերատ:
 «Եղեռնապատում» Իսթան Կայրց... 1924, Պոսթոն, Կար. Գարեկեան:
 «Եղեռնի 50ամեակի Առթիւ», 1965, Պատմ. Բանաս. Հանդէս, 1965, Վիբ. Համբարձումեան:
 «Երազանքի եւ Տաղանայի Տարիներ», 1961, Գահիրէ, Գ. Թաղուրեան:
 «Երզնկա», 1947, Գահիրէ, Գ. Սիրվարդ:
 «Երկեր», Յ. Թումանեան, Հատոր Գ., 1951, Երեւան:
 «Երկերի Ժողովածու», Շիրվանզատէ, 1961, Ը. Հատոր, Երեւան:
 «Երուանդ Օտեան», Երեւան, Անշ. Մակարեան:
 «Եւրոպայի Դիւանագիտութեան Պատմ.», 1929, Փարիզ, (Ֆրանսա), Հենրի Հատոր:
 «Զէյթունի եւ Իր Երջակաները», 1968, Պէյրութ, Ազատի:
 «Զէյթունի Պատմութիւնը», 1969, Երեւան, Հայկ Պողոսեան:
 «Զէյթունի Անցեալէն», Ա. Հատոր, 1909, Պոլիս, Մնաց. Սէմէրճեան:
 «Զօր. Սմբատի Յուշերը», Ա. Հատոր, (1900-1914), Մ. Երեցանց:
 «Ընդհանուր Պատմութիւն», 1953, Գահիրէ, Հ. Ամիրեան:
 «Թարիհ», (Թրք.), Զ. Թունայա:
 «Թարիհ», Գ. Հատոր, Պոլիս, Թրք. Պետ. Հրատարակչութիւն:

«Թալաթ Փաշանըն Հաթիրիերի», 1946, Սթամպուլ, Թալաթ:
 «Թարիհ Պոլուսնա Էրմէնիէր վէ Թիւրք-Էրմէնի Իլեսֆիլերի», 1967, Անգարա, Սատի Գոշաշ:
 «Թարիստէ Էրմէնիէր վէ Էրմէնի Մէսէլէսի», 1950, Անգարա, Էսատ Ուրսու:
 «Թիւրք Տեօվէթի Հիսմէթիստէ Էրմէնիէր», 1953, Պոլիս, Ռ. Շարք:
 «Թիւրքի ինգիլապը Թարիհի», 1957, Անգարա, Եուսուֆ Հիքմէթ Պայուր:
 «Թիւրքի Թարիհի», 1967, Պոլիս:
 «Թորոս Մառուկեան» (Զէյթուն), 1960, Փրավիտենս, Ե. Սիրվարդ:
 «Թուրքիան եւ Նրա Նուստուրակաւ Քաղաքականութիւնը Անդր-Կովկասում», 1964, Երեւան, Եր. Սարգիսեան:
 «Թրքական Ազգիւրներ», 1972, Երեւան, Ա. Սաֆրաստեան Ե. Գ. Սանթուրճեան:
 «Թրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը», Ա. Հատոր, 1934, Փարիզ, Լէօ:
 «Երիտ. Թուրքիան եւ Հայերը», 1909, Թիֆլիս, Ե. Թոփճեան:
 «Երիտ. Թուրքիա», 1909, Փարիզ, Ս. Սապահ Գիւլեան:
 «Թուրքոյ Հայոց Կացութիւնը Վաւերաբարձութեամբ Պարզում» (1903-1912):
 «Ե՛նէն Թուրքիա», 1959, Պոլիս, Խումր մը Թուրք Կրօնֆէստօրներ:
 «Ժամանակակից Պատմութեան Սեւագոյն Էջը», 1916, Նիւ Եորք, (Թրք.), Հ. Էտրմը Կիպուրճ:
 «Ժողովրդական Եւրոպայում Մատուցում», 1966, Երեւան, Կրեկ Քատուրեան:
 «Իսթիլալ Հարպընըն Էսալարը» (Թրք.), Գոլըմ Գարապէրի:
 «Իմ Յուշերը», Բ. Հատոր, 1952, Պէյրութ, Կոմս (Վ. Փափազեան):
 «Ի՞նչ Կը Մրագրեն Թուրքերը», 1926, Չարեանդ:
 «Լ'Արմէնի Լէ Մասսաբը Է Լա Գեթիոն Տ'օրիան», Էմիլ Տուստերկ:
 «Լ'Արմէնի» (Ֆրանս.), 1962, Փարիզ, Ժան Բիէր Ալէմ:
 «Լա Ֆէն Տը Լ'Ամբի Օթուման» (Ֆրանս.), Ժան Բու Կարնիէ, 1973, Փարիզ:
 «Լեմին», Երկեր, Հատ. 15 եւ 21, Երեւան:
 «Լեմին», Կենսագրութիւն, 1961, Երեւան, Պ. Բասպէլով:
 «Լեմինը եւ Անգրիկոսները», 1970, Երեւան, Գ. Ղարիբջանեան:
 «Լէօ եւ Հնչ. Կուս.», 1935, Փարիզ, Անդ. Կենճեան:
 «Լէ Թիւրք Օն Բասսէ Լա», 1911 Փարիզ, Ժորժ Պրեկոյ:
 «Լը Տէրմիէ Պալ Տիւ Կրան Սուար», 1956, Բ. պրակ, Պէյրութ, Բիէր Հէրեան:
 «Լիբանանի եւ Սուրիայի Պատերազմի Երջանի», 1922, Գահիրէ, (Ֆրանս.), Անթուան Եամմի:
 «Լիբանանի Պատմութիւնը եւ Աշխարհ», 1969, Պէյրութ, Մ. Պասալպաքի, Պ. Օսման Ե. Շ. Ճուհա:
 «Լրագրեր», Հաս. Գիտութիւններ, 1971, Թիւ 11, Երեւան, Գ. Բ. Ղարիբ-Հանեան:
 «Խարբերք եւ Անըր Ոսկեղէն Դաշար», 1959, Մ. Ն., Վահէ Հայկ:
 «Խոսի եւ Խոսք», 1929, Երուսաղէմ, Թորք. Եպիս. Գուրգենեան:
 «Խորհրդային Միութեան Պատմ.», (Ֆրանս.), 1956, Մոսկուա:
 «Խորհրդային Յեղափոխական Ամսական Ժիւրնալ», 1953, Փարիզ, Ե. Սիրվարդ:
 «Խորհրդային Հայրիկ», 1925, Փարիզ, Թորք. Եպիս. Գուրգենեան:
 «Մրագիր Հ.Յ.Գ.», 1917, Թիֆլիս:
 «Կայծ», ամսաթերթ, 1911, Պոլիս, օրկան Ս.Գ.Հ.Կ. Ուս. Միութեան, Գ. Վանիկեանի յօդուածը:
 «Կեանքի Յուշերից», 1967, Երեւան, Հր. Աճառեան:
 «Կեանքի Ուղիներով», 1955, Գահիրէ, Ս. Վրացեան:
 «Կիլիկեան Կսկիծներ», 1927, Պէյրութ, Զ. Պղտիկեան:

«Կուսակցութիւնները Գաղութահայութեան մէջ», *Երեւան, Ալ. Մարտունի:*
«Կուսակցութիւնները», 1965, *Պէյրուսթ, Լ. Չորմիսեան:*
«Կոմ. Պարտիան Հայ ժողովրդի Ազատարարն է», 1964, *Երեւան, Արամ. Մնացականեան:*
«Կրակ», *Յեղ. Քերթ*, 1906, *Աղեքսանդրիա, Ե. Օտեան:*
«Համապատկեր Արեւմտահայ Մէկ Դարու Պատմութեան», 1972, *Պէյրուսթ, ԼԼԸՆ Չորմիսեան:*
«Հայապատում», 1912, *Մարզուան, Գազիկ Օզանեան:*
«Հայ Ազատագրութեան Ճանապարհին», 1949, *Պէյրուսթ, Ա. Կիտուր:*
«Հայկական ձգնաժամ եւ վերածնութիւն», 1905, *Պոսթոն, Մ. Ս. Գարրիէլ-Էան:*
«Հայ եւ Ռուս ժողովուրդները Բարեկամութիւն», 1967, *Երեւան, Չ. Գրի-դորեան:*
«Հայ ժողովրդի Ազատագրական Պայքարի Օրինաչափութեան Հարցի Շուրջ», 1969, *Երեւան, Կ. Քարամեան:*
«Հայ ժողովրդի Պատմութիւն», Գ. Հատոր, 1967, *Երեւան, Վ. Պարսամեան:*
«Հայ Գրականութիւն», 1961, *Երեւան, Մկր. Մկրեան:*
«Հայ Յեղ. Կուսակցութեան Եւ Օսմ. Կառավարութիւնը», 1916 (*Թուրքիոյ Ն. Գ. Նախարարութեան Հրատարակութիւն*):
«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», 1972, *Պէյրուսթ, Ռուբէն:*
«Հայ Ազատագրական Շարժումների Գնահատութեան Հարցի Շուրջ», Գ. Բ. Հանդէս, 1961, *Երեւան, Ար. Ինճիկեան:*
«Հայ Ազատագրական Շարժումն Օրերէն», *Փարիզ, Արտ. Գարրիէնեան:*
«Հայ Ազատագրական Ազգ. Յիսնամեայ», (1870–1920):
«Հայ ժողովրդի Քաղաքական Ճակատագիրը Անցեալին Ու Ներկայիս», 1964, *Պէյրուսթ, Կր. Իզմիրլեան:*
«Հայ ժողովրդի Պատմութիւն», 1947, *Պոսթոն, Ժազ Տը Մորկան:*
«Հայ ժողովրդի Պատմութիւն», 1972, *Երեւան, Մ. Գ. Ներսէսեան:*
«Հայ Գողգոթան», (1914–20), *Ա. Հատոր, 1922, Վիեննա, Գր. Մ. Վ. Պա-լազեան:*
«Հայ ժողովրդի Ողբերգութիւնը», *Երեւան, Արամ. Մնացականեան:*
«Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն», Գ. Հատոր, 1971, *Երեւան, Սեր-Սարգիսեան:*
«Հայ ժողովրդի Նոր Շրջանի Պատմ. Նեմագիտութեան Թուրք Պատմագր. Մէջ», 1963, *Երեւան, Ե. Սարգսեան, Ռ. Սահակեան:*
«Հայ Ազատագրական Շարժումների Պատմութիւնից», 1962, *Երեւան, Վրդ. Պարսամեան:*
«Հայ ժողովրդի Ազատագրական Պայքարը Թրքական Բռնատիրութեան Դէմ», 1955, *Երեւան, Մ. Ներսիսեան:*
«Հայերը եւ Թուրքիոյ Բարեկարգութիւնը», 1897, *Փարիզ, Ալպէր Վանտալ:*
«Հայկական Զարդերը», 1965, *Պէյրուսթ, ԵՈՀ. Լեփսիւս:*
«Հայկական Ողբերգութիւնը Փաստերու Լոյսին Տակ», *Փարիզ, Հ. Տէր Բար-սեղեան:*
«Հայկական Հարցը եւ Անոր Փուլերը», 1937, *Պէյրուսթ, Մուշ. Սերորեան:*
«Հայկական Հարցը Արեւելեան Հարցի Մէջ», 1962, *Պէյրուսթ, Ռ. Գարիկեան:*
«Հայկական Զարդերու Փաստաբուլղիները», *Ա. Ժաս, 1920, Պոլիս, Լորտ Պրայս:*
«Հայկական Հարցը եւ Միջազգային Դիւանագիտութիւնը», *Երեւան, Ա. Ե-սայեան:*
«Հայկական Նամականի» *Մ. Մամուրեան:*

«Հայկական Շարժումն Նախապատմութիւն», *Բ. Հատոր, 1913, Մ. Վարանդ-եան:*
«Հայկական Մզմաններ», 1916, *Պոսթոն, Մուշ. Սերորեան:*
«Հայաստան եւ Պատերազմը», *Լոնտոն, (Անգլ.), Ա. Յակոբեան:*
«Հայաստան եւ Մերձ. Արեւելք», 1958, *Պէյրուսթ, Ֆր. Նանսէն:*
«Հայաստան» (1914–1917), 1969, *Երեւան, Մ. Արզումանեան:*
«Հայաստանի Հանր. Մագումն ու Զարգացումը», *Ալ. Պատիսեան:*
«Հայաստանի Անկախութեան Առիթով», *Գաշիքէ, Մուշ. Սերորեան:*
«Հայաստանի Վերջին Ազէտը», 1921, *Պոլիս, Յ. Տէր Յակոբեան:*
«Հայերու Բնացնումը, Գերման. Մեքսիկո եւ Թրք. Գործընկերակցութեան Թրքմ. Ե. Չոփուրեան», 1919, *Պոլիս, Ռ. Բինոն:*
«Հայ Յեղափոխականի Յուշերը», *Ռ. Պանաղատ:*
«Հայնի», 1962, *Պէյրուսթ, Բեն. Ժամկոչեան:*
«Համադիպումներ Անցեալի Հետ», 1969, *Երեւան, Արշ. Արշարունի:*
«Histoire de l'Arménie», 1964, Paris, H. Bastermadjian.
«Համաշխարհային Պատերազմը եւ Արեւմտահայութիւնը» (1914–16), 1967, *Երեւան, Ճօն Կիրակոսեան:*
«Հայոց Հարցի Վաւերագրերը», 1915, *Թիֆլիս, ԼԼօ:*
«Հայրենիք» *ամսագիր, Պոսթոն, 1939:*
«Հայոց Հարցը Վերջին 20 Տարում», 1897, *Ջէյմս Պրայս:*
«1915ի Հայկական Զարդերը» (*Հատարածոյ*), *Պէյրուսթ, 1972:*
«1915 Թուականը», 1949, *Վենետիկ, Վ. Մենախորեան:*
«Հայրենի Երգարան», 1957, *Պէյրուսթ, Մ. Սէֆէրեան:*
«Հալածականի Յուշեր» (1914–18), 1964, *Պէյրուսթ, Անդ. Կէնճեան:*
«Համառոտ Ուրուագիծ Հայ Գողգոթայի Պատմութեան», 1967, *Երեւան, Ա. Արբանեան:*
«Հերոսական Հայութեան Անցեալէն, Զարդերը Հայաստանի մէջ». (*Թրք. Ե. 1960, Գաշիքէ, Ճայէզ էլ Դոսէյն:*
«Հայր Ժազ, Արքայը Տը Լա Գրուա» (*Փրս.*), 1961, *Պէյրուսթ, Հայր Թէոֆան:*
«Հնչակ», *Թիւրք. 1887 եւ այլ Թիւրք. Երեւան, Ա. Կարիսեան:*
«Հին Թուրքիան եւ Թրքահայերը», *Նորք, Բ. 1929, Երեւան, Ա. Կարիսեան:*
«Հնչակեան Մատեան», 1952, *Պէյրուսթ, Միշրան Սէֆէրեան:*
«Հնչակեան Մրագիր», 1887 եւ 1897 (*Լոնտոն*):
«Հ. Յ. Գ. Պատմութիւն», *Հատոր Ա. եւ Բ., Միք. Վարանդեան:*
«Ղազարու Ազայեանը Ժամանակակիցների Յուշերում», 1967, *Երեւան, Սար-գիս Պանոյանի (Յուշ. Ե.):*
«Ճիւղն Հարպընա Նաւը Կիրտիֆ...», 1937, *Պոլիս, Գողմ Գարապէթի:*
«Մարտիստական Տնտեսագիտական Մտքի Տարածումը Հայ Իրականութեան Մէջ», *Ռ. Գուլանեան, 1961, Երեւան:*
«Մարտիստի Տարածումը Հայաստանում», 1967, *Երեւան, Ռ. Բարսեղեան:*
«Մեծն Մուրատ» (Համր. Պոյաքեան), 1955, *Փրազիտես, Ե. Սիրվարդ:*
«Մեր Պայքարը Հայ Ազատագրութեան Ուղիով», 1948, *Գաշիքէ, Մուշեղ Սերորեան:*
«Միլիոն Մը Հայերու Զարդի Պատմութիւնը», 1921, *Պոլիս, Մ. Ակունի:*
«Միերան Տամատեան», 1964, *Պէյրուսթ, Պետ. Տէփոյեան:*
«Մերձ. եւ Միջին Արեւելքի Երկիրներ եւ Ժողովուրդներ» (Գ.), *արար Եր-կիրեան, 1967, Երեւան, Հ. Հ. Մարտիրոսեան:*
«Միջին Արեւելքի Երկիրներ եւ Ժողովուրդներ» (Ե.), *Թուրքիա, 1970, Երե-ւան, Հ. Հ. Մարտիրոսեան:*
«Միաբ Մեծարեան», 1956, *Երեւան, Վ. Ալազան, Վ. Նորենց:*

«Մորկնքաուի Յիշատակները», 1918, Պոլիս, Մորկնքաու, Թրգ. Ե. Արմէն:
 «Մուրատ», 1931, Պոսթոն, Մ. Վարանդեան:
 «Մուրատի Ճամբարդութիւնը Սվազէն Պաթում», 1920, Պոլիս, Չապէլ Եսայ-Լան:
 «Յեղափոխականի Յուշեր», Գ. Ղարաճեան:
 «Յիշատակներ Հայկական Ճգնաժամէն», 1913, Պոլիս, Երթ. Ճանկիւլեան:
 «Յիշողութիւններ հրիմեանի Մասին», 1908, Ռ. Խանազատ:
 «Յովհ. Թումանեան», 1969, Երեւան, Արամ Ինճիկեան:
 «Յուշարձան Ս.Գ.Հ.Կ. Քառասնամեակին», Փարիզ:
 «Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ Հայ Գաղութներուն», 1929, Սեւանիկ, Ա. Մակարեան:
 «Յուշամատենա եւ Ջօր. Անդրանիկ», 1954, Փարիզ, Մ. Աւետեան:
 «Յուշամատենա Թոմարգայի», 1959, Պէյրութ, Թոր. Մատաղճեան:
 «Յուշեր Արմ. Եկարեանի», 1947, Գահիրէ:
 «Յուշեր» (Ֆրնս.), Ա. Հատոր, 1955, Պէյրութ, Գերայ. Ժան Նազըլեան:
 «Յուշիկ Հայաստանի», 1919, Պոլիս, Տ. Զիթունի:
 «Նշխարներ Ս. Զատարեանէ», 1968, Պէյրութ:
 «Ուխտաւորները», 1963, Պէյրութ, Առ. Քէչեան:
 «Ուսանողաց Տարեգիրք (Ս.Գ.Հ.Կ.)», 1937, Պէյրութ:
 «Ուրուագիծ Արեւմտահայ Թատրոնի Պատմ.», Բ. Հատոր, 1969, Երեւան, Գ. Ստեփանեան:
 «Պալմանյար վէ Թիւրքիւի», 1936, Եաշար Նապի:
 «Պատասխանատուները», 1916, Փրազիտեան, Ս. Սապահ Գիւլեան:
 «Պատկերազարդ Ընդհ. Պատմութիւն Պալմ. Պատերազմին», 1912, Պոլիս, Արամ Անտոնեան:
 «Պատմագիտութեան Զարգացումը Ս. Հայաստանում», 1967, Երեւան, Շ. Յարութիւնեան:
 «Պատմութիւն Մալաթիոյ Հայոց», Պէյրութ, Ար. Ալպոյաճեան:
 «Պատմութիւն Ս.Գ.Հ.Կ.», Ա. եւ Բ. Հատոր, Պէյրութ, Ա. Կիտուր:
 «Պատմութիւն Հայկական Պոնտոսի», 1964, Պէյրութ, Յով. Յովակիմեան:
 «Պատմութիւն Ամերիկահայ Քաղաքական Կուս.եանց», 1930, Ֆրէդնո, Մ. Ճիզմէճեան:
 «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», 1937, Գահիրէ, Բ. Հատոր, Ար. Ալպոյաճեան:
 «Պատմութիւն Հայոց», Զ. 1958, Վենետիկ, Հ. Վ. Յովհաննէսեան:
 «Պատմութիւն Զարսանագի Հայոց», 1956, Պէյրութ, Գ. Երեւանեան:
 «Պատմութիւն Արեւելեան Խնդրոյ եւ Առաջնորդ Հայկ. Հարցի», 1905, Լոնտոն, Բ. Հատոր, Կր. Թումայեան:
 «Պատրիարքական Յուշեր», 1947, Գահիրէ, Չալէն Պատր. Եղիանեան:
 «Պարտիզակն ու Պարտիզակցի», 1938, Գահիրէ, Գրիգոր Մխալեան:
 «Ջահակիր», 1919, Գրակ. հաւաքածոյ, Գահիրէ, Վ. Գէորգեան:
 «Ռուրէն Աեակ», 1955, Երեւան, Եղ. Պետրոսեան:
 «Սարսափի Երկրին Մէջ», 1965, Պէյրութ, Հանրի Պարպի:
 «Սարտարապատի Հերոսամարտը», 1969, Երեւան, Երթ. Թուրլեան:
 «Սիամանթօ», 1964, Երեւան, Հր. Թամրազեան:
 «Սիբուած Երգեր», 1971, Երեւան, Վ. Չաքմէեան:
 «Սիրիա Եւո Լէպանոն» (Անգլ.), 1954, Լոնտոն, Ա. Հուրանի:
 «Սոց. Տնտեսական Յարաբերութիւնները Կարսի Մարզում», 1961, Երեւան, Արտ. Պօղոսեան:
 «Սուրիան Պատերազմի Ընթացքին», 1921, Միլէլ Թալհամէ:
 «Ս. Սապահ Գիւլեան», 1936, Իւնիոն Սիթի, Փերուզ Ս. Սապահ Գիւլեան:

«Սոցիալ Վերածնունդի Հայ Գրկ. Պատմութիւնից», 1959, Երեւան, Առ. Ասատուրեան:
 «Սոցիալիզմի Պատմութիւնը», 1931, Նիւ Եորք, Վարդան Տիրատ:
 «Սոցիալիզմ եւ Հայրենիք», Բ. սրակ, 1916, Փրոզիտ., Ս. Սապահ Գիւլեան:
 «Սուլթան Համիտ Շահիէրի վէ Հոսուսիէրի», 1943, Պոլիս, Զիա Շաքիր:
 «Ստեփան Շահումեան», Երեւան, Խ. Բարսեղեան:
 «Սպիտակ Գիրք», 1965, Երեւան, Հրաչէայ Քոչար:
 «Վասպուրականի Հերոսամարտը», 1965, Պէյրութ, Վեր. Ա. Կօրիկեան:
 «Վերածնունդի Երկունքը», 1918, Պոլիս, Հմ. Արամեանց:
 «Վերջիշումներ Ըստ Ս. Թեհլիբեանի», 1943, Պէյրութ, Վ. Միսախորեան:
 «Տանար», Թերթ, 1913, Թիւ 3, Պոլիս:
 «Տար Տարի Թիւտիսիցիի Շունչին Տակ», 1968, Գալիֆորնիա, Զրվէթ:
 «Տը Երկ Թրք» (Անգլ.), Գ. հրատ. 1940:
 «Տը Երկ Թրք» 1957, Լոնտոն, Սըր Ճոն Մարիոթ:
 «Տը Երկնի Ավ Մոտըն Թրքի», (Անգլ.), Նիւ Ճըրսի, Պերար Լուիզ Բամաէտ:
 «Յեզասպան Թուրք», 1968, Պէյրութ, Հայկ. Ղազարեան:
 «Փարամագ», 1954, Փրազիտեան, Ե. Սիւրվարդ:
 «Փարամագ», 1968, Պէյրութ, Հր. Վանիկ:
 «Փարամագի վանի 1898ի Ճառը», Մ. Ն. Սապահի Յատուր:
 «Քառասնամեակ» (1903-1943), «Երեւ. Հայաստան»ի, 1944, Նիւ Եորք:
 «Օթմանեան Կայսր. եւ Իր Յաջորդները» (1801-1909), (Անգլ.), Է. Միլլըր:
 «Օսմանլը Իմբերաթորուդունտա վէ Թիւրքիէ Ճիւմիլիւրիէրից Ինքիլայ Լարեֆէրի», 1959, Պոլիս, Ահմէտ Պետեի Քուրան:
 «Օսմանեան Պատմութիւն», 1911, Պոլիս, Գրիգոր Մարգարեան:
 «Օսմանեան Յեղ. Մութ Մալեթը», Բ. սպար., 1968, Պէյրութ, Մէվլան Չառէ Բիֆաթ:
 «Օսմ. Կայսրութեան Ճակատագիրը» (Ֆրնս.), 1917, Ա. Մանուէլթայմ:
 «Օրերուս Հետ», 1953, Լոս Անճէլէս, Մ. Թորլազեան:
 «Ֆետայի Ժիրայր», Բ. սպար., 1959, Պէյրութ, Յովհ. Տէրիւնեան:

Նաև:

«Արարատ» Օրաթերթ, Պէյրութ:
 «Աղակ» Շարաթաթերթ, 1909-10, Պոլիս:
 «Ամենուն Տարեգիրքը», 1965, Պէյրութ, Կարօ Գէորգեան:
 «Ամերիկահայ Տարեցոյց», 1912, Պոսթոն, Մուշ. Սերբեան:
 «Եգիպտոսահայ Տարեցոյց», 1916, Գահիրէ, Սուրէն Պարթեւեան:
 «Ընդարձակ Օրացոյց», 1909, Ս. Փ. Հիւանդանոցի Հայոց», Պոլիս:
 «Հայրենի Տարեցոյց», 1912, Սահակ-Մեարոյ, Պոլիս:
 «Կառօջ» Երգիծաթերթ, 1909, Պոլիս, Ե. Թալայեան:
 «Զայն Հայրենեաց» 1908-9, Պոլիս:

Հեղինակը շնորհակալութիւն կը յայտնէ Հայկագեան Գոլթնի Գրադարանի վարչուրեան, Ա. Տ. Գիւլեան եւ իր բարեկամներուն՝ որոնք աղբիւրներ տրամադրեցին տոյն հատորին սլաւապատուութեան համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Մ Ա Ս	<u>Էջ</u>
Երկու հօսք	5
Մուտք	7
ԳԼՈՒԽ Ա. Միջազգային կացութիւնը եւ 6 Մեծերու Դիրքորոշումները 1890ական թուականներուն	11
ԳԼՈՒԽ Բ. Հայ Յեղափոխութեան Ազատագրական Պայքարը	22
ԳԼՈՒԽ Գ. Հայ Ազատագրական Պայքարի Ընթացքը Օսմանեան Բռնատիրութեան Օրով	57
ԳԼՈՒԽ Դ. Հայ Քաղաքական Հասանքները	77
ԳԼՈՒԽ Ե. Հայ Յեղափոխական Շարժումները	105
ԳԼՈՒԽ Զ. Հայ եւ Օտար Վկայութիւններ Օսմանեան Բռնակալութեան եւ Հայ Ազատագրական Պայքարի Մասին	149
ԳԼՈՒԽ Է. Կուսակցական Ներքին Տարակարծութիւններ	173
ԳԼՈՒԽ Ը. Օսմանեան Բռնատիրութեան Դէմ Հայ Ազատագրական Պայքարի Գնահատման Հարցի Շուրջ	197

Բ. Մ Ա Ս

Հայ Յեղափոխութիւնը Իքթիհատի Բռնատիրութեան Շրջանին	
ՄՈՒՏՔ. Միջազգային Քաղաքական կացութիւնը (1907-1914)	219
ԳԼՈՒԽ Ա. Իքթիհատի Քաղաքական Դիմագիծը	223
ԳԼՈՒԽ Բ. Իքթիհատի Դիմագիծը Սահմանադրութեան Շրջանին	266
ԳԼՈՒԽ Գ. ա) Իքթիհատը եւ Բանբարբիզմը	294
բ) 1909ի Կիլիկիոյ Հայոց Աղէտին Շուրջ	306
ԳԼՈՒԽ Դ. Իքթիհատը եւ Հայ Քաղաքական Միտքը	314
ԳԼՈՒԽ Ե. Իքթիհատի Դէմ Պայքարը Սուրիոյ եւ Լիբանանի Մէջ	343
ԳԼՈՒԽ Զ. Թուրք Պատմաբաններուն հօսքը Իքթիհատի Մասին	355
ԳԼՈՒԽ Է. Ս. Գ. Հնչ. Կուս.ը եւ Իքթիհատը	379

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

- «ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐ» (Արձակ էջեր), 1947
- «ՇՂԹԱՆԵՐ» (Վէպ), 1956
- «ԱՐՇԱԼՈՅՍԷՆ ԱՌԱՋ» (Պատմումաժ քննարկ), 1959
- «ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԶՅԱՐԳԵՑ» (Պատմումաժ քննարկ), 1966
- «ՄԵՐ ՆԱԻԸ» (Վէպ), 1969
- «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ», (Ա. Տ. Խ., Հ. Գ. Եւ Փ. Տ.), 1971

Ծանօթ. — Սոյն զիրքը լոյս տեսաւ հեղինակին համեստ միջոցներով: Տպագրութիւնը աւարտեցաւ 1973ի Նոյեմբերի 24ին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ


Կողքի գծագրիչ՝ Տիկին ԱՆԱՀԻՏ Փ. ՏՕՆԻԿԵԱՆԻՆ,

Քարտէսի հեղինակ՝ Հ. ԳՈՐԾԱԿԱԼԵԱՆԻՆ,

Քարտէսի եւ կողքի գունաւոր փիշեմերը պատրաստող՝

Ս. ՔԷՍՏԵՆԵԱՆԻՆ (Թէֆնոկրավիւր) :

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ



- Դ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր**
- — — — — ԴՆՆՈՎԱՆ ՍԱԽԱՆՁՆԵՐ
 - — — — — ԴՆՆՈՎԱՆ ԿԱԿՐՈՎՅԱՆ ՆԱԽԱՆՁՆԵՐ, ԶԱՐԿԵՐԻ ՈՒ ՍԵՐՈՎՁՆԵՐԻ և ՕՏՃԱՆԿԱՆ ԿԱԿՐՈՎՅԱՆ ՎԻՂԱԵՔՆԵՐԻ ՍԱԽԱՆՁՆԵՐ
 - — — — — ԵՐԿՐՈՂՆԵՐ
 - — — — — ԿԱՌՈՎՈՂ և ՆԱԽԱՆՁՆԵՐ ԵՐԿՐՈՂԻ
 - ⊙ ԴՆՆՈՎԱՆ ԿԱԿՐՈՎՅԱՆ ՆԱԽԱՆՁՆԵՐ, ԶԱՐԿԵՐԻ ՈՒ ՍԵՐՈՎՁՆԵՐԻ և ՕՏՃԱՆԿԱՆ ԿԱԿՐՈՎՅԱՆ ՎԻՂԱԵՔՆԵՐԻ ԳՆՆՈՐՈՆՆԵՐ
 - ⊙ ԶԱՐԿՔՆԵՐ
 - ԱՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ